

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՐ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ  
ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԳԻՏԱ-ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ — «ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ»

Բ Ա Ն Բ Ե Ր  
Մ Ա Տ Ե Ն Ա Դ Ա Ր Ա Ն Ի

5

45705

Մ. Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՇԵՆՔԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Մատենադարանի ձեռագրերը վաղուց ի վեր իրենց վրա են բևեռում գիտնականների ուշադրությունը և սնում պատմաբանների, բանասերների և հայ ժողովրդի հնադարյան մշակույթն ուսումնասիրող ուրիշ հետազոտողների մտքերը:

Հայաստանի անցյալի հետ մեզ մի շարք թելեր են կապում, բայց Մատենադարանը ամենաամուր թելերից մեկն է: Ժողովրդի լեզուն և նույնիսկ հիշողությունը անզոր կլինեին պահպանել այնքան, որքան գրի են առնված անցյալի դեպքերի և եղելությունների մասին ձեռագրերի բազմահազար հատորների մագաղաթյա թերթերի վրա:

Ձեռագրերի այս հարուստ հավաքածուի պահպանությունը ամենակարևոր հարցերից մեկն է, ուստի պահանջվում է ստեղծել այն ամենը, ինչ կարող են ընձեռել մեզ արդի առաջավոր պայմաններն ու շինարարական տեխնիկան: Ահա թե ինչու մեր կառավարությունը հատուկ որոշում ընդունեց Մատենադարանի համար բազմաժախս և հարմարավետ շենք կառուցելու մասին:

Շենքի կառուցման մասին կառավարական որոշումից հետո այդ միջոցառման նախաձեռնողներին մտահոգում էին բազմաթիվ հարցեր, ինչպես օրինակ՝ մագաղաթյա ձեռագրերի պահպանման ձևերի, սենյակների դասավորության, շինարարության տեղի և այլն:

1939 թվականի աշնանը Հ. Ա. Օրբելու պրոֆեսոր Ն. Պ. Տիխոնովին գրած նամակը ձեռքիս էս մեկնեցի կեննինգրադ: Հարկավոր էր այնտեղ ծանոթանալ արխիվային փաստաթղթերի պահպանման պայմանների հետ, հավաքել և ուսումնասիրել արխիվների, գրադարանների և գրապահոցների շինարարության մասին եղած նորագույն գրականությունը, դիտել ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի գրադարանը և այլն:

Բայց կեննինգրադն այդ օրերին լուսաբողարկվում էր, զգացվում էր այն լարվածությունը, որ նախորդում է պատերազմին: Պրոֆ. Տիխոնովն այդ ժամանակ ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի գրադարանին կից Արխիվային փաստաթղթերի վերականգնման ու կոնսերվացման լաբորատորիայի ղեկավարն էր: Նրա հետ ունեցած երկու-երեք տեսակցությունից հետո էս հասկացա, թե որքան հոգատար վերաբերմունք ունի նա դեպի հին փաստաթղթերը: Հիշում եմ, մի անգամ, երբ նա նրան պատմեցի, որ Մոսկվայում կայացած Հայ արվեստի տասնօրյակի ժամանակ ի թիվս արվեստի այլ ստեղծագործությունների ցուցադրվել են նաև հայերեն միջնադարյան ձեռագրերի մանրանկարչական աշխատանքները, նա վրդովվեց. «Ինչպես, մի՞թե կարելի է ձե-

ազգրերը տեղափոխել և այդպես խիստ փոխել նրանց պահպանման պայմանները»:

Առաջին անգամ նրա մոտ՝ լաբորատորիայում ես տեսա գրքերի և արժեքավոր փաստաթղթերի միկրոլուսանկարահանում: Պրոֆեսոր Ն. Պ. Տիխոնովը մեծ սիրալիրությամբ ցույց տվեց ինձ իր լաբորատորիան, վնասված փաստաթղթերի վերականգնման տարրեր ձեռքը, խունացած գրության, պատկերուսների վերականգնումը և այլն:

Ես Երևան վերադարձա անհրաժեշտ նյութեր հավաքած, բայց ավելի շատ հարուստ տպավորություններով: Այդ տարիներին Մատենադարանի շենքի կառուցման հարցերը նախապատրաստվում էին շառ դանդաղ: Ավելի հրատապ խնդիրներ շեղում էին մեր ուշադրությունը Մատենադարանի շինարարության հարցերից:

1940 թվականին ես սկսեցի Մատենադարանի շենքի նախագծման աշխատանքները: Պետք է խոստովանել, որ այնուհետև այդ աշխատանքները դանդաղ էին ընթանում, քանի որ իմ առջև կանգնած էին նաև բազաբային շինարարության հետ կապված անհետաձգելի խնդիրներ:

Սակայն սկսվեց Հայրենական պատերազմը գերմանական զավթիչների դեմ, որը առժամանակ կասեցրեց շինարարական աշխատանքների ընթացքը: Բայց 1943 թվականի վերջին նորից բարձրացվեցին Մատենադարանի շենքի նախագծման և կառուցման հարցերը: Այս կարևոր գործում կրկին անգամ իր մասնակցությունն ունեցավ Հ. Ա. Օրբելին, այս անգամ արդեն որպես Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ:

1944 թվականին ինձ հանձնարարվեց վերսկսել Մատենադարանի շենքի նախագիծը: Բնականաբար այդպիսի ճարտարապետական ամբողջություն միանգամից չէր կարող ստեղծվել: Ինչպես հաճախ լինում է ստեղծագործական աշխատանքի ժամանակ հեղինակների գլխում ծնվում են դանազան, մեկը մյուսին փոխարինող կոմպոզիցիոն մտահղացումներ, ծնվում են ուրվանկարներ, ապա՝ էսքիզներ և վերջապես՝ ստեղծվում է նախագիծը: Հենց սկզբից հաստատապես որոշվեց շենքի նախագիծը կազմելիս՝ ձեռագրերի պահպանման տեխնիկայի արդի նվաճումները զուգակցել Հայաստանի հնագրայան ճարտարապետական ձևերի օգտագործման հետ:

Հաջող լուծումներ գտնելու համար ես որոշեցի նաև տեղում ուսումնասիրել մեր ճարտարապետական հնագրայան հուշարձանները, խորամուխ լինել նրանց ազգային առանձնատեսակությունը ու ոճին: 1944 թվականի ամռանը այդ նպատակով երիտասարդ պատմաբան Հռիփսիմե Զանփուլադյանի և ճարտարապետ Ֆ. Ն. Պաշչենկոյի հետ միասին մեկնեցինք Հաղբատ և Սանահին:

Մինչև այժմ էլ հիշում եմ, թե որպիսի հոգեկան հանգստություն պատճառեց մեզ այդ երկարատև ճանապարհորդությունը: Մենք հիացած էինք Հաղբատի և Սանահինի բնության գեղեցկությամբ, նրա ճարտարապետական հույակապ կոթողներով: Ինչպիսի ողջամտություն էին ներշնչում ինձ դարավոր տաճարների պարզ, բայց տրամաբանական և անթերի ձևերը:

Դրանից հետո ճարտարապետ Ս. Սաֆարյանի հետ ճանապարհորդություն կատարեցինք Զանգեզուր, Տաթևի հուշարձանները ուսումնասիրելու համար: Այդ ընթացքում ես ձգտում էի ավելի խորն ուսումնասիրել Էջմիածնի, Գառնիի, Գեղարզի հուշարձանները, դիտելով դրանք նոր տեսանկյունից,

ազգային ճարտարապետության ստեղծագործությունների լավագույն հատիկները հավաքողի աշքերով:

Այդ ժամանակ արդեն պրոֆեսոր Գ. Աբովի օգնությամբ, որն այդ տարիներին Մատենադարանի դիրեկտորն էր, բյուրեղացավ նախագծման առաջադրանքը:

Կոմպոզիցիայի վրա ազդող կարևոր պայման էր և շենքի կառուցման տեղը: Որոշվեց շենքը կառուցել Երևան քաղաքի կենտրոնական մասում, Ստալինի պողոտայի վերջում՝ Քանաքեռի սարահարթի լանջի վրա, ըստ որում այնպես տեղադրել շենքը, որ նրա առանցքը համընկնի պողոտայի առանցքին: Այսպիսով շենքը պետք է ավարտեր պողոտայի հեռանկարը, ըստ որում շենքի հիմքը պետք է ավելի բարձր լիներ, քան պողոտայի ամենաբարձր կետը:

1944 թվականի վերջին նախագիծն ավարտվեց և ներկայացվեց հաստատման: Նախագիծը կազմելիս ինձ օգնել են ճարտարապետներ Թորգոմյանը և Քամարա Բելոուսովան: Որպես գրադարանային շենքերի կառուցման տեսարան ինձ նշանակալից օգնություն է ցույց տվել Ֆ. Ն. Պաշչենկոն: Նա Մատենադարանի սրահանջներին համապատասխան մշակել է պահոցների սենյակների տարածության նորմերը, դարակների շափերը և այլն: Մատենադարանի շենքի ջեոուցման ու ջրամատակարարման, պահոցներում կոնզենացիայի և ավտոմատիկայի նախագծերը կատարել է ինժեներ Խ. Գ. Խանամիրյանը: Շենքի նախնական նախագծում նախատեսված էր ստորերկրյա պահոց, որը որոշվեց չկառուցել, այլ տեղավորել ցոկոլային տարածության մեջ: Մյուս կողմերով նախագիծն ընդունվեց առանց որևէ փոփոխության:

Նախագծի քննարկման հետ միաժամանակ նկարիչների տանը կազմակերպվեց ցուցահանդես: Ամբողջ երկու շաբաթ ցուցադրվում էին նախագծի ջրաներկով կատարված 24 տախտակները:

Նախատեսված էր նաև շենքի ճարտարապետության մեջ մտցնել հին Հայաստանի մեծ մտածողների՝ Մեսրոպի և Սահակի, Մովսես Խորենացու, Անանիա Շիրակացու, Եղիշեի, Մխիթար Գոշի, Ֆրիկի և Թորոս Ռոսլինի արձանները: Ուստի և շենքի նախագծից բացի ցուցահանդեսում ներկայացված էին առանձին արձանների և կիսանդրիների մոդելները՝ քանդակագործ Ա. Սարգսյանի՝ Սահակի և Մեսրոպի կոմպոզիցիոն արձանը, Ս. Ստեփանյանի՝ Եղիշեն, Ուրարտուի՝ Մովսես Խորենացին (նստած կոմպոզիցիայով), ինչպես նաև Ն. Նիկողոսյանի Անանիա Շիրակացին: Այս ստեղծագործությունների կողքին ցուցադրվեցին նկարիչ Հակոբ Կոչոյանի «Վարդանանք» թեմայով երեք ինձանկար սյաննոների էսքիզները:

Երևանի հասարակայնությունը ուշադրությամբ ծանոթացավ շենքի նախագծին: Ցուցահանդեսը հաճախողներից շատերի թողած գրավոր ցանկությունները հաշվի առնվեցին հետագա աշխատանքներում:

Հետագայում մշակված բանվորական գծագրերը գրեթե ոչ մի փոփոխություն չմտցրին նախնական նախագծի ճարտարապետական հիմունքների մեջ:

Բանվորական գծագրեր կազմելիս 1945 թվականին մեզ օգնել է ճարտարապետ Բ. Հակոբյանը: Որոշ հաշվարկումներ կատարել է ինժեներ Կ. Ալթունյանը:

Մատենադարանի շենքի կառուցումը սկսվեց 1945 թվականին, բայց սկզբում այն անհրաժեշտ տեմպերով չէր ընթանում: Դրա պատճառն այն էր,

որ շկային բավական թվով բանվորներ և վարպետներ: Նրանք դրադված էին բնակարանային մասսայական և կուլտուր-կենցաղային ու արդյունաբերական շինարարութեամբ: Այդ պատճառով էլ 1947—1953 թվականներին Մատենադարանի շենքի կառուցումը առժամանակ դադարեցվեց:

1953 թվականից շինարարութունը աշխուժացավ և սկսեց տարեց-տարի ավելի ուժեղանալ: Այդ նույն ժամանակ դրվեց նաև Մատենադարանի ճարտարապետութեան մեջ մտնող արձանների պատրաստման հարցը: Քանդակագործական լավագույն կոմպոզիցիաների ընտրութեան հնարավորութուն ստեղծելու նպատակով հայտարարվեց բաց մրցանակարաշխութեան, որի մասնակցեց Հայաստանի քանդակագործների ճնշող մեծամասնութունը: Պետք է նշել, որ մրցանակարաշխութունը լավ արդյունքներ տվեց: Շատ հեղինակներ արժանացան մրցանակի և նրանցից քանդակագործներ Գ. Զուրարյանն ու Գ. Բաղալյանը պատվերներ ստացան: Նրանցից առաջինը առաջադրանք ստացավ պատրաստել «Մեսրոպ Մաշտոց» կոմպոզիցիոն աշխատանքը, իսկ երկրորդը՝ Անանիա Շիրակացու արձանն ամբողջ հասակով: Հետագայում Մովսես Խորենացու արձանը պատրաստելու պատվեր տրվեց քանդակագործ Ն. Նիկողոսյանին:

Բացառիկ պատասխանատվություն կրելով ստեղծագործությունների որակի համար՝ ժյուրին քանդակագործական կոմպոզիցիաները ընտրելիս մանրազրնին և խիստ վերաբերմունք ցուցաբերեց: Այդ է, իհարկե, պատճառը, որ մինչև այժմ էլ դեռևս չեն ընդունված շորս արձանների մոդելները և նրանց վերջնական ընդունման համար ըստ երևույթին հարկավոր է նոր մրցանակարաշխութուն անցկացնել:

Շատ երկրներում ձեռագրերը պահվում են խոշոր գրադարաններում, ուր սովորաբար գոյություն ունեն ինքնուրույն բաժիններ, որոնք և տնօրինում են ձեռագրերի պահպանման և նրանց ուսումնասիրութեան գործը: Մատենադարանը հանդիսանում է մի ինքնուրույն ազգային հիմնարկ, բոլորովին բացառիկ, որի խնդիրն է ոչ միայն պահել այդ ձեռագրերը, այլև ուսումնասիրել դրանք: Մագաղաթյա ձեռագրերի և հին փաստաթղթերի պահպանման միջոցները մշակվել են ինչպես սովետական, այնպես էլ արտասահմանյան գիտութեան կողմից: Ձեռագրերի պահպանումը պահանջում է մի շարք պարտադիր պայմաններ, որոնցից ավելի կարևորն է պահոցներում ջերմութեան և խոնավութեան կայուն ուժեղ հաստատելը: Այս պահանջի իրականացումը պահոցում կստեղծի անհրաժեշտ սանիտարական պայմաններ, որոնք կկանխեն ձեռագրերի վարակումը զանազան սնկային հիվանդություններով, կփրկեն նրանց թանգարանային վնասատուներից, փոշուց և այլն: Պակաս կարևոր չէ նաև ապահովել ձեռագրերը հրդեհի և այլ «չնախատեսված պատահականությունների» վտանգից:

1945 թվականին կատարված բանվորական գծագրերը չէին արտահայտում շինարարութեան համար անհրաժեշտ բոլոր տվյալները: Ուստի գծագրերի մշակումը տևեց նույնիսկ մինչև շինարարութեան ավարտումը: Պետք է նշել, որ նախագծի վրա կատարված երկարատև աշխատանքը՝ առանձին մանրամասնությունների, հատվածների, նմուշների մշակումը կատարելագործում և քարձրացնում էր նրա որակը:

Շինարարութեան առանձին հարցերի ավելի մանրակրկիտ մշակումը պահանջում էր նորանոր գծագրեր: Այսպես օրինակ, պահոցներում օդի կոնդեն-




Նկ. 1. Մատենադարանի նորակառույց շենքը

սացիայի և ավտոմատիկայի համար կատարված գծագրերը՝ վերջնականապես ճշտվեցին և գծագրվեցին միայն վերջերս:

Շենքի կոնֆիգուրացիան իր հատակագծով գրեթե քառակուսի է: Շենքը, ինչպես արդեն ասվել է, տեղավորված է Քանաքեռի սարահարթի լանջին, դեպի շենքը տանող առաջին աստիճաններից 18 մետր բարձրության վրա, այն հաշվով, որպեսզի ստեղծվի շենքի շրջապատող կանաչապատ լանջերի գեղեցիկ հեռանկար: Դեպի շենքն է տանում գրանիտով ողորկված երկու կողմներից կանաչապատ ճանապարհը, որի երկարությունը մինչև առաջին աստիճանները 130 մետր է: Այնուհետև քաղալտից շարված լայն աստիճանները հինգ երթով մեզ տանում են մինչև առաջին հարթակը (լուսանկար № 1): Այստեղ է բարձրանում նաև ավտոմոբիլային ոլորապատույտ ճանապարհը: Առաջին հարթակից դեպի երկրորդը պետք է բարձրանալ երկու նույնանման համաչափ դասավորություն ունեցող պանտուաներով: Ավտոմոբիլային ճանապարհը շարունակվում է վեր, բայց երկրորդ հարթակն է մտնում շենքի սյունազարդ թևերից մեկի (նրանք սահմանափակում են հարթակը) կամարի տակով:

Մատենադարանի շենքի առջևում և ետևում կանաչապատված սարալանջերը կանաչ ֆոն են հանդիսանում շենքի համար: Առաջին հարթակում պանտուաների պատի մոտ դրվելու է «Մեսրոպ Մաշտոց» արձանի կոմպոզիցիան (լուսանկար № 2): Վերին հարթակում, անմիջապես ճակատային պա-



Նկ. 2. Մեսոպ Մաշտոցի արձանը

տի մոտ, հատուկ պատվանդանների վրա պետք է կանգնեցվեն հին Հայաստանի վեց խոշոր մտածողների արձանները: Առաջին հերթին գլխավոր մուտքի երկու կողմերում պետք է դրվեն Մովսես Խորենացու և Անանիա Շիրակացու արձանները: Արձանների համար օգտագործվելու է երևանյան բազալտը, որով և երեսպատված են շենքի ճակատները: Բայց քանդակների քարի մշակումը տարբերվելու է ճակատի երեսպատման մշակումից, լինելու է ողորկ տաշված:

Խոսելով շենքի ներսում պահոցների, սրահների և մյուս սենյակների դասավորության և կահավորության մասին, ամենից առաջ պետք է նշել այն լուծումը, որ տրվեց ձեռագրերի պահոցների տեղի հարցին: Ձեռագրերը պետք է տեղավորվեն ցոկոլի մակերևույթից ցած գտնվող երեք հարկերում, շենքի աջ թևում: Այնտեղ էլ տեղավորված են պահոցները սպասարկող այլ բաժինները՝ (լուսանկարչական լաբորատորիան և այլն): Հատուկ պատվերով այլուձինի ալիքավոր թերթերից պատրաստված դարակների վրա պետք է կողք-կողքի դարսվեն մագաղաթյա ձեռագրերը յուրաքանչյուրն առանձին-առանձին:

Յոկոլային հարկի ձախ թևում տեղավորված է սովորական՝ տպագիր գրականության պահոցը, բոլոր անհրաժեշտ սենյակներով:

Առաջին հարկում տեղավորված են գլխավոր նախասրահը, դիրեկտորի առանձնասենյակը և ընդունարանը, գրասենյակը, լուսանկարների ցուցասրահը, դասախոսությունների սրահը և այլ օժանդակ սենյակներ:

Երկրորդ հարկը հիմնականում նախատեսված է աշխատակիցների մեկուսացված գիտական աշխատանքի համար. այդտեղ կան թվով տասը փոքր առանձնասենյակ և այլ՝ օժանդակ տարածություններ:

Երրորդ հարկում դասավորված են գլխավոր ցուցասրահը, հայագիտութեան դահլիճը և ընթերցասրահը: Նրանց կից տեղավորված են գրաքարտերի հատուկ սենյակը, Մատենագիտական և բնագրերի ուսումնասիրման ու հրատարակման սեկտորների սենյակները և այլ անհրաժեշտ սենյակներ աշխատակիցների համար:

Չորրորդ հարկում գտնվում են Արխիվային բաժինը, վերականգնման և կոնսերվացիայի լաբորատորիան, կազմատունը և այլն: Այս հարկի հետ կապը հնարավոր է միայն հատուկ աստիճանների և վերելակների միջոցով:

Երկրորդ հարկի սենյակները և երրորդ հարկի սրահները գնալու համար այցելուները օգտվելու են գլխավոր աստիճաններից:

Շենքի տանիքը հարթ է: Այնտեղ կարելի է բարձրանալ աստիճաններով և վերելակների միջոցով: Տանիքից գեղեցիկ տեսարան է բացվում դեպի քաղաքը:

Վերոհիշյալ սրահների և սենյակների ինտերյերները կատարված են հին հայկական ճարտարապետութեան կոնստրուկտիվ-ճարտարապետական ձևերով, թեև, իհարկե վերամշակված:

Գլխավոր նախասրահի լուծման մեջ օգտագործված են Սանահնի վանքի առաջին գավթի ինտերյերի ճարտարապետական ձևերը. բայց շենքի նախասրահում այդ գավթի վերամշակված ձևերը քոլորովին այլ հնչյուն ունեն, քանի որ այստեղ նրանք օգտագործված են հենց նախասրահ ստեղծելու նպատակով: Նախասրահի պատերն ու սյուները երեսպատված են Բջնիի մուգ կարմիր հղկված մարմարով: Գետնախարիսխը և հատակը պատված են Երեվանյան փայլեցված բազալտով: Մուտքի դիմաց, գլխավոր աստիճաններից առաջ, վեր բարձրացող կամարի վերևում, գտնվում է «Վարդանանք» խճանկար պաննոն, որի աշխատանքները կատարում է նկարիչ Հովհաննես Խաչատրյանը:

Դասախոսութեան զահլիճի ճարտարապետութունը իրենից ուղղակի փոխառութուն չի ներկայացնում, բայց այն գլխաձև կամարակապ իր առատաղով բնորոշ է միջնադարի համար, թեև նման դահլիճներ եղել են թե նախքան միջնադարը, թե նրանից հետո: Այդ դահլիճում մուտքի դիմացի պատին 2 մետր տրամագծով փղոսկրի գույնի մի մեղալիոն կա, որի վրա Ս. Գ. Մերկուրովը պատկերել է վ. Ի. Լենինի կիսադեմ բարձրաքանդակը (լուսանկար № 3):

Լուսանկարների ցուցադրասրահի ինտերյերը կատարված է Անիի Առաքելոց եկեղեցու գավթի ճարտարապետութեան ոճով: Իհարկե այստեղ ևս խոսք չի կարող լինել ընդօրինակութեան մասին, քանի որ դահլիճը հարմարեցված է ցուցահանդեսի կազմակերպման նպատակին:

Գլխավոր ցուցադրասրահի ճարտարապետութունը լուծված է ԺԱ.—ԺԳ դարերում լայն տարածում գտած գավթիների ոճով, որտեղ չորս սյուների և նրանցից վեր բարձրացող առագաստների վրա կանգնած է գմբեթը: Սրահի լուսավորութունը վերևից է: Գմբեթն ունի ութը նիստ, որը վերևից հատված է լուսամուտ ստանալու նպատակով:

Մատենադարանի մյուս դահլիճները՝ ընթերցասրահը (լուսանկար № 4), հայագիտութեան սրահը և այլն, իրենց ճարտարապետական լուծումով ոճական ընդհանրութուն ունեն վերը նկարագրված դահլիճների հետ: Հիմնականում օգտագործված է ԺԱ.—ԺԳ դարերի հայկական ճարտարապետութունը:





Նկ. 3. Նիսաների դահլիճ



30459  
~~34233~~

Նկ. Բ. Ընթացաբաժնի



Այդ շրջանի բազմաթիվ հուշարձաններ, հատկապես Անիում, ստեղծվել են բաղաբացիական ճարտարապետության խիստ ազդեցության տակ՝ քաղաքային կյանքի վարդապետական հետևանքով: Անկասկած է, որ քաղաքացիական ճարտարապետության հետ սերտ կապի մեջ են եղել այնպիսի կառուցվածքներ, որպիսիք են գավիթները, սեղանատները, հյուրանոց-իջևանատները և այլն: Դրանց ճարտարապետական ոճն է ահա, որ մենք օգտագործել ենք ինտերյեռների նախադժման ժամանակ:

Մատենադարանի կոմպոզիցիայի մեջ հատուկ տեղ է գրավում գլխավոր աստիճանը: Նա չի կրկնում հասարակական շենքերում գոյություն ունեցող աստիճանների բազմաթիվ օրինակները: Աստիճանների տարածությունը այստեղ նկատելի ինքնուրույնություն է ձեռք բերել այն բանի շնորհիվ, որ անհրաժեշտ է եղել նրա ճարտարապետությունն արտահայտել Մատենադարանի շենքի ընդհանուր ոգուն համապատասխան: Գլխավոր աստիճանի բոլոր շրջանները գրեթե նույն շափերն ունեն (8—8,5 մետր լայնություն, 16 մետր բարձրություն): Նախասրահից աստիճաններով վեր բարձրանալիս երևում են գլխավոր ուղիղ երթը և երկու աջ և ձախ բաժանվող երթերը: Նրանք մեզ հասցնում են երկրորդ հարկի համանման դասավորված հարթակներ, որ մենք մուտք ենք գործում կամարակապ բացվածքներից: Այդ պատճառով յուրաքանչյուր կողմում գտնվող ևս երկուական աստիճանային երթերը, որ տանում են երրորդ հարկ, շենք երևում գլխավոր աստիճանի ծավալում: Այդպիսի լուծումը նշանակալից շափով թելադրված է պատերի վրա «Հին Հայաստանը» եռանկարի համար տեղ ստեղծելու նպատակով: Գլխավոր աստիճանի միջին հարթակից կարելի է դիտել այդ եռանկարը, որի երեք պատերի վրա պատկերված են Հայաստանի պատմության երեք զարաշրջանները: Զախ կողմում պատկերված է «Ուրարտուն», աջ կողմում՝ «Հայաստանը հելլենիզմի շրջանում» և կենտրոնում՝ «Միջնադարյան Հայաստանը»: Եռանկարի յուրաքանչյուր մասը պատկերում է գրեթե, ճարտարապետությունը, նյութական կուլտուրայի առարկաներ և համապատասխան պատմական դարաշրջանին հատուկ մարդկանց գործողություններ: Այս եռանկարը կապված լինելով Մատենադարանի դադափարի հետ հարստացնում է շենքի բովանդակությունը և զարդարում այն: Եռանկարի հեղինակն է նկարիչ Հ. Խաչատրյանը: Որմնանկարներից վեր բարձրանում է կամարակապ սյունաշարը, որ աստիճաններից նախադահլիճի տեսք է տալիս գլխավոր ցուցադրասրահի և մյուս դահլիճների առջևում եղած տարածությանը: Մեծ, մետաղյա շրջանակներ ունեցող, 10 մետր բարձրությամբ պատուհանը առատորեն լուսավորում է աստիճանային տարածությունները:

Ինտերյեռների բանվորական գծագրերը կազմելու և վերջին տարիներին ճարտարապետական վերահսկողության գործում ինձ մեծ օժանդակություն է ցույց տվել իմ աշակերտ և օգնական Լ. Մելքոնյանը:

Անհրաժեշտ ենք համարում մի քանի խոսք ասել նաև շենքի ճակատների մասին: Նախագծման ժամանակ խնդիր դրվեց գտնել Մատենադարանի շենքի ինքնուրույն պատկերը: Ըստ որում խիստ անհրաժեշտ էր ապահովել մի լուծում, որն արդի ճարտարապետության պրոգրեսիվ գծերն ունենալով հանդերձ խորապես արտահայտեր նաև պատմական ճարտարապետությունը: Դեպի Ստալինի պողոտան ուղղված ճակատը շատ պարզ է: Նրա հիմնական տարրերն են գլխավոր մուտքը և նրա երկու կողմերում ձգվող երկուական եռա-

կողմ նիշերը: Նմանօրինակ սխեմաները շատ հին ծագում ունեն, հասնում են մինչև Եգիպտոս (էդիֆուի տաճարը):

Գլխավոր ճակատի ճարտարապետական ամբողջ բովանդակության զարդաշրջանակի մեջ վերցնելը սիրիական ծագում ունի, բայց Անիի շրջանում այդ եղանակը մենք հանդիպում ենք Պարոնի պալատի վրա, Առաքելոց եկեղեցու դավթում և այլուստ:

Գլխավոր մուտքի հեռանկարային բացվածքը հանդիսանում է շենքի ճակատի առավել ազդու տարրը: Նրա երկու կողմերում գտնվող նիշերը կատարում են, եթե կարելի է այսպես ասել, օժանդակ ուղեկցողի դեր. բայց այդ քարձր, հաշվական ճարտարապետությանը բնորոշ եռակողմ նիշերը լրացնում են ճակատի վեհությունն ու ճկունությունը: Երկու կողմերի ճակատները նույնպես շատ պարզ են:

Զնայած որ արտաքուստ Մատենադարանի շենքի շափերը շատ մեծ են երևում, սակայն նրա ծավալը կազմում է 28.000 խ. մ.:

Զգալի աշխատանքներ են կատարվել շենքի շուրջը եղած տարածության բարեկարգման և կանաչապատման ուղղությամբ:

Շենքի կառուցմանը զուգահեռ պետք էր պատրաստել նաև կահույքի նախագծերը, ինչպես նաև ավարտել ինտերյեռների ձևավորումը: Այդ աշխատանքը ես կատարել եմ Լ. Մելքոնյանի և Խ. Կոյունջյանի օգնությամբ: Վերջինս կատարել է կահույքի բոլոր բանվորական գծագրերը: Այդ աշխատանքներում մեզ նշանակալից օգնություն են ցույց տվել Մատենադարանի դիրեկտոր Լ. Խաչիկյանը և Զեռազրական բաժնի նախկին վարիչ Կ. Յուզբաշյանը: Շինարարությունն ավարտվեց 1958 թ.: Թեև նրա ծավալն այնքան էլ մեծ չէ, բայց Մատենադարանի նշանակությունը պահանջում էր կատարել բազմաթիվ աշխատատար պրոցեսներ, որոնք մյուս հասարակական շենքերում չեն լինում:

Իսկական հայրենասիրական զգացմունքով է կատարել շինարարական աշխատանքները ավագ աշխղեկ Գ. Իսկանդարյանը: Ավագ վարպետ Խ. Միրաքյանը, որմնագիրների իր բրիգադով, յատերի շարվածքը և երեսպատումը կատարել է բարձր որակով. այնպես որ նրանց աշխատանքը մեծ բավականություն է պատճառում դիտողներին: Շինարարության հիշատակության արժանի մասնակիցների թիվը շատ մեծ է որպեսզի կարելի լիներ թվել նրանց բոլորին, բայց պետք է նշել նաև աշխղեկ Գ. Ավետիսյանին, ծեփագործ վարպետ Վ. Տեպլովին, ներկարար վարպետ Ս. Նալբանդյանին, ատաղձագործ Վ. Նաչոյանին:

Իրենց ամենօրյա գործնական ղեկավարությամբ Մատենադարանի շինարարներին մեծ օգնություն են ցույց տվել Հայաստանի Կոմպարտիայի Կենտրոնական Կոմիտեն և Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետը:

1958 թվականին Մատենադարանի նոր շենքն այցելեց Ա. Ի. Միկոյանը: Մատենադարանի շենքի կառուցումը մեկն է այն բազմաթիվ վեհ գործերից, որ իրագործել են ժողովրդի համար Հայաստանի կառավարությունը և Կոմունիստական պարտիան:

Պետք է հուսալ, որ նոր շենքում ստեղծված են բոլոր անհրաժեշտ պայմանները ձեռագրական գանձերի պահպանման և ուսումնասիրման համար:

М. ГРИГОРЯН

## О ПОСТРОЙКЕ ЗДАНИЯ МАТЕНАДАРАНА

## Резюме

В настоящей статье архитектор недавно построенного здания Матенадарана, заслуженный деятель искусств Арм. ССР, М. В. Григорян знакомит с историей проектирования здания, решением поставленных перед ним специальных проблем и задач художественного его оформления.

Работы по проектированию здания начались в 1939 г. и завершились в конце 1944 г. Строительные работы начались в 1945 г., особый размах получили с 1953 г. и окончились в 1958 г.

Учитывая цели, которым должно служить здание, архитектор творчески использовал наследие армянской классической архитектуры. При решении архитектуры главного вестибюля использованы архитектурные формы интерера первого притвора Санаинского монастыря. Архитектура главного выставочного зала решена в духе широко распространенных в XI—XIII вв. притворов, где на 4 колоннах и на парусах возвышается купол. Интерьер второго выставочного зала решен в стиле архитектуры притвора Анийской церкви Аракелоц.

В новом здании Матенадарана созданы наилучшие условия для хранения и изучения рукописных сокровищ.

Լ. ԽԱԶԻԿՅԱՆ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԳՐԱՌՈՒՄՆԵՐԸ  
ՀԱՅԵՐԵՆ ԶԵՌԱԳՐԵՐԻ ՄԵՋ և ՆՐԱՆՑ ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏԱԿԱՆ  
ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Հայերեն ձեռագրերի, հատկապես Ավետարանների, Հայսմավուրքների, Ճաշոցների, Մաշտոցների և ծիսական բովանդակություն ունեցող այլ ժողովածուների դատարկ էջերին ու լուսանցքներին, բացի ձեռագրերի նորոգողների ու հետագա ստացողների հիշատակարաններից, միջին դարերում գրանցվում էին նաև նվիրարերական արձանագրություններ, պայմանագրեր, կալվածագրեր, մուրհակներ և տնտեսական այլ գործարքների մասին ուշագրավ վավերագրեր: Զեռագրերը այս պարագայում կատարում էին ճիշտ այն դերը, ինչ միջնադարյան ճարտարապետական հուշարձանների պատերը՝ վիճական արձանագրությունների համար: Եվ եթե հայերեն վիճական արձանագրությունների հավաքման, վերծանության և հրատարակության գծով անցյալում զգալի գործ է կատարվել, իսկ այժմ ծրագրված ու լայն ծավալի աշխատատանք է տարվում, ապա ձեռագրերի էջերին գրանցված արձանագրությունները պրեթև աննկատելի են մնացել առ այսօր:

Հայերեն ձեռագրերի առանձին հավաքածուներ նկարագրող բանասերներից մի քանիսը՝ Գ. Սրվանձտյան<sup>1</sup>, Ղ. Փիրղալեմյան<sup>2</sup>, Հ. Աճառյան<sup>3</sup>, Ի. Սարգսյան<sup>4</sup>, Ե. Լալայան<sup>5</sup> և ուրիշներ, ձեռագրերի հիշատակարանների հետ մեջընդխառն ընդօրինակել ու հրատարակել են նաև մի քանի արձեքավոր վավերագրեր, սակայն նրանցից և ոչ մեկը հատուկ ուշադրություն չի դարձրել այն իրողության վրա, որ դրանք ձեռագրական հիշատակարաններ չեն և որևէ կերպ չեն առնչվում ձեռագրի բովանդակության կամ պատմության հետ: Այլ խոսքով, միջնադարյան Հայաստանի տնտեսական կյանքի պատմության մի շարք բնագավառների ուսումնասիրության համար հարուստ նյութեր պարունակող այդ վավերագրերի գոյության մասին իսկ հայագիտության մեջ պատշաճ խոսք չի ասվել:

1948 թվականից, զբաղված լինելով 14—25-րդ դարերի հայերեն ձեռա-

<sup>1</sup> Գ. Սրվանձտյան, Քորոս աղբար, Հայաստանի համրոդ, մասն առաջին, Կ. Պոլիս, 1879, մասն երկրորդ, Կ. Պոլիս, 1885:

<sup>2</sup> Նոտարը հայոց, հաւաքեալ և ի լոյս ածեալ ձեռամբ Ղեւոնդ վարդապետի Փիրղալեմեան Տոսրեցոյ... Կ. Պոլիս, 1883:

<sup>3</sup> Յուցակ հայերէն ձեռագրաց Սանասարեան վարժարանի ի Կարլն, Վիեննա, 1900: Յուցակ հայերէն ձեռագրաց Քավրիզի, Վիեննա, 1910, և այլն:

<sup>4</sup> Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հատոր Ա, Վենետիկ, 1914, նույնի Բ հատորը, Վենետիկ, 1924:

<sup>5</sup> Յուցակ հայերէն ձեռագրաց վասպուրականի, պրակ առաջին, Թիֆլիս, 1915:

գրերի հիշատակարանները հավաքելու և հրատարակության պատրաստելու աշխատանքով, զուգահեռաբար մենք հավաքել ենք նաև նույն ձեռագրերի էջերում գրանցված այդ վավերագրերը, նպատակ ունենալով դրանք հրատարակել առանձին ժողովածուով: Այս նույն աշխատանքը մասամբ կատարել է նաև Մատենադարանի գիտական աշխատող Ս. Կալաֆարյանը, որը հրատարակության է պատրաստում 16-րդ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարանները. այսպիսով առ այսօր մենք ձեռքի տակ ունենք Մատենադարանի ձեռագրերից և (ոչ մեծ քանակությամբ) տպագիր ձեռագրաց ցուցակներից քաղված, 11—18-րդ դարերին վերաբերող 300-ից ավելի վավերագրեր: Այդպիսիք, անշուշտ, կան նաև 17—18-րդ դարերում ընդօրինակված ձեռագրերի, ինչպես նաև Հայաստանից դուրս պահվող հայերեն ձեռագրերի մեջ. ուստի և դրանց հավաքումը առաջիկայում պետք է շարունակել, ներգրավելով այդ գործի մեջ այլ մասնագետների: Չնայած դրան, արդեն մեր ձեռքի տակ եղող նյութը, թե՛ քանակով և թե՛ բովանդակությամբ՝ հնարավորություն է ընձեռում ընդհանուր գծերով ծանոթանալու վերոհիշյալ փաստաթղթերի բովանդակության հետ, արժեքավորելու դրանք որպես պատմական սկզբնաղբյուր:

Մեր ձեռքի տակ եղող վավերագրերի ճնշող մեծամասնությունը գրանցված է հնում վասպուրականի (հատկապես Ռշտունիքի և Մոկսի) վանական հաստատությունների սեփականությունը կազմող ձեռագրերի էջերում: Այս հանգամանքն, անշուշտ, պատահական չէ. նույն այդ վանական հաստատությունների շինությունների պատերից գրեթե իսպառ բացակայում են վիմական արձանագրությունները, այն դեպքում, երբ պատմական Հայաստանի այլ նահանգներում՝ Այրարատում, Սյունիքում, Գուգարքում, Արցախում և այլ վայրերում, վանքերի ու եկեղեցիների պատերը ներսից ու դրսից, հաճախ ծայրից ծայր, լի են մանր ու խոշոր արձանագրություններով: Վասպուրականում գերադասել են նույն այդ նպատակի համար օգտագործել վանքերում պահվող ձեռագրերը, որոնց վրա գրանցումներ կատարելը տեխնիկական դժվարությունների և մեծածախ աշխատանքների հետ կապված չի եղել:

\* \* \*

Ըստ բովանդակության ձեռագրերի էջերին գրանցված վավերագրերը բաժանվում են հիմնականում հետևյալ խմբերի.

1. Նվիրաբերական գրառումներ.

2. Պայմանագրեր.

3. Կալվածագրեր.

Նվիրաբերական գրառումները կամ «վակֆերը»<sup>2</sup>, որ քանակով ամենից շատ են, իրենց հերթին բաժանվում են ենթախմբերի:

<sup>1</sup> Այս մասին խոսել ենք «ԵՊՊՊ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ» ժողովածուի (Երևան, 1950) 81-րդ էջի ծանոթագրության մեջ: Իսկ մի շարք կարևոր փաստաթղթեր օգտագործել ենք «ԵՊՊՊ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ» ժողովածուի Բ մասի (Երևան, 1958) ընդարձակ առաջաբանի «Համառատ ակնարկ սոցիալ-տնտեսական կյանքի պատմության» հատվածը շարադրելիս:

<sup>2</sup> «վակֆ» (արաբ. وقف — «կանգ առնել», «ամրանալ») էին կոչվում եկեղեցական հաստատություններին նվիրաբերված կալվածքներն ու ստացվածքները, որոնք ենթակա չէին օտարման: Այդ (վակֆ) բառը մեր վավերագրերում գործ է ածված շուրջ երկու տասնյակ աղավաղ ձե-

Զգալի թիվ են կազմում այն վակֆերը, որոնցով այս կամ այն անհատ անձնավորությունը կամ գերդաստանը, որևէ վանական կամ եկեղեցական հաստատության նվիրում է իր սեփականությունը («մուլքը») կազմող որևէ անշարժ կալվածք՝ արտ, այգի, կրպակ, ջրաղաց, ձիթհանք, փոխհատուցում ստանալով որոշակի քանակության պատարագ կամ օրհնություն: Այս կարգի վակֆերի հարյուրավոր օրինակներ են հայտնի վիմական արձանագրություններից. ձեռագրական գրառումները տարբերվում են իրենց վիմական նամակներից ոճական առանձնահատկություններով: Սրանք գրված են ավելի մանրամասնորեն. տեղ շահելու և հակիրճ ու սեղմ լինելու մտահոգությունը այնքան էլ չի զբաղեցրել դրանց շարադրողներին:

Ծանոթանանք այդ կարգի մի քանի նվիրաբերական գրառումների.

1. Գրանցված է 1303 թվականին, Գրիգոր Լուսավորչի անապատում. նվիրաբերության առարկան է մի խանութ, որը գտնվել է, հավանաբար, Երզրնկայում:

«Ես սիր Սիմոնս, որ տվի զիմ խանութն որ ի Քաֆկտրնոցն ռխֆ ի սուրբ Լուսավորիչն անջինջ, որ քանի յայն արն վարագայ խաչին կիրակէն պատարագ լինի՝ ինձ լինի, որ դրել եմ ինձ հոգեբարձ զԹագվորշահն, որ զիմ հոգիս հոգա զինչ աստուած իւր ցուցնէ: Եւ է խանութին հատերն՝ մէկ դեհն մեծ պարոն ծատարն, ու մէկն Կարապետ աղեղրարն, ու մէկն Սուլէման դանուշմանն, ու մէկն ճանապարհն, որ առաջի և ||| ի թվ. 988. (1303)», (Բ. Սարգսյան, Մայր ցուցակ, հտ. Բ., Վենետիկ, էջ 35):

2. Գրանցված է 1335 թվականին, նվիրաբերության առարկան է մի ձիթհանք.

«Յանուն աստուծոյ և կարողութեամբ սուրբ հոգւոյն ես պարոն Հայրուստ, որ շինեցի զաղօթանոցներ սուրբ մենաստանացս զՔարի վանուցս, զԹանահատի վանուց և զսուրբ Կաթողիկէիս, զի այն էր խնդրուածք իմ յաստուծոյ: Եւ գնեցի ի Սապուխի որդոյ Մահմատայ զձորի յեղեր ձիթահանքն սուրբ Կաթողիկէիս լուսացու և ետու ի ձեռն Իրրանոս քահանային վասն փրկութեան հոգւոյ իմոյ և արևշատութեան զաւակաց իմոց:

Ես Առաքել վարդապետս միջնորդ և վկայ եմ էս հաստատ և անդարձ վախճիս. ի թուաբերութեան հայկազեան տումարի 997. (1335)»: (Մատենադարան, ձեռ. № 4515, էջ 94—95):

3. Գրանցված է 1461 թվականին, սուրբ Նշանի վանքում. նվիրաբերության առարկան է մի այգի.

«Ես Յոհաննէս և իմ հարսն Սուլշուքն տրւար զԱմինատնին այգին զշինիտուօն (°) յիշատակ ի սուրբ Նշանն Ամինատնին հոգուն, իր ննջեցելոցն: Ի ներքին դեհն Յայւատին տղան և ի վերին դիհն աղբիւրն. այլ մարդոյ տաւ տալապայ չկայ. ի յաղբիւրէն վայր՝ ամէնն իւր է, այլ մարդոյ չկայ. եկեղեցին դուխ է, աղբիւրն և ամէն նորա է:

Ես տէր Գալիթ և տէր Սիմէոն եպիսկոպոսք վկայ եմք, ես ռայիս Ամինաւագս վկայ եմ. ես խոճայ Ճալալս վկայ եմ. ես մղտեսի Ճիհանպէկս վկայ եմ, ես խոճայ Կարապետս վկայ եմ. ես խոճայ Զոփլուս վկայ եմ այս քանիս: Ով

վերով՝ աւխլ, ուլ, ռխլ, ռխն, ռխֆ, ռհվ, ռհֆ, ռղբ, ուհվ, վախբ, վախմ, վախն, վաղուպ, վոխմ, օհվ և այլն:



որ այսօր տալ տալապա առնէ նա զմասն զՅուդային առցէ և զխաչահանուացն:

Ես Յոհանէսս և իմ եղբոր որդիքս Ալէքսանոս և Մովսէսն Ը. (8) Քլի (=Քլորի) տրւաք, և գնեցաք զայգին, և տրւաք ի սուրբ Նշանն յիշատակ Ամինատնին հոգուն. այլ մարդոյ տալի տալապա շկայ:

Ի թվ. 2. և Ժ. (1461)» (A Catalogue of the Armenian Manuscripts in the British Museum, by Frederick C. Conybeare, London, 1913, էջ 31):

4. Գրանցված է Աղթամարի Ստեփանոս Դ. կաթողիկոսի աթոռակալութեան տարիներին (1464—1489 թթ.), Ռշտունիքում. նվիրաբերութեան առարկաներն են երկու արտեր.

«Մառայա աստուծոյ Ստեփաննոս, Հերենքսի որդիս՝ Կեմայ տանուտերաց կամօք՝ մեծաց և փոքունց, ետու զիմ հէրենական գնած մուլքն՝ զՓոս արտն՝ Պուտուլկի վանաց սուրբ Աստուածածնին և սուրբ Գէորգ զօրավարին և սքանչելագործ Եղիշայ վարդապետի սուրբ աշին ռխվ և անշինջ յիշատակ: Յիշխանութեան Սուլէյման-բէկին և ի հայրապետութեան տէր Ստեփաննոսին, ի յառաջնորդութեան Յովհաննէս եպիսկոպոսին |||

Ես Ստեփաննոս Հերենքսի որդիս և Աստուածատրու որդիքս Չաղարն և Ետգարս զձորի դրան արտն ռխվ տուինք Քաղէոս առաքելոյն, աստուծոյ վկայութեամբն և հոգևոր տիրի վկայութեամբն, և Յովհաննէս եպիսկոպոսին և աւագերիցուն և ամենայն Կեմայ տանուտերաց վկայութեամբն:

Ղինչ էրէց որ եկեղեցոյն ծառայութիւն առնէ՝ զէն արտի բերքն այն ուտէ և ի տարին հինգ անգամ զՀէրենքսենց գերեզմաններն օրհնէ:

Ես տէր Ստեփաննոս կաթողիկոս վկայ եմ» (Մատենադարան, ձեռ. № 4515, էջ 229—230):

5. Գրանցված է 1581 թվականին, ներքին Մարմետ գյուղում. նվիրաբերութեան առարկան է մի ջրաղացի մեկ քառորդ մասը, որ տրված է Սորբի սուրբ Կարապետի վանքին:

«...Յիշեցէք զներքին Մարմետու տանուտէրն զպարոն Ղամբարն, որ շարեք մի ի Խոջենց ջրաղացէն էառ և ետուր ի դուռն սուրբ Կարապետին, ի ձեռն Հայրապետ եպիսկոպոսին և յայլ միաբանացն. ի թվականին Հայտց Ռվ. (1581)...»

Գրեցաւ ձեռամբ Կարապետ արեղաին, ի գիւղս որ կոչի ներքին Մարմետ, վկայութեամբ սուրբ Ստեփանոսի նախավկաին: Իմացումն լիցի ձեզ եղբարք, որ ջրաղացն ի յԱնանավանք է. և որք կարդայք ասացէք բոլոր սրտիւ և ուղիղ հաւատով աստուած-ողորմի իւրեանց հոգոյն, ամէն, եղիցի, եղիցի» (Մատենադարան, ձեռ. № 4869, էջ 669ա):

Այս կարգի նվիրաբերական գրառումներ կարելի է մեջ բերել տասնյակներով. նրանց մեջ, ինչպես տեսանք վերը բերած օրինակներում, փոխվում են նվիրաբերութեան առարկաները (խանութ, ձիթհանք, այգի, արտ, ջրաղաց), սակայն դրանք բոլորն էլ նվիրաբերողներին պատկանող «մուլքեր» են, մեծ մասամբ ձեռք բերված գնումների ճանապարհով, ուստի և նվիրատուները իրավասու են եղել օտարելու դրանք ցանկացած եղանակով՝ վաճառելու, ժառանգութեան թողնելու իրենց մերձավորներին, նվիրաբերելու վանական-եկեղեցական որևէ հաստատութեան:

14-րդ և հետագա դարերի նվիրաբերական գրառումների մի պատկանելի քանակութեանը վերաբերվում է գյուղական համայնքի հողային ֆոնդի մեջ

մտնող առանձին արտերի ու հողակտորների վանական հաստատություններին վակֆ անելու հարցին: Ուշագրավ այս երևույթը, որ նոր երանգ է տալիս վակֆին, արժանի է հատուկ քննության:

Մանթանանք նաև վակֆերի այդ տարատեսակին բնորոշ մի բանի օրինակների հետ:

1. «Ով դասք քահանայից, յիշեցէք ի սուրբ և ի լյերկնա՞ լուր յաղաւթս ձեր ||| լի պարոնին որդին [Խօ] ճասար պէկն ||| թումն տեղ՝ անջրդի արտն, որ է ի Կար||| եզերն ողբ իղիր [Ա.ստուած] յածնին. ով որ վալ յելէ լիտր մն ձէթ [Ա.ստուած] յածնին տայ: Ով որ այս բանիս հակառակ լինի կամ զայս արտս խորէ յեկեղեցոյս՝ յազգաց կամ յաւտարաց, զանէծս Կայենի առցէ և ընդ խաշհանուացն պատժեսցի: Եւ այս բան կամակցութեամբ տէր Աւետեացն եղև: Յիշատակ դնաւդն և վաստակաւդն, որ հանապազ զայն ձէթն [վառէ]՝ աստուծոյ անճառ լուսնոյն] արժանի լիցին, [ամէն]:»

Ի թվ. ՊԶ (1431)» (Ն. Սարգիսյան, Մայր ցուցակ..., հտ. Ա, Վեհտիկ, էջ 664):

2. «Քրիստոս աստուած... լուսատրեայ զՀայրապետնց տէր Արքահամի հոգին, որ կամեցաւ զիւր հալալ դատքն՝ Ժ. (10) դռշ. (դուռուշ) կտուր, զՇիրիկայ բաժին դնեց՝ Խ. (40) կոտ դարալ. Ժ. (10) եթող, Լ. (30) ռխւ արար ի վերայ Գ. խորանին յիշատակ իւր, ծնողաց նորին՝ հարն՝ տէր Հայրապետին՝ հանգուցելոյն առ Քրիստոս և մարն Զանաղին...: Աստուած զՅանանից տանուորէքն արհնէ՞ զմեծն-զփոքրն, որ այս բանիս վկայ եղան. ով որ հակառակէ, կամ յաւան ձգէ, կամ այլայլէ՞ նա զանէծքն զԿայենի և Յուդային և ղխաշխանողացն առցէ, ամէն, ամէն, եղիցի» (Մատենադարան, ձեռ. № 4955, էջ 155բ—159ա, ժամանակ՝ 16—17-րդ դդ.):

3. «Յիշեցէք ի Քրիստոս և աստուած ողորմի ասացէք Պետունց Գեւօին, հօրն՝ Կարապետին, մօրն՝ Գուլաղին, հօրեղբօրն՝ Հախրապետին, և որդուն՝ Յովանէսին՝ նիրքին թաղ առտն օհվ արարին ի դուռն սուրբ Կարապետին, կապիճ մի աշքնցան կարալ տան ձեռամբ Ազրլանայ ըռէս ներսօին, ըռէս Յովանէսին, ըռէս Կազարին, տանուտէրաց՝ մեծամեծաց և փոքրոց: Ով հակառակ կենայ՝ անէծք Կայենին առնէ և այլ խաշհանողացն, ամէն...» (Մատենադարան, ձեռ. № 4915, էջ 1ա, ժամանակ՝ 17-րդ դարի վերջերը):

4. «Յիշեցէք ի Քրիստոս և աստուած ողորմի ասացէք Մարկոսին, որ զՇարակածոր ռխվ երար ի վերայ սուրբ Գէորգա՝ կէս կապիճ կապալ» (Մատենադարան, ձեռ. № 4915, էջ 137բ, գրանցված է մերձավորապես 1701 թվականին):

5. «Յիշեցէք ի Քրիստոս և աստուած ողորմի ասացէք մահտեսի Աղաչանին և մահտեսի Սարուխանին և տան մեծի և փոքու՝ առհասարակ ամենեցուն, ամէն, որ զչաղցի վերև ռխվ երար ի վերայ սուրբ Գէորգա՝ կապիճ կէս կապալ, և զձմի առտ՝ կիսրար, և զաւազիկ ռխվ ի վերայ սուրբ Ծրոսաղեմա՝ կէս ղ[ու]ռուշ» (Մատենադարան, ձեռ. № 4915, էջ 137բ—138ա, գրանցված է մերձավորապես 1701 թվականին):

6. «Յիշեցէք ի Քրիստոս և աստուած ողորմի ասացէք մահդասի Գուլամիրին, և հօրն մահդասի Ստեփանին, և մօրն Զաղին, եղբօրն Վարդանէսին, որ կամեցան և տուին Կռանայարտ՝ ռխու արարին ի դուռն Ապարանից սուրբ Նշանին. տարին Ծ. (5) կապիճ հաց տան սուրբ Խաչին, աստուած լուսաւորէ զիւրեանց հոգին, ամէն»:

Գարձեալ յիշեցէք ի Քրիստոս և աստուած ողորմի ասացէք Սահակին, և Տօրն Նիկիոյսին, և մօրն Թարեզին, և եղբայրն Մուրադին, որ կամեցան և տուին զՋրուրնիկ՝ ռիսու արարիլն լի դուռն Ապարանից սուրբ Նշանին, տարին գրիւ մի հաց կապալ տան. աստուած լուսաւորէ զիւրեանց հոգիքն, ամէն...» (Մատենադարան, ձեռ. № 5526, էջ 138բ, ժամանակ՝ 16—17-րդ դդ.):

7. «Կաման աստուծոյ ես՝ Պօղոսի որդի Արագս, իմ եղբայր Պօղոսս, իմ հօրեղբոր թոռն Խեչատուրս և մեր որդիքս գիր տվինք առաջի աստուծոյ, որ մեր նախնիքն մէկ արայվար հող իւրեանց հողոյն համար տվել էին Անդրիասանց Սարգիսին. յետոյ Սարգիսն անյիշատակ էլաւ, մեր տված հողն անտէր մնաց. մենք էլ պարնիցն հողն ճարեցինք, մէկ արաւար հող էլ մենք վրէն հաստատեցինք, Բ. (2) արայվար հող տվինք վախմ Սանահնոյ սուրբ Աստուածածնին. ով որ մեր ազգ, մեր որդի կամ այլ մարդ վարէ՝ Ե. (5) ծել վարողն տանի, մէկ ծել ղրկէ Աստուածածնի դուռն, որ միարանքն ուտեն մեր նընչեցելոցն Քրիստոս որդի ասեն...» (Մատենադարան, ձեռ. № 3050, էջ 273բ, ժամանակ՝ 17-րդ դար):

Օրինակները համարենք բավարար: Ինչպես տեսնում ենք, վերոհիշյալ գրառումների մեջ վակֆ են արվում վարելահողեր. սակայն նրանք ոչ թե ղրվում են հիշատակված վանական-եկեղեցական հաստատութիւնների իրավասութեան տակ, այլ մնում նվիրարեբողի ձեռքում, պայմանով որ նվիրարեբողը կամ վակֆ արված այդ հողակտորի գալիք մշակողը՝ բաժին հանի վանական հաստատութեանը — մի լիտր ձեթ, 40 կոտ բնավարձի  $\frac{3}{4}$ -ը (30 կոտ), կես, մեկ, մեկուկես, կամ հինգ կապիճ հաց, մի գրիվ հաց, բերքի  $\frac{1}{6}$  մասը և այլն:

Վակֆ արված այդ հողակտորները, այսպիսով, չէին դադարում գյուղական համայնքի հողային ֆոնդի մասը լինելուց: Նրանց մշակող գերդաստանները, որոնք պարտավոր էին անտա-հարկ վճարել պետութեանն ու հողատիրոջը, կամովին հանձն էին առնում հիշատակված հողակտորների բերքից ամեն տարի տրոշակի մաս՝ «դարար» (արաբ. قَبُول — «հանձնառութիւն»), «համաձայնութիւն» բառից) հանձնել վակֆ ստացող հաստատութեանը: Գրառված վավերագրի ուժով ու գյուղական համայնքի տանուտերերի՝ «մեծի ու փոքրի» հանձնառութեամբ՝ այդ պարտավորութիւնը տարածվում էր վակֆ արված հողակտորի հետագա մշակողների վրա:

Ընդհանուր առմամբ այսպիսի բովանդակութիւն ունեն վերը բերված և մեր ձեռքի տակ եղող մի քանի տասնյակ մյուս վավերագրերը: Նրանց մեջ սակայն կան նաև տարբերութիւններ:

Այսպես, օրինակ, առաջին վավերագրից (որը դժբախտաբար լրիվ չի վերծանված) կարելի է հետևցնել, որ վակֆ անողը կալվածատեր է՝ ոմն Խոնասար բեկ, որի հայրը (անունը անընթեռնելի) մեծարված է «պարոն» տիտղոսով: Նկատի առնելով այս հանգամանքը կարելի է, թերևս, եզրակացնել, որ վակֆ արված «անչրդի արտը» Խոնասար-բէկի կողմից տրված է եղել վարձակալման և տարին մի լիտր ձեթ սուրբ Աստուածածնի եկեղեցուն տալու պարտավորութիւնը ղրվել է վարձակալողի («ով որ վայելէ») վրա:

Ուշագրավ է նաև մեջ բերված երկրորդ վավերագիրը: Երեք խորան կոչվող սրբավայրին տարին 30 կոտ ցորեն տալու պարտավորութիւն ստանձնած, վավերագրի գրանցման ժամանակ արդեն հանգուցյալ Հայրապետոնց

Արրահամը 10 ղուռուշով գնել էր «Շիրիկայ բաժին» կոչված հողը: Հողակտորի վարձակալողի (Շիրիկի<sup>1</sup>) և նրա մեջ համաձայնություն էր կայացել ամեն տարվա բերքից տալ Արրահամին 40 կոտ ցորեն («Խ. կոտ ղարալ»): Ահա այդ 40 կոտից 30 կոտն է, որ Արրահամի և նրա ծնողների հոգու փրկության համար վակֆ է արվել Երեք խորան կոչվող եկեղեցուն:

Մեջ բերված հինգերորդ վավերագրում, բացի «կապիճ կէս կապալի» մասին հիշատակությունից, որ տրվելու էր տարեց տարի ջրաղացի վերևում գտնվող վարելահողից սուրբ Երուսաղեմին, հիշատակություն կա նաև «ձմի» (ծմակային) մի արտի մասին, որպես կիսրար արտ և «աւաղիկ» արտի մասին, որի դիմաց պարտավորվել են եկեղեցուն տալ ամեն տարի կես ղուռուշ դրամ:

Հողի վարձակալության (ИЗДОЛЬЩИНА) սիստեմի գոյության մասին վկայող «կիսրար» տերմինի հետ սերտ աղերսի մեջ է նաև «ոխվերու (իմա՛ վակֆերի) շարեք» տերմինը, որը բացատրության կարիք է զգում:

15-րդ դարից պահպանվել է մի վավերագիր, որի մեջ հիշատակված է այդ՝ «ոխվերու շարեք» տերմինը.

«Քրիստոս աստուած... ողորմեա ամենայն հաւատացելոց, ևս առաւել Գովյաթիարին և Խոսրովին, Մկրտչին և Թումին, և ծնողաց նոցին, որ զոխվերոյ շարէքն բաշխեցին. արարիչն աստուած զիւրեանց մեղքն թողու, ամէն: Ընդ նոսին զԽունկանց Կարապետին, որ միջնորդ եղև այսմ բարի գործոյս, ամէն» (Մատենադարան, ձեռ. № 4674, էջ 51ա)<sup>1</sup>:

Այդպիսի մի վկայություն էլ պահպանվել է 1476 թվականին ընդօրինակված մի Ճառքնտրի հիշատակարանի ստորև բերվող հատվածում.

«Գարձեալ յիշեցեք զբարեպաշտ հաւատարիմ տանուտէրքն Վանայ քաղաքիս՝ զխոջա Յովանէսն, զմելիք Բախտիարն, զխոջա Պարսամն, զոէս Փերիշանն, զոէս Սարխոշն, զխոջայ Ազնաւուրն, զխոջա Գրիգորն, զխոջա պարոն Գորգն, զխոջա Յովանէսն, միւս խոջա Յովանէսն, զխոջա Կարապետն, զԱնձրեանց Մուրատն, զխոջա Էղզանբախշն, մեծ և փոքր քաղաքի տանուտէրքս, որ ամէն եկեղեցեաց ոխֆերու շարէքն բաղլեցին» («ԺՅ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ» մասն Բ., էջ 405):

«Չարեք» (իմա՛ «չհար-յեք») կոչվում էին վարձակալության տրված այն վարելահողերը, որոնց մշակման դիմաց անմիջական արտադրող գյուղացին պարտավոր էր կալվածատիրոջը հանձնել բերքի մեկ քառորդը:

Գյուղական համայնքի մեջ ընդգրկված գյուղացիներից ոմանք վանական տարրեր հաստատությունների վակֆ էին անում առանձին հողակտորներ, որոնց օգտագործման իրավունքն էր միայն գտնվում իրենց ձեռքին «չարեքի» սկզբունքով վարձակալման պայմանով:

Այդ հողակտորների մշակման իրավունքը երբ անցնում էր վանական այս կամ այն հաստատությանը, նրանց ունեւայի վճարման պարտավորությունը նույնպես, ավտոմատիկ կերպով անցնում էր նոր օգտագործողին (տվյալ դեպքում՝ վանական-եկեղեցական հաստատությանը):

Եվ ահա, որոշ դեպքերում քաղաքային և գյուղական համայնքների մեծամեծները՝ մելիքներ, ռեսներ, խոջաներ, իրենց համայնքների անունից

<sup>1</sup> Այս նույն անձնավորությունները, որոնց հետ նաև մելիք Ստեփանոսը, նույն առիթով հիշատակվում են մի այլ ձեռագրի մեջ ևս (տե՛ս «ԺՅ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն Բ., էջ 405-ի ծանոթագրությունը):

պարտավորություն էին ստանձնում վճարել վանքերին վակֆ արված այդ յա-  
տեղորիայի հողակտորների կալվածատիրական ունեւան՝ «ոխվերու շարեքը»  
և թի տվյալ վարելահողը վարձակալման էր արված բերքի մեկ-քառորդը կալ-  
վածատիրոջը հանձնելու պայմանով, կամ կեսը՝ «կիսարարի» դեպքում, կամ  
էլ մի այլ մասը, նայած վարձակալության պայմանին և կալվածատիրոջից  
գյուղացու կախման աստիճանին:

Ինչպես տեսնում ենք այս («կիսարար» և «շարեք») տերմինները հնարավոր-  
ություն են ընձեռում պարզելու, որ ֆեոդալական շահագործման բնավար-  
ձակալման սիստեմը լայն տարածում ունեւ Հայաստանում՝ 15-րդ և հետագա  
դարերում:

Նվիրաբերական գրառումների երրորդ ենթախմբի մեջ են մտնում մեծա-  
քանակ այն վավերագրերը, որոնցով տարբեր մասնագիտության ու դրադ-  
մունքի մարդիկ հանձն են առնում վանական որևէ հաստատության համար  
ամեն տարի անվարձ որևէ ծառայություն կատարել կամ որոշյալ շափով նյու-  
թական որևէ նպաստ բերել:

Մանթանանք նաև վակֆերի այս տարատեսակի մի քանի բնորոշ օրի-  
նակների հետ:

1. «Ես Աւարս և Զըմբուծս՝ ծառայ սուրբ Աւետարանի» և սուրբ Կոս-  
տընդնայ: Ես Զըմբուծս ի յիմ ձեռացս ի բանէն յամէն տարի Գ. (4) նուկի  
իրբխտին կիրիոն լընում ու տամ. և ես Աւարս ի յիմ ձեռացս յամէն տարի  
աղեկ գառ մն սուրբ Գրիգորոյ և սուրբ Կոստընդնայ ուխտին բերեմ անպատ-  
ճառ: Եւ որ ոչ կատարէ զհրաման սուրբ ուխտիս՝ առցէ ի յահել դատաստանէն  
Քրիստոսէ աստուծոյ մերոյ զվրեի||| Թէ արհնեալ յաւիտեանս, ամէն:

Վկայ է այս բանիս սուրբ Աւետարանս Քրիստոսի և ժողովուրդը, որ աստ-  
հանդիպեցան.

Ես Լուսս վկայ.

Ես Միարևս վկայ.

Ես Ղարիպշահս վկայ.

Եւ ես նախատ Վրիգոր երէցս, որ զգիրս գրեցի՝ վկայ:

Գր. ի Թվ. հյ. ԶՂԷ. (1348), ի մայիսի ԻԸ. (18)» (Մատենադարան, ձեռ-  
Ն 3793, էջ 88բ):

2. «Ես Վարձիգուլս որդի Ամիրազիզին եկի ի Մաւղնոյ վանքս՝ դրի յիշա-  
տակ իմ հոգուս, որ զինչ վանուցն աղուն լինի՝ իմ շաղացն աղցվի, որ զինչ  
միաբանք լինին վանքս՝ ուտեն...: Եւ միաբանք վանիցս՝ Իգնատիոս կպիսկո-  
պոսս և այլ արեղայքս՝ ի տարին մէկ ժամ կատարենք Վարձիգուլին հոգուն  
քանի վանքս ենք. և յետ մեզ հաստատուն պահաւղքն արհնին յաստուծոյ,  
ամէն. և ով որ վանքս լինին՝ դայս կատարեն» (Մատենադարան, ձեռ-  
Ն 3646, էջ 256ա, ժամանակ 14—15-րդ դդ.):

3. «Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զԱղուպշի որդին զՈվանէս, զԹուլիկ,  
որ զ|||ածանէն դաշտպահութիւն յիսֆ արարին սուրբ Քառասնից. զինչ սուրբ  
Քառասունք պատարագ լինի՝ իրեանց մասն և բաժին [եղիցի]» (Մատենադա-  
րան, ձեռ. Ն 4845, էջ 1ա, ժամանակ 15—16-րդ դդ.):

4. «Քրիստոս աստուած քո սուրբ ծնաւորի բարեխաւսութեամբդ ողորմեա  
ամենայն հաւատացելոց, ևս առաւել ուսթա խալիֆին, որ յամէն տարի Բ. (2)  
գութան է տուէր սուրբ Վարդանայ...» (Մատենադարան, ձեռ. Ն 1524, էջ 921բ,  
ժամանակ 15-րդ դար):

5. «Յիշեցէք ի Քրիստոս զուսթայ Միրիշան՝ զՍղերթցին և զիւր որդին Էատշէն, որ ամէն տարի երկու սու տայ վանից մշակուն: Փոխանակ Քրիստոս զերկնից արքայութիւն տայ իւր ծնողացն և ամենայն արեան մերձաւորացն, ամէն» (Մատենադարան, ձեռ. № 5462, էջ 314բ, ժամանակ՝ 17-րդ դարի սկիզբ):

6. «... Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս և աստուած ողորմի ասացէք նաւրանդ Յակոբուն, որ սուրբ Սահակա առաջնորդի ձին անվարձ նալէ, որ ոխֆ արար: Զինչ որ պատարագ մատչի և սաղմոս ասուի ի սուրբ եկեղեցիքս՝ մասն և բաժին եղիցի իւր և իւր ծնողացն, ամէն» (Ե. Լալայան, Յուցակ, էջ 680, գրառման ժամանակն՝ անհայտ):

7. «Դարձեալ աստուած ողորմի ասացէք ուսթայ Փանոսին, և ծնողացն՝ հօրն Շեհիջանին և մօրն Խանումին, և կողակցին Մարգարտին, որ ոխֆ արար զձեռն սուրբ Միրանաւորի, որ ինչ կողպէս թէ բաժնիս շինելոյ լինի՝ շինի...» (Մատենադարան, ձեռ. № 4749, էջ 350բ—351ա, ժամանակ՝ 17-րդ դարի սկիզբ):

8. «Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս Խէբէնց Էտգարն, որ Ի. (20) տարի Սլուրու նախորդ էկաց և վանաց նախիրն ոխֆ և նուէր արար սուրբ Գէորգայ զրոսնն. արևալիչն աստուած զինքն արհնէ... և դայն մարդն, որ նախորդ կենայ՝ նայ դայս ոֆիսլսլ [տ]եղն պահէ. թէ չէ՝ նայ ի սուրբ Գէորգէն սևերես լինի...» (Մատենադարան, ձեռ. № 5805, էջ 333բ, ժամանակ՝ հավանաբար 16-րդ դար):

9. «Դարձեալ յիշեցէք... տանուտէրն՝ զներկարար Էմնադին... զսուրբ Պօղոսու քահանայից ներկ թարխան արար» (Ե. Զուղա, ձեռագիր № 544, ՄՏՄ, ժամանակ՝ հավանաբար 15-րդ դար):

Ինչպես տեսնում ենք վանական հաստատութիւնների օգտին անվարձ որևէ ծառայութիւն կատարելու հանձնառութեան մասին վակֆերը վերաբերում են տնտեսական գործունեության ամենատարբեր մարզերի՝ վանքի լուսավառութեան համար ձեթ հայթայթել, տարին մի դառ նվիրել, վանքի աղունն աղայ առանց վարձի, հանձն առնել վանքի դաշտերի պահպանութիւնը, տարին 2 օր սեփական գութանով ու լծկաններով հերկել վանքի վարելահողը, տարին երկու սուլ (ոտնաման) տալ վանքի մշակների համար, անվարձ պալտել վանահոր ձին, անվարձ շինել վանքի համար անհրաժեշտ կողպեքներն սրբանայինները, անվարձ արածացնել վանքի նախիրը, անվարձ ներկել քահանաների բուրգն ու հալավը և այլն, և այլն:

Նման բովանդակութիւն ունեցող բոլոր վավերագրերի տվյալները, լրացնելով մեկը մյուսին, կարող են մեծապես նպաստել միջնադարյան Հայաստանի վանական տնտեսութիւնների գործունեության տարբեր բնագավառների ուսումնասիրութեանը:

Նվիրարեւրական գրառումների շարքում առանձնահատուկ տեղ ունեն նաև այն վավերագրերը, որոնք շարադրված են գրամական վակֆերի կապակցութեամբ: Մանթանանք այդ կարգի մի-երկու վավերագրերի հետ:

1. «Ի թվին Զե. (1491) և նոյեմբեր ամսոյ Իէ. (27): Ես մղտսի Կուլիստան ծառայս աստուծոյ՝ սուրբ Թորոսու եկեղեցոյն ծառայ եմ և հնազանդ, իմ սրտի կամաւս Ի. (1000) սպիտակ լիւ տամ, որ ամէն տարի զիս յիշեն քահանայքն ժամ առնելով և աստուած-անեղ ասեն...: Եւ տան դայս սպիտակս

ամէն տարի ի մէկ տանուտէր և զկաթն անուն քահանայքն և աստուած աննդ ասեն...:

Այս բանիս վկայ տէր Պետրոսն սուրբ Գորգու.

Այս բանիս վկայ տէր Յակոբն Խոճին եկեղեցուն.

Այս բանիս վկայ տէր Ղազարն սուրբ Քորոսու.

Այս բանիս վկայ պարոն հարիւրաւագ նիկաւղոսն.

Այս բանիս վկայ պարոն Պաւրաշն.

Այս բանիս վկայ պարոն Խուճլուպէկն.

Նւ ես Յոհաննէս արեղայս այլ վկայ |||, որ զգիրս գրեցի» (Մատենադարան, ձեռ. № 7449, էջ 498):

## 2. «Ի Թվին ՉՂԹ. (1550)...

Աստուած արհնի Աղբիգան պապային դուատր, որ երէտ, սուրբ Քորոսու յիշատակ Ռ. (1000) սպիտակ ՚ իր մօր հոգւոյն յիշատակ անջնջելի, աստուած աննդ ասելով: Կատն (իմա՝ կաթն) անուն՝ Ճ. (100) եկեղեցոյ, Ճ. (100) իրիցնհերուն աստուած աննդի» (Մատենադարան, № 7449, էջ 498)<sup>1</sup>:

3. «Ծս վանեցի տէր Ըստէփանոս ԺՌ. (10.000) դկ. (դահեկան) սուրբ Խաչիկ յաւետարանին տվի, որ տաճարի տեղն շինեն՝ խարճեն, յիշատակ իմ հար Մխիթարին, իմ մար Խանաղին, Եղբայր Ատոմին, Աստուածայտուրին, Ախիճանին, Գլբիգորին, իմ որդոյ Ատոմին. աստուած ընդ երկայն ատուրց անէ, ամէն, հայր:

Թվկ. ՌՂԳ. (1585) էր, փետրվարի Ժ. (10)-էն արն...»: (2. Աճառյան, Յուցակ հայերեն ձեռագրաց Քարիզի, էջ 74):

Այս վավերագրերից ուշագրավ են հատկապես առաջին երկուսը, որոնք դրանցված են, հավանաբար, Ղրիմի Կաֆա քաղաքում: Բուն Հայաստանի վանական հաստատութիւններին արված դրամական նվիրաբերութիւնների մասին մեր ձեռքի տակ եղող մի շարք համանման գրառումներից և ոչ մեկը տեղեկութիւն չի պարունակում նվիրաբերված գումարի շահով տալու և տարեց տարի ստացվող վաշխի տոկոսի մասին: Վերը բերված երկրորդ վավերագրից հայտնի է դառնում, որ 1000 սպիտակ գումարը տարին բերում էր 200 սպիտակ, այլ խոսքով՝ 20 տոկոս շահ:

Առաջին վավերագրի «Նւ տան զայս սպիտակս ամէն տարի ի մէկ տանուտէր» արտահայտութիւնից կարելի է արտաբերել, որ Ղրիմում կային վաշխառուական գործարքներ կատարող հայ գերդաստաններ:

Որոշակի հետաքրքրութիւն է ներկայացնում «կաթն» տերմինը, որը Ղրիմի վավերագրերում գործ է ածված մայր գումարի ամեն տարի բերող շահի իմաստով:

Մ. Կովալևսկին իր «Օրենքն ու սովորույթը Կովկասում» ուսումնասիրութիւն մեջ կանգ է առնում Կովկասյան լեռնականների (բալկարներ, օսեր, կարաչայցիներ) միջավայրում շահի հաշվարկման հինավուրց եղանակի վրա. «Նրանց մոտ, — գրում է Կովալևսկին, — շահույթի հաշվարկման հիմքում դրված է կովի բնական աճը, դրա հետ մեկտեղ հաշված և այն եկամուտը, որ տալիս է նա կաթի և սլանրի ձևով»<sup>2</sup>:

<sup>1</sup> Նույն այս ձեռագրում, որ գրված է, հավանաբար, Ղրիմի Կաֆա քաղաքում, կան նման գրառումներ նաև 1503, 1541, 1543, 1544, 1546, 1557 թվականներից:

<sup>2</sup> Максим Ковалевский, Закон и обычай на Кавказе, том I, М., 1890, էջ 208:

«Կաթն» հայկական տերմինի գոյությունը «շահ», «տոկոս» նշանակությամբ հնարավորություն է տալիս ենթադրելու, որ հնում շահի հաշվարկման այդպիսի մի եղանակ կիրառվել է նաև հայկական միջավայրում:

Միսական բովանդակություն ունեցող ձեռագրերի էջերին գրանցված տնտեսական բնույթի գրառումների մի պատկառելի մասը պայմանագրեր են: Որպես պայմանավորվող կողմեր հանգես են գալիս ինչպես տարբեր վանական հաստատություններ կամ որևէ վանական հաստատություն մի և գյուղական որևէ համայնք՝ մյուս կողմից, այնպես էլ առանձին անհատներ: Բնականաբար, տարբեր են նաև այդ կարգի վավերագրերի շարադրման առիթները:

Հատուկ հետաքրքրություն են ներկայացնում վանական հաստատությունների և գյուղական համայնքների հողային ու շրջին վեճերի մասին ակնարկներ պարունակող վավերագրերը, որոնք աղտոտ լույս են սփռում իրենց հոգևոր տերերի դեմ հայ գյուղացիության մղած սոցիալական պայքարի դրվագների վրա:

Մանթանանք այդ կարգի մի-երկու վավերագրերի հետ.

1. «Ի թկ. Հայոց ԶԼԶ. (1487):

Այս է վանից սնօր կնգուղօն՝ արդի եոր և սասմահ խաշ և Քարաշար և կուսանաց սար, և գայ ձորն. ձորէ մինչև ի խաշի արդի ճանապ||| էս մինչև Տօրունօ արդի գլօխ:

Այս բանիս ես՝ տէր Խաշատուր վկայ. ևս ոէս Թառ||| վկայ. և եղև մենք հասառակութիւնն այս բանիս մենք ||| վկայ: Եւ այս բանիս օվ հակառակ կայցէ՝ Ուղայի և Կայենին առցէ, ամէն» (Մատենադարան, ձեռ. № 9223, Ե, էջ 6բ):

Վավերագիրը շարադրված է շատ անգրագետ ձեռագրով, որոշ բառեր մաշված են ու անընթեռնելի, այնուամենայնիվ բովանդակությունը, իր հիմնական գծերով, պարզ է:

Ինչ-որ վանքի հողային սահմանների շուրջ վեճեր են տեղի ունեցել վանքի և մոտակա գյուղի բնակիչների միջև: Վանականներին հաջողվել է պարտադրել իրենց կամքը և շարադրել տալ վանքի սահմանները ճշգրտող այս պայմանագիրը, որի «ճշտությունը» հավաստվել է գյուղի «հասարակութեան» կողմից՝ հանձինս քահանայի և ռեսի: Անեծքի ուժով վանքն ամրացրել է իր ձեռք բերածը:

2. «Թվն. ՌեՁ. (1597), ես՝ Բարսեղ վարդապետս, ի ժամանակս Հուլպա խանին բերդակցիք և նորշնցիք տագեցին (՝ աղավաղ բառ) առնուլ զշուր. ԵՃ. (500) զուռուշ խարճեցի և սուրբ Առաքելոց օգնականութեամբն յաղթեցի նոցա և զաւթ արի, և ամենեքեան հնազանդեցան և անկան: Ով ոք ելեալ կրրկին ջանայ շրին՝ զանէծս Կայէնի և Յուղայի առցէ և հոգով, մարմնով և որդով զրկեսցի յողորմութենէն աստուծոյ և ի սրբոց առաքելոցն, և Յիսուսէ՝ տեառնէ մերմէ նզովեալ ալ լիցի աստ և ի հանդերձեալն. բնդունողք գրոցս օրհնեալ լիցին, ամէն» (Մատենադարան, ձեռ. № 7729, էջ 2ա):

Ձեռագիրը, որի դատարկ մի էջի վրա գրանցված է այս ուշագրավ փաստաթուղթը՝ Մշո Առաքելոց վանքի նշանավոր Տոնականն է (ամենախոշոր հայերեն ձեռագիրը):

Բարսեղ վարդապետը՝ Առաքելոց վանքի վանահայրը կամ հեղինակավոր միաբաններից մեկը, 1597 թվականին 500 զուռուշ ծախսելով կարողանում է վանքի սեփականությունը դարձնել («զաւթ» անել) ջրանցքը (կամ առուն), որից օգտվում էին նաև Բերդակ և Նորշեն կոչվող գյուղերի բնակիչները: Յոթ-



նապատիկ անեծք է բարդվում իրենց տնտեսական շահերի պաշտպանության համար Առաքելոց վանքի դեմ ելած գյուղացիների գլխին, եթե նրանք այնուհետև ևս համարձակվեին վեճ բացել այդ ջրի համար («Ով որ ելեալ կրկին ջանայ ջրին՝ զանէծս Կայենի և Յուդայի առջէ»):

3. «Գրեցաւ զիրս ի Զբրաշէն, ի դուռն սուրբ Աստուածածնին, ձեռամբ Աւետիս վարդապետին Ալըրեցոյ, և կամակցութեամբ հայր Կարապետին, և զիւղի քահանայից և դուլաթաւորաց մարիֆաթով... (Թվարկվում են գյուղի քահանաների և դուլաթաւորների անունները), վասն արտերաց, որ է Բանկլի ձորովն ի յայն դեհն, որ այլ և ոչ լինի, թէ մերոց և թէ յօտարաց, թէ առաջնորդաց, թէ քահանայից, թէ յաշխարհականաց և որոց հմուտ գիտութեան արտերացս, զոր գրեցաք այլ և այլ արասցէ՝ երեք հարիւր և Ժ. և Լ. հայրապետաց նդովեալ եղիցի, ամէն»:

Ի թվականութեանն Հաոց ՌՃ՝. (1651՝)...» (Մատենադարան, ձեռ. № 4782, էջ 2բ):

Այս վավերագիրը ևս շարադրված է սահմանավեճերի կապակցությամբ: Զբրաշենի քահանաներն ու «դուլաթաւորները», հանդես գալով գյուղական համայնքի անունից, պարտավորվում են այլևս վեճ չբացել «Բանկլի ձորովն ի յայն դեհն» գտնվող արտերի վերաբերմամբ, ընդունելով, որ դրանք պատկանում են Զբրաշենի սուրբ Աստվածածնի վանքին:

Վանական հաստատությունների և գյուղական համայնքների միջև հողի ու ջրի համար մղվող տեական պայքարի մասին են վկայում նաև մի շարք այլ վավերագրեր, որոնք առաջին հայացքից թողնում են սոսկ այս կամ այն վանքի տարբեր գյուղերում ունեցած վարելահողերի թվարկման տպավորություն:

Այդ կարգի վավերագրերի վերջում գրանցված անեծքի բանաձևերը, ուղղված բոլոր նրանց հասցեին, ովքեր երբևէ կհամարձակվեն հակառակել և ընդունել այդ վարելահողերի պատկանելիությունը վանքին, ըստ ինքյան վկայություն են այն մասին, որ դրանք և՛ վերը բերված առավել ցայտուն օրինակների նման, շարադրված են վանականների կողմից, իրենց կամքը շրջակա գյուղերի համայնքներին թելադրելու և այդ համայնքների հողային ֆոնդի մեջ մտնող մի շարք արտերի մշտապես տիրելու նպատակով:

Ծանոթանանք այդպիսի երկու վավերագրերի հետ, որոնցից առաջինը շարադրված է Խառաքաստի վանքում, 1420 թվականից առաջ (մինչև Կարա-Յուսուֆի մահը), իսկ երկրորդը՝ Ռշտունիքի Կարմրակ սուրբ Աստվածածնի վանքում, 1602 թվականին:

1. «Ի դանութեան Ղարայ-Ուսուֆին, և ի պարոնութեան Իսպին, և յառաջնորդութեան սուրբ ուխտիս Կարապետ վարդապետի՝ տուաւ նալաթլամով մուլք՝ Ի. (20) մութ (իմա՛ մոթ) ոստին ի Կտրած-քար Սուրբ Աստուածածնիս, ի զիւղն Անիշատ՝ ի շինամէջ՝ երեսուն մութ տեղ ջրով, քսան մութ՝ ոստին, ի Կտրած-քար Ժ. (10) մութ ջրով, Ի. (20)՝ ոստին, ի Փակաճ՝ ԺԵ. (15) մութ տեղ, ի Հայրիկէ՝ ԺԵ. (15) մութ տեղ, ի Վառնջիկն՝ Երկու-խաչ արտն, երկու ակն ջաղաց, ի Բոլորամարզն՝ Ա. (1) արտ, ի Բլուրն Ա. (1) արտ, յԱկանց՝ Դ. (4) արտ, յԻրիշատ՝ Ա. (1) արտ, ի Մկնաւերն՝ Բ. (2) արտ, ի Խառաքաստ՝ Զ. (6) արտ, Բ. (2) ջաղաց, ի Սոսկուն Բ. (2) արտ, ի Գանձակ՝ այգի մի:

Ով որ հակառակ լինի՝ զանէծքն Ուդային առնու, և ռբ կամակից լինի՝ օրհնի յաստուծոյ և յամենայն սրբոց» (Ղ. Փիրղալեմեան, Նօտարք հայոց, էջ 31—32):

## 2. «Թվիս [Ռ]ՄԱ. (1602).

Ի նորիգեղ Քուրտիկանց երկան արտ, Սաթօի գուրու պատ... Մալրդալ-  
րի ճոթ, արջախոլրներն, Սիմոնի տոառիկ, Կոնթին գոմկներ, Փիրի գոմկներ,  
տոառիկ արջահորերն, Ղազոյի գոմկներն տոառիկ, գանձգին. Քամալի տոա-  
ռիկ, Առաքելի ցնին, Կարոյի ցնին, Մուրատի խաչի արտ, Կիրակոսի բուրբիկ  
[ա՛րտ], Խլոի գանձգին, Տարմօէնց արջահորեր, Մարտոյի ցնին, Քազպարի  
գանձգին, Շաղպանի արեգղէմն, Գլուկանի արտն, Աստուածամօր ճոթ: Գորդիս  
Սանդուքարով վեր մինչև արեգղէմն, մինչև ծմէն՝ ամենեքեան սոքա արծաթա-  
գին են՝ ի դուռն սուրբ Աստուածածնին և Կարմրակ սուրբ Նշանին և սուրբ  
Սահակայ գերեզմանին վոխմ է տրւած. որ հակառակ կացցէ՝ ատենին Քրիս-  
տոսի պատասխանի տալոց է: Աստուած զայն տանուտէր օրհնէ, որ անաղը-  
տունջ Աստուածածնա տասանորդ տա սպասալւորի ձեռն, որ վանից պէտսն  
հոգասցէ: Եւ որ հակառակէ՝ զանէժք Կայենի առցէ. էքուն ժԲ. (12) քիլա  
ցորեն է:

||| և Սանդուքարով վայր՝ մինչև ծովու յափ Սութգանին թե թե, մինչև  
Շօռատան գլօխ, Գոտեց դաշտ ||| (մի անընթեռնելի բառ) ջուր վանից ոխվ է  
[ա՛րած], որ հակառակէ անէժք և պատիժն Կայենի առցէ» (Մատենադարան,  
ձեռ. № 5454, էջ 321ա):

Պայմանագրային բնույթ ունեցող վավերագրերի շարքում կան նաև իշ-  
խող ու ենթակա վանքերի, ինչպես նաև վանահոր ու միաբանների միջև ծա-  
գած վեճերը հարթելու, կամ համապատասխան փոխհատուցում ստանալուց  
հետո որևէ արտոնություն շնորհելու մասին գրառումներ:

1457 թվականին, օրինակ, Աբրահամ վարդապետից ստանալով շորս գո-  
մեջ և շորս եզ, Աղթամարի վանքը պարտավորվում է այնուհետև շպահանջել  
Ռշտունիքի Գանձակ գյուղի մոտ գտնվող Թովմա առաքյալի վանքից «աջհամ-  
բուրի փարայ» կոչվող եկեղեցական տուրքը (այդ մասին կազմված համա-  
ձայնագիրը տե՛ս Ղ. Փիրղալիմյանի «Նօտարք հայոց»-ում, էջ 186—187):

Գաբենից վանքի վանահայր տեր Հայրապետը Աղթամարի Ստեփանոս  
կաթողիկոսից (1465—1489) գնում է «Կողոպուտ» կոչվող եկեղեցական տուր-  
քից Աղթամարին այլևս մաս չհանելու իրավունքը (Ն. Լալայան, Յուցակ հա-  
յերեն ձեռագրաց Վասպուրականի, Թիֆլիս, 1915, էջ 672):

Վանքերի եկամուտների մեծագույն մասը սեփականելու ձգտում ունե-  
ցող վանահայրերի ու առաջնորդների և շարքային միաբանների միջև տնտե-  
սական հողի վրա առաջ եկող վեճերի ու դժգոհությունների մասին է վկայում  
1608 թվականին շարադրված, սուրբ բերվող յուրահատուկ պայմանագիրը»:

«...Յիշեցէք ի Քրիստոս զտէր Գրիգոր և զիւր հօրեղբայրն զԱսգանդարն,  
և զիւր ծնօղն զԹուրանդէն, որ զահմաթաւ զվանաց տողանքն՝ զպսակղբամն,  
զխաշխամբուրն՝ զամէն բաշխեց վանից միաբանին, սուրբ Գամաղիէլի վկա-  
յութեամբ. ինչ մարդ որ վանից հայր լինի, որ զայս բաներս զարուլ շառնէ՝  
զանէժք զԿայենին առնէ և զպատիժն զՅուդային և զխաչհանողացն, ամէն,  
եղիցի, եղիցի:

Ի թվին հայոց ՌՄԷ. (1608)» (Մատենադարան, ձեռ. № 5462, էջ 314ա):

Գյուղական համայնքի ներսում, մի կողմից ռեսների, քահանաների և  
ազգեցիկ տանուտերերի, մյուս կողմից շարքային գյուղացիների միջև գոյու-  
թյուն ունեցող հակասությունների ու պայքարի մասին մութ ակնարկներ են  
պարունակում սակավաթիվ այն վավերագրերը, որոնցով ռեսները պարտա-

վորվում են վերացնել ապօրինի որոշ տուրքեր, թեթևացնել որոշյալ շափից ավելի գանձվող որոշ հարկեր և անձամբ մասնակցել այդ հարկերի վճարմանը:

Մանոթանանք 15—16-րդ դարերում շարադրված այդ կարգի մի վավերագրի հետ.

1. «Քրիստոս աստուած արհնէ զրոչս Ստեփանոսն և զիւր որդիքն, որ ողորմեցաւ զեղիս Մթայ և եթող զաղչկան յաղկն, որ ի գեղստանին և զշանիգաղէն, և զմեր շարաֆի ||| ըռէսն ի հետ գեղին տայ և զաւերանիքն ի վերայ գեղիս շի դնէ: Քրիստոս աստուած զինքն արհնէ և զիւր որդիքն և զիւր եղբարքն, և զգեղի տանուտէրք, որ կամակից եղան՝ զէս բաղաղաթս ի գեղէս ի վեր կալին: Աստուած ողորմի իւրեանց հոգւոյն և իւրեանց ծնաւդացն, ամէն:

Ով որ չիրար տայ, կամ առնու, կամ ի յաւան ձգէ, նայ զանէծն զԿայսնին առնու և զպատառն զՅուդային և զխաչխանողացն, և զբարկութիւն աստուծոյ ի վերայ իւրն բիրէ և ի վերայ տանն, ամէն» (Մատենադարան, ձեռ. № 4814, էջ 129ա):

Ուշագրավ է 1596 թվականին շարադրված նման բովանդակությամբ մի այլ վավերագիր. այստեղ ասվում է, որ Կակոս անունով մեկը, դառնալով Բաստ գյուղի ղեկավար, «արար մեծ բարութիւն», «վերուց ի գեղէն զշափ ցորէն ալըղան, որ ամէն տուն շափ մի ցորէն կու տային ի յրոչսն ալեղան. վասն որոյ զմտաւ ածեալ զօր մահուն Կակոսն և զերկիւղն աստուծոյ և վերուց զայն շար դարալն ի գեղէն» (Ա. Սիւրմէեան, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Երուսաղէմի սուրբ Յակոբեանց վանքի, առաջին հատոր, 1948, էջ 358—359):

Այս և նման մի շարք այլ գրառումները հնարավորություն են ընձեռում սովորագծելու միջնադարյան հայկական գյուղական համայնքի ներքին կյանքի ու սոցիալ-տնտեսական հարաբերությունների պատկերը, մի բան, որ անհնարին էր կատարել այլ կարգի սկզբնաղբյուրների միջոցով<sup>1</sup>:

Որոշակի արժեք ունեն նաև անհատ անձնավորությունների միջև կնքված պայմանագրերը, որոնք վերաբերում են տնտեսական գործունեության ու հասարակական և ընտանեկան հարաբերությունների տարրեր բնագավառների:

Այդպիսիներից է, օրինակ, կաթուղի վանական Պետրոս Սալիթաղեցու և ոմն Մխիթարի որդի Խորշահի միջև 1442 թվականին կնքված պայմանագիրը՝ շրաղաց կառուցելու մասին: Մանոթանանք պայմանագրին.

«Յանուն Աստուծոյ: Յամի տեառն Ռնեթ. (1442), ես Ֆէրալ Պետրոս Սալիթաղեցի՝ որդի Թաւաքալին, հետ Խորշին՝ որդո Մխիթարին շինեցինք զշաղացն ի Թաշառինք հողումն: Տեղն Խորշին էր և առուի տեղն վանիցս: Մեր զամենայն պիտոյքն, այսինքն՝ զբարն, զցիցն, զնաւն և զայլ ամենայն փայտերն, որ ի պէտք է շինութեանն, զամենայն մեր պատրաստեցինք և շինեցինք՝ Բ. (2) վանիցս, Ա. (1) Խորշին: Յառաջի՝ շինութեանս յետև զինչ պակասութիւն լինի՝ նա Բ. (2) ըստակին կանցնի և մեք՝ Դ. (4) ըստակին: Ով որ աւելի խաւսի կամ բան՝ յաւելցու աստուած զամենայն հարուածս, զոր ի սմագրեալ է, և թէ պակասեցուցն՝ պակասեցինք ի գրոյն կենաց, ամէն» (Ն. Զուղա, ձեռագիր № 481, քաղված Ս. Տեր-Ավետիսյանի ձեռագիր ցուցակից):

Այս գործարքը շատ բնորոշ է ֆեոդալական հարաբերությունների պայմաններին. Խորշահը կառուցվող շրաղացի  $\frac{1}{3}$  մասի փայտեր է դառնում

<sup>1</sup> Այս աշխատանքը մասամբ կատարված է մեր կողմից. տե՛ս «Պատմա-բանասիրական հանգես», 1958 թ., № 1, էջ 110—133 և «ԺՅ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն Բ, 1958, էջ LXXXVIII—CV:

լինելով միայն այն հողի տերը, որի վրա կառուցվում է ջրաղացը: Կառուցման ծախսերն ամբողջ վերցնում է իր վրա Պետրոս Սալիթաղեցին:

Հարևան գյուղացիների միջև սահմանավեճերի առկայության մասին է վկայում 16-րդ դարի վերջերին կամ 17-րդի սկզբներին շարադրված հետևյալ հաշտագրերը.

«Արարիչն աստուած զտէր Սահակն արհնէ և զիւր որդիքն... զԿոստանդին արհնէ և զիւր որդիքն..., որ միջնորդութեամբ Ստեփանոս վարդապետին և Ներսէս արեղին և տէր Բարայղամին բարիշեցան ու միջաւորան (միջորա՞ն) փուշ տնկեցին, որ շիտակ կենայ՝ ոչ ի դէն կզի, ոչ ի դէն, բայց փուշ Կոստանդին է, որ այլ ու այլ խաբար չի լինի: Ով որ ի խօսաց ելնու՝ նզովեալ եղիցի» (Մատենադարան, ձեռ. № 5371, էջ 2ա):

Չեռագրերի էջերին գրանցված պայմանագրերից մի քանիսը զգալի հետաքրքրություն են ներկայացնում ազգագրության համար:

1387 թվականից, օրինակ, պահպանվել է մի գրանցում, որով Մարգարե անունով մի երիտասարդի ծնողներ իրենց որդուն հանձնում են ոմն Մովսես քահանայի «մինչև ի մահ», պայմանով, որ նրան, ի վերջո, երեց դարձնի (Մատենադարան, ձեռ. № 6288, էջ 111բ):

Հայտնի է, որ Միջնադարյան Հայաստանում արհեստավորների և նրանց աշակերտների ծնողների միջև կնքվել են պայմանագրեր ուսուցման ժամկետի ու պայմանների մասին<sup>1</sup>, սակայն գրանցից և ոչ մեկը չի հասել մեզ. այդ իսկ պատճառով այս յուրահատուկ և եզակի պայմանագիրը որոշակի արժեք է ստանում և արժանի է մեջբերման.

«Յանուն աստուծոյ ես Ովաննէս և կողակիցս իմ Թանգսուղ տվինք մեր արժարութեամբ զմեր որդիս Մարգարէ՝ հոգոյ որդի Մովսէս քահանայիս՝ մինչև ի մահն, որ երէց առնէ. վկայութեամբ Արուկանայ՝ Ալփիկայ որդոյ, Բեկիկայ՝ Խոշոտայ Լարեցի (՝): Զինչ մարդ, որ զայս բանս խաբանէ՝ ՅԺԸ. հայրապետաց նզովեալ եղիցի՞»:

Ես Խաշայտուր երէցս վկայ, որ զգիրս գրեցի» (Մատենադարան, ձեռ. № 6288, էջ 111բ):

Նույն այս ձեռագրի նույն էջի վրա գրանցված է մի այլ պայմանագիր ևս. ոմն Արխութա իր դստերը տալիս է հավանաբար նախորդ գրության մեջ հիշատակված նույն Մովսես քահանային: Ի՞նչ պայմանով է կատարվել այս տարօրինակ «նվիրաբերությունը» մութն է մնում: Կարելի է միայն մեծ հավանականությամբ ենթադրել, որ տնտեսական խիստ ծանր վիճակն է ստիպել Արխութային այդպես տնօրինելու իր դստեր ապագան, որը քահանայի գերդաստանում, ըստ երևույթին, լինելու էր աղախնի ստորադաս վիճակում:

Ստորև բերում ենք այդ յուրօրինակ ու սեղմ շարադրված համաձայնագիրը.

«Յանուն աստուծոյ ես Արխութայ՝ Մայլիբայ որդի միաբանեցայ սուրբ Աւետարանիս ու տուի զիմ աղչիկս՝ զէսոյն՝ Մուսէս երիցոյ: Ով խափանէ՝ դատի աստուծոյ: Ով կարդէք լի բերանով ասացէք աստուած-ողորմի Մալիբայ, ամէն զալլըութէն պահեսցի խորին ձերութենն» (Մատենադարան, ձեռ. № 6288, էջ 111բ):

<sup>1</sup> Տե՛ս մեր «Արհեստագործության վիճակն ու զարգացման աստիճանը Հայաստանում 10.-14-րդ դարերում» հոդվածը («Տեղեկագիր», 1958, № 3, էջ 43—44):

Պայմանագրեր են պահպանվել նաև որևէ մեկին հոգևոր որդի կամ եղբայր դարձնելու մասին:

Ոմն տեր Գրիգոր, 16-րդ դարի շատ անգրագետ ձեռագրով, այսպիսի մի գրանցում է թողել Մատենադարանի № 4948 ձեռագրի դատարկ մի էջի վրա.

«Ես՝ տէր Գրիգորս գիր տվի Զայդոյին իմ հոգիս հոգոյէք Կէտէվանի ձեռովն: Մեծ որդին Զէկէլ, Ա. որդին Զայդոյն, Ա. որդին Ոյհանէս: Ինչվէն ես մեռնիմ ձեր բայժան շակայ, որ մեռնիմ՝ դուք գիտէք, թե քո բաժանիք»:

Գրեթե ոչինչ չէր հասկացվելու, եթե նույն այս տողերի տակ մի այլ մեկը, վարժ ձեռագրով ու ավելի պարզ շարադրանքով չկրկնեք վերը բերված պայմանագիրը, նրան տալով այսպիսի կերպարանք.

«Ես՝ տէր Գրիգորս գիր տվի, Զատէին որդի վեր կալայ. Գ. (3) աղբէր լինին՝ հողի, ջրի, յիգուն, կարասի, ապրանքի. ով որ սուտ դուրս գայ՝ սէվէրես ինձ գայ: Ես տէր Գրիգորս վկայ եմ. աստուած յել որդի տայ, յէն յել յիրանց աղբէր իլի» (Մատենադարան, ձեռ. № 4948, էջ 1բ):

Զեռքի տակ ունենք նաև 16-րդ դարում շարադրված մի համաձայնագիր Մկրտիչ երեցի և Կիրակոս դպրի միջև. առաջինը պարտավորվում է երկրորդին «հոգևոր և հարազատ» եղբայր դարձնելու, «մինչև մահ և կեանք»: Եթե երբևէ բաժանվելու հարց լինի, «նայ ինչ ես ապրանք որ ունիմ, — գրում է Մկրտիչ երեցը, — հետ նորա (Կիրակոս դպրի) կէս լինի» (Մատենադարան, ձեռ. № 1625, էջ 1ա):

Մեր հաղորդման հենց սկզբում ասացինք, որ ձեռագրերի էջերին գրանցված վավերագրերի մի պատկառելի մասը կալվածագրեր են՝ անշարժ ու շարժական գույքերի վաճառքի ու օտարման մասին արժեքավոր փաստաթղթեր:

Դրանց շարքում առաջնակարգ նշանակություն ունեն Մատենադարանի № 9165 ձեռագրի 1ա—8բ էջերին գրանցված 6 կալվածագրերը, որոնց մեջ, որպես գնորդ հանդես է գալիս անխտիր միևնույն անձնավորությունը՝ Ատիրեկի որդի պարոն Միրիման-բեկը, իր Շահվելի, Զուրապ և Ավթանդիլ որդիների հետ միասին:

Կալվածագրերից միայն մեկը (6բ էջի վրա գրանցվածը) ունի թվական՝ ՌՃԺԹ. (1670), ուստի դրանք բոլորն էլ գրված են մերձավորապես նույն տասնամյակներում, 17-րդ դարի երկրորդ կեսին:

Միրիման-բեկի գործունեության ասպարեզը Լոռին է. կալվածագրերից շատերն ավարտվում են այսպիսի քանաձևով՝ «Ով որ յետ ու առաջ տայ Լոռու հէքիմին ԺԲՌ. (12.000) դահեկան տայ»: Կալվածագրերից մեկում հիշատակված է Արդվի գյուղը: Մի դեպքում որպես վկա, հանդես է գալիս ոմն Վարդան պարոնտեր: Այս տվյալների հիման վրա կարելի է ենթադրել, որ Միրիման-բեկը Սանահնի կամ մոտակա որևէ այլ գյուղի կալվածատերերից է և կալվածագրերում հիշատակվող վարելահողերը գտնվել են Սանահնի շրջակայքում:

Վաճառվող կամ այլ ճանապարհներով Միրիման-բեկի ձեռքն անցած հողակտորները թվարկվում են այսպես.

«Գ. (3) արավար հող, յԱրտվու ճանրի Գաթի հողի վեր կռան, Բ. (2) արավար հող աղբիւլի գիմաց, Վարդիգուլի հողի տակի Բ. (2) արավար հողն», «Խէչէրկուտի հողն», «Բնաուի վերին կուտն», «Նշանաքարի հողն», «Ճանրի ամանրիսի (՛) վեր հողի կէսն, հին մլի վերին կռան՝ Բ. (2) արավար հողն, Մէնկու վանանց հողի վերի կռան հողն», «Մոխրատափկայ Բ. (2) արավար հողն», «Թալիբիսի վեր հողն», «Ա. (1) արավար յձղնանստի հողն,

Ա. (1) արավար միջի ճանրի տակի հողն», «է. (7) արավար հողիցն Ա. (1) արավար հող», «Հատիտուպրակի վանանց հողի վերի կոան հողն», «Կէշի հողի կէսն», լԱւանքերի Ա. (1) արավար հողն»:

Կալվածագրերից մեկը եղակի է իր բովանդակութեամբ. այն չի վերաբերում վարելահողի վաճառքի:

«Ես Քումանի որդի Բայրամս, իմ աղբէր Շահնազարն Միրիմանին պարտքն պարտ էր. իր որդի Գոհարն իր պարտքումն տվի. պակաս հախն էլ առայ, մեր կարեցն արի, այլ ոչ ում բան չկայ, տվինք Միրիմանին և իւր որդացն: Ով որ յետ ու առաջ տա Գ. (3) Քուման հէքիմին (մյուս կալվածագրերում գրված է՝ Լոտու կամ Լաւու հեքիմին — է. Խ.) տվող ըլի:

Գրիգորի փեսայ Քամազն վկայ. ես Քումանչէս գիրս գրեցի վկայ եմ» (Մատենադարան, ձեռ. № 9165, էջ 5ա):

Ինչպես պարզ է դառնում այս կալվածագրից, Քումանի որդի հանգուցյալ Շահնազարը պարտք է վերցրած եղել Միրիման-բեկից: Ոչինչ շունենալով եղբոր պարտքը մարելու համար, Բայրամը Միրիման-բեկին է տալիս Շահնազարի որդի (՝) Գոհարին: Հասկանալի է, որ այդ Գոհարը դառնում է Միրիման-բեկի ճորտը:

Կարելի է ենթադրել, որ իրենց հողակտորների կամովին վաճառողների դերում հանդես եկողներից շատերը ստիպված են եղել այդ գործարքը կատարելու, նույնպես լինելով անվճարունակ պարտապաններ:

Այսպիսով, կարճ ժամանակամիջոցում, Լոտվա հայ կալվածատերերից մեկը, վաշխառուի իր ցանցի մեջ ձգելով մի շարք գյուղացիների, ընդարձակում է իր կալվածքները նրանց վարելահողերի հաշվին:

Չեռքի տակ ունենք նաև ավելի հին կալվածագրեր.

1483 թվականից՝ մի արտի վաճառքի մասին (ՄԵԱԿ ձեռ. № С—56), Բեներոց ջրաղացի 4 բաժնի վաճառքի մասին (Մատենադարան, ձեռ. № 5196, էջ 297ա), բազմաթիվ ձեռագրերի վաճառքի մասին (օրինակելի ձևով է շարադրված № 2846 ձեռագրի 149ա էջի վրա գրանցվածը), կովի և այլ շարժական ու անշարժ գույքերի վաճառքի մասին:

Սովորույթային իրավունքի նորմերի ուսումնասիրության կապակցութեամբ այս կարգի վավերագրերը մեծ հետաքրքրություն են ներկայացնում: Մանրթանանք, օրինակ, կովի վաճառքի մասին կազմված վավերագրի հետ.

«Ես Մարտիրոս իմ կովն ծախեցի... թէ որ ծնեցո՞ իր կովն է, թէ չէ՞ որ յղի շո, էն կովն յիս տայ՝ մէկէլն տանի:

Յակորն վկա, Ներսէսն վկա, Մարտիրոսն վկա, Խար Մէլէքն վկա, որ գիրս գրեցի է կիրակի օրս» (Մատենադարան, ձեռ. № 5163, էջ 280բ):

Մխիթար Գոշի «Եատաստանագրքի» երկրորդ մասի Մէ հողվածով նույնպես մեկ տարվա ժամկետ է սահմանվում կովի վաճառքը վերջնական համարելու համար:

Չեռագրերում հանդիպում են նաև պարտամուրհակներ (1333, 1504, և 1536 թթ.), վաշխառուի գրանցումներ (14-րդ դար), վանքերի թեմերի ցուցակներ և այլ կարգի վավերագրեր, որոնք լինելով հայերեն լեզվով գրված այդ կարգի փաստաթղթերից հնագույնները՝ եղակի արժեք են ստանում:

Մենք ավարտեցինք ձեռագրերի մեջ գրանցված վավերագրերը ըստ իրենց հիմնական տեսակների (նվիրաբերական գրառումներ, պայմանագրեր-համաձայնագրեր, կալվածագրեր) ներկայացնելու և բնութագրելու աշխատանքը:

Դրան զուգընթաց, ձգտեցինք համառոտակի ցույց տալ այդ վավերագրերի նշանակությունը սոցիալ-տնտեսական կյանքի որոշ մուժ կողմերի լուսարանման համար, այն շափով, ինչքան հնարավոր էր այդ կատարել վավերագրերի խմբավորման ու տեսակավորման հետ զուգընթաց:

Մեր ձեռքի տակ եղող վավերագրերի գիտական նշանակությունը, սակայն, բնավ չի սպառվում վերոհիշյալով: Այդ վավերագրերը վստահելի տրվյալներ են պարունակում 14—17-րդ դարերում գանձվող հարկերի ու տուրքերի ուսումնասիրության համար: Կան մի շարք հարկային տերմիններ, որոնք այլ աղբյուրներից հայտնի չլինելով՝ գիտական շրջանառության մեջ են դրվում քաղվելով հենց այս վավերագրերից: Դրանցից շատերը, լինելով ընդհանուր հարկային տերմիններ, հնարավորություն են ընձեռում լուսարանելու տիրող դինաստիաների հարկային քաղաքականության որոշ կողմերը ոչ միայն Հայաստանում, այլև հարևան երկրներում:

Այս հարցերին անդրադարձել ենք մեր մի այլ ուսումնասիրության մեջ<sup>1</sup>: Ավելորդ չենք համարում, սակայն, այստեղ ևս մեջ բերելու քննարկվող վավերագրերից քաղված հարկային տերմինների այբուբենական ցանկը, որոշ հավելումով ու խիստ համառոտ բացատրականներով.

Արգան — ջրային հարկ (ըստ Ս. Բարխուդարյանի).

Ալեղ, ալեղան — անասնակեր, ձիերի համար պահանջվող կեր.

Աղջկան յաղկ — հավանաբար նույնն է «հարսանեաց դրամը» (տե՛ս).

Բաղաղաք, բաղիար — նորահնար, ապօրինի պահանջմունք (այդպիսիք են համարված պարոնի, մուժթասիբի, դարուղայի և թամղաշուօգտին գանձվող տուրքերը).

Դահիանզղէ (պրսկ. դահյանզղահ — տասն-տասնմեկ) — կարվածատիրական ռենտա, տասնորդ, մուլք.

Էգեաներու հախ — հավանաբար տուրք, որ գանձվում էր կամ այգիներում կառուցված տներից, կամ էլ, ավելի մեծ հավանականությամբ, հնձաններից.

Թամղա — արհեստանոցներից, հումքի մշակման օբյեկտներից գանձվող հարկ (հիշատակված ունենք՝ ձկան-ձկնորսարանների և ընկուղի—ձիթհանների՝ թամղա).

Թրխմաւրի դրամ — թթխմոր գործածելու համար հայերից գանձվող ապօրինի տուրք:

Իգու գինի — գինուց գանձվող տուրք.

Խաւան — գլխահարկ (նաև պետական ռենտա — հարկ).

Խէֆներու հորահաղ — ջուլհակներից գանձվող հարկ (\*).

Հաւսնեաց դրամ (գրված՝ խարսնեց դրամ) — ամուսնացող աղջիկներից գանձվող հարկ.

Մատղու վաւճ — մատաղի դիմաց տրվող տուրք (\*).

Մեղաց գին — մեղքերի թողություն ստանալու համար եկեղեցուն տրվող դրամ.

Շանիգաղէ (իմա՝ շանակիգաթ) — ապօրինի պահանջմունքներ.

<sup>1</sup> Տե՛ս մեր «ԺՅ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ» (Մասն Բ) ժողովածուի բնդարձակ առաջաբանի CXVIII—CXXXVI էջերը:

Շառ — կալվածատիրական ունեւտա.

Չարեկ — կալվածատիրական ունեւտա, բերքի մեկ քառորդի շափով  
(«ոխվերու շարեք», «ձիթահանաց շարեք»).

Սալամյաղի — շնորհավորական տուրք, որ տրվում էր ֆեոդալին որևէ  
գյուղ այցելելիս (\*).

Սուլ — ջրաղացներից գանձվող հարկ (\*).

Սուկատի պտղի — (\*).

Տախրկի դրամ — ճախարակից գանձվող հարկ (\*):

Միջնադարյան հայկական պատմական սկզբնաղբյուրները գյուղատնտես-  
ության զարգացման աստիճանի և հողամշակույթի վիճակի մասին գրեթե  
ոչինչ չեն պարունակում: Քննարկվող վավերագրերը նույնպես հարուստ չեն այդ  
բնագավառի նյութերով. այնուամենայնիվ նրանցում, հատկապես նվիրաբե-  
րական գրառումների և պայմանագրերի մեջ, հանդիպում ենք գյուղական հա-  
մայնքի հողային ֆոնդի մեջ մտնող արտերի և, ընդհանրապես, հողերի ման-  
րակրկիտ տեսակավորման հարուստ փորձի առկայության մասին վկայող բազ-  
մաթիվ տերմինների, որոնք կարող էին ստեղծվել միայն երկրագործական  
հազարամյա կուլտուրա ունեցող և հողամշակության բնագավառում նշանա-  
կալից հաշոդությունների հասած ժողովրդի կողմից:

Ստորև, այբուբենական դասավորությամբ, տալիս ենք նաև այդ տեր-  
մինների ցանկը.

Աղբիւն, աղբին — պարարտ կամ պարարտացված հող.

Անջրդի.

Առտոոց — նախապես առվույտ ցանված հող.

Արեգդէմ.

Աւագ, աւագիկ — ավազահող.

Գոմկներ — հավանարար՝ նախկին գոմատեղերի շուրջ եղած հողա-  
կտորներ.

Հացուտ — բերքառատ.

Կորդ — խոսպան.

Չմայ, ձմի, ծմայ — ծմակային.

Ճամ, ճէմ — ճահճուտ.

Մոխրատափիկ — մոխրով պարարտացված հող.

Շամբ — ճահճուտ.

Ուտին — անջրդի.

Ուտուտ, ուտն.

Չայիւր — մարգագետին.

Տոտիկ — (\*).

Յնի — (\*).

Փշուտ.

Քարուտ.

Քոայ:

Թվարկված տերմինների բովանդակության ճշգրտման, գյուղական հա-  
մայնքի անդամների միջև տարբեր որակի հողերի քաշխման ձևերի որոշման  
և հարակից այլ հարցերի լուծման համար, անշուշտ, օգտակար կլինի կատա-



րել հատուկ ուսումնասիրություն, որը հաջողությամբ կպսակվի վիճական արձանագրությունների արժեքավոր տվյալները, ինչպես և հարևան երկրների (հատկապես Իրանի) երկրագործության մասին եղած աղբյուրները օգտագործելու դեպքում<sup>1</sup>:

Օգտակար տվյալներ կան քննարկվող վավերագրերում նաև միջնադարյան Հայաստանի տարբեր նահանգներում գործածվող շափ ու կշռի միավորների մասին, որոնցից են, օրինակ՝ դրիվ, կապիճ, կոտ, մոթ (նաև մութ), քիլա և այլն: Դրանց միջոցով որոշվում էր հաճախ նաև արտի մեծությունը՝ «կապիճ ու կէս ցորենի արտ», «Բ. (20) մութ սստին», «Ժ. (10) մութ ջրով» և այլն, գործածական է նաև «օրավար հող» տերմինը:

Քաղաքային կյանքի ու արհեստագործության հետ առնչվող վավերագրերի քանակը շափազանց քիչ է. այնուամենայնիվ չի կարելի արհամարհել նրանց նշանակությունը նաև հարցերի այդ ոլորտի ուսումնասիրության համար:

1303 թվականի մեզ արդեն ծանոթ նվիրաբերական գրառման մեջ, որ կաղմված է ամենայն հավանականությամբ, Երզնկա քաղաքում, ասված է, որ սուրբ Լուսավորչի վանքին վակֆ արված խանութը գտնվում է «ի Քաֆկերտնոցն»: Ինչ էլ որ նշանակելիս լինի այս՝ «Քաֆկերտնոց» բառը (արդյոք սպանդանոց), դրանից կարելի է եզրակացնել, որ Երզնկա քաղաքում ևս գոյություն են ունեցել արհեստի միևնույն մասնաճյուղի համար հատուկ թաղեր կամ շուկայական շարքեր:

Մեր վավերագրերում, այլ և այլ առիթներով, հիշատակված են երկու տասնյակ տարբեր արհեստի ու զբաղմունքի մարդիկ՝ աղեղրար, բազազ, գդակկար, դարբին, թերզի, խոճա, կոշկակար, հարչուրավազ, դազազ, դազանչի, դասաբ, նալբանդ, նաղարաճի, նետրար, ներկարար, սսկերիչ, սառաֆ, փամբուղչի, քյուրբչի, ֆառաճ: Արհեստագործության պատմության հարցերով զբաղվող մեր մասնագետները, անտարակույս, օգտակար նյութեր կբաղեն այդ վավերագրերից:

Անգնահատելի ու հարուստ նյութեր են պարունակում քննարկվող վավերագրերը պատմական Հայաստանի հին գյուղանունների և, հատկապես, գյուղերի հանդերում գտնվող առանձին արտերի անունների ուսումնասիրության, այլ խոսքով պատմական տոպոնիմիկայի համար: Այդ կարգի բազմաթիվ տեղանուններից են, օրինակ, հետևյալները՝ Անիշատ, Առաջածոր, Առնանք, Աւաղախոռ, Աւձանբեր, Բանկլի-ձոր, Բարզեվանայ առու, Բոլորամարգ, Եղնանիստ, Ելեզապատ, Ըռշտոնիկ արտ, Իրիշատ, Կուսանասար, Կոնայարտ, Մկնաէր, Ջրուրնիկ, Վառնջիկ, Յամաքձոր, Քարափոս և այլն:

Վավերագրերի մեծագույն մասը գրված է հազիվ գրաճանաչ, կիսագրայետ գյուղական քահանաների ու իրենց գրագիտության աստիճանով նրանցից գրեթե շտարբերվող վանականների կողմից: Այս հանգամանքը ունի իր և՛ բացասական, և՛ դրական կողմը:

Անգրագետ ձեռագրով ու լեզվով շարադրված այդ վավերագրերի վերծանման և ճիշտ մեկնարանման համար պահանջվում է հմտություն և ջանքքիչ շին դեպքերը, երբ որևէ վավերագիր կամ նրա այս կամ այն մասերը՝

<sup>1</sup> Այս քննազավառում ծանրակշիռ աշխատանք է կատարել սովետական անվանի արևելագետ Ի. Գ. Գետրուշևսկին, իր «Земледелие и аграрные отношения в Иране XIII—XIV веков» (М.—Л., 1950) աշխատության մեջ:

մնում են անվերծանելի և անհասկանալի: Հայոց լեզվի պատմությունն ուսումնասիրողի համար, սակայն, վավերագրերի այս հատկանիշը դուրկ չէ օգտակարությունից: Դրանք անաղարտորեն պահպանել են իրենց մեջ միջին հայերենի, բարբառների և միջնադարյան աշխարհաբարի ուսումնասիրության համար անսպառ ու կուսական նյութեր, ուստի շպետք է կասկածել, որ քրննարկվող վավերագրերի ուսումնասիրությամբ կգրադվեն նաև մեր լեզվաբանները:

Հայերեն ձեռագրերի դատարկ էջերի վրա գրանցված նվիրաբերական արձանագրությունների, պայմանագրերի-համաձայնագրերի, կալվածագրերի և տնտեսական այլ բնույթի փաստաթղթերի մասին համառոտ այս հաղորդման հիմնական նպատակն էր արժեքավորել դրանք, որպես Հայաստանի միջնադարյան պատմության համար առաջնակարգ նշանակություն ունեցող սկզբնաղբյուր և շահագրգռել հայագիտ բանասերներին դրանց հավաքման աշխատանքով զբաղվելու:

Հայկական ՍՍՏ Մինիստրների սովետին առընթեր Հին ձեռագրերի գիտա-հետազոտական ինստիտուտ «Մատենադարանի» ձեռագրական ֆոնդերից, ինչպես ասացինք, այդ վավերագրերը մասամբ արդեն հավաքված են և այդ ուղղությամբ աշխատանքը շարունակվում է: Սակայն այդ կարգի փաստաթղթերի ամբողջական ժողովածու ստեղծելու և հրատարակության պատրաստելու համար հարկ կլինի ստանալ նաև Երուսաղեմի, Վենետիկի, Վիեննայի և հայ ձեռագրերի այլ հավաքածուների մեջ գտնվող նույնատիպ նյութերը:

Հայագիտ այն բանասերները, որոնք մոտ են կանգնած հայերեն ձեռագրերի վերոհիշյալ հավաքածուներին, անգնահատելի ծառայություն մատուցած կլինեն օգտակար այս գործին, ուղարկելով իրենց մատչելի ձեռագրերի էջերին գրանցված նույնատիպ վավերագրերի ընդօրինակությունները, կամ էլ հրատարակելով դրանք հայագիտական պարբերականներում:

Л. С. ХАЧИКЯН

## ЗАПИСИ О ХОЗЯЙСТВЕННЫХ СДЕЛКАХ В АРМЯНСКИХ РУКОПИСЯХ И ИХ ИСТОЧНИКОВЕДЧЕСКОЕ ЗНАЧЕНИЕ

Резюме

На свободные страницы и поля армянских обрядовых рукописей (Евангелий, Четьи-миней, Требников и т. д.) в средние века обычно заносились документы, касающиеся хозяйственных сделок церковных учреждений, которым принадлежали рукописи: дарственные протоколы, договоры, купчие.

По сей день лишь небольшое число таких записей опубликовано в некоторых каталогах собраний армянских рукописей, между тем количество их может быть доведено до тысячи.

Эти документы, как важный первоисточник для изучения различ-

ных явлений внутренней жизни средневековой Армении, все еще не привлекли внимание арменоведов, не вошли в научный обиход.

Будучи занят сбором памятных записей армянских рукописей автор статьи параллельно изучал документы, занесенные на страницы рукописей, и собрал с 1948 года около трехсот таких документов, относящихся к XI—XVIII вв.

Эти документы подразделяются в статье, в соответствии с содержанием, на три большие группы (дарственные записи, договоры-соглашения и купчие крепости), приводятся характерные примеры из записей, касающихся различных вопросов и показываются области истории средневековой Армении, для освещения которых упоминаемые документы являются ценным первоисточником.

Автор считает, что настало время сбора и издания документов такого рода в едином сборнике и обращается с призывом к филологам, близко стоящим к крупным зарубежным коллекциям армянских рукописей, помочь в этом деле, собирая такие документы, имеющиеся на страницах доступных им рукописей.

Ն. ԹԱՀՄԻՋՅԱՆ

ՄԻ ԷՋ ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՂ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ  
ՏԵՍՈՒԹՅՈՒՆԻՑ

Հայկական վաղ միջնադարից երաժշտության տեսության հարցերին նվիրված ամբողջական աշխատություն մեզ չի հասել:

Այնուամենայնիվ, միջնադարյան գրավոր աղբյուրներում առկա մի շարք նյութերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ V—VIII դարերում գոյություն է ունեցել հայկական երաժշտական տեսության յուրահատուկ սիստեմ:

Ըստ բոլոր տվյալների, վաղ միջնադարի հայ գիտնականներին հայտնի են եղել մոնոդիկ երաժշտության տեսության բնագավառում անտիկ մտածողների ձեռք բերած փայլուն նվաճումները: Զգտելով բացահայտել նախ և առաջ ազգային հարազատ երաժշտական կուլտուրայի զարգացման օրինաչափությունները, վաղ միջնադարի հայ գիտնականները կարողացել են հրմտորեն օգտվել անտիկ մոնոդիայի տեսության հարուստ գանձարանից, քաղելով նրանից այն, ինչ հակասության մեջ շմտնելով հայկական միաձայնության առանձնահատկությունների հետ, միևնույն ժամանակ, առհասարակ, միաձայն երաժշտության պայմաններում կարող էր համընդհանուր նշանակություն ունենալ:

Կան հիմքեր եզրակացնելու համար, որ վաղ միջնադարի հայկական երաժշտական տեսությունը ունեցել է հետևյալ մասերը. մետր-ռիթմ և «Հարմոնիա», կամ, ինչպես միջնադարյան աղբյուրներում է անվանվում՝ «Յարմարա-կան»: Վերջինս հնում նշանակել է ուսմունք երաժշտության լադա-ինտոնացիոն հիմունքների և ալոուտիկական բազայի մասին: Այն բաղկացած է եղել մի շարք բաժիններից, որոնցից մեկի ուսումնասիրությանն էլ նվիրվում է սույն հոդվածը:

Չայներ. ձայնամիջոցներ. «հարմոնիկ» համամասնություններ

«Հարմոնիայի» մասին գիտության սույն բաժինը նվիրված է եղել երաժշտության ալոուտիկական հիմունքների հարցին: Այստեղ քննության գրված առարկան է՝ ալոուտիկական դրության ձայների և ձայնամիջոցների թվային սահմանումների խնդիրը. մի բան, որով լիովին կանխորոշվում է նաև այս հոդվածի բովանդակությունը: Հոդվածիս հիմքում ընկած «հում նյութը» առանձնապես հարուստ չէ: Այն բաղկացած է ընդամենը մի ձեռագիր հատվածից, որը սակայն, կրկնակի արժեք ներկայացնող պատմական փաստաթուղթ է: Նա լույս է սփռում ոչ միայն հայկական հին երաժշտական գիտության մեզ հետաքրքրող բաժնի, այլև առհասարակ երաժշտագիտության զարգացման

մինչև այժմ չուսարանված մի կողմի վրա: Հիշյալ հատվածը մի աղյուսակ է՝ «Այս է դուռն Պիթագորային» խորագրով, որ պահպանվել է Մատենադարանի 18-րդ դարում ընդօրինակված № 5373 ձեռագրի 29ր էջի վրա: Աղյուսակն ունի այսպիսի ձև.

1	2	3	4	5	6	7	8	9	10
2	4	6	8	10	12	14	16	18	20
3	6	9	12	15	18	21	24	27	30
4	8	12	16	20	24	28	32	36	40
5	10	15	20	25	30	35	40	45	50
6	12	18	24	30	36	42	48	54	60
7	14	21	28	35	42	49	56	63	70
8	16	24	32	40	48	56	64	72	80
9	18	27	36	45	54	63	72	81	90
10	20	30	40	50	60	70	80	90	100

Հայտնի է, որ «Պիթագորասի ուսմունք» ասելով հնում հասկանում էին ուսմունք թվաբանական, երկրաչափական և «հարմոնիկ», այսինքն երաժշտական համամասնությունների (համեմատությունների) մասին: Քիչ առաջ անցնելով նշենք, որ աղյուսակում արտացոլված «հարմոնիկ» համամասնությունների յուրահատուկ սխեմներ թեև սերտորեն կապված է «Պիթագորասի ուսմունք»-ի հետ, սակայն այն չի կարելի նույնացնել երաժշտագիտության մեջ «Պիթագորասի ձայնակարգ» (стро́й) անվանվող դրուսյան հետ: Այդ տեսակետից, աղյուսակի տակ գրված բացատրական կարճ նախադասությունն ինքը կարիք ունի բացատրության: Այս հարցին դեռևս կանգրադանանք: Այժմ մի կողմ թողնենք թվաբանության և երկրաչափության զարգացման մեջ վերը բերված աղյուսակի խաղացած դերի հարցը, քննենք այն երաժշտական գիտության լույսի տակ, ընդամին փորձելով լուծել բնականորեն ծագող հետևյալ խնդիրները.

Ի՞նչ է տվյալ աղյուսակի բովանդակությունը երաժշտական գիտության տեսակետից:

Երբվանի՞ց է այն կիրառվել «հարմոնիայի» մասին հնագարյան գիտության մեջ:

Ինչպե՞ս պետք է հասկանալ աղյուսակի տակ գրված բացատրական խոսքերը:

Քանի որ աղյուսակը պահպանվել է ուշ շրջանի ժողովածուներից մեկում, ապա ծագում է նաև հետևյալ հարցը. ծանոթ էր արդյոք տվյալ աղյուսակը վաղ միջնադարի հայ գիտնականներին<sup>1</sup>:

Այնուհետև, ինչո՞վ բացատրել, որ Հայաստանում V—VIII դարերում այս աղյուսակը հույներից փոխ առնելու անհրաժեշտություն է առաջ եկել:

Եվ վերջապես՝ աղյուսակում պարունակված հարաբերությունները կիրառելի՞ են արդյոք վաղ միջնադարի հայկական երաժշտության մեջ:

Այսպիսով, սույն հոդվածում, նախքան բուն հայկական միջնադարյան երաժշտության հետ կապված խնդիրներին անցնելը անհրաժեշտ է լրտարանել մի շարք բնագիտությունների հարցեր: Կանգ առնենք առաջին հարցի վրա:

### Ի՞նչ է տվյալ աղյուսակի բովանդակությունը երաժշտական գիտության տեսակետից

Քննարկվող աղյուսակը իրենից ներկայացնում է բարդ և յուրահատուկ մի սիստեմի ձայների հարաբերությունների թվային արտահայտությունների ամբողջություն: Այդ սիստեմը վերջին հաշվով հանգում է միասնական, լայնածավալ և տեսականորեն հնարավոր, հատուկ կառուցվածքի բնական ձայնաշարի: Ձայների հիշյալ բնական շարքի առանձնահատկությունն այն է, որ նա բաղկացած է մեկ հիմնական և ինը համանման ձևով կառուցված ավանցյալ ձայնասանդուղքներից (скала): Աղյուսակի առաջին ուղղաձիգ սյունակը պարունակում է հիմնական ձայնասանդուղքի ձայների հարաբերակցության թվային արտահայտությունները, որոնք ներկայացված են մի պարզ թվաշարքի ձևով: Վերջինս ցույց է տալիս, որ հիշյալ հիմնական ձայնասանդուղքը ուրիշ բան չէ, եթե ոչ մինչև տասներորդ մասնակի ձայնը (частичный тон) ընդգրկող մի բնական ձայնաշար. օրինակ, կոնտր օկտավի «դո»-ից մինչև առաջին օկտավի «մի» ձայնը: Մնացած ինը սյունակների բնորոշ թվաշարքերը ցույց են տալիս, որ հիմնական ձայնասանդուղքի առաջին ձայնից սկիզբ առնող հարաբերակցությունները տառացիորեն կրկնվում են նրա ամեն մի հաջորդ մասնակի ձայնից, համապատասխանաբար դրյացնելով 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ և 10-րդ ավանցյալ ձայնասանդուղքները և ուղղաձիգորեն (վերևից ներքև) և հորիզոնական կերպով (ձախից աջ): Վերջին հաշվով դրյանում է տաս սանդուղքների համար էլ որպես բնագիտություն հիմք ընդունված մեկ գլխավոր ձայնից մեկնող մասնակի բազմաթիվ ձայների մի լայնածավալ բնական շարք: Պարզվում է, որ ավանցյալ սանդուղքներում պարունակված ձայների համարակալումն էլ սկսված է վերոհիշյալ գլխավոր ձայնից, որը հիմնական սանդուղքի առաջին ձայնն է: Վերը բերված աղյուսակը կարելի է պատ-

<sup>1</sup> Այդ նույն սկզբունքով կազմված աղյուսակներ պահպանվել են նաև ավելի հին ձեռագրերում. դրանցից են, օրինակ, 1445 թ. ընդօրինակված № 8973 ձեռագիրը, որի 57ր էջի վրա կան այդպիսի 8 աղյուսակներ՝ «Ի թուական արհեստէն է աղիւսակս և երկու կողմանցն է մուսն» խորագրով, ինչպես նաև 1463 թ. ընդօրինակված № 1711 ձեռագիրը (էջ 14բ—15ա): Այս վերջին ձեռագրում աղյուսակների քանակը 16 է (խմբագրություն):

կերել նոտային հետևյալ սխեմայով (որպես հիմք վերցնում ենք կոնտր օկտավի «դո» ձայնը):



Դժվար չէ նկատել, որ սխեմայում ձախից առաջին սանդուղքի ուղղաձիգ կերպով դասավորված ձայների կարգը համապատասխանում է աղյուսակի առաջին ուղղաձիգ թվաշարքին (վերևից ներքև), և նույն ձայների հորիզոնական կերպով դասավորված կարգը (սխեմայում ներքևի հորիզոնական ձայնաշարքը) համապատասխանում է աղյուսակի վերևի հորիզոնական թվաշարքին: Այնուհետև, սխեմայի 10-րդ ածանցյալ սանդուղքի ուղղաձիգ կերպով դասավորված ձայների կարգը համապատասխանում է աղյուսակի վերջին ուղղաձիգ թվաշարքին, և նույն ձայների հորիզոնական կերպով դասավորված կարգը (սխեմայում վերևի հորիզոնական ձայնաշարքը) համապատասխանում է աղյուսակի ներքևի հորիզոնական թվաշարքին, և այլն: Ուշադրության արժանի է, որ այս կերպ կառուցված սանդուղքների ամբողջությունը ականառու կերպով արտացոլում է ոչ միայն երաժշտական յուրահատուկ մի սիստեմի ձայների ու ձայնակարգերի փոխադարձ կապն ու ազգակցո՞ւթյան տարբեր աստիճանները, այլև բնական ձայնաշարի կառուցվածքի ճիմնական օրինաչափություններից մեկը: Այդ օրինաչափությունը, ինչպես հայտնի է, նրանում է, որ բնական ձայնաշարի յուրաքանչյուր օրերտոնն իր սեփական, համանման կերպով կառուցված մասնակի ձայների կարգն ունի և հիմնական ձայնաշարի օրդանական մասն ու շարունակությունն է ներկայացնում իրենից: Այդ կապակցությամբ հարկ է նշել, որ ձայների հարաբերակցության համանման մի սխեմա բերված է նաև պրոֆ. Տյուլինի «Ուսմունք հարմոնիայի մասին» աշխատությունում, բնական ձայնաշարի կառուցվածքի հենց վերոհիշյալ օրինաչափությունը ցույց տալու նպատակով: Սակայն Յու. Ն. Տյուլինի կողմից բերված սխեմայում ձայնասանդուղքները տարբերվում են իրենց պարունակած ձայների քանակի տեսակետից, իսկ նրանց վերևում գծագրված սլաքները ցույց են տալիս նույն այդ ձայնասանդուղքները անվերջորեն դեպի վեր շարունակելու հնարավորությունը<sup>1</sup>: Այնինչ, վերը բերված սխեմայի համաձայն, տասը ձայների վրա կառուցված տասը սանդուղքները պետք է պարունակեն ճիշտ տասական ձայն: Այստեղից էլ՝ աղյուսակում արտացոլված ձայների տասնակարգյալն սիստեմի մի շարք առանձնահատկությունները: Այսպես, բոլոր այդ սիստեմի նախ և առաջ խստորեն պահպանվում է մի կողմից ուղղաձիգ և մյուս կողմից հորիզոնական կերպով դասավորված և իրար փոխադարձաբար հատող ձայնաշարքերի շափակցությունն ու համաչափությունը: Դրա փոխարեն, տասը սանդուղքների ամբողջությունից գոյացող ձայների միասնական, լաֆնարձակ, բնական կարգը, թեև ընդգրկում է նույնիսկ մեր ժամանակակից երաժշտական դրության ձայնա-

<sup>1</sup> Ю. Н. Тюлин, Учение о гармонии, Музгиз, 1937, էջ 42:

շարի գրեթե ամբողջ ծավալը, սակայն, շնայած դրան, նա իր մեջ պարունակում է ընդամենը 42 տարրեր ձայներ: Եթե այդ 42 տարրեր ձայները դասավորենք ըստ իրենց բարձրության և համարի, կստանանք բնական ձայնաշար, մի շարք բաց թողնված մասնակի ձայներով:



Ինչպես երևում է բերված սխեմայից, այստեղ բնական ձայնաշարի միայն մինչև 32-րդ օրերտոնը հասնող տեղամասում բաց են թողնված 11-րդ, 13-րդ, 17-րդ, 19-րդ, 22-րդ, 23-րդ, 26-րդ, 29-րդ և 31-րդ մասնակի ձայները: Դրժվար չէ հասկանալ, որ տվյալ հանգամանքը պայմանավորված է, նախ և առաջ, ձայների քննարկվող սիստեմի հիմնական ձայնասանդուղքի սահմանափակ ծավալով, որում պարունակված հարաբերությունները տառացիորեն կրկնվում են ածանցյալ ձայնասանդուղքներում: Ակներև է, որ այսպիսի պայմաններում ամեն մի հաշորդ ածանցյալ ձայնասանդուղք նախորդի համեմատությամբ կարող է ընդգրկել սահմանափակ թվով նոր ձայներ: Այստևամենայնիվ, հարկ է ընդգծել, որ տվյալ սիստեմի ձայների հարաբերության թվային սահմանումները պարունակող աղյուսակից կարելի է երևան հանել բնական ձայնաշարի գրեթե բոլոր հիմնական ակուստիկական հարաբերությունները: Այսպես, աղյուսակի միայն առաջին ուղղաձիգ սյունակը պարունակում է հետևյալ ակուստիկական հարաբերությունները:

Պրիմա — 1:1, մեծ տերցիա — 4:5

Օկտավա — 1 : 2, երկու փոքր տերցիա՝ 5 : 6 և 6 : 7

Կվինտա — 2 : 3, մեծ սեկստա — 3 : 5

Կվարտա — 3 : 4, փոքր սեկստա — 5 : 8

Երեք մեծ սեկունդաներ — 7 : 8, 8 : 9 և 9 : 10

Երկու փոքր սեպտիմա — 4 : 7 և 5 : 9

Փոքրացրած կվինտա — 5 : 7 և մեծացրած կվարտա — 7 : 10

Աղյուսակի երկրորդ, երրորդ և չորրորդ ուղղաձիգ սյունակներից կարելի է քաղել նաև մեծ սեպտիմայի, փոքր սեկունդայի (դիատոնիկ կիսաձայն) և խրոմատիկ կիսաձայնի ինտերվալային գործակիցները, որպես, համապատասխանաբար՝ 8 : 15-ի, 15 : 16-ի և 24 : 25-ի հարաբերություններ, էլ շխտսելով աղյուսակի մնացած սյունակների մասին, որոնք պարունակում են թրվային բազմապիսի հարաբերություններ: Վերջիններս կարող են արտահայտել միևնույն անվանակառույցում, սակայն տարբեր ուակ ունեցող բազմաթիվ ձայնամիջոցներ: Ավելին, աղյուսակը պարունակում է մի շարք մանրագույն ձայնամիջոցների, այսպես կոչված «կոմմա»-ների թվային արտահայտություններն էլ, այդ թվում նաև նշանավոր «դիդիմյան կոմմա»-յինը, որն արտահայտվում է 80 : 81-ի հարաբերությամբ և որը հավասար է մեկ ամբողջ ձայնի  $\frac{1}{10}$ -րդ մասին:

Ուստի, վերադառնալով ձայների հարաբերակցության վերը նկարագրված սիստեմին, հարկ է եղրակացնել, թե նրանում մի շարք օրերտոնների բաց թող-



ներված լինելու փաստը հանդիսանալով այդ սիստեմի առանձնահատկությունը, չի խանգարում նրան, որպեսզի այն արտացոլի բնական ձայնաշարի ակուստիկական հիմնական հարաբերությունները: Բայց շնորհիվ այդ առանձնահատկության, ձայների տվյալ սիստեմը ակնառու կերպով տարբերվում է ժամանակակից երաժշտագիտության մեջ նկարագրվող բնական ձայնաշարից: Բնական ձայնաշարի մասին ժամանակակից տվյալների լույսի տակ ձայների այդ սիստեմը կարող է նույնիսկ ինչ-որ «հնացած մի բան» թվալ: Եվ իսկապես, ինչպես նկարագրված սիստեմը, այնպես էլ նրա ձայների հարաբերությունների թվային սահմանումները պարունակող աղյուսակը, երաժշտական հնագույն տեսական մտքի բնորոշ ցուցանիշներ են ներկայացնում իրենցից:

Դրա լավագույն ապացույցն այն է, որ քննարկվող աղյուսակը արտահայտում է ոչ միայն «հարմոնիկ», այլև (միևնույն ժամանակ) թվաբանական ու երկրաչափական համամասնություններ: Հետևաբար, տվյալ աղյուսակից գիտնականները հնում պիտի օգտվեին երեք տարբեր ուղղություններով: Մեր ժամանակակից երաժիշտների համար այս հանգամանքը կարող է անհասկանալի թվալ: Հին ժամանակներում, սակայն, թվաբանությունը, երաժշտությունը (ավելի ճիշտ՝ երաժշտագիտությունը) և երկրաչափությունը խիստ կերպով դիֆերենցված չլինելով, մաթեմատիկայի մասին մի ընդհանուր գիտություն էին կազմում:

#### Երբվանի՞ց է աղյուսակը կիրառվել «հարմոնիայի» մասին հնագույն գիտության մեջ

Փաստերը ցույց են տալիս, որ աղյուսակում պարունակվող հարաբերությունները հայտնի են եղել մեր թվականության առաջին դարում ապրած Ալեքսանդրյան գիտնականներին: Այս կապակցությամբ հարկ է նախ և առաջ կանգ առնել մեր վաղ միջնադարի թարգմանական գրականության երկերում պարունակվող մի շարք հատկանշական տվյալների վրա: Նկատի ունենք Փիլոն Ալեքսանդրացու գրվածքները, որոնցում հեղինակը այլևայլ առիթներով արտահայտվում է «Յարմարական»-ի, այսինքն «հարմոնիայի» մասին: Պետք է նշել, որ Փիլոնի գրվածքներում «Յարմարական»-ի մասին տվյալները միահյուսված են առհասարակ թվերի մասին արված տարբեր տեսակի դատողությունների հետ: Այդ դատողություններում երևան է գալիս մի շարք թվերի նշանակությունը բացարձակ դարձնելու, նրանցում հատուկ թաքնված իմաստ տեսնելու հեղինակի որոշակի տենդենցը: Այս երևույթը, որն իր ակունքներով հասնում է առնչվազն մինչև պիթագորականների հայտնի միստիցիզմը, սերտորեն կապված լինելով օբյեկտիվ իրականության միայն քանակային կողմը դիտելու և այն շեշտելու տենդենցի հետ, այս կամ այն շափով հատուկ է գրեթե բոլոր հնագույն մտածողներին և առհասարակ հին փիլիսոփայությանը: Այնուամենայնիվ Փիլոնի դատողություններում դժվար չէ որսալ այնպիսի դրույթներ, որոնք առաջադրված են կատարյալ կոնսոնանսներ՝ օկտավի, կվինտայի, կվարտայի, ինչպես նաև երկու բնորոշ ձայնաշարքերի ձայների հարաբերակցությունների թվային ճշգրիտ արտահայտությունները սահմանելու կապակցությամբ: Այդ ձայնաշարքերից առաջինը իրենից ներկայացնում է մաքուր օկտավի ձայնամիջոցով շրջանակված երկու կվարտային հենքերի (ОСТОВ) հաջորդականություն, օրինակ՝ с—f—g—с' իսկ երկրորդը՝ մաքուր դուոդեցիմայի ձայնամիջոցով շրջանակված երկու կվինտային հենքերի հաջորդականություն, օրինակ՝ g—d'—


Ճ'—Ճ'': Նպատակ շունենալով ամլյալ հորվածում այս ձայնաշարքերի մասին մանրամասն տեղեկություններ տալ, կանգ առնենք լոկ նրանց անդամների թվային արտահայտությունների խնդրի վրա: Ըստ Փիլոնի, ձայների կվարտային հարաբերակցության հիշյալ կարգը արտահայտվում է 6, 8, 9, 12 թվաշարքով, իսկ կվինտային հարաբերակցությանը՝ 6, 9, 12, 18 թվաշարքով. Փիլոնը մեծ նշանակություն է տալիս սույն թվաշարքերի գումարներին էլ՝ 35-ին, 45-ին և հատկապես 80-ին, որպես «հարմոնիկ» համամասնությունների լավագույն ներկայացուցիչների: Պիտի առանձնապես ընդգծել, որ իր մտքերը շարադրելիս Փիլոնը բազմիցս վկայակոչում է երկու-երկու և երեք-երեք ավելացող թվաշարքեր և նույնիսկ թվաբանական, երկրաչափական և «հարմոնիկ» համամասնություններ պարունակող մի աղյուսակ: Նա գրում է. «Իսկ ութսուներեակն է թուոց ամենայարմարագոյնն՝ բաղկացեալ յերկուց առաջինի տրամագծաց, յայնմանէ որ յերկպատիկսն և յերեքկինսն՝ ըստ աղիւսաձևոյ շորեքկարգեան. զորս զամենայն զհամեմատութիւնս յինքեան փակէ, զթուականն, և զերկրաչափականն, և զյարմարականն: Մի՛ զայն, որ ի կրկնաց է. այս է, 6, 8, 9, 12, որոյ շարադրութիւնն լինի 35, և միւս ևս է՝ որ յերեքկնացն է, այս է, 6, 9, 12, 18, որոյ շարադրութիւնն լինի 45: Իսկ յերկոցունցն՝ յերեսուն և ի հնգէն և ի քառասուն և ի հնգէն ընու գութսուն թիւն»<sup>1</sup>: Համանման դատողությունների հանդիպում ենք նաև Փիլոնի այլ աշխատությունների մեջ: Օրինակ, խոսելով 45 թվի նշանակության մասին, հեղինակը գրում է. «Իսկ քառասուն և հինգն ծննդական թիւ է, բաղկացեալ յաղիւսակէ յերեքկնացրն. ըստ որում երեք համեմատութեամբքն յառաջագոյն երեկն՝ թուականն, և երկրաչափականն, և յարմարականն: Եւ է աղիւսակն, 6, 9, 12, 18. և շարադրութիւնն, 45»<sup>2</sup>: Հարց է ծագում, այդ ի՞նչ թվաշարքեր են, որոնք ավելանում են երկու-երկու և երեք-երեք. այդ ի՞նչ աղյուսակ է, որը «... զամենայն զհամեմատութիւնս յինքեան փակէ...»: Ինքն ըստ ինքյան հասկանալի է, որ այս հարցերը իրենց լուծումը կարող են գտնել միայն վերը բերված աղյուսակի մասին ամլյալների լույսի տակ: Հիրավի, քննելով այդ աղյուսակը մենք նկատում ենք, որ ձայների կվինտային հարաբերակցության կարգը արտահայտող թվաշարքը՝ 6, 9, 12, 18, որի գումարը հավասար է 45-ի, իսկապես որ ընդգրկված է երեք-երեք շարժվող (կամ ավելացող) թվերի սյունակում, օրինակ՝ 3, 6, 9, 12, 15, 18, 21, 24 և այլն: Այնուհետև, ձայների կվարտային հարաբերակցության կարգը արտահայտող թվաշարքը՝ 6, 8, 9, 12 ընդգրկված է երկու-երկու և երեք-երեք շարժվող թվերի սյունակներում, այսպես 2, 4, 6, 8, 10, 12, 14, 3, 6, 9, 12, 15, 18, 21 և այլն: Ուստի, 80 թիվը, իսկապես որ «բաղկացած» է այն թվերից, որոնք հանդիպում են երկու-երկու և երեք-երեք շարժվող թվերի սյունակներում, ինչպես այդ հաստատում է Փիլոնը<sup>3</sup>: Այս դիտողությունների ճշգրտությունը կարելի է հաստատել հետևյալ փաստով ևս: Եթե հաշվի առնենք, որ աղյուսակում պարունակվող հարաբերությունները արտահայտում են բնական ձայնաշարի աղյուսակական հարաբերությունները, ապա պիտի

<sup>1</sup> Փիլոնի Երրայեցույ Մնացորդք ի հայս, Վենետիկ, 1826, էջ 206:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 266:

<sup>3</sup> Անհրաժեշտ է նշել, որ Փիլոնը իր վկայակոչած աղյուսակը անվանում է «շորեք-կարգեան» (նայիր վերի մեջբերումը). ըստ երևույթին, հեղինակը այս դեպքում նկատի ունի այն, որ 6, 8, 9, 12 և 6, 9, 12, 18 թվաշարքերը ընդգրկված են աղյուսակի առաջին շորս սյունակների սահմաններում: Սակայն, Փիլոնի այս արտահայտությունը (շորեք-

հետևյալները, թե Փիլոնի հիշատակած և աղյուսակում ընդգրկված երկու թվաշարքերն էլ պետք է որ արտահայտեն որևէ հիմնական ձայնի համապատասխան օրերտոնների հարաբերակցությունները: Եվ իսկապես, այդ թվաշարքերը արտահայտում են հիշյալ հարաբերակցությունները: Օրինակ, եթե որպես հիմնական ձայն ընդունենք կոնտր օկտավի «դո» ձայնը, այդ հարաբերությունները կարտահայտվեն հետևյալ կերպ:



Չափազանց հետաքրքիր ու հատկանշական են նաև այն թվային հարաբերությունները, որոնք Փիլոնը բերում է որպես կատարյալ կոնստանանների արտահայտիչներ, դրանք անվանելով «յարմարութիւնք», այսինքն «հարմոնիաներ», այն է՝ 40 : 20 կամ 20 : 10 (օկտավա), 30 : 20 (կվինտա) և 40 : 30 (կվարտա): «Եւ ի ձեռն այնց թուոց, որք ըստ երաժշտականութեան յարմարութիւնք են, ամենեքեան տեսեալ լինին. այն՝ որ ի ձեռն ամենեցուն յերկպատկի բանի, ի քառասնիւն առ քսանն, կամ քսանիւն առ տասն, իսկ հընգիւն՝ կիսահոլով բանիւն, երեսնիւն առ քսանն, իսկ շորիւքն՝ մակեռակիւն, քառասնիւրն առ երեսուն»<sup>1</sup>:

Դժվար չէ նկատել, որ Փիլոնի կողմից բերված թվային այս վերջին հարաբերությունները պարունակվում են աղյուսակի վերջին ուղղաձիգ և ներքևի հորիզոնական սյունակներում:

Այսպիսով Փիլոնի խոսքերից պարզվում է, որ նրան հայտնի էին վերևում բերված աղյուսակում պարունակված հարաբերությունները:

Քննարկվող հարցի վրա որոշակի լույս են սփռում նաև ալեքսանդրյան գիտնականների կողմից դիատոնիկ, խրոմատիկ և էնհարմոնիկ քառալարերի կառուցվածքը սահմանելու գործում ձեռք բերված դրական արդյունքներն էլ: Այդ գիտնականներից Դիդիմը (մեր թվ. I դար), ինչպես հայտնի է, հետևյալ կերպ էր սահմանում հիշյալ քառալարերի ձայների հարաբերակցությունը (տե՛ս էջ 51):


Այս սխեմաներից երևում է, որ բերված քառալարերի ձայների քանակային

կարգեան») չի կարելի հզորիտ համարել թեկուզ այն պատճառով, որ այդ թվաշարքերի գումարները, 35, 45 և 80, որոնց այնքան մեծ նշանակություն է տալիս հենց ինքը Փիլոնը, աղյուսակի առաջին շորս սյունակներից դուրս են մնում. նրանք պարունակվում են 5-րդ և 8-րդ սյունակներում:

Փիլոնը, մի այլ անճշտություն էլ է թույլ տալիս. այսպես, խոսելով 6, 8, 9, 12 թվաշարքի մասին գրում է, որ այն «...ի կրկնաց է...» (տե՛ս վերևը). սակայն տվյալ շարքի երրորդ անդամը՝ 9 թիվը, ոչ թե երկու-երկու, այլ երկու-երեք շարժվող թվերի սյունակից է, այսինքն աղյուսակի երրորդ սյունակից:

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 267. ուշադրության արժանի է, որ այս մեջբերման միջոցով պարզվում է նաև կատարյալ կոնստանանների հայկական հին անվանակոչումների հարցը. այսպես, պարզվում է, որ «երկպատկի» նշանակում է օկտավա, «կիսահոլով» (կամ կիսարտը)՝ կվինտա, «իսկ շորիւքն»՝ կվարտա:

փոխհարաբերությունները լրիվ կերպով համընկնում են բնական ձայնաշարի ակուստիկական համապատասխան հարաբերությունների հետ, և որպես այդպիսին ընդգրկվում են մեր աղյուսակում արտացոլված սիստեմայում: Հատուկ ուշադրության արժանի է այն փաստը, որ էնհարմոնիկ քառալարում հանդես են գալիս 31-րդ օրերտոնի մասնակցությամբ գոյացած երկու փոքրագույն ձայնամիջոցներ: էլ ավելի նշանակալից է, սակայն, այն, որ 31-րդ օրերտոնով արտահայտվող ձայնը Դիդիմը նշում է «X» տառով: Ինչը<sup>1</sup> է Դիդիմը այս կերպ վարվում: Մի<sup>2</sup> թե ոչ այն պատճառով, որ այդ 31-րդ օրերտոնը



մեկն է այն մասնակի ձայներից, որոնք բաց են թողնված աղյուսակում, ինչպես այդ նշել ենք վերևում: Բայց եթե այդ այդպես է, ապա ինչպե՞ս է Դիդիմը կարողանում սահմանել իրեն անժանոթ «X» ձայնի թվային ճշգրիտ արտահայտությունը (31): Ակներև է, թե Դիդիմը այդ «X» ձայնի թվային արտահայտությունը գտնում է հիմնվելով այն հանգամանքի վրա, որ բնական ձայնաշարի ներքևի ռեգիստրների ձայնամիջոցները ութնյակ (օկտավա) բարձր կրկնվելիս անպայման լրացվում են մի նոր մասնակի ձայնով: Դրանում հեշտությամբ կհամոզվենք, եթե ուշադիր կերպով քննենք վերը բերված էնհարմոնիկ քառալարի սխեման: Այդ սխեմայում Դիդիմը 15 : 16-ի հարաբերությամբ արտահայտվող դիատոնիկ կիսաձայնը բաժանում է երկու փոքրագույն ձայնամիջոցների՝ 30 : 31 և 31 : 32, որոնք գոյանում են բնական ձայնաշարում, 15-րդ և 16-րդ օրերտոնների օկտավային կրկնություններից: Այսպիսով տեսնում ենք, որ դիդիմյան էնհարմոնիկ քառալարում 31-րդ օրերտոնի հանդես գալու փաստը ոչ միայն չի հակասում աղյուսակում արտահայտված տասնակարգյան դրություն, այլև հարստացնում է այն մի նոր բնական հարաբերությամբ՝ 31-րդ մասնակի ձայնով:

Ամփոփելով Փիլոնի և Դիդիմի մասին շարադրվածը պիտի եզրակացնել, որ ըստ եղած տվյալների, բնական ձայնաշարի կառուցվածքի կարևորագույն օրինաչափությունները գտնված ու տեսականորեն իմաստավորված են եղել դեռևս մեր թվականության առաջին դարում, ալեքսանդրյան դիանականների կողմից: Բնական ձայնաշարի հիմնական ձայնամիջոցների թվային սահմա-

<sup>1</sup> Г. Р и м а н, Акустика с точки зрения музыкальной науки, М., 1898, էջ 12:

նումները պարունակող աղյուսակը, որը մեզ հասել է հայկական ձեռագրերում, և որը արտահայտում է ձայների և ձայնակարգերի մի ամբողջ սիստեմ, հայտնի է եղել ալեքսանդրյան գիտնականներին և կիրառվել նրանց կողմից «հարմոնիայի» մասին գիտության մեջ:

Ավելին, փաստերը ցույց են տալիս, որ քննարկվող աղյուսակը ստեղծողները հենց հիշյալ գիտնականներն են եղել: Այսպես, տասնակարգյան աղյուսակը ամբողջությամբ բերված է եղել մեր թվականության առաջին դարում ապրած Նիկոմաքոս Գերազեցու «Թվաբանության ներածություն» աշխատության մեջ: Այդ մասին իմանում ենք պրոֆ. Վիգորսկու «Թվաբանությունը և հանրահաշիվը հին աշխարհում» գրքից: Իր այս ուսումնասիրության մեջ Մ. Յա. Վիգորսկին սահմանազատվում է նրանցից, ովքեր համամասնությունների աղյուսակը «Պիթագորասի աղյուսակ» են անվանում. ինքը այդ աղյուսակը անվանում է բազմապատկության «մեր դպրոցական աղյուսակ» և նրա մասին խոսում է, մասնավորապես, թվաբանական գործողությունների կատարման անտիկ ձևերի կապակցությամբ, հանգելով մի շարք կարևոր եզրակացությունների: Այսպես, մանրամասնորեն նկարագրելով ամբողջ թվերի բազմապատկության հին հունական ձևը, և խոսելով հիշյալ ձևի մի շարք «գործնական անհարմարությունները» վերացնելու նպատակով ստեղծված բազմապատկության հատուկ աղյուսակների մասին, Մ. Վիգորսկին գրում է: «Այն տարածված կարծիքը, թե «Պիթագորասի աղյուսակը» հին հույների կողմից գործածվում էր որպես բազմապատկության աղյուսակ, բոլորովին անհիմն է: Քիչ է այն, որ մեր դպրոցական աղյուսակի նման բազմապատկության աղյուսակի գործածության հետքեր ոչ մի տեղ չենք գտնում: Այլ այն ամենը, ինչ վերևում ասվեց հին հունական համարակալության սիստեմի մասին, ցույց է տալիս, որ այդպիսի աղյուսակը հույն դպրոցականին քիչ օգուտ կբերեր:

Իսկ ո՞րտեղից կարող էր ծագել «Պիթագորասի աղյուսակ» անվանակոչությունը և նրա մասին հիշյալ կարծիքը: Ինչ թվում է, ահա թե որտեղից: Մեր թվականության շուրջ 100 թվականին Նիկոմաքոսի կողմից հորինվեց «Թվաբանության ներածություն» աշխատությունը: Այն նվիրված էր ոչ թե հաշվարկման տեխնիկային, ինչպես կարելի էր կարծել, այլ թվաբանական տեսական-տարրական գիտելիքների շարադրությանը: Նիկոմաքոսի «Թվաբանություն»-ում մենք իսկապես գտնում ենք ճիշտ այդպիսի մի աղյուսակ՝ հունական տառ-թվերով: Բայց այն ծառայել է ոչ թե բազմապատկության գործողության կատարմանը, այլ թվերի միջև գոյություն ունեցող հարաբերությունների Նիկոմաքոսի կողմից կազմված անունների սիստեմը ցուցադրելուն»<sup>1</sup>:

Այսպիսով, քննարկվող աղյուսակի մասին պրոֆ. Մ. Վիգորսկու կարծիքը հանգում է հետևյալ երեք կետերին, ա) մեր աղյուսակը «Պիթագորասի աղյուսակ» չէ, բ) հնում այն չէր օգտագործվում որպես բազմապատկության աղյուսակ, գ) այն ծառայում էր թվերի հարաբերակցությունների Նիկոմաքոսի կողմից կազմված անունների սիստեմը (նոմենկլատուրը) ցուցադրելուն: Սույն հոդվածում բերված փաստերը Մ. Վիգորսկու այս տեսակետին չեն հակասում: Սակայն նրանց լույսի տակ այստեղ պետք է ավելացնել երկու կետ ևս. Ա) եթե հաշվի առնենք, որ աղյուսակում պարունակվող հարաբերությունները ծանոթ էին նաև Փիլոն Ալեքսանդրացուն, որը, ինչպես հայտնի է, շապրեց մինչև 100

<sup>1</sup> М. Я. Выгодский, Арифметика и алгебра в древнем мире, М.—Л., 1941, էջ 195—197:

թվականը, ապա պիտի եղբակացնել, որ նիկոմաքոսը իր «Թվաբանության ներածություն»-ում լուր հանրագումարի էր բերել թվերի ու ձայների հարաբերակցությունների մասին մեր թվականության առաջին դարում Ալեքսանդրիայում արդեն հայտնի ու կիրառվող ուսմունքը: Բ) թվերի հարաբերությունների նիկոմաքոսի կազմած անունների սիստեմը միևնույն ժամանակ արտահայտում էր նաև հնչյունների հարաբերությունների մի յուրահատուկ սիստեմ, այն է՝ ձայների տասնակարգյան բնական սիստեմը: Այս վերջին հանգամանքը Մ. Վիգորսկին չի շոշափում լուր այն պատճառով, որ նա, որպես մաթեմատիկոս, աղյուսակը քննում է միայն թվաբանական գիտության տեսակետից: Հնում, սակայն, մի կողմից ամբողջ թվերի և մյուս կողմից ձայների միջև գոյություն ունեցող հարաբերությունների խնդիրը մի անքակտելի ամբողջություն էր ներկայացնում իրենից: Այս հանգամանքը հատուկ նշանակություն է ձեռք բերում մանավանդ քննարկվող աղյուսակի կապակցությամբ, քանի որ այն հանդես է եկել ոչ միայն մաթեմատիկոսի, այլև անտիկ երաժշտության տեսության այնպիսի փայլուն ներկայացուցիչներից մեկի աշխատությունում, ինչպիսին էր իր ժամանակի «Թունդ պիթագորական» նիկոմաքոսը: Ակներև է, թե այս վերջին հանգամանքն է, որ նկատի ունի նաև Մ. Վիգորսկին, երբ տասնակարգյան աղյուսակի մասին իր տեսակետի շարադրությունը վերջացնում է հետևյալ խոսքերով. «Եվ այսպես, մեր աղյուսակը իրավամբ կարող է անվանվել եթե ոչ «Պիթագորասի», ապա «Պիթագորական»<sup>1</sup>: Այս նույն միտքն է, որ թաքնված է նաև հայկական ձեռագրերում աղյուսակին տրված խորագրի մեջ:

Ինչպե՞ս պետք է հասկանալ աղյուսակի տակ գրված խոսքեր.  
«Այս է դուռն Պիթագորային»

Հայկական ձեռագրերի այս վկայությունը լրիվ կերպով իմաստավորված կլինի, եթե այն վերլուծվի այնպես, որ հասկացվի, թե աղյուսակում արտահայտված ձայների սիստեմը իրենից ներկայացնում է «Պիթագորասի ուսմունք»-ի երաժշտության վերաբերող բաժնի զարգացումն ու տրամաբանական ավարտումը:

Տեսնենք, թե ի՞նչ է իրենից ներկայացնում «Պիթագորասի ուսմունքը» երաժշտության մեջ: Մեր ժամանակակից երաժշտագիտության տվյալների համաձայն, Պիթագորասի ուսմունքը հիմնվում է ձայների հարաբերակցությունների ըստ միալարի մասերի կատարված թվային սահմանումների, ինչպես նաև կատարյալ կոնստնանսների ու փոքր ամբողջ թվերի կապի մասին կազմված յուրահատուկ պատկերացման վրա: Ինչպես հայտնի է, Պիթագորասը օկտավի, կվինտայի և կվարտայի ձայնամիջոցները ստանում էր միալարի վրա, այն բաժանելով համապատասխանաբար 2, 3 և 4 մասերի: Սրանից նա հետևյալից, որ օկտավա, կվինտա և կվարտա ձայնամիջոցները գոյացնող երկու տարբեր լարերի երկարությունները պետք է համապատասխանեն 1 : 2-ի 2 : 3-ի և 3 : 4-ի հարաբերություններին: Պիթագորասը սահմանեց նաև, որ միևնույն լարը կարելի է բաժանել այնպես, որպեսզի նրա երկու մասերը գոյացնեն հիշյալ ձայնամիջոցները: Եթե միալարի սեղմիչը դնենք նրա երկարության  $\frac{1}{3}$ -ի վրա,

<sup>1</sup> М. Я. Выгодский. Арифметика и алгебра в древнем мире. М.—Л., 1941, էջ 197:

ապա նրա մասերը  $\frac{1}{3}$  և  $\frac{2}{3}$  կգոյացնեն օկտավա, ներկայացնելով 1 : 2-ի հարաբերություն: Եթե սեղմիչը դնենք միալարի երկարության  $\frac{2}{5}$ -ի վրա, ապա նրա մասերը  $\frac{2}{5}$  և  $\frac{3}{5}$  կգոյացնեն կվինտա, ներկայացնելով 2 : 3-ի հարաբերություն և այլն: Լարի այսպիսի բաժանումը կոչվեց համամասնական կամ համեմատական բաժանում<sup>1</sup>, իսկ 1,  $\frac{1}{2}$ ,  $\frac{1}{3}$ ,  $\frac{1}{4}$  և այլն կարգը՝ Հարմոնիկ կարգ<sup>2</sup>:

Պիթագորասը մեծ նշանակություն էր տալիս մի կողմից կատարյալ կոնսոնանսների և մյուս կողմից փոքր ամբողջ թվերի միջև գոյություն ունեցող կապին. նա այնպես էլ շկարողացավ գիտականորեն բացատրել այդ երևույթը և նրա կողմից առաջադրված դադափարները վերացական, իսկ հաճախ նաև միատիկ բնույթ էին կրում<sup>3</sup>, սակայն, այնուամենայնիվ, նրանք զգալի ազդեցություն ունեցան և՛ Արևմուտքի և՛ Արևելքի, այդ թվում և Հայաստանի միջնադարյան երաժշտագիտական մտքի զարգացման վրա: Պիթագորասը, այսպես կոչված «Տետրակտուս»-ի մասին մի ամբողջ ուսմունք էր մշակել: Տետրակտուսը իրենից նախ և առաջ ներկայացնում էր չորս փոքր ամբողջ թվերի մի կարգ (1, 2, 3, 4), որում պիթագորականները տեսնում էին «հավիտենական բնության ակն ու արմատը»<sup>4</sup>: «Հարմոնիայի» տեսակետից Տետրակտուսը իր մեջ պարունակում էր կատարյալ կոնսոնանսների հարաբերությունները (4 : 2 կամ 2 : 1, 3 : 2 և 4 : 3): Տետրակտուսի անդամների գումարից ծագում էր «Դեկադա»-ն (1 2 3 4 = 10), որը ըստ պիթագորյան ուսմունքի, իրենից «Տրիեգերֆն» էր ներկայացնում: Դեկադայի կեսը՝ պիթագորականների հայտնի «Հնգյակը», համարվում էր «արարչության» թիվը, և այլն: «Հարմոնիայում» հիշյալ հնգյակին համապատասխանում էր կվինտայի ձայնամիջոցը, որն այնքան բացառիկ զեր էր խաղում ձայնային հարաբերությունների պիթագորյան սահմանումներում: Օկտավի, կվինտայի և կվարտայի հարաբերությունները միալարի օգնությամբ փորձնական ճանապարհով սահմանելուց հետո, մնացած բոլոր տեսակի ձայնամիջոցները պիթագորականները գտնում էին մաթեմատիկական հաշվարկումների միջոցով: Այդ հաշվարկումներում բացառիկ զեր էր խաղում կվինտայի հարաբերությունը (2 : 3): Եթե մի կողմ թողնենք կվարտան, որպես կվինտայի շրջվածքը, ապա կարելի է հաստատել, որ բացի օկտավից մնացած բոլոր ձայնամիջոցները պիթագորականների կողմից սահմանվում էին որպես կվինտայից ստացված ածանցյալ ձայնամիջոցներ:

Ահա այս է «Պիթագորասի ուսմունքը» երաժշտության մեջ, որի մասին

1	2	3	4
2	4	6	8
3	6	9	12
4	8	12	16

<sup>1</sup> Г. Гельмгольц, Учение о слуховых ощущениях, СПб, 1875, էջ 23:

<sup>2</sup> Г. Риман, Акустика с точки зрения музыкальной науки, էջ 19:

<sup>3</sup> Г. Гельмгольц Учение о слуховых ощущениях, էջ 323:

<sup>4</sup> Մ. Ծեփա հիրճեան, Հայկական ճարտարագիտութեան մէջ ներդաշնակութեան կանոններու պրպտումի փորձեր, Բաղմավէզ, 1947 թ., № 5—6, էջ 108—114:

ավելի մանրամասն տեղեկություններ, ինչպես հայտնի է, շին պահպանվել: Այնուամենայնիվ, բերված փաստերից էլ կարելի է արտածել պիթագորյան «հարմոնիկ» համամասնությունների սիստեմն իր գլխավոր կողմերով: Եթե Պիթագորասը միալարը բաժանում էր միայն շորս մասերի, ապա ակներև է, որ նա մշակել էր «հարմոնիկ» համամասնությունների շորս տեսակներ կամ կարգեր, որոնք կարող են արտահայտվել հետևյալ թվաշարերի միջոցով (տե՛ս էջ 54): Ինչպես հայտնի երևում է, սույն սխեման տասնակարգյան աղյուսակի նախատիպարն է ներկայացնում իրենից: Դրանում մենք վերջնականապես կհամոզվենք, եթե այն պատկերենք համապատասխան ձայնանիշերով: Որպես հիմնական ձայն վերցնելով կոնտր օկտավի «դո» ձայնը, կստանանք հետևյալը,



այսինքն, մինչև 4-րդ մասնակի ձայնը բարձրացող մեկ հիմնական, և նրա 2-րդ, 3-րդ և 4-րդ անդամներից համանման կերպով կառուցված երեք ածանցյալ ձայնասանդուղքներ: Բայց Պիթագորասը ինչպե՛ս էր ստանում տվյալ «հարմոնիկ» համամասնությունները: Ըստ բոլոր տվյալների, նա շորս մասի էր բաժանում հիմնական լարը. և նույն փորձը կրկնում էր երեք անգամ էլ, շորսական մասի բաժանելով հիմնական լարի  $1/2$ ,  $1/3$ ,  $1/4$  մասերին համապատասխանող երեք այլ լարեր: Վերջին հաշվով ստացվում էր ձայների մի բնական կարգ մինչև 16-րդ մասնակի ձայնը ներառյալ, բայց բազմաթիվ բաց թողնված հնչյուններով:



Պիտի հատուկ ուշադրություն դարձնել այն բանի վրա, որ Փիլոն Ալեքսանդրացու հիշատակած ձայների կվարտային հարաբերակցության կարգը (6, 8, 9, 12), առկա է Պիթագորյան «հարմոնիկ» համամասնությունների սիստեմում: Բայց այստեղ չկա Փիլոնի հիշատակած կվինտային հարաբերակցության 6, 9, 12, 18 թվաշարքով արտահայտվող ձայների կարգը, էլ շխտսելով նրա կողմից բերված, կատարյալ կոնսոնանսների ինտերվալային գործակիցների մասին:

Այսպիսին են, մեր կարծիքով, պիթագորյան «հարմոնիկ» համամասնությունները: Այս կապակցությամբ արված հետևությունների ճշգրտությունը հաստատվում է նրանով, որ վերը նկարագրված պիթագորյան համամասնությունների սիստեմը պարունակում է հենց միայն այն հիմնական ձայնամիջոցների գործակիցները, որոնք պիթագորականների կողմից սահմանվում էին փորձնական ճանապարհով: Եթե պիթագորյան «հարմոնիկ» համամասնությունները համեմատենք տասնակարգյան աղյուսակում արտահայտված սիստեմի հետ, ապա կտեսնենք, որ շնայած դրանց խոր տարբերության, ալեքսանդրյան գիտնականների կողմից մշակված դրությունը պիթագորյան սկզբնական ըմբռնման հետագա զարգացումն է ներկայացնում իրենից: Ամենայն հավանականու-



թյամբ, ալեքսանդրյան գիտնականները, և մասնավորապես նրանք, ովքեր իրենց «պիթագորականներ» կամ «կանոնիկներ» էին համարում (ի տարբերություն «հարմոնիկներից», որոնց հիմնադիրն էր նշանավոր Արիստոքսենը) իրենց տասնակարգյան սիստեմի հիմքում դրել էին «Բեկադայի» մասին պիթագորյան ուսմունքը ( $1\ 2\ 3\ 4 = 10$ ): Հիմնվելով դրա վրա, հիշյալ գիտնականները շարունակել են զարգացնել ձայների հարաբերությունները միալարի անմիջական բաժանման միջոցով սահմանելու գործը, և գտել բնական բազմաթիվ նոր ձայնամիջոցներ: Ըստ բոլոր տվյալների, նրանք հիմնական լարը բաժանում էին ոչ թե շորս, այլ տաս մասի, և նույն փորձը կրկնելով ևս ինը անգամ, տասական մասի էին բաժանում նաև առաջին լարի  $1/2$ ,  $1/3$ ,  $1/4$ ,  $1/5$ ,  $1/6$ ,  $1/7$ ,  $1/8$ ,  $1/9$  և  $1/10$  մասերին համապատասխանող ինը լարեր էլ: Այսպիսով, շորսական անգամ ունեցող պիթագորյան շորս ձայնասանդուղքների փոխարեն գոյացել են տասական անգամ ունեցող տաս ձայնասանդուղքներ: Եվ հետևաբար՝ պիթագորյան շորս տեսակի համամասնությունների փոխարեն, հանդես են եկել տասը տեսակի համամասնություններ, իրենց համապատասխան թվաշարքերով: Սրանից բխում է, որ տասնակարգյան աղյուսակում պարունակված հարաբերությունները սահմանված են եղել ոչ թե մաթեմատիկական հաշվարկումների միջոցով, այլ փորձնական ճանապարհով: Դա, իհարկե, չի նշանակում, որ այստեղ մաթեմատիկական ընդհանրացումները իրենց բաժինը չեն բերել, և որ քննարկվող սիստեմը զուտ փորձի արդյունք է եղել: Այնուամենայնիվ, տասնակարգյան աղյուսակում մաթեմատիկական վերացական հաշվարկումների միջոցով գտնված հարաբերություններ որոնելը զուր շանք կլինի: Սրանում հեշտ կհամոզվենք, եթե համեմատության կարգով կանգ առնենք երաժշտագիտության պատմության մեջ «մաթեմատիկական ձայնակարգեր» (строи) անունը կրող երկու տարբեր սիստեմներում սահմանված ինտերվալային մի շարք բնորոշ գործակիցների վրա: Հիշյալ սիստեմներից առաջինն է՝ «Պիթագորասի ձայնակարգը», իսկ երկրորդը՝ այսպես կոչված «Մաքուր ձայնակարգը» (чистый строй): Հակիրճ լինելու համար բերենք միայն երկու օրինակ: Վերը նըշվեց, որ ըստ տասնակարգյան աղյուսակի, խրոմատիկ կիսաձայնը արտահայտվում է  $24 : 25$ -ի հարաբերությամբ, որը բնական հարաբերություն է: Համաձայն «Պիթագորասի ձայնակարգի», այդ նույն խրոմատիկ կիսաձայնը ստացվում է կվինտային 7 քայլերի միջոցով և արտահայտվում է  $2048 : 2187$ -ի հարաբերությամբ<sup>1</sup>, որը տասնակարգյան աղյուսակի սահմաններից դուրս է գալիս: Այնուհետև, վերևում ցույց տրվեց նաև, որ դիդիմյան էնհարմոնիկ տետրախորդում  $e—\bar{f}$  կիսաձայնի միջև գտնվող «X» ձայնը Դիդիմը նշանակել էր 31 թվանշանով, հիմնվելով տասնակարգյան աղյուսակում պարունակված ակուատիկական հարաբերությունների վրա: Այն ինչ «Մաքուր ձայնակարգում» (որն ի դեպ, ոչ միջնադարի գիտական մտքի արդյունք է), այդ (X) ձայնին կհամապատասխաներ «eis» ձայնը, իսկ վերջինս հիշյալ ձայնակարգում ստացվում է տերցիային երեք վերընթաց քայլերի միջոցով՝  $\bar{f}—a—cis—eis$  և արտահայտվում է  $64 : 125$ -ի հարաբերությամբ<sup>2</sup>, որն հակասում է աղյուսակում արտացոլված դրություն: Այսպիսով, բերված փաստերը ավելորդ անգամ ցույց են տալիս, որ քննարկվող տասնակարգյան ձայնա-

<sup>1</sup> Музыкальная акустика, под. ред. Н. А. Гарбузова, М., 1954, էջ 205:

<sup>2</sup> Տե՛ս նույն աշխ. էջ 207 որտեղ «eis» ձայնի մասին վերևում ասվածը բացառված է «his» ձայնի օրինակի վրա:

յին սիստեմը «մաթեմատիկական ձայնակարգ» չէ, և որ նրա բոլոր հարաբերությունները սահմանված են փորձնական ձանապարհով: Այս տեսակետից տասնակարգյան սիստեմը, ձայնային հարաբերությունները միալարի արվեստական բաժանման միջոցով սահմանելու սկզբնապես Պիթագորասի կողմից հիմնադրված պրակտիկայի հետագա զարգացման արդյունքն է հանդիսանում: Եթե սրան ավելացնենք և այն, որ մի կողմից ձայների տասնակարգյան սիստեմի իսկ մյուս կողմից «Տետրակտոսի» և մանավանդ «Դեկադայի» մասին պիթագորայան ուսմունքի միջև գոյություն ունի ներքին ակնհայտնի կապ, ապա պարզ կլինի, թե հայկական ձեռագրերում պահպանված աղյուսակը արտացոլում է մի դրություն, որում թվաբանական, երկրաչափական և «հարմոնիկ» համամասնությունների վերաբերյալ Պիթագորասի սկզբնական ըմբռնումը հանգեցվել է իր տրամաբանական ավարտին: Հենց այս կերպ էլ պիտի հասկանալ մեր աղյուսակի տակ պահպանված բացատրական խոսքերը՝ «Այս է դուն Պիթագորային»:

Դժվար չէ հասկանալ, թե ինչպիսի՞ ձգտումներով են դեկավարված եղել ալեքսանդրյան այն գիտնականները, որոնք բնական նոր ձայնամիջոցներ գրտնելու նպատակով միալարի արվեստական բաժանման պրակտիկային են դիմել և այն զարգացրել: Հայտնի է, որ հնում երաժշտագիտության գլխավոր խրնդիրներից մեկը համարվում էր լադային բազմապիսի սիստեմների ձայների քանակային փոխհարաբերությունները սահմանելու հարցը: Այդ ժամանակներում միակ հայտնի ձայնակարգը (строѣ) «Պիթագորասի ձայնակարգն» էր: Վերջինս, սակայն, լինելով միազորձոն ձայնակարգ (որում այս կամ այն տեսակի ձայնամիջոցները ինտերվալային միայն մեկ գործակից են ունենում), մոնոդիկ երաժշտության ինտոնացիոն կողմը արտահայտում էր սխեմատիկ կերպով: Զայնամիջոցների պիթագորայան սահմանումներում իսպառ կորչում էին հին մոնոդիկ երաժշտության լադային ու ինտոնացիոն «chroai» կոչված բազմաթիվ նրբությունները: Սրա հետևանքով երաժշտագիտության և կենդանի, հնչող երաժշտության միջև որոշակի խզում էր առաջ գալիս: Այդ խզումը վերացնելու համար հարկավոր էր նախ և առաջ հաղթահարել «Պիթագորասի ձայնակարգի» միազորձոնությունը, զարկ տալով բնական ձայնամիջոցները սահմանելու փորձնական միջոցներին: Հենց այդ տեսակետից տասնակարգյան աղյուսակի միջոցով հակիրճ շարադրված, ձայների հարաբերակցությունների նոր սիստեմը պիտի համարել ալեքսանդրյան գիտնականների փայլուն հաղթանակը: Այս միտքը լավագույն կերպով կարելի է բացատրել հետևյալ կոնկրետ օրինակի վրա: Վերևում բերել էինք դիատոնիկ տետրախորդի ձայների Դիդիմի կողմից սահմանված քանակային փոխհարաբերությունները: Համեմատության կարգով բերենք նաև նույն քառալարի ձայների Պիթագորասի կողմից սահմանված հարաբերությունների սխեման<sup>1</sup>:

3 : 4	64 : 81	—a	
		....	8 : 9
		g	
		....	8 : 9
		—f	
		....	243 : 256
		e	

<sup>1</sup> Г. Рима́н, Акустика с точки зрения музыкальной науки, էջ 10 (այստեղ 233: 256 հարաբերությունը ակնհայտնի վրիպակ է. պետք է լինի՝ 243, 256):

Համեմատությունը ցույց է տալիս, որ ի տարբերություն պիթագորյանից, դիդիմյան դիատոնիկ տետրախորդը պարունակում է երկու տարբեր մեծուքյուն ունեցող ամբողջ ձայներ. ց—ի ձայնամիջոցը (այստեղ ձայնամիջոցներն հաշվվում են վերից վար), որն ըստ Դիդիմի արտահայտվում է 9 : 10-ի հարաբերությամբ, պիթագորյան քառալարի 8 : 9-ի հարաբերությամբ սահմանված համապատասխան ձայնամիջոցից ֆիշ ավելի փոքր է: Դա նշանակում է, որ դիդիմյան քառալարի «1» ձայնը, պիթագորյան քառալարի նույն ձայնից, ֆիշ ավելի բարձր է: Այստեղից՝ դիդիմյան 4 : 5-ի հարաբերությամբ արտահայտվող զ—ի տերցիան պիթագորյան 64 : 81-ի հարաբերությամբ սահմանված նույն տերցիայից ֆիշ ավելի նեղ է ստացվում, իսկ դիդիմյան 1—Ե կիսաձայնը՝ ընդհակառակը, պիթագորյան նույն կիսաձայնից ֆիշ ավելի լայն: Ամբողջությամբ վերցրած պիթագորյան քառալարը կհնչի մի տեսակ շոր, լարված ու սխեմատիկ. դիդիմյանը՝ ընդհակառակը փափուկ, հանդիսատեքնական: Սրա պատճառն այն է, որ դիդիմյան քառալարը հիմնված է բնական ձայնամիջոցների վրա:

Հարկ է նշել, որ բերված փաստերը այն միտքն են առաջացնում, թե ալեքսանդրյան գիտնականների կողմից կիրառված ձայների տասնակարգյան սխեմամբ վաղ միջնադարի երաժշտական բազմալարանի գործիքները լարելու գործում էլ իր կարևոր դերն էր խաղում: Դա ինքնըստինքյան հասկանալի կլինի եթե հիշենք, որ լադային այս կամ այն սխեմայի, կամ, այլ և այլ տետրախորդների կառուցվածքը սահմանելիս, Դիդիմը, Պտղոմեոսը, ինչպես նաև ալեքսանդրյան մյուս գիտնականները, ղեկավարվում էին նաև բնական ձայնաշարի ակուստիկական հարաբերությունների վրա հիմնված լարվածքներ ստեղծելու գործնական նկատառումներով էլ: Ըստ երևույթին, ձայների տասնակարգյան սխեմայի հեղինակների գործնական նպատակները պայմանավորող գլխավոր ազդակը եղել է բարձր զարգացած գործիքային երաժշտության գոյությունը. քանի որ վերջինս դիատոնիկից միշտ էլ պահանջել է լարվածքների ըստ կարելվույն միակերպ, բոլորի կողմից ընդունված և տրամաբանորեն կարգավորված շափեր՝ նորմաներ ստեղծել:

Ուստի, ձայների տասնակարգյան սխեմամբ կարող է և պետք է դիտվի նաև որպես «Պիթագորասի» և «Մաքսուր» Հայնակարգերի միջև իր ուրույն տեղն ունեցող յուրահատուկ «Բնական ձայնակարգ» (СТРОЙ): Այդ ձայնակարգի աչքի ընկնող առանձնահատկությունը պիտի համարել այն, որ նրանում, ի տարբերություն և «Պիթագորասի» և «Մաքսուր» ձայնակարգերից, չկան այսպես կոչված անսխեմատիկական վերացական հաշվարկումների միջոցով գտնված ձայնամիջոցներ:

Այսպես, ուրեմն, դարգացնելով միալարի արվեստական բաժանման պրակտիկան, ալեքսանդրյան գիտնականները մեր թվականության առաջին դարում բացահայտում են բնական ձայնաշարի կառուցվածքի հիմնական օրինաչափությունները: Այդ հին մտածողները շփտեին, իհարկե, որ իրենց կողմից անալիտիկ կերպով ստացվող ձայների բնական կարգը լարի տատանման ժամանակ գոյանում է ինքնըստինքյան, սակայն դա չէր խանգարում որպեսզի նրանք բնական ձայնաշարի մասին ճշգրիտ պատկերացում կազմեին: Անտիկ երաժշտագիտության ալեքսանդրյան դպրոցի այս նվաճումը մեծ նշանակություն ունի ոչ միայն երաժշտական ակուստիկայի զարգացման տեսակետից, այլև իր ժամանակի կենդանի երաժշտության երևույթների արձանագրե-

ման և ընդհանրացման իմաստով: Իսկ այդ կենդանի երաժշտությունը, իր բազմապիսի լադերով և ինտոնացիոն բազմաթիվ նրբություններով զարգանում էր միաձայն երաժշտության հնադարյան տրադիցիաների հիմքի վրա, տրադիցիաներ՝ որոնց ստեղծման գործում իրենց բաժինն են բերել նաև արևելյան մի շարք ժողովուրդներ էլ: Մի անհրաժեշտ վերապահում անենք: Ինքնուտինքյան հասկանալի է, որ ձայների տասնակարգյան սիստեմից մենք շենք կարող արտածել անտիկ երաժշտության ինտոնացիոն բոլոր առանձնահատկությունները: Միամտություն կլինե՞ր կարծել, թե ալեքսանդրյան գիտնականների ժամանակակից երգիչներն ու զանազան գործիքների վրա նվազող երաժիշտները կարտաման ժամանակ գիտության կողմից սահմանված քանակային ճշգրիտ փոխհարաբերություններ ունեցող ձայնամիջոցներ էին օգտագործում: Նույնիսկ մեր ժամանակակից երաժիշտները, հավասարաչափ տեմպերացված ձայնակարգի պայմաններում էլ, ձայնամիջոցների քանակային ճշգրիտ փոխհարաբերություններից հաճախ զգալի շեղումներ են թույլ տալիս, ինչպես այդ ցույց տվեցին պրոֆ. Գարրոլդովի վերջին հետազոտությունները «զոնային ձայնակարգ»-ի գոյության մասին<sup>1</sup>: Սակայն այդ հանգամանքը չի կարող նսեմացնել, ինչպես առհասարակ տեսական մտքի որևէ նվաճում, այնպես էլ այս դեպքում ալեքսանդրյան դպրոցի տեսական այդ նվաճումը: Բանն այն է, որ տասնակարգյան աղյուսակում պարունակվող բազմապիսի, շատ դեպքում «անզեն» լսողությամբ հազիվ որսալի և կամ բոլորովին անորսալի հարաբերությունները, ինչպիսին են 35 : 36-ի, 49 : 50-ի և 80 : 81-ի հարաբերությունները, և վերջապես՝ ձայների տասնակարգյան ամբողջ սիստեմը, շէին կարող ստեղծվել, եթե շինե՞ր կենդանի երաժշտության ինտոնացիոն անհամար նրբությունները դիտելու, դասակարգելու և տեսականորեն իմաստավորելու գիտական ձգտում: Այդ կապակցությամբ այստեղ տեղին կլինե՞ր խոսք ասել մեր նախահայրերի երաժշտական լսողության սրության ու նրբության մասին: Ահա թե ինչ է գրում այդ կապակցությամբ Հելմհոլցը. «... արտահայտության այն բազմապիսի աստիճանները, որոնց մենք հասնում ենք հարմոնիայի և մոդուլյացիայի միջոցով, հույները և միաձայն երաժշտություն ունեցող մյուս ժողովուրդները պիտի աշխատեին ձեռք բերել լադերի ավելի նրբացած ու զանազանակերպ կիրառումով, այդ պատճառով, զարմանալի ոչինչ չկա այն բանում, որ նրանց երաժշտական լսողությունը, այդ կարգի զանազանությունների համար ավելի էր մշակված քան մերը»<sup>2</sup>: Սրան պիտի ավելացնել, որ հենց երաժշտական լսողության հիշյալ նրբությունը մեզ համար ինչ որ անհետ կորած մի երևույթ չէ. այն մինչև այժմ էլ շարունակում է իր գոյությունը արևելյան ժողովուրդների մոտ, որտեղ պրոֆեսիոնալ երաժշտության մեջ բազմաձայնության ներմուծումը չի վերացրել ավանդական միաձայնության հնադարյան տրադիցիաները:

### Տասնակարգյան աղյուսակը ծանոթ էր արդյո՞վ վաղ միջնադարյան հայ գիտնականներին

Վերը բերված ու քննարկված փաստերից մի քանիսը արդեն վկայում են այն մասին, որ աղյուսակում պարունակված հարաբերությունները հայտնի

<sup>1</sup> Музыкальная акустика, под. ред. проф. Гарбузова, էջ 217—218.

<sup>2</sup> Г. Гельмгольц, Учение о слуховых ощущениях, էջ 381.

էին դեռևս 5-րդ դարի հայ գիտնականներին: Չմոռանանք Փիլոնի գրվածքների հայկական քարգմանություններում առկա մի շարք տվյալներն էին որ ցույց էին տալիս, թե աղյուսակում արտահայտված սխառմը մեր թվ. առաջին դարում կիրառվում էր «հարմոնիայի» մասին հնագույն գիտության մեջ, իսկ այդ թարգմանությունները, ինչպես հայտնի է, կատարված են 5—6-րդ դարերում: Այստեղ տեղին կլինի նշել և այն, որ Փիլոնի գրվածքները Հայաստանում հրահայտական ժողովրդականություն էին վայելում, ինչպես այդ վկայում են հետագա դարերում կատարված նրանց բազմաթիվ մեկնարանությունները: Սրանից պիտի հետևենք, թե Փիլոնի աշխատություններում «հարմոնիայի» մասին առկա տվյալները թարգմանիչ-գիտնականների միայն մի նեղ շրջանակի չէ, որ ծանոթ են եղել:

Այսպիսով, պիտի ապացուցված համարել այն, որ վաղ միջնադարի հայ գիտնականներին հայտնի էին տասնակարգյան աղյուսակում պարունակված հարաբերությունները: Սակայն բանը միայն աղյուսակում պարունակված հարաբերություններում չէ, թեև այդ էլ բավական կլինեք հաստատելու համար, թե երաժշտական ակուստիկայի մասին մի շարք կարևորագույն դրույթներ լավ հայտնի էին վաղ միջնադարի հայ գիտնականներին: Դիտողությունները ցույց են տալիս, որ համամասնությունների տասնակարգյան աղյուսակը ամբողջությամբ ծանոթ էր 7-րդ դարի հայ նշանավոր մաթեմատիկոս և փիլիսոփա Անանիա Շիրակացուն: Մենք ստորև կբերենք այդ աղյուսակը հենց այն ձևով, ինչպես դա կազմված է եղել Շիրակացու կողմից, և ընթերցողը ինքը կհամոզվի դրանում: Սակայն, նախքան այդ անհրաժեշտ է հակիրճ կերպով բացատրել, թե ի՞նչը մեզ դրդեց տասնակարգյան աղյուսակը հենց Անանիա Շիրակացու աշխատություններում որոնելու:

Հայտնի է, որ երաժշտական արվեստի ակուստիկական հիմունքների հարցերով հնում զբաղվում էին մաթեմատիկոս-փիլիսոփա երաժիշտ-գիտնականները: Արդ, հայկական վաղ միջնադարը հանձինս Անանիա Շիրակացու ունեիր իր նշանավոր մաթեմատիկոսն ու փիլիսոփան, որը, ի դեպ, ոչ միայն երաժիշտ-գիտնական էր, այլև մի շարք «քաղցրալուր» շարականների հեղինակ, ինչպես այդ մասին հիշատակվում է հայամավուրթներում, շարակնոցներում և միջնադարյան այլ աղբյուրներում: Այնուհետև, Շիրակացու ի հայտ բերված աշխատություններում «զույգ», «անզույգ», «կատարյալ», «բազմանկյուն» և այլ թվերի բազմաթիվ աղյուսակների գոյությունը բնականաբար այն միտքն էր առաջացնում, թե նա չէր կարող չիմանալ համամասնությունների, ինքնըստինքյան ոչ այնքան բարդ աղյուսակը: Այս ենթադրությունը որոշակի հիմք էր ստանում 11-րդ դարի հայ մտածող Գրիգոր Մագիստրոսի այն նշանակալից վկայության լույսի տակ, թե Շիրակացու «Քրոնիկոն»-ում պարունակվում են ... «թուականութեան... երաժշտականութեան... երկրաչափութեան և աստղաբաշխութեան...» հիմքը կազմող գիտելիքներ<sup>1</sup>: Ի՞նչ պիտի նկատի ունեցած լինեք Գր. Մագիստրոսը, խոսելով մաթեմատիկոս Շիրակացու աշխատության մեջ պարունակված և, մասնավորապես, երաժշտության հիմքը կազմող գիտելիքների մասին: Ակներև է, որ նա պիտի նկատի ունեցած լինեք համամասնությունների տասնակարգյան աղյուսակը, որում պարունակված հարաբերությունները իսկապես որ երաժշտական արվեստի ակուստիկական հիմքն են կազմում: Եվ

<sup>1</sup> Գրիգոր Մագիստրոսի թղթերը, ...ի լույս ընծայեց Կ. Կոստանեանց, Ալեքսանդրապոլ, 1910, էջ 8:

վերջապես, բերված փաստերի լույսի տակ հատուկ նշանակություն է ստանում նաև սովետահայ գիտնական Գ. Թումանյանի վկայությունն այն մասին, որ Շիրակացու ... «բազմանկյուն թվերի աղյուսակը հիմք է տալիս մտածելու, որ նիկոմախի «Թվաբանության ներածություն» աշխատությունը լավ հայտնի էր Հայաստանում» (ընդգծումը մերն է — Ն. Թ.)<sup>1</sup>:

Սակայն համամասնությունների տասնակարգյան աղյուսակի մասին հիշատակություն չկա պրոֆ. Ա. Արրահամյանի «Անանիա Շիրակացու Մատենադրությունը» գրքում, որտեղ հրապարակված է Շիրակացու աշխատությունների մեծ մասը: Հարց է առաջանում. արդյոք չէ՞ր կարող պատահել, որ Շիրակացու աշխատությունները բազմիցս ընդօրինակած միջնադարյան գրիչները տասնակարգյան աղյուսակը շփոթեին բազմապատկության աղյուսակների հետ: Եվ այս դեպքում Ա. Արրահամյանը իր հայտնաբերած նյութը բնականաբար պիտի հրապարակեր այն ձևով, ինչպես դա պահպանվել է ձեռագրերում: Եվ իսկապես, Ա. Արրահամյանի կողմից հայտնաբերված Շիրակացու բազմապատկության մոտ 150 աղյուսակների ուշագրի քննությունը ցույց տվեց, որ դրանց շարքում հանդես է գալիս նաև համամասնությունների աղյուսակը, որպես ըստ համարի 145-րդ բազմապատկության աղյուսակ: Ահա այն<sup>2</sup>:

Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ	Է	Ը	Թ	Ժ
Բ	Դ	Զ	Ը	Ժ	ժԲ	ժԴ	ժԶ	ժԸ	Ի
Գ	Զ	Թ	ժԲ	ժԵ	ժԸ	ԻԱ	ԻԴ	ԻԵ	Լ
Դ	Ը	ժԲ	ժԶ	Ի	ԻԴ	ԻԸ	ԼԲ	ԼԶ	Խ
Ե	ժ	ժԵ	Ի	ԻԵ	Լ	ԼԵ	Խ	ԽԵ	Ս
Զ	ժԲ	ժԸ	ԻԴ	Լ	ԼԶ	ԽԲ	ԽԸ	ՍԴ	Կ
Է	ժԴ	ԻԱ	ԻԸ	ԼԵ	ԽԲ	ԽԹ	ՍԶ	ԿԳ	Հ
Ը	ժԶ	ԻԴ	ԼԲ	Խ	ԽԸ	ՍԶ	ԿԴ	ՀԲ	Ձ
Թ	ժԸ	ԻԵ	ԼԶ	ԽԵ	ՍԴ	ԿԳ	ՀԲ	ՁԱ	Ղ
ժ	Ի	Լ	Խ	Ս	Կ	Հ	Ձ	Ղ	Ճ

<sup>1</sup> Г. Туманян, О таблице полигональных чисел А. Ширакаци, Сборник научных статей Матенадарана, 1941, № 1, էջ 57.

<sup>2</sup> Ա. Գ. Արրահամյան, Անանիա Շիրակացու Մատենադրությունը, Երևան, 1944, էջ 221: Այստեղ աղյուսակի երկու վանդակիկներում կան ակնհայտ վրիպակներ, 4-րդ հորիզոնական սյունակի 9-րդ վանդակում  $\overline{12}$ -ի փոխարեն  $\overline{21}$ , և 8-րդ հորիզոնական սյունակի 7-րդ վանդակում  $\overline{52}$ -ի փոխարեն  $\overline{57}$ :

Եթե այս աղյուսակը համեմատենք Նիկոմաքոսի կազմած աղյուսակի հետ, ապա կտեսնենք, որ նրանցում եղած միակ տարբերությունը կիրառված այբուբենի մեջ է. այն մի դեպքում հին հունական այբուբենն է, իսկ մյուս դեպքում՝ հայկական: Այսպիսով, Շիրակացու տասնակարգյան աղյուսակը պիտի համարել Նիկոմաքոսի «Թվաբանության ներածություն» աշխատությունում առկա աղյուսակի յուրահատուկ հայկական «թարգմանություն»: Այժմ դժվար չէ պատկերացնել այն ուղին, որն անցել է մեր աղյուսակը հայկական ձևազրեբում: Այսպես, եթե նույնիսկ աղյուսակը հայկական ձևազրեբում նախքան 7-րդ դարը ամբողջովին չի եղել, ապա 7-րդ դարում Անանիա Շիրակացին ինքն է կազմել այն, աչքի առաջ ունենալով Նիկոմաքոսի «Թվաբանության ներածությունում» պարունակվող աղյուսակը: Ժամանակի ընթացքում, մի կողմից միջնադարյան գրիչները շփոթում են համամասնությունների աղյուսակը Անանիա Շիրակացու կազմած մյուս՝ բազմապատկության բազմաթիվ աղյուսակների հետ, այդ մասին կարելի է դատել այն ձևազրեբից, որոնք ընկած են Ա. Աբրահամյանի վերոհիշյալ աշխատության հիմքում: Մյուս կողմից, սակայն, միջնադարյան հայ գիտունները, ամենայն հավանականությամբ՝ երաժիշտ-գիտնականները, առանձնացնելով համամասնությունների աղյուսակը Շիրակացու կազմած այլ աղյուսակներից, այն վեր են ածում համարակալության բոլորին հասկանալի տասնորդական սիստեմի և մատնացույց անելով նրա հատուկ բովանդակությունը, նրա տակ ավելացնում են վերը բերված ու քննարկված բացատրական խոսքերը՝ «Այս է դուռն Պիթագորային»: Այս տեսակետից ուշադրության արժանի է այն հանգամանքը, որ տասնակարգյան աղյուսակը Մատենադարանի № 5373 ձևազրեբում չնայած բերված է, ինչպես նշեցինք, որպես նախորդ և հաջորդ հոգվածներից անկախ նյութ, սակայն այն զետեղված է երաժշտական մի բովանդակալից հոգվածից հետո, որն սկսվում է «... երաժշտական իմաստասերն քննէ ի վերա շարունակ քնարին...» և այլն նշանակալից խոսքերով<sup>1</sup>:

Ինչո՞վ բացատրել, որ V—VIII դարերում Հայաստանում համամասնությունների տասնակարգյան աղյուսակը ակնհասնորյան հույներից փոխ առնելու անհրաժեշտություն է առաջ եկել

Այս հարցին պատասխանելը դժվար չէ: Բավական է հիշել, որ հայկական միաձայն երաժշտության գլխավորագույն Չայների (ուժ Չայն և երկու Ստեղի) տարբերացումը ու դասակարգումը կատարվել է հենց վաղ միջնադարում (մասամբ Սահակ Պարթևի կողմից 5-րդ դարում և մասամբ Ստեփանոս Սյունեցու կողմից 8-րդ դարում): Ըստ բոլոր տվյալների, հենց վաղ միջնադարում էլ երաժիշտ-գիտնականների առաջ կանգնել է հայկական ձայների ելեկշային էությունը գիտականորեն բացատրելու խնդիրը: Հնում այդ հարցի լուծումը հանգեցվում էր, գլխավորապես, լադային սիստեմների ձայների քանակային փոխհարաբերությունները պարզելուն: Վաղ միջնադարում մոտիկից շփվելով անտիկ մշակույթի հետ, հայերը պիտի աշխատեին նույն հարցի լուծման համաման ճանապարհներ որոնել, մեծ հետաքրքրություն հանդես բերելով դե-

<sup>1</sup> Տե՛ս Մատենադարանի № 5373 ձևազրեբի երես 4-ա: Այդ հոգվածի հեղինակը ձևազրեբում չի հիշատակված, սակայն հայտնի է, որ այն բաղված է 15-րդ դարի մատենագիր Հակոբ Արթմեցու «Տումարի մեկնություն»-ից:

սլի ակուստիկայի բնագավառում երաժշտական գիտության կատարած նորագույն նվաճումները: Համամասնությունների աղյուսակի ձևով հակիրճ շարադրված, երաժշտական արվեստի ակուստիկական հիմունքների մասին ուսմունքը, այդ ժամանակի համար երաժշտագիտության հենց նորագույն նվաճումն էր: Հայերը այն որոնում, գտնում և, բնականաբար, փոխ են առնում:

Այս կապակցությամբ բնական է ենթադրել նաև, որ Հայաստանում գործիքային երաժշտության զարգացումը, ինչպես նաև երաժշտական գործիքների (փողային, լարային՝ լադերով, բազմալար և այլն) արտադրության զարգացումն իրենց հերթին երաժշտական ակուստիկայի բնագավառում մի ուղեցույց-ձեռնարկ ունենալու անհրաժեշտություն էին առաջացնում:

Բայց եթե այդ այդպես է, ապա քննենք, վերջապես, կարևորագույն հարցը:

**Տասնակարգյան աղյուսակում պարունակված հարաբերությունները կիրառելի՞ են արդյո՞վ վաղ միջնադարի հայկական միաձայն երաժշտության մեջ**

Այս կապակցությամբ սխտի նախ և առաջ նշել, որ հայկական լադերի ձայների քանակային փոխհարաբերությունների մասին միջնադարյան հեղինակներից հիշատակություններ մեզ չեն հասել, և կամ այդպիսիներ դեռևս չեն հայտնաբերված, եթե չհաշվենք զարգացած ֆեոդալիզմի շրջանին վերաբերող մի շարք կցկտուր տեղեկություններ: Հենց որ այդպիսի հիշատակություններ ի հայտ բերվեն (իսկ դա շատ հավանական է), ապա դրանք նոր լույս կսփռեն վաղ միջնադարի հայկական մոնոդիայի լադային հիմքի և ակուստիկական բազայի հարցերի վրա:

Ուստի, այստեղ քննարկվող հարցը պահանջում է հետևյալ հակադարձ մոտեցումը. կրկնելով վաղ միջնադարի հայկական երաժշտության լադային հիմքից և ինտոնացիոն առանձնահատկություններից, սահմանել նրա ակուստիկական բազան:

Բայց ո՞րտեղից կարելի է տվյալներ քաղել վաղ միջնադարի հայկական մոնոդիկ երաժշտության լադային հիմքի և ինտոնացիոն առանձնահատկությունների մասին: Կանգ առնենք նախ այս հարցի վրա:

Այժմ հայ երաժշտագետներից և ոչ մեկը չի վիճարկում այն փաստը, որ ինչպես անտիկ, այնպես էլ հնադարյան ավանդությունները շատ բնագավառներում դեռևս պահպանող արևելյան ժողովուրդների մոնոդիկ երաժշտության մի բնորոշ կողմը, այն է՝ միևնույն անվանակոչություն բայց տարբեր որակ ունեցող ձայնամիջոցների կիրառումը, հատուկ է նաև առհասարակ հայկական միաձայն երաժշտությանը: Հայ երաժշտագետները այս հետևությունը անկիս հատուկ դժվարությունների շնորհիվ հանդիպում: Երաժշտական բազմադարյան սրակտիկայի արդյունք հանդիսացող հայկական մոնոդիկ երաժշտության ավանդություններն էլ իրենց գոյությունը պահել են մինչև մեր օրերը, որը հնարավորություն է տալիս նրա ինտոնացիոն առանձնահատկությունների մասին կենդանի պատկերացում կազմելու, հիմնվելով գործիքային կամ վոկալ կատարմամբ հնչող մեղեդիների անմիջական ընկալման վրա: Հայ երաժշտագետները այլևայլ դիտողություններ ու հետևություններ անելու համար իրենց տրամադրության տակ մի ուրիշ օբյեկտ էլ ունեն: Դա՝ ժողովրդի երաժշտական հարուստ ժառանգությունն է: Մեզ հասել են ինչպես ավելի նոր, այնպես էլ համեմատաբար ավելի հին ծագում ունեցող մեծ քանակությամբ մոնոդիաներ,



այդ թվում նաև հոգևոր, իր ժամանակին «պահածոյացված» բազմաթիվ երգեր: Վերջիններս միջնադարի ընթացքում (սկսած 9-րդ դարից) գրի էին առնվում խազերով: Այդ բանի, ինչպես նաև հայ եկեղեցու պահպանողականության շնորհիվ, ավելի վաղ ստեղծված հոգևոր երգերը պատասպարվում էին ոչ միայն կողմնակի ազդեցություններից, այլև, որոշ շափով, նաև հետագա փոփոխություններից: Իսկ երբ հանգամանքների բերումով խազագրության արվեստը վերջնականապես մոռացության տրվեց, 18-րդ դարի վերջի և 19-րդ դարի սկզբի երաժշտական կարկառուն գործիչ Հ. Լիմոնջյանի կողմից հնարվեց ձայնագրության հայկական նոր սիստեմը, դարձյալ նույն նպատակով. այն է՝ հոգևոր երգերը վերահաս կորստից փրկել և դրանք օտար ազդեցություններից զերծ պահել: 1874 թվականին Ն. Թաշճյանը ձայնագրության հիշյալ սիստեմի նշաններով գրի առավ «Շարական»-ի «Պատարագ»-ի և «Ժամագրքի» բոլոր երգերը այն ձևով, ինչ դրանք հասել էին մինչև 19-րդ դարի վերջին քառորդը: Ձայնագրության նույն այդ նշանները կիրառել է նաև Կոմիտասը, դրանց օգնությամբ գրի առնելով հայկական ժողովրդական երգերի մի պատկառելի քանակություն: Հայտնի է, որ Լիմոնջյանի սիստեմի նշաններով կատարված գրառումներում հաստատագրված են նաև ինտոնացիոն մի շարք բնորոշ նրբություններ: Ուստի այդ գրառումների հիման վրա կարելի է բավական լրիվ պատկերացում կազմել նաև հին մեղեդիների ինտոնացիոն առանձնահատկությունների մասին: Հիշյալ գրառումների միջոցով կարելի է նույնիսկ համեմատել ավելի նոր ծագում ունեցող մեղեդիները առավել հին ծագում ունեցողների հետ, նրանց ինտոնացիոն առանձնահատկությունների տեսակետից: Ի՞նչ է ցույց տալիս այդպիսի համեմատությունը: Դատելով մեզ հասած ինտոնացիաներից, ինչպես համեմատաբար ավելի նոր, այնպես էլ առավել հին ծագում ունեցողներից, հայկական միաձայն երաժշտությունը, միևնույն անվանակոչություն, բայց տարբեր որակ ունեցող ձայնամիջոցների կիրառման տեսակետից անտիկ և արևելյան միաձայնության համեմատությամբ վաղ միջնադարում էլ բացառություն չէր կազմում:

Անցնելով հիշյալ առավել հին ծագում ունեցող ինտոնացիաների լադային հիմքի հարցին, պիտի նշել հետևյալը: Մեզ հասել է նաև ինչ որ նախնական միջուկի կամ կորիզի բազմադարյան զարգացման արդյունքը հանդիսացող Ձայների, նրանց փոխադարձ կապերի և բարդ փոխհարաբերությունների մի ամբողջ կարգավորված սիստեմ: Այդ սիստեմի վերլուծությունը հնարավորություն է տալիս պարզ պատկերացում ունենալ ոչ միայն հիշյալ միջուկի կամ կորիզի, այլև նրա աստիճանական զարգացման մասին: Արդ, մեզ հասած մեղեդիների հնագույն նմուշները (այդ թվում նաև 7-րդ դարից մեզ հասածները) ոչ միայն հակասության մեջ չեն մտնում, այլև լրիվ կերպով համաձայնվում են Ձայների (լադերի) վերը հիշատակված սիստեմի հետ:

Իսկ ինչ վերաբերում է հայկական միաձայն երաժշտության ակուստիկական բազային, ասպա հարկ է ընդգծել, որ շկան այնպիսի տվյալներ, որոնք թեկուզ և թեթևակիորեն ակնարկեին այն մասին, թե հիշյալ բազան որևէ փոփոխության է ենթարկվել անցած ժամանակաշրջանի ընթացքում:

Այսպիսով բոլորովին պարզ է, թե վաղ միջնադարի միաձայն երաժշտության ինտոնացիոն առանձնահատկությունները պայմանավորված են եղել լադերի կազմակերպման հայ երաժշտության մեջ տիրապետող, և հայկական ժամանակակից երաժշտագիտությանը հայտնի մեթոդներով: Եթե սրան ավել-

լացնենք և այն, որ Հայաստանում, վաղ միջնադարում երաժշտական պրակտիկան զարգացել է հայ երաժշտության գլխավորապես բնական լադերի հիման վրա, ապա պարզ կլինի, որ քննարկվող ժամանակաշրջանի մոնոդիաների ինտոնացիոն առանձնահատկությունները պիտի արտածել հայկական միաձայն երաժշտության դիատոնիկ լրիվ ձայնաշարի կառուցվածքի մասին տվյալների ամբողջությունից:

Հիշյալ ձայնաշարը մանրամասն կերպով նկարագրվում է պրոֆ. Ք. Ս. Քուչնարյանի «Հայ մոնոդիկ երաժշտության պատմության և տեսության հարցերը» աշխատության մեջ, որում հեղինակը շարադրում է նաև հայկական երաժշտության մեջ կիրառվող, միևնույն անվանակոչության բազմաթիվ ձայնամիջոցների որակային զանազանությունների մասին իր ըմբռնումը: Դիմենք այդ աշխատությանը:



Նոտային սխեմայում [1] թվանշանով նշանակված ձայները Ք. Ս. Քուչնարյանը անվանում է միսուլիդիական, ելնելով նրանից, թե հայկական մոնոդիկ երաժշտության պայմաններում այդ ձայներից ամեն մեկը կարող է իր վրա վերցնել միքսոլիդիական լադի տոնիկայի ֆունկցիան: Համաձայն նկատումներով հեղինակը էռլական է անվանում այստեղ [2] թվանշանով նշանակված ձայները, և լոկրիական՝ [3] թվանշանով նշանակվածները: Վերլուծությունը ցույց է տալիս, թե տվյալ ձայնաշարը աչքի է ընկնում մի շարք բնորոշ գծերով. ա) նրանում էռլական ձայները դասավորված են միքսոլիդիականներից լրիվ մեծ սեկունդա վերև, իսկ լոկրիականները՝ էռլականներից նեղ մեծ սեկունդա վերև, բ) սույն ձայնաշարի միքսոլիդիական, էռլական և լոկրիական ձայներից համապատասխանաբար սկիզբ են առնում իրենց կառուցվածքով տարբեր, ձայնային երեք կարգեր, գ) հիշյալ երեք ձայների ամեն մեկից սկիզբ առնող հարաբերությունները տառացիորեն կրկնվում են կվարտային ամեն մեկ ձայնամիջոցից հետո, դ) իր ամբողջության մեջ ձայնաշարը դեպի վեր ուղղված է բեմոլների կողմը, իսկ դեպի վար՝ դիեզների կողմը<sup>2</sup>, իսկ դա նշակում է, որ տվյալ ձայնաշարը դեպի վեր կամ վար շարունակելիս, այն պիտի լրացվի նորանոր ձայներով:

Այս բնորոշ գծերով էլ պայմանավորված է վերը բերված ձայնաշարում պարունակվող ձայնամիջոցների բազմազանությունը: Այդ ձայնամիջոցները պրոֆ. Քուչնարյանը ստորաբաժանում է ոչ միայն «մեծ»-երի, «փոքր»-երի, «մաքուր»-ների և «փոքրացրած»-ների, այլ դրանց «որակական երկրորդային հատկանիշների» համաձայն՝ նաև «լրիվ», «նեղ» ու «լայն»-երի: Այսպիսով հանդես են գալիս ըստ իրենց մեծության և հետևաբար՝ նաև ըստ իրենց որակի տարբեր մեծ սեկունդաներ, փոքր տերցիաներ, փոքր սեկստաներ, և այլն: Հեղինակը քննարկվող ձայնաշարի վերը հիշատակված երեք տարբեր ձայների վրա կառուցված պարզ ձայնամիջոցների հետևյալ աղյուսակն է բերում.


<sup>1</sup> Նոտայի առաջ դրված նշանը ցույց է տալիս կիսաձայնից ավելի փոքր շափի թեթևակի ցածրացում:

<sup>2</sup> Այս հանգամանքն առաջին անգամ նկատել է Կոմիտասը:

Չայնամիջոցներ	Միջսովիդիական ձայներից	Հոլական ձայներից	Լոկրիական ձայներից
Սեկունդաներ	ձեծ լրիվ	ձեծ նեղ	փոքր լայն
Տերցիաներ	ձեծ նեղ	փոքր	փոքր լայն
Կվարտաներ	մ ա ջ ու ը		
Կվինտաներ	մ ա ջ ու ը	նեղ	փոքրացրած լայն
Սեկստաներ	ձեծ նեղ	փոքր	փոքր լայն
Սեպտիմաներ	փ ո թ ը		
Օկտավաներ	մ ա ջ ու ը	նեղ	փոքրացրած լայն

Աղյուսակից երևում է, որ սույն ձայնային հարաբերությունները հիմնովին տարբերվում են հավասարաչափ տեմպերացված ձայնակարգի ձայնամիջոցներից, որոնք «որակական երկրորդային» զանազանություններ չունեն: Ինչպես ցույց է տալիս Ք. Ս. Քուչնարյանը, աղյուսակում բերված և դրանց նման ձայնամիջոցների կիրառման պատճառները թաքնված են լադակազմության հայկական երաժշտության մեջ տիրապետող մեթոդներում:


Լադակազմության այդ նույն օրինաչափությունները քննարկվող դիատոնիկ ձայնաշարում մի շարք ուղղումներ կատարելու անհրաժեշտություն էլ են առաջ բերում: Դա արտահայտվում է նրանում, որ գործնականում լոկրիական ցած ձայները հաճախ փոխարինվում են իրենց բարձր տարբերակներով, որոնք գործ են ածվում լադային աստիճանների նրբերանգավորման կարգով: Այսպես՝ հեղինակը ցույց է տալիս, որ լոկրիական ցածր ձայնն իր բարձր տարբերակով փոխարինվում է, գլխավորապես, երբ գտնվում է լադային տոնիկայից սեկունդա, տերցիա և կվարտա ցած, նրա դեպի տոնիկան վերասլաց շարժումը սրելու նպատակով, և երբ էռլական տիպի լադերում անհրաժեշտ է տոնիկայից մաքուր կվինտա վերև գտնվող դոմինանտային ձայն ունենալ:



Հաճախ ներքին մեղիանտայի բարձր վարիանտը հանդիպում է հենց այս տիպի էռլական լադերում: Ընդ որում «e» (ներքին մեղիանտա) և «d» (վերին դոմինանտա) բարձր ձայները, լոկրիական ցած «a» ձայնի դոյություն պայմաններում լադային աստիճանների հարաբերակցություններում էական փոփոխություններ են առաջ բերում:



Դիատոնիկ ձայնաշարում լուրիական բարձր ձայների ներփակումով, այդ ձայնաշարի կլարատային տեղամասերը բարդանում են, դառնալով «հինգձայնանի»:



Այսպիսով պարզվում է, որ հայկական երաժշտության բնական լադերի հնչյունային բազան իր մեջ պարունակում է միևնույն անվանակոչությունը, բայց տարբեր որակ ունեցող մեծ քանակությամբ ձայնամիջոցներ:

Անհրաժեշտ է նշել, որ ինչպես վերը բերված, այնպես էլ հայկական մոնոդիկ երաժշտության պայմաններում առաջացող ձայնային բոլոր հարաբերությունները Ք. Ս. Քուչնարյանը սահմանում է հիմնվելով կիմոնջյանի ձայնագրության սիստեմի և այդ սիստեմի նշաններով Ն. Թաշճյանի կողմից կատարված գրառումների վերլուծությունից բխող տվյալների վրա, դիմելով Չայները (ГЛАСЫ) լարային լադավոր գործիքների վրա վերարտադրելու մեթոդին և վերջապես՝ ելնելով վոկալ և գործիքային կատարմամբ հնչող մոնոդիաների անմիջական ընկալումից: Սակայն, շնայած դժվարություններին, նրան հաջողվում է սահմանել հայկական լադերի հիմքում ընկած ձայնային բոլոր հարաբերությունների որակային ցուցանիշերը<sup>1</sup>:


Հիմնվելով դրա վրա, փորձենք սահմանել հայկական երաժշտության դիատոնիկ ձայնաշարի ձայների ֆանակային փոխհարաբերությունները, որոնցով պայմանավորված են եղել, ինչպես նշեցինք, վաղ միջնադարյան մոնոդիաների ինտոնացիոն հիմնական առանձնահատկությունները:

Սկսենք այն հարաբերությունների թվային արտահայտությունների սահմանումից, որոնք պարունակվում են դիատոնիկ ձայնաշարի երեք հիմնական բջիջներում՝ միքսոլիդիական (f—g—a—b), էոլական (g—a—b—c) և լուրիական (a—b—c—d) քառալարերում. f—b մաքուր կվարտան, ինչպես և բոլոր մյուս մաքուր կվարտաները, արտահայտվում է 3 : 4-ի հարաբերությամբ, մի բան, որ հատուկ ապացույցների կարիք չի զգում: Այդ կվարտայի սահմաններում պարունակված ձայների քանակային փոխհարաբերությունները սահմանելու համար, նպատակահարմար է սկսել f—a ձայնամիջոցից, որն իրենից ներկայացնում է եռդ մեծ տերցիա: Այլ կերպ ասած, այդ տերցիան հավասարաչափ տեմպերացված ձայնակարգի մեծ տերցիայից քիչ ավելի նեղ է: Դժվար չէ հասկանալ, թե այդպիսի տերցիան պիտի արտահայտվի 4 : 5-ի հարաբերությամբ, քանի որ հայտնի է, թե այլ՝ ավելի նեղ մեծ տերցիա քան այն որ արտահայտվում է 4 : 5-ի հարաբերությամբ, գոյություն չունի<sup>2</sup>: Այնպես էլ, a—b լայն փոքր սեկունդան արտահայտվում է 15 : 16-ի հարաբերությամբ, որովհետև միայն վերջինս է որ գումարվելով 4 : 5-ի հարաբերությամբ արտահայտվող տերցիայի վրա, տալիս է 3 : 4 մաքուր կվարտան  $4/5 \times 15/16 = 3/4$ : Մյուս կողմից, եթե f—a՝ ձայնամիջոցը արտահայտվում է 4 : 5-ի հարաբերությամբ, ապա այն բաղկացնող երկու տարբեր մեծու-


<sup>1</sup> X. C. Кушнарєв, Вопросы истории и теории армянской монодической музыки. Ленинград, 1956, էջ 322—356:

<sup>2</sup> Ցենտերով նշանակված ինտերվալային մեծությունների ադյուսակը տես Յու. Ն. Տյուլինի «Учение о гармонии» զրբում, Լենինգրադ, 1937, էջ 90:


թյուն ունեցող սեկունդային ձայնամիջոցները պետք է արտահայտվեն 8 : 9-ի և 9 : 10-ի հարաբերություններով, քանի որ միայն այդպիսի սեկունդաների գումարն է, որ հավասարվում է 4 : 5-ի հարաբերությամբ արտահայտվող տերցիային ( $8/9 \times 9/10 = 4/5$ ): Այսպես ուրեմն, ստանում ենք.



էռլական շ— $\acute{a}$ — $b$ — $c$  քառալարում  $g$ — $c$  կվարտան մաքուր է, եթե դրանից հանենք 8 : 9-ի հարաբերությամբ արտահայտվող միքսոլիդիական  $b$ — $c$  լրիվ մեծ սեկունդան, կստանանք  $g$ — $b$  տոնիկական տերցիայի ինտերվալային գործակիցը, որպես 27 : 32-ի հարաբերություն ( $3/4 : 8/9 = 27/32$ ): Հետևաբար՝ էռլական քառալարի ձայների հարաբերությունները արտահայտվում են հետևյալ կերպ:



լոկրիական  $\acute{a}$ — $b$ — $c$ — $\grave{d}$  քառալարում  $\acute{a}$ — $\grave{d}$  կվարտան մաքուր է, եթե դրանից հանենք 9 : 10-ի հարաբերությամբ արտահայտվող էռլական  $c$ — $\grave{d}$  նեղ մեծ սեկունդան, կստանանք  $\acute{a}$ — $c$  տոնիկական տերցիայի ինտերվալային գործակիցը, որպես 5 : 6-ի հարաբերություն ( $3/4 : 9/10 = 5/6$ ): Այստեղից սարգ է, որ լոկրիական քառալարի ձայների հարաբերությունները պիտի լինեն.



Այս կերպ սահմանվում են դիատոնիկ ձայնաշարի երեք հիմնական բջիջների՝ միքսոլիդիական, էռլական և լոկրիական քառալարերի ձայների հարաբերակցությունների թվային արտահայտությունները: Բերված սխեմաներում առկա են դիատոնիկ ձայնաշարի կվարտաների, սեկունդաների և տերցիաների ինտերվալային գործակիցները: Մնում է սահմանել նաև նրա սեպտիմաների, կվինտաների, սեկստաների և օկտավաների թվային արտահայտությունները:

Հայկական մոնոդիկ երաժշտության դիատոնիկ ձայնաշարում բոլոր սեպտիմաները փոքր են: Նրանք գոյանում են երկու մաքուր կվարտաների գումարից, և հետևաբար, արտահայտվում են 9 : 16-ի հարաբերությամբ ( $3/4 \times 3/4 = 9/16$ ):

Չայնաշարի միֆսոլիդիական մաքուր կվինտաները, օրինակ՝  $\text{f}-\text{c}$ , արտահայտվում են  $2:3$ -ի հարաբերությամբ: Էոլիական նեղ կվինտաները, օրինակ՝  $\text{g}-\text{d}$ ,  $27:40$  գործակիցը ունեն, քանի որ  $\text{g}-\text{c}$ , մաքուր կվարտայի ( $3:4$ ) և էոլիական  $\text{c}-\text{d}$  մեծ նեղ սեկունդայի ( $9:10$ ) գումարը տալիս է  $27:40$  ձայնամիջոցը ( $3/4 \times 9/10 = 27/40$ ): Իսկ լոկրիական լայն փոքրացրած կվինտաները, օրինակ՝  $\text{a}-\text{es}$  արտահայտվում են  $45:64$ -ի հարաբերությամբ, քանի որ  $\text{a}-\text{d}$  մաքուր կվարտայի ( $3:4$ ) և  $\text{d}-\text{es}$  լայն փոքր սեկունդայի ( $15:16$ ) գումարը տալիս է  $45:64$  ձայնամիջոցը: ( $3/4 \times 15/16 = 45/64$ ):

Միֆսոլիդիական մեծ նեղ սեկստայի օրինակ՝  $\text{f}-\text{d}$ , ինտերվալային կոնֆիցիենտը  $3:5$  է, որն ստացվում է միքսոլիդիական  $\text{f}-\text{c}$  մաքուր կվինտայի ( $2:3$ ) և էոլիական  $\text{c}-\text{d}$  մեծ նեղ սեկունդայի ( $9:10$ ) հարաբերությունների գումարից ( $2/3 \times 9/10 = 3/5$ ):

Լոկրիական լայն փոքր սեկստաները, օրինակ՝  $\text{a}-\text{f}$ , միքսոլիդիական նեղ մեծ տերցիաների ( $\text{f}-\text{a}$ ) շրջվածքն են ներկայացնում իրենցից, և որպես այդպիսին, արտահայտվում են  $5:8$ -ի հարաբերությամբ:

Միֆսոլիդիական մաքուր օկտավաները, օրինակ՝  $\text{f}-\text{f}$ , սահմանվում են որպես  $1:2$ -ի հարաբերություններ:

Մինչև այժմ բերված թվային բոլոր հարաբերությունները, որոնք արտահայտում են քննարկվող ձայնաշարի պարզ ձայնամիջոցների ճշշող մեծամասնությունը, կարելի է գտնել համամասնությունների տասնակարգյան աղյուսակում:

Այսուհետև մենք կհանդիպենք աղյուսակի սահմաններից դուրս եկող ինտերվալային երեք գործակիցների: Դրանք՝ էոլիական փոքր սեկստաների, էոլիական նեղ օկտավաների և լոկրիական լայն փոքրացրած օկտավաների գործակիցներն են:

Էոլիական փոքր սեկստայի, օրինակ՝  $\text{g}-\text{es}$  գործակիցը կարելի է սահմանել էոլիական  $\text{g}-\text{f}$  փոքր սեպտիմայից ( $9:16$ ) հանելով միքսոլիդիական  $\text{es}-\text{f}$  մեծ լրիվ սեկունդան ( $8:9$ ), որով կստանանք  $81:128$ -ի հարաբերությունը ( $9/16:8/9=81/128$ ): Սա, ի դեպ,  $64:81$ -ի հարաբերությամբ արտահայտվող պիրագորյան մեծ տերցիայի շրջվածքն է ներկայացնում իրենից, իսկ վերջինս կիրառվում է հայկական երաժշտության մեջ (այն առկա է նաև տասնակարգյան աղյուսակում, այդ մասին՝ ստորև):

Էոլիական նեղ օկտավը, օրինակ՝  $\text{g}-\text{g}$ , սահմանվում է  $81:160$ -ի հարաբերությամբ, իսկ լոկրիական լայն փոքրացրած օկտավը, օրինակ՝  $\text{a}-\text{as}$   $135:256$ -ի հարաբերությամբ: Առաջինը ստացվում է էոլիական  $\text{g}-\text{f}$  փոքր սեպտիման և էոլիական  $\text{f}-\text{g}$  նեղ մեծ սեկունդան գումարելով, ( $9/16 \times 9/10 = 81/160$ ), իսկ երկրորդը՝ լոկրիական  $\text{a}-\text{g}$  փոքր սեպտիմայի և լոկրիական  $\text{g}-\text{as}$  լայն փոքր սեկունդայի կոնֆիցիենտները գումարելով ( $9/16 \times 15/16 = 135/256$ ):

Քիչ առաջ անցնելով նշենք, որ մեր ձայնաշարի լոկրիական ձայների բարձր տարբերակները իրենց համապատասխան ցած ձայներից «դիդիմյան կոմմայի» չափով ( $80:81$ ) վերև են դասավորված:

Սրանից հետևում է, թե էոլիական  $\text{g}-\text{g}$  նեղ օկտավի գործակիցը ( $81:160$ ) կարելի է ստանալ այլ միջոցով էլ՝ այսինքն  $\text{g}-\text{g}$  մաքուր օկտավից հանելով «դիդիմյան կոմմա»-ն ( $1/2:80/81=81/160$ ):

Այսպես ուրեմն, մենք փորձեցինք սահմանել հայկական մոնոդիկ երաժրչությունից դիատոնիկ ձայնաշարի բոլոր պարզ ձայնամիջոցների գործակիցները: Այստեղ, առավել պարզության համար, մենք երկրորդ անգամ ենք բերում Ք. Ս. Քուչնարյանի կողմից կազմված պարզ ձայնամիջոցների աղյուսակը, նրա սյունակներում ղետեղելով այդ ձայնամիջոցների թվային արտահայտությունները, փոխանակ նրանց որակական առաջնային և երկրորդային զանազանությունների ցուցանիշների (խաշանիշով նշանակված են տասնակարգյան աղյուսակի հարաբերությունների սահմաններից դուրս ընկած երեք գործակիցները):

Ձայնամիջոցները	Միքսոլիդիական ձայներից	Էոլիական ձայներից	Լոկրիական ձայներից
Սեկունդաներ	8:9	9:10	15:16
Տերցիաներ	4:5	27:32	5:6
Կվարտաներ	3:4		
Կվինտաներ	2:3	27:40	45:64
Սեկստաներ	3:5	81:128*	5:8
Սեպտիմաներ	9:16		
Օկտավաներ	1:2	81:160*	135:256*

Այժմ կարող ենք արտահայտել միքսոլիդիական, էոլիական և լոկրիական յոթնալարերի ձայները, ըստ միալարի մասերի:

Ա. Միքսոլիդիական յոթնալար.

$$\begin{array}{ccccccc} f & - & g & - & a & - & b & - & c & - & 'd & - & es \\ 1 & & 8/9 & & 4/5 & & 3/4 & & 2/3 & & 3/5 & & 9/16 \end{array}$$

Բ. Էոլիական յոթնալար

$$\begin{array}{ccccccc} g & - & a & - & b & - & c & - & 'd & - & es & - & f \\ 1 & & 9/10 & & 27/32 & & 3/4 & & 27/40 & & 81/128 & & 9/16 \end{array}$$

Գ. Լոկրիական յոթնալար


$$\begin{array}{ccccccc} a & - & b & - & c & - & 'd & - & es & - & f & - & 'g \\ 1 & & 15/16 & & 5/6 & & 3/4 & & 45/64 & & 5/8 & & 9/16 \end{array}$$

Անցնելով այն ձայնամիջոցների քննարկմանը, որոնք գոյանում են լոկրիական բարձր ձայների կիրառումով, հարկ է նշել, թե նրանցից ամեն մեկի թվային արտահայտությունը առանձին սահմանելու կարիք չկա: Միայն պիտի ընդգծել, որ նրանց և լոկրիական ցած ձայների մասնակցությամբ գոյացած համապատասխան ձայնամիջոցների տարբերությունը արտահայտվում է տաս-

նակարգյան աղյուսակում պարունակվող «դիդիմյան կոմմայով», որպես 80 : 81-ի հարաբերություն: Դա ապացուցվում է հետևյալ կերպ: Վերը նշվեց, թե էռլական տիպի հինգաստիճան լադերում տոնիկայից նեղ կվինտա վերև գտնվող լոկրիական ցած ձայնը իր բարձր տարբերակով է փոխարինվում, մաքուր կվինտայի ձայնամիջոցով պայմանավորված վերին դոմինանտա ունենալու նպատակով (g — á — b — c — d, փոխանակ g—á — b — c — 'd-ի): Եթե հաշվի առնենք, որ էռլական նեղ կվինտան միայն «դիդիմյան կոմմայի» գործակցի վրա գումարվելով է որ տալիս է մաքուր կվինտայի հարաբերությունը ( $27/40 \times 80/81 = 2/3$ ), ապա պարզ կլինի, թե փոքրագույն ձայնամիջոցը, որը այս դեպքում պայմանավորում է ձ և 'ձ ձայների տարբերությունը ուրիշ բան չէ, եթե ոչ «դիդիմյան կոմմա»:

Այս նույն «դիդիմյան կոմմային» է հանգում նաև տոնիկայից ներքև գտնվող լոկրիական բարձր ձայնի իր ցած տարբերակից ունեցած տարբերությունը. օրինակ f — g — a — B — c — 'd փոխանակ f—g—á—B—c—'d-ի, որտեղ «a» ձայնը «B»-ի նկատմամբ ներքին ձգտող ձայնի դերն է կատարում, և որպես այդպիսին առավելագույն շափով մոտենում է տոնիկային: Եվ ահա այս դեպքում ներքին «f» ձայնի (դոմինանտայի) վրա գոյանում է 64 : 81-ի հարաբերությամբ արտահայտվող պիթագորյան մեծ տերցիա (f—a), որը 4 : 5-ի հարաբերությամբ սահմանվող միֆսոլիդիական նեղ մեծ տերցիայից «Դիդիմյան կոմմայի» շափով ավելի մեծ է: Այս փոփոխության հետևանքով հանդես է գալիս տասնակարգյան աղյուսակի սահմաններից դուրս ելնող մի ձայնամիջոց էլ: Դա՝ 243 : 256-ի հարաբերությամբ արտահայտվող պիթագորյան դիատոնիկ կիսաձայնն է, որը գոյանում է լոկրիական բարձրացրած «a» ձայնի և «B» տոնիկայի միջև: Այդ մասին կարելի է դատել և նրանից, որ եթե —B մաքուր կվարտայից հանենք պիթագորյան f—a մեծ տերցիան, ապա կստանանք հենց նոր հիշատակված հարաբերությունը ( $3/4 : 64/81 = 243/256$ ):

Լոկրիական ցած ձայների բարձրացման հետևանքով առաջացած փոքրագույն ձայնամիջոցի մեծության շափի պարզաբանումը հնարավորություն է տալիս սահմանել հայկական դիատոնիկ ձայնաշարի «հինգանդամանի» քառալարերի, օրինակ՝ f — g — á — a — b ձայների հարաբերակցությունների թվային արտահայտությունները: Այսպես, հիշյալ քառալարի ձայների քանակային փոխհարաբերությունները կհանգեն հետևյալին:



Սխեմայում խաշանիշով ցույց է տրված տասնակարգյան աղյուսակի սահմաններից դուրս եկող ինտերվալային շորրորդ գործակիցը: Սակայն, այդ վերջինները չեն, որ վճռում են հարցը: Բերված թվային սահմանումների ամբողջությունը ակնառու կերպով ցույց է տալիս, որ համամասնությունների տասնակարգյան



աղյուսակում պարունակված հարաբերություններ կիրառելի են հայկական մոնոդիկ երաժշտության դիատոնիկ ձայնաշարի պարզ ձայնամիջոցների ենթոդ մեծամասնության համար: Ավելին. հարկ է ընդգծել, որ այդ ձայնաշարի հնչյունների միջև գոյացող, միևնույն անվանակոչություն, բայց տարբեր որակի ձայնամիջոցները արտահայտվում են հենց տասնակարգյան աղյուսակում պարունակված ակուստիկական հարաբերությունների միջոցով: Այստեղից պիտի այն հետևությունն անել, որ հայկական մոնոդիկ երաժշտության դիատոնիկ լադերը բնական լարվածք ունեցող լադեր են, որպիսի հանգամանքն էլ արտացոլվում է դիատոնիկ ձայնաշարում:

Այսպիսով ապացուցվում է, թե տասնակարգյան աղյուսակում պարունակված հարաբերությունները կիրառելի են նաև վաղ միջնադարի հայկական մոնոդիկ երաժշտության մեջ, քանի որ վերոհիշյալ դիատոնիկ լադերը, ինչպես արդեն նշել ենք, Հայաստանում լայն տարածում էին ստացել հենց V—VIII դարերում: Եվ դա հասկանալի է. հակառակ դեպքում, վաղ միջնադարի հայ գիտնականները տասնակարգյան աղյուսակը փոխ առնելու մասին չէին էլ մտածի:

Մենք պատասխանեցինք վերը դրված բոլոր հարցերին, ընդամին հիմնվելով, գլխավորապես, Մատենադարանի ձեռագրերից և հայկական վաղ միջնադարի թարգմանական գրականությունից բաղված նյութերի վրա: Այստեղ համեմատության, առավել համոզիչ պատճառաբանության և այլ նպատակներով բերվեցին նաև ժամանակակից եվրոպական երաժշտական գրականության մեջ թեև հիշատակվող, բայց լրիվ կերպով չլուսաբանված մի շարք փաստեր ևս, որոնք վերաբերում են, մասնավորապես, դիատոնիկ, խրոմատիկ և էնհարմոնիկ տեսության հիմնի ստորաբաժանումներին:

Ի՞նչ նոր բան է տալիս հիշյալ նյութերի ամբողջության ուսումնասիրությունը: Այն հարստացնում է առհասարակ անտիկ շրջանի մոնոդիկ երաժշտության երաժիշտ-գիտնականների տեսական հետախուզումների արդյունքի մասին մեր ունեցած պատկերացումը և, մասնավորապես, երաժշտական գիտության զարգացման մեջ ալեքսանդրյան դպրոցի խաղացած դերի մասին մեր գիտելիքների պաշարը: Դրանով իսկ լույս է սփռվում նաև վաղ միջնադարի հայկական երաժշտության տեսության այն բաժնի վրա, որը նվիրված է եղել մոնոդիկ երաժշտության ակուստիկական բազայի հարցերին:

Հիշատակված նյութերի ուսումնասիրությունը հիմք է տալիս բնական ձայնաշարի կառուցվածքի օրինաչափությունների տեսական իմաստավորման փաստը վերագրել երաժշտագիտության զարգացման որոշակի մի շրջանի (I դար), և խոսել «հարմոնիայի» մասին հնագույն գիտության մեջ ձայների հարաբերակցությունների տասնակարգյան սիստեմի ձևով կիրառված բնական ձայնակարգի (натуральный строй) գոյության մասին, որն առաջ է եկել Ցառլինոյի և Ֆոլյանիի կողմից ստեղծված «Մարուր ձայնակարգի» սիստեմից մոտ 1500 տարի առաջ:

Այս կապակցությամբ պիտի նշել, որ Ալեքսանդրիայում կիրառված յուրահատուկ բնական ձայնակարգի գոյության հարցը չի լուսաբանվում և նույնիսկ չի էլ դրվում մեր ժամանակակից երաժշտագիտական գրականության մեջ, եթե չհաշվենք Հելմհոլցի կողմից հարևանցիորեն արված և որոշ անճշտությամբ տառապող մի հիշատակությունը: Այսպես, Հելմհոլցը ակնարկ ունի ալեքսանդրյան հույներին պատկանող ինչ որ «... բնական սիս-

տեմի անկատար մնացորդների...» մասին<sup>1</sup>: Նա ընթերցողին շի բացատրում թե ի՞նչ են ներկայացնում իրենցից այդ «մնացորդները», և թե ինչո՞ւ են ներբանը «անկատար»:

Մի ուրիշ հայտնի տեսաբան՝ Հ. Ռիմանը, քննելով վերը բերված դիդիմյան երեք տետրախորդների ձայների քանակային փոխհարաբերությունները, գալիս է այն եզրակացության, թե նրանցում պիթագորյան սիստեմի համեմատությամբ հանդես են գալիս փորձնական ճանապարհով գտնված միայն երկու ձայնամիջոցներ. այն է՝ 4 : 5-ի հարաբերությամբ արտահայտվող մեծ տերցիան, և 5 : 6-ի հարաբերությամբ սահմանված փոքր տերցիան<sup>2</sup>: Եվ այնուհետև, ելնելով այս սխալ նախադրյալից, Ռիմանը հետևցնում է, թե Դիդիմը միալարը բաժանում էր ոչ ավելի քան վեց մասերի<sup>3</sup>: Ռիմանը շի էլ բարձրացնում այն հարցը, թե Դիդիմը ի՞նչ կերպ կարող էր գտնել 15-րդ, 16-րդ, 24-րդ, 25-րդ, 30-րդ, 31-րդ և 32-րդ մասնակի ձայները:

Այսպիսով շատ աղքատ մի պատկերացում էր կազմվում և ալեքսանդրյան գիտնականների տեսական հետախուզումների արդյունքների, և բնական նոր ձայնամիջոցներ փորձնականորեն գտնելու և սահմանելու դործում միալարի արվեստական բաժանման պրակտիկայի զարգացման այն մակարդակի մասին, որը ձեռք էր բերված մեր թվականության սկզբում:

Այս պատճառով տեսաբանների ուշադրությունից վրիպում էր ոչ միայն I դարում բնական ձայնակարգի գոյության փաստը, այլև առհասարակ արևելյան և արևմտյան, և մասնավորապես անտիկ և մերձավոր արևելյան երաժշտական սիստեմների փոխհարաբերությունների ոչ պակաս կարևոր հարցը: Վերջինս երաժշտագետների կողմից կամ առհասարակ չի բարձրացվել, և կամ միայն մի քանի շափից դուրս զգույշ և շրջահայաց դատողությունների առիթ է տվել: Այսպես, խոսելով գիտնականների կողմից մեծ տերցիայի ձայնամիջոցը 4 : 5-ի հարաբերությամբ սահմանելու փաստի վճռական նշանակության մասին (ի տարբերություն պիթագորյան՝ 64 : 81 սահմանումից), Հ. Ռիմանը գրում է: «Դիդիմից հետո, բայց դեռևս Ցառլինոյից շատ առաջ, 4 : 5-ի հարաբերությամբ արտահայտվող մեծ տերցիայի կոնսոնանսային նշանակության մասին պարզ պատկերացում մենք գտնում ենք արաբա-պարսկական երաժիշտ-տեսաբանների մոտ... (9-րդ դար)...»<sup>4</sup>: Հաստատելով այս փաստը, Ռիմանը սակայն, չի շոշափում ձայների «արաբա-պարսկական» և ալեքսանդրյան սիստեմների փոխհարաբերության հարցը: Այդ մասին որոշ շափով արտահայտվում է Հելմհոլցը: Նա նախ և առաջ ելնում է այն բանից, թե արաբա-պարսկական կոշվող երաժշտական սիստեմի առանձնահատկությունները «...ինչպես թվում է, իրենց զարգացումն ստացել էին դեռևս արաբական տիրապետությունից առաջ՝ Սասանյան Պարսկաստանում»<sup>5</sup>: Այնուհետև հեղինակը հաստատում է, որ այդ արաբա-պարսկական երաժշտական սիստեմը, «...պիթագորյան սիստեմի համեմատությամբ մի էական առավելություն ունի»<sup>6</sup>: Հեղինակի հետագա դատողություններից պարզվում է, թե քննարկվող

<sup>1</sup> Г. Гельмгольц. Учение о слуховых ощущениях, էջ 404:

<sup>2</sup> Г. Римаи. Акустика с точки зрения музыкальной науки, էջ 11—12:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 13:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 13:

<sup>5</sup> Г. Гельмгольц, Учение с слуховых ощущениях, էջ 399—400:

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 400:

սիստեմի հիշյալ առավելությունը կայանում է նրանում, որ «... մենք այստեղ (այսինքն արարա-պարսկական երաժշտական սիստեմում — Ն. Ք.) հանդիպում ենք միանգամայն ճիշտ բնական լարվածք ունեցող գամմաների վճռական գերակշռության...»<sup>1</sup>: Հելմհոլցը սույն հետևության հանգում է պարսկական լադերի վերլուծման հիման վրա<sup>2</sup>: Զարգացնելով իր մտքերը, հեղինակը շարունակում է «... այդ արարա-պարսկական սիստեմը, երաժշտության զարգացման տեսակետից արժանի է հատուկ ուշադրության»<sup>3</sup>:

Եվ վերջապես, ուղղակիորեն շոշափելով առհասարակ արևելյան և արևմտյան երաժշտության, և մասնավորապես պարսկական և ալեքսանդրյան երաժշտական սիստեմների հարաբերությունների հարցը, Հելմհոլցը հետևյալ նշանակալից ենթադրությունն է անում: Նա գրում է. «Ես ավելի շուտ կարծում եմ թե հարցը պիտի դնել հետևյալ կերպ. ալեքսանդրյան հույների մոտ գտնվող բնական սիստեմի անկատար մնացորդները չե՞ն հիմնվում արդյոք պարսկական ավանդությունների վրա...»<sup>4</sup>:

Մենք այստեղ նորից չենք կրկնելու առարկությունները այն մասին, թե ինչո՞ւ Հելմհոլցը «անկատար մնացորդներ» է անվանում մի ամբողջ սիստեմ և այլն: Բանը նրանումն է, որ եթե չկառչենք արված դատողության տառին, ապա պետք է ընդունենք, որ Հելմհոլցի այս ենթադրությունը շատ մոտիկ է ճշմարտության իր այն մասում, որը վերաբերում է հին Մերձավոր Արևելքի և անտիկ երաժշտության տեսականի ու գործնականի փոխադարձ կապերի հարցին:

Գտնվելով Արևելքի և Արևմուտքի իրար հատող առևտրական մեծ ճանապարհների կենտրոնում, Ալեքսանդրիան մի ամբողջ շարք ժողովուրդների, այդ թվում՝ հույների, եգիպտացիների, հրեաների, ասորիների և Մերձավոր Արևելքի այլ ժողովուրդների նյութական հարստությունների և հոգևոր կյանքի եռուն միջնակետ էր ներկայացնում իրենից: Ալեքսանդրիայում գիտական և մշակույթային աշխույժ գործունեությամբ աչքի էին ընկնում ոչ միայն հույները, այլև Մերձավոր Արևելքի ժողովուրդների շատ ներկայացուցիչներ, որոնք իրենց «հելլեններ» էին անվանում լոկ այն պատճառով, որ հունարեն էին խոսում: Ալեքսանդրյան կուլտուրան, որը տարածված էր ոչ միայն Հունաստանում, այլև Եգիպտոսում, և ամբողջ Մերձավոր Արևելքում, իրենից ներկայացնում էր, ինչպես հայտնի է, արևմտյան (հունական) և արևելյան (մերձավոր արևելյան) տարրերի մի յուրատեսակ միացում և օրգանական համադրություն:

Իսկ ինչ վերաբերում է երաժշտական արվեստին և գիտությանը, ապա Ալեքսանդրիայում զարգանում էին, բացի հունականից, իհարկե, ոչ միայն պարսկական, այլ ամբողջ Մերձավոր Արևելքի ժողովուրդների երաժշտական տրադիցիաները: Շատ հավանական է մասնավորապես այն, որ զարգացնելով երաժշտության ակուստիկական բազայի մասին գիտությունը, ալեքսանդրյան հույները հիմնվում էին այդ բնագավառում Մերձավոր Արևելքի ժողովուրդների ձեռք բերած նվաճումների վրա էլ: Հետաքրքիր է այդ կապակցությամբ նշել,

<sup>1</sup> Г. Гельмгольц, Учение о слуховых ощущениях, էջ 403:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 400—403:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 403:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 404:

որ երաժշտության, հնում այսպես կոչված «հիմնական ձայնամիջոցների»՝ օկտավայի, կվինտայի և կվարտայի ձայների հարաբերությունների թվային արտահայտությունները սահմանված են եղել դեռևս հին բաբելական երաժշտության տեսության մեջ<sup>1</sup>:

Իսկ եթե նկատի ունենանք Մերձավոր Արևելքի ժողովուրդների երաժշտական պրակտիկան, ապա կարող ենք վստահորեն պնդել, որ ինտոնացիոն երեփույթների այն ամբողջությունը, որն ալեքսանդրյան գիտնականները ձգտել են տեսականորեն իմաստավորել ձայների տասնակարգյան բնական սիստեմի միջոցով, ընդգրկում էր նաև արևելյան երաժշտության ինտոնացիոն առանձնահատկությունները: Իրենց հերթին, արևելքի մտածողները՝ պարսիկ, արաբ և այլն, հոժարությամբ դիմում էին անտիկ փիլիսոփաների աշխատություններին, նրանցից քաղելով այն ամենը, ինչ շէր հակասում այս կամ այն ժողովրդի ինքնատիպ երաժշտական մշակույթի առանձնահատկություններին. այն է՝ միաձայն երաժշտության պայմաններում համընդհանուր նշանակություն ունեցող տեսական դրույթները:

Ահա թե ինչու հայերն էլ, արևելյան մյուս ժողովուրդների շարքին, և դեռևս՝ նախ քան նրանցից շատ-շատերը, հարկ են համարել դիմելու այդ նույն անտիկ աղբյուրներին և, մասնավորապես, ալեքսանդրյան գիտնականների աշխատություններին, դրանցից քաղելով երաժշտական գիտության «վերջին խոսքը»:

Այս հանգամանքը անկասկած վկայում է այն մասին, որ վաղ միջնադարյան Հայաստանում երաժշտության տեսության հարցերը գիտական բարձր հետաքրքրության առարկա են եղել: Ինքնըստինքյան հասկանալի է, որ այսպիսի հետաքրքրությունը կարող էր ծագել միայն բարձր զարգացած երաժշտական պրոֆեսիոնալ արվեստի հիման վրա: Իսկ եթե հաշվի առնենք, որ պրոֆեսիոնալ երաժշտությունը իր հերթին զարգանում է ժողովրդական-պրոֆեսիոնալ (գուսանական) և բուն ժողովրդական (գեղջուկ) երաժշտության հիման վրա, ապա բնականորեն կհանգենք այն եզրակացության, որ երաժշտության տեսության հարցերի հանդեպ ցուցաբերված հիշյալ հետաքրքրությունը կողմնակիորեն վկայում է նաև առհասարակ վաղ միջնադարի հայկական երաժշտական արվեստի զարգացման բարձր մակարդակի մասին:

Н. ТАКМИЗЯН

## СТРАНИЦА ИЗ ДРЕВНЕАРМЯНСКОЙ МУЗЫКАЛЬНОЙ ТЕОРИИ

(Тоны. Интервалы. „Гармонические пропорции“)

### Р е з ю м е

От V—VIII веков до нас не дошел ни один труд специально посвященный вопросам армянской музыкальной теории. Сохранились лишь некоторые малочисленные и фрагментарные данные, разбросанные по различным рукописям. Тем не менее, изучение этих данных показывает, что в V—VIII веках в Армении существовала музыкаль-

<sup>1</sup> Р. И. Грубер, История музыкальной культуры, том I, М.—Л., 1941, էջ 195.

ная теория, которая имела *два* больших раздела: а) ладо-интонационная сторона музыки и ее акустическое основание и б) метро-ритм.

Тема настоящей статьи относится к первому из названных разделов теории. Здесь рассматривается вопрос о содержании сохранившейся в одном из списков Матенадарана *таблицы* числовых определений тонов и интервалов некоей древней музыкальной системы.

Система эта представляла собой особый *натуральный строй* занимающий среднее положение между пифагоровым и чистым строями. Отличительной характерной чертой данного строя являлось отсутствие в нем т. н. „производных“ интервалов. Рассматриваемая система была создана к 1 веку александрийскими учеными, которые, развивая дальше практику непосредственного деления струны для получения новых натуральных интервалов, вскрыли основные закономерности натурального звукоряда и обобщили особенности интонирования античной и переднеазиатской монодической музыки.

Таблица, являющаяся конспективным изложением упомянутой, еще неизвестной современному музыковедению системы, фигурировала и в трудах знаменитого армянского математика, философа и ученого VII века Анании Ширакаци.

Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

«ԽՐԱՏՔ ԵՒ ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆ ԽԻԿԱՐԱՅ» ԶՐՈՒՅՑԻ  
ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ

Հայ միջնադարյան ձեռագրերում հաճախ ենք հանդիպում «Խրատք և իմաստութիւնք Խիկարայ» գրույցի ընդօրինակութիւններին: Նրա արժեքը դուրս է գալիս սոսկ հայագիտութեան սահմաններից:

Խիկարի գրույցը արևելյան ծագում ունի, գալիս է վաղեմի ժամանակներից և թափանցել է շատ ժողովուրդների գրականութեան և անգիր բանահյուսութեան մեջ: Նրա ազդեցութեան հետքերը կարելի է տեսնել Եզովպոսից մինչև Շեքսպիր, Բիբլիայից մինչև Հազար ու մեկ գիշերներ:

Խիկարի առակալոր ասույթները օգտագործել են իրենց խոսքի մեջ հայ մատենագիրները, տեղ են դրել հայկական առակներում. նա ի պետս մանկանց, հարց և վարդապետաց անցել է գրչութիւնից գրչութիւն, նրա անուր դեռևս Շնորհալու ժամանակ ընդհանրացված է եղել իբրև հասարակ անուն, իմաստուն առումով: Խիկարը սեմական արևելքի և հին հայոց Եզովպոսն է:

Ահա գրույցի համառոտ բովանդակութիւնը: Խիկարը՝ Ասորեստանի և Նինովեի տիրակալ Սենեքերիմ արքայի դպիրը, իր իմաստութեամբ և հանճարով մեծ փառքի և հարստութեան է հասել, բայց ժառանգ չունի:

Նա դիմում է աստվածներին. «Ով տէրք իմ և շաստուածք, Բելշիմ և Շիմիլ և Շամին, հրամայեցէք և տուք ինձ արու դաւակ. քանզի Խիկար ահա կենդանի մեռանի, և զինչ ասեն մարդիկ՝ եթէ Խիկար կենդանի և իմաստուն և ճարտար մեռաւ և ոչ կայ իւր որդի որ թաղէ զնայ»:

Աստվածները նրան պատասխանում են, թե շի հրամայված քեզ զավակ ունենալու, բայց, եթե կամենում ես, վերցրու քո քրոջ որդուն՝ Նաթանին և նա «հատուցէ քեզ զսնունդս քո»:

Այդպես էլ անում է, որդեգրում է միամյա Նաթանին և պահում յոթը տարի: Սովորեցնում է նրան իմաստութիւն ու դպրութիւն և ներկայացնում թագաւորին: Թագաւորը գոհ է. հրամայում է, որ Նաթանը նրան փոխարինի, իսկ ինքը հանգստի գնա: Խիկարը նրան տուն է տանում և տալիս իր նշանավոր խրատները.

«Որդեա՛կ, եթէ լսես բան ինչ ի գրանէ արքունի, մեռո և թագո զնա ի սրտի քում և մի ումեք ի վերայ հանիցես».

Չկապն կնքեալ մի՛ արձակել, և դարձակեալն մի՛ կապեցես: Եւ զոր տեսանես մի՛ ասել և զոր լսես մի յայտնել...» և այլն:

Բայց Նաթանը անազնիվ է վճարում նրա երախտիքը: Որոշելով, թե իր մորեղբայրը «ծերացեալ է յոյժ և հասեալ է ի դուռն գերեզմանին, և զառածեալ են միտքն իւր, և պակասեալ են խորհուրդք իւր, և ոչ ինչ գիտէ» սկսում

լ վատնել նրա ունեցվածքը և անպատկառ վարվել տան ծառաների ու սպասավորների հետ:

Խիկարն այդ մասին բողոքում է Սենեքերիմ արքային, որից գրգռված Նաթանը գրում է Խիկարի անունից մի դավաճանական նամակ և գցում թագավորի ձեռքը, որը վրդովված հրամայում է իր զորավար Արուսմաքին գլխատել նրան և հեռացնել «զգլուխ դորա իբրև կանգունս Ճ»:

Խիկարը կարողանում է համոզել Արուսմաքին և իր փոխարեն զխատում են նրա ծառային, Աբիկամ անունով, իսկ ինքը թագնվում է գետնափորի մեջ:

Անցնում է որոշ ժամանակ: Եգիպտոսի փարավոնն իմանալով, որ այլևս Խիկարը չկա, պահանջ է հղում Սենեքերիմ արքային. «Գիտութիւն լիցի քեզ, զի կամիմ շինել ապարանս ընդ երկինքն և ընդ երկիրս ի մէջ ի կախ. տես և առաքեա առ իս ճարտար այր որ շինէ և այլ զոր ինչ հարցանեմ տայ պատասխանի, ապա թէ անփոյթ առնես, ես գամ և բառնամ զթագաւորութիւնդ և զերկիրդ քո աւերեցից»:

Թագավորի նախարարները խորհուրդ են տալիս դիմելու Նաթանին, որը կարդալով «ի ձայն բարձր աղաղակեաց և ասէ. զայդ բանդ և դիքն ոչ կարեն վճարել կամ տալ պատասխանի, ես զիա՞րդ կարացից տալ պատասխանի»:

Թագավորը ցավով ու ամսոսանքով հիշում է Խիկարին, որը, անշուշտ, կկարողանար ելք գտնել այդ ծանր դրությունից: «Աւա՛ղ քեզ, Խիկար դպիր և իմաստուն. ի խաւսս մարդկան կորուսի զքեզ, քանզի դու վճարէիր զգործս արթունեաց մերոց, և եթէ տայր տք զքեզ ինձ՝ ես տայի նմա զինչ և խնդրէր յինէն, անշափ գանձ ոսկւոյ և արծաթոյ»:

Գրանից խրախուսված Արուսմաքը հայտնում է, թե Խիկարը կենդանի է:

Այնուհետև պատմվում է, թե ինչպես Խիկարը գնում է Եգիպտոս, ինչպես հնարամտությամբ վճռում է երկնքի ու երկրի միջև տաճար կառուցելու խնդիրը, ինչպես լուծում է փարավոնի հանելուկները և մեծ փառքով ու պարգևներով վերադառնում Ասորեստան:

Նա հրաժարվում է թագավորից որևէ բան վերցնել և խնդրում՝ իր ձեռքը տալ Նաթանին. «Զոր ինչ ինձ պարգևել կամիս՝ Արուսմաքայ ընկերին իմ պարգևեա, որ տուաւ կեանս ծառայից քոց: Այլ ինձ տացես զՆաթան քեռորդին իմ զոր ուսուցի, զի ոչ ուսաւ զառաջին ուսումն բարւոք»:

Տանում է իր հետ Նաթանին, շղթայում և «գան հարկանելով ի թիկունս և ի փոր նորա» տալիս «երկրորդ ուսումը»:

«Որդեա՛կ, որ ընդ ականջն ոչ լսէ՝ ընդ թիկունսն լսեցուցանեն» և այլն:

Այդպես, շարունակվում են նրա առակավոր խրատները, մինչև որ «ուռեցաւ Նաթան և պատառեցաւ»:

Խիկարի այս զրույցը, որը պատմեցինք ըստ Կոնիբիրի հրատարակած բնագրի, բանասիրությանը հայտնի է դեռ վաղուց, արաբական «Հազար ու մեկ գիշերներ»-ից, որտեղ նա մտել է իբրև հավելված և ոչ թե բուն Շեհերազադեի պատմվածք: Բայց այն առավել ուշադրության արժանացավ, երբ առաջին անգամ նշանավոր ասորագետ Ասեմանին նկատեց, որ Խիկարի մասին գրեթե նույն բաներն են պատմվում, ինչ Եգովպոսի: Մյուս կողմից Հոֆմանը ցույց տվեց ինչ-որ կապ Խիկարի զրույցի և Տովբիտի գրքի մեջ:

Այնուհետև Խիկարի շուրջը բանասիրության մեջ առաջացավ մեծ հետաքրքրություն: Գիտնականներին այն զբաղեցրել է շատ կողմերով. Ի՞նչ ծագում և բնույթ ունի Խիկարի զրույցը, ինչպիսի՞ն կարող է լինել նրա նախ-

նականը, որտեղի՞ն է գալիս Խիկարի և Եզովպոսի նմանութիւնը, ո՞րն է ավելի հնագույն, ինչպե՞ս բացատրել Խիկարի և Տովքիտի առնչութեան հարցը, արդո՞ք Խիկարի զրուցը շի՞ հղել Հին կտակարանի աղբյուրներից մեկը իբրև անվավեր գիրք, որի՞ն պետք է առաջնութիւն տալ և այլն:

Պարզ է, որ այդ պայմաններում պետք է մեծ ուշադրութիւն բեռովեր Խիկարի պահպանված բնագրերի վրա: Վաղուց հայտնի էր արաբական տարբերակը, այնուհետև գտնվեց ասորական մի օրինակ և մի պատառիկ, որոնք բավական տարազատվում են իրարից, մի ուրիշ տարբերակ գտնվեց սլավոնական լեզվով: Կա Խիկարի եթովպերեն օրինակը, ղփշաղերեն, վրացերեն և վերջապես՝ հայերենը:

Բնագրերից արաբերենը և եթովպերենը քիչ են արժանի ուշադրութեան, որովհետև առաջինը թարգմանվել է ասորերենից և «Հազար ու մեկ գիշերներ»-ում վերապատմվում է բավական ազատ ոճով, իսկ եթովպերենը՝ արաբերենից:

Սլավոնական տարբերակը ամենայն հավանականութեամբ թարգմանված է հունարենից, որի բնագիր — օրինակը կորել է, այդպիսով այն մեծ արժեք է ստանում:

Ղփշաղերեն և վրացերեն օրինակները թարգմանված են հայերենից, ընդ որում, հայկական ուշ շրջանի որևէ ձեռագիր աղբյուրից և բնագրագիտական առումով արժեք չեն ներկայացնում:

Մնում է ասորականը, հայկականը և սլավոնականը:

2. Տաշյանը գտնում է, որ Խիկարի զրուցի նախնականը որոշելիս պետք է նկատի ունենայ այդ երեքն էլ, բայց ավելի առաջնութիւն տալով ասորականին և սլավոնականին, որպես նախնականին ավելի մոտ, բանի որ հայկականը միջնորդված թարգմանութիւն է:

Այս հարցին մենք հետո կանրադառնանք: Այժմ երկու խոսք հայ բնագրի մասին.

Ինչպես որ արաբերենում Խիկարի զրուցը մտել է «Հազար ու մեկ գիշերների» հեքիաթաշարում, այնպես էլ հայերենում՝ «Պղնձե քաղաքի պատմութեան» և նրան հարակից զրուցների ժողովածուի մեջ, բայց դրա հետ ոչ մի առնչութիւն չունի: Առաջին անգամ հրատարակվել է 1708 թվականին, իսկ ապա՝ մինչև 1911 թվականը ունեցել է բազմաթիվ հրատարակութիւններ, միշտ ուղեկցելով «Պղնձե քաղաքի պատմութեանը»<sup>1</sup>:

Այդ հրատարակութիւնների համար հիմք է ծառայել հավանաբար ոչ մեկ բնագիր, որովհետև դրանք մանրամասնութիւնների մեջ շատ հաճախ տարբեր են, բայց ընդհանուր առմամբ, կարելի է բաժանել երկու խմբի, որոնք ունեն որոշակի ազգակցութիւն:

Տպագրերը ներկայացնում են համեմատաբար ուշ շրջանի լեզու, աղավաղված են և լեցուն բարբառային տարրերով, որոնցից պետք է զերծ լիներ բուն թարգմանութիւնը: Այդ տեսակետից նրանք ավելի քիչ են վստահելի: Պահանջ էր զգացվում մի այնպիսի բնագրի, որը մոտ լիներ նախնականին, կթե ոչ նախնականը:

1898 թվականին «Թագմավեպօ»-ում մի փոքրիկ հոգված է տպագրվում,

<sup>1</sup> 1708, 1731, 1792, 1807, 1814, 1820, 1834, 1850, 1857, 1861, 1862, 1908, 1911 թվականներին:



ուր ծանուցվում է մի հին բնագրի մասին վենետիկի ձեռագրերից, որը համար առիթով պետք է որ հրատարակվեր<sup>1</sup>:

1898 թվականին Խիկարի դրույցի տարրեր լեզուններով լավագույն խրմբագրության բնագրերը և դրանց անգլերեն թարգմանությունը, Եզովպոսի համապատասխան հատվածի հետ միասին, հրատարակվեց մի գրքով, երեք անվանի գիտնականների աշխատակցությամբ<sup>2</sup>:

Գրքում գետեղված է նաև հայկական օրինակը, հայագետ Կոնիրիրի կազմած բնագրով:

Կոնիրիրն իր հրատարակության համար օգտագործել է աշխարհի տարրեր մատենադարաններում ցրված ութ ձեռագիր, որոնց թվում հին համարով էջմիածնի № 2048 ձեռագիրը (1600 թ.): Նա ծանոթ է եղել նաև էջմիածնի ուրիշ շորս ձեռագրերի՝ 1604, 1605, 1623, 1642 թվականների գրչությամբ:

Նրա օգտագործած բոլոր ձեռագրերն էլ ուշ շրջանի են (գերազանցապես 17-րդ դար) և մի մասը թերի: Ամենահին գրչությունը նա համարում է 1500-ական թվականներին. «Կարող ենք իբրև 1500 թվականին գրված համարել», — առում է նա:

Այդ հրատարակությունը Տաշյանին առիթ տվեց գրելու Խիկարի մասին մի հետաքրքիր ուսումնասիրություն, որին նա մտադիր էր, բայց չէր ձեռնարկում, լավագույն և նախընտրելի բնագիր չունենալու պատճառով: Նա իր ուսումնասիրության մեջ բանասիրական բազմաթիվ հարցեր է շոշափում և, ի միջի այլոց, կարծում է, որ Խիկարը թարգմանվել է հայերեն 6-ից 7-րդ դարերում: Նույնիսկ նմանության եզրեր է գտնում Եղիշեի, Եզնիկի, Փարպեցու և ապա՝ Վաստիվերոցու, Թովմա Արծրոմնու մոտ գործածված ասույթների և Խիկարի միջև, զգուշորեն ենթադրելով, թե նրանք ծանոթ են եղել հայերեն թարգմանության հետ և այլն: Բայց որովհետև Կոնիրիրի հրատարակածը ևս, չնայած իր առավելությանը, բավական աղավաղ է և նորաբանություններով լեցուն, Տաշյանին շատ հիմքեր չի տալիս հաստատելու իր կարծիքը:

«Այս կետը զմեզ կատիպե ընդհատել մեր ուսումնասիրությունքն ալ՝ մինչև հնագույն և ընտրելագույն բնագրի մը հայտնվիլն: Առանց ասոր շատ մը խնդիրներ, որ լուծման կսպասեն, շեն կրնար նաև ձեռնարկվիլ՝ առանց ապարդյուն աշխատությանց և ոչ հանված եզրակացությունք հաստատուն հիմ կրնան ոմնենալ»<sup>3</sup>:

«Հայ բանասիրաց առաջին գործքն ըլլալու է այսպիսի բնագիր մը գրտնել»<sup>4</sup>, — գրում է Տաշյանը:

Այդ ուղղությամբ կատարված պրպտումները մեզ հասցրել են որոշակի արդյունքի:

Երևանի Մատենադարանում Խիկարի բնագիրը պարունակող 40 ձեռագիր կա, որոնցից երկուսը 14-րդ դարի են՝ ձեռ. № 2961-ը 1321 թ. և № 5599-ը

<sup>1</sup> Բազմավէպ, 1898, էջ 488—492:

<sup>2</sup> The story of Ahikar from the Syriac, Arabic, Armenian, Ethiopic, Greek and Slavonic versions by F. C. Conybeare. J. Rendel Harris and Agnes Smlth Lewis, London, 1898.

<sup>3</sup> Տ ա շ յ ա ն Ն., Մատենադարանի մանր ուսումնասիրութիւնք, Վիեննա, 1901, մասն երկրորդ, էջ 136:

<sup>4</sup> Նույնը, էջ 140:

1347 թ. (երկու հարյուր տարով ավելի հին, քան Կոնիքիի օգտագործած բնագրերից ամենահինը):

Բայց ձևական հնությունը դեռ ոչինչ չի ասում, որովհետև կարող է լինել ժամանակով ավելի նոր ձեռագիր՝ ընդօրինակված հին ու լավագույն գրչությունից, որն ավելի է արժեք ներկայացնում, քան մի հին, անկանոն բնագիր:

Այդ երկու ձեռագիր օրինակներն էլ ոչ միայն սուկ ժամանակագրորեն, այլև էապես ավելի հին են ու նախնական և ներկայացնում են մեծ արժեք ու հետաքրքրություն:

Ձեռագիր № 5599-ը նույնիսկ ավելի ակնառու և կարևոր տարրնթերցումներ է տալիս Կոնիքիի հրատարակած օրինակի հետ, քան թե Կոնիքիի օգտագործած ութ ձեռագրերը միմյանց և տպագրերի հետ: Այսպես, բերենք մի հատված.

Կոնիքիի բնագիրը

ուր ձեռագրերի տարբերացվածները

Յայնժամ մտի առ շաստուածսն բազում ընծայիւք, բորբոքեցի հուր առաջի շաստուածոցն, և արկի ղխունկս ի վերայ նորա և մատուցի ընծայս և զոհեցի զոհս, եդի ծոնք և աղաչեցի և այսպէս ասէի յաղաչելն իմում.

գիտունկս և անուշս

Ով տեարք իմ և շաստուածք. Բէլլիմ և Շիմիլ և Շամիւն, հրամայեցէք և տուք ինձ արու զաւակ, քանզի Խիկար ահա կենդանի մեռանի (էջ 125):

Շիմել և Շահմիւն

Ինչպես տեսնում ենք, այս հատվածում Կոնիքիի համեմատած ձեռագրերը գրեթե ոչ մի կարևոր տարրնթերցված չեն տվել: Բնագրում գործածված Շիմիլ և Շամիւն ձևերի փոխարեն Շիմել և Շահմիւն (այն էլ մի ձեռագիր): Մյուս դեպքերում նախընտրելիի հետ համերաշխ են:

Բերենք նույն կտորը տպագրից.

«Յայնժամ մտի առ կուռքն բազում ընծայիւք, և վառեցի հուր և արկի խունկս անուշայհոտս ի վերայ նորա, մատուցի զընծայս և զոհեցի զոհս վասն ծննդեան. եւ՝ աղաչեցի ասելով. Ո՛վ տեարք իմ և շաստուածք իմ Բէլլիմ և Շահմիւմ, հրամայեցէք և տուք ինձ արու զաւակ, քանզի ահա Խիկարս կենդանի մեռանի»<sup>1</sup>:

Այստեղ ևս տարբերությունը շատ աննշան է, հիմնականում լեզվական բնույթի, բարբառայնացված է, բայց Կոնիքիի բնագրի հետ ունի բոլորովին միևնույն ատաղձը, ոչ մի շեղում:

Բայց ահա № 5599 ձեռագիրը.

«Յայնժամ ես Խիկար շինեցի բագինս մեծ, վառեցի հուր և արկի ի վերայ խունկս անուշահոտս և նուէրս, զոհեցի զոհս և մատուցի ընծայս և այսպէս ասէի յաղաչելն իմում. Ով տեարք իմ և աստուածք. Բէլլիմ և Միրշահմիւն, էշարիչէ և Իշեմիշահ եթէ համարեցէք ինձ արու որդի, զի մի անժտուանգ մնացից»<sup>2</sup>:

<sup>1</sup> Գիրք պատմութեան, որ կոչի Պղնձէ քաղաք և բանք խրատականք և օգտակարք Խիկարայ իմաստնոյ... Պոլիս, 1792, էջ 90—91:

<sup>2</sup> Ձեռագիր № 5599, թ. 222ա:

Տարբերությունը շատ է ակնբախ: Այս օրինակի մեջ ինքը Խիկարը բազին է շինում: Դիմում է աստվածներին («աստուած» և ոչ թե «չաստուած» ձևով), թվում է շորս աստվածների անուններ զույգերով. Բելլիմ և Միրշահմին» էշարիշէ և Իշեմիշահ: Իսկ մյուս բնագրերում կամ երկուս են կամ երեք և միայն Բելլիմն է ընդհանուր: Վերջապես կա արտահայտչական ձևերի ու միջոցների նկատելի տարբերություն: Մեր օրինակը ավելի մաքուր է և գրաբարյան, ավելի սեղմ: Այսպես, Կոնիբիրի «տուք ինձ արու զաւակ, քանզի Խիկար ահա կենդանի մեռանի»-ի դիմաց մեր օրինակը տալիս է «եթէ համարեցէք ինձ արու որդի, զի մի անժառանգ մնացից» կամ «արկի զխունկս ի վերայ նորա»-ի դիմաց «արկի ի վերայ խունկս անուշայհոտս և նուէրս» և այլն:

Այսքան տարազատումը մի փոքր հատվածի մեջ ինքնին շատ բան է ասում:

Շեղումները զգալի են ոչ միայն մուտքի և սպամոդական մասերի, այլև բուն խրատների մեջ: Բերենք մի օրինակ Կոնիբիրից (A), տպագիր խմբերից (B, B<sub>1</sub>) և № 5599 ձեռագրից (C):

## A

Որդեակ, եթէ բարձր են շեմք տան քո, և քնկերն քո հիւանդանայ, մի ասեր թէ զինչ տանիմ նմա, այլ երթ ոտիւք և տես աշար, զի լաւ է նմա, քան զհազար քանքարս ոսկոյ և արծաթոյ (132):

B B<sub>1</sub>

Որդեակ, եթէ քնկերն քո հիւանդ է, մի ասեր ի մտի քում (B<sub>1</sub> ի միտք), թէ տանձ կամ խնձոր գտանեմ (B<sub>1</sub> գտնում) և ատա երթամ ի տես, այլ երթ ոտիւք և տես աշօք, զի զհիւանդն դատարկ տեսանել շատ լաւ է, քան զքաղում միրգս տանել (B<sub>1</sub> քան զքաղում կամակս ուտելոյ):

## C

Որդեակ, թէ քնկերն քո հիւանդանայ մի ասեր թէ զինչ տարայց նմայ, այլ երթ ոտիւք և տես աշօք և քանս քաղցունս ասայ նմայ, զի լօ (լաւ) է, քանի թէ Մ քանքար ոսկոյ տարցես նմայ<sup>1</sup>:

Ինչպես տեսնում ենք, մեր C օրինակը արմատապես տարբերվում է մյուս երկու օրինակներից: Այստեղ հիմնական միտքն այն է, որ հիվանդի համար այցելությունն ու քաղցր խոսքն ավելի են, քան հիստուն քանքար ոսկին, իսկ ըստ մյուս բնագրերի՝ հիվանդին դատարկ տեսնելն ավելի լավ է, քան լիքը ձեռքով: Բացի այդ, խրատն ավելի գրաբարյան է, գերծ ավելորդություններից, որոնք մյուս բնագրերում հավանաբար նորամույժ են:

Բերենք ևս մի երկու զուգահեռ Կոնիբիրի և մեր բնագրի միջև:

1. Որդեակ, ճճլեա և մաշեա զշարն ի սրտէ քումէ և բարի լինի քեզ շաստուծոյ և ի մարդկանէ և ըռզակիս կամարն աստուծոյ (էջ 131):

2. Որդեակ, թէ բարձր են շեմք յերկինսն իբրև կանգուն է, յորժամ մտանիցես խոնարհեցո զգլուխ քո (էջ 131):

Որդեակ, ճնջեայ զշարութիւն ի սրտէ քումէ և զոխս [և] զխոսվութիւն հան ի սրտէ, զի սերմն շար է և շար ծնանի (թ. 239բ):

Որդեակ, եթէ բարձր են շեմք տան քո իբրև կանկունս է, յորժամ մտանես խոնարհեց[ո] զգլուխ քո և ապայ մտանիցես, եթէ չհանդիպեսցի ցածագոյն և դիպեսցի ընդ երես քո (թ. 223բ):

<sup>1</sup> Ձեռագիր № 5599, Թ. 224ա:

3. Որդեակ, ցածոյ զաշ քո և կակղացոյ զբարբառ բերանոյ քո և նայեա ընդ ակամբ քո, զի մի երևեսցիս մարդկան անըզգամ, զի եթէ աղաղակաւ տաճար շինէր՝ էշն ամէն արն է զարբաս շինէր և շարտախ (թ. 133):

Որդեակ, ցածոյ զաշս քո և կակղացոյ զբարբառ քո և նայեա ընդ ակամբ և մի երեւեսցիս մարդկան անըսգամ, զի թէ աղաղակաւ տաճար շինուէր՝ էշն արուն է ապարան շինէր և եթէ ի սաստիկ զօրութենէ և ի խիստ (...) եզինք վարէին ապայ լուծ և արօք ոչ պակասէր ի պարանոց... ուղտուց (էջ 223բ):

Կարելի է երկար շարունակել: Սակայն այս օրինակներից էլ երևում է, թե որքան ավելի ավարտուն, ամբողջական, նորարանությունից զերծ և բիշ է աղավաղ այս քննադիրը Կոնիբիրի օրինակի նկատմամբ:

Մյուս կողմից, տալով այդպիսի լավագույն, նախնականին մոտ ընթերցվածներ, այս բնագիրը ևս զերծ չէ թերի և աղավաղ լինելուց: Գրչությունից երևում է, որ ձեռագրի գաղափարողն այնքան էլ զրագետ չէ: Բացի դրանից, դժբախտաբար ձեռագիրը լավ չի պահպանված և բնագրի թղթի եզրերը մաշված են, որից շատ բան անընթեռնելի է և դժվար է վերականգնվում:

Բայց այդ թերին գալիս են լրացնելու Հայաստանի Պետական Մատենադարանի մյուս 40 ձեռագիր օրինակները, որոնք իրենց բնագրական հանգամանքներով, ալլընթերցումներով, պատումների այլազանությամբ շատ են աչքի բնկնում և ներկայացնում մի հարուստ և բազմերանգ պատկեր:

Անհրաժեշտ և հետաքրքիր կլիներ ցույց տալ նախընտրելի բնագրի, Կոնիբիրի օրինակի, տպագրերի, ինչպես նաև բազմաթիվ մինչ այժմ անհայտ և ուշադրությունից հեռու մնացած ձեռագրերի առնչությունը, որը շատ բան կտար հնագույնը վերականգնելու կամ վերակազմելու գործում. բայց դա հնարավոր է, երբ հրատարակվի «Խրատք և իմաստութիւն Խիկարայ» համեմատական բնագիրը<sup>1</sup>:

Այժմ մենք կաշխատենք շոշափել մի հարց.

Տաշյանը, նկատի ունենալով ասորական, սլավոնական և հայկական խմբագրությունները, գրում է. «Երբ խնդիր քլա, թե որն է արդյոք արդի խմբագրությանց հնագույնն, որ ուղղակի թարգմանած ու խմբագրված քլա նախնական երբայերենին վրայեն՝ հաշվի առնելու ենք միայն ասորականն ու հիշյալ հունականը (սլավոնական թարգմանությամբ ներկայացվող հունականը և ոչ թե Պլանուգեսի կողմից Եզովպոսի վրա վերապատմված հատվածը — Ա. Մ.), վասնզի հայերենը թեև անկախ օրինակ մը կներկայացնե, համենայն դեպս թարգմանություն է հավանորեն կորսված ասորի օրինակի մը: Սակայն այս խնդիրն առայժմ որոշել չենք կրնար, թեև ավելի հակամետ ենք ասորականը հնագույն կարծելու»<sup>2</sup>:

«Ապագային թողուլ կստիպինք նույնիսկ այն էական խնդիրը, թե ինչ բնագրե թարգմանված է նախնական հայերենը»<sup>3</sup>:

Ելնելով մեր նոր օրինակի ընձեռած հնարավորություններից՝ կփորձենք որոշել հենց այդ երկու խնդիրները:

Հայ բնագիրն ասորական թարգմանություն է: Այդ թույլ են տալիս ասել այն բացահայտ առնչություններն ու նմանությունները, որ գոյություն ունեն

<sup>1</sup> Այդ աշխատանքը կատարվում է և շուտով կհասնի իր ավարտին:

<sup>2</sup> Տ ա շ յ ա ն, Մատենադրական մանր ուսումնասիրությունը, Բ, Վիեննա, 1901, էջ 109—110:

<sup>3</sup> Նույնը, էջ 136:

բանասիրութեանը հայտնի ասորական բնագրի և նոր օրինակի մեջ: Բերենք մի բանի զուգահեռներ: Հենց թեկուզ երկու բնագրերի սկիզբը.

**Ասորականը**

Սարխաղոմի որդի Սենեքերիմի՝ արքայի Ասորեստանի և Նինվեի, 20-րդ տարում եւ Ախիկարս արքայական դպրապետ էի:

Եվ երբ ես տղա էի, ինձ ասվեց, որ թագ որդի չի լինելու:

Եվ հարստութեանը, որ ես տիրում էի, անպատմելի էր:

60 կին առա, 60 ապարանք շինեցի, և ես շունեցա որդի:

Այդ ժամանակ ես կառուցեցի մի մեծ բազին ամբողջովին փայտից և վառեցի հուր և դրեցի թարմ միս նրա վրա և այսպես ասեցի (էջ 58—59):

Առնչութիւնը բացահայտ է: Հայկական բնագրի մեջ չկա այն հիշատակութիւնը, որ Սարխաղոմի որդի Սենեքերիմի քսաներորդ տարում է եփկարը եղել Սենեքերիմի քարտուղարը: Բայց դա բնական է, կարող է անտեսվել որպէս հայերենին որևէ բան շտվող մանրամասնութիւն, թերևս տեղայնացման միտումով, սոսկ Սենեքերիմ՝ հիշեցնելով Սենեքերիմ Արծրունուն, ինչպես նույն անմասնութեամբ Արծրաց դաշտը դարձել է Արծրունեաց դաշտ, իսկ հունարենում Սենեքերիմը փոխարկվել է Նեկտանեքոսի, որը հույներին հայտնի անուն է Ալեքսանդրի վարքից և ավելի ընտանի:

Իսկ մնացած ամբողջ շարունակութեան մեջ համապատասխանութիւնը կատարյալ է:

Այն որ տղա ժամանակ է եփկարին հայտնվում, թե նրան որդի չպետք է լինի, առկա է միայն հայկական և ասորական բնագրերում (նկատի ունենք հայ նախընտրելի ձեռագիրը), սակայն հայկական մյուս օրինակները, ինչպէս նաև Կոնիբիրի կազմած օրինակն այդ մասին ոչինչ չեն ասում: Իսկ սլավոնական բնագիրը նշում է, որ նրան ասված էր, թե որդի չի լինելու, բայց ե՞րբ՝ չկա: Այն, երկու բնագրերի բառացի համընկնող մասերը, որ եփկարը բազին է շինում, կրակ է վառում, զոհ է մատուցում և նոր է դիմում աստվածներին նույնպես չկան հայկական ընդօրինակութիւններում, բացի մեր նախընտրելից:

Նմանութիւնները ակնբախ են նաև խրատների բաժնում: Առանձնապես սուշադրութեան է արժանի դրանց հաջորդականութիւնը: Հայկական հնագույն բնագրին ավելի մոտ է ասորականին, Կոնիբիրի բնագիրը գրավում է միջին տեղը, իսկ սլավոնները շատ են հեռու: Այսպէս, զուգահեռաբար բերենք միայն մեր նախընտրելի օրինակի և ասորականի առաջին յոթ խրատները.

**Հայկականը**

1. Որդեակ, եթէ լսես բան ինչ ի դրան արքայի, մեռոյ և թագոյ զնա ի սրտի քում և մի մոռացիս և կամ ի վեր հանկիցես: Գուցէ հանդիպեցէ ի թագաւորէն թեզ տանջանք և բանդ:

**Հայկականը**

Յամս Սենեքարիմայ արքայի Ասորեստանի ես եփկար դպրապետ էի նմայ:

Մինչդեռ ես տղայ էի՝ հրաման եղև ինձ, թէ որդի թեզ չէ հրամայած յաստուծոյ լինելոյ:

Եւ մեծութիւն յոյժ ըստացեալ էր իմ:

Կ կին առի և Կ ապարան շինեցի և Կ ամաց եղէ և ոչ եղև ինձ որդի ի նոցանէ:

Յաջնժամ ես եփկար շինեցի բազինս մեծ, վառեցի հուր և արկի ի վերայ խոնկս ամուշայհոտս և նուէրս, զոհեցի զոհս և մատուցի ընձայս և այսպէս ասէի... (թ. 222ա):

**Ասորականը**

1. Որդեակ, եթե լսես բան ինչ թող այն մեռնի քո սրտում և մի հայտնիր ոչ որի, ապա թե ոչ այն կդառնա տաք ածուխ քո բերանում և կայրի և դու անեծք կդնես քո հոգում և կբարկացնես աստծուն:

2. Որդեակ, դամենայն զոր ինչ անիցես և զոր ինչ տեսանիցես մի ումեր ասացես<sup>1</sup>։

3. Որդեակ, զկապ կնքեալ մի արձակեսցես և զարձակեալն մի կապեսցես։

4. Որդեակ, եթէ հայեսցիս և տեսանիցես գեղեցկացեալս և ծարուրեալս, սանդրեալս և պաճուճեալս մի ցանկանայցէս ի սրտի քում, զի թէ դամենայն ինչս և զգանձս քո վատնեացես և օելի (աւելի) ի նմանէ ինչ ոչ գտանիցես, բայց միայն զմեղս և զանօրէնութիւնս շահեսցիս և սլատիժս սաստիկս յաստուծոյ և ի մարդկանէ։

5. Որդեակ, մի լինիր շտապկոտ իբրև զնշենի փութոտ որ յառաջն ծաղկէ և յետոյն [հ]ասանի պտուղ նորայ, այլ լեր որպէս թթենի, որ յետոյ ծաղկէ և յառաջ ուտի պտուղ նորայ։ Այլ եղիցիս դու հեզ և հանդարտ ի զործս գնացից քոց և բարի լիցի քեզ։

6. Որդեակ, ցածոյ զաշս քո և կակղացոյ զբարբառ քո և նայեա ընդ ակամբ և մի երևեսցիս մարդկան անըսգամ, զի թէ աղաղակաւ տաճար շինուէր էշն աւուրն է ապարան շինէր և եթէ ի սաստիկ զօրութենէ և ի խիստ... եղինք վարէին, ապայ լուծ և արօր ոչ պակասէր ի պարանոց... ուղտուց։

7. Որդեակ, լաւ է ընդ իմաստնոյ քարինս կրել, ցան ընդ լիմարի և անըսգամի խմել զինի։

8. Որդեակ, հեղցես զգինի յարդարոց և մի ըմբեսցես զնայ ընդ անօրէնս և ընդ ան(զգ)ամս զի մի իբրև զնոսայ անըսգամ և անմիտ կոչեսցես (222բ—223ա)։

2. Որդեակ, մի ասա, ինչ որ լսել ես և մի հայանիր, ինչ որ տեսել ես։

3. Որդեակ, կնքված կապը մի արձակիր և արձակվածը մի կապիր։

4. Որդեակ, մի բարձրացրու աշքերդ և նայիր կնոջ՝ զուգված և շաքոված և մի տենչա նրան քո սրտում, որովհետև, եթե դու նրան տաս ինչ որ կա քո ձեռքում (քո ամբողջ ունեցածը) դու ոչինչ ավելի չես շահի նրանից, բայց միայն ծանր մեղք ասածո առաջ։

5. Որդեակ, հարեանի կնոջ հետ մի շնացիր, որպեսզի ուրիշներն էլ քո կնոջ հետ շնանան։

6. Որդեակ, մի լինիր փութկոտ ինչպես նշենի, որ առաջ է ծաղկում, բայց հետո է ուսվում նրա պտուղը, բայց եղիր հանդարտ և հեզ, ինչպես թթենի որ հետո է ծաղկում, բայց որի պտուղը առաջ է ուսվում։

7. Որդեակ, խոնարհիր աշքերդ և մեղմացրու ձայնդ և նայիր հոնքերի տակով, որովհետև եթե բարձր ձայնով տուն կառուցվեր՝ էշն օրեկան երկու տուն կկառուցեր և եթե սոսկ ուժով արօրը վարվեր՝ չէր իշնի լուծը ուղտի պարանոցից։

8. Որդեակ, լավ է իմաստունի հետ քար կրել, քան հիմարի հետ խմել գինի։

9. Որդեակ, լավ է թափես գինին արդարների գերեզմանին, քան թե խմես այն շար մարդկանց հետ (էջ 60—61)։

Ինչպես տեսնում ենք, հաջորդականությունը նույնն է։ Միայն միջարկված է ասորերենում 5-րդ խրատը, որը հայերենում ևս կա, բայց հեռու է ընկած։

Ուշագրավ է ոչ միայն այդ, այլև խրատների մեծ նմանությունը, որ ակերբախ է մեր նախընտրելիի և ասորական բնագրի մեջ։

Կոնիքիբի մոտ այս շարքից բացակայում է. «Որդեակ, ցածոյ զաշս քո...» խրատը, որն ընկած է շատ հեռու և բոլորովին այլ տեսք ունի։

«Որդեակ, ցածոյ զաշ քո և կակղացոյ զբարբառ բերանոյ քո և նայեա ընդ ակամբ քո, զի մի երևեսցիս մարդկան անըզգամ. զի եթէ աղաղակաւ տաճար շինէր, էշն՝ ամէն աւր է զարբաս շինէր և շարտախ»<sup>2</sup>։

Այստեղ ոչ միայն գունհկացած է լեզուն և հեռու գրաբարից, այլև խրատը թերի է։ Բացակայում է ուղտի մասին եղած հատվածը։ Տպագրերի մեջ ինչ-որ

<sup>1</sup> Կոնիքիբի բնագրում «Եւ զոր տեսանես մի տեսլ և զոր լսես մի յայտանես»։  
<sup>2</sup> The story... էջ 133։

մի հետք է մնացել «թէ ի սաստիկ զօրութենէ եղին վարի լուծն նա լուծն՝ ի պարանոցէն ոչ ելանէր»<sup>2</sup>:

Տաշյանը նկատում է, որ լուծն «անհնար» ընթերցումի փոխարեն պետք է լիներ ուղտու բառը ասորականին համապատասխան:

Մեր նախընտրելի բնագրով այդ ենթադրությունը ճշտվում է (տե՛ս վերը բերված համեմատությունը): Այդպիսի ընթերցում տալիս են և ուրիշ շատ ձեռագիր օրինակներ (որոնք անհայտ են եղել Տաշյանին), որոնց մեջ, սակայն, խրատը երկատված է, իսկ ասորականում և մեր նախընտրելի բնագրում՝ միասնական: Երկու հատվածները տրամաբանորեն միևնույն միտքն են արտահայտում և միասնական պետք է լինեին նախնականի մեջ:

Ութերորդ խրատը՝ «Որդեակ, հեղցես զգինի յարդարոց և մի ըմբեսցես զնայ ընդ անօրէնս և ընդ անլզգլամս...» մյուս հայ օրինակներում, ինչպես նաև Կոնիքի բնագրում հնչում է այլ կերպ. «Որդեակ, հեղցես զգինի քո և մի ըմպել ընդ անըզգամս և ընդ անարէնս...»:

Այստեղ կա իմաստային նրբերանգ: Ըստ երկրորդ տարբերակի արտահայտվում է այն միտքը, թե ավելի լավ է թափել գինին, քան թե խմել անզգամների և անօրենների հետ, իսկ ըստ մեր օրինակի՝ ավելի լավ է թափել գինին արդարների վրա քան թե խմել անզգամների հետ:

Արդարևեք ասելով պետք է հասկանալ մեռած մարդկանց, որոնց շիրիմներին ըստ վաղեմի հեթանոսական սովորության, գինի էին ձոնում: Այդ ծիսական ավանդույթը հարատևում է այսօր: Մեռածի գերեզմանին, կամ հոգեհացը ուտելիս թափում են գինու առաջին բաժակը ի պատիվ նրա: Այսպիսով, եթե երկրորդ տարբերակը ասորական և հայկական բնագրերի առնչությունը թողնում է չլուծված, ապա մեր օրինակը բնագիրն անմիջական կախման մեջ է դնում ասորականի հետ, ուր որոշակի ասված է. «Որդեակ, լավ է թափես գինին արդարների գերեզմանին, քան թե խմես այն շար մարդկանց հետ»:

Յոթերորդ խրատը հուշում է. «Որդեակ, լաւ է ընդ իմաստնոյ քարինս կրել, քան ընդ չիմարի և անըսգամի խմել գինի»: Այդպես է և Կոնիքի բնագրում, բայց տպագրերը տալիս են այլ ընթերցված. «Որդեակ, լաւ է իմաստուն մարդոյն հետ քար կրելն, քան զանգետին հետ ուտել և խմելն»:

Ասորական բնագրում խրատը բառ առ բառ համընկնում է հնագույնին: Երկու տեղն էլ ոչ թե ուտել և ըմպել, այլ խմել գինի: Այսպիսով, որքան գնում ենք դեպի նախնականը, այնքան համապատասխանությունները ավելի են հայկականի և ասորականի միջև:

Նկատելի է և մի ուրիշ հանգամանք: Շատ դեպքերում տպագրերը պահպանում են ավելի ճիշտ ընթերցված, քան թե կուղ Կոնիքի բնագիրը, ուստի բնագրական առնչությունների հարցը քննելիս դրանք ևս արժանի են ուշադրության: Այսպես.

«Որդեակ, լու(լաւ) է կոյր աշօք, քան կոյր մտօք, զի կուրն արագ ուսանի գերթեկեկ ճանապարհին, իսկ կոյրն մտօք թողու զդորդ ճանապալրհ» և երթայ

<sup>1</sup> Այս տարբերակը մեր ձեռքի տակ եղած տպագրերում չկա, վերցված է Տաշյանից, տե՛ս Մանր ուսումնասիրությունը, Վիեննա, 1901, էջ 117:

<sup>2</sup> Գիրք պատմութեան որ կոչի Պղնձէ քաղաք... Պոլիս, 1792, էջ 101:

ընդ կամայկորն»<sup>1</sup>: Կոնիբիրի բնագիրը վերջում շեղվում է. ոչ թե «երթայ ընդ կամայկորն», այլ «բստ կամս իւր», որն իմաստ չունի, իսկ հնագույնի ընթերցվածը և՛ ճիշտ է և՛ համընկնում է ասորականին: Տպագրերը պահպանել են ճիշտ ձևը:

Այնուհետև, մեր հնագույնում առկա «Որդեակ, ի պարտեղ թագաւորաց մի մտանէր և լընդ) կնոջ դատաւորաց մի խօսիս»<sup>2</sup> խրատը բացակայում է Կոնիբիրի մոտ, բայց պահպանվել է տպագրերում հետևյալ տեսքով. «Որդեակ, ի յապարանս թագաւորաց մի մտաներ և ընդ կնոջ դատաւորի մի խօսիր»<sup>3</sup>: Այս խրատի թարգմանական շրջանից գալը աներկբայ է, որովհետև կա և ասորական բնագրում՝ «Որդեակ, իշխանների պարտեղները մի մտիր և մի մերձեցիր իշխանների դատրերին»<sup>4</sup>: Ճիշտ է, խրատը կա տպագրերում, սակայն, ինչպես տեսնում ենք, այստեղ ևս հնագույնը ավելի մոտ է ասորականին և ենթադրվում է նրանից սերված:

Բերենք այլ կարգի մի բնորոշ օրինակ:

Կոնիբիրի բնագրում պատժիչ խրատներից մեկն այսպես է. «Ոչիլ հացի եկեր զմարմին թագաւորի, բայց ինքն ումեք ոչ էր աւզուտ և ոչ պիտանի, այլ անպէտ և վատ»<sup>5</sup>:

Ուղղակի հասկանալի չէ:

Սլավոնական բնագիրն այդպիսի խրատ չունի, իսկ ասորերենում գտնում ենք հազիվ հիշեցնող մի բան. «Որպէս ուտիճ ցորենոյ որ ուտէ զշտեմարանս թագաւորաց...» և այլն:

Այս երկու խրատների մեջ ինչ-որ նմանութիւն կա, բայց որևէ առնչութիւն չի կարելի գտնել: Հայերենում հացի ոչիլը ուտում է թագավորի մարմինը, որը ոչինչ շատող անմիտ բան է, իսկ ասորերենում ցորենի ուտիճը փշացնում է թագավորի շտեմարանները:

Կոնիբիրի բնագիր օրինակի աղավաղումն այնքան մեծ է, որ որևէ հիմք չի տալիս ենթադրելու, թե հայերենը գալիս է ասորական աղբյուրից, սակայն նույն խրատը մեր հնագույն բնագրերից մեկում, որը Մատենադարանում եփկարի ամենահին օրինակն է (ձեռագիր № 2961, 1321 թվականի գրչութիւն) հնչում է այլ կերպ.

«Որդեակ, եղեր ինձ որպէս ոչիլ հացի, որ եկեր զըշտեմարանս թագաւորաց և ինքն տմէք ոչ է օգուտ և պիտանի»<sup>6</sup>:

Այստեղ արդեն երևան է գալիս բնագրի լիակատար առնչութիւնը ասորականի հետ: Դա միաժամանակ մի արտահայտիչ օրինակ է, թե որքան կարող է աղավաղվել բնագիրն անցնելով գրչութիւնից գրչութիւն:

Այսպիսով, բոլոր այն դեպքերում, երբ ենթադրվում է ճիշտ ընթերցված, լինի դա մեր հնագույնի, որևէ ձեռագիր օրինակի, Կոնիբիրի բնագրի թե տպագրերի մեջ, գրեթե անսպայմանորեն համապատասխան է ասորականի հետ:

Բանասիրորեն հետաքրքիր և խոստուն փաստ է և հետևյալ հանգամանքը:

<sup>1</sup> Ձեռագիր, № 5599, Թ. 225ա:

<sup>2</sup> Նույնը, Թ. 225բ:

<sup>3</sup> Գիրք պատմութեան որ կոչի Պզնձն քաղաք և բանք խրատականք եւ օգտակարք եփկարայ իմաստնոյ, Պոլիս, 1792, էջ 95:

<sup>4</sup> The story... էջ 65:

<sup>5</sup> Նույնը, էջ 158:

<sup>6</sup> Ձեռագիր, № 2961, Թ. 53ա:



Հայկական բնագրերի մեջ հիշված անուններն ամենից ավելի համընկնում են ասորականին: Նախընտրելի օրինակի մեջ այդ ավելի է ակնբախ:

Ասորական	Հայկական	Սլավոնական
Ախիկար	Խիկար	Ակուլոտս
Նադան	Նադան	Անադան
Սենեքերիբ	Սենեքերիմ	Սինակրիբ
Աշփեգանի	Աբեստան	շիֆ
Եարուսեմաք	Աբուսամաք	շիֆ
Աբիկամ	Աբիկամ	Օբիկամ
Մանգիփար	Սենիքար	շիֆ

Հարիսը բերելով Ախիկարի հայկական հորջորջումը նկատում է, որ այն «բացարձակապես չի համաձայնվում նշված որևէ ձևի ոչ էլ հայկական Տովրիթում տառադարձված *Αχιχαρος*-ի հետ»<sup>1</sup>: Բայց դա ուղղակի ասորական Ախիկար ձևն է և ձայնավորի անկումով: Սլավոնականը ստացել է հունական տեսք:

Նադան, Սենեքերիմ և Աբիկամ անունները երեք բնագրերում էլ գրեթե նույնն են, բայց տառադարձությամբ ասորերենին ավելի մոտ է հայերենը, չնայած դա հաստատուն կուլան չի կարող լինել, քանի որ սլավոնականը միջնորդված բնագիր է:

Խիկարի կնոջ՝ Աբեստան և դահճապետի՝ Աբուսամաք անունները հիշատակվում են միայն հայկական և ասորական բնագրերում, սլավոնականը չունի: Նկատելի է, որ Եարուսեմաք ասորական հորջորջումը և Աբուսամաք հայկականը, երկուսն էլ աղավաղված են և պետք է որ մշակորդներն Նարուսեմաք ձևի մեջ, որը ասորական կազմություն ունի և հավանաբար նախնականում այդպես է եղել<sup>2</sup>:

Վերջինը մահապարտ ծառայի անունն է, որին գլխատում են Խիկարի փոխարեն: Այդ անվան հիշատակությունը կա միայն հայկական և ասորական բնագրերում: Սլավոնականը չունի, ինչպես նաև՝ արաբականը: Հարիսը այդ անվան մասին գրում է. «Անվան նշանակությունը պարզ չէ և ոչ էլ հավանական, որ նախնականից է»<sup>3</sup>: Տաշյանը նկատում է, որ այդ ծառայի հայկական և ասորական հորջորջումները «բավական տարբեր են» և համաձայնվում է Հարիսի հետ՝ «ծնդրական է ասոր նախնականին մեջ գտնվելը»<sup>4</sup>:

Թե եղել է նախնական բնագրի մեջ, առայժմ դա մեզ չի զբաղեցնում, բայց միայն հայկական և ասորական օրինակներում հիշատակված այդ անունը գալիս է միևնույն աղբյուրից: Ասորականը Մանգիփար է, իսկ հայկականը Սենիքար (ըստ մինչև այժմ հայտնի հայկական օրինակների): Այստեղ իհարկե քիչ է զգալի առնչությունը, և Տաշյանը իրավացի է ասելու, որ այդ անունները բավական տարբեր են: Բայց մեր ձեռագիրը տալիս է մի այլ ընթերցված՝ Սեփար (մի ուրիշ ձեռագիր՝ Սենեփար): Սա արդեն անմիջական կապ

<sup>1</sup> The story... էջ XXVII:

<sup>2</sup> The story... էջ XXXVI:

<sup>3</sup> Նույնը, էջ, XXXVI:

<sup>4</sup> Տ ա շ յ ա ն, Մատենագրական մանր ուսումնասիրությունք, Բ, Վիեննա, 1901, էջ 41:

ունի Մանգիփարի հետ: Ման-ը դեն է նետվել և մնացել է Սեփար կամ Սիփար: Զ.-ն հեշտությամբ ս կարող է հնչել հենց թեկուզ ասորերենում, կամ հայերենում է տառադարձվել ս:

Մանգիփարը Սեփար է դարձել հավանաբար պարսկերեն Սըփար կամ Սեփար բառի ազդեցությամբ, որ նշանակում է վահան: Հիրավի Մանգիփարը փրկության վահան է դառնում խիկարի համար: Այս բացատրությունը իհարկե պայմանական է: Սակայն ինչ էլ որ լինի ման նախամասնիկի անկումով այդ երկու անունների առնչությունը որոշակի է:

Կարելի է դեռ շատ այդպիսի զուգահեռներ բերել հայկական և ասորական օրինակներից, ինչպես իրատների այնպես էլ եզրայտական արկածների բաժնում, բայց մեզ թվում է, այսքանն էլ բավական է համոզվելու հայ բնագրի ասորական թարգմանություն լինելու մեջ:

Սակայն հայկական թարգմանությունը համենայն դեպս տարբեր է գույություն ունեցող ասորական օրինակից:

Ասորական, ինչպես և սլավոնական բնագրերը ավելի են քրիստոնեացված: Խմբագրվել են, կամ ուղղակի մի կողմ են նետվել հեթանոսական-դիցարանական մասերը, իսկ հայկականը շատ բան պահպանել է անաղարտ, չնայած որոշ ձեռագրերում միևնույն միտումը անխուսափելի հետք է թողել:

Մենք վերևում մի այլ կապակցությամբ ցույց տվեցինք, թե ինչպես են սկսվում ասորական և հայկական բնագրերը: Խիկարն ունի վաթսուն կին, մեծ հարստություն, բայց չունի երեխա: Նա կառուցում է մի բազին և աղոթում: Մինչև այստեղ նմանությունը շատ մեծ է և անվիճելի, բայց այստեղից բնագրերը շեղվում են: Ասորական բնագրում խիկարը դիմում է քրիստոնեացած միակ աստծուն. «Օ, տէր իմ աստված...» իսկ հայկական բնագրում՝ հեթանոսական աստվածներին. «Ով տէրք իմ և շաստուածք. Բելշիմ և Շիմիլ և Շամին, հրամայեցէք և տուք ինձ արու զաւակ, քանզի խիկար ահա կենդանի մեռանի»<sup>1</sup>: Հատկանշական է, որ այստեղ մեր նախընտրելի համարված № 5599 ձեռագիրը ավելի հեռուն է գնում. «Ով տեարք իմ և աստուածք. Բելշիմ և Միրշահմին, էշարիշէ և Իշեմիշահ եթէ համարեցէք ինձ արու որդի, զի մի անժառանգ մնացից»<sup>2</sup>: Ուրեմն այն բնագիրը, որն ավելի շատ էր զուգահեռներ տալիս ասորական բնագրի հետ, այս դեպքում շեղվում է ավելի ուժեղ քան մյուսները:

Շարունակենք: Երբ Սենեքերիմ թագավորը առաջարկում է խիկարի որդուն՝ Նաթանին յուժելու փարավոնի առաջադրած հանելուկները, Նաթանը սարսափած պատասխանում է. «Զայդ իրս դիքն ոչ կարեն վճարել իսկ ի մարդէ ո՞չ իցէ կարող վճարել»<sup>3</sup>:

Երբ խիկարն իր իմաստությամբ փախում է փարավոնի մոտ՝ նա ոգևորված բացականչում է. «Յոս յաուրս աւրհնեալ եղիցի, զի տեսի զխիկար կենդանի առաջի դից իմոց»<sup>4</sup>:

Փարավոնը հարց է տալիս. «Ասա ինձ զճշմարիտն՝ Սենաքարիմ արքայն ում նման է»:

<sup>1</sup> The story... էջ 145:

<sup>2</sup> Ձեռագիր № 5599, Թ. 222ա:

<sup>3</sup> Նույնը, Թ. 230ա:

<sup>4</sup> Ձեռագիր, № 3526, Թ. 220բ:

Խիկարը պատասխանում է. «Սենաքարիմ արքայն նման է Բելշիմի և նախարարքն նորա՝ փայլատակացն»<sup>1</sup>:

Խիկարը բռնել է տալիս մի աքիս և ժողովրդի առաջ ծեծում: Մարդիկ գնում բողոքում են իրենց փարավոնին, թե «Խիկար զղիսն մեր անարգ է և զաքիսն տանջ է»<sup>2</sup>:

Հեթանոսական-դիցաբանական հետքեր կան նույնիսկ խրատների մեջ, որոնք շատ ավելի փոփոխությունների են ենթարկվել, և դժվար էր պահպանել նրանց դիցաբանական նախնական տեսքը:

«Որդեակ, զերեսս զիցն և զարքունեացն ցուցի բեզ և մեծ փառաց հասուցի և դու ի փառաց բնկնցեր զիս» — կարդում ենք ձեռագիր № 2961 հնագույն օրինակի մեջ<sup>3</sup>:

Պարզ է, որ այս բոլորը հետամուտ չեն, այլ եղել են նախնական բնագրի մեջ:

Երկի դիցաբանական բնույթն, ուրեմն, հայ բնագրում մնացել է առավել կամ նվազ շափով անաղարտ:

Ասորական բնագրում մեր բերած օրինակներից և ոչ մեկը չի պահպանվել: Ժամանակն ու բրիտանական մտայնությունը շանասիրաբար սրբել, մաքրել են դիցաբանական շրջանից եկող ամեն մի հիշողություն, մնացել են սակայն իրենց մատնող որոշ տեղեր:

«Որդեակ, — կարդում ենք ասորական բնագրում, — զերեսս արքային ցուցի բեզ և մեծ փառաց հասուցի և դու շար կամեցար զիս»<sup>4</sup>:

Ինչպես տեսնում ենք զա միևնույն խրատն է, որ բերվեց վերևում, միայն հանված են «զերեսս զիցն» բառերը:

Փարավոնի այն հարցին, թե իմ նման է Սենեքերիմ արքան, Խիկարը պատասխանում է ինչ-որ երկու բառով, որոնք ջնջված են ասորական բնագրում, բայց կարելի է վերականգնել արաբերենով, ուր ասված է. «Տէրն իմ է աստվածն երկնից», իսկ Բելշիմ նշանակում է երկնքի տեր, ինչպես հայերենում էր:

Այսպիսով, երկու օրինակներն էլ, ճիշտ է աղավաղ, բայց այս կամ այն շափով որոշ հետքեր պահել են և զալիս են հաստատելու հայոց ընթերցվածների նախնական և հավաստի բնույթը:

Այդ միաժամանակ մեզ հուշում է, որ ոչ թե հայերենն է շեղվել ասորական բնագրից, այլ ասորերենը՝ ենթարկվելով հետագա խմբագրության<sup>5</sup>:

Հին հեթանոսական, դիցաբանական հետքերը ջնջված են նաև սլավոններին միջոցով մեզ հասած հունական բնագրից:

Մանրամասներում հայկական և ասորական օրինակների մեջ ուրիշ տար-

<sup>1</sup> The story... էջ 152:

<sup>2</sup> Նույնը, էջ 153:

<sup>3</sup> Ձեռագիր, № 2961, ք. 53ր:

<sup>4</sup> The story... էջ 82:

<sup>5</sup> Այդ առումով շատ բնորոշ է ասորերենում պահպանված մի խրատը (բերում ենք անգլերեն թարգմանությունը) «My son, if thou shalt find a find before an idol, offer the idol its share of it», որը զերծ է մնացել խմբագրումից: Հարիսը այդ, բնագրի մեջ անսովոր համարելով, ծանոթագրում է. «This sentence cannot be of Christian or Moslem origin». The story... էջ 66:

բերութիւններ՝ ևս կան, բայց դրանց մեծ մասը, գրեթէ բոլորը, գրչագրական խմբագրութիւնների հետեանք են և շին գալիս թարգմանական շրջանից:

Եթե որևէ մանրուք, պատմողական մասից կամ խրատներից, մեր նախնատրեւի մեջ, Կոնիքիւրի բնագրում և տպագրելում պակասում է՝ կարելի է լրացնել այլ հայերեն ձեռագիր օրինակներով: Այսպես, ասորական և սլավոնական բնագրերում ասված է, թե նախանը նամակ է գրում երկու թագափորների՝ պարսից և եգիպտացոց: Այդ բացակայում է ծանոթ օրինակներից, բայց կա մեր № 5599 ձեռագրի բնագրում: Երբ Խիկարին առաջարկում են ավագից պարան մանել, նա խնդրում է, որ այդպիսի մի օրինակ ցույց տան, որպեսզի ինքը հաստ կամ բարակ շմանի: Բառացիորեն նույնը տես № 2004 կամ 1495 ձեռագրերում, կամ փարավոնի կողմից երեք տարվա հարկ պահանջելու հիշատակութիւնը և այլն: Այնպես որ բոլորը կարելի է վերականգնել, բացառութեամբ, իհարկե, այն տեղերից, որոնք ասորական բնագրում հետամուտ հավելումներ են, այսինքն, հավելումներ, որոնք կատարվել են հայերեն թարգմանութիւնից հետո:

Ուրեմն հիմնական տարբերութիւնը մնում է հեթանոսական ֆոնը, որն այնպես բացորոշ է հայերենում և որը շնչված կամ աղարտված է բուն ասորերենի մեջ: Սակայն դրանից, իհարկե, հայկական թարգմանութեան այլ աղբյուր չպետք է որոնել: Մենք բաղմաթիւ օրինակներով աշխատեցինք ցույց տալ հայկական և առկա ասորական բնագրերի միջև եղած առնչութիւնը, որը ուղղակիորեն ենթադրում է թարգմանութեան ասորական սկզբնաղբյուր, բայց ոչ այնպիսի, որ ունեցած լիներ առկա տեսքը: Հայ թարգմանչի ձեռքի տակ եղել է մի շատ ավելի հին բնագիր, որտեղ դիցաբանական տարրը դեռևս պահպանված էր:

Նշենք մի ուշագրավ հանգամանք ևս: Հայկական Խիկարի նորահայտ օրինակները մեզ հիմք են տալիս նմանութեան եզրեր փնտրելու նաև հայ և սլավոնական բնագրերի մեջ: Կան այնպիսի մանրամասներ, որոնք բացակայում են ասորականից, բայց գտնում ենք սլավոններենում, ինչպես նաև՝ որոշ խրատներ: Օրինակ. «Որդեակ, եթէ առաքեսցէ տէր քո բերել սպտուր, խաղող մի բերել նմայ, զի զխաղողն ուտէ և զպատուհաս սպտրին ոչ թողու»<sup>1</sup>, կամ այն հիշատակութիւնը, որ Խիկարի սպանութեան լուրը լսելուց հետո եգիպտական փարավոնը հարկ է դնում Ասորեստանի վրա, բնակիչները փախչում են և երկիրն ամայանում է<sup>2</sup> և այլն:

Առնչութիւնը հայ և հույն բնագրերի մեջ նկատել է դեռևս Կոնիքիւրը, որից Տաշյանը ենթադրում է, որ «հայ բնագիրն որչափ ալ ըստ երևույթին ասորի բնագրի մը ծագած ըլլա, կրած է հունական ազդեցութիւն»<sup>3</sup>:

Դա քիչ է հավանական: Առհասարակ հույն բնագիրն այնքան հեռու է հայկական օրինակից, որ այն երբեք չի կարող ենթադրվել հայերենի համար իբրև թարգմանական սկզբնաղբյուր, կամ որևէ ազդեցութիւն կրած լինի նրանից:

<sup>1</sup> Ձեռագիր № 5599, ք. 225ա:

<sup>2</sup> Հայերենում այդ ավելի կապակցված և տրամաբանական է ներկայացվում: Տե՛ս ձեռագիր № 2004 և 1495:

<sup>3</sup> Տ ա շ յ ա ն, Մատենագրական մանր ուսումնասիրութիւնք, Բ. Վիեննա, 1901, էջ 137—138 հույն բնագիր ասելով հասկացվում է սլավոնականը:

Հույն և հայ բնագրերի մեջ եղած որոշ առճշուօթյունը պետք է բացատրել նրանով, որ հունական բնագիրն ավելի մեծ ընդհանրութիւններ է ունեցել ասորական այն բնագրի հետ, որը եղել է հայ թարգմանչի ձեռքին: Այդ առումով բերենք մի ուշագրաւ օրինակ: Համեմատենք երեք խմբագրութիւնների միևնույն խրատը.

### Հայկական

Որդեակ, եթէ լսես բան ինչ ի դրան արքայի՝ մեռոյ և թագոյ զնայ ի սրտի բում և մի մոռացիս և կամ ի վեր հան[իցես]: Գուցէ հանդիպեսցէ ի թագաւորէն քեզ տանջածք և բանդ:

### Ասորական

Որդեակ, եթե լսես բան ինչ թող այն մեռնի քո սրտում և մի հայտնիր ոչ սքի, ապա թէ ոչ՝ այն կդառնա տաք ածուխ քո բերանում և կայրի և դու անեծք կդնես քո հոգում, և կբարկացնես ասածուն:

### Սլավոնական

Ինչ որ լսես արքայի մոտ կամ տեսնես նրա տանը՝ թող այդ փակվի քո սրտում և մի հայտնիր ոչ սքի: Իայց եթե դու հայտնես (ուրիշին մամնակից դարձնես) այն կթափվի քեզ վրա ինչպես շիկացած ածուխ, դու մեղավոր կդառնաս և հետո կզղջաս:

Ինչպես տեսնում ենք, երեքի բնույթն էլ նույնն է, սակայն տարբերութեցումներով: Հայկական օրինակից պակասում է շիկացած ածուխի պատկերը, ասորական օրինակից՝ թագաւորի հիշատակութիւնը, սլավոններենն ունի երկուսն էլ: Այդ նշանակում է, որ նախնականն այդպես է եղել, և հավանաբար, ինչպես քիչ առաջ ասվեց, երեք խմբագրութիւններն էլ ունեցել են մեկ ընդհանուր աղբյուր, կամ առնվազն մոտ են եղել իրար<sup>1</sup>:

Այսպիսով սկզբնաղբյուրի բնագրային հարազատութիւնը պահպանելու շատ նշաններով երկարի հայ խմբագրութիւնը բանասիրութեանը ծանոթ ասորական և սլավոնական բնագրերի համեմատութեամբ ստանում է որոշակի առավելութիւններ:

Երբ արդեն պարզ է, թե հայկական, ասորական և հունական բնագրերից որն է իր մեջ ավելի շատ նախնականը ներկաչում և ավելի քիչ աղարտված, կարելի կլինի այսուհետև լրջորեն զբաղվել նախնականի բնույթի և երկարի աղբյուրի ինքնութեան հարցերով, որը շատ է գրավել միջազգային բանասիրութեան ուշադրութիւնը և մնացել է դեռևս չլուծված<sup>2</sup>:

<sup>1</sup> Ուշագրաւ է, որ հայկական խմբագրութեան մեջ երկարը իր եղբորորդի նախնին խրատում է— թագաւորի դռանը որևէ բան լսելիս կամ տեսնելիս, ոչինչ չհայտնել, իսկ ասորականում՝ ոչ թե թագաւորի դռանը, այլ առհասարակ Պարզ է, որ հին ու ճիշտ ընթերցվածը պահպանել է հայկականը, որովհետև երկարը նախնին դաստիարակում էր իբրև պալատական արքայազայրու:

Սա ևս մի հավելյալ վկայութիւն է, որ հայկական խմբագրութեան մեջ միջավայրն ավելի խնամքով է պահպանված:

<sup>2</sup> Այսպես, նախօրոք կարելի է ուղղակի ասել, հենվելով հայ բնագրական տվյալների վրա, որ երկարի սկզբնաղբյուրը, հակառակ բանասիրական որոշ շրջաններում ընդունված կարծիքի, չի եղել երբայցեքն լեզվով, և ուրիշ շատ հարցեր, որոնք սակայն հետագա ուսումնասիրութեան խնդիր են:

А. МАРТИРОСЯН

## К ВОПРОСУ О ПЕРЕВОДЕ НА АРМЯНСКИЙ ЯЗЫК ПОВЕСТИ «НАСТАВЛЕНИЯ И ПРЕМУДРОСТИ ХИКАРА»

### Резюме

Повесть «Наставления и премудрости Хикара» имеет восточное происхождение. Еще в древности она проникла в литературу и фольклор многих народов и пользуется большой популярностью. Следы ее влияния можно заметить начиная от Эзопа и до Шекспира, от Библии и до «Тысячи и одной ночи».

Повестью о Хикаре уже длительное время занимаются ученые многих стран. Исследователей главным образом интересуют следующие вопросы: каково происхождение и существо повести о Хикаре, каким мог быть его первоначальный текст, откуда идет сходство Эзопа и Хикара, как объяснить вопрос связи Хикара и Товита и др.

Ясно, что в этих условиях внимание должно было быть сосредоточено на сохранившихся текстах повести. Арабский текст повести был известен давно, затем нашлись одна сирийская версия и фрагмент, которые довольно сильно отличаются друг от друга; затем была найдена славянская редакция повести. Имеются также эфиопский, татарский, грузинский экземпляры и, наконец, армянская версия.

Арабский и эфиопский тексты не представляют особого интереса, так как первый был переведен с сирийского языка и вольно переложен в «Тысяче и одной ночи», а эфиопский переведен с арабского. С текстологической точки зрения не представляет ценности также татарский и грузинский переводы, сделанные с армянского.

Для определения первоначального текста сказа о Хикаре следует иметь в виду сирийскую, славянскую и армянскую версии.

Вопрос связи армянской версии с сирийской и славянской, а также места, занимаемого ею, интересовал многих филологов, в особенности А. Ташяна, который, не имея в своем распоряжении исправного текста, не смог его разрешить. «Первым делом армянских филологов будет — найти такой текст» — писал он.

Произведенные автором статьи в этом направлении изыскания не были бесплодными. В Матенадаране имеется 40 рукописей, содержащих версию текста Хикара, из них две (№ 2961 от 1321 г. и № 5599 от 1347 г.) на двести лет древнее самого древнего из ныне известных текстов.

Тщательное исследование связей, имеющих между армянской, сирийской и славянской версиями, приводит к заключению, что армянская представляет собой перевод с сирийской, которая, однако, значительно отличалась от сохранившейся сирийской редакции.

Мифологические наслоения, говорящие о большей древности, в той

или иной мере стерты или искажены как в сирийской, так и в славянской редакциях. Между тем в армянской версии они сохранились. Во всех других случаях армянская версия совпадает с сирийской редакцией. Это показывает, что в распоряжении армянского переводчика имелся текст более древний и более близкий к первоначальному, в котором еще сохранились элементы мифологии.

Армянская версия дает возможность серьезно заняться вопросами характера и сущности первоначального текста, которые вызвали в международной филологии большой интерес и по сей день остаются неразрешенными.

Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՓԻԼՈՆ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՑՈՒ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՀԱՅ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայերեն ձեռագիր ժառանգության բազմաթիվ ֆոնդում պահպանվել են Փիլոն Ալեքսանդրացու ոչ միայն աշխատությունները, այլ նաև դրանց հայկական բավական ընդարձակ մեկնություններ: Այդ մեկնությունները հայագիտության կողմից ցարդ անուշադրության են մատնված: Դեռևս ոչ մի փորձ չի արվել որոշելու, թե ովքե՞ր են եղել դրանց հեղինակները և ե՞րբ են դրանք մեկնվել:

Սույն ուսումնասիրությամբ մենք առաջին քայլն ենք անում Փիլոնի երկերի հայերեն մեկնությունները խմբավորելու, դրանց հեղինակները պարզելու, ինչպես նաև որոշ տեսանկյունից մեկնությունները գնահատելու ուղղությամբ՝ գիտակցելով միաժամանակ, որ այս աշխատանքը, որպես առաջին փորձ, չի կարող զերծ լինել թերություններից:

\* \* \*

Փիլոն Ալեքսանդրացին (Երրայեցին) (մոտ 20 թ. մ. թ. ա. — 54 թ. մ. թ.) Ալեքսանդրյան դպրոցի (Եգիպտոս) այն նշանավոր ներկայացուցիչներից մեկն է, որը մեծ դեր է կատարել բրիտանական գաղափարախոսության ձևավորման գործում: Նրա ուսմունքում միաձուլվում են հրեական կրոնը և միստիֆիկացիայի ենթարկված հունական փիլիսոփայությունը, էկլեկտիկորեն միախառնվում են պլատոնյան, պիթագորյան և հատկապես ստոյիկյան փիլիսոփայական ուսմունքները: Էնգելսը իր «Բրունո Բաուերը և վաղ բրիտանությունը» հոդվածում, խոսելով բրիտանությունից ձևավորման գործում Փիլոնի կատարած դերի մասին, գրում է. «Բաուերն այդ հարցով զբաղվում էր մինչև իր կյանքի վերջը: Նրա հետազոտությունները բերեցին այն եզրակացության, թե ալեքսանդրացի հրեա Փիլոնը, որն արդեն զառամյալ ծերունի դեռևս ապրում էր մեր թվարկության 40 թվականին, բրիտանությունից իսկական հայրն էր, իսկ հռոմեական ստոիկ Սենեկան, այսպես ասած, նրա հորեղբայրը: Մեզ հասած և Փիլոնին վերագրվող բազմաթիվ աշխատությունները փաստորեն առաջացել են փոխաբերաբար և ուսցիոնալիստորեն ըմբռնված հրեական տրադիցիաների և հունական, հատկապես ստոյիկյան փիլիսոփայության միախառնումից»<sup>1</sup>:

Լինելով «բրիտանությունից իսկական հայր», Փիլոնը, հասկանալի է, բրիտանական երկրներում պետք է ճանաչվեր որպես հեղինակություն և զգալի ազդեցություն գործեր միջնադարյան աշխարհայեցողության վրա: Այսպես է եղել, իրոք, Հայաստանում, որտեղ հետաքրքրությունը նրա ժառան-

<sup>1</sup> К. Маркс и Ф. Энгельс, Соч., том XV, էջ 603:



գության նկատմամբ բնականարար առաջացել է քրիստոնեության տարածմանն ու ամրապնդմանը զուգընթաց, այսինքն այն ժամանակներում, երբ սկսում է սկզբնավորվել ու զարգանալ ֆեոդալիզմի էպոխայի հայ մշակույթը: Պատահական չէ, որ Փիլոն Ալեքսանդրացու աշխատությունները պատկանում են օտարալիզու այն գործերի թվին, որոնց հայերեն թարգմանությունը կատարվել է շատ վաղ շրջանում: Հայագետների մեծամասնությունը բանասիրական մանրակրկիտ ուսումնասիրությունների հիման վրա այն եզրակացության է հանգել, թե Փիլոնի երկերը հայերենի թարգմանվել են հունարան զարոցին պատկանող մատենագիրների կողմից և նրանց թարգմանության ժամանակը պետք է տատանվի հիմնականում 5—6 դարերի միջև<sup>1</sup>:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ անառարկելիորեն մեծ է Փիլոնի ազդեցությունը միջնադարյան հայ մտածողների վրա: Հայ շատ մատենագիրների մոտ, սկսած վաղ շրջանից, մենք հանգիպում ենք Փիլոնի աշխատություններում արծարծված գաղափարների հաճախ գրեթե բառացի շարադրանքին, օրինակ՝ Մովսես Խորենացու, Եղիշեի<sup>2</sup>, Անանիա թարգմանչի<sup>3</sup>, Անանիա Շիրակացու<sup>4</sup>, Հովհան Օձնեցու, Քովմա Արծրունու, Գրիգոր Մագիստրոսի, Հովհաննես Իմաստասերի (Սարկավազի), Ներսես Շնորհալու, Ներսես Լամբրոնացու և այլոց մոտ:

Փիլոնի աշխատությունները պահպանվել են մեզ հասած հայերեն բազմաթիվ ձեռագիր ժողովածուներում: Դրանցից շատերը, որ երբեմն ամբողջությամբ նվիրված են Փիլոն Երրայեցու գործերին, արտագրված են մեծ խնամքով ու հմտությամբ և իրավամբ կարող են դասվել գրչության արվեստի լավագույն նմուշների թվում: Ձեռագրերից հնագույնները վերաբերվում են 13—14-րդ դարերին: Հայկական ՍՍՏ Մինիստրների Սովետին առընթեր Հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ «Մատենադարանում» Փիլոնի աշխատություններ պարունակող ձեռագրերից հիշատակության արժանի են № 3932 (1275 թ. գրչություն), № 3935 (13-րդ դարի գրչություն), № 1500 (1282 թ. գրչություն), № 2100 (1325 թ. գրչություն), № 2057 (1328 թ. գրչություն), № 2102 (1342 թ. գրչություն), № 4275 (14-րդ դարի գրչություն), № 2056 (1646 թ. գրչություն), № 2595 (1795 թ. գրչություն) և ուրիշ ձեռագրեր: Փիլոնի աշխատություններ են պարունակում նաև աշխարհի այլ վայրերում պահվող մի շարք հայերեն ձեռագիր ժողովածուներ, ինչպես, օրինակ, Երուսաղեմում գտնվող № 333 ձեռագիրը (1298 թ. գրչություն)<sup>5</sup>, № 157 ձեռագիրը (1758 թ. գրչություն)<sup>6</sup> և այլն:

<sup>1</sup> Տե՛ս Մ ա ն ա ն դ յ ա ն, Հունարան՝ զարոցը և նրա զարգացման շրջանները, Վիեննա, 1928:

<sup>2</sup> Տե՛ս Փիլոնի Երրայեցույ մնացորդը ի հայտ, աշխատակցությամբ Հ. Մ. Ա վ դ ե բ յ ա ն ի, Վենետիկ, 1822, մաս 1-ին, առաջաբան, Բ. Կ յ ու լ լ և ս ե բ յ ա ն, Եղիշե, Քննական ուսումնասիրություն, Վիեննա, 1909, էջ 151—175. Ջ ա բ բ հ ա ն ա լ յ ա ն, Հայկական թարգմանութիւնք նախնեաց, Վենետիկ, 1889, էջ 735—748. Լ. Ե ա շ ի կ յ ա ն, Եղիշեի «Արարածոց մեկնութիւն» աշխատությունը (ձեռագիր), 1945, էջ 109—120 և այլն:

<sup>3</sup> Տե՛ս Բ ա գ մ ա վ է ա ղ, 1899, էջ 18—24, «Անանիա թարգմանիչն և իւր գրական գործոց մեկ նմուշ»:

<sup>4</sup> Տե՛ս Ա. Ա բ բ ա հ ա մ յ ա ն, Շիրակացու մատենագրությունը, Երևան, 1944, էջ 173:

<sup>5</sup> Տե՛ս Մ ա յ ր ց ու ջ ա կ ձ Ե ա գ ռ ա ց ս Ր Ր Ր Ց Յ ա կ ո Ր Ե ա ն ճ, կազմեց Նորայր Եպիսկոպոս Պողոս-բեան, Երուսաղեմ, 1953, հատ. 3, էջ 223:

<sup>6</sup> Տե՛ս նույնը, հատ. 2, էջ 71: Մեր ուսումնասիրությունը պարզեց, որ Երուսաղեմում գտնու-

Շնորհիվ Փիլոնի գործերի հայերեն թարգմանության և ձեռագրերում գրանց առկայութեան, Արևմուտքի մի շարք այլ հեղինակների երկերի թվում, պահպանվել ու ժամանակակից աշխարհին են հասել նաև Փիլոնի մի քանի կարևոր երկերը, որոնց բնագրերը վաղուց կորած են: Դրանց թվում են «Յաղագս նախախնամութեան», «Յաղագս բան ունել և անասուն կենդանեացդ», «Այնոցիկ որ ի լինելութեանն խնդրոց և լուծմանց» բավական ընդարձակ աշխատութիւնները, ինչպես նաև Փիլոնի «Առանց պատրաստութեան ի Սամիսովն», «Յաղագս Հովնանու», «Յաղագս զԱստուած» ճառերը: Հ. Մ. Ավգերյանի կողմից վերը նշված գործերը հայերեն ու լատիներեն լեզուներով հրատարակելուց հետո՝ քաղաքակիրթ աշխարհին մատչելի դարձան Փիլոն Ալեքսանդրացու նաև կորած համարվող գործերի մի մասը:

Բացի այս, հայերեն ձեռագրերում գտնվող Փիլոնի աշխատութիւններից մի քանիսը կարևոր են նաև նրանով, որ դրանք ավելի հին են քան պահպանված հունարեն և լատիներեն օրինակները և կարող են լուրջ նշանակութիւն ունենալ վերջիններս ստուգելու և ձգարտելու տեսակետից: Հայագետ Կ. Կոնիրբերը, արժեքավորելով Ավգերյանի կողմից Փիլոնի ճառերի հայերեն հրատարակութիւնը (1892), գրում է. «Փիլոնի գործոց հայերեն թարգմանութեանց շատ մասերը, որ միայն հայերեն մնացած են՝ հրատարակած էր արդեն Աւգերեան: Առաջիկայ հատորը կը պարունակէ Փիլոնի այն ճառերն, որոնց յունարէնն ալ կայ, ուստի որոնց տպագրութիւնն այնչափ անհրաժեշտ չէր ցայժմ: Առաջիւ անգամ հատորիս մէջ հրատարակուած են սա ճառերը՝ Յաղագս վարուց կենաց տեսականի, Վարուց Աբրահամի, Օրինացն այլաբանութեան, Քահանայիցն, Յաղագս երկոտասանիցն, Յաղագս բագնին իրաց: Այս հայերեն բնագիրը գտնել եօրն դար երիցագոյն է քան Փիլոնի ամենահին յունարէն ձեռագիրը, ուստի և առաջնակարգ ճշտութիւն է այս ճառերուն բնագրին քննութեան համար»<sup>2</sup>: Չեոնարկելով Վիլհելմի «Յաղագս վարուց կենաց տեսականի կամ Հեսսեանց» գործի հունարեն տեքստի հրատարակութեանը, Կոնիրբերը մեծ շափով օգտվել է հայերեն ձեռագրերից՝ հունարենը ուղղելու, ձգարտելու նկատառումով: «Փիլոնի «Յաղագս վարուց տեսականաց» գրութեան իմ հրատարակութիւնս,— գրում է նա,— քիչ ժամանակէն լոյս պիտի

վող № 157 և Մատենադարանի № 2595 ձեռագրերը, որոնք նույն հաջորդականութեամբ պարունակում են Փիլոնի 17 աշխատութիւնները, արտագրված են միևնույն՝ Երուսաղեմի № 333 ձեռագրից: Այս հաստատվում է այն փաստով, որ երկու ձեռագրերում էլ Փիլոնի աշխատութիւններին անմիջապէս հաջորդում է Հովհաննէս Իմաստասերի «Յաղագս անկիւնաւոր թուոց» աշխատութիւնը 5 աղյուսակներով և երկու ձեռագրերում էլ նույնութեամբ արտագրված են № 333 ձեռագրի գրիչ Վահրամ Սարկավազի հիշատակարանը՝ Չեի (1298) թվականից: Վահրամի այս հիշատակարանը բերելուց հետո Երուսաղեմի № 157 ձեռագրում նշվում է, որ ձեռագիրն արտագրել է Երուսաղեմցի Սարգիս գրիչը ՌՄԷ (1758) թվականին (տե՛ս Մայր Յուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց, հատ. 2, էջ 71—73), իսկ Երևանի Մատենադարանի № 2595-ում նշվում է, որ արտագրել է Բրաբիոն գրչուհին ՌՄԷ (1788) թվին: (Տե՛ս Մատենադարան, ձեռ. № 2595, էջ 241ա, հիշատակարան):

<sup>1</sup> Տե՛ս Փիլոնի Երբայեցույ մնացորդը ի հայս, աշխատակցութեամբ Հ. Մ. Ավգերյանի, Վենետիկ, 1822, մաս 1, 1826, մաս. 2: Ավգերյանը հրատարակել է նաև 5—6-դդ. հայերենի թարգմանված Փիլոնի այն գործերը, որոնց բնագրերը պահպանվել են: Տե՛ս Փիլոնի Երբայեցույ ճառք, Վենետիկ, 1892:

<sup>2</sup> Հանդէս ամսօրեայ, 1894, էջ 322:

տեսնէ, որուն բնագիրը (խոսքը հունարեն բնագրի մասին է — Գ. Գ.) վերա-  
նորոգելու մեծապէս նպաստեց ինձի հայերէն քարգմանութիւնը»<sup>1</sup>:

Բացի Փիլոնի աշխատութիւններից, հայերեն ձեռագիր ժողովածուներում հանդիպում ենք նաև համառոտ տեղեկութիւնների Փիլոն Երրայեցու անձի, նրա գործերի բովանդակութեան, դրանց մեջ քննարկվող գլխավոր հարցերի մասին: Մատենագիտական բնույթի այս տեքստերը ձեռագրերում հանդիպում են «Սկիզբն և պատճառ գրոցն, զոր արարեալ է բազմախորհուրդ, ամենիմաստ, սքանչելի Փիլոն», կամ՝ «Սկիզբն և պատճառ սքանչելոյն Փիլոնի գրոցն» և այլ վերնագրերով<sup>2</sup>: Ձեռագրերում Փիլոնի առանձին աշխատութիւնների մասին պատահում են թվով ավելի շատ «պատճառներ», որոնց հեղինակները գերազանցապես անհայտ են: Նրանց բացահայտումը, որն առանձին ուսումնասիրութեան թեմա է, կարող է պարզել մի շարք կարևոր հարցեր կապված ձեռագրերում հաճախ հանդիպող «պատճառների» հետ ընդհանրապես: Առայժմ հայտնի է, որ Փիլոնի յոթ գործերի «պատճառներ» է գրել 12-րդ դարի հեղինակ Դավիթ Քորայրեցին<sup>3</sup>, իսկ Փիլոնի «Յաղագս նախախնամութեան» երկի պատճառներից մեկի հեղինակն է Մխիթար Գոշր<sup>4</sup>: Փիլոնի գործերի «պատճառներ» են պարունակում Երևանի Պետ. Մատենադարանում և այլ գրադարաններում գտնվող հայերեն բազմաթիվ ձեռագրեր: Այսպես՝ Մատենադարանի № № 99, 437, 598, 1632, 1879<sup>5</sup>, 1897, 4150, 5254, Վիեննայի № 47 ձեռագիրը<sup>6</sup> և շատ ուրիշ ձեռագրեր:

Հատուկ ուշադրութեան են արժանի հայերեն ձեռագրերում պահպանված Փիլոն Ալեքսանդրացու աշխատութիւնների մեկնութիւնները, որոնք կատարվել են միջնադարյան հայ մատենագիրների կողմից: Հայերեն մեկնաբանվել են Փիլոնի գրեթե բոլոր գործերը: Մեզ են հասել Փիլոնին վերագրվող հետևյալ աշխատութիւնների ու ճառերի լուծմունքները. 1. «Յաղագս նախախնամութեան», 2. «Յաղագս բան ոմնել և անասուն կենդանեաց», 3. «Այնոցիկ որ ի լինելութեանն խնդրոց և լուծմանց», 4. «Այնոցիկ որ յելան է խնդրոց և լուծմանց», 5. «Աստուածային օրինացն այլարանութիւն», 6. «Յաղագս վարուց կենաց տեսականի կամ Հեսսեանց», 7. «Կեանք իմաստնոց կամ նահապետաց», 8. «Առանց պատրաստութեան ի Սամփսովն», 9. «Յաղագս Յովնանու», 10. «Յաղագս զԱստուած», 11. «Յաղագս քահանայից», 12. «Յաղագս

<sup>1</sup> Հանգէս ամսօրեայ, 1895, էջ 17—18:

<sup>2</sup> Սույն տեքստերից մեկը Փիլոնի աշխատութիւնների հետ հրատարակել է Ավգերյանը, «Բան թարգմանչի կամ մեկնչի, եղեալ ի սկիզբն գրոցն Փիլոնի» խորագրով: (Տե՛ս Փիլոնի Երրայեցույ մեացորդք ի Հայս, մասն 1-ին, էջ 7—11):

<sup>3</sup> «Դավիթ վրդ. Քորեբեցու մեկնութիւն կամ պատճառ, բան միահամուռ եօթանցն գրոցն Փիլոնի»: (Տե՛ս Մատենադարան, ձեռ. 1879, էջ 153բ—158ա, ձեռ. 4150, էջ 38ա—42ա, Տաշլան, Յուցակ հայ ձեռագրաց, Վիեննա, 1895, էջ 224, 1073—1079, Լ. Ա ճ ա ո յ ա ն, Հայոց անձնանունների բառարան, հատ. Բ, էջ 41, Ն. Ա կ ի Ֆ յ ա ն, Մատենագրական հետազոտութիւններ, հատ. 1-ին, Վիեննա, 1922, էջ 4, 65—66):

<sup>4</sup> «Փիլոնի Յաղագս նախախնամութեան, բան տուաչին, առ Աղեքսանդրոս, Գոշին ասացեալ պատճառ»: (Տե՛ս Մատենադարան, ձեռ. 1879, էջ 158ա—158բ, ձեռ. 4450, էջ 42բ—43ա, Տաշլան, Յուցակ հայ ձեռագրաց, էջ 224, 1118, Լ. Ա ճ ա ո յ ա ն, Հայոց անձնանունների բառարան, հատ. Գ, էջ 371):

<sup>5</sup> Սույն ձեռագրում (նրա նախկին համարն է 1650) Փիլոնի գործերի պատճառների հետ կան նաև շատ ուրիշ հեղինակների աշխատութիւնների պատճառներ:

<sup>6</sup> Տե՛ս Տ ա շ յ ա ն, Յուցակ հայ ձեռագրաց, էջ 223—224:

բազմին (կամ սեղանոջն) իրաց», 13. «Յաղագս տասն բանից», 14. «Ոչ շնայցես»:

Ընդ որում Փիլոնի վերոհիշյալ գործերի մեկնություններից մի քանիսը ունեն երեք տարբեր վարիանտներ, ուստի բաժանվում են երեք խմբի:

Առաջին խմբին<sup>1</sup> պատկանում է միայն Փիլոնի «Յաղագս նախախնամութեան» աշխատության մեկնությունը: Ի տարբերություն մյուս երկու խմբերի, սրա մեկնիչ-հեղինակը հայտնի է, նրա անունը նշվում է մեկնության վերնագրում՝ «Հաւարումն յայտնաբանութեան ի Փիլոնէ իմաստնոյ, որ Յաղագս նախախնամութեան, յառաջին բանէ, յերկասիրութեանց Յովհաննու Որոտնեցոյ, լուսաւոր բարունապետի տեառն հայոց»: Փիլոնի «Յաղագս նախախնամութեան» Որոտնեցու այս մեկնությունը մեզ հայտնի է Երևանի Պետ. Մատենադարանի № 1931 (15-րդ դարի գրչություն), № 1701 (1412 թ. գրչություն), № 3860 (18-րդ դարի գրչություն) ձեռագրերից, կա նաև Վենետիկի № 969 (14-րդ դարի գրչություն)<sup>2</sup> ձեռագրում:

Երկրորդ խմբի մեջ մեկնվում են Փիլոնի 1. «Յաղագս նախախնամութեան», 2. «Յաղագս բան ունել և անասուն կենդանեացդ», 3. «Այնոցիկ որ ի լինելութեանն խնդրոց և լուծմանց» (իր շորս մասերով), 4. «Այնոցիկ որ յելսն է խնդրոց և լուծմանց», 5. «Յաղագս քահանայից», 6. «Յաղագս, բազմին իրաց», 7. «Յաղագս տասն բանից», 8. «Ոչ շնայցես», 9. «Առանց պատրաստութեան ի Սամփոփն», 10. «Յաղագս Յովնանու», 11. «Յաղագս զԱստուած», 12. «Աստուածային օրինացն ալլաբանութիւն», 13. «Կեանք իմաստնոց», 14. «Յաղագս վարուց կենաց տեսականի» աշխատությունները:

Այս խմբին պատկանող մեկնություններ պարունակում են Պետական Մատենադարանի № 59 (14-րդ դարի գրչություն), № 437 (14-րդ դարի գրչություն, գրիչ Եսաչի Նշեցի), № 1480 (1617 թ. գրչություն) և № 2595 (1788 թ. գրչություն) ձեռագրերը: Ընդ որում այս ձեռագրերից միայն վերջինն է, որ ամփոփում է այս խմբի համար վերը նշված բոլոր գործերի մեկնությունները: № 59 ձեռագրում գտնում ենք միայն 1. «Նախախնամութեան», 2. «Յաղագս բան ունել և անասուն կենդանեացդ» և 3. «Այնոցիկ, որ ի լինելութեանն խնդրոց և լուծմանց» (իր 4 մասերով) մեկնությունները, № 437 ձեռագրում՝ միայն 1. «Նախախնամութեան» և 2. «Յաղագս բան ունել և անասուն կենդանեացդ»-ի մեկնությունները, իսկ № 1480 ձեռագրում՝ խմբի համար վերը նշված № 4—11 աշխատությունների լուծմունքները:

Այս խմբի մեջ մտնող աշխատությունների մեկնիչ-հեղինակն անհայտ է: Հեղինակի որոշման առաջին փորձն արել է № 2595 ձեռագրի գրիչ Բրաբիոն գրչուհին, որը, մեկնությունն արտագրելուց առաջ տիտղոսաթերթի վրա գրել է. «Լուծմունք եօթնից գրոցն Փիլոնի իմաստասիրի Եբրայեցոյ... արարեալ ի մերոց վարդապետաց՝ որպէս ցուցանէ կերպն շարադրութեան, այլ յումմէ գոլն՝ անյայտ, զի չկայր օրինակին անուն լուծողին: Բայց զի անկիւնաւոր թուոցն իրատն որ ի վերդ է, Սարկաւազ Յովհաննես վարդապետն է արարեալ և ևս զայն ըստ սոյն գրոցս և սոյն դասութեամբ ի միում տփոջ գտի, վասն որոյ

<sup>1</sup> Մեկնությունների խմբերի բաժանումը պայմանական է:

<sup>2</sup> Տե՛ս Մալր ցուցակ հայերեն ձեռագրաց, կազմեց Բ. Սարգսյանը, Վենետիկ, 1914, հատ. Բ, էջ 730:

թուեցաւ ինձ՝ թէ և զայս լուծմունքս նա իցէ արարեալ, քանզի և բանն համանման երևի նորին շարադրութեան»<sup>1</sup>:

Մեզ թվում է, որ Բրաբրիոն գրչուհու այս ենթադրութիւնը հետո չէ ճշմարտութիւննից<sup>2</sup>: Այդ հիմնավորում է հետևյալ փաստերով.

Նախ, Փիլոնի աշխատութիւնների Հովհաննես Սարկավագին վերագրվող մեկնութիւնները կատարվել են 11—12-րդ դարում: Այս են վկայում ձեռագրական տվյալները: Բրաբրիոն գրչուհին, որ արտագրել է Մատենադարանի № 2595 ձեռագիրը<sup>3</sup>, իր արտագրած ձեռագրում բերել է նախագաղափար հանդիսացած ձեռագրի հիշատակարանը, որից իմանում ենք, որ նախագաղափար ձեռագիրն արտագրված է Վահրամ սարկավագի կողմից Չեխէ (1298) թվականին, որն իր հերթին պետք է արտագրված լինի ավելի հին ձեռագրից: Այս ապացուցում է, որ մեկնութիւնները ոչ թե 13-րդ դարից հետո եկող, այլ նրանից առաջ բնկած ժամանակաշրջանի գործ են:

Երկրորդ, Փիլոնի հիշյալ մեկնութիւններին ձեռագրերում մենք համարյա միշտ հանդիպում ենք Սարկավագի «Յաղագս անկիւնաւոր թուոց»-ի հետ միասին: Այսպես է Մատենադարանի և՛ № 437, և՛ № 1480 ձեռագրերում, և՛ № 2595 ու այն ձեռագրում, որից Բրաբրիոն գրչուհին արտագրել է № 2595 ձեռագիր ժողովածուն: Բացառութիւն է կազմում սոսկ № 59 ձեռագիրը: Այս հանգամանքի վրա, ինչպես առիթ ունեցանք նշելու, ուշադրութիւն է դարձրել դեռևս Բրաբրիոն գրչուհին, որի համար այս փաստը հիմք է ծառայել Փիլոնի երկերի մեկնութիւնները Սարկավագին վերագրելու:

Երրորդ, հայտնի է, որ Հովհաննես Սարկավագը շատ լավ ծանոթ է եղել Փիլոնի աշխատութիւններին և իր դպրոցում դասավանդել է դրանք: Բացի այս, Մխիթար Այրիվանեցին իր ժամանակագրութեան մեջ նշում է, որ նա ստուգաբանել ու խմբագրել է մի շարք «նուրբ», այսինքն՝ տեսական, փիլիսոփայական բովանդակութիւն ունեցող գրքեր, որոնց թվում նաև Փիլոնի ինք դիրքը<sup>4</sup>: Սարկավագն իր աշխատութիւնների մեջ շատ անգամ է հիշատակում ու վկայակոչում Փիլոնին՝ «... որ ասացին Փիլոն և...»<sup>5</sup>, «... որպէս Փիլոն պատմէ...»<sup>6</sup> և այլն, և օգտվել է նրանից: «Հովհաննեսն իր «Յաղագս անկիւնաւոր թուոց» աշխատութեան մեջ Փիլոնի «Յաղագս տասն բանիցն» աշխատութիւնից օգտվել է տառացի, ուղղակի պատճենահանել է այն»<sup>7</sup>, — գրում

<sup>1</sup> Պետ. Մատենադարան, ձեռագիր № 2595, էջ 241բ<sup>6</sup>

<sup>2</sup> Բրաբրիոն գրչուհու այս տեսակետը ընդունել է պրոֆ. Ա. Աբրահամյանը (տե՛ս նրա, Հովհաննես Իմաստասերի մատենագրութիւնը, Երևան, 1956, էջ 58): Անշուշտ, նա այդ անելու համար ունեցել է նաև այլ հիմքեր, սակայն այդ մասին, դժբախտաբար, ոչինչ չի գրել իր աշխատութեան մեջ: Ի միջի այլոց, պրոֆ. Աբրահամյանն առաջինն է, որ հիշատակել է Մատենադարանի № 2595 ձեռագրում գտնվող Փիլոնի աշխատութիւնների մեկնութիւնների մասին՝ նրանց վրա հրավիրելով փիլիսոփայութեան պատմութեամբ զբաղվող մասնագետների ուշադրութիւնը (տե՛ս Հովհաննես Իմաստասերի մատենագրութիւնը, էջ 316):

<sup>3</sup> Ձեռագիրն արտագրվել է Ղուկաս կաթողիկոսի կողմից Կոստանդինուպոլիս քրպես նվիրակ ուղարկված Իսահակ կաթիկոսոս Գեղամացու հանձնարարութեամբ (տե՛ս ձեռագիր № 2595, էջ 2ա, 240բ—241բ, 280բ—281ա հիշատակարանները):

<sup>4</sup> Տե՛ս Մխիթարայ Այրիվանեցու պատմութիւն ժամանակագրական, Ս. Պետերբուրգ, 1867, էջ 35:

<sup>5</sup> Հովհաննես Իմաստասերի մատենագրութիւնը, էջ 241:

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 270:

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 58:

է պրոֆ. Ա. Արրահամյանը: Նա կողք-կողքի նույն էջի վրա զուգահեռ ձևով բերում է այն հատվածները Փիլոնի և Սարկավագի աշխատություններից, որոնք համընկնում են իրար<sup>1</sup>:

Զորրորդ, ավելորդ չէ նաև ասել, որ Փիլոնի երկերի մեկնությունները Սարկավագի գրչին պատկանելու օգտին է խոսում նաև մեկնությունների ոճը, որի լակոնիզմը բնորոշ է մեր հեղինակի բոլոր գործերին՝ լինեն դրանք տոմարագիտական, մաթեմատիկական, բարոյագիտական, թե կրոնա-դավանաբանական հարցերին նվիրված: Սարկավագը չի սիրում շատախոսել, ավելորդաբանել, տեղի-անտեղի ցույց տալ իր գիտելիքները: Սույն մեկնությունները աչքի են ընկնում իրենց նաև փիլիսոփայական հագեցվածությամբ: Այս վկայում է, որ նրա գրողը պետք է մոտ կանգնած լիներ փիլիսոփայություններ, քաջ տիրապետեր նրա հարցերին, այլ կերպ ասած՝ լիներ «իմաստասեր»: Իսկ մեզ հայտնի է, որ այն դարերում, երբ կատարվել են մեկնությունները, այդպիսին է եղել Հովհաննես Սարկավագը, որին ժամանակակիցները հորջորջել են նաև «իմաստասեր» մականունով: Եվ հիրավի, մենք անգամ նրա տոմարագիտական, մաթեմատիկական աշխատությունների մեջ շատ անգամ ենք հանդիպում փիլիսոփայական դեղումների:

Սակայն հիշյալ մեկնությունները Հովհաննես Իմաստասերին վերագրելիս մենք ամենից առաջ և մեծ շափով հենվում ենք այն փաստի վրա, որ Փիլոնի մեկնությունների մեջ առկա են այնպիսի գաղափարներ, որոնք, այն ճարավոր ժամանակաշրջանում, երբ պետք է կատարված լինեն այդ մեկնությունները, հատուկ են միայն Սարկավագին: Այստեղ մենք նկատի ունենք այնպիսի գաղափարներ, որոնք, նախ, սերտ կապվում են իրար հետ, բխում են մեկը մյուսից ու մտածողի հայացքների սխտեմում անփակելի ամբողջություն են կազմում և ապա՝ դրանք բացառիկ են միջնադարի պայմաններում, բնորոշ են միայն Հովհաննես Սարկավագին և հայագիտությանը հայտնի չէ այլ դարերի մի այլ մտածող, որն արտահայտեր նման հայացքներ:

Արդ տեսնենք որոնք են այդ գաղափարները:

Առաջին, Ղևոնդ Ալիշանը հենվելով Սարկավագի իրեն հայտնի աշխատությունների վրա, գրում է. «Ինքն (Սարկավագը — Գ. Գ.) ուսումնական բաներ սովորիլ և գրելու համար յայտնապէս կու պահանջէ, թէ «ամենևին բազմահմուտ պարտ է գոլ ձեռնարկողին այսմ, ոչ միայն սրբոց և աստուածաշունչն զրոց, այլև արտաբնոց»: Ասկէ այլ գեղեցիկ և հաստատուն փիլիսոփայությամբ կու պահանջէ, որ ուսումն կամ գիտութիւնն փորձով ալ ստուգուի: «Դարձեալ թէ և սոփո կիրք և վարժ, առանց փորձի՝ կարծիքն հատարմանալ ոչ կարացեն. և փորձն հաստատուն և աներկբայ... վասն զի ոչ է պարտ միայն հնագիտակ լինել, այլ և ինքնարա»<sup>2</sup>: Այստեղից որոշակիորեն հետևում է, որ Սարկավագը, նախ, գեմ է գիտական ճշմարտությունների սահմանման հարցում բացարձակ հեղինակություններ ընդունելուն և ապա, նա իմացություն պրոցեսում մեծ տեղ է տալիս փորձին և գտնում, որ մեր գիտելիքների հավաստիությունը պետք է փորձի միջոցով ստուգվի, որովհետև այն «հաստատուն և աներկբայ» է: Իր դարաշրջանում առաջավոր այս միտ-

<sup>1</sup> Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, էջ 58—59:

<sup>2</sup> Ղ. Ա. Ալիշան, Յուշիկը հանրենեաց հայոց, հատ. Բ, Վենետիկ, 1921, էջ 262: Ընդգծումն իմն է—Գ. Գ.:

ըր ըստ էութեան կրկնվում է Փիլոնի մեկնութունների մեջ, որտեղ մենք կարդում ենք. «Չեմ հայնց դիւրահաւան, որ առանց բնութեան հաւատամ ամենայն բանից և պատրիմ, զի առանց բնեւորյ և փորձելոյ չէ պատեն հաւանել ամենայն բանից»<sup>1</sup>: Մի այլ տեղում կարդում ենք. «պարտ է իմաստակացն դիտեականութիւնն գործով տեսանել առանել քան բանի»<sup>2</sup>:

Իսկ այս համաստում է Փիլոնի մեկնութունների Սարկավագին պատկանելու տեսակետը, քանի որ բանասիրութեանը դեռևս անհայտ է միջնադարյան (հատկապես 11—12-րդ դարերի) մի այլ հայ մտածող, որն արտահայտեր այսպիսի ուշագրավ միտք: Փորձի մասին Փիլոնի մեկնութունների մեջ արտահայտված այս միտքը հաստատում է նաև Հովհաննես Սարկավագի աշխատութուններից Ալիշանի բերած քաղվածքի իսկութունը, որի սկզբնաղբյուրը բանասիրութեանը դեռևս անհայտ է մնում:

Երկրորդ. Հայտնի է, որ Սարկավագի «Բան իմաստութեան ի պատճառս դրօսանաց առ ձագն, որ զաղօթանոցաւ նորա ճոռեղէր քաղցրածայն, որ կոչի սարիկ» շափածո տրակտատի մեջ արտահայտված առաջատար ու հիմնական գաղափարներից մեկն էլ այն է, թե սարյակ թռչնակի երգեցողութեան արվեստը բնածին է, բնութեանից տրված է ոչ թե սովորովի, ինչպես մարդկայինն է: Նույն այս միտքը արտահայտված է՝ պարզ ու որոշակի կերպով Փիլոնի մեկնութունների մեջ: Այստեղ կարդում ենք. «Մի՞թէ արուեստիւ և խորհրդով գործէ մեղուն և սարդն, որ ուսեալ է և կու մարթէ առնել՝ ո՛չ, այլ ի բնութենէ, առանց խորհելոյ և արուեստի ուսանելոյ»<sup>3</sup>: Ծիշտ է, այստեղ խոսքը ոչ թե թռչնակի մասին է, այլ մեղվի և սարդի, բայց ըստ էութեան գաղափարը, միտքը նույնն է:

Երրորդ. Սարկավագն իր մի հայտնի աշխատութեան մեջ («Վասն շարժման և սասանութեան երկրի»<sup>4</sup>) պայքարում է «չիմարաց» դեմ, որոնք «առասպելական ստութեան ունկն դեմն»<sup>5</sup> և ձգտում է բնագիտական բացատրութեան տալ բնութեան երևույթներին: Նույնը մենք տեսնում ենք նաև Փիլոնի գործերի մեկնութուններից մեկի մեջ: Այստեղ հեղինակ-մեկնիչը դեմ է արտահայտվում բնութեան երևույթների միատիֆիկացմանը և պայքարում է առասպելարանութեան դեմ: «Վասն կիկլոպացոց երկրին, — գրում է մեկնիչը, — զինչ որ աւեն սուտ է և առասպել»<sup>6</sup>:

Այդպիսով, մենք տեսնում ենք, որ աշխարհայացքային շատ կարևոր մի շարք հարցերում նույնութուն գոյութուն ունի Սարկավագի և Փիլոնի մեկնիչի ըմբռնումների միջև:

Պայքարը բնութեան երևույթների միատիֆիկացման դեմ և առասպելաբանութեան քննադատութունը, գիտական ճշմարտութուններ սահմանելու հարցում հեղինակութունների ժխտումը և իմացութեան պրոցեսում փորձին մեծ նշանակութուն տալը Սարկավագի հայացքների սիստեմում մի ամբողջութուն են կազմում, բխում են մեկը մյուսից ու անբախտելիորեն կապված

<sup>1</sup> Մատենադարան, ձեռագիր № 2595, էջ 250ա (ընդգծումն իմն է.—Գ. Գ.):

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 275ա (ընդգծումն իմն է.—Գ. Գ.):

<sup>3</sup> Մատենադարան, ձեռագիր № 2595, էջ 250ա: Նույն այս միտքը այլ առնչութեամբ մեկնութեան մեջ կրկնվում է մի շարք տեղերում:

<sup>4</sup> Տե՛ս Հովհաննես իմաստասերի մատենագրութունը, էջ 302—305:

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 203:

<sup>6</sup> Մատենադարան, ձեռագիր № 2595, էջ 248բ (ընդգծումն իմն է.—Գ. Գ.):

են իրար հետ: Այս գաղափարները միջնադարի պայմաններում, ինչպես արդեն ասել ենք, բացառիկ էին և դրականապես են բնորոշում միջնադարյան մտածողին: Հայտնի է, օրինակ, որ Եվրոպայում փորձին որպես ճանաչողության աղբյուրի մեծ նշանակություն է տվել առաջին անգամ Ռոջեր Բեկոնը 13-րդ դարում: Ուստի այդ առաջավոր գաղափարների համատեղ առկայությունը Սարկավազի մոտ մի կողմից, և Փիլոնի մեկնիչի մոտ մյուս կողմից, հիմք են տալիս ասելու, որ Փիլոնի աշխատությունների մեկնությունների անհայտ մեկնիչ-հեղինակը հենց Սարկավազն է:

Բացի գաղափարական բնույթի թվարկած երեք նույնություններից կարող ենք Փիլոնի գործերի մեկնություններից բերել օնտոլոգիական, իմացաբանական, բարոյագիտական հարցերին վերաբերող նաև մի շարք այլ մտքեր, որոնք համընկնում են Սարկավազի՝ բանասիրությանը հայտնի աշխատությունների մեջ արտահայտված համանման մտքերի հետ: Սակայն թվում է, դրա հարկը չի զգացվում: Բերվածն էլ բավական է եզրակացնելու համար, որ Փիլոնի աշխատությունների վերահիշյալ մեկնությունները Սարկավազի գրչին են պատկանում:

Երրորդ խումբը ամփոփում է Փիլոնի հետևյալ աշխատությունների մեկնությունները՝ 1. «Յաղագս նախախնամութեան», 2. «Յաղագս բան ունել և անասուն կենդանեացդ», 3. «Այնոցիկ որ ի լինելութեանն» (իր շորս մասերով), 4. «Կեանք իմաստնոց», 5. «Յաղագս վարուց կենաց տեսականի», 6. «Աստուածային օրինացն այլաբանութիւն»: Երրորդ խմբի մեկնությունները շափաղանց ընդարձակ են:

Այս խմբին պատկանող մեկնություններ պարունակում են Պետ. Մատենադարանի № 437, № 1053 (17-րդ դ. գրչություն), № 2059 (1599 թ. գրչություն), № 1480 (1617 թ. գրչություն), № 2379 (17-րդ դ. գրչություն), Երուսաղեմի № 172 (1756 կամ 1759 թթ. գրչություն)<sup>1</sup> և № 318 (Երզնկա, 1323 թ. գրչություն)<sup>2</sup> ձեռագրերը: Այս խմբի ձեռագրերից մի քանիսը՝ № № 1053, 2059, 172, որոնք ավելի ուշ շրջանի են, Փիլոնի երկերի մեկնությունների հետ ընդգրկում են նաև Փիլոնի ճառերի մեկնությունները երկրորդ խմբից: Դրանք յոթ ճառերի շափաղանց համառոտ, կարճ մեկնություններ են, № 2059 ձեռագրում՝ ընդամենը 10 թերթ (էջ 123ա—133ա), մինչդեռ ամբողջ մեկնությունը՝ 216 երկսյուն թերթ է: Ըստ երևույթին այդ կատարվել է գրիչների մեղքով, որոնք ցանկանալով կազմել Փիլոնի բոլոր աշխատությունների մեկնություններն ընդգրկող ձեռագիր ժողովածուներ՝ միավորել են երկու տարբեր անձերի կողմից կատարված մեկնությունները: Պատահական չէ այն հանգամանքը, որ № 1480 ձեռագրում, որը պարունակում է երկրորդ և երրորդ խմբի մեկնություններն էլ, այդ յոթ ճառերը և Փիլոնի մի աշխատության մեկնություն, որոնք դասվում են երկրորդ խմբի մեջ, առանձնացված են և տրվում են երրորդ խմբից բաժան: Մոտավորապես նույնն է նաև երկու խմբի մեկնություններ պարունակող № 437 ձեռագրում:

<sup>1</sup> Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց, հատ. 2, էջ 111—112:

<sup>2</sup> Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց, հատ. 3, էջ 185: Հավանաբար Երուսաղեմի № 172 ձեռագրի նյութերի մի մասը արտագրված են № 318 ձեռագրից, քանի որ երկու ձեռագրերում եղած նյութերի դերակշռող մասը հիմնականում կրկնվում են: № 172 ձեռագրում № 318-ի սկզբի մեկ աշխատությունը փոխարինված է ուրիշով և վերջից բաց է թողնված երեք աշխատություն, մնացյալ նյութերը համընկնում են նաև դասավորությամբ:



Ձեռագրում այս խմբին պատկանող մեկնությունների հեղինակի մասին ևս որոշակի հիշատակություն չկա, սակայն մի քանի փաստեր ցույց են տալիս, որ այն պետք է կատարված լինի Հովհաննես Երզնկացի Պլուզի կողմից:

Զարբհանալյանը իր «Հայկական թարգմանութիւնք նախնեաց» աշխատության մեջ, բերելով Փիլոնի հայերենի թարգմանված աշխատությունների ցանկը, գրում է. «Երեքտասաներորդ դարու գրչագրի մը մէջ՝ յորում կան և լուծմունք գրոց Փիլոնի, հետևեալ յիշատակարանը կը կարդանք. «Մաղթանս աղաշանաց մատուցանեմք վերլուծողաց այսմ մատենի մեծ իմաստնոյն Փիլոնի: Որք առ ի սմանէ ազատութիւնս ինչ գտանէք՝ թողութիւն յանցանաց հայցեցէք յԱստուծոյ յոքնիմաստ հոկտորին, որոյ անուն կոչի Յովհաննէս Բարունի և մականունն Եզնկայեցի և ամենայն արեան մերձաւորաց իւրոց... և անարժան գծողիս պիտականուն քահանայ Վարդան սպասաւոր բանի»<sup>1</sup>: Հենվելով այս հիշատակարանի վրա Զարբհանալյանը գրում է. «Երեքտասաներորդ դարու Երզնկացին Յովհաննէս՝ լուծմունք մը յորինած է Փիլոնեան գրոց»<sup>2</sup>:

Փիլոնի աշխատությունների այս խմբի մեկնություններն ուսումնասիրելիս մենք հանդիպեցինք նաև հետևյալ փաստին: Մեկնիչը, շարագրելով Փիլոնի և Ալեքսանդրի վեճը աշխարհի առաջացման, նյութի, ժամանակի ու տեղի (տարածության) փիլիսոփայական հարցերի մասին, իր տեսակետն արտահայտելուց առաջ գրում է. «Եւ ես Յովհանն այսպէս պատասխանեմ քեզ, ով Աղէքսանդրէ...»<sup>3</sup>: Կարծում ենք, որ այս «Յովհան»-ը ինքը Հովհաննես Պլուզ Երզնկացին է, քանի որ բացի անվան հիշատակումից կան նաև մի քանի փաստեր, որոնք ցույց են տալիս, թե այս խմբի մեկնությունները կատարվել են ճիշտ այն ժամանակաշրջանում, երբ ապրել ու ստեղծագործել է Հովհաննես Երզնկացի Պլուզը: Այսպես, մեկնության մեջ տեղ է գտել մի այսպիսի պատմական փաստ. «զի որ յԾգիպտոս նստէր Պաղոմէոս կոչէր՝ Պաղոմէոս Ղազիտիոս, որպէս բրինձ (պրինց — Գ. Գ.) Ունաղ, բրինձ Մեմունդ (իմա Պեմունդ — Գ. Գ.)»<sup>4</sup>: Հեղինակ-մեկնիչը այստեղ՝ անցյալը ներկայով հաստատելու համար, դիմում է պատմական անալոգիային և հիշատակում է պրինց Պեմունդին: Իսկ հայտնի է, որ Պեմունդները (կամ Բոհեմունդները) եղել են Անտիոքի իշխաններ, որոնց տոհմը սկսվում է 12-րդ դարի վերջին տասնամյակներից և շարունակվում մինչև 13-րդ դարի 80—90-ական թվականները<sup>5</sup>: Այս փաստը ասում է այն մասին, որ մեկնությունը պետք է կատարված լինի 13-րդ դարում ապրած մեկի կողմից:

<sup>1</sup> Զարբհանալյան, Հայկական թարգմանութիւնք նախնեաց, էջ 744—745 (ընդգծումըն իմն է—Գ. Գ.): Մույն հիշատակարանը բերում է նաև Լ. Մ. Ավգերյանը: Տե՛ս Փիլոնի Երբայեցոյ մնացորդք ի Հայս, գիրք 2, Վենետիկ, 1826, էջ 622:

<sup>2</sup> Զարբհանալյան, Հայկական թարգմանութիւնք նախնեաց, էջ 747:

<sup>3</sup> Մատենադարան, ձեռագիր 1053, էջ 273ա, հմմտ. ձեռագիր 2059, էջ 33ա:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 288բ:

<sup>5</sup> Տե՛ս Համառոտ պատմութիւնն ժամանակաց հաւաքեալ ի դմազան պատմութեանց, այսինքն՝ ի հայոց, ի ֆռանկաց, ի յունաց, ի յասորոց գրեանց, աշխատութեամբ իմոյ, ծառայիս Քրիստոսի աստուծոյ Հիմնոյ տեառն Կուսիկոսոյ, ի թվականին հայոց Չեկ (1296), (Մանր ժամանակագրություններ, կազմեց Վ. Ա. Հակոբյան, հատ. 1, էջ 77—84, նաև հատ 2, էջ 60—62, 65, 68, 71, 76, 105—106, 108—110):

Այսպիսով, հիմնվելով վերը բերված տվյալների վրա կարելի է համոզվել, որ Փիլոնի աշխատութիւնների երրորդ խմբի մեկնիչը՝ Հովհաննես Պլուզ Երզնկացին է<sup>1</sup>:

Այժմ տեսնենք, թե ինչ արժեք ունեն Փիլոնի աշխատութիւնների մեկնութիւնները հայ փիլիսոփայական մտքի պատմութեան տեսակետից:



Փիլոնի աշխատութիւններում, իհարկե, հիմնականում աստվածաբանական հարցեր են բննարկվում, ուստի նրանց մեկնութիւններն էլ գերազանցապես աստվածաբանական բնույթ ունեն: Սակայն, բացի աստվածաբանական հարցերից, ինչպես Փիլոնի երկերում, այնպես էլ նրանց մեկնութիւնների մեջ բազմաթիվ այլ հարցեր են արծարծվում: Փիլոնը, լինելով ժամանակի զարգացած մարդկանցից մեկը, որն աշխատում էր անտիկ աշխարհի կուլտուրական ու գաղափարական նվաճումներն օգտագործել քրիստոնեության գաղափարախոսութեան հիմնավորման համար, իր աշխատութիւններում բննարկում էր փիլիսոփայական, հոգեբանական, հասարակական, բարոյագիտական, բնագիտական, մաթեմատիկական, տիեզերագիտական և այլ բազմաթիվ հարցեր: Փիլոնի կողմից բարձրացված այդ հարցերը հարկադրում էին հայ մեկնիչներին իրենց կարծիքն արտահայտելու դրանց մասին և, դրանով իսկ, բացահայտելու իրենց ըմբռնումները: Հասկանալի է, որ այսպիսի պարագաներում Փիլոնի աշխատութիւնների հայ մեկնութիւնները ձեռք են բերում ճանաչողական արժեք և շեն կարող դուրս մնալ հայ ժողովրդի թողած կուլտուրական-գաղափարական ժառանգութեան գանձարանից, շուտումնասիրվել ու ըստ արժանվույն չգնահատվել:

Փիլոնի գործերի մեկնութիւններն ուսումնասիրելիս, հատկապես այն արժեքավորելիս, իհարկե, հարցը չի հանգում նրան, թե որքան հարազատորեն և կամ ինչ դիրքերից է մեկնաբանվում Փիլոնը, ինչպես է մեկնվում Փիլոնի կողմից առաջադրված այս կամ այն հարցը: Մեզ թվում է, որ այս չէ էականը: Մեզ համար հետաքրքրականը հայ մեկնիչ-մատենագիրների արտահայտած ըմբռնումներն են, որոնք հնարավորութիւն են տալիս գաղափար կազմելու, առավել համակողմանիորեն ներկայացնելու հայ միջնադարյան մտածողների աշխարհայեցողութիւնը:

Այս տեսակետից բացառիկ արժեք ունեն Փիլոնի այն մեկնութիւնները, որոնց հեղինակն է Հովհաննես Սարկավազը: Հայտնի է, որ մինչև այժմ հայագիտութեան կողմից Սարկավազի աշխարհայեցողը չափազանց աղքատիկ է

<sup>1</sup> Հայագիտութեան մեջ մինչև վերջերս նույնացվել են Հովհաննես Երզնկացի Պլուզը և Հովհաննես Երզնկացի Մործորեցին, մինչդեռ դրանք տարբեր հեղինակներ են: Վերջինիս՝ Մործորեցու անունով մեզ հասած գործերը շարադրված են 14-րդ դարում: (Տե՛ս Ա. Սրապյան, Պլուզ և Մործորեցի Հովհաննես Երզնկացիներ, «Տեղեկագիր» Հայկական ՍՍԻ ԳԱ, Հաս. գիտ., 1957, № 5, էջ 117—124):

<sup>2</sup> միջի այլոց Ղազար Զահեկեցին իր կազմած հայ մատենագիրների ցանկում Հովհաննես Երզնկացի Պլուզին տարբերել է Հովհաննես Երզնկացի Մործորեցուց: Տե՛ս Գիրք աստուածաբանական, որ կոչի դրախտ ցանկալի, շարադրեալ ի Ղազարու աստուածաբան վարդապետէ Ծահեկեցու, Կոստանդինուպոլիս, 1735, էջ 628 (Հովհաննես Երզնկացի Պլուզ), էջ 638 (Հովհաննես Մործորեցի):

էութեան մեջ: «Մտաց աչք յուով տեսական զօրութիւն ունի»<sup>1</sup>, քան ինքը աչքը, ասում է Սարկավազը: Նա գտնում է, որ առանց բանականութեան ակտիվ գործունեութեան զգայարանները պասսիվ են: Զգայարանները արտաքին աշխարհից մեզ տպավորութիւններ են տալիս մտքի միջնորդութեան դեպքում միայն, իրենց «դուռը» բաց են անում արտաքին աշխարհի առաջ այն ժամանակ, երբ այդ անելու համար զգայարաններին թելադրում է միտքը: «Միտքն որչափ ի յինքեան է և չէ ի զգալիսս՝ զգայութիւնքն հնազանդին նմա»<sup>2</sup>: Այսինքն՝ միտքը զգայութեան նկատմամբ ակտիվ է, իսկ զգայութեանը մտքի՝ պասսիվ: Այս պատճառով՝ «զգայութիւնքն է կին խորհրդոյն, զի խորհուրդն սերմանէ և զգայութիւնքն կրեն»<sup>3</sup>: Սակայն, միտքն առանց զգայութեան տվյալների անզոր է, նա չի կարող «գործել», եթե զգայարանները նյութ չտան նրան: «Զի միտքն զգալիօքն շարժի, վասն որոյ և շարժէ միտքն նախքան զգալ»<sup>4</sup>, — գրում է նա: Այսպիսով, Սարկավազը պաշտպանում է զգայութեան և բանականութեան փոխադարձ պայմանավորվածութեան սկզբունքը, իմացութեան պրոցեսը դիտում է որպէս բանականութեան և զգայարանների գործունեութեան արդյունք:

Սարկավազը ճանաչողութեան պրոցեսում մեծ տեղ է տալիս փորձին: Նա դեմ է արտահայտվում այն «իմաստակներին», որոնք ճշմարտութիւնը ձրգտում են հավաստել զուտ խոհականութեամբ, առանց փորձով ու գործով այն ապացուցելու: «Պարտ է իմաստակացն զխոհականութիւն գործովք տեսանել, առաւել քան բանիս»<sup>5</sup>, — գրում է նա: Նա դեմ է դիտական ճշմարտութիւններ սահմանելու հարցում բացարձակ հեղինակութիւնների ճանաչմանը և գրտնում է, որ փորձը, քննութիւնը պետք է հիմք ծառայի դիտական ճշմարտութիւնների հավաստման համար: «Զեմ հայնց դիրահաւան, — գրում է նա, — որ առանց քննութեան հաւատամ ամենայն բանից և պատրիմ, զի առանց քննելոյ և փորձելոյ չէ պատեհ հաւանել ամենայն բանից»<sup>6</sup>:

Սակայն փորձի, քննութեան դերը, ըստ Սարկավազի, դրանով չի սահմանափակվում: Փորձի նպատակն ու նշանակութիւնը միայն այն չէ, որպէսզի ստուգենք մեր գիտելիքների ճշմարտացիութեան աստիճանը: Փորձը և քննութիւնը հիմք են հանդիսանում բնութեան նոր երևույթների և իրերի բովանդակութեան ու էութեան բացահայտման համար, նոր օրինաչափութիւնների ճանաչման համար: Քանի որ բնութեան մեջ երևույթներն ու իրերը փոխադարձորեն կապված են, պայմանավորում ու հաջորդում են իրար, մեկը առաջացնում է մյուսը՝ «առանց պատճառի չկայ իրք»<sup>7</sup>, ուստի մի երևույթի, իրի ուսումնասիրութիւնը և ճանաչումը հիմք է հանդիսանում այդ երևույթից և իրից բխող հետեանքի ուսումնասիրութեան և ճանաչման համար: «Տեսանելի օրինակաւ, — գրում է Սարկավազը, — իմանամք և քննեմք զառաջիկայն, որ լինելոց է, զի ապականին և նոքա, որպէս զայն, որ տեսանեմք»<sup>8</sup>:

<sup>1</sup> Մատենագարան, ձեռագիր № 2595, էջ 268ա:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 259ա:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 252ա:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 260բ:

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 275ա:

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 250ա:

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 247ա:

<sup>8</sup> Նույն տեղում, էջ 242բ:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք Փիլոնի աշխատությունների Սարկավագի մեկնությունները բավական նյութ են տալիս նրա իմացաբանական հայացքները շարադրելու համար:

Սարկավագի հայացքները վեր հանելու տեսակետից պակաս հետաքրքիրական չեն նաև այն նյութերը, որոնք վերաբերում են սոցիալ-բարոյագիտական հարցերին: Նա, որպես միջնադարյան մտածող ու գործիչ իր դարի դավաճին է, ֆեոդալական հարաբերությունների պաշտպան: Նա գրում է. «Թէպէտ բանականութեամբ մի ասեն իշխանն և ուամիկն, դատաւորն և բարացին, սակայն գործով որոշեալ են ի միմեանց, և թէ որ հաւասարէ զնոսա և ընդ միմեանս զուգէ՝ մոլորի ի ճշմարիտ կարգէն»<sup>1</sup>: Սակայն, մեր մեկնիչ-հեղինակը միաժամանակ հանդես է գալիս մարդկանց միմյանց հետ սիրով միաբանելու դրույթով՝ «Մարդիկ պարտին, — գրում է նա, — ոչ միայն խառն բնակիլ, այլև սիրով միաբանել»<sup>2</sup>: Մարդասիրությունը բարձր դասելով, նա այն հավասարեցնում և նույնացնում է աստվածասիրության հետ: «Ազգակից են այս երկու առաքինութիւնքս միմեանց՝ աստուածասիրութիւնն և մարդասիրութիւնն»<sup>3</sup>:

Հանդես գալով ֆեոդալական կարգերի պաշտպանությամբ, սակայն, Սարկավագը բողոքում է հարուստների կողմից աղքատների նկատմամբ անզույժ, անմարդկային վերաբերմունքի դեմ: Նա դժգոհում է այն փաստից, որ «գորաւոր մարդիկն ի վերայ տկարագունից ելանեն»<sup>4</sup>: Հետաքրքրական է հետևյալ միտքը՝ «Այնոցիկ, որ պայծառ և պատուական զգեստիւք զարդարեալ են զինքեանս ի բաղաքի և հպարտանան ի վերայ աղքատաց և ծառայեցուցանեն՝ իբրև զծիս ի դաղագս լծեն շարշարելով նոսա, երկրպագեն ունայն կարծեաց»<sup>5</sup>: Սարկավագը հասարակության մեջ գերադասում է սոցիալական միջին դրույթները: «Համեստ հոգին, — գրում է նա, — ոչ ընտրէ զվերին ծայր բարձրութեանն և ոչ դառաւել ցածուն խոնարհելն, այլ զմիջակն»<sup>6</sup>:

Մարդու բարոյական կամ անբարոյական լինելը երևան է գալիս մարդու գործունեության յամանակ, ուստի մարդու բարոյական բնորոշումը կապված է նրա գործունեության հետ: Այսպես՝ երբ մարդ ըստ էության շար է, բայց դեռ գործով չի դրսևորել իր շարությունը՝ «գործով չյայտնէ», շարը նրա մեջ պտտենցիալ վիճակում է՝ «գորութեամբ շարն կայ ի մարդն», ապա այդպիսի մարդուն դեռ չի կարելի շար համարել, նրան դեռ «բարին առաջնորդէ»: Իսկ երբ մարդը իր գործունեությամբ երևան է բերում իր շար հատկանիշը, ապա բարին «զիւր տեղին փոխէ»: Հովհաննես Սարկավագը գրում է. «բանգի որչափ գորութեամբ շարն կայ ի մարդն, բայց գործով չյայտնէ՝ բարին առաջնորդէ, իսկ չորժամ գործով երևի՝ յանժամ բարին զիւր խրատն արգելու և զիւր տեղին փոխէ և խոյս տայ ի խնամարկութենէ»<sup>7</sup>: Մարդու բարոյական բնորոշումը տալիս, սակայն, շպետք է ելնել մարդու գործունեության եզակի փաստից, որովհետև անհատը, ըստ էության բարի լինելով, կարող է սխալ-

<sup>1</sup> Մատենադարան, ձեռագիր № 2595, էջ 261բ:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 274բ:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 270բ:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 255բ:

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 263բ:

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 259ա:

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 255ա:

էութեան մեջ: «Մտաց աչք յուզվ տեսական զօրութիւն ունի»<sup>1</sup>, քան ինքը աչքը, ասում է Սարկավազը: Նա գտնում է, որ առանց բանականութեան ակտիվ գործունեութեան զգայարանները պասսիվ են: Զգայարանները արտաքին աշխարհից մեզ տպավորութիւններ են տալիս մտքի միջնորդութեան ղեկավարմամբ, իրենց «գուռը» բաց են անում արտաքին աշխարհի առաջ այն ժամանակ, երբ այդ անելու համար զգայարաններին թելադրում է միտքը: «Միտքն որչափ ի յինքեան է և չէ ի զգալիսս՝ զգայութիւնքն հնազանդին նմա»<sup>2</sup>: Այսինքն՝ միտքը զգայութեան նկատմամբ ակտիվ է, իսկ զգայութեանը մտքին՝ պասսիվ: Այս պատճառով՝ «զգայութիւնքն է կին խորհրդոյն, զի խորհուրդն սերմանէ և զգայութիւնքն կրեն»<sup>3</sup>: Սակայն, միտքն առանց զգայութեան տվյալների անզօր է, նա չի կարող «գործել», եթէ զգայարանները նյութ չտան նրան: «Զի միտքն զգալիօքն շարժի, վասն որոյ և շարժէ միտքն նախքան զգալ»<sup>4</sup>, — գրում է նա: Այսպիսով, Սարկավազը պաշտպանում է զգայութեան և բանականութեան փոխադարձ պայմանավորվածութեան սկզբունքը, իմացութեան պրոցեսը դիտում է որպէս բանականութեան և զգայարանների գործունեութեան արդյունք:

Սարկավազը ճանաչողութեան պրոցեսում մեծ տեղ է տալիս փորձին: Նա դեմ է արտահայտվում այն «իմաստակներին», որոնք ճշմարտութիւնը ձրգտում են հավաստել զուտ խոհականութեամբ, առանց փորձով ու գործով այն ապացուցելու: «Պարտ է իմաստակացն գիտականութիւն գործովք տեսանել, առաւել քան բանիւ»<sup>5</sup>, — գրում է նա: Նա դեմ է դիտական ճշմարտութիւնների սահմանելու հարցում բացարձակ հեղինակութիւնների ճանաչմանը և գրտնում է, որ փորձը, քննութիւնը պետք է հիմք ծառայի դիտական ճշմարտութիւնների հավաստման համար: «Զեմ հայնց դիրահաւան, — գրում է նա, — որ առանց քննութեան հաւատամ ամենայն բանից և պատրիմ, զի առանց քննելոյ և փորձելոյ չէ պատեհ հաւանել ամենայն բանից»<sup>6</sup>:

Սակայն փորձի, քննութեան դերը, ըստ Սարկավազի, դրանով չի սահմանափակվում: Փորձի նպատակն ու նշանակութիւնը միայն այն չէ, որպէսզի ստուգենք մեր գիտելիքների ճշմարտացիութեան աստիճանը: Փորձը և քննութիւնը հիմք են հանդիսանում քննութեան նոր երևույթների և իրերի բովանդակութեան ու էութեան բացահայտման համար, նոր օրինաչափութիւնների ճանաչման համար: Քանի որ քննութեան մեջ երևույթներն ու իրերը փոխադարձորեն կապված են, պայմանավորում ու հաշորդում են իրար, մեկը առաջացնում է մյուսը՝ «առանց պատճառի չկայ իրք»<sup>7</sup>, ուստի մի երևույթի, իրի ուսումնասիրութիւնը և ճանաչումը հիմք է հանդիսանում այդ երևույթից և իրից բխող հետեանքի ուսումնասիրութեան և ճանաչման համար: «Տեսանելի օրինակաւ, — գրում է Սարկավազը, — իմանամք և քննեմք զառաջիկայն, որ լինելոց է, զի ապականին և նորա, որպէս զայն, որ տեսանեմք»<sup>8</sup>:

<sup>1</sup> Մատենադարան, ձեռագիր № 2595, էջ 268ա:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 259ա:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 252ա:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 260բ:

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 275ա:

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 250ա:

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 247ա:

<sup>8</sup> Նույն տեղում, էջ 242բ:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք Փիլոնի աշխատությունների Սարկավագի մեկնությունները բավական նյութ են տալիս նրա իմացաբանական հայացքները շարադրելու համար:

Սարկավագի հայացքները վեր հանելու տեսակետից պակաս հետաքրքրական չեն նաև այն նյութերը, որոնք վերաբերում են սոցիալ-բարոյագիտական հարցերին: Նա, որպես միջնադարյան մտածող ու գործիչ իր դարի դավանին է, ֆեոդալական հարաբերությունների պաշտպան: Նա գրում է. «Թէպէտ բանականութեամբ մի ասեն իշխանն և ուամիկն, դատաւորն և բարձրացին, սակայն գործով որոշեալ են ի միմեանց, և թէ որ հաւասարէ զնոսա և բնդ միմեանս զուգէ՝ մոլորի ի ճշմարիտ կարգէն»<sup>1</sup>: Սակայն, մեր մեկնիչ-հեղինակը միաժամանակ հանդես է գալիս մարդկանց միմյանց հետ սիրով միաբանելու դրույթով՝ «Մարդիկ պարտին, — գրում է նա, — ոչ միայն խառն բնակիլ, այլև սիրով միաբանել»<sup>2</sup>: Մարդասիրությունը բարձր դասելով, նա այն հավասարեցնում և նույնացնում է աստվածասիրության հետ: «Ազգակից են այս երկու առաքինութիւնքս միմեանց՝ աստուածասիրութիւնն և մարդասիրութիւնն»<sup>3</sup>:

Հանդես գալով ֆեոդալական կարգերի պաշտպանությամբ, սակայն, Սարկավագը բողոքում է հարուստների կողմից աղքատների նկատմամբ անդուստ, անմարդկային վերաբերմունքի դեմ: Նա դժգոհում է այն փաստից, որ «գորաւոր մարդիկն ի վերայ տկարագունից ելանն»<sup>4</sup>: Հետաքրքրական է հետևյալ միտքը՝ «Այնոցիկ, որ պայծառ և պատուական զգեստիւք զարդարեալ են զինքեանս ի բաղաքի և հպարտանան ի վերայ աղքատաց և ծառայեցուցանեն՝ իբրև զձիս ի դաղագս լծեն շարշարելով նոսա, երկրպագեն ունայն կարծեաց»<sup>5</sup>: Սարկավագը հասարակության մեջ գերադասում է սոցիալական միջին դրույթները: «Համեստ հոգին, — գրում է նա, — ոչ բնտրէ զվերին ծայր բարձրութեանն և ոչ դառաւել ցածուն խոնարհելն, այլ զմիջակն»<sup>6</sup>:

Մարդու բարոյական կամ անբարոյական լինելը երևան է գալիս մարդու գործունեության ծամանակ, ուստի մարդու բարոյական բնորոշումը կապված է նրա գործունեության հետ: Այսպես՝ երբ մարդ ըստ էության շար է, բայց դեռ գործով չի դրսևորել իր շարությունը՝ «գործով չյայտնէ», շարը նրա մեջ պտտենցիալ վիճակում է՝ «գորութեամբ շարն կայ ի մարդն», ապա այդպիսի մարդուն դեռ չի կարելի շար համարել, նրան դեռ «բարին առաջնորդէ»: Իսկ երբ մարդը իր գործունեությամբ երևան է բերում իր շար հատկանիշը, ապա բարին «զիւր տեղին փոխէ»: Հովհաննես Սարկավագը գրում է. «բանդի որչափ զօրութեամբ շարն կայ ի մարդն, բայց գործով չյայտնէ՝ բարին առաջնորդէ, իսկ յորժամ գործով երևի՝ յանժամ բարին զիւր խրատն արգելու և զիւր տեղին փոխէ և խոյս տայ ի խնամարկութենէ»<sup>7</sup>: Մարդու բարոյական բնորոշումը տալիս, սակայն, շպետք է ելնել մարդու գործունեության եղակի փաստից, որովհետև անհատը, ըստ էության բարի լինելով, կարող է սխալ-

<sup>1</sup> Մատենադարան, ձեռագիր № 2595, էջ 261բ:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 274բ:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 270բ:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 255բ:

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 263բ:

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 259ա:

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 255ա:

մամբ շարիք գործել՝ ինքն էլ չգիտակցելով և չցանկանալով այդ: «Արդարոցն յանցանքն ոչ եթէ յառաջախնամ լինի և ապա գործէ, այլ զոր բարի իմանայ կարծելով և ի յայն հանդիպի սխալեալ»<sup>1</sup>, — ասում է Սարկավագը: Այն անհատը, որը գիտակցարար է մեղանշում և շարիք գործում՝ արժանի է պատժի, իսկ այն՝ որ իր կամքից անկախ, «ակամա» է շարիքի ու թշվառութեան պատճառ դառնում՝ կարող է ներվել: «Որ ակամայ ի թշուառութիւն անկանի՝ ողորմութեան արժանի է, իսկ որ կամաւ մեղանշէ և թշուառանայ՝ չէ արժանի ողորմութեան»<sup>2</sup>: Սարկավագը գտնում է, որ «չէ պատեհ գործել զառաքինութիւնն և ի վերայ պարծիլ»<sup>3</sup>, այսինքն՝ առաքինի մարդը իր բարոյական արարքների համար չպետք է պարծենա. նա պետք է համեստ լինի:

Որոշ հետաքրքրություն են ներկայացնում մեկնությունների մեջ տեղ գտած տիեզերագիտական մտքերը: Այսպես՝ ըստ մեկնության երկիրը կլոր է, շրջապատված օդով և հրով՝ «բոլոր է և շուրջ է զնովալ օդ և հուր»<sup>4</sup>, գրուելում է տիեզերքի կենտրոնում և բոլոր աստղերն ու մոլորակները, ինչպես նաև արեգակը պտտվում են նրա շուրջը: «Ճախարակապէս երկինքն շրջի և երկիրս որպէս գունդ ի միջին է»<sup>5</sup>: Պատկերավոր ձևով Սարկավագը հետևյալ կերպ է արտահայտում իր այս տեսակետը. «որպէս ջահր մի, որ յամենայն կողմանց թևօքն պատեալ ունի զգունդն, այնպէս և երկինքն՝ զերկիրս, և այս մեծ և սրանշելի տեսութիւն ունի»<sup>6</sup>:

Համառոտակի սրանք են աշխարհայացքային նշանակություն ունեցող այն մտքերը, որոնք արտահայտվում են Փիլոնի աշխատությունների Հովհաննես Սարկավագին պատկանող մեկնությունների մեջ: Ինչպես տեսնում ենք դրանք՝ մեր հեղինակի ըմբռնումները պարզելու տեսակետից լուրջ նշանակություն ունեն:

Հետաքրքրական են և արժեք են ներկայացնում նաև Փիլոնի այն մեկնությունները, որոնք պատկանում են Հովհաննես Պլուզ Երզնկացու գրչին: Պետք է նկատել, սակայն, որ Երզնկացու մեկնությունները, իրենց ընդարձակության համեմատ, շունեն այնչափ առատ փիլիսոփայական, սոցիալ-բարոյագիտական մտքեր, որչափ Սարկավագինը: Այսուամենայնիվ, Երզնկացու մեկնությունները ևս բավականաչափ նյութ են տալիս նրա փիլիսոփայական հայացքների մի շարք կողմերը պարզելու համար: Երզնկացին գտնում է, որ սխալվում են նրանք, որոնք պաշտպանում են այն կարծիքը, թե նյութը «անզարդ և անձև» էր և աստծո միջամտությամբ «անտեսակ նիւթն որակացեալ տեսակացաւ»<sup>7</sup>: Այս տեսակետի պաշտպանները, շարունակում է հեղինակ-մեկնիչը, ուրեմն ընդունում են, որ «իսկակից աստուծոյ զանզարդ է զանձև նիւթըն և միայն զարդ և որակ առել և ձևք անձևքն և ոչ ի նմանէ գոյացան, քանզի ըստ նոցա ոչ արար աստուած զաշխարհս, այլ զարդարեաց: Ապա թէ իմաստուն արարչագործութիւն աշխարհիս այս են, որ միայն գեղեցկութիւն գործեաց և նիւթոյն, որ իսկակից էր նմա, ըստ ձեզ, զյոյժ գեղեցիկ տեսիլն ետ, և ոչ զառնելն և երբ առնել սկսաւ զաշխարհս ոչ թէ գոյացոյց, այլ զան-

<sup>1</sup> Մատենադարան, ձեռագիր № 2595, էջ 255ա:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 274ա:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 258բ:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 246բ:

<sup>5</sup> Նույն տեղում:

<sup>6</sup> Նույն տեղում:

<sup>7</sup> Մատենադարան, ձեռագիր № 1053, էջ 247բ:

զարդն և զանդասն և զանձեն և զսխալաշարքն գեղեցկակերպացոյց»<sup>1</sup> և այլն: Նյութը և աստված ոչ թե իրարից անկախ են գոյություն ունեցել, այլ՝ միասին, նյութը գոյություն է ունեցել աստծո մեջ:

Այսպիսին է հեղինակ-մեկնիչի կրոնա-իդեալիստական ըմբռնումը աշխարհի առաջացման մասին: Սակայն մի այլ տեղ, խոսելով ստեղծագործության մասին ընդհանրապես և համեմատություն կատարելով արհեստավորի և աստծո միջև՝ որպես ստեղծագործողների, գրում է. «զի արուեստաւորքն ոչ թէ զնիւթն ինքեանք ծնանին, որպէս պատկերագործն զպղինձ ոչ ստեղծանէ, այլ առեալ՝ պատկեր յարինէ, ըստ այսմ արինակի՝ ոչ թէ աստուած զնիւթն ինքն ծնաւ, այլ մշտնջենաւոր»<sup>2</sup>: Ակնհայտ է, որ Երզնկացին, քննադատելով նրանց, որոնք ընդունում են նյութի և աստծո միաժամանակյա գոյությունը, այստեղ համաձայնվում է նրանց հետ:

Մեկնության մեջ շարադրվում են հունական փիլիսոփաների տեսակետները աշխարհի առաջացման համար հիմք հանդիսացած նախասկզբնական նյութի մասին: Այդ մասը հետաքրքրական է այն առումով, որ ցույց է տալիս, թե ինչպես էին միջնադարյան հայ մտածողները հասկանում հունական փիլիսոփաների ուսմունքը: «Թալէս զջուր ասաց առաջին և ի նմանէ զայլ տարերս, Անաքսիմանդրոս՝ զանբաւէ, այսինքն՝ զանդունդս ասաց սկիզբն և ի նմանէ զայլքն, Անաքսամէնես՝ զաւղ առաջին և զայլն ի սմանէ, Անաքսագորաս՝ զնմանամասունս, այս է նմանամասունքն՝ ջերմութիւն աւոյ նման է ջերմութեան հրոյ, և գիշութիւն ջրոյ՝ աւոյ գիշութեան, և ցրտութիւն ջրոյ՝ երկրի, և շորութիւն երկրի՝ հրոյ, ի սոցանէ ասաց լինել զաշխարհս: Պիթագոր ասէ զթիւս»<sup>3</sup> և այլն:

Փիլոնի աշխատությունների մեկնությունների կապակցությամբ, անդրադառնալով բնության և մարդու նկատմամբ աստծո «նախախնամության» հարցին, Հովհաննես Երզնկացին արտահայտում է ուշադրության արժանի մի շարք մտքեր:

Երզնկացին, իհարկե, չի համարձակվում բացահայտորեն ժխտել կրոնի և եկեղեցու կողմից սրբագործված այն սկզբունքը, ըստ որի աստված նախախնամում է բնության բոլոր երևույթները, շնայած որ տեսնում է աշխարհի անիրական լինելն ու անհեթեթությունը: Հետևելով Ալեքսանդրոսին, որը Փիլոնի «Յաղագս նախախնամութեան» պոլեմիկ բնույթի աշխատության մեջ հանդես է գալիս որպես անտիկ մատերիալիստական-դետերմինիստական ուսմունքի արտահայտիչ և որի դեմ Փիլոնը իդեալիստական-պրովիդենցիալիստական դիրքերից բանավեճ է մղում, Երզնկացին գրում է. «Ասացին, թէ դոյ նախախնամութիւն, ընդէ՛ր սաստիկ արկածք ջրոց ի վերայ բուսոց և տնկոց լինի շրջմանէ անձրևաց և ապականի: Եւ է երբեմն, զի անշափ տուրս տա պտղոց երկիր՝ յանձրևաց և է երբեմն, զի ի սմանէ անձրևաց նուազութիւն պտղոց: Երբեմն կարկուտ զամենայն ինչ ձախեն, անբարիշտք և արջ դարք զոյգ պատուհաս կրեն: Ասեն այս՝ ե՛րբ է այս նախախնամութեան գործ և թէ ընդէ՛ր լինին այս»<sup>4</sup>: Երզնկացին աշխատում է խուսափել այս հարցերին ուղղակի պատասխան տալուց: Ավելի լավ է ուսանել և հասկանալ դրա

<sup>1</sup> Մասենադարան, ձեռագիր № 1053, էջ 241ր:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 271ր:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 250ա:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 252ր:



պատճառները, քան հակառակվել՝ «զի ուսանել կամել լաւ է քան հակառակել»<sup>1</sup>, — ասում է նա:

Քայց շհակառակվել պահանջելով հարցը շի սպառվում: Հեղինակը ինքր ևս մտորումների մեջ է, թե արդյոք ինչո՞վ բացատրել նաև այն, որ աստված ստեղծելով և մարդուն և կենդանիներին, վերջիններիս տանջում է՝ թույլ տալով, որ կեր դառնան մարդուն: Մի՞թե այս էլ պետք է նախախնամութեամբ բացատրել<sup>2</sup>: Ինքնին հասկանալի է, որ այսպիսի հարցադրումները և կասկածները, որ առաջադրվում են նրա կողմից, վատ են օգնում նախախնամութեանը շհակառակվելու նրա պահանջին:

Վերջապես, ձգտելով դուրս գալ այդ հակասություններից, Երզնկացին սահմանափակում է աստծո նախախնամութեանը բնութեան երևույթների նկատմամբ. նա դտնում է, որ ամեն ինչի վրա չէ, որ աստված նախախնամում է: «է ինչ, որ յանեղ նիւթոյն ի նախախնամութենէն աստուծոյ ծնանի և ապականի և, որ ըստ կարգի այս լինի, և չէ զարմանք»<sup>3</sup>: Այս ապացուցող օրինակներն ինքն է բերում: Այսպես՝ «զմեծութիւն աւուրն և զմեծութիւն գիշերոյն՝ այս ոչ ըստ նախախնամութեան, այլ ըստ բնական հարկին լինի, և բնական հարկն վկայէ, որ չէ ըստ նախախնամութեան»<sup>4</sup> և այլն:

Այսպիսով, բնութեան նկատմամբ աստծո նախախնամութեան մասին մտորումները, Երզնկացուն բերում են բնութեան մեջ աստծո կամքից անկախ օրինաչափությունների առկայութեան գիտակցութեանը: Նա օրինաչափություններ է տեսնում բնութեան բազմաթիվ երևույթների մեջ և դրանք աշխատում է բացատրել իրերի էությունից բխող պատճառներով: «Զբնութիւնս յիրաքանչիւր յէութենէ կարգեալ և արուեստաւոր է, զի նա զմանկունս յորովայնի յառաջ բերէ և ամբողջ ապրեցուցանէ յորովայնին, և՛ զանշունչս տունկս, և՛ քարս յուրեանցն պահէ»<sup>5</sup>: Փոփոխությունը բնութեան մեջ տեղի է ունենում որոշակի և անխախտելի օրինաչափութեամբ: «Որպէս բնութիւն ցորենոյն սիսեռն ոչ լինի և ոչ հաճարն՝ գարի, այլ իւրաքանչիւր զիւր շափն և զիւրն բաւական ստուգապէս յառաջ բերէ»<sup>6</sup>:

Ինչ վերաբերում է մարդու կյանքի նկատմամբ աստծո նախախնամութեան հարցին՝ Երզնկացին վճռականապես ժխտում է այդ բնագավառում աստծո նախախնամութեանը: Մարդը բանական էակ է, և նա նախքան գործելը մտածում է, կշռադատում, ուստի մարդը ինքն է իշխում իր գործունեության վրա<sup>7</sup>: Երզնկացին դեմ է ֆաթալիզմին, քննադատում է աստրոլոգիան: «Այնոցիկ, որք զճակատագիրն յառաջեցուցանեն և յաստեղաց ասեն՝ զամենայն ընդդէմ ասեմ, սուտս ցուցանել ջանան բազում ձեռնարկութեամբ»<sup>8</sup>, — գրում

<sup>1</sup> Մատենադարան, ձեռագիր № 1053, էջ 252բ:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 252—253ա:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 271բ:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 277ա:

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 298ա—298բ:

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 271բ:

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 253բ:

<sup>8</sup> Մատենադարան, ձեռագիր № 2059, էջ 187բ: Այս հատվածը մեջ ենք բերում № 2059 ձեռագրից, որովհետև բնագիրը № 1053 ձեռագրում լրիվ չէ: Ինչպես վերևում արդեն ասել ենք № 1053 և № 2059 ձեռագրերը պարունակում են Փիլոնի աշխատությունների նույն մեկնությունները:

է նա: Եվ հետո բազմաթիվ փաստերով աշխատում է ապացուցել իր տեսակետը: Մենք չծավալվելու համար չենք դիմում քաղվածքների:

Փիլոնի երկերի մեկնությունների մեջ իմացություն հարցեր շոշափող մտքերը թույլ են տալիս ասելու, որ Երզնկացին, ընդունելով, որ իմացության պրոցեսը բանականության և զգայարանների գործունեության արդյունք է, ճանաչողության մեջ հատկապես ընդգծում է զգայության, զգայական ընկալման դերը, այն միտքը, թե բանականությունը չի կարող արտաքին աշխարհը ճանաչել, առանց զգայարանների տվյալների: «Ի փոխ տան միմեանց՝ զգալին զգայութեամբքն ի միտան մտանէ, և միտքն զգայութեամբն յըզգալիսն յարձակի»<sup>1</sup>: «Միտքն զգայութեամբն իմանա և ընդունի զգալիսն, և զգայութիւնն մտօքն ընդունի զգալիսն»<sup>2</sup>, «զգայութիւնքն աւզնեն մտացն»<sup>3</sup>:

Երզնկացին հասկաժի տակ չի դնում աշխարհի ճանաչելիությունը: «Այս զգալիքս,— գրում է նա,— որ կարծեմք և տեսանեմք՝ ըմբռնելի են զգայութեանցս: Եղեալ և լինելիք երևեցան և ոչ մշտնջենաւոր և անըմբռնելիք, կարծիք այս ոչ երկրայութեան»<sup>4</sup>: Նա գտնում է, որ բոլոր գիտությունները, որոնք ճանաչում են աշխարհը, բաժանվում են երկու խմբի՝ տեսական և գործնական, որոնք սերտ կապված են իրար հետ: «Իմաստասիրութիւնն յերկուս բաժանի՝ ի տեսականն և ի գործականն... գործականն վարելով ի տեսականն ժամանեցին, որ է միւսն մասն իմաստութեանն»<sup>5</sup>:

Տիեզերագիտական հարցերից, որոնք արծարծվել են մեկնությունների մեջ, ուշադրով են հատկապես արեգակի և լուսնի խավարման մասին մտքերը: «Արեգական խաւարումն ի լուսնէն լինի, զի յորժամ անլոյս լինի լուսինն և սևատեսակ և գա պատահիլ անկանի ընդդէմ արեգականն՝ ինքն միայն երևի մեզ սեաւ և պակասեցուցանէ զլոյս արեգականն ի մէնջ և խաւար առնէ»<sup>6</sup>: Լուսնի խավարման մասին՝ «յորժամ արեգական գունդն և լուսինն հանդէպ միմեանց լինին և գունդն երկրի ի մէջ նոցա, որ արեգակն ի ներքոյ լինի երկրի և լուսին վերոյ և երկիր ի մէջ, և հաստատուն և ուղեղ գիծքն երեքին հանդէպ միմեանց և ոչ կարէ տեսանել լուսինն զարեգակ, զի երկիր ստուեր առնէ՝ անլոյս մնա»<sup>7</sup>:

Փիլոնի աշխատությունների երկու մեկնիչների՝ Հովհաննես Սարկավազի և Հովհաննես Երզնկացու մեկնությունները հետաքրքրական են նաև մի այլ առումով: Նրանք պարզում են, որ միջնադարյան Հայաստանում տարբեր տեսակետներ են եղել կենդանիների գործողությունները գնահատելու հարցում:

Մենք արդեն ասել ենք, որ Սարկավազը կտնդնած է այն տեսակետի վրա, թե բանականությամբ օժտված են միայն մարդիկ: Հետևողականորեն պաշտպանելով այս սկզբունքը, նա գտնում է, որ մարդկանց և կենդանիների գործողությունները էապես տարբերվում են իրարից: Մարդկանց գործունեությունը կանխամտածված է, գիտակցված, նախօրոք ծրագրված, մինչդեռ կենդանիներինը հիմնված է բնազդի վրա: Այս էական տարբերության պատ-

<sup>1</sup> Մատենադարան, ձեռագիր № 1053, էջ 375բ:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 387բ:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 367ա:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 249բ:

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 368ա—368բ:

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 277ա—277բ:

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 277բ:

ճառով՝ կենդանիների «ստեղծագործությունները» նման են իրար, շունեն իրենց անհատականությունը, իսկ մարդկանց մոտ, ընդհակառակը, շկա այդ միօրինակությունը: «Քանզի մարդիկ,— գրում է Սարկավազը,— թէպէտ տեսակաւ մի են և հաւասար, բայց գիտութեամբ և փարթամութեամբ անզոյգ են, որպէս է տեսանել ի տուն և ի քաղաք, որ շինել են և բնակին, իսկ մեզուն և մրջին միապէս գործեն և շկայ զանազանութիւն ինչ ի նոսա»<sup>1</sup>:

Մարդուն և կենդանիներին, ըստ Սարկավազի, բնությունից տրված է իրենց գոյությունը և սերունդը պահպանելու հատկություն: «Ոչ միայն բանականք, այլև ամենայն կենդանիք բնաւորեալ է պահել զինքն ի մահուանէ»<sup>2</sup>: Սակայն մի էական տարբերությամբ՝ կենդանիների մոտ այն, ինչպես նաև նրանց բոլոր գործողությունները, զուրկ են գիտակցական հիմքից, նրանք այդ շին անում կանխամտածված կերպով և գոյության պահպանման հաճար նրանց կատարած գործողությունները սոսկ բնազդական մղման արդյունք են: «Մի՞թե գիտութեամբ աննէ զայն ծիծառն, թէ այս ինձ օգուտ է և կամ թէ փոյթ առաքինութեան ունին կենդանիքդ, և զայն, որ տեէ և մնայ ազգն աճմամբ, կարծե՞ս թէ նախախնամութեամբ հոգան և ապա գործեն,— հարցնում է Սարկավազը և պատասխանում,— ծանր և դժուարին է զայս կարծել, թէ նոքա խորագիտութիւն ունին և իմաստութեամբ վարին»<sup>3</sup>:

Սարկավազի կարծիքով կենդանիների մոտ սերունդ պահպանելու ունակությունը ևս գիտակցված չէ: «Չէ թէ ուսեալ է զայն մուկն, որ յառաջ քան զայն, որ ծնանի և աճէ ի յորջն ցանկայ մտանել, բազում անգամ լինի, որ արտաքոյ որջոյն ձգէ զձագան»<sup>4</sup>: Առարկելով նրանց, որոնք հակված են կենդանիների գործողությունները նրանց գիտակցությամբ բացատրել, նա գրում է, թե «Ի բաց պիտի տանել զցնորս մտացն այնոցիկ, որք կարծեցին, թէ շունն զայն, որ գնաց ու եկաւ յաջ և յահեակ... մտաց զօրութեամբ արար և կամ թէ այն, որ զխեցեմորթն ուտէ և կամ թէ այլ ինչ, որ զհետ այնորիկ երեք՝ կարծիս տայ բանի մասին»<sup>5</sup>: Կենդանիների մասին «չէ պատե՛հ ասել, թէ ընտրութեամբ և յառաջահոգութեամբ առնեն զգործն, այլ բնութիւնն բաշխեալ և ետ զայն ընտանի և ի յար իւրաքանչիւրոց»<sup>6</sup>:

Ինչպես տեսնում ենք, Սարկավազը հետևողականորեն պաշտպանում է այն տեսակետը, թե բանականությունը և գիտակցված գործողությունները հատուկ են միայն մարդուն:

Հակառակ այս պնդման, Փիլոնի աշխատությունների Երզնկացու մեկնությունների մեջ այն միտքն է զարգացվում, թե անասունները ևս ունեն բանականության տարրեր, իմացում: Որպես դրա ապացույց մեկնիչը հենվում է այն փաստի վրա, թե կենդանիները իրենց գոյությունն ու սերունդը պահպանելու նպատակով կատարում են բազմաթիվ այնպիսի գործողություններ, որոնք խոհականություն են պահանջում, թե նրանք լսում ու հասկանում են մարդու արտասանած բառերի իմաստը, որոշ կենդանիներ կարողանում են իրենք էլ արտասանել բառեր, իսկ վարժեցնելու դեպքում՝ կատարում են նաև

<sup>1</sup> Մատենադարան, ձեռագիր № 2595, էջ 251ա:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 248ա:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 250ա:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 250բ:

<sup>5</sup> Նույն տեղում:

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 251ա:

շատ բարդ գործողություններ, որոնք «իմաստութեան գործ են»: Այս ամենը ցույց է տալիս, պնդում է մեկնիչը, «թէ գոյ ի նոսա հոգի խոհական»<sup>1</sup>:

Նույն հարցի նկատմամբ Հովհաննես Սարկավազի և Հովհաննես Երզնկացու մոտեցման տարբերությունը երևում է նաև հետևյալից: Մեկնելով Փիլոնի նույն միտքը երկու հեղինակ-մեկնիչները տարբեր կարծիքներ են արտահայտում: Եթե Սարկավազը գտնում է, թե կենդանիներին ոչ մի պարագայում չի կարելի համեմատել մարդու հետ, թե նրանք մանուկներին էլ նման չեն, որովհետև գիտակցությունը կենդանիների մոտ բոլորովին բացակայում է, իսկ մանուկների մոտ բանականությունը թեև չի երևում, բայց և այնպես որպես հնարավորություն նրանց մեջ գոյություն ունի՝ «եւ ոչ տղայ մանկանց չեն նման, զի թէպէտ և շերեի ներգործութեամբ բանական, սակայն զօրութեամբ են»<sup>2</sup>, ապա Երզնկացին, յուրովի մեկնելով Փիլոնին, գրում է, թե կենդանիները «ունին ընդունելութիւն իմաստից», որը նրանց մոտ անհաստատ է ինչպես մանուկների մոտ՝ «վասն կենդանեացդ ասէ, թէ թէպէտ ունին ընդունելութիւն իմաստից, այլ աղաւտ է, ըստ նմանութեան տղա մանկանց՝ անհայտք և անհաստատք»<sup>3</sup>: Այստեղից միանգամայն ակնհայտ է, որ կենդանիների գործողությունները բացատրելու և նրանց խոհականություն, գիտակցություն ունենալու հարցում միջնադարյան երկու մտածողները արտահայտում են տարբեր տեսակետներ:

Վերջապես, Փիլոնի «Նախախնամութեան» Հովհաննես Որոտնեցու ծավալով փոքր մեկնությունը նյութ է տալիս Որոտնեցու փիլիսոփայական հայացքները պարզելու կամ նրա այլ աշխատություններում արտահայտված մտքերը համեմատական քննության ենթարկելու և հաստատելու համար: Այստեղ արծարծվում են հիմնականում օնտոլոգիական հարցեր, քննարկվում է այն հարցը, թե ինչպե՞ս է առաջ եկել աշխարհը, ինչի՞ց է այն ստեղծված և սրանց հարակից հարցեր: Հետաքրքրական են Որոտնեցու դատողությունները սեղի և ժամանակի փիլիսոփայական կատեգորիաների մասին: «Տեղի է ի մարմին և ոչ մարմինն ի տեղի»<sup>4</sup>, — գրում է Որոտնեցին մեկնության մեջ, իսկ ժամանակը, ըստ նրա, հետևանք է երկրի շուրջը արեգակի պտտման, թնշպես ոտքի հետքը հետևանք է ոտքի<sup>5</sup> և այլն:

Սրանք են այն հիմնական գաղափարները, որոնք մեզ, որպես միջնադարյան հայ փիլիսոփայական, հասարակական-քաղաքական մտքի պատմությունն ուսումնասիրողի, հետաքրքրել են Փիլոնի գործերի հայերեն մեկնությունների մեջ: Անշուշտ, Փիլոնի աշխատությունների մեկնությունները կարող են շատ ավելի նյութ տալ հայագիտությանը, ուստի պետք է ավելի բազմակողմանիորեն ուսումնասիրվեն: Կարծում ենք նաև, որ Փիլոնի երկերի հայերեն մեկնությունների որոշ հատվածներ պետք է հրատարակվեն: Այդ կհեշտացնի հայ մշակույթն ուսումնասիրողների գործը և կունենա ճանաչողական արժեք:

<sup>1</sup> Մատենադարան, ձեռագիր № 1053, էջ 293բ, տե՛ս նաև էջ 288բ—289ա, 290ա, 291ա, 293ա—293բ և այլն:

<sup>2</sup> Մատենադարան, ձեռագիր № 2595, էջ 250բ:

<sup>3</sup> Մատենադարան, ձեռագիր № 1053, էջ 298բ:

<sup>4</sup> Մատենադարան, ձեռագիր № 1931, էջ 130ա:

<sup>5</sup> Տե՛ս նույն տեղում:

Г. ГРИГОРЯН

## АРМЯНСКИЕ ТОЛКОВАНИЯ ТРУДОВ ФИЛОНА АЛЕКСАНДРИЙСКОГО

### Резюме

Филон Александрийский (I в. н. э.) является одним из тех авторов, труды которого были переведены на армянский язык еще в V—VI веках. Некоторые важные работы Филона, подлинники которых утеряны, сохранились и стали достоянием современной науки благодаря древнеармянским переводам.

Сохранились также довольно объемистые толкования работ Филона, авторы которых до настоящего времени неизвестны. В данной статье делается первая попытка сгруппировать эти толкования, установить их авторов.

Армянскими средневековыми комментаторами истолкованы почти все имеющиеся в армянском переводе произведения Филона. Эти толкования условно можно разделить на три группы. К первой группе относится толкование «О провидении» Филона, автором которого является крупный мыслитель XIV века Иоанн Воротнеци. Во вторую группу входят толкования четырнадцати работ Филона. Автор этих толкований неизвестен. Однако, исходя из данных текстологического изучения рукописей, содержащих толкования указанной группы, и основываясь на тождестве в кардинальных вопросах мировоззрения, выраженных в толкованиях с одной стороны, и в известных трудах Иоанна Саркавага (ум. 1129 г.), с другой, и, наконец, опираясь на другие факты филологического порядка толкования второй группы, автор статьи приписывает Иоанну Саркавагу. В третьей группе комментируются только шесть работ Филона. Эти толкования принадлежат перу известного мыслителя XIII в. Иоанна Ерзынкаци-Плуза. В пользу такого вывода говорят, как непосредственное упоминание его имени в памятной записи переписчика одной рукописи, так и некоторые другие факты.

Армянские толкования работ Филона Александрийского, несмотря на религиозно-богословский характер, содержат много ценных высказываний по различным отраслям философии и дают возможность исследовать мировоззрение авторов—толкователей этих работ. С этой точки зрения особое значение автор статьи придает толкованию Иоанна Саркавага, выдвигающему здесь мысль о значении опыта в познании.

ԷՄ. ՊԻՎԱԶՅԱՆ

ՄԽԻԹԱՐ ԳՈՇԻ և ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏԻ ԴԱՏԱՍՏԱՆԱԳՐՔԵՐԻ  
ԱՌՆՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Մխիթար Գոշի և Սմբատ Սպարապետի դատաստանագրքերը հին հայ իրավունքի պատմության, և ընդհանրապես հայ դպրության, ամենախոշոր հուշարձաններից են, հուշարձաններ, որոնց միջոցով կարելի է պարզել մի ամբողջ ժամանակաշրջանի պատկերը՝ սոցիալ-տնտեսական, բաղաբաղական ու բազմաթիվ այլ տեսակետներից:

Սակայն այս նպատակով Սմբատ Սպարապետի Դատաստանագրքը ուսումնասիրելիս, նախ պետք է պարզել բանասիրական մի հարց՝ նրա և Մխիթարի Դատաստանագրքի առնչակցության հարցը: Հետաքրքիր հարցեր են ինքնըստինքյան, թե ինչ շափով և ինչպես է օգտագործել Սմբատը Մխիթարի Դատաստանագրքը, ինչ գաղափարաբանությամբ, ինչ որակային տարբերություն ունի նրա Դատաստանագրքը Մխիթարի Դատաստանագրքից, եղել է վերջինս գործող օրենսգիրք, թե ոչ, և այլն:

Սույն հոդվածում, սակայն, մեզ զբաղեցնողը այդ բոլոր հարցերը չեն, որոնց լուծման համար երկար ժամանակ ու աշխատանք է պետք, այլ երկու դատաստանագրքերի անմիջական կապի, առնչակցության հարցը, այսինքն՝ այն հարցը, թե Սմբատին ծանոթ եղե՞լ է, նա ձեռքի տակ ունեցե՞լ է Մխիթարի Դատաստանագրքը, օգտագործե՞լ է այն, փոխադրե՞լ է, թե թարգմանել, թե նրա օրենսգիրքը բոլորովին անկախ է և ոչնչով չի առնչվում Գոշի Դատաստանագրքին:

Երկու դատաստանագրքերի առնչակցության փաստը հավաստել են դրանցով զբաղվող մեր բանասերները, պատմաբաններն ու իրավաբանության պատմության մասնագետները՝ Ալիշանը, Բաստամյանը, Հովնանյանը, Կարստը, Ալտճյանը, Աբեղյանը, Սամուելյանը և ուրիշներ: Սակայն վերջերս պատմ. գիտ. թեկնածու Ա. Գալստյանը, որ հրատարակել է Սմբատի Դատաստանագրքի բնագիրը՝ նրա իր կատարած ուսերին թարգմանությամբ հանդերձ, գրքի առաջաբանում, հակադրվելով վերոհիշյալ գիտնականներին, այն կարծիքն է հայտնում, որ իբր թե Սմբատ Սպարապետը իր Դատաստանագրքը կազմելիս չի օգտվել Գոշից, անգամ իր ձեռքի տակ չի ունեցել և ծանոթ չի եղել նրան<sup>1</sup>:

<sup>1</sup> Տե՛ս Տմբատ Տարապետ, Судебник. Составление текста, перевод с древнеармянского, предисловие и примечания А. Г. Галстяна, Ереван, 1958, էջ XX և հտ., 198 և հտ., ինչպես նաև Ա. Գալստյան, «Սմբատ Գունդատրի «Դատաստանագրքի» մասին», Հայկական ՍՍՌ ԳԱ հաս. գիտ. բաժանմունքի «Տեղեկագիր», 1952, № 2, էջ 94 և հտ.:

Ա. Գալստյանը իր կարծիքը հիմնականում փորձում է ապացուցել հենվելով երկու դատաստանագրքերի տարբերությունների վրա, իսկ նմանությունները բացատրում է այն հանգամանքով, «որ ինչպես Սմբատը, այնպես էլ Գոշը իրենց օգտագործած նյութերը վերցրել են միևնույն աղբյուրներից»<sup>1</sup>, մեկը մյուսից անկախ:

Տեսնենք այժմ իրավացի՞ է արդյոք Ա. Գալստյանը առաջ քաշելով այսպիսի նորալուր տեսակետ:

Հայտնի է, որ Գոշը իր Դատաստանագիրքը հորինել է գրավոր և բանավոր աղբյուրների հիման վրա: Գոշի հրատարակիչ Վ. Բաստամյանցը մանրակրկիտ կերպով հետազոտել է և ցույց տվել ու տողատակում նշել յուրաքանչյուր հոդվածի, նույնիսկ յուրաքանչյուր հատվածի, յուրաքանչյուր արտահայտության ու բառի աղբյուրը կամ աղբյուրները, եթե այդպիսիք եղել են: Այն բոլոր հոդվածները ամբողջությամբ կամ հատվածները, որոնք գրավոր աղբյուր չունեն, ինչպես և կանոնագրքերից, Մովսիսական օրենքներից և այլ աղբյուրներից քաղած օրենքների Գոշի մեկնաբանությունները Բաստամյանցը առել է շակերտների մեջ, այդպիսով պարզ դարձնելով գրավոր աղբյուր ունեցող և չունեցող մասերը: Դրանից պարզվում է, որ Գոշի բազմաթիվ հոդվածներ չունեն գրավոր աղբյուրներ, ստեղծված են սովորութական իրավունքի հիման վրա և կամ իր կողմից են հորինված:

Ցույց տալ դրանցից մի քանիսի առկայությունը Սմբատի Դատաստանագրքում՝ բավական է, որ գրեթե ապացուցված համարենք Սմբատի առնչությունը Գոշից: Ուստի տեսնենք, թե Գոշի այդ հոդվածներից կան արդյոք Սմբատի մոտ:

Ամենամակերեսային համեմատությունն իսկ ցույց է տալիս, որ Սմբատի մոտ առկա են Գոշի այդ հոդվածներից շատ շատերը: Բերենք դրանցից մեկը:

#### ՃԻԵ. ՅԱՂԱԿՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ ՎԱՐՉԿԱՆԱՅ ՎՆԱՍՈՂԱՅ ԶԳՈՐԾԻՍ

«Վարձկանք որք տերանց գործեօք վարին, որպէս երկրագործք, ի վնասելն զգործիս ըստ սովորութեան՝ անպարտք են. իսկ յիւրեանց ի գործսրն վնասելով՝ վճար լիցի տերանցն: Իսկ ինքեանց գործեօք վարելով, որպէս հնձողք, ինքեանց վնասն լիցի. իսկ եթէ զտեառն ի վարձու առցէ և ըստ սովորութեան վնասիցի տեառն լիցի: Այլ թէ յանօթ ի տեառնէ առնուցու և վնասիցէ, վճար լիցի: Եւ շարակամութեամբ վնասելով՝ վճար լիցի» (Մխ. Գոշ, Դատաստանագիրք, էջ 437):

Ահա և այդ հոդվածի Սմբատի փոխադրությունը:

#### ՃԶ. ՎԱՍՆ ՎԱՐՉԿԱՆԱՅ

Եւ վարձկան, որ յունէ տիրոջն ի բանն սարված կոտրէ, շտայ վճար. ապա թէ իր կամաւք վնասէ՝ նա վճարէ:

Բայց այն վարձվորն, որի իր սարվածովն գայ՝ վարձ առնու և բանի՝ նա շտայ վճար ունէ տէրն:

Եւ թէ զտիրոջն յիւր բանն կոտրէ՝ նա շտայ վճար: Բայց թէ առանց տիրոջն հրամանաց առնու և վնասէ նա վճարէ:

<sup>1</sup> Смбат Спарамет, Судебник, էջ 199:

Եւ ի վերայ այսր ամենայնի կու հրամայէ արէնքս, որ զինչ հեճկով եւ կամաւք վասն շարութեան վնասէ, նա վճարէ՝ յիր քսակէն: (Смбат, Судебник, էջ 148):

Այս երկու հոդվածների համեմատությունը ցույց է տալիս, որ սրանք ըստ բովանդակության նույնն են, և քանի որ Գոշի մոտ այն շունի գրավոր աղբյուր, որից Սմբատը առանց Գոշի միջնորդության կարողանար օգտվել, ուստի մնում է ենթադրել, որ Սմբատի աղբյուրը Գոշն է: Ուշադրության արժանի է Սմբատի մոտ հատկապես վերջին նախադասությունը, որ Գոշի հոդվածի «Եւ շարակամութեամբ վնասելով՝ վճար լիցի» նախադասության փոխադրությունն է, ըստ որում «կու հրամայէ արէնքս» բառերով Սմբատը, մեր կարծիքով, ակնարկում է Գոշի օրենքը:

Վերջնենք փոխադրությունը ցույց տվող մի ավելի ցայտուն օրինակ.

**ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ ԱՅԳԵԳՈՐԾԱՅ ԸՆԿԵՐԱԻՈՐ ՄԱՍՆԱԻՈՐԱՅ  
ՀԱՐԱԿՇԱՅ ԵՒ ՎԱՐՁԿԱՆԱՅ**

Յաղագս այգեգործաց եւ այլոցդ ճշգրտել զօրինակն ոչ կարեմ յաղագս գանազան սովորութեանց գաւառաց եւ աշխարհաց. բայց սակաւ ինչ նշանակ տացում իրաւանց, զի ըստ սովորութեան վճիճն ԱՅՆ ՀԱՍՏԱՏՈՒՆ ԱՌ ՆՈՍԱՎԱՅՑԷ: Արդ՝ մի՛ որ անիրաւութեամբ զրկանս ինչ գործիցէ, այլ իրաւամբք զբաժանումն արասցէ ընդ ընկերին: Ի ս կ գ ո ղ գ ա ե ա լ ո ք ի ն ո ս ա, կ ր ր կ ի ն տ ո լ գ ա ն ե ս ց ի եւ ոչ շորեքկին ըստ օրինացն, զի յիւր վաստակս արն եւ ոչ յօտարին անիրաւէ. եւ յաղագս այնորիկ իրաւացի կարծեմ զնեքելն: ԻՍԿ ՎԱՐՁԱԻՈՐ ՄՇԱԿԱՅՆ ՎԱՐՁ Ի ՅԵՂԱՆԱԿՍ ԱՌԱՏՈՒԹԵԱՆ ԵՒ ՆՈՒԱԶՈՒԹԵԱՆ ԴԱՏԻՑԻ. առաւելեալ—ի նուազն լիցի, եւ պակասեալ—յառաւելեալն: Նմանապէս եւ յաղագս տեղեացն լիցի: (Մխ. Գոշ, Դատաստանագիրք, 432—433):

Վերորերյալը համեմատենք Սմբատի Դատաստանագրքի ՄԱ հոդվածի հետ:

**ՎԱՍՆ ԱՅԳԵԱՅ ԵՒ ԱՅԳԵԳՈՐԾԱՅ**

Նա քէ եւ սովորութիւնք իրաւանշիւր երկրի այլ եւ այլ են, բայց մեք զոր կարցաք նշմարեալ յաւրինացն՝ նա այս է. եւ ԹՈՂ ԱՅՍ ՀԱՍՏԱՏՈՒՆ ՄՆԱՅ՝ որ չզրկեն զիրար, ապա իրանսուք ամէն մէկ զիր բաժինն ուննայ սիրով եւ ի հանգիստ:

Եւ կու հրամայէ արէնքս, որ ով զիր ընկերն հարմէ կամ զրկէ՝ նա տուպլ առնուն յիրոյն եւ ի նա տան: Եւ զայս դեռ կու ներենք, որ կ ր կ ի ն մ է ն լ ի ն ի տ ո լ գ ա ն ք ն, վ ա ս ն ա յ ն ո ր, ո ր յիւր հ ա լ ա ծ ն է մ ե ղ ա ն ք ն. թէ ոչ՝ նա այլոցն, որ այլազգ գողութիւն եւ ուժ, որ ի վաստակոց եւ ի հալծնաց ի դուրս լինի՝ նա այնոր վճարն շորս տակ է:

Բայց ու զիրաւունքն պատե՛հ է ի վերայ տեղոյն արձակութեան եւ նեղութեան այնել:

ՆՈՒՅՆՊԷՍ ԵՒ ԶՄՇԱԿՆՈՅՆ ՎԱՐՁԵՐՆ՝ Ի ՎԵՐԱՅ ՏԱՐՈՅՆ ՍՂՈՒԹԵԱՆ ՈՒ ԼԱԻՈՒԹԵԱՆՆ ԱՅՆԵՆ ԶՆԵՂՆ. զի առանց նե՛հի, որ պատե՛հվոր լինի, աշխարհ երբ շինվի... (Смбат, Судебник, էջ 172):

Ինչպէս տեսնում ենք, Սմբատի այս հոդվածի ամբողջովին Գոշից փո-



խաղրութիւն լինելը ակնհերե է, իսկ ընդգծված համապատասխան հատվածները բառացի թարգմանութիւն են:

Այստեղ կարևոր է մի հանգամանք ևս. «տուգանեացի և շորեքկին ըստ օրինացն» ասելով, Մխիթար Գոշը ակնարկում է Մովսիսական հետևյալ օրենքը. «Իսկ եթէ գողացի որ զարջառ կամ զոչխար, և սպանցէ կամ վաճառեցէ, հինգ արջառ ընդ արջառոյն տուժեացի. և շորս ոչխար ընդ ոչխարի» (Նլից, ԻԲ, 1): Ուրեմն՝ գողութեան համար ըստ Մովսիսական օրենքի՝ գողացածի բառապատիկով պետք էր տուգանել գողին: Ըստ Գոշի՝ եթե աշխատանքի ընկերներէց մեկն է գողը՝ «կրկին» (գողացածի կրկնակի շահով) պետք է տուգանել, քանի որ «չիւր վաստակսն և ոչ յօտարին անիրաւէ»: Նույնն է նաև Սմբատի մոտ. «կրկին մէն (=միայն) լինի տուգանքն, վասն այնոր, որ չիւր հալածն է մեղանքն»:

Հնարավոր է, որ Գոշը և Սմբատը՝ միմյանցից անկախ՝ նույն մեղմացուցիչ հանգամանքը նկատի ունենալով, նույն պատճառաբանութիւնը տալին գողի պատիժը մեղմացնող իրենց օրենքի հիմնավորման համար: Պարզ չէ միթե, որ Սմբատի մոտ գտնում ենք Գոշի համապատասխան հատվածի թարգմանութիւնը: Այս օրինակը ցույց է տալիս, որ Սմբատը ոչ միայն ձեռքի տակ ունեցել է Գոշի Գատաստանագիրքը և օգտագործել, այլև ուղղակի փոխադրել- թարգմանել է հոգվածը ամբողջութեամբ:

Բայց այդպիսի փոխադրութիւն-թարգմանութիւն միայն այս հոգվածը չէ: Ահա և մի ուրիշ օրինակ:

Գոշ, II, հոգվ. ԺԶ

«Յորժամ զառաջինն շինիցի գիւղ, չէ՛ հաստատուն բաժանումն հողոյն և շրին և այլոց այսպիսեաց մինչ բաւական բնակիրք ժողովիցին և ապա բաժանումն հաստատիցի:

Ապա թէ աւերակ շինիցի և չիցէ բազմաժամանակեայ, մինչ զի գիտել իւրաքանչիւր զսահման անդաստանաց և զայլոց, իւրաքանչիւր ըստ սահմանի նախնեացն կալցին: Իսկ թէ բազմաժամանակեայ իցէ և սնդիտելի, և տէրութեան փոփոխումն եղեալ, նորոգ արացեն բաժանումն հաւասարագատութեամբ, ճախ եկեղեցոյն և ապա այլոցն, մասն աւելի տալով որ գլխաւորն իցէ զեղջև վասն հոգալոյ զայլս»:

(Մխ. Գոշ, Գատաստանագիրք, էջ 415)

Սմբատ, հոգվ. ԺԶԶ

«Եթէ որ նոր գեղ շինէ՛ նա չէ պատեհ մենակ զհողերն սինաւով բաժնել, ինչուր զայ ամէն մարդ ու լցվի, ու նեղցնեն ի վերայ. եւ ապա յայլոց առնուլ ու այլոց տալ կամ բաժնել:

Բայց թէ աւերակք լինի ու շինվի՛ նա զիր հին ճանչած սինաւուն ոճնայ, եւ կամ նոր դնեն հայնց, որ այլք չզրկվին, ինչվի լցվի, ու երբ լցվի՛ նա ապա զըզորք սինաւո դնեն.

եւ տան առչե զեկեղեցոյ բաժինն, և ապա զայնոց որք գլուխք լինան այն տեղոյն շինութեան, եւ ապա այլոցն ըզորդ»:

(Տմբատ, Судебник, էջ 151)

Այստեղ մեկը մշուսի թարգմանութիւն-փոխադրութիւն լինելը այնքան ակնհերե է, որ բացատրութիւնների կարիք չկա: Նման օրինակներ կարելի է տասնյակներով բերել, բայց բավականանա՞նք սրանցով. բերվածն էլ միանգամայն բավական է անվերապահօրեն ընդունելու, որ Գոշի այն հոգվածները, որոնք հեղինակի կողմից շնն հորինվել այս կամ այն գրավոր աղբյուրի հիման վրա՝ թարգմանաբար կամ իբրև փոխադրութիւն գտնվում են Սմբատի Գատաստանագրքում: Այս օրինակները միաժամանակ ցույց են տալիս, որ Սմբատը ոչ թե օգտվում է Գոշից և գրում իր համապատասխան հոգվածները, այլ ուղղակի «փոխում» է Գոշին: Այդ մասին սակայն քիչ հետո:

Ուշադրութեան արժանի Սմբատի և Մխիթարի դատաստանագրքերի առնչակցութիւնը հաստատող մի այլ հանգամանք ևս:

Հայտնի է, որ Մխիթարի Դատաստանագրքում նյութի դասավորութիւնը շատ խառն է, իրար են հաջորդում միմյանց հետ կապ չունեցող հոդվածներ, տարբեր տեղերում են դրված այնպիսի հոդվածները կամ օրենքները, որոնք իրար պետք է հաջորդեն և այլն: Ա. Հովնանյանը նկատում է իրավացիորեն, որ «Մխիթարա դատաստանագրոց կարգն կամ նյութոց դասավորութիւնը փոխած է Սմբատ»<sup>1</sup>, ըստ որում, ինչպես նշում է Բաստամյանցը, Սմբատը «դասավորել է հոդվածները ավելի հարմար կերպով, քան թե դասավորված են բնագրի մեջ, նմանները միասին խմբելով...»<sup>2</sup>:

Երկու օրենսգրքերի բնագրերի ուշադիր քննութիւնը ցույց է տալիս, որ այն դեպքում, երբ Գոշի մոտ հոդվածները հարմար դասավորութիւն ունեն, խառնակ չեն, միմյանց հաջորդում են իրենց բովանդակութեամբ նման հոդվածներ՝ այդ դեպքում Սմբատը պահպանել է Գոշի Դատաստանագրքի հոդվածների կարգը: Այսպես, օրինակ, Մխիթարի մոտ, 2-րդ մասում իրար են հաջորդում հետևյալ հոդվածները.

(ՄԲ) Յաղագս վաճառողաց և գնողաց զերկիր.

(ՄԳ) Յաղագս դատաստանաց վաճառողաց և գնողաց տան.

(ՄԴ) Յաղագս դատաստանաց ջրաղացաց.

(ՄԵ) Յաղագս դատաստանաց անասնոց վաճառաց.

(ՄԶ) Յաղագս դատաստանաց վաճառաց եզանց.

(ՄԷ) Յաղագս դատաստանաց ի կովու վաճառս.

(ՄԸ) Յաղագս դատաստանաց մեղուաց ի վաճառս նոցա.

(ՄԹ) Յաղագս դատաստանաց վաճառաց ամանաց.

(Կ) Յաղագս դատաստանաց վաճառողաց և գնողաց զպտուղ այգեաց և զայլոց արմեաց.

(ԿԱ) Յաղագս դատաստանաց ըստ գլխոյ հատուցման ջրաղացած և այսպիսեաց:

(ՃԼԲ) վասն որ տուն վաճառէ.

(ՃԼԳ) վասն ջաղցաց և խանութի որ կապեալ բերէ.

(ՃԼԴ) վասն գրատունոյ և ամենայն շոբոտանեաց գնելոյ.

(ՃԼԵ) վասն եզանց վաճառի.

(ՃԼԶ) վասն կովու վաճառի.

(ՃԼԷ) վասն հողոյ կամ դեանի ծախելոյ.

(ՃԼԸ) վասն մեղուաց վաճառի.

(ՃԼԹ) վասն որ կարաս ծախէ կամ այլազգ անօր.

(ՃԽ) վասն այգեաց և այլազգ ծառոց վաճառի.

(ՃԽԱ) վասն որ ջաղացք գնէ:

Ինչպես տեսնում ենք, բերված հոդվածներից Սմբատը փոխել է միայն առաջինի տեղը, պահպանելով մյուսների հաջորդականութիւնը: Սակայն հնարա-

<sup>1</sup> Ա. Հ. և Ռ. Ղ. վ. Հ. Ո. վ. Ն. յ. Ա. Ն., Հետադրութիւնը նախնայաց սամկորենի վրա, Վիեննա, 1897, էջ 203:

<sup>2</sup> Մխիթարայ Գոշի Դատաստանագրքի հայոց, Վաղարշապատ, 1880, Հառաջարանութիւն, էջ 56:

վոր է, որ այս փոփոխությունն էլ կատարված լինի գրիչների և ոչ Սմբատի ձեռքով<sup>1</sup>:

Գոշի Դատաստանագրքի հրատարակիչ Վ. Բաստամյանցը վերոհիշյալ հոդվածներից «Յաղագս դատաստանաց վաճառաց եղանց»-ի մասին նշում է, որ «կրկնություն է նախընթաց ՄԾ հոդվածի»: Այդ նույն կրկնությունը նույնությամբ կա նաև Սմբատի մոտ (տես նրա ՃԼԴ և ՃԼԾ հոդվածները): Իրար հաջորդող հոդվածների կրկնությունը երկու տարբեր հեղինակների մոտ երբեք չի կարելի բացատրել նույնիսկ Երկուսի էլ նույն աղբյուրից օգտվելու հանգամանքով. հեղինակներից մեկն ու մեկը շէր թույլ տա, կվերացնեն կրկնությունը: Այս բոլորին ավելացնենք, որ Մխիթարի այդ երկու (2-րդ մասի ՄԾ և ՄՁ) հոդվածների համար գրավոր աղբյուրներ հայտնաբերված չեն: Մնում է ընդունել, որ Սմբատի մոտ նույն հոդվածի բովանդակության կրկնությունը գալիս է Մխիթար Գոշից, որը է հենց Սմբատի աղբյուրը: Այդ նն ապացուցում նաև վերոհիշյալ հոդվածների մեջ եղած, երբեմն բառացի, հետևյալ նմանություն-նույնությունները:

Ուշադրությամբ կարդալիս Մխիթարի «Յաղագս դատաստանաց մեղուաց ի վաճառս նոցա» և Սմբատի «Վասն մեղուաց վաճառի» հոդվածները, անմիջապես նկատելի է, որ երկրորդը առաջինի թարգմանությունն է. բերենք այդ երկու հոդվածների վերջին նախադասությունները:

Մխ. Գոշ (էջ 368)

Սմբատ (էջ 124)

«Ի կերակրոյ մեռեալն և յամին անպտուղ եղեալն գնողին լիցի»:

«Թէ ի կերակրոյն կամ ի տարոյն պնդութեանէ անցնի՝ նա գնաւոյին է»:

Մխիթարի «Յաղագս դատաստանաց վաճառաց ամանաց» (2-րդ մաս, ՄԹ) և Սմբատի «Վասն որ կարաս ծախէ կամ այլազգ անօթ» (ՃԼԹ) հոդվածները համեմատելիս ևս չի կարելի կասկածել, որ Սմբատը թարգմանել է Գոշին: Ավելորդ չենք համարում զուգահեռաբար բերել երկու հոդվածները ամբողջությամբ:

Մխ. Գոշ

Սմբատ

«Եւ կարաս վաճառեալ և գնեալ հաստատիցի յորժամ լցեալ՝ ողջ դարկեալն պահիցէ գինի յամին»:

Ով աման կամ անաւթ ինչ վաճառէ—գկարասն յառաջ կու գրենք— որ թէ ի նոքա տարին որ գնեց՝ գիր գինին տմբողջ պահէ՝ նա լեալ է բարի»:

Ապա թէ կարծիք բեկման ի թրծմանէ իցէ և զգինին կորուացէ, միմիայն զկարասն գործաղն առցէ, այլ և զկէս վնասոսն տուգանեսցի:

Ապա թէ ոչ, նա թէ ընդ վատ լինելոյ կամ վատ թրծելոյ փթրի՝ նա վճարէ ծախաւոյն զկարասի գինն և զգինոյն կէսն»:

<sup>1</sup> Հաջորդականության համապատասխանության համար հմտ. նաև՝

Սմբատ	Մխիթար, II	Սմբատ	Մխիթար, I
Գ (3)	Ժ (10)	ԼԷ (37)	ՃԱ (101)
Դ (4)	ԺԱ (11)	ԼԸ (38)	ՃԲ (102)
Ե (5)	ԺԲ (12)	ԼԹ (39)	ՃԳ (103)
Զ (6)	ԺԳ (13)	ԼԿ (40)	ՃԴ (104)
է (7)	ԺԴ (14)	ԼԱ (41)	ՃԵ (105)
		ԼԲ (42)	ՃԶ (106)
		ԼԳ (43)	ՃԷ (107)

և շատ ուրիշ այլ խմբեր:

Ապա թէ անկարծիս ի բեկմանէ իցէ և ի թա-  
ղեցն եղև կարծիսն, անտուգանք լիցի վաճա-  
ռողն. ալլ եթէ յայդմանէ երկրայեսցի, դա-  
մանն միայն վաճառողն տուգանեսցի:

Այդ ըստ այդմ լիցին և ի փորոնս, և ի  
մեծամեծս»:

(Դատաստանագիրք, էջ 368—369):

Ապա աղէկ պիտի իմանալ՝ որ դրուտ ի  
վատ թրծելոյ լինայ պատճառն, և ոչ ի դի-  
պելոյ կամ յալլ իրաց. թէ ոչ դամանն մէն  
(=միայն) վճարե, նա հերիք է:

Եւ այսով երթայ իրավունքս ի յամէն ազգ  
աման՝ զինչ ու լինի»:

(Судебник, էջ 124):

Այս համեմատութիւնը պարզում է, որ Սմբատը թարգմանել է Գոշի  
հոդվածը՝ տեղ-տեղ խրթին ոճը պարզեցնելով միայն:

Վերոհիշյալ հոդվածների կապակցությամբ նշենք հետևյալը ևս, որ վերջ-  
նականապես ապացուցում է, թե Սմբատը թարգմանել-փոխադրել է Գոշին:  
Մխիթարը «Յաղազս դատաստանաց վաճառողաց և գնողաց տան» հոդվածը  
կազմել է Մովսիսական օրենքների հիման վրա, ըստ որում բերում է պարսպա-  
վոր քաղաքում եղած տան վաճառքի մասին Ղևտականքի ԻԵ, 29—30-ը տա-  
ռացի, ապա ինքը միջամտում մի նախադասությամբ, և նորից տառացի քա-  
ղում Ղևտականքի ԻԵ 31-ը:

Բերենք Գոշի աղբյուրը և հոդվածը և Սմբատի թարգմանութիւնը.

Ղևտականք, ԻԵ, 29, 30

Մխիթար, II, ԾԳ

Սմբատ, ՃԼԲ

Եւ եթէ վաճառեսցէ որ զտուն  
բնակութեան ի պարսպաւոր  
քաղաքի, եղիցին փրկանք նո-  
րա մինչև ի կատարիլ տարւոյն  
աւուրցն վաճառի նորա, օրա-  
թուի լինիցին փրկանք նորա.  
Ապա թէ ոչ փրկիցի՝ մինչև  
լնանիցի նորա տարին ողջոյն,  
հաստատեսցի տունն՝ որ իցէ ի  
պարսպաւոր քաղաքի՝ հաստա-  
տութեամբ ստացողին իւրոյ  
յազգ իւր՝ և ոչ ելցէ ի թողու-  
թեանն:

Եթէ վաճառիցէ որ տուն րր-  
նակութեան ի պարսպաւոր քա-  
ղաքի, եղիցին փրկանք նորա  
մինչև ի կատարել տարւոյ  
աւուրցն վաճառի՞ն իւրոյ, օրա-  
թուի լիցի փրկանք նորա: Ապա  
թէ ոչ փրկիցի մինչև լնուցու-  
ցէ տունն որ իցէ պարսպաւոր  
քաղաքի հաստատութեամբ ըս-  
տացողին իւրոյ յազգս իւր, և  
ոչ ելցէ ի թողութեանն:

Եթէ որ մի տուն վաճառէ՝  
ծախէ կամ գնէ պարսպաւոր  
քաղաքի ընդ ներքնէ՝ նա չի-  
պոմանն թող լինի իր վճարն.  
և թէ չլինի, ու տարի մի չի-  
մէ՝ նա կարաւղ է տան տէրն  
այլվայ աւնուլ զիր տունն և  
զնորա՝ զինչ որ աուել է՝ նա  
դարձցնէ: Ու թէ տանն ծա-  
խաւղն մեւել լինայ ու կամ  
զնաւղն՝ նա որդիքն և ազգն  
կարեն դարձցնել հետ տարոյն:

Եւ զվաճառ փաւրամաց րէ  
սմանց ազգատաց վաճառէ  
սահմանաւ, վասն սղորմութեան  
դարձուցանելի է ըստ պայմա-  
նին:

Բայց դատաւորէն պատեն է,  
որ հային ի յայն գնաւղն. րէ  
յաղքատութենէ լինի պատճառն՝  
նա ներելով այննն դէպ ի հա-  
րուտն:

Իսկ տունք, որք յաւանս  
իցեն. որոց պարիսպ ոչ գուցէ  
շուրջանակի. ընդ անդս երկրին  
համարեսցին. և հանապազ ընդ  
փրկանօք լինիցին. և ի թողու-  
թեանն ելցեն:

Իսկ տունք որ յաւանս իցեն  
որոց պարիսպ ոչ իցէ շուրջա-  
նակի, ընդ անդս երկրի համա-  
րեսցին և հանապազ ընդ փրկ-  
կանօք լիցին և ի թողութեանն  
ելցեն:

Ապա տունն, որ պարսպի  
ընդ դրուցէ լինի, նա այնոր  
հաշիմն զէդ արտի կամ գեանի  
մի է համարած,

Եւ զայս դատաստան այսպէս  
տացուր. զի թէպէտ և ամ թո-  
ղութեանն ոչ է առ մեզ, սա-  
կայն դաման փրկանաց հաստա-  
տուն կալցուր պակասեալք յա-  
ռաւելութենէ. նմանապէս և զա-  
ւուրմն:

ու այնոր ծախելոյ վճարն մե-  
նակ լինի, որ ի յայն պոմանն  
վճարեն, յոր դնեն: Ու այն որ  
ի քաղաքի ներսև է՝ կարէ համ-  
րերել տարի մի ու այլ աւելի:

(Судебник, էջ 119—120):

(Դատաստանագիրք, էջ 363—64):

ինչպես տեսնում ենք, Մխիթարը Աստվածաշնչից բաղում է տառացի, իսկ Սմբատը թարգմանում-փոխադրում է. բայց թարգմանում-փոխադրում է Գոշի՞ց, թե՞ Աստվածաշնչից<sup>1</sup>:

Եթե ընդունելու լինենք, որ Մխիթարի և Սմբատի այս նմանությունը դալիս է նույն աղբյուրը օգտագործելուց, ինչպես կամենում է բացատրել Ա. Գալստյանը, հապա ինչպե՞ս և ո՞րտեղից Սմբատի տեքստի մեջ ընկալ աշն միջարկյալ (ընդգծված) հատվածը, որ Գոշինն է, Աստվածաշնչի օրենքի Գոշի մեկնաբանություն-ավելացումն է: Միանգամայն ու անվիճելիորեն պարզ է, որ Սմբատի աղբյուրը Մխիթար Գոշի Դատաստանագիրքն է, որ նա փոխադրել է Մխիթարին և ոչ թե նրա աղբյուրը: Չէ՞ որ Մխիթարի սեփական բառերը շկան Աստվածաշնչում, որտեղից Սմբատը կարողանար բաղել ու փոխադրել Կիլիկյան բարբառի: Այսբանից հետո, բնականաբար, բնավ հիմք չկա կարծելու, որ Սմբատը ձեռքի տակ չի ունեցել Մխիթարի Դատաստանագիրքը:

Մենք տեսանք, որ Սմբատը ոչ միայն Գոշի հոդվածների սկզբում գրված աղբյուրներն է փոխադրում, այլև հենց նրա մեկնաբանություններն ու դատողությունները: Տեքստաբանական համեմատությունները պարզում են մի ավելի հետաքրքիր երևույթ ևս:

Հայտնի է, որ Մխիթարը իր հոդվածների մեծ մասում, եթե նրանք ունեն գրավոր աղբյուր, բերում է նախ իր աղբյուրը բառացի և ապա դնում իր սեփական խորհրդածություններն ու մեկնաբանությունները: Եվ ահա Սմբատը այդ հոդվածները փոխադրել-թարգմանելիս մեծ մասամբ բաց է թողնում աղբյուրները և վերցնում է Գոշի խորհրդածություններն ու մեկնաբանությունները: Սաորև բերենք մեկ օրինակ.

## Գոշ

## Սմբատ

Եւ եթէ աղբատասցի եղբայր թո որ ընդ բեզ իցէ և վաճառիցէ ի կալուածոց իւրոց, և եկեսցէ մերձաւորիչն, որ մերձաւոր իցէ նորա և փրկիցէ զվաճառ եղբօր իւրոյ: Ապա թէ չիցէ ուրուք մերձաւորիչ, և ձեռնհաս իցէ և գտանիցի նմա բաւական փրկանաց իւրոց, և համարիցի զամս վաճառին իւրոյ և հատուացէ կարողն առնն՝ որում վաճառեաց և դարձցի ի կալուածս իւր: Ապա թէ ոչ գտցի ի ձեռնն նորա բաւականն առ ի հատուցանելոյ նմա, եղիցի վաճառ նորա այնմ որ ստացան զնա մինչև յամն թողութեան իւրոյ, և ելցէ յամին թողութեան և դարձցի անդրէն ի կալուած իւր:

Ըստ աւետարանին հրամանաց առաւելութիւն ի տեսանէ հրամայեցաւ յամենայնս, նմանապէս և չիբս դատաստանի. և զի ոչ առաւելութեամբ և ոչ հաւասարութեամբ վարիմք, պարտ է մեզ փրկանօք լինել:

<sup>1</sup> Սմբատը, ինչպես վերևում բերված հոդվածից (այդպես էլ շատ ուրիշ հոդվածներից) գլարգվում է, աշխարհաբարի (միջին հաշիւներէ) է թարգմանում Աստվածաշնչի հատվածները, մի բան, որ միջնադարում թույլատրելի չէր: Մեր կարծիքով Սմբատը այդ անում է ոչ գիտակցաբար, քանի որ նա այդ հատվածները թարգմանում է այն դեպքերում, երբ Գոշը չի հայտնում իր աղբյուրը, այսինքն՝ երբ Սմբատը կարծում է, թե դրանք ևս Դատաստանագրքի հեղինակինն են:

Եթէ վասն աղքատութեան ի կալուածոյ վաճառէ, եղիցին փրկանօք յազգատօհմէ իւրմէ մինչև յեւթն ամ ըստ օրինացն: ԶԵԻՐՆ ամն եղաք, բայց առաւելու որքան կար է— արծան է. զի ոչ թողու ազատ ըստ օրինացն, զոր ի դէպ էր թողուլ նման օրինացն ազատս: Իսկ եթէ ոչ կարիցէ փրկել յեւթն ամն անտի յառաջ, հաստատիցի վաճառն:

Ապա թէ ըստ այլոյ պատճառի վաճառն իցէ ի նմին ամի հաստատիցի:

(Դատաստանագիրք, 362—363):

Եւ որ հող կամ գետին վաճառէ, թէ վասն տառակելութեան, որ ծախէ զիր գետինն, և գայ իր դրացին և ընկերն և գնէ՝ նա ի պոմաննէ իր համբերելու Ապա թէ հարուստ է ու զատական՝ նա մենակ պարտի այնել զվրճարն ի ծամ. զի թէ տարին լմնայ, ու շինայ վճարել, նա ի վճարն կարէ առնուլ զիր հողն այլվայ, ու տայ զինչ տուել լինայ ի գնողէն, թէ իր պիտանայ. զի վաճառին վճարն է հանած մանուանդ այնոց, որ վասն սննկութեան կու ծախեն զիրենց իրքն. զի ինչվի յօթն տարին կարեն փնդուել ազգականքն՝ դարձցնել և կամ վճարել, և եօթն լուկ գրեցաք. բե շէ՛ յորդից յորդիք, կամ վճարի գինն թխթով և վկայաւք, կամ դառնայ ծախածն:

Եւ թէ ոչ վասն տառակելութեան, այլ իրք պատճառի լինայ լել վաճառն՝ նա մեկ տարին է պոմանն:

(Судебник, էջ 122—123):

Գոշի սույն հողվածի առաջին հատվածը Մովսիսական օրենքն է (Ղևտականք, ԻԾ, 25—28) բառ առ բառ, իսկ երկրորդ հատվածը հեղինակի մեկնարանութիւնները. Սմբատը մի կողմ թողնելով Մխիթարի աղբյուրը, վերաշարադրում է, «փոխում» է նրա մեկնարանութիւնները:

Այսպես է վարվել Սմբատը բազմաթիվ դեպքերում. նման երեք հողվածների համեմատութիւնը բերում է Հովնանյանը<sup>1</sup> (Մխ., 1, Խ—Սմբ., 2, Մխ., 2, ԿԸ—Սմբ., ՃԾԷ, Մխ., 2, Ծ—Սմբ., ՃԻԸ, ՃՂ):

Նման պարագաներում խոսք չի կարող լինել երկու հեղինակների միևնույն աղբյուրից օգտվելու մասին: Եթե Սմբատը «փոխում» է, փոխադրում կամ վերաշարադրում է Մխիթարի մեկնարանութիւնները, ուրեմն նրա աղբյուրը մեկն է՝ Մխիթար Գոշի Դատաստանագիրքը: Առանց այդ Դատաստանագրքին ծանոթ լինելու կամ ձեռքի տակ ունենալու՝ կարելի էր նրա հեղինակի սեփական մեկնարանութիւնները, եթե շասեք թարգմանել, գոնե օգտագործել, վերաշարադրել:

Խոսենք նաև Մխիթարի Դատաստանագրքի մի այլ հողվածի՝ Սմբատի փոխադրութեան մասին:

Գոշը Դատաստանագրքի 2-րդ մասի ՃԺ է «Յաղագս դատաստանադակամայ և կամաւոր սպանութեանց» հողվածում թվարկում է կամավոր ու ակամա սպանութիւնների դեպքերը որոշակի հաջորդականութեամբ, ըստ որում օգտվելով տարբեր դեպքերի համար տարբեր աղբյուրներից. այսպես՝ ակամա սպանութիւնները թվարկելիս նա հետևյալ հերթականութեամբ օգտվում է՝ Մովսիսական օրենքից, Աթանասի ՀԲ կանոնից, Բարսղի Ե կանոնից, Աթանասի ՀԳ կանոնից, Բարսղի ՃԱ կանոնից, Աթանասի Լ կանոնից (նաև Ելից, ԻԱ, 12), Աթանասի ԽԳ կանոնից, Աթանասի ԻԹ կանոնից, Հարց հետևողաց ԺԸ կանոնից:

Սմբատի ՃՂ հողվածում ակամա սպանութիւնների նույն դեպքերի թվար-

<sup>1</sup> Ղ. Հ ո վ ն ա ն յ ա ն, նշվ. աշխ., էջ 203—209:

կումը նույն հերթականությունն ունի, ինչ որ Գոշի մոտ (նույնը տես նաև կամավոր սպանություններին վերաբերող հոդվածում):

Դժվար է պատկերացնել, թե երկու հեղինակները միմյանցից անկախ օգտվել են միևնույն մի շարք աղբյուրներից՝ տալով ակամա ու կամավոր սպանությունների նույնատեսակ թվարկում, կամ նույն աղբյուրները օգտագործել են նույն հերթականությամբ մեջ ընդ մեջ:

Երկու հեղինակների համապատասխան հոդվածների համեմատությունը (ընդարձակության պատճառով շեք բերում այստեղ) ցույց է տալիս, որ Ամբատը ուղղակի Գոշին է փոխադրում-թարգմանում:

Այդ են հաստատում հետևյալ հանգամանքները.

ա) Մխիթարն է, որ առաջին անգամ խմբավորում է սպանությունները և մի տեսակ դրանց տեսությունը տալիս, սպանությունները բաժանելով երեք խմբի՝ կամա, ակամա<sup>2</sup> և խառն. մինչդեռ նրա օգտագործած աղբյուրներից յուրաքանչյուրը խոսում է սպանություններից որևէ մեկ կոնկրետ դեպքի մասին: Նույն խմբավորումները նույնությամբ գտնում ենք և Ամբատի մոտ, որը ուրիշ ոչ մի աղբյուրում նույնը չէր կարող գտնել, որովհետև, ինչպես ասացինք, այդ խմբավորումներն ու տեսակների բաժանումը Մխիթարինն է:

բ) Հոդվածի վերջում Մխիթարը մեկնաբանություններ է տալիս և սահմանում պատժի տեսակներն ու շափերը. այս վերջին հատվածը՝ տեղ-տեղ բառացի թարգմանությամբ, տեղ-տեղ փոխադրությամբ՝ առկա է Ամբատի մոտ:

Գոշ

Ամբատ

«Արդ՝ այսօրիկ են կամաւոր սպանութիւնք և նմանք սոցին, և ակամայքն և խառնքն յերկոցունց»:

«Եւ այսոնք են կամաւորք և ակամայք, և որ յերկուրին մեջ սպանութիւններն»:

(Դատաստանագիրք, էջ 428)

(Судебник, էջ 155)

Շարունակության մեջ Ամբատը փոխադրել է Գոշի ասույթները, առանց նրանից հեռանալու:

Մի այլ հատված նույն հոդվածից:

Գոշ

Ամբատ

«Իսկ եթէ ակամայ և թշնամի պատահի սպանեալն, յորոյ վերայ խնդայ, իբրև զկամաւոր դատեոցի, կամ ըստ ներման՝ ընդ կիսոյ»

Նոյնպես և թէ յոչ կամայ լինի, և շարկամ (շ)լինի՝, և որ խնդայ՝ նա դեռ կամաւոր է համարած, և երբ խիստ ողորմութիւն տանեն իր՝ նա զկէտե տուծի»:

(Դատաստանագիրք, էջ 429)

(Судебник, էջ 156)

Այսպես ուրեմն՝ սույն հոդվածի քննությունն էլ հավաստում է, որ Ամբատը փոխադրել-թարգմանել է Գոշի Դատաստանագիրքը:

Ամբատի գրեթե բոլոր հոդվածները (մի երկու բացառությամբ, որոնց մասին կխոսենք) կարելի է համեմատել Գոշի հետ և ցույց տալ, որ դրանք թարգմանված-փոխադրված են Գոշից: Այլ կերպ էլ չէր կարող լինել, որով-

<sup>2</sup> Գոշի «թշնամի պատահի» բառերի դիմաց Ամբատի հրատարակված բնագրում կա «շարկամ շլինի» բառերը, որով անիմաստ է դառնում բերված պարբերության միտքը. հավանաբար «շլինի» բառի «շ»-ն ավելորդ է: Այդ է հաստատում նաև ձեռագրերից մեկի մեջ «շարկամ շլինի» բառերի փոխարեն եղած «շարակամ» ընթերցումը:

հետև Սմբատը «փոխել» է Գոշի Գատաստանագիրքը, ինչպես ինքը խոստովանում է:

Բայց Սմբատի այդ պարզ ու մեկին խոստովանությունն էլ Ա. Գալստյանը կամենում է այլ կերպ բացատրել, իզուր ջանալով ծառայեցնել իր նպատակադրմանը:

Այժմ անգրադառնանք Գալստյանի մյուս փաստարկներին, որոնք վերացական ենթադրություններ են լուկ:

Գատաստանագրքի Առաջարկություն մեջ Սմբատը գրում է.

«Առ որս ես՝ Սմբատս անարժան և մեղաւոր ծառայս Աստուծոյ, որդի Կոստանդեայ թագաւորահար և եղբայր բարեպաշտ թագաւորին հայոց Հեթմոյ, բազում աշխատանար աշխատեցայ ի դատաստանագիրքս ծերացեալ մտաւր, վասն զի այլակերպած էր և հեռացած ի հին հայ բառէն ի նորոյս՝ հայնց որ իսկի շէին ի հասկնալ, և ոչ յօկտել դայր: Եւ ես բազում աշխատութեամբ փոխեցի զսա ի հին և ի դժարարառ և յանհասկընալի գրոց ի մեր հեշտալուր և ի սովորական բառս ի թրականութեանս հայոց ՉժԳ»:

Վերոբերյալից պարզ է, որ Սմբատը իր ձեռքի տակ ունեցել է մի Գատաստանագիրք գրաբար, հին և դժվարբարո լեզվով, որը և «փոխել» է «ի մեր հեշտալուր և ի սովորական բառս»՝ Կիլիկիայի բարբառով:

Այսպիսի միակ դատաստանագիրքը Մխիթար Գոշինն էր՝ գրված գրաբար, այն էլ, իսկապես, բավական խրթին ոճով: «Գատաստանագիրք» ասելով, Սմբատը ուրիշ ոչ մի այլ աշխատություն նկատի ունենալ չէր կարող, որովհետև այդպիսին չկար:

Որ իրոք Գոշից առաջ հայկական օրենսգիրք չի եղել, երևում է հետևյալից: Մխիթարը 1184 թ., Գատաստանագրքի նախադրության մեջ, խոսելով իր աշխատությունը գրելու շարժառիթների մասին, գրում է. «Ի բազում ժամանակաց տարակուսեալ լինէի վասն սորին իրաց ի նախատելն զմեզ մերոց և օտարաց... Բայց զարմացեալ էի թէ ո՞րպէս յառաքելոցն և յանուանի սրբոց անփոյթ եղև այսպիսի մեծ գործ (var. յառաջնոցն հաւանց մերոց ոչ կարգեցաւ) (Գատաստանագիրք—էմ. Պ.). և ածի զմտաւ թէ եղև այս յանպարա-

<sup>1</sup> «Այլակերպված էր և հեռացած ի հին հայ բառէն և նորոյս» արտահայտության մասին Ղ. Հովնանյանը ասում է. «ո՛չ մենք կարող եղանք հասկնալ և ոչ այլք» (Ղ. Հովնանյան, նշվ. աշխ., էջ 36, ծանոթ): Պետք է ենթադրել, որ հիշատակարանի այս տեղը խանգարված է: Սմբատի Գատաստանագրքի երեք ձևագիր է մեզ հասել՝ Վենետիկինը, գրված 1331 թ., Սմբատի մահվանից 55 տարի հետո, ՀՍՍՌ Մատենադարանինը, գրված 1618 թ. Կարմիր վանքում, Վարդան արեգայի ձեռքով և Վիեննայինը, որ արտագրություն է Վենետիկի ձևագրից: Վենետիկի և մեր Մատենադարանի ձևագրերում հիշատակարանները զգալիորեն տարբերվում են: Անհրաժեշտ ենք համարում այստեղ դնել 1331 թ. ձևագրի հիշատակարանի մի մասը, որ չի մտել Ա. Գալստյանի հրատարակության մեջ: «Եւ այլ շատ ի վերայ իրաւանց կու պնդէ մարգարէն: Առ որս ես Սմբատս անարժան և մեղաւոր ծառայս աստուծոյ, որդի Կոստանդեայ թագաւորահար և եղբայր բարեպաշտ թագաւորին հայոց Հեթմոյ, բազում աշխատեցայ ի սա ծերացեալ մտօք, ի հին և յանհասկանալի բառից: Եւ ես բազում աշխատութեամբ փոխեցի զսա ի մեր հեշտալուր բառս, ի թրականութեանս հայոց ՉժԳ (=1265) ի հայրապետութեան տեառն Կոստանդեայ և ի թագաւորութեանն Հեթմոյ և որդւոյ սորա Ասնի»: Սրա շարունակությունը՝ թե մեկ և թե մյուս ձևագրում գրչի հիշատակարանն է, որ հրատարակիչները առանց մանրամասն քննության ենթարկելու միացնում են ու վերագրում Սմբատին: 1618 թ. գրված ձևագրի թալակերպած էր և հեռացած ի հին հայ բառէն ի նորոյս» անհասկանալի արտահայտության փոխարեն, այս հիշատակարանում մեր կողմից քննզօժված բառերի գոյությունը ապացուցում է, որ իսկապես այդ արտահայտությունը խաթարված է:



պուժենէ ժամանակին, և կամ ի հալածանացն, և կամ զի ոչ ոք եղև խնդրող և նորա անձամբ ոչ կամեցան առնել զարհուրեալք ի պարսաւադիտաց, և կամ զի ընդ ծառայութեամբ էին այլոց ազգաց և նոցին դատաստանան բաւականանային. զի նոյն և այս ամենայն պատճառս գոյր ի ժամանակիս մերում»<sup>1</sup>:

Գոչը, ուրեմն, հաղորդում է, որ մինչև իր ժամանակը, հայերը Գատաստանագիրք չեն ունեցել:

Նույնն է վկայում և Ներսես Լամբրոնացին: Վերջինս Գրիգոր Տղայի հանձնարարութեամբ 1196 թ. հավաքել ու թարգմանել է մի շարք օրենքներ՝ Ասորա-հռոմեական կոչված Գատաստանագիրքը, «Աւրէնք յաղթող թագաւորաց քրիստոնէից Կոստանդիանոսի, Թէոդոսի և Վեսնի», «Համառօտ ժողովումն օրինաց վերստին», «Աւրէնք և գիրք ի ձեռն Մովսիսի յԵլից գրոց», «Օրինագիրք մի քաղուած ի Ղևտական գրոց»: Հիշատակարանում Լամբրոնացին հաղորդում է.

«Ձայս ծայրաքաղ աւրինադրութիւնքս տառապեալ եպիսկոպոսս Տարսոնի թարգմանեցի ի ծիրացեալ հելլենացի մատենէ, թուին ՌեՅ (1196)... յամս քահանայապետութեանն հայոց Գրիգորի, որ երրորդ էր նախնեաց իւրոց ի Հռոմ-կլայն, ի տասն և ութ ամի նորին հայրապետութեան խնդիր եղև առ նոյն սրբազան ի քաղաքաց և ի գաւառաց բնակչաց քաղաքական օրինացն, զի որ իսմայէլացւոցն էին իշխանք ի քաղաքս և դատաւորք զգատ Հայաստանեայց ոչ դատէին, այլ զխնդրողսն իրաւանց առ իւրեանց օրէնս առաքէին, զի այս էր ի նախազուխ մէլիքացն հրաման առ դատաւորս քաղաքաց յիւրեանց օրինացն դատ թողուլ զնոսին: Եւ եկեալ ոսոխք յեկեղեցին հարցանէին օրէնս ի քահանայից և ի քահանայապետից, (և նորա) ոչ ունէին զգիրս, որով ընտրեցեն զիրաւունս, զոր և այլոց ազգաց տեսանէին քրիստոնէից և մըսլիմանաց, այսինքն հռոմայեցւոց, պարսից, և այժմու իշխողացս թուրքից: Ի խնդիր եկին ապա առ հայրապետն ի Հայաստանեայց արթուն կղերիկոսք և աշխարհականք, խեթկեալք յայլոց ազգաց և նախանձեալքն զբարւոքն, և խուզեալ ընդ նա մեր յարկեղս գրոց կաթողիկոսարանին, ոչ գտաք օրէնս, բայց միայն զկանոնականս, որ ի սուրբ հարց ժողովոց էր գրեալ, և որ ի նոյն յարեցան ի նոցանէ կանոնս զգուշաւորս եկեղեցւոյ: Իսկ քաղաքի օրէնս ոչ գտաւ ի մէջ նայոց, ոչ յեկեղեցիս և ոչ առ իշխանս: Եւ կարի վշտացեալ հայրապետն խնդիր առնէր առ այլ ազգս: Եւ պատահեալ անդ ասորոց Թէոդոս անուն կիրթ իմաստութեան քահանայ, յայտնեաց տեսանս, զի գոյր առ ինքն այս համառօտ քաղաքական օրինադրութիւնս, և հրաման տուեալ ինձ տառապեալ իւր ձեռնաստուն որդւոյ Ներսէսի, յեղաշրջեցաւ ի հայս՝ նմին յիշատակ բարի, և զկնի եկելոցդ ուղղութիւն ընթացից: Յետ որոյ ապա և ի հելլենացւոց գրոց արարի թարգմանութիւն մովսիսական օրինացդ և Վէտնի և Կոստանդեայ օրինացդ, ի նմանէ թարգմանեցի և զզինուորական օրէնքդ, և ընծայեցի որոց սիրենն վարիլ սովաւ...»<sup>2</sup>:

Այն կարծիքն է հայտնվել, որ Գատաստանագիրք ասելով Սմբատը կարող է նկատի ունենալ հայոց Կանոնագիրքը: Այս մեկնաբանությունը մերժելի է հետևյալ պատճառով. Սմբատը, որ զբաղվում էր օրենսդրությամբ, շատ լավ էր տարբերում դատաստանագիրքը կանոնագրքից, «դատաստանը»,

<sup>1</sup> Մ խ. Գ ո շ, Գատաստանագիրք, Նախադրութիւն, էջ 16 (մեր կարծիքով հեղինակի գրչի տակից դուրս եկած պետք է համարել ընդգծված այլընթերցումը):

<sup>2</sup> Պ. Հովսեփյան, Հիշատակարանը ձեռագրաց, Ա. Անթիլիաս, 1951, էջ 599—601:

իրավունքը «կանոնք»-ից: Նրա Դատաստանագրքի ՃՂ հոդվածը, որ Մխիթարի Դատաստանագրքի Մ, ՄԱ, Կէ, ՃԱ հոդվածների և Նախադրութեան մի հատվածի վերաշարադրությունն է, այդ երկուսի տարբերությանն էլ նվիրված է:

Քաղենք այդ հոդվածի առաջին մասը.

«Կանոնք և դատարանք այսով բաժնին յիրացմէ որ կանոնքն բերդ է, և երբ մեղանշական իր բերնովն ասէ զիր մեղանքն՝ նա ապաշխարութեամբ քաւել տան, և զէդ ի բերդ մտաւ՝ նա փրկեցաւ ի մահվանէ: Բայց դատաստանն բնաւ շունի քաւութիւն և ոչ խղճալ մեղանշականին» (էջ 161):

Մի հատված ևս.

«Ամ թէ զղշայ ու յկեղեցին դիմէ և ի կանոնքն՝ նա տան անուշութեամբ դարձնել զզրկանքն ու քաւել զմեղանքն: Ապա թէ ոչ՝ ի դատաստանն ընկնի՝ նա տա իրաւունքն դարձնել զուժն և ըմպել զքաժակն, զոր ինքն ընկերին խմցոյց»:

Այսպիսով՝ Սմբատը (հետևելով Գոշին) խստորեն սահմանազատում է իրավունքը, դատաստանը կանոնից՝ առաջինը վերապահելով աշխարհիկ իշխանությանը, երկրորդը՝ եկեղեցուն, նշելով երկուսի իրավասության սահմանները:

Մեկը, որ առանձին ու հատկապես խոսում է «Վասն դատաստանաց և կանոնաց», խստորեն սահմանազատելով դրանք, կարող էր խառնել Դատաստանագիրքն ու Կանոնգիրքը, Կանոնգիրքը կոչել Դատաստանագիրք:

Ուստի՝ անհիմն է այն ենթադրությունը, թե Դատաստանագիրքը ասելով Սմբատը նկատի ունի Կանոնգիրքը:

Սմբատը գրում է, թե «ես բաղում աշխատութեամբ փոխեցի» Դատաստանագիրքը «ի մեր հեշտալուր և ի սովորական բառս»: Հայտնի է, որ «փոխել» նշանակել է «թարգմանել, փոխադրել» (Մալխասյան, Բացատրական բառարան, հտ. IV, էջ 511):

Աշոտ Գալստյանը այս բառին ճզնում է նոր ու տարօրինակ բացատրություն տալ: Նրա կարծիքով «փոխեցի» բառը նշանակում է «կազմեցի», «հորինեցի» կամ «գրեցի»: Փորձենք այս բառերից մեկն ու մեկը տեղադրել Սմբատի տեքստում, և անհեթեթությունը անմիջապես երևան կգա. Սմբատը ասում է՝ ես բաղում աշխատութեամբ Դատաստանագիրքը հին ու դժվարհասկանալի լեզվից թարգմանեցի, փոխադրեցի մեր հեշտալուր ու սովորական լեզվով. եթե թարգմանեցի կամ փոխադրեցի բառերի տեղ ղնենք, ասենք, հորինեցի բառը՝ ի՞նչ կստացվի — կարելի՞ է մի բան մի լեզվից մի այլ լեզվի հորինել կամ կազմել:

Ուրեմն՝ անիմաստ է «փոխեցի» բառը այլ կերպ հասկանալ, քան «թարգմանել, փոխադրել», ինչպես բացատրված է մեր բառարաններում և ինչպես պահանջում է հասկանալ Սմբատի տեքստը:

Եվ վերջապես՝ Ա. Գալստյանը, որ իր զրքի առաջաբանում և ամփոփման մեջ շանում է «փոխեցի» բառը բացատրել որպես «կազմեցի», «հորինեցի», «գրեցի», ինչո՞ւ ուռեւրեն թարգմանության մեջ չի դրել այդ բառերից որևէ մեկը, այլ թարգմանել է «переложить» («թարգմանել, փոխադրել») բառով:

Ուրեմն՝ Սմբատին պետք է հասկանալ այնպես, ինչպես ինքը շատ պարզ ասում է. նա փոխել — թարգմանել — փոխադրել է Դատաստանագիրքը (և ո՛չ Կանոնգիրքը) դրաբարից կիլիկյան բարբառի:

Մի այլ փաստարկ էլ է բերում Ա. Գալստյանը իր կարծիքը հաստատելու համար. «Սմբատն իր «Դատաստանագրքի» առանձին հոդվածների կապակցությամբ, — գրում է նա, — հիշատակում է մի շարք աղբյուրներ ու հեղինակներ, բայց դրանց շարքին ոչ մի տեղ չի հիշում Մխիթար Գոշի անունը, կամ նրա «Դատաստանագիրք»-ը» (Ամփոփում, էջ 198):

Այսպիսի հարցադրումը առկա հանգամանքներում ինքնըստինքյան անիմաստ է և, թերևս, իմաստ ունենար այն դեպքում, եթե Սմբատը ինքնուրույն օրենսգիրք գրեր, օգտագործելով բազմաթիվ աղբյուրներ: Բայց եթե նա թարգմանում-փոխադրում է Գոշին ու նրա աղբյուրները, ինչպե՞ս կարող էր նշեց Գոշին իրրև իր աղբյուրներից մեկը:

Ընդհակառակը՝ հենց այն հանգամանքը, որ Սմբատը իրրև աղբյուրներից մեկը չի հիշում Գոշին, ցույց է տալիս, որ Գոշը ոչ թե նրա աղբյուրներից մեկն է, այլ այն բնագիրը, որից ինքը կատարել է թարգմանություն-փոխադրությունը: Տեղն ու տեղը նկատենք, որ Գոշը նշված է Սմբատի մոտ, բայց նա հանդես է գալիս առաջին դեմքով: Սակայն այդ մասին քիչ հետո՝

Սմբատը հոդվածներում մի քանի տեղ ասում է՝ «ես գրեցի», «այսքանք կարողացա գրել համառոտ», «այս բոլորը եթե գրեի՝ շատ կլիներ», «Այս կանոնը փնտրեցի Սահակի մոտ և գտա» (քաղում ենք Ա. Գալստյանից, էջ 198):

Ա. Գալստյանը եզրակացնում է, թե Սմբատը «հավաքել է զանազան օրենքներ, հայ եկեղեցական կանոններ, զանազան կանոնագրքեր, հատկապես սովորույթի իրավունքից և կազմել է «Դատաստանագիրքը» (էջ 198):

Տեսնենք, թե ինչ են դրանք ու ինչ կապակցությամբ են ասված: Նախ նշենք, որ Գալստյանի բոլոր օրինակներում Սահակն ու իր կանոններն են հիշվում, միայն Սահակի կանոնների մասին խոսելիս է Սմբատը առաջին դեմքով հանդես գալիս:

Եվ ահա թե բանն ինչումն է:

Երկու դատաստանագրքերի համեմատությունը ցույց է տալիս, որ Սմբատի մոտ եղած բոլոր հոդվածները, քացի մի քանիսից, կան Գոշի մոտ: Սմբատի մոտ ավելի եղած հոդվածներից 4-ը քաղված են Սահակի կանոններից: Պարզվում է, որ Սմբատը Սահակի կանոններին դիմել է Մխիթարի ճ — «Յաղագս դատաստանաց վանաց ժողովրդեան և եկեղեցեաց» (1 մաս) հոդվածի առիթով: Նախ բերենք Մխիթարի այդ հոդվածը և նրա՝ Սմբատի թարգմանությունը.

Գոշ

Սմբատ

Յաղագս դատաստանաց վանաց ժողովրդեան և եկեղեցեաց

Վասն վանական արեղայից

«Կա՛մ եղև ինձ և յաղագս այսոցիկ սակաւ ինչ գրել, զի ոչ փոքր ինչ հակառակութիւն ի մեր իսկ լինի յաշխարհս յաղագս այսոցիկ աշխարհական քահանայից և վանաց: Սակայն ընդ միտ ամի և յաղագս կանոնաց մեծին Սահակայ՝ թէ որքան զեղեցիկ և քստ կարգի բաժանէ զվանաց և զեկեղեցույ որ յաշխարհի զհասս և զտօնս, և այժմ շիտթեալ և ապականեալ այն ամենայն: Վասն այսորիկ լոնցար յայսոցիկ դատաստանաց.

Հարկ է՝ փոքր ի շատէ յաղագս վանականաց գրել, և զայս արժան է զյերկար սահմանն ի սրբոյն Սահակայ գրեանացն ուսանելու Բայց վայ՝ որ զայն լուծել են վասն նախանձու շարութեան, և ի մեծ ատելութիւն մտել առ իրար արեղայքն և աշխարհի էրեցնին. և վասն այնոր շլացուցանել զդատաստանաց.

զի բէ ի սրբոյն ոչ պատկանեն ի բանից, զիա՞րդ և ի մերոյս:

Եւ թէ վասն սորին դատաստանի կամի որ զի ուղղիցէ, այնորիւք արժան է վարիլ և ոչ այլազգ, զի թէ և կայր կարծիս՝ այժմու գրեցելովքս դատել Ո՛Ձ է՛ր Ի ԳԷՊ Մ Ե Զ 3ԱՆԴԳՆԻԼ, թո՛ղ թէ բնաւին ոչ է կարծիս: Ըստ այսմ կարծեմ և յամենայն ի մեր աշխատութիւնս:

(Դատաստանագիրք, էջ 204—205)

տանս. զի երբ ի սրբոյն ի սահմանէն շե՛ն ի պատկանիլ՝ նա ի մերոյս ո՞րպէս:

Ամա ով ուզէ որ ուսնի՝ նա թող անդի ուսնի. Զի Մ Ե Ն Ք 3 Ա 3 Ս ԿԱՆՈՆՍ ԶԶԱՄԱՐԶԱԿԵՅԱՔ ԱՅԼ ԻՆԶ ԳՐԵԼ:

(Судебник, էջ 36):

Սմբատի այս հոդվածի Գոշից փոխադրութիւն լինելը՝ ակնառու է: Միաժամանակ ընդգծված մասերից պարզ է, որ այս հոդվածում Սմբատի մոտ եղած «մերոյս» (=մեր) և «մենք» դերանունների տակ, որ Մխիթարի հոդվածի «մերոց» և «մեզ» բառերի թարգմանութիւնն են, Մխիթար Գոշն է հանդես գալիս: Որ այդ այդպես է, երևում է և հետևյալից:

Սմբատից քաղված վերոբերյալ հատվածը վերջանում է «զի մենք յայս կանոնս չհամարձակեցաք այլ ինչ գրել» բառերով. եթե դրանք Սմբատի կողմից ասված լինեին, պետք է որ այդտեղ էլ վերջանար հոդվածը: Սակայն Սմբատը Գոշի այս հոդվածով չի բավարարվում և «այլ ինչ» գրում է: Ահա հոդվածի շարունակութիւնը.

«Բայց ինձ Սմբատայ՝ ծառայիս Քրիստոսի՝ յոյժ հարկ եղև յայս տեղիս գտնուլ զսրբոյն Սահակայ նախնոյն մերոյ գրեալ սահմանն, և անտի ճշմարտեցի զուղղութիւն սահմանիս. և զայս անտի գրեցաք համառաւտ»:

Ապա հետևում է երկար հոդվածը քաղված Սահակի կանոններից: Ուրեմն՝ Սմբատը թարգմանում է Գոշի կանոնը, բայց չի բավարարվում նրանով, որովհետև Գոշը չի համարձակվել Սահակից ավելի բան ասել, և դիմում է բուն Սահակին: Այն, ինչ որ մենք ասում ենք՝ ուղղակի ասում է հենց ինքը՝ Սմբատը:

Այսպես ուրեմն՝ այս հոդվածը ցույց է տալիս, որ Սմբատը հենց որ շիղվում է Գոշից՝ այդ մասին տեղյակ է պահում ընթերցողին, մյուս կողմից՝ Սմբատի թարգմանութեան մեջ պահպանված են Գոշի մե՛նք, մեզ՝ հենց իրեն՝ Գոշին նշող դերանունները: Ուստի՝ չի կարելի ասել, թե Սմբատը չի նշում Գոշին ու զարմանալ. Սմբատը իր թարգմանութեան մեջ Գոշին թողել է որպէս հեղինակ, առաջին դեմքով:

Ինչպես ասացինք՝ Սմբատը թարգմանում է Գոշի «Յաղագս դատաստանաց վանաց ժողովրդեան և եկեղեցեաց» վերնագրով հոդվածը և չի բավարարվում: Այս առիթով նա դիմում է Սահակին և նրա կանոնների հիման վրա գրում 4 հոդված նույն նյութին վերաբերող (տես ԼԳ, ԼԴ, ԼԵ, ԼԶ հոդվածները)<sup>1</sup>: Հե-

<sup>1</sup> Ուշադրութեան արժանի է այն պարագան, որ այս մասում համընկնում է Գոշի և Սմբատի հոդվածների հերթականութիւնը, եթե չհաշվենք Սմբատի մոտ Սահակից քաղված միջարկյալ հոդվածները.

Սմբատ

Գոշ, 1

(30) Լ

(97) ՂԷ

(31) ԼԱ

(98) ՂԸ

(32) ԼԲ

(99) ՂԹ

(33) ԼԴ

(100) Ծ և Սահակի կանոններից

(34) ԼԴ

— Սահակի կանոններից

տաքրքիր է, որ հենց այս հոդվածներում է, որոնք ինքնագիր են և ոչ թարգմանություն Գոշից, որ Սմբատը առիթ բաց չի թողնում նշելու իր աղբյուրը:

Այսպիսով՝ Սմբատը Դատաստանագրքի մեջ նշում է միայն մեկ աղբյուր, որից ինքը օգտվել է 4 հոդվածի համար. ուրիշ ոչ մի աղբյուր նա չի նշում, որովհետև փոխադրում է Գոշին, և եթե բնագրում Գոշը իր անձի մասին է խոսում՝ ես, մենք, մեզ, և այլն դերանուններով՝ նույնը պահում է և Սմբատը, այսինքն պահպանում է Գոշի հեղինակությունը:

Դատաստանագրքերի բնագրերի մեր քննարկումը վերջացնենք մի երկու այլ դիտողություններ:

Երբ ուշիմ համեմատությամբ քննության ենք ենթարկում երկու դատաստանագրքերը, մեզ համար պարզվում է, որ Սմբատը «իրավունք», «օրենք» ասելով երբեմն հասկանում է ու նկատի ունի Գոշի Դատաստանագիրքը:

Մխիթարի Դատաստանագրքի ՄԱ հոդվածը, որի մասին առիթ ունեցանք խոսելու, հետևյալն է.

«Եւ որ հարկանէ զանասուն, անձն բնդ անձին տուգանեսցի: Ըստ իւր լայտնի տեսութեանդ և ի մեզ կացուցէ դատաստանդ աստուածային: Սակայն դատաստան կոչի՝ իբր զի քննիցի մախանօք հարեալն և պատահամար և այլն այսպիսի» (Դատաստանագիրք, էջ 361—62):

Այս հոդվածը նկատի ունենալով, Սմբատը գրում է. «Զի հայնց կու հրամայէ իրաւունքս, որ թէ ոք քշտէ անասնոյ նա իմանան ըղորդ զգարկելոյն պատճառն. և թէ ի վերայ սրտի լինի և կամ վասն ռխակալութեան...» և այլն (Судебник, էջ 162): Գոշի հոդվածի առաջին տողը բառացի քաղված է Մովսիսական օրենքներից (Ղևտականք, ԻԴ, 18), իսկ մյուս մասը օրենսգրքի հեղինակի բացատրությունն է, որտեղ ասվում է, որ դատաստանը պետք է քննի ու պարզի, թե հարվածելը ռխակալությամբ է եղել թե պատահամար և այլն: Մխիթարի հենց այս պահանջի առիթով է Սմբատը ասում՝ «զի հայնց կու հրամայէ իրաւունքս»:

Մխիթարի II մասի Թ — «Յաղագս դատաստանաց զինարրուաց և նոցունց վնասուց» հոդվածում պահանջվում է դատել և՛ արբեցողության, և՛ այն վնասի համար, որ հասցնում են հարբածները:

Սմբատի ՃԿԱ՝ «Յաղագս որ հարբենան և խալարայ ու վնաս այնեն» հոդվածում, որ Գոշի նշված հոդվածի փոխադրությունն է, կարդում ենք. «Կու հրամայէ արէնքս, որ զայն ցեղն երկու ազգ պիտի դատել՝ մէկ վասն արբեցողութեան, որ ինքն մարդ էր ու հանչանք խմեց՝ որ խումրեցաւ տայ ու զայն վնասն արար. և երկու հետ, վասն վնասուն զոր գործեց» և այլն:

Այստեղ «կու հրամայէ արէնքս» բառերը դարձյալ ասվում են Մխիթարի հոդվածում պահանջվածի կապակցությամբ: Կարելի է շատ օրինակներ բե-

(35) ԼԵ

(36) ԼԶ

(37) ԼԷ

(38) ԼԸ

(39) ԼԹ

(40) Խ

(41) ԽԱ

(42) ԽԲ

(43) ԽԳ

— Սահակի կանոններից

— Սահակի կանոններից

(101) ՃԱ

(102) ՃԲ

(103) ՃԳ

(104) ՃԴ

(105) ՃԵ

(106) ՃԶ

(107) ՃԷ

րել, բայց բավականանանք այսքանով: Ուրեմն՝ Սմբատը Գոշի Դատաստանագրքի հետ վարվում է որպես օրենսգրքի, գործող պաշտոնական իրավական ուժ ունեցող Դատաստանագրքի:

Երկու դատաստանագրքերի առնչակցությունը ցույց տալու նպատակով կատարված մեր հետազոտությունը, այսպիսով, պարզում է, որ Մխիթար Գոշի Դատաստանագիրքը եղել է գործող օրենսգիրք, պաշտոնական գործածություն ունեցել Սմբատի ժամանակ:

Այն հանգամանքը, որ բնագրական այսպիսի համեմատություններ էր պետք կատարել, շանքեր էր պետք գործադրել բացահայտելու երկու դատաստանագրքերի առնչակցությունը, ինքնըստինքյան խոսում է այն մասին, որ Սմբատը ուղղակի չի թարգմանել-փոխադրել Մխիթարի Դատաստանագիրքը, որ նրանց մեջ կան շատ մեծ, երբեմն նաև որակային տարբերություններ:

Անհրաժեշտ ենք համարում նշել, որ այդ տարբերությունների առկայությունը նկատել ու ցույց են տվել բոլոր այն գիտնականները, որոնք խոսել են Սմբատի Դատաստանագրքի մասին, վերջինս համարելով հայ դպրության մեծարժեք հուշարձան, «մի ի պատուական գոհարաց... բովանդակ հայ գրականության», ինչպես արտահայտվում է Հովնանյանը:

Բանասիրության մեջ, հակառակ Ա. Գալստյանի պնդմանը, ոչ ոք չի զբաղվել երկու դատաստանագրքերի նմանության հարցով, ընդհակառակը՝ անվիճելի համարելով նրանց կապը, բանասերները հատկապես ուսումնասիրել են նրանց տարբերությունները: Ա. Գալստյանը հայտարարում է, թե Հովնանյանը և Կարստը պնդում են, որ իբր թե Սմբատը Մխիթար Գոշի Դատաստանագրքի սոսկ թարգմանիչն է և ապացույցներ են բերում իրենց կարծիքը հաստատելու համար<sup>1</sup>: Հովնանյանի մոտ, օրինակ, ոչ այդպիսի պնդում ենք գտնում, ոչ էլ որե՛է տեղ, որե՛է ապացույց դրա համար:

«Գրությանս մասին,— գրում է Հովնանյանը,— Սմբատա ի կիր արկած վոխեցի (թարգմանեցի) բացատրությունն՝ ընդարձակազույն ևս մտքով առնլու է քան զթարգմանիչ քան՝ զոր գործածէ իւր անձին վրա...»<sup>2</sup>: Սմբատի Դատաստանագիրքը համարելով նոր խմբագրություն (էջ 185, 227), Հովնանյանը մի քանի տասնյակ հոդվածներ համեմատում է Գոշի համապատասխան հոդվածների հետ՝ ցույց տալով նրանց տարբերությունները, սրանք ենթարկելով հինգ խմբավորման: Նույն կարծիքի են և մյուս բանասերները՝ շատ քիչ տարբերությամբ:

Սմբատի Դատաստանագիրքը Գոշի Դատաստանագրքի թարգմանությունը չէ ժամանակակից իմաստով. Սմբատը փոխադրել-վերաշարադրել է այն՝ հարմարեցնելով Կիլիկյան հայ պետականության ու զգալի շափով տարբեր սոցիալական միջավայրի պահանջներին: Այդ պատճառով էլ երկու դատաստանագրքերի միջև չէին կարող չլինել տարբերություններ:

Այդ տարբերությունները վերաբերում են Դատաստանագրքի տարբեր ապեկտներին և կարևոր են հատկապես իրավաբանական-օրենսդրական տեսակետից. այս վերջին առումով, մանավանդ, դրանք հաճախ որակային բնույթ

<sup>1</sup> Судебник, էջ XIX:

<sup>2</sup> Ղ. Հովնանյան, նշված աշխատ., էջ 203:

սունն: Սմբատը, ինչպես տեսանք, ավելացնում է նոր հոդվածներ, շատ հաճախ առաջադրում է նոր լուծումներ՝ տարրեր հասարակական-քաղաքական պայմանների ու հարաբերությունների թելադրանքով, տալիս է նոր իրավաբանական նորմեր և այլն: Այս բոլորը Սմբատի Դատաստանագիրքը դարձնում են ինքնուրույն արժեք ներկայացնող հուշարձան:

Մեր նպատակից դուրս համարելով, ինչպես սկզբում էլ ասացինք, երկու դատաստանագրքերի «արրերությունների մասին խոսելը, նշենք, որ դրանք շատ դեպքերում սկզբունքային ու արմատական են, ուստի և արժանի հատուկ մենագրական հետազոտության: Միայն դրանց բացահայտման ու վերլուծության միջոցով, որ մի շատ շնորհակալ աշխատանք կլինի, կարելի է ցույց տալ Սմբատի Դատաստանագրքի իրական արժեքը, նրա տեղն ու դերը հայ իրավաբանական գրականության, և առհասարակ հայ դպրության պատմության մեջ. իսկ այդ տեղն ու դերը շատ մեծ է:

Միաժամանակ դա կնշանակեր բացահայտել հայ իրավունքի կրած փոփոխությունը Գոշից մինչև Սմբատ ընկած ժամանակամիջոցում և բուն Հայաստանից նկատելիորեն տարրեր կիրիկյան միջավայրում:

Սմբատի և Գոշի դատաստանագրքերի առնչակցության ծխտումը բխում է ուսումնասիրվող հեղինակին բարձրացնելու ու մեծացնելու անիմաստ միտումից, միտում, որ իրեն երբեմն զգալ է տալիս հատկապես վերջին շրջանում և խանգարում է հին դպրության պատմության որոշ հարցերի գիտական լուծմանը:

ЭМ. ПИВАЗЯН

## О СООТНОШЕНИИ СУДЕБНИКОВ МХИТАРА ГОША И СМБАТА СПАРАПЕТА

Резюме

Статья посвящена вопросу о соотношении и связи двух важнейших памятников армянского права — Судебников Мхитара Гоша (конец XII в.) и Смбата Спарапета (60-е гг. XIII в.).

Влияние Судебника Мхитара Гоша на Смбата Спарапета подтверждено исследованиями ряда филологов и историков права (Г. Алишан, В. Бастамян, Г. Овнанян, И. Карст, Х. Самуэлян и др.) Однако в Предисловии вышедшего недавно русского издания Судебника Смбата Спарапета выражена точка зрения, согласно которой Смбат при составлении своего Судебника не использовал Гоша и не был знаком с его трудом.

Автор статьи оспаривает это мнение и, восстанавливая прежнюю точку зрения, путем сличения текста обоих Судебников пытается доказать, что Судебник Смбата Спарапета является переводом Судебника Мхитара Гоша с древнеармянского на киликийский диалект армянского языка. Одновременно автор говорит о том, что Смбат не просто перевел Судебник Мхитара, а переложил его, приспособив к социально-экономическим отношениям Киликийского армянского государства.

Լ. ԽԱԶԵՐՅԱՆ

«ԳՐԶՈՒԹՅԱՆ ԱՐՎԵՍՏԻ» ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ  
ԳԵՎՈՐԳ ՍԿԵՎՈՒԱՑՈՒ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ՝

«... Տոլով են վաճառված այսօրից խնդիրը և բազում աշխատություններն պէտք են և ընդարձակ խրատուց: Մակայն շափառու այս, իբր զկաթիլ ի համատարած ծովէ բաւական եղև քաջահասիցն առարէից, որք ի սակաւուցն զբազումն վաղվաղակի կարողանան առնուլ ի միտ, որպէս թէ միով բանիւ զհազարաց պատասխանի»:

ԳԵՎՈՐԳ ՍԿԵՎՈՒԱՑԻ

13-րդ դարի երկրորդ կեսի միջնադարյան հայ նշանավոր քերականներից է Գևորգ Սկեռացին, որը հայ մատենագիտության մեջ հայտնի է նաև որպես Գևորգ Լամբրոնացի<sup>2</sup>: Լամբրոնացի կամ Սկեռացի մակդիրները տրվել են նրկու առումով. առաջին՝ որ նա ծնվել է Լամբրոնում, և երկրորդ՝ իր ուսումն ստացել է Սկեռա վանքում, ուստի և կոչվել է Գևորգ Սկեռացի կամ Լամբրոնացի:

Գևորգ Սկեռացու ծննդյան թվականը հայտնի չէ, բայց մահվան թվականը ստույգ է. վախճանվել է 1301 թվականին<sup>3</sup>: Նրա քեռին՝ Գրիգոր Սկեռացին, ժամանակի նշանավոր դեմքերից մեկն է եղել և մեծ համբավ վայելել Հայաստանի մշակութային օջախներում. նա երկար ժամանակ հանդիսացել է Սկեռա վանքի դպրապետ-ուսուցչապետը, որի մոտ են սովորել այդ շրջանի մեր մշակույթի մի շարք հայտնի և անհայտ մշակներ. նրա մոտ իր կրթութունն է ստացել նաև Գևորգ Սկեռացին:

Գևորգ Սկեռացու կենսագրական տվյալները շափազանց աղքատիկ են: Նա պատանի հաշակում պանդուխտ է եղել և շրջագայել պատմական Հայաստանի շատ վայրերում: Նա իր գրական և գիտական գործունեությունը հիմնականում ծավալել է Կիլիկիայում և իր բեղմնավոր աշխատանքի շնորհիվ իր ժամանակին հռչակվել է իբրև «...այր փիլիսոփայ և կատարեալ իմաստասէր և անուանի»<sup>4</sup>, «բազում անգամ կոչեցեալ է Գևորգ բարունապետ և ուսուցիչ և խրատիչ...»<sup>5</sup>:

Փոքր հասակից Գևորգ Սկեռացին իրեն նվիրել է գրչության արվեստին և

<sup>1</sup> Սույն հոդվածը հեղինակի «Գրչության արվեստի քերականական տեսությունը միջնադարյան Հայաստանում» (բնագրերի համահավաք տեքստերով) աշխատության մի հատվածն է:

<sup>2</sup> Հ. Ա ճ ա ո յ ա ն, Անձնանունների բառարան, Երևան, 1942 թ., հատ. Ա, էջ 465:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 465:

<sup>4</sup> Ղ. Ա լ ի շ ա ն, Սիսուան, Համագրութիւն հայկական Կիլիկիոյ և Լեոն մեծագործ, վեցերորդ, 1885, էջ 532—533:

<sup>5</sup> Ղ. Ա լ ի շ ա ն, Սիսուան, էջ 106:



բազմաթիվ ձեռագիր-աշխատություններ է ընդօրինակել ու բազմացրել: Ուսումնասիրության նպատակով եղել է նաև Բջնիում Գրիգոր արքեպիսկոպոսի և Վարդան ու Գրիգոր ուսուցիչների, ինչպես նաև նշանավոր պատմիչ և քերական Վարդան Արևելյուց մոտ<sup>1</sup>, Բացի ձեռագրեր ընդօրինակելուց, Գևորգ Ակևոացին զբաղվել է նաև գրական և գիտական գործունեությամբ. նրա գրական գործերից են՝ «Մեկնութիւն գործոց առաքելոց», «Ներբողեան ի Յովհ. Աւետարանիչ», «Մեկնութիւն նսայեայ» (վերջինս գրել է Հեթում Թաղավորի խնդրանքով), գանձեր, կանոններ, բանք խրատականք, է այլն<sup>2</sup>:

Սակայն Գևորգ Ակևոացու ժառանգության մեջ առավել ուշագրավն ու արժեքավորը նրա քերականական-ուղղագրական աշխատություններն են: Նա հայ մատենագիտության մեջ հայտնի է իբրև «գրչության արվեստի» քերականական տեսություն ստեղծողներից մեկը:

Ինչպես հայտնի է, «գրչության արվեստ» ասելով մեր մատենագետներն ու բանասերները հասկացել են հիմնականում հայերեն տառաձևերի տարբեր տիպերն ու տեսակները, որոնք զարգացման տարբեր փուլեր են ունեցել դարերի ընթացքում: Այդ առումով առանձին արժեքավոր ուսումնասիրություններ են կատարել հայ անվանի հայագետ Հ. Տաշյանը («Ակնարկ մը հայ հնագրության վրա», Վիեննա, 1898 թ.), Գ. Հովսեփյանը («Գրչության արվեստը հին հայոց մեջ», Վաղարշապատ, 1913 թ.), Ի. Հարությունյանցը («Հայոց գիրը», Թիֆլիս, 1892 թ.), մեծանուն լեզվաբան պրոֆ. Հր. Աճառյանը («Հայոց գրիւրը», 1928 թ.), Կ. Ղաֆադարյանը («Հայկական գրի սկզբնական տեսակները», Երևան, 1939 թ.), Ա. Աբրահամյանը («Հայ գրի և գրչության պատմություն», Երևան, 1959 թ.): Բայց վերոհիշյալ հեղինակները գրչության արվեստը քննել և հետազոտել են միայն հնագրության տեսանկյունից, դիտելով այն իբրև հնագրության (պալեոգրաֆիայի) մի առանձին բնագավառ: Այդ է պատճառը, որ հայագիտության մեջ գրչության արվեստ հասկացությունը ձեռք է բերել միայն հնագրական բովանդակություն և նշանակություն:

Սակայն «գրչության արվեստը» միջնադարյան Հայաստանում շափագանց լայն առում ուներ. նա իր մեջ ընդգրկում էր նաև հարակից արվեստներ, ինչպես մանրանկարչությունը, զարդագրությունը, կազմարարությունը, թանաքագործությունը, և այլն, որոնք մասնագիտացվելով հետագայում դարձան արվեստի առանձին բնագավառներ՝ իրենց հատուկ օբյեկտներով: Այդ տեսակետից գրչության արվեստի հետ առավել սերտ առնչություն ունեն նրա քերականական տեսությունը, որը գիտական հատուկ ուսմունք էր, և ավելի կարևոր, քան սոսկ հնագրական տեսանկյունից դիտվող տառաձևերի զարգացման տեսությունը, ուստի և հավասար իրավունք ունի կոչվելու իբրև գիտության առանձին բնագավառ: Այդ պատճառով, ի տարբերություն գրչության արվեստի պալեոգրաֆիկ և այլ կարգի նշանակությունների, մենք անվանում ենք «գրչության արվեստի բերականական տեսություն» գիտության այն բնագավառը, որը ձեռագրերը ճիշտ արտագրելու և անսխալ կարդալու օրենքներ և կանոններ է սահմանում:

Հարց կարող է ծագել, թե ինչպե՞ս կարելի է ուղղագրության, վանկատության, տողադարձի, բառարանագրության, կետագրության, առգանության

<sup>1</sup> Տե՛ս Հ. Աճառյան, Անձնանունների բառարան, հատ. Ա, էջ 465:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում:

հարցերի քննարկումը «քերականական տեսութիւն» համարել. չէ՞ որ նրանք, ժամանակակից ըմբռնմամբ, քերականութեան սահմանման մեջ չեն ընդգրկւում: Այստեղ, ահա, անհրաժեշտ է պատմական մոտեցում ցուցաբերել: Խընդիրն այն է, որ գրչութեան արվեստի քերականական տեսութեան հիմնադիրները (Արիստակես Գրիշը, Գևորգ Սկևռացին) հիշյալ բոլոր հարցերը քննում և վերլուծում էին Բերականուրջան տեսանկյունից, քերականական առումով հիմնավորելով ուղղագրական այս կամ այն կանոնը. նրանք իրենց ամբողջ տեսութիւնը հիմնում էին հայերենի քերականական օրինաչափութիւնների հաշվառման և վերլուծման խորքի վրա: Նույնիսկ ուղղագրական բառարան կազմելիս, որտեղ ամենևին չի ենթադրւում քերականութեան ներթափանցում, նրանք հագեցրել են այն քերականական գիտելիքներով ու բացատրութիւններով: Իրականում, գրչութեան արվեստի քերականական տեսութիւն ստեղծողները ոչ թէ սոսկ մակերեսային կանոններ էին սահմանում ձեռագրերի ընդօրինակման համար, այլ խորը գիտական, Բերականուրեն պատճառաբանված և հիմնավորված կանոններ և նորմաներ, որոնց հմուտ կիրառման շնորհիվ միայն կարող էին ստեղծվել անթերի, գրագիտական բարձր որակով և ճշակով գաղափարված ձեռագրեր:

\* \*  
\*

Արիստակես Գրիշից հետո Գևորգ Սկևռացին է այն քերականը, որը բացառապես մշակել և կանոնավորել է հայոց լեզվի դրադարձութեան, ուղղագրութեան, կետադրութեան և առոգանութեան նորմաները:

Հարց է ծագում, պատմական ի՞նչ անհրաժեշտութիւն կար, որ հատկապես 12—13-րդ դարերում կարիք զգացվեց գրչութեան արվեստի քերականական տեսութիւնը ստեղծելու:

Ինչպես հայանի է, մինչև Արիստակես Գրիշի և Գևորգ Սկևռացու հանդես գալը, դեռևս 5-րդ դարից մեր մատենագրութեան լավագույն նմուշները գրիչների միջոցով անընդհատ ընդօրինակվել և բազմացվել են՝ չնայած ժամանակի ջնջող ձեռքի և անվերջ ասպատակութիւնների ու ներխուժումների միջոցով հայ ժողովրդի հոգևոր մշակույթի արժեքները ոչնչացվելու հանգամանքներին: Հայ ժողովրդի հոգևոր արժեքների պահպանման նախանձախընդիր մշակները՝ գրիչները, դարեր շարունակ ընդօրինակել և բազմացրել են ձեռագիր աշխատութիւնները՝ առանց պահանջ անենալու ուղղագրութեան, կետադրութեան և առոգանութեան հատուկ ուսմունքի, որը ուղեցույց պետք է հանդիսանար ձեռագիր աշխատութիւնները ընդօրինակելիս պահպանելու հայոց լեզվի ընդհանուր օրինաչափութիւնները: Նրանք բավարարվել են միայն 5-րդ դարի վերջում հայերենի թարգմանված հույն նշանավոր քերական Գիոնիսիոս Քրակացու աշխատութեան մեջ հայ թարգմանչի՝ հայերենի համեմատութեամբ կատարած մասնակի գիտողութիւններով: Այդ հանգամանքը բացատրվում է նրանով, որ մեր մատենագրութեան սկզբնավորման ժամանակ և հետագայ որոշ շրջանում արտասանութեան և գրութեան միջև հակասութիւն չի եղել, արտասանութիւնն ու գրութիւնը լիովին համընկել են: Հայ առաջին խոշոր քերական Մեսրոպ Մաշտոցը հայերենի հնչույթային համակարգը որոշելիս ելել է այն սկզբունքից, որ հասարակականորեն ճանաչված յուրաքանչյուր հնչույթին պետք է հատկացնել մեկ տառ. ուստի և տառը տվյալ դեպքում

հնչույթի գրավոր արտահայտությունն է, նրա պայմանական համարժեքը: Այդ պատճառով էլ Մեսրոպի ժամանակ և նրանից որոշ ժամանակ անց հայերենի արտասանվածքը և գրությունը լիովին համապատասխան են եղել իրար: Սակայն կենդանի լեզուն շարունակում է իր զարգացումը ապրել և փոփոխությունների ենթարկվել այն դեպքում, երբ նրա գրավոր արտահայտությունը՝ մատենագրությունը, լինելով պահպանողական, ավանդության ուժով զերծ է մնում փոփոխություններից: Հետագա սերունդները իրենց նախորդների հոգևոր մշակույթի արտադրանքի նկատմամբ պատկառանքով ու սրբությամբ են մոտենում, ուստի և որևէ եղծում կամ խաթարում անթույլատրելի է համարվում արդեն իսկ ստեղծված կանոնների և օրինաչափությունների նկատմամբ:

Ինչպես հայտնի է հայոց լեզվի պատմությունից, 12—13-րդ դարերում գործածվող հայերենը շատ էր հեռացել գրաբարի դասական վիճակից, որով և ստեղծվել էր միջին հայերեն կոչվող խոսակցական լեզուն. իսկ այս շրջանում կիրառվող գրաբարը բուլորովին էլ այն չէ, ինչ 4—5-րդ դարերում հայ ժողովրդի շրթների վրա թրթռացող գրաբարը: Որքան էլ միջնադարյան հեղինակները աշխատում էին գրել դասական հայերենի պատմիչների ու մատենագիրների լեզվով, այդ նրանց չէր հաջողվում. պատճառն այն է, որ նրանք գրաբարում էին իրրև սովորովի մի լեզվով, ուստի և յուրաքանչյուր միջնադարյան հեղինակի բարբառային լեզվամտածողությունը, քերականական ձևերն ու արտահայտչական միջոցները թափանցում էին նրա գրավոր արտադրանքի մեջ: Ն. Աղոնցը գրում է.

«Ընդհանուր ժամանակաշրջանում պետք է տարբերել նախաբազրատունյան, բազրատունյան և հետբազրատունյան շրջաններ: Բառավերջում դրվող ձայնավորների հարցը բացատրվում է նրանով, որ առաջին շրջանում (նախաբազրատունյան) բառավերջի ա, ո, ե ձայնավորները ներփակվում էին յ կիսաձայնով, իրրև համընդհանուր կերպով ընդունված նորմա: Դիոնիսիոսի թարգմանիչը հստակ կերպով ձևակերպել է, որ հայերենում բառերը կարող են վերջանալ բոլոր տառերով, բացի ա, ե, ո, ը տառերից»<sup>1</sup>:

Բնորոշ է Ն. Աղոնցի այս պարբերացումը հայոց լեզվի արտասանվածքի աստիճանական փոփոխության և զարգացման վերաբերյալ 5-րդ դարի մեր մատենագրության նկատմամբ, երբ գրության և արտասանվածքի լրիվ ներգաշնակություն է եղել: Եվ իրոք, Բազրատունյաց շրջանը հայոց լեզվի զարգացման տեսակետից համարվում է այնպիսի մի փուլ, երբ որակային տարբերություններ են նշվում ուղղագրության մեջ. մեզ հասած ամբողջական առաջին ձեռագրի (Լաղարյան կոչված 887 թվականի Ավետարանի), ինչպես նաև ավելի վաղ շրջանի առանձին պատառիկների ու վիմագիր արձանագրությունների գրության պարզ համեմատությունից երևում են բազմաթիվ ուղղագրական շեղումներ ընդհանուր օրինաչափություններից: Իսկ հետբազրատունյան շրջանում գրված և ընդօրինակված ձեռագիր աշխատություններում ու վիմագիր արձանագրություններում այդ տարբերություններն ու շեղումները առավել ևս ուժեղանում ու խորանում են: Այս երևույթը կարելի է բացատրել երեք հանգամանքներով. առաջին, որ և ամենակարևորն է, կենդանի խոսակցական լեզուն դարերի հարահաջով գործածության պատճառով, համաձայն

<sup>1</sup> Ն. Աղոնց, Дионисий Фракийский и армянские толкователи, Петроград, 1915 թ., էջ LXVIII:

իջ ներքին օրինաչափութիւնների, շատ է հեռացել իր նախկին՝ դասական հայերենի վիճակից, ուստի և արտասանվածքի և ավանդական գրության միջև անջրպետը լայնացել ու խորացել է: Երկրորդ, բարբառների առաջացումն ու աշխուժացումը, գրիչների բարբառային տարբեր պատկանելիութիւնը նույնպէս իր կնիքն է դրել գրավոր արտադրանքի մեջ ուղղագրական խայտաբղետութիւն ստեղծելու գործում, երրորդ, որն արդեն սուբյեկտիվ մտժենտ է, բուն իսկ գրիչների լեզվարանական ու քերականական պատրաստութեան ցածր մակարդակը:

Այս պայմաններում, ահա, հասունացավ քերականական մի նոր ուսմունքի ստեղծման անհրաժեշտութիւնը, որը հայ մատենագիտութեան մեջ հայտնի է «գրչության արվեստ» անունով: Խոսելով «գրչության արվեստի» առաջացման հանգամանքների ու դրդապատճառների մասին, պրոֆ. Գ. Զահուկյանը գրում է. «Այս շրջանում քերականութիւնը համեմատաբար քիչ վերացական բնույթ ունի՝ ձեռք բերելով գործնական մեծ նշանակութիւն: Կիլիկիայում քերականութեան նկատմամբ հետաքրքրութեան աճը մեծ շափով բխում է հենց ձեռագրերը ճիշտ վերարտադրելու, ձեռագրերի ուղղագրութիւնը կայունացնելու և տեսականորեն հիմնավորելու պահանջներից: Այս հողի վրա հանդես են դալիս «գրչության արվեստի» վերաբերյալ աշխատութիւնները, որոնց հեղինակները գլխավոր նպատակ ունենալով ուղղագրութեան ու կետագրութեան կայունացումը՝ միաժամանակ հաղորդում են քերականական ալլեալ արժեքավոր տեղեկութիւններ»<sup>1</sup>:

Սակայն ուշադրավ է այն, որ «գրչության արվեստի» քերականական տեսութեան առաջին հեղինակները, որոնք ամբողջական աշխատութիւններ նվիրեցին ուղղագրութեան հարցերին, իրենց ուսմունքի հիմքում դրեցին ոչ թե ժամանակակից խոսակցական լեզվի հնչյունական արտասանութեանը համապատասխանող ուղղագրական կանոնները, այլ դասական հայերենի հնչյունական արտասանվածքը արտացոլող մատենագրութեան ուղղագրական կանոնները: Նրանք իրենց աչքի առաջ ունեցան միայն 4—5-րդ դարերում գործածվող կենդանի լեզվի մատենագրութեան մեջ արձանագրված ուղղագրական կանոններն ու օրինաչափութիւնները: Այստեղ հաղթանակեց ավանդականութեան ուժը. այդ նշանակում է, որ Արիստակես Գրչի և Գևորգ Սկևոացու աշխատութիւններով հայերենի ուղղագրութեան նորմաների և կանոնների մշակումը դրվեց ավանդական ուղղագրութեան սիստեմի մեջ: Սրանից հետևում է, որ անկախ հետազայում հայոց լեզվի կրած պատմական հնչյունափոխութեան բնույթից ու տարողութիւնից, նրա գրավոր արտահայտութիւնը կառչած էր մնալու դասական հայերենի ուղղագրութեան նորմաներին ու կանոններին, ուստի և ժամանակի ընթացքում խոսակցական լեզվի և գրութեան միջև անջրպետը գնալով մեծանալու էր: Այս առթիվ ուշադրավ է Ն. Ադոնցի հետևյալ դիտողութիւնը. «Կիլիկյան շրջանում, երբ խոսակցական լեզուն համարձակ կերպով իր համար ճանապարհ էր հարթում գրականութեան մեջ, թվում էր, թե պետք է հաղթանակեին ուղղագրութեան այն նորմաները, որոնք համապատասխան կլինեին արտասանվածքին: Բայց ինչպէս որ նոր լեզվին շահողովեց մինչև գրական լեզվի մակարդակը բարձրանալ, այն-

<sup>1</sup> Գ. Զահուկյան, Քերականական և ուղղագրական աշխատութիւնները հին և միջնադարյան Հայաստանում, Երևան, 1954, էջ 235:



ի լծորդս և ի բացատս, և ի տրոհմունս առոգանութեանց»<sup>1</sup>: Իսկ վերջին աշխատությունը հեղինակը գրել է ոմն Կոստանդին գրչի պատվերով:

Մատենադարանում գտնված ձեռագիր-աշխատություններից լավագույնը համարեցինք 2371 համարի տակ դրանցված ձեռագիրը, որը և՛ նյութի ամբողջականության առումով, և՛ մյուսների համեմատությամբ ունեցած վաղընջականության ու գրչության որակի տեսակետից գերազանցում է մնացածներին: Միևնույն ձեռագրում ընդգրկված են հեղինակի երեք աշխատություններն էլ:

Այդ ձեռագրի գրության ժամանակն է 1357 թ., նյութը՝ թուղթ, 14×10 սմ չափսի:



Ինչպես հայտնի է, Արիստակես Գրիչը իր աշխատության մեջ հիմնականում քննել և մշակել է «Գրչության արվեստի» քերականական տեսության միայն ուղղագրական կանոններն ու նորմաները: Սակայն «գրչության արվեստի» քերականական տեսությունը չի սահմանափակվում միայն հարցի այդ կողմով. նա ընդգրկում է նաև տողադարձի, վանկատության, կետադրության և առոգանության խնդիրները: Այդ հարցերի լուծմամբ է դրադվում Գևորգ Սկևոացին: Վերջինս «գրչության արվեստի» վերաբերյալ իր աշխատությունների մեջ նպատակ է դրել հետազոտել տողադարձի, կետադրության, առոգանության, մասամբ նաև ուղղագրության կանոններն ու օրենքները: Այս առթիվ պրոֆ. Գ. Զահուկյանը գրում է. «Եթե Արիստակեսը կարևոր դեր կատարեց ուղղագրության կայունացման մեջ, ապա կետադրության և տողադարձի կայունացման պատիվը պատկանում է Գևորգ Սկևոացուն»<sup>2</sup>:

Ինչպես նշեցինք, Գևորգ Սկևոացին երեք փոքրիկ աշխատություն է նվիրել այդ հարցերին, որոնք, ըստ երևույթին, շատ մեծ տարածում են գտել և երկար ժամանակ ուղեցույց ձեռնարկ են հանդիսացել հայերենի վանկատության, տողադարձի, կետադրության և առոգանության նորմաների ուսուցման, ինչպես նաև խիստ կարևոր դեր կատարել կայուն օրինաչափություններ հաստատելու և ամրապնդելու գործում:

Գևորգ Սկևոացին իր մի աշխատության առաջարանում գիտական ամենայն բարեխղճությամբ խոստովանում է, թե իր ուսուցչից՝ Արիստակես Գրչից օ՛րբանով է օգտվել ինքն և ո՛րն է իր նորամուծությունը: «Անպարապ անձամբ ձեռնարկեցի գրել զսա՝ այրս թշուառ և ծաղկաբաղ արարեալ զմասն ինչ գրելոցն յԱրիստակիսէ հոետոր գրչէ եղի աստ, է ինչ զոր լուծեալ ի նմանէ և է ինչ յեղելոցս աստ տակալին տարակուսի փակեալ: Իսկ ի ծանաթ և յերկարեալ նորայն բանից, էր ինչ յորոյ երկայնութենէն զանց արարի, և էր զոր վասն անհաւաստի գոլոյն՝ թողի...: Այլ վասն դրադարձիցն, զոր սոսկ յիշեաց միայն նա և էանց, տաց տակաւ մի զհանգամանսն, և զպատճառսն եւս ըստ կարի»<sup>3</sup>:

Հարկ է նշել, որ Գևորգ Սկևոացին իր արժարժած հարցերը չի քննում միայն նեղ տեսանկյունից, չի բավարարվում տվյալ հարցերի համառոտ շարադրանքով: Նա իր առաջադրած խնդիրների մեկնաբանությունը ուղղակի

<sup>1</sup> Ղ. Ա լ ի շ ա ն, Միտուան, էջ 532:

<sup>2</sup> Գ. Զ ա հ ու կ յ ա ն, նշված աշխատությունը, էջ 228:

<sup>3</sup> Ձեռագիր, № 2371, Թ. 132ա—բ:

տալու հետ միաժամանակ քերականական գիտելիքներ ու տեղեկություններ է հաղորդում իր պատվիրատուներին: Այդ նշանակում է, որ Գևորգ Սկևռացին տողադարձի, վանկատության, կետադրության և առգանության վերաբերյալ իր ուսմունքը շարադրելիս չի սահմանափակվում սկզբունքների ու կանոնների սոսկ թվարկումով, այլ պատճառարանում և հիմնավորում է այն քերականական հարակից տվյալներով ու երևույթներով, հայոց լեզվի քերականության ներքին օրինաչափությունների համաձայն:

Ուշագրավ է նաև Գևորգ Սկևռացու շարադրանքի ոճի անմիջականությունը, նրա մանկավարժական մեթոդը. նա իր քերականական հայացքները շարադրելիս միշտ նկատի է ունեցել իր պատվիրատուին, այդ պատճառով էլ որևէ դրույթ սահմանելիս կամ մեկնաբանելիս բայի հրամայական եղանակի երկրորդ դեմքով է դիմում. «Յաղագս այսոքիկ նախ զայս գիտասջիր... և այսպէս ըստ կարգի այբենացն, զոր ոչ կամեցայ երկայնել՝ զի մի ձանձրացի լսաւն, բայց զզարութիւն սոցա այսպէս իմա...»<sup>1</sup>:

ա) «ԽՐԱՏ ՎԱՄՆ ՀԱՆԳԱՄԱՆԱՅ ՀԵԳԻՑ»  
ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԱՐԾԱՐԾՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ

Այս աշխատության մեջ Սկևռացին քննում է գրադարձության սկզբունքները և շարադրում այն կանոնները, որոնցով պետք է առաջնորդվի գրիչը ձեռագրեր ընդօրինակելիս: Հեղինակը գրադարձության իր տեսությունը հիմնում է հայերենի վանկատության ուսմունքի վրա, այդ պատճառով էլ իր գիտողություններն սկսում է հենց «վանկ» հասկացությունից, տալիս իր սահմանումը և ապա նշում հայերեն բառերի վանկային բաղկացության հանգամանքները: Այդ սոսթիվ նա նկատում է, որ անտիկ գիտության մեջ հույները գրադարձության և վանկատության արվեստի հաստատուն գիտելիքներ են ունեցել. «... Այլ մանաւանդ ըստ վերագոյն ցուցելոյ աւրինակիս ի քերթողացն մերոց և ի փիլիսոփայիցն աւանդելոյ, զոր և ազգն յունաց հաստատուն ունի զարուեստս զայս հեգից»<sup>2</sup> (ընդդժումը մերն է—Լ. Խ.): Հեղինակի այս ակնարկը ուշագրավ է այն տեսակետից, որ մեր հայ քերականները (և ոչ միայն քերականները) հատուկ ակնածանք ու պատկառանք են ունեցել անտիկ աշխարհի հոգևոր արժեքների նկատմամբ, ուստի և տվյալ դեպքում գրադարձության ուսմունքի անհրաժեշտությունը հայերենում հիմնավորելու համար ծառայում է այն փաստարկը, որ «... և ազգն յունաց հաստատուն ունի զարուեստս զայս հեգից», Մի այլ տեղ քննադատելով այն համբակ գրիչներին, որսնք շփոթում են սուղ նշանի կիրառությունները աւ-ի և ով-ի (համարելով վերջիններս հոճարենի օմեգայի հայերեն համարժեքները) նկատմամբ, և «յանձանաւթութենէ» հունարենի կանոնների, իրենց սխալը վերադրում են նաև հույներին, Սկևռացին պատասխանում է. «Ասեմ, թէ զի նոքա (այսինքն՝ հույները — Լ. Խ.) յոյժ կիրթք են արուեստի քերականին, մանաւանդ յարուեստ առգանութեանցն գրեթէ քան զամենայն ազգս»<sup>3</sup> (ընդդժումը մերն է—Լ. Խ.):

<sup>1</sup> Ձեռագիր, № 2371 Բ. 159բ:

<sup>2</sup> Նույն տեղում, Բ. 136բ:

<sup>3</sup> Նույն տեղում, Բ. 147ա:

Հետաքրքարական է Սկեռացու պատկերացումը նաև լեզվի կառուցվածքի մասին. նա գտնում է, որ գրավոր խոսքում հնչույթների պայմանական արտահայտութիւնը հանդիսացող տառերը (իր մոտ «գիր» է օգտագործվում տառի փոխարեն իբրև հնչունային գրապատկեր) խոսողութեան նյութն են, քանի որ այդ տառերի կապակցութիւնից ստեղծվում է վանկ, իսկ վանկերի զուգակցումից էլ առաջանում է բառը: «Եւ է գիրս բովանդակ՝ նիւթ ամենայն խաւսից.— գրում է նա.— գի ի միմեանս կցկցելով սորա ստեղծանեն նախ հեզս կիսակատարս, որ ասի վանգ և փաղառութիւն, և ապա հեզիցն ընդ միմեանս զուգեալ գոյանայ բառ, որ է անուն կամ բայ, կամ այլ ինչ յութ մասանց բանին»<sup>1</sup>: Ինչպես տեսնում ենք, Սկեռացին խոսքի մասերից ամենակարևոր միավորները համարում է անունը կամ բայը, որոնք թեև ամբողջական «կատարյալ» բառեր են, սակայն ինքնին, առանձին վերցրած, առանց «միահյուսման» խոսք չեն կազմում, այլ կերպ ասած՝ դրա համար անհրաժեշտ է քերականութիւն: «Եւ է անուն, որգոն աստուած, և բայ՝ որդան հաստատեաց և զմարդն անուն դարձեալ: Արդ սորա ըստ ինքեանց բառք են և հիւսեալ ապա բառս ընդ իրեարս կատարեն բան, որգոն՝ աստուած հաստատեաց զմարդըն»<sup>2</sup> (ընդգծումը մերն է—Լ. Խ.): Այստեղից Սկեռացին կատարում է մի շատ կարևոր հետևութիւն՝ ճիշտ պատկերացնելով խոսողութեան գրավոր արտացոլման ամբողջ պրոցեսը. «Այսպէս ամենայն երկար բանք ի բառից շարադրութենէ բաղկանան, իսկ բառքն՝ ի հեզից և հեզքն ի տառից»<sup>3</sup>:

Լեզվի նյութական նվազագույն միավորի՝ հնչույթի գրավոր արտահայտութիւնը համարելով բառի կազմութեան բուն իսկ ատաղձը, հեղինակը տալիս է նաև նրա ֆիզիկական դասակարգումը. նա պահանջում է, որ գրադարձութեան արվեստը իմանալու համար «արուեստաւոր» գրիչը նախ պետք է իմանա հետևյալը. «բովանդակ գիրն, որ է ԼԶ յայրէ մինչև ցքէ, նախ յերկուս գլխաւոր որոշմունս բաժանի՝ ի ձայնաւորս և յանձայնս», ընդ որում ձայնավորների մեջ Սկեռացին՝ իր նախորդ քերական-մեկնիչների նման, ընդունում է յոթ հնչույթներ՝ ա, ե, է, ը, ի, ո, լ, իսկ բաղաձայնների (իր տերմինով՝ «անձայնների») մեջ հայերենի մնացած հնչույթները:

Այստեղ կարևոր է դիտել հետևյալ հանգամանքը. Սկեռացին ձայնավորների մեջ ընդունում է ե-ն և է-ն իբրև պարզ ձայնավորներ, ըստ որում այդ ձայնավորների տարբերակումը, ինչպես Դիոնիսիոս Թրակացու հայերեն թարգմանութեան մեջ, կատարում է ըստ ձայնի տեղութեան շափի՝ երկարութեան կամ կարճութեան: Ե-ն համարվում է կարճ ձայնավոր, ի տարբերութիւն է-ի, որը ճանաչվում է իբրև երկար ձայնավոր: Այս տարբերակումը, ըստ երկվայթին, կատարվել է հունարենի ձայնավորներին հատուկ տեղութեան շափի հատկանիշի հաշվառումով կամ նմանակութեամբ: Ինչպես հայտնի է, հայերենը չունի և չի ունեցել ձայնավորների տեղութեան քանակային տարբերութիւն, հակառակ դեպքում հայերենի ձայնավորների համակարգում անպայման կարտացոլվեր այն համապատասխան տարբերանիշ տառերով: Այդ պատճառով էլ ե-ի և է-ի տարբերակումը ըստ կարճութեան կամ երկարութեան՝ թարգմանական տուրք պետք է համարել հունարենին:

<sup>1</sup> Ձեռագիր, № 2371 Թ. 133ա:

<sup>2</sup> Նույն տեղում, Թ. 133ա:

<sup>3</sup> Նույն տեղում, Թ. 133ա—բ:

<sup>4</sup> Նույն տեղում, Թ. 133ա:



Մյուս կողմից՝ գրաբարի ձևաբանության ուսումնասիրությանը վաղուց հաստատվել է, որ է-ն պարզ ձայնավոր չի եղել, ինչպես մյուս ձայնավորները (ա, ե, ը, ի, կն), այլ երկրարբառային արժեք է ունեցել դասական հայերենում՝ համապատասխանելով ե+յ կազմությանը: Այդ է պատճառը, որ գրաբարում բոլոր այն դեպքերում, երբ հոլովման կամ խոնարհման հետևանքով ե-ն հանդիպում է յ-ին, վեր է ածվում է-ի (օր. պաշտօնեայ > պաշտօնեյի > պաշտօնէի. քրիստոնեայ > քրիստոնեյի > քրիստոնէի, հրեայ > հրեյի > հրէի, սիրեմ > սիրես > սիրեյ > սիրէ կն):

Հայերենի հետագա զարգացումը հնչյունական համակարգի նկատմամբ ընթացել է երկրարբառների պարզեցման ուղղությամբ, դրա հետևանքով է երկրարբառը նույնպես պարզվել և նույնացել է ե-ի հետ, հետագայում տեղիք տալով բառամիջում և բառավերջում է-ի և ե-ի գրության շփոթության:

Սկեռացին և հնչույթը դասել է ձայնավորների մեջ: Սկեռացին այս հարցում նույնպես հետևել է Թրակացու հայերեն թարգմանությանը. այնտեղ լ-ի ձայնավոր լինելը պատճառաբանվում է նրանով, որ նա երկրարբառի բաղադրիչ երկրորդ տարրն է. «Եւ առաջադիր ձայնաւորք են Զ՝ ա, ե, է, ը, ի, ո: Եւ առաջադիրք ասին, զի նախադասելով զինիւն և զհինիւն, շաղաշարս կատարեն, որպէս աւ, իա: Եւ ստորադասք են Բ՝ ի, լ. և ինդ է ուրեք, զի վաղադասական է բան զհին, որպէս յիմաստուրիւնդ և յարդիւնդ»<sup>1</sup>: Այս հարցի կապակցությամբ ուշադրավ է դոց. Ա. Արբահամյանի դիտողությունը. Գիտնխիոս Թրակացու «Τέχνη γροματικῆ»-ի թարգմանիչը հայերեն թարգմանության մեջ. — գրում է նա, — այն (իմա՝ և հնչույթը — Լ. Խ.) տեղադրել է հոնարեն յ-ի դիմաց իբրև նրա համարժեքը, թեև հայերենն էլ ներկայացված է ձայնավորների շարքում: Իսկ սա բացատրվում է նրանով, որ հոնարեն յ-ն այդ շրջանում արտասանությանը արդեն փոփոխված էր, բայց 6—7 դար առաջ գրված քերականությունը գրությանը պահպանում էր նախկինը»<sup>2</sup>:

Նկատի ունենալով հայերեն բառերի կազմությունը վանկատության տեսանկյունից, Սկեռացին արձանագրում է, որ հայերեն բառերը կարող են բաղկացած լինել մի վանկից (հուր, ջուր), երկու վանկից (եր-կին), երեք (ա-բա-բա), չորս, հինգ և ավելի: Ի դեպ՝ «վանկ» տերմինը նա օգտագործում է միավանկության առումով, իբրև «փաղառութիւն» բառի համարժեքը, իսկ մեր արդի քերականական «վանկ» տերմինի իմաստով առհասարակ «հեզ» տերմինն է կիրառում:

Սկեռացին վանկի էական, որոշիչ տարրը համարում է ձայնավորների առկայությունը. նա ընդունում է, որ հայերենում վանկ կարելի է կազմել մի ձայնավորով և երկու կամ ավելի բաղաձայններով կազմված, իսկ բաղաձայնը առանձին փերցրած, առանց ձայնավորի, չի կարող վանկ կազմել, կամ՝ իր բառերով ասած՝ «ձայն արձակել»: «Իսկ հեզն՝ է որ ունի լծեալ անձայն ընդ ձայնաւորի, — գրում է նա, — է ուրեք՝ մի, ուրեք՝ երկու, կամ ևս ավելի:

<sup>1</sup> Չեռագիր, № 2367, Թ. 12բ—13ա:

<sup>2</sup> Ա. Արբահամյան, Փաստեր հայերենի պատմական հնչյունափոխության մի քանի երևույթների ժամանակաշրջանի վերաբերյալ, «Տեղեկագիր», ՀՍՍՌ ԳԱ, Հասարակական գիտություններ, Երևան, 1957, № 4, էջ 71:

Եւ է երբեք զի միով ձայնաւորաւ կապի հեզ. քանզի անձայնքն առանց ձայնաւորացն ոչ կարեն հեզ կապել կամ ձայն արձակել»<sup>1</sup>:

Վանկը առհասարակ, արստրահված ձևով, այն դեպքում, երբ չի կազմում միաժամանակ բառ, Սկևռացին համարում է «պիտակապէս հեզ», այսինքն՝ անվանական վանկ, որովհետև վերջինս ամբողջական բառի մի օղակը կամ մասն է կազմում, ուստի և բառի ամբողջութիւնը լրացնելու համար կարիք ունի այլ վանկերի հետ լծակցելու: Իսկ երբ վանկը միաժամանակ, առանձին վերցրած, բառային ամբողջութիւն է հանդիսանում, այլ կերպ ասած՝ վանկն ու բառը համընկնում են, Սկևռացին կոչում է «տիրապէս հեզ», այսինքն՝ «իսկական վանկ»:

«... զի միով ձայնաւորաւ շինեալ հեզ ոչ է բառ կատարեալ, զի չէ տիրապէս հեզ, այլ պիտակ, վասն որոյ չէ կատարեալ բառ, այլ մասն է բառի, և այլոց հեզից կարաւորի ընդ իւր լծակցիլ. և ապա կատարի բառ, որզոն՝ ե-րա-նեալ, ա-պա-բէն, ո-ղոր-մեա: Արդ սորա առաջին զիրս<sup>2</sup> աստ ի տեղուշս՝ եշս, այքս, ոս միւտորք միայն հեզք են, այլ պիտակք ասին: Իսկ այլքն որ երկու կամ երեք գրով են՝ տիրապէսք ասին»<sup>3</sup>:

Վանկի տարրերակումը Սկևռացու կողմից «տիրապէս և պիտակապէս» հեզերի՝ հատկանշական է այն տեսակետից, որ քերականական տվյալ երկվույթը դիտելով արստրահման այդ բարձրակետից, հնարավոր է դառնում թափանցել նրա էութիւնը և բացահայտել նրա առանձնահատկութիւնները:

«Արվեստավոր» գրիչը պետք է լավ յուրացնի «զարուեստ հեզիցն կապելոյ և զբաժանումն տառիցն» այն նպատակով, որ անհրաժեշտութեան դեպքում կարողանա բազմավանկ բառերը ճիշտ վանկատել՝ հավատարիմ մնալով մեր լեզվի հնչարտարութեան վանկային առանձնահատկութիւններին: Այս առթիվ Սկևռացին հետևյալ կանոններն է սահմանում, որոնց խստիվ պահպանմանը պարտավոր են հետևել գրիչները:

1) Երբ երկավանկ մի բառ բաղկացած է երկու ձայնավորից և նրանց միջև մի բաղաձայնից՝ պետք է վանկատել հետևյալ կերպ. առաջին ձայնավորը պետք է կազմի առանձին մի վանկ, իսկ բաղաձայնը պետք է տալ երկրորդ ձայնավորին՝ իբրև երկրորդ վանկի բաղադրիչ տարր. «զի յորժամ մի բառ երկու ձայնաւոր զիր ունիցի, և ի մէջ երկուցն մի անձայն, որզոն՝ ապա, աքս աքի, դառաջին ձայնաւորն միայն արա հեզ և զսնձայնն վերջին ձայնաւորին տուր, այսպէս՝ ա-պա, ա-քա, ա-քի»<sup>4</sup>:

2) Երբ երկավանկ մի բառ բաղկացած է երկու ձայնավորից և նրանց միջև հանդես եկող երկու բաղաձայնից՝ վանկատումը պետք է կատարել այսպես. առաջին բաղաձայնը պետք է միացնել առաջին ձայնավորին, երկրորդը՝ երկրորդ ձայնավորին. «... եթէ երկու անձայնքն իցեն ի մէջ երկուց ձայնաւորացն, զառաջինն՝ առաջնոյ ձայնաւորին տուր և զերկրորդն՝ վերջնոյն. այսպէս՝ ան-սա, ան-ցո»<sup>5</sup>:

<sup>1</sup> Ձեռագիր, № 2371, Թ. 133բ:

<sup>2</sup> Թուր ձեռագրերում գրված է զիրես ձեռ. կարծում ենք, որ այն գրչագրական սխալ է. և պետք է լինի՝ զիրս:

<sup>3</sup> Նույն տեղում, 134ա:

<sup>4</sup> Նույն տեղում, Թ. 134բ:

<sup>5</sup> Նույն տեղում:

3) Երբ հռավանկ մի բառ բաղկացած է երկու ձայնավորից և նրանց միջև հանդես եկող երեք կամ շորս բաղաձայնից՝ վանկատումը կատարվում է այս եղանակով. առաջին ձայնավորին պետք է միացնել սկզբի երկու կամ երեք բաղաձայնները, իսկ վերջին մի բաղաձայնն էլ միացնել հաջորդ ձայնավորին, ինչպես՝ ինճ-նակալ, ըմբո-նալո:

4) Երբ բազմավանկ մի բառ բաղկացած է միջակա երեք կամ շորս ձայնավորներից, որոնց միջև առկա են երկու կամ երեք բաղաձայններ, վանկատումը կատարելիս միայն վերջին բաղաձայնը պետք է միացնել հաջորդ ձայնավորին, իսկ նախորդ բաղաձայնները՝ նախորդ ձայնավորին, ինչպես՝ բարգ-մանու-քին, շշն-ջին, տում-ջին, շփա-ո-րու-քին:

5) Երբ բառի մեջ մի ձայնավոր կա, իսկ նրա առաջից կամ վերջից մեկ կամ մի քանի բաղաձայն՝ բոլորն էլ ձայնավորն է վերցնում, այսպես՝ աճղ, եգր, էր, ընդ, ինճն, ողջ, կամ, տուն, ջուր ևլն:

Վանկատության այս հինգ կանոնները դրված են Սկևռացու «գրադարձութեան արուեստի» հիմքում, այդ պատճառով էլ իրավամբ հեղինակը հետևյալ խիստ բնորոշ վերնագիրն է դրել սույն աշխատության համար՝ «Խրատ վասն հանգամանաց հեգից որ և պատնառն իսկ է գրադարձին յարուեստ գրչութեան»<sup>1</sup> (ընդգծումը մերն է — Լ. Խ.): Այդ նշանակում է, որ Սկևռացու մոտեցումը տվյալ հարցին, շնայած իր ժամանակ տիրող քերականագիտության մակարդակին, միանգամայն ճիշտ է և գիտական:

Պարզելուց հետո հայերեն բառերի վանկատման սկզբունքները Սկևռացին ուսուցանում է գրիչներին, թե ո՞ր դեպքում և ի՞նչպես պետք է տողադարձ կատարել ձեռագրեր ընդօրինակելիս, որպեսզի արտագրվող կամ հեղինակվող ձեռագիր աշխատությունները լինեն բարձր որակով, գրագետ, կանոնավոր, ճաշակով ու կիրթ՝ գիտական սկզբունքի համաձայն: Նա պահանջում է արվեստավոր գրչից ձեռք բերել «գրադարձութեանն զհմտութիւնս», միաժամանակ նշելով, որ «զգուշութեամբ պարտ է նկատել արուեստաւորին, թէ զոր ի նոցանէ (այսինքն՝ բառի հնչյունային բաղադրիչ տարրերից — Լ. Խ.) անկ է դնել սկիզբն երկրորդ տողին» և այլն: Նա գանգատվում է իր ժամանակի համբակ գրիչներից և կշտամբում նրանց այն բանի համար, որ ճիշտ չեն կիրառում գրադարձության արվեստի կանոնները. «... և ոչ է արուեստ հեգիցն որպէս այժմ բազումք ի մերոցս տգիտարար անճահապէս առնեն զբաժանմունս տառիցն ի հեզսն՝ ըստ անարուեստ խոհակերի, որ ոչ գիտէ ըստ յօդից առնել զյօշուածս անդամոցն»<sup>2</sup>: Ելնելով վերոհիշյալ հանգամանքներից, Սկևռացին սահմանում է գրադարձության հետևյալ կանոնները.

1) Եթե տողի վերջում զետեղվում է բառը և կամ նրանով էլ ավարտվում է նախադասությունը, հաջորդ տողի սկզբում պետք է դնել մյուս նախադասության առաջին բառը՝ անկախ նրանից, թե ինչ տառով է սկսվում այն՝ բաղաձայնով, թե ձայնավորով, «զի բառին և բանին սկիզբն տիրապէս լինի և տողի սկիզբն»<sup>3</sup>:

2) Եթե տողավերջում հանդիպած բառը բազմավանկ է և չի կարող զետեղվել նույն տողում, ապա գրիչը տողադարձը պետք է կատարի հետևյալ կերպ. առաջին՝ ձայնավորին պետք է միացնել այնքան բաղաձայն տառեր,

<sup>1</sup> Ձեռագիր, № 2371, Թ. 132բ:

<sup>2</sup> Նույն տեղում, Թ. 136բ:

<sup>3</sup> Նույն տեղում, Թ. 136ա:

որքան բառի հնչյունային կազմը թելադրում է և «գրով մի և երկուք թէ հարկ լիցի կամ գրով և կիսով ելանել քան զչափ տողին ի դուրս մինչև կապի հեզ»<sup>1</sup>:

Սկևռացին տողադարձի համար ամենակարևոր սկզբունքը համարում է այն, որ եթե մի տառ վանկի առաջին բաղադրիչն է կազմում, անկախ նրանից, թե այն բառի սկզբում, մեջտեղում թե վերջին վանկում է գտնվում, միայն նրանով պետք է սկսի հաջորդ տողի կիսատ մնացած բառը: «Եւ ի կարճոյ այսպէս իմա,— գրում է նա,— ամենայն գիր, որ սկիզբն իցէ հեզի, թէ ի սկիզբն բառին և թէ ի միջոցին, թէ ի վերջին հեզն, նա կարէ ի մէջ բառին լինել այլոյ տողին սկիզբն, յորժամ ի սպառուած տողին թերի մնայցէ բառն»<sup>2</sup>:

3) Սկևռացին զգուշացնում է առանձին տառերի տողադարձման հարցում. բառի կամ վանկի կազմից առանձին տառ չպետք է թողնել տողի վերջում և մնացածը տեղափոխել հաջորդ տողը, առավել ևս, երբ այն բաղաձայն է: Բայց այս կանոնի նկատմամբ երկու կարգի վերապահութիւն է անում.

ա) Եթե բառի առաջին տառը ձայնավոր է «և ինքն միայն կապի հեզ», այդ դեպքում առաջին տառը կարելի է թողնել տողավերջում և մնացածը տողադարձել (օրինակ՝ ա-պաշ-խա-րու-թիւն, ե-րա-նու-թիւն ևլն), ընդամին անհրաժեշտ է տողավերջում վանկ կազմող առանձին գրված տառի տակ կիսենթամնա դնել, «որով իմասցի ընթերցաւոյն թէ թերի է հեզն, և փութով դարձցի ի միւս տողն կցել զհեզսն և կազմել զբանն»<sup>3</sup>:

բ) Եթե տողավերջում երկու տառ դրելու տեղ լինի, ապա պետք է միայն ինքնին առանձին վանկ կազմող ձայնավորը դնել և մյուս բաղաձայնը տեղափոխել հաջորդ տողը, թեկուզ և մի տառի համար տակավին տեղ բաց մնա նախորդում:

4) Երբ տողավերջում երկուսուկես տառի տարածութիւն մնա, իսկ հաջորդ սկսվող վանկը բաղկացած է երեք կամ չորս տառերից, այդ դեպքում կամ պետք է սեղմ գրել, կամ էլ տողի մի քիչ վերևում ավելացնել պակասող տառերը, իսկ ծայրահեղ դեպքում՝ մեկ կամ երկու տառով տողից դուրս գալ, մինչև վանկի ամբողջանալը, որովհետև, ըստ Սկևռացու, «ի սպառուած տողին սպառուած լիցի հեզի կամ բառի», որպեսզի «մի անարուեստ և անճահ բաժանմամբ գրոյն զընթերցողն ոտնառելով սայթաքեացէ ի հանդէս և բանն խանգարեսցի»<sup>4</sup>:

5) Սկևռացին զազտնավանկ ունեցող բազմավանկ բառերի համար առաջարկում է ը-ի գործածութեան հատուկ սկզբունք, «զոր յոյժ ընտրութեամբ» պետք է կիրառի գրիչը. կամ տողավերջում բաղաձայնով սկսվող բառի առաջին տառից հետո պետք է դնել ը-ն, կամ էլ հաջորդ տողի սկզբում՝ բաղաձայնով սկսվող վանկի առաջին տառից հետո, իսկ տողամիջում ը-ի կիրառութիւնը բացառվում է (օր. բբ-նութիւն, բբ-ծըշկութիւն): Այն դեպքում, երբ արվեստավոր գրիչը ը-ի գործածութեան եղանակը զազտնավանկում անգիտանա և կամ էլ շկարողանա կողմնորոշվել՝ հարկավոր է արդյոք ը դնել թե ոչ, ավելի

<sup>1</sup> Ձեռագիր, № 2371, Թ. 136ա:

<sup>2</sup> Նույն տեղում, Թ. 136ա—բ:

<sup>3</sup> Նույն տեղում, Թ. 138ա:

<sup>4</sup> Նույն տեղում, Թ. 137բ:

նպատակահարմար է երկու-երեք տառի տեղը ազատ թողնել, թրան թէ անհրմտարար խանգարել զՏեզն և սխալումն առնել ընթերցողին»<sup>1</sup>:

6) Իբրև ընդհանուր կանոն, տողադարձի ժամանակ, բոլոր դեպքերում բաղաձայնով պետք է սկսի կիսատ բառը հաջորդ տողից, իսկ ձայնավորը պետք է հետևի բաղաձայնին: Սակայն այս կանոնից բացառություն են կազմում չ կիսաձայնը և Վ բաղաձայնը: Այդ բացառությունը Սկևռացին պատճառաբանում է հետևյալ նկատառումներով. թեև չ և Վ հնչյունները բաղաձայն են, — ասում է նա, — սակայն հարում են ձայնավորներին, բացի դրանից, չնայած այն հանգամանքին, որ նրանցով շատ բառեր են սկսվում, բայց բառամիջում վանկի սկզբում շատ սակավ են հանդիպում կամ էլ բոլորովին բացառվում են (ինչպես՝ նա-քա-նայ-էլ, Մի-բայ-էլ, խոռվ-ու-րիւն, ժո-ղով-աւոյ): Դրանից Սկևռացին հետևեցնում է, որ եթե բառի մեջ վանկի սկզբում չեն լինում դրանք, ուստի և տողադարձի ժամանակ էլ չեն կարող տողի սկզբում լինել, իբրև նրանցով սկսվող վանկի բաղադրիչ տարրեր:

7) Հիւնի (ւ) գործածությունը բառասկզբում առհասարակ արգելում է Սկևռացին. պատճառն այն է, որ բառամիջում շատ ձայնավորներ են լինում, որոնցով էլ սկսվում են վանկերը, ուստի և տողադարձի ժամանակ այդ ձայնավորներով էլ սկսում են հաջորդ տողերը: Մինչդեռ հիւնով սկսվող հայերեն բառեր չունենք, թեև ոմանք «բռնադատում» են՝ հատուկ են բառերի սկիզբը դնելով (ինչպես՝ փւծեալք): Մյուս կողմից՝ բառամիջում նույնպես վանկերը չեն սկսում հիւնով, հետևաբար տողադարձի դեպքում չեն էլ կարող փոխադրվել հաջորդ տողը, այլ մնում են նախորդ վանկի կազմում:

8) Սկևռացին ձայնավորով սկսվող առանձին վանկերի կամ բառերի մասին խոսելիս նշում է, որ է-ով, ի-ով, ո-ով առանձին ամբողջական բառեր ընդհանրապես չեն լինում հայերենում, շատ քիչ անգամ նրանցով հանդիպում են իբրև «տիրապէս» վանկեր: Նման գործածության երեք դեպք է հիշատակում, որոնցից առաջինը («ա՞ դարձոյց գծովն ի ցամաք») իբրև հարցական բնույթի անձնական դերանուն, երկրորդը՝ («Ք Քրիստոս ի վերայ ամենայնի աստուած աւրճեալ յաւիտեանս») իբրև էական բայ, իսկ երրորդը՝ («Ի հընդետասաներորդի») իբրև նախդիր: Եթե այս ձայնավորները նույնիսկ տողավերջում հանդիպեն՝ առանց կիսենթամնայի են մնում: Բայց այն դեպքում, երբ հիշյալ ձայնավորները «պիտակապէս հեզ» են կազմում՝ դրվելով բառերի սկզբից (էմանուէլ, ողորմելի, իմացական), տողավերջում կարող են առանձին մնալ, սակայն անպայման կիսենթամնայով, որպեսզի հասկացվի, թե թերիք են և այլոց տառից պիտոյանան առ ի կապել զՏեզն»<sup>2</sup>:

9) Սկևռացին բացարձակ կերպով արգելում է տողավերջում նախադասութեան պակասող բառերը «ներքին տողի» եզրում գրելը՝ մի քիչ տեղ խնայելու նպատակով, և հաջորդող նախադասությունը կիսատ մնացած տողից շարունակելը: Նույնիսկ ավարտված նախադասության և նոր սկսվող նախադասության միջև դրված նշանը չի արդարացնում նման երևույթը, որովհետև, ըստ նրա, «այն կարի խոտան է և կարդացողին յոյժ սխալող»:

10) Սկևռացին խորհուրդ է տալիս «պիտակ հեզ»-ի, այսինքն՝ բառամիջում եղած վանկի դեպքում տողադարձ անելիս անպայման կիսենթամնա

<sup>1</sup> Ձեռագիր, № 2371, Թ. 139ա:

<sup>2</sup> Նույն տեղում, Թ. 140ա:

դնել, իսկ կատարյալ ենթամնայի գործածութիւնը այդտեղ սխալ է համարում: Պատճառն այն է, որ «կատարեալ ենթամնայն» երկու ամբողջական բառերից բաղկացած բարդ կազմութիւնների համար է կիրառւում, ինչպես՝ տեսակարար, ամէնիշխան: Մինչդեռ կիսենթամնան դրվում է տողավերջում վանկատվող մասի ներքևից, ցույց տալու համար, որ բառը այդտեղ չի ամբողջացել և կարող է լծորդվող վանկերի. այս երևույթը Սկևռացին գեղեցիկ կերպով համեմատում է լծկան եղների հետ. «որպէս մի եզն ընդ լուծ կապեալ՝ զընկերին պակասութիւն (յայտնէ)»: Ուշագրաւ է Սկևռացու տված ստուգարանութիւնը ենթամնա բառի առթիւ, երբ ասում է. «զի և անուն իսկ ենթամնայիդ զայս բացայայտէ, ենթա՝ նախդիր, իսկ մնայ՝ թէ չէ յանգ ելեալ բանս, այլ տակաին մնայ, դուգակցիւքն առնուլ զկատարումն»<sup>1</sup>:

Սրանք են Սկևռացու՝ «գրադարձութեան արվեստի» մասին ունեցած հայացքները, որոնք երկար դարեր շարունակ մեծ դեր են կատարել ձեռագրերի ճիշտ ընդօրինակման, գրագետ հորինման գործում՝ բարձրացնելով գրիչների վարպետութիւնը, ընդարձակելով նրանց գրագիտութեան ոլորտը՝ մի կողմից, մյուս կողմից՝ հայ քերականագիտութեան մեջ դրա շնորհիւ ստեղծելով «գրադարձութեան արուեստի» հատուկ ուսմունք:

բ) «ԽՐԱՏ ՎԱՍՆ ԱՌՈԳԱՆՈՒԹԵԱՆ» ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ  
ՍԿԵՎՈՒՅՑՈՒ ԱՐԾԱՐԾԱԾ ՀԱՐՅԵՐԸ

Դեռևս Դիոնիսիոս Քրակացու «Արուեստ քերականի» աշխատութեան հայերեն թարգմանութիւնից հայերը արդեն ծանոթ էին առողանութեան հարցերին. հույները առողանութեան ուսմունքը համարում էին քերականութեան բաղկացուցիչ մասերից մեկը, որը սովորեցնում էր գրավոր արտադրանքները, իմաստի համաձայն, ճիշտ ընթերցել՝ պահպանելով ձայնի ելևէջները բառերի արտաբերութեան ժամանակ: Սակայն հայերենի և հունարենի առողանութիւնները արմատապես տարբերվում էին միմյանցից. բայց շնայած այդ կական հանգամանքին, մեր հայ քերական-մեկնիչները իրենց աշխատութիւններում միշտ էլ անդրադարձել են առողանութեան խնդիրներին և ձգտել են տեսնել հայերենում նույն երևույթները, ինչ հունարենին հատուկ են: Այդ առումով իրավացի է պրոֆ. Գ. Զահուկյանը, երբ գրում է. «Հայերենի համար մեխանիկորեն յուրացվել է նաև առողանութեան (պրոսոդիայի) նշանների ամբողջութիւնը, որը գործադրում էին հույները հին տեքստերը հնարավոր ճշտութեամբ վերարտադրելու նպատակով: Այս նշանների մեծ մասը սովորական հայ գրիչների համար, որոնք արտադրողների գերակշռող մասն էին կազմում, մինչև վերջ մնաց անբարձր, լավագույն դեպքում այն լոկ մեխանիկական ընդօրինակման առարկա էր, որի էութեան մեջ նրանք ո՛չ թափանցում էին, ո՛չ էլ կարող էին թափանցել առանց հունարենի իմացութեան»<sup>2</sup>:

Սակայն առողանութեան նշանների դերն ու նշանակութիւնը Դիոնիսիոս Քրակացու քերականութեան հայերեն թարգմանութիւնից հետո ընկած ժամանակաշրջանում աստիճանաբար տարբեր բնույթ ստացան. դա էլ հենց թարգմանական տուրքի կողմնակի արդյունքը հանդիսացավ:

<sup>1</sup> Գ. Զահուկյան, նշված աշխատ., էջ 94:

<sup>2</sup> Զեռագիր, № 2371, թ. 141ա:



Սկևռացին խոստովանում է, որ սույն աշխատության հայցողի հարկադրանքով է շարադրում առողջանության մասին իր ըմբռնումներն ու տեսակետները, պատճառաբանելով, որ առողջանության մասին խոսելը շատ ավելի դժվար է, քան «գրադարձության արվեստի»։ «... Դիրքին իսկ էր ուսումն գրադարձիցն, քան զառողջանութեանցն, ուստի վասն դժուարութեանն խոյս կամեցայ տալ յառողջանութեանցն խնդրոյ, այլ զի պատկառանօք գրաւեաց զիս հայցուածն քո, ահա սակաւ մի երկրորդնմ ի քերական խրատուցն և վասն նորա»<sup>1</sup>։ Սկևռացին առողջանությունը ըմբռնում է որպէս «արուեստ ընթերցողութեան», այդ պատճառով էլ խորհուրդ է տալիս գրչին նախքան գրելու համարձակություն ունենալը «հմտանալ» դրան, քանի որ այն «գրեթէ բովանդակեալ իսկ ունի զզարտութիւն շարադրութեան»<sup>2</sup>։ Սկևռացին այնքան բարձր է գնահատում առողջանության ուսմունքը, որ եթէ դրան շտիրապետի գրիչը, ապա «զիմաստ բանին խանգարէ և զքերթողացն արուեստն տապալէ, զընթերցաւն թեև ի քաջաց իցէ՝ վտանգէ, և զյսաւղն յիմացմանէ բանին զրկէ»<sup>3</sup>։

Սկևռացին առողջանության ուսմունքը կարևոր է համարում նաև այն տեսակետից, որ մարդիկ միայն օժտված են «յաւղատր ձայնի», իսկ անշունչ առարկաներն ու կենդանիները զուրկ են դրանից. «... յաւղատր ձայն է միայն մարդոյս վասն տառից բարախման և վասն ոլորակացն արուեստի, զի անշունչից և անասնոց մերկ է յայսցանէ»<sup>4</sup>։

Սակայն առողջանության վերաբերող շատ տերմիններ և հասկացություններ Սկևռացին, առանց թափանցելու դրանց էությունը, կրկնում է նույնությամբ, ինչ իր նախորդ քերական-մեկնիչները. նա ամենայն անկեղծությամբ ընդունում է առողջանության հարցերում իր թերիմացությունը, ասելով՝ «...զկատարեալն յոյժ անգիտանամ», իսկ մյուս կողմից էլ վերապահություն է անում, պնդելով, որ «այլ ոչ է մտացածին կարկատ ինչ, զոր ունիմ դնել աստ վասն խնդրոյ առողջանութեանցն, զի և ոչ է իսկ հնար յաւելուած առնել ի սա, քանզի թուով իսկ են կնքեալ սեռք և տեսակք առողջանութեանցն, ուստի հարկ է զնոյն իսկ զհրամանս քերթողացն երկրորդել»<sup>5</sup>։ Սույն մեջբերումից պարզվում է, որ առողջանության նշանների քանակը, տեսակներն ու բնույթը արդեն նախասահմանված են եղել իրենից շատ առաջ (այսինքն՝ Դիոնիսիոս Թրակացու քերականության հայերեն թարգմանության մեջ) և թե նույնիսկ անհնար է դրանց վրա ավելացնել առողջանության որևէ նոր նշան, հետևաբար հեղինակին ուրիշ բան չի մնում, քան «զհրամանս քերթողացն երկրորդել»։

Մյուս կողմից՝ առողջանության նշաններին հմտանալ կամեցողներին Սկևռացին զգուշացնում է, որ «յոլով տքնութեան պէտս ունի իրքս այս», այդ դժվարությունը Սկևռացին բացատրում է երեք հանգամանքներով. «Նախ վասն նրբագոյն բնութեան իրացս, երկրորդ՝ վասն ոչ գոլոյ այժմ յազգիս մերում ուսմանս այսորիկ կատարեալ արուեստաւոր և ի սուղ գրելոց հզար քերթո-

<sup>1</sup> Չեռագիր, № 2371, ք. 141ա։

<sup>2</sup> Նույն տեղում, ք. 141բ։

<sup>3</sup> Նույն տեղում ք. 141բ։

<sup>4</sup> Նույն տեղում, ք. 144ա։

<sup>5</sup> Նույն տեղում, ք. 143։

դացն մերոց առաջնոց»<sup>1</sup>: Ավելին, Սկեռացին պնդում է, որ առողանութեան ուսմունքից շատ բան կասկածելի և անհամապիշ է թվում այն պատճառով, որ նրա մասին շատ քիչ բան է ավանդված հայ քերականական-մեկնողական աշխատութիւններում. «վասն կարճ և համառուտ գոլոյն, — գրում է նա, — բազում ինչ յայսմ ուսմանէ բնդ տարակուսի մնայ»<sup>2</sup> (ընդգծումը մերն է — լ. Ն.): Բայց, իհարկե, միայն դա չէ առողանութեան ուսմունքի մասին ազոտ պատկերացման հիմնական պատճառը մեր հայ քերական-մեկնիչների մոտ, այլև ա՛յն, որ քերականութեան այդ հատվածը, ամբողջութեամբ վերցրած, թարգմանական տուրք էր հունարեն բնագրին<sup>3</sup>:

Անցնելով հարցի շարադրմանը, Սկեռացին առողանութեան նշանների բանակը տասն է համարում և դրանցից յուրաքանչյուրը անվանում է նույն այն տերմիններով, ինչ Քրակացու քերականութեան հայերեն թարգմանութեան մեջ՝ ա) շեշտ, բ) բուք, գ) պարոյկ, դ) երկար, ե) սուղ, զ) քաւ, է) սուկ, ը) ապարարց, թ) ենթամնայ, ժ) ստուտ: Ըստ որում առողանութեան այս նշանները, իրենց հերթին, Սկեռացին խմբավորում է ժառողանութեան շորս սեռերի» մեջ, ինչպես ընդունված է Դիոնիսիոս Քրակացու մոտ, և գործածում ավանդական տերմինները՝ ոլորակ, ամանակ, հագագ, կիբէ:

«Ոլորակ» ասելով Սկեռացին հասկանում է «վերագանչումն յադատր ձայնի», ձայնի ելևէջները բառի տարբեր վանկերում. այս երևույթը հունարենի համար միանգամայն հասկանալի է, որովհետև հունարեն բառի հնչարտարբերությունը բնորոշվում էր բարձրութեան շեշտով, այլ կերպ ասած՝ տոնի իջեցմամբ կամ բարձրացմամբ և կամ էլ բարձրացմամբ — իջեցմամբ էր պայմանավորված հունարեն բառի արտասանությունը: Մինչդեռ հայերեն բառերի հնչարտարբերությունը բնորոշվում է ուժային շեշտով:

«Ոլորակի» մեջ Սկեռացին ընդունում է առողանութեան երեք նշան՝ շեշտ, բուք և պարոյկ:

Երբ սուր հնչմամբ է արտաբերվում բառի մի վանկը, «շեշտոլոր» է կոչվում, ընդ որում շեշտոլորի մեջ Սկեռացին տարբերում է երկու տիպ՝ բնութեամբ շեշտոլոր, երբ սուր շեշտը ընդունում են բառի այն վանկերը, որոնք ունեն ա, ե, կամ ի ձայնավորները, իսկ երբ շեշտը ընկնում է մնացած ձայնավորներով կազմված վանկերի վրա՝ դուրջամբ կամ պատահմամբ են կոչվում:

Բուքը սուր շեշտի հակառակ երևույթն է, որին նույնպես Սկեռացին երկակի բնութ է վերագրում. բութը իշնող ինտոնացիայի արտահայտությունն է, որը, ըստ Սկեռացու, կարող է լինել բնութեամբ, երբ բառի մեջ վանկերը ունեն ր, ո և ռ հնչույթները, որոնք արտաբերվում են «կարճ կամ ծանր, զի վասն նեղելոյ շրթանցն ի փողելն, ձայնքն սոցա նեղը և տկարք լինին, վասն որոյ և բութը ասին, այսինքն՝ գուլ, ընդդէմ շեշտին, որ է սուր»<sup>4</sup>: Այստեղ ուշագրավ է դիտել մի մոմենտ. ա՛յն, որ Սկեռացին հնչարտարբերությունը նկարագրելիս փորձում է տալ նաև ֆիզիկական օրգանների մասնակցությունը՝ ի՛նչ շափով և ի՛նչպես:

Մեզ հետաքրքրում է նաև այն հարցը, թե առողանութեան այս նշանների վերաբերյալ տեսությունը ինչպես է կիրառվել իրականութեան մեջ՝ փաստա-

<sup>1</sup> Ձեռագիր, № 2371, Բ. 142բ:

<sup>2</sup> Նույն տեղում:

<sup>3</sup> Տե՛ս Գ. Ջ ա հ ու կ յ ա ն, նշված աշխատ., էջ 95:

<sup>4</sup> Ձեռագիր, № 2371, Բ. 144ա:



պես: Նման հարցադրումը ուսումնասիրության հատուկ և ծավալուն առարկա է դարձրել մանկավարժական գիտ. թեկնածու Լ. Մխիթարյանը: Նա գրում է. «Բուժ նշանը թե՛ իր ձևով, թե՛ իր նախնական ու հետագա տրոհական ֆունկցիայով հանդես է գալիս որպես զուտ հայկական կետադրական նշան: Կետադրական նման նշան աշխարհի մեզ հայտնի որևէ լեզվում չի գործածվել և ս. յժմ էլ չի գործածվում: ... Մեզ հասած ամենահնագույն ձեռագրերում չենք հանդիպում բուժ նշանի գործածությանը, բացի քերականական գրքերում եղած հիշատակություններից, մասամբ էլ գործածությունից»<sup>1</sup>:

Խոսելով պարույկի մասին, Սկևռացին գտնում է, որ այն ոչ շեշտ է և ոչ էլ բուժ, այլ դրանց երկուսի միջինը, «... որպէս շեշտն ի վեր հանելով սրէ, նույնպէս և բուժն ի խոնարհ իշանելով հարթէ՛ ի յերկոցունց ծայրից ի շեշտէ և ի բթէ բաղկանայ պարոյկն, որպէս ի սեւոյ և ի սպիտակէ գոշն»<sup>2</sup>: Նկարագրելով պարույկի շեշտային բնույթը, Սկևռացին շարունակում է. «Եւ է պարոյկն բեկումն ձայնի և շրջումն վերուստ ի վայր, և բթիլ ի սրութենէն, որպէս և ձեն ցուցանէ, շեշտ ոչ է, զի բթի վերջն, բուժ ոչ է, զի սուր է սկիզբն»<sup>3</sup>: Նկատենք, որ Սկևռացին հայերենի ձայնավորների մեջ ընդունում է երկար և կարճ ձայնավորներ, ինչպես հունարենում, մի բան, որ հատուկ չի եղել հայերենի հնչյունական համակարգին. իբրև «բնությամբ» երկար ձայնավորներ համարում է է և ով հնչյունները, վերջինս իբրև հունարեն օմեգայի (ω) համարժեքը: Պարույկի կիրառության հանգամանքները նշելիս, Սկևռացին պահանջում է այն դնել «բնութեամբ երկար» է կամ ով ձայնավորների, ինչպես նաև երկարբառների ու եռարբառների վրա՝ աւ, եւ, ու, այի, օյի: Իհարկե, նրա այս պահանջը հայերենի նկատմամբ զուրկ էր գործնական որևէ նշանակությունից, ուստի և նման կիրառությունը մեր մատենագրության մեջ տեղ չբռնեց՝ ձեռք բերելով գործածության տարրեր եղանակ, ի վերջո, ձուլվեց հարցական նշանի հետ՝ արտահայտելով զգացական և իմաստային տարբեր երանգներ: Ի դեպ՝ Սկևռացին նշում է, որ պարույկի նման է նաև այն նշանը, որ դրվում է բռների վրա՝ հիացական և հարցական իմաստներ արտահայտելու համար: Բայց հարցում և հիացում արտահայտող նշանը, պնդում է Սկևռացին, մեր օտաջին քերական—մեկնիչների աշխատությունների առդանության վերաբերյալ հատվածում «դրոշմված» չի եղել և այն շատ հավանաբար հետո է ավելացել համբակ գրիչների կողմից. «Այլ զայս ոչ գտանեմք ձեւովս այսու դրոշմեալ զհարցականս ի խրատս տասն առդանութեանցս յառաջնոցն մերոց, թէպէտ և յանուանէ յիշեն զհարցականն, այլ ձև ինչ որպէս զտասանցս՝ ոչ ցուցանեն, բաւական համարելով ի բնուան զտասնեակս զայսսսիկ, թերևս յետոյ աւելաւ այս ձև ի համբակագունից ոմանց»<sup>4</sup>:

Մեր մատենագրության մեջ պարույկի իբրև հարցական նշան գործածվելու փաստական ժամանակաշրջանի մասին ուշագրավ է Լ. Մխիթարյանի հետևությունը, գտնելով, որ նրա կիրառության հետքերը կարելի է տեսնել դեռևս 9—11-րդ դարերից մեզ հասած ձեռագիր աշխատություններում, և հանդես է եկել նույն այն եղանակով, ինչ այսօր գործադրում ենք: Վերջին հանգամանքը եզակի բնույթ ունի աշխարհի մնացած լեզուներում օգտագործվող միևնույն

<sup>1</sup> Լ. Մխիթարյան, Առդանութուն, էջմիածին, 1958 թ., № 55—56:

<sup>2</sup> Ձեռագիր, № 2371, Բ. 144ա:

<sup>3</sup> Նույն տեղում, Բ. 144բ—145ա:

<sup>4</sup> Նույն տեղում, Բ. 145ա:

առողանութեան նշանի նկատմամբ: «Բացականչական և հարցական նշանների մասին առաջին տեղեկութիւնը,— գրում է նա,— ստանում ենք 5-րդ դարի քերականական աշխատութիւններից, իսկ մատենագրութեան մեջ սրանց փաստական գործածութիւնը հանդիպում ենք 9-րդ և 11-րդ դարերից: Հարցական և բացականչական նշաններն այժմյան ձևով (՛) դրվել են հարցում պահանջող և հույզ ու դգացում արտահայտող բառերի շեշտված վանկերի վրա»<sup>1</sup>. մի այլ տեղ նույն հարցի մասին գրում է. «Հարցական նշանը հայերենում թե իր վաղ գործածութեամբ, և թե իր ձևի ու արտահայտչականութեան տեսակետից միանգամայն տարբերվում է աշխարհի մեզ ծանոթ լեզուներից և կազմում է բացառութիւն: Եվրոպական բոլոր լեզուներում հարցական նշանը գրավոր խոսքի մեջ իր գործածութեամբ չի համընկնում բանավոր (կենդանի) խոսքի հետ՝ դրվելով նախադասութեան վերջում»<sup>2</sup>:

Այսպիսով, «ոլորակի նշանները», անկախ մեր քերական-մեկնիչների բռնազրոսիկ բացատրութիւնից, հայերենի գրավոր խոսքի հետագա զարգացման ընթացքում պատմական այլ բախտ և նշանակութիւն են ունեցել:

Առողանութեան տասը նշաններից երկուսը Սկևռացին խմբավորում է ամանակ սեռի տակ, ինչպես Գիտնիսիոս Թրակացու մոտ: Այստեղ նույնպես զգացվում է հունարենի հնչյունական համակարգի առանձնահատկութիւնների մեխանիկական վերագրումը հայերենին, մի բան, որ հասկանալի էր հայ քերականական ուսմունքի ստեղծման առաջին շրջանում: Սկևռացին ձգտում է հայերեն ձայնավորների մեջ ժամանակի տևողութեան տարբեր հարաբերութիւններ որոշել. «ամանակ» տերմինի տակ նա ընդունում է «երկար» և «կարճ», ինչպես նաև «երկամանակը» ձայնավորներ, ըստ որում երկար ձայնավորների մեջ Սկևռացին փորձում է կատարել մի նոր տարբերակում՝ բնութեամբ երկար (ինչ. է և ով) և դուրբեամբ երկար (ինչ. ա և ի) ձայնավորներ՝ հար և նման հունարենին: Բնութեամբ երկար ձայնավորները բոլոր դեպքերում էլ երկար են արտասանվում, իսկ դրութեամբ երկար ձայնավորները (ա, ի) երկակի բնույթ ունեն՝ «երբեմն ձգտին իբրև զերկարս և երբեմն զսպին իբրև զսուղս, յորժամ յայս և կամ յայն բաղաձայնքն աւքնական լինին... յորժամ զայն ձայնորդսն առնուն լծակից որ ոչ նեղեն զշրթունսն, և նորա երկարանան (ինչ. ձած, գագ, դադ, գագ)»<sup>3</sup>:

«Սուղ» ձայնավորների մեջ Սկևռացին նույնպես տարբերում է բնութեամբ և դրութեամբ սուղ ձայնավորները: Սուղ ձայնավորներ է համարում՝ ե, ո, լ հնչույթները, որոնց զլիսավերևում սուղ նշանն է դրվում (օ): Իսկ դրութեամբ սուղ ձայնավորները նրանք են, որոնք լծակցում են այնպիսի բաղաձայնների հետ, որի հետևանքով «գրերանն նեղեն և նրբացուցանեն զձայնն»<sup>4</sup> (ինչ. բաբ, ամ, բմբ, իմ):

«Ամանակի» տեսութիւնը, իր բռնազրոսիկութեան պատճառով, նույնպես հող չբռնեց հայ քերականագիտութեան մեջ և որոշ ժամանակ անց հայ քերականները զազարեցին անդրադառնալ այդ հարցին՝ իբրև գործնական նշանակութիւնից դուրկ երևույթի. սուղը առհասարակ, իբրև նշան, մոռացվեց, իսկ

<sup>1</sup> Հ. Մ ի թ ա ռ յ ա ն, Հայերենի կետագրութիւնը, «Հայոց լեզվի դասավանդման հարցեր», ժողովածու, Հայպետուսմանկհրատ, 1958, էջ 94:

<sup>2</sup> Հ. Մ ի թ ա ռ յ ա ն, Առողանութեան, «Էջմիածին» ամսագիր, № 9, էջ 56—57:

<sup>3</sup> Հեռագիր, № 2371, Բ. 145բ:

<sup>4</sup> Նույն տեղում, Բ. 146ա:

երկարը իր սկզբնական նշանակությունը (ժամանակային տևողության իմաստը) փոխեց և ձեռք բերեց այլ ֆունկցիա՝ վեր ածվելով ձայնարկության և զգացմունքային իմաստ դրսևորող նշանի:

Եթե ամանակի տեսությունը վերաբերում էր միայն ձայնավորների ժամանակային տևողությանը, ապա հազագի տեսությունը՝ բաղաձայնների որակային հատկություններին: Այս հարցում նույնպես Սկևռացին հետևում է հայավանդական մեկնողական քերականությանը. նա լիովին հավատարիմ է Դիոնիսիոս Թրակացու հայերեն թարգմանության դրույթներին: Ինչպես հայտնի է, հունարենը հազագային և հնչույթի տառային նշան շուներ և այդ բացը լրացնելու համար օգտվում էր «թաւ» (θαυ) և «սոսկ» (ψυξις) նշաններից. «թաւ» և «սոսկ» նշանները գրվում էին միայն ձայնավորներից և ք-ից առաջ, դիսավերեում, ըստ որում «թաւ»-ի նշանը ցույց էր տալիս, որ տվյալ բառը պետք է կարդալ հազագով, այսինքն՝ որ այն և արտասանությամբ է սկսվում, իսկ «սոսկ»-ի նշանը ակնարկում էր բառի արտասանությունը այնպես, ինչպես գրված է՝ սուանց հազագի: Ինչպես տեսնում ենք, հունարենի համար միանգամայն հասկանալի է «թաւ» և «սոսկ» նշանների կիրառությունը, իսկ հայերենը դրա կարիքը բոլորովին չունի: Անհրաժեշտության դեպքում նա կարող է և նշանագիրը օգտագործել՝ որպես տվյալ հնչույթի գրավոր համարձեքը: Ինքնին հասկանալի է, որ այս հարցում ևս մեր քերական-մեկնիչները մեծ տուրք են տալիս Դիոնիսիոս Թրակացու քերականության նյութական թարգմանությանը:

Սկևռացին, հետևելով իր նախորդներին, «թաւ» բաղաձայններ է համարում հայերենի շնչեղ պայթական խուլերը՝ փ, ք, և, իսկ «սոսկ» կամ «լեարկ»՝ խուլ պայթականները (սլ, կ, ա): Այս նշանների առկայությունը և նրանց անհրաժեշտությունը Սկևռացին պատճառաբանում է նրանով, որ «ի տեղիս տեղիս դժուարաւ որոշին սոքա, պետք եղեւ նշանացս այսոցիկ ի զգուշութիւն ընթերցողին ի խարութիւն սոցա, զի մի շփոթեսցէ զգիրն և նովաւ զբառն, և արասցէ զքարն կար»<sup>1</sup>:

Այստեղ ուշադրության է արժանի մի հանգամանք. Սկևռացին իզուր չի գանգատվում այն մասին, որ «ի տեղիս տեղիս դժուարաւ որոշին» շնչեղ պայթական խուլերը (ք, փ, և) և խուլ պայթականները (սլ, ա, կ): Տվյալ դեպքում Սկևռացու այս ակնարկը վերաբերում է հայերենի բարբառներին, որոնք հնչույթային իրենց համակարգերով ինչպես միմյանցից, այնպես էլ սուավել ևս գրաբարի դասական շրջանի վիճակից, շատ էին տարբերվում, ուստի և շատ դեպքերում, գրիչների բարբառային տարբեր պատկանելիության պատճառով, խուլերը արտասանվում և գրվում էին իբրև շնչեղ խուլ, և ընդհակառակն, դրա հետևանքով էլ էաբը գրում էին կառ: Բայց հայերենի հնչույթային համակարգը կարիք չունի նոր տարբերանշեր օգտագործել այդ երևույթը արտացոլելու համար: Առանց այն էլ շնչեղ խուլ պայթականները և խուլ պայթականները զանազանվում էին հայերենում իրենց ուրույն տառանիշերով:

Առողանության շորրորդ տարատեսակը մեկնողական քերականության մեջ կոչվում է «կիրք», որի տակ հասկացվում է գրավոր արտադրանքի ընթերցումը

<sup>1</sup> Չեռագիր, № 2371, թ. 147ա—բ:

հեշտացնող նշանների կիրառութիւնը: Այս ենթատեսակի մեջ են մտնում առողանութեան երեք նշանները՝ «ապարաց», «ենթամնայ» և «ստորատ»:

Ըստ Սկեռացու «ապարաց»-ը նշանակում է «ստանց, ի բացառեալ», «ասպա»-ն համարելով «նախդիր», իսկ ոմանց կարծիքով, ասում է նա, «ստուգաբանորեն» նշանակում է այբաբարց, այսինքն՝ առանց այբի: Նշելով այն մասին, որ հայերենի բարդ բառերի բաղադրիչ մասերը մեծ մասամբ միանում են իրար և հողակապով, Սկեռացին խոսում է նաև նրա հակառակ երևույթի մասին, երբ որոշ բարդութիւնների ժամանակ բաղադրիչ մասերի միջև բացակայում է հողակապը (ինչպես՝ վերաառուրիւն, պարբերութիւն): Այդ դեպքում հարկ կլինի կիրառել ապարացի նշանը բառի այն մասում, որտեղ բացակայում է հողակապը՝ ակնարկելու համար, որ զեղչված տառ գոյութիւն ունի այնտեղ: Այս միջոցին են դիմում հեղինակները մեծ մասամբ բարեհնչութեան կամ տաղաչափութեան շարժառիթներից մղվելով<sup>1</sup>:

Ենթամնան գործածվում է այլ նպատակով. նա երկու բառերի միջև ներքեից է դրվում իբրև թեք կիսաշրջան մի դիծ, որպեսզի ընթերցողը իմանա, թե այդ բառերը մի ամբողջութիւն են կազմում, ուստի և պետք է համարել բարդ բառ: Ենթամնայի կաթիքը, ըստ երևույթին, զգացվել է այն ժամանակ, երբ բառանշատում տեղի շէր ունեցել ձեռագիր աշխատութիւններում, և որպեսզի տարբերութիւն դրվի պարզ և բարդ բառերի միջև, այդ միջոցն է հնարվել: Նման դեպքում Սկեռացին այդ նշանը համարում է «տիրապէս ենթամնայ», այլ կերպ ասած՝ «իսկական, լիարժեք ենթամնայ», ի տարբերութիւն այն դեպքերի, երբ նույն դիծը, բայց մի քիչ ավելի փոքր աղեղով, դրվում է նաև այնպիսի բարդ կազմութիւնների ներքեից, որոնք բաղկացած են լինում մի ամբողջական բառից և մի ձևութից (այսինքն՝ ածանցավոր և հոլովված բառեր): «Բայց պատահէ զնել երբեք և յորժամ ի լիոյ և ի թերոյ, կամ ի թերոյ և ի լիոյ բառից և կիսաբառից կապի բառ,— գրում է նա,— որգոն՝ հրեշտակաց, հրեշտակային, մարդոց, հայրիկ, տիրասպան, պատմագիր» ևլն<sup>2</sup>: Հետագայում, երբ գրիչները բառանշատ գրութեան ձևին անցան, ենթամնայի և կիսենթամնայի կիրառութիւնը անիմաստ դարձավ և սկսեց գործածվել իբրև տողադարձի նշան: Հետևաբար Սկեռացու այս դրույթները մեծ մասամբ սեփական բնույթ էին կրում, իբրև կրկնութիւն իր նախորդների ասութիւնների. այդ է պատճառը, որ ինչպես իր՝ Սկեռացու, այնպես էլ իրենից հետո ընկած ժամանակաշրջանում արտագրված ձեռագիր-աշխատութիւններում այդ դրույթների փաստական կիրառմանը չենք հանդիպում:

\* \* \*

\*

Սկեռացու «ծրատ վասն առողանութեանց» աշխատութեան մի դուրսն է կազմում «Յաղագս կիտից» հատվածը: Այստեղ հեղինակը խոսում է կետադրութեան կանոնների մասին:

Ինչպես հայտնի է, դեռևս Գիոնիսիոս Թրակացու քերականութեան հայերեն թարգմանութեան մեջ հայերենի կետադրութեան համար ընդունված է երեք կետ. «Կէտք են երեք.— կարդում ենք այնտեղ,— կէտ աւարտեալ, միջակ,

<sup>1</sup> Տե՛ս Գ. Զ ա հ ու կ յ ա ն, նշված աշխատ., էջ 95:

<sup>2</sup> Ձեռագիր, № 2371, թ. 148ա:

ստորակէտ: Կէտ է տրամախոհութեան անգեցելոյ նշան, և միշակ՝ նշան յօգի սակս ընդունելոյ. եւ ստորակէտ է տրամախոհութեան շե ևս յանգեցելոյ, ալ ևս կարատացելոյ նշանք:

Ի՞նչ անանձնանայ կէտ ի ստորակիտէ. ամանակաւ, զի ի կիտէն կարի յոյժ մեծ է բացատն, իսկ ի ստորակիտէն ամենեկին նուազ»<sup>1</sup>:

Հայերենի կետադրութեան քանակն ու անվանումը, ինչպես նաև նրանց դերն ու նշանակութիւնը լիովին պահպանվում է նաև Սկևռացու ժամանակ:

Խոսելով այն մասին, թե ինչո՞ւ ինքը հարկադրվեց իր աշխատութեան առաջին մասում հանգամանորեն կանգ առնել առողջութեան նշանների մեկնութեան վրա և հետո անդրադառնալ հայերենի կետադրութեանը, Սկևռացին բացատրում է այն ոչ թե նախապատվութեան հանգամանքով ալ ըստ տեղի:

Ուշագրավ են կետադրութեան այս երեք նշանների կիրառութեան վերաբերյալ Սկևռացու տված ճշտումներն ու պարզաբանումները: Նախադասութեանը, նայած իր կառուցվածքին, կարող է բաժանվել մի քանի մասերի, որոնց սահմանագիծը որոշելու համար դրվում են կետադրական նշաններ: Կրկնելուց հետո Դիոնիսիոս Թրակացու բնորոշումները կետադրութեան մասին, Սկևռացին «աւարտեալ կէտ»-ը անվանում է նաև «կատարեալ կէտ» կամ «տուն»: Որոշելով վերջինիս կիրառութեան եղանակը ըստ իմաստի, ասում է. «Ժսկ կատարեալ կէտն կատարումն խորհրդոյն, վասն որոյ և տուն կոչի վասն կատարման բանին, որ ունի շտեմարանեալ յինքն իմաստս լիապէս»: Նկատենք, որ Սկևռացին ընդգծում է խոսքի ընթացքը իբրև մի հոսք, պրոցես, «քանզի փոքր փոքր աճմամբ առնու բանն զկատարումն որպէս ի շինուածս տան կամ յընթացս, ուստի և ըստ պատահման տեղոյն, երբեմն միով կիտիւ, երբեմն՝ երկուք, երիւք, շորիւք, կամ ևս աւելի առնու բանն զկատարումն»<sup>2</sup>:

Լինում են դեպքեր, երբ ստորակետով կամ միշակետով բաժանելիս «բանի» մասերը, թեև թվում են «ըստ ինքեան» կատարյալ՝ ամբողջական, բայց ամբողջական նախադասութեան հարաբերութեամբ թերի են: Այդ նշանակում է, որ ստորակետի բնույթն այնպիսին է, ինչպիսին՝ պատկերավոր ձևով արտահայտված՝ «կիսատունն առ կատարեալ տունն, որպէս ռան կամ ձեռն առ բոլորում մարդումն»<sup>3</sup>:

2. Մխիթարյանը իր հետազոտութեան ընթացքում պարզել է, որ դեռևս 9-րդ դարից մեզ հասած ձեռագիր աշխատութիւններում կարելի է հանդիպել ստորակետի գործադրմանը: «Ստորակետը քերականներն իրենց աշխատութիւններում հիշատակում են դեռևս Ծ— է դարերից սկսած, — գրում է նա: — Լազարյան ճեմարանի Ավետարանում և Էջմիածնի փղոսկրակաղմ Ավետարանում (Թ—ժ դարեր) մենք հանդիպում ենք ստորակետի գործածութեան բազմաթիւ դեպքերի»: ...Առաջին դրավոր վավերագիրը ցույց է տալիս, — շարունակում է նա, — որ ստորակետն առկա է եղել և գործածվել Թ դարից, իսկ ավելի հաստատ՝ ժ դարից»<sup>4</sup>:

Միշակետի մասին խոսելիս Սկևռացին նշում է, որ երբ նախադասութեանը շատ ծավալուն է, և հարկ է որոշ շունչ կամ դադար առնել, ապա այդ դեպ-

<sup>1</sup> Ն. Ա դ ո ն ց, նշված աշխատ., էջ 31:

<sup>2</sup> Ձեռագիր, № 2371, Թ. 149բ:

<sup>3</sup> Նույն տեղում, Թ. 150ա:

<sup>4</sup> 2. Մ խ ի Թ ա ռ յ ա ն, Հայերենի կետադրութիւնը, «Հայոց լեզվի դասավանդման հարցեր», ժողովածու, Հայպետունամակհրատ, 1958, էջ 61:

քում միջակետ է դրվում. «է դարձեալ ուր վասն երկայնութեան բանին շունչ առնելոյ սակս, դնանի կէտ սահմանի, որպէս ամբեվանաւք հանդուցանել գխտնջումն, և այս է միջակէտ, որ ասի և բացատ, որ է դատարկ տեղի»<sup>1</sup>:

«Միջակէտ» տերմինի բացատրութիւնը տալիս Սկեռացին բացատրում է, որ այդ անվանումը հատկացվել է այն պատճառով, որ նա «ի միջին կայ ստորակիտին և աւարտեալ կիտին»<sup>2</sup>:

Ինչպես կազարյան ավետարանի քննութիւնը ցույց է տալիս, միջակետը և վերջակետը տարբերակվում էին միայն իրենց դիրքով և ոչ կետերի քանակով. վերջակետի համար կրկնակետի գործածութիւնը միայն հետագայում է ընդհանրացել: Այդ առթիւ Հ. Մխիթարյանը գրում է. «Այս ձեռագրում (խոսքը վերաբերում է կազարյան ավետարանին — Լ. Խ.) կետն ունի քառակուսի, երբեմն քառանկյունի, երբեմն էլ թավ ստորակետի ձև: Տողի վերևում դրվելիս այն համարվել է վերջակետ, իսկ տողի վրա, նայած նրա արտահայտած պաշտոնին, մերթ որպես միջակետ, մերթ որպես ստորակետ»<sup>3</sup>:

Սկեռացին վերջակետի մասին խոսելիս որոշակի կերպով նշում է, որ այն արտահայտվում է կրկնակետով, ի տարբերութիւն ստորակետի և միջակետի, որոնք ներկայացվում են առանձին կետով: Նա ասում է, որ նախադասութեան մեջ որքան էլ հարկ լինի ստորակետ կամ միջակետ գործածել, միշտ մեկ կետով է արտահայտվում, իսկ երկու կետ դրվում է միայն այն դեպքում, երբ նախադասութիւնը ավարտված է. «Ստորակէտն և միջակէտն որչափ և իցեն, թէ մի և թէ երկու, կամ թէ աւելի, մի մի կէտս դնելի է, մինչև յաւարտեալն հասանիցէ ուր երկու կիտից պէտք են»<sup>4</sup>:

Սկեռացին, դտնելով, որ կետագրութեան և նրա կիրառման հանգամանքների վերաբերյալ իր արած դիտողութիւնները թերի են, ամենայն համեստութեամբ և անկեղծութեամբ խորհուրդ է տալիս իր պատվիրատուին, որը միաժամանակ իր աշակերտն է հանդիսացել, լրացնել և ամբողջացնել ագս. «Եւ այս ևս վասն կիտից յիմս աղբատութենէ թերևս շատ իցէ, այլ դու ընկալեալ աճեցուցես ի սոյնս, և զթերին զիջանելով լցցես, թէ ըստ գրոյ իցէ և թէ ըստ քանի...»<sup>5</sup>:

#### դ) «ԽՐԱՏ ԳՐՉՈՒԹՅԱՆ» ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՍԿԵՎՈՒՅՈՒ ԱՐՄԱՐՄԱՄ ՀԱՐՅԵՐԸ

Սույն աշխատութեան մեջ Սկեռացին անդրադառնում է հետևյալ հարցերին:

Առաջին զլխում համառոտ կերպով նորից քննվում են հայերենի վանկատութեան, ինչպես նաև «գրադարձութեան արվեստի» սկզբունքներն ու կանոնները: Սկեռացու այդ տեսութիւնը մանրամասն շարադրել ենք վերևում, ուստի և, կրկնութիւնից խուսափելու համար, կանգ չենք առնի այստեղ:

<sup>1</sup> Ձեռագիր, № 2371, ք. 150ա:

<sup>2</sup> Նույն տեղում:

<sup>3</sup> Հ. Մխիթարյան, Հայերենի կետագրութիւնը, «Հայոց լիզվի դասավանդման հարցեր», Ժողովածու, Հայպետուսմանկհրատ, 1958, էջ 61:

<sup>4</sup> Ձեռագիր, № 2371, ք. 150ա:

<sup>5</sup> Նույն տեղում, ք. 150բ:

Երկրորդ և երրորդ գլուխներում շոշափվում են ուղղագրության օրինաչափությունները՝ բառերի ուղիղ և թեք պայմաններում:

Երրորդ գլուխը հեղինակը վերնագրել է՝ «Թէ ուրանար պիտոյանայ հին փոխանակ ինոյ ի միշոցս հոլովմանց անուանց»<sup>1</sup>. հարցադրումը ինքնին ուշագրավ է, որովհետեւ այն ժամանակին գրիչների համար ամենամեծ դժվարություն հարուցող խնդիրներից մեկն է եղել: Այս հարցի պարզաբանումը Սկևռացին միանգամայն ճիշտ դիրքերից է տալիս, ելնելով հայերենի քերականության օրինաչափություններից:

Սկևռացին, աչքի առաջ ունենալով հայերենի «անուններն» ու դերանունները, գրավոր կամ բանավոր հաղորդման ընթացքում նրանց կրած փոփոխությունների ժամանակ նկատում է հետևյալ էական ու բնորոշ երևույթները. մի դեպքում «անուններն» ու դերանունները խոսքի մեջ հանդես են գալիս առանց ձևաբանական որևէ փոփոխություն կրելու, հենց այնպես՝ «ուղիղ» ձևով, ուստի և նրանց այդ վիճակը համարում է «ուղղական», մյուս դեպքում՝ նրանք կրում են որոշ փոփոխություններ, ձևաբանական բնույթի նոր կերպարանքներ բնդունելով: «Անուններին» և դերանուններին ներհատուկ այս երևույթը Սկևռացին համարում է «հոլովում» կամ «թաւալում». «...անուանքն և դերանուանքն, նախ՝ ուղղականք են և ապա հոլովականք, այսինքն՝ թաւալականք», — գրում է նա և ապա այդ տերմինները բացատրում հայերենի օրինակներով. «...և է ուղղականն ուղղակի անունն, այսինքն՝ երկինք, երկիր, մարդ, եղն, իսկ թաւալականն՝ երկնից, երկրի, մարդոյ, եզին»<sup>2</sup>:

Բառամիջում եիւնի գործածությունը ի-ի փոխարեն պարզելու համար Սկևռացին հենվում է հին հայերենի հոլովման սիստեմի վրա, նշելով հետևյալ հանգամանքները.

Երբ բառավերջում «անունը» (Սկևռացին «անուն» քերականական տերմինը գործածում է ընդարձակ առումով՝ դրա տակ հասկանալով ոչ միայն գոյականը, այլև ածականն ու թվականը) «ուղղական» ձևում ի-ով է ավարտվում (ինչպես՝ որդի, հոգի, արծուի, բարի, երանելի, եղկելի ևլն), հոլովվելիս ի հնչյունը փոխարինվում է լ-ով. (ինչպես՝ որդոյ, հոգոյ, արծոյ, բարոյ, երանելոյ, եղկելոյ ևլն):

Երբ մարդիկ անվանվում են ըստ քաղաքի և գավառի պատկանելիության (ինչպես՝ եգպտացի, դամասկացի, տաբսոնացի ևն.), որի դեպքում «ուղղական» ձևում բառերը վերջավորվում են ի հնչյունով, թեքման ժամանակ լ-հնչյունը փոխարինում է ի-ին (ինչպես՝ եգպտացոյ, դամասկացոյ, տաբսոնացոյ ևն.):

Սկևռացու մոտ գտնում ենք նաև ենթակայի գաղափարը իբրև «կատարաւղ զբանն». նա բառի ուղիղ և թեք ձևերի հակադրությունը ցույց տալու համար բառերը վերցնում է նախադասության մեջ՝ ըստ նրանց կատարած պաշտոնի, ըստ որում միանգամայն ճիշտ կերպով ենթակային է վերագրում բառի ուղղական հոլովը. «աստուած է արարիչ աշխարհի, աստուածն ուղղական անուն է և յաստուածն կատարեցաւ բանն, զի վասն աստուծոյ էր»<sup>3</sup>: Մյուս կողմից՝ թեք հոլովներ են ստանում այն անունները, որոնք ենթակա չեն

<sup>1</sup> Չեռագիր, № 2371, ք. 151ա:

<sup>2</sup> Նույն տեղում, 156բ—157ա:

<sup>3</sup> Նույն տեղում, ք. 157բ:

հանդիսանում նախադասութեան մեջ, նրա խոսքերով ասած՝ «ոչ կատարեն զբանն»։ «Իսկ ի հոլովին՝ աշխարհս աստուծոյ է գործ — ահա այս հոլովական է, և այն (այսինքն՝ աստուած. — Լ. Խ.) շկատարեաց զբանն, այլ գործն, զի վասն աշխարհի էր բանն, որ աստուծոյ գործ է և ոչ վասն աստուծոյ»<sup>1</sup>։

Սկեռացին ճիշտ է լուծում ւ-ի գործածութեան հանգամանքները բառի թերման ժամանակ, դիտելով այն իբրև հայերենի քերականական առանձնահատկութիւններից բխող երևույթ։ Գրիչների ուշադրութիւնը հրավիրելով հայերենի հոլովման սխտեմի վրա, Սկեռացին պահանջում է, որ նրանք անտեղի կերպով ւ-ն չդնեն այնտեղ, որտեղ քերականորեն չի պատճառարանվում և կամ չի արդարացվում և այդպիսով աղավաղում են «գովելի արվեստը»։ «Այլ ոմանք վարկպարազի անխորհրդապէս դնեն զհիւնն բազում անգամ, ուր չէ պիտոյ, այսպես՝ մարդոյ, ցորենոյ, գիշերոյ, և այլ բազում այսպիսի, ոչ գիտելով զզարութիւն բանին՝ սխալեն։ Սակայն դու, ով վարժասէր, ի նախագրեցեալ խրատուցդ ուսիր զհանգամանսն և մի անուումնապէս աղաւաղեր զգովելի արուեստդ»<sup>2</sup>։

Սույն աշխատութեան երրորդ գլխում Սկեռացին բնութագրում է բառավերջում դրվող յ-ի կիրառութեան կանոնները. պետք է նշել, որ գրիչները առավելապես սխալներ էին գործում չ-ի գործածութեան կանոնները պահպանելու ժամանակ։ Շփոթումն առաջանում էր նրանից, որ բառավերջում ա-ով և ու-ով եղբայրակիվող «անուններում» այլևս չէր արտասանվում, ինչպես դասական հայերենում։ Սակայն Սկեռացին, ինչպես և նրանից առաջ Արիստակես Գրիչը, ուղղագրական կանոններ սահմանելիս երբեք հաշվի չէին առնում հայերենի կրած պատմական հնչյունափոխութիւնը, և, տվյալ դեպքում, անկախ այն բանից, որ չ-ի կիրառութիւնը ա-ով և ու-ով վերջավորվող բառերից հետո հնչյունական նշանակութիւն չունեն, այնուամենայնիվ նրանք պահանջում էին հետևել հայերենի ավանդական ուղղագրութեանը, երբ չ-ի գործածութիւնը նման դեպքերում ունեն և՛ հնչյունական, և՛ ուղղագրական արժեք ու նշանակութիւն։

Սկեռացին ինքն էլ է խոստովանում, որ նույնիսկ նախքան Արիստակես Գրիչը, բազմաթիվ հայերենի գիտակ գրիչներ անդրադարձել են չ-ի գրութեան հանգամանքներին, որի պատճառով էլ հսկայական նյութ է կուտակվել չ-ի գործածութեան կանոնների վերաբերյալ։ «Վասն յիոյ բազմախիտ իմացուածք են, — գրում է նա, — թէ ուրանօր պիտոյանան՝ ի սկզբունս բանիցն, ի միջոցին կամ ի սպառուածին, այսոցիկ և զբազմաց քան զայս զհանգամանս խրատուց, ոչ միայն ի նախագրելոցն առաջնոց հոնտորագոյն գրչացն շարագրութեանց, այլև ի վերջնոցն քան զնոսա նոցին հետևողացն ի սոյնս, այսինքն՝ յանհաս գրչէն Գրիգորէ Լամբրոնեցոյ, և ևս առաւել յԱռիստակիսէ երբեմն նորին ծանօթ եղելոյ ի Հայոց Մեծաց որ պատճառս խրատու յաղագս այսոցիկ առեալ...»<sup>3</sup>։ Արված մեջբերումից ակնհայտ է դառնում, որ չ-ի անկումը բառավերջում ա-ից և ու-ից հետո այնքան էր բնդհանրացել և իրեն ենթարկել նման բնույթի բոլոր բառերը, որ արդեն հնչյունական տիրապետող օրենքի էր վեր ածվել դեռ շատ վաղուց։ Ուստի և գրիչների կատարած սխալ-

<sup>1</sup> Ձեռագիր, № 2371, Թ. 157ր։

<sup>2</sup> Նույն տեղում, Թ. 158ա։

<sup>3</sup> Նույն տեղում։



ներն ու վրիպումները այդ հարցում այնքան հաճախադեպ էին, որ ավանդական ուղղադրություն գիտակ քերականները հարկադրված էին բազմաթիվ անգամներ անդադրաձևով դրան: Բայց այստեղ կարևոր մի հարց է ծագում. ա-ից և օ-ից հետո չ-ի անկման երևույթը ե՞րբվանից է սկսել և ո՞ր ժամանակից արդեն հնչյունական օրենքի ուժ ստացել: Այս հարցի սպառիչ պատասխանը տալիս է դոց. Ա. Արբահամյանը իր «Փաստեր հայերենի պատմական հնչյունափոխության մի քանի երևույթների ժամանակաշրջանի վերաբերյալ» արժեքավոր հոդվածում: Վերլուծելով մատենագրության ընծայած փաստերը, ինչպես նաև ուշադիր քննելով վիմագիր արձանագրությունները, հեղինակը հանգում է այն եզրակացության, որ չ-ի անկման երևույթը սկսվել էր դեռևս 5-րդ դարից առաջ: Այն փաստը, որ գրաբարի դերանունները, բայի բուն հրամայական եղանակի եզակի երկրորդ դեմքը, ինչպես նաև հատուկ անունների մի մասը, որոնք բացառություն կազմելով շեն ենթարկվում ընդհանուր օրինաչափության, այսինքն՝ ա-ով և օ-ով վերջանալիս շեն ստանում չ, հեղինակը համարում է հենց չ-ի անկման սկզբնավորման ապացույց»<sup>1</sup>:

Սակայն բացառություն հանդիսացող այդ առանձին դեպքերը հետագայում այնքան են ընդհանրանում ու ծավալվում, որ գրիչները, առաջնորդվելով խոսակցական լեզվի հնչարտաբերական օրենքով՝ ա-ով և օ-ով վերջավորվող բառերը ձեռագիր-աշխատություններում և վիմագիր արձանագրություններում գրում ու փոխադրում էին այնպես, ինչպես լսում կամ արտասանում էին: Ահա այս լեզվական փաստերի վկայությունները վերլուծելով հեղինակը հանգում է այն եզրակացության, որ չ-ի անկման հնչյունական օրենքի ժամանակաշրջանը պետք է սահմանել 9-րդ դարը. «Այս փաստերը որոշակի ցույց են տալիս, — շարունակում է հեղինակը, — որ արդեն 9-րդ դարում լրիվ կերպարանք էր ստացել արտասանության մեջ բառավերջի չ հնչյունի անկման օրենքը, մասամբ արտացոլում դրնելով նաև գրության մեջ»<sup>2</sup>:

Այժմ համառոտակի կանգ առնենք Սկևոացու սահմանած կանոնների վրա՝ բառավերջում չ-ի գործածության առթիվ:

Իբրև հիմնական սկզբունք, որով պետք է առաջնորդվեն գրիչները չ-ի կիրառման ժամանակ, Սկևոացին հայերեն «անուններն» ու բայերը բաժանում է երկու կարգի՝ «կատարեալ» անուններ ու բայեր և «անկատար» անուններ ու բայեր:

Սկևոացին «կատարյալ» և «անկատար» տերմինները անունների կապակցությամբ գործածում է «հասարակ» և «հատուկ» դոյականների հակադրության իմաստով. մինչդեռ բայերի նկատմամբ կիրառելիս նկատի է ունենում նրանց արտահայտած ժամանակային հարաբերությունները՝ ներկայի ու ապառնու և անցյալի հակադրությամբ:

Եթե «անունը» հասարակ է, անկախ նրանից, թե ուղիղ կամ թեք ձևով է հանդես գալիս, ա-ից և օ-ից հետո բառավերջում անպայման չ պետք է դնել. այդպիսի բառերը Սկևոացին կոչում է «կատարեալ» բառ. «Իսկ յանուանս մտանելոյ չի կատարեալ զնա ցուցանէ, — գրում է նա, — և կատարեալ անուն

<sup>1</sup> Տե՛ս Ա. Արբահամյան, Փաստեր հայերենի պատմական հնչյունափոխության մի քանի երևույթների ժամանակաշրջանի վերաբերյալ, «Տեղեկագիր», Հասարակական բաժանմունքի, 1958, № 4, էջ 77:

<sup>2</sup> Ա. Արբահամյան, նշված աշխատ., էջ 82:

այն է, որ հասարակաց և բնդհանուր է, որ զբազումս նշանակէ, որպէս ասէ որ թէ՛ արժայ, ծառայ պաշտանեայ, քահանայ, տղայ, անդեայ, խոյ, հայ, հրէայ, սատանայ»<sup>1</sup>:

Եթե «անունը» հատուկ է՝ անկախ նրանից, թե անձնանուն է կամ քաղաքների ու տեղերի անուն, Սկևռացին «անկատար» է համարում, ուստի և այդպիսիք ա-ով կամ ո-ով վերջավորվելու դեպքում ուղիղ ձևում չ շին բնդունում: «Իսկ անկատար անուն մասնաւոր, — գրում է նա, — որ զմի անձն նշանակէ, որպէս՝ Յուդա, Երեմիա, Զաքարիա, Սոփոնիա, այսպես և զտեղեաց և զքաղաքաց անուանս առանց յիոյ, յորժամ ասես՝ Սամարիա, Գալիլեա, Բերսալիդա, Ատանա, Անարգարա, Սերաստիա»<sup>2</sup>: Ի դեպ՝ ուշագրաւ է այն, որ Սկևռացին բառի ուղիղ և թեք ձևերի հակադրութիւնը բմբռնելի դարձնելու համար նկատի է ունենում նրա շարահյուսական ֆունկցիան նախադասութեան մեջ. եթե խոսքի մեջ տվյալ գոյականը ենթակայի դերում է, ապա այն ուղղական հոլովով է հանդես գալիս, եթե շարահյուսական այլ ֆունկցիաներ է գրսևորում, ապա այն հոլովված է և կիրառվում է թեք հոլովով: «Եւ զայսոսիկ զանուանս, որ առանց յիոյ են, թէ մարդկան սրբոց կամ անսրբոց և թէ տեղեաց զիւղից կամ քաղաքաց, երբ ի քէն լինի ասացեալ դէպ ի նա գնայ շախտի յի, յորժամ ասես՝ Երեմիա զայս ասաց, կամ Բառնարա զայս գործեաց: նմանապէս և յորժամ ասես՝ ի Գալիլիա գնաց, կամ՝ յԱտանա գնամ, ի քէնէ սկսեալ բանն և առ նա է գնալ, և դեռ անկատար է, որպես յորժամ ասես թէ՛ այս իրքս յԱտանա կամ ի Սամարիա սուղ է, կամ յաժան»<sup>3</sup>:

Նշելով այս հանգամանքը, Սկևռացին մի նոր կանոն է սահմանում հատուկ անունների համար յ-ի գործածութեան կապակցութեամբ. եթե տվյալ հատուկ անունը նախադասութեան մեջ գրված է ուղղական, հայցական և ներգոյական հոլովներով, ապա յ-ի կարիք չի զգացվում, իսկ երբ բացառական և սեռական հոլովներով է գրված՝ անպայման չ պետք է լինի ա-ով և ո-ով վերջավորվող հատուկ անունների եզրում: «Իսկ յորժամ բանն ի նմանէ իցէ սկսեալ՝ յի պիտի, յորժամ ասես՝ յԻսայայ մարգարէէ, յԵրեմիայի մարգարէէ, կամ՝ Եղբայրն Անդրեայ կամ հայրն յԵսայայ, կամ տունն Յուդայ: Այսպիսի արինակաւ ի նմանէ առ այլք է ի գնալ բանն, որպէս յորժամ ի քաղաքէ ի դուրս գալով ասես՝ գամ յԱտանոյ, յԱնույ, ի Մամեստեայ»<sup>4</sup>:

Բայերի մասին խոսելիս, Սկևռացին նրանց մեջ «կատարյալի» և «անկատարի» տարբերութիւնը դնում է՝ ելնելով նրանց արտահայտած ժամանակային հարաբերութիւնից, ավելի ստույգ կերպով՝ հրամայականի ու ներկայի և սնցյալ կատարյալի հակադրութիւնից:

Բայի հրամայական եղանակը Սկևռացին ճիշտ կերպով համարում է բայի գործողութեան այնպիսի ժամանակ, որը դեռ չի կատարվել և որի կատարումը ենթադրվում է խոսքի մոմենտից հետո. այդ է պատճառը, որ նա բայի հրամայական ձևը համարում է «անկատար», ի հակադրութիւն սահմանական եղանակի ներկա անկատարի և սնցյալ կատարյալի. բերելով հրամայական բայաձևի բազմաթիւ օրինակներ (աղաչեա, արա, արգահատեա, ազնեա, աւժանդակեա ևն.), Սկևռացին եզրակացնում է. «Այսոքիկ անկատարք

<sup>1</sup> Չեռագիր, № 2371, ք. 160ա:

<sup>2</sup> Նույն տեղում, ք. 160ա:

<sup>3</sup> Նույն տեղում, ք. 160ա—բ:

<sup>4</sup> Նույն տեղում, ք. 160ա—բ:

են, վասն այնորիկ ոչ առնուն յի ի վերջան, զի դեռ շեն ի գլուխ ելեալ իրքն»<sup>1</sup>։

3-ի առկայությունը բառի վերջում Սկևռացին սխալ կերպով կարծում է իբրև տվյալ բառի ավարտուն՝ «կատարյալ» լինելու ցուցանիշ, նա չի կռահում, որ 3-ի առկայությունը և կամ բացակայությունը դասական հայերենում պայմանավորված չէ բայաձևի գործողության ժամանակային հարաբերությանմբ, այլ նրանով, որ գրաբարի գործածության շրջանում 3-կիսաձայնը բոլոր դեպքերում էլ արտասանվել է, երբ գտնվել է բառավերջում ա-ից և օ-ից հետո, իսկ շիինելու դեպքում՝ հասկանալի է, որ այն չի արտասանվել այնտեղ։ Մյուս կողմից՝ Սկևռացու այդ դրույթը չի հաստատվում նաև սահմանական եղանակի ներկա անկատարի նկատմամբ, ներկա անկատար բայաձևը խոսքի մոմենտի նկատմամբ սկսված, բայց շարունակվող գործողություն է ցույց տալիս, իսկ գործողության ավարտվածություն երբեք չի ենթադրում։ Սակայն այն հանգամանքը, որ Սկևռացին բայաձևերի քննման ժամանակ բնորոշում է նրանց ըստ վերջիններիս արտահայտած ժամանակային հարաբերության, ինքնին ուշագրավ է. այդ առնչությամբ նա ասում է, «...այսոքիկ (արդարացայ, մեղայ, ձանձուրացայ ևն — Լ. Խ.) զեղեալն նշանակեն զգիպուածս, որպէս այնորիկ որ առանց յիոյ էին, զշեղեալսն»<sup>2</sup>։

Ամփոփելով վերն ասվածները, հանգում ենք հետևյալ եզրակացություններին։

1) Գևորգ Սկևռացին ամբողջացնում է «գրչության արվեստի» քերականական տեսությունը՝ լրացնելով իր անմիջական նախորդի և ուսուցչի՝ Արիստակես Գրչի դրույթները։ Եթե Արիստակես Գրչը իր աշխատության մեջ հիմնականում քննում և մշակում է հայերենի ուղղագրական կանոնները, ապա Գևորգ Սկևռացին առաջ է քաշում նոր հարցեր՝ ամբողջական ուսմունք ստեղծելով «գրադարձության արվեստի», այլ կերպ ասած վանկատության, տողագարձի և կետադրության վերաբերյալ։

2) Սկևռացին նոր բարձրության վրա դրեց «գրչության արվեստը»՝ զինելով գրիչներին հայերենի քերականության վերաբերյալ բավական ընդարձակ գիտելիքներով և ըմբռնումներով։ Գրիչների սերունդներ դաստիարակվեցին նրա աշխատություններով, գիտական հիմքի վրա դրվեց ձեռագիր-աշխատությունների ընդօրինակման և բազմացման գործը, որով մեծապես զարկ և խթան ստացավ «գրչության արվեստի» սկզբունքների և դրույթների մշակման և ճշգրտման խնդիրը։ Այն գրիչները, որոնք ծանոթ էին Սկևռացու սույն աշխատություններին և առաջնորդվում էին Սկևռացու ցուցումներով ու դրույթներով, ձեռագիր-աշխատություններ ընդօրինակելիս, անկասկած, գրում էին ավելի բարձր որակով և գրագիտական կիրթ ճաշակով։

3) Մեծ է Սկևռացու ժառանգության կուլտուրական նշանակությունը պատմական տեսակետից. այն հանգամանքը, որ հայերը դեռևս 12—13-րդ դարերում ունեցել են ոչ միայն մեկնողական-քերականական հարուստ գրականություն, այլև «գրչության արվեստի» քերականական տեսությանը նվիրված ինքնուրույն աշխատություններ, վկայում է գիտության շատ բնագավառների նկատմամբ հայ ժողովրդի մտավոր մշակների ունեցած լայն մտորունների մասին։

<sup>1</sup> Ձեռագիր, № 2371, ք. 159ա։

<sup>2</sup> Նույն տեղում, ք. 159բ։

Л. ХАЧЕРЯН

ГРАММАТИЧЕСКАЯ ТЕОРИЯ «ИСКУССТВА ПИСЬМА»  
В ТРУДАХ ГЕОРГА СКЕВРАЦИ

## Резюме

Статья посвящена изучению трудов видного армянского грамматика и писца второй половины XIII в., Георга Скевраци.

Автор подвергает обстоятельному исследованию три труда Скевраци: а) «Наставления о слогосложении», б) «Наставления о просодии», в) «Наставления об искусстве письма», в которых рассматриваются вопросы орфографии, слогосложения, «искусства переноса», просодии и пунктуации. Указанные труды сыграли важную роль в установлении твердых закономерностей в этих областях.

В первом труде Скевраци исследует основы переноса и излагает правила, которыми должен руководствоваться писец, переписывая и размножая рукописи. Свою теорию переноса автор основывает на учении о слогосложении армянского языка.

Взгляды Скевраци на «искусство переноса», согласно автору, сыграли большую роль в деле правильного копирования рукописей и способствовали повышению искусства и грамотности писцов. Благодаря труду Скевраци уже в XIII в. в армянской грамматической науке было создано специальное учение «об искусстве переноса».

Второй труд Скевраци посвящен целиком случаям и обстоятельствам применения знаков правильного произношения и пунктуации в армянском языке, при этом дается их объяснение и теоретическое обобщение.

Как известно, уже благодаря армянскому переводу труда Дионисия Фракийского «Искусство грамматики» (перевод V века) армяне были знакомы с вопросами просодии и считали учение греков о просодии одной из составных частей грамматики. Однако роль и назначение знаков правильного произношения в переводе грамматики Дионисия Фракийского, как это видно из исследования упомянутого труда Скевраци, приняли у армян иной характер.

В третьем труде Скевраци рассматриваются, в основном, закономерности армянского правописания в прямых и косвенных формах слов. При этом, подобно своему предшественнику Аристакусу Гричу, он в своем учении о правописании руководствовался не современным ему произношением армянских слов, а произношением, соответствовавшим правилам письма классического армянского языка — грабара.

Автор статьи считает, что упомянутые труды Скевраци представляют большой интерес не только для арменистики, но и для общего языкознания.



Ռ. ԱՔԱՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ԳԱՊԱՍԱԿԱԼՅԱՆԸ և ԽԱԶԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Դեռևս 16-րդ դարից սկսած հայկական միջնադարյան նոտագրության սխառեմը՝ խաղային ձայնագրությունը թեև կոխում է իր անկման շրջանը:

Անկում է ապրում խաղերի բուն գրության արվեստը, գնալով պակասում է ձայնագրված երաժշտությունը կարգալի մացողների թիվը, աստիճանաբար կորչում, անհետանում են երաժշտական-տեսական մտքի այդ ասպարեզում ժամանակին ձեռք բերված նվաճումները:

Հաշորդ դարերին, օրինակ 18-րդ դարում, «խաղերի արվեստն» արդեն հատուկ ուսումնասիրման, բացահայտման առարկա է դառնում: Այդ շրջանում խաղերի ուսումնասիրության ուղղությամբ աշխատած առաջին հայ հեղինակներից մեկը Գրիգոր Գապասակալյանն է (1740—1808):

Կեսարացի Գրիգոր Գապասակալյանն եղել է դպիր, բանաստեղծ և համարվել է «ժամանակի ակամսավոր երգիչը»: Սովորել է Կ. Պոլսի Մայր դպրատանը «Նրբահանձար քերթույլ և վսեմարան հոնտոր» արդրումցի Հարություն վարժապետի մոտ:

Գապասակալյանն իմացել է լեզուներ, գրել է բանաստեղծություններ, լավ ծանոթ է եղել հայկական, հունական, տաճկական և արաբական երաժշտությանն ու տարածված եղանակներին և իր հորինած շատ ոտանավորների տակ հայերեն կամ օտարազգի անուններով նշանակել է, թե ինչ եղանակով պետք է երգել: Տիրապետել և նաև երաժշտության տեսությունը:

Գապասակալյանը գրել և հրատարակել է շորս գրքույկ.

ա) Գրքույկ որ կոչի նուագարան, 1794 թ., 28 օդոտոտու. 432 էջ.

բ) Գրքույկս կոչեցեալ երգարան, 1803 թ., 4 փետրվար. 160 էջ.

գ) Նուագարան երաժշտական, 1803 թ., 14 հուլիս. 63 էջ.

դ) Գիրք երաժշտական, յորում պարունակեն հարցմունք և պատասխանատուութիւնք համառօտարար, 1803 թ., 20 հուլիսի. 143 էջ:

Բացի դրանցից, ենթադրում են, որ Գապասակալյանին է պատկանում 1893 թվականի մարտ-ապրիլ ամիսների «Հանդէս ամսօրեայ»-ում նկարագրված Կեսարիայի ս. Դանիելի վանքի խաղարանական ձեռագիրը<sup>1</sup>:

Տպագրված շորս գրքերից երրորդը բանաստեղծությունների ժողովածու է, առաջինը և երկրորդը ունեն և գրական, և երաժշտական բաժիններ, վերջինը դուրս երաժշտական-տեսական աշխատություն է:

<sup>1</sup> Գապասակալյանի 4-րդ գրքից բովանդակությամբ և լեզվով հեռու չի գտնվում և մեծ մասամբ կարծես նրա սոսկ արտագրությունն է հանդիսանում (որոշ հավելումներով) Մատենադարանի № 3080 ձեռագրի վերջին մասը, որ կոչվում է «Համառօտութիւնք երաժշտականի գիտութեան հարց և պատասխանատուութեանց, շարագրեալ յումեմնէ բանասիրէ»:

Այս աշխատություններից երևում է, որ Գապասակալյանի երաժշտական գիտելիքներն ընդարձակ են եղել: Երաժշտության տեսության գրեթե բոլոր հիմնական բնագավառներն այս կամ այն շափով շոշափված են դրանցում, ընդ որում մի շարք հարցերի վերաբերյալ տրված են թեև խրթին, բայց իր ժամանակի համար բավական ճշգրիտ և մանրամասն բնորոշումներ (տես, օրինակ, Ռիթմի հետ կապված հարցերը): Ուշադրության արժանի են նաև նրա գիտելիքները հայկական հոգևոր երաժշտության լադային սիստեմի առանձնահատկությունների մասին: «Գիրք երաժշտական»-ի 156-րդ հարց և պատասխանում նա գրում է.

«Ի միում ձայնի զանազանին յեղանակք բազումք... որպէս ի ԳՁ այլ է այն, որ ասի Առաքելոյ Աղանուոյ և այլ է այն, որ՝ Ի վերայ բղխեալ գաւաղանին, և այլ է, որ՝ Յերկնայնոց հոգեղինացն, նոր Սիօն ծնեալն և այլք: Ուրեմն պարտ է գիտել, թէ բազումս շարունակի ձայնս ի վերայ հիման միոյ, այլ և այլ կերպիւ»:

Հայտնի է, որ Շարակնոցում մանրամասն նշանակված են երգերի ձայները, բայց դրանց այլևայլ դարձվածքները հատուկ նշումով ցույց չեն տրված: Դա կարելի էր իմանալ կամ նոտագրությունից (խաղերից), կամ ուսումնասիրել գործնական կատարման ընթացքում: Թե ինչքան ճշգրիտ են եղել Գապասակալյանի տվյալները ձայների սիստեմի, մասնավորապես՝ դարձվածքների մասին, երևում է այն բանից, որ նրանից ավելի քան 70 տարի անց նիկողայոս Քաշչյանը նույնպես վերոհիշյալ երգերը Գ ձայնին հատկացնելով՝ այդ ձայնի տարրեր դարձվածքներում է գրի առել<sup>1</sup>:

Հայկական երաժշտության տեսական հարցերից բացի, Գապասակալյանը կատարյալ իմացել է նաև հունական օկտոսիստսը և ուշ-բյուզանդական կոշվոզ նոտագրությունը: Նա իր «Գրքոյկ որ կոչի նուագարան» և «Գիրք երաժշտական» աշխատություններում մանրազնին կերպով մեկնաբանել ու բացատրել է այդ նոտագրության հիմունքները: Անկասկած, Գապասակալյանը որոշ շափով իմացել է նաև խաղերի սիստեմը:

Ըստ էության, Գապասակալյանի գրքերում եղած բացատրությունների մեծ մասը հենց խաղերին է վերաբերում, ընդ որում, առանձին հետաքրքրություն է առաջացնում այն, որ Գապասակալյանը տալիս է ամեն մի խաղի էջանակության թե՛ «քանակական» (քանի հնչյուն ունի յուրաքանչյուրը) և թե՛ «որակական» (ինչպիսի հնչում ունի) բնորոշումը: Այս են նկատի ունեցել հայ բանասերները, երբ խաղերի վերծանության հարցում Գապասակալյանի աշխատությունների հետ սովորաբար մեծ հուշեր են կապել: Սակայն, զանազան պատճառներով, մինչ այժմ չի պարզվել, թե խաղերի ուսումնասիրության համար այդ աշխատություններն իսկապես ինչ արժեք ունեն:

Սպ. Մելիքյանը, օրինակ, գտնում է, որ Գապասակալյանի գիրքը (խոսքը «Գրքոյկ որ կոչի նուագարան»-ի մասին է), մյուսներին նա ըստ երևույթին ծանոթ չի եղել) «հայկական պապագիկէ է»<sup>2</sup>, որտեղ խաղերի վերաբերյալ եղածը հունական երաժշտության գլխավոր օրենքների տառացի կրկնությունն է<sup>3</sup>:

<sup>1</sup> Տե՛ս Շարակնոց Ն. Քաշչյանի, էջ 616, 631, 41:

<sup>2</sup> Պապագիկէ կոշվում են հունական նեմային նոտագրության՝ միջին դարերից պահպանված ձեռնարկները:

<sup>3</sup> Սպ. Մելիքյան, Հունական ազդեցությունը հայ երաժշտության տեսականի վերաբերյալ, 1914 թ., էջ 27:

Այդ հանգամանքը նա փորձում է օգտագործել որպես մի լրացուցիչ փաստ՝ ապացուցելու համար խաղերի հունական ծագման իր սխալ տեսակետը: Կոմիտասը, ընդհակառակը, մեծ ուշադրություն է դարձրել Գապասակալյանի գրքերին և ուսումնասիրելով, ձգտել է վերծանություն իր աշխատանքի մեջ օգտագործել դրանք:

Գապասակալյանի գրքերի շափազանց խրթին լեզվի և նյութի բարդ շարադրության հետևանքով մասնագետների համար նրանցում այժմ էլ դեռևս շատ մութ կետեր են մնացել: Չնայած դրան, «Գրքոչկ որ կոչի նուագարան»-ի և «Գիրք երաժշտական»-ի ուսումնասիրությունը և, մասնավորապես, խաղադրության այլ աղբյուրների հետ համեմատությունը թույլ են տալիս ընդհանուր հասկացողություն կազմել նրանց էություն մասին և որոշել խաղարանության համար նրանց դերն ու արժեքը:

Գապասակալյանի գրքերն ուսումնասիրելիս առաջին հերթին աչքի է ընկնում այն, որ խաղերի կիրառության ձևերն այստեղ հաճախ հակասում են գործնականում վաղուց արժատացած ձևերին: Այս գրքերում բերված նշանների հնուց սովորական դարձած հաջորդականությունները, հատկապես Շարակնոցից բաղված երգերի ձայնագրությունները նման շեն նախկինում, նույնպես խաղերով կատարված նույն երգերի ձայնագրություններին: Բացի դրանից, Գապասակալյանի գրքերում հանդիպում ենք մի շարք նոր, խաղերի սխտեմում անծանոթ նշանների:

Այսպես օրինակ, Գապասակալյանը որպես հայկական նշան բերում է առու կոչվող նշանը, որը, նրա ասելով, հունական իզոնի նման մեղեդիի մեջ ցույց է տալիս նախորդ հնչյունի կրկնությունը: Հայտնի է, որ իզոնը հունական սխտեմի հիմնական նշաններից մեկն է: Գապասակալյանի աշխատության մեջ հայկական խաղերի սխտեմում նույնպիսի կարևոր իմաստ է տրրված առու-ին, այդ նշանը առատորեն գործածված է նրա ձայնագրություններում: Սակայն, բաղմաթիվ խաղադրված ձևագրերի ուսումնասիրությունը հաստատում է, որ իրականում հայկական սխտեմում այդպիսի նշան չի եղել: Պարզվում է, որ այն հունականի օրինակով ստեղծել ու անվանակոչել է ինքը՝ Գապասակալյանը<sup>1</sup>:

Նրա բերած գլխավոր խաղերի մեջ կան նաև «պ» տառը (անվանված է պեկորճ) և իրար կողքի դրված երկու փուշ (անվանված է երկփուշ), ընդ որում, «պ»-ն, Գապասակալյանի բացատրությամբ, ցույց է տալիս երկու աստիճանով, իսկ երկփուշը՝ մեկ աստիճանով դեպի ցած շարժում: Մինչդեռ մեր ձևագրերում «պ» տառը որպես մեղեդիական շարժում ցույց տվող խաղ չի գործածվել (այն շատ սակավ հանդես է գալիս որպես մի լրացուցիչ նշում և դրվում ոչ թե խաղերի շարքում, այլ գրական տեքստի տակ), իսկ երկփուշը գոյություն էլ չի ունեցել: Այսպիսի փաստերը ենթադրել են տալիս, որ անկախ նրանից, թե Գապասակալյանը ինչ շափով է իմացել խաղերի հին նշանակությունները, փաստորեն նկարագրել է ձայնագրության մի նոր սխտեմ: Գապասակալյանի գրքերի հետազոտությունից երևում է, որ նրա սխտեմը իր որոշ կողմերով իրոք նման է հունականին:

Հայտնի է, որ Գապասակալյանը շարունակ աշակերտներ է ունեցել և

<sup>1</sup> Փանի որ հունական իզոնը ըստ Գապասակալյանի նման է ա-ին առանց նրա ուղղածի գծի, հայկական ստեմ էլ նա նմանեցրել է ա-ին, դուրս թողնելով աջ կողմի ուղղածի գծը:



նրանց երաժշտությունն է ավանդել, երգեր սովորեցրել: Ուստի, հավանաբար, նրան անհրաժեշտ է եղել ուսուցման մի գործնական միջոց ունենալ, որի համար հին խազերը բավականաչափ դժվար և մոռացված լինելով, հարմար չէին կարող գալ: Պետք է ենթադրել, որ Գապասակալյանի գրքույկները հենց այդ գործնական նպատակն են հետապնդել: Հայտնի է նաև, որ 18-րդ դ. վերջում և 19-րդ դ. սկզբում Պոլսում հունական եկեղեցական երգեցողության ոճը և երաժշտության տեսությունները բավական տարածված էին: Ահա, Գապասակալյանն էլ, հեռու չի մնացել ժամանակի հոսանքից և հայկական երգեցողության համար ձայնագրության իր նոր սխեմայում որոշել է օգտագործել բյուզանդական գրության սկզբունքը և դրանով հեշտացնել խազերի դժվար սխեման:

Գապասակալյանի սխեմայի մեջ բյուզանդական ձայնագրության սկզբունքը գործնականորեն արտահայտվել է նրանում, որ նա խազերից կամավոր բնորոշյաժք վերցնելով 14 ձայնանիշ, անվանել է նրանց «եղանակի խազեր» և տվել նրանց ուշ-բյուզանդական ձայնագրության 14 գլխավոր նվաճների ինտերվալային նշանակությունները:

Այդ նշանները հետևյալներն են.

«Ուրն վեբելեակի և բարձր ձայնի»

Երկար	. . . . .	1 (մեկ աստիճան էլք) <sup>1</sup>
Շեշտ	. . . . .	1 (մեկ աստիճան էլք)
Ուրաղ	. . . . .	1 (մեկ աստիճան էլք)
Բենկորճ	. . . . .	1 (մեկ աստիճան էլք)
Ջարկ	. . . . .	1 (մեկ աստիճան էլք)
Ծնկնիք	. . . . .	1 (մեկ աստիճան էլք)
Ծունկ	. . . . .	2 (երկու աստիճան էլք)
Թուր	. . . . .	4 (չորս աստիճան էլք)

«Վեցն սաուբելեակի և սաուր ձայնի»

Փուշ	. . . . .	1 (մեկ աստիճան էջք)
Երկփուշ	. . . . .	1 (մեկ աստիճան էջք)
Խունճ	. . . . .	2 (երկու աստիճան էջք)
Պեկորճ	. . . . .	2 (երկու աստիճան էջք)
Պարույկ	. . . . .	2 (երկու աստիճան էջք)
Ներքնախաղ	. . . . .	4 (չորս աստիճան էջք)

(«Գիրք երաժշտական» հարց 81 և 86)

Ինչ վերաբերում է սխեմայի մնացած նշաններին, որոնց նա մեծամեծ խազեր է անվանում, ապա հետաքրքիր է, որ իրենց հատկություններով Գապասակալյանն այդ խազերը բարձր է դնում հունական համապատասխան նշաններից: Այսպես, խոսելով հունական «մեկալի խպոստասիտ»-ի մասին,

<sup>1</sup> Փակագծերում անված բացատրությունը մեր հավելումն է, սակայն հեղինակն ինքը աստիճան հասկացողությունը գործ է ածել. նա գրում է. «Հեղումն ձայնից է այն, որ ուսուցանել զվերելողութիւն և զստորիջնութիւն ձայնիցն իրր քանակաւ, որոց սկզբունքն է ի մի աստիճանի հնչմանն ձայնի» («Գիրք երաժշտական», հարց 36):

գրում է. «Ի տեղի նոցա ասցիս զմեծամեծ խաղս մեր, որք եղեալ կան ի կարգս խաղիցն», որովհետև «խաղք հայոցս են հարուստ և նրբանկատ արուեստի յօրինեալ, ևս և բազում քան զնոսա, վասն այնօրիկ անհեթեթ և հաստադիր համարեալ ասեմք ըստ ներգինացոյն թէ այլ ոչ եմք կարօտ զալ յԱթեն ի յուսումն»<sup>1</sup>:

Սակայն, բարձր գնահատելով հայկական «մեծամեծ» խաղերի հատկությունները, պահպանել է արդյոք իր սխտեմում նրանց նշանակությունը:

Հայկական հին ձայնանիշների գոնե մինչև այժմ ուսումնասիրված առանձնահատկությունների տեսանկյունից մոտենալով պետք է ասել՝ կամ բնավ չի պահպանել, կամ մասամբ պահպանելով, փոփոխել է: Սա հասկացվում է նրանից, որ Գապասակալյանի բերած խաղերի գծագրությունների ընդհանուր տախտակում բոլոր նշանների կողքին անխտիր կերպով դրված են համապատասխան թվանշաններ, այսինքն «մեծամեծ» խաղերին նույնպես, ինչպես գլխավոր նշաններին, տրված են որոշակի ինտերվալային նշանակություններ<sup>2</sup>: Մինչդեռ, ինչպես հայտնի է, դեռևս Կոմիտասը հաստատել է այն իրողությունը, որ խաղերի մեջ կան զանազան բնույթի նշաններ՝ ձայնաստիճանի խաղերից բացի, ձայներանգի, զարդարանքի, ձայնուժի, ամանակի խաղեր, բանալի խաղեր, կապող և գատող խաղեր, կիսանիշ խաղեր և այլն<sup>3</sup>: Պարզ է, որ այդ նշանների մի մասը ինտերվալային քայլերի հետ ընդհանրապես կապ ունենալ չի կարող: Նոր հետազոտություններից երևում է, որ նշաններ էլ կան, որոնց ինտերվալային նշանակությունը չի կարող սահմանափակվել որևէ մեկ կվարտայով կամ կվինտայով, ինչպես Գապասակալյանի բերած տախտակում ենք գտնում, այլ պարունակում է մի քանի քայլից բաղկացած ոչ մեծ մեղեդիական դարձվածք: Ուրեմն բոլոր այդ խաղերին անխտիր ինտերվալային արժեքներ հատկացնելը ևս, գոնե ինչ-որ շափով, Գապասակալյանի նորամուծությունն է:

Ավելացնենք, սակայն, որ «մեծամեծ» խաղերի՝ ինտերվալային նշանակությունից բացի ունեցած այլ հատկությունների մասին ակնարկ գտնում ենք հենց իր՝ Գապասակալյանի գրքում էլ, որտեղ ասված է. «խաղք մեծամեծն են նման հնչմանց առողանութեանց, որք... սեթևեթեալ պերճազարդեն յարմար յօրինմամբ ի յեղանակի երգեցմանն»<sup>4</sup>: Ահա, այս հիշատակությունը, ինչպես և խաղերին տրված սրակական բնութագրումները, որ մենք կրեքենք ստորև, ասում են այն բանի օգտին, որ «մեծամեծ» նշաններին ևս նոր իմաստ վերադրելով, որոշ շափով պահպանել է նաև նրանց հին նշանակությունները:

Այսպիսով մենք համոզվում ենք այն բանում, որ Գապասակալյանը նոր սխտեմ է մշակել: Ըստ երևույթին նա ձգտում էր հայկական ձայնագրության մեջ կատարել այն բարեփոխությունը, որի անհրաժեշտությունը վաղուց արդեն հասունացել էր, և որը մեկ տասնյակ տարի հետո Համբարձում Լիմոնջյանին հաջողվեց կատարել:

<sup>1</sup> «Գիրք երաժշտական», հարց և պատասխան 107 և 108:

<sup>2</sup> Տե՛ս «Գրքոյկ որ կոչի նուագարան», էջ 287: Այդ թվանշաններն են՝ 1, որ ցույց է տալիս սեկունդա ինտերվալ, 2՝ տերցիա, 3՝ կվարտա և 4՝ կվինտա: Այն խաղերը, որոնք ցույց են տալիս նախորդ հնչյունի կրկնությունը (փաստորեն՝ պրիմա ինտերվալ)՝ նշված են աֆոնա (շանձաբն) քառով:


<sup>3</sup> Կոմիտաս, Հոգվածներ և ուսումնասիրություններ, 1941, Երևան, էջ 167:

<sup>4</sup> «Գիրք երաժշտական», 87-րդ հարց և պատասխան:

Իր ձայնագրությունը մշակելիս Գապասակալյանն անշուշտ ձգտել է ճշգրիտ ինտոնացիայի պարզ գրություն ստեղծել: Այդ նպատակն է հետապնդել, օրինակ, որոշակի ինտերվալային նշանակությամբ օժտված գլխավոր նշաններ սահմանելը: Այդ ձգտումը, սակայն, լիովին չի իրականացվել: Նույն այդ գլխավոր նշաններով ցույց տրվող ինտերվալները այս կամ այն լադի (mode) հնչյունաշարի սահմաններում որոշակի բարձրություն կամ կայուն տեղ դեռևս չունենին, դրանք տարբեր լադերում և լադերի տարբեր աստիճանների վրա հանդիպելիս ամեն անգամ մի նոր նշանակություն էին ձեռք բերում: Հենց այդ պատճառով էլ նա ստիպված էր կիրառել, նույնպես հունական ձայնագրության օրինակով, վերջավորության ստուգողական նշաններ, որոնց օգնությամբ նշվում էր, թե մեղեդին որպես առանձին ինտերվալային քայլերի հաջորդականություն կատարվելով միջին կամ վերջին վերջավորությունում լադի որ աստիճանով պետք է ավարտվի:

Գնահատելով Գապասակալյանի սխտեմն ամբողջապես, պետք է ասել, որ խայտարղետ պատկեր է ներկայացնում: Իր ձայնագրություններում նա չի սահմանափակվել հայկական խաղերով, այլ զուգադրաբար՝ ինչպես ինքն էլ ասում է, կիրառել է նաև հունական նեմերը: Գրանից բացի, վերը հիշված վերջավորության ստուգողական նշանների սխտեմնի համար, հայկական ձայնեղանակների նշումների հետ, օգտագործված են նաև դիատոնիկ հնչյունաշարի աստիճաններ ցույց տվող տաճկա-արաբական տերմինները (շարգյա, սեզյա, էվիճ և այլն), որոնք այն ժամանակ Կ. Պոլսում շատ գործածական էին հատկապես գործիքային երաժշտության պրակտիկայում:

Այստեղ բերում ենք երկու նմուշ Գապասակալյանի այդ խայտարղետ ձայնագրությունից (առաջին օրինակում, որտեղ հայկական խաղերը գերակշռում են, հունական նշանները վերցված են ուղղանկյուն շրջանակների մեջ, իսկ երկրորդ օրինակում գերակշռում են հունական նշանները, այդտեղ շրջանակների մեջ են վերցված հայկական խաղերը):



(«Նուագարան», էջ 255):

Հայկական ձայնագրության նման ուեֆորմը հաջողություն չէր կարող ունենալ: Նախ՝ 18—19-րդ դարերի սահմանագլխին թե խաղերը և թե ուշբյուզանդական կոշվող նոտագրությունը, որից Գապասակալյանն օգտվում էր իր ուեֆորմը կատարելիս, իրենց դարն ապրել էին արդեն: Ապա՝ հայկական, հունական և տաճկա-արաբական լադային և ձայնագրական սխտեմների ռզու-

գաղիր և պերճաւորւած» միացումը, որը կատարում էր Գապասակալյանը, դուռ մեխանիկական էր, շէր ելնում լաղա-ինտոնացիոն որոշակի կայուն հիմքից, մի բան, որ նեմային տիպի սիստեմների այն կորևոր հատկութունն է, որով այդ սիստեմները դառնում են գործնական: Եվ վերջապես, Գապասակալյանն իր սիստեմը նկարագրելիս բացատրութիւնները այնպիսի խրթին լեզվով ու սխալաստիկ ձևով էր տալիս, որ հազիվ թէ որեէ մեկը դրանցից բան հասկանար:

$$\underbrace{\quad}_{\text{2}} - \boxed{\text{Ձ}} / \text{Յ} = \boxed{\text{Ձ}} - \text{Ս} \boxed{\text{Յ}} \overline{\text{Ս}} - \text{Վ} \boxed{\text{Մ}}$$

$$\underbrace{\quad}_{\text{2}} - \boxed{\text{Ձ}} \text{Ս} = \boxed{\text{Ձ}} - \text{Ս} \boxed{\text{Յ}} \overline{\text{Ս}} \boxed{\text{Մ}} \text{Վ} \boxed{\text{Մ}}$$

(«Նուագարան», էջ 221)

Գապասակալյանի սխալաստիկան, միջնադարյան տեսարաններից ժառանգած գաղտնապահութիւնը և խրթին մտածելակերպը երևան են գալիս նրա աշխատութիւնների շատ էջերում: Գրանք իրենց արտահայտութիւնն են գտել նաև «Գիրք նրաժշտական»-ի այնպիսի կարևոր հատվածում, որտեղ բացատրվում է, թե ինչպիսի հնչում ունի յուրաքանչյուր խազր: Ստորև քերում ենք նրա բնորոշումներից մի քանիսը.

(Շնշտ) / \ — շնշտական

(Պարույկ) C — պարույկական

(Զարկ) ✓ — զարկուցական

(Փուշ) ✓ — փշարար

(Ոլորակ) ρ — ոլորակական

(Բութ) \ — միշտ բթի

(Երկբութ) \ \ — երկանգամ բթի

(Երկշնշտ) // — երկանգամ շնշտի

( ? )	~	— գեղապատշաճ
(տում)	≈	— անդատական
(նեբրնախաղ)	↗	— շնչահատական
(Րեյրե)	Ր	— գետնաձգական
(երկփուշ)	✓✓	— աղուշական
(Մեկնեբ)	Պ	— ձայն իմն կաթավեցուցիչ
(էկորճ)	~	— կարի ցանկալի է ձայն սորա
(խոսրովային)	~	— ձայն բարձր և ցնթելի, բայց խոսրովական
(Քուր)	)	— ձայն պատերազմական, որ իրր գինեալ մտանէ յեղանակս
(Քաշտ)	~	— ընդ նմին որպես ի դաշտ ընթանա
(Փաթուխ)	ժ	— փաթուխելով ելանի ձայն սորա
(Կիսափաթուխ)	ժ	— որպէս թէ զկեսն փաթուխեալ զձայն
(Տիպիփուշ)	✓	— եռացուցանէ զերգն որպէս ջուր
(Կետերկար)	~	— դուն ինչ զկայ առեալ ցնթի
(Մենկորճ)	✓	— ըստ նկատման ձևոյն համայնարժար
(տուն)	Ք	— ըստ տեղույն ալլ իմն և այլն

Սրամիտ է նկատել մի հողվածագիր, ասելով, որ Գապասակալյանի բացատրությունները հասկանալու համար «Դանիէլ մարգարէ մը պետք է»<sup>1</sup>:

Ինչումն է ուրեմն Գապասակալյանի, ձայնագրական ռեֆորմի և ընդհանրապես խաղերի հետ կապված նրա աշխատությունների արժեքը:

Որպես հայ երաժշտական-տեսական մտքի զարգացման շրջաններից մեկի բնորոշ երևույթ, Գապասակալյանի աշխատանքներն ունեն իրենց պատմական նշանակությունը և այդ առումով արժանի են հիմնավոր ուսումնասիրության: Դրանից բացի, որոշ նշանակություն կարող են ունենալ անմիջականորեն խաղերի (ինչպես և հունական ձայնագրության սիստեմի) ուսումնասիրման համար: Օրինակ, վերը բերված բնորոշումները մեծ հավանականությամբ տրված են Գապասակալյանի կողմից մի շարք նշանների իսկական նշանակությունից ելնելով: Ուստի, երբ այդ խաղերի նշանակությունները հիմնականում, թեկուզ և մոտավոր կերպով վերականգնվեն, նրա բացատրությունները օգտակար կլինեն այս կամ այն նշանի բովանդակությունը ճշտելու գործում, բայց առայժմ դրանք շոշափելի օգուտ չեն տալիս<sup>2</sup>:

Գապասակալյանի արժանիքը պետք է համարել և այն, որ նա կազմել է շարականի խաղերի լրիվ տախտակը, որը նրանից հետո շատ բանասերների, այդ թվում նաև Կոմիտասի կողմից, ուսումնասիրության ընթացքում օգտագործվել է: Սակայն, դժբախտաբար, խաղերի մոռացված անունների փոխարեն նա նոր անուններ է մտցրել, այս հարցում ևս մեծ խառնաշփոթություն ստեղծելով: Այսպես, խաղերի հին ցուցակների և Գապասակալյանի ցուցակի համեմատությունից պարզվում է, որ մենկորձ, պեկորձ, շակորձ, զակորձ, յիկորձ, իյեէ, վեմվէ, բեյրե, խոսրովաչենա, խոսրովատիո և մի շարք այլ նման անուններ հորինել է ինքը՝ Գապասակալյանը: (Դրանցից առաջին հինգը հորինված են խաղերի սիստեմում հնուց գոյություն ունեցած էկորձ, բենկորձ և ձայկորձ անունների օրինակով): Այդ անունները կրկնվել են զանազան այլ տպագրություններում և իրենց մեջ լուծել ու վերջնականապես մոռացության են տվել մի քանի խաղերի հին, իսկական անունները, որոնց վերականգնելը, անշուշտ, կարևոր նշանակություն կունենար նրանց էությունը հայտնաբերելու գործում:

19-րդ դարի սկզբներին Գապասակալյանի ձայնագրությունը որոշ հետևիտորդներ ունեցավ, որոնք շարունակեցին զարգացնել և աշխատեցին ավելի ճշգրիտ դարձնել նրա սիստեմը (տես, օրինակ, Մատենադարան, ձեռ. № 3080), սակայն գործնական նշանակություն այն երբեք չստացավ: Գապասակալյանի, ինչպես և նրա հետևորդների աշխատությունները խթան հանդիսացան

<sup>1</sup> Գապասակալյանի երաժշտական-տեսական աշխատություններին հատուկ խրթին լեզվին և սխոլաստիկ մտածողությանը համահնչուն են նրա բանաստեղծությունները, որոնք ևս, ըստ Մ. Արեղյանի գնահատության, միջնադարյան քարացած սխոլաստիկ հասկացողություններով ու պատկերացումներով են կառուցված: Արեղյանի դիպուկ արտահայտությամբ, Գապասակալյանը բնություն ու երկինք էր երգում, բայց այդ երկինքը ոչ թե իրական, այլ «միջնադարյան երևակայության երկինքն էր» («Հայ հին գրականության պատմություն», հատոր 2-րդ, էջ 472):

<sup>2</sup> Պետք է ասել, որ Գապասակալյանն իր աշխատանքը ավարտված չէր համարում և, ինչպես գրում է իր շորթորդ գրքի վերջին էջում («Գիրք երաժշտական», էջ 143, հիշատակարան), մտադիր էր «ի յօրս ապագան» լրացնել այն: Չհասցրե՞ց, արդյոք, Գապասակալյանը մի նոր գիրք ևս գրել ու կատարյալ դարձնել իր սկսած գործը. այդ մեզ հայտնի չէ:

*Խաղերի բարդ սիստեմից վերջնականապես հրաժարվելու և, արդեն եվրոպական երաժշտության տեսության տվյալները հաշվի առնելով, նոր ձայնագրություն ստեղծելու համար:*

Р. АТАЯН

## ГРИГОР ГАПАСАКАЛЯН И ПРОБЛЕМА ИЗУЧЕНИЯ ХАЗОВ

Резюме

Армянская средневековая хазовая нотация с XVI века вступает в период упадка, а в последующие века «искусство хазов» уже становится предметом специальных трактовок и пояснений.

Одним из первых армянских исследователей в этой области был кесарийский поэт, певец и теоретик музыки Г. Гапасакалян (1740—1808), уделивший в своих работах много внимания теоретическим вопросам армянской, византийской и арабской музыки, в частности и проблеме хазов.


Богатое содержание работ Гапасакаляна вселяло у позднейших армянских исследователей (напр. у Комитаса) большие надежды на использование их в деле расшифровки хазов. Тем не менее до сих пор значение трудов этого автора в области изучения хазов не выяснено, а безоговорочное принятие его данных подчас приводило исследователей (напр. Сп. Меликяна) к неверным представлениям об армянской нотописи.

Из-за своеобразной зашифрованности языка и нарочитой усложненности изложения, унаследованных Гапасакаляном от средневековых теоретиков, многое в его трудах все еще остается невыясненным. Однако на современной стадии изучения византийской и армянской средневековых нотаций становится возможным составить общее представление об их сущности.

Так, выясняется, что труды Гапасакаляна заключают много ценного по византийской нотописи, при дальнейшем их изучении возможно вынести отсюда кое-что и по армянским хазам, которыми он в какой-то степени безусловно владел. Но сама система нотописи, описанная Гапасакаляном, оказывается не армянской средневековой системой, как до сих пор считалось, а представляет фактически новую, им реформированную систему, в которой наряду с использованием начертаний и некоторых особенностей армянских хазов, внесены также черты и особенности поздневизантийской интервальной нотописи и арабской ладовой системы.

Стремление Гапасакаляна упростить армянскую нотопись, для своего времени безусловно было положительным. Но его система, от-

личающаяся механическим соединением элементов различных музыкальных систем, не могла привести к удаче. Несмотря на то, что Гапасакалян и имел ряд последователей, его реформа все же не укоренилась в практике. Новую, усовершенствованную систему армянской нотописи удалось создать и ввести в практическое применение лишь в 1813—1815 гг. другому армянскому музыканту — Амбарцуму Лимонджяну.







ՇՈՒՇԱՆԻԿ ՆԱԶԱՐՅԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԱԼԱՄԴԱՐՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ  
ՄՈՍԿՈՎՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԸ

Հայ բանասիրությանը ծանոթ է բանաստեղծ Հարություն Ալամդարյանի լուսավորչական գործունեության մի փայլուն շրջանը՝ Ներսիսյան դպրոցում նրա տեսչության տարիների արդյունավոր կյանքի պատմությունը: Այդ տարիներն իրավամբ կոչվում են «Դար Ալամդարեան»:

Հ. Ալամդարյանն իր արտասովոր տաղանդով, խորը գիտելիքներով ու հմուտ փորձով արմատական հեղաշրջում առաջ բերեց Կովկասահայ ուսումնա-կրթական շարժման մեջ: Հայ աշխուժացող հասարակական կյանքի նոր պահանջների թելադրանքով նա մերժեց կղերա-պահանդակա՛ն, սխոլաստիկ դպրոցը, նրա դաստիարակության վնասակար ոգին և կյանքի կոչեց նորը:

Այդ 1824—1830 թվականներին էր: Դրան հաջորդում են Հ. Ալամդարյանի աքսորը՝ Հաղբատ, ապա Քիշնևյան ու Նոր Նախիջևանյան նույնքան ձախորդ կյանքի տարիները: Թեև Նոր Նախիջևանում պիտի սկսվեր Հ. Ալամդարյանի կյանքի հաջորդ փուլը: Նա մաքառելով ձգտում էր իրագործել իր նոր ծրագիրը՝ «Նախիջևանը դարձնել հայոց ազգի լուսավորության բովբե» — ինչպես վկայում է Գաբրիել Պատկանյանը:

Տարաբախտ հանգամանքները թույլ չտվեցին Հ. Ալամդարյանին թևակոխել իր գործունեության երրորդ փուլը, ողբերգական մահը խորտակեց նրա լուսավորչական ծրագրերը:

Բայց ինչպե՞ս է անցել Հ. Ալամդարյանի կյանքի առաջին շրջանը, ի՞նչ է արել այդ անխոնջ գործիչը, մինչև Ներսիսյան դպրոցի տեսչությունը ստանձնելը, և ո՞րն է նրա անցած տարիների գրական վաստակը: Բանասերները չեն պատասխանում այս հարցերին. նրանց անձանոթ է մնացել Հ. Ալամդարյանի կյանքի մի ամբողջ տասնամյակի (1813—1823 թթ.) պատմությունը:

Իր ծննդավայր Աստրախանում Հ. Ալամդարյանը Գալֆայանների մոտ նախնական կրթություն ստանալուց հետո, սովորում է Սերովբե վարժապետի մոտ՝ տեղի Աղաբաբյան դպրոցում: Հռչակավոր մանկավարժը մեծ հույսեր էր կապում իր արտասովոր ընդունակ աշակերտի հետ և ձգտում էր «հայրական խանդաղատանօք և առաւել ևս նախասիրական ջանիւք մշակել և հառաջացնել Ալամդարյանցի բնական հանճարը և կրակ և բոց միտքը»<sup>1</sup>:

Լազարյանները լսել էին Հ. Ալամդարյանի (հավանաբար Սերովբե վարժապետի միջոցով) ընդունակությունների համբավը, և երբ վերջինս 1813 թվականին ավարտեց Աղաբաբյան դպրոցը, նրան հրավիրեցին Մոսկվա:

17-ամյա Ալամդարյանը Մոսկվա է մեկնում արդեն բավականաչափ գի-

<sup>1</sup> Ա. Ա յ վ ա դ յ ա ն, Ծար հայ կենսագրութեանց, I հատոր, Պոլիս, 1893 թ., էջ 127:



րացն ի չղել առ Տէրութիւնն Ձեր, սակայն սպասեմ աւարտման հանդեսին: Ի շորհրտասան համառօտագոյն տարբերութեանց տրոհի՝ 1. Սահմանէ զիմաստութիւն, 2. Զօգուտ նորա, 3. Զիսկութիւն օգտի նորա, 4. Հնարք տարածելոյ զայն ի հասարակութեան, 5. Իսկութիւն շորսին, 6. Զնախկին հեղինակսն, որք ջանան տարածել ի մեզ զայն, 7. Յատկացեալքն ի սերնդեան Աղազարեանց առ աւարտումն գործոյս, 8. Հրաւէր ի ցնծութիւն զազգ հայոց, 9. Աւետիս առ նա վասն բացման աղբեր իմաստից, 10. Թէ անտի յարիցեն անզուգական անձինք ի պիտանութիւն յիւրաքանչիւր անդամս հասարակութեան, 11. Աւետիս առ մանկունս հայոց, 12 և 13. Թէ յինչ պատիւ ունին վերանալ իսկազոյն ասպրնջականք իմաստից, 14. Մաղթանք առ հոգևոր սուրբ աստուած ի վարձատրեալ զհեղինակս գործոյս»: (Մատենադարան, Լազ. արխիւ, Թղթ. № 104, գործ № 8, վավ. № 18):

Դժբախտաբար մեզ անծանոթ է այս կանոնագրի բնագիրը. սակայն նրա բովանդակութեան այս շարադրանքից հասկանալի է դառնում, որ Ալամդարյանը պատրաստել է Լազարյան ճեմարանի գործունեության մի ծանրակշիռ ծրագիր, որն արտացոլում է իր միջ ճեմարանի կատարելիք դերը և նպատակը: Համաձայն այդ ծրագրի, նախատեսվում է ճեմարանի հանդիսավոր բացումը դարձնել հայութեան համազգային տոն, կոչեր, ուղերձներ ուղղել «առ ազգն հայոց, աւետիս առ մանկունս հայոց, վասն բացման աղբեր իմաստից»:

Լազարյան ճեմարանում Ալամդարյանի գործունեության ասպարեզը գնալով լայնանում է, շփումը ուս և եվրոպացի մտավորականության հետ, ուստի սական ակադեմիայի գիտնականների, ուսուցիչների միջավայրում լինելու առիթները, Լազարյան ազգատոհմի նախաձեռնությունների գծով արվող գրավիչ հանձնարարությունները և այդ բոլորի հետ հայրենիքի լուսավորութեանը ծառայելու ներքին, անսպառ կրակը նպաստում էին, որպեսզի Հ. Ալամդարյանը, դառնար իր ժամանակի հայկական միջավայրի մեծ նպատակի մարդը, լուսավորութեան գործիչը: Ալամդարյանի նշանաբանն էր սովորել, անվերջ սովորել և նույն կրթով սովորեցնել, կրթվել ու կրթել «մերազնյա համբակաց»: Դեռևս 1814 թվականին ճեմարանի նախապատրաստական խմբերում Ալամդարյանը պարապում էր հայոց և ուսաց լեզուներ, իսկ ինքը միաժամանակ սովորում էր լատիներեն և ֆրանսերեն: Ֆրանսացի հայտնի լատինագետ Լամեպեֆեն Հովակիմ Լազարյանի խնդրանքով Ալամդարյանի հետ օրը մեկ ժամ լատիներեն էր պարապում, նրան միայն խոսակցական լեզվին վարժեցնելու նպատակով: Կարճ ժամանակամիջոցում Ալամդարյանը այնքան է հմտանում այդ լեզվին, որ դասավանդում է նաև լատիներեն:

«Անձն իմ ատեալ է քստ ամենայնի զախտ ծուլութեանն,— գրում է Ալամդարյանն այդ տարիների իր աշխատանքի մասին,— քստ կարի զատակեալ կամ յրնթերցումն հոգեշահ գրուածոց, բաւականապէս թարգմանութիւն առնեմ ի լատին լեզուէ ի ուսաց բարբառ, իսկ ի ուսաց լեզուէ ի մերս բարբառ, զցայգ և զցերեկ գեգերիմ թարգմանել, և ողորմութեամբ ամենակալին աստուծոյ օր քստ օրէ զնորանոր ոճից բուռն հարկանիմ՝ կրթելով հավասարապէս նրապէս զանձն իմ, սոյն գունակ և ինձ յանձնեալ զաշակերտս ի խելամտութիւնս րնթերցուածոց, ի շարագրութիւնս քաղցունս, ի վարս համեստութեան և բարեկենդանութեան՝ քստ շափու կարողութեանս՝ պահելով միանգամայն զխրնայական պատուիրանս Ձեր՝ յարկեղ յիշողականութեան իմոյ, որպէջ զզանձ ծանրագոյն»: (Լազ. ֆոնդ, Թղթ. № 104, գործ. № 8, վավ. № 33, 24/12):

1814 թ.: Այսուհետև ևս քաղվածքներն արված են Մատենադարանի Արխիվի (ազարյան ֆոնդից):

Ալամդարյանը ձգտում է բարոյական ամուր կապ հաստատել աշակերտի և ուսուցչի միջև. «Իմումս տկար կառավարութեան յանձնեալ մանկտիքն կան պարապեալ յուսմունս իւրեանց լաւ քան զառաջինն: Ակն ոճնելով տիրական խնամոց ձերոց, որոց վասն խնդրեմ զոչ ըստ ամենայնի միամիտ, զի կամք իմ է զքաղցրութիւնն ուսման քաղցր եղանակաւ մատակարարել նոցա և ո՛չ խստութեամբ և դանիւք հանգոյն դահճաց...»: (Թղթ. № 105, գործ № 11, վավ. № 1):

Արդեն 20-ամյա Ալամդարյանը պարապում էր նաև այն հատուկ խմբի աշակերտների հետ, որոնք կարճ ժամանակամիջոցում պիտի յուրացնէին հայոց լեզվի դասընթացի համար սահմանված ծրագիրը և ժամանակին օգնական դառնային իրենց վարժապետներին: Ահա թե ինչ է գրում այդ առթիվ Ալեքսանդր Խուդարաշյանը, 1816 թվականի սեպտեմբերի 4-ին, Հովակիմ Լազարյանին ուղղված նամակում. «Եւ վասն տէր Յարութիւն քահանայի պարտեմ վկայել, որ դա ջանացողութեամբ իւրով ի կրթել զմանկունս, ո՛չ սակաւ արդինաւորութիւն խոստանայ առ ապայն ազգօգուտ ուսումնարանի ձերում: Տեսի զթարգմանութիւնս երից աշակերտաց իւրոց ի բուսաց և ի լաթին լեզուացն ի մերս բարբառ, որք յոյժ գովելիք են. ի մէջ հնգից աշակերտացն, որք են յուսումնարանի, այս երեքն բաւական յառաջացեալք են յուսմունս, որք զբերականութիւնն աւարտեալ ընթեռնուն այժմ զճարտասանութիւնն այնքան արդեամբք, մինչ սորա ևս ի կարճ ժամանակի կարեն օգնական լինիլ վարժապետացն ի ժամանակի դասասացութեան: Այսոսիկ տեսեալ արդարև պարտաւորեցայ շնորհակալիլ ի տէր Յարութիւնէ, զի սորին հետևողութիւն միայն է, որ յառաջացուցեալ է զայս շափ կրթութիւն երից մանկանցն ի լեզու հայոց»: (Թղթ. № 104, գործ № 8, վավ. № 52):

Ալամդարյանը դեռ երիտասարդ տարիքում խորապես գիտակցում էր ուսուցչի հասարակական դերը, հայրենասեր, առաքինի սերունդներ դաստիարակելու նրա միսիան: Ալամդարյանը լեզվի ուսուցիչ չէր այդ իմաստի պարզ ըմբռնումով, այլ լայն մտահորիզոնի տեր մի մանկավարժ, որի համար լեզուն մի միջոց էր իր սիրելի աշակերտների առաջ բացելու մարդկային հասարակության պատմության էջերը, նրա մտքի նվաճումները, «զցայգ և զցերեկ» կրթելու ինչպես իր անձը, նույնպես և իրեն հանձնված աշակերտներին. ուստի Ալամդարյանը այդ տարիներին առանձին ջանասիրութեամբ շարունակում է ուսումնասիրել բարոյական աստվածաբանություն, փիլիսոփայություն, մետաֆիզիկա և լոգիկա: Ըստ երևույթին, Ալամդարյանը Լազարյանների միջնորդութեամբ իրավունք էր ստացել որոշ առարկաներ լսելու Մոսկվայի համալսարանում. «...քանզի,— գրում է նա Հովակիմ Լազարյանին,— յաւուր յորում արժանաւորեցայ ընկալնուլ ի ձէնչ զհրաման վասն դասառութեան փիլիսոփայութեան, իսկոյն սկզբնաւորեցի դաս առնուլ զլօղիկայ, զնախկին մասն նորա, թէպէտ զայն ի վաղուց ուսեալ էի ի մերս բարբառ, սակայն այժմ ընդ միմեանս քաղղատութեամբ լաւ ևս արժարժամբ. և գտի առ Թոմա Իվանիչ Դաւիթովին զֆիզիկայ, զմեթաֆիզիկայ և զբարոյական աստուածաբանութիւն՝ յորս պարապիմ յաւուրն ժամ մի: Զոռսերէն աստուածաբանութիւնն բովանդակ ուսայ և զերկուս մասն ի մեր բարբառ վերժանի...»: (Թղթ. № 104, գործ № 8, վավ. № 16):

Մոսկվայում կազմավորվեցին Հ. Ալամդարյանի մանկավարժական առաջադեմ հայացքները և հենց այստեղ էլ սկսվեց պահպանողական տարրերի պայքարը նրա դեմ: Լազարյաններին ուղղված նամակներում նա համեստորեն շարադրելով իր հայացքները դասավանդության օգտակար մեթոդների մասին, աշակերտի և ուսուցչի միջև բարձր, մարդկային փոխհարաբերություն ստեղծելու հարցերի մասին, միաժամանակ բողոքում է ոմն լատինադավան Հովակիմ կրոնավորի դեմ, որը հալածում է Ալամդարյանին և գործում հակառակ այդ սկզբունքների: «Հետևելով տիրական հրամանի ձերում ի 10 ամսոյս զհնգեսին աշակերտսն իմ ներկայացուցի առաջի հօրն Յովակիմայ, յորոց երեքն կան դեռ յուսումն ճարտասանութեան, և երեքն նոր են սկսեալ դրերականութեան առաջին հոլովմունսն, և նա սկսեաց հարցանել զնոսա,— (գրում է Ալամդարյանը այդ կրոնավորի մասին, որին ըստ երևույթին հանձնարարված էր ստուգելու Ալամդարյանի աշակերտների առաջադիմությունը),— ոչ ըստ օրէնի երոպական վարժապետաց, փոքր առ փոքր զհեշտիւսն զնելով առաջի մանկանց ղեռավարժից զհարցմունս, գրավել զսիրտս նոցա և զսէր առ ինքն, այլ ի գործ զնելով զմասնաւոր խստութիւնս բանից փոքր ինչ շրտոյզ զմանկունսն, անհաւան գտանելով ընդ վենետիկեան բառգիրքն, ընդ իս, ընդ Սերովրէ վարժապետն իմ և այլն: Վեհազնեա՛յ հայր, քաջահայտ է Ձեզ, թէ մանկունք առաւել ըստ քաղցր խօսակցութիւնս հաճին հոգւով, քան ընդ յոխորդ ձայնս. իցէ թէ գալստեանն ձերում ազգեսչիք զմա... զի երբեմն և կատարեալ անձինք ևս եթէ լսեն զսաստիկ բանս ի մեծամեծաց պապանձեալ կարկին, թող թէ երեկեան խակավարժ համբակը: (Թղթ. № 105, գործ № 11. վավ. № 12):

Դժվար չէ կռահել, որ Լազարյան ճեմարանի աշխատանքները սկսվում են Ալամդարյանի ջերմեռանդ, գործարար մասնակցությամբ, նրա մանկավարժական տեսական առաջադեմ սկզբունքները դարձի զնելու ճանապարհով:

Պետք է գիտենալ, թե ինչպիսի ոգևորություն է ապրել ազգային լուսավորության գործի այդ մեղվաջան մշակը Լազարյան ճեմարանի շենքի հիմնադրման օրերին: Այդ առթիվ կազմակերպված եկեղեցական հանդեսում, ուր գտնվել են հայ և ռուս շատ նշանավոր անձինք, Ալամդարյանը հանդես է գալիս մի հուզիչ ճառով... Իսկ տանը, ճաշկերույթի ժամին, Ալամդարյանն իր երկու աշակերտների հետ երգում է քաղցրաձայն, և նրանց ձայնակցում են բոլորը: (Թղթ. № 105, գործ № 8, վավ. № 35):

1816 թ. հուլիսին Լազարյան ճեմարանի շենքի կառուցումն ավարտված էր: Ալամդարյանն առաջինն իր աշակերտներով մտնում է նորակառույց շենքը՝ բնակության և պարապմունքների համար և այդ առթիվ երախտագիտական նամակ ուղարկում իր բարերարին.

«Վեհազնեայ իշխանապետ,

բաղմերախտ տէր և բարերար.

Յամսոյս 21 ըստ հրամանի խոհեմազարդ որդւոյ Ձերոյ վեհազին տեան մերոյ Խաչատրոյ՝ աշակերտովքս հանդերձ մտի ի հոյակապ և ի նորակառույց չքնաղ ուսումնարանն Ձեր՝ յուսումնատուութիւն և ի բնակութիւն, զոր խնդրեմ մարդասիրապէս շնորհաւորել զիս՝ բնակօղս ի նմին վերստին ի գիրկս հայրութեանդ առնուլ և ժառանգորդս շնորհաց ձերոց առնելով, օրհնել՝ որպէսզի լրումն լինիցի և կատար բարեվաղճան դիտաւորութեան ազգային բարերարիդ, յուսանիլն մանկտեացս ի դպրոցիս և ի տալն զպտուղ՝ է՛ որ հարիւրաւոր.

է՛ որ վաթսունաւոր, և է՛ որ երեսնաւոր ըստ իւրաքանչիւրումն կարի»: (Թղթ. № 105, գործ № 11, վավ. № 14):

Մոսկովյան տարիների հասարակական, մանկավարժական լայնահուն աշխատանքի բովում ձևավորվում է նաև բանաստեղծ և գիտնական Ալամդարյանը: Հայ նոր, ազգային քնարերգութեան ընտիր նմուշները համարվող իր մի շարք բանաստեղծությունները Ալամդարյանը գրել է Մոսկվայում: «Յերկու ձեռին երկու մում», «Հար վա՛ն է կայծ սիրոյ սիրոյդ», «Նազելոյս գէմքն էր ճերմակ ու կարմիր», «Յոյս իմ ի քոյ տես յաշխարհի» և այլն:

Ալամդարյանը Մոսկվայում է գրել նաև «Թշուառութիւն սոխակի» տարածված այն երգը, որի շուրջը ուշագրավ բանավեճ է առաջացել ներսիսյան դպրոցի աշակերտների միջև:

Գալուստ Ծիրձաղանյանը 1851 թվականին «Բաղմալեպում» տպագրում է «Թշուառութիւն սոխակի» երգը՝ վերագրելով այն ոչ թե Ալամդարյանին, այլ «նախնեաց մերոց»: Հարություն Տեր Ծմավոնյանցը այդ առթիվ «Արարատ» շաբաթաթերթում (հրատարակիչ Գ. Պատկանյան) իսկույն տպագրում է մի ընդարձակ բացատրագիր, փարատելով ամեն մի տարակույս<sup>1</sup>: Պետք է ավելացնել նաև, որ «Թշուառութիւն սոխակի» երգը Ալամդարյանը գրել է Մոսկվայում՝ 1821 թվականի օգոստոսի 31-ին: Այդ տեղեկությունը հաղորդում են նաև հեղինակի Մատենադարանում պահպանվող ինքնագիր ձեռագիրը<sup>2</sup>, ինչպես նաև Գ. Ծիրձաղանյանի հանձնարարությամբ ընդօրինակված մի այլ ձեռագիր:

Կրե՛լ է Ալամդարյանը Մոսկվայում այլ երկեր. — անշուշտ, բայց մեզ հայտնի չեն բոլորը: Ալամդարյանի գրական ժառանգությունը դեռևս չի ամբողջականացված: Անցյալում հայ բանասերներին շատ է մտահոգել այն ի մի բերելու խնդիրը, սակայն Ալամդարյանի կյանքն այնքան խառնընթաց է եղել և մահն այնքան անակնկալ, որ դժվար էր հետամուտ լինել և պարզել ամեն ինչ: Ուստի զարմանալի չէ, որ գտնվում են Ալամդարյանի կյանքի հետ կապված ուշագրավ նյութեր, նրա գրչին պատկանող նոր բանաստեղծություններ և նույնիսկ ծավալուն երկեր<sup>3</sup>, որոնք մինչև այժմ անհայտ են մնացել մեր բանասերներին:

Ալամդարյանը եղել է նաև հմուտ թարգմանիչ: Դեռևս Մոսկվայում նա թարգմանություններ է արել ռուսերեն և լատիներեն լեզուներից հայերեն, հայերենից և լատիներենից ռուսերեն: Դժբախտաբար մեզ չեն հասել այդ բոլորը: Մատենադարանում է պահպանվում Ալամդարյանի «Հրահանգ քրիստոնէական վարդապետութեան» աշխատությունը (ձեռ. № 8783), որ նա 1825 թվականին թարգմանել է ռուսերենի:

<sup>1</sup> «Արարատ», 1851 թ., էջ 363—365:

<sup>2</sup> Այս տալը ընդգրկված է նաև Ալամդարյանի «Չափաբերականք» բանաստեղծությունների գրքուկում (Պետերբուրգ 1884 թ., էջ 10—13): «Չափաբերականք»-ի հրատարակության համար հիմք է հանդիսացել Մատենադարանի արխիվում պահպանվող (Պատկանյանների ֆոնդ, թղթ. № 139, վավ. № 100) ձեռագիրը՝ գրաքննիչի ուղղումներով և ստորագրությամբ: Իսկ այս ձեռագրի համար հիմք է հանդիսացել Ալամդարյանի ինքնագիր օրինակը, որը պահպանվում է ձեռագրական ֆոնդի 2988 թվահամարի տակ: Ըստ երևութիւն «Չափաբերականքի» հրատարակիչ Քերոբե Պատկանյանը՝ Ալամդարյանի թողը, տպարանի համար հանձնարարել է ընդօրինակել Ալամդարյանի ձեռագիրը՝ բնագիրը անազարտ պահելու նպատակով:

<sup>3</sup> Ալամդարյանի «Հրամիզդ և Չենոբիա» անտիպ գրամայի ձեռագիրը (թեև թերի) վերջին շրջանում հայտնի դարձավ (ՀԳԱ «Տեղեկագիր», 1952 թ., № 3, էջ 102):

1814 թվականին, 18 տարեկան հասակում, Ալամդարյանը մեծ շանասիրությամբ, ըստ երևույթին, լատիներենից հայերենի է թարգմանում ճանապարհորդական մի աշխատություն. «Ի սկզբան ներկայ ամսոյս աւարտեցի բազմապատիկ տարժանմամբ զթարգմանութիւն ճանապարհորդութեան Ռաֆայէլի Դինբեկեանց, — գրում է Ալամդարյանը Հովակիմ Լազարյանին, — թէ որքան էին ի նմոյն կուտակութիւնք անյարիր բանագրութեանց, կամ լաւ ևս ասել ի գրուցաց ընկալեալ ճառից, շի՛ր հնար ընդ գրով սահմանի փակել: Գոհութիւն մեծ մերոցն և այլազանցն աշխարհագրաց, որոց օգնականութեամբ զբարիսն ժողովեալ ի փունճ մի, զխոտանն ի բաց մերժեցաք ըստ կարի»: (Քղթ. № 104, գործ № 8, վավ. № 37):

Կժբախտաբար մինչև այժմ բանասիրությանը ոչինչ հայտնի չի եղել Ալամդարյանի նաև այս գործի մասին: Թե ի՞նչ նկատառումով է Ալամդարյանը այդ թարգմանությունը կատարել, և կամ ի՞նչ է ներկայացնում իրենից այն՝ մենք դեռևս հնարավորություն չենք ունեցել պարզելու:

Սակայն Ալամդարյանի մոսկովյան տարիների գիտական-մանկավարժական գործունեության փառքը Ռուս-հայերեն համառոտ քերականության՝ դասագիրքն է: Հայտնի է, որ Մոսկվայում 1821 թ. Ալամդարյանը տպագրեց իր Ռուս-հայերեն համառոտ բառարանը: Պարզվում է, որ դրանից դեռևս 5—6 տարի առաջ՝ 1814—16 թվականներին Ալամդարյանը հրատարակության էր պատրաստել իր անդրանիկ աշխատությունը՝ Ռուս-հայերեն գործնական քերականության վերոհիշյալ դասագիրքը:

Արտվյանից առաջ, Ալամդարյանն էր այն խոշոր հայ գործիչը, որ գործնականորեն հրապարակի վրա դրեց ուսաց լեզվի կարևորության հարցը, հայության լայն շրջաններում նրա ուսուցումը կազմակերպելու, տարածելու օնհրաժեշտությունը: Հայոց հիասքանչ մայրենի լեզուն անկորուստ պահպանելու զազափարի հետ միասին, Ալամդարյանն իր ողջ կյանքում մեծ կրքով պաշտպանում էր և ուսաց լեզուն՝ համարելով այն մի հարուստ աղբյուր, որից պիտի ուսական առաջավոր լուսավորությունը հորդեր դնպի հայրենի երկրի խավար անկյունները:

«Հայք անկորուստ պահեալ զբուն բարբառ իւրեանց, գուն գործեն մեծավաստակ երկասիրութեամբ ուսանել և զլեզու ուսաց. զի նովաւ ակն ունին ներվարժիլ ի հարկաւոր գիտութիւնս և առաւելապէս լուսաւոր առնել զմիտս իւրեանց: Յայս միտս Ռուսսիա է վասն նոցա նոր Աթէնք. այլ առ պակասութեան կարևորագույն գրեանց յանթիրի ուսումն լեզուի ուսաց, յամենայն ջանք նոցա ի դերև ելանեն»<sup>2</sup>:

Այս բարձր գիտակցությամբ է, որ Ալամդարյանը մեծ կրքով ու ավյունով 1814—1821 թվականների ընթացքում հայկական դպրոցների համար պատրաստում է ուսերեն երկու նոր ձեռնարկ:

Ալամդարյանի վերոհիշյալ Ռուս-հայերեն գործնական քերականություն ձեռագրի մի ենթարածինը միայն՝ «Հոլովառու նախադրութիւնք» — «Предлоги, управляющие падежами» — մեզ հայտնի էր 1949 թվականին<sup>3</sup>: Հետագայում պարզվեց, որ Մատենադարանում պահպանվում են այդ աշխատու-

<sup>1</sup> Այդպես ենք կոչում պայմանականորեն:

<sup>2</sup> Հ. Ալամդարյան, Համառոտ բառարան ի ուսաց լեզուի ի հայ, Մոսկվա, 1821 թ., էջ 11:

<sup>3</sup> Այդ մասին տե՛ս ՀԳԱ «Տեղեկագիր», 1949 թ., № 3:



թյան նաև այլ մասերը, մի քանիսն էլ կրկնօրինակներով: (Այդ բոլորը ի մի բերելով և ամրադնելով մի կազմի մեջ, մուտք արվեց Մատենադարանի ձեռագրական բաժինը՝ 3754 համարի տակ):

Այլ փաստեր շունենալու պատճառով, մենք հիմք ընդունելով 1949 թվականին հայտնի դարձած վերոհիշյալ հատվածի թղթի արտադրության ժամանակն ազդարարող տարեթվերը, կարծում էինք, որ այդ գործը Ալամդարյանը գրել է ոչ շուտ՝ այլ 1831 թվականին կամ նրանից հետո: Սակայն շարունակվող հետազոտության ընթացքում երևան եկած փաստերը նոր լույս սփռեցին այս հարցի վրա: Պարզվեց, որ Ալամդարյանը այդպիսի մի աշխատություն գրել է Մոսկվայում՝ 1814—1816 թվականներին և որ մեր ձեռքի տակ եղածը դրա ընդօրինակությունն է՝ հեղինակի ձեռքով հետադաշում արված: Ըստ երեվույթին դեռևս Աստրախանում Ալամդարյանը մի այդպիսի քերականություն պատրաստելու մտահղացում է ունեցել: Մոսկվա հրավիրվելով նա իր այդ մտադրությունը հաղորդել է Հովակիմ Լազարյանին, և վերջինս էլ հանձնարարել է նրան հրատարակության պատրաստել այն: 1814 թվականի դեկտեմբերի 2-ին Հով. Լազարյանին գրած նամակում Ալամդարյանը զեկուցում է այդ առթիվ իր կատարած աշխատանքի մասին, խնդրելով նրանից ուղարկել՝ անհրաժեշտ գրականություն: «Պաշտօնեա տեառնդ, աւարտեցի զքերականութիւնն ուսաց և ընկալնում զճարտասանական զուսումն և փոքր առ փոքր կազմիմ զշարագրութիւնս այնր լեզուի: Առ յառաջդիմութիւն այս առարկաց երեք ինչք պիտոյանան՝ մի քարոզմատեան Մասիլիօնի, երկրորդ մեթոլոլիայ և երրորդ պէս-պէս գրութիւնք զանազան հեղինակաց: Քարոզ մատեանն և մեթոլոլիայն երբէք աստ ոչ գտանին ի պատճառս հրկիզութեան, իսկ գրութիւնք պէս-պէս հեղինակաց, հաղիւ սրեմն՝: Մաղթէ առ մեզ ապիկարութիւն իմ յագեցուցանել զքաղց իմ այսորիւք մատենիւք, եթէ հնար իցէ, և աղերսեմ զտարապայման յանդգնութիւնս իմ անտես առնել»: (Թղթ. № 104, գործ № 8, վավ. № 14):

Ալամդարյանը շնորհակալությամբ ստանում է իր պահանջած գրականությունը և օրն ի րուն աշխատում այդ նպատակի համար: 1815 թվականի հոկտեմբերին Ալամդարյանի քերականության դասագիրքը արդեն պատրաստ էր: Այդ առթիվ գրած նամակում նա խնդրում է իր հովանավորին՝ շնորհել տպագրության հանձնելու գործը: «Խնդրեմ երես անկեալ գթալ ի բազմօրեայ տքնութիւնս իմ ի յօր[ին]ումն քերականութեան իմոյ համառօտի, որ է առ տիրացու Յովսէփ բազմարդին սարկաւազն, որպէսզի մի՛ մնացէ ընդ գրուանուս, որ օգտելոց է կարծեմ մերազնեայ համբակաց»: (Թղթ. № 105, գործ № 11, վավ. № 1):

Համաձայն կանխավ արած խոստման, Հովակիմ Լազարյանը հայտնում է իր համաձայնությունը՝ Քերականությունը առաջիկայում տպագրության հանձնելու մասին: Ալամդարյանը խորապես հրճվում է իր անդրանիկ «երկա-

<sup>1</sup> «Իսկ գրութիւնք պէս-պէս հեղինակաց» ասելով Ալամդարյանը ի նկատի ունի ուսու գրողների և բանաստեղծների երկերը, որոնցից նա քերականության զանազան օրենքները բացատրելու նպատակով քաղվածքներ է արել դասագրքի համար: Բացի վերոհիշյալ գրքերից Ալամդարյանը խնդրում է նաև «...պատմութիւնքն Չամչեան՝ երկու հատոր, մնացորդքն աշխարհագրութեան, վարք Մխիթարայ Աբրային և մի հատոր ևս Յրелище мира, որ է՝ տեսարան աշխարհի, օրովք մխիթարելոց էք զիս ի սիրտ և յօզի» — գրում է նա: (Թղթ. № 105, գործ № 11, վավ. № 1):

սիրութիւնը» հրապարակի վրա տեսնելու գիտակցութիւնից: «Թուղթ տեսնող, որ ի 15-էն նոյնմբեր, ստացեալ ըստ ժամանակին,— գրում է նա անմիջապէս,— ցնծացայ անճառապէս վասն խոստանալոյ Ձեր, անպատճառ ի տիպարձանացուցանել զիմս սակաւանիթ երկասիրութիւն, տրիտուր որոյ տկարանամ նուիրել զայլ ինչ, բաց յերախտագէտն սրտէս...»: (Թղթ. № 105, գործ № 11, վավ. № 2):

Սակայն, ինչպէս երևում է հետագա գրագրութիւններէ, Հովակիմ Լազարյանը չի կատարում իր խոստումը: Ալամդարյանը վիճում է նրա հետ, առարկում՝ զանազան բառերի իր բացատրութիւնների շուրջ նրա հայտնած կարծիքների դեմ: Մենք անհրաժեշտ ենք համարում այդ առթիվ Հովակիմ Լազարյանին ուղղված պատասխան նամակներից մեկը այստեղ ներկայացնել ամբողջութեամբ. այն մի շափազանց ուշագրավ փաստաթուղթ է, որը պարզաբանում է Ալամդարյանի գործնական քերականութեան դասագիրք գրելու շարժառիթները, պատմութիւնը և բնդհանրապէս Ալամդարյանին բնորոշող շատ հարցեր:

«Յաղագս նախախայծ երախայրեաց իմոց, համառօտ քերականութեանս ասեմ,— գրում է նա 1816 թ. հունվարի 13-ի թվակիր այդ նամակում,— զոր խօստացեալ էիր նախապէս ի լոյս ածել. ա՛րդ ըստ տարաբախտութեանս գրէք թէ վասն բազում սխալանացն իւրոց չէ դեռ մտեալ ի տիպ. բարի է, սխալին մերձ է մարդկութեանս, բայց յապացոյց բանից ձերոց չիշէք զերկուս բառս, մինն զАЛЧНОСТЬ, զոր դուք ազահութիւն թարգմանէք: Ազահութիւնն жадность լսի ուտերէն և алчность թէպէտ բառ առ բառ նշանակէ զանյագութիւն, որ ի բազում պատճառի, բայց որովհետև բղխի ի բայիցս алчы և алкаю վասն այսորիկ և ես, որովհետև անյագութիւնն անհարմար էր՝ քաղց եղի: Ծշմարտութիւն բանիս երևի ի բառգրքէն Ռուսաց Ակադէմիային, տպագրեցելոյ ի 1789 թուականին, հատոր 1, երես 25: Բայց алчность նշանակէ մերթ ևս զազահութիւն, բայց երկրորդ որպէս, կամ լաւ է ևս ասել այլաբանօրէն, որում վկայէն բազմութիւնք լեզուօղէտ մատենագրաց ուսաց, թէպէտ և չիշատակեալ բառարանն ոչ ինչ խօսի զայսմանէ: Երկրորդն ասէք թէ՛ փոխան եղբօր եղեալ եմ Յրեր և թարգմանեալ եմ զայն брат: Բառն եղբայր չէր յինէն անծանօթ, բայց որովհետև զբանի մի բառ ժողովեալ այրբենական կարգաւ կամեցայ դասաւորել իւրաքանչիւր լեզուացն ևս միանգամայն, վասնայսորիկ ի պակասիլ մերումս բառի ֆ տառիւ, եղի ֆէիւ ֆրեր, զոր առեալ եմք ի գաղղիացոց, որ բղխի ի լատին բառէս Frater (ֆրատէր) և այն ո՛չ ըստ քմաց իմոց, զի ոմանք ի գեղահրաշ բանաստեղծից մերոց վարժեալ են բառի ֆրեր, որպէս Ազաթանգեղոսն, Լամբրոնացին: Եթէ կամիք ստուգել զասացեալս տեսէք ի հասարակ բառգիրքն մեր զայս բառ ի տառն ֆ. յերես 1251. ուրեմն ոչինչ տգիտութիւն նշմարի չինէն աստանօր, զի այսպիսիք բազմիցս հանդիպին ի գրուածս հեղինակաց. բայց վեհազնեայ իշխան թէև բաց յայսմանէ այլ սխալանք ևս գուցէն, խնդրեմ ըստ ձերումդ ենթադատութեան սրբագրեալ վաղվաղակի ի լոյս ընծայել, զի բազմաժամանակեայ երկասիրութիւնն իմ վասն երկուց սխալանց եթէ ի տպագրութենէ զրկեսցի, կարծեմ թէ, չիցէ վայելչական: Մի՛թէ ամենայն գրուածք, ամենայն բանաստեղծք հեղինակաց ազատք են ի վրիպակաց: Ահա նայեցարուք ընդ նախկին շարագրութիւն Աբբայացոց, լիք են բազմազգիմի սխալանօք, բայց օր աւուր յառաջացեալ հասեալ կան այժմիկ ի ծայր կատարելութեան, և մանաւանդ

զի տեսարակն իմ ո՛չ է բնագննութիւն կամ մետաֆիզիգայ, որ թեթե վրիպակաց դմիտ ուսանողին խարբալեսցէ, այլ տեսու առ ի կրթութիւն մանկանց (ընդգծումներն մերն են — Շ. Ն.) և ևս վասն երկուց սխալանց զհարիւր ուղիղան անպատկան է ընդ գրուանաւ գաղել...» (Թղթ. № 105, գործ № 11, վավ. № 4)<sup>1</sup>:

Սակայն Ալամդարյանի ուսու-հայերեն քերականութեան դասագիրքը շհրատարակվեց, գուցե ոչ միայն մի շարք բառերի «սխալ» թարգմանութեան պատճառով...

Ալամդարյանի Հովակիմ կազարյանին գրած վերջին նամակում հայտնած տեղեկութիւններէց հետո (23/1—1816 թ.), մենք այլևս այդ դասագրքի մասին ոչ մի փաստի չենք հանդիպում: Մեզ լրիվ չեն հասել Ալամդարյանի 1817-1823 թթ. գրած նամակները, իսկ ձեռագիր և տպագիր մնացած աղբյուրները և Ալամդարյանի կենսագիրները լուում են այդ մասին:

Մեր պրպտումները, դասագրքի այդ նախագաղափար օրինակը գտնելու հույսով, ապարդշուն անցան. սակայն բարեբախտութիւն է, որ պահպանվում են հետագա (ինչպես նշվեց վերևում, հեղինակի կողմից կատարված) ընդօրինակութիւնները: Դրանցից մեկը՝ 1949 թվականին հայտնաբերված հատվածը պահպանվում էր Մատենադարանի արխիվի Մսերյանների ֆոնդում, իսկ մյուսները՝ այլ և այլ: Զեռագրերի մի այլ կրկնվող թերի հատված էլ այժմ պահպանվում է Մատենադարանի արխիվի «Զանազան հեղինակների» ֆոնդում<sup>2</sup>: Թե ինչպե՞ս և ինչ ճանապարհով է մասնատվել Ալամդարյանի ձեռագիր աշխատութիւնը և մուտք գործել տարբեր արխիվներ, որոշակի դժվար է ասել. սակայն կան փաստեր, որոնք մասամբ պատճառարանում են այդ երեվույթը:

Մսեր Մսերյանը Ներսիսյան դպրոցի (Ալամդարյանի տեսչութեան շրջանի) աշակերտներից է: 1834 թ. մայիսին նա եղել է Նոր Նախիջևանում և Ս. Խաչում՝ Ալամդարյանի տանը: Իր սիրելի ուսուցչի ողբերգական մահվան բռթը նա նամակով հայտնում է Դորպատում գտնվող Խ. Արովյանին և Ստ. Նսդարյանին (այդ օրերին է հավանաբար որ նա գրում իր տաղը՝ Ալամդարյանի մահվան առթիվ): Անշուշտ հենց այստեղ էլ Մ. Մսերյանի ձեռքն է ընկնում իր ուսուցչի վերոհիշյալ աշխատութեան ձեռագիրը և հետագայում ինչ-ինչ պատճառներով մասնատվում: Այս միտքը հաստատում է մի շատ ուշագրավ այլ փաստ: Մսերյանների արխիվից հայտնաբերված Ալամդարյանի քերականութեան հատվածի շապիկի վրա (որը ավելացված է հետագայում) սև մատիտով գրված է «Грамматические заметки,

соч. Аламдаряна.

М. Мсерианц».

Այս մակագրութեան ներքևի մասում կապույտ մատիտով ավելացված է.

«Օրէնք ուս քերականութեան.

Ալամդարեանց»:

<sup>1</sup> Նամակի շարունակութիւնը տես 190-րդ էջի տողատակում:

<sup>2</sup> Թղթ. № 48, վավ. № 47:

<sup>3</sup> Մ. Մսերյանի ստորագրութեան դիմաց, թերևս այլ ձեռքով գրված է՝ «Уточнить автогра», իսկ վերևում նշված կապույտ մատիտով, դրա վրա որոշակի գրված է «автограф»: Մեզ հայտնի չէ կապույտ մատիտով արված հիշատակագրութիւնների հեղինակը:

Հաջորդ էջի լուսանցքում, նույն ձևորով գրված է՝

Грамматические заметки и правила,  
М. Мсерианц.

Նույն էջի վերևում՝ «Յօդուած» խորագրի կողքին գրված է «Аламдариан», աթուհետև սկսվում է տեքստը:

Մի այլ հարց, որտեղ և ե՞րբ է կատարել Ալամդարյանը իր աշխատության այդ ընդօրինակությունները (դրանց թուղթը արտագրված է 1831—1832 թվականներին): 1832 թվականին Ալամդարյանը եղել է Քիշնևում և ապա նոր նախիջևանում՝ մինչև իր կյանքի վերջը (1834 թ. մայիս): Հասկանալի է, որ Ալամդարյանն իր այդ աշխատանքը կատարած պիտի լինի ձեռագրի թղթի արտագրությունից հետո, այսինքն՝ 1831—34 թվականների ընթացքում: Իսկ դասագրքի միևնույն հատվածից մի քանիսը ընդօրինակելով, նա անշուշտ նպատակ է ունեցել իր մոտ ուսերեն սովորող աշակերտներին ապահովելու քերականության մի ուղեցույց ձեռնարկով: Ժամանակակիցներից մեկը վկայում է, որ Ս. Խաչ վանքում (ուր Ալամդարյանը, ինչպես նշվեց վերևում, մտադրություն է ունեցել հայկական մի խոշոր դպրոց հիմնադրել), Ալամդարյանի մոտ ուսերեն քերականություն էին սովորում ոչ միայն հոգևորականները, այլև աշակերտներ, որոնք գալիս էին նոր նախիջևանից: «Ես առանձին ուսում չեմ ստացել,— հիշում է այդ անձնավորությունը,— դպրոց-ուսումնարան չեմ գնացել, բայց իմ այժմվա ունեցած քահանայական գիտությունս նորանից եմ ձեռք բերել. նա բացի հայոց լեզվից, լավ գիտեր և ուսաց լեզուն, քաղաքից աշակերտներ էին գալիս նորանից քերականություն սովորելու...»<sup>1</sup>:

Ալամդարյանի Ռուս-հայերեն քերականության այդ ձեռագիրը, որ այժմ պահպանվում է Մատենադարանի ձեռագրատանը (№ 3754), բաղկացած է 89 մեծադիր (35×22) թերթից, իսկ արխիվում պահպանվող հատվածը նույն չափսի՝ 21 թերթից: Թղթի մի մասը դեղնավուն է, մի մասը սպիտակավուն: Բոլոր հատվածները գրված են միևնույն բաց շագանակագույն թանաքով: Մեծադիր այդ թերթերի արանքում պահպանվել են երկու պատասիկ, որոնք ըստ երևույթին կտրված են նույն մեծադիր թերթերից. դրանց ժամանակը որոշելու տվյալներ չկան: Ձեռագրի համառոտ բովանդակությունը հետևյալն է.

1. Խրատ տետրակիս, թերթ 1ա (վերոհիշյալ պատասիկներից առաջինն է, Ալամդարյանի դասագրքի առաջաբանի մի հատվածը՝ սևագիր վիճակով):

2. Յաղագս հոլովից ուսաց, թերթ 2ա—6ա:

Յօդուած երկրորդ, թերթ 6ա—8բ:

Յօդուած երրորդ, թերթ 8ա—15ա:

Յօդուած [չորրորդ]—Հոլովառու նախադրութիւնք, թերթ 15բ—20բ:

Յօդուած [հինգերորդ], թերթ 20ա—22բ:

Զարտուղութիւնք, թերթ 22բ—24ա:

<sup>1</sup> «Լուսմայ», 1901 թ., էջ 146:

3. Յօդուած — Հոլովառու նախադրութիւնք. թերթ 27ա—33բ<sup>1</sup>;  
 Հաւելուած. թերթ 32բ—36ա:  
 Յօդուած — Արտուղութիւնք. թերթ 36ա—38ա:  
 Ռամկարանութիւնք ուսաց. թերթ 38ա—բ:
4. Մի հատված նախորդ՝ «Հոլովառու նախադրութիւնք» բաժնից. թերթ 42բ—43ա:  
 Յօդուած — Արտուղութիւնք. թերթ 40բ—42ա:  
 Ռամկարանութիւնք ուսաց. թերթ 42բ—43ա:
5. Գործնական վարժից թարգմանութեան  
 Մասն առաջին  
 Յօդուած առաջին — Յաղագս հոլովից ուսաց. թերթ 45ա—47բ:  
 Յօդուած երկրորդ — թերթ 47բ—49ա:  
 Յօդուած երրորդ — Յաղագս ժամանակական բայի. թերթ 49ա—51ա:  
 Յօդուած չորրորդ — Յաղագս ընդունելութեանց և այլ ինչ-ինչ գիտելիաց. թերթ 51ա—53բ:  
 Յօդուած հինգերորդ — Յաղագս հոլովառու բուն նախադրութեանց. թերթ 53բ—57բ:  
 Յօդուած վեցերորդ — Յաւելուած. թերթ 58բ—59բ:  
 Յօդուած յօթներորդ — Զարտուղութիւնք. թերթ 59բ—60բ:  
 Յօդուած ութերորդ — Օրինակք բառական թարգմանութեանց. թերթ 61ա—բ:

6. Գործնական մարզից թարգմանութեան

Մասն երկրորդ

- Յօդուած առաջին  
 Ուղղական հոլով  
 Սեռական [հոլով]  
 Տրական [հոլով]  
 Հայցական [հոլով]  
 Գործիական [հոլով]  
 Նախորական [հոլով] — թերթ 62ա—բ:  
 Հարցականք — թերթ 62բ:  
 Վտութիւն օժանդակ բայի — թերթ 63բ:  
 Յօդուած երկրորդ — Արտավէպք. թերթ 63ա—64ա:  
 Յօդուած երրորդ<sup>2</sup> — Առակք. թերթ 64ա—65ա:  
 Յօդուած չորրորդ — Հատուածք ի բնապատմութենէ:  
 Лев. Слон. Тигр. Носорог. Крокодил. Медведь. Верблюдо-  
 Осел. Лисица. Собака. Кошка. Мышь. թերթ 65ա—66ա:  
 Յօդուած հինգերորդ — Զանազան տեսակք թռչնոց:

<sup>1</sup> Տե՛ս 29Ա «Տեղեկագիր», 1949 թ., № 3:

<sup>2</sup> Զեռագրում երրորդը սխալմամբ կրկնված է, որով և խախտվել է հաջորդականութունը:

Павлин. Индейский петух. Домашний петух. Сова. Журавль. Лебедь. Коршун. Голубь. Удод. Ласточка. Жаворонок. Соловей. Թերթ 66ա—67ա:

РЫБЫ.

Составные части растений.

Финик. Чайное дерево.

Янтарь. Ртуть. Золото. Серебро. Թերթ 68ա:

Յօդուած վեցերորդ

Հուսաւորք երկնից, կրօն և բարոյականութիւն:

Солнце. Луна. Թերթ 68ա:

О влиянии светил небесных на человека.

Диететика. О влиянии веры на здоровье человека.

Թերթ 68բ:

Мнение Сенеки о краткости жизни.

Вот человек Платонов. Թերթ 69ա:

Յօդուած յօթերորդ

Достоинство человека. Թերթ 69ա—բ:

О любви к отечеству. Թերթ 69բ—70ա:

Что нужно автору. Թերթ 70ա—բ:

Меладор к Филалету. Թերթ 71ա:

Мудрость человеческая. Թերթ 71ա—բ:

Церковь в Армении. Թերթ 71բ:

## 7. Краткий словарь.

Համառօտ բառարան. Թերթ 73ա—89ա:

8. «Չանազան հեղինակների» արխիվում պահպանվող հատվածը խառը դասավորութիւն ունի: Թերթերի մի մասը կարված է գլխիվայր: Այստեղ կրկնվում են ձեռագրի բովանդակութիւնը կազմող հետևյալ մասերը՝

Քերականական վարժութիւններ — Թերթ 1ա—2ա, 6բ—8բ, 9ա—10ա, 22ա—բ:

Ռուս-հայերեն բառարան. Թերթ 2բ—4բ:

Օրինաչք բառական թարգմանութեան — Թերթ 5ա—6ա:

Отрывки из Естественной истории — Թերթ 10բ—16ա:

Басни. Թերթ 16բ—17բ:

Анекдоты. Թերթ 17բ—18բ:

Нравоучительные мысли. Թերթ 19ա—21բ:

Ահա այն ամենը, ինչ հասել է մեզ Ալամդարյանի Ռուս-հայերեն քերականութիւնից:

Կրկնվող մասերը մի կողմ թողնելով, որոնցից ամեն մեկը մյուսի համեմատութիւն տարբերութիւն կամ մի պակասութիւն ունի, իրենց կանոնափոք դասավորութիւնով, տրամաբանական հաջորդականութիւնով առանձնանում են միայն հետևյալ երեք բաժինները.— 1. Գործնական վարժից թարգմանութեան, 2. Գործնական մարզից թարգմանութեան, 3. Համառօտ բառարան (ռուսերեն-հայերեն): Այս երեքը միասին ներկայացնում են այն ամբողջութիւնը, որը մեր կարծիքով կարող է ունեցած լինի Ալամդարյանի 1814—

1816 թթ. Մոսկվայում գրած քերականական աշխատությունը: Նկատելի է միայն մի պակասություն: «Գործնական վարժից թարգմանութեան» մի ենթաբաժինը («Предлоги, управляющие падежами—Հոլովառու նախադրութիւնք»), որ հասել է մեզ երեք լրիվ ընդօրինակություններով, այստեղ շունի նախապուշկինյան շրջանի ուսւ բանաստեղծների, առակագիրների ստեղծագործություններից այն բազմաթիւ քաղվածքները, որոնք ունեն առաջին և երկրորդ օրինակները:

Թե ինչպե՞ս է կոչվել Ալամդարյանի վերոհիշյալ աշխատությունը — ստույգ չգիտենք: Զեռագրի տիտղոսաթերթը մեզ չի հասել: Սակայն Ալամդարյանի Հովակիմ Լազարյանին գրած նամակներից, ձեռագրի առաջաբանի մեզ հասած սեւագիր պատառիկից, և մանավանդ աշխատության բովանդակությունից, միանգամայն հասկանալի է, թե ինչ նպատակներ է հետապնդել Ալամդարյանը և թե ինչպիսի դասագիրք է նա ցանկացել պատրաստել հայկական դպրոցների համար:

«Պաշտոնեայս տեառնդ:

Աւարտեցի գեբականութիւնն ուսաց և ընկալնում գեարտասանական գուտումն և փոքր առ փոքր կազմեմ զշարագրութիւնս այնր լեզուի», — գրում է Ալամդարյանը 1815 թվականին:

«Յաղագս նախախայծ երեխարեաց իմոց, համառօտ Բերականութեանս ասեմ, — գրում է նա 1816 թվականին: — ... Մանաւանդ զի տետրակ իմ ոչ է բնազննութիւն կամ մետաֆիզիզա, — պատճառարանում է նա, նույն նամակում, — որ թեթև վրիպակաց զմիտ ուսանողին խարբալեսցէ, այլ տետր առ ի կրթութիւն մանկանց...»:

«Խրատ տետրակիս շնն աւանդեալք առ ի ծանրաբեռնիլ սոքօք զմիտս ողորմելի համբակաց, — կարդում ենք Ալամդարյանի առաջաբանից մեզ հասած թերթիկում, — բարբարոսաբար հրամայելով նոցա առնուլ զայս ամենայն ի բերան. այլ առ ի դիտել նոցա զթարգմանութեան շաւիղ և տալ ի ձեռս նոցա գեւազ իմն առ անխարխափ զնալոյ զբարգմանութեան նանապարհ: Պարզ մեկնութիւն կանոնաց հիմնելոց ի վերայ անգրելի օրինակաց՝ զարթուցէ զմիտս նոցա չընդունելութիւն նորանոր տպաւորութեանց և ինքնին տարրացի միտս նոցա, ուր ընդհակառակն բռնութիւն դասատուութեան և շարաշար կիրառութիւն մի իշխանութեան իւրոց ի վերոյ ընդունակութիւն համբակին, հեղամղծուկ առնէ զնորին սրութիւն և հաստատութիւն մտաց, տայ նոցա միայն զփեծիկ պտղոյն ամենեկին անձարակ և զուրկ ի համեղ միջուկէն թողեալ: Զայս ի բազմամեայ փորձոյ, զիտէ արտադրիչ տետրակիս»<sup>1</sup>:

<sup>1</sup> «Զայս ի բազմամեայ փորձոյ զիտէ արտադրիչ տետրակիս» միտքը տարակուսանք է արթնացնում: Արդյոք այս պատառիկը հեղինակի սույն աշխատության սկզբնական ձեռագրի առաջաբանից է, թե գրված է հետագայում՝ ձեռագրի ընդօրինակության տարիներին: Իր Քերականության տպագրության հարցի առթիւ գրած վերջին նամակում Ալամդարյանը խոսում է նաև առաջաբանի մասին. «... և ես յաղագս այսորիկ ի յառաջաբանութեանն նորա յաճախ կրկնեմ, թէ՛ ամենայն ինչ ի սկզբանն բազում թերութեամբ ելիալ է ձեռաց հեղինակին իւրոյ՝ անցմամբ ժամանակաց կատարելագործին. և թէպէտ այնպիսի երկար և ընդարձակ նախերգան անվայել էր փոքրութեան գործոյս, սակայն, — (շարունակում է Ալամդարյանը թախանձել իր բարբարոսին, որ՝ պեղի չհետաձգի տպագրության գործը), վասնայսորիկ արարի, զի նովաւ, որպէս թէ կազմի հրատարակեսցի ընդ ամենայն երկիր ազգաօգուտ և անզուգական մեծագործութիւնն ձեռք, զորոյ զնմանին դեռևս ո՛չ է տեսնալ մերս ազգոյ Ուրեմն հայցեմ վերստին, զի մի՞ զայս իմ ազգութեանս անտես, ըստ որում յոգո՞ւնք ի մերայնոց սպասին նմա և լաւ գնով կամին զայն գնել:

ինչպես տեսնում ենք, Ալամդարյանի նպատակն է եղել հայկական դրպրոցների աշակերտների համար պատրաստել ուսաց լեզվի մի նոր տեսակի դասագիրք:

Այդ դասագիրքը հարուստ և բազմաբովանդակ իր նյութով, նրա դասավորության սկզբունքով կարող է ծառայել և՛ որպես ուս-հայերեն գործնական քերականության դասագիրք, և՛ որպես ուս-հայերեն թարգմանության և ընթերցանության ձեռնարկ, և՛ որպես ուսերեն-հայերեն համատար բառարան: Գրանով հեղինակը հետապնդում է մի հիմնական նպատակ — որպեսզի հայ աշակերտը ընտելանա ուսերեն լեզվին այն աստիճան, որ կարողանա ինքնուրույն կարդալ, հասկանալ, թարգմանություններ անել և այդ ճանապարհով ստանալ նորանոր, բազմակողմանի, ընդհանուր գիտելիքներ:

Դասագրքի առաջին մասը, որ կոչվում է «Գործնական վարժից թարգմանութեան»՝ ուս-հայերեն գործնական քերականության մի նմուշ է, և որպես այդպիսին՝ առաջինը հայ դպրոցի պատմության մեջ:

Մինչև Խաչատուր Աբովյանի «Ռուս տեսական և գործնական քերականություն» աշխատությունը, հայ դպրոցը չունեւ նման մի դասագիրք: Աբովյանն էր, որ զգաց այդ բանի անհրաժեշտությունը և 1840 թվականին պատրաստեց վերոհիշյալ ձեռնարկը: Իր այդ աշխատության առաջաբանում Աբովյանը ցավով ընդգծում է ուս-հայերեն գործնական քերականություն չունենալու բացը. «Ծիշտ է,— գրում է նա,— երբեմն հրատարակվել են գրքեր, որոնք որոշ չափով նման են եղել այս ձեռնարկին, ինչպես սարկավազ Աբրահամ Վաղարշապատցու քերականությունը՝ տպագրված Աստրախանում<sup>1</sup>, հայր Մինաս Բժշկյանի քերականությունը՝ տպագրված՝ Վենետիկում<sup>2</sup>, սակայն գրանք չեն կատարել իրենց դերը: Առաջինը լինելով միայն ուսերեն քերականության թարգմանությունը հայերեն լեզվով, բովանդակում է կանոնների զուտ բնորոշումը, առանց պրակտիկ օրինակների, իսկ երկրորդը հին է, ընդ որում հեղինակը գրելով ուսերեն բառեր հայերեն տառերով, նրանց աղավաղել է իտալերեն լեզվի արտահայտչական ձևերով»<sup>3</sup>:

Երբ Աբովյանի այս դիտողությունների լույսի տակ ենք նայում Ալամդարյանի նորահայտ այս աշխատությանը, ապա ավելի քան ցայտուն է դառնում վերջինիս առավելությունը:

Ալամդարյանը դասագրքի այս բաժնում ծանրանում է քերականության այն տարրերի վրա, որոնց ուսուցումից է կախված լեզվի հիմունքների խորը յուրացումը: Այս բաժինը ընդգրկում է ուսերեն լեզվի հոլովումն ու խոնարհումը՝ «Յաղագս հօլովից ուսաց», «Յաղագս ժամանակաց բայի», «Յաղագս ընդունելութեանց» և «Յաղագս հոլովառու բուն նախագրութեանց»: Ալամդարյանը մանրամասն բացատրում է բայերի, դերբայների եղանակներն ու ժամանակները, գոյականների, ածականների, թվականների, դերանունների հոլովումները, այդ բոլորի կիրառումը խոսքի մեջ, նրանց ներգործությունը

Յե՛ր Վաստրախանոյ և Յե՛ր Ղալարայ, զի տեսեալ են զաջն և վերահասու են որպիսութեան նորայն (Թղթ. № 105, գործ, № 11, վավ. № 4, 1816 թ.): Բայց Ալամդարյանը զուցե հենց այդ ժամանակ, երբ ընդամենը 20 տարեկան էր, մանկավարժական գործի հմուտ գիտակ լինելով, իրեն համարում էր «բազմամեայ փորձոյ» ուսուցիչ, այդ ևս հնարավոր է:

<sup>1</sup> Աստրախան, 1827 թ.:

<sup>2</sup> Վենետիկ, 1840 թ.:

<sup>3</sup> «Նախաշավիղ», Երևան, 1940 թ., էջ 26 (տե՛ս ծանոթագրություններ բաժնում):



խոսքի իմաստի վրա, նրանց տարբերություններն ու նմանությունները ուսու-  
բեն և հայերեն լեզուներում:

Ռուսերեն լեզվի հոլովման, խոնարհման, նախդիրների գործածության  
ձևերն ու եղանակները աշակերտներին մատչելի դարձնելու նպատակով հե-  
ղինակը, առաջաբանում հայտնած իր իսկ միտումի համաձայն, խուսափելով  
չոր, ձևական սահմանումներից, քերականական երևույթները բացատրում է  
բազմաթիվ օրինակներով, գործնական վարժություններով:

Եթե Ալամդարյանից 10 տարի հետո Աբրահամ Վաղարշապատցին իր  
ուսու-հայերեն քերականության մեջ, մի թերթի վրա միայն, թվարկում է ուս-  
ուբեն նախդիրները՝ հայերեն թարգմանությամբ, ապա Ալամդարյանը ուս-  
հայերեն նախդիրներին նվիրում է մի ամբողջ բաժին և մանրամասնորեն բա-  
ցատրում է նախդիրների ֆունկցիաները, նրանց կիրառման բոլոր ձևերը,  
նրանց նմանություններն ու տարբերությունները:

Ալամդարյանը ցույց է տալիս, թե յուրաքանչյուր նախդիրի գործածու-  
թյան դեպքում ինչպիսի՞ փոփոխություն է առաջանում խոսքի իմաստի մեջ  
և պատկերավոր օրինակների միջոցով հասկանալի դարձնում այն:

Ռուսերեն լեզվի քերականության հիմնական տարրերը յուրացնելու հա-  
մար, աշակերտին անհրաժեշտ գիտելիքներ տալուց հետո, Ալամդարյանը անց-  
նում է թարգմանության հիմունքների ուսուցման գործին:

«Զարտուղութիւնք» ենթարաժնում Ալամդարյանը նշում է, որ քաջ թարգ-  
մանիչը պիտի ձգտի հարազատ մնալ բնագրի ոգուն, ճիշտ արտահայտել նրա  
իմաստը, բայց և շկաշկանդվել նրա շրջանակների մեջ, անհրաժեշտության  
դեպքում նոր բառեր ավելացնել, կամ բնագրից բառեր դուրս թողնել, հե-  
տապնդելով այն բանին, որ խոսքը լինի ձկուն, կոկ և պարզ: «Քաջ թարգմանն  
է, զի բազում բառս ձուլէ ի մի, է՛ զի բարդ բառ բնագրին բաժանէ և բա-  
ցատրէ երկու և երեք բառիւք, է՛ զի արտաքսէ զբառս ինչ բնագրին և է՛ զի յա-  
ւելու զբանի մի բառս. յայսմ ամենայնի ուշ եղեալ զպարզութիւն և ազատու-  
թիւն զգեցուցանել բանին»<sup>1</sup>:

Թարգմանության արվեստի առանձնահատկությունները ցույց տալու  
նպատակով Ալամդարյանը բերում է ուսուբենից հայերեն բառացի և ազատ  
թարգմանության օրինակներ և որից հետո կազմում է թարգմանության տեքս-  
տեր՝ երկու լեզուներով և սրանով ավարտում առաջին բաժինը:

Երկրորդ բաժնում («Գործնական մարզից թարգմանութեան») ներկա-  
յացնում է միայն ուսուբեն հոլովների տեսակները բնորոշող համապատաս-  
խան բնագրեր, որին հաջորդում են «Արտավէպք» (նովելներ, անեկդոտներ),  
«Առակք», «Հատուածք ի բնապատմութենէ», «Լուսաւորք երկնից», «Կրօն և  
բարոյականութիւնք» ենթարաժինները: Սրանք նախատեսված են աշակերտ-  
ների ընթերցանության և ինքնուրույն թարգմանությունների համար:

Ալամդարյանը առանձնացրել է նաև բնագրերի մեջ եղած հատուկ դարձ-  
վածքները, որոնք կոչում է «Մեմկաբանութիւնք ոտսաց»: Դասագրքի վերջում  
կցված է ուսու-հայերեն ընդարձակ բառարանը՝ շուրջ 2000 բառերի՝ ուր ուսու-  
բենից հայերենի են թարգմանվել բոլոր այն բառերը, որոնք օգտագործված են  
դասագրքի բնագրերում և անհասկանալի կարող էին լինել աշակերտների  
համար:

<sup>1</sup> Զեռագիր, № 3754, թերթ 59բ:

Մուս-հայերեն քերականության այս ձեռնարկը Ալամդարչանի վերևում նշված մանկավարժական գործնական աշխատանքի տեսական արտահայտությունն է, բանաստեղծ մանկավարժի նոր, առաջադեմ մտահղացումների, աշխարհըմբռնումների գիտական ապացույցը: Այդ դասագիրքը լրիվ պատկերացում է ստեղծում Լադարչան ճեմարանի ոչ միայն լեզուների ուսուցման դրվածքի, այլև աշակերտների բարոյակրթական, գաղափարական դաստիարակության վիճակի մասին: Գրանով Ալամդարչանը առաջինը հայ դպրոցի առաջ լայնորեն բացում է ռուսական կուլտուրայի ու գիտության դռները, ծանոթացնում է ռուսական կյանքի նվաճումների հետ: Քերականական վարժությունների ու բացատրությունների համար Ալամդարչանը օգտագործում է նաև ժամանակի հանրածանոթ ռուս գրողների ստեղծագործությունները (Կռիլով, Կարամզին, Խեմնիցեր, Շախովսկի, Գիմիտրև, Վասիլի, Պուշկին), հատկապես Կռիլովի առակների տեքստերի վրա է նա կատարում իր վարժությունների, համեմատությունների ղգալի մասը («Գայլը և գառը», «Մենավաճառն ու կոշկակարը», «Աշխատասեր արջը» և այլն): Նույն նպատակով Ալամդարչանը օգտագործում է նաև ժամանակին ռուսական միջավայրում լայն տարածում ստացած մի շարք առակներ («Орел и вор[он]а», «Муравей и голубь», «Волк в овечьей коже», «Осел с волком», «Лисица со львицею», «Юнона с павлином», «Юпитер с пастухом», և այլն), նովելներ, որոնց Ալամդարչանը կոչում է «Արտավէպը», («Людовик XIV, показав поэту Буало стихи своего сочинения...», «Тиран Дионисий имел страсть сочинять стихи...», «Испанец, живший в Голландии, пошел однажды зимою через деревню...» «У советника Б... была жена чрезвычайно скупая...», «Госпожа Д..., пригласив к себе обедать господина Е...», «По взятии Парижа победителями...») և այլն:

Մենք դեռ չենք կարողացել պարզել Ալամդարչանի դասագրքում եղած այս նյութերի աղբյուրները: Նրանցից մի քանիսը, որոնք շատ տարածված են եղել ռուսական միջավայրերում, տպագրված են ժամանակակից ամսագրերում: Անկասկած Ալամդարչանը իր ձեռքի տակ ունեցել է «Вестник Европы»-ի 1805 թվականի հավաքածուն, որտեղ տպագրված են վերոհիշյալ նովելներից մի քանիսը:

Իր գրքի «Գործնական մարզից թարգմանութեան» բաժնում զետեղված հոդվածներից երևում է, որ Ալամդարչանը քաջածանոթ է եղել 18-րդ դարի վերջի և 19-րդ դարի սկզբի ո՛չ միայն ռուս բանաստեղծների, գրողների երկերին, այլ նաև հայտնի գիտնականների, փիլիսոփաների, գեղագետների, բնագետների ստեղծագործություններին, և որ որոշակի կրել է նրանց առաջավոր գաղափարների ազդեցությունը:

Դասագրքի ընթերցանության բաժնի «Что нужно автору», «Достоинство человека», «О любви к отечеству», «Мудрость человеческая» և ուրիշ հոդվածներում դրսևորվում է մարդկության առաջադիմության, կյանքի, պայքարի, նրա երջանկության ու լուսավոր ապագայի վերաբերյալ Ալամդարչանի հայացքները, մտորումներն ու ցանկությունները: Ալամդարչանը հատկապես ոգևորված է եղել Կարամզինի բարոյագիտական, գեղագիտական հայացքնե-

րով: Վերջինիս «Что нужно автору» հոշակավոր տեսական հոդվածից Ալամդարյանը իր դասադրքի համար քաղել է ուշադրավ հետևյալ հատվածը.

«Говорят, что автору нужны таланты и знания: острый, пронзительный разум, живое воображение, и прочее. Справедливо: но сего не довольно. Ему надобно иметь и доброе, нежное сердце, если он хочет быть другом и любимцем души нашей, если он хочет, чтобы дарования его сияли светом немерцающим, если он хочет писать для вечности и собирать благославление народов...

Ты хочешь быть автором, читай историю несчастий рода человеческого и если сердце твое не обольется кровию, оставь перо,— или оно изобразит нам хладную мрачность души твоей...

Слог, фигуры, метафоры, образы, выражения,— все сие трогает и пленяет тогда, когда одушевляется чувством, если не оно разгорячает воображение писателя, то никогда слеза моя не будет его наградою...»<sup>1</sup>.

Սրանք կարևորագույն պահանջներ են, որոնք դրադեցրել են Ալամդարյանի ստեղծագործող միտքը և բխում են ռուսական ժամանակակից գեղագիտության առաջադեմ սկզբունքներից և եթե Ալամդարյանի սեփական մշտրերն էլ չեն, սակայն նրանցով մանուկ սերնդին դաստիարակելու նրա ձգտումը նոր և նշանակալից երևույթ է 19-րդ դարի սկզբների հայ իրականության համար:

«Հատուած ի բնապատմութենէ» ենթարածինը ստեղծելով Ալամդարյանը բարձրացնում է հայկական դպրոցներում բնագիտական առարկաների դասավանդության պահանջը:

Այստեղ Ալամդարյանը աշակերտների առաջ բաց է անում բնական աշխարհը, ծանոթացնում է նրա երևույթներին, ուժերի ու հարստությունների հետ: Ռուսերեն մատչելի լեզվով նա նախ անդրադառնում է կենդանական աշխարհին, առանձին-առանձին ներկայացնում վայրի կենդանիներին ու գազաններին, նշում նրանց անունները, բնակության վայրերը, ծանոթացնում նրանց սովորություններին, բնութագրում զանազան տնային կենդանիների թռչունների, ձկների, թվում է նրանց տեսակները: Եվ ապա հիմնական գծերով ներկայացնում է բույսը՝ նրա բաղկացուցիչ մասերը, այդ մասերի կատարած դերը բույսի աճման համար, գաղափար է տալիս որոշ հանքային նյութերի մասին, խոսում է երկնային մարմինների՝ արևի, լուսնի, աստղերի մասին, բացատրում նրանց օգտակար դերը մարդկային կյանքի համար և այլն:

\* \* \*

Ալամդարյանի մոսկովյան տարիների գործունեության մեջ հստակորեն գծագրվում է ապագա մեծ հայրենասեր գործիչի պատկերը: Նրա ամեն մի նախաձեռնության թևավորող, առաջ մղիչ ուժը հայրենասիրությունն է, խորապես արմատավորված, համայնապարփակ, նպատակային և միաժամանակ

<sup>1</sup> № 3754, թերթ 70 ա-ր: Այս, ինչպես նաև «О любви к отечеству» (թերթ՝ 69 ք-70 ա), և «Мелодор к Филалету» (թերթ 71ա) կարամզինի ստեղծագործություններն են. տե՛ս «Полное собрание сочинений русских авторов. Сочинения Карамзина, том третий, Санктпетербург, 1848.

ակտիվ, ներգործող հայրենասիրությունը: Ըստ Ալամդարյանի, մարդկային հասարակության բոլոր նվաճումները՝ գիտությունը, գրականությունը, արվեստն ու փիլիսոփայությունը, կրոնը, պիտի ծառայեն հայրենիքի շահերին, ապահովեն նրա երջանկությունն ու խաղաղությունը:

«Ամենից առաջավոր փիլիսոփայությունը այն փիլիսոփայությունն է,— կարդում ենք Ալամդարյանի ձեռագիր դասագրքի ընթերցանության բաժնում,— որ մեզ կասի, որ մենք պետք է սիրենք մեր հայրենիքի օգուտը, որ նրա լուսավորությունը մեր կյանքում ամենից ավելի մեծ բավականություն է սպաստառում մեզ, որ նրա անդորրությունը և բարիքը մեզ համար ծառայում են որպես վահան մեր ընտանեկան երջանկության, որ նրա փառքը մեր փառքն է, և եթե մարդու համար վիրավորական է արգահատելի հոր սրդի կոշվելը, ապա ավելի քան վիրավորական է հայրենիքի արգահատելի ուղի անվանվելը: Ուստի սերը դեպի սեփական բարօրությունը ծնում է մեր մեջ, սեր դեպի հայրենիքը, իսկ անձնական ինքնասիրությունը ծնում է ժողովրդական հպարտություն, որը հիմք է ծառայում իսկական հայրենասիրության»:

Ջերմ, անձնվեր հայրենասիրություն, համամարդկային ազնիվ գաղափարներ, բարոյագիտական վեհ զգացումներ. ահա այն ամեն նորը և գրավիչը Ալամդարյանի դասագրքում: Այդպիսի մտքերով է նա կազմում քերականական առանձնահատկությունները դրսևորող նախադասություններն ու վարժությունները, կամ ուսանողներից հայրենի թարգմանության համար աշակերտներին առաջարկվող բնագրերը:

\* \* \*

Այսպես ուրեմն: Մոսկվան, Լազարյան ճեմարանը հանդիսացել են Հարություն Ալամդարյանի առաջադեմ աշխարհըմբռնումների դարբնոցը: 1824 թ. վերջերին 28-ամյա Ալամդարյանը Մոսկվայից Թիֆլիս տեղափոխվեց արդեն որպես լուսավոր գաղափարներով զինված, կազմակերպված, հասուն գործիչ և ստանձնեց ներսիսյան դպրոցի տեսչության դժվարին ու պատասխանատու գործը: Հասունացել էր ուսուցարսական պատերազմի հարցը: Ալամդարյանի համար բացվել էր նաև քաղաքական գործունեության ասպարեզ:

1827 թվականին Ալամդարյանը դառնում է Թիֆլիսի ուղմական օկրուգին կից հայկական գունդ կազմակերպող հատուկ հանձնաժողովի անդամ, որի նախագահն էր զինվորական նահանգապետ գեներալ Սիպյազինը:

1827 թ. մայիսի 15-ին հայկական զնդեր կազմելու մասին կայսեր հրամանն ստանալու առթիվ հրավիրված հանդեսում Ալամդարյանը հանդես է գալիս իր հռչակավոր ճառով. «Անցանէ ահա դարն հինգերորդ, ո՛վ որքը Հայաստանի, յորմէ հետէ զրկեալ կամք ի թագաւորութենէ, ի հայրենեաց և յամենայն ժառանգութեանց նախնեաց մերոց. հեծեմք ընդ ծանր լծով քրիստոսատեաց պարսից, վշտացեալ, թախձեալ ընդ անբով ծառայութեան այսոցիկ բարբարոսաց, զի կողոպտեցին սոքա ի մէնջ ոչ զարտաքին ստացուածս և եթ, այլ յաւար հարին և դրարոյական և զընատուր ձիրս հայկազանցս:

Մեք ստուերք եմք մերոց նախահարց, շեմք ժառանգորդ արութեանց նոցա և առաքինութեանց, այլ ուրուական նոցա: Յառեցէք զակն ձեր ի հայրենի պատմագրութիւն՝ զգծագրեալս արինազանգ տառիւր և հաւատասցիք այս դառնապէս ճշմարտութեան...:

Ո՛վ հայր, ջերմեռանդութիւն ձեր արժանապէս վարձատրեալ է... Գուր

ունիցիք ընդ սեպհական դրոշակօք ձերովք զսեպհական գունդս: Չեզ բաշխի զէն, վասն հաստատելոյ զանդորրութիւն նեղեալ եղբարց ձերոց, վասն պարզեկելոյ զապահովութիւն ընտանեաց ձերոց, վասն գտանելոյ զողորմութիւն Թագաւորի և վասն պաշտպանելոյ հայրենեաց»<sup>1</sup>:

Հայ զինվորները երգվում են Ալամդարյանի ձեռքում պահված հայկական դրոշակի առջև: Այդ երգումը գրել է ինքը՝ Ալամդարյանը:

Իրականանում են Ալամդարյանի քաղաքական իդէերը: Հայ ժողովուրդը ազատագրվում է պարսկական սարկուսթյունից, իր բախտը ընդմիշտ կապելով ուրա ժողովրդի հետ: Այդ առթիվ Ալամդարյանը հայրենասիրական հրահրվալից բացականչություններով շնորհավորական նամակներ է գրում իր մտերիմներին. «Զկնի քաղմադարեան ակնկալութեան վերջապէս արար զմեզ արժանի նախախնամութիւնն երկնից տեսանել և լսել զազատութիւն ամենասիրելի հայրենեաց մերոց՝ յընդ լծոյ տառապանաց, սպառում բոնատրաց... շնորհաւորեմ զփրկութիւն Հայաստան աշխարհի յեկարի հնոցէ անագորոյն պարսից...»<sup>2</sup>: Հայաստանի միացումը Ռուսաստանին Ալամդարյանը գնահատում է որպէս «դարագլուխ ազատութեան և երանութեանց մերոց ապագայից»:

Սակայն Ալամդարյանի սպասելիքներն ավելի շատ էին, քան կարող էր տալ ուսական միապետական կարգը: Յարիզմի հետզհետե ուժեղացող ճնշումները, բռնությունները, ազատասեր ուս ինտելիգենցիայի, դեկաբրիստների նկատմամբ դորժադրած հալածանքները, բանտը, արսորը, կախազանք և մանավանդ Գրիբոեդովի մահը ցնցող ազդեցություն և խորը հիասթափություն առաջացրին Ալամդարյանի մեջ: Նա զգաց, որ իր ժողովրդի համար պակաս ծանր չեն և ցարիզմի շղթաները:

Թիֆլիսում՝ սկսած 1827—1829 թվականներից գնալով ծանրանում է Ալամդարյանի վիճակը: Հայ մտավորականության հետադեմ ուժերը ոստիկանության ուշադրությունն են հրավիրում նրա վրա: «...և զօր ամենայն համբաւին զարսոր իմ երբեմն ի Բայաղխտ, երբեմն ի Կարս, երբեմն յայլ տեղի: Միով բանիւ ամենայն նետք թշնամութեանց հօգորագոյն նեղկաց մերոց դարցուցեալ են առ իս. սիրտ իմ լեալ է նպատակ ամենայն նետաձգութեանց նոցա», — գրում է նա<sup>3</sup>:

Եվ Ալամդարյանին Պասկեվիչի կարգադրությամբ արսորում են Հաղբատ, որից հետո Ներսեսը նրան տանում է Քիշնև: Ալամդարյանը խեղդվում է այս մթնոլորտում, նա կրկին հիշում է Մոսկվան, իր երազների օրրանը և վճռում դիմել իր քարերարներին՝ Լազարյաններին, որ միջնորդեն Ներսեսի առաջ իրեն Մոսկվա տեղափոխելու: Բայց ժամանակները փոխվել էին, քաղաքական անվստահություն կրող Ալամդարյանի նկատմամբ Լազարյանները ևս կասկածամիտ են դառնում: Նրանք պատճառարանում են, որ Ներսեսը անսահման վրշտացած է Ալամդարյանից, և որ իրենք չեն համարձակվում դիմել նրան: «... չէ պարտ Չեզ ամենեին յուսահատիլ և դանդառ զհանդամանաց ձերոց բերել, զի գիտութիւնք և պէս-պէս արժանաւոր որպիսութիւնք Չեր, ամենուրեք գտցեն տեղի և պատիւ և բաւականութիւն, եթէ իցեն ուղղեալ առ բարին և արժանագովեստ նպատակ...»<sup>4</sup>:

<sup>1</sup> Ա. Երիցյան, Կովկասի հայր, 1-ին մաս, 1894 թ., Թիֆլիս, էջ 272—273, 275—276.

<sup>2</sup> Կաթ. դիվան, թղթ. 55, վավ. 208.

<sup>3</sup> Նույն տեղում, թղթ. 63, վավ. 321բ.

<sup>4</sup> Նույն տեղում, թղթ. 74, վավ. 372ա, 1832 թ.

Այդ նույն տարիներին հակասություններ էին սկսվել նաև ներսեսի և Ալամդարյանի միջև. այդ ոչ միայն ներքին, անձնական հաշիվներով կամ ներսեսյան դպրոցի հետ կապված առիթներով, այլ նաև նրանց քաղաքական հայացքների միջև առաջացող տարաձայնությունների պատճառով, որոնք անշուշտ, կարոտ են հանգամանալից լուսարանության:

\* \* \*

\*

Հարություն Ալամդարյանի կյանքն ու գործը ըստ ամենայնի դեռևս չի ուսումնասիրված, իսկ առանց Ալամդարյանի գործունեության ամբողջական, խորազնին ուսումնասիրության անհնար է անհրաժեշտ պայծառությամբ ուրվագծել նախաարուվյանական շրջանի հայ լուսավորական շարժման պատմությունը:

Կարճատև, ծանր ու հալածական, բայց բազմարդյուն և խորիմաստ է եղել Հ. Ալամդարյանի կյանքը: Մարդկային ազնիվ հույզերի քնքուշ բանաստեղծը, թատերագիրն ու թարգմանիչը, մանկավարժն ու գիտնականը, իր ժողովրդի քաղաքական ազատության պրոպագանդիստը, անձնվեր մաքառումների գնով բացեց ուսահայության առաջադիմության նոր ճանապարհը: Այդ ճանապարհով իր հաստատուն քաջախիտը արեց մեծ լուսավորիչ նաշատուր Աբովյանը:

### Ш. НАЗАРЯН

## МОСКОВСКИЕ ГОДЫ ДЕЯТЕЛЬНОСТИ АРУТЮНА АЛАМДАРЯНА

### Резюме

Арутюн Аламдарян — видный поэт, педагог, ученый и общественный деятель — принадлежит к числу армянских просветителей первой половины XIX века. Вся его литературная и общественная деятельность была посвящена делу освобождения армянского народа от турецко-персидского ига.

Жизнь и литературная деятельность Аламдаряна недостаточно освещены в нашей литературе.

Данная статья посвящена Московскому периоду его деятельности, который до сих пор не был изучен.

В конце 1813 года, по окончании школы Агабабян в городе Астрахани, Арутюн Аламдарян был приглашен в Москву, чтобы возглавить подготовительные работы к открытию Лазаревского института. С тех пор до 1824 г. Аламдарян жил в Москве.

Эти годы сыграли решающую роль в оформлении передовых взглядов Аламдаряна.

В Москве Аламдарян посвятил себя, с одной стороны, педагогической деятельности в Лазаревском институте, с другой стороны, занялся самообразованием, углубляя свои знания. Одновременно Аламдарян занимался в Москве литературной деятельностью. Здесь он пишет ряд

лирических стихотворений, делает переводы, издает краткий «Русско-армянский словарь». В 1814—1816 гг., для нужд армянского юношества, им была составлена русско-армянская грамматика, рукопись которой была обнаружена лишь в последние годы.

Московские годы жизни Аламдаряна сыграли решающую роль в его дальнейшей просветительской деятельности.

Հ Ա Ղ Ո Ր Գ Ո Ի Մ Ն Ե Ր





Ս. ՔՈՒԱՆԶՅԱՆ

ՆՈՐԱՀԱՅՏ ՊԱՏԱՌԻԿՆԵՐ ԿՅՈՒՐԵՂ ԵՐՈՒՍԱՂԵՄԱՑՈՒ  
Թ. ԴԱՐԻ ՄԻ ԳՐԶԱԳՐԻՑ

Մատենադարանի ձեռագիր պատառիկների հարուստ հավաքածուն գիտական մշակման ենթարկելու մեր աշխատանքների ընթացքում, ինչպես նաև ձեռագրերի կողերին կարված պահպանակները ուսումնասիրելու ժամանակ, հիշյալ երկու հավաքածուների իրարից շատ հեռու գտնվող համարների տակ մեզ հաջողվեց գտնել Կյուրեղ Երուսաղեմացու «Կոչումն ընծայութեան» երկի Թ. դարում գրված ձեռագրի բեկորներ: Պատառիկներից առաջինը, որը գտնվում էր երկու առանձին համարների տակ, բերվել էր Անիից, ակադ. Մառի հիմնած թանգարանից:

Երկրորդ պատառիկը, որը բաղկացած է շորս թերթից, անցյալում կարված է եղել 1916 թվականին Վարագից բերված մի ձեռագրի կողերին որպես պահպանակ, իսկ երրորդ պատառիկը երկար ժամանակ պահվել է էջմիածնի Մատենադարանում:

Միայն վերջերս մեզ հաջողվեց հայտնաբերել Մոսկվայից ստացված մի ձեռագրի կողերին որպես պահպանակ օգտագործված մագաղաթյա շորս թերթեր ևս Կյուրեղի հիշյալ հնագույն ձեռագրից: Սույն բեկորներն ունեցող ձեռագիրը գրվել է Մոկաց երկրում 1452 թ. և ապա տարվել է Փարիզ, որից հետո Թիֆլիս, Կոկանդ (Միջին Ասիա) և Մոսկվա:

Մատենադարանի ձեռագրերի պահպանակները ուսումնասիրելու ընթացքում օրերս բախտ ունեցանք գտնելու նաև Կյուրեղի նույն ձեռագրից շորս այլ բեկորներ: Այդ պատառիկներն ունեցող ձեռագիրը գրվել է հավանաբար Վասպուրականում 1304 թ. և էջմիածնի Մատենադարանն է բերվել 1916 թ. Աղթամարից:

Վերահիշյալ նորահայտ պատառիկներն ու պահպանակները նույն գրչությանն ունեն և ժամանակին մի ձեռագրի մաս են կազմել այն երկու թերթ պահպանակների հետ, որոնք 1946 թվականին ուսումնասիրության առարկա էին դարձել Գ. Հովսեփյանի կողմից: Հիշյալ երկու թերթ պահպանակները կտրված են Այրի ձորում 1311 թ. գրված մի ձեռագրի կողերին, որը երկար ժամանակ պահվել է Կեսարիայի Պենտուա գյուղում, որտեղից էլ տեղափոխվել է Բեյրութ ու այնտեղից էլ, վերջին տարիներս, հասել է Երևան ու այժմ պահվում է մեր Մատենադարանում:

Նորահայտ սույն պատառիկների արժեքը շատ մեծ է մասնավորապես հայ հնագրության պատմության համար: Այդ հատակտոսները մի կողմից հանդիսանում են աշխարհի ամենահին հայերեն թվակիր ձեռագրից՝ 887 թ. գր-

ված Լազարյան Ավետարանից հավանաբար ավելի հին մի գրչագրի բեկորներ, իսկ մյուս կողմից՝ մեսրոպյան ուղղագիծ երկաթագրով գրված ձեռագրերից մեզ հայտնի ամենահին նմուշը:

\* \* \*

Կյուրեղ Երուսաղեմացու (315—386 թթ.) «Կոչումն ընծայութեան», երկը, ինչպես նաև նրա մյուս գործերը շատ վաղ ժամանակներում տարածված են եղել ինչպես ուրիշ երկրներում, այնպես էլ Հայաստանում: Կյուրեղի գործերը սկզբից ևեթ ուղագրության առարկա են դարձել հայ մատենագիրների կողմից:

Ն դարի հայ նշանավոր պատմիչներից մեկը՝ Ղազար Փարպեցին, այդ մասին վկայում է հետևյալը. «Բայց իմ ըստ կարի պարապեալ յունական ուսմանցն, և ըստ զօրելոյ տկարամտութեանս իմոյ կարդացեալ զգիրս արանց սրբոց...», որից հետո Փարպեցին հիշատակում է իր կարդացած հեղինակների անունները, «զԱթանասէ Աղեքսանդրացոյ և զերկուց միանուն արանցն՝ զԿիրղէ Աղեքսանդրացոյ զԿիրղէ Երուսաղեմացոյ, և զԲարսղէ Կեսարացոյ, և զԳրիգորէ Նազազացոյ...»<sup>1</sup>:

Փարպեցին նշելով Կյուրեղի անունը, պետք է կարծել, որ առաջին հերթին նկատի է ունեցել նրա հիմնական՝ «Կոչումն ընծայութեան» ծավալուն աշխատությունը:

Հայ մատենագիրներից շատերը Քաղկեդոնական գործիչների դեմ ուղղված իրենց երկերում և թղթերում բազմիցս օգտագործել են եկեղեցական այլ հեղինակների հետ միասին նաև Կյուրեղ Երուսաղեմացու ասույթները: Այսպես օրինակ, Հովհաննես Բ. Կաթողիկոս Գարեղյանը (2. դար) «Ի յայտնութիւն Քրիստոսի» թղթում գրում է. «...և շատաց (իմա՝ Կյուրեղ Երուսաղեմացին) զծրնունդն յառաջ քան զյայտնութիւն, այլ զմի և զնոյն»<sup>2</sup>:

Այս մասին գրել է նաև խոշորագույն հայ գիտնական Անանիա Շիրակացին (է. դար) իր Հայտնության ճառում. «... Եւ զայս ոչ ոք երբեք ի լաւ իմացողացն յանձն առնու, զի թէ այդպէս ռմիմք, հի՛մ զկանոն ծննդեանս ի վեց յունուարի կարգեաց նոյն ինքն Կիրեղ...»<sup>3</sup>: Նույն հարցի կապակցութեամբ Կյուրեղը վկայակոչվում է նաև ՓԱ. դարում գրված «Տեառն Գէորգեայ հայոց վերադիտողի և հոգեշնորհ փիլիսոփայի, պատասխանի թղթոյն Յովհաննիսի ասորաց պատրիարքի» նամակում, որտեղ Գեորգը, իր խոսքը ուղղելով քաղկեդոնականության դեմ, գրում է. «Արդ ամաշեսցէ Արտեմոն, յամաթ լիցի և ժողովն Քաղկեդոնի, զի ոչ կարեն ցուցանել առանձնական տան մկրտութեանն Քրիստոսի, ոչ ի Յակովբայ եղբարէ Տեառն և ոչ ի Կիրղէ (իմա՝ Երուսաղեմացոյ)...»<sup>4</sup>:

Կյուրեղ Երուսաղեմացու «Կոչումն ընծայութեան» աշխատությունը երկար դարեր չի կորցրել իր տեղը հայ հոգևոր գրականության մեջ: Մատենագարանում պահվող Կյուրեղ Երուսաղեմացու «Կոչումն ընծայութեան» գործի

<sup>1</sup> Ղազարայ Փարպեցոյ Պատմութիւն Հայոց և թուղթ առ Վահան Մամիկոնեան, աշխատութեամբ Գ. Տէր Մկրտչեան և Ստ. Մալխասեան, Տփղիս, 1904 թ., էջ 192:

<sup>2</sup> «Գիրք թղթոց», Թիֆլիս, 1901 թ., էջ 88:

<sup>3</sup> Ա. Գ. Արքա հ ա մ յ ա ն, Անանիա Շիրակացու մատենագրությունը, Երևան, 1944 թ., էջ 285:

<sup>4</sup> «Գիրք թղթոց», էջ 355:

ձեռագրերից մեկում, արտագրված Աղթամարում 1307 թվականին Դանիել գրչի կողմից, գտնվում է երկաբնականների դեմ հակահառող Միքայել վարդապետ Երեվանցու 1723 թվականին գրած դրվատական մի բանաստեղծությունը, նվիրված Կյուրեղի սույն աշխատությունը<sup>1</sup>:

Կյուրեղի վերահիշյալ գործի ինչպես Մատենադարանում, այնպես էլ արտասահմանում պահվող ձեռագրերը՝ բոլորն էլ բաղկացած են 18 ճառերից<sup>2</sup>, Ուստի և այն թերի է հասել մեզ կամ էլ ոչ լրիվ թարգմանվել հունարենից: Հունարեն բնագիրը բաղկացած է 23 ճառից, բացի այդ սկզբից ունի «Նախակոչումն ընծայութեան» խորագրով ներածական մի ճառ ևս<sup>3</sup>: Որ Կյուրեղի 18 ճառերից բաղկացած սույն թարգմանությունը իր ծավալով մի տեսակ կանոնական բնույթ է ունեցել հայոց մոտ, դա երևում է նաև հաճախ այդ աշխատության ձեռագրերի սկզբում գրված հետևյալ խորագրից. «Այս ամենայն, որ ի ներքս ի գլուխ հանեալ զուրուտասն կոչմունսն ընծայութեան Կիրղի եպիսկոպոսի Երուսաղեմացոյ քարոզեալ առ այնոսիկ, որ ի մկրտութիւն մատչէին յԵրուսաղէմ»<sup>4</sup>: Մի այլ ձեռագրում. «Պատճառք երախայից ընթերցուածոց» խորագրին հաջորդող նախադրության մեջ գրված է. «... Իսկ սուրբն Կիրեղ, զԺԸ (18) ընթերցուածսն զայս առ նոսա կարգեաց...»<sup>5</sup>:

Հայերեն թարգմանությունը, ինչպես նկատում է Տաշյանը, շատ է շեղվում հունարենից<sup>6</sup>, այդ երևում է նաև Կյուրեղի հրատարակությունից<sup>7</sup>, որտեղ համեմատվել է հաճախ հայերեն թարգմանությունը հունարենի հետ և յուրաքանչյուր գլխի վերջում նշվել եղած տարբերությունները: Բանասեր Եղիշե Դուրյանը բոլորովին այլ կարծիքի է. նա գտնում է, որ Կյուրեղի «Կոչումն ընծայութեան» երկը թարգմանվել է ասորերենից<sup>8</sup>, այնպես, ինչպես Եվսեբիոս Կեսարացու եկեղեցական պատմությունն էլ թարգմանվել է ասորերենի միջոցով: Եթե այդ այդպես է, այն ժամանակ հունարենի հետ համեմատած Կյուրեղի հայերեն թարգմանության շեղումները պատճառաբանված կարելի է համարել:

Կյուրեղի հունարենից թարգմանված լինելու հին տեսության օգտին է խոսում օտար հայագետներից Ս. Լյունեն եզրակացնելով, որ «Ոսկեբերան իր Մատթէի մեկնութեամբ և Կիրեղ իր Կոչումն ընծայութեան գրքով կը գերազանցեն միւսները իբր վկայ հայ առաջին թարգմանութեան»<sup>9</sup>:

<sup>1</sup> Պետ. Մատենադարանի ձեռագիր, № 4881, էջ 274ր:

<sup>2</sup> Մատենադարանում և այլուր կան նաև սակավաթիվ ձեռագրեր, որոնք արտագրված լինելով թերի մի նախագաղափարից, շունեն ժն ճառը ու հաջորդի սկիզբը: Այդպիսի մի թերի ձեռագրից է կատարված նաև Կյուրեղի առաջին տպագրությունը 1727 թ. Կոստանդնուպոլսում:

<sup>3</sup> Գ. Ջ ա ր ա չ ա ն ա լ յ ա ն, Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց (գար Դ—ԺԳ), Վենետիկ, 1889 թ., էջ 524: Վերջին հինգ ճառերը վերնագրված են. «Catecheses Mystagogicae» տե՛ս P. S. Somał. Quadro delle opere di vari autori aoticamente tradotte in armeno, Venezia, 1825, P. 16: 2. 2. վ. Տ ա շ յ ա ն, Ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանի Մխիթարեանց ի Վիեննա, Վիեննա, 1895 թ., էջ 694:

<sup>4</sup> Պետ. Մատենադարանի ձեռագիր, № 3770 (ժամանակ 1304 թ.), էջ 3ա:

<sup>5</sup> Պետ. Մատենադարանի ձեռագիր, № 5071 (ժամանակ ԺԷ գար), էջ 1ր:

<sup>6</sup> 2. 2. վ. Տ ա շ յ ա ն, Ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, 1895 թ., Վիեննա, 694:

<sup>7</sup> Երանելուցն Կիրղի Երուսաղեմայ հայրապետի Կոչումն ընծայութեան, ի Վիեննա, 1832:

<sup>8</sup> Ե Ղ ի շ Ե Դ ու ր յ ա ն, Պատմութիւն հայ մատենագրութեան, Երուսաղեմ, 1932, էջ 24:

<sup>9</sup> Հմմտ. «Թարգմանեպ», Վենետիկ, 1952, № 1—2, էջ 42—46: Գրախոսական 2. Ք. Չրաք-

Այս բուրրով հանդերձ թարգմանության հարցը չի կարելի լուծված համարել: Այս կապակցությամբ մենք ուզում ենք դիտել մի հանգամանք, որը խոսում է ասորական բնագրից թարգմանված լինելու օգտին. թ. դարի գրչության պատկանող Կյուրեղի մեր ուսումնասիրելի նորահայտ բեկորներից մեկում, ի տարբերություն տպագրում եղած «Սաւուղի», «Շաւուղ»<sup>1</sup> անվանաձևի առկայությունն է, որը այդ անվան ասորական ձևն է: Հավանական է, որ ձեռագրի այլ մասերում ևս նման ասորական անվանաձևեր են եղել, բայց այդ մասին վճռական խոսք չենք կարող ասել, քանի որ մեր ուսումնասիրելի Կյուրեղի բեկորները ամբողջական կորած ձեռագրի միայն շնչին մասն են ներկայացնում: Կյուրեղի վիեննական հրատարակության ուսումնասիրությունը ևս մեզ համար մի շարք կարևոր փաստեր է ավելացնում հիշյալ երկի ասորերենից թարգմանված լինելու օգտին: Տպագրի տարբեր էջերում ավետարանական Սիմեոն անունը, որը այնտեղ պատկանում է երեք տարբեր անձնավորությունների, ամենուրեք հիշվում է ասորական Շմավոն ձևով. այսպես, փոխանակ Սիմեոն ծերունու կամ արդարի երկու տեղ գրված է «Շմաւովն» և «Շմաւոն արդար»<sup>2</sup>, Սիմեոն Կյուրենացու տեղ՝ «Շմաւոն Կյւրենացի»<sup>3</sup> և կամ Սիմեոն որդի Հովնանու տեղ՝ «Շմաւովն որդի Յովնանու»<sup>4</sup>: Եղիսե անունը ևս Կյուրեղի տպագրում ութ տեղ գործ է ածված ասորական «եղիշայ» կամ «եղիշէ» ձևով<sup>5</sup>:

\* \* \*

Կյուրեղ Երուսաղեմացու «Կոչումն ընծայութեան» երկից Մատենադարանում պահվում են 17 ձեռագրեր, որոնցից եթե մի մասը թերի է սկզբից և կամ մեջտեղից, ապա մի ստվար մասը լրիվ կերպով բովանդակում է Կյուրեղի հայերեն թարգմանության սովորական 18 ճառերը<sup>6</sup>:

յանի S. Lyonnet-ի «Les origines de la Version Arménienne et le Diatessaron», Roma. Pontificio Istituto Biblico, 1950, գրքի մասին:

<sup>1</sup> Պետ. Մատենադարանի ձեռագիր-պատասիկ № 367, էջ 4ա, սյունակ Բ, տող 7:

<sup>2</sup> Երանելույն Կիւրղի Երուսաղեմայ Հայրապետի Կոչումն ընծայութեան ի Վեննա, ի տպարանի Միթարեանց, 1832, էջ 175, 371:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 269:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 182:

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 286—287, 359, 411 ևն:

<sup>6</sup> Երևանի Պետ. Մատենադարանում մեզ ծանոթ են Կյուրեղի «Կոչումն ընծայութեան» երկի հետևյալ ձեռագրերը.

ա) № 664—(ժամանակ՝ 1723 թ., տեղ՝ էջմիածին). լրիվ է. էջ 4ա—89բ, ունի Ա—ԺԸ ճառերը:

բ) № 665 (ժամանակ՝ 1710 թ., գրիչ՝ Դաւիթ վրդ., տեղ՝ Երուսաղեմ), 10ա—145ա:

դ) № 666 (ժամանակ՝ 1708—1709, տեղ՝ Բջնի), 5ա—246ա, Ա—ԺԸ:

դ) № 779 (ժամանակ՝ 1643 թ., գրիչ՝ Հովհաննես, տեղ՝ Շոռոթ), 3ա—204ա, Ա—ԺԸ:

ե) № 780 (ժամանակ՝ ԺԴ—ԺԵ դդ., գրիչ՝ Ստեփաննոս և Սմբատ, տեղ՝ Սկևռա), 1ա—350բ, Ա—ԺԸ, սկզբից մի քիչ թերի:

զ) № 975 (ժամանակ՝ 1195, գրիչ՝ Մարկոս, տեղ՝ Սաղմոսավանք), 1ա—282բ, Ա—ԺԸ:

է) № 976 (ժամանակ՝ 1316, գրիչ՝ Դանիել եպսկ., տեղ՝ Աղթամար) 1ա—193բ, Ա—ԺԸ:

ը) № 1718 (ժամանակ՝ 1625 թ., գրիչ՝ Մաղաքիա, տեղ՝ Երուսաղեմ) 73ա—193ա, Ա—ԺԸ, սկզբից մասամբ թերի:

թ) № 3770 (ժամանակ՝ 1304 թ., գրիչ՝ Մկրտիչ, տեղ՝ Կարփի) 1ա—309ա:

Կյուրեղի մեր Մատենադարանում պահվող հնագույն ամբողջական գրչագիրը № 975 ձեռագիրն է՝ արտագրված 1195 թ. Մարկոս գրչի կողմից:

Կյուրեղի հիշյալ երկի այլ ձեռագիր օրինակներ գտնվում են նաև արտասահմանյան մի շարք մատենադարաններում: Գրանցից է Վիեննայի Մխիթարյանների մատենադարանում պահվող № 273 ձեռագիրը, որի հիման վրա էլ կատարվել է 1828 թ. Վիեննայի հրատարակությունը: Գրչագիրը արտագրված է 1277 թ. Եփրեմ գրչի կողմից, հավանաբար Կիլիկիայում<sup>1</sup>: Կյուրեղի մի այլ գրչագիր գտնվում է Երուսաղեմի հայոց մատենադարանում 266 համարի տակ: Ձեռագիրը ընդօրինակված է 1720 թ. Եվզովկիայում Մարտիրոս արեղա Թոխաթեցու կողմից և բովանդակում է հիշյալ գործի Ա.—ԺԾ ճառերը<sup>2</sup>: Արտասահմանում անշուշտ կան նաև Կյուրեղի այլ ձեռագրեր, սակայն ձեռագրերի ցուցակները լրիվ հրատարակված չլինելու պատճառով այլ տեղեկություններ մեզ պակասում են:

Անցյալում գոյություն ունեցող մատենադարանների վերապրող ձեռագրաց ցուցակներից ևս տեղեկություն ունենք Կյուրեղի ձեռագրերի մասին, սակայն այդ գրչագրերի ճակատագիրը մեզ անծանոթ է մնում: Այդ կարգի մի վկայություն 17-րդ դարի վերջում գրանցել է Վարդան վարդապետ Բաղիշեցին Բաղիշի Ամրատու վանքի իր կազմած գրքերի ցուցակում, որտեղ հիշվում է, թե Կյուրեղի սույն աշխատության մի ձեռագիր է պահված եղել հիշյալ վանքի մատենադարանում<sup>3</sup>:

Մինչև առաջին համաշխարհային պատերազմը Անկյուրիայի Կարմիր վանքի մատենադարանում ևս գտնվում էր Կյուրեղի սույն աշխատության սկզբից թերի մի ձեռագիր, գրված 1713 թ.<sup>4</sup>:

Ինչպես մեր Մատենադարանում, այնպես էլ մեզ ծանոթ արտասահմանյան ձեռագրատներում, որքան որ հայտնի է, Կյուրեղի սույն երկից երկաթագրով գրված ոչ մի ամբողջական գրչագիր չի պահպանվել: Սակայն մենք դանազան կողմնակի աղբյուրների միջոցով հիշատակություն ունենք այն մասին, որ անցյալում մի շարք մատենադարաններում գոյություն են ունեցել

ժ) № 4391 (ժամանակ՝ 1358 թ.-ից հետո, գրիչ՝ Հակոբ սարկավազ, նախապես պահվել է Շուշիում), ունի Գ—ԺԸ ճառերը:

ժա) № 4881 (ժամանակ՝ 1307 թ., գրիչ՝ Դանիել կրոնավոր, տեղ՝ Աղթամար), 1ա—271բ, թերի է, ունի Գ—ԺԸ ճառերը:

ժբ) № 4957 (ժամանակ՝ 1386 թ., գրիչ՝ Հովհաննես ք., տեղ՝ Շուշան գյուղ՝ Վարդի հանդեպ), թերի է սկզբից և վերջից:

ժգ) № 5071 (ժամանակ՝ ԺԷ դար, գրիչ՝ Գրիգոր ք., ստացող՝ Վարդան Բաղիշեցի), 1ա—227բ, Ա—ԺԸ:

ժդ) № 5572 (ժամանակ՝ ԺԸ դար), 146—273ա, թերի է:

ժե) № 7321 (ժամանակ՝ 1726 թ., գրիչ՝ Մանուել արեղա, տեղ՝ Պահլիսարայ), 1ա—119ա, ճառամբ թերի է:

ժզ) № 7908 (ժամանակ ԺԸ դար), թերի է սկզբից և վերջից:

ժէ) № 581 (ժամանակ՝ 1371<sup>5</sup>), թ. 314բ—332բ, ունի միայն Կյուրեղի ԺԹ ճառը:

<sup>1</sup> Հ. Տ ա շ յ ա ն, Ցուցակ հայերեն ձեռագրաց, էջ 692—694:

<sup>2</sup> Ն ո Ր ա յ ր և պ. Պ ո Ղ ա Ր յ ա ն, Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց, Երուսաղեմ, երբորդ հասար, 1954 թ., էջ 64:

<sup>3</sup> Ս. Տ և ր-Հ ա կ ո Ր յ ա ն, Վարդանայ վարդապետի Բաղիշեցույ Ցուցակ գրոց Ամրգույն վանուց «Արարատ», Վաղարշապատ, 1903 թ., էջ 183:

<sup>4</sup> Բ ա Ր կ ե ն աթոռակից կաթողիկոս, Ցուցակ ձեռագրաց Անկիւրիոյ Կարմիր վանուց և շրջակայից, Անթիլիաս, 1957 թ., էջ 551—554:

Կյուրեղի նաև երկաթագիր ձեռագրեր, բայց նրանք այժմ անհետ կորել են: Նրանց վկայակոչումը կարևոր է ինչպես Կյուրեղի ձեռագրերի պատմության, այնպես էլ հայ գրչության ընդհանուր պատմության համար: Այս կապակցությամբ նախ և առաջ մեջ ենք բերում այն թանկարժեք հիշատակարանը, որը գտնվում է Պետ. Մատենադարանի № 1718 ձեռագրի վերջում: Ձեռագիրը բովանդակում է Կյուրեղի «Կոչումն ընծայութեան» գործը գրված 1625 թ. Երուսաղեմում Մաղաքիա գրչի կողմից:

«Շնորհիւ տեառն և ողորմութեամբ նորին գրեցի և կատարեցի զծաղկայհաւար մատեանս սրբոյն Կիրիլի, որ էր գրած ի սուրբ արանց ի հին ժամանակին, և անարգ ընկեցեալ կայր ի մէջ աղբիւսաց եկեղեցոյ. և իմ առեալ թափ տվի ի յաղբէն, և տեսի փտեալ և ցեց կերեալ, և զիրն անյոպայ երկաթագրին անյարմարն մնամ թէ վասն գրին անյընդելութիւնն ընկեցիկն եղեալ է, և ես զայս անփոփեցի ԻՅ. (22) տարի, և ոչ որ հաւաս շկալաւ զսա ընթերցման, և ես զծերութիւնս և զտկարութիւն մարմնոյն ի բաց եզի և վերստին գաղափարեցի՝ յետոյ եկեալ բանասիրացո: Բայց կու խնդրեմ ի սրբութեանց ձերոց ընթերցողացդ և փոխարկողացդ, որ անմեղադիր լինիք անյարմար գրիս, զի նիւթն անյարմար էր, և ժամանակն ձմեռն էր, և ես յուսահատեր էի ի կենացս, որ մէկ մի շեղև ընթերցող այսչափ գրեանուցս, որ հաւարեցի և գրեցի, ոչ միայն այս՝ այլ բազում. և գրել տեղս անպատշաճ, զի Ք. (3) տեղ փոխեցայ վասն գրելոյ, և վերջն ի Քրիստոսի լուսարուխ սուրբ գերեզմանն՝ ի սուրբ Յարութիւնն եղև: Բայց այս գրոցս երկրորդ նորոգումն թվին ՆՂԸ (1049 թ.) եղեր և երրորդ նորոգումն ՊԸ (1359 թ.) եղեր է, և ես վերջի ծրագրողս, նուաստ և յետեալս ի բանասիրաց, Մաղաքիա ծառայ Յիսուսի Քրիստոսի ի յունվար ամ(ս)ոյ սկսայ, որ թիվն էր ՌՂԳ (1625 թ.) և ապրիլ ԻԸ (28) աւարտեցի...»<sup>1</sup>:

Սույն կարևոր հիշատակարանի տվյալներից կարելի է հետևեցնել, որ Մաղաքիա գրիչը իր ձեռքի տակ է ունեցել Կյուրեղի պատկանելի հնությամբ երկաթագիր մի ձեռագիրը, որը երկրորդ անգամ նորոգվել է 1049 թ. և երրորդ անգամ 1359 թ.:

Այս տեսակետից հետաքրքրական է նաև այն փաստը, որ Սաղմոսավանքում գրված և Կյուրեղի աշխատությունը բովանդակող մի այլ ձեռագրի հիշատակարանից մենք վկայություն ունենք այն մասին, որ 12-րդ դարում Կյուրեղի «Կոչումն ընծայութեան» երկը գրիչների կողմից աղավաղված լինելով, ստուգվել և ճշտված նոր բնագիր է կազմվել միջնադարի հայ նշանավոր մտածողներից մեկի՝ Հովհաննես Սարկավագի կողմից<sup>2</sup>:

Խաչիկ Դադյանի կողմից Սաղմոսավանքի այրից հայտնաբերված հիշյալ վանքի մատենադարանի ցուցակից երևում է, որ այդ հարկի տակ պահված են եղել նաև Կյուրեղ Երուսաղեմացու «Կոչումն ընծայութեան» աշխատության երկու երկաթագիր ձեռագրեր և մեկ բորբազիր փոքր ձեռագիր<sup>3</sup>: Շատ հավանական է, որ երկաթագրերից մեկը Հովհաննես Սարկավագի կողմից

<sup>1</sup> Պետ. Մատենադարանի ձեռագիր, № 1718, էջ 195ա:

<sup>2</sup> Նույն տեղում, № 975, էջ 284ա—285բ, № 666, էջ 251: Գ ա Ր Ե գ ի ն Ա Կ ա թ ո ղ ի կ ո ս, «Յիշատակարանք ձեռագրաց», հատոր Ա, Անթիլիաս, 1951 թ., էջ 595:

<sup>3</sup> Խ ա չ ի կ ծ. վ., Նորագիտ մազադաթեայ նօտրագիր ցուցակ Սաղմոսավանքից Մատենադարանի, «Շողակաթ», Վաղարշապատ, 1913 թ., էջ 167:

ճշտված վերոհիշյալ ձեռագիրն է եղել, որը նախագաղափար էր ծառայել Պետ. Մատենադարանի № 975 ձեռագրին, գրված Սաղմոսավանքում 1195 թ.: Սակայն Սաղմոսավանքի հնագույն այդ ձեռագրերը ևս մեզ չեն հասել:

Կյուրեղի մեր ուսումնասիրելի թ գարի գրչության պատկանող երկաթագիր պատառիկներից բացի Մատենադարանում կան նաև «Կոչումն ընծայութեան» երկը բովանդակող խառն մեսրոպյան երկաթագրով գրված մեկ պատառիկ (№ 368) և երեք տարբեր ձեռագրերի պահպանակներ գրված մեսրոպյան ուղղագրի՝ երկաթագրով (№ № 219, 1183, 1289): Նրանցից առաջինը պատկանում է թ—ժ դդ. գրչության, իսկ մնացյալը ժ—ժԱ դդ. գրչության: Վերջին երկուսը մի ձեռագրից են ընկել: Նրանք բովանդակում են հատվածներ Կյուրեղի Ե—Ը ձառերից:

\* \* \*

Կյուրեղ Երուսաղեմացու «Կոչումն ընծայութեան» կորած ձեռագրի բեկորներից երևում է, որ ձեռագիրը գրվել է Անձևացյաց իշխան Գուրգեն Արծրունու և նրա որդի Ատոմ Արծրունու պատվերով: Ինչպես ցույց են տալիս փաստերը, հայր և որդի Արծրունիները հանդիսացել են իրենց ժամանակի ամենագրասեր անձնավորություններից:

Հայ մատենագրության մեջ Գուրգեն Արծրունու գրասիրության մեզ ծանոթ ամենահին թվակիր վկայությունը 873 թվականին նրա հրամանով Արղըլմըսեհի վկայարանության ասորերենից հայերենի թարգմանությունն ու նույն սրբի տոնակատարության հաստատումն է: Գ. Հովսեփյանը հիշյալ հաբեթին նվիրած իր ուսումնասիրության մեջ զետեղել է Արղլմսեհի վարքի թարգմանության մեկ լրիվ և մեկ կրճատ հիշատակարաններ<sup>1</sup>: Առաջինում հիշվում են Գուրգեն Արծրունին, վերջինիս կինը՝ Հեղինեն, և զավակները՝ Տաճատն ու Ատոմը: Երկրորդ համառոտ հիշատակարանում հիշվում են միայն Գուրգեն Արծրունին և նրա որդի Ատոմը: Մենք հանդիպեցինք նաև էլ ավելի կրճատ մի հիշատակարանի, որտեղ հիշվում է միայն Գուրգեն Արծրունին, դարձյալ 873 թ., սակայն այստեղ պակասում են արդեն նրա բոլոր մերձավորների անունները և Արղլմսեհի տոնը նշելու հրահանգը: Ահա այդ հիշատակագրությունը, որից ձեռագիր օրինակներ են գտնվում ինչպես Երևանի, այնպես էլ Վենետիկի ու Վիեննայի մատենադարաններում:

«Թարգմանեցաւ վկայութիւն ծառայիս Քրիստոսի յասորւոց ի հայ գիրս հրամանաւ Գուրգենայ Արծրունայ, ի թլուակամութեանս հայոց ԳՃ և ԻԲ (873)»<sup>2</sup>:

Գ. Հովսեփյանը վերոհիշյալ հիշատակագրություններում գտնվող 873 թվականն էլ մեկնակետ է ընդունել Կյուրեղի ձեռագրի գրման համար, իսկ նրա ավարտման սահմանը համարել է 892 թվականը, երբ մահացել է Գուրգեն Արծրունին և «որից հետո — ինչպես գրում է ինքը — հաստատապես կա-

<sup>1</sup> Գ ա ռ և գ ի ն կ ա թ ո ղ ի կ ո ս, Իններորդ գարի ձեռագրական մի հատակոտոր և Ատոմ Անձևացյաց իշխան, էջմիածին, 1946, 8—10, էջ 42:

<sup>2</sup> Պետ. Մատենադարանի ձեռագիր, № 4774, էջ 461բ—468ա. տես նաև Հ. Բ. Վ. Ս ա ռ գ ը ս յ ա ն, Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, Բ, 1924, էջ 381 և Հ. Վ. Տ ա շ յ ա ն, Ցուցակ հայերեն ձեռագրաց..., էջ 576:



րող ենք ասել՝ գրված չէ այս հատակոտորը»։ Միևնույն ժամանակ պետք է ասել սակայն, որ Գ. Հովսեփյանը հիշյալ 873 թվականը ամենավաղ սահմանը չի համարում Կյուրեղի սույն կորած ձեռագրի ծագման համար, հատկապես նկատի ունենալով այն հանգամանքը, որ խնդրո առարկա եղող մեր ուսումնասիրելի պատառիկների հիշատակարանի վերապրող մասում պակասում են Գուրգեն Արծրունու կնոջ Հեղինեի և մեծ որդու Տաճատի անունները, որոնք կային Արղլմսենի վարքի ընդարձակ հիշատակագրությունում։ Գ. Հովսեփյանը կարծում է, որ Գուրգենի ընտանիքի մյուս անդամների անունների բացակայությունը պետք է համարել հետևանք այն բանի, որ Կյուրեղի ձեռագրի արտագրման ժամանակ նրանք արդեն մահացած են եղել։

Այս կապակցությամբ անհրաժեշտ ենք գտնում ասել, որ թեև Արղլմսենի վարքի վերոհիշյալ 873 թվականի հիշատակագրություններից միայն առաջինում հիշվում է Գուրգեն Արծրունու կին՝ Հեղինեն և ավագ որդի Տաճատը, սակայն երկրորդ հիշատակագրության մեջ արդեն հիշյալ երկու անունները այլևս չենք գտնում, և վերջապես երրորդում հիշվում է միայն Գուրգեն Արծրունին։ Փաստ է, որ այստեղ նաև Ատոմի անվան բացակայությունը չենք կարող համարել իբր հետևանք նրա մահվան, քանի որ հիշատակագրությունը վերաբերում է դարձյալ 873 թվականին, իսկ Ատոմը, նույնիսկ իր հոր մահից (892 թ.) հետո, մինչև իսկ ժ գարի սկզբում հանդես էր գալիս որպես Անձնվացյաց տեր։

Անհրաժեշտ է դիտել նաև այն, որ Կյուրեղի պատառիկում գտնվող հիշատակարանի մասունքը չի գտնվում ձեռագրի վերջում, այսինքն ժԸ ճառից հետո, այլ նա դետեղված է ժԲ ճառի ավարտման տեղում։ Հայտնի է, որ մեր բոլոր հնագույն ձեռագրերում գլխավոր հիշատակարանները գրված են զբրչագրի ավարտման մասում։ Նույնպես մենք իրավունք չունենք ասելու, որ Կյուրեղի հիշյալ ձեռագիրը բովանդակել է միայն ժԲ ճառեր և նրա հաջորդող հիշատակարանի մասը հանդիսանում է ձեռագրի վերջին հատվածը, քանի որ Կյուրեղի նորահայտ մեր բեկորներում գտել ենք նաև հատվածներ ժՆ և ժԶ ճառերից, որոնք և լավագույն ապացույց են հանդիսանում այն բանի, որ Կյուրեղի ներկա ձեռագիրն էլ ընդգրկել է հայերեն թարգմանության բոլոր ժԸ ճառերը։ Այստեղից էլ մենք կարծում ենք, որ Կյուրեղի կորած ձեռագրի վերապրող հիշատակարանի մասը ամենայն հավանականությամբ հանդիսանում է լոկ ձեռագրի մանր հիշատակագրություններից մեկը, իսկ զբրչագրի վերջի շպահպանված գլխավոր հիշատակարանում պետք է որ հիշված լինեին նաև Գուրգենի ընտանիքի մյուս անդամների անունները։

Այս բոլորից հետո մենք կարծում ենք, որ որոշակի մի պատճառ չկա Գուրգեն Արծրունու պատվերով գրված Կյուրեղի ձեռագրի ստեղծման ամենավաղ սահմանը 873 թվականը շահամարելու։ Այդ ձեռագիրը ապահովաբար զբրված պետք է լինի նույն 870-ական թվականներին, այսինքն ցարդ մեզ հայտնի հնագույն կաղարյան Ավետարանից առաջ։ Մեր կարծիքով ճիշտ պետք է համարել Գ. Հովսեփյանի այս հարցի կապակցությամբ երկրորդ անդրադարձումը, այս անգամ իր «Յիշատակարանք ձեռագրաց» գրքում, որտեղ Կյուրեղի՝ իրեն հայտնի երկու պահպանակների նկարներն ու հիշատակագրությունը զետեղել է սկզբնագիր հիշատակարանների առաջին տեղում, նախքան ցարդ մեզ հայտնի հնագույն կաղարյան Ավետարանը. «համարելով հա-

վանորեն ավելի հին, քան Լազարյան ճեմարանի հայտնի Ավետարանը 887 թվականի»<sup>1</sup>:

Որպես ժամանակի գրասեր մարդիկ Գուրգեն Արծրունու և նրա որդի Ատոմի անունները գտնում ենք նաև Եղիշեի պատմության Անձևացյաց օրինակում, որտեղ կան հետևյալ տիպի հիշատակագրություններ. «գՊուրգէն յիշեցէք...», «զտէրն Անձևացեաց զմեծն Ատոմ յիշատակի արարէք արժանի» և այլն: Այն հրատարակող Խ. Գալֆայանը, հնասեր ոմն Սըր Զառուայթի մոտ գտած Եղիշեի հիշյալ երկաթագիր հնագույն ձեռագրում Ատոմի մասին եղած հիշատակությունը համեմատում և ընդհանրություն է գտնում Հովհաննես Գրասխանակերտցի պատմիչի մոտ եղած հետևյալ պարբերության հետ, որտեղ Ատոմը դարձյալ որպես «մեծ» է հիշվում. «Պայազատէր զտէրութիւնն զայն մեծն Ատոմ, որդի նորա (Գուրգենայ) ընդ նորա»<sup>2</sup>: Բանասեր Ն. Ակինյանը նկատի ունենալով, որ Եղիշեի Անձևացյաց ձեռագիրը դեռևս գտնված չէ, գրում է. «Գալֆայանի այս նկարագրությունը կասկած կարթնցնէ իմ մեջ, ամբողջ կեղծիք կը թվի»<sup>3</sup>: Մենք կարծում ենք, որ Անձևացյաց օրինակի մասին այս կասկածը զուրկ է որևէ դիտական հիմքից:

Մատենադարանի ձեռագրերում խիստ կարևոր տվյալներ են պահպանվել որոնք ապացուցում են Ատոմ Անձևացու բացառիկ գրասիրությունը: Փաստերը խոսում են այն մասին, որ Ատոմը նաև գործոն մասնակից է եղել մի շարք գիտնական վարդապետների հետ իր ժամանակին հուզող աստվածաբանական — իմաստասիրական վիճելի հարցերի լուծմանը: Գծրախտաբար անձամբ Ատոմի գրած թղթերից ցարդ մեզ ոչինչ չի հասել և նրանց մասին մենք տեղեկություն ենք ստանում միայն Ատոմի մոտ կանգնած մարդկանց կողմից իրեն ուղղված մի քանի թղթերից, որոնք ցարդ, որքան մեզ հայտնի է, անտիպ են մնում:

Առաջին թղթի խորագիրն է հետևյալը. «Թուղթ Արամայ, զոր գրեաց պատասխանի Ատոմայ Անձևացեաց իշխանի, ի սակս պէսպէս հարցմանց նորա»:

Կարենյան ձեռագրաց ցուցակում<sup>4</sup>, Զարպհանալյանի<sup>5</sup> և Հ. Աճառյանի<sup>6</sup> մոտ Արամի թղթի վերնագիրը ամբողջությամբ բերված չէ: Իսկ Գ. Տեր-Մկրտչյանը բերել է թղթի ինչպես վերնագիրը, այնպես էլ սկզբի և վերջի տողերը: Սույն թուղթը հրատարակված չլինելու պատճառով Գ. Հովսեփյանը կարծում էր, թե «Արամի գրության վերջում մի ակնարկություն ունինք ժամանակի որոշման համար»<sup>7</sup>: Այնինչ մենք կարդալով սույն անտիպ նամակը այնտեղ ժամանակի վերաբերյալ ոչինչ չկարողացանք գտնել: Համենայն դեպքս հավանական պետք է համարել Գ. Հովսեփյանի այն կարծիքը, թե Արա-

<sup>1</sup> Գ ա ռ ե գ ի ն կ ա թ ո ղ ., Յիշատակարանը ձեռագրաց, էջ 80:

<sup>2</sup> Եղիշեի պատմություն վարդանանց ըստ Անձևացեաց օրինակի, Թեոդոսիա, 1861 թ., էջ Ա—Է:

<sup>3</sup> Ն. Ա կ ի ն յ ա ն, Եղիշե վարդապետ և իւր պատմութիւնն Հայոց պատերազմին, Քննական ուսումնասիրութիւն, «Հանդէս Ամսօրեայ», Վիեննա, 1931 թ., էջ 164—165:

<sup>4</sup> Մայր ցուցակ ձեռագիր մատենից գրադարանի սրբոյ աթոռոյն էջմիածնի (Կարենեանց), 1863 թ., Թիֆլիզ, ձեռ., № 499:

<sup>5</sup> Գ. Զ ա ռ պ հ ա ն ա լ յ ա ն, Հայկական դպրութեան պատմութիւն, Վենետիկ, 1897 թ., էջ 569:

<sup>6</sup> Հ. Ա ճ ա ռ յ ա ն, Անձնանունների բառարան, Ա, Երևան, 1942, էջ 267:

<sup>7</sup> Գ ա ռ ե գ ի ն կ ա թ ո ղ ի կ ո ս, Իննբորդ գարի..., էջ 45:

մի թուղթը գրված պետք է լինի 892—893 թթ., երբ արդեն Ատոմը հաջորգեց էր իր հորը և նամակում հիշվում է իբրև իշխան «մեծագահ» և «հոգեհանձար խոհականութեան» տեր մի անձնավորություն: Ինչպես նշում է բանասեր Գ. Տեր-Մկրտչյանը վերոհիշյալ Արամը եղել է Գրիգոր Նարեկացու հոր՝ Անձևացյաց եպիսկոպոս Խոսրովի տառցիշը<sup>1</sup>:

Գ. Հովսեփյանը հենվելով Զարպհանալյանի մի վկայության վրա, հիշում է նաև նլ (981) թվականի մի ձեռագրում պահված մի գրություն, որտեղ Մաղազունյաց տերն Արտավազդ՝ Ատոմ Անձևացու հրամանով «բացայայտեաց զսուրբ պատուիրանս», որ նշանակում է ավետարանների մեկնությունը<sup>2</sup>: Հ. Աճառյանը հենվելով նույն աղբյուրի վրա սխալմամբ վերոհիշյալ գրության հեղինակը համարել է Ատոմին, իսկ պատմիրատունը դուրս է եկել Արտավազդի<sup>3</sup>: Մենք պարզեցինք, որ այդ թուղթը գտնվում է Մատենադարանի 971 թ. գրված թղթյա հնագույն ձեռագրում: Նախքան այդ, այնտեղ կան Տաճատի տասը հարցումները, հետևյալ վերնագրով. «Հարցմունք Տաճատա կրանատր քահանայի և վարդապետի»<sup>4</sup>: Ինչպես երևում է հաջորդ գրությունից, Տաճատի հիշյալ հարցերի լուծումը Ատոմը հանձնել է Մաղազունյաց տեր Արտավազդին: Վերջինիս գրության վերնագիրն է. «Լուծումն Արտաւազտա Մաղազունեաց տեառն, զոր բացայայտեաց սուրբ պատուիրանաւ ի հրամանէ տեառն Ատոմայ Անձևացեաց իշխանի» (սկզբի տողերն են. «Հրաման քոյլայտ աստուածասիրութեանդ, ո՞վ բարեփառ տէր, եկն եհաս վասն զհարցմունսն զոր Տաճատայ մակագրեալ եին յիրեանց նամակսն. և են այսորիկ...»)<sup>5</sup>:

Մատենադարանի թղթյա հնագույն ձեռագրում կան նաև մի շարք նամակներ, որոնք վերաբերում են կամ Ատոմին և կամ նրան շրջապատող գիտուն մատենագիրներին: Այստեղ մենք տեսնում ենք, որ Ատոմի մտերիմներից մեկ ուրիշը՝ Թովման, զանազան հարցեր է տալիս մի ոմն Տաճատի, որը անկասկած վերևում մեր հիշած Տաճատն է: Հարցումներին հաջորդում է. «Պատասխանիք նորին Տաճատա քահանայի և վարդապետի»: Ապա Տաճատը ևս իր կարգին վերջում զանազան հարցումներ է ուղղում:

Գ. Հովսեփյանը դարձյալ հենվելով Զարպհանալյանի հիշատակության վրա նշում է. «Կա թուղթ մ'ալ հանուն Թովմայի առ Ատոմ իշխան», անհավանական չէ, որ մեր Ատոմը լինի<sup>6</sup>: Հիշյալ գրությունը մենք դարձյալ գտանք մեր հնագույն թղթյա ձեռագրում. գրության բուն և լրիվ վերնագրից էլ երևում է, որ դարձյալ Ատոմ Անձևացու մասին է խոսքը: Ըստ այդ գրության, Տաճատի պատասխաններն ու հարցերը դարձյալ հասել էին Ատոմ իշխանին և նա էլ հրամայել էր Թովմային, որ գրի մի նոր պատասխան. այդ պատասխանի վերնագիրն է. «Գրեցաւ թուղթս այս առ Ատոմ Անձևացեաց իշխան, զոք կալեալ առաջի Թովմայի սրբազան քահանայի և ուղղափառ վարդապետի, հարկաւորեալ գրէ պատասխանիս»: Վերջում գրված է. «Կատարեցաւ թուղթ

<sup>1</sup> Գ. Տեր-Մկրտչյան, Հայկականը, Թ., «Արարատ», 1894 թ., 4, էջ 128—129:

<sup>2</sup> Գարեգին կաթողիկոս, Իններորդ դարի..., էջ 45:

<sup>3</sup> Հ. Աճառյան, Անձնանունների բառարան, Ա, էջ 255 (8) և 316—316 (32):

<sup>4</sup> Պետ. Մատենադարան, ձեռագիր, № 2679, էջ 311ր:

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 311ր—312ր:

<sup>6</sup> Գարեգին կաթողիկոս, Իններորդ դարի..., էջ 45:

Թովմայի առ տէր Ատոմ Անձեւացեաց իշխան, հարցմանցն Տաճատայ պատասխանիր»<sup>1</sup>:

Հիշյալ Թովմայի մասին լրացուցիչ տեղեկութիւններ շունենք: Հաւանաբար նույն Թովման է, որի մասին հիշատակութիւն ունի Վանական վարդապետը, մեղրերում անելով նրանից<sup>2</sup>: Ն. Գուրջանը Թովմայի անվան մտտ փակագծում հարցական նշանով գրել է Թովմայ Արծրունի<sup>3</sup>: Այլիշանը ևս կասկածել է այս ուղղութեամբ, սակայն վերջում, փաստերի շարժութեան պատճառով, գրել է, որ «... շի կարծիք մեր պատմիչը (իմա՛ թ. Արծրունի)»<sup>4</sup>:

Վերևում հիշատակված թղթերի առկայութեանը մեզ բերում է այն համոզման, որ Ատոմ Անձեւացին ոչ միայն հանդիսացել է իր ժամանակի ամենագրասեր անձնավորութիւններից մեկը, այլև ունեցել է իմաստասեր գիտնականների հատուկ մի շրջանակ, որտեղ հաճախ նրանք իրար հետ մրցման են դուրս եկել, թեր ու դեմ հարցեր տալով և պատասխաններ գրելով: Այս բոլորի մեջ երևում է Ատոմի հովանավորողի և ղեկավարողի դերը: Իրականում այս նամակագրական-բանավիճային մի ձև էր, որը հատուկ էր միջնագարի հոգևոր գրականութեանը:

Մատենադարանի ճառընտիրներում մենք հանդիպում ենք նաև «Երանելատյ տեառն Ատովմա Անձեւացեաց եպիսկոպոսի ասացեալ ներբողեան ի սուրբ Կարապետն Յովհաննէս» ներբողը<sup>5</sup>: Մենք թեև վկայութեան շունենք Ատոմի հոգևորական դառնալու մասին, սակայն հնարավոր էր այդ, մանավանդ եթե նկատի ունենանք, որ նա, ինչպես վերևում տեսանք երկար ժամանակ եղել է հոգևորական գիտնականների շրջապատում և գրադվել է աստվածաբանական իմաստասիրական հարցերով: Գ. Հովսեփյանը այս հարցի մասին գրում է. «Եթե նույն են եպիսկոպոս և իշխան Ատոմ Անձեւացիները, նշանակում է մեր Ատոմը իր կյանքի վերջին տարիները եկեղեցական կոչումն է ընդունել և ապա եպիսկոպոս ձեռնադրվել, հավանորեն նախորդը հանդիսանալով Խոսրով Անձեւացու...»<sup>6</sup>:

Եթե Ատոմը հետագայում իսկապես դարձավ Անձեւացյաց եպիսկոպոս, այդ դեպքում կարելի է ենթադրել նաև այն, որ վերևի թղթերում խնդրո առարկա եղող «Տաճատ քահանայ և վարդապետ»-ը Ատոմի ավագ եղբայր Տաճատն է, որը մի անգամ հիշված է 873 թ. Գուրգեն Արծրունու թարգմանել

<sup>1</sup> Պետ. Մատենադարանի ձեռագիր, № 2679, 314ա—317բ: Մատենադարանի № 6228 ձեռագրում (ԺԹ դար) դարձյալ կան վերոհիշյալ թղթերը և որոնք էլ այլ հատվածների հետ միասին ընդօրինակվել են մեր թղթյա հնագույն ձեռագրից: Վենետիկի № 218 ձեռագիրը ևս բովանդակում է նույն նյութերը և արտագրված է 1835 թ. Ախալցխայում Մխիթարյան միաբանության անդամներ՝ Նիրեմ վ. Սեթյանի և Եսայի վ. Մզրաբյանի կողմից, դարձյալ հիշյալ հնագույն ձեռագրից: Մեր Մատենադարանի վերոհիշյալ № 6228 ձեռագիրը ևս պետք է որ արտագրված լինի հիշյալ երկու գրիչների կողմից, քանի որ երկու ձեռագրերն էլ նույն բովանդակութեանը և թղթյա հնագույն ձեռագրից արտագրողի նույն հիշատակութիւններն ունեն (Հմմտ. Վենետիկ ձեռ. № 218, տես՝ Բ. վ. Սարգսյան Մայր ցուցակ..., Բ, էջ 269—294): Այդ արտագրութիւնները սխալաշատ են:

<sup>2</sup> Ն գ ի շ Ն Գ ու լ ը յ ա ն, Ուսումնասիրութիւնք և քննադատութիւնք, Երուսաղեմ, 1935 թ., էջ 370:

<sup>3</sup> Նույն տեղում:

<sup>4</sup> Ղ. Ա ի շ ա ն, Հայագատում, Ա, էջ 83:

<sup>5</sup> Պետ. Մատենադարանի ձեռագրեր № 993, էջ 69ա, № 1522, էջ 518ա:

<sup>6</sup> Գ ա Ր Ե Գ Ի ն կաթողիկոս, Իններորդ դարի..., էջ 45:

տված Արդյմսեհի վարքի հիշատակագրությունում: Սակայն սույն հարցը ավելի կասկածելի է, եթե գրչության սխալ շլինի Քովմայի պատասխանում գործածված «առ մի ոմն քահանայ Տաճատ անուն և վարդապետ» արտահայտությունը, Տաճատը, եթե իսկապես իշխանի եղբայրը լիներ՝ «մի ոմն» ձևին շենք կարծում, որ արժանանար:

Ուշագրավ է այն, որ Ատոմի հանձնարարությամբ Մազադունյաց տեր Արտավազը իր գրած թղթում, ինչպես նաև Տաճատը իր պատասխանում՝ օգտագործել են Կյուրեղ Երուսաղեմացու «Կոչումն ընծայութեան» երկը: Շատ հավանական է, որ Ատոմ Անձևացին իր հովանավորած գիտական շրջանակի տրամագրության տակ էր գրել ոչ այլ ինչ, եթե ոչ իր սեփականությունը եղող Կյուրեղի գրչագիրը, որի նորահայտ բեկորների ուսումնասիրմանն ենք նվիրել մեր ներկա հոդվածը:

\* \* \*

Այժմ անցնում ենք Կյուրեղ Երուսաղեմացու ամբողջությամբ մեկ շահասած հնագույն ձեռագրի նորահայտ բեկորների ուսումնասիրությանը:

Կյուրեղի «Կոչումն ընծայութեան» գործի 2 ձևին է վերաբերում Մատենադարանի պատասխիկների հավաքածուի № 1229 մեկ թերթանոց բեկորը: Նրա ինքնությունը մինչև մեր կողմից ուսումնասիրվելը անհայտ էր մնացել: Պատասխիկը բաղկացած է մեկ թերթից: Երկու սյուններն էլ պատասխանաված և կտրված են՝ թե կողքերից և թե ներքևից: Անցյալում այն օգտագործվել է որպես պահպանակ. այդ երևում է խեծի հետքերից, որոնք դեռևս կպած են պատասխիկի 1ա էջում: Մագաղաթը միջին հաստություն ունի, նրա մեծությունն է 21×17 սմ: Տողերի քանակն է 21, դրված մեկ սյան լայնությունն ու երկարությունը 22×8 սմ է: Այս և մնացյալ բոլոր պատասխիկները գրված են մեսրոպյան ուղղագիծ ընտիր երկաթադրով: Այս առաջին պատասխիկը համապատասխանում է Կյուրեղի Վիեննայի հրատարակության 95—97 էջերին: Պատասխիկը երկար ժամանակ պահվել է էջմիածնի Մատենադարանում և որպես պահպանակ անջատվել է կազմահան եղած մի ձեռագրի կողքերից (նկար № 1):

Հաջորդ պատասխիկը, որը սույն գրչությունն ունի, պահվում է Մատենադարանի պատասխիկների հավաքածուի 1271 համարի տակ:

Հին ցուցակում, պատասխիկը զետեղված էր երկու տարբեր համարների՝ № 1271 և № 1272-ի տակ, և համարվում էր երեք թերթ: Սակայն իրականում, թերթ համարվածներից մեկը հանդիսանում է առաջին թերթի բաղկացուցիչ մասը եղող երկրորդ սյունակը: Անցյալում սույն պատասխիկների ինքնությունը ևս պարզված չի եղել: Երկու տարբեր համարների տակ գտնվող սույն բեկորները միացնելով պատասխիկը այժմ ունի երկու թերթ, առաջին թերթին միացրինք նրա այլ համարի տակ գտնվող երկրորդ սյունը: Սույն բեկորը պահպանակի վերածող կազմարարը պատասխիկը կտրել է իր կազմած ձեռագրի շափով, որի հետևանքով վերևից ներքև կտրված և հանված է մի ամբողջ երիզ, այդ պատճառով էլ ամբողջ սյան վրա յուրաքանչյուր տողից պակասում է 3—4 տառ: Պատասխիկի երկրորդ թերթի միայն մեկ սյունն է մնացել, իսկ երկրորդը ոչնչացել է: Որպես պահպանակ օգտագործվելիս պատասխիկի առաջին թերթի վրա երեք մանր անցքեր են բացվել: Պատասխիկի թիկունքային



մասում հրևում են երեք խոշոր անցքեր, որոնք Կյուրեղի ձեռագրի երբեմնի կազմի կենդանի վկաներն են հանդիսանում: Մազաղաթը նախքան գրվելը վերանորոգվել է. պատառիկի առաջին թերթի վրա կան հաստ և սպիտակ ամուր թելով կարի հետքեր: Պատառիկի երեք բեկորներն էլ ունեն տարբեր շափեր. առաջին թերթի առաջին սյունը  $22,8 \times 8$  սմ է, երկրորդ սյունը առաջին սյան մնացորդով  $24,3 \times 14,3$  սմ է, իսկ երկրորդ թերթի մնացորդ առաջին սյունը  $24 \times 11,5$  սմ է: Տողերի քանակն է 21: Գրված մեկ սյան մեծությունն է  $22,5 \times 8,5$  սմ: Պատառիկը բովանդակում է Կյուրեղի աշխատության 2-է ճառերից հատվածներ և համապատասխանում է տպագրի 112—113 և 129—131 էջերին: Այս բեկորները բերվել են Անիի թանգարանից, որ հիմնադրել էր ակադ. Ն. Մառը:

Կյուրեղի երրորդ բեկորը Մատենադարանի № 9465 ձեռագրի կողերին կարված երկու թերթ պահպանակներն են: Ձեռագիրը Ավետարան է, բաղկացած 300 թերթից. նրա մեծությունն է  $24 \times 17$  սմ: Խոնավ տեղ պահվելու հետևանքով որոշ թերթեր մեղ հասել են խոնաղած վիճակում: Խորաններում համարաբարառաջին մասը չի գրված: Տերունական նկարները, ինչպես նաև ավետարանների սկզբնաթերթերը (ավետարանիչների նկարներով հանդերձ) վերանորոգման շրջանում են գրվել և նկարվել: Ձեռագիրը գրվել է 1311 թ. Այրի ձորում: Հիշատակարանում ասված է. «Արդ գրեցաւ սուրբ Աւետարանս ի հռչակաւոր մենաստանի ի Թուխ հայոց ՉԿ (1311 թ.), յանասպատիս որ կոչի անուամբ Այրի ձոր, ընդ հովանեաւ սուրբ Յարսէթեան»<sup>1</sup> ստուգեալ և ընդրեալ յամենալաւ արինակէ»<sup>2</sup>: Գ. Հովսեփյանը գծվարանում է սույն Այրի ձորը «նույնացնել Այրից կամ Գեղարդա վանքի հետ, որովհետև գրության այդ ձևը տեղի անվան պատահական չէր»: Հիշում է նաև մի այլ Ավետարան գրված 1294 թ. դարձյալ Այրի ձորում, սակայն Այրի ձորի որտեղ լինելը Գ. Հովսեփյանին դարձյալ անձանոթ է մնում<sup>3</sup>:

Այդ վայրում ԺԳ դարի վերջին և ԺԴ դարի սկզբին գրվել են նաև այլ ձեռագրեր: Այրի ձորը հիշատակված չէ նաև էփրիկյանի «Բնաշխարհիկ բառարանում»: Միայն 1298 թ. նույն վայրում գրված մի ձեռագիր թանկագին հիշատակարանից, որը հրատարակել է Հ. Ռսկյանը, կարելի է լինում ճշտել, որ Այրի ձորը իսկապես ոչ մի կապ չի ունեցել Այրիվանքի կամ Գեղարդավանքի հետ և դանվելիս է եղել Քաջբերունյաց դավառում<sup>4</sup>:

Հիշյալ պահպանակների տեղ ձեռագիրը ունեցել է մի շարք ստացողներ: Նրա հնագույն ստացողներն են Հայրապետ և Անդրեաս քահանա եղբայրները: Երկրորդ անգամ ներքող անուն մեկն է տեղ դառնում նրան «ի մայրաքաղաքիս Շամախիս և ավի յիշատակ ի գեղիս, որ Բնահայգահ կոչի, որ կացցէ այս սուրբ եկեղեցիս...»<sup>5</sup>: Այդա ձեռագիրը կրկին կազմվում է Տեր Ավետիսի և նրա կնոջ Խանումի պատվերով Փիլիպոս կազմարարի կողմից: Կազմել տվողներն էլ ձեռագիրը նվիրում են «ի դուռն Իզտուրուստայ վկային»: Սրանից հետո ձեռագրում հիշվում է դարբին Ամիրդեն, որ հիշյալ վանքի համար

<sup>1</sup> Պետ. Մատենադարանի ձեռագիր, № 9465:

<sup>2</sup> Գ ա Ր Ե Ղ Ի ն կ ա թ ո ղ ի կ ո ս, Ի ն ն եր ո ռ ղ դ ար թ ի..., էջ 40:

<sup>3</sup> Հ ա մ ա ղ ա ս ա ղ Ո ս կ յ ա ն, Վասպուրական—Վանի վանքերը, Բ մաս, Վիեննա, 1942 թ., էջ 389—390:

<sup>4</sup> Պետ. Մատենադարանի ձեռագիր, № 9465, էջ 299:

ԱՆԵՏԻՅ	ԳԻՉԻԳԵԼԻՄԱՐԵ
ՄԵՅԱՅՅ	ՆԻՍ ՅԱՅՍԱՐԶՍՈՒՐԵ
ԵՂԵՏՆՈ	ԵԻԶՏԵՆ ԶԱԼԷ Ե Ի
ՈՐԱԵՂԵ ՅԻՆ	ԶՏՈԳԵՏՈՒԻ Զ ԲԱՆԿՍՍ
ՈՐԻԴ	ԱՐԵՄԱՂԱ Զ ԵՄԶՆԹԵՐ
ԻՊԱՐԻՏԱԻ	ՅԱՒԴԱԴԵԻ Զ ԼԱՍԻՂԱԴ
ՅԱՐԻՏԵ	ՅՈՐԺԱՄԸՆԹ ԵՌՆՈՐԻ
Մ	ԶԱՄԱՅՍԻՂԱՍՈՐԱԶՏԻ
	ԳՈՒՐԳԵՆԱՐԾՐՈՒՆԻ Ե Ի
ՐԲԱ ԱՅՍ	ԶՈՐԳԵՐԻՐԱՏՈՒՄ ՅԻՉ
ԴԱՊԵՏԻՆ	
ԱՅԻՈՅ	
ԱՆԻՍԱՅՈՅ	



աղբյուր է բերել<sup>1</sup> և գնել է այս Ավետարանը<sup>2</sup>: Այս բոլորը կատարվել է 14—16-րդ դարերում, որից հետո մենք տեղեկություն չունենք այս ձեռագրի մասին, մինչև որ այն սեփականություն է դառնում Կեսարիայի Պենտուսա գյուղում ապրող Բիզենդյանների ընտանիքի: Բիզենդյանները առաջին համաշխարհային պատերազմում թուրքերի կողմից կազմակերպված շարժերից փրկելով, ձեռագիրն փրկեց հետ տարել են Բեյրութ: Բեյրութում ձեռագրի թանկագին պահպանակները առաջին անգամ հմուտ կերպով ուսումնասիրվեցին Գարեգին Հովսեփյանի կողմից<sup>3</sup>: Ձեռագրի վերջին տեր Կարապետ Բիզենդյանը, որն այժմ հայրենազարձ լինելով, ապրում է Սովետական Հայաստանում, 1953 թ. հոկտեմբերի 9-ին այն, հնարուն պահպանակների հետ միասին, հանձնեց Երևանի Մատենադարանին:

Ձեռագրի իբր պահպանակ օգտագործված Կյուրեղ Երուսաղեմացու պատճենների մեծությունն է. ա) 23,8×16,5 սմ և բ) 24×16,2 սմ, տողերի քանակն է 19—20, գրված մեկ սյան մեծությունն է 20×8,5 սմ: Բովանդակում է հատվածներ Կյուրեղի ԺԲ ճառից և համապատասխանում է տպագրի 218—220 և 231—232 էջերին: Պահպանակի երկրորդ թերթում կա Կյուրեղի ձեռագրի հիշատակարանի մի մասը, որտեղ որպես ստացողներ, ինչպես ասացինք, հիշվում են Անձևացյաց տեր Գուրգեն Արծրունին և նրա որդի Ատոմը: Կաղմարարի կողմից լուսանցքային սյունների կիսով կտրված լինելու հետևանքով զոհ է գնացել ձեռագրի արտագրման տարեթիվը: Համենայն դեպս սույն անդին բեկորի շնորհիվ է, որ հնարավոր է լինում մոտավորապես որոշել ձեռագրի գրություն ժամանակը (նկար N 2):

Կյուրեղի նորահայտ բեկորներից մեկն էլ, Մատենադարանի պատճենների հավաքածուի N 367 հատակառոն է, որը բաղկացած է 4 թերթից: Ինչպես նախորդները, այնպես էլ բոլոր սույն պատճենները վնասված են, լուսանցքային սյան կեսը բոլոր թերթերում էլ զոհ է գնացել կաղմարարի մրկրատին, քանի որ սրանք ևս գործ են ածվել ժամանակին որպես պահպանակ (այդ երևում է բեկորներին կպած կապույտ կտորից, որով այն փակցված է եղել մի ձեռագրի կողերին): Ներքեից ևս կտրված է: Նման Կյուրեղի N 1271 պատճենի, այստեղ ևս առաջին թերթի վրա մագաղաթի վերանորոգման հետքեր կան պահպանված: Թելակարից բացի, այն ամրացված է նաև մոմով: Պատճենի մեծությունն է 26,5×18,3 սմ, տողերի քանակն է 21—22: Գրված մեկ սյան մեծությունն է 22,8×8,5 սմ: Բովանդակում է Կյուրեղի աշխատության ԺԵ և ԺԶ ճառերից հատվածներ և համապատասխանում է տպագրի 333, 336—337, 339—343 և 345—347 էջերին:

Վերջերս մեզ հաջողվեց պարզել, որ հիշյալ N 367 պատճենը, անցյալում պահպանակ է եղել Մատենադարանի N 4861 ձեռագրի: Հիշյալ ձեռագիրը Ավետարան է, գրված հավանաբար ԺԵ դարում և վերակազմված 1587 թ., Վանիկ գյուղում, Փիլիպոս արևդայի կողմից: 1685 թ. ձեռագրի երկրորդ ստացողն է եղել Հովհաննեսը, իսկ 1703 թ. Գարրիել անունով մեկը գերությունից փրկել է այն: Ձեռագիրը իր պահպանակների հետ 1916 թ. բերվել է Վարազից էջմիածին: Ձեռագիրը նկարագրվել է Երվանդ Լալայանի կողմից,

<sup>1</sup> Պետ. Մատենադարանի ձեռագիր, N 9465, էջ 300ա:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 15բ:

<sup>3</sup> Գ ար ե գ ի ն կաթողիկոս, Խնկերցի դարբ... էջմիածին, 1946 թ., 8—10, էջ 40—54:

սակա՞ն սխալմամբ նրա պահպանակները համարվել են երկաթագիր Ավետա-  
րանի մասեր<sup>1</sup> (նկար № 3):

Կյուրեղի հնագույն ձեռագրից 4 մագաղաթյա թերթեր ևս գտանք կար-  
ված մոսկվարնակ Քրիստափոր Գևորգյանից վերջերս գնված մի ձեռագիր  
Ավետարանի կողերին: Ավետարանը գրվել է 1452 թ. վարդանի կողմից, հա-  
վանաբար Մոկաց երկրի Սերիվանքում: Ձեռագիրն ավելի ուշ, ստացող թու-  
մայի եղբոր որդի՝ Կիրակոս արեղայից գնել է Ճոն Առաքելը և նվիրել Շա-  
տախի Ս. Ստեփանոս տաճարին<sup>2</sup>: Ձեռագրում հիշվում են նաև վերջին ստա-  
ցողի թոռները: Այս ձեռագիրը գերի է տարվել: ԺԶ դարի վերջում այն ազա-  
տել է խոջա Ավետիսը և վերստին նորոգել ու կազմել ավել 1586 թվականին:  
Վերստին կազմող կազմարարն է եղել Փիլիպոսը, սրն աշխատել է «ի լեռն  
սուրբ, որ կոչի նաչ գլուխ, ի վանքն որ կոչի սուրբ Սահակ, ի յառ ոտս գերեղ-  
մանին տէր Յոսկայ»<sup>3</sup>:

Ձեռագիրը 1888 թ. Փարիզում գնել է Խաչատուր Գևորգյանը և իր հետ  
բերել Քիֆլիս, 1914 թ. նվիրել է իր ավագ որդուն՝ Հովհաննեսին: Վերջինս  
ձեռագիրը 1916 թ. տարել է Կոկանդ (Միջին Ասիա): 1919 թ. Հովհաննեսը  
նվիրել է իր կրտսեր եղբայր Քրիստափորին, որը 40 տարի շարունակ իր մոտ,  
Մոսկվայում է պահել սույն ձեռագիրը: Մատենադարան է մուծվել 1959 թվա-  
կանին: Ձեռագրի պահպանակների մեծությունն է ա)  $25 \times 17,5$ , բ)  $25,5 \times 18$  և  
 $25,5 \times 16$ : Տողերի քանակն է 20—21, գրված մեկ սյան մեծությունն է  $21,8 \times$   
 $8,5$  սմ: Ամենուրեք կտրված է լուսանցքային սյունակի կեսը, ներքևից ևս կտր-  
ված է մի քանի տող: Պահպանակները բովանդակում են հատվածներ Կյուրե-  
ղի ԺԳ ճառից և համապատասխանում են տպագրի 236—238, 246—247,  
252—254 և 262—263 էջերին: Պատառիկի վրա կան խոնավության հետքեր:  
Սկզբի պահպանակների վրա կան գրչագրեր: Ձեռագրի կազմի զարդերը  
պոկված են և հանված վերստին կազմվելուց հետո (նկար № 4):

Եվ վերջապես Կյուրեղի նույն կորած հնագույն ձեռագրից 4 թերթ պահ-  
պանակներ կարված են նաև Մատենադարանի № 4812 ձեռագրի կողերին,  
որոնք միայն վերջերս մեզ հայտնի դարձան: Ձեռագիրը կոչվել է Կարմիր  
Ավետարան, գրված է 1304 թվականին, հավանաբար դարձյալ վասպուրակա-  
նում: Ստացել է ոմն Կարապետ քահանա: Ձեռագիրը երկու անգամ գերի է  
տարվել և ազատվել: Վերջին անգամ նորոգել և կազմել է ավել ԺԶ դարի վեր-  
ջում տեր Հովհաննեսը: Վերջին անգամ կազմվել է 1585 թ. Փիլիպոս կազմա-  
րարի կողմից վանիկ գյուղում: Ձեռագիրն ունեցել է մի քանի ստացողներ և  
գերությունից փրկողներ: Մատենադարան է բերվել 1916 թ. Աղթամարից: Այն  
նկարագրվել է Եր. Լալայանի կողմից, որը ուշադիր շգտնվելով պահպանակ-  
ները համարել է «միջին մեսրոբյան ավետարանի մի մի թերթ»<sup>4</sup>: Պահպանակ-  
ների շորս թերթերից երկուսը հասել են մեզ միայն մեկ սյունակով: Մասամբ  
կտրված են նաև երկու սյունակով հասած թերթերի լուսանցքային սյունները:  
Ներքևից ևս տողեր են կտրված: Պահպանակների մեծությունն է. ա)  $23 \times 19$

<sup>1</sup> Ե. Լալայան, Տուրքական հայերեն ձեռագրաց վասպուրականի, պրակ առաջին, 1915 թիֆ-  
լիս, էջ 581—582:

<sup>2</sup> Մատենադարանի ձեռագիր, № 9841, էջ 93ա:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 293:

<sup>4</sup> Երվանդ Լալայան, Տուրքական հայերեն ձեռագրաց վասպուրականի, պրակ առաջին,  
Քիֆլիս, 1915, էջ 147:



ԿՈՒՆԱՊՅԱՆԱՅ  
 ԿՈՅ . ԱՄՆԴԱՆՈՒ  
 ԿՈ ՅՆԱՄՆԻՄ . ԵՒ  
 ԵՄ . ՄԻՐԵՍԻ  
 ԿՐՈՅՐԻՄ ՆԱՐԱՆ  
 ԿՐՈ ԿՍԿԵՐՈՒՐԻ  
 ԿՐ . ԵՒԿՐԻՉԻՆՉ  
 ԿՐ . ԿՈՆՅԵՒԵՍՏ  
 ԿՐԻՍԻՉՄՈՒԵՎԼԵՐ

ԿՐ . ԵՒՉԱՅՆԻՐԻՐ  
 ԿՐԱՐԵՑԱՒ . ԵՒԼ  
 ԿՐԵՐԵՑԱՆԱԿԵ .  
 ԿՐԻՆԻՊՈՒՐԵԼ . ԿԱ  
 ԿՐԵՑԱՆ . ԵՒՈՒ  
 ԿՐԵՍՆՆ . ԲՈՒՆ  
 ԿՐԵՑԿՐԵՍ ԵՂԵՎ  
 ԿՐՆՍՐԱՐԵԱՅ Ի  
 ԿՐԻԿԱՍՏՐՆԱԿՈՅՆ  
 ԿՐԱՆՉՉԵՄԵՐՈՒ  
 ԿՐԱՆՉՍՐԱՆՆԻՐՈՅ

ՉԱՐԵՐԵԱՄՆ ՍՐԵՐԵԱՌԻՄ  
 ԵՄՆԱՅՆԱՐԵՐՈՒՄԻՆ . ՈՐ  
 ՉԱՐԵՐԵԱՄՆԱՐԵՐՈՒՄԻՐ . ԵՒ  
 ՉԱՐԵՐԵԱՄՐԵՐԵԱՅ ՄԵՉԱՆ  
 ՆԵՐԵՐԿՆ ՉԱՐԵՐԵԱՅՆԵՐԵՆ  
 ԿՈՒՐԱՐԵՐԱՆԱՅՆԱՐԵՐԵ  
 ՄԵՐՆՈՒՄԻՐՈՒ . ԱՐԵՐՈՒ  
 ՆԵՐԵՐԵՐՆՈՒ ՈՐԵՐԵՐՈՒՆ  
 ԿՈՒՐԱՆԵՑԿԻՆԱՐԵՐԵՑԱՒ

ԱՄՆԱՅՈՐԿԱՐԵԱՊՅԱՆ  
 ՃԱՐԻՆՊԵՐԵՐԵՑԱՒ . ԱՆՈՒ  
 ԿՐԻՊՈՒՐԵԼ . ՉՐԵՐՈՉ  
 ՍԱՍՏԻՐԻՆՉՈՉՍՐԱՅ . ԲՈՒ  
 ՉՐԵՐԵՐՆՈՒՄԻՐՈՒՄԻՐ . ԱՆՈՒ  
 ՍԿԻՐՆԻՉՉԵՐԵՐԱՐԵՐՈՒ  
 ԱՅԻՉԵՉ . ԱՄՆԱՅՈՐԿ  
 ՍԵՐՈՒՄԵՐԵՐԱՆՈՒ . ԱՅԼ  
 ԱՅՈՒՄՆԱՅՆԱՅՆԱՐԵՐԵ  
 ԲՈՒՐՈՒՄ . ՈՐԵՐԵՐՈՒՄ  
 ԿՈՒՐԱՆԱՐԵՐՈՒՄ

Կ Կ Կ  
 Կ Կ Կ  
 Կ Կ Կ  
 Կ Կ Կ

սմ և  $23,5 \times 11,5$  սմ ք)  $23 \times 18,5$  սմ և  $23 \times 13$  սմ: Մեկ գրված սյան մեծությունն է  $20 \times 8$  սմ: Տողերի քանակն է 20—21: Սույն պահպանակները Կյուրեղի բոլոր ցարդ մեզ հայտնի եղող պատառիկներից ամենավատթար վիճակում են հասել մեզ: Նրանք հիվանդության պատճառով տեղ-տեղ սևացած, կարմրած և բորբոսնած են. այդ բոլորի հետևանքով, հատկապես վերջի պահպանակը, շատ դժվար է ընթերցվում: Պահպանակները բովանդակում են հատվածներ Կյուրեղի Ժ, ԺԱ և ԺԵ ճառերից և համապատասխանում են տպագրի 171—173, 180—182, 307—311 էջերին:

Այժմ մեզ մնում է պարզել, թե ե՞րբ, ո՞ւմ կողմից և ո՞րտեղ են Կյուրեղի հնագույն ձեռագրի բեկորները օգտագործվել որպես պահպանակ և հետևաբար, ո՞ր դարում է հիշյալ գրչագիրը իբրև ամբողջություն դադարել գոյություն ունենալուց:

Կյուրեղի ցարդ մեզ հայտնի վեց առանձին համարների տակ պահվող պատառիկներից ու ձեռագրերի պահպանակներից շրտի մասին մենք տեղեկություն ունենք, որ նրանք որպես պահպանակ օգտագործվել են միևնույն կազմարարի կողմից:

Այսպես, Մատենադարանի № 9465 ձեռագրում, որը գրված է Այրի ձորում 1311 թ., գտնվում է նաև հետևյալ անթվակիր հիշատակագրությունը. «Եւ զկազմ(ող)ս յիշեցէք ի Քրիստոս՝ զտէր Փիլիպոսն, և զհայր իւր զՄանկայսարն, և զմարն զՔնքուշ, և աստուած ողորմի ասացէք իւրեանց հոգուն, ամէն»<sup>1</sup>:

Հիշատակագրությունը անթվական է, ուստի և պարզ չէր թե երբ էր վերակազմվել այդ ձեռագիրը: Ժամանակը հայտնի դարձավ Կյուրեղի այլ պահպանակներ ունեցող ձեռագրերի հայտնաբերումով:

Մոսկվայից վերջերս ստացված վերոնշյալ ձեռագրում գտնվում է դարձյալ նույն Փիլիպոս կազմարարի հիշատակագրությունը. այդ ձեռագիրը վերակազմվել է 1586 թ.:

«Եւ սուտանուն Փիլիպոս կազմեցի զսուրբ աւետարանս ի լեառն սուրբ որ կոչի Խաչզուխ, ի վանքն որ կոչի սուրբ Սահակ, ի յառ ոտս գերեզմանին տէր Յոսկայ, ի թագաւորութիւն սուլթան Մուրադին և կաթողիկոսութիւն Աթալայայրայ՝ որ կոչի Գրիգոր, ի թվականութիւն հայոց ՌԼԵ (1586): Կազմեցի աև ժամանակն, որ Ոսման փաշէն զնաց ի վերայ Քարէզու և շատ աւերք արար. և հետոյ ի հետ դարձաւ զծովու բոլորս աւերեաց և բազում շարիք գործեաց: Յիշեցէք ի Քրիստոս և աստուած ողորմի ասացէք ինձ, և ծնաւոյց իժոց՝ հարն Մանգասարին և մարն Քնքուշին, և անասին Նուբարին, և որդուն Գիլանջին, և աստուած ողորմի ասացէք իւրեանց հոգուն ամէն»<sup>2</sup>:

Ազթամարից բերված ձեռագիրը ևս կազմել է նույն Փիլիպոսը, 1585 թվականին: «Եւ սուտանուն Փիլիպոս, որ կազմեցի զսուրբ աւետարանն ի թվականիս հայոց ՌԼԳ (1585), ի գեաւղն որ կոչի Վանիկ, ի դուն սուրբ Թէոդորոսին, ով որ հեռացուցանէ ի գրանէն սուրբ Թէոդորոսին կամ ծախելով կամ գրաւ զնելով, նայ յիրեք ճԺԸ (318) հայրապետաց նզովեալ եղիցի, ամէն: Եւ որ զմեղաւորսն յիշէ աստուծ ուրն ողորմեացի, ամէն: Աւախ ու հազար բերան, թէ ինչ գործեցաւ ի շար մարդոյ ձեռանէն, որ լալաւք և արտասաւք

<sup>1</sup> Մատենադարան, ձեռ. № 9465, էջ 300ա:

<sup>2</sup> Նույն տեղում, № 9841, էջ 293:

կապեցի դուրը աւետարանն, դառն և անհանգիստ կացի, վասն ծովացեալ մեղաց իմոց. և զմեղաւոր գծաւզս յիշեցէք և Քրիստոս և աստուած ձեզ յիշէ իւր միտս անկամ դալըստեան, ամէն»<sup>1</sup>:

Եվ վերջապես Վարագից բերված վերոհիշյալ ձեռագրում գտնվում է Փիլիպոս կաղմարարի մի այլ հիշատակագրությունը, որը վերաբերում է 1587 թվականին. «Ես սուտանուն Փիլիպոս արեղայ, որ մականունն Խունուն կոչի՝ կաղմեցի դուրը Աւետարանս ի գիւղն որ կոչի Վանիկ, ի դուռն սուրբ Քառասնից, ի հերպետին տէր Վարդանին և տէր Յովանէսին, և ի թվականութիւնս Հայոց ՌԼԶ (1587), և ի հայրպետութիւն մերոյ տէր Գրիգոր կաթողիկոսին: Եւ ան ժամանակն գրեցաւ, որ ըզթարէզ առին և բազում աւերք արարին աշխարհիս...»<sup>2</sup>:

Որ վերևում հիշվող Փիլիպոս կաղմարարը և Փիլիպոս արեղա կաղմարարը նույն անձնավորություններն են, այդ հաստատվում է ոչ միայն վայրի նույնությամբ (վերոհիշյալ ձեռագրերից երկուսը կաղմվել են Վանիկ գյուղում), այլ և վերոնշյալ ձեռագրերի կաղմերի ոճական ընդհանրությամբ: Փիլիպոսի կաղմերը ոչ միայն ամուր են, այլ և ունեն կարևոր մի յուրահատկություն, որով նրանք հեշտ են զանազանվում այլ կաղմարարների գործերից: Փիլիպոսը ամենուրեք կաղմերի կաշիների վրա թողել է կարմիր և դեղին գույնի ներկված նախշեր:

Այժմ հարց է ծագում, երբ են օգտագործվել Կյուրեղի հնագույն ձեռագրի բեկորները որպես պահպանակ: Արդյոք դրանք զետեղվել են հիշյալ ձեռագրերի ստեղծման ժամանակ առաջին կաղմարարների կողմից, թե վերստին կաղմող կաղմարարն է այդ բեկորները կարելի իր վերակաղմած ձեռագրերի կողերին: Մենք չենք կարող հիշյալ պահպանակներն առաջին կաղմողների կողմից զետեղված համարել, քանի որ դժվար է պատկերացնել, թե ժԶ դարի վերջում գործող Փիլիպոս կաղմարարի բոլոր վերակաղմած ձեռագրերը (որոնք գրվել են տարբեր վանքերում և տարբեր ժամանակներում — 1304 թ., 1452 թ. և այլն), կարող էին ունենալ նույն ձեռագրից ընկած պահպանակներ: Մենք կարծում ենք, որ Կյուրեղի հնագույն ձեռագիրը ժՅ դարում և կամ ամենաուշը ժԶ դարի սկզբում քայքայված լինելով այլևս դադարել էր իր ամբողջական ձեռագիր գոյությունն ունենալուց, հետևաբար ժԶ դարի վերջում Փիլիպոս կաղմարարը Վասպուրականի վանքերից մեկից իրրև կաղմարարական նյութ ձեռք էր բերել այդ ձեռագրի տարբեր թերթերը և անխնա կերպով օգտագործել որպես պահպանակ իր տարբեր վայրերում վերակաղմած ձեռագրերի համար: Ինչպես նշեցինք, հիշյալ ձեռագրերը վերակաղմվել են «Ի լեառն սուրբ որ կոչի Խաչ գլուխ, ի վանքն որ կոչի սուրբ Սահակ, ի յառ ոտս գերեզմանին տէր Յոսկայ», «Ի գիւղն որ կոչի Վանիկ ի դուռն սուրբ Թէոդորոսին», կամ նույն Վանիկ գյուղի «Ի դուռն սուրբ Քառասնից» և «Ի դուռն Իզտիրուստայ վկային»: Հիշյալ բոլոր վայրերն էլ գտնվում են Վասպուրականում:

Այսպիսով բերված փաստերի միջոցով կարելի է եզրակացնել, որ Կյուրեղի հնագույն ձեռագիրը, ընդօրինակվելով թ. դարում Վասպուրականում,

<sup>1</sup> Մատենադարան, ձեռ. № 4812, էջ 212: Այս աղավաղումներով հրատարակվել է Եր. Լաւրյանի «Յուցակ...»-ում, էջ 148:

<sup>2</sup> Մատենադարան, ձեռ. № 4861, էջ 276: Նաև Լաւրյան, Յուցակ..., էջ 581—584, № 248: Լաւրյանի նկարագրած № 295 ձեռագիրը ևս նույն ձեռագիրն է:

շուրջ 600 տարի հետո դադարել էր մի ամբողջություն կազմելուց, իսկ ԺԶ դարի վերջում այդ ձեռագրի բեկորները անցել էին Փիլիպոս կաղմարարին և նրա կողմից օգտագործվել վասսուրականում գտնվող տարբեր վայրերում կազմված ձեռագրերի մեջ որպես պահպանակ:

Մեծարժեք այս պատառիկները, իբրև վերապրող բեկորներ երբեմնի հնամենի ու մեծադիր մի ձեռագրի, 400 տարի շարունակ թափառել են իրարից հեռու վայրերում, հաճախ գերի են տարվել թշնամու կողմից ու կրկին ազատվել գերությունից. և այսպես, մերթ որպես ձեռագրի խունացած պահպանակ և մերթ որպես անվերծանելի բեկոր՝ նրանք անձանոթ են մնացել հայ բանասիրությունը և այժմ ամբողջացել են Սովետական Հայաստանի Պետական Մատենադարանում:

Վերոհիշյալ պատառիկների և պահպանակների հանգամանքները առանձին-առանձին նկարագրելուց հետո, այժմ ցանկանում ենք ընդհանրապես խոսել Կյուրեղ Երուսաղեմացու «Կոչումն ընծայութեան» կորած հնագույն ձեռագրի մասին. մոտավորապես այնպես, ինչպես նրա մասին կգրվեր եթե այն մեզ հասած լիներ իր ամբողջությամբ:

Թերթերի քանակ — Դժվար է պատասխանել այս հարցին, քանի որ մեր ձեռքի տակ միայն փշրանքներ են հասել Կյուրեղի սովոր ձեռագրից, սակայն հաշվելով ինչպես պատառիկների, այնպես էլ առանձին վերցրած տպագրի մի տողում տեղավորված տառերի քանակը և ստացվածն էլ բաղմասակելով յուրաքանչյուր էջի տողերի քանակի հետ կստանանք մի էջում տեղավորված տառերի քանակը: Այսպես վարվելով՝ պատառիկի յուրաքանչյուր էջի համար ստացանք շուրջ 480 տառանիշ, իսկ տպագրի համար 986 տառանիշ. սրանից էլ կարելի է եզրակացնել, որ պատառիկի մոտավորապես 2,05 էջը հավասար է լինում տպագրի մեկ էջին: Ուրեմն եթե Կյուրեղի տպագիրը բաղկացած է 404 էջից<sup>1</sup>, ապա ձեռագիրն էլ իր ժամանակին ունեցել է շուրջ 830 էջ, կամ մոտավորապես 415 թերթ:

Մեծուքյուն — Ոչ մի թերթ Կյուրեղի պատառիկներից մեզ լրիվ չի հասել, սակայն № 367 պատառիկում անվթար պահպանված են ինչպես վերևի, այնպես էլ թիկունքի լուսանցքները, որոնք և հնարավորություն են ընձևոում մոտավորապես վերականգնելու Կյուրեղի կորած ձեռագրի երբեմնի մեծությունը: Պատառիկների լուսանցքային սյուները կիսով չափ վերևից ներքև կտրված են, ներքևից ևս որոշ տողեր հատված են. սակայն մենք այդ պակասները լրացնում ենք անվթար հասած սյան լայնության միջոցով, իսկ տողերի կտրված մասն էլ համեմատելով տպագրի գրված տեղի հաշվով, հանգում ենք այն եզրակացություն, որ անվթար ձեռագրի յուրաքանչյուր էջը նախկինում պարունակել է 24 տող: Լրիվ թերթի լայնությունը վերականգնում ենք հետևյալ կերպ. մեզ հասած պատառիկի լայնության վրա ավելացնում ենք նաև կտրված սյան պակասող մասի, ինչպես նաև եզրային լուսանցքի սովորական լայնությունները (այս վերջինը մեր հաշվումներով պետք է եղած լինի շուրջ 6 սմ), ուստի և ստանում ենք 27,5 սմ, որը և ձեռագրի երբեմնի լայնությունն է եղել: Ձեռագրի երկարությունը որոշելու համար, եթե նույնիսկ հաշվենք, որ № 367 պատառիկի վերևի լուսանցքները մեզ հասել են լրիվ, այսին-

<sup>1</sup> Կյուրեղի Վիեննայի տպագրությունը ամբողջապես բաղկացած է 428 էջից, որի 24 էջը հրատարակողի ծանոթագրություններն են և կապ չունեն ընդգրկ հետ:

քրն ներկա իրենց 4 սմ բարձրությամբ, ապա ձեռագրերի ստորին լուսանցքները սովորաբար, որպես կանոն, կրկնակի լայն են լինում, հատկապես պրակների համարները նշելու նպատակով: Այդպիսով ստորին լուսանցքի լայնությունը շուրջ 8 սմ պետք է որ եղած լիներ, որի վրա եթե գումարենք նաև վերին լուսանցքի (4 սմ) կտրված տողերի (1,5 սմ) և այժմ մեզ հասած գրված մասի (23 սմ) երկարությունները՝ կստանանք ձեռագրի նախկին երկարությունը՝ 36,5 սմ: Այս բոլորից հետո պարզ է դառնում, որ Կյուրեղի ոչընչացած գրչագիրն անցյալում ունեցել է մոտավորապես  $36,5 \times 27,5$  սմ մեծություն: Այն իր ծավալով ևս հիշեցնում է Մատենադարանի մեծադիր և հնագույն ձեռագրերից № 6200 — Լազարյան Ավետարանը (գրված 887 թ. մեծություն՝  $37 \times 28$  սմ), № 6202 — Կոստանդնուպոլսում Աշոտ իշխանի համար գրված Ավետարանը (գրված 909 թ., մեծություն՝  $36 \times 27,5$  սմ) և այլն:

Գրչուրյան նյութ — միջին հաստության սպիտակ մազաղաթ, այժմ մեծ մասամբ դարձած դեղնավուն:

Վիճակ — Ոչ մի թերթ լրիվ չի հասել մեզ, բոլորն էլ որպես պահպանակ օգտագործվելու հետևանքով եղբերից կտրատված են: Որոշ բեկորներ խոնավության տակ մնալով տեղ-տեղ դունաթափվել են իսկ թանաքի գույնը բաց սրճագույնի է վերածվել: Քիմիական լուծույթ թափված լինելու հետևանքով որոշ մասեր սևացած են: Առանձին թերթեր վարակված լինելով սնկային հիվանդություններով՝ սևացած և կարմրած են ու շատ դժվար են ընթերցվում:

Պատառիկներն ունեն հայերեն ձեռագրերից աշխարհում ամենահին քելը և վերանորոգման ձևը: Կյուրեղի նորահայտ պատառիկներում պահպանվել են աշխարհում ամենահին հայկական ձեռագրի թելը և կարելու ձևը: Այս կասկածություններ անհրաժեշտ ենք գտնում ասելու, որ Գ. Խալաթյանցի այն կարծիքը, որ նա հայտնում է Լազարյան Ավետարանի մասին, ըստ որի հիշյալ ձեռագրի մանավանդ 73—95 թերթերի կարվածքները կատարվել են «սկզբրանն գրության համար նյութ պատրաստելիս» և որ «մենք ունինք պահած մեր գրչագրում թ. դարու թելը և կարելու ձևը»<sup>1</sup> — վերանայման կարիք ունի, քանի որ ուշագրությամբ ուսումնասիրելով Լազարյան Ավետարանի Գ. Խալաթյանցի նշած թերթերը, ինչպես նաև ողջ ձեռագիրը, պարզեցինք, որ ամբողջ ձեռագրում առկա բոլոր կարվածքները, բացի երկու տեղից, ձեռագիրը գրվելուց շատ ուշ են կատարվել: Կարերն այստեղ ծածկում են տառերը, իսկ մեր պատառիկներում ճիշտ հակառակն է: Նորահայտ բեկորների մեջ (№ 1271 և № 367) պահպանվել են հաստ և սպիտակ ու ամուր թելից կատարված կարի հեռքեր, որոնք էլ վրայից ամրացված են սպիտակ մոմով: Կարերը ձեռագիրը գրվելուց առաջ կատարված լինելու լավագույն փաստ կարող է ծառայել այն հանգամանքը, որ կարված թելի մասում բնավ ոչինչ գրված չէ. նույնիսկ նույն բառի մի շարք տառեր կարերի պատճառով գրիչը իրարից հեռու է գրել, կարի երկու կողմում, երբեմն նույն տողի վրա գտնվող մի բառի տառերի միջև, բաց թողնելով մինչև 1,6 սմ տարածություն: Օրինակ, № 1271 պատառիկում «կիզելոյ» բառը գրված է նույն տողում կարի երկու կողմում նախ «կիզ» և հետո «ելոյ». այստեղ անշատումը 16 միլիմետր է: № 367 պատա-

<sup>1</sup> Ավետարան ըստ թարգմանութեան նախնեաց մերոց գրեալ 312 թ. Հայոց ևւ յամի տեառն 887. լուսատիպ հրատարակութիւն գրչագրի Լազարեան ձեռարանի Արեւելեան լեզուաց... Մոսկուա, 1899, էջ Ա.—Բ:



սիկում ևս (էջ 1ա, սյունակ 2-րդ, տող 11—12) «ժամանակն» բառը կարի պատճառով գրված է հետևյալ ձևով. «Ճամ-անա-կն» կամ մի այլ տեղում (էջ 1բ, սյունակ 1-ին, տող 12), դարձյալ նույն կարի պատճառով, տառերը բաժանված են «որպ-էս-և» ձևով:

Լազարյան Ավետարանում հնագույն կարեր գտնվում են միայն 52-րդ թերթում և 95-րդ թերթի վերին մասում: Կյուրեղի հնագույն ձեռագիրը, ինչպես ասացինք, ամենայն հավանականությամբ մի քանի տարով առաջ է գրվել քան Լազարյան ավետարանը, հետևաբար և ուսումնասիրվող բեկորներում առկա կարվածքները, որոնք բոլորն էլ անվիճելիորեն կատարվել են նախքան ձեռագրի գրվելը, հանդիսանում են հայկական ձեռագրերում մագաղաթի վերանորոգության հնագույն նմուշները:

Գրուրյուն — երկսյուն (24,5×8 սմ):

Տողեր — 24:

Գծումներ — արված են ձեռնամուկ:

Բառանշատում՝ շունի, ի բաց առյալ երբեմն նախադասությունների վերջից և սկզբից:

Պիւ — խոշոր (հիշատակարանը), միջին (քնագիրը) և փոքր (վերնագրերը) մեսրոպյան ուղղագիծ ընտիր երկաթազրով գրված ամենահին ձեռագիր: Մեծատառերը՝ մեսրոպյան բոլորագիծ երկաթազրով:

Գրիչ — անհայտ:

Ստացող — Անձևացյաց տեր Գուրգեն Արծրունի և նրա որդին՝ Ատոմ, ժամանակ — Թ. դարի երկրորդ կես (873—892 թթ.): Ամենայն հավանականությամբ Լազարյան Ավետարանից ավելի հին և կամ նրան ժամանակակից:

Տեղ — ամենայն հավանականությամբ՝ Վասպուրականի Անձևացյաց գավառ:

Բովանդակություն. — Կյուրեղ Երուսաղեմացու «Կոշումն ընծայութեան» աշխատությունը: Հայտնաբերված պատառիկներում գտնվում են հատվածներ Կյուրեղի աշխատության Զ, է, Ժ, ԺԱ, ԺԲ, ԺԳ, ԺԵ և ԺԶ ձևերից:

Հիշատակարան — հիշատակագրություն

(№ 9465 ձեռագրի Բ պահպանակ. էջ 2բ, 1-ին սյունակ).

[ԳԻ]ՐՔՍ ԱՅՍ

[ԿԻԻՐԵՂ ՎԱՐ]ԴԱՊԵՏԻՆ

[ԵՐՈՒՍԱՂԵՄ]ԱՅԻՈՅ.

[ԳՐԵՅԱԻ ԹՈՒԱԿ]ԱՆԻՍ ՀԱՅՈՅ

[Ն] ԱՌԵԱԼ

(նույն էջ 2բ, 2-րդ սյունակ)

ԳՐԶԻ ԳՐԵԼ Ի ՄԱՏԵ

ՆԻՍ ՅԱՅՍՄ ՉՍՈՒՐԲ

ԵԻ ՉՏԵՆՉԱԼԻ ԵԻ

ՉՀՈԳԵՏՈՒԻՉ ԲԱՆՔՍ.

ԱՐԴ ԱՂԱՉԵՄ ՉՆԹԵՐ

ՅԱԻՂՄԴ ԸՆԹԵՌՆՈՒՔ

ՉՍՍԱՅԱԻՂՍ ՍՈՐԱ ՉՏՐ

ԳՈՒՐԳԷՆ ԱՐԾՐՈՒՆԻ ԵՒ  
ԶՈՐԴԻ ԻԻՐ ԱՏՈՄ ՅԻՇ  
[ԵՑԷՔ] || || || || || || || || || || ||

\* \*  
\*

Ինչպես երևում է Կյուրեղի պատառիկների ուսումնասիրությունից, բնագրագիտական տեսակետից նրանք մեզ շատ քան շեն տալիս, սակայն և այնպես պարունակում են տպագրից տարբերվող ընթերցվածներ, բառային և իմաստային, ձևաբանական և շարահյուսական, ինչպես նաև բարբառային և ուղղագրական մի շարք ձևեր, որոնք, կարծում ենք, օգտակար կարող են լինել հայ լեզվաբանության հարցերով զբաղվող մասնագետներին:

Ա. Բառային և իմաստային տարբեր տիպի ընթերցվածներ.

Պատառիկ

Տպագիր

Ճ ա ո Ձ.

ԿԱՏԱՐԵԱԼ Ի ՄԵՇՈՒԹԵԱՆ	Կատարեալ է ի մեծութեան.
ՎԱՅՐԱԻՔ ՈՉ ՓԱԿԵԱԼ	Վայրօք փակեալ.
ԵՒ ԻՆՔՆ ՅՈՒՄԵՔԷ	և ինքն ոչ յումեքէ.
ԶԻ ԸՆԴԷՐ ՈՉ ՊԱՏՈՒԵՍ	Ընդէր կեղծատրիս պատուել.
ԿՈՒՐԱՅՈՅՅ ԶՄԻՏՍ ԹԵՐԱԶԱԻԱՏԻՅԻ	կուրացոյց զմիտս անհաւատիցն.

Ճ ա ո Է

Ի ՄՏԱՅ ԹԵՐԱԶԱԻԱՏՈՒԹԵՆԷ	Ի մտաց թեթևութենէ.
ՀԱՅՐ ՈՐ ԲՆՈՒԹԵԱՄԲՆ ԻՍԿ ԷՐ	Հայր սրբութեամբն իսկ էր.
ՀԱՅՐ ԿՈՉԵՑԱԻ ՔԻ	Հայր կոչեցաւ Յիսուսի.

Ճ ա ո Ժ

ԵԹԵ ՍԱ Է ՔՍ	Եթէ Քրիստոսն է.
-------------	-----------------

Ճ ա ո ԺԲ

ԶՆԹԱՅՍ ԸՆԹԱՍՅՈՒՔ	Կրնթացս ընթացարուք.
ՊՍԱԿԵԼՈՅ ԹԷ ԲՆԱԿԵՅԻՅ	պսակելոց թէ բնակեցայց.

Ճ ա ո ԺԳ

ՄՈԼԱՐՆ ԱՅՆ	Խաբեբայն այն.
ԵՒ ՄԵՔ ՈՉ ԵՄՔ	և մեք ոչ կամք.
ՈՉ ԵԹԷ ԻՆՉՍԻՐՈՒԹԵԱՆ	ոչ եթէ վասն բնչաւէտութեան.

Ճ ա ո ԺԵ

ՅԱՒՈՒՐ ԳԱԼՍՏԵԱՆՆ ՅԱԶԱԿՈՂՄՆ	յաւուր դալստեանն յառաջա-
ԿՈՒՍԷ ԳՏԱՆԻՅԻՍ ՔԻ	կողմն կուալ անտ.
ԿԱՅՅԵՍ ԱՌԱԶԻ ԳԱՏԱԻՈՐԻՆ	Կացցես առաջի թագաւորին.

Ճ ա ո ժ Զ

ՈՄԱՆՔ ՈՐ ՏԳԷՏՔ ԱՆՈՒԱՆԵԱԼ ԵՆ.  
 Ի ՀՆՈՑ ԿՏԱԿԱՐԱՆԱՑ ԱՆՏԻ  
 ՓՈՔՐԻԿ ԱԳԱՐԱԿԻԿ ՄԻ  
 ԶԺԱՆԴԱԿԱՆԱՅՍ ԺՈՂՈՎԵԱԼ  
 ԱՌԱՆՑ ՊԱՏԱՍԽԱՆԻ ՏԱԼՈՅ Ի ՊԱ-  
 ՏԻԺՍ ՊԱՏՈՒՀԱՍԻՅՆ ՄՏԱԼՆԷՐ ]  
 ԵԴԻՅ ԶԶԵՌՍ ԻՄ  
 ԱՍԱՍՑՈՒՔ ԵՒ ՄԵՔ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՄ-  
 ԲԵՐՈՒԹԵԱՄԲ ՅԱԾ  
 ԳՈՒՅԷ ՅԱՆՈՒԱՆԱԴՐՈՒԹԵՆԷ ԱՆՏԻ  
 ՀԱՄԱՐԻՑԻՍ

Ոմանք որ գէտքն անուանեալ են.  
 Ի հնոց մարգարէից անտի.  
 փոքրիկ ագարակ մի է.  
 զժանտ կանայս ժողովեալ.  
 և առանց հարցանելոյ ի  
 պատիժ պատուհասից մատնէր-  
 զնիցեմ զձեռս իմ.  
 Ասասցուք և մեք ամենայն համար-  
 ձակութեամբ ցԱստուած.  
 Գուցէ յանուն արդարութենէ ան-  
 տի համարիցիս.

Բ. Քերականական տարբեր դասավորությամբ նախադասություններ.

Պատահիկ

Տպագիր

Ճ ա ո Զ

ՈՉ ԵԿԻ ԱՐԿԱՆԵԼ ԵՍ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ  
 ՅԱՌԱՋ ՄԱՏԻՐ  
 ԶԻ ԱՐԴ ՀԱՍՈՒ ՄԱՐԹԻՅԵՄՔ ԼԻՆԵԼ

ոչ եկի ես խաղաղութիւն արկանել.  
 մատիր յառաջ.  
 զի ա՛րդ կարեմք հասու լինել.

Ճ ա ո է

ՊԱՏՈՒԻՐԱՆ ՅԱՌԱՋԱԳՈՅՆ ՏԱԼ ՆՄԱ

Պատուիրան տալ նմա յառաջագոյն.

Ճ ա ո ժ Բ

ԱՍԱ ԴՈՒ ՃՇՄԱՐԻՏ ՄԵԶ  
 ՆԱ ՊԱՏԱՍԽԱՆԻ ԵՏ ԵՒ ԱՍԷ ՃՐՇ-  
 ՄԱՐՏԻԻ  
 ՍՈՒՐԲՆ Ի ԼԵՌՆԷ ՓԱՌԱՆ

Ասա դու մնգ ճշմարիտ.  
 նա ետ պատասխանի ճշմարտի և  
 ասէ.  
 Սուրբն ի Փառան լեռնէ.

Ճ ա ո ժ Ե-ժ Զ

ԱՍԱՍՑՈՒՔ ԱՍԱՅԵԱԼՆ Է  
 ԿՈԶԻ ԱԻԾԵԱԼ

Ասացեալ է ասասցուք.  
 Օծեալ կոշի.

Գ. Բառեր, որոնք պակասում են տպագրում և հակառակը.

Ճ ա ո Զ

ԱՅՂ ՎԱՅՐԱՅՆ ԱՐԱՐԻԶ Է

այլ վայրացն ինքն է արարիչ.

Ճ ա ո է

ԶԻ ԱՍԱՅ ԹԵ ԵՐԹԱՄ ԵՍ ԱՌ ՀԱՅՐ  
 ԻՄ ԵՒ ԱՌ ՀԱՅՐ ԶԵՐ ԵՒ ՈՉ ԱՍԱՅ  
 ԱՌ ՀԱՅՐ ԻՄ ԵՒ ԶԵՐ ԱՅՂ ԲԱԺԱՆ-  
 ԵԱՅ ԵՒ ԱՍԱՅ ՆԱԽ ԶԻԻՐ  
 ԵՒ ԶՅՈՎՀԱՆՆԷՍ ՈՐ ՍԻՐԵԼԱԳՈՅՆՆ  
 ԷՐ ՔԱՆ ԶԱՇԱԿԵՐՏՄՆ

Զի ասաց թէ երթամ ես առ հայր  
 իմ և առ հայր ձեր, այլ բաժան-  
 եաց եւ ասաց նախ զիւր.  
 և զՅովհաննէս որ սիրելագոյն էր  
 քան զայլ աշակերտսն.

Ճ ա ո ժ Ա

Եթե շԱԻԱՏԱՄՔ Ի ՄԻ ՏՐ

Թէ հաւատամք ի տէր.

Ճ ա ո ժ Գ

ԳՏԱԻ ԱՄԵՆԵԻԻՆ Ի ԲԵՐԱՆ ՆՈՐԱ  
ՆԵՆԳՈՒԹԻԻՆ

Գտաւ նենդութիւն ի բերան նորա.

Ճ ա ո ժ Ե

ՁԻ ԹԷ ԻՅԷ ԵՒ ՁԻՆՁ ՆՇԱՆ ԻՅԷ  
ՔՈՅՈՅ ԳԱԼՍՏԵԱՆ

և զինչ նշան բոյոյ գալստեանդ.

ՁԻ ՈՉ ԳԻՏԷՔ ՅՈՐՈՒՄ ԱԻՈՒՐ ՏՐ  
ՉԵՐ ԳԱՅ

Յորում աւուր տէր ձեր գայ.

Ճ ա ո ժ Զ

ԱՅՂՈՅ ԱՅՂ ԱԶԳԻ ԲԻՒՐԱՊԱՏԻԿ  
ԲԱԶՈՒՄ ԻՆՁ ԽԱՌՆ ԵՒ ԱԶԳ ԱԶԳ  
ԳՐԵԱԼ Է

այլոց այլ բիրապատիկ  
բազում ինչ և ազգի ազգի խօսս.

Դ. Բարբառային ձևեր

Պատառիկ

ՎԱՍՆ ՇՆԱՄՈՅՆ ԵՒ ԳԹՈՅՆ  
ՁՈՒՐՆ ՈՐ Ի ՎԻՄԷՆ ԽՈՍԵՅԱԻ  
ԱՆՈՇՈՒԹԵԱՆ

Տպագիր

Վասն խնամոյն և գթոյն.  
չուրն որ ի վիմէն հոսեցաւ.  
անուշութեան.

Հետաքրքրական է թ. դարում գրված այս պատառիկներում խ տառի տեղ Ե-ի և Ե-ի տեղ խ տառի օգտագործումը, որը բարբառային հնչման արդյունք պետք է համարել: Ներկայումս էլ այն առկա է փոքր Ասիայի, Բուլղարիայի և այլ վայրերում ապրող հայերի խոսակցական լեզվում:

Բարբառային ազդեցություն պետք է համարել նաև պատառիկի ԱՆՈՇՈՒԹԵԱՆ ձևը փոխանակ անուշուրեան: Ու հնչման փոխարեն ո-ի գործածությունը հանդիպել ենք նաև Մատենադարանի Եղիշեի պատմության պատառիկներից մեկում, որտեղ կա ՅՈՇ ԱՌՆԵԼ ձևը, փոխանակ յուշ առնել-ու:

Ե. Անձնանունների տարբերություններ

Այս շարքի գրվածներից եթե մի մասը արդյունք է գրչի սխալների, ապա հետաքրքրարական պետք է համարել Սաւոդ անվան Շաւոդ ասորական ձևը:

Զ. Ուղղագրական տարբերություններ

Պատառիկում հապավված է նախընթաց ը տառը.

Օրինակ՝ ԶՆԹԱՅՍՆ, ԶՆԹԵՐՅԱԻՂՍԴ, ԶՆԿԵՐՆ:

Վերոհիշյալ հապավումը հատուկ է նաև պատառիկին ժամանակակից Լադարյան Ավետարանին. Օրինակ՝ ՅՆԹՐԻՍ, ԶՆԿԵՐ, ՅՆԾԱՅՍՆ ևն: Ինչպես նաև Վիեննայում պահվող Ազաթանգեղոսի կրկնագրին (ՅՆԹՐԻՍ, ՅՆՔԵԱՆ):

Հապավված է Ե տառը. օրինակ, բոլոր տեղերում գրված է ՀՐՇՏԱԿ, ՀՐՇՏԱԿԱՆ, ՀՐՇՏԱԿԱՅ: Այսպես է նաև Վենետիկում պահվող Մլքե թագուհու Ավետարանում (902 թ.):

Հապավիված է չ տառը, երբեմն բառի սկզբում և երբեմն էլ վերջում:  
Օրինակ. ԱԶՈՂՈՒԹԻՒՆՆ, կամ ԻՆՆԱՄԱՍԵԱ, ԲԱԶՄԱՄԵԱ, Ի ՎԵՐԱ և  
այլն: Հաճախ օգտագործված է և փոխանակ է-ի.

ԵԹԵ, ԹԵՆ, ԵԻՐ, ԵՄԱՆՈՒԷՂ, ԹԵՊԵՏ, ՉԵ, ԿԱՐԾԵԻՆ, ԴՆԵԻՆ և այլն:

Լազարյան Ավետարանը ևս նման է վերոհիշյալին, բայց միայն մի տե-  
ղում (էջ 37ա) եթե-ն տողադարձի ժամանակ գրված է եթ-է ձևով:

Պատառիկում երբեմն Ե-ի տեղ գրված է է. Օր. էՐՈՒՍԱՂԵՄԱՅԻ, էՍԱՅԻ,  
նման մի ձև կա նաև Երուսաղեմի Զ-է դդ. մոզայիկ արձանագրությունում,  
որտեղ գրված է «էՍԱՅԻ»:

Լ-ի տեղ հաճախ գրված է ղ. օրինակ, ԱՅՂ, ԱՅՂՈՎՔՆ, ԳԱՅՂՈՅ, ՓԻՂԻ-  
ՍՈՓԱՅԻՅՆ, ԴԱՆԻԷՂ, ՓԻՂԻՊՊՈՍ, ԵԶԵԿԻԷՂ ևն:

Ի-ի տեղ գրված է և. ԱՂԲԵԻՐ, ԱՌԵԻԾՈՒՅ, սակայն կան նաև ԵՐԿԻԷՂ,  
ԻԻՐԱՔԱՆԶԻԻՐ ձևերը, և այլն:

Օ-ի տեղ ամենուրեք գրված է ա. ԶԱԻՐՈՒԹԵԱՆ, ՄՏԱԻՔ, ԽԱԻՍԻՆ, ԱԻ-  
ՐԻՆԱԿ և այլն:

### է. Պատառիկի կետադրությունը.

Նախնական ձևով ամենուրեք օգտագործված է քառակուսի միջակետը,  
երբեմն նա ունի նաև ստորակետի ձև: Միջակետը այստեղ ևս, նման Լազար-  
յան Ավետարանի, գրված է հաճախ ստորակետի, բութի և վերջակետի տեղ:  
Պատառիկում իսպառ բացակայում են նաև շակերտները, որոնք սակայն առա-  
տորեն գործածված են Լազարյան Ավետարանում: Այստեղ բացի միջակետից,  
երբեմն նաև ստորակետից ու պատվի նշանից այլ տիպի կետադրական, ինչ-  
պես նաև շեշտադրական նշանների գոյություն չունեն: Միջակետը գրված է  
տողի մեջտեղում, իսկ Լազարյանում և՛ տողի մեջտեղում, և՛ տողի վերևի  
ծայրում:

Տողադարձ.— Ինչպես հնագույն, այնպես էլ ավելի ուշ ժամանակներում  
գրված ձեռագրերում գոյություն չի ունեցել տողադարձի միասնական ճշ-  
գրիտ սիստեմ: Պատառիկում ևս հաճախ տողադարձի ժամանակ վանկաբա-  
ժանումը որևէ սիստեմի չի ենթարկված այսպես՝ օրինակ. ՄԵՂԱԴ-ԻՐ ԹԵ-  
ՊԵ-Տ, ԿՏ-ԱԿԱՐԱՆՍ, ԴԱՏԱԻ-ՈՐՆ, ԶՆ-ՈՅՆ, և այլն:

Ինչպես հնագույն ձեռագրերում, այստեղ ևս բացակայում է տողադարձի  
համար գրվող ենթամնա նշանը:

\* \*  
\*

Կյուրեղի նորահայտ բեկորները խիստ արժեքավոր են հատկապես հնա-  
գրագիտության տեսակետից, ուստի անդրադառնանք նրանց հնագրական  
առանձնահատկություններին:

Ա. Պատվագրություն.— նման Լազարյան Ավետարանի, այստեղ էլ հա-  
պավիված ենք գտնում միայն վեց հետևյալ բառերը.

Աստուած (ԱԾ, ԱՅ, ԱԾՍ, ՅԱՅ, ԱԾՈՒԹԵԱՆՆ)

Յիսուս (ՅՍ, ՅԻ)

Քրիստոս (ՔՍ, ՔԷ, ՔԻ, ՔՍՏՈՆԵԻՅ)

Տէր (ՏՐ, ՏԷ, ՏՆ, ՏՐԷ)

Երուսաղէմ (ՅէՄ, ՅէՄԻՆ, էՄԱՑԻ)

Իսրայէլ (ԻՂԻ)

Կյուրեղի № 367 պատառիկում Ա տառը մեկ անգամ վերևից և ներքևից պատիվ է առել, նմանվելով Լազարյան Ավետարանի լուսանցքներում իբրև թվահամար գրված տառերին: Պատվով գրված Ա տառն այստեղ նշանակում է «առաջին»:

Պատվագրության կանոններից գրիչը մի տեղ շեղվել է: Պատառիկներից մեկում (№ 9841 ձեռագրի Ա պահպանակ, էջ 1բ—2-րդ սյունակ տող 4) ՔՐՈՏՈՆԵՆԻՅ-ի տեղ գրված է ՔՐԻՍՏՈՆԵՆԻՅ:

Բ. Փակագիր.— Փակագրերը նույնքան հին են, որքան մեր տառերը և մեծ մասամբ օգտագործվել են վիմական արձանագրություններում, տեղ խնայելու նպատակով: Ամենահին փակագրերը օգտագործվել են Հոսիփոսիմեի տառարի 618 թ. արձանագրության մեջ:

Ուսումնասիրվող ներկա պատառիկներից մեկում (№ 4812 ձեռագրի Գ պահպանակ, էջ 1բ—2-րդ սյունակ, տող 8) ԳԱԼՍՏԵԱՆՆ քառի նախավերջի Ա տառի առաջին գծի վրա փակագրով տրված է նաև Ն տառը: Եթե այս գրչի սխալ արդյունք չէ, այդ դեպքում հայերեն գրչագրերի մեջ բառամիջում օգտագործված մեզ ծանոթ հնագույն փակագիրն է:

Գ. Մեծատառեր.— Պատառիկի մեծատառերը գրված են մեսրոպյան բոլորագիծ երկաթագրով և շատ նման են Լազարյան Ավետարանի մեծատառերին: Այս կապակցութեամբ մենք ուզում ենք անել մի դիտողություն. ընդհանրապես տիրում է այն կարծիքը, որ մեսրոպյան ուղղագիծ երկաթագրով գրված ձեռագրերի մեծատառերը միշտ լինում են մեսրոպյան բոլորագիծ երկաթագրով. այս ճիշտ լինելով հանդերձ կան դեպքեր, երբ գլխատառը նույնպես գրված է լինում մեսրոպյան ուղղագիծ երկաթագրով. այդ շարքից պետք է նշել Գրիգոր Նյուսացու 973 թ. արտագրված ձեռագրի հիշատակարանը, որտեղ օգտագործված է նաև մեսրոպյան ուղղագիծով գրված մեծատառ: Մեր բեկորներում այբուբենից միայն 11 տառեր կան զործածված իբրև մեծատառ:

Պատառիկներում 45 անգամ մեծատառ է օգտագործված, որոնցից 20-ը նոր տողի սկզբում, իսկ մեծ մասը (25 հատը)՝ նոր պարբերության սկզբում:

Ուշագրավ է այն, որ մեր բոլոր հնագույն ձեռագիր ավետարաններում մեծատառերը ամենուրեք գրված են նոր տողից և ընդհանուր տողաշարքից կիսով չափ դուրս: Մեր պատառիկներում, սակայն, գլխատառերի հանդիպում ենք բառերի տողամիջում, բառերի միջև գրված կետից (այն ժամանակվա վերջակետ) հետո: Պատառիկի մեջ մեծատառի զործածման այդ զարտուղի ձևը մենք շինք կարող գրչի քմահաճույքի արդյունք համարել, քանի որ նման դեպքեր, որոնք ցարդ վրիպել են հայ հնագրագետների մեծ մասի ուշագրությունից, գտնում ենք նաև մեր հնագույն ձեռագրերում ու պատառիկներում: Նման երևույթի հանդիպում ենք Լազարյան և Փղոսկրյա կազմով (գրված 989 թ.) ավետարանների սկզբի Եվսեբիոսի առ Կարպիանոս թղթում, 973 թ. գրված Գր. Նյուսացու Երզոց երգոյն մեկնության ձեռագրի և 974 թ. Ծուղրութի Ավետարանի հիշատակարաններում, ինչպիս նաև Հաճախապատումի, Եղիշեի,

Բարսեղ Կեսարացու հնագույն պատառիկներում, Վիեննայում պահվող Ազաթանգեղոսի կրկնագրում և այլն: Թվարկված ձեռագրերը մեսրոպյան ուղղագիծ երկաթագրով գրված ձեռագրեր են, իսկ մեսրոպյան բոլորագիծ երկաթագրով գրված մեր հնագույն ավետարանների բնագրերում՝ ամենուրեք մեծատառը միայն նոր տողից է դրված: Այստեղից էլ պետք է եզրակացնել, որ մեծատառի տողամիջում օգտագործումը հատուկ պետք է համարել մեսրոպյան ուղղագիծ երկաթագրով գրված ձեռագրերին:

Դ. Կյուրեղի պատառիկների և Լազարյան Ավետարանի տառաձևերի համեմատությունը. Չնայած Կյուրեղ Երուսաղեմացու պատառիկները գրված են մեսրոպյան ուղղագիծ երկաթագրով, այնուամենայնիվ նրա տառերը շատ բանով առնչվում են իրենց ժամանակակից, 887 թ. ընդօրինակված, Լազարյան Ավետարանի տառաձևերին (գրված է մեսրոպյան բոլորագիծ երկաթագրով): Ընդհանուր նմանությունների մասին խոսելն ավելորդ համարելով, կանգ ենք առնելու միայն երկու ձեռագրերում իրարից թեկուզ մասամբ տարբերվող տառաձևերի վրա:

Պատառիկում Ա տառի կողքի ելունը ավելի փոքր է, քան Լազարյան Ավետարանինը:

Գ-ի գլուխը ավելի փոքր է և տափակ:

Դ-ի առաջին գիծը հաճախ ավելի կարճ և կոր է, իսկ աջակողմյան ներքև հակված գիծը ավելի վերևից է դրված:

Ե-ի մեջտեղի գծիկը այստեղ ուղիղ է, իսկ Լազարյանում մասամբ դեպի վերև է բարձրանում:

Է-ի ներքևի գծիկը ուղիղ է, իսկ Լազարյանի մոտ քաջվածքը դեպի ներքև է թեքված:

Ը-ի ներքևի հորիզոնական գիծը ավելի ուղիղ է, իսկ Լազարյանում թեք է և հակված է դեպի ներքև:

Ժ-ի գլուխը ավելի տարածված է ու նեղ:

Լ-ի ներքևի հորիզոնական գիծը ևս այստեղ ավելի ուղիղ է, իսկ Լազարյանում թեք է և հակված է դեպի ներքև:

Կ-ն նման է Լազարյանին, սակայն որոշ տեղեր դեպի ներքև իջնող գիծը շատ ավելի կարճ է և ունի մոտավորապես Ս-ի ձև:

Զ-ի գլխից ներքև իջնող գիծը դեպի վայր է թեքվում, իսկ Լազարյանում ուղիղ առաջ է մղվում, իսկ ներքևի գծի ավարտը մանգաղաձև է:

Ղ-ի ներքևի հորիզոնական գիծը նման Ը-ին և Լ-ին, դարձյալ ավելի ուղիղ է (Լազարյանում դեպի ներքև է թեքված):

Ճ-ի ներքևի փակ գլուխը ավելի մեծ է:

Յ-ի մեջքի գիծը ուղիղ է, իսկ Լազարյանում այն դեպի ներքև է թեքված:

Շ-ի գլխիկը փոքր եռանկյունի է կազմում, իսկ Լազարյանում ավելի մեծ եռանկյունի է կազմում:

Չ-ի մանգաղի փակման գծիկը երկու հաստ կետից է, իսկ Լազարյանում այդ գծիկը ուղղագիծ է և երբեմն նաև թեք:

Պ-ի բոլոր գծերն էլ ուղղահայաց վերևից ներքև են իջնում, իսկ Լազարյանի մոտ կա երկու տիպի Պ. առաջինի գլուխը երկու ու-երի միասնություն է, իսկ երկրորդ Պ-ի գծերը մոտ են պատառիկի Պ-ին. սակայն դեպի ներքև իջնող սկզբի երկու գծերը ժանիքաձև դեպի աջ են թեքված:

Զ-ն փոքր և պարզ է, իսկ լազարյանում ավելի մեծ է և զլխին թեք մի գծով:

Ռ-ի կողքի դեպի վայր թեքված գծիկը զետեղված է վերևում, իսկ լազարյանի մոտ այդ նույն թեք գծիկը մեջտեղից է:

Վ-ի վերևի առաջին գիծը պատառիկում հաճախ հավասար է վերևի երկրորդ գծին, երբեմն առաջին գիծը նույնիսկ ավելի բարձր է, իսկ երբեմն էլ մի քիչ ավելի ցածր է, քան երկրորդ գիծը:

Ճ-ի մեջտեղի գիծը եթե այստեղ ուղիղ առաջ է գնում, ապա լազարյանի մոտ, նման Յ տառի այդ գիծը դեպի ներքև է թեքված:

Մնացյալ 16 տառերը նշելու արժանի տարբերություններ չունեն, բացի այն բանից, որ այստեղ տառերը ուղղագիծ են, իսկ լազարյանում բոլորագիծ:

Վերահիշյալ համեմատությունից էլ երևում է, որ թ դարում գրված, սակայն տարբեր ձևի երկաթագրեր օգտագործված մեր երկու ձեռագրերում տառերի մեծ մասը նման են միմյանց, իսկ մի փոքր մասի տարբերություններն էլ մասնակի են: Եղած տարբերությունների մեծ մասը հետևանք է իրարից տարբեր տեսակի երկաթագրերով գրված լինելուն, որոշ տարբերություններ էլ արդյունք են գրիչների անձնական ճաշակի, ունակության, ինչպես նաև գրչության հին ավանդությունների պահպանման: Մի խոսքով՝ նրանց հնագրական տվյալների ուսումնասիրումը ևս սերտ կապ է ստեղծում արդեն իսկ իրար ժամանակակից հնագրական այս երկու հուշարձանների միջև:

Անհրաժեշտ ենք գտնում ասել, որ տառաձևերի նույնություն երբեմն պատահում է նաև իրարից մի քանի դարով ուշ գրված ձեռագրերում:

Այստեղից էլ հնարավոր է եզրակացնել, որ անթվական ձեռագրերի կամ պատառիկների ժամանակի որոշման հարցում շպետք է ելնել սոսկ տառաձևերի մանր տարբերություններից, այլ տվյալ հուշարձանի նաև մնացյալ հնագրական և այլ տիպի հանդամանքներից, այսինքն՝ նաև մագաղաթի որակից, հապավումներից, կետադրական և շեշտադրական նշաններից, լիզվական և տղղադրական առանձնատկություններից, մանրանկարչությունից, բնագրագիտական տարբերություններից, իսկ ավելի ուշ շրջանի ձեռագրերի համար նաև թուսադրոշմներից և այլն, և այլն:

Համենայն դեպս մեր հնագույն երկու հնագրական հուշարձանների՝ Կյուրեղի պատառիկների և լազարյան Ավետարանի ունեցած տարբեր տառատեսակների համեմատությունը գործնական նշանակություն ունի, քանի որ նրանք երկուսն էլ ստեղծվել են թ դարում և հետևաբար հանդիսանում են թ դարի հայ գրչության հնագույն և ամենահավաստի վկաները: Նրանց ուսումնասիրումը մեծապես կնպաստի երկաթագրով գրված մեր անթվակիր ձեռագրերի և պատառիկների ժամանակը մոտավորապես որոշելու գործին (տե՛ս այդ երկու հուշարձանների սովորական տառերի և մեծատառերի համեմատական տախտակը բնական մեծությամբ, 232—233 էջերում):

Ե. Բուն և միջին մեսրոպյան կոչված երկաթագրերի գործածման վաղեմիության ու այդ անվանումների փոփոխման հարցերը և Կյուրեղի պատառիկների գիտական արժեքը. Կյուրեղի՝ մեր կողմից քննարկվող պատառիկները հատկապես խոշոր նշանակություն ունեն հայկական գրերի զարգացման պատմությունը ուսումնասիրելու տեսակետից: Շատ ճիշտ է նկատել այդ հայ հնագրության բազմավաստակ վարպետ Գ. Հովսեփյանը՝ իր կողմից Կյուրեղի





ՄԵՃԱՏԱՌ

Կյուրեղ	Հայասրյանն	Կյուրեղ	Հայասրյանն
Ա	Ա	Բ	Բ
Բ	Բ	Գ	Գ
Գ	Գ	Դ	Դ
Դ	Դ	Ե	Ե
Ե	Ե	Ն	Ն
Ն	Ն	Շ	Շ

երկու թերթանոց բեկորները ուսումնասիրելու կապակցությամբ. «Նրա կարե-վորագույն արժեքը հնագրական է,— գրում է նա,— որպես հայ գրչության թվականով հայտնի ամենահին և հազվագյուտ մնացորդներից մեկը»<sup>1</sup>։ Գ. Հովսեփյանը այստեղ նկատի ունի հիշյալ պատառիկների մեսրոպյան ուղղագիծ երկաթագրով գրված լինելու հանգամանքը։

Կյուրեղի պատառիկները իրենց հնությամբ մի կարևոր փաստ էլ են ավելացնում հերքելու համար հնագրագետներից ոմանց այն կարծիքը, որոնք նախապատվություն տալով բուն մեսրոպյան երկաթագրին կամ մեսրոպյան բոլորագիծ երկաթագրին, կարծել են, թե միջին մեսրոպյան երկաթագիրը կամ մեսրոպյան ուղղագիծ և փոքր երկաթագրերը ստեղծվել են ավելի ուշ, ծագում առնելով՝ մեսրոպյան բոլորագիծ երկաթագրից։

Մեսրոպյան ուղղագիծ երկաթագրով նմուշների մենք հանդիպում ենք նաև վաղ ժամանակներում գրված վիմագիր արձանագրություններում։ Դեռևս 783 թ. Թալինում քանդակված Ուխտատուրի արձանագրության մեջ կան օգտագործված նաև մեսրոպյան ուղղագիծ տառաձևեր<sup>2</sup>։ Ըստ Գ. Հովսեփյանի Օձունի և Պտղնիի Զ դարի պատկանող արձանագրությունները ևս գրված են մեսրոպյան ուղղագիծ երկաթագրով<sup>3</sup>։ Պտղնիի արձանագրությունը վերջերս մենք առիթ ենք ունեցել ուսումնասիրելու։ Այնտեղ փորագրված «ՄԱՆՈՒՂ ԱՄԱՏՈՒՆԵԱՅ ՏՆԷՐ» եռատող արձանագրությունում շատ պարզ կերպով նշմարվում է, որ քանդակողը, դեռևս Զ դարում, ծանոթ է եղել երկաթագրի երկու տեսակներին էլ, բացի ճնշող մեծամասնություն կազմող մեսրոպյան բոլորագիծ երկաթագրերին՝ այնտեղ է, Ղ, Բ, Ե և դարձյալ է տառերը փորագրված են մեսրոպյան ուղղագիծ երկաթագրով։

Մեսրոպյան ուղղագիծ երկաթագրով են գրված նաև Լազարյան Ավետարանի սկզբի Եվսեբիոսի առ Կարպիանոս թուղթը, ինչպես նաև հնագույն կրկնագրերի և պատառիկների մի մասը։

Վերը բերված բոլոր փաստերը հաստատում են այն, որ ուղղագիծ երկաթագիրը, որպես տառաձև, գոյություն է ունեցել դեռ շատ վաղ ժամանակներում և, ծագելով մեսրոպյան բոլորագիծ երկաթագրի հետ միասին, զարգացել է զուգընթաց կերպով։ Դրա օգտին է խոսում նաև այն փաստը, որ մեզ մոտ, ինչպես վիմագիր արձանագրություններ քանդակողները, այնպես էլ հնագույն գրիչները, քնտելացած լինելով երկու գրատեսակների մեջ էլ, միևնույն գրվածքում հաճախ զուգընթացաբար օգտագործել են երկու տառաձևերն էլ։ Այդ է պատճառը, որ ինչպես տեսանք, մեզ հասել են խառն երկաթագրով գրված թե՛ վիմագիր, և թե՛ ձեռագիր գրվածքներ։

Երկաթագրերի երկու տարբեր տեսակների իրար ժամանակակից լինելը ապացուցված համարելուց հետո, այժմ մնում է վերանայել նաև երկար ժամանակ հայ հնագրության մեջ ընդունված երկաթագրերի պայմանական անվանումները։ Ավելի վաղ կարծված երկաթագրի տեսակը մինչև այժմ էլ կոչվում է բուն մեսրոպյան երկաթագիր կամ բոլորագիծ երկաթագիր, իսկ երկրորդ տեսակը՝ միջին մեսրոպյան երկաթագիր կամ ուղղագիծ երկաթագիր,

<sup>1</sup> Գ ա ռ ե գ ի ն կաթողիկոս, Իններորդ դարի..., էջ 41։

<sup>2</sup> Գ ա ռ ե գ ի ն Հ ո վ ս ե փ յ ա ն, Գրչութեան արուեստը հին հայոց մեջ, մասն Գ, Փարսէզ հայ հնագրութեան, տախտակ է, նկ. 11, Վաղարշապատ, 1913 թ.։

<sup>3</sup> Գ ա ռ ե գ ի ն կաթողիկոս, Իններորդ դարի..., էջ 54։

քանի որ վերջինս առաջացած է համարվել նախորդից: Այսպիսով բուն և միջին տառաձևերի բաժանելով հայկական երկաթագրերը, նախ՝ հնության տեսակետից անջրպետ է ստեղծվել նրանց միջև, իսկ երկրորդ՝ բանասերներից ոմանք «միջին մեսրոպյան երկաթագիր» ասելով, սխալմամբ հասկացել են նաև այսպես կոչված բուն մեսրոպյան տառաձևի միջին մեծություն ունեցող տառերը: Այստեղից էլ մենք առաջարկում ենք դեն նետել գիտականորեն իրենց ոչնչով չարդարացնող այդ անվանումները և ելնելով այդ տառաձևերի գծագրական հատկանիշներից և պահպանելով նաև հայ տառերի հանճարեղ ստեղծող Մեսրոպ Մաշտոցի անունը՝ առաջինը կոչել մեսրոպյան բոլորագիծ երկաթագիր, իսկ երկրորդը՝ մեսրոպյան ուղղագիծ երկաթագիր:

Հայ հնագրության մասնագետներից ոմանց մոտ տիրում է նաև այն կարծիքը, որ մեսրոպյան բոլորագիծ երկաթագիրը օգտագործվել է մեծ մասամբ պաշտամունքային կանոնական գրքերի՝ աստվածաշնչերի ու ավետարանների համար, իսկ մեսրոպյան ուղղագիծ երկաթագիրը և մեսրոպյան մանր երկաթագիրը՝ պատմական-մեկնողական-փիլիսոփայական-աստվածաբանական գործերի համար:

Հայկական հնագույն տառաձևերի վերահիշյալ բաժանումը հիմնականում ճիշտ լինելով հանդերձ, որոշ ուղղման կարիք ունի: Իսկապես որ մեսրոպյան ուղղագիծ երկաթագրով են գրված մեր պատմա-մեկնողական բոլոր տիպի հնագույն ձեռագրերն ու պատառիկները: Կյուրեղի ներկա հնագույն պատառիկները ևս ապացուցում են այդ: Մինչև Կյուրեղի քննարկվող բեկորների հայտնաբերումը, մեսրոպյան ուղղագիծ երկաթագրով գրված հնագույն ամբողջական ձեռագիրը համարվում էր մեր Մատենադարանում պահվող Գրիգոր Նյուսացու «Մեկնութիւն երգոց երգոյն» գրչագիրը, ընդօրինակված 973 թվականին: Նույն տառաձևով են գրված նաև Մատենադարանի բոլոր պատմական բովանդակություն ունեցող պատառիկները, ինչպես նաև վիեննայում պահվող Ազաթանգեղոսի կրկնագիրը: Այս շարքում հավանաբար բացառություն պետք է համարել վերջերս մեր կողմից հայտնաբերված Ազաթանգեղոսի երկու փոքր բեկորները, որոնք ամենայն հավանականությամբ Ը—Թ դդ. զրշություն ունեն և, ի տարբերություն պատմական բովանդակություն ունեցող մյուս պատառիկների, գրված են մեսրոպյան բոլորագիծ երկաթագրով: Հնարավոր է սակայն, որ հիշյալ երկու բեկորները անցյալում Ճառընտիրի մասեր եղած լինեն, քանի որ նրանք բովանդակում են Ազաթանգեղոսի վերջում գտնվող Գրիգոր Լուսավորչի վարդապետության մի մասը, որից մեծ հատվածներ գտնվում են նաև Ճառընտիրներում, իսկ հնագույն Ճառընտիրները գրվել են մեծ մասամբ՝ դարձյալ մեսրոպյան բոլորագիծ երկաթագրով:

Սակայն առարկելի պետք է համարել հայ հնագրության մասնագետների մի մասի հայտնած այն տեսակետը, ըստ որի պաշտամունքային ձեռագրերը և հատկապես ավետարանները մինչև ԺԳ դարի սկիզբը բացարձակապես մեսրոպյան բոլորագիծ երկաթագրով են գրված եղել<sup>1</sup>:

Եթե նույնիսկ նկատի շունենանք այն հանգամանքը, որ մեսրոպյան բոլոր-

<sup>1</sup> Գրոթ. Կ. Ղաֆադարյանը այս կարգակցությամբ գրել է. «Առաջին ուղղագիծ երկաթագիր ավետարանը գրված է 1205 թվականին» (Մարգարյան ցուցակ, № 88), և կամ «Մեզ հայտնի բոլոր ավետարանները մինչև 1205 թվականն առանց բացառության գրված են բոլորաձև երկաթագրով» (Կ ա Ր Ո Ղ ա Ֆ ա ղ ա Ր Յ Ա Ն, Հայկական գրի սկզբնական տեսակները, Երևան, 1939 թ., էջ 26 և 48): Գրեթե նույն տեսակետն է պաշտպանել նաև պրոֆ. Ա. Արբահամյանը. նրա կողմից մատ-



Մենք հուսով ենք, որ ինչպես մեր, այնպես էլ արտասահմանյան ձեռագրատներում պահվող ձեռագիր պատճառիկներն ու ձեռագրերի պահպանակները մանրագնին ուսումնասիրելու դեպքում կարելի պիտի լինի հայտնաբերել Կյուրեղ Երուսաղեմացու «Կոչումն ընծայութեան» կորած ձեռագրի այլ բեկորներ ևս, ինչպես նաև հնագույն ոչնչացած ձեռագրերի թանկարժեք նոր հատակոտորներ, որոնք, անտարակույս, նոր լույս կսփռեն հայ հնագրութեան մշուշապատ պատմության վրա:

Մինչ այդ մենք անհրաժեշտ ենք դանում առաջարկել, որ ի մի հավաքվեն ինչպես Մատենադարանի պատճառիկների հավաքածուում, այնպես էլ ձեռագրերին կարված պահպանակների մեջ վերջին տարիներս հայտնաբերված Կյուրեղ Երուսաղեմացու 17 թերթանոց բեկորները:

Կյուրեղ Երուսաղեմացու հաղարահարյուրամյա ձեռագրի աստանդական բեկորների հավաքածուն անհրաժեշտ է զետեղել մեր թվակիր հնագույն ձեռագրի՝ հաղարյան Ավետարանի կողքին, որպես նրանից ամենայն հավանականութեամբ մի քանի տարով ավելի հին ձեռագրական հուշարձան:

С. КОЛАНДЖЯН

## НОВООТКРЫТЫЕ ДРЕВНИЕ ФРАГМЕНТЫ «ПОУЧЕНИЙ» КИРИЛЛА ИЕРУСАЛИМСКОГО

### Резюме

В собрании фрагментов рукописей Матенадарана, а также среди подшитых к рукописям защитных листов, автору, после долгих поисков, удалось обнаружить отрывки рукописи «Поучений» труда греческого ученого IV в. Кирилла Иерусалимского (переведен на армянский язык в V в.), которая была переписана в IX в. (между 873—892 гг.).

Первый из обнаруженных отрывков (2 листа) был привезен из музея, основанного академиком Н. Марром в Ани; второй (4 л.) — в прошлом был подшит к краям рукописи, привезенной в Матенадаран из Варага (сама рукопись была переписана в Васпуракане в XV в.), третий (1 л.) долгое время хранился в Матенадаране, четвертый (4 л.) удалось обнаружить в недавно полученной из Москвы рукописи (переписана в 1452 г., в области Мокк). Фрагменты древнейших рукописей (4 л.) Кирилла обнаружены также в рукописи от 1304 г., написанной в Васпуракане, где они также были использованы в качестве защитных листов (рукопись эта была привезена в 1916 г. из Ахтамара).

Все вышеупомянутые отрывки и защитные листы написаны одним почерком и в свое время составляли одну рукопись вместе с теми двумя защитными листами, которые в 1946 году стали предметом исследования известного филолога Г. Овсепяна.

Таким образом, общее число обнаруженных фрагментов труда Кирилла составляет 17 листов.

Как видно из небольшого отрывка памятной записи, сохранившегося на одном из фрагментов, уничтоженная рукопись Кирилла была написана по заказу владельца Васпураканского района Андзевацаец Гургена Арцруни и его сына Атома. Из других рукописей нам известно, что по заказу упомянутых личностей в 873 г. с сирийского языка было переведено на армянский «Житие Абдулмсеха».

Ценность новооткрытых фрагментов возрастает в особенности потому, что они представляют собой отрывки рукописи, созданной, по всей вероятности, на несколько лет раньше известной миру древнейшей датированной армянской рукописи — Лазаревского Евангелия, переписанного в 887 г.

В настоящей статье исследованы все новооткрытые фрагменты. Выясняется, что в начале XVI в. рукопись Кирилла прекратила свое существование как рукописная единица, а ее остатки в 1580 годах попали в качестве переплетного материала к бродячему переплетчику Филиппосу, который и подшил эти фрагменты в качестве защитных листов к заново переплетенным им 4-ем рукописям.

Автор статьи особо остановился на языковых особенностях фрагментов и, в частности, на чрезвычайно важном их палеографическом значении. Особо обосновывается также мнение об одновременном возникновении двух древнейших видов армянских букв (*միրոյցան րոյրա՜րժ երկաթազրր* и *միրոյցան ուղղա՜րժ երկաթազրր*).

Дальнейшее исследование палеографических особенностей памятников IX века будет иметь практическое значение для определения времени древнейших армянских недатированных фрагментов и рукописей.

Т. ИЗМАЙЛОВА

## ХУДОЖЕСТВЕННОЕ УБРАНСТВО АРМЯНСКОЙ РУКОПИСИ 1053 Г.

Армянская рукопись 1053 г. Научно-исследовательского института древних рукописей — «Матенадарана» при Совете Министров Армянской ССР, хранящаяся под № 3793, представляет собой четвероевангелие в виде кодекса, написанного на пергамене, размером 39×30 см. В рукописи насчитывается 39 тетрадей, сшитых по восемь листов, и одна, предшествующая тексту, из которой сохранились три листа (два хорана и миниатюра с изображением Матфея). Первый, четвертый, пятый и шестой листы восьмой тетради, насчитывающей шесть листов, добавлены позднее и представляют собой палимпсест. 18-я тетрадь состоит из семи листов, 20-я — из шести. Нумерация тетрадей дана армянскими буквами в порядке алфавита, а не в числовом их значении. С 19-ой тетради (с евангелия от Луки) нумерация двойная — армянскими и греческими буквами. Всего в рукописи 310 листов.

Текст написан в два столбца уставным письмом — крупным еркатагиром, коричневыми чернилами. Рукопись иллюстрирована; сохранилось два хорана, четыре лицевые миниатюры с изображением евангелистов Матфея, Марка, Луки и Иоанна. Начальные листы каждого евангелия украшены заставкой и выделенной большими размерами художественно оформленной буквой, сочетающейся с символами евангелистов — человеческой головой, дважды повторенной протомой льва, крылатым быком и орлом. Заглавные буквы в тексте двух типов — одни оформлены подобно инициалам титульного листа, другие, выделенные размерами, сочетаются с расположенными рядом с ним разнообразными по своей композиции пальметками.

Сохранность рукописи хорошая. Позолота и, местами, краски стерлись и отпали. Это относится, главным образом, к лицевой миниатюре и убранству титульного листа евангелия от Иоанна.

Переплет евангелия кожаный с тиснением, не современный рукописи, так же как и набойка на обратных сторонах досок, быть может, относится ко времени возобновления рукописи в XIII веке.

В рукописи, на странице 310 б, имеется памятная запись — хишатакаран писца, содержащий дату ее написания. Приводим текст и перевод:



Փառ(ք) աստուծոյ-հաւր աստուծոյ-որդոյ աստուծոյ-հոգւոյ սրբոյ յաւիտեանս. ամէն.

Գրեցաւ սուրբ աւետարանս ի թուականութեան Հայոց ՇԲ ամի... (502+551=1053) половина строки уничтожена... ծնին ի վանս Սանդղկայ մերձ գոյով խաչակրան հաւր Ստեփաննոսի, ձեռամբ Յովաննէսի նուաստ եւ անարժան երեցու եւ յետին գրչի .արդ աղաչեմ վասն սիրոյն Քրիստոսի յիշել յաղաթս գրագմամեղ գրիչս եւ դճնաւոյս իմ եւ դեղբարս եւ տէր Յիսուս յիշողացդ եւ յիշեցելոցդ առ հասարակ ողորմեացի աղաթիւք ամենայն սրբոց. ամէն<sup>1</sup>.

«Слава богу, богу отцу, богу сыну (и) святому духу во веки. Аминь. Написал это святое евангелие в году армянского летоисчисления 502 (502+551=1053)... в монастыре Сандухк близ пребывания крестовенного отца Стефанноса, руками Ованеса жалкого и недостойного священника и последнего писца. Итак, умоляю ради любви к Христу помянуть в молитвах меня, многогрешного писца и родителей моих и братьев, и Господь Иисус всех поминающих и поминаемых пусть помилует молитвами всех святых. Аминь».

Запись священника Аствацатура Тандзутского, на стр. 144 а, о возобновлении евангелия, относящаяся к 1587 г., содержит указание на то, что оно было написано 534 года тому назад, т. е. в 1053 г.

После каждого евангелия следуют записи, в которых поминается имя писца, а также сообщается о лицах, принимавших кроме него участие в создании и украшении рукописи.

После евангелия от Матфея запись гласит:

1. Ած. ողորմեա Յովաննէսի մ—  
եղաւորի գրողի գրոյս եւ ծնաւ—  
դաց նորա. ամէն.

«Бог помилуй Ованеса, грешного писца сего писания и родителей его. Аминь» (стр. 88 б).

Последнего листа евангелия от Марка недостает.

После евангелия от Луки:

2. Ած. ողորմեա Յովաննէսի մեղաւորի գրողի  
գրոյս եւ ծնաւոցս նորա.  
տոբրմ: եւ իոերիս Ա. Ծ: Ա::: . Ծ::

«Бог помилуй Ованеса, грешного писца сего писания и родителей его», Затем, тайнописью: «Давида и Марема. Аминь».

За ней (стр. 239 а):

3. Ած. ողորմեա Յովաննէսի Սողկին  
որ զսկեղեղն կազմեաց. ամէն.

«Бог помилуй Ованеса позолотчика, который составил золотую краску. Аминь».

<sup>1</sup> Хишатакаран издан: Գարեգին Ա. Կաթողիկոս, Յիշատակարանք ձեռագրաց, Ա., Ան-Քիլիսա, 1951. § 105:




Рис. 1. Евангелист Марк. Рукопись Матенадарана № 3793 (1053 г.)



После евангелия от Иоанна:

4. Ած. սղորմեա Մովսէսի որ զմաղաղաթն  
զործեաց. ամէն.

«Бог, помилуй Мовсеса, который делал пергамен. Аминь».

5. Ած. սղորմեա Դաւիթի որ սպառնարեաց. ամէն.

«Бог, помилуй Давида, который прислуживал. Аминь».

6. Սղորմեա Թորոսի ետղրակաչ, որ զսպեղեղնն զսպեաց. ամէն.

«Помилуй Тороса Хахбакского, который изготовил золотую краску. Аминь».

Приведенные надписи, в которых чаще всего повторяется имя писца Ованеса, при отсутствии имени художника, позволяет думать, что ему принадлежат также миниатюры и орнаментальные композиции, украшающие евангелие. Это предположение подтверждается и тем, что в записях отдельно упомянуты все мастера, принимавшие участие в создании евангелия — Мовсес, выделявавший пергамен, Ованес и Торос, составлявшие золотую краску, прислуживавший Давид, быть может, помогавший Ованесу-писцу. При наличии такого детального перечисления имен различных мастеров, трудно предположить, что художник не был бы упомянут, поэтому мы отождествляем его с писцом Ованесом.

Наиболее трудным является решение вопроса о месте написания рукописи. Монастырь, название которого «Сандухк» — в буквальном смысле может быть переведено словом «лестница», до сих пор неизвестен. Приведем, однако, некоторые данные, имеющие значение для определения скриптория, в котором было создано это замечательное четвероевангелие, представляющее одну из значительных школ армянской миниатюрной живописи XI века.

Л. А. Дурново кратко касается евангелия 1053 г., «написанного в монастыре Сандухк, местоположение которого предполагается» — как она пишет — «в самом городе Ани или его окрестностях»<sup>1</sup>. Это предположение может быть, в известной мере, обосновано косвенными данными. Прежде всего, следует отметить значительную специализацию лиц, участвовавших в создании рукописи, что скорее всего говорит о влиянии городской среды, (хотя, вероятнее всего, мастерами являлись монахи).

Об этом же говорят и имена свидетелей, подписавших более поздние дарственные записи этого евангелия — это священники,

<sup>1</sup> Л. А. Дурново. Краткая история древнеармянской живописи. Ереван, 1957, стр. 22.

представители феодальной знати, а наряду с ними ремесленник. Так, запись 1325 г.— наряду с другими свидетельствует также красильщик (*Սկր ներդրարի վի.*) В хиштакаране от 1201 г. упоминается об обновлении евангелия, в котором принимал участие позолотчик Михаил.

В. Г. Хечумян обратил мое внимание на то, что в хишатакаране, относящемся к 1325 г., встречаются фамилии, характерные для анийских граждан, известных по надписям Ани и его округи. К ним относятся Аслан, внук парона Аветенца, сын парона Тга и Хагпак, сын парона Тга, очевидно, брат Аслана и внук Аветенца.

Достаточно вероятно, что эти лица являлись представителями того же рода, к которому принадлежал парон Сахмадин, сын Аветика (*Սահմանյ*), являвшийся градоначальником Ани (*Անիի քաղաքապետան իր*)<sup>1</sup>.

Род Аветенц, игравший видную роль в судьбах Ани конца XIII в., существовал, очевидно, и в первой четверти XIV столетия, на что указывают, в частности, записи представителей его в евангелии 1053 г.

Принимая во внимание, что такие драгоценные рукописи не только бережно хранились длительное время там, где они были написаны, или куда принесены были в дар, но и возвращались туда же в случае насильственного изъятия их во время войны, можно полагать, что местом происхождения евангелия был один из монастырских скрипториев, расположенных близ Ани.

Приведем еще одно свидетельство, которое также может быть использовано для подтверждения этого положения.

В одной из надписей Багнайра, относящейся к 1042 г., написанной во времена патриаршества владыки Петроса, армянского католикоса, и в царствование Гагика шаханшаха, сына Ашота, некий Григор Цагкан с сыновьями приносит в дар «на деньги купленные лавки, что напротив Васильевского рынка, в Багнайрский монастырь св. Богородицы, через посредство настоятеля — отца Стефанноса»<sup>2</sup>.

Если приносимый дар обличает во вкладчике анийца, то имя настоятеля монастыря — отца Стефанноса — заставляет вспомнить современную рукописи 1053 г. хишатакаран писца, в котором указывается, что евангелие было написано в монастыре Сандухк «близ пребывания крестоверного отца Стефанноса».

Даты Багнайрской надписи и записи писца нашего евангелия (1042 и 1053 гг.), позволяют предположить, что упомянутый в обоих случаях Стефаннос мог быть одним и тем же лицом и что, в таком случае, монастырь Сандухк находился неподалеку от Багнайра, т. е. в

<sup>1</sup> Հ. Ա. Կոչարյան, Հայոց տնտեսական պատմություն, հատոր Գ. Երևան, 1948, стр. 376.

<sup>2</sup> Н. Эмиц, Армянские надписи в Карсе, Ани и в окрестностях последнего. М., 1881, стр. 53—54.



2.

Рис. 2.

окрестностях Ани. Выше мы пытались обосновать это обстоятельство теми данными, которые дают нам более поздние хишатакараны евангелия 1053 г.

\* \* \*

Приступая к изучению убранства рукописи 1053 г., следует отметить, что она уже давно была поставлена в связь с хранящимся в Матенадаране Могнинским евангелием (рукопись № 7736)<sup>1</sup>, не имеющим даты, но по характеру оформления — хоранам, заглавным листам, изображениям евангелистов, очень близким к интересующей нас рукописи. Наличие лицевых миниатюр в евангелии Могни и отсутствие их в рукописи 1053 г. может быть объяснено тем, что в последнем случае они не дошли до наших дней. Могнинское евангелие датируется различно, в пределах от конца X до начала XII в.<sup>2</sup> По моему мнению, оно относится ко второй половине XI в., т. е. не предшествует нашей рукописи, а последует ей. Поэтому, в данном исследовании Могнинское евангелие, которое должно явиться предметом самостоятельной монографии, не привлекается.

К указанным выше двум рукописям примыкают и миниатюры неизвестного евангелия — четыре евангелиста и семь хоранов, воспроизведения которых были мной обнаружены в процессе работы над рукописью 1053 г. в архиве негативов Гарегина Овсепяна, хранящемся в Государственном историческом музее Армении<sup>3</sup>. Отличаясь разительным иконографическим сходством с аналогичными изображениями в евангелии 1053 г., они несколько дальше отстоят от евангелия Могни. Миниатюры этой неизвестной рукописи позволяют с еще большим основанием, чем до сих пор, выделить определенную школу или художественное направление армянской миниатюрной живописи XI в. Изучению ее особенностей на одном из памятников этой группы — евангелии 1053 г. — и посвящается данная работа.

**Миниатюры с изображениями евангелистов** — Евангелие 1053 г. содержит изображения четырех евангелистов — Матфея, Марка, Луки

<sup>1</sup> А. Н. Свирин, Миниатюра древней Армении. М.—Л., 1932, стр. 44, Р. Г. Драмбян, Армянская миниатюра и книжное искусство. В кн.: Очерки по истории искусства Армении. М.—Л., 1939, стр. 15; Л. А. Дурново, Краткая история древнеармянской живописи. Ереван, 1957, стр. 22.

<sup>2</sup> J. Baltrusaitis (*Art sumérien, atr roman*, Paris, 1934, стр. 85), датирует X в. Р. Г. Драмбян, Выставка изобразительного искусства АрмССР. (Каталог. М., 1939, стр. 16)—XI в., А. Н. Свирин, (ук. соч., стр. 48) — началом XII в.; А. Sarkisian, (*Thèmes et motifs d'eneuminure et de décoration arméniennes et musulmanes*, *Ars Islamica* 6, 1939, стр. 71)—X в.; В. Н. Лазарев, — История Византийской живописи. Т. I, М., 1947, стр. 99) — второй половиной XI в.; Л. А. Дурново (Древнеармянская миниатюра. Ереван, 1952, пагинация отсутствует) — первой половиной XI в., та же датировка повторяется и в «Краткой истории армянской живописи», стр. 22.

<sup>3</sup> Рукопись неиздана. В дальнейшем я предполагаю обратиться к изучению обнаруженных миниатюр.



Рис. 3.



и Иоанна. Заключенные в рамки, каждый из них занимает целый лист в начале своего евангелия. Миниатюры современны рукописи.

Все евангелисты, за исключением стоящего Иоанна, изображенного с Прохором, представлены сидящими.

В миниатюрах господствует монументальная фигура евангелиста, представленная на архитектурном фоне. Здания, занимая значительное место в общей композиции, не превышают, однако, по своим размерам изображения человека. Для миниатюры, в целом, характерна некоторая условность и обобщенность изображения, а также цвета.

Черты общности, объединяющие миниатюры этого евангелия, не устраняют некоторых отличий в иконографии и стиле евангелистов, распадающихся на две группы. В одну из них, теснее связанную с собственной традицией, входят Марк (рис. 1) и Лука (рис. 2), в другую, в большей мере испытавшую на себе византийское влияние, — Матфей (рис. 3) и Иоанн (рис. 4).

Евангелисты первой группы представлены сидящими перед аналоем — Марк почти фронтально, с головой слегка повернутой вправо, Лука — в трехчетвертном повороте, также вправо. Евангелисты как будто обдумывают свой труд: перо зажато в руке, лицо выражает глубокую сосредоточенность и напряженность мысли. Около евангелистов, справа, находится армянская надпись под фигурным титлом, исполненная крупным еркатагиром (уставным письмом) *սր. Մարկոս* (святой Марк), *սր. Լուկաս* (святой Лука). Мужественные, с крупными чертами лики евангелистов исполнены лепкой. По охряной основе лоб, виски и глазные впадины даны зеленоватым тоном. Красная полоса на лбу и красные пятна румянца придают лицам еще большую рельефность и оживляют их. Шея моделирована тремя смежными полосами — белой, красной, зеленоватой. Переданные коричневым цветом волосы и борода, мягкий переход которой к лицу дан у Луки живописными средствами, дополняет облик евангелистов. Нимбы исполнены, как обычно, по розовому фону, что придает наложенному по нему золоту особую теплоту. Статичность и даже, в известной мере, статуарность несколько условно трактованных фигур сочетается с обильными и многообразными, как бы застывшими складками одежд, плавными или ломающимися под углом, а иногда образующими «ласточки хвосты». Глубокие и определенные контуры, исполненные в цвете ткани, не контрастируют с ней, что придает известную мягкость линии. Треугольные и веерообразные пробела, наложенные на просвечивающие сквозь них цветные плоскости одежд, служат характеристике объема. Монументальность фигур евангелистов подчеркнута в изображении Марка нижней ее частью, отличающейся особой устойчивостью. Спадающие, изломанные под углом боковые складки как бы опираются на горизонтальную линию подола. Это создает ощущение неподвижности и покоя, характерных также и для образа евангелиста Луки. Общему стилю миниатюры соответствуют и большие кроющие



Рис. 4.

поверхности голубого неба и зеленой земли, с которой сливается и аналог, стоящий перед Лукой. Только орнаментальная дверца и верхняя доска напоминают об его присутствии; тем самым устраняется дробность и создается объединенная цветовая плоскость. Подобные приемы, а также весь характер миниатюры заставляет вспомнить фресковую живопись, образцы которой, очевидно, и легли в основу интересующих нас миниатюр. Вместе с тем монументальность их своеобразно сочетается с известной декоративностью фонов, особенно подчеркнутой в миниатюре с изображением евангелиста Марка, где стены зданий, подушка, ножки скамейки превращены в плоскостный узорчатый ковер, довольно разнообразный по своей красочной гамме голубого, желтого, розового, коричневого цвета и золота.

Для общего колорита миниатюр характерны светлые и яркие краски. Значительность фигур евангелистов в общей композиции подчеркнута и интенсивностью цвета их одежд — зеленый хитон Луки сочетается с розовым гиматием, у Марка гиматий того же цвета накинут на голубой хитон. Желтый цвет зданий с розовыми кровлями, с добавлением розового цвета в деталях (фронтон направо, наличник налево) в миниатюре с Лукой, красные боковые фасады, розовые кровли и торцовые стены зданий в миниатюре с Марком, как бы аккомпанируют красочному сочетанию одежд евангелистов. В проемах торцовых стен, где темно-красная полоса нерезко переходит в красную (в миниатюре с Марком), сохраняются отголоски светотеневой характеристики зданий.

Изучение образов евангелистов в рукописи 1053 г. затруднено тем, что большая часть рукописей XI столетия связана с художественным направлением, отличным от того, к которому принадлежит евангелие 1053 г. Для них характерны легкие декоративные хораны, завершающиеся одной или несколькими арками, не вписанными в прямоугольник. Плоскостно трактованные, графически переданные фигуры евангелистов изображаются стоящими, преимущественно, на одном листе, помещенном перед евангельским текстом. Стоящие евангелисты характерны и для армянских евангелий X в. Исключение составляет самое раннее из дошедших до нашего времени иллюстрированных армянских евангелий, так называемое евангелие царицы Млке, написанное в 902 г. (Сан Лазаро, cod. 1144), а возможно и раньше, в Васпуракане. Традиционная близость убранства этой рукописи и евангелия 1053 г. сказывается не только в характере хоранов, отличающихся архитектурностью, но и в наличии сидящих евангелистов, хотя в общей серии их использован смешанный вариант — двое из них сидят, двое — стоят.

Евангелие царицы Млке, введенное в науку в начале XX века<sup>1</sup>,

<sup>1</sup> M. Bodourian. Ornaments de l'évangile de la reine Mlqé. Publié sur le voeu exprimé par le P. Alishan à l'occasion du millenaire du manuscrits 902 — 1902, Venise 1902 (на арм. яз.).

неоднократно являлось предметом изучения<sup>1</sup>. В настоящее время можно считать установленным, что иконография миниатюр этой рукописи восходит к сирийской традиции, в X в. уже органически слившейся с армянской миниатюрной живописью.

Наибольшее сходство обнаруживается между Матфеем евангелия Млке и Лукой евангелия 1053 г., с той лишь разницей, что правая нога Луки не столь энергично закинута на левую, а к подбородку поднята не правая, занятая письмом, рука, а левая. При сопоставлении голов и ликов обоих евангелистов также обнаруживаются черты сходства. Они сказываются в общем для них трехчетвертном повороте, прическе в виде окружающих гладкие волосы локонов, характеристике рта и бороды.

Иконографически близкие друг другу евангелисты этих двух рукописей стилистически различны. Изображение Матфея в евангелии Млке непринужденно естественно. Мягко спадающие складки одежд обрисовывают формы человеческого тела. Подавшаяся вперед фигура евангелиста, большие, широко открытые глаза, сдвинутые брови, особенно поднятая левая бровь, выражают напряженную экспрессию.

В Луке евангелия 1053 г. подчеркнута монументальная неподвижность, вызывающая ощущение покоя, пронизывающего весь облик евангелиста. Экспрессия лица Матфея евангелия Млке сменяется важной и строгой сосредоточенностью, простота одежды — сложным расположением, беспокойных и разнообразных, хотя и несколько застывших складок.

Евангелист Марк евангелия Млке лишь относительно близок одноименному евангелисту евангелия 1053 г. Стилистические отличия, а также неполное совпадение иконографических типов не позволяют считать евангелие Млке непосредственным образцом изучаемой нами рукописи. Отмеченные черты сходства заставляют, вместе с тем, видеть в этих двух евангелиях представителей родственных друг другу школ, имеющих общие истоки и традиционно связанных друг с другом.

Для восстановления прототипов интересующего нас варианта евангелистов, который, весьма вероятно, был распространен в недошедших до нас армянских рукописях, предшествовавших X веку, мы не имеем аналогий ни на почве Сирии, ни Византии, ни Грузии. Единственными, сохранившимися памятниками VIII—IX вв., в иконографию которых

<sup>1</sup> J. Stjgowsky. Bibliographischen Notizen und kleinere Mitteilungen. Die Miniaturen des Evangeliars der königen Mlke. Byzantinische Zeitschrift, XIV, 1905 стр. 731. A. Friend. The portraits of the Evangelists in Greek and Latin Manuscripts. Art Studies, 7, 1929, стр. 28. R. Weitzmann. Die armenische Buchmalerei des 10 und beginnenden 11 Jahrhunderts. Bamberg, 1933, стр. 4—8. А. Н. Свирии. Миниатюра Древней Армении. М.—Л., 1939, стр. 28. В. Н. Лазарев. Ук. соч., т. I стр. 71—72 и 99. Л. А. Дурново. Краткая история древнеармянской живописи. Ереван, 1957, стр. 16—17. и др.

вошла сирийская серия, являются докаролингские и каролингские кодексы.

Известно, что сирийцы внесли значительный вклад в культурную жизнь Каролингского государства. Влияние сирийского искусства, занесенного через христианских проповедников в Ирландию и Англию, распространилось и на остальную Европу. Как в англосаксонских, так и в каролингских рукописях были использованы образцы, проникавшие или непосредственно из Сирии, Египта и Византии или через Италию. На основании их и были созданы своеобразно интерпретированные варианты евангелистов латинских кодексов. Еще в первых годах XX века И. Стжиковский, поднимая проблему истоков каролингского искусства, связывал его с раннехристианским искусством, выросшим на корнях восточного эллинизма. По этому поводу он писал: «Все больше становится число восточных параллелей для каролингских рукописей... Я вижу все отчетливей, что эти западные миниатюры можно будет использовать для реконструкции того, что потеряно от христианского искусства Востока»<sup>1</sup>.

Ярким примером иконографического совпадения сирийских прототипов, легших в основу как латинских, так и интересующих нас армянских рукописей, является изображение евангелиста Матфея (рис. 5) из англосаксонского евангелия Гутберхта 770 г. (Вена, Нац. библиотека, код. 1224)<sup>2</sup>, который близок как Матфею евангелия Млке, так и Луке евангелия 1053 г. Иконографический тип, положенный в основу евангелиста Марка евангелия 1053 г., широко представлен докаролингскими и каролингскими рукописями группы Ады, особенно евангелием Годескалка, а также тяготеющими к ним памятниками прикладного искусства. Наиболее близкую аналогию дает изображение Иоанна (рис. 6) в уже упомянутом латинском евангелии Гутберхта<sup>3</sup>.

Интересно, что одно и то же западное евангелие содержит два иконографических типа евангелистов, родственных армянской рукописи XI в., как будто они являются частью одной серии. Иоанн евангелия Гутберхта представлен сидящим фронтально, в позе, близкой к изображению Марка евангелия 1053 г. Сходство наблюдается в положении ног, отчасти в характеристике одежд. Различие в том, что в латинском кодексе евангелисты держат свитки, тогда как в армянском — лист пергамена.

Приведенные сравнения, при всем различии в стиле, указывают на общность прототипов определенной группы латинских кодексов VIII—IX вв. и армянских X—XI вв. Количество аналогий, связанных с изображениями евангелистов в латинских рукописях, можно было бы еще увеличить, но и приведенных достаточно для того, чтобы утвер-

<sup>1</sup> J. Stjgowsky. Der Dom zu Aachen und seine Entstellung. Leipzig, 1904, стр. 53.

<sup>2</sup> A. Goldschmidt. Die deutsche Buchmalerei. Bd. I. Die karolingische Buchmalerei. Leipzig, 1928, табл. I.

<sup>3</sup> K. Zimmermann. Die vorkarolingische Miniaturen. Berlin, 1916, табл. 300.



Рис. 5.

ждать, что в основу изображений Марка и Луки в евангелии 1053 г. были положены ранние восточнохристианские образцы. Большая степень совпадения некоторых иконографических типов (евангелист Марк) и деталей (надписи) в евангелии 1053 г. с латинскими кодексами, при расхождении с евангелием Млке, позволяет допустить использование в нем образцов, связанных с более ранними армянскими рукописями, родственными по своей иконографии некоторым западным кодексам.

Распространение ранних восточнохристианских прототипов в миниатюрной живописи как Запада, так и Востока в VIII—IX вв. подтверждается также греческой рукописью № 1522 Ватиканской библиотеки, относящейся к послеиконоборческому периоду, но предшествующей македонскому ренессансу. В полной серии евангелистов этого кодекса преобладает трехчетвертная, приближающаяся к фронтальной, постановка фигур; только Марк изображен почти в профиль, в позе, получающей предпочтение в позднейшей византийской живописи. По поводу этих миниатюр К. Вайцман пишет: «Тип сидящего евангелиста в фронтальном положении является в IX столетии обычным и к тому же принятым, главным образом, в западных каролингских рукописях. Все четверо погружены в писательскую деятельность и это у них тоже общее с каролингскими. Такая трактовка является характерной чертой раннехристианского искусства, к которому, несомненно, восходят образцы ватиканских евангелистов»<sup>1</sup>.

По-видимому, для одного из вариантов ранней восточнохристианской иконографии характерны были также стоящие перед евангелистами аналоги. Эта особенность, встречающаяся уже в мозаиках св. Виталия в Равенне, повторена в Ватиканской рукописи и в евангелии 1053 г. В обоих случаях боковые поверхности аналогов разделены светлыми и темными полосами. Стиль византийского евангелия, в целом, значительно отличается от армянского — объемной передачей человеческого тела, живописной трактовкой одежд, большей притушенностью цветовой гаммы.

Нельзя, вместе с тем, не отметить, что стилистические приемы византийских рукописей, так например, свето-теневая характеристика фигуры и складок одежд, хотя и в более условно-орнаментальной передаче, не чужды миниатюрам евангелия 1053 г.

Светлая гамма красок армянского евангелия, с преобладанием голубого, светло-зеленого, светло-фиолетового и характерного для него розового цвета перекликается по колориту с греческой рукописью, хотя в последней предпочтение отдается светло-лиловому и голубому цвету. Эти черты общности позволяют говорить об определенном контакте, существовавшем между евангелием 1053 г. и византийской миниатюрной живописью. Быть может, этот контакт сказался в евангелии 1053 г. и

<sup>1</sup> К. Weitzmann. Die Byzantinische Buchmalerei des IX und X Jahrhundert. Berlin, 1935, стр. 6.



Рис. 6.



на новом осмыслении ранних восточнохристианских образцов евангелистов как философов, что было столь характерно для неоклассических рукописей Византии.

Не отрицая воздействия византийского искусства на создание образа евангелиста-философа, следует подчеркнуть, что формирование его происходило на почве самой Армении, в присущей ей собственной традиции. Воздействие византийского искусства на армянскую серию евангелистов-философов в рукописи 1053 г. сказалось в смягчении напряженности образа, в большей гармоничности и ясности его.

Несколько слов следует сказать и об орнаменте рамок, в которые заключены изображения евангелистов, отнесенных нами к первой группе. Используемая в них композиция совершенно оригинальна и, насколько мне известно, не имеет аналогий.

Не исключена возможность, что мастер обращался и в данном случае к рукописям, относившимся к более ранней поре или сам создавал родственные им композиции.

\* \*  
\*

Миниатюры с изображениями евангелистов Матфея и Иоанна рукописи 1053 г. выделены нами в отдельную группу, так как иконография их и стиль теснее связаны с византийским искусством. Однако в основе образов и этих евангелистов лежат ранние восточнохристианские образцы. Монументальная фигура Матфея по размерам равна окружающим ее зданиям. Мягкие, но достаточно яркие краски, четкий ритм построения, значение линии, сближает изображение Матфея с остальными миниатюрами евангелия 1053 г. Отличие от предшествующей группы евангелистов проявляет себя, однако, в меньшей статичности и условности обобщения, большей мягкости контуров. Складки одежд переданы мелкими тонкими линиями, исполненными в цвете одежд. Пробелы не отличаются столь геометризованными формами, как в предыдущих миниатюрах, что способствует большей объемности трактовки тела. Лицо евангелиста, благообразное и одухотворенное, охарактеризовано живописными средствами. По охряному фону лика киноварью проведена полоса по лбу, подчеркнуты губы и румянец на щеках. Большие глаза с белой точкой в левых углах, прямой нос, усы, борода, пряди которой намечены легкими линиями, очерчены мягким коричневым контуром. Колорит миниатюры светлый, с преобладанием розовых и голубых оттенков, которым аккомпанируют более темные теплые тона. Земля зеленого цвета, небо и хитон голубые, гиматий розовый, здания коричневые с розовым фасадом и темно-розовым лиловатым проемом. Подушка красная, с золотыми концами, письмо, перо, доска и дверца голубого аналая, нимб и арка исполнены золотом, наложенным на розовый фон.

Как по композиции, так и по цвету миниатюра создает ощущение

уравновешенности и гармоничности, чему способствует и дважды повторенная округлая линия — золотой арки и нимба. Над зданиями тонко исполненная армянская надпись без титла, которой предшествует розетка. Надпись гласит: *սիրր Մատթէոս*.

Характерной чертой, указывающей на то, что в основе образа Матфея лежит архаический прототип, являются перекрещенные ноги евангелиста, по-видимому, воспроизводящие в упрощенном виде позу евангелиста Матфея евангелия Млке<sup>1</sup>. Этот тип держится на Востоке очень долго. А. Грабар, указывая на сохранение его в болгарском евангелии XIII в., отмечает независимость этой восточной традиции от Византии<sup>2</sup>. Родственный иконографический тип встречаем в одном из ранних греческих евангелий, также тяготеющему к Балканам (Dionisiu cod. 2). К. Вайтцман считает возможным относить его к Кипру, где, как он указывает, вполне могли перекрещиваться коптские, каппадокийские и константинопольские влияния<sup>3</sup>. Быть может, влияние столичных образцов сказалось и на Матфея рукописи 1053 г.

Об этом говорит живописная манера исполнения, мягкий колорит, тонкость рисунка. Не исключена возможность воздействия и иконографического типа. Ближайшую аналогию к Матфею евангелия 1053 г. в византийских рукописях находим в изображении Матфея греческого кодекса 905 Парижской национальной библиотеки, датированной 1055 г. с миниатюрами, происходящими из более ранней рукописи. Общее сходство облика старца, сидящего в три четверти направо, подчеркивается положением рук, как правой, пишущей — перо зажато между большим и слегка приподнятым указательным пальцем, так и левой — четыре пальца которой растопырены; близка также и передача складок одежды, спадающей из-под левой руки в виде ласточкиного хвоста, характеристика лика с большими задумчивыми глазами под густыми бровями, высоким лбом и длинной белой бородой. Принципиально общий для всех миниатюр евангелия 1053 г. архитектурный фон в миниатюре с евангелистом Матфеем имеет некоторые отклонения. Композиционно по типу зданий наиболее близкие аналогии дают византийские рукописи IX—X вв.

Так, в миниатюре «Второй вселенский собор»<sup>5</sup> из слов Григория Назианзина (Парижская национальная библиотека, гр. 510, 880—

<sup>1</sup> В восточном искусстве этот тип встречается уже в VI в. в изображении Луки в мозаике Хазиос Луки в Салониках. См. W. Koehler. An illustrated Evangelistary of the Ada-School and its Model. Journal of the Warburg and Courland Institutes, XV, 1952.

<sup>2</sup> А. Грабар. Recherches sur les influences orientales dans l'art Balkanique. Paris, стр. 106. Добреджево евангелие м. б. 1221 г., происходит, вероятно, из Македонии. Поза и положение ног ближе в изображении табл. XI, 2; положение рук в изображении Луки, табл. XI, 1.

<sup>3</sup> К. Weitzmann. Die Byzantinische Buchmalerei, табл. LXX, 414, стр. 65.

<sup>4</sup> Там же.

<sup>5</sup> В. Н. Лазарев, ук. соч., т. II, табл. 49.

886) между перспективно поставленными архитектурными сооружениями находится престол с расположенной над ним аркой, не связанной со зданиями. В Менологии Василия II (Ватиканская библиотека гр. 1613), написанной около 986 г.<sup>1</sup>, в миниатюре с изображением Федора Стратилата и Христа среди апостолов, архитектурные фоны еще больше совпадают с рассматриваемой нами миниатюрой армянского евангелия.

Ранний иконографический тип, лежащий в основе образа Матфея, несет на себе, как впрочем и все евангелисты рукописи 1053 г. (в меньшей или большей степени), отпечаток образа мудреца-философа, характерного также для неоклассических рукописей Византии. Особенно это сказалось в постановке головы Матфея, спокойно-уравновешенном выражении лица, глубоком, устремленном вдаль, взоре.

О связях византийского и армянского искусства в XI столетии свидетельствует в евангелии 1053 г. и миниатюра, изображающая евангелиста Иоанна со своим учеником Прохором на острове Патмосе. К. Вайцман относит возникновение этого иконографического варианта к периоду Македонского ренессанса X в. Автор связывает его с античными образцами и ставит в один ряд с евангелистами-философами. Наиболее ранний пример использования этой композиции, чрезвычайно излюбленной в позднейшей византийской живописи, находится в греческой рукописи Комментариев к евангелию Национальной библиотеки Парижа — гр. код. 230, которая датируется рубежом X—XI в.<sup>2</sup>

Созданный в Константинопольской столичной школе, этот новый вариант уже в середине XI в. находит распространение в определенной школе армянской миниатюры, что указывает на ее контакт с Византией. Из четырех изображений евангелистов в рукописи 1053 г. только около Иоанна и Прохора надписи сделаны по-гречески: над Прохором, по косяку здания — *ο Προχουρος*,<sup>3</sup> над Иоанном заглавными буквами, под титлом *ω* и прописью, очевидно, *θεολογος* с недостаточно правильным начертанием греческих букв, выдающих мастера-армянина.

Использование иконографического типа, византийское происхождение которого неоспоримо, не исключает своеобразного толкования его в армянском искусстве. Это сказывается как в иконографии, так и в стиле, для которого характерны, в целом, те же черты, что и в рассмотренных выше лицевых изображениях. Композицию, отличающуюся статичностью, пронизывает ощущение покоя. Устойчивость ей придает и перспективно поставленное, крупное по своим размерам, ба-

<sup>1</sup> В. Н. Лазарев, ук. соч., т. II, табл. 71, 73 б.

<sup>2</sup> К. Weitzmann. Die Byzantinische Buchmalerei. рис. 215, стр. 29; А. Baumstark. Monatshefte für Kunstwissenschaft, Bd. 8., 1915, стр. 111. считает, что эта композиция встречается в армянских рукописях только в XII в., тогда как она налицо уже в рукописи архива Гарегина Овсепяна, в евангелии 1053 г. и в Могнинском евангелии.

зиличное здание, заменившее горный пейзаж, столь характерный для византийских миниатюр. Оно уравнивает движение, созданное расположенными по диагонали фигурами. Смягчают его и многократно повторенные округлые линии небесного сегмента, отгораживающего полуфигуру Христа, гиматия, возможно, в угоду композиционному приему, перекинутого с правого на левое плечо, опоясания, переходящего в горизонтально расположенную нижнюю часть одежд. Фигура евангелиста материальна и даже, до некоторой степени, объемна, хотя существенную трудность представляла, по-видимому, передача в ракурсе левой руки, что привело к неубедительной трактовке семипалой кисти. Многочисленные и пышные складки одежд приобретают некоторую скованность и неподвижность, что особенно сказывается в передаче конца плаща, представленного в виде ласточкиного хвоста.

Миниатюра довольно разнообразна по цвету — преобладают светлые тона: холодные — светло-зеленый и голубой сочетаются с теплыми — розовым, оранжевым, лиловым. Однако краски здесь сохранились хуже, чем на предшествующих миниатюрах. На голубой в нижней части и розовато-оранжевый в верхней части хитон Иоанна накинут розовый гиматий. По охряному фону лика киноварью положена полоса на лбу, обозначен румянец на щеках и рот. У Прохора хитон зеленый, гиматий розовато-оранжевый. Фон наверху голубой, внизу зеленый. На нем выступает здание темно-лилового цвета со светло-лиловым фронтоном и наличником, в котором наблюдается переход от темно-лилового оттенка к светло-лиловому. Почти утраченный в настоящее время цвет кровли был, очевидно, красным. Нимбы исполнены, как обычно, золотом по розовому фону. В целом, колорит не отличается мягкой гармоничностью миниатюры с изображением Матфея, хотя по пропорциям фигуры, трактовке складок, характеру линий, Иоанн все же ближе стоит к нему, чем к лицевым изображениям Марка и Луки этого же евангелия. Об этом говорит несколько смягченная, по сравнению с последними, манера письма, большая плавность складок, подчеркнутых белыми линиями и тонкость рисунка. Быть может, это указывает и в данном случае на византийское влияние. Однако заимствованная иконографическая схема получает здесь не только, в значительной степени, самостоятельную трактовку, но и наслаивается на собственную иконографическую традицию. С этой точки зрения особого внимания заслуживает расположение одежд Иоанна<sup>1</sup>. В миниатюрах греческих рукописей, как правило, гиматий, перекинутый через левое плечо, окутывает фигуру и спадает свободными складками, заканчиваясь у колен косым подолом, препоясание зачастую отсутствует. У евангелиста Иоанна армянской рукописи плащ, препоясан-

<sup>1</sup> У Прохора они, хотя и отличаются обилием сложных, ломаных, не всегда достаточно четко расположенных складок, обозначенных тонкими линиями, однако не имеют резких отличий от византийских образцов.

ный широкой полосой, спадая из-под нее, образует неровный, но приближающийся к горизонтальной линии, подол. Пышные складки по бокам падают в виде ласточкиного хвоста. Характерной особенностью одежд Иоанна является также не встречающееся аналогии изображение гиматия, переброшенного через левое плечо. По-видимому, здесь имеет место непонятное изображение античной одежды. Возможно предположить и механическое перенесение характерной для ряда византийских миниатюр полосы гиматия, переходящей по спине и видной в тех случаях, когда фигура представлена в трехчетвертном повороте. Примером может служить изображение пророка Иеремии из греческой рукописи Толкования пророков во Флорентийской Лауренциане (поздний X или ранний XI в.)<sup>1</sup>. С нашей миниатюрой роднит его и наличие полуфигуры Христа в правом верхнем углу, вместо благословляющей десницы, обычной для византийских рукописей. Отличает Иоанна армянского евангелия от общепринятого в Византии иконографического типа и постановка фигуры. В греческих кодексах он изображается в легком повороте, с головой, обращенной в сторону десницы. В евангелии 1053 г. Иоанн представлен строго фронтально с головой, повернутой в три четверти. Это придает ему сходство со стоящими фигурами евангелистов, наиболее распространенными в армянских евангелиях X—XI вв.

Тип стоящего евангелиста, имеющий сходство с Иоанном евангелия 1053 г., имеет место и в евангелии Млке, где евангелисты даны в смешанной традиции. Значительно большее сходство позы и расположения одежд Иоанна наблюдается при сравнении его с евангелистами и апостолами Эчмиадзинского евангелия 989 г. Откинув диагональную полосу гиматия на груди Иоанна, в обоих случаях имеем характерное препоясание, приближающийся к горизонтальной линии подол, спадающие по бокам концы гиматия, складки которого образуют ласточкин хвост. Однако стиль миниатюр Эчмиадзинского евангелия — господство линии, при общей плоскостности и невесомости фигур, не дают возможности считать их непосредственными предшественниками изображения Иоанна в рукописи 1053 г.

Интересно, что А. Френд сравнивает евангелистов Эчмиадзинского евангелия X в. с евангелистами Кресла Максимиана, а также коптского рельефа Метрополитанского музея, относящимися к VI в.<sup>2</sup>. Указывая на александрийское происхождение этих прототипов, автор отмечает те изменения, которые они претерпевают в коптском или сирийском искусстве, что приводит к фронтальному изображению плоскости и графически переданных строго фронтальных фигур. В значительно большей чистоте стилистические особенности, свойственные ранним образцам, сохраняются в изображении Иоанна изучаемой нами

<sup>1</sup> В. Н. Лазарев, ук. соч., т. II, табл. 75.

<sup>2</sup> А. Friend, ук. соч., стр. 23.



рукописи. Это сказывается в известной объемности фигуры, в сложной системе беспокойно лежащих, несколько застывших складок, в характере их расположения, в наличии ласточкиного хвоста, несколько утрированного в армянской миниатюре.

Что касается орнаментации рамок миниатюр с изображениями Матфея и Иоанна, то она существенно отличается от рамок первой группы евангелистов. Здесь растительная лоза и пальметка предстают перед нами в сочетании, характерном и широко распространенном в средневековом искусстве.

Подводя итоги изучению образов евангелистов в рукописи 1053 г., можно сказать, что в основе их лежат рано усвоенные армянской миниатюрной живописью архаические восточнохристианские прототипы. Характерным для евангелия 1053 г. является сохранение не только иконографических, но и стилистических особенностей ранних образцов, несущих на себе отпечаток эллинизма. Это сказывается, при всей обобщенности и условности, нарастающей плоскости и линейности, вносимых средневековым искусством, в отношении к передаче человеческого тела, разнообразии и обилии складок и даже композиционных приемах.

Усиление политических и культурных контактов с Византией в XI в. приводит к наслоению на эти образы черт, связанных с византийской миниатюрной живописью, а художественные вкусы времени вносят новое отношение в изображение евангелистов, которые предстают перед нами как философы в редакции, приближающейся к неоклассическим византийским рукописям.

**Символы** — Характерной особенностью евангелия 1053 г. является наличие в нем символов. Помещенные отдельно от евангелистов, они сочетаются с художественно оформленной заглавной буквой начальной страницы текста каждого из четырех евангелий. В евангелии от Матфея верхняя, округлая часть буквы  $\tau$  ( $\Gamma$ ) заполнена человеческим лицом (рис. 7), в евангелии от Марка концы буквы  $\mu$  ( $\Sigma$ ) оформлены двумя протомами львов (рис. 8). В евангелии от Луки символ его — бык завершает букву  $\rho$  ( $\text{K}$ ) внизу (рис. 9), и, наконец, орел составляет верхнюю часть буквы  $\iota$  ( $\text{I}$ ) евангелия от Иоанна. Отличительной чертой символов этой рукописи является отсутствие нимбов и, как правило, евангельских книг, даже в тех случаях, когда изображена не одна голова, как в образе человека или верхняя часть туловища орла без лап, но и целая протома животного (дважды повторенные полуфигуры львов). Лишь бык, представленный крылатой протомой, держит передними ногами евангелие, чем и отличается от других символов этой рукописи.

Ни в одном из дошедших до нас армянских евангелий X в. символы евангелистов, известные уже в некоторых евангелиях XI в. и широ-





ко распространенные в XII—XIII вв., не встречаются. Исключение составляет упомянутое нами выше евангелие царицы Млке.

Подставки перед сидящими евангелистами этой рукописи оформлены в одном случае в виде льва, в другом — орла. В литературе принято считать сидящих евангелистов евангелия Млке Матфеем и Марком, что исключает возможность толкования подставок, как связанных с ними символов. Л. А. Дурново предложила простое и убедительное решение этого вопроса. Она считает, что евангелисты перепутаны и что в сидящей паре следует видеть не Матфея и Марка, а Марка и Иоанна, с которыми и согласуются представленные в виде льва и орла подставки-символы. Весьма показательным и подтверждающим данное положение является иконографическая близость символов евангелия Млке и изучаемой нами рукописи. Это лишний раз подчеркивает связь между школами, к которым принадлежат оба евангелия, а вместе с тем, и самостоятельность развития определенной традиции в армянской миниатюрной живописи.

Символы этих двух евангелий не имеют крыльев, нимбов и книг, что является характерной чертой, присущей раннему иконографическому варианту, сложившемуся, по-видимому, в IV в. на Востоке. Из этой серии в евангелии 1053 г. выпадает лишь символ Луки — бык, изображенный, хотя и без нимба, но с крыльями и книгой. Нимбированные символы с крыльями и книгами представляют собой несколько более позднюю редакцию, относящуюся, очевидно, к V в. По-видимому, этот развитый вариант одержал позднее победу над различными системами символов и получил широкое распространение как на Востоке, так и на Западе. Архаический восточнохристианский тип символов, вошедший в евангелие Млке, а в основном и в евангелие 1053 г., представляет собой обращенную в профиль протому животного или птицы. Этим они напоминают апокалиптических животных, поддерживающих трон Христа в раннем иконографическом варианте Вознесения, дошедшем до нас на армянской почве в росписи Лмбата (начало VII в.)<sup>1</sup>.

Сходство символов евангелий Млке и 1053 г. не исключает, вместе с тем, существенных расхождений, вытекающих в значительной мере из их функционального осмысления.

В первой рукописи символы, помещенные на одном листе с евангелистами, представлены в виде скульптурно трактованных подставок. В другой, впервые, может быть, засвидетельствован типичный для позднейшей армянской миниатюрной живописи символ, сочетающийся с инициалом, помещенный отдельно от евангелиста на заглавном листе. Тем самым, евангелию 1053 г. принадлежит особое место в развитии армянской миниатюры.

Выяснение истоков интересующей нас редакции символов затруд-

<sup>1</sup> Л. А. Дурново. Краткая история древнеармянской живописи. Фронтиспис.



няется отсутствием более ранних армянских рукописей. Символы отсутствуют и в грузинских рукописях X—XI вв., а в византийских они не встречаются с VII—XII вв.<sup>1</sup> Возможно, что отсутствие их в евангелиях, связанных с православной халкедонитской средой, объясняется постановлением второго собора в Никее, имевшего место в 787 г. На этом соборе, занимавшемся, преимущественно, вопросами иконопочитания, было разрешено изображать Христа, богородицу и святых, изображение же символов вместо символизируемых персон было запрещено<sup>2</sup>. Очевидно, постановление халкедонитского собора не было обязательным для армян, последователей монофизитской церкви, больше ориентировавшихся на Александрийский, чем на Константинопольский престол. Связи Армении с Египтом, развивавшиеся в силу религиозной общности, в основе которой лежало стремление отстаивать свою политическую самостоятельность, должны были приводить к культурным контактам, непосредственным или опосредствованным через Сирию. Не говорит ли об этом изображение Нильского пейзажа с характерным для него ярким отпечатком эллинистического искусства в одном из хоранов евангелия Млке.

Интересно, что символы указанных нами двух армянских евангелий не представляют собой совершенно изолированной группы. Исследователи докарولينской, главным образом, ирландской миниатюры устанавливают связи одной из редакций символов, которыми столь богаты западноевропейские кодексы с коптской традицией.

Так, в евангелии св. Виллиброрда, относящемся к VIII в., в качестве символа евангелиста Марка на отдельном листе изображен скачущий лев, без крыльев, нимба и книги, с раскрытой пастью и высунутым языком. Сравнение льва евангелия св. Виллиброрда с более поздней фреской в Бауите устанавливает наличие в символе латинского кодекса коптской традиции, к чему склоняется также и Ж. Мишели<sup>3</sup>. В виде протомы животного скачущий лев с раскрытой пастью и торчащим из нее языком, правда, уже с привнесением книги, изображен на одном листе с евангелистом Марком в евангелии Гутбрехта, привлекавшемся нами уже для сравнения с евангелистами первой группы евангелия 1053 г.<sup>4</sup> Один из ранних вариантов этого образа дают нам коптские ткани<sup>5</sup>, где передняя часть фигуры льва, изображенного полностью, имеет сходство с символом евангелиста Марка.

При стремлении сопоставить символ евангелиста Матфея — человеческое лицо — с известным нам кругом памятников, связанных с ар-

<sup>1</sup> Н. П. Кондаков, История византийских эмалей, СПб, 1892, стр. 172.

<sup>2</sup> W. Köhler, Ук. соч., стр. 135.

<sup>3</sup> G. L. Micheli. L'enluminure du Haut Moyen age et les influences irlandaises, Bruxelles, 1939, стр. 22.

<sup>4</sup> G. L. Micheli. Ук. соч., табл. 40.

<sup>5</sup> См., например, одну из коптских тканей IV в., коллекции Государственного Эрмитажа (инв. № 11502); М. Матье и К. Ляпунова, Ткани Коптского Египта. Л., 1951, табл. XXV, 4.

мянским искусством, мы находим наиболее близкую аналогию только в сохраняющих еще эллинистическую традицию коптских тканях как, например, голова Геи Эрмитажной ткани<sup>1</sup> (IV в.). Характерный для нее поворот лица в три четверти, большие глаза под несимметричными бровями, довольно крупный с горбинкой нос, сомкнутый рот с параллельной полосой под ним, выделяющей энергичный подбородок перекликаются с трактовкой лица — символа Матфея в евангелии 1053 г. Нет основания думать, что прототипы нашей рукописи были взяты в XI в. непосредственно из коптских тканей. Обращение к ранним образцам могло идти и через собственные, недошедшие до нас, памятники армянского искусства.

Гарегин Овсепян, занимаясь изучением армянских стел V—VI вв., неоднократно подчеркивал единство армяно-сиро-египетского культурного круга с лежащим на нем отпечатком эллинизма<sup>2</sup>.

Напомним, также, что представление о символах, сопутствующих евангелистам, возникло в IV в. Звери, появляющиеся в видении Иезикииля и Иоанна, уже самыми ранними толкованиями были отнесены к четырем евангелистам и просуществовали в христианской символике до наших дней. Очевидно, тогда же они и были оформлены изобразительными средствами.

Таким образом, уже отмеченная нами выше характерная для рукописи 1053 г. тенденция к воспроизведению архаических восточно-христианских образцов, сохраняющих еще эллинистическую традицию, подтверждается и при изучении сопровождающих их символов.

Несколько слов следует сказать и о художественном оформлении инициалов, с которыми сочетаются символы евангелистов. Прямой, до некоторой степени объемно моделированный стержень их украшают кольца, крестообразные переплетения, порой несколько схематизированные розетки и полурозетки, а также, что является особенно характерным для данной рукописи, придающие особенную пышность завершению букв пальметки. Отличительной чертой инициалов евангелия 1053 г., по колориту гармонирующих не только с заставкой, но и смежной ему миниатюрой, является подчинение их общему стилю убранства рукописи, что сказывается как в монументальности, так и в своеобразном широком рисунке и живописности исполнения. Этот же тип инициалов встречается и в тексте евангелия, наряду с более скромно оформленными буквами. Последние, зачастую, сопровождаются пальметками, всегда разнообразными как по композиции, так и по цвету.

**Заставки** — Украшение заглавных листов армянских рукописей заставками впервые встречается в рукописи 1053 г. В известных нам евангелиях X в. тексту не сопутствуют какие бы то ни было укра-

<sup>1</sup> М. Матъе и К. Ляпунова, ук. соч., фронтиспис.

<sup>2</sup> См., например, Չ ա թ Կ Ր Ե Ն Հ ո Վ ս Ե Ք Յ ա Ե, Երբեք եւ ստանձնաբարձրութիւնն Կաշարեանի եւ ճշմոյթի ստանձնութիւնն, սրբազ. ք. 75.

шения. Название евангелий пишется на верхней строке более мелкими буквами, чем текст. Убранство рукописи ограничивается предшествующими тексту хоранами, за которыми следуют миниатюры со сценами из жизни Христа. С конца X в. орнаментация начинает проникать в книгу<sup>1</sup>. Перед художником возникает новая задача построения заглавного листа, в общей композиции которого, в частности, и в заставках с особенной силой сказывается творческий процесс, созидающий новые художественные ценности, в то время как в канонизированных изображениях наблюдается некоторая консервативность<sup>2</sup>.

Большую роль в украшении заставок играют растительные мотивы, главным образом, пальметки, в значительной мере определяющие характер декоративного убранства не только евангелия 1053 г., но и всех рукописей, относящихся к этому художественному направлению. Интерес к растительным мотивам является, по-видимому, одной из черт стиля, который становится в это время характерным для миниатюрной живописи ряда стран. Появление цветочного орнамента в византийских рукописях относится еще к X в. Самостоятельную параллель к нему представляет тот мир растительных композиций, с которым мы встречаемся в интересующих нас армянских рукописях. В нем нашли свое выражение родственные с Византией художественные вкусы, преломленные через собственную культурную традицию.

Пальметка, определившая, в основном, все растительные вариации рукописи 1053 г., унаследованная, в конечном счете, от эллинизма, была известна уже в убранстве ранних памятников армянского искусства. В качестве примера можно привести фрагменты росписи Талинского храма VII в.<sup>3</sup> Разнообразие и творческое использование пальметки наряду с другими элементами орнаментации сообщает неповторимое своеобразие убранству заставок евангелия 1053 г.

Заставка титульного листа евангелия от Матфея (рис. 7) принадлежит к прямоугольному типу, хорошо известному в византийских рукописях, нашедшему широкое распространение в миниатюрном искусстве ряда стран, имевших культурные связи с Византией. В армянской книжной живописи эта форма заставки настолько редка, что К. Вайцман склонен считать ее совершенно неизвестной Армении<sup>4</sup>. Быть может, появление прямоугольной заставки в рукописи 1053 г. на титульном листе евангелия от Матфея следует поставить в связь с изображением самого евангелиста, теснее других связанного с византийскими образцами. Заполнением ее служит аканфовая лоза, на первый взгляд перекликающаяся с убранством заставок неоклассических рукописей

<sup>1</sup> Sirarpi den Nersessian, ук. соч., стр. 14.

<sup>2</sup> На эту особенность в развитии миниатюрной живописи Армении указала мне Л. А. Дурново.

<sup>3</sup> Копия на выставке монументальной живописи Армении в Государственной картинной галерее Армении (Ереван).

<sup>4</sup> К. Weitzmann. Die Byzantinische Buchmalerei, стр. 63.

Византии. Однако трактовка ее отличается полной самостоятельностью. Незамкнутые круги сочных стеблей, перехваченные кольцами, заканчиваются крылатыми пальметками. В каждом кругу помещен скомпонованный на основе разнообразно варьированных пальметок пышный цветок, по своему облику напоминающий цветы византийских рукописей, но отличающийся от них масштабами и большей динамичностью трактовки. Возможно, что в основу заполнения этой заставки положена композиция, близкая к некоторым деталям мозаики в храме скалы в Иерусалиме<sup>1</sup>, в конечном счете восходящая к образцам раннехристианского искусства (см. например, мозаику свода баптистерия в Латеране)<sup>2</sup>.

Заставка имеет довольно плохую сохранность, однако и сейчас можно предположить, что фон ее был расписан золотом по розовой основе. На нем выделялся перехваченный красными кольцами стебель лозы, частично окрашенный голубым, частично зеленым цветом. Рамкой служила красная кайма с вписанными в нее белыми зубцами. Мягкая, но сочная гамма цвета, подчеркнутая золотым фоном и более глубоким тоном рамки, хорошо гармонировала по своему колориту как с символами-инициалами, так и с лицевой миниатюрой евангелиста Матфея. В целом, плавная линия лозы, живописная трактовка цветов, а также характер красочных сочетаний оставляет впечатление еще не до конца изжитой традиции эллинистического искусства.

Совершенно иной характер имеет оригинально решенная заставка евангелия от Марка (рис. 8), представляющая собой прямоугольник, как бы срезанный внизу арками. Арочные композиции, как известно, имели широкое распространение в хоранах. Однако арки хоранов, легкие или монументальные, в зависимости от стиля рукописей в которых они представлены, не имеют того соотношения, которое отличает заставку заглавной страницы евангелия Марка — по сторонам средней, меньшей по своим размерам, арки выступают две повышенные. Несомненная связанность этого мотива с архитектурой позволяет предположить, что он был навеян убранством, например, такого значительного памятника армянского зодчества, как Анийский собор. В общую с заставкой композицию включаются символ Марка (львы), сочетающийся с художественно оформленной заглавной буквой, которую уравновешивает с другой стороны пышный цветок. Созданный творческой фантазией мастера на основе тех же пальметок, он, при всей своей условности, не лишен убедительности. Заполнение внутреннего пространства заставки состоит из центрального растительного мотива, имеющего вид шишки с отходящими от нее пальметообразными листьями. По сторонам его расположены направленные в разные

<sup>1</sup> R. A. C. Creswell. A short Assount of Early Muslim Architecture. A Pelican Book, 1958, табл. III.

<sup>2</sup> J. Wilpert. Die Römische Mosaiken und Malereien. IV. Freiburg im Breisgau, 1916, табл. 1—3.

стороны птицы. Не только своеобразная форма заставки, но и заполнение ее свидетельствует о самостоятельности мастера, использовавшего в последнем случае мотив, быть может связанный с армянским фольклором. Я думаю, что здесь перед нами один из вариантов птиц, сидящих по сторонам древа жизни, что в армянском изобразительном искусстве известно, например, в резьбе на Севанской капители VIII—IX вв., и в убранстве хорана армянской рукописи 1018 г. (Матенадаран, рукопись № 4804).

Красочная гамма титульного листа полностью гармонирует с лицевой миниатюрой евангелиста Марка. Желтые львы, подцвеченные коричневым цветом, с высветленными мордами и красным языком, завершают букву, в которой преобладает, при наличии голубого, зеленый цвет с вкраплениями красного в бутонах. Голубая кайма снизу, с вписанными в нее белыми зубцами, голубые и зеленые листья пышного цветка с красными бутонами, зеленые с голубым крылом и красными головками птицы по сторонам зеленых листьев, заканчивающихся голубыми пальметками, так же как и верхняя полоса, в которой чередуются розовые и красные зубцы — перекликаются с общим колоритом миниатюры, несколько более темным, чем в титульном листе и лицевой миниатюре евангелия от Матфея. Можно, однако, предположить, что интенсивность цвета несколько усиливалась потемневшим сейчас золотым фоном, поднимавшим красочность и придававшим большую живость колориту.

Этот тип заставки, значительно отличаясь от предшествующей, не имеет повторения даже в армянской миниатюрной живописи за исключением Могнинского евангелия, связанного с евангелием 1053 г. значительной общностью образцов.

Столь же характерной по своему замыслу является и заставка евангелия от Луки (рис. 9), где растительный мир пальметок, характерный для орнаментации изучаемой нами рукописи, получает наиболее разнообразное и творческое воплощение. В основу этой композиции положен крупный S-образный завиток. Хорошо известный в декоративном убранстве восточных стран этот, примитивный сам по себе, мотив, воспроизведен здесь как сочный, объемно моделированный стебель, переплетающийся с пальметками, которые получают новую интерпретацию. По концам S-образная фигура завершается сложно разработанной растительной композицией. В основу ее положена обыкновенная пальметка, которая, в зависимости от точки зрения, воспринимается то как самостоятельный мотив, то как составная часть пышной крылатой пальметки. При общей широте рисунка стебля и листьев, эта трактовка создает ощущение динамичности и живописности. В образованные стеблем круги помещены скомпонованные из пальметок же цветы, по облику своему приближающиеся к цветам заставки на титульном листе евангелия от Матфея. Только маленькие

трехлепестковые цветы, вписанные в завершающие композицию кольца, сходны с цветами византийских рукописей.

Далекая от реальной действительности композиция поражает конкретностью и сочностью растительных мотивов. Отсутствие же объективного корректива приводит к созданию разнообразных растительных вариаций, указывающих на еще достаточно сдержанную, но все же усиливающуюся декоративность стиля, что ярче всего, быть может, сказалось в этой заставке.

Живописно-объемная трактовка смелой и выразительной по рисунку заставки сочетается с присущей данной рукописи мягкой колористической гаммой голубого с пробелами стебля, голубых, розовых и зеленых с пробелами листьев и цветов, написанных по золотому фону и акцентированных красными бутонами. Голубым цветом охарактеризована и буква, связанная с символом евангелиста Луки — быком<sup>1</sup>. Как и в предшествующих случаях, колорит титульного листа и лицевой миниатюры гармонично сочетаются друг с другом.

В заставке евангелия от Иоанна в рукописи 1053 г. традиционная для Армении форма арки хорана искусно скомпонована с своеобразно интерпретированной П-образной заставкой византийских рукописей. Ромбовидный радужный орнамент, восходящий к сирийской традиции, рано вошедший в армянскую живопись и органически слившийся с ней, обрамляет в заставке широкую полосу арки. Внутреннее пространство ее заполнено восьмилепестковыми розетками, встречающимися уже в убранстве армянских рукописей X в.<sup>2</sup> и широко известными в резьбе по камню уже на памятниках армянской архитектуры с VII века<sup>3</sup>.

Именно этот мотив становится излюбленным в декоративном убранстве зданий анийского круга X—XI вв.<sup>4</sup> Близка по своей орнаментации к изучаемой нами заставке резьба на одной из арок церкви Абугамренц в Ани, с тою лишь разницей, что здесь розетки заключены в плетения, столь распространенные в убранстве анийских памятников и, по-видимому, сознательно игнорировавшихся в той школе миниатюрной живописи, к которой принадлежало евангелие 1053 г.

Еще большую аналогию дает украшение арки церкви в Нораванке (1062 г.)<sup>5</sup>, где розетки, правда шестилепестковые, даны, так же как и в рукописи, без плетений (рис. 10). Можно предположить, что художник,

<sup>1</sup> Краска на теле быка в значительной мере утрачена.

<sup>2</sup> F. Macler. *Miniatures arméniennes X—XVII siècle*. Paris. 1913. Табл. IV, рис. 8. Табл. V, рис. 9, рукопись № 697 библиотеки Мхитаристов в Вене IX—X в.

<sup>3</sup> Н. М. Токарский. *Архитектура древней Армении*, Ереван, 1946, стр. 127; Талин, Сисиан, Аруч, рис. 44, 45.

<sup>4</sup> Розетка встречается в убранстве потолка притвора в Хоромосе, в раме Анийского собора, на гипсовых украшениях из Двина и т. д.

<sup>5</sup> Воспроизводится по фотографии С. Бархударяна.



творчески создавая оформление заглавного листа, шире пользовался образцами современного ему архитектурного орнамента.

Расположенные в углах растительные композиции, заключенные в круги, не чужды армянской живописи XI в.<sup>1</sup> Вместе с тем, они имеют несомненно точки соприкосновения и с орнаментикой византийских рукописей, что сказывается и в наличии трехлепестковых цветков, хотя и сочетающихся порой с пальметкой.



Рис. 10.

Сохранность красочного слоя заставки титульного листа евангелия от Иоанна, также как и лицевой миниатюры евангелиста Иоанна с Прохором, плохая. Можно лишь установить, что фон ее был некогда также золотым, а в общем колорите, как заставки, так и буквы преобладал красный цвет (орел — темно-красный) с незначительными вкраплениями голубого (в букве, рамке, радужной полосе, где голубой цвет переходит в розовый) и зеленого (розетки и цветы наполовину голубые, наполовину зеленые). Интересно, что при всем своеобразии и этой заставки, форма ее, так же как и форма заставки титульного листа евангелия от Матфея, перекликается с византийскими образами, также как и иконография самих евангелистов, тогда как заставки титульных листов евангелий Марка и Луки совершенно оригинальны. Вместе с тем, все заставки, как элемент оформления титульного листа, в которое входят и заглавные буквы, сочетающиеся с символами, создают впечатление единства художественного замысла и стиля, характерного для всей рукописи.

**Хораны** — Из десяти хоранов, предшествующих, обычно, тексту армянских евангелий, в рукописи 1053 г. дошло до нас всего два (рис. 11 и 12). В композиции своей они сохраняют известную монументаль-

<sup>1</sup> См., например, копию стенописного орнамента в Ахпате X—XIII вв., на выставке монументальной живописи Армении в Государственной картинной галерее Армении (Ереван).




Рис. 11.

ность и архитектурность построения, позволяющую связать их с типом хоранов евангелия царицы Млке и Эчмиадзинского евангелия. Однако, по сравнению с последними, в хоранах евангелия 1053 г. наблюдаются и некоторые изменения. Колонны несколько утрачивают в своей весомости, а покоящиеся на них арки, не потеряв еще полностью архитектурного облика, оказываются вписанными в прямоугольное обрамление и получают более плоскостную трактовку. Таким образом, хоран в целом уже в большей мере подчиняется оформлению книжного листа, что говорит о новом этапе в развитии убранства рукописи. Расхождение с рукописями X в. сказывается и в орнаментации, при совпадении мотивов, традиционных для армянской миниатюрной живописи.

В хоранах, что характерно для убранства евангелия 1053 г. в целом, также наблюдается обращение к ранним восточнохристианским образцам. Сохраняющие известную объемность колонны, разработанные во втором хоране под мрамор, в первом украшены несколько схематизированными ритмично повторяющимися виноградными гроздьями. Подобная трактовка колонн встречается как в хоранах евангелия Могни, так и в рукописи архива Гарегина Овсепяна.

Истоки этого приема могут быть засвидетельствованы в памятниках коптского искусства, как например, на колонне, украшающей одну из завес V в., хранящихся в Государственном Эрмитаже (рис. 13)<sup>1</sup>. Свободно вьющаяся по ней виноградная лоза близка к убранству колонн на хоране армянского евангелия не только общностью мотива. Обращает на себя внимание и сходство в передаче деталей, так например, усиков. Подобная трактовка виноградной лозы известна и на армянских памятниках V—VI вв. Примером может служить орнаментальная композиция на каменном основании надгробной стелы в Казахе<sup>2</sup>. Связь с образцами коптского искусства подтверждается и другими элементами орнаментации хоранов. Так, зайчики с повернутой назад головой, как бы прыгающие около базы колонны, имеют полную аналогию в коптской набойке (рис. 14) со сценой охоты IV—V вв.<sup>3</sup>, хотя быть может, здесь изображены бегущие или прыгающие самки оленей, осмысленные позднее как зайцы. Очень близкая передача тех же зверьков имеется также и на другой, несколько более поздней коптской ткани<sup>4</sup>.

Миндалевидные розетки, заполняющие плоскую арку второго хорана, хорошо известны в коптских и в современных им сирийских памятниках, например, в хоранах сирийского евангелия Рабулы 596 г., где встречаются также и разноцветные бутоны, украшающие второй

<sup>1</sup> М. Матье и К. Ляпунова, ук. соч., табл. V, инв. № 11 660.

<sup>2</sup> А. Саянян, Архитектура Казахской базилики. Ереван, 1955 (на арм. яз.), рис. 61.

<sup>3</sup> М. Матье и К. Ляпунова, ук. соч., табл. III, инв. № 11 658.

<sup>4</sup> Хранится в Государственном Эрмитаже, инв. № 9472.



Рис. 12.

хоран евангелия 1053 г. Разноцветные бутоны являются также одним из мотивов фрагментарно сохранившейся росписи Талинского храма VIII в.<sup>1</sup>, миндалевидные же розетки хорошо известны в орнаментации армянских храмов VII в.<sup>2</sup>

К ранним образцам восточнохристианского искусства восходят, очевидно, и занавеси первого хорана, текстуальная часть которого обрамлена гребенчатыми листьями, известными уже в евангелии Рабулы (см. также Эчмиадзинское евангелие). В римских и равенских мозаиках IV—V вв., традиционно связанных с Сирией, занавеси являются неотъемлемой частью архитектурных сооружений. В памятниках этой группы расположенные над арками мозаики зачастую заполняются символическими изображениями Иерусалима и Вифлеема, представленными архитектурными композициями. Не воспроизводят ли их по принципу часть от целого архитектурные элементы, помещенные в углах прямоугольной рамки второго хорана? Несколько подковообразная арка, заполненная орнаментом из крестов, опирается на колонны, образующие вход, украшенный занавесями. Способ крепления их, подхват, характеристика складок имеют наиболее близкую аналогию в мозаиках православного Баптистерия в Равенне.

На близость к ранним христианским образцам указывает и изображение птиц, сидящих по сторонам ваз, украшающих верхнюю часть хоранов евангелия 1053 г. Наиболее близкое соответствие этому мотиву, довольно распространенному еще в эллинистическом искусстве, находим в Баптистерии сан Джованни в Неаполе<sup>3</sup> и в сирийском евангелии Рабулы. В последнем с исчерпывающей полнотой встречаются также все разновидности птиц, украшающих как верх хоранов, так и выступающие полочки в евангелии 1053 г.

К сожалению, до сих пор не удается найти аналогию к помещенному в тимпане изображению «кентавра». Известное сохранение свето-теневой характеристики и объема, особенно в теле кентавра, сравнительно правильный ракурс его фигуры и лица, повернутого в профиль, а также и вся сюжетная сторона этой сцены заставляет предположить близкое к эллинистическому пониманию происхождение подобного образа. Отголоски эллинистических мотивов, но уже в значительной мере переработанных и измененных в течение веков, можно установить и в орнаментации широкой полосы арки первого хорана. Создается впечатление, что в упрощенно схематической трактовке мы имеем здесь дело с фризом, варианты которого можно видеть в таких памятниках восточного эллинизма, как Гарни<sup>4</sup> и Хатра<sup>5</sup>.

<sup>1</sup> Копия на выставке монументальной живописи Армении в Картинной галерее Армении в Ереване.

<sup>2</sup> Н. М. Токарский, ук. соч., стр. 126, рис. 33.

<sup>3</sup> I. Wilpert, ук. соч., табл. 29.

<sup>4</sup> К. В. Тревер. Очерки по истории культуры Древней Армении. М.—Л., 1953, рис. 6.

<sup>5</sup> W. Andral. Die Ruinen von Hatra. Bd. III, Leipzig, 1912, Beatt 38, рис. 204.




Рис. 13.

Несколько напоминает мотивы эллинистической орнаментации и аканфообразная лоза, заполняющая тимпан второго хорана. Однако довольно беспорядочно разбросанные внутри образованных сочным стеблем кругов пальметки создают лишь очень отдаленное представление о листьях аканфа.

Изучение хоранов приводит к выводу, что в убранстве их как и во всем художественном оформлении рукописи были широко использованы образцы раннего восточнохристианского искусства, с лежащим еще на них отпечатком эллинизма.

Нет надобности говорить, что все многообразие унаследованных от прошлого орнаментальных форм претерпело на протяжении веков существенные изменения. Сохраняя определенную традицию, они были, вместе с тем, подчинены новым задачам и использованы в своеобразно организованных композициях, подчиненных единому художественному замыслу.

Стиль хоранов, так же как и лицевых миниатюр рукописи 1053 г., отличается монументальностью и выразительностью, широкой живописной манерой исполнения, большой ролью пробелов, придающих известную объемность отдельным элементам орнаментации, не утрачивающим самостоятельного значения в сложных композициях. Характерным для хоранов является введение в их убранство конкретно и живо переданных изображений зверей, птиц и фантастических существ, в истоках своих ничего общего не имеющих с религиозными представлениями.

Особенно следует подчеркнуть праздничность и торжественность художественного образа хоранов, что достигается гармоничностью пропорций, четкостью и строгостью композиционного построения и мягкой, но звучной красочной гаммой. Очевидно, фон хоранов был некогда золотым, в красочных сочетаниях преобладал голубой и розовый цвет, перекликавшийся с колоритом лицевых миниатюр. Значение этих тонов поднимали сопровождающие их темно-зеленый и темно-красный цвета. Вместе с тем, некоторая отвлеченность композиции сказывалась в усилении условности, плоскостности и нарастающей декоративности. Проявление этих принципов можно видеть и в наличии прямоугольного поля хорана и в радиально расположенных, прорезающих арку хорана, не считаясь с ее архитектурным замыслом, полосах, украшенных растительной лозой.

Таким образом, новые решения сочетались в хоранах со старыми традициями, в чем и заключается особая и неповторимая прелесть убранства изучаемого нами евангелия, в котором, если можно применить здесь это выражение, мысль уходит в будущее, а чувство остается еще в прошлом.



Fig. 14.



## Տ. ԻԶՄԱՅԼՈՎԱ

1053 ԹՎԱԿԱՆԻՆ ԸՆԴՕՐԻՆՍԱԿԱԾ ՀԱՅԿԱԿԱՆ ՉԵՌԱԳՐԻ  
ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՐԱՆՔԸ

## Ա մ փ ո փ ու մ

Հոգվածն սկսվում է Հայկական ՍՍՌ Մինիստրների Ստվետին առընթեր Հին ձեռագրերի գիտա-հետազոտական ինստիտուտ «Մատենադարանում» 3793 համարի տակ պահվող 1053 թվականին գրված ավետարանի համառոտ նկարագրությամբ: Գրչի 1053 թ. հիշատակարանի, ինչպես նաև հետագա հիշատակարանների ուսումնասիրությամբ հեղինակը հանդել է այն եզրակացության, որ այն գրված է Անիի շրջակայքում գտնվող վանքերից մեկում:

Բանասիրության մեջ դեռ վաղուց մատնացույց է արված 1053 թ. ավետարանի և Մուղնու ավետարանի միջև եղած կապը: Այս երկու ձեռագրերի հետ առնչվում են մի ուրիշ ավետարանի շճատարակված մանրանկարները, որոնք հայտնի են հեղինակին Գարեգին Հովսեփյանի արխիվում պահվող լուսանկարչական սևանկարների միջոցով (Երևան, Պետական Պատմական թանգարան): Իրար ազգակից այս երեք ձեռագրերի ուսումնասիրությունը թույլ է տալիս ցույց տալ ժԱ դարի հայկական մանրանկարչական արվեստի մեջ մի այլ ուշադրավ դարձրած կամ մի առանձին ուղղության գոյությունը:

1053 թ. ձեռագրի մեջ ավետարանիչներին պատկերող մանրանկարները րաժանվում են երկու խմբի:

Առաջին խմբի մեջ, որը մեծ շափով պահպանել է հայ մանրանկարչության ինքնուրույն տրադիցիան, մտնում են Մարկոսն ու Ղուկասը, իսկ երկրորդ խմբի մեջ, որն իր վրա համեմատաբար ավելի ուժեղ կրում է բյուզանդական ազդեցությունը, մտնում են Մատթեոսն ու Հովհաննեսը:

1053 թ. ձեռագրի ավետարանիչների նախատիպերը վերականգնելու նպատակով հեղինակը մեջ է բերում 8—9-րդ դարերի մինչիարությունյան ավետարանների մանրանկարներ, որոնց մեջ, ինչպես և հայկական մանրանկարչության մեջ՝ օրդանապես մերվել է արևելյան քրիստոնեական տրադիցիան:

1053 թ. ավետարանում Մարկոսի և Ղուկասի պատկերման ռճական առանձնահատկությունները հնարավորություն են տալիս վեր հանելու այն շփման եզրերը, որ նրանք ունեն իրենց վրա դեռևս հելլենիստական տրադիցիայի դրոշմը կրող վաղ միջնադարյան հուշարձանների հետ:

Հոգվածում առանձին բնության են առնվում նաև ձեռագրի խորանները և ավետարանիչների խորհրդանիշերը:

Ամփոփելով իր հետազոտությունը, հեղինակը եզրակացնում է, որ 1053 թվականի ձեռագիրը պետք է գիտել որպես կարևոր մի օղակ հայկական մանրանկարչական արվեստի զարգացման մեջ. նրա ուսումնասիրությունը հնարավորություն է բնձնում հետևելու արևելյան-քրիստոնեական տրադիցիայի անընդմիջությանը հայ արվեստի մեջ:

Ե. ՏԵՐ-ՄԻՆԱՍՅԱՆ

ՏԻՄՈԹԵՈՍ ԿՈՒԶՆԻ «ՀԱԿԱՃԱՌՈՒԹԻՒՆ ԱՌ ՍԱՀՄԱՆԵԱԼՍՆ  
Ի ԺՈՂՈՎՈՅՆ ՔԱՂԿԵԴՈՆԻ» ԵՐԿԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ  
ԺԱՄԱՆԱԿԸ

Երբ 1908 թվականին տողերիս գրողը և Կարապետ Տեր-Մկրտչյանը հրատարակեցինք Տիմոթեոս Կուզնի «Հակաճառությունը», բնականաբար պետք է առաջարանում խոսեինք նաև այն հարցի մասին, թե երբ է այս, հայոց եկեղեցու դավանարանական գրականության համար դարազուլիս կազմող, և հայոց լեզվի պատմության ուսումնասիրության համար խոշոր կարևորություն ունեցող երկը հայերեն թարգմանվել:

Այդ հարցի մասին մեր առաջարանում ասված է հետևյալը.

«Առանց արտաքին որևէ ցուցում կամ վկայություն ունենալու արդեն կարելի է ասել, որ այնպիսի մի գրվածք, ինչպես Տիմոթեոսի ներկա երկասիրությունն է, միայն այնպիսի պատմական շրջանում կարող էր թարգմանվել, երբ հայոց եկեղեցին ստիպված էր անհրաժեշտաբար մասնակցություն ունենալ դավանական վեճերի մեջ և այսպես կամ այնպես իր դիրքը որոշել բազմաթիվ կուսակցությունների և դավանությունների նկատմամբ: Հայոց եկեղեցու համար այդ շրջանն սկսվում է իսկապես Ձ. դարի սկզբից, Բարզենի կաթողիկոսությամբ: Հայտնի է, որ Բարզենը Գվինում մի ժողով գումարելով 505/506-ին մերժում է ամբողջ հայոց եկեղեցու հետ՝ նեստորականությունը, զուցե նեստորականության ներքո, ինչպես այդ ժամանակները հատկապես միաբնակների մոտ սովորություն էր, նաև քաղկեդոնականություն հասկանալով, և հավանորեն համաձայնություն է հայտնում Զենոնի «Հենոտիկոն» կոչված հրովարտակին:

«Մ'նչ է լինում դրանից հետո հայոց եկեղեցում, դժբախտաբար, մանրամասն կերպով հայտնի չէ մեզ. այսքանը գիտենք միայն, որ Ձ. դարի երեսնական թվականներին հայոց կաթողիկոս Քրիստափոր Ա-ը ո՛չ միայն բացարձակ կերպով միաբնակների կողմն է բռնում, այլև ճանապարհորդում է Ասորիք՝ միաբնակներին միխթարելու և նրանց համար եպիսկոպոսներ ձեռնադրելու համար: Վերջնականապես և վճռական կերպով, սակայն, հայերը մերժում են քաղկեդոնականությունը ներսես Բ. կաթողիկոսի օրով (548/9—556/7) Գվինի երկրորդ ժողովում 554 թվին: Այդ ժողովից առաջ արդեն ներսես Բ. որոշ կերպով հայտնել էր իր դիրքը, եպիսկոպոս ձեռնադրելով ասորիների համար հակասեբյան, ուրեմն հուլիանիտ, միաբնակ Արդիշոյին և ուղղափառ համարելով նրան: Մեր ունեցած բոլոր տեղեկությունների համաձայն՝ հենց այս ժամանակ էլ պետք է տեղի ունեցած լինի զանազան դավանական կուսակցությունների վճռական մաքառումը հայոց եկեղեցում, որից հաղթող

են դուրս դալիս ծայրահեղ միաբնակաները: Անշուշտ այդ պայքարի ժամանակ պիտի կատարված լինի Տիմոթեոսի էլուրոսի այս գրվածքի թարգմանությունը, որ ամենալավ զենքերն էր մատակարարում հայ եկեղեցականներին նեստորականության և քաղկեդոնականության դեմ մաքառելու համար: Եվ մենք հիրավի տեսնում ենք, որ Տիմոթեոսի գրվածքը Վրաց բաժանման շրջանի դավանաբանական գրությունների մեջ որոշ կերպով հիշվում է մի քանի անգամ<sup>1</sup>. ուրեմն ամեն կասկածից դուրս է, որ այն Ձ դարի վերջին և է-ի սկզբին հայերեն թարգմանությամբ դործածական է արդեն»:

Այնուհետև, մեր ասածը հաստատելու համար որպես ապացույց բերել ենք Կ. Պոլսի Փոս պատրիարքի (24 դեկտեմբերի 858—25 սեպտեմբերի 867. երկրորդ անգամ՝ 878—դեկտեմբեր 886) քացարձակ վկայությունը այն մասին, որ Տիմոթեոսի գրվածքը թարգմանվել է հայերեն ներսես Բ. կաթողիկոսի շնորհ և ասորի Արդիշոյի ձեռնհրեցությամբ և եռանդուն մասնակցությամբ, ուրեմն ճիշտ որ Ձ. դարու կեսերին, դավանաբանական պայքարի ամենատարժամանակը: Բայց Փոսի վկայության մասին մանրամասն ստորև:

Ապա շեշտել ենք նաև, մեծ նշանակություն ունեցող, այն հանգամանքը, որ Տիմոթեոսի այս գրվածքը մի տեսակ հայերեն է ստեղծել դավանաբանական խնդիրների համար՝ որոշ դավանաբանական արտահայտություններ ու բանաձևեր, որոնք հաջորդ դարերում ընդհանուր դործածության մեջ են մտել դավանական թղթերի մեջ և այլ գրվածքներում: «Եթե ոչ ներսես Բ-ից մնացած դավանական թղթերից,— ասել ենք,— գոնե նրա հաջորդ Հովհաննես Բ. Գաբրիելացու (556/57—571, մեռել է 573) Ազվանից Լախիտպոսաներին տղղված թղթի մեջ (Գիրք Թղթոց, էջ 81—84) նշմարելի են արդեն Տիմոթեոսի հակաճառության պարզ հետքեր՝ թե՛ ոճի և թե՛ դադափարների կողմից: Իսկ Վրաց բաժանման շրջանի դավանաբանական գրագրության մեջ, ինչպես տեսանք, այդ գրվածքը մի քանի անգամ որոշակի հիշվում է իբրև ամենակարևոր հիշատակարաններից մեկը»<sup>2</sup>:

Թվում էր, թե խնդիրը միանգամայն պարզ է և այս պատճառարանությունների դեմ ոչ մի առարկություն չի կարող: Բայց Տիմոթեոսի «Հակաճառության» լույս տեսնելուց հազիվ մի ամիս անցած «Արարատ» ամսագրի 1908 թ. մայիս-հունիսի համարում (էջ 564—589) լույս տեսավ Գալուստ Տեր-Մկրտչյանի «Տիմոթեոս Կուղի Հակաճառության հայ թարգմանության ժամանակը և այլն» վերնագրով հոդվածը, որի մեջ ասված է հետևյալը. «Ընդհանրապես ասած հրատարակիչների գլխավոր թեղիսների հետ թարգմանչի և թարգմանության ժամանակի վերաբերյալ ես կհամաձայնեի, այս սահմանափակությամբ, որ Տիմոթեոսը թարգմանված է վեցերորդ դարու երկրորդ կեսին, հույն բնագրից, հունարան լեզվով, առանց երկրորդական ենթադրար ասվածներին առանձին կշիռ ընծայելու: Բայց բարեբախտաբար Տիմոթեոսի հայ թարգմանության մեջ պահված է մի այնպիսի նիշտ ժամանակաբանական ցուցում, որով հնարավոր է նշտիվ որոշել թարգմանության փառամյակը և որով հեղաշրջվում են ո՛չ միայն փառաշարանում բերված գլխավոր թեղիսները, այլև մեր, վերջին փառող դարում, հայագիտության մեջ մշակված ընդհանուր հայացքները հունարան դպրոցի, դավանաբանական վե-

<sup>1</sup> Տե՛ս Գիրք Թղթոց, էջ 101, 103, 126, 140.

<sup>2</sup> Տե՛ս Տիմոթեոսի «Հակաճառության» հառաչարանը, էջ XIV—XVIII.

ների շրջանի և հատկապես՝ նրա սկզբնավորության վերաբերյալ: Մոտ մի դարով ընդլայնվում է աեսության հորիզոնը դեպի հետ և փոխվում է այդ խնդիրներին վերաբերյալ հարցերի հիմնակետը» (Ամբողջ ընդդժումն իմն է: Ե. Տ.-Մին.):

Ո՞րն է այդ ժամանակարանական ցուցումը. Տիմոթեոս Կուզի գրվածքում եկեղեցական հայրերից բերված «պիտառություններից» մեկի վերնագիրը հետևյալն է. «Երանելոյ հայր մերոյ եպիսկոպոսապետի Աղեքսանդրեայ և Խոստովանողի՝ ի գրեցելոյ առ Սեկունդինան թղթոյ ի Գանգրայ յեքսորաց, ուր զընթացսն կատարեաց ի Քրիստոս Թովթ՝ Լեթներորդ, սեպտեմբերի երկրորդ Հոռի վեցերորդ» (էջ 277):

Գանելով, որ ակներևորեն հայ թարգմանիչն է ավելացրել համապատասխան հայ ամսաթիվը՝ Հոռի վեցը, Գ. Տեր-Մկրտչյանը այնուհետև, բնավ չկասկածելով, որ Հոռի վեց ընթերցվածը կարող է նաև աղճատված լինել, տոմարական հաշիվներ անելով գալիս է այն եզրակացության, որ սեպտեմբերի 2—Հոռի վեցի դուգավորությունը կարող է հանդիպել միայն 480—483 թառամյակին, ավելի ճշգրիտ 29 փետրվարի 480—28 փետրվարի 484: Այստեղից Գ. Տեր-Մկրտչյանը եզրակացնում է. «ահա այս ֆառամյակն է Տիմոթեոս Կուզի հայ թարգմանության հաստատուն և անխախտելի րվականը». և ապա՝ «այս գուգավորությամբ առաջին անգամ ունենում եմ հինգերորդ դարից, մաքեմաթիկոնեն նշտված ֆառամյակ գրական աշխատության, որով և դրվում է առաջին հաստատուն հիմնաֆարը մեր գրականության ապագա նշգրտված ժամանակագրությանը...» (ընդդժումն իմն է: Ե. Տ.-Մին.):

Միաժամանակ Գ. Տեր-Մկրտչյանը աշխատում է փակել իր եզրակացության դեմ կասկած հարուցելու ուրիշ որևէ ճանապարհ: Օրինակ, նա գրում է. «Թերևս մեկը իրեն թույլ տա ենթադրել, որ հայ թարգմանը Հոռի 6 դնելով կամեցել է հաշվել ոչ իր թարգմանության, այլ Գիոսկորոսի Սեկունդինանին գրած թղթի ժամանակը: Բայց այդպիսի հաշվի համար պակասում են անհրաժեշտ պայմանները: Միմիայն «սեպտեմբերի 2» ունենալով անհնար է այդպիսի հետադարձ հաշիվը, անհրաժեշտ էր ունենալ նաև թղթի գրության տարեթիվը»: Հետադարձ հաշիվ անելու հնարավորությունը Գ. Տեր-Մկրտչյանը ժխտում է նաև իր երկրորդ հոդվածում (տե՛ս «Շողակաթ» ժողովածու, հայ մատենագրության հնագույն թվականները հոդվածը՝ էջ 155. «Ի՞նչպես հավանական համարել թարգմանչի կողմից հետադարձ հաշիվ»): Հետադարձ հաշվի հնարավորության մասին մենք կխոսենք մի քիչ հետո:

Գ. Տեր-Մկրտչյանի այս վարկածը սկզբում ո՛չ միայն ընդունելություն չդրավ, այլ և շատ հիմնավոր առարկություններ և ընդդիմաբանություններ առաջացրեց (տե՛ս Ն. Ակինյան, «Տիմոթեոս Կուզ հայ մատենագրության մեջ», Աղգային Մատենադարան ԾԸ, Վիեննա, 1909): Հետագայում առանց լուրջ հիմնավորման Գ. Տեր-Մկրտչյանի հաշիվները ճիշտ համարեցին և նրա կողմն անցան Կարապետ Տեր-Մկրտչյանը և Ստ. Մալխասյանը: Իսկ երբ 1926 թվականին նրա դեմ դուրս եկավ ահադ. Հակոբ Մանանդյանը («Հանդես Ամս-

<sup>1</sup> Պարտք ենք համարում այստեղ պարզել մի թյուրիմացություն, որ առաջացել է Տիմոթեոսի հրատարակիչների (տողերիս գրողի և Կ. Տեր-Մկրտչյանի) անուշադրությունից և առիթ է ափել բազմաթիվ էջեր գրելու գոյություն չունեցող մի հարցի մասին: Բանն այն է, որ համապատասխան տեղը Տիմոթեոսի ձեռագրում (N 1958) ո՛չ թե ունի բուլղը Լեթներորդ, այլ պարզապես բուլղը Լեթներորդ (տե՛ս էջ 269բ), ինչպես կրկնակի ստուգեցինք 1958 թվականին:

օրյա»-ում, ապա առանձին գրքով), սրա դեմ էլ իր առարկություններն արեց ահադ. Մանուկ Աբեղյանը (Հին հայ գրականության պատմություն, I հատ., Երևան 1944, հինգերորդ հավելված, էջ 613—618):

Ամենից առաջ պետք է շեշտել այն հանգամանքը, որ պիտառության վերնագրի մեջ խոսքը անկասկած վերաբերում է Դիոսկորոսի մահվան ամսաթվին, որը շատ հասկանալի կերպով դրված է եգիպտական թուղթ ամսի հաշվով: Մենք արդեն նշեցինք, որ Տիմոթևոսի երկի մեջ գրված է այդ ամսի անունը, ուրեմն «թուղթ» ընթերցվածը, որ պատահում է № 454 (Կ) ձևադրում, էջ 230 (Տիմոթևոսի տպագրություն, էջ 335) և «Կնիք հաւատոյ» ժողովածու, էջ 112, պետք է թյուրիմացություն համարել: Այդպիսով համապատասխան պիտառության վերնագիրը պետք էլինի վերականգնել հետևյալ ձևով.

«Երանելոյ հար մերոյ Դիոսկորոսի եպիսկոպոսապետի Աղեքսանդրեայ և Խոստովանողի՝ ի գրեցելոյ առ Սեկունդինան թղթոյ, ի Գանդրա յեքսորաց, ուր դարշաւանն (կամ զընթացսն) կատարեաց ի Քրիստոս. Թուղթ է., սեպտեմբեր Բ., Հոռի Զ.»:

Գ. Տեր-Մկրտչյանը գտնում է, որ ամսաթիվը պետք է լինի «Թուղթ Ե., Սեպտեմբեր Բ., Հոռի Զ.» և այդ բացատրում է նրանով, որ իբր շփոթվել են հայերեն այբուբենի Ե և է տառերը, որ շատ սովորական բան է: Բայց ինչու է նա այդ դեպքում երեք անգամ պատահող «Թուղթ է»-ն վերածում միայն մի անգամ պատահող «Թուղթ Ե»-ին. չէ՞ որ ճիշտ հակառակը կլինեիր տրամաբանականը և ավելի հավանականը: Գ. Տեր-Մկրտչյանը հենց ինքը բաց է անում զաղտնիքը. նրան հայտնի է, որ Դիոսկորոսը իրոք մեռել է սեպտեմբերի ոչ թե 2-ին, այլ 4-ին, իսկ սեպտեմբերի 4-ին համապատասխանում է Թուղթի 7-ը և ոչ թե 5-ը: Նա գրում է. «Ուրեմն խնդրական է մնում Դիոսկորոսի մահվան ամսաթիվը, որ պիտի լինի կամ 5 կամ 7: Եթե 7-ն է նախնականը՝ հայերեն թարգմանվելուց հետո է-ն շփոթմամբ կարդացվել է Ե և վերջինիս դիմաց միայն հնարավոր էր դնել սեպտեմբերի 2» («Շողակաթ» ժողովածու, էջ 157): Ինչպես տեսնում ենք, այս թվերի մեջ մեկի փոխարեն մի քանի սխալ կա: Նախ՝ ճիշտը Թուղթ է-ն է և ոչ թե Ե-ն, երկրորդ՝ սեպտեմբերի 2-ի փոխարեն պետք է լինի անպայման սեպտեմբերի 4, իսկ թե ինչ պիտի լինի Հոռի 6-ը, այդ կտեսնենք հետո:

Դիոսկորոսի մահվան օրն ու տարին մեզ հաղորդում է նրա աշակերտ Թէոպիստը սկզբնապես հունարեն գրված և այժմ ասորերեն պահված կենսագրության մեջ, որ ֆրանսերեն է թարգմանել F. Nau-ն<sup>1</sup>: Այդ կենսագրության մեջ պատմվում են Քաղկեդոնի ժողովին նախորդող իրադարձությունները, այդ ժողովի հրավիրումը, Դիոսկորոսի Կ. Պոլիս մեկնելը, նրա ունկնդրությունը կայսեր մոտ, «նեստորականների» ինտրիգները, Քաղկեդոնի առաջին նիստը, Դիոսկորոսի պաշտոնանկումը, նրա ջանքերը՝ եպիսկոպոսներին նորից իր կողմն անցկացնել, նրա աքսորումը, Գանդրայում ապրելը և վերջապես նրա մահը, որը, Թէոպիստի ասելով, տեղի է ունեցել «էլուլ (=սեպտեմբեր) ամսի 4-ին դիշերվա ժամի 11-ին»: Թէոպիստը Դիոսկորոսի հետ զնացել

<sup>1</sup> Histoire de Dioscore, patriarche d'Alexandrie, écrite par son disciple Théopiste (Journal asiatique: Dixième série, t. I, Paris 1903, p. 1—108, 240—310). Հմտ. Die sogenannte Kirchengeschichte des Zacharias Rhetor, in deutscher Übersetzung herausgegeben von K. Ahrens und G. Krüger, Leipzig 1899, էջ 304:

է Գանգրա արքայ, մահվան ժամանակ նրա մոտ է եղել, նրա մահից երկու ամիս հետո գնացել է Պենտապոլիս (Cyrenaica), ուր և 455 թվականին գրել է այդ կենսագրությունը: Ուրեմն այստեղ մենք ունենք մի միանգամայն վրաստահելի, ականատես վկա, որի տված տեղեկությունները ոչ մի կասկածի ենթակա չինել շնն կարող<sup>1</sup>: Պետրոս Վրացու վարքի մեջ էլ ասված է, որ Գիոսկորոսը մեռել է էլուլ ամսի 7-ին<sup>2</sup>. այստեղ էլուլը դրված է անշուշտ Թովթի ֆախարհն, կամ գուցե սխալ է այն:

Այստեղ անհրաժեշտ է մի հարց ևս շոշափել, որ սերտորեն կապված է մեզ հետաքրքրող խնդրի հետ: Հայտնի է, որ Բրիտանական Թանգարանում 562 թվականից առաջ գրված մի ասորերեն ձեռագիր կա Cod 729 add. 12156 համարի տակ (հմմտ. W. Wright, Catal. 639—648), որն իր բովանդակությամբ խիստ նման է մեր Տիմոթեոսի «Հակաճառությանը». ասորերեն այդ հատորի վերնագիրն էլ նման է հայերենին և կոչվում է «Տիմոթեոսի գիրք Ընդդէմ ժողովոյն Քաղկեդոնի»: Բնականաբար ես ուզեցի ստուգել, թե արդյոք մեր Տիմոթեոսի Գիոսկորոսից բերված պիտառություններն իրենց վերնագրերով չկա՞ն այդ ձեռագրում:

Այդ ուղղությամբ ես շատ աշխատեցի մինչև 1913 թվականի վերջերը, բայց իմ ջանքերը հաջողությամբ չպսակվեցին: Քանի որ այդ ձեռագրի մի խոշոր մասը անգլերեն էր Բարզմանել և հրատարակել S. G. F. Perry-ն (Dartford 1881), և նախ այդ գրքի մեջ գտա Հենատոնի վանականներին ուղղված նամակի հատվածը, սակայն առանց որևէ ամսաթվի: Ապա ես խընդրեցի, որ ձեռագիրն ստուգեն և ինձ հայտնեն: Վերջապես ես 1913 թվականի դեկտեմբերի 5-ին Գիսենից (Գերմանիա) պրոֆ. Գուստավ Կրյուգերից մի բաց նամակ ստացա, որն իմ խնդրով դիմել էր Լոնդոն, իմ մատնանշած ձեռագիրը նայելու համար. այդ բացիկն ասում էր՝ «Պարոն E. W. Brooks-ը Լոնդոնից հաղորդում է ինձ, որ ձեռագրում էլ (add. 12156) ոչ մի ամսաթիվ չի նշված, և իրոք էլ անսովոր բան կլիներ թվագրված աստվածաբանական նամակը»:

Այնուհետև եկավ առաջին համաշխարհային պատերազմը և ես այլևս հնարավորություն չունեցա այդ հարցով զբաղվելու, թեև զանազան առիթներով միշտ անդրադառնում էի այդ խնդրին և խոստամնում իմ ասելիքն ասել, քանի որ ես ոչ մի կերպ չէի կարողանում համաձայնել Գ. Տեր-Մկրտչյանի և նրա հետևորդների ո՛չ հաշիվներին և ո՛չ էլ դատողություններին:

Վերջապես ես որոշեցի մի անգամ էլ դիմել Բրիտանական Թանգարանի վարչությանը և խնդրել, որ ուղարկեն ինձ հետաքրքրող պիտառությունների վերնագրերը ասորերեն ձեռագրից, և 1944 թ. մարտի 1-ին նամակ ուղարկեցի Լոնդոն այդ մտքով: Նույն թվի օգոստոսի 30-ին գրված պատասխանը հաղորդում էր ինձ, որ ներկա պայմաններում «բոլոր արևելյան ձեռագրերը ստիպված ենք եղել տեղափոխել Լոնդոնից հեռու գտնվող ավելի ասպահով վայրեր, և նրանք մինչև պատերազմի վերջը մատչելի չեն լինի: Սակայն, հենց որ այդ ձեռագրերը նորից մատչելի լինեն, ես այն ստուգել կտամ և Ձեզ կտեղեկացնեմ»: Եվ իրոք, պատերազմը վերջանալուց հետո ես ստացա Բրիտանա-

<sup>1</sup> See Felix Haase, Patriarch Dioskur I von Alexandria nach monophysitischen Quellen, 1909, S. 145 ff.

<sup>2</sup> R. Raabe, Petrus der Iberer, Leipzig, 1895, էջ 63:

կան թանգարանից 1947 թ. հունիսի 17-թվակիր մի գրութուն, որով ուղարկվում էր ինձ իմ ցանկացած պիտառությունների վերնագրերը ասորերեն: Նրանցից մեկը՝ Հենատոնի միայնակյացներին ուղղված նամակը իրոք թվական չունի, ինչպես հաղորդել էր E. W. Brooks-ը և ինչպես հայերենում է (տես Տիմոթեոսի Հակաճառութուն, էջ 279), իսկ Սեկունդիանոսին գրած նամակից վերցրած պիտառության վերնագրերը հետևյալն է՝.

«Երանելոյ Դիոսկորոսի հար մերոյ և եպիսկոպոսապետի Աղեքսանդրեայ և Խոստովանողի ի գրեցելոյ առ Սեկունդինոս թղթոյ, ի Գանգրա յեքսորաց, ուր զընթացսն կատարեաց ի Քրիստոս ի Թշրին քրդեմ յոթին (= Թշրին I-ի յոթին)»:

Այս վերնագրի շուրջն ևս թյուրիմացութուն կա.

Նախ, ո՞րտեղից է վերցրել է. Շվարցը, որ այս ձեռագիրը (Brit. Mus. add. 12156) «պարզապես» ավանդել է «...ուր զընթացսն կատարեաց ի Քրիստոս սեպտեմբերի ամսոյ 9»<sup>2</sup>, երբ ձեռագրում ասված է «Թշրին քրդեմ յոթ»:

Երկրորդ, ի՞նչպես պետք է հասկանալ «Թշրին քրդեմ» ամիսը. չէ՞ որ սրբան հայտնի է, Թշրին քրդեմը կամ Թշրին I-ը չի համապատասխանում սեպտեմբերին, որը էլուլ է կոչվում, այլ համապատասխանում է հոկտեմբեր ամսին<sup>3</sup>: Բոլոր դեպքերում անհասկանալի է մնում 6 և 7 թվերի տարբերությունը: Ինձ թվում է, որ բոլոր դեպքերում, երբ խոսվում է 7 ամսաթվի մասին, պետք է հասկանալ թուլթ ամսի 7-ը, որպես այս դեպքում Դիոսկորոսի մահվան վավերական թվական, իսկ մյուս թվերը թյուրիմացության արդյունք են:

Եթե այդպես է, եթե թուլթ է—սեպտեմբերի 4 (ոչ 2) է Դիոսկորոսի մահվան ճիշտ թվականը, ապա մնում է լուծել հայերենի «Հոսի 9»-ի խնդիրը: Գ. Տեր-Մկրտչյանի կարծիքով՝ դա Տիմոթեոս Կուզի «Հակաճառության» հայ թարգմանության ժամանակն է նշում, որովհետև Դիոսկորոսի մահվան ամսաթիվը նշող այդ հատվածում մահվան տարեթիվը չկա, «ուրեմն և ոչ մի հնարավորութուն հետադարձ հաշվի»:<sup>1</sup> Ծիշտ է, որ մեր պիտառության վերնագրում չի նշված Դիոսկորոսի մահվան տարեթիվը, բայց նշանակո՞ւմ է այդ արդյոք, որ Դիոսկորոսի նման մեծության մահից դեռ լրիվ 100 տարի շանցած մարդիկ արդեն չգիտեին նրա մահվան տարեթիվը թեկուզ «անիծյալ» Մարկիանոս կայսեր տարիներով հաշված, այն Դիոսկորոսի, որ իր մահից հազիվ 10—15 տարի անցած «եքսանելի հայր մեր և խոստովանող» է կոչվում և բոլոր նշաններից երևում է, որ սրբացած մարդու պատիվներ է վայելել և թերևս նաև հատուկ տոն ունեցել եկեղեցում: Մեզ թվում է, որ այդպիսի բան լինել չի կարող. Դիոսկորոսի մահվան թվականն անշուշտ հայտնի կլինե՞ր՝ նրան այդքան պատիվներ տվող միաբնակներին: Ուրեմն հետադարձ հաշիվ-

<sup>1</sup> Թերում եմ գրառար թարգմանությամբ, քանի որ մեզանում ասորերեն տառերով ապագրել անհնարին է:

<sup>2</sup> Այս տեղեկությունը հաղորդում է Ն. Ակինյանը, «Հանդես Ամսորյա», 1932, էջ 279—280, ասելով հետևյալ գրքից. E. Schwarz, Codex Vaticanus Gr. 1431, eine antichalcedonensische Sammlung aus der Zeit Kaiser Zenos, München. 1927, էջ 125: Abhandlungen der Bayerischen Akademie der Wissenschaften, phil.—Histor. Klasse, XXXII Bd., 6 Abt.

<sup>3</sup> Տե՛ս Eberhard Nestle, Syrische Grammatik, Berlin, 1888, էջ 132: ևաև Payne Smith A Compendious syriac Dictionary, Oxford 1903, էջ 623, որտեղ ասված է՝ Թշրին քրդեմ = հոկտեմբեր, Թշրին խրայա = նոյեմբեր:

ենք անել Գիոսկորոսի մահվան օրվա զուգադիպումների վերաբերյալ ո՛չ քե  
անկարելի պետք է համարել, այլ միանգամայն հնարավոր, մանավանդ հա-  
յոց եկեղեցու կապակցություններ, որք, ինչպես երևում է, Գիոսկորոսին սրբ-  
բերի կարգն է դասել և հատուկ տոն է սահմանել նրա հիշատակին: Մեր մա-  
տենադարանի ձեռագրերում զանազան առիթներով պրայտումներ կատարելիս  
մենք 1907 ձեռագրում (էջ 2ր) պատահեցինք Գիոսկորոսին նվիրված հետևյալ  
շարականին, որի վերջում ասված է, թե զա գտնվում է «ի մէջ շարակնոցին»:

«Գեղեցիկ շառաւիղ յարմատոյ սրբոց հարցն,  
Վերաբուսեալ ծաղիկ հաւատոյ մեծ վկայն Քրիստոսի  
Սուրբն Գիոսկորոս, ոչ հաւանեալ անօրէն ժողովոյն,  
Նգովեաց զլեռն և զտօմարն իւր պիղծ»:

Ուրեմն Գ. Տեր-Մկրտչյանի ամբողջ կառուցվածքի հիմքը, տարեթիվ նըշ-  
ված չլինելու պատճառով հետադարձ հաշիվ անելու անհնարինությունը, իրա-  
կանությունը չի համապատասխանում:

Գ. Տեր-Մկրտչյանն ինքն էլ ընդունում է, որ հետադարձ հաշիվներ արվել  
են, բայց դրա համար նա միշտ պարտադիր է համարում բացի ամսաթվից  
նաև տարեթվի նշումը, գտնելով, որ այլ կերպ համարողները ոչ մի դեպ-  
քում չէին կարող ճշտել զուգադիպումները: Այս պնդումն ևս չի համապա-  
տասխանում իրականությանը. մեր գրականության մեջ (տես Ասողիկ, էջ  
78—79) պահված է հետևյալ ժամանակարանական ցուցումը. «Եւ յետ պա-  
տերազմին Վարդանայ՝ զկնի երկուց ամաց սուրբ Ղևոնդեանք Յովսեփաւ հայ-  
րապետաւ կատարեցան յամսեանն հրօտից, որ օր ԻՁ էր ամսոյն, նոցն յու-  
չիսի յաւուր կիրակէի: Ըստ որում ստուգեալ մեր զամս թագաւորացն՝ զտաք  
հանդիպեալ ի ժն ամն Յազկերտի և յԳ-ն Մարկիսանոսի անիծելոյն»: Նույնը  
բերում է նաև Վարդան Բարձրբերդցին (Մոսկվա, 1861, էջ 76), միայն սա  
հիշում է Հազկերտի ժՁ տարին և նահատակությունը դնում է Հրօտից ամ-  
սի ԻԾ-ին:

Սա ցույց է տալիս, որ մեր նախնիք հնարավորություններ ունեցել են ժա-  
մանակարանական բարդ հաշիվներ անելու, անշուշտ ձեռքերին ունենալով  
ժամանակարանական աղյուսակներ (կայսրների և թագավորների տարեթվեր,  
հայրապետների կարգ, զատկական ցուցակներ և այլն), որով կարողացել են  
առանց տարեթվին ունենալու այդ աղյուսակներով որոշել դեպքի տարեթիվը,  
բյուզանդական կայսրների և պարսից թագավորների տարիների համապա-  
տասխանությունը և այլն: Մեր դեպքի համար բավական էր իմանալ, որ  
Գիոսկորոսը մեռել է Մարկիսանոսի կայսրության 5-րդ տարվա սկզբներին,  
ամսաթիվը տրված էր, ուրեմն ամեն տեսակի հետադարձ հաշիվ հնարա-  
վոր էր և հայ թարգմանիչը կարող էր նշանակել ո՛չ թե թարգմանության թվա-  
կանը, այլ միայն ևեթ Գիոսկորոսի մահվան ամսաթիվը իր ժամանակի հայե-  
րեն ամսաթվով:

Բայց այս միայն ի միջի այլոց, ցույց տալու համար, որ մեր նախնիներ-  
ը շատ ավելի մեծ հնարավորություններ են ունեցել, քան մենք կարծում ենք  
երբեմն: Գալով մեզ հետաքրքրող խնդրին, պետք է ասենք, որ իրօր հայ  
թարգմանիչը, ինչպես երևում է, այդպիսի հետադարձ հաշիվ չի արել, այլ  
միայն նշանակել է Գիոսկորոսի մահվան ամսաթվի զուգադիպությունը  
Տիմոթեոսի գրքի թարգմանության ժամանակի հայկական ամսաթվի հետ:



Եթե այդպես է, պետք է միանգամայն ճիշտ համարել Հակոբ Մանանդյանի առաջարկած սրամիտ ուղղումը: Գտնելով, որ «Տիմոթեոսի բնագիրն ազատ չէ աղճատումներից», Մանանդյանն այն կարծիքն է հայտնում, որ «Հոռի Զ ամսաթիվը աղճատված է սկզբնական Հոռի ԻԶ ընթերցվածից: Այդ դեպքում Թովթ է = սեպտեմբեր Գ = Հոռի ԻԶ զուգավորության հանդեպ կունենանք 552—556 թվականները, իսկ Թովթ Ե = սեպտեմբեր Բ = Հոռի ԻԶ զուգավորության հանդեպ, 480—484 քառամյակի փոխարեն, կունենանք 560—564 թվականները»<sup>1</sup>: Մի կողմ թողնելով Թովթ Ե = սեպտեմբեր Բ = Հոռի ԻԶ զուգավորությունն իբրև սխալ և ավելորդ, մենք կունենանք միայն Թովթ է = սեպտեմբեր Գ. և դրա դիմաց թարգմանչի ժամանակի հայերեն ամսաթվի զուգավորումը = Հոռի ԻԶ, որի համաձայն Տիմոթեոս Կուղի թարգմանության ժամանակը կդառնա 552—556 քառամյակը, որը միանգամայն համապատասխանում է պատմական իրականությանը և մեր ունեցած բոլոր տեղեկություններին:

Որ հայկական Հոռի ԻԶ չի մատնանշում Գիոսկորոսի մահվան թվականը, այդ երևում է այն հաշվից, որ Գիոսկորոսի մահվան տարին, 454 թվականին Թովթ է = սեպտեմբերի 4-ին համապատասխանում է Հոռի 1-ը: Իսկ եթե, հետևելով Ակինյանի առաջարկած մի այլ ուղղումին, ուզենանք սեպտեմբերի Բ-ն կարդալ Թ, այն ժամանակ կգտնենք, որ 454 թվականին Հոռի 6-ին իսկպես համապատասխանում է սեպտեմբերի Թ ընթերցվածը, բայց այդ դեպքում էլ մեջտեղից վերանում է Թովթ Ե կամ է-ն, որոնց այդ թվականին համապատասխանում էր Նավասարդի 29-ը կամ Հոռի 1-ը:

Այս բոլոր դժվարությունների մեջ ամենից քիչ դժվարություն հարուցողը Հոռի Զ-ն Հոռի ԻԶ կարդալն է: Այդպիսի շփոթություններ շատ են հանդիպում մեր ձեռագրերում, բայց մենք որպես օրինակ կբերենք միայն մեկը, որը դարձյալ Զ և ԻԶ թվերին է վերաբերում:

Մեր Մատենադարանի Զեռ. № 3569 էջ 134ա կարդում ենք՝ «Արեգի Զ. և մարտի. ԺԳ. վարք և յիշատակ է սքանչելի առն Գրիգորի պապին Հոռմայ»: Զեռագիրը համարվում է Ժէ-ԺԸ դարու գործ: Իսկ Զեռ. № 9220. Պատառիկ Տայսմավորքից — ԺԵ—ԺԶ դար. էջ 109ա. նույնը ունի հետևյալ ձևով. «Արեգի. ԻԶ. և մարտի. ԺԳ. յիշատակ վարուց սքանչելի առն Աստուծոյ սրբոյն Գրիգորի Հոռմայ պապուն»:

Սա, իհարկե, մեր հարցի համար վճռական նշանակություն չունի, բայց ցույց է տալիս, որ թվերի այդպիսի շփոթություններ ո՛չ միայն հնարավոր են, այլև իրոք պատահել են:

Ահա այս բոլոր հիշված հանգամանքները նկատի ունենալով էր, որ մենք սկզբից ևեթ անընդունելի էինք համարում Գ. Տեր-Մկրտչյանի հաշիվները, որովհետև գտնում էինք, որ այդ հաշիվները հիմնված են մի անորոշ, բազմաթիվ պատահականությունների և սխալների ենթակա և քաղմազան բացատրություններ վերցնող թվականի վրա: Մեր կարծիքով՝ Գ. Տեր-Մկրտչյանի և նրան հետևող Կարապետ Տեր-Մկրտչյանի, Ստ. Մալխասյանի և Մանուկ Աբեղյանի հիմնական սխալն այն էր, որ նրանք հենվելով ձևական մի տվյալի վրա, որը ինչպես տեսանք, անաղարտ և առանց աղճատումների չի հասել

<sup>1</sup> Հ. Մանանդյան, Հունարան դպրոցը և նրա զարգացման շրջանները, «Հանդես Ամսօրյա», 1926, էջ 442: Լույս է տեսել նաև առանձին գրքով:

մեզ, անուշադրության էին մատնում կամ բռնորովին նշանակություն չէին տալիս պատմական ընդհանուր զարգացման ցուցմունքներին և զրավոր աղբյուրների այն բացահայտ վկայություններին, որ հասել են մեզ զանազան աղբյուրներից: Որո՞նք են այդ վկայությունները մեզ հետաքրքրող հարցի մասին:

Գրանցից մեկը և, մեր կարծիքով, ամենակարևորը մենք բերել ենք մեր հրատարակության առաջարկում. դա հայտնի Փոտ պատրիարքի Թղթի հատվածն է Հայոց Զարարիա կաթողիկոսին, որտեղ կարդում ենք. «... Եւ հայր վտանգեալք ի հինից պարսից, ոչ զօրեցին և պարապեցան զալ ի ժողովն. վասն այնորիկ ոչ եհաս պատճառ ժողովոյն ի Հայր հաւաստեալ. բայց հակառակութիւն ինչ վասն ժողովոյն ոչ դոյր, այլ ամենեքեան ընդունէին զժողովն մինչև ի ժողովն Դունայ... ցԶ ամն ներսեսի կաթողիկոսի, որ Աշտարակացն էր, որ արար զժողովն ի Դուին... ի ձեռն Արդիշոյի ասորոյ, որ եկեալ էր ի Սասոնոյ ի Սարարթոյ վանիցն և այլք ընդ նմա, որ ձեռնադրեցան. (ընկալան նաև) զԴիսոկորոս և զՓիլակտոն եպիսկոպոս ի Նաբուք քաղաքէ և զԴիմոթէոս Աղեքսանդրացին, որում Կուզն կոչեն, որ զգրեալն թարգմանեցին ի հայս, որ կոչեն յետին թարգմանիչք, որ ունի բազում շարախոսութիւն վասն ժողովոյն Քաղկեդոնի ի նոցին թարգմանութեանն. և ի նոցունց աւանդութենէն՝ մի բնութիւն ավանդեցին Քրիստոսի աստուածութեանն և մարդկութեանն և զխաչեցարդ եղին սրբասացութիւնսն՝ հակառակ կարծելով ժողովոյն Քաղկեդոնի»<sup>1</sup>:

Սրա բուն աղբյուրը համարվում է «Յաղագս հայկական իրաց» (De rebus Armeniae) անանուն պատմությունը, որի մեջ ասված է<sup>2</sup>:

«Եվ այստեղ (Դվինի ժողովում) (Ներսես Աշտարակեցու օրով) նդովեցին Քաղկեդոնի սուրբ ժողովը որպես նեստորական՝ Արդիշոյի խոսքի համաձայն: Որովհետև այդ նույն ժամանակները թարգմանեցին Արդիշոյի բերած վերոհիշյալ Տիմոթեոսի և Փիլիքոս (անշուշտ՝ Փիլոքսեն) ասորիի գրքերը, գրված Քաղկեդոնի մեջ եղած որոշումների դեմ և նրանց դեմ, որոնք Քրիստոսի մեջ երկու բնություն են դավանում: Եվ այդ գրքերով համոզվեցին և Դվինի նույն ժողովին մեջ որոշեցին՝ մի բնություն ասել աստծու բանի և մարմնի մասին, և անմահ բնությամբ խաչված ու մեռած: Ուստի Սուրբ աստվածի վրա ավելյացրին «որ խաչեցարդ», համաձայն Պետրոս Թափիչի, որ վարակված էր Սարբոսի մոլորությամբ»<sup>3</sup>:

Երրորդ վկայությունը պատկանում է վրաց կաթողիկոս Արսեն Սափարացուն. նա ասում է.

«Եվ կրկին նդովեցին նույն սուրբ ժողովը Քաղկեդոնի, որ կոչեցին նեստորական՝ համաձայն անաստված Արդիշոյի, և նույն թվին երեվան հանեցին մեկնողական գրությունն Տիմոթեոս և Փիլոքսենոս հերձվածողներու, որոնք ասորի էին, և առաջինները եղան, որ գրեցին և Քրիստոս Աստուծու երկու բնությունն ընդդիմադրելու մասին, և Կուզի գրվածքին ստորագրվեցին իրենց իսկ մեռցնելու համար և ասացին մի բնություն բանին աստուծո և մարմնո և ան-

<sup>1</sup> Правосл. палест. Сборник, т. XI, вып. I СПб, 1892, էջ 179—210, մեզ հետաքրքրող հատվածը, էջ 180—181:

<sup>2</sup> Migne, Patr. gr. 132, էջ 1243—1245. տե՛ս ն. Ա կ ի ն յ ա ն, Տիմոթեոս Կուզ հայ մատենագրության մեջ:

<sup>3</sup> Տե՛ս ն. Ա կ ի ն յ ա ն, Տիմոթեոս Կուզ հայ մատենագրության մեջ, Վիեննա, 1909, էջ 15:

մահական բնութեամբ խաչեցեալ և մեռյալ Քրիստոս քարոզեցին, այսինքն խաչեցեալ ավելացրին Սուրբ աստվածի մեջ, որ է խաչեցար, համաձայն Պետրոս Անտիոքացու, որ Սարգիստի ախտով էր վարակված»<sup>1</sup>:

Վերջապես, վերջերս Պողոս Անանյանը հայտնաբերել է մի նոր պատմական հիշատակարան Գվինի Բ. ժողովի մասին, որը տպված է «Բաղմավեպ» հանդեսում<sup>2</sup>: Հիշատակարանը վերցված է 1335թ. գրված մի ճառքնտրից, Վենետիկի ձեռագիր, № 239, էջ 81ա—28բ. նրա վերնագիրն է՝

«Գիր մերոյ հարցն որ ի Գուին ժողովեալ  
յաւուրս մեծին ներսեսի Հայոց Մեծաց  
և վասն Քաղկեդոնի»:

Այդ հիշատակարանում ասված է հետևյալը Գվինի Բ. ժողովի մասին...

«Եւ ի բաց մերժեցին զժողովն Քաղկեդոնի նզովիւք շափ. յորում ամի և զգիրսն իսկ թարգմանեցին զՏիմոթէոսի Երկրորդ քղթին մեկնութիւն ի հայական (sic!) բառ, և զՓիլակասին. և հակառակ Քաղկեդոնի ժողովոյն ճառ ոչ սակաւ կարգեցին: Գրեցին և զսրբասացութիւնսն զխաչեցարդ կցուրդս ընդդիմակս նոցա բարժանմանն զՔրիստոսի միատրեալ բնութիւնն»<sup>3</sup>:

Մի կողմ թողնելով այս 4 հիշատակարաններում եղած մանր թյուրիմացությունները, ինչպես օրինակ Տիմոթէոսի և Փիլոքսենի գրվածքները «մեկնողական գրություն» անվանելը Արսեն Սափարացու վկայության մեջ կամ Տիմոթէոսի գրվածքը «Երկրորդ թղթին մեկնություն» կոչելը վերջին հիշատակարանում, տեսնում ենք, որ այդ պատմական հիշատակարանների մեջ շատ ճիշտ բնորոշված են այն գործերը, որ կատարեց Գվինի Բ. ժողովը, այն է՝ 1) Քաղկեդոնի ժողովի մերժումը՝ համարելով այն անշուշտ նաև նեստորականության վերահաստատում. 2) Տիմոթէոս Կուզի և Փիլոքսենոս Մարուզեցու գրվածքների և այլ հակաքաղկեդոնական գործերի թարգմանությունը և 3) Սուրբ աստվածի վրա «որ խաչեցար»-ի հավելումը: Այս 3 հարցերի վերաբերմամբ հիշված հիշատակարաններն արտահայտվում են շատ որոշակի և ոչ մի թյուրիմացության տեղ չեն թողնում և վստահելի են միանգամայն:

Մեզ ակներև է թվում, որ այդքան բաղմազան և միևնույն բանը շնչին տարբերություններով կրկնող վերոհիշյալ 4 հիշատակարանների տված տեղեկությունները ոչ մի դեպքում չի կարելի անտեսել միայն այն փաստարկումով, որ նրանք անզոր են Տիմոթէոսի Հակաճառության մեջ իբր պահված թվական ճշգրիտ տվյալի դիմաց: Մենք տեսանք, որ թվական այդ տվյալը բնավ ճշգրտիտ չէ, զանազան ձևերով է ավանդված, ուրեմն աղճատված է, թույլ է տալիս զանազան բացատրություններ և չի արդարանում մեր ունեցած բոլոր հավաստի պատմական անխախտելի տեղեկությունների հանդեպ:

Ուստի համառոտ կերպով քննենք մեր ունեցած պատմական այդ հավաստի տեղեկությունները և տեսնենք, թե արդյոք հնարավո՞ր է ընդունել, որ Տիմոթէոսի թարգմանությունը կատարվել է 480—484 թվականներին, Հովհան Մանդակունու կաթողիկոսության ժամանակ: Եթե Տիմոթէոսի Հակաճառությունը թարգմանվել է 480—484 թվականներին, ապա պետք է ընդունել,

<sup>1</sup> Լ. Մե լի բ ս ե թ-ր ե կ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, Ա, էջ 10:

<sup>2</sup> Տե՛ս «Բաղմավեպ», 1957, թիվ 5—6, մայիս-հունիս, էջ 112—113:

<sup>3</sup> «Բաղմավեպ», 1957, էջ 113, տող 46—51:

որ 480-ական թվականներին քաղկեդոնականության և հակաքաղկեդոնականության քուռն պայքար է եղել Հայաստանում. իսկ այդպիսի պայքարի ամենաչնչին հետք անգամ չենք գտնում Ե. դարի վերջին քսանամյա պատմության շրջանում: Նախ, այդ քառամյակը հենց Վահան Մամիկոնյանի ապստամբության ետև շրջանն էր, երբ Հովհան Մանդակունին նույնիսկ գլուխը հանգիստ դնելու տեղ չունեի, ո՞ւր մնաց դավանաբանական վեճերով զբաղվելու և Տիմոթեոսի գրվածքի նման կապիտալ մի գործ թարգմանել տալու հարմարություն և ժամանակ: Այնուհետև, պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ Բյուզանդական կայսրության մեջ 482 թվին հրատարակված էր Զենոնի հրովարտակը, որով Քաղկեդոնի դավանությունը հետ էր մղված և որոշ դավանական անդորրություն էր տիրում պետության մեջ: Այդպիսի հանգամանքներում ի՞նչ ստիպողական հարկադրանք կարող էր ստիպել հայերեն թարգմանելու Տիմոթեոսի հակաչական ծավալ ունեցող գործը. չէ՞ որ այդպիսի կապիտալ գրվածքները թարգմանվում են միայն այն ժամանակ, երբ նրանց ստիպողական կարիքը կա՝ վտանգի դեմ պաշտպանվելու համար. իսկ ո՞վ կասի, թե քաղկեդոնականության նույնիսկ ամենափոքր վտանգ կար Բյուզանդական կայսրության մեջ և նրանից դուրս Ե. դարի 80-ական թվականներից մինչև Զ. դարի 20-ական թվականները, կամ ավելի ճիշտ 518 թվականը, այսինքն՝ Զենոնի և Անաստասի կայսրության ժամանակամիջոցում:

Տիմոթեոսի Հակաճառության թարգմանության ժամանակը 480—484 քառամյակը տեղափոխող հեղինակներից մեկը՝ Կարապետ Տեր-Մկրտչյանը մեծ շփոթ է մտցնում խնդրի մեջ նրանով, որ Զենոնի հենոտիկոնի ընդունումը նույնպես ուզում է վերադրել Հովհան Մանդակունուն, առանց խորը կշռադատելու այն հանգամանքը, որ եթե Հովհան Մանդակունին ընդունել է Զենոնի հենոտիկոնը, էլ ի՞նչպես կարող էր նա քարգմանել տալ Տիմոթեոս Կուզի Հակաճառությունը, որով նա նուրից Քաղկեդոնի շուրջը մեծ վեճ ու քուռն պայքար պետք է հարուցեր, դեմ գնալով Զենոնի հենոտիկոնի ոգուն, որի նպատակն էր լուծել մատենել Քաղկեդոնի ժողովը և խաղաղություն հաստատել կայսրության մեջ, Առհասարակ անտեղի է, եթե շասենք, անիմատ, խոսել այն մասին, թե Հովհան Մանդակունին ընդունել է Հենոտիկոնը և «լույսայն» դատապարտել Քաղկեդոնի ժողովը, և միևնույն ժամանակ ասել, որ Տիմոթեոսի «Հակաճառությունը» քարգմանել է տվել նույն Մանդակունին, որովհետև Տիմոթեոսի «Հակաճառության» թարգմանությունը ո՞չ թե «լույսայն» դատապարտություն է Քաղկեդոնի, այլ բացարձակ պատերազմ նրա դեմ, կտրական և հրապարակային մերժում նրա բոլոր որոշումների: Անկարելի է նաև ընդունել, որ Տիմոթեոսի «Հակաճառությունը» թարգմանվելով 480-ական թվականներին, այնուհետև մոռացության է մատնվել շուրջ 100 տարի և միայն Վրաց բաժանման առթիվ ասպարեզ հանվել:

Այդ բոլոր անհեթեթությունների դիմաց իրերի բնական ընթացքին միանգամայն համապատասխան է այդ երկի թարգմանությունը դնել 552—556 թվականներին, որից հետո նա անշուշտ կարևոր դեր է խաղացել Սյունյաց և Աղվանից եկեղեցիներում Հովհաննես Բ. Գաբրիելացու օրով տեղի ունեցած մաքառման մեջ այդ երկրներում բուն դրած նեստորականության և քաղկեդոնականության դեմ և ավելի ևս Վրաց բաժանման առթիվ հղած վիճարանություն-

<sup>1</sup> Գիրք Թղթոց, էջ 49:

ների մեջ: Այդ ժամանակներից սկսած Տիմոթեոսի «Հակաճառութիւնը» եղել է այն ղինանոցը, որից հայ հոգևորականութիւնը ղինքեր է քաղել քաղկեդոնականութեան ղեմ մարտնչելու համար:

Այս է ահա մեր վերջնական եզրակացութիւնը քննարկվող հարցի մասին: Ոչ մի ղեպքում չի կարելի Տիմոթեոսի «Հակաճառութեան» թարգմանութիւնը ղնել 480-ական թվականներին. այն կարող է թարգմանված լինել միայն մեր առաջարանում նշված ժամանակամիջոցում, ներսես Բ. կաթողիկոսի ժամանակ և կապված նրա հրավիրած Գվինի Բ. ժողովի հետ, ուրեմն շուրջ 552—556 թվականներին:

Մեր այս հոգվածը արդեն ղրված և պատրաստ էր տպագրութեան հանձնելու, երբ մեր ձեռքն ընկավ բանասէր Պողոս Անանյանի «Պատմական հիշատակարան մը Գվինի Բ. ժողովի մասին» հմտալից ուսումնասիրութեան շարունակութիւնը «Բաղմավեպ»-ի 1958 թվականի թ. 6—7, հունիս-հուլիսի համարում, էջ 117—131, որի մեջ հեղինակն ամփոփում է իր եզրակացութիւնները Տիմոթեոսի «Հակաճառութեան» մասին և մանրամասնորեն քննում է նաև այն հարցը, թե «ե՞րբ թարգմանվեցան Տիմոթեոսի Հակաճառութեան երկու գրքերը»: Նա մեջ է բերում հարցի ամբողջ պատմութիւնը, Գ. Տեր-Մկրտչյանի, Ն. Ակինյանի, Հ. Մանանդյանի և Մ. Աբեղյանի կարծիքները և իր առարկութիւնները նրանց ղեմ, գտնում է, որ «Երկու կողմի՛ փաստերն ալ ղրական փաստեր են, ուստի անոնցմի մին կպարունակի անպայման սխալ մը»... «ուստի որոշելու համար այս երկու փաստերեն մեկին կամ մյուսին հաստատութիւնը, պիտի անցնինք քննելու հետեյալը. արդյոք 480—484 ջրամյակին հնարավո՞ր էր Տիմոթեոս Կուղի թարգմանութիւնը նույն ժամանակի պատմական շրջանին մեջ»: Եվ մանրամասնաբար ու բոլոր կողմերից քննութեան առնելով այդ հարցը՝ նույնպես գալիս է այն եզրակացութեան, որ իրոք, Տիմոթեոս Կուղի «Հակաճառութեան» թարգմանութիւնը կատարվել է Զ. ղարի կեսերին և ոչ մի ղեպքում չի կարող նրանից առաջ կատարված լինել:

Е. ТЕР-МИНАСЯН

## О ВРЕМЕНИ ПЕРЕВОДА НА АРМЯНСКИЙ ЯЗЫК ТРУДА ТИМОФЕЯ ЭЛУРА «ОПРОВЕРЖЕНИЕ УЧЕНИЯ ХАЛКЕДОНСКОГО СОБОРА»

Резюме

Относительно времени перевода сочинения Александрийского патриарха Тимофея Элуря «Опровержение учения Халкедонского собора» с греческого на древнеармянский язык мнения ученых расходятся. Издатели этого значительного для истории армянского языка труда (1908 г., Эчмиадзин), исходя из сообщения Константинопольского патриарха Фотия (858—867, вторично 878—886) и имея в виду истори-

<sup>1</sup> Տիմոթեոսի «Հակաճառութեան» թարգմանութիւնը 552—556 թվականների գործ համարողների և այն 480—484 ջրամյակին թարգմանված համարողների մասին է խոսքը:

ческую обстановку всего VI века, в предисловии к изданию этого труда пришли к заключению, что он переведен приблизительно в середине VI века.

Вскоре после издания труда Тимофея Элура известный филолог Галуст Тер-Мкртчян, основываясь на имеющемся в этой работе упоминание о дне смерти Александрийского патриарха Диоскура, приводимого по египетским и армянским месяцам с соответствующими указаниями дней этих месяцев, выразил категорическое мнение, что труд Тимофея Элура переведен на армянский язык в 480—484 гг., то есть в период, когда указанные дни египетского и армянского месяца совпадают.

К этому мнению Галуста Тер-Мкртчяна примкнули без оговорок Ст. Малхасян, М. Абегиан и один из издателей названного сочинения Элура К. Тер-Мкртчян. Однако другие ученые, Я. Манандян, Н. Акинян и автор этой статьи не нашли доводы Г. Тер-Мкртчяна и др. убедительными и остались при убеждении, что труд Элура переведен в VI веке, при католикосе Нерсесе втором (548/9—556/7).

Автор статьи доказывает, что единственное основание Г. Тер-Мкртчяна слишком шатко. Во-первых, сохранившиеся названия египетских и армянских месяцев и чисел совершенно случайны; они, по всей вероятности, претерпели изменения. Например, Я. Манандян предлагает изменить только одну цифру, читать 26 вместо 6 (что часто случается в наших рукописях) и тогда получится, что перевод книги сделан при католикосе Нерсесе Втором. Во-вторых, это же сочинение сохранилось в сирийском переводе (рукописи Британского музея cod 729 add 12156), где упомянутые месяц и день смерти патриарха совершенно другие. В-третьих, историческая обстановка 480—484 гг. никоим образом не допускает возможности перевода на армянский язык такого объемистого труда. В-четвертых, имеется четыре исторических источника, свидетельствующих о том, что сочинение Тимофея Элура было переведено на армянский язык при католикосе Нерсесе Втором. Эти источники — патриарх Фотий, его первоисточник *De rebus Armeniacis*, католикос Грузии Арсений и найденный в 1958 году в Венеции новый источник о Двинском соборе (см. «Базмавеп», 1958 г.).

Автор статьи считает, что из-за случайной цифры невозможно пренебречь всей исторической обстановкой и достоверными историческими источниками, говорящими о том, что книга Элура переведена на армянский язык при католикосе Нерсесе Втором в 552—556 годах.



Ս. ԲԱՐԵՈՒԴԱՐՅԱՆ

ՀԵՐՄՈՆԻ ԴՊՐՈՑԻ ՏԵՂԱԴՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ  
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

13-րդ դարի 80-ական թվականներից մինչև 14-րդ դարի 40-ական թվականները հայ ժողովրդի մտավոր կյանքում մեծ դեր էր կատարում Գլաձորի կամ Աղբերց վանքի նշանավոր Համալսարանը: Այնտեղ են իրենց բարձրագույն կրթությունը ստացել նշված ժամանակաշրջանի նշանավոր քաղաքական ու կուլտուրական գործիչների մեծագույն մասը, այնտեղ գրվել ու ընդօրինակվել են տասնյակ մեծարժեք ստեղծագործություններ ու ձեռագրեր:

Չնայած նրա կատարած կուլտուրական մեծ դերին, մենք այժմ անվիճելի տվյալներ չունենք ճշգրիտ որոշելու այդ նշանավոր հուշարձանի վայրը: Օտար նվաճողների կործանիչ կրունկների տակ, նյութական ու հոգևոր այլ հուշարձանների հետ մեկտեղ, հողին է հավասարվել մշակութային այդ օջախը ևս:

Գրեթե նույն բախտին է արժանացել վայոց ձորում Գլաձորի ուսումնամանկավարժական գործի շարունակող Հերմոնի դպրոցը, մինչ այժմ անորոշ է մնացել նրա գտնվելու վայրը:

Ժամանակակից տեղագրական գրականության մեջ Հերմոնի վանքի տեղագրության վերաբերյալ արտահայտվել են տարբեր և իրարամերձ կարծիքներ: Բնագրոսիկ կերպով ստեղծվել է նույնացրած տեղանունների շփոթ. այդ բոլորի հետևանքը եղել է այն, որ այժմ նրա տեղը համարվում է անհայտ, իսկ Հերմոնի գոյություն ունեցող կանգուն վանքը կնքվել է ուրիշ անունով և ապրում է գրականության մեջ իր այդ նոր և ոչինչ շասող անվան տակ:

Վայոց ձորի ամենահին տեղագրող Ս. Զալալյանցը (ավելի ճիշտ նրա խնդրանքով կատարած տեղագրության հեղինակը) աչքաթող անելով Հերմոնի վանքին վերաբերող Ստ. Օրբելյանից իր իսկ մեջբերած հատվածը՝ նույնացրել է այդ վանքը Վայոց ձորի մի այլ՝ Խոտակերաց կամ Քարկոփի վանքի հետ, որը գտնվում է Օրբելյանի նկարագրած Եղեգիս քաղաքից ու Եղեգիս գետից տասնյակ կիլոմետրեր հեռու, բոլորովին հակառակ ուղղության վրա և նկարագրված միջավայրից բոլորովին դուրս (Շարուրի և Գարալագյազի սահմանարածան լեռնաշղթայի լանջին, Խաչիկ գյուղի մոտ): Քարկոփի վանքի տեղագրության և նկարագրության ընթացքում Զալալյանցը շփոթում և իրար է միացնում Ստ. Օրբելյանի հաղորդածները ոչ միայն Հերմոնի, այլև Ոստինք գյուղի գլխին շինված վանքի մասին և այդ բոլորը վերագրում Քարկոփի վանքին, վերջինիս գոյություն ունեցող զույգ՝ Քարկոփի և Խոտակերաց՝ անունների վրա ավելացնելով նաև Հերմոնի, ինչպես նաև թուրքերեն Քեալատաշ անունները<sup>1</sup>:

<sup>1</sup> Ս. Զալալյանց, Ծանապարհորդություն ի Մեծն Հայաստան, մասն Բ, էջ 165—168, Տփղիս, 1858:



Ս. Զալալյանցի այս թյուր կարծիքը հետագա տեղագրողներից ոչ ոք չի ընդունել<sup>1</sup>:

Վայոց ձորի հաջորդ տեղագրողը Քաջբերունին է (բժիշկ Գաբրիել Հովհաննիսյան), որը անձամբ շրջելով իր տեղագրած և նկարագրած վայրերը, նկատել է Զալալյանցի ստեղծած շփոթը Հերմոնի վանքի տեղագրության խնդրում և հենվելով կրկին Ստ. Օրբելյանի տեղագրության ու նկարագրության վրա՝ Հերմոնի վանքը նույնացրել է ներկա Ալալյազ գյուղից վեր գտնվող Գյունեյ վանքի հետ:

Քաջբերունին հիմք է ընդունել այն փաստը, որ Ստ. Օրբելյանի տվյալներով Հերմոնի վանքի աշխարհագրական միջավայրում եղել է Հավու անունով մի գյուղ, իսկ այժմ նույն այդ անունով է կոչվում Գյունեյ վանքի դիմացի անտառը<sup>2</sup>:

Հետագայում կտեսնենք, որ Քաջբերունին իրավացի է եղել, բայց նրա փաստերը, միակողմանի լինելով, վստահություն չեն ներշնչել հետագա տեղագրողներին:

Վայոց ձորի երրորդ և բոլորից մանրամասն տեղագրողը Ղ. Ալիշանն է. ամենքին հայտնի է նրա տեղագրական մեծահատոր աշխատությունների գիտական բարձր արժեքը: Քաջատեղյակ ողջ հայ մատենագրությանը, նա օգտագործել է ըստ ամենայնի նաև ժամանակակից ուսումնասիրությունները, որոնց թվում նաև Զալալյանցի ու Քաջբերունու ուսումնասիրությունները: Հերմոնի վանքի տեղագրության հարցում նա Զալալյանցի Հերմոն — Խոտակերաց վանք նույնացումը քննադատում է և մերժում<sup>3</sup>, իսկ Քաջբերունու Հերմոն — Գյունեյ վանք նույնացումն ըստ երևույթին անգամ քննադատելու արժանի չի համարում. այդ պատճառով էլ դրանցից յուրաքանչյուրն առանձին-առանձին է տեղադրում: Ղ. Ալիշանը բավական մանրամասնորեն, ըստ պատմական աղբյուրների և ձեռագրական հիշատակարանների, ուրվագծում է Հերմոնի դպրոցի հիմնադրման և, մանավանդ, 13—14-րդ դարերում հայ մշակույթի մեջ կատարած նրա դերի պատմությունը<sup>4</sup>:

Այն փաստը, որ նույնիսկ Ալիշանն է անորոշ թողել Հերմոնի վանքի ստույգ տեղագրման խնդիրը՝ կաշկանդել է ուրիշներին, և այնուհետև ոչ ոք չի փորձել զբաղվել այդ խնդրով:

Թերևս մենք էլ չհամարձակվեինք անդրադառնալ այդ խնդրին, եթե մեր ձեռքի տակ չունենայինք Հերմոնի վանքի վերջնական և ստույգ տեղագրությունը որոշող նոր և միանգամայն անժխտելի ապացույցներ: Բայց մինչև դրանց անցնելը ծանոթանանք այդ խնդրի համար սկզբնաղբյուր հանդիսացող Ստ. Օրբելյանի հաղորդածներին:

Պատմագիրն իր աշխատության Մ գլխում, որը նվիրված է 10-րդ դարի սկզբում Սմբատ իշխանի և Հակոբ Եպիսկոպոսի կողմից Վայոց ձորում կառուցված վանքերի և եկեղեցիների նկարագրությանը, Հերմոնի վանքի մասին

<sup>1</sup> Ա. Խ. Մովսիսյանի 1958 թ. հրատարակված «Ուրվագծեր հայ դպրոցի և մանկավարժության պատմության (10—15-րդ դդ.)» աշխատության վերջում դրված քարտեզի վրա (կազմող՝ Ս. Ծրեմյան), նորից Հերմոնի վանքը տեղադրված է Խոտակերաց վանքի մոտերքում:

<sup>2</sup> Ք ա ջ բ ր ու ն ի, Ծանազարհորդական նկարագրութիւնք, Արարատ, 1888, էջ 441—443:

<sup>3</sup> Ղ. Ալիշան, Մխական, էջ 169:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 125—127:

ունի հետեւյալ ընդարձակ պարբերութիւնը, որն անհրաժեշտ ենք համարում մեզ բերել ամբողջովին.

«Գարձեալ և յՅ85 թուականին աստուածազօր իշխանն Սմբատ ելեալ յաւուր միում յարքունեաց իւր, որ էր յԵղեգիս գիւղաքաղաքի. և երթայր ի զբօսանս որսոց, և պատահեալ խոտակերաց և աստուածազգեաց ճգնաւորաց զօղեալ ի ծերայս արձանականդ վիմացն որ ի վերոյ Եղեգեաց ի ձորն, բարձրահայեցիկ ի վերայ գետոյն, որոց տեղիքն Քարէվանս կոչիւր: Եւ զարմացեալ ընդ ներքեալ և ընդ անշքացեալ տեսիլս նոցա՝ հարցանէր ի նոցանէ զկեանս նոցա. և նորա հեղիկ պատասխանեալ ասեն. «Հալածեալ փախստական եղաք յաշխարհէ թերևս կարացուք ասլրել ի դառն ալէկոծութենէ սորա»: Ապա այնուհետև խնդիր առնէ իշխանն եպիսկոպոսին իւր տէր Յակոբայ. և հրամայէ ձեռն ի գործ ածել և փութապէս շինել եկեղեցի ի պատշաճաւոր տեղի, զի անդ բնակեցուցէ զսուրբ ճգնաւորսն:

Եւ նորա եկեալ առ սուրբ հարսն հարցանէ զկամս նոցա, և նորա ցուցանեն տեղի մի տափարակ ի ներքոյ քարոյն ուղղորդ ի վայր. յորում տեղւոջ սկիզբն առնէ կոփածոյ քարամբք և շինէ եկեղեցի զմբէթայարկ յանուն սրբոյն Գրիգորի. և բերէ զաւագագոյն ծերն որում անունն Ահերմոն, և զաշակերտն իւր զԱզարիա աշուղք եղբարբքն և բնակեցուցանէ անդէն: Եւ եկեալ իշխանին օրհնէ զեկեղեցին. և բարեպաշտ տիկինն Սոփիա գնէ զգիւղն Հաւու որ հանդէպ վանիցն կայ իւր սահմանովն, և տա ի ժառանգութիւն եկեղեցւոյն. և այլ ևս այգիս և ծաղկոցս յԵղեգիս: Եւ զարդարէ զնա բազում սպասուք, և փարթամացուցանէ ամենայն սխտոյիւք. և մեծամեծ նզովիւք հաստատէ զՀաւու գիւղն, որ ոչ հանեն ի նմանէ: Եւ կատարեն ինքեանց յիշատակ զտօն սրբոյն Գրիգորի, և քառասուն մի պատարագ զՎարդավառին, և կոչեն զտեղին յանուն ծերոյն Ահերմոնի վանք»<sup>1</sup>:

Այս ընդարձակ նկարագրութիւնից մեզ հետաքրքրողը տեղագրական մասնն է առայժմ, որը կարելի է ամփոփել հետեւյալ կերպ.

1. Սմբատ իշխանի ելակետը իր գլուղաքաղաք Եղեգիսն է (ներկայիս Ալայազ գլուղը).

2. Սմբատը գնում է Եղեգիսից զեպի ձորն ի վեր, հասնում է գետի գլխի մի «բարձրահայեցիկ» տեղ, որը շրջապատված էր «արձանականգ» վեմերով և կոչվում էր Քարեվանք:

Այժմ էլ հին Եղեգիս ավանից գետն ի վեր բարձրանալու համար կա միայն մի ճանապարհ, որն անցնում է գետի աջ ափով: Գետն իր այդ մասում 10—15 կիլոմետր երկարութեամբ հոսում է նեղ և ժայռապատ ձորի միջով, որի ձախ ափը բոլորովին անանցանելի է:

Աջափնյա այդ միակ հնարավոր ճանապարհն անցնում է պատանման ժայռերի տակով 4—5 կիլոմետր մինչև այնտեղ, ուր գետն իր հյուսիսից հարավ ուղղութիւնը կտրուկ կերպով փոխելով, թեքվում է արևմուտք: Ծունկ կազմող այդ վայրում ձորը փոքր ինչ լայնանում է, աջափնյա ժայռերը հեռանում են և իրենց ստորոտում գոյացնում խիստ բարձրադիր մի հարթութիւն, որտեղ կանգնած է մի հինավուրց և կիսավեր վանք: Հարթավայրի գլխին ցրցված զեղնավուն, լերկ ժայռերը հսկայական բարձրութիւն ունեն և արհեստական պատերի նման ուղղահայաց են: Ժայռերի տակից բխում են աղբյուրներ.

<sup>1</sup> Ս. Մ. Օրբէլեան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 259—260, Թիֆլիս. 1911.

աարահարթը ծածկված է անպտուղ և պտղատու (այժմ վայրի դարձած) ծառերով ու խիտ կանաչով:

Ճանապարհորդը կանգնելով աշխարհագրական այս շքնաղ և ահեղատեսիլ վայրում անմիջապես կհասկանա, որ հենց սա է արձանականգ ժայռերով շրջապատված և դեպի գետը նայող այն վայրը, որը կոչվում էր Քարավանք և որտեղ Սմբատ իշխանը հանդիպեց ճգնավորներին ու շինել տվեց Ահերմանի<sup>1</sup> վանքը՝ 936 թվականին:

Եղեգիսից դեպի վեր, տասնյակ կիլոմետր տարածության վրա այնու ոչ նման աշխարհագրական կետ կա և ոչ էլ որևէ վանք, մինչև Արատեսի նշանափոր վանքը, որի տեղն ու պատմությունը անվիճելի է:

Մեր նկարագրած վանքի պատին փակցված է Հուշարձանների պահպանության կոմիտեի թիթեղե ցուցանակը, որի վրա գրված է. «Կնեվանք, ս. Գրիգոր Լկեղեցի, 16—17-րդ դդ.»։ Իսկ տեղագրական ողջ գրականության մեջ վանքը կոչվում է Գյունեյ վանք և Կնեվանք անուններով: Անհրաժեշտ է քննել այս վերջին անունների առաջացման հարցը ևս:

Ինչպես հայտնի է, Հայաստանում այժմ քաղմաթիվ աղբրեջաններն տեղանուններ կան. դրանց մի մասը առաջացել է նախկին հայերեն տեղանունների աղավաղման և իմաստալորելու ճանապարհով (օր. Եղեգիս—Ալաշաղ, Օձուն — Ուղունլար և այլն), իսկ մեծ մասը՝ աշխարհագրական և այլ հատկանիշների հիման վրա. այդ վայրերում վերաբնակեցված հայերն էլ, հաճախ, միայն այդ վերջին (աղբրեջանական) անունով են կոչում իրենց բնակավայրերը, անձանոթ լինելով նախկին հայկական անուններին:

Վայոց ձորի ներկա հայ բնակչության ճնշող մեծամասնությունը պարսկահայեր են, վերաբնակեցված 1828 թվականին, իսկ Եղեգիս գետի ձորում հիմնականում բնակվում են աղբրեջանցիներ: Վերջիններս Հերմոնի վանքին տվել են նոր անուն՝ Գյունեյ վանք, որը բառացի կնշանակի արևկող, հարավ նայող, համապատասխան տեղի աշխարհագրական հատկանիշի:

Ս. Զալալյանցի համար Վայոց ձորի տեղագրություն կազմողները (Հովհաննես Բարսյան, տէր Ավագ Արրահամյանց և տեր Առաքել Աստվածատուրյանց), ծանոթ շինելով վանքի հայկական հին անվանը և այդ մասին տվյալներ շգտնելով վանքի արձանագրությունների մեջ, տեղի աղբրեջանցի բնակիչների հաղորդած անվան տակ են նկարագրել վանքը և ուղարկել Զալալյանցին. վերջինս էլ աղբրեջանական այդ անունը թարգմանելով, իր աշխատության մեջ նշել է՝ «Արեգունտյ վանք, ի տաճկաց Գիանէի վանք անուանեալ»<sup>2</sup>: Հետագա բոլոր տեղագրողները, ջնջելով հայերեն թարգմանությունը, պահել են միայն Գյունեյ վանք ձևը:

Հերմոնի վանքին գրականության մեջ Կնեվանք կոչելու առաջնությունը պատկանում է Ղ. Ալիշանին. Ալիշանը ծանոթ է եղել և Զալալյանցի և Քաշքերունու աշխատություններին, բայց Հերմոնի վանքի տեղագրության խնդրում չի քննդրուել և ոչ մեկի կարծիքը: Իր «Սիսական» աշխատության մեջ Վայոց ձորում հիշատակում է նաև Հերմոնի վանքը առանց ստույգ տեղագրության<sup>3</sup>,

<sup>1</sup> Ահերմոն անձնանունը բիրլիական է. ծագում է Հրեաստանում գտնվող համանուն լեռան անունից. հայերենում հետագայում գործածվել է «Հերմոն» սղված ձևով (տե՛ս Ա ճ ա ու յ ա ն, Հայերեն անձնանունների բառարան, Ա, էջ 92):

<sup>2</sup> Զ ա լ ա լ յ ա ն ց, Ժանապարհորդություն, Բ, էջ 155:

<sup>3</sup> Ա լ ի շ ա ն, Սիսական, էջ 125:

առանձին հիշելով նաև Գյունեյ վանքը: Վերջինիս անվան խնդրում նա թույլ է տվել իր մեծ հմտության հետ շհամատեղվող սխալ:

Քաջածանոթ ողջ հայ մատենագրությանը Ալիշանը ցանկացել է գտնել Գյունեյ վանքի անունը հայկական աղբյուրներում և կանգ է առել Ստ. Օրբելյանի հիշատակած Կնեվանք անվան վրա, կարծելով որ վերջինս աղավաղվելով դարձել է թուրքերեն Գյունեյ վանք:

Ստ. Օրբելյանը մի անգամ է հիշատակում Կնեվանքը և մանրամասնորեն նկարագրում նրա հիմնադրման հետ կապված առասպելները, բայց ոչ ժամանակը և ոչ էլ հիմնադրողների անունները չի տալիս: Պատմագիրն այդ վանքի մասին հիշատակում է իր աշխատության ԿԲ գլխում, որտեղ թվարկված են Սյունյաց աշխարհի գլխավոր վանքերն ու եկեղեցիները. բայց Ալիշանի ուշագրությունից վրիպել է, որ Ստ. Օրբելյանը Կնեվանքը հիշում է այդ գլխի սկզբի մասում, բուն Սյունիքի վանքերի շարքում և ոչ թե Վայոց ձորի պատմագիրն իր աշխատության այդ ԿԲ գլուխը բաժանել է երեք մասի, սկզբում բուն Սյունիքի վանքերի նկարագրությունն է, երկրորդ մասն սկսվում է «ի Վայոց ձորոյ կողմանն» բառերով և այդ գավառի վանքերի շարքն է, երրորդ մասն սկսվում է «իսկ ի Գեղամն» բառերով, ուր թվարկված են Գեղարքունիքի վանքերը: Առաջին մասում, օրինակ, կա վանքերի հետևյալ շարքը. Տաթև, Թանահատի վանք, Սիւնի վանք, Կնեվանք, Վաղատնին վանք և այլն: Իսկ Վայոց ձորի վանքերի շարքը հետևյալն է. Խոտակերաց վանք, Նորավանք, մյուս Նորավանք, Տաղաց քար, Հերմոնի վանք, Թանատի վանք և այլն:

Ղ. Ալիշանը բուն Սյունիքում գտնվող Կնեվանքը և Վայոց ձորում գտնվող Գյունեյ վանքը նույնացնում է, ելնելով այդ անունների լոկ հնչական նմանությունից: Նա աչքաթող է արել այդ նույնացումը ժխտող մի հանգամանք ևս: Ստ. Օրբելյանը Կնեվանքի նկարագրության մեջ այնպես է խոսում այդ վանքի մասին, որ հասկացվում է թե այդ ժամանակ վանքը արդեն ավեր կամ լքված է եղել. «որ և ցուցանէ քանիքդ առ իւրև ամայացեալ և լքեալ զտեղին» — գրում է Ղ. Ալիշանը<sup>1</sup>: Բայց քիչ հետո, Ս. Ջալալյանցից և Քաջերունուց բերում է Գյունեյ վանքի 3—4 արձանագրություններ, որոնցից մեկը պատմագրի հոր Տարսայիճի նվիրատվական արձանագրությունն է: Բնական է որ իր հոր, և ինչպես հետո կտեսնենք նաև իր եղբայրների կողմից հովանավորված Գյունեյ վանքը շին է եղել պատմագրի օրոք հետևաբար նա այդ վանքի մասին չէր կարող անորոշ խոսել կամ այն լքյալ և ամայացյալ համարել:

Բայց Ղ. Ալիշանի մեծ հեղինակությունը այս դեպքում էլ հարկադրել է հետագա տեղագրողներին և նույնիսկ Հուշարձանների պահպանության կոմիտեի աշխատակիցներին՝ հավատալ Գյունեյ վանք — Կնեվանք նույնացմանը<sup>2</sup>:

Տեղագրական նյութերի և տեղանունների մեր այս քննությունը ավելի հաստատուն է դարձնում Քաջերունու առաջարկած Գյունեյվանք-Հերմոնի վանք նույնացումը: Այժմ անդրադառնանք նորահայտ այն փաստին, որի միջոցով վերջնականապես լուծվում են Հերմոնի վանքի տեղագրության շուրջ

<sup>1</sup> Սիսական, էջ 145:

<sup>2</sup> Հ. Ն զ ի ա զ ա ը յ ա ն, Ազիզբեկովի շրջանի կուլտուրայի հուշարձանները, էջ 64, Երևան, 1955:

ծագած վեճերը: Գյունեյ վանք կոչվող հուշարձանի եկեղեցու ներսի հյուսիսային մույթը պատին միացնող կամարի կենտրոնում, երեսով դեպի ներքև ագուցված է մի քար, որի վրա պահպանվել է երբեմնի մեծ արձանագրության բեկոր, բնդամենը երկու բառից՝

... ԵՐԱՄՈՆԻ ՎԱՆՔ ...

Այս թանկագին բեկորը փարատում է ամեն կասկած: Դժբախտաբար անհնարին է վերականգնել այդ արձանագրությունն ամբողջապես, նույնիսկ դրժվար է ասել թե առաջին քառը Հերամոնի, թե՞ Ահերամոնի պիտի վերականգնել. կասկածից դուրս է, սակայն, որ այդ երկուսից մեկը պիտի լինի, որովհետև ոչ մի այլ տեղանվան հետ ահա չի համեմատվում:

Ստ. Օրբելյանից մեջ բերած բնդարձակ հատվածում վանքի մասին կան հետևյալ կարևոր տեղեկությունները. (1) Վանքը կառուցվել է 936 թ., (2) կոչվել է Ահերմոնի վանք, (3) եկեղեցին կոչվել է ս. Գրիգոր, (4) եկեղեցին եղել է «գմբեթայարկ» և շինված է եղել «կոփածոյ քարամբ», (5) վանքին նվիրվել են դիմացի Հավու գյուղը և այգիներ ու ծաղկոցներ՝ Եղեգիսում:

Այս կետերից առաջինի մասին նոր բան ասել չենք կարող, որովհետև ոչ արձանագրությունների մեջ և ոչ էլ այլուր այդ ժամանակներին վերաբերող փաստեր չկան:

2. Վանքի Ահերմոնի կամ Ահերամոնի անունը, ինչպես երևում է, շատ շուտով արտասանվել ու գրվել է Հերմոնի կրճատ ձևով. նույնիսկ Ստ. Օրբելյանը Վայոց ձորի վանքերի թվարկության մեջ Հերմոնի ձևն է գործածել<sup>1</sup>, այս ձևով է կոչված նաև Վարդանի Աշխարհացույցի և Թովմա Մեծուփեցու պատմության մեջ: Այժմ սրանցից բացի հրատարակված 30 ձևազրական հիշատակարաններ կան, որոնցից 29-ի մեջ պահպանված է Հերմոնի ձևը և միայն մեկի մեջ, որի միայն բովանդակությունն է նշում Ղ. Ալիշանը, գրված է Ահերմոնի ձևով<sup>2</sup>:

3. Եկեղեցու ս. Գրիգոր անունը հիշատակված է ինչպես բազմաթիվ հիշատակարանների, այնպես էլ վանքի պատերի վրա գտնվող 6 արձանագրությունների մեջ:

4. Այժմյան եկեղեցին շունի Ստ. Օրբելյանի հիշատակած «գմբեթայարկ» ձևը, նախկին եկեղեցին ավերվել է հիմնովին և նրա հիմքերի վրա կառուցվել է քառակուսի հատակագծով, ներքուստ երկու մույթեր և բեմի երկու կողմերում քառակուսի ավանդատներ ունեցող թաղածածկ եկեղեցի. սակայն այդ նոր շենքը, գրեթե ամբողջապես, կառուցված է պատմագրի նշած «կոփածոյ» քարերով, որոնք անշուշտ նախնական շենքին են պատկանում:

5. Սոփիա տիկնոջ վանքին նվիրած Հաու գյուղն այժմ անմարդաբնակ է. մի քանի տասնյակ տարի առաջ այն շեն էր և բնակեցված աղբրեջանցիներով: Գյուղը կոչվում էր վանքի անունով — Գյունեյ վանք, սակայն Քաջբերունին իր ժամանակին կարողացել էր տեղեկանալ, որ գյուղի հանդեպ, գետի ձախ ափի լեռնալանջերի վրա փոխված անտառը մինչև այդ ժամանակն էլ կոչվում էր Հաու մեջա:

<sup>1</sup> Օրբելյան, Պատմություն, էջ 346:

<sup>2</sup> Ալիշան, Սխական, 125:

### Հերմոնի վանքի ներկա վիճակն ու արձանագրությունները

Ինչպես վերևում ասվեց, վանքը գտնվում է բարձր սարավանդի վրա ծվարած ուղղահայաց ժայռերի տակ: Այդտեղ մի բավական մեծ թեք տարածություն պարսպապատված է բերդանման հաստ պատերով, որի ներսում գտնվում են վանական շենքերը. դրանցից համեմատաբար կանգուն է միայն մի եկեղեցու շենք, որը գտնվում է բակի կենտրոնում: Այդ բազիլիկաձև եկեղեցու հարավային պատը իր ծածկի մասով փլել է, մնացած մասերը կանգուն են:

Ներկա շենքը գրեթե ամբողջովին կառուցված է հին, ավերված շենքերի բարերով. այդ են ապացուցում և կոփածո քարերի մշակման հին տեխնիկան և հին շենքերի վրա եղած արձանագրված քարերի՝ ներկա շենքի տարրեր մասերում անկանոն շարված լինելու հանգամանքը: Եկեղեցու մուտքն արևմտյան կողմից է, այդ կողմից է նաև պարսպի մուտքը դեպի բակ: Գետափից, վանքի հին ջրաղացի ավերակներից դեպի վանքը բարձրացող ճանապարհն էլ մոտենում է հենց այդ մուտքին: Ընդարձակ բակի արևմտյան, հյուսիսային և արևելյան մասերում, պարիսպներին կից, մնում են քաղմաթիվ խցերի և տնտեսական այլ շենքերի խիստ ավերված մնացորդները, իսկ հարավային մասում՝ վանական գերեզմանոցը, որի գերեզմանաքարերի մեծ մասը ծածկված է շենքից և պարսպից թափված բեկորներով կամ բոլորովին խրված է գետնի մեջ:

Տեսանք, որ Ստ. Օրբելյանը հիշատակել է միայն մի՝ ս. Գրիգոր եկեղեցու գոյությունը մասին, բայց արձանագրական բեկորների մեջ նշված են ևս երկու եկեղեցիների անուններ՝ ս. Հովհաննես և ս. Նշան, իսկ ձեռագրական հիշատակարանների մեջ, դրանցից բացի, նաև ս. Սահակ, ս. Հակոբ և ս. Ստեփանոս: 1450 թվականին Հերմոնի վանքում գրված մի ավետարանի հիշատակարանում նշված վեց եկեղեցիների անունները հիշատակված են միաժամանակ<sup>1</sup>:

Հավանական է որ պատմագրի հիշատակած գմբեթահարկ ս. Գրիգորից բացի մյուս եկեղեցիները փոքր, մատուռանման շենքեր են եղել և շինվել են 14-րդ և հետագա դարերում, այլապես դրանք տեղ կգտնեին պատմագրի նկարագրության մեջ<sup>2</sup>:

Քե երբ են ավերվել այդ բոլոր շենքերը, դժվար է որոշել, մի բան պարզ է միայն, որ Ստ. Օրբելյանի կենդանության ժամանակ վանքի գլխավոր ս. Գրիգոր գմբեթահարկ եկեղեցին կանգուն է եղել, իսկ ներկա նույնանուն եկեղեցին իր քառակուսի հատակագծով, թաղածածկ կտուրով և ճարտարապետական բոլոր բնորոշ հատկանիշներով վերաբերում է 16—17-րդ դարերին: Տեսանք նույնպես, որ 1460 թվականի հիշատակարանի մեջ բոլոր եկեղեցիները հիշատակված են միաժամանակ, ուրեմն և կանգուն են եղել. հրատարակված վերջին հիշատակարանը վերաբերում է 1478 թվականին, ուր Երեմիա

<sup>1</sup> Ա. Ս. Խ ա շ ի կ յ ա ն, Փն դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Բ, Երևան, 1958, էջ 134:

<sup>2</sup> Անկարելի է ենթադրել թե պատմագիրը կարող է տեսած չլինել այս վանքը, քանի որ այն գտնվում է դեպի Արատեսի վանքը տանող միակ ճանապարհի վրա, իսկ այս վերջինը պատմագրի կողմից հիշատակված է որպես նորավանքի եպիսկոպոսարանի ամառանոց, ուր ինքն էլ, անշուշտ, հանգստանում էր ամառները:

գրիչը նշում է՝ «... Աւարտեցաւ Աւետարանս ի յանապատիս Հերմոնի վանիցս, ընդ հովանեաւ սուրբ Լուսաւորչիս և սուրբ Յակովբի և այլ ամենայն սրբոց եկեղեցեաց»<sup>1</sup>:

Այս բոլորի հիման վրա կարելի է ենթադրել, որ հին շինքերի ավերման ժամանակը պետք է մոտ լինի ներկա շինքի շինության ժամանակներին, այն է՝ 16—17 -րդ դարերին, մոտավորապես:

\* \* \*

\*

Առ այսօր Հերմոնի վանքի արձանագրություններից ընդօրինակված և հրատարակված են ընդամենը 4—5-ը: Կրկնակի այցելությունների ընթացքում մեզ հաջողվել է այդ թիվը հասցնել 39-ի: Առաջին հայացքից տարօրինակ թվացող այս տարբերությունը հետևանք է այն բանի, որ արձանագրությունների նախորդ հավաքողները ընդօրինակել են միայն ամբողջական, հեշտ վերժանելի և իրենց կարծիքով որևէ պատմական արժեք ունեցող արձանագրությունները միայն, մինչդեռ մեր մոտեցումն այդ խնդրում բոլորովին այլ է. մեզ համար կարևոր և անկարևոր արձանագրություններ չկան, հավաքում ենք թե ամբողջականները և թե բեկորներն անխտիր, թեկուզ մի բառ կամ տառ լինի այն. ապա ժամանակ շինք խնայում ընդօրինակելու համար նաև դժվար վերժանելի արձանագրությունները: Թե որքան ճիշտ է մեր մոտեցումը, դրան ապացույց է թեկուզ այն, որ այս վանքի անունը պարունակող անտես առնված բեկորը հնարավորություն տվեց պարզելու նշանավոր Հերմոնի վանքի ստույգ տեղագրությունը:

Արձանագրությունների մեր ժողովածոն բաղկացած է մեծ մասամբ բեկորներից, որոնք անկարգ կերպով ազուցված են ներկա շինքի թե դրսի և թե ներսի պատերի մեջ, այն էլ կողքանց, գլխիվայր և ամեն դիրքով: Իրենց գրչությամբ և պահպանած պատմական անձնանուններով ապացուցվում է դրանց մեծ մասի 13—14-րդ դարերին վերաբերվելը: Հավանաբար դրանց մեջ կան այնպիսիները, որոնք միևնույն մեծ արձանագրության բեկորներ են, քայքայվելով թերի՝ անհնար է դրանք վերակազմել ու ամբողջացնել: Ստորև տալիս ենք այդ արձանագրություններից մի քանիսի մեր վերժանումները, որոնք նպատակով են Հերմոնի վանքի և դպրոցի պատմության լուսարանման գործին:

1. Թվական կրող հնագույն արձանագրությունը հրեք տողից բաղկացած մի կարճ հիշատակարան է, ազուցված ս. Գրիգորի հարավային մույթի արեւելյան երեսին.

Թվ.: ՈՂԵ:

ՔՍ. ԱՄ. ՈՂՈՐ

ՄԻ . . . .

2. Ամենամեծ և զրեթե լրիվ արձանագրությունը, որը և հրատարակված է բոլոր տեղագրողների կողմից, երկու քարի վրա է, որոնք ազուցված են հյուսիսային մույթի արևելյան երեսի ներքևի մասում.

ԵՍ ՏԱՐՍԱԻՃ ՏՎԻ Ի ՄՃՌԿԱ(ՁՈ)—

Բ ՁԵՈՒՊԱՆԻՆ ԱՅԳԻՆ Ի ՍԲ ԳՐԻ(ԳՈՐ 3)—

<sup>1</sup> Լ. Ս. Խ ա չ ի կ յ ա ն, ԺՆ դ ար ի հ ա յ եր ն ն ձե ա գր եր ի հ ի շ ա տ ա կ ա ր ա ն ն եր, Բ, Ծ բ ւ ա ն, 1958, էջ 429:

ԻՇԱՏԱԿ ՀՈԳՈ ԻՄ, ՍՊԱՍԱԻՈՐ [Ք ՀԱՍՏԱՏԵՑ]—  
ԻՆ ԱՍԱՅԻՆ՝ . . . . .

Տարսայիճ Օրբելյանը մահացել է 1290 թ., հետևաբար դրանից առաջ է գրված:

3. Հարավային մույթի հյուսիսային երեսին

ՆՈՐՈԳԵՅԱԻ ՍԲ ԳՐԻԿ ԳՈՐՍ ԱՌԱՋՆՈՐԳ]—  
ՈՒԹԵ ԴԱԻԹԻ ԱՆՅԱՂԹ ԱՆՓԵՍՏՐՈՍԻ]...

Սխալ է այս արձանագրությունը որպես նախորդի շարունակություն ներկայացնելը, ինչպես արել են նախորդ հրատարակողները<sup>1</sup>:

4. Հարավային մույթի հյուսիսային երեսի վերին մասում, կողքանց դրված մի բեկորի վրա.

... Գ. ԵՍ ՊԻԶ. . . . .  
...ՍԲ ՅՈՎ [ՀԱՆՆԷՍ]  
... ՄԵՐՈՅ. ՈՐԶԱՓ ԿԵՆԴԱՆԻ ԵՄՔ...  
... ՈՐ ԱՆԵԱՓԱՆ ԿԱՏԱՐԵՆ]...

5. Հյուսիսային մույթի արևելյան երեսի վերին մասում, բեկորի վրա.

... ՊԱՏԱՐԱԳ ՓԱԵՐԱԴԱԻԼԻ, ԱՐԴ ՈՐ ՅԻՄՈՅ  
... ԿԱՄ ՅԱԻՏԱՐԱՅ. . . . .

Փախրադակեն Տարսայիճ Օրբելյանի որդին է, մահացած 1296 թվականին:

6. Ս. Գրիգորի արևելյան պատի վերին մասում, արտաքուստ, մի բեկորի վրա.

...ԴՂՈՓԻՆ . . . . .  
...ՍԻ ՍԲ ՍԻ . . . . .

Այստեղ հավանաբար հիշատակված է Խաչենի իշխան Գրիգոր Դոսիյանը, որը Տարսայիճ Օրբելյանի դուստր Ասփայի ամուսինն էր և իր կնոջ հետ միասին 13-րդ դարի վերջում և 14-րդ դարի սկզբում, նվիրատվություններ է արել Վայոց ձորի այլ վանքերի ևս:

7. Հյուսիսային մույթի հյուսիսային երեսին գլխավայր դրված մի բեկորի վրա.

ԵՍ ՏՐ ՍՏ [ԵՓԱՆՈՍ] . . . . .

Նվիրատվական արձանագրության այս բեկորի մեջ հիշատակված պատի լինի կամ պատմագրի և կամ նրա եղբորորդի՝ նույնպես սյունյաց եպիսկոպոս՝ Ստեփանոսի անունը (արձանագրությունների մեջ հիշվում է մինչև 1331 թ.):

8. Ս. Գրիգորի արևմտյան պատի հարավային մասում, արտաքուստ դրված մի բեկորի վրա.

... ԵՏՈՒ ԻՄ ԱՐՏ/ԵՐՍ Ի ՍԲ ՆՇ/ԱՆՍ...  
... ՈԶ ՈՒՄ ԴԱԻԻ [ԶԿԱՅ...  
ՀԱՍՏԱՏԵՑԻ [Ն ԻՆԶ ՊԱՏԱՂՐԱԳ...  
... Ի ՔԻ. ԱՄԷՆ

<sup>1</sup> Ս. Ջալալյան և Գ. Ծանաղարհորդություն, Բ, 155: Ղ. Ալիշան, Սխաղան, 145:  
<sup>2</sup> Ս. Ջալալյան և Գ. 156: Ղ. Ալիշան, 145:



9. Թվագրված ամենանոր արձանագրությունը գտնվում է մի խաչքարի վրա, որը երկու հավասար մասերի կիսած՝ գրված է ս. Գրիգորի բեմի արևելյան պատուհանի կողքերին.

ԽԱԶՍ ԲԱՐԵԽԱԻՍ ՆԱՐԿԻԶԻՆ

ԹՎ. 22Ը: (1539)

Այս արձանագրությունը կարևոր է նրանով, որ ցույց է տալիս ներկա շինությունից մոտավոր ժամանակը, որը տեղի ունեցած պիտի լինի նշած թվականից հետո, քանի որ խաչքարն օգտագործված է որպես շինանյութ:

10. Ս. Գրիգորի արևմտյան մուտքի մոտ արտաքուստ պատի մեջ ազուցված է մի գեղաքանդակ խաչքար, որի ճակատին ուռուցիկ և գեղեցիկ տառերով գրված է.

ԽԱԶՍ ԲԱՐԷԽԱԻՍ ԱՆՏՈՆ ՎԱՐԳՊՏ

Վերջին բառը կարելի է վերծանել և՛ ՎԱՐԳԱՊԵՏ, և՛ ՎԱՐԳՊԵՏ. վերջին դեպքում կունենայինք կառուցող ճարտարապետի անունը. դժբախտաբար թվական շունի, քայց զարգաքանդակների ոճը և գրչությունն ավելի համապատասխան են 16—17-րդ դարերին:

11. Ս. Գրիգորի արևմտյան մուտքից հյուսիս, արտաքուստ, պատի մեջ մի խաչքարի ճակատին.

ԵՍ ՏՐԻԱՅՍ ԿԱՆԿՆԵՅԻ ԽԱԶՍ ՍԱՐԳՍԻ

Այս արձանագրության մեջ հետաքրքիր է ԽԱԶ բառի ԽԱԶ գրության ձևը, որը հաճախ է հանդիպում Վայոց ձորի և Գեղարքունիքի 16—17-րդ դարերի արձանագրություններում. դժվարանում ենք որոշել՝ այս երևույթը տեղական արտասանության, թե որոշ վայրերում Զ և Զ տառերի իրար փոխարինելու արդյունք է: Հետաքրքիր է և այն, որ հավատքի հետ կապված այդ բառը հանդիպում է նաև ԽԱՅԶ գրությամբ և այն էլ ոչ սակավ:

### Էբեմնի վանքի մշակութային գործունեությունը

Մոնղոլական արշավանքներով ծայր առած ավերն ու կոտորածը հիմնահատակ արին ողջ Հայաստանը. ոչնչացած շեն գյուղերն ու քաղաքները, սրի քաշվեցին բնակչության հոժ դանգվածներ, մարեցին մշակույթի օջախները: Այս համատարած ավերմունքից զերծ մնացին երկրի ծայրամասերի լեռնային սակավաթիվ վայրեր, որոնցից մեկն էր Սյունիքը:

Ընդհանուր աղետից ճողոպրած հայ մշակույթի հատուկենտ գործիչները դիմեցին դեպի համեմատաբար բարվոք վիճակի մեջ գտնվող Սյունյաց աշխարհը: 1280 թ. հեռավոր Տարոնից Վայոց ձոր եկավ ներսես Մշեցին և հիմնեց Գլաձորի հռչակավոր դպրոցը, որն իր 60 տարվա մանկավարժական, գրչադրական, մանրանկարչական և այլ գործունեությամբ մեծ դեր կատարեց հայ ժողովրդի մշակույթի զարգացման ասպարեզում: Գլաձորի դպրոցի գործունեության ամենաարժեքավոր հատկանիշներից մեկն էլ այն էր, որ իր ժամանակի գիտելիքների հետ միասին իր սաների մեջ արմատավորում էր հայ ժողովրդի մշակույթի դարավոր տրագիկիաները, կոփում տոկուն ու նվիրված գործիչներ: Եվ երբ 1338 թ., դպրոցի ամենանշանավոր գործիչ Եսայի

Նշեցու մահվամբ ու քաղաքական աննպաստ պայմանների հետևանքով փակվեց մայր դպրոցը, նրա գործունյա սաները ցրվեցին Հայաստանի տարբեր վայրեր և հիմնեցին շատ նոր դպրոցներ:

Հերմոնի դպրոցի հիմնադիրը եղավ Տիրատուր վարդապետը: Նա եկել էր հեռավոր Կիլիկիայից՝ Գլաձորի դպրոցում սովորելու: Նրա անվան առաջին հիշատակությունը հանդիպում ենք 1309 թ. իր իսկ ձեռքով գրված ավետարանի հիշատակարանի մեջ.

«Գրեցաւ սուրբ ււետարանս ի թվ. ՉՄԸ, ի մեծ դպրատունս, որ կոչի Գլաձոր, ի վարժապետութեան մեծիս Ծսայայ և եռամեծին Դաւթայ, ձեռամբ անիմաստ գրչի Տիրատուր Կիլիկեցոյ»<sup>1</sup>:

1321 թ. մի ձեռագրական հիշատակարանի մեջ նա իր մասին գրում է արդեն «Ծս՝ նուաստ և յետինս ի բանասիրաց Տիրատուր բարունի...»<sup>2</sup>:

1337 թ. մի այլ հիշատակարանի մեջ Գրիգոր գրիչը նրան հիշատակում է որպես Ծսայի նշեցու օգնական-ուսուցչապետ՝ «Բազում ժամանակս աշխատեցայ առ ոտս մեծ բարունապետացն Յեսայի և Տիրատրոյ»<sup>3</sup>:

Ծսայի նշեցին մահացած է համարվում 1338 թ. և այդ թվականին էլ հավանաբար փակված է Գլաձորի դպրոցը: Տիրատուր վարդապետը հաստատված պիտի լինի Հերմոնի վանքում և հիմնադրած իր նոր դպրոցը նույն այդ թվականին, որովհետև Հերմոնի վանքում ընդօրինակված առաջին ձեռագիրը («Գրութիւնք Դիոնիսեայ Արիսպագացոյ») կրում է նույն այդ 1338 թվականը: Ձեռագրի գրիչ Գրիգորը իր հիշատակարանում ասում է. «Գծագրեցաւ ի նահանգիս Վայոժօր, ի վանս Հերմոնի, ընդ հովանեաւ սրբոյն Գրիգորի... ի վարժապետութեան ընդհանուր հայկազեանս սեռի երջանկի, մեծի և երիցս երանեալ հոկտորի Տիրատուր առձայնելոյ, առ որ կամք դեզերեալ ի վարժս կրթութեան...»<sup>4</sup>:

Նրա աշակերտ-գրիչները գրվատական խոսքերով են հիշատակում Տիրատուրի անունը. օրինակ, Մովսես գրիչը կոչում է նրան «մեծ վարժապետ», իսկ Հովհաննես գրիչը՝ «...տիեզերալուր վարժապետն մեր զՏիրատուր, որ փայլէր ի ժամանակին իւրում իբրև զարեգակն ի մէջ աստեղաց. թիւ. ՊԻԱ. (1372)»<sup>5</sup>:

Այս հիշատակարանի բովանդակությունից երևում է, որ Տիրատուրն արդեն մահացած էր:

Ձեռագրական երկու հիշատակարաններ վկայում են, որ Տիրատուրը թաղված է եղել իր հիմնած դպրոցում՝ Հերմոնի վանքում. 1415 թ. Տաթևացու աշակերտ Հովհաննես Կոլոտիկը Հերմոնի վանքում գրած իր հիշատակարանի մեջ ասում է. «Գրեցաւ... ի վանքս Հերմոնի, առ դրան սուրբ Լուսաւորչիս և սուրբ դամբարանաց՝ սուրբ վարդապետաց Տիրատրոյ, Գրիգորի և այլոց»<sup>6</sup>:

Նույնն է հաստատում նաև Թումայ Սպատկերացի գրիչը՝ Բերդավանքում գրած իր հիշատակարանի մեջ, 1423 թվականին<sup>7</sup>:

Տիրատուրի մահից հետո երկար ժամանակ նրա հիշատակը վառ է մնա-

<sup>1</sup> Լ. Խ ա շ ի կ յ ա ն, ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 60:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 174:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 294:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 303—304:

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 378:

<sup>6</sup> Վ. Հ ո վ ս ե փ յ ա ն, Խաղրակյանք, Բ, 243, ծանոթ.:

<sup>7</sup> Լ. Խ ա շ ի կ յ ա ն, ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ա, էջ 301:

ցել: Նրա աշակերտներն ու հետագա սերունդի ներկայացուցիչները նրան համարել են մեծ ուսուցիչ և ուսումնական, դասել հայ մեծագույն մտավորականների շարքը: Սարգիս գրիչն օրինակ, թվարկում է միջնադարի նշանավոր մտավորականներին այսպես՝ Գոշ, Վարդան, Ներսես, Սարգիս, Յեսայի, Տիրատուր, Առաքել և այլն<sup>1</sup>: Իսկ մի շափածո գրվածքի մեջ կա գործիչների հետևյալ դասակարգումը.

Վկայասէրն և Շիրակացին,  
Գոշ, Վանական, Տիրատուր արին  
Վարդան մեկնիչ և սուրբ Եսային և այլն<sup>2</sup>:

Տիրատուր վարդապետի կյանքի և գործունեության վերաբերյալ գոյություն ունեն հետևյալ փաստերը.

1309 թվականին նա արդեն վարժ գրիչ է եղել և Գլաձորում ընդօրինակել է ավետարան<sup>3</sup>:

Շուրջ 1323 թվականին նա ստացել է Թովմա Աբլիինացու «Յաղագս եթնյա խոհրդոց եկեղեցւոյ» աշխատության մի ձեռագիր<sup>4</sup>:

Այնուհետև, մինչև 1338 թվականը եղել է Գլաձորի դպրոցի ուսուցիչ և Եսայի Նշեցու օգնականը:

1338 թվականից մինչև 1372 թվականը հիմնադիր և ուսուցչապետ Հերմոնի դպրոցի:

Իր մանկավարժական և գործնական այլ աշխատանքներին զուգընթաց Տիրատուրն զբաղվել է և գրական վաստակով, նրա գրչին են պատկանում մի շարք քարոզներ, Արխատտելի գրվածքների վերաշարադրումը, ս. Գրքի դանազան մասերի մեկնություններ, 20-ի շափ մանկավարժական-ուսուցչական բնույթի շափածո հանելուկներ և այլն<sup>5</sup>:

Մի քառյակ-հանելուկի նմուշ.

է զգալի և շերևի,  
Չէ կենդանի ու կու խօսի.  
Թէ ոք ընդդէմ նմա խօսի՝  
Չնոյն առնէ պատասխանի: (Արձագանք)<sup>6</sup>:

Հետևյալ պատմվածքը ցույց է տալիս, որ Տիրատուրը եղել է աշխույժ, սրամիտ և յուժորով մարդ.

«ՉՏիրատուր վարդապետն ի պաշտօն տարան, և այն օրն հաց մոռացան տան ուտելոյ, յերեկոյին ժամուն տարան ի տուն, ասէր Պարոնն. Վարդապետ, քանի՞ տարոյ մարդ ես: Ասէ. Քառասուն, մէկ պակաս: Ասէ (հարցանողն). Մէկն է՞ր պակաս: Ասէ (Տիրատուր). օրս այս քաղցած պահեցիր, ի ժամանակի կարդ ոչ է՞ր<sup>7</sup>:

<sup>1</sup> Լ. Խ ա շ ի կ յ ա ն, ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 297:

<sup>2</sup> Ա լ ի շ ա ն, Սիսական, էջ 126:

<sup>3</sup> Լ. Խ ա շ ի կ յ ա ն, ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 60:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 174:

<sup>5</sup> Ա լ ի շ ա ն, Սիսական, էջ 126—127:

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 127:

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 127:



Տիրատուրի մահից հետո Հերմոնի դպրոցը շրջապահեց գործելուց. անվանի ուսուցչի պատրաւ տաժ քաղմաթիւ սաները շարունակեցին նրա գործը թե տեղում, և թե այլ վայրերում: Դատելով ձեռագրական հիշատակարաններից Հերմոնի դպրոցը գոյութիւն է ունեցել մինչև 15-րդ դարի վերջերը: Հերմոնի վանքում գրված, առայժմ հայտնի, ամենավերջին ձեռագիրն ընդօրինակված է 1478 թվականին: Այդ ձեռագրի ստացողն իրեն անվանում է «Յակոբ վարդապետ (յետինս) ի բանասիրաց»<sup>1</sup>:

Այստեղ գրված 26 ձեռագիր մատյաններից շորսը վերաբերում է 14-րդ դարին և քսաներկուսը՝ 15-րդ դարի մինչև 80-ական թվականներին, իսկ այդ ընդհանուր թվի միայն 3-ն է գրված Տիրատուրի կենդանութիւն ժամանակ:

Հերմոնի դպրոցում սովորողների ու աշխատողների շարքում հանդիպում ենք տարբեր վայրերից հավաքված գրիչների՝ Հովհաննես Երզնկացի (1413 թ.), Սարգիս Ղրիմեցի (1415 թ.), Գրիգոր Ախլցխացի (1419 թ.), Կարապետ Գերջանցի (1421 թ.), Թումայ Սպատկերացի (1423 թ.) և այլն:

Տիրատուրից հետո Հերմոնի վանքի ուսուցիչներից հայտնի են՝ Մերուն րաբունի (1394 թ.), Հովհաննես րաբունի՝ Կոլտտիկ կոչվածը, որը 1419 թվականի հիշատակարանի մեջ անվանված է «Րաբունեաց պետ», իսկ 1424 թվականին «Տիեզերալոյս հոտոր», ապա՝ Գրիգոր, Սարգիս, Ավագտէր և ուրիշներ:

Հերմոնի վանքի պարսպափակ և շատ ընդարձակ բակում պահպանվել են բնակելի և օժանդակ շենքերի մեծ թվով ավերակներ. իրենց շին ժամանակ դրանք կարող էին ծառայել քաղմաթիւ ուսուցիչների և աշակերտների բնակարանային և ուսումնական կարիքներին:

Մի վերջին խնդիր ևս.

Թեև Գլաձորի ստույգ տեղադրութիւնը մինչև այժմ, շնայած բոլոր փորձերին, չի ճշտվել, բայց անկասկած է, որ նա գտնվելիս է եղել ներկայիս Եղեգնաձորի շրջանի Վերնաշեն (Բաշքենդ) և հին Սրկղոնք գյուղի շրջակայքում, բոլոր դեպքերում Պոռչյանների այդ շրջանի տիրույթի սահմաններում: Պոռչյանների և Օրբելյանների տիրույթներն այստեղ բաժանվում էին Եղեգիս գետով, նրա ակունքներից սկսած մինչև՝ Դրիա գետին խառնվելը. Պոռչյանները տիրում էին Եղեգիսի ձախափնյա հողամասերին, Օրբելյանները՝ աջափնյա: Հերմոնի վանքը գտնվում է Եղեգիսի աջ ափին՝ ասել է Օրբելյանների տիրույթի սահմանի մեջ: Վերը բերված արձանագրութիւնների մեջ Հերմոնի վանքին կալվածներ նվիրած բոլոր մարդիկ պատկանում են Օրբելյան տոհմին, կամ նրանց հետ կապված անձնավորութիւններ են:

Հերմոնի վանքում 1338 թ. գրված առաջին ձեռագիր հիշատակարանի մեջ Գրիգոր գրիչը հայտնում է, որ «Գժագրեցաւ ի նահանգիս Վայոձոր, ի վանս Հերմոնի, ընդ հովանեաւ սրբոյն Գրիգորի... յիշխանութեան և ի տէրութեան տեղւոյս մեծ և բարեպաշտ իշխանին Բուրթէլի, և զաւակաց նորին Պէշքէնի և Իւանի...»<sup>2</sup>: Այսպիսով պարզ է դառնում, որ Հերմոնի վանքը գտնվել է Օրբելյանների տիրապետութիւն սահմաններում:

<sup>1</sup> Լ. Խ ա շ ի կ յ ա ն, ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Բ, էջ 291:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 303—304:

С. БАРХУДАРЯН

О МЕСТОНАХОЖДЕНИИ И ДЕЯТЕЛЬНОСТИ  
ГЕРМОНСКОЙ ШКОЛЫ

## Резюме

Гермонский монастырь со своей школой высшего типа сыграл значительную роль в культурной жизни Армении XIV—XV вв. Здесь было переписано большое число рукописей, были написаны самостоятельные труды, читались лекции и т. д.

До сих пор, однако, не было уточнено местонахождение этой школы.

Используя все сохранившиеся в армянской литературе важные свидетельства о Гермоне и опираясь, в основном, на обнаруженные самим автором осколки лапидарной надписи (где упоминается «...монастырь Ерамон...»), в статье делается обоснованное заключение о том, что монастырь Гюнейванк, находящийся выше села Алаяз Егегнадзорского района АрмССР, был известен в средние века под именем Гермонского.

Կ. Ն. ՅՈՒԶՐԱՇՅԱՆ

ԴԵԼՄԻԿՆԵՐԸ ԱՐԻՍՏԱԿԵՍ ԼԱՍՏԻՎԵՐՏՅՈՒ  
«ՊԱՏՄՈՒԹՅԱՆ» ՄԵԶ

Արիստակես Լաստիվերտցու Պատմության քննական բնագրի նախապատրաստման ընթացքում ինձ հաջողվեց մտցնել մի շարք մեծ ու փոքր ուղղումներ: Նոր ընթերցումներից մեկի մասին արդեն առիթ եմ ունեցել խոսելու<sup>1</sup>. ներկա նշումները վերաբերում են մի այլ ուղղման, առանց որի համապատասխան հատվածը մնում է անհասկանալի:

Պատմության ԺԶ գլուխը նվիրված է սելջուկների արշավանքին դեպի Հայաստան 1054 թ<sup>2</sup>. Սուլտան Տուղրիլ-բեկի ղեկավարությամբ սելջուկները հասան մինչև Մանազկերտ, պաշարեցին քաղաքը, սակաֆն գրավել շկարողացան: Սուլտանը վերադարձավ, ավերելով ճանապարհին Արծկե քաղաքը:

Պաշարման ժամանակ, պատմում է Արիստակեսը, թուրքերը մոտեցրին պատերին մի հսկայական քարան և սկսեցին ուժեղացնել քաղաքը քարերով: «Իսկ ի դալ երկրորդ ատարն,— կարդում ենք հրատարակված բնագրում,— Որտիլմեզ<sup>3</sup> որ զօրուն իշխանն էր, առեալ զզօրս իւր եկեալ մարտ եղեալ կռուէր ընդ մերմն»<sup>4</sup>: Նա փորձեց մտնել քաղաք, սակաֆն ընկավ պաշարվածների ձեռքը և սպանվեց, իսկ նրա զորքերը հետ նահանջեցին: Այդ անձնավորության մասին խոսում է նաև Մատթեոս Ուռհայեցին. «կալան և զաներն սուլտանին, որոյ անունն Ոսկեծամ ասէին»<sup>5</sup>. բյուզանդական պատմիչ Սկիլիցեսը<sup>6</sup>,

<sup>1</sup> Կ. Յուզբաշյան, Արիստակես Լաստիվերտցու Պատմության մեկ տարընթերցվածքի մասին՝ վրանդք և ոչ փրանդք. «Բանբեր Մատենադարանի» № 4, 1958. Կ. Կ. Юзбашян, «Варяги» и «прония» в сочинении Аристакеса Ластивертци. «Византийский временник» т. XVI, 1959, стр. 14—20.

<sup>2</sup> Հիմնական աղբյուրներն են՝ Ibn al-Athiri, Chronicon quod perfectissimum inscribitur, ed. C. J. Tornberg, v. IX. Lugduni Batavorum, 1863, էջ 41. 411. Ռուս. թարգմ. «Материалы по истории Азербайджана из Тарих ал-Камиль... Ибн-ал-Асира», Баку, 1940, стр. 117. Մատթեոս Ուռհայեցի. Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 118—122 Քր. թարգմ. Chronique de Matthieu d'Edesse continuée par Grégoire le Prêtre. Bibliothèque historique arménienne... par Edouard Dulaurier, Paris, 1858, pp. 98—102: Cedreni, Historiarum compendium, Bonnae, II, 1839, pp. 590—593. տե՛ս M. Cahen. Première pénétration turque en Asie Mineure. «Byzantion», XVIII, 1946—1948, pp. 16—17. Հ. Մանանդյան, Քննական ախուրթուն հայ ժողովրդի պատմության, հ. Գ, Երևան, 1952, էջ 47—49: B. Spuler. Iran in früh-islamischer Zeit. Wiesbaden, 1952, SS. 128—129.

<sup>3</sup> Պատմութիւն Արիստակեսայ վարդապետի Լաստիվերտցույ, Թիֆլիս, 1912, էջ 103—104. Թիֆլիսի (ինչպես և Վենետիկի 1901 թ.) հրատարակությունը արտատպված է 1844 թ. Վենետիկում հրատարակված բնագրից, կազմված է ձեռագրի համեմատությամբ:

<sup>4</sup> Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, էջ 119:

<sup>5</sup> Cedreni, p. 591.

վերջապես, անվանում է նրան Խորեզմի խան — 'Αλχάν ὁ τῶν Χωρασμίων ἡγε-  
μόν.

Մեկնարանելով սույն տեղը, Պատմության ֆրանսերեն թարգմանիչը նկատում է, որ «Որտիլմեզ» անվան տակ թարնված է Սկիլիցես-Կեղրենոսի Koutloumous-ը և Մատթեոս Ուսհայեցու Գլխուշը<sup>1</sup>, այսինքն Տուղրիլ-բեկի եղբորորդին և զորավարներից մեկը: Ընդունելով անգամ, որ հրապարակված բնագիրը ճիշտ է ներկայացնում Պատմության նախագաղափարը, նույնացումը պետք է համարել սխալ, որովհետև Մանազկերտի արշավանքում Գլխուշը չի մասնակցել, այդ ժամանակ նրա և Տուղրիլ-բեկի միջև սկիզբ էր առել խոր պառակտում<sup>2</sup>: Մինչդեռ ձեռագրերը հնարավորություն են տալիս վերականգնելու այդ հատվածի ճիշտ ընթերցումը — «Իսկ ի դալ երկրորդ ատուրն որ Դելմից զօրուն իշխանն էր առեալ զզօրս իւր եկեալ մարտ եղեալ կոուէր ընդ մերսն»<sup>3</sup>:

Ինչպես հայտնի է, հայոց աղբյուրներում բազմիցս հիշատակվում են դելմիները, իրանական մի ժողովուրդ, որը բնակվում էր Կասպից ծովից դեպի հարավ-արևմուտք<sup>4</sup>: Անաճիա Շիրակացուն կամ Մովսես Խորենացուն վերագրվող Աշխարհացույցը պահպանել է Դլմունք, ցԴիլումն ձևերը<sup>5</sup>: Թովմա Արծրունին (ավելի ճիշտ՝ նրա շարունակողը) պատմում է դելմիկների արշավանքի մասին<sup>6</sup>: Մատթեոս Ուսհայեցու մոտ հիշատակվում է «Թագաւորն Դելումաց»<sup>7</sup>: Հայտնի են նաև Դելմաստան<sup>8</sup>, Դէլէմէնկ<sup>9</sup> ձևերը: Արիստակես Լաստիվերտցու մոտ՝ Դելմից ձևը Դելմ անվան սեռական հոլովն է, որը և նշանակում է «դելլամիների երկիր»: Եթե Աշխարհացույցի հեղինակը կամ Մատթեոս Ուսհայեցին դելլամի անունը պահպանել են պարսկերեն ձևով<sup>10</sup>, ապա Արիստակես Լաստիվերտցին հայացնում է այն, և Դելմ ու դելմիկ անունները նույն փոխհարաբերության մեջ են, ինչ որ օրինակ Պարս և պարսիկ: Ցուցական դերան-

<sup>1</sup> Histoire d'Arménie comprenant la fin du royaume d'Ani et le commencement de l'invasion des seldjoukides, par Arisdagues de Lasdiverd, traduite... par E. Prud'homme, p. 99, n. 1.

<sup>2</sup> Cedreni, p. 606.

<sup>3</sup> Պետական Մատենադարան, հայերեն ձեռագրաց հավաքածու. № 2864, Թ. 281բ, № 1432, Թ. 102ա, № 1584, Թ. 67բ, № 1895, Թ. 42ա. նման ձևը՝ նաև հրապարակված բնագրի տարբերակներում: Չորս ձեռագրում ու դերանունը Դելմից բառից առաջ բացակայում է, տե՛ս № 3160, Թ. 254բ, № 3502, Թ. 404բ, № 3070, Թ. 198ա, № 6457, Թ. 87ա: № 2796 ձեռագրում՝ որ Դելմեզ զօրուն իշխանն էր (Թ. 39բ). նշելու է նաև որ հրատարակված բնագրի ու հարաբերական դերանունը (Ուտիլմեզ բառից հետո) մեր կողմից օգտագործված գրչագրերում չի հանդիպում:

<sup>4</sup> Տե՛ս V. Minorsky, La domination des dailamites, Paris, 1932, (Publications de la Société des études iraniennes et de l'art persan, № 3).

<sup>5</sup> J. Markwart, Eranšahr nach der Geographie des Ps. Moses Xorenaci, Berlin, 1901, S. 10.

<sup>6</sup> Թովմա Արծրունի, Պատմութիւն տանն Արծրունեաց, Թիֆլիս, 1917, էջ 492:

<sup>7</sup> Մատթէոս Ուսհայեցի, էջ 11:

<sup>8</sup> Ստեփանոսի Տարօնեցոյ Աստղկան, Պատմութիւն տիեզերական, հրատ. Ս. Մալխասյանցի, ՍՊԲ, 1885, էջ 188:

<sup>9</sup> Մովսեսի Կազանկատուացոյ, Պատմութիւն Աղուանից, Թիֆլիս, 1913, էջ 385:

<sup>10</sup> Վ. Մինորսկին ենթադրում է, որ Delam-ը այդ տեղանվան արարացրած ձևն է, իրականում հնչում էր հավանաբար Delam կամ անգամ Delim. V. Minorsky, op. cit., p. I, note.

վան բացակայությունը նման նախադասության մեջ հատուկ է հայերենին, նույն Արիստակես Լաստիվերացու մոտ նման կառուցվածք կգտնենք մի քանի տող ստորև՝ «իսկ որ ի վերայ պարսպին էին... կտլան զնա ևն»:

Այսպիսով, բանասիրական վերլուծությունը համոզում է մեզ, որ Պատմության մեջ բերված հատվածում խոսքը դելմիկների — դելմիկների մասին է, որոնք մասնակցել են սելջուկների 1054 թ. արշավանքին: Վերևում սակայն նշեցինք, որ խոսելով նույն զորավարի մասին, Սկիլիցեսը անվանում է նրան Խորեզմի խան, իսկ Մատթեոս Ուռհայեցին՝ սուլտանի աներ: Արաբական պատմիչ Սիրտ իբն-ալ-Ջաուզին խուլ կերպով ակնարկում է այն մասին, որ Տուղրիլ-բեկի կինը Խորեզմից էր<sup>1</sup>: Խորեզմացի մի խան էր կանգնած որպես դելմիկների զորավար, թե Սկիլիցեսը պարզապես շփոթել է վերջիններիս Խորեզմացիների հետ՝ դժվար է ասել: Արաբերեն և պարսկերեն աղբյուրների հետագա ուսումնասիրությունը պատասխան կտա թերևս այդ հարցին: Պարզ է միայն, որ 1054 թ. արշավանքին դելմիկների մասնակցությունը կասկածի ենթակա չէ. այդ հարցում ևս մեր հեղինակը մնում է ճշտապատում:

Հայոց աղբյուրների հաղորդած տեղեկությունները դելմիկների և նրանց արշավանքների մասին ի մի է բերել Ս. Շալջյանը<sup>2</sup>: Հղելով ընթերցողին այդ՝ նյութով հարուստ հոդվածին<sup>3</sup>, փորձենք կատարել մի շարք լրացումներ նորագույն կամ հեղինակի կողմից անտեսված գրականության հիման վրա:

Հնագույն տեղեկությունը դելմիկների արշավանքի մասին պահպանել է Թովմա Արծրունու շարունակողը: Դելմիկները գրավեցին Հաղամակերտ քաղաքը Աղբակում և տարան բազմաթիվ դերիններ, ասում է պատմիչը: Սակայն Անձևացիքում վրա հասան հայ ջոկատները, կոտորեցին 2000 թշնամի զինվոր, հետ վերցրին ավարը և աղատեցին գերջաջներին<sup>4</sup>: Այդ մասին մանրամասն պատմում է նաև Իբն-ալ-Ասիրը<sup>5</sup>, որը սակայն դելմիկների պարտության մասին լուռ է: Դելմիկների պարագրուխն էր Լաշկարի Իբն-Մարդին, արշավանքը տեղի է ունեցել հիջրեթի 326-ին (8.11.937—29.9.938): Հայագիտական մամուլում այդ արշավանքին նվիրված է հատուկ հոդված<sup>6</sup>, որի հեղինակը չի կասկածում, որ հայոց պատմիչի մոտ ևս պահպանվել է ուշագրավ տեղեկություն սույն դեպքի վերաբերյալ:

Դելմիկների արշավանքը Հայաստան, որի մասին պատմում է Մովսես Կաղանկատվացին, տեղի է ունեցել ոչ թե 914 թ. ինչպես ենթադրում է Ս. Շալջյանը, այլ 944 թ. Պարտավում դելմիկները հանդիպում են սուս—սուզիկ-

<sup>1</sup> M. Cahen, op. cit. p. 17, n. 1.

<sup>2</sup> Ս. Շալջյան, Դելմիկները և նրանց արշավանքները դեպի Հայաստան: «Տեղեկագիր» ՄՍՍՄ ԳԱ Հայկական ֆիլիալի, № 5—6 (10—11), 1941, Արիստակես Լաստիվերացու տեղեկությունը հեղինակը բնականաբար չէր կարող օգտագործել:

<sup>3</sup> Պետք է շեշտել սակայն, որ Ս. Շալջյանը հարցը ուսումնասիրում է միայն հայոց աղբյուրների սահմաններում, ուստի նրա ընդհանուր եզրակացությունները դելմիկների պատմության վերաբերյալ որոշ դեպքերում կարող են հիմնավորման:

<sup>4</sup> Թովմա Արծրունի, էջ 492:

<sup>5</sup> Ibn al-Athir, v. VIII, p. 261 — 263 սուս. Թարգմ. «Материалы по истории Азербайджана...», стр. 92—93.

<sup>6</sup> Cl. Hart. Une razzia en Arménie au Xe siècle. «Revue des études arméniennes», 1, 1921, fasc. 4, Տե՛ս նաև J. Markwart. Südarmenien und die Tigrisquellen, Wien, 1930, S. 387—389.



ներին, որոնց գալստյան մասին Անդրկովկաս մանրամասն խոսում են արաբ պատմիչները, տալով և դեպքի ճիշտ թվականը<sup>1</sup>: Մովսես Կաղանկատվացու հիշատակած Սաղարի լրիվ անունն է՝ Սալար Մարզուբան իբն-Մուհամմադ իբն-Մուսաֆիր<sup>2</sup>:

Հակառակ Ս. Շալջյանի կարծիքին, 987—988 թթ. Հայաստան արշավող Աբլհաճը դեյլամի չէ: Ասողիկը ի նկատի ունի Աբուլ-Հայջա իբն ալ-Ռավվադիին, իսկ Ռավվադյանների հարստությունը ուներ ոչ թե դեյլամի, այլ քուրդ-արարական ծագում<sup>3</sup>:

Ինչպես ասացինք վերը, դեյլամիներին հիշում է նաև Մատթեոս Ուսահյեցին: Պատմելով 971—972 թթ. դեպքերի մասին, նա ասում է՝ «Զօրածո ղով արարեալ թագաւորն Դելումաց և յանկարծից գայր հասանէր ի նիդ գաւառն հայոց՝ մերձ ի յամուրն Բջնի»<sup>4</sup>:

Արդեն Մ. Չամչյանը<sup>5</sup> ցույց է տվել, որ այդ դեպքի մասին պատմում է նաև Վարդան Բարձրբերդցին, ըստ որում տալիս է նաև ճիշտ թվականը՝ 1021. «Ի շորս հարիւր եօթանասուն թուին ել Տուղրիլ բէկն և պատահեաց նմա ի նախճալանի Լիպարիա հինդ հազար հեծելովք և փախաւ յահագին բազմութենէն: Եւ ի գալ թուրքին ի Դուին և սիոեալ ասպատակա ել ընդդէմ նոցա բաշն Վասակ. և ցուցեալ մեծ քաջութիւնս դառնայ ի Սերկելի և ի հանդշին սակաւ մի քնով քարիւ հարեալ զզլուխն այր մի յանդէտս՝ մեռանի»<sup>6</sup>:

Գրականության մեջ այդ արշավանքի վերաբերյալ կան տարբեր կարծիքներ: Ա. կադ. Հ. Մանանդյանը գտնում էր, որ արշավողները իրոք գելմիկներ էին (և ոչ թե սելջուկներ, ինչպես կարծում էին մի շարք գիտնականներ). միաժամանակ նա ենթադրում էր, որ այդ արշավին մասնակցել է նաև թուրքական այրուձի<sup>7</sup>: Հ. Մարկվարտի կարծիքով «Դելումաց թագավորը» Աղբբեյանի դեյլամի ամիրա աս-Սալար Իբրահիմ իբն-ալ-Մարզուբանն է կամ Վահսուդան իբն-Մամլանը<sup>8</sup>: Հետաքրքիր կարծիք է հայտնել այդ դեպքերի վերաբերյալ պարսիկ գիտնական Քասրավին: Նա ասում է, որ 1021 թ. հարձակվողները պատկանում էին սելջուկներից անկախ ղուլ ցեղին: Այդ արշավանքից բիշ առաջ ղուլները ապաստան էին դրել ռավվադյան ամիրա Վահսուդանի մոտ Ասրապատականում<sup>9</sup>: Այդ կարծիքը առավել համոզիչ է թվում, որովհետև Մարմաշենի 1029 թ. արձանագրության մեջ այդ արշավը հիշատակվում է «թուրքաց պատերազմ» անվան տակ<sup>10</sup>:

<sup>1</sup> А. Якубовский. Ибн-Мискавейх о походе Русов в Бердаа в 322 г. = 943/4 г. «Византийский временник», т. XXIV, 1926, стр. 71—72; В. В. Бартольд. Арабские известия о русах. «Советское востоковедение», т. I, 1940, стр. 31—34.

<sup>2</sup> Տեսնել նրա մասին V. Minorsky. Caucasia IV... «Bulletin of School of Oriental and African Studies», 1953 XV/3, p. 514—515.

<sup>3</sup> V. Minorsky, Musafiri. «Encyclopédie de l'Islam», t. III, 1936, p. 795—796.

<sup>4</sup> Մատթեոս Ուսահյեցի, էջ 11:

<sup>5</sup> Մ. Չամչյան, Պատմութիւն հայոց, Բ, Վենետիկ, 1785, էջ 904:

<sup>6</sup> Մեծին Վարդանայ Բարձրբերդցու, Պատմութիւն տիեզերական, Մոսկվա, 1861, էջ 131:

<sup>7</sup> Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, Գ, էջ 38—39:

<sup>8</sup> J. Markwart, op. cit., s. 518.

<sup>9</sup> S. A. Kasrawi Tabrizi, The Forgotten Rulers (Rawwadits). Teheran, 1929, p. 15—16 (պարսկերեն):

<sup>10</sup> Կ. Կոստանյան, Վիճական տարեգիր, ՍՊԲ, 1913, էջ 16:

Ահա այն հավելումները, որոնց կարիքն է դրում Ս. Շալջյանի ընդհանուր առմամբ բովանդակալից հոդվածը: Ավելացնենք նաև, որ Դվինի և դելմիկների միջև եղած հարաբերություններին նվիրված է Ա. Տեր-Ղևոնդյանի հոդվածը<sup>1</sup>:

К. Н. ЮЗБАШЯН

## ДЕЙЛЕМИТЫ В «ПОВЕСТВОВАНИИ» АРИСТАКЕСА ЛАСТИВЕРТЦИ

Резюме

XVI глава «Повествования» Аристакееса Ластивертци (XI в.) посвящена нашествию сельджуков на Армению в 1054 г. и безуспешной попытке овладеть Маназкертом. При осаде города, говорится в опубликованном тексте, некий военачальник «Ортилмез» предпринял попытку проникнуть в цитадель, но был схвачен и убит. Загадочное имя «Ортилмез» явилось порождением неверного понимания соответствующего места. С помощью рукописей восстанавливается правильное чтение этой фразы: *Իսկ ի գալ երկրորդ անգամ որ Գեղմից գորուն իշխանն էր* — «а на следующий день предводитель дейлемитов...» Таким образом, в походе 1054 г. участвовали дейлемиты, иранское племя, проживавшее юго-восточнее Каспийского моря. О Дейлеме и дейлемитах упоминают многие армянские авторы начиная с VII века. Аристакеес Ластивертци сохранил арменизированную форму наименования Дейлема — Делмк, (род. п. Делмиц).

<sup>1</sup> Ա. Տեր-Ղևոնդյան, Դվինը Սալարյանների ժամանակ, Հայկ. ՍՍՌ-ԳՍ «Տեղեկագիր», հաս. գիտ. 1956, № 12:



ԱՍՏՂԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԳՐԵՆԱԿԱՆ ԳՈՐԾԻՔ՝ ԳՆԴԻԿԱՎՈՐ ԳՐՁԻ ՄԱՍԻՆ

Ձեռագրերում հաճախ հանդիպում են գրենական և նկարչական պիտույքներ պատկերող զանազան մանրանկարներ, որտեղ ներկայացված են եղեգնյա գրիչներ, նրանց մշակելու համար գործածվող մկրատներ, զանակներ, ապա թանաքամաններ, ներկամաններ:

Մեր ուշադրությունը գրավել է մի հետաքրքիր գործիք, որը պայմանականորեն կոչում ենք գնդիկավոր գրիչ, որովհետև նրա երկու մասերն իրար միացած են մի սնամեջ գնդիկով: Թանաք պարունակող այս գնդիկից դեպի վերև ծայր է առնում մի երկարավուն ձողիկ, որը գրչի կոճին է, իսկ գնդիկից ներքև իջնող ձողիկի սուր ծայրը ծառայում է որպես գրչածայր:

Առաջին անգամ գնդիկավոր գրչի հանդիպում ենք 1166 թ. Հոռմկալյում գրված մի ավետարանում (ձեռ. № 7347): Այս ձեռագրի 12ր էջում նկարված է Մատթեոս ավետարանիչը, որի մոտ, սեղանի վրա, գրված է շորս գնդիկավոր գրիչ: Նույն ձեռագրում, պատկերված մյուս երեք ավետարանիչների մոտ, դարձյալ հանդիպում ենք այդպիսի գրիչների: Գնդիկավոր գրիչներ պատկերված են նաև № 7737 ձեռագրի (ԺԲ դար) 208ր և 334ր էջերում:

Ուշագրավ է Կիլիկիայի Սկեռա վանքում 1173 թվականին ընդօրինակված՝ Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» ձեռագիրը, որի 7ր էջին պատկերված է Նարեկացին՝ գնդիկավոր գրիչը ձեռքին (տես նկ. 1):



Նկ. 1. Հատված № 1568 ձեռագրի 7ր էջի մանրանկարից  
(Կիլիկիա, 1173 թ.)

Հիշատակված Կիլիկյան ձեռագրերից հետո, գնդիկավոր գրիչներ հանդիպում ենք 1211 թ. Հաղբատի ավետարանում (էջ 18ր), որը ծաղկել է Մարգա-

րե ծաղկարարը Հոռոմոսի վանքում, ապա 1219 թվականի Խարբերդի շրջանի Բարդանձա անապատում գրված մի ձեռագրում (ձեռ. №. 7734, էջ 13ր և 130ր):

Ուշադրություն է գրավում գնդիկավոր գրչի մի այլ օրինակ 1292 թվականին, Նորավանքում (Սյունիք) գրված մի ավետարանում (ծաղկող՝ Մոմիկ, ձեռ. № 2848), այստեղ Պրոխորի ձեռքին նկարված ենք տեսնում մի բավականին մեծ գնդիկավոր գրիչ (տես նկ. 2):



Նկ. 2. Հատված № 2848 ձեռագրի 245ր էջի մանրանկարից  
(Նորավանք, 1292 թ.):

Այսպիսով, գնդիկավոր գրիչների հանդիպում ենք 12-րդ դարում Կիլիկիայում և 13-րդ դարում՝ Հայաստանի տարբեր շրջաններում:

Այն մանրանկարներում, որտեղ պատկերված են միաժամանակ գնդիկավոր գրիչներ և թանաքամաններ, նկատվում է, որ թանաքամանում եղած թանաքի և գրչի գնդիկի մեջ գտնվող թանաքի գույնը միշտ նույնն է և համապատասխանում է ձեռագրի գրության գույնին:

Գնդիկավոր գրիչների և նրանց վերաբերող պիտույքների ավելի մանրամասն նկարագիրը մեզ կօգնի ճիշտ եզրակացության հանգելու այն մասին, որ գրություն են ունեցել իրենց ներսում թանաք պարունակող գրիչներ՝ «ինքնահոսներ»:

№ 7347 ձեռագրի 12ր էջում պատկերված են շորս, իսկ 103ր էջում երեք գնդիկավոր գրիչներ, որոնց գնդիկները և գրչածայրերը սև գույն ունեն, իսկ կոթերը՝ կարմիր: Թանաքամաններում կան սև, կարմիր և սսկեգույն թանաքներ: Նման մանրանկարներ կան նաև այս նույն ձեռագրի 164ր և 264ր էջերում:

Բոլոր մանրանկարներում էլ գրչածայրի, գնդիկի, թանաքի և ավետարանչի ձեռքի ձեռագրի գրության գույնը նույնն են: Այսպես՝ № 7737 ձեռագրի 208ր էջում պատկերված Մարկոս ավետարանչի ձեռքի գրչի գնդիկը և գրչի ծայրը կարմիր են, կարմիր է նաև գրքի գրությունը: 334ր էջում նկարված Ղուկաս ավետարանչի ձեռքի գրչածայրը և գնդիկը կապույտ են, ինչպես և այն տողը, որը նա գրում է: Ուշադրավ են № 7734 ձեռագրում նկարված գրիչները: 13ր էջում Մատթեոս ավետարանիչը ձեռքին բռնել է սովորական եղեգնյա գրիչ, իսկ նրա մոտ, սեղանի վրա գրված են երկու գնդիկավոր գրիչներ, որոնց գնդիկները և ծայրերը սև են ներկված, իսկ գրչի երիզագիծը և կոթը՝ կարմիր: Թանաքամանի թանաքը սև է, ավետարանչի ձեռքի գրքի

գրությունը նույնպես սև է: Այդպես է նաև 170բ էջի նկարը: № 1568 ձեռագրի 7բ էջում, Գրիգոր Նարեկացին բռնել է մի գնդիկավոր գրիչ, որի գնդիկը սուկեգույն է, սուկեգույն է նաև թանաքամանի թանաքը: Նրա ձեռքի գրքի գրությունը (մեկ տող)՝ սև է, սակայն սուկեգույն է բուն ձեռագրի հաջորդ (8ա) էջի ողջ գրությունը: № 2848 ձեռագրի 245բ էջում պատկերված Պրոխորի ձեռքի գրչի գնդիկը մոխրագույն է, մոխրագույն են նաև գրքի տողերը, ընդ որում, գրչի ծայրը դրված է տողի վրա:

Որ գնդիկում իրոք թանաք է լցված, դրա օգտին են խոսում վերը բերված օրինակների մեծ մասը: Այդ բանը ամենից ցայտուն ձևով ցույց են տվել № 7347 և 7734 ձեռագրերի ծաղկողները:

Միջնադարյան բավականին թանձր թանաքը հնարավորութուն էր ստեղծում գնդիկավոր գրիչ պատրաստելու, երբ գնդիկից թանաքը բավականին դանդաղ կարող էր ծորալ «գրչածայրի» անցքով:

Բացի մանրանկարչական բազմաթիվ օրինակներից, գնդիկավոր գրչի մասին կան նաև գրավոր տեղեկություններ: № 1380 (1435 թ.) ձեռագրի հիշատակագրություններից մեկում գրիչ Հովհաննեսը գրում է. «Զսուտ գծագրիկս գՅովանէս բաղաբացիս յիշման արժանի արարէք, ով սուրբ գրոց աշակերտեալ անձինք, որ յայս տետրակս Ձ. (900) գիր ի Ա. (1) անգամ թաթախելոյն գրեցի և այլ՝ Ի. (20), Լ. (30) ավելի, վարդապետքս վկայ» (էջ 16բ): Նույն ձեռագրում մի այլ գրիչ գրում է. «ԶՍտեփանոս սարկաւագրիկս յիշեցէք ի Քրիստոս, որ տասն ու վեց տետր գրեցի: Բայց ի մի թաթախելոյն է՛՛. (700) գիր գրեցի: Բայց կաթաւ թանաքն, թէ չէ այլ կու գրէի» (էջ 229բ):

А. ГЕВОРКЯН

## О СРЕДНЕВЕКОВОЙ РУЧКЕ-САМОПИСКЕ

### Резюме

В одной средневековой армянской миниатюре сохранилось изображение интересной письменной принадлежности, которую мы условно называем шариковой авторучкой. Перо и ручка в этом приборе соединяются друг с другом посредством пустотелого шарика. На нескольких миниатюрах с изображением ручки видно, что шарик этот наполнен чернилами. Данный факт говорит о существовании в средневековой Армении ручек-самописок, внутри себя имевших шарик-резервуар для чернил.

Самое раннее изображение шариковой самописки содержится в евангелии 1166 года, переписанном в Ромкла (рукопись № 7347), затем в ряде других киликийских рукописей XII века, а также в сюникских и ахпатских рукописях XIII века.



Б. ГОРЯНОВ

### ГРЕЧЕСКАЯ РУКОПИСЬ № 25 ФОНДА ИНОЯЗЫЧНЫХ ПАМЯТНИКОВ МАТЕНАДАРАНА\*

Научно-исследовательский институт древних рукописей при Совете Министров Армянской ССР—«Матенадаран» в своем фонде иноязычных памятников имеет три греческие рукописи<sup>1</sup>. Из этих трех рукописей две не вызовут интереса советских историков ни по содержанию, ни по своим палеографическим качествам. Это — рукописи XVIII века, из которых одна содержит краткое изложение основных канонов православной церкви, а другая — также церковной тематики, — имеет целью пересказать данные, содержащиеся в решениях вселенских соборов. В фонде иноязычных рукописей Матенадарана они значатся под № 12 и 31.

Рукопись № 25 — хронограф, очевидно переписанный в XVI в. Формат листов рукописи 20,5 см × 14,5 см., формат письма на листе 14,4 см × 9 см. Рукопись в деревянном переплете, обтянутом потемневшей от времени кожей.

В рукописи имеется двойная нумерация, что позволяет контролировать недостающие листы. Рукою неизвестного переписчика нумерация сделана греческими литерами, и всего по этой нумерации имеется 48 листов. Кроме этого, каждый лист нумерован карандашом библиотекарем Матенадарана. Всего листов, согласно этим пометкам, в рукописи № 25 имеется 501. Недостаёт, по последней нумерации, листов 6-го, 155-го, не хватает половины 254-го листа.

Полное название хронографа помещено на отдельном листе, впереди текста. Это название гласит:

Χρονογραφικῶν περιέχον περί τοῦ ποτε ἐκτέσθη ἡ Ρῶμη. καὶ περί τῶν βασιλέων αὐτῆς. καὶ περί τῆς Κωνσταντίνου πόλεως, ποτε ἐκτέσθη καὶ πόσοι βασιλεῖς ἐβασίλευσαν ἐν αὐτῇ. καὶ περί τοῦ πῶς αἰχμαλωτίσθη ὑπὸ τῶν Ἀγαρινῶν. καὶ πόσοι βασιλεῖς ἐβασίλευσαν ἀπὸ τῶν καιρῶν ὅπου ἐπήραν τὴν βασιλείαν:—

\* Статья содержит предварительную характеристику греческой рукописи № 25, осмотренной автором во время его командировки в Ереван для обследования греческих рукописей осенью 1957 года.

<sup>1</sup> В сведениях, составленных, очевидно, на основании описаний различных хранилищ, ошибочно указано наличие двух греческих рукописей в фондах Матенадарана. (См. Е. Э. Гранстрем. Греческие рукописи в собраниях Советского Союза (дополнительные сведения). Византийский Временник, XI (1956), стр. 285).





Рис. 1.

По рисунку № 1 читатель может познакомиться с почерком неизвестного переписчика.

Описываемый нами хронограф подобен хронографу, отмеченному Карлом Крумбахером в греческом фонде Парижской Национальной Библиотеки<sup>1</sup>, в котором излагалась римско-византийско-турецкая

<sup>1</sup> К. Кrumbacher. Geschichte der byzantinischen Litteratur. 2 Aufe. München, 1897, S. 400. Отмеченная Крумбахером рукопись хранится в греческом фонде Парижской национальной библиотеки (Codex Parisinus Suppl. gr. 467).



Рис. 2.

история от Энея до Мурата IV (1623—1640). Заглавие парижского хронографа:

Βιβλίον χρονογραφικὸν κυροῦ Γεωργίου τοῦ Συγγέλου καὶ Εἰρηναίου τῶν παλαιῶν χρονογράφων περιέχον περὶ τοῦ πότε ἐκτίσθη ἡ Ῥώμη καὶ περὶ τῶν βασιλέων αὐτῆς καὶ περὶ τῆς Κωνσταντινουπόλεως πότε βασιλεὺς (ἐγένετο) καὶ περὶ τῆς ἀλώσεως αὐτῆς ἀπὸ τῶν Ἀγαρηῶν.

Начало: Βασιλεὺς πρῶτος τῆς Ῥώμης. Ἀπὸ τὸν καιρὸν ὅπου ἠφανίσθη ἡ Τρωάδα ἀπὸ τοῦς Ἑλληνας.

В этой рукописи из трех авторов, называемых составителями, первый, естественно, известный Георгий Синкелл. Как обстоит дело с Юстином и Иринеем, Крумбахер считал неясным.

Первая часть, по мнению Крумбахера, является свободной обработкой Синкелла и Феофана. Далее, на листах 119—177 парафраз Скилицы, произведение которого здесь странным образом доходит до Иоанна Комнина. После заметки о правлении этого императора стоит пометка

*ἕως ὧδε τελειώνει ὁ Ἰωάννης Σκυλίτζης ὁ χρονογράφος.*

Возвращаемся к рукописи № 25 Матенадарана.

Incipit рукописи № 25:

*Ἀπὸ τὸν κάστρον ὁποῦ ἀφανίσθη ἡ Τροάδα ἀπὸ τοῦς Ἑλλήνας ἕνας στρατιγὸς ὀνόματι Λινείας υἱὸς Ἀχίσοῦ.*

Desinit: *ἔλαβεν ἀποθανόντος τοῦ Ρεγάτζου.*

Содержание рукописи обычно для византийских хронографов. Начинаясь от сотворения мира, имея в кратком изложении библейскую традиционную историю, рассказ рукописи пересыпан сообщениями из «Ветхого завета».

Далее, в хронографе идут краткие описания царствований римских императоров. Чрезвычайно интересна форма начала рассказа о правлении Августа (fol. 10 ):

*... ἐβασίλευσεν δὲ αὐτὸς ὁ Αὐγούστος Καίσαρ χρόνους κς καὶ ἐμονάρχησεν...*

Это глагольное образование не привлекало внимания ученых, изучавших историю императорского Рима. Мы посвятим ему в дальнейшей работе над рукописью отдельный экскурс.

Политическое лицо автора хронографа ясно из оценки, которую он дает Диоклетиану, называемому им «бессовестнейшим, сыном погибели»

*ὁ Διοκλητιανὸς ὁ ἀσεβέστατος ὁ υἱὸς τῆς ἀπολείας.*

Эти эпитеты читаем на fol. 33. Она, видимо, вызвана той внутренней политикой в отношении христиан, которую проводил этот император (284—305 н. э.). Как известно, Диоклетиан начал свое единоличное правление подавлением восстания багаудов и африканских повстанцев, проявив себя верным защитником интересов провинциальных земельных магнатов. Известно далее, что Диоклетиан, провозгласив манихеев слепым орудием враждебного Ирана, казнил их проповедников и жег их богослужебные «тайные» (*ἀποκρυφα*) книги. Напомним, что прозвали Диоклетиана «нечестивым» еще современные ему христианские писатели, называвшие «золотой век» Диоклетиана нечестивым веком, а римских императоров — разбойниками, бандитами.

Как и многие другие памятники аналогичного типа, рассматриваемый нами хронограф — материал для изучения истории греческого

языка в части его фонетики. Приведем лишь несколько примеров, позволяющих укрепиться в выводах, делавшихся многими лингвистами, по поводу произношения в поздневизантийском греческом языке. Мы встречаем в рукописи:

πόλης	вместо	πόλις
στολισμένος	„	στολισμένος
εὐρήσκειται	„	εὐρίσκειται
βηβλία	„	βιβλία
μοναστήρια	„	μοναστήρια
ἐκτήστι	„	ἐκτήστη
περιφίμου	„	περιφήμου
κτίσεως	„	κτίσεως

Эти подобранные нами примеры, свидетельствующие о частном случае консонантизма и, вместе с тем позволяют охарактеризовать лексический материал рукописи, как возможный к привлечению в качестве парадигм этого явления консонантизма в средневековом греческом языке.

Помимо интересного глагола *μοναρχέω*, мы обращаем внимание на глагол *λατινίζω*. Эта глагольная форма, по нашим сведениям, возможно недостаточным, не регистрируется в других нарративных источниках. На листе, обозначенном *ϰδν* рукою переписчика, говорится о Михаиле VIII Палеологе:

... καὶ ἐλατινίζεν τῷ δὲ εὐ χρόνῳ τῆς βασιλείας αὐτοῦ ἐπαράλαβαν οἱ Ῥωμαῖοι τὴν Κωνσταντινούπολιν ἀπὸ τὰς χεῖρας τῶν Βενετικῶν καὶ καταδίωξαν αὐτοὺς καὶ ἦλθεν ὁ βασιλεὺς καὶ ἔλαβεν τὸν θρόνον τῆς Κωνσταντινίου πόλεως, τῆς κυρίας πασῶν τῶν πόλεων.

Глагольная форма *λατινίζω* относится к Михаилу VIII (1261—1282). Поскольку сообщение, в котором встречается форма *ἐλατινίζεν*, стоит непосредственно перед описанием захвата Михаилом VIII Константинополя, возможны два предположения: либо этот глагол, в котором чувствуется негодующий тон правоверного священника-монаха, возмущающегося переговорами Михаила VIII об унии с католической церковью, относится к церковной политике первого Палеолога, либо он отражает настроения константинопольского населения и населения других городов-эмпориев проитальянской политикой Палеологов, начало которой было положено их первым представителем на византийском престоле. Возможно, тут имеется в виду Нимфейский трактат 13 марта 1261 года, когда Михаил VIII и Генуя подписали оборонительно-наступательное соглашение против Венеции и Балдуина II. Как известно, по этому договору Генуя соглашалась предоставить свой флот в распоряжение Византии, получив взамен свободу торговли по всей империи и другие привилегии, которыми до этого пользовалась Венеция<sup>1</sup>. Последствия

<sup>1</sup> F. Dölger. Regesten der Kaiserurkunden des oströmischen Reiches, 1887; Heyd. Histoire du commerce du Levant, vol. I. Paris, 1885, p. 31; G. Bratianu. Recherches sur le com-

этого договора временно заменили экономическую монополию Венеции торговой гегемонией Генуи. Это тяжело отразилось на судьбе Византии в последующие века и внесли «...не малую долю в совокупность тех причин, вследствие которых подсекались силы Константинопольской, «городской» империи, накануне ее последних лет»<sup>2</sup>.

В настоящем предварительном сообщении мы останавливаемся еще лишь на одном важном отрывке из хронографа, являющегося содержанием рукописи № 25 Матенадарана. На листках *μα.ε.ν. ι.δ.θ.γ.* то есть на 5 страницах в рукописи содержится известие о новом церковном делении империи, произведенном Андроником II (1282—1328). Это — наиболее ценная часть хронографа, и мы собираемся посвятить ей специальное исследование. Оно потребует сравнительного анализа памятника, который должен быть сопоставлен с хронологически предшествующими и с последующими *Notitiae episcopatum*.

Рукопись № 25 иллюстрирована. Анализ характера этих иллюстраций выходит за пределы компетенции автора, не являющегося специалистом по истории византийской живописи, в частности ее «малых форм». Для ознакомления с основными проблемами, возникающими при изучении иллюстрации к рукописям, можно порекомендовать хотя бы соответствующий раздел «*Caractères généraux de l'illustration des manuscrits*») капитального руководства Шарля Диля по истории византийского искусства<sup>1</sup>.

Из русской дореволюционной литературы классическим трудом стала книга академика Н. П. Кондакова<sup>2</sup>. В рукописи № 25 даются во весь рост изображения византийских императоров, выполненные в один цвет теми же чернилами, что и сама рукопись. В качестве образца мы даем изображение Льва III (717—741).

\* \*  
\*

Из этой предварительной характеристики рукописи № 25 фонда иноязычных рукописей Матенадарана явствует, что описанный нами хронограф не является повторением какого-либо из изданных источников этого рода. Следовательно, эта рукопись является уникальной. В содержание этого хронографа входят элементы, дающие новое освещение исторических фактов по некоторым моментам внутренней и внешней истории Византии, особенно в поздневизантийское время.

*merce génois dans la mer Noire au XIIIe siècle.* Paris, 1929, pp. 81—83; С. Chapman. *Michel Paléologue restaurateur de l'empire byzantin.* Paris, 1926, p. 42.

<sup>2</sup> Е. Ч. С к р ж и н с к а я. Генуэзцы в Константинополе в XIV в. *Византийский Временник*, I (XXVI), 1947, стр. 234. См. также ее же: Петрарка о генуэзцах на Леванте. Там же, II (XXVII), 1949, стр. 245—266.

<sup>1</sup> Charles Diehl. *Manuel d'art byzantin*, tome second, Paris, 1926, pp. 599—601.

<sup>2</sup> Н. П. Кондаков, *История византийского искусства и иконографии по миниатюрам греческих рукописей.* Одесса, 1876 г.

К числу таких моментов относятся история латинского завоевания 1204 г., отношение духовенства, а также и народных масс к латинским завоевателям, внешняя политика Михаила VIII Палеолога и особенно план реформы церковного деления Империи, задуманный Андроником II. Все это приводит автора к выводу о желательности полного издания этого хронографа на греческом языке.

Բ. ԳՈՐՅԱՆՈՎ

ՄԱՏԵՆԱԳԱՐԱՆԻ ԱՅԼԱԼԵԶՈՒ ԳՐԶԱԳՐԵՐԻ ՀԱՎԱՔԱԾՈՒԻ № 25  
ՀՈՒՆԱՐԵՆ ՉԵՌԱԳԻՐԸ

Ամփոփում

Հողվածում համառոտակի ներկայացվում և գնահատվում է Մատենադարանի հունարեն երեք ամբողջական ձեռագրերից ամենաարժեքավոր (№ 25) ձեռագիրը (Փամանակագրություն): Այն ևս, բյուզանդական գրեթե բոլոր ժամանակագրությունների նման, սկսվում է աշխարհի արարչագործությունից. հետագա շարադրանքում տվյալներ են հաղորդվում հռոմեական և բյուզանդական կայսրերի տիրապետության տարիներին տեղի ունեցած իրադարձությունների մասին:

Խոսելով բնագրի արժեքի մասին, հեղինակը գտնում է, որ նրա մեջ կան տվյալներ, որոնք կարող են նպաստել բյուզանդական կայսրության հատկապես վերջին դարերի պատմության որոշ դեպքերի լուսաբանությանը: Ուստի և այն արժանի է ամբողջական հրատարակության:



Պ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՄԻ ԷՋ ՀԱՅ-ՎՐԱՑԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԻՑ

Մատենադարանի հայերեն ձեռագրերի հավաքածուի № 7174 ձեռագիրը հայ-վրացերեն մի բառարան է, որը բովանդակում է շուրջ 8190 բառ և դիտական լուրջ հետաքրքրություն է ներկայացնում:

Տալիս ենք նրա համառոտ նկարագիրը.

Թերթեր — 213, օրինակողի կողմից էջակալում կատարված չի եղել, կարմիր թանաքով կատարված առաջին էջակալումը պատկանում է, ամենայն հավանականությամբ, ձեռագրի վերանորոգող-լրացնողին: Պրակներ — եղել են ԼԲ (32), լուրաքանչյուրը 8 թերթից: ԻՋ պրակի 7-րդ թերթից մինչև Լ պրակի 5-րդ թերթը (ընդամենը 60 թերթ) կտրված հանված է: Մեծուքյուն — 11,3 × 8,5 × 4: Նյութ — դեղնագույն թուղթ, միջակ հաստության և անողորկ (վերակազմած էջերը՝ սպիտակավուն և ավելի ողորկ): Կազմ — կաշեպատ թուղթ, պահպանակը կազմի ներքնակողմի շարունակությունն է՝ գորշավուն-սպիտակախայտ: Պահպանակի ներսի կողմում կան անընթեռնելի գրություններ, սուսերեն, հավանաբար 19-րդ դարի վերջերին գրված: Վիճակ — բավարար: Թերթերը խոնավությունից խոնացած են և վերանորոգված 19-րդ դարի եսերին: Գրուքյուն — երկսյուն, հայերեն և վրացերեն, սև թանաքով (մի քանի էջերում վրացերենը՝ քիմիականով): Տողեր — 15: Դառարկ թերթեր — վերջին երկու թերթը: Գիր — նոտրագիր, երբեմն շեղագրին հարող տառաձևերով, վրացերենը՝ «մխեղրուլի»: Գրիչը, գրուքյան վայրը<sup>1</sup>, ճեղիճակը — անհայտ: Հեղինակի կողմից չբարգմանված բառեր — 79, որից 8-ը գրված չնջված է: Ուշ շրջանում բարգմանված բառեր — 46: Հավելումներ — 4 բառ: Հիշատակագրուքյուն — էջ 213բ: «... Հոգիագարդ և հոգեոր հայրս իմու սասվածարան և քաջ քարոզ Ստեփան վարդապետին»:

Հիշատակագրությունը կատարված է ընդօրինակողի կողմից, որը, հավանաբար, ինքը հեղինակն է: Թերևս Ստեփան վարդապետի ով լինելը պարզելու դեպքում հնարավոր լինի կոահումներ անել նաև գրչության վայրի և հեղինակի մասին:

Բանասերները բաղժիցս քննության են ենթարկել հայ և վրաց ժողովուրդների մատենագրական ընդհանրությունների ու մտավոր փոխազդեցությունների հարցը, սակայն բառարանագրությունն իբրև այդ կապերի նոր

<sup>1</sup> Եթե նկատի ունենանք այն հանգամանքը, որ առաջիկ հայտնի հայ-վրացերեն գրչագիր բառարաններից երկուսը, որոնք սույն հաղորդումով ներկայացվող բառարանի հետ զրեթե նույն բառամթերքն ունեն, գրված են Ախալցխիսում, հնաքավոր է ենթադրել, որ այս ձեռագիրը ևս գրված է այնտեղ:



վկայություն՝ չի ուսումնասիրվել: Դա մասամբ բացատրվում է մեզ հասած հայ-վրացերեն բառարանների սահմանափակությամբ, մասամբ էլ՝ դրանց ուշ շրջանի գրչություն լինելով<sup>1</sup>:

Եվ հայերին և վրացիներին շատ վաղուց են հետաքրքրել այլ ժողովուրդների լեզուները, որոնց հետ պատմականորեն առնչվել են նրանք: Պակաս չի եղել և այլազգի մտավորականների հետաքրքրությունը դեպի հայերենն ու վրացերենը<sup>2</sup>: Բնականաբար դեռ մինչև 18-րդ դարը (որի կեսերին է գրվել մեզ հետաքրքրող բառարանը), հայերն ու վրացիներն ունեցել են բառարանագրության որոշակի փորձ ու սկզբունքներ:

Հայերեն և վրացերեն լեզուներով բառարան կազմելու նախապատվությունը պատկանում է վրաց հայտնի բառարանագետ-գրող Սուլխան-Սարա Օրբելիանին (1658—1725): Նրա «նոցցոն յոն» (Բառգիրք)-ը հիմնականում վրացերեն բացատրական բառարան է, սակայն որոշակի հետաքրքրություն է ներկայացնում նաև այդ բառգրքի վրացերեն-հայերեն բաժինը՝ 1874 բառերի թարգմանությամբ<sup>3</sup>: Ս. Ս. Օրբելիանին հայերեն բառերը գրել է վրացական տառադարձությամբ, որը երբեմն դժվարացնում է իմաստի ճիշտ փոխանցումը, իսկ երբեմն էլ՝ բոլորովին այլ նշանակություն տալիս (օրինակ՝ յշոօ — թարգմ. — այր, պետք է լինի՝ յշոօցօ — այրի): Բանավոր ճանապարհով ծանոթ լինելով հայերենին (ոմանց կարծիքով՝ ընթերակալի միջոցով), նա գրականի փոխարեն երբեմն օգտագործում է բարբառային ձևեր (օր. յշոօցօ — թոօցօցօց — մտիկանիկ) և այլն:

Վրաց-հայերեն ուրիշ բառարան մինչև այժմ հայտնի չէ, իսկ հայ-վրացերեն հայտնի բառարանների բազմաթիվն ու գիտական գնահատումը դեռ չի կատարված:

Ընդհանուրը այս բառարանների մեջ Մ. Սերաստացու «Քերականություն գրաբարի լեզուի հայկազան սեռի» (Վենետիկ, 1730 թ.) երկասիրությանը կից բառգիրքն իբրև սկզբնաղբյուր օգտագործելն է: Այն կազմելիս Մ. Սերաս-

<sup>1</sup> Մինչև օրս հայտնի են հայ-վրացերեն շատ բառարաններ, երեքը պահվում են Թբիլիսիի Պետական կենտրոնական արխիվում (նրանց նկարագրությունը տես պրոֆ. Լ. Մելիքսեթ-բեկի «Յուզակ հայերեն ձեռագրաց վրաստանի Պետ. կենտրոնական արխիվի» հոդվածում, «Բանբեր Մատենադարանի», № 4) և մեկը Երևանի Մատենադարանում: Պրոֆ. Ի. Աբուլյաձեն իր կազմած «ժգալո կոմբլոն» (հին հայերեն) ծագկաբազի համար օգտագործած գրականությունը թվարկելիս, նշում է նաև հայ-վրացերեն ձեռագիր բառարաններ: Որպես ծանոթություն նա գրում է. «Իրանց թիվը առ այսօր վեցն է, նրանք կազմված են, ինչպես մենք նշել ենք 1932 թ., Մխիթար Սերաստացու քերականության ցանկի հիման վրա: Վերջինս էլ բազկադած է քերականությունում օրինակ բերված բառերից: Նրանց հրատարակումը մտադիր ենք կատարել պրոֆ. Մելիքսեթ-բեկի հետ համատեղ»: Բառարանների թիվը վեց հաշվելիս պրոֆ. Աբուլյաձեն, ինչպես մեզ հայտնեց վերջերս, ի նկատի է ունեցել մի ժամանակ Թբիլիսիի Ստ. Շահումյանի անվան քաղաքային գրադարանում գանձող գրչադիր հայտատու բառարանը, որի վրացատառ արտագրությունը կատարել է ինքը՝ Ի. Աբուլյաձեն և Քուսթախյանում գանձող մի այլ բառարան:

<sup>2</sup> 16-րդ դարում եվրոպացի գիտնականներն արդեն ի լուր բոլորի հայտարարել էին հայերենի և վրացերենի ուսումնասիրության կարևորությունը: Առաջիններից էին Վիլհելմ Պոստելը (1510—1590) և Ամբրոսիոս Թեզեն, իսկ 1629 թ. չստեղծված հրատարակվեց Ստեֆան Պաուլինի վրաց-իտալերեն բառարանը:

<sup>3</sup> Այդ բաժնի ուսումնասիրությունը կատարել է պրոֆ. Գ. Սևակը, ցավօք, նրա ուսումնասիրությունը դեռ հրատարակված չէ:

տային նպատակ է ունեցել ի մի բերել սոսկ այն բառերը, որոնք դործածվել են քերականության գրքում որպես օրինակ. այս առթիվ նա գրել է.

«Գումարք անուանց և բայից, և այլոց բառից, որք շարահիւսին կարգաւ այբուբենի կերպիւ ցանդի ի դիւրութիւն գտման այնց ամենից, որք հոլովեցան և լծորդեցան, և առ պահանջեցեալ խնդիրս իւրեանց բացորոշեցան լայամիկ Քերականութեան»<sup>1</sup>:

Հայ-վրացերեն բառարանների հեղինակները բառամթերքի հավելումներ Մ. Սեբաստացու բառգրքի վրա գրեթե չեն կատարել, բացառութեամբ Վրաստանի Պետական կենտրոնական արխիվի № 622 գրչագրի, որը գրված է 19-րդ դ. վերջին՝ իբրև առձեռն բառարան հրատարակման ակնկալութեամբ:

Քննարկիող բառարանն ուշագրավ է թարգմանության իր սկզբունքներով: Հայերենի քերականական-իմացարանական շատ կատեգորիաներ վրացերենում դրսևորման ուրիշ ձևեր են ընդունում: Հատկապես բայերի թարգմանությունը պահանջում է իմաստային երանգների ու նրա հետ կապված արտահայտչական առանձնահատկությունների լուրջ տարբերակում: Հայերեն որոշ բառեր ու արտահայտություններ թարգմանվում են մոտավոր նշանակությամբ, երբեմն հարկ է լինում մի բառիմաստը թարգմանել մի ողջ արտահայտությամբ: Նախածանցավոր և ածանցավոր բառերը փոխանցվում են իմաստային համապատասխան բառակապակցությամբ: Երբեմն նույն արմատի նոր բառարարդումները, որոնք թարգմանող լեզվում կարող են բացակայել, կամ նույն բառածի մեջ ամփոփել երկիմաստություն, բառարանագիրներին հարկադրել են օգտվել վրացերեն լեզվի ճկունությունից, խոսակցական, կենդանի լեզվից, կամ հին վրացերենի այն բառերից, որոնք այդ շրջանում արդեն քիչ դործածական են եղել:

### Բարդ բառերի բարգմանությունը

Հայոց լեզուն հարուստ է բարդ բառերով, որոնք ամբողջական իմաստ արտահայտելով հանդերձ, բառիմաստի ներսում տարբեր բառերի բաղադրում են ներկայացնում, այլ կերպ ասած, հիմնական գաղափարը նրանցից որևէ մեկն է արտահայտում (այստեղից էլ իսկական և անիսկական բարդություններ):

Բնականորար հայերենից վրացերեն թարգմանելիս որոշ բարդ բառեր արտահայտվել են պարզ կամ ածանցավոր բառերով, մի մասն էլ՝ նույնպես բարդություններով կամ բառակապակցությամբ.

- Օրինակ՝ գործ — սաթե
- գործածություն — լինելը
- գործակալ — մոսաթե
- գործարան — սաթմիս օճիլ
- գործարար — սաթմիս մոթեղ

Մոսաթե (գործակալ) բառը Մ. Ս. Օրբելիանիի բառարանում բացատրվում է սաթմիս մոթեղ կապակցությամբ (գործարար), մինչդեռ անհայտ բառարանագիրը երկուսն էլ թարգմանել է գույականորար, փոխանցելով նրանցից լուրջաբանչյուրի ճիշտ նշանակությունը: Այդ իսկ պատճառով էլ «գործակալը»

<sup>1</sup> Մ. Սեբաստացի, Քերականութիւն գրարարի լեզուի հայկազան սեռի, վենետիկ, 1730, էջ 517:

ქარყმანსი ზე საქმის მოქმედი-თი, ჩნჳთი რაგაორქად ზე მოსაქმე-ნი ორს-  
ქიანისი მთა:

«*ფორძარან*» რაი ქარყმანოქციონისე ხრსთა ზე, ირ რაოარანაგირე  
აქსათსი ზე ზარაგათ მნაქ ქრავე ფასასიან ქიქიჩნი: *ქრავგერსნთა* რაქასიან  
ქაგო-ე რნგანთორ ფორძადოქციონ ზე ყასი ქარხანა (*ქარქიანა — ფორძარან*)  
რაორ, ირე ქიქათოქციონ ზე ყარასერსნიე (*ك* — ფორძ, *خ* — თონ, *ن* —  
ჩნჯიონაქიქოქციამე): *ჩაოარანთა* ქერჯინსი ქიქარსნი ფორძადქად ზე  
საქმის აღვილი (*საგამის აგვიჩი*) — ფორძი თსე, ფორძათსეი:

*შაქსი* რნორი ზე ზსთსიქ რაოარარეომსერე ქარყმანოქციონე.

*ქორზორე* — ზრახვა ან საიღუმლო  
*ქორრეგაგყავ* — საიღუმლოთა შემტყობი  
*ქორრეგადო* — ზრახვის მომლები  
*ქორრეგასიან* — მესაიღუმლოე  
*ქორრეგასიე* — თანა მესაიღუმლო  
*ქორრეგასიორი* — საიღუმლოს დამკარგავი  
*ქორრეგათო* — საიღუმლოს მომცემი

სქათსნე, ირ *შ. შ. ორსქიანისი* რაოარანთა ქერჯინ ქსე რაიერე რა-  
გასიქიონ სნი: სქს ზაქერსნთა ჩიქიქ რაიერე ქმასათაქინ ამრეგასიან  
ზჯანასიქციონ სნი ათავსი (*სერსე ქორრეგადო* ასსიქი რაიქმასთი რაგ-  
გათთა ჳსნე კათარით), ათა ქრავგერსნთა ზარე ზე სეხი ნოქნი ზასიავო-  
ქციონე არათაზათსი ხრსი ფიქსიანსერე ჩიქიქად ზარაგქამე: *ჩანსი* ირ  
«*ქორზორე*» მქაქამანასი ზჯანასიქ ზე სე «*გაგანსიე*» სე «*ქორზორე*» (СОБЕТ),  
ოასთი რაოარანაგირე აქნი ქარყმანსი ზე ზრახვი სე საიღუმლო რაიერეი:

*ნოქნანჯონ* რაიერე (*მქი ქოქი* კამ ჩნჯიქ თარეროქციამე) ქრავ-  
გერსნთა სერსნი ნოქნი ზარარეროქციამე სნი ქარყმანქიონ.

*ორინასი* ფონთ — გუნდი ანუ დასი კაციისა  
*ფონე* — გუნდი მიწისა

ქმასათაქინ ყარე თარერასიქმან ზამარ თრქად ზე რაგათრასიან  
ქარყმანოქციონე:

### ნოქნანსიქ რაიერე ქარყმანოქციონე

ჯაქიე ქედიან ზაროასთ ზე ნოქნანსიქ რაიერეი, ზათსიყსა გრარარით,  
ორნე სერსნი ჩიქიქინ ზამრსნიონ სნი ქრარ, სერსნი სე, ირე ზერსრანე-  
ნერ გრასიონ:

ჯაქერსნიე ირსე აქ ქექი ქარყმანსიქი ზარე ზე ქინთა რნორსი ნოქ-  
ნანსიქ რაიერე სერსიქავნოე ჩიქთა ქარყმანოქციონსერ: *ჩნქიქ* რაოარა-  
ნთა, ჳნაქად სრა ათძინი ქინსიონ, ზანექიქიონ სნი ჩნჯიქსა ნოქნანსიქ-  
აქსიქი სე ნოქნანთონ რაიერე: ჳამსათსნე მქი რანსი ოქინასიქი:

*ჯაქიქასი* — დანაყვა  
*ჯაქისი* — დანაყვა, შემტყობა

ჯაქერსნთა «*ჯაქიქასი*», «*ჯაქისი*» რაიერე ჩიქიქასიონთა ნოქნი ზჯანა-  
სიქციონსი თანსნი, ქიქისი, ჳარეხი, ჳაქიქასი: *ჩაქი* «*ჯაქისი*»-ე რავე ქერ-  
ჩიქიქიქი ზჯანასიქ ზესი აქსერსი, კორძანსი, ქსაათი ჳნჯიქ: *ჩაოარანა-*

գիրը հաշվի է առել կրանգալին այս տարբերությունը և «ջաղխելը» բացի լճնաշնչա-ից թարգմանել է նաև Պեմեսցրա, որը իրավացիորեն սպառում է հայերեն բառի նշանակությունը<sup>1</sup>:

Նույն բառի գործածումը իրրև ածական և գոյական բառարանագրին հարկադրել են օգտագործել վրացերենի բազմիմաստությունը.

գովանի (գովասանքի արժան, գովելի) — սաթեբელი<sup>2</sup>

գովելիք — սաթեբელი

Առաջինը ածականաբար է օգտագործվում, երկրորդը՝ գոյականաբար: Վրացերենում սաթեբელი-ն կրկու իմաստն էլ արտահայտում է, միջին վրացերենում առավել գործածական է կղել հիշյալ ձևը, ուստի Օրբելիանիի մասնունդնախ լեզու բառից բաղադրված միայն սաթեբელი ձևը կա: Նոր վրացերենում ավելի գործածական են սաթեբի, սաթեբարի, սաթեբური ձևերը:

Նույն բառին վերաբերող մի այլ օրինակ.

գովասան (գովք ասող) — լեզու

գովասա — լեզու

լեզու-ն նշանակում է՝ գովել, գովք, գովասա, բայց նաև գովող:

### Սևների տարբերությունը

Սևնի քերականական հասկացությունը հատուկ է կղել նաև գրաբարին: Ժամանակի ընթացքում գրաբարյան խոնարհման ձևերին համընթաց փոփոխել է նաև սևնի հասկացությունը՝ ստանալով ձևաբանական արտահայտություն: Գրաբարում ձևաբանական նույն միավորը հաճախ տարբեր սևնալին նշանակություն ուներ.

Օրինակ՝ ծնաւ — ծնիկց և ծնեց:

Գրաբարում բալի սևոր որոշելիս գլխավոր ցուցիչը ոչ թե բառիմաստի հետ կապված սևնի քերականական հասկացությունն է, այլ՝ որ խոնարհմանը պատկանելիությունը:

Ներգործական ու չեզոք են «և» խոնարհման պատկանող բառերը, կրավորական՝ «ի» խոնարհմանը<sup>3</sup>: Միջին հայերենում կրավորական սևոր ստանում է որոշակի վերջավորություն՝ ուիմ (ւիմ, վիմ)<sup>4</sup>: Պահպանվում են գրաբարյան սևնի արտահայտման մի քանի ձևեր:

Բառարանագիրը կլնելով սևնի տարբերակման գրաբարի կանոններից (թեև գրանք դեռ որոշակի տարրորոշված չեն կղել) և Մխիթար Սեբաստացու բառգրքի սիստեմից, բառարանում սահմանադատել է սևնի հասկացությունը և վրացերենի թարգմանելիս պահպանել իմաստալին տարբերությունը:

Օրինակ՝ պատճառել — միջնորդ

պատճառիլ — միջնորդ

գանդատել — սահմանադրել

գանդատիլ — հիշ[ո]լի

<sup>1</sup> Պեմեսցրա — ոչնչացնել, բնաջնջել, կտորել, խորտակել, կործանել, տապալել:

<sup>2</sup> Լ. Սաթեբელი, Սաթեբարի, Սաթեբի, Սաթեբური.

<sup>3</sup> Լ. Բարսեղյան, Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն, 1953, էջ 24:

<sup>4</sup> Լ. Սեբաստյան, Հայոց լեզվի պատմություն, 2-րդ մաս, Երևան, 1952, էջ 248:

Գրաբարում «և» և «ի» խոնարհման պատկանակիությունից որոշակի տարրերվում են այս բառերի սևերը — պատճառել — ներգործական, պատճառիլ — կրավորական: Մակալն վրացերենում համապատասխան քերականական ցուցիչը, միշտ չէ որ հանդես է գալիս, երբևէ սևի փոխվելուն զուգընթաց փոխվում է նաև բառը: Բառարանագիրը հնարավորության գեպում ջանացել է սևոր տարրերը բայական վերջավորությամբ (գրաբարի նմանությամբ), ուստի միջնադար — գիտել է իբրև կրավորական սևի, միջնադար-ն՝ ներգործական: Վրացերենի համար սա կալուն օրենք չէ: Այն կապված է ակտիվի և պասսիվի, գիմալին նշանակության հասկացության հետ:

Նրկորդ բառի սևը գիտակցվում է բառի իմաստային նշանակությունից: Խոցոլո — գանգատվել, գժգոհել, տրտնջալ, իսկ գանգատել՝ հալցել, հալց, հարուցել (բաղկացած սահիցելո — հալց և լալաժո — հարուցել, փոխել, գրժել) բառերից:

Այսպիսով բառարանագիրը ուշի-ուշով հետամուտ է թարգմանության ժամանակ սևի պահպանմանը: Շատ բառաձևերի վրացական բառարաններում չենք հանդիպում, որովհետև հայերենի իմաստը փոխանցելիս հարկ է կել հարադրական թարգմանություն կատարել:

Օրինակ՝ գինել — Ֆեյարալեծա  
 գինիլ — Տաթրոջելոնս ղլեծա (գենք վերցնել, գինավորվել, գենք առնել):

#### Հոգնակիի ցուցիչ

Գրաբարում ճանաչվում էին մի շարք անհոգականներ: Նրանք բոլորն էլ «ք» հոգնակիի ցուցիչն ունեն: Այդ բառերից մի քանիսը աշխարհաբարում կորցրին հոգնակիի նշանակությունը և նոր ցուցիչ ստացան:

Օրինակ՝ աչք — աչքեր  
 խելք — խելքեր  
 գիրք — գրքեր

Մակալն վրացերենի փոխանցելու համար անհրաժեշտ է կել անհոգականների մի մասը թարգմանել հոգնակի, մյուսը՝ կոպի թվերով: Ուստի մարք — Ձվարո, բժժանք — Քալո, պատրանք — Տալտոթրոն, իսկ որոշ բառերի թարգմանության ժամանակ պահպանվել է «ք»-ի հոգնակի նշանակությունը.

աչք — տջալնի  
 գիրք — Մոցննի<sup>1</sup>

Ս. Ս. Օրբելիանիի բառարանում (18-րդ դարի առաջին քառորդ) տջալնի բառը գործածված է տջալո (տջ>ջա) ձևով, սակա բառարանում գրությունը համապատասխանում է ժամանակակից վրացերենի հնչյունական օրենքներին:

<sup>1</sup> Թրիլիսիի Պետական կենտրոնական արխիվում պահվող №№ 627, 639, 622 բառարաններում այս բառերը թարգմանված են կոպի նշանակությամբ (տջալո, Մոցննի), հետևաբար, «ք»-ն իբրև հոգնակիի ցուցիչ արդեն զաղաբել է գիտակցվելուց: Մա մեղ հիմք է տալիս կորակացնելու, որ № 7174 ձևագիրը գրված պետք է լինի 18-րդ դարի կեսերին և նախորդել է մյուս բառարաններին:

Հավանաբար գրչագրի հեղինակը երբևիմ գիմել է ժողովրդական խոսակցական լեզվին:

Վրացերեն հոգնակին կազմված է „ծ“ մասնիկով, որը հատուկ էր մինչև 19-րդ դարի կեսերը: Ժամանակակից վրացերենում հոգնակին կազմվում է հիմնականում „ցծ“ մասնիկով:

Հայ-վրացերեն ձևագիր բառարանի մասին համառոտ այս հաղորդումով, հասկանալի է, որ նպատակ չենք ունեցել սպասել նրա առանձնահատկությունների ուսումնասիրությունը և ըստ ամենայնի գնահատումը<sup>1</sup>:

Հայ-վրացերեն և վրաց-հայերեն բառարանները արժանի են հատուկ ուսումնասիրության, որպես հաղարամյակներ հարեանությունը ապրող ժողովուրդների մշակութային կապերի ուշագրավ հուշարձաններ:

П. МУРАДЯН

## СТРАНИЦА ИЗ АРМЯНО-ГРУЗИНСКОЙ ЛЕКСИКОГРАФИИ

### Резюме

Рукопись № 7174 Матенадарана представляет армяно-грузинский словарь, содержащий около 8190 слов. Место составления и автор рукописи неизвестны. По некоторым предположениям, местом составления словаря мог быть город Ахалцихе. Палеографические и синтаксические данные свидетельствуют о том, что рукопись написана во второй половине XVIII века.

Сравнение словаря с тремя подобными рукописями Центрального Государственного архива Грузии показало, что они происходят из одного и того же источника — „Грамматики армянского языка Мхитара Себастиани“, изданной в Венеции в 1730 г.

Более ранние армяно-грузинские словари, кроме 1874 слов, находящихся в словаре Сулхана-Саба Орбелиани, пока не известны науке.

Сравнительное исследование армяно-грузинских рукописных словарей даст возможность установить новые факты армяно-грузинских культурных связей.

<sup>1</sup> Վերջերս մեզ հայտնի դարձավ Թրիլիսի Ձևագրերի ինտախուսում պահպող երեքլեզվյա բերականության (վրացաառա) հինգ էջանոց մի պատասիկ (№ 1152 H)՝ տակավին աննկատ մնացած: Գրչագիրը հայերենի, վրացերենի և աղբրեջաներենի (თათრულლი) համադրական բերականություն է: Կազմված է հայոց լեզվի բերականական սիստեմի հիման վրա, առնչվելով սույն բառարանի սկզբնաղբյուրի հետ: Նման ձևնարկի և բառարանների առկայությունը Վրաստանում արդյունք է հայոց լեզվի նկատմամբ առաջացած հետաքրքրության, որի մասին պահպանվել են նաև ստույգ վկայություններ (տե՛ս Վրաստ. կենտ. արխիվ, ֆոնդ 229, թղթ. 14, № 37, քնչպես նաև Ձև. ինստ. № 215. Ամ. „ისტ. აღწერა“ 1914 թ., էջ 32—33 և այլն):

Գրչագրի բանասիրական բնությունը մեր կողմից շարունակվում է:



Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՆՈՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ «ԲԱՆԱԼԻ ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ» ԵՐԿԻ  
ՀԵՂԻՆԱԿ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵՐԵՑԻ ՄԱՍԻՆ

1791 թ. մայիսին Կ. Պոլսի Զաքարիա պատրիարքին ուղղած նամակներից մեկում Ղուկաս կաթողիկոսը ուշագրավ տեղեկություն է հաղորդում էջմիածնի վանքում շղթայակապ պահվող մի անձնավորության մասին, որը մեղադրվում էր մի քանի անգամ հավատափոխ լինելու և, որ գլխավորն է, Կարինում ու կնուսում «... ոչ միայն ախտարմայութեան, այլև զմերձաւորս թոնդրակեցւոց» «զշարաշար աղանդս» տարածելու մեջ: Կաթողիկոսի հետագա գրադրությունից երևում է, որ Հովհաննեսը, — այսպես էր աղանդավորի անունը, — վեց ամիս էջմիածնում բանտարկվելուց հետո կարողանում է փախչել կնուս: Տեղեկություններ կան հետագա իրադարձությունների և ապա Հովհաննեսի ողբերգական մահվան մասին:

Արդ, ո՞վ էր թոնդրակեցի համարված այդ խորհրդավոր աղանդավորը, ինչ է հայտնի նրա կյանքի ու գործունեության մասին: Այս հարցերին պատասխանելուց առաջ անհրաժեշտ ենք համարում թուրքիկ ծանոթություն տալ գրանից մոտ կես դար հետո տեղի ունեցած հետաքրքրական մի իրադարձության ու նրա հետ առնչված գիտական վեճերի մասին, մի քան, որ կղյուրացնի քննարկվող հարցի պարզաբանումը:

Հայտնի է, որ 1837 թ. սկզբներին Շիրակի Արխավելի գյուղում հայտնաբերվեց թոնդրակյան կոչված աղանդավորների մի խումբ. նրանք 1826—1828 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ գաղթել էին Արևմտյան Հայաստանի կնուս գավառի Զելչուրմե գյուղից: էջմիածնի սինոդը անմիջապես գործի է լծվում, սկսվում են հարցաքննություններ և ստուգումներ: Նորահայտ այդ աղանդի մասին սինոդը Կովկասի կուսակալ բարոն Ռոզենին տվել է հետևյալ բացատրությունը.

«... Աղանդ թոնդրակեցւոց կայանայ յայնմ, զի նոքա ոչ ընդունին զօժանդակութիւն սրբոց... ի բաց մերժեն զշահն աղօթից, չընդունին զամբօթիւն սրբոյ կուսին Աստուածածնի, ոչ ընդունին զխորհուրդն մկրտութեան և այլն»<sup>1</sup>:

1837 թ. ապրիլի 13-ին արխավելցի մի քանի աղանդավորներ իրենց գրվոր մեղայականում աղանդի ծագման մասին նշում են՝ «թէ ի կնուս երևեալ էր շէրէց տմն քարոզիչ աղանդոյն, որ և կամեցեալ էր մուծանել ի նոսա, ապա ասեն թէ՛ մեք ոչ միայն չընդունեցաք, այլ նզովիւք նզովեցաք, որ շէրէցն որդհալից եղեալ սատկեցաւ»<sup>2</sup>:

<sup>1</sup> Ա. Գ. Ն ր Ի ց յ ա ն, Թոնդրակեցի հայր մեր օրերում, «Փորձ», Թիֆլիս, 1880, № 10, էջ 102—103:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 101:



Բայց հետագայում պարզվում է, որ նրանք ոչ միայն չեն նդովել աղանդը, այլև ընդունել են ու նոր բնակավայրում նրա ակտիվ տարածողներից են եղել: Արխավելցի թոնդրակյանների գործի բնութայնը խառնվում են նաև զինվորական իշխանությունները և ահա, 1838 թ. նույն անձնավորությունները ոչ միայն խոստովանում են իրենց աղանդավոր լինելը, այլև նոր տեղեկություններ հաղորդում աղանդի ծագման մասին:

«Ի խնուս գաւառի ի գիւղն Չաուրմայ,— ասված է նրանց խոստովանագրի մեջ,— նախքան զայս 55 ամ, ոմն ի հայոց քահանայից՝ Օհանէս, անկեալ ի սոյն աղանդ, շարադրեալ է գիրք մի (Բանալի ճշմարտութեան անուն), զոր լուեալ աղանդապետութիւն սոյն իրիցու տէրութիւնն Օսմանեանց ստիպեաց զնա թողուլ զայն դաւանութիւն և նմա շահանդութեալ՝ ընկալեալ է զհաւատ Մահմեդի՝ հանգերձ ընտանեօք իւրովք և այլն»<sup>1</sup>:

Արխավելցի աղանդավորների գործի բնութայնը տեսնում է մի քանի տարի: Թիֆլիսի «Քրեական և քաղաքական դատերի պալատ»-ը սկզբում որոշում է նրանց զինվոր ուղարկել. 1841 թ. ապրիլի 28-ի կայսերական հրովարտակի ուժով այդ վճիռը փոխարինվում է դրամական տուգանքով, բայց հետո նրանց արսորում են Սիրիք<sup>2</sup>:

Գիտական հասարակայնության մեջ մեծ հետաքրքրություն առաջացավ դեպի «Բանալի ճշմարտութեան» գիրքը և այդ աղանդավորները: Դա միանգամայն բնական էր: Անցել էր ավելի քան 700 տարի թոնդրակյան շարժման ճնշման ժամանակներից և ահա պատմական նույն այդ վայրերում ծնունդ էր առել աղանդավորական շարժում, կրելով միևնույն՝ թոնդրակյան անունը: Բացի այդ, աղանդավորները պահպանել և խնուսից Շիրակ էին հասցրել իրենց գաղափարների սկզբնաղբյուր «Բանալի ճշմարտութեան» խոստովանալից վերնագրով գիրքը: Հայտնի է, որ թե՛ պավլիկյանների, և թե՛ թոնդրակյանների գրածներից մեզ ոչինչ չի հասել. աշխարհիկ և հոգևոր ֆեոդալները այդ շարժումների ճնշման ժամանակ ոչնչացնում էին նրանց գրավոր գործերը և այն, ինչ հայտնի է մեզ նրանց գաղափարների, գործերի մասին, հասել է նրանց հակառակորդների գրչով՝ նրանց հասցեին ուղղված անեծքների ու հայհոյանքների հաստ կեղևի տակ: Եվ այժմ էջմիածնի միաբանների ձեռքն է ընկնում նոր թոնդրակյանների հավատո հանգանակը, բայց որոշ էջեր դիտավորյալ ոչնչացված, մի շարք քառեր էլ փոխված ու ջնջված վիճակում:

Առաջինը այդ մասին գրեց Աղեքսանդր Երիցյանը 1880 թ. «Փորձ» ամսագրում: Մանրամասն նկարագրելով արխավելցիների գործը և քաղվածաբար հրատարակելով «Բանալի ճշմարտութեան»-ը, նա գալիս է այն եզրակացության, որ «...շատ դժվար պիտի լիներ 1837 թվին երևեցած աղանդը թոնդրակեցի համարել, եթե հիշյալ «Բանալի ճշմարտութեանը» չէր գտնվել արխավելցոց ձեռքում»: Խոսելով հին և նոր թոնդրակյանների կապի մասին, նա նշում է, որ «...աղանդները զաղարիլ շունին և սովորաբար ամենակարճ միջոցում տեսակ-տեսակ փոփոխությունց են ենթարկվում...»<sup>3</sup>:

1887 թ. Կովկասի հնագետների V համագումարում Աղ. Երիցյանը հան-

<sup>1</sup> Աղ. Երիցյան, Թոնդրակեցի հայր մեր օրերում, էջ 108:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 112—113, տե՛ս նաև «Труды V-го археологического съезда в Тифлисе», под ред. Уварова, Москва, 1887, էջ 170:

<sup>3</sup> Աղ. Երիցյան, նշվ. աշխ., էջ 114:

դես է գալիս «Թոնդրակեցի հայերի աղանդի մասին» զեկուցմամբ, որտեղ կրկին անգամ, համառոտ ձևով, անդրադառնում է արխավելցի աղանդավորների հարցին և «Բանալի ճշմարտութեան» գրքին՝ նորից շեշտելով այն նմանությունները, որ ինքը տեսնում է սուս մորթկանների ու պրիզունների և հայ աղանդավորների վարդապետության միջև:

Հաջորդ ուսումնասիրող Բարսեղ Սարգսյանը 1893 թ. հրատարակած իր գրքում ցույց է տալիս, որ, բացի անունից, հին և նոր թոնդրակյանների միջև բնդհանուր ոչինչ չկա և որ «Բանալի ճշմարտութեան»-ը 1782 թվականից առաջ գրված չէր կարող լինել: «... Ուրեմն այժմ մեզ ուրիշ քան շի մնար,— եզրակացնում է նա,— բայց եթէ ներքին փաստերով ապացուցանել, թէ «Բանալի ճշմարտութեան» վարդապետութեան մի մասը մանիքեցուցմէ փոխ առնուած է և միւսն ալ ի կալվինականաց և ի լուտերականաց և հետեաբար, թէ վերոյիշեալ աղանդավորներն ընդհանուր առմամբ թոնրակեան չէին, այլ նորակրօն մանիքեցիներ կամ լաւ ևս մանիքէա-կալուինականք կամ լուտերականներ»<sup>1</sup>: Հեղինակը նոր աղանդի ծագման և «Բանալի ճշմարտութեան» հեղինակի վերաբերյալ տրեւրաւոր վկայություններ է մեջ բերում միսիթարյան միաբան Պողոս Մեհերյանի անտիպ ինքնակենսագրությունից:

Վերը նշված ուսումնասիրություններն ու սինոդի գործերի քննությունը հիմք են տալիս էջմիածնի միաբան Կարապետ Տեր-Մկրտչյանին 1896 թ. գերմանական «Zeitschrift für Kirchengeschichte» ամսագրում (XVI, 1896, էջ 233—276) հանդես գալ մի հոդվածով, որտեղ այդ նոր աղանդի վարդապետության մեջ ամենախորհունդից հնուցից գրոշմ կրող կետեր է տեսնում և հայտնում, թե. «...շատ դժվար է որոշել՝ ինչ ճանապարհով նորա դարերի ընթացքում եկել այստեղ են հասել»<sup>2</sup>: Կ. Տեր-Մկրտչյանը միաժամանակ տալիս է նաև «Բանալի ճշմարտութեան» գրքի գերմաներեն համառոտած թարգմանությունը:

Երկու տարի հետո Անգլիայում լույս է ընծայվում «Բանալի ճշմարտութեան» երկի բնագիրն ու անգլերեն թարգմանությունը: Այդ վերին աստիճանի շնորհակալ աշխատանքը իրականացնում է Օքսֆորդի համալսարանի պրոֆեսոր Ֆրեդերիկ Կոնիքերը, որը «Բանալու» բնագրի հետ ծանոթացել էր 1891 թ. աշնանը՝ էջմիածնում եղած ժամանակ և ձեռագրի պատճենը երկու տարի հետո ստացել էր Կ. Տեր-Մկրտչյանից: Այդ գեղեցիկ հրատարակությունը ունի, սակայն, շատ թերություններ: Չհավատալով «Բանալի ճշմարտութեան» վրա թողնված վկայությանը՝ նրա 1782 թ. գրված լինելու մասին, Կոնիքերը ենթադրում է, թե այն գրվել է VII—IX կամ XIII—XIV դարերում, իսկ աղոթքներին ու պատարագներին վերաբերող մասերը տանում է ետ՝ դեպի Գրիգոր Լուսավորիչը՝ IV դար<sup>3</sup>:

«Բանալու», հեղինակ նա համարում է թոնդրակեցի Սմբատին՝ սխալմամբ նույնացնելով նրա Բագրատունի Սմբատ Խոստովանող իշխանի հետ, շփոթելով վերջինիս Բագրատ Բագրատունի իշխանի հետ և այլն:

<sup>1</sup> Բ. Սարգսյան, Ուսումնասիրություն մանիքէա-պաղիկեան թոնդրակեցիներու աղանդին և Գր. Նարեկացույ թուղթը, Վենետիկ, 1893, էջ 99:

<sup>2</sup> Հմմտ., Պաղիկեանց և Թոնդրակեցուց աղանդները արդի քննադատութեամբ, «Արարատ», էջմիածին, 1900, հուլիս, էջ 331:

<sup>3</sup> The key of Truth, a manual of the Paulician church of Armenia, Fred. C. Conybeare, Oxford, 1898.

Կոնիբերի այս արտառոց եզրակացություններն ու ենթադրությունները բննադատվել են բոլոր այն հեղինակների կողմից, որոնք նրանից հետո, այս կամ այն առիթով, խոսել են «Բանալի ճշմարտութեան» մասին: Այդ հեղինակներից առանձին ուշադրության արժանի են Կ. Տեր-Մկրտչյանի, Գ. Գյուլամիրյանի և գերմանացի հայագետ Շայդլայլերի գործերը: Առաջինը՝ Կ. Տեր-Մկրտչյանը 1900 թ. «Արարատ»-ում հրատարակած իր հոդվածի մեջ «Բանալին» գրված է համարում 1782 թ. Տարսնում, Հովհաննես անունով աղանդավորի ձեռքով<sup>1</sup>: Շայդլայլերը նրանից 50 տարի հետո «Պավլիկյանների պրոբլեմը» գերմաներեն իր հոդվածում մեծ տարբերություններ գտնելով պավլիկյանների ուսմունքի և «Բանալի ճշմարտութեան» միջև, այնուամենայնիվ նշում է, որ այն պավլիկյան շարժման դադափարախոսության դարգացման արդյունք է և պատճեն է ավելի վաղ գրված մի գործի<sup>2</sup>:

Շայդլայլերի հոդվածի հրատարակումից դեռևս 14 տարի առաջ Գ. Գյուլամիրյանը իր «Քոնդրակյաններ» թեկնածուական դիսերտացիայի մեջ «Բանալի ճշմարտութեան» հարցում կարծեք բնարել է միջին գիծ: «Բանալի ճշմարտութեան» տեքստի վերլուծությունը, ինչպես ըստ բովանդակության, այնպես էլ լեզվաբանական կողմից, — դրում է նա, — ցույց է տալիս, որ չի կարելի համաձայնվել շարադրված կարծիքներից (Երիցյան, Կ. Տեր-Մկրտչյան, Կոնիբեր, Վ. Գ.) ոչ մեկի հետ: «Բանալի ճշմարտութեան» հիմքում անտարակույս ընկած է մի հին տեքստ, որը, սակայն, որոշակի փոփոխության ու խրմբադրման է ենթարկվել՝ հարմարացվելով 18-րդ դարի թոնդրակեցիների գադափարախոսությանը»<sup>3</sup>:

Այս բուրջ և օրիգինալ եզրակացության հետ միասին, Գյուլամիրյանը այն կարծիքն է հայտնում, թե թոնդրակյան աղանդը անընդհատ գոյություն է ունեցել հնագույն ժամանակներից մինչև XIX դարը: Բացի այդ, «Բանալի ճշմարտութեան» հեղինակ նա համարում է Հովհաննես Վահագունուն: Վերջինիս անունը հիշատակված է «Բանալու» կիսով շափ պահպանված հիշատակարանի մեջ հետևյալ ձևով.

«... Ամենապայծառ Յոհաննէսին Վահագոնոյն: Քանզի սոքա մեծաւ ջերմեռանդութեամբ խնդրեցին ի մէնջ, իսկ վասն խնդրելոյն նոցին յաճախեաց ի սիրտ իմ սէրն ճշմարտութեան: ... Ըսկսայ կարգաւ գրել զսուրբ խորհրդարան և զբանալի ճշմարտութեան, վասն սիրոյն խնդրողաց և ընդունողաց»<sup>4</sup>:

Խոսքն այստեղ այն մասին է, որ Հովհաննես Վահագունին և էլի ինչ որ մարդիկ հեղինակից խնդրել են գրել այդ գիրքը: Կատարելով նրանց խրնդրանքը հեղինակն այդ մասին համապատասխան նշում է արել հիշատակարանում: Եվ միայն այդքանը: Այնպես որ ոչ մի հիմք չկա Հովհաննես Վահագունուն համարելու «Բանալի ճշմարտութեան» հեղինակ և կամ էլ արտագրող, ինչպես արել է օրինակ Շայդլայլերը վերը հիշված իր հոդվածում:

<sup>1</sup> Կ. Տեր-Մկրտչյան, նշվ. աշխ., էջ 330:

<sup>2</sup> F. Scheidweiler (Köln), Paulikianerprobleme, «Byzantinische Zeitschrift», Bd. 43, 1950, էջ 383:

<sup>3</sup> Г. Е. Гюламирян, Тондракцы (Очерк из истории религиозных движений феодальной Армении), Тезисы диссертации на ст. канд. ист. наук, Л., 1936, էջ 4:

<sup>4</sup> Հայկ. ՍՍՏ Պետական Մատենադարան, ձեռ. № 6710, էջ 58ա:

Ինչպես տեսնում ենք, «Բանալի ճշմարտութեան» կոչված այդ փոքրիկ գրքույկին ուսումնասիրողներից ամեն մեկը մտաբեցել է իր բանալիով և դժվար է որոշել, թե նրանցից իսկապես ո՞րն է ավելի մոտ բանալու այդ «ճշմարտությունը»: Բայց, այնուամենայնիվ, խայտարեկտ այդ կարծիքների մեջ նրշմարել կարելի է երկու հիմնական երանգ: Ոմանք գտնում են, որ մենք գործ ունենք դարերի խավար հեռուներից մեզ հասած մի աղբյուրի հետ, որն իր անցած երկար ճանապարհին գուցե և երբեմն փոխել է հունը, ընդունել նորանոր վտակներ, բայց, այդուհանդերձ, բերել հասցրել է մեզ մի կտոր թոնդրակյան շարժման փոթորկված ծովից, մյուսները առաջացած են համարում այն XVIII դարի վերջերին Արևմտյան Հայաստանում տարածված քրիստոնեական հավատի այլևայլ ուղղությունների ու աղանդների վարդապետությունների մնացորդներից:

Արդ, մենք նպատակ չունենք խորանալու այդ հարցերի քննության մեջ, բաղդատելու «Բանալու» աղանդավորական գաղափարները մանիքեական, պալլիկյան կամ թոնդրակյան գաղափարների հետ, բացահայտելու դրանց աղաղակող այն տարրերությունները, որ հիմք են տվել ոմանց XVIII դարի հեղինակություն համարելու այն: Դա անանձին, երկար ժամանակ և եռանդ պահանջող աշխատանք է: Մեր նպատակն է միայն ի մի բերել և վեր հանել այն ամենը, ինչ հայտնի է մեզ այդ հետաքրքրական գրքի հեղինակի մասին:

«Բանալի ճշմարտութեան» վրա ոչ մի տեղ հեղինակի անունը չկա: Արխիվելցի տիրացու Գևորգ Սարգսյանը, որի մոտ 1838 թ. հայտնաբերվել է այդ գիրքը, նախապես ոչնչացրել էր մի շարք էջեր, հատկապես հիշատակարանից, ուր գրված կարող էր լինել նաև հեղինակի մասին: Սակայն արխիվելցիները հիշում էին «Բանալու» հեղինակ Հովհաննես երեցին և իրենց ցուցմունքներում, ոչ այնքան սիրալիր անականներով, բազմիցս հորովում նրա անունը: Այդ Հովհաննեսի և նրա գրքի Արխիվելի հասնելու հանգամանքների մասին օրժեքավոր վկայություն կա տիրացու Գ. Սարգսյանի ձեռքով գրված և 12 արխիվելցիների ստորագրություններով վավերացված 1838 20-ր հունվարի թվակիր խոստովանագրում, ուր ասվում է.

«Մեք՝ ի ներքոյ անուանեալքս Առյւծէլու բնակիչքս տամք զայս ձեռագիր հոգևոր կառավարութեան Գիւմրոյ՝ առ այն, թէ որ ի ժամանակս բնակութեան ընդ Օսմանեան տէրութեան ի գիւղն Չավուրմայ երևեալ է անդ քահանայ ոմն Յօհաննէս անուն, որ շարադրեալ է զգիրք մի Բանալի ճշմարտութեան անուանեալ, որ և ինքն տաճկացեալ որդնալից կորեալ էր: Ի կենդանութեան զայս գիրքս տուեալ էր Մեսրոպին Բուզաղեան և Մեսրոպն տուեալ էր Կիրակոսին Աւդալեան՝ ի ժամանակս գաղթելոյ, որ և զինի մեռանելոյ Կիրակոսի մնացեալ էր ի ձեռս որդոյ իւրոյ Տօնոյին և ապա ի միասին ընդ տիրացու Գէորգին Սարգսեան ընթերցեալ էին և զամենայն զոր գրեալ էր ի գրքոյ հաւատացեալ էին՝ համարելով ճշմարիտ գրուածոց, որ և ուսուցեալ են գիւմրեցի Քարդի Սարգսին, որ և նա հրատարակեալ ի քանի մի պարզամիտս, զի զամենայն ձեռագիրք որ տուեալ են ի գիւմրեցի քանի մի անձանց և որք և ինչ գրեալ են անդ այս ուսեալ են ի մէնջ և բոլոր մեք այն գրովն էաք անհաւատացեալ և ուսուցեալ եմք նոցա: Վասնորոյ այժմ, իմանալով որ ամենայն բանք գրեալ ի գրքին այն սուտ են և ընդդէմ քրիստոնէական հաւատոյ Հայաս-

տաննայց եկեղեցւոյ, այժմ մեղայ կոչելով անկանիմք առաջի կառավարութեանդ և խնդրեմք արձակել ի շար կապանաց բանսարկութեան...»<sup>1</sup>:

Ստորագրողների թվումն է նաև Կ. Ավդալյանի որդի Տոնո Կիրակոսյանը: Արխիվելցիների վկայությունները, ինչպես և ուսումնասիրություններում եղած նյութերը, կասկած չեն թողնում, որ այս Հովհաննեսը և Ղուկաս կաթողիկոսի նամակներում հիշվող Հովհաննեսը միևնույն անձնավորությունն է:

Առաջին անգամ Ղուկաս Կարնեցու թղթերում Հովհաննեսի մասին հիշատակվում է 1789 թվ. հուլիսի 13-ին: Այդ օրը վերիլ Հայրապետին (ք. Կարին) հասցեագրած իր նամակի հետ կաթողիկոսը մի դրություն (փուտուլա) է ուղարկում Մինաս պետին՝ «չորում հարցումն զմուրեցուցիչ երիցէն (որ է յերկիրն Խնուսու)»<sup>2</sup>:

Ուրեմն էջմիածնի միաբանները արդեն տեղեկացել էին նոր աղանդի տարածման մասին, բայց ուշացել էին նրանք բավականին: Աղանդավորական շարժումը ծավալվել էր այդ վայրերում ավելի վաղ: Պողոս Մեհերյանի վերը հիշված ինքնակենսագրության մեջ պատմվում է, որ 1773 թ. Բերայից Կարին գնալիս քրդարնակ մի գյուղի մեջ հեղինակը հանդիպել է հայերի, որոնք ուրացել էին իրենց հավատը և «...աղանդաւորք էին իբրև զթոնրակեցիս, կամ կէսկէս էին և կամ արևորդիք»<sup>3</sup>: Առանձին խմբեր կազմած, այս աղանդավորները հարձակվում էին ոչ հայկական գյուղերի վրա: Նրանցից 50 ձիավոր գիշերը պաշարում են Մեհերյանի իջևանած գյուղը և թալանում բնակիչներին:

Աղանդավորների ընդվզումը, ինչպես երևում է, միայն եկեղեցական դոգմաների դեմ չէր: Օտար տիրապետությունը, քրդերի ավերիչ հարձակումներն ու սպանությունները, մարդկանց գերիվարությունն ու առևանգումը խաղաղասեր հայ գյուղացուն դրդել էին զենք քարձրացնելու իր դարավոր հարստահարողների ու լկողների դեմ՝ իր ֆիզիկական գոյությունը պահպանելու, գույքն ու պատիվը փրկելու համար: Թշնամիներից նա մի կաթիլ արյուն էր թափում իր տված արյան գետերի տեղ: Պողոս Մեհերյանի քուրդ ընկերակիցը բացատրում է նրան, որ այդ աղանդավորները միայն քրդերի ոխերիմ թշնամիներն էին. «Քանզի նորա ոչ միայն զփողս մեր առնէին և զերիվարս, այլև սպանանէին զմեզ, զի թշնամիք մեր են, բայց դու հայ լինելով ոչ ինչ առնէին կենաց քոց»<sup>4</sup>:

Այնուհետև պատմվում է, որ Կարնո մոտ Բոսճիմասուրի վանքում Հովհաննես անունով մի առաջնորդ ստությունը եպիսկոպոս է ձևանում և 14 քահանա ձեռնադրում: Այս կապակցությամբ մեծ աղմուկ է բարձրանում: Իր հանդեպ հայերի հարուցած հալածանքից խուսափելու համար սուտ եպիսկոպոսը փախչում է Մանազկերտի կողմերը և շրջում գյուղերը: 1774—1781 թվականներին Մշո կողմերից Կ. Պոլիս է հայտնվում Հովհաննես անունով մեկը, որը բաղաբական ինչ-որ ծանր հանցանք է գործում և դատապարտվում

<sup>1</sup> Տե՛ս «Յաղագս արմատախիլ առնելոյ զազանդն թոնթրակեցույ ի միջոյ առխիվելցոց և յալ ժողովրդոց դտանեցելոց յայսր յաջորդութեան», Պետական Մատենադարան, Արխիվային բաժին, կաթողիկոսական դիվան, թղթապանակ 97, վավերագիր 133, էջ 5ա, տե՛ս նաև Աղ. Նրիցյան, Թոնդրակեցի հայք մեր օրերում, էջ 115:

<sup>2</sup> Պետական Մատենադարան, ձեռ. № 4481, էջ 297ա:

<sup>3</sup> Բ. Ս ա թ գ ի ս յ ա ն. նշվ. աշխ., էջ 102:

<sup>4</sup> Նույն տեղում:

Ցամիս թիապարտության: Կոնիբերը, նույնպես վկայակոչելով Մեհերյանին, գրում է, որ Կ. Պոլսում հայոց պատրիարքը Ցամսով բանտարկում է Հովհաննեսին, բայց վերջինս փախչում է ու գալիս Խնուս<sup>1</sup>: Ըստ երևույթին Կոնիբերը լավ չի հասկացել Մեհերյանին, պատրիարքը ոչ թե բանտարկում է Հովհաննեսին, այլ միշտամտում կառավարության առաջ ու ազատում նրան քանտից, որից հետո Հովհաննեսը մեկնում է Վենետիկ՝ Մխիթարյանների մոտ: Բայց շատ չի մնում այնտեղ՝ «...քիչ օրէն իբրև դիւամուլ և մոլորամիտ» վճռվում է վանքից և վերադառնում Կ. Պոլիս: Հետո ամուսնանում է, դավանափոխ լինում՝ ընդունելով Ապտուլա անունը: Որոշ ժամանակ անց նա թողնում է կնոջը ու գնում Կարին, այնտեղից էլ՝ Մուշ և երկու տարի հետո՝ Խնուս: Այստեղ նա որոշում է կրկին վերադառնալ հայ եկեղեցու գիրկը:

«Եւ նա շոքաւ ի գիւղն Մարուխ, — պատմում է Մեհերյանը, — և ամուսնացաւ: Յետ ամուսնանալոյն շոգաւ առ դատաւորն դաւառին և ասէ ցնա — Կամիմ քահանայ ձեռնադրիլ, բայց ոչ ձեռնադրեն, թէ թուրքացեալ ես: Իսկ դատաւորն առաքեաց զսպասաւորս իւր ի Կորայ վանս, որ է ի Բուլանուխ՝ կից ընդ Մանազկերտ գաւառին, ուր էր եպիսկոպոս մի, զոր բնութեամբ բերին ի Խնուս ի գիւղն Մարուխ և ետուն դուրացողն ձեռնադրել քահանայ»<sup>2</sup>:

Մրանից հետո Հովհաննեսն սկսում է տարածել աղանդը: «Յետ այսօրիկ, — շարունակում է Մեհերյանը, — սկսաւ աղանդ շար սերմանել ի գիւղն Մարուխ և յայլ գաւառս»<sup>3</sup>:

Որ Մեհերյանի վկայությունները ճշմարտապատում են, երևում է Կ. Պոլսի պատրիարքին հասցեագրած Ղուկաս Կարնեցու 1792 11-ը մայիսի թվակիր նամակից, ուր ասվում է.

«... Յանցեալ ամսն (1791 թ., վ. Գ.) Յովաննէս չէրէց ոմն, որ քանիցս ոստեալ էր ի հաւատոյ և ի կրօնից սրբոյ եկեղեցոյս մերոյ և ապա բնութեամբ Խնուսու բէկին քահանայ ձեռնադրեցեալ, ի Կարին և Խնուս յայտնեալ էր զշարաշար աղանդս ոչ միայն ախտարմայութեան, այլև զմերձաւորս թոնդրակեցոց»<sup>4</sup>:

Պարզ է, որ կաթողիկոսը չէր կարող այլևս հանդուրժել այդ ամենը, ուստի միջոցներ է ձեռք առնում վերջ տալու Հովհաննեսի գործունեությանը: Խնուսի բեկը, ինչպես երևում է, պաշտպանում էր Հովհաննեսին, այս է պատճառը, որ Ղուկաս Կարնեցին այդ խնդրով դիմում է Բայազետի Իսաղ փաշային: Այդ տարիներին (1787—1790), որոշ ընդամիջումներով, կատաղի կոիվներ էին տեղի ունեցել Բայազետի փաշայի և Երևանի Մահմեդ խանի միջև<sup>5</sup>, բայց, չնայած դրանց, կաթողիկոսի և փաշայի բարեկամական հարաբերությունները ոչնչով չէին տուժել: Հեռատես կաթողիկոսը այս անգամ էլ հավատարիմ էր շրջակա տիրակալների հետ լավ բարեկամ մնալու իրեն միշտ արդարացրած տրադիցիոն իր քաղաքականությանը: Շուտով «Բազում ջանիւ և հոգօք Բայազետոյ մովպետին և իշխանօքն» հանդուգն աղանդավորը բերվում է էջմիա-

<sup>1</sup> F. Conybeare, The Key of Truth, էջ LXXII:

<sup>2</sup> Բ. Մարգիսյան, նշվ. աշխ., էջ 103:

<sup>3</sup> Նույն տեղում:

<sup>4</sup> Պետական Մատենադարան, ձեռ. № 4483, էջ 26բ:

<sup>5</sup> Տե՛ս մեր «Երևանի խանությունը 18-րդ դարի վերջում (1780—1800)» գիրքը, Երևան, 1958, էջ 136—139:

ծին և շղթայակապ քանտ դրվում<sup>1</sup>: Միաժամանակ հոգ է տարվում Խնուսի աղանդավորներին դարձի բերելու ուղղությամբ:

Անցնում է մի քանի ամիս: 1791 թ. ապրիլի վերջին Ղուկաս կաթողիկոսը Մշո Սուրբ Կարապետ վանքի առաջնորդ Աստվածատուրին գրում է.

«Ի կողմանէ Խնուսու շերիցուն, եթէ գրեալ եմք առաջնորդին տեղւոյդ, գորպիսութիւն Խնուսու թիւրեւոցն ծանուցանել, քեզ ևս գրեմք ահա, եթէ ի սմանէ թիւրեալքն ահաանօր դարձեալ են ի յուղղութիւն, թէ ոչ, գրեսցես, զի գիտացուք: Աստի եղեալն զղջացեալ մեղայ գոչէ, թող տալն երկնչիմք, գուցէ անկցի կրկին ի նոյնն, պահելն և դժուարին, ըստ որում տնաւորեալ է և հողացողութիւն նոցա պիտոյ է ի հարկէ, որ ի ձեռն սորա լինելոց...»<sup>2</sup>:

Վեց ամիս Հովհաննեսին շղթայակապ քանտում պահելուց հետո էջմիածնի միաբանները հանում են նրա շղթաները և պահապանի հսկողության տակ շաքաթ և կիրակի օրերը թույլ տալիս նրան եկեղեցի հաճախելու: Հովհաննեսը որոշել էր փախչել էջմիածնից և մի գիշեր «...գրութ իւր հատեալ՝ փոկ արար իբրև դպարան և նովաւ էջ ի պարօպէն»<sup>3</sup>: Ինչ որ մի լեռ անցնելիս նրան բռնում են հովիվները և հաջորդ առավոտյան տալիս կաթողիկոսի մարդկանց ձեռքը: Հովհաննեսին կրկին կապում են և «ի վերայ գրաստուն» տանում դեպի էջմիածին, բայց նա կարողանում է ճանապարհին փախչել և թաքնվել «ի մէջ թփոց եղեգանց և մացառախիտ լեռանց»: Շուտով նա հայտնվում է Խնուսում<sup>4</sup>:

Փախուստը տեղի է ունեցել մինչև 1791 թ. նոյեմբերը, որովհետև նոյեմբերին Ղուկաս կաթողիկոսը արդեն հարցում է անում նրա մասին Հովհաննես և Գրիգոր վարդապետներին<sup>5</sup>:

1791—92 թվ. ձմռանը Մշո Սուրբ Կարապետ վանքի միաբան Հովհաննես վարդապետը գրում է կաթողիկոսին, թե Հովհաննես երեցը զղջացել է ու ներումն է խնդրում: Նա հայտնում է, որ եթե կաթողիկոսը կամենա, ինքը կարող է երեցին էջմիածին բերել: Նույն մասին Ղուկաս Կարնեցուն հայտնում է նաև Մշո նվիրակ Գրիգոր վարդապետը: Կաթողիկոսը նրանց պատասխանում է, որ եթե դա այդպես է, ապա թող տեղի ժողովուրդը մի «վկայական մահօար» ուղարկի իրեն և մի քանի երեկի անձանց հետ Հովհաննեսը զա էջմիածին<sup>6</sup>:

1792 թ. գարնանը պահանջված այդ «մահօարը» հասնում է էջմիածին: Նամակից, որի տակ իրենց ստորագրություններն էին դրել Խնուսի քահանաներն ու մեծամեծները, պարզվում է, որ Հովհաննեսը վերադառնալուց հետո «... զղջացեալ է ստոյգ մեղայիւ և արտասուք և դամենայն թիւրեալսն իւր ուղղեալ է ի գիտութիւն ճշմարտութեան և այնու ևս ոչ յագեցեալ զՅ (5) տուն ևս լերկարնակացն դարձուցեալ է ի... միաբանադաւան սուրբ հաւատս լուսաւորչակրօն եկեղեցւոյս Հայաստանեայց և այլն»<sup>7</sup>: Այս ամենը ի նկատի

<sup>1</sup> Պետական Մատենադարան, ձեռ. № 4483, էջ 26ր, հմմտ. նույն տեղում, Արխիվային բաժին, կաթողիկոսական գիվան, թղթ. 6, վավ. 164, էջ 2ա:

<sup>2</sup> Նույն տեղում, ձեռ. № 4481, էջ 395ր:

<sup>3</sup> Բ. Ս ս ո թ ի ս յ ա ն, նշվ. աշխ., էջ 103—104: Հմմտ. Պետական Մատենադարանի ձեռ. № 4483, էջ 26ր:

<sup>4</sup> Պետական Մատենադարան, ձեռ. № 4481, էջ 415ա:

<sup>5</sup> Նույն տեղում, № 4483, էջ 27ր: Տե՛ս նաև ձեռ. № 4481, էջ 420ր:

<sup>6</sup> Նույն տեղում, ձեռ. № 4483, էջ 27ր:

ունենալով նրանք օրհնության թուղթ են խնդրում Հովհաննեսի համար: Նման խնդրանքով կաթողիկոսին է դիմում նաև բայազետցի Սահակ աղան<sup>1</sup>: Դատելով դրանցից, կարելի է ասել, որ Հովհաննեսը, ըստ երևույթին, մեծ հեղինակություն ու հարգանք է վայելել այդ մարդկանց մեջ, կարողացել է այդ կարճ ժամանակամիջոցում ազդել նրանց վրա և ուղարկել ցանկացած մահասարգի-րը: Եթե խնուսի բեկը ստիպած լիներ նրանց այդ անել, ապա կաթողիկոսը անշուշտ կիմանար Սուրբ Կարապետի միաբաններից:

Այնուամենայնիվ, Դովլաս Կարնեցին շատ զգույշ էր և իր պատասխան նամակում հայտնում է, թե որպեսզի ինքը լրիվ համոզվի այդ ամենում, Հովհաննեսը թող խնուսցի երկու քահանայի ու երկու իշխանի հետ դա էջմիածին. «... ցուցանիցէ մեզ զկատարեալ զղջումն յառաջին արմանցն և ակն հանդիման բերանով իւրով խոստովանիցի զդաւանութիւն ուղղափառ հաւատոյ սրբոյ եկեղեցոյս Հայաստանեայց և ուխտեցէ ոչ ևս խտորիլ և խտորեցուցանել միւս անգամ, այլ մնալ յուղղութիւն և ի ճշմարտասիրութեան: Ապա և մեր ըստ ամենայնի մարդասիրեացուք դմա և շահեսցուք և օրհնութեան նամակաւ փառաւորապէս վերադարձուցուք»: Նա շեշտում է, որ «... եթէ ի վերայ Բայազետոյ դաջն կասկածիցին, այլով ճանապարհաւ դայցեն»<sup>2</sup>:

Խնուսցիների պատասխանի մասին տեղեկություն չկա: Դատելով հետագա դեպքերից, նրանք ինչ-ինչ պատճառներով, որոնց մեջ, հավանորեն, հեռավոր ճանապարհորդության զժվարություններն ու Հովհաննեսի դեռ լիովին չանցած վախը կաթողիկոսից, հետին պլանի վրա չէին, չեն կարողացել այցելել էջմիածին, հետևապես և Հովհաննեսը իր խնդրած օրհնության գիրը չի ստացել:

Ինչ է հայտնի «Բանալի ճշմարտության» հեղինակի կյանքի հետագա շրջանի մասին: Մեհերյանի մոտ պատմվում է, որ Հովհաննեսի վերադառնալուց հետո նրա պաշտպան գավառապետին խնուսից աքսորում են Կարին: Հովհաննեսը վախենում է մնալ խնուսում և կնոջ ու որդու հետ նույնպես գնում է Կարին, բայց այնտեղի հայերը շատ վատ են ընդունում նրան: Շատ շանցած խնուսի գավառապետը գլխատվում է: Դրանից հետո Հովհաննեսին սկսում են ձնչել նաև մահմեդականները. «մահմեդականք, — գրում է Մեհերյանը, — կալան գնա յամին 1801 և ասեն ցնա, թէ թուրք ևս դու և թուրքացեալ և զի՛արդ տէրտէր եղեր»: Հովհաննեսը կրկին մահմեդականություն է ընդունում, իսկ կինը հեռանում է խնուս՝ իր հոր մոտ<sup>3</sup>:

Արխիվեցիների ցուցումներում ևս շարունակ շեշտվում է Հովհաննեսի մահմեդականություն ընդունելու փաստը, սակայն մյուս տվյալները չեն համընկնում Մեհերյանի ասածներին: Էջմիածնի սինոդի օրագրությունների 1838-11-ը մայիսի թվակիր արձանագրության մեջ, որը քաղված է Փամբակի և Շորագլալի գավառապետի զեկուցագրից՝ ուղղված բարոն Ռոզենին, ասվում է, թե «...՞ հայոց քահանայից Յահաննէս, անկեալ ի սոյն աղանդ, շարադրեալ է գիրք մի (Բանալի ճշմարտութեան անուն), զոր լուեալ աղանդապետութիւն սոյն երիցու տէրութեանն Օսմանեանց, ստիպեալ զնա թողուլ զայն դաւանութիւն և նմա շահանդուրժեալ, ընկալեալ է զհաւատ Մահմետի, հանգերձ ընտա-

<sup>1</sup> Պետական Մատենադարան, ձեռ. № 4483, էջ 27ր:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 27բ—28ա:

<sup>3</sup> Բ. մ ա ռ գ ի ս յ ա ն, նշվ. աշխ., էջ 104:



նեօք իւրովը»<sup>1</sup>: 1838 թ. հոճովարի 20-ին արխիվիցիները ցուցում են տվել, որ Հովհաննեսը «տաճկացեալ որդնալից կորեալ էր»<sup>2</sup>: Մեկ ուրիշ անգամ՝ «չէրէցն որդնալից եղեալ սատկեցաւ»<sup>3</sup>:

1841 թ. ապրիլի 28-ին կրկնակի հարցաքննության ժամանակ, վախենալով սպառնալիքներից, արխիվիցիները քաղաքացիական իշխանություններին խոստովանում են թե «ըստ իրատու Բանալի ճշմարտութեան աղանդահնար գրքոյն յիմարաբար մկրտեալ են զմիմեանս», մկրտվողների ցուցակում նշվում է, որ նրանցից չորս հոգի, 60-ից 80 տարեկան, «յառաջ քան զ30 ամ յիշեալ ձևովն մկրտեալ են ի շիք տէր Յովհաննէսէ, թոնդրակեցութեան հետևողէ, որ յետոյ տաճկացեալ է»<sup>4</sup>:

Ստացվում է, որ Հովհաննեսը դրանից 30 տարի առաջ, այսինքն 1811 թ., կենդանի է եղել: Բայց դա դեռ ամենը չէ, նույն տեղում թվարկվում են ևս վեց հոգու անուններ՝ 50-ից 30 տարեկան, որոնք էլ «յիշեալ ձևովն մկրտեալ են ի շիք քահանայէն», մեկն էլ մկրտվել է Հովհաննեսի աշակերտ Մեսրոպ Բուդաղյանի կողմից, որը մահացել էր դեռևս խնուսում<sup>5</sup>: Հայտնի է, որ ըստ «Բանալի ճշմարտութեան» մկրտությունը օրինական էր միայն 30 տարեկան հասակում և Հովհաննեսը պետք է որ հետևեր իր քարոզած սկզբունքին: Գուրս է դալիս, որ նա այդ ժամանակ կենդանի էր, մինչդեռ արխիվիցիների ցուցումներից երևում է, որ նա մահացել է Արևմտյան Հայաստանում: Պարզ չէ նաև «մկրտեալ են զմիմեանս» արտահայտության իմաստը, երբ քիչ հետո ամեն ինչ բարդվում է արդեն մեռած մարդկանց վրա, որոնց պատժելն անհնարին էր: Երևում է, որ արխիվիցիները ոչ միայն շփոթում են (ի դեպ ասենք, որ դատի տրված 18 հոգուց մեկն էր միայն գրագետ), այլև դիտավորյալ խառնում են թվերը: Դա երևում է անգամ «Բանալի ճշմարտութեան» բնագրից, որի տիտղոսաթերթի վրա «Գրեցաւ ի թուականիս փրկչին 1782»-ը կոպիտ ձևով շրտված է 1832-ի, մինչդեռ հիշատակարանում եղած 1782 թիվը թողնված է անփոփոխ<sup>6</sup>: Դժվար է ասել, թե ինչն է պատճառը այդ աղավաղումների: Բայց, չնայած դրանց, Աղ. Երիցյանը, որ քաջատեղյակ էր արխիվիցիների գործին և կարգացել է նրանց բոլոր ցուցումները, եկել է այն եզրակացության, որ «Բանալի ճշմարտութեան» հեղինակը հետապնդվել է ու մեռել թուրքական կառավարության կողմից<sup>7</sup>: Նույնն է ասում նաև Կոնիքերը՝ համեմատության գիծ տանելով Սմբատ Զարեհավանցու և Հովհաննեսի դժբախտ ճակատագրերի միջև:

Արխիվիցիների կծկտուր և երբեմն էլ հակասական տվյալների վրա խորը սխալած այս եզրակացությունը հաստատվում, ճշտվում և լրացվում է Ղուկաս Կարենցու մի արժեքավոր վկայությամբ: 1793 թ. հոկտեմբերին Կ. Պոլսի

<sup>1</sup> Հայկական ՄՍՌ Պետական կենտրոնական արխիվ, ֆ. Սինոդի օրագրություններ, 1838 թ., ցուցակ № 9, թղթապանակ 3, վավերագիր 579, էջ 726ր: Հմմտ. Աղ. Երիցյան, Թոնդրակեցի հայք մեր օրերում, էջ 108:

<sup>2</sup> Պետական Մատենադարան, Արխիվային բաժին, կաթողիկոսական դիվան, թղթապանակ 97, վավերագիր 133, էջ 5ա:

<sup>3</sup> Աղ. Երիցյան, նշվ. աշխ., էջ 101:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 109:

<sup>5</sup> Նույն տեղում:

<sup>6</sup> Պետական Մատենադարան, ձեռ. № 6710, էջ 2ա, 57ր:

<sup>7</sup> А. Д. Ерицов, О секте тондракских армян, էջ 191:

Զարարիա պատրիարքին դրած նամակում կաթողիկոսը արձանագրում է նաև հետևյալը.

«... Մանուցից և ղեկնուու շարաշար աղանդահնար շերիցու ղկորուստն, որ փախուցեալ աստի, թէպէտ և զղջացեալ համբաւեցաւ, սակայն ոչ եկն դարձեալ և դայթակղութիւն էր աշխարհի կեալն նորա: Ապա բէկն տեղոյն, վասն շարագործութեանց նորին, խեղդամահ է արարեալ և այն շարն ևս այնպէս բարձաւ ի միջոյն<sup>1</sup>: Ուրեմն Հովհաննեսը սպանվել էր մինչև 1793 թ. հոկտեմբեր ամիսը:

Դժվար է կասկածել այս խոսքերի ճշտության վրա: Կաթողիկոսը նամակադրական լայն կապեր ուներ Արևմտյան Հայաստանի գավառներում ապրող հայ հոգևորականների ու տեղական մեծամեծների հետ, լավատեղյակ էր այնտեղի անցքերին և առանձնապես հայ եկեղեցու ու նրա շահերի հետ աղերսվող գործերին: Ասենք, պահպանված մյուս տեղեկություններն էլ, ինչպես տեսանք, խոսում են Հովհաննեսի ինչ-որ «որդնալից կորստեան», «սատկման» մասին:

Դժվար է ասել, թե ինչ դեր է խաղացել Հովհաննես վահագնունին «Բանալի ճշմարտության» հեղինակի բախտախնդրության ու ավանտյուրիզմի մոմենտներից ոչ ղերժ փոթորկալից կյանքի դրամայում: Բ. Սարգիսյանը ենթադրում է, որ վահագնունին կամ Բոռճիմասուրի սուտ եպիսկոպոսն է, կամ էլ ինուսի գատավորը (իմա՝ բեկը, Վ. Գ.), որը ծագումով, ըստ նրա, գուցե և մահմեդականությունն ընդունած մի հայ աղանդավոր է եղել<sup>2</sup>: Այս հարցը դեռ կարոտ է լուսարանման: Մի բան պարզ է, որ Հովհաննեսի սպանությունը կատարվել է իր պաշտպանի՝ ինուսի բեկի մահապատժից հետո: Վերջինիս ծանր պատիժը գուցե կապ ունի նաև այն բանի հետ, որ նա հովանավորում էր թոնդրակյանների աղանդապետին, կամ էլ, ինչպես հարկն է չէր պայքարում նրանց դեմ:

Ինչպես տեսնում ենք, դեռևս շատ բան կա անելու XVIII դարի վերջում ծավալված այդ շարժման պատկերը ստվերագծելու համար, բայց բերված նյութերը արդեն հիմք են տալիս պնդելու, որ միայն աղանդավորական չէր այդ շարժումը: Եթե թուրքաց կառավարությունը թիապարտության էր դատապարտում և ապա, տարիներ անց, խեղդամահ անել տալիս այդ շարժման ղեկավարներից մեկին, ապա դա արվում էր ոչ այնքան հայ եկեղեցու գաղափարական հիմքերն ամրապնդելու, որքան ճնշված ժողովրդի ծոցում բռնկված դիմադրության այդ կայծը հանգցնելու համար: Աղ. Երիցյանը, խոսելով թուրքական կառավարության կողմից խնուսցիների դեմ հարուցած հալածանքների մասին, գրում է. «Ի պատիվ Թուրքիայի ևս պետք է հայտարարեմ, որ թուրքերը հետապնդում էին անցյալ դարում ինուսում հայտնված թոնդրակյան աղանդը: Կատեխիզիսը կազմող հոգևորականը հետապնդվել է և տանջալից մահով մեռել թուրքական կառավարության ձեռքից»<sup>3</sup>: Աղ. Երիցյանի նման լուրջ պատմաբանի համար այս հապճեպ արված եզրակացությունը այնքան էլ պատվաբեր չէ: Խնուսցիների շարժումը ոչ այլ ինչ էր, բայց եթե կրոնական բողոք շղարշված մի ընդվզում, որ ուղղված էր նախ և առաջ հայ գյուղա-

<sup>1</sup> Պետական Մատենադարան, ձեռ. № 4501, էջ 401ա:

<sup>2</sup> Բ. Սարգիսյան, նշվ. աշխ., էջ 104:

<sup>3</sup> А. Д. Ерицов, О секте тондракских армян, էջ 191:

ցիւթյան դարաւոր թշնամու՝ բարդ թալանչիների և նրանց հովանաւորողներին դեմ, մի շարժում, որի թուլացած հնչյունները միայն հասան Արիւիկի՝ գրկիւած, բնականաբար, իրենց հիմնական մտախիլից:

В. ГРИГОРЯН

## НОВЫЕ ДАННЫЕ ОБ АВТОРЕ КНИГИ «КЛЮЧ ИСТИНЫ»

Резюме

В Шираке, в селении Архвели, у сектантов — «тондракцев», переселенных из Западной Армении, в 1838 г. была обнаружена книга под названием «Ключ истины», в которой было изложено их кредо. Она вскоре привлекла внимание армянских и зарубежных исследователей (А. Ерицян, Б. Саркисян, К. Тер-Мкртчян, Ф. Конибер, позднее Г. Гюламирян, Шайдвайлер).

В «Ключе истины» нигде не указано имя автора, (часть памятной записи и некоторые страницы уничтожены). Но из показаний арестованных сектантов-архвелейцев видно, что автором книги является основоположник секты священник Ованнес.

Автобиография мхитариста Мегеряна (рукопись хранится в Венеции) и некоторые письма католикоса Гукаса из фондов Матенадарана дают возможность коротко описать жизнь и деятельность основателя секты. Ованнес свою деятельность развертывал в уездах Маназкерт, Карин и Хнус. Он был в Константинополе и Венеции. Турецкие власти присудили его к галерам, эчмиадзинские монахи арестовали и в течение 6-и месяцев держали в цепях, но ему удалось бежать и продолжать проповедование своих идей. Из одного письма Гукаса, датированного октябрем 1793 г., явствует, что Ованнес был умерщвлен хнусским беком.

Материалы, приведенные в статье, дают основание утверждать, что сектантское движение хнусцев было бунтом подрелигиозным покровом, направленным против вековых угнетателей армянских крестьян.

ՄԱՐԳԱՐԻՏ ԽԵԻԹԱՐՅԱՆ

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ԼԱԶԱՐՅԱՆՆԵՐԻ ԱՐԽԻՎԸ

1929 թվականին նախկին Լազարյան ճեմարանի գրադարանի գրականությունը և գրադարանի պահպանության հանձնված Լազարյանների արխիվը Մոսկվայից փոխադրվում է Երևան: Գրականության մի մասը տրվում է Երևանի Պետական Համալսարանին, իսկ մյուս մասը՝ արխիվի հետ ստանում է Մյասնիկյանի անվան Հանրային գրադարանը:

1956 թվականի ամռանը Պետական Մատենադարանի գիրեկցիան Հանրային գրադարանից ստացավ Լազարյանների արխիվը, դրա փոխարեն գրադարանին հանձնելով հնատիպ գրականության կրկնօրինակների մի հավաքածու:

Դեռևս այն ժամանակ, երբ արխիվը գտնվում էր Հանրային գրադարանում, մեր գիտնականներից շատերը հնարավորություն էին ստացել ծանոթանալու արխիվի նյութերին: Այսպես, ողջ արխիվը ծայրից ծայր նայել է պրոֆ. Լեոն: Հետազայում այդ նյութերին ծանոթացել են պատմաբաններ Աշ. Հովհաննիսյանը, Մ. Ներսիսյանը, Վ. Պարսամյանը, գրականագետ Ա. Ինճիկյանը, Շ. Նազարյանը և ուրիշներ: Չնայած դրան, արխիվի արժեքավոր նյութերը մշակված չլինելով, մատչելի չէին մեր գիտական հասարակայնությանը:

Մատենադարանի արխիվային բաժնի կողմից վերջին երկու տարվա ընթացքում Լազարյանների արխիվի նյութերը ենթարկվեցին գիտական մշակման և դրանց ընդարձակ անոտացիաները դրվեցին մեր գիտնականների տրամադրության տակ:

141 ծավալուն գործերում ամփոփված են Լազարյանների արխիվի ոչ բոլոր նյութերը: Հայտնի է, որ այդ արխիվի նյութերը ցրված են նաև Մոսկվայի և Լենինգրադի զանազան արխիվներում: Չնայած դրան, Մատենադարանում պահպանվող վավերագրերը իրենցից մեծ արժեք են ներկայացնում ոչ միայն Լազարյան տոհմի որոշակի շրջանի պատմության լուսաբանման առումով, այլև նրանով, որ լույս են սփռում հայ հասարակական կյանքի ամբողջ կես դարի պատմության մի շարք կարևոր դրվագների վրա:

Նյութերն արտացոլում են հիմնականում 19-րդ դարի առաջին կիսամյակի Ռուսաստանի իրադարձությունները և Ռուսաստանում բնակվող հայ ժողովրդի վիճակը: Մի բարդ ժամանակաշրջան էր այդ, երբ Ռուսաստանում տեղի ունեցան 1812 թ. հայրենական պատերազմը և ղեկաբրիստների ապրտամբությունը, երբ Հայաստանն ազատագրվեց պարսկական լծից և միացավ Ռուսաստանին: Քաղաքական այս իրադարձություններին զուգընթաց լուրջ փոփոխություններ էին կատարվում և երկրի տնտեսական կյանքում: Ընդհատադարձական կարգերի ընդերքում հասունանում էին ըմբոստության հունդերը և

ազատասիրական ոգին մուտք էր գործում և՛ ճորտ գյուղացիության լայն շերտերը, և՛ ինտելիգենցիայի շրջանները:

Այս ժամանակաշրջանում իր ուրույն և հետաքրքրական կյանքով էր ապրում և հայ ժողովուրդը, որն անվերապահ ուսական օրինատացիա ունենալով հանդերձ՝ քաղմիցս բողոքում էր ցարական գաղութային քաղաքականության հետևանքով օր ավուր ծանրացող տնտեսական դժվարությունների դեմ: Սակայն չէր դադարում հայ ժողովրդի մտավոր զարթոնքին հաջորդած վերելքը. ի հակակշիռ ուս իրականության բարձր շրջաններում և հայ ազնվականության մեջ իշխող կառավարական, պաշտոնական գաղափարախոսության, հայ առաջավոր գործիչները զարկ էին տալիս հայկական մշակույթի հետագա զարգացմանը, որպես կայուն խարխիս՝ հենվելով ուսական առաջադիմական մտքի վրա:

Ահա այս ժամանակաշրջանն իր հիմնական դժերով արտացոլվել է Լազարյանների արխիվում պահպանված նյութերում:

Լազարյանները բալականաշափ կրթված էին, որպեսզի պատմական փաստաթղթերի հետ միասին կարողանային ըստ արժանվույն գնահատել և հենց իրենց ժամանակի փաստաթղթերը: Ավելին, նրանք մեծ խնամքով պահպանել են ոչ միայն աշխարհի գրեթե բոլոր ծայրերից իրենց ստացած նամակները, դիմումները, կոնդակները և այլ նյութեր, այլև հենց իրենց գրած նամակների պատճենները: Այդ ամենը նրանք հավաքել են ժամանակագրական կարգով, կազմել առանձին գործերում և հանձնել Լազարյան ճեմարանի գրադարանի պահպանությանը:

Սակայն արխիվի բոլոր գործերը չէ, որ մեծ արժեք են ներկայացնում. պայմանական ձևով, որքան այդ հնարավոր է, Լազարյանների արխիվի գործերը դասավորվել են թեմատիկ կարգով և բաղկացած են հետևյալ բաժիններից. առևտրական և տնտեսական նյութեր, նամակներ, կոնդակներ և այլ նյութեր, պաշտոնական և այլ կարգի գրություններ, նյութեր Լազարյանների և Լազարյան ճեմարանի մասին, թերթերի, ամսագրերի և տպագիր նյութերի հավաքածուներ, եկեղեցական և դավանաբանական նյութեր, ուսումնասիրություններ և աշակերտական շարագրություններ, դանազան նյութեր՝ օտար լեզուներով, Լազարյան տոհմի ստացած հրովարտակները, ֆերմանները և պարզկները:

Գիտության համար այս գործերից անառարկելիորեն մեծ արժեք են ներկայացնում Լազարյանների ստացած նամակների բազմաթիվ հավաքածուները. դրանք հիմնականում զետեղված են հետևյալ գործերում թղթ. 102, գործ 17, 6, թղթ. 103, գործ 5, 9, թղթ. 104, գործ 7, 8 և գործ՝ առանց համարի, թղթ. 105, գործ 11, 13, թղթ. 106, գործ 14, 35, թղթ. 107, գործ 44, թղթ. 108, գործ 60 և այլն:

Այդ վավերագրերը ոչ միայն մեծ հնարավորություն են ընձեռում դանազան կարևոր հարցեր լուսաբանելու, այլև օգնում են ժամանակի մի շարք գործիչների կերպարների բնութագրման գործին: Այդ իմաստով, ձեռքի տակ եղած նյութերը հնարավորություն են տալիս ամբողջական գաղափար կազմելու Հովակիմ Լազարյանի և նրա որդիներ Խաչատուրի և Հովհաննեսի, ինչպես և Ներսես Աշտարակեցու, Եփրեմ Կաթողիկոսի, Հովհաննես արքեպիսկոպոսի գործունեության մասին:

102 թղթապանակի № 17 գործում զետեղված են գերազանցապես Հովա-

կիմ Լազարյանի նամակները՝ ուղղված իր հարազատներին: Այդ մեծարժեք նամակների ուսումնասիրությունը հնարավորություն կտա մեր բանասերներին՝ հանդամանորեն ծանոթանալու 18-րդ դարի վերջին և 19-րդ դարի առաջին տասնամյակների նշանավոր հայ ազնվական գործիչ Հովակիմ Լազարյանի հետ:

Քարասկզբին Հ. Լազարյանը առևտրական և արդյունաբերական լայն գործունեություն էր ծավալել Ռուսաստանում: Պետերբուրգում և Մոսկվայում նա մեծագին տներ ուներ, հանդիսանում էր մայրաքաղաքների հայ եկեղեցիների հոգաբարձուն, նրա մետաքսի ֆաբրիկայի արտադրանքն ուղարկվում էր երկրի առևտրական կենտրոնները: Միաժամանակ, Հովակիմ Լազարյանն ուներ ահագին կալվածքներ, աղի և երկաթի մշակման գործարաններ: Իր նամակներից մեկում նա գրում է, որ մետաքսի ֆաբրիկայից բացի, որն իրեն վնաս է բերում, աղահանքերը, երկաթահանքերը, Յարոսլավլի, Տուլայի և կալուզայի դյուղերի 2400 ճորտ գյուղացիները 1 միլիոն ռ. գին ունեն և տարեկան 100.000 ռ. եկամուտ են բերում: Այդ գործի վավերագրերից երևում է և Լազարյան-գործարանատիրոջ ջանքերը՝ կատարելագործելու իր արդյունաբերության տեխնիկան (այսպես, արդեն 1813 թվ. նրա գործարաններում հնարված մեքենաներով աղի արտադրանքը փոխադրվում էր նիժնի, նոր մոդելով պատրաստված շոգու մեքենայով մշակում էին երկաթի զանազան տեսակներ, և այլն):

Արդյունաբերող լինելուց բացի, Հովակիմ Լազարյանն առևտրական կապերով կապված էր մի շարք արևտրական տների հետ: Սակայն նա միաժամանակ խոշոր ճորտատերերից էր, որը պատշաճ հարաբերություններ էր պահպանում նահանգապետների և վարչական այլ ծառայողների հետ: Իր եկամտի կարևոր աղբյուրներից մեկը Հովակիմ Լազարյանը համարում էր ճորտ գյուղացիների շահագործումը: Այսպես, երբ նա դժգոհություն է հայտնում այն բանից, որ ֆաբրիկան մեկ տարվա ընթացքում 900.000 ռ. եկամուտ տալու փոխարեն միայն վնաս է բերել, այն միտքն է հայտնում, թե այդ կորած կապիտալով իրենք կկարողանային 2000—2500 ճորտ ձեռք բերել, որոնք տարեկան 60—70.000 ռ. եկամուտ կբերեին իր տնտեսությանը:

Իբրև ճորտատեր և գործարանատեր, Հովակիմ Լազարյանը հավատարիմ էր իր դարի սկզբունքներին և անդիջող՝ իր շահերի պաշտպանության հարցում: Նրա նամակներից երևում է, որ նա դատական գործ է հարուցել և երկար ժամանակ զբաղվել իր Գուրշչապովո կալվածքի գյուղացիության հարցով: Դատական գործ է վարել իր մետաքսի ֆաբրիկայի ֆաբրիչնիկների դեմ, այդ նպատակի համար օգտագործելով իր բազմաթիվ կապերն արքունիքի հետ: Նա անդիջող էր և պարտապանների նկատմամբ. որդիներին հանձնարարում է վաճառական Միխայլովի պարտքի ժամկետը լրանալուն պես նրան դատի տալ և շղիջել: Հետաքրքրական է այն փաստը, որ երբ նախիջևանցի վաճառական Խարախաշովը մի փոքր ուշացնում է նրան վճարելիք պարտքը, վերջինս մի առանձին նամակով դիմում է նախիջևանի բնակիչ և իր բարեկամ Իվան Աբրահամյանին և նրանից տեղեկություններ խնդրում՝ Խարախաշովի անշարժ կալքի արժեքի մասին:

Այս ամենով հանդերձ Հովակիմ Լազարյանը հսկայական գործ է կատարել հայ ժողովրդի լուսավորության ասպարեզում: Եղբոր՝ Հովհաննես Լազարյանի

օրինակով, նա մեծ գրամագուլիս է արամագրում հայազգի մանուկների համար ճեմարան հաստատելու նպատակին և անձամբ ղեկավարում է այդ դպրոցի շինարարության գործը: Լազարյանն իր նամակներում հսկայական ուշադրություն է նվիրում ինչպես դպրոցի կառուցման աշխատանքներին, այնպես էլ ուսումնական գործը կարգավորելու, դպրոցը որակյալ ուսուցիչներով ապահովելու հարցերին: Հետագայում ևս, մինչ իր կյանքի վերջը, նա ուշադրության կենտրոնում էր պահում Մոսկվայի դպրոցի բարեկարգման հարցերը:

Հովակիմ Լազարյանը լայն գրագրություն էր վարում ժամանակի կաթողիկոսների, առաջնորդների, տարբեր երկրների հայ հոգևորականության ներկայացուցիչների, առևտրականների և այլ գործիչների հետ: Նրա նամակների սևագրություններից երևում է, թե որքան լայն են եղել նրա գործունեության շրջանակները:

Հովակիմ Լազարյանը, իսկ հետագայում և նրա որդիները, լայն կապեր ունեին պաշտոնական շրջաններում: Այսպես, նրանք փոխադարձ այցելություններ էին տալիս Արակչեկին, Օսլովին, Ռաստոպաշինին, Կոզոզավլևին, Սպերանսկուն, Գոլիցինին, Կոշուբեյին, Կուրակինին, Քենկենգորֆին, Լոբանովին, Լանսկոյին, Գորչակովին և այլն: Մի նամակում Հովհաննես և Խաչատուր Լազարյանները առաջնորդին գրում են, թե մայրաքաղաքի 50-ի շափ մեծամեծներ և թագավորի մերձավորներն իրենց բարեկամներն են և հաճախ են ճաշում իրենց տանը (թղթ. 104, գործ 8, 170): Հովակիմ Լազարյանը և նրա որդիներն անվերապահ ուսական օրինեստացիա ունեին և իրենց անձնական նամակներում հաճախ էին խոսում այն մասին, որ Ռուսաստանում անձի և գույքի լիակատար ապահովություն և հավատի անձեռնմխելիություն գոյություն ունի:

Հ. Լազարյանի նամակներն աչքի են ընկնում իրենց ինքնատիպությամբ. նրա ոճը պատկերավոր է, լեզուն կենդանի և գրագետ: Նրա խոսքը երբեմն նույնիսկ ռիթմավորվում է և որոշ նամակներ ավարտվում են շափածո տողերով: Սիրիի գործարանները մեկնած իր որդուն, Խ. Լազարյանին ուղղված մի նամակում նա բանաստեղծական ոգևորությամբ է խոսում այն մասին, որ ինչպես բնության զարթոնքը, բացվող գետերի կարկաչը, այնպես էլ գործարանային գեղեցիկ առօրյան խթան կհանդիսանան նրա հետագա աշխատանքների համար և մեծ սեր կառաջացնեն զեպի գործարանատիրոջ, հանրատիրոջ աշխատանքը:

Լազարյանը նախանձախնդիր էր իր ազգի պատվին և նրա հարատևմանը: Նամակները միշտ գրում էր հայերեն լեզվով (փոքրիկ բացառությամբ) և որդիներին հանդիմանում հայերենով շղթելու համար: Նրա որդիները, սակայն, հեռացան իրենց հորից. նրանց համար հայերենն արդեն մայրենի լեզու չէր: Հովհաննես Լազարյանն իր հարազատներին գրում էր մեծ մասամբ ֆրանսերեն և կամ ռուսերեն լեզուներով: Ղազար Լազարյանը գրում էր միայն ռուսերեն. իր ղինվորականի պաշտոնով էլ, չհաշված ռուս-պարսկական կռիվներին ունեցած մասնակցությամբ, նա կտրված էր Լազարյաններին հուզող ընթացիկ ազգասիրական գործերից: Հովակիմ Լազարյանից հետո նրա ազգասիրական-լուսավորական և առևտրական գործունեությունը շարունակեցին Հովհաննես և Խաչատուր Լազարյանները: Խաչատուր Լազարյանը, որը իր տոհմի ամենակարկառուն ներկայացուցիչն էր, կես դարից ավելի շարունակեց իր

հոր ստեղծած արագիցիաները և անձամբ ղեկավարեց Լազարյան ճեմարանի լուսավորական գործունեությունը: Նա նույնպես գրում և մտածում էր ուսերեն և պարտքի բերումով միայն շարունակում էր մնալ հայ և ծառայել իր ազգի լուսավորության գործին: Իր քաղաքական դավանանքով Խաչատուր Լազարյանը շարունակում էր հոր քաղաքականությունը և նվիրված էր ցարական կառավարությանը: 1826 թվականի աշնանը նա ծառայության մեջ է մտնում Բենկենդորֆի մոտ և պարտավորվում է լուրեր հաղորդել պարսկական և թուրքական սահմաններում տեղի ունեցող իրադարձությունների մասին: 1826 թվականի սեպտեմբերի 10-ի թվակիր նամակներում Խ. Լազարյանը ներսև Աշտարակեցուն, Թիֆլիսում բնակվող Մելքիսեղեկ քահանա Ղամազյանին, Ղզլարի բնակիչներ Գասպար Մելքումիչին և Վարշամ Գուրգենիչին, իսկ հետագայում և Գրիգոր արքեպիսկոպոսին, իշխան Մ. Չ. Արղութինսկի — Երկայնաբազուկին և այլոց հայտնում է իր ստանձնած պաշտոնի մասին և նրանց թանդակությունը խնդրում:

Առանձնապես Ն. Աշտարակեցուց նա խնդրում է պատերազմական լուրերն ավելի արագ ուղարկել, քան դրանք տեղ կհասցնի թագավորական սուրհանդակը: Հետագայում նա Աշտարակեցուն գրում է, որ թագավորը զոհ է նրա ուղարկած լուրերի համար, որոնք ավելի ընդարձակ են և թարմ, քան պաշտոնական հաղորդագրությունները (Թղթ. 106, գործ 14, վավ. 111, 120):

Նույն թվականի նոյեմբերին արդեն Բենկենդորֆը շնորհակալություն էր հայտնում Խ. Լազարյանին՝ Թուրքիայի, Պարսկաստանի և Վրաստանի մասին հաղորդած նրա արժեքավոր տեղեկությունների համար (Թղթ. 104, գործ առանց համարի, վավ. 27):

Խաչատուր Լազարյանն իր եղբայր Հովհաննեսի հետ զբաղվում էր Ռուսաստանի հայաբնակ քաղաքների հայ հասարակության դիմումների գործով և ջանք չէր խնայում, որ դրանք իրենց դրական լուծումն ստանան: Նրանք ուղղված նամակներից, ինչպես և նրա գրած նամակների սեղանագրություններից պարզվում է, որ տասնյակ տարիներ Լազարյաններն զբաղվել են այդ հարցերով, այդ նպատակի համար օգտագործելով իրենց բազմաթիվ կապերը ժամանակի պետական խոշոր գործիչների հետ: Այսպես, օրինակ, նա ժամանակի առաջնորդներ ներսև, Հովհաննես և Գրիգոր արքեպիսկոպոսներին է ուղարկում հավատարիմ մարդկանց ձեռքով իրեն հասցված նրմուլովի ղեկուցագիրը մինիստրների կոմիտեին, որով նա պահանջում էր հայերից հետ վերցնել նախկին թագավորների կողմից նրանց շնորհված արտոնությունները (Թղթ. 106, գործ 14, վավ. 121—122, Թղթ. 111, գործ 36, վավ. 37):

1827 թվականի մայիսին Ղզլարի և Գրիգորուպուլսի հայերին ուղղած նամակում Խ. Լազարյանը հայտնում է, թե հայերի արտոնությունների պահպանման օգտին քվեարկել են մինիստրների կոմիտեի 12 անդամ և դեմ՝ 2 հոգի: Միաժամանակ հայտնում է, որ հարցը թագավորը փոխադրել է թագավորական խորհրդի քննությանը, ուստի ինքն շտապում է Պետերբուրգ, անձամբ զբաղվելու այդ գործով (Թղթ. 106, գործ 14, վավ. 131—136):

Հայերի վիճակի թեթևացման հարցով զբաղվելով հանդերձ, Լազարյանն աշխատում էր նրանց մեջ վառ պահել կառավարությանը հավատարիմ մնալու զգացումները: Կուրանի հայ հասարակության համար եկեղեցի կառուցելուն օժանդակելու նպատակով 2000 ռ. ուղարկելով, նա խորհուրդ է տա-



լիս ապրել հաշտ և հնազանդ լինել կառավարութեանը: Այս առումով հետաքրքրական է այն, որ երբ աստրախանցիներն իրենց նամակներից մեկում բողոքի խոսք են գրում իրենց վիճակի մասին, Լազարյանն իսկույն հանդիմանում է նրանց և աստրախանցիները հաշորդ նամակում ներողութուն են խնդրում իրենց հանդգնության համար (թղթ. 105, գործ. 11, վավ. 90):

Խաչատուր Լազարյանը նույնպես զբաղվում էր էջմիածնի աթոռի հետ կապված հարցերով, կաթողիկոսության թեկնածուների ընտրությամբ, հետևողական նամակագրական կապ էր պահպանում առաջնորդների և կաթողիկոսի հետ, ընդ որում նրանց ուղղութուն էր ցույց տալիս ընթացիկ աշխատանքներում, իսկ երբեմն՝ թելադրում, թե ինչ է հարկավոր անել: Այսպես, ներսեսին գրած նամակներից մեկում խոսելով հայ եկեղեցու դավանության դեմ սուսերեն լեզվով հրատարակված հողվածների մասին, խորհուրդ է տալիս հանդես գալ պատասխան հողվածով (թղթ. 107, գործ 44, վավ. 387):

Լազարյանները կառավարության և Աթոռի միջև սոսկ միջնորդի դեր չէին կատարում. հաճախ նույնիսկ նրանք աթոռի անունից ուղիղ գծով կապվում էին արքունիքի հետ: Եվ որպեսզի անարգել կերպով ցանկացած ժամանակ և ցանկացած հարցով (գերազանցապես հայերի արտոնության պահպանման և Լազարյան ճեմարանի հետ կապված հարցերով) կարողանան Աթոռի անունից կապվել թագավորի հետ, նրանք կաթողիկոսից ստորագրված և կնքված կոնդակի ձևեր են խնդրում, որին երկար ժամանակ առարկում էր Եփրեմը:

Խաչատուր Լազարյանը նամակագրական կապեր ուներ և արևմտահայ հատվածի հետ: Նրանց ներկայացուցիչների խնդրանքով, նա փորձում էր նրանց փրկել կաթողիկոսության վտանգից, կապել էջմիածնի հետ և արևմտահայության լայն շերտերում արժարժել ռուսական օրինատացիայի սերը (թղթ. 107, գործ 44, վավ. 372, թղթ. 125, գործ 30, վավ. 47, 48):

Խաչատուր Լազարյանը շարունակ զբաղվել է ճեմարանի հարցերով և իր եղբայր Հովհաննեսի հետ միասին արել հնարավորը՝ ճեմարանի ուսման գործը բարձր հիմքերի վրա դնելու ուղղությամբ: Արխիվի վավերագրերը ցույց են տալիս այս բնագավառի նրա ձեռնարկումները: Լազարյանները լայն կապեր են պահպանել Եվրոպայի գիտական կենտրոնների հետ և իրենց հրատարակություններից պարբերաբար ուղարկել են բոլոր աչքի ընկնող գրադարաններն ու գիտական հաստատությունները:

Ժամանակի հայ գործիչներից Խ. Լազարյանը կապված էր առավելապես Մսեր Մսերյանի և Գաբրիել Այվազովսկու հետ: Այվազովսկուն գրած մի նամակում նա խորհուրդ էր տալիս «Մասյաց աղավնին» հրատարակել գրաբար լեզվով, քանի որ աշխարհաբարը վնասում է գրականությանը (թղթ. 112, գործ 64, վավ. 41): Հետաքրքրական է, որ Այվազովսկին իր պատասխան նամակում բաժանելով հանդերձ Լազարյանի կարծիքը գրաբարի մասին, այն միտքն է հայտնում, որ բավական է իր ամսագիրը փորձի հրատարակել գրաբար լեզվով և կզրկվի իր բոլոր բաժանորդներից (թղթ. 108, գործ 83, վավ. 6): Լազարյանն ակտիվ կերպով միջամտում է և Այվազովսկու Ռուսաստան փոխադրվելու և առաջնորդական աթոռ ստանալու գործին: Այդ կապակցությամբ Հովհաննես Այվազովսկուն գրած նրա նամակներից երևում է, թե նա ինչպես նախանձախնդիր էր այն հարցին, որ Գ. Այվազովսկին ոչ միայն առաջնորդութուն ստանձնի, այլ եթե հնարավոր լինի՝ կաթողիկոսի գավազան:

Մսեր Մսերյանի հետ Խ. Լազարյանի ունեցած նամակագրական կապից մի անգամ ևս ակնհայտ է դառնում աճյն փաստը, որ Խ. Լազարյանը հայ հոգև-վորականության և կղերա-ֆեոդալական հոսանքի մյուս ներկայացուցիչների հետ միևնույն դիրքերից էր հարվածում ժամանակի առաջավոր մտածողներին, չխորշելով անգամ մատնությունից<sup>1</sup>:

Լազարյանների արխիվում մեծ քանակ են կազմում Ռուսաստանի առաջ-նորդ և ապա հայոց կաթողիկոս Եփրեմի նամակներն ու կոնդակները: Այդ նամակներում մեծ մասամբ արտահայտություն են գտել Ռուսաստանի հայա-բնակ քաղաքների հասարակությանը հուզող հարցերը՝ կապված նրանց արա-նությունների պահպանման հետ: Կաթողիկոսի կոնդակները հետաքրքրական են մի կողմից պատկերացում կազմելու հայաբնակ քաղաքների ժողովրդի վիճակի, իսկ մյուս կողմից՝ աթոռի և պարսկական բռնակալների փոխհարա-բերության հարցի մասին: Այսպես, Եփրեմ կաթողիկոսը բազմիցս գիմում է Լազարյաններին՝ Ռուսաստանի հայաբնակ քաղաքների հասարակությանն օժանդակելու, Հնդկահայերի կտակած գումարներն ստանալու, դանազան ճա-նապարհորդների Պետերբուրգում օդնելու, Լազարյան ճեմարանը Քիֆլիս փո-խադրելու և այլ հարցերով: Նրա կոնդակներում խոսվում է նաև պարսից բռ-նակալության, պարսկական իշխանավորների կամայականությունների մասին: Նամակներից մեկում Եփրեմը խնդրում է 300 ուրլիանոց զրպանի մի ժամա-ցույց գնել Աբրահամ Միրզայի համար, որը մեկն ընծա ստանալով՝ պահանջել է երկրորդը: Մի այլ նամակում Հովհաննես արքեպիսկոպոսը, դարձյալ Եփրե-մի հանձնարարությամբ, Լազարյաններից խնդրում է 5 ժամացույց գնել (ստա-ցած երեքից բացի), որպեսզի սարդարի և շահի դատեր հարսանիքին կաթողի-կոսը մեծամեծներին ընծայի: Նա աղաչում է այդ պատվերը շուտափույթ կա-տարել, որպեսզի կաթողիկոսը շտանջվի «խստասիրտ բարբարոսաց» պատ-ճառով (թղթ. 103, գործ 5, վավ. 107): Ինքը Եփրեմ կաթողիկոսը ևս անսքող ատելություններ խոսելով պարսից բռնակալների մասին, խոր հավատով էր նա-յում ուսական կառավարությանը: 1827 թվականի ապրիլին գրած կոնդակ-ներից մեկում նա հայտնում էր, որ շնայած 6-ամյա տարագրության հետ կապված տառապանքներին, հույս ունի, որ մոտ ապագայում կտեսնի իր հայ-րենիքի կապարյալ ազատությունը՝ «ի ձեռաց նեղչաց» (թղթ. 103, գործ 9, վավ. 20):

Արխիվում բազմաթիվ նամակներ լուսաբանում են Ռուսաստանի առաջ-նորդ Հովհաննես արքեպիսկոպոսի գործունեության շրջանակները: Այդ նա-մակները նույնպես առնչվում են հայաբնակ քաղաքների հասարակության վիճակի պատկերման և կամ այդ առիթով ձեռնարկվելիք միջոցառումների հետ: Հովհաննես արքեպիսկոպոսը Լազարյանների հետ բանակցում է և ըն-

<sup>1</sup> Մսերյանին գրած նամակներից մեկում Խաչատուր Լազարյանը գովելով նրա «Ճառագղ» ամսագիրը, հետևյալ միտքն է հայտնում «Հյուսիսափայլի» և նրա հրատարակիչների մասին. «Այն անախորժությունները, որոնք եղան հայկական մյուս անօգուտ և դատարկ ամսագրի հրա-տարակիչների և հոգվածների անբարեմտությունից և այն անբարյացակամ հայերից, որոնք և երմանում են երկպառակություն և զրգարություններ, և որոնք Ձեզ և հոգևորականությանը շարաղետ վիշտ պատճառեցին, գրանց մասին կառավարությանն արդեն հայտնի է. ևս ծանոթու-թյուն եմ տվել և դեռ բարձր իշխանությունից կտանձահարվեն»: (ՏՄՍ Մսերյանների արխիվ, թղթ. 206, վավ. 1587):

թացիկ այլ հարցերի շուրջը՝ կապված Լազարյան ճեմարանի ուսուցիչների, Աստրախանում դպրոց հիմնադրելու, Աստրախանի տպարանից Լազարյան ճեմարանի համար տառեր ուղարկելու և այլ հարցերի հետ:

Լազարյանների արխիվում շատ մեծ թիվ են կազմում Ներսես Աշտարակեցու նամակները, որոնք ընդգրկում են մոտավորապես 1810 թվականից մինչև 1850-ական թվականների կեսերն ընկած ժամանակաշրջանը: Այդ նամակներում արտահայտություն են դոնել ուսուպարսկական պատերազմական իրադարձությունները, Պասկևիչի և Ներսեսի գծտուխյան հետ կապված հարցերը, Էջմիածնի աթոռի և պարսկական տիրակալների փոխհարաբերությունների պատկերը, Ներսեսի կյանքի գովազդները Բիշնևում, ի վերջո՝ Նրա կաթողիկոս դառնալու հետ կապված նյութերն ու հետագա գործունեության նկարագրությունը Էջմիածնում:

Ինչպես արդեն ասացինք, Խաչատուր Լազարյանը Ներսեսի միջոցով հավաստի լուրեր էր ստանում ուսուպարսկական պատերազմի մասին: Արխիվում զետեղված են Ներսեսի գրած բազմաթիվ նամակ-հաղորդումները և պաշտոնական այլ փաստաթղթեր, որոնք հանդամանորեն պատմում են պատերազմական իրադարձությունների և այն մեծ սիրո և համակրանքի մասին, որ հայերն էին տածում ուսաների նկատմամբ: Ի պատասխան նրա ջանքերի, Խ. Լազարյանն իր նամակներում բազմիցս նշում է, որ նրա ծառայությունները հայտնի են կայսերը և իշխաններին: Սակայն, ինչպես հայտնի է, Ներսեսը չի վայելում իր ջանքերի պատուհները. 1828 թ. մարտի սկզբին Բենկենդորֆը Ներսեսին և Նփրեմին ուղղած գրություններում հայտնում է, թե Ներսեսը նշանակվում է Բեսարաբիայի թեմի առաջնորդ՝ Թուրքիայի տիրապետության տակ գտնվող հայերի մեջ համապատասխան աշխատանք կատարելու և Պոլսի պատրիարքի հետ կապեր հաստատելու համար (թղթ. 106, գործ 51, վավ. 141, 142): Արխիվում զետեղված են Ներսեսի հետագա գրությունները՝ կապված իր և Պասկևիչի գծտուխյան պատճառների քաղաքացիական հետ (թղթ. 103, գործ 9, վավ. 92, 93, 95, 96, 109—111): Այս պատմության մեջ հետաքրքրական է այն հանդամանքը, որ կաթողիկոսին և նույնիսկ Լազարյաններին հայտնի էր Ներսեսին մեկուսացնելու կառավարության քաղաքականության նպատակը: Այսպես, 1829 թվ. դեկտեմբերի 19-ին Խաչատուր Լազարյանը Ներսեսին խորհուրդ է տալիս իրրև կաթողիկոսի փոխանորդ վերադառնալ Պետերբուրգ, օգտվելով Բենկենդորֆի այն հայտարարությունից, թե պատերազմի ավարտից հետո Ներսեսն առանց թուլությունների կարող է վերադառնալ աթոռ (թղթ. 106, գործ 14, վավ. 139):

Խաչատուր Լազարյանը, սակայն, հետագայում ծանոթանալով իրերի դրությունը, 1830 թվ. մարտին գրած մի նամակում ստիպված էր խորհուրդ տալ Ներսեսին, որ նա զգուշանա Պասկևիչից (թղթ. 106, գործ 14, վավ. 145):

Արխիվում պահպանված է և ուղղակի մինիստր Չերնիշովի գաղտնի գրությունը Պասկևիչին (պատճեն): Այս նամակը ուշադրության արժանի է որպես ցարական գաղութային քաղաքականությունը մերկացնող մի փաստաթուղթ: Հաշվի առնելով Ներսեսի բողոքները, թագավորը Չերնիշովի միջոցով հանձնարարում է Կովկասի իր փոխանորդին՝ առեւես հարգանքով վերաբերվել հայ կաթողիկոսի և հոգևորականության այն ներկայացուցիչների հետ, որոնք կարող են ազդեցություն ունենալ ժողովրդի վրա, և, հետևապես, դրա-

նով կանխել Ռուսաստանին նոր միացված ժողովրդի հուզումների ամեն մի հնարավորություն<sup>1</sup>:

Ներսեսի նամակները մեծ արժեք են ստանում նաև աթոռի վիճակի և պարսից բռնակալության գործողությունները պատկերելու առումով: Նա 1814 թ. գրում է, որ կաթողիկոսի վիճակը շատ ծանր է, սարդարը և Մահմեդ խանը հարկեր են պահանջում, և այլն: 1817 թ. դայրույթն է հայտնում այն բանի համար, որ պարսից բռնակալները դավթել են էջմիածնի կառքին լծվող 2400 ուսրլով ձեռք բերված երկու լավագույն ձիերը: Մի այլ նամակում խոսում է իր և պարսից իշխանավորների սրված փոխհարաբերությունների, նրանց ազահության, կաթողիկոսից դավթած քարիքների և այն մասին, որ ինքը ևս պարտավորվել է նրանց տալ մի շահ, մի դիտակ և ժամացույց: 1820 թ. բողոքում է Հասան խանի ապօրինի գործողություններից, որը միաբաններից հսկայական գումարներ է պահանջում: 1821 թ. խոսում է Աքքաս Միրզայի ասպատակությունների մասին Բայազետի շրջանում և խորհրդածում վերջին 10 տարվա ընթացքում Բայազետի, Վանի, Ղարսի շրջակայքում բնակվող 40.000 հայ ընտանիքների կորստյան մասին: 1822 թ. անդրադառնում է թուրքական և պարսից զորքերի շարժմանը (Ղարսի, Կարինի, Բայազետի և այլ ուղղություններով), խոսում է ոտքի տակ կորած հայ ժողովրդի և նրանց մասին, ովքեր փախել են Շիրակ՝ ուսական տիրապետության տակ անցնելու նպատակով: Այս շարքը տարիների հետ մեծանում է. հետագայում ներսեսը բողոքում է պարսիկ Միրզա Ջաբրարի դաժանություններից, արքայորդի Աքքաս Միրզայի հարկային բաղաբականությունից, և այլն, և այլն: 1824 թ. օգոստոսին նա պատմում է սարդարի և պարսից արքունիքի հերթական մի նենգությունը, այն, թե ինչպես էջմիածնի միաբանության անունից մի դիմում են կեղծել և միաբաններին ստորագրել տվել, որով ուսներին և վրաստանի կուսակալին համարում են էջմիածնի թշնամին (թղթ. 103, գործ 9, վավ. 62):

1839 թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին գրած բազմաթիվ նամակներում ներսեսը բողոքում է Բեսարաբիայի շինովնիկության ոտնձգություններից և տեղի բյուրոկրատական ապարատի ապօրինի գործողություններից (թղթ. 107, գործ 44, վավ. 328, 330, 332, 341 և այլն):

Ն. Աշտարակեցին իր նամակներում շատ մեծ տեղ է հատկացրել Թիֆլիսում կառուցվող դպրոցի շինարարության, դրա համար պահանջվող ծախսերի, ուսումնական ծրագրերի, տպարանի հաստատության և դպրոցի հետ կապված բազմազան հարցերին (թղթ. 105, գործ 13, վավ. 170, 172, 173, 175, 189, 191, 192, 158, 159, 165, 202): Հետաքրքրություն են ներկայացնում և այն փաստաթղթերը, որտեղ ներսեսը խոսում է էջմիածնում սկսած իր շինարարական աշխատանքների մասին (Լճակի, դպրոցի, անտառատնկման և այլն): Լազարյանների արխիվում պահպանվում են և ներսես կաթողիկոսի ու

<sup>1</sup> Հետաքրքրական է, որ Ա. Երիցյանը «Կովկասի հայք» աշխատության մեջ հանգամանորեն շարադրելով ներսեսին Բեսարաբիա ուղարկելու հետ կապված իրադարձությունները, նախ չի անդրադառնում Լազարյանների և ներսեսի գրագրություններին, այնուհետև, հրապարակելով այդ հարցի հետ կապված բազմաթիվ գրություններ ու նամակներ, նա լուր հիշատակում է Զեքեիչովի նամակը, առանց այն հրապարակելու:

Մեր պրպտումները ցույց տվեցին, որ այդ նամակը ժամանակին, հավանաբար քաղաքական նկատառումներով, չի զեռեղվել և «ԱԿՏԻ» ժողովածուում և, հետևապես, չի գտնվել Երեջյանի տրամադրության տակ:

Մատթեոս արքեպիսկոպոսի գրագրությունները ներքին գործոց մինիստրի հետ: Բանն այն էր, որ Լանսկոյին գրած նամակում Մատթեոս արքեպիսկոպոսը բողոքում էր իր թեմի եկեղեցական գործերի անկանոնությունից, այն բանից, որ համապատասխան գումարները բարեգործական նպատակով չեն օգտագործվում, եկեղեցիների շինարարություններն ու վերանորոգումները ձգձգվում են, ինքը զուրկ է նյութական միջոցներից, իսկ կաթողիկոսից օժանդակություն չի ստանում, և այլն: Պատասխան նամակում Լանսկոյը հայտնում է, որ անթույլատրելի է եկեղեցական գումարները կենտրոնացնել մեկի մոտ, որը հաշիվ չի ներկայացնում: Լանսկոյն առաջնորդին լիակատար իրավունք է տալիս զբաղվելու այդ հարցով և գործը վերցնելու Խալիբովից. նա միաժամանակ այս հարցի վրա է հրավիրում կաթողիկոսի և Բեսարաբիայի նահանգապետի ուշադրությունը: Հայտնի է, որ ներսեսն ընդդիմանում է այդ որոշմանը. արխիվում պահպանվում է ներսեսի նամակը Լանսկոյին, որտեղ կաթողիկոսը վիրավորական էր համարում այն, որ առանց իրեն դիմելու մինիստրն շտապել է Մատթեոսի հրահրումով Խալիբովից հաշվետվություն պահանջելու վճիռ արձակել<sup>1</sup>:

Այս օրերին ներքին գործոց մինիստրը, հավանաբար, ոչ առանց Լազարյանների գիտություն, որոշում է օգտվելով Մատթեոսի մայրաքաղաքում գտնվելու առիթից, ներսեսի փոխարեն նրան հրավիրել թագավորի թագադրության հանդեսին: Ներսեսը խիստ զայրացած այդ վճռից՝ մի նամակով փորձում է պաշտպանել իր իրավունքները (թղթ. 112, գործ 64, վավ. 37, 51—53, 55):

Արխիվում եղած բազմաթիվ նյութեր լուսաբանում են Լազարյան ճեմարանի ուսուցիչ Միքայել Սալլանթյանի կյանքի վերջին շրջանի պատմությունը: Մի շարք վավերագրերից կարելի է պատկերացում կազմել Սալլանթյան-մանկավարժի գործունեության մասին և ծանոթանալ նրա մանկավարժական հայացքներին (թղթ. 103, գործ 5, վավ. 190—192, 209, 233, 236, 252, 274): Նվիրված լինելով ճեմարանի գործին և ամբողջ եռանդը գործադրելով ուսման դրվածքը քարելավելու նպատակին, Սալլանթյանը, սակայն, գտնվել է նյութական անապահովության մեջ և բողոքել իր վիճակից: Լազարյաններին ուղղած նամակներում նա զանգատվում է այն բանից, որ սենյակը խոնավ է, աշխատավարձը չի բավականացնում հոգալու ամենաանհրաժեշտ կարիքները, վառելիք գնելու հնարավորություն չունի, և այլն: Նյութական դրկանքներին միանում են և բարոյական դրկանքները: Սալլանթյանը բողոքում է և՛ էմիաժնի միաբանության, և՛ Հովհաննես կաթողիկոսի թշնամական վերաբերմունքից, և՛ այն բանից, որ իր վաստակը պատշաճ գնահատական չի ստացել: Ի վերջո, ազատվելու համար էջմիաժնի հալածանքներից և նյութական դրժվարություններից, Սալլանթյանը վճռում է մեկնել Պոլիս և այս հարցով դիմում է Լազարյանների օգնությանը: Վերջիններս քանակցում են կաթողիկոսի հետ և հարցնում նրա կարծիքը: Ելնելով այն բանից, որ Սալլանթյանը

<sup>1</sup> Ի դեպ, արխիվում պահպանվում է մի հետաքրքրական փաստաթուղթ, որը բացահայտում է Խալիբյան-քաղաքացու վարքագիծը: Վերջինիս աներձագ, Լազարյան ճեմարանի նախկին շրջանավարտ Դավիթ Օդարաշյանը մի դիմումով բողոքում է իրենց «անօրեն և ամբարշիտ» փեսա Հ. Խալուսովից, որը «չունելով զերկիւղ յԱստուծոյ և ոչ զամօթ ի մարդկանէ», իրենց հոր մահվանից հետո կողոպտել է իրենց: (Տե՛ս Լազարյանների արխիվ, թղթ. 104, գործ 7, վավ. 136):

ժամանակին երգվել էր հավատարմորեն ծառայել աթոռին, Հովհաննես կաթողիկոսն այդ փաստաթղթի ուժով պահանջում է նրան հետ ուղարկել էջմիածին և ամեն կերպ արգելք հանդիսանալ նրա Պոլիս մեկնելուն: Միայն 1843 թ. ներսես կաթողիկոսի օժանդակությամբ նրան հաջողվում է մեկնել հայրենիք<sup>1</sup>:

Նյութական անապահովության մեջ է գտնվել և Լազարյան ճեմարանի մյուս ուսուցիչ Հարություն Ալամդարյանը: 1816 թվականին Հովհաննես արքեպիսկոպոսին ուղղած մի նամակում խոսելով հոգաբարձու Ռաֆայելի, նրա գործակիցների Հար. Բուղդանիչի և Մատվեյ Պավլիչի դավերի մասին (որի պատճառով Խ. Լազարյանն իրեն ազատել էր աշխատանքից, ապա վերահասու լինելով ճշմարտությանը՝ վերականգնել), բողոքում է այն բանից, որ կրկին առանց ոռճիկի է աշխատում: Խնդրում է միջնորդել, որպեսզի գոնե 500 ռ. ոռճիկ ստանա:

Հավանաբար Ալամդարյանը իր նյութական անապահովության հարցով մի անգամ չէ, որ դիմել էր Հովհաննես արքեպիսկոպոսին, որովհետև վերջինս 1821 թվ. այդ նամակների բովանդակությունը հաղորդելով Լազարյաններին, կից ներկայացնում է և նրա ծախսերի և եկամուտի հաշիվները՝ խնդրելով բավարարել նրա պահանջները:

Ալամդարյանը նույնպես բարոյական ծանր վիճակ է ապրել: 1816 թ. գգալով իր շուրջն ստեղծված անբարյացակամության մթնոլորտը, նա ստիպված է լինում մի նամակով խնդրել Հովակիմ Լազարյանին, որ վերջինս ուշադրություն շղարձնի իր մասին ստեղծված հերյուրանքներին (թղթ. 105, գործ 11, վավ. 7, 13): Այդ օրերին հավանաբար Լազարյաններից բողոքի նամակ ստանալով, Հովհաննես առաջնորդը շտապում է հանդիմանանքով լի մի նամակ ուղարկել Ալամդարյանին, նրան դիմելով ոչ իբրև սիրված որդու, այլ իբրև անխրատ որդու և ապերախտ ծառայի: Նա Ալամդարյանին հորդորում է թողնել իր հոռի վարքը, ճանաչել Լազարյանների շնորհը և ազնվորեն կատարել բոլոր պարտավորությունները (թղթ. 103, գործ 9, վավ. 219):

Հետաքրքրական է, որ առաջնորդն այնուամենայնիվ Ալամդարյանի նամակի պատճենը ևս ուղարկում է Հ. Լազարյանին, նրա ուշադրությունը հրավիրում Ալամդարյանի պատճառարանությունների վրա և խորհուրդ տալիս՝ խիստ լինել Ալամդարյանի հետ, բայց շնորհը շպակասեցնել, որ նա չհուսահատվի: Հետագայում ևս, երբ 1824 թ. կնոջ մահվանից հետո ծառայությունից ազատվելով Ալամդարյանը փոխադրվում է Աստրախան, առաջնորդը Լազարյաններին իրազեկ է դարձնում նրա հուսահատական վիճակին (թղթ. 105, գործ 13, վավ. 120, 122): Չնայած այդ ամենին, Լազարյանները, սակայն, շարունակել են հարգանքով արտահայտվել նրա մասին և միշտ բարձր են գնահատել նրա մանկավարժական տաղանդը: Այսպես, 21/12—1824 թվականին գրած մի նամակում Հովակիմ Լազարյանը ներսեսից խնդրում է ուշադիր լինել Ալամդարյանի նկատմամբ (որին համարում է «այր պիտանի և հմուտ մերոյ և ուսաց լեզուի») և նրան աշխատանք հանձնարարել նորաբաց ներսիսյան ուսումնարանում:

<sup>1</sup> Այս հարցի մասին ինչպես Ծ. Գեղամյանը, այնպես էլ Ծ. Շահազիզը, այն կարծիքն են հայտնում, թե Սալլանթյանը 1843 թ. իբր «հակառակ իր ցանկության, արքունի ծախքով ուղարկվել է իր հայրենիքը՝ Պոլիս», (տե՛ս Ծ. Շահազիզ «Միբայել վարդապետ Սալլանթյան», «էջմիածին», 1946 թ., № 1—2, էջ 47):

104 թղթապանակի № 8 և 105 թղթապանակի № 11 գործերում զետեղված Ալամդարյանի բազմաթիվ նամակները լույս են ափոում Ճեմարանի շրջանի նրա մանկավարժական, հրատարակչական և գրական գործունեության հարցերի վրա:

Լազարյանների արխիվի 100-րդ թղթապանակի գործում (առանց համարի) և 108 թղթապանակի № 60 գործում զետեղված են Լազարյան Ճեմարանի պրոֆեսոր Մկրտիչ էմինի մանկավարժական և գիտական գործունեությունը լուսաբանող արժեքավոր մի շարք նյութեր, կոնդակներ և նամակներ: Այսպես, ներսես և Մատթեոս կաթողիկոսներն իրենց կոնդակներով շնորհակալություն են հայտնում նրա գիտական գործունեության համար, հրատարակության նպատակով նրան են ուղարկում Ղ. Փարպեցու Պատմությունը, «Դաշանց թուղթը», և այլն: Ստեփաննոս Նազարյանը (թղթ. 108, գործ 60, վավ. 20—22), Խ. Աբովյանը (վավ. 25—26), Մ. Հիսարյանը, Գ. Այվազովսկին, պրոֆ. Պետերմանը և այլ գործիչներ նրան գրած նամակներում շոշափում են ժամանակի համար մեծ կարևորություն ներկայացնող բազմաթիվ հարցեր: Քիչնեից Սարգիս վարդապետը խորհրդածելով ներկա դարի հոգևորականության տգիտության, ծուլության և անհոգության մասին, դրվատում է էմինի աշխատասիրությունն ու ջանքերը (վավ. 35):

Լազարյանները լայն գրագրություն են ունեցել Եվրոպական մի շարք գիտնականների, գերազանցապես հայագետներ Լանգլուայի, Դյուլորիեի, Պետերմանի հետ: Այդ նամակներում արծարծվում են վերոհիշյալ գիտնականների ընթացիկ աշխատանքների և նրանց հետագա անելիքների հետ կապված հարցեր: Այսպես, Պետերմանը Խ. Լազարյանին է ուղարկում իր «Հայոց լեզվի քերականությունը» աշխատությունը, Լանգլուան՝ ուղարկում է փոքր Հայաստանում կատարած իր ճանապարհորդության տեղեկագիրը: Հայագետ Վասն դը Ֆլորիվալը, որը թարգմանել էր Խորենացու պատմությունը, կազմել հայագետների ցուցակը և հրատարակել Հայաստանի քարտեզը, Լազարյանների միջնորդությամբ իր գիրքը նվիրում է ռուսաց կայսերը:

Շահան Զրպետը ոչ միայն նամակագրական կապ ուներ Լազարյանների հետ, այլ նրանց միջոցով կապ էր պահպանում կաթողիկոսի և Գևորգ Արժրունու հետ:

Լազարյանները երկար տարիներ առանձնապես սերտ բարեկամական կապ են պահպանել Դյուլորիեի հետ: Նրա միջոցով Լազարյաններն իրենց հրատարակություններն ուղարկում էին Եվրոպայի քոլոր նշանավոր գրադարանները և գիտական հաստատությունները: Դյուլորիեն Լազարյանների միջոցով զանազան գիտական հաստատությունների համար հայագիտական գրականություն էր ստանում Ռուսաստանից: Նա միաժամանակ Լազարյաններին խոստանում է ուղարկել Փարիզի հայկական ձեռագրերի ցուցակը և Լանգլուայի ուղարկած տվյալները՝ Սիս քաղաքի պատրիարքարանի վանքում պահպանվող հայկական ձեռագրերի մասին (թղթ. 127, գործ 61, վավ. 9): Դյուլորիեն Լազարյաններին խորհուրդ է տալիս Փարիզում հիմնել մի գրադարան՝ «Քրիստոնեական արևելք» կոչումով, որը կպաշտպաներ հայերի շահերը (թղթ. 104, գործ առանց համարի, վավ. 49):

1860-ական թվականներին նա հայտնում է, որ տպագրել է տվել «Արևելյան լեզուների Լազարյան ճեմարան» գիրքը, որին կցվել է իր գրած մահախո-

սականը, Հովհաննես կազարյանի մասին: Հավանաբար կազարյաններն զբաղվել են Դյուլորիեին ուսական ակադեմիայի անդամ ընտրելու գործով, որի համար նա շնորհակալություն է հայտնում իր բարեկամներից:

1854 թվականին կազարյանները նրա հետ բանակցում են՝ Մխիթարյաններից կազարյան ճեմարանի տպարանի համար տառեր ձեռք բերելու գործով:

Ընթացիկ այս հարցերից բացի, Դյուլորիեի և կազարյանների գրագրությունների մեջ զգալի տեղ է նվիրվում կարապետ վարդապետ Շահնազարյանի վարքագծի հարցին: Վերջինս վստահություն չէր ներշնչում Դյուլորիեին, ուստի երբ նա իմանում է, որ կազարյանները Փարիզի եկեղեցու շինության նպատակով 20.000 ֆրանկ գումարի փոխադրության գործը նրան են վստահել, շտապում է նախազգուշացնել կազարյաններին: Հետագա նամակներում նա խոսում է իր ձեռնարկած միջոցառումների մասին՝ այդ գումարը նրանից վերցնելու և քանկ հանձնելու ուղղությամբ (թղթ. 115, գործ 101, վավ. 70—76, 85—87, 89—91, 100): Այս առումով ուշադրության արժանի է Դյուլորիեի մի նամակը, որ նա 1855 թվականին ուղղում է Կ. Պոլսի հայոց պատրիարքին: Խոսելով այն մասին, որ Փարիզի հայերին հովվելու նպատակով այնտեղ ուղարկված Կ. Շահնազարյանը կովասեր է, վարում է մոլի և անառակ կյանք, խնդրում է հայոց ազգի պատիվը փրկելու նպատակով հետ կանչել նրան (թղթ. 115, գործ 101, վավ. 66):

Այս կամ այն առիթով կազարյաններին նամակներ են գրել և բանաստեղծություններ ձոնել Ստ. Նազարյանը և Սմբատ Շահազիզը (թղթ. 108, գործ 96, վավ. 41, 42, թղթ. 106, գործ 35, վավ. 10):

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում Գաբրիել քահանա Պատկանյանի և կազարյանների, Գաբրիել քահանայի և Ներսեսի միջև ստեղծված նամակագրության պատմությունը, որը կապվում է կազարյան ճեմարանում ուսուցչություն ստանձնելու Պատկանյանի ցանկության հետ: Մեր բանասիրությանը հայտնի է, որ 1830-ական թվականների վերջին Գաբրիել Պատկանյանը մի դիմումով Խաչատուր և Հովհաննես կազարյաններից խնդրում է իրեն հնարավորություն տալ աշխատելու մայրաքաղաքի հայկական եկեղեցիներում և կազարյան ճեմարանում: Երբ կազարյանները հարցնում են Ներսեսի կարծիքը, վերջինս չի երաշխավորում Պատկանյանի թեկնածությունը և խորհուրդ է տալիս մերժել նրան: Խաչատուր կազարյանը Ներսեսից շնորհակալություն է հայտնում այդ խորհրդի համար և հայտնում, որ այդպես էլ կվարվեն:

Կազարյանների արխիվում պահպանված մի շատ կարևոր վավերագրից երևում է, որ հետագայում Պատկանյանը շնրածարվելով ճեմարանում ուսուցչություն ստանձնելու մտքից, ստիպված է լինում մի քանի նամակով դիմել և իրեն, Ներսես Աշտարակեցուն: Վավերագրից երևում է, նաև, որ Պատկանյանը գտնվել է շատ ծանր վիճակում, և շնայած տարիներ անընդհատ օգնություն է խնդրել, բայց «ոչ լսելի լինի ձայն իմ՝ և քաջ հասու եղէ, զի փակեալ են ինձ ամենայն դրունք յաջողութեան և յառաջադիմութեան» և ինքը դատապարտված է հավերժական անվանարեկության ու հալածանքի:

Ի վերջո, 1843 թ. փետրվարի 18-ին Ներսեսը մի ծավալուն նամակով Պատկանյանին բացատրում է նրա նկատմամբ ունեցած իր անբարյացակամության պատճառները: Այդ նամակում արժարժված հարցերը խոսում են այն մասին, որ Ներսեսի և Պատկանյանի միջև ստեղծված սառնությունը շատ



խոր հասարակական-քաղաքական արձատներ ուներ, որոնց լուսաբանումը կարոտ է լուրջ ուսումնասիրության: Աշտարակեցին նրա դժբախտության պատճառ համարում է իրեն՝ Պատկանյանին, և նրան հանդիմանում է Հարություն վարդապետ Ալամդարյանի խորհրդով Հարություն Խուզարաշյանին հալածելու, Նախիջևանի քաղաքազլխի ընտրության առիթով Վորոնցովի հետ կապվելու («զի արգելցէ հաստատութիւն»), իբրև մանկավարժ գիտելիքներ շունենալու և բազմաթիվ այլ մեղքերի համար:

Լազարյանների արխիվում պահպանվում է Պատկանյանին ուղղված այս նամակի պատճենը, որը Ներսեսը ժամանակին ուղարկել էր և Լազարյաններին (Թղթ. 107, գործ 44, վավ. 137):

Լազարյանները գրագրություն են ունեցել և բազմաթիվ այլ անձանց հետ, որոնց հետ կապված էին առևտրական գործերով: Գրանցից են՝ Նախիջևանի բնակիչներ Իվան Արրահամովը, Խարախուշովը, Աստրախանի բնակիչներ Ն. Ազարբայանը, Աղ. Լազրովը, Մոսկվայի եկեղեցու երեսփոխան Գր. Մորոզովը, Լազարյանների գործակատարներ Ս. Սմիռնովը, Գր. Քալանթարովը (Մոսկվա) և շատ ուրիշներ:

Այն գրագրությունների մեջ մեծ հետաքրքրություն են ներկայացնում Նախիջևանի բնակիչ, պաշտոնաթող գնդապետ և կավալեր Իվան Արրահամյանի նամակները, որոնք շատ արժեքավոր նյութեր են պարունակում՝ կապված ժամանակաշրջանի, Նախիջևանի հասարակության, հոգևորականության, քաղաքական անցքերի, մթերքների և ապրանքների գների, և այլ հարցերի հետ: Արրահամյանը Լազարյանների հետ կապված էր երկաթի առևտրի գործով: Երկու ընտանիքների միջև հաստատված բարեկամությունն այնքան մտերմական էր, որ Իվան Արրահամյանը ցանկանում էր նույնիսկ խնամիական կապեր հաստատել Հովակիմ Լազարյանի հետ:

Արրահամյանը կապված էր իր քաղաքի առօրյայի հետ, երբ 1810 թ. Նախիջևանի հասարակությունը խնդրում է Հովակիմ Լազարյանի միջնորդությունը՝ Գրիգոր վարդապետին Մոլդավիայի առաջնորդ հաստատելու համար, Իվան Արրահամյանն իր կողմից ևս միջնորդում է՝ հետևյալ հետաքրքրական դատողություններն անելով ժամանակի էջմիածնի հոգևորականության մասին. «Թե ըստպատիցեմկ սը էջմիացնու կալո արաջնորդի հայտնի է ցեզ և մեզ ոչ բուստաց վարկը կիտեն ոչ լեզվաց տեղեակ են. ոչ տեղին քաղաքավարությունը միայն վարթապետ լինեն: Մեկ պարտիկ նորա լինիլ առաջնորդ. մեկ նորա պարտիկ ճանապարհն ցուցանել նա միայն մեզ օգնելով մեզանից բող հավակե» (Թղթ. 102, գործ 6, վավ. 111):

Ընդհանրապես հոգևորականության տգիտության և շահամոլության մասին է խոսվում 1803 թ. գրված մի այլ նամակում, որտեղ ի դեպ, գրում է. «կիտիմ տեղիս քահանայից գիրերին երայ տեսանեկ պիտի ցիցաղեկ և իրավունկ ունեք: Ես առաշական գիտենալով մեր քահանայից կոնհիկ կացությունըն վասն որու հանգուցյալ մեր առաջնորդի հետ միշտ խոսվություն մեր այն էր, հընտու բողն և եկեղեցեաց բողն ինքն անուշ աներ և մեզ միշտ խաբեր և նոցա էթող կորացեալ և ի մեջ մեր միամիտ հասարակության որն մեզ սիրահարյալ էին, պարի հիշատակ էթող խոսվություն, անմիարանություն» (Թղթ. 102, գործ 6, վավ. 8):

Չնայած դրան, նա նախանձախնդիր էր հայոց եկեղեցու և իր հայրենի

քաղաքի վիճակի բարվոքմանը և նամակներում բազմիցս մտահոգություն հայտնելով էջմիածնի վիճակի մասին, Լազարյաններին խնդրում է օգնել էջմիածնի առաջնորդին: Իվան Աբրահամյանը ժամանակի առաջավոր մարդկանցից մեկն էր, որն անվերապահ ուսական օրիննտացիա ուներ և այդ մասին արտահայտվում էր իր նամակներում: Շատ հետաքրքրական է այդ կապակցությամբ արած նրա մի հայտարարությունը: Նկարագրելով իր զինվորական որդու ճանապարհորդությունը զանազան երկրներ (Վենետիկ, Վիեննա, Պոլիս, Տրիեստ, Մալթա և այլն), նա գրում է. «Գրե ինչ իմ սիրելի որդին, ասկասեր լինելով ամենայն տեղ հետևել է հայոց ասկըն տեսանել և նոցա կացությանցն տեղեկանալ, եպսոբս զրե և ասե հայր իմ ի տերությունըն սուրբ ընուսաց որ կան ընդ հովանավորության կայսերեն մերն մի անգամ ոտեն և հազար անբամ բարբ տան աստվածայ մեր հայոց ասկըն որ կան, ասե կարող շեմ գրով պատմել — որպիսի մեր ողորմելի ասկըն կան ցրրվեալ և ի մեշ տարապանաց են» (թղթ. 102, գործ 6, վավ. 28):

Առևտրական հետաքրքրական տեղեկություններ են պարունակում և Խարխաշովի ու այլոց նամակները: Ի դեպ, Լազարյանների արխիվում պահպանվում է 1625—1809 թվականներն ընդգրկող ժամանակի հայ գործիչների և վաճառականների նամակների և դիմումների մի հավաքածու՝ կապված նրանց առևտրական գործունեության, Ռուսաստանից ստանալիք արտոնությունների, թագավորներին ընծաներ մատուցելու և այլ հարցերի հետ: Նյութերի այս հավաքածուն քաղվածաբար վերցված է Մոսկվայի արտաքին գործերի կոլեգիայի արխիվի գործերից (թղթ. 109, գործ 16, վավ. 1):

Առևտրական տեղեկությունների անգնահատելի աղբյուր է հանդիսանում Լազարյանների տոհմապետ վաճառական Նազարեթի 3 որդիների հաշվեմատյանը («Ռուզնամեն»), որտեղ ամփոփված են Հարությունի, Աղաղարի և Մանուկի առևտրական տան հլքի և մուտքի հաշիվները (1741—1750 թթ.): Վերոհիշյալ մատյանում շարադրված են նրանց հլքի և մուտքի հաշիվները, բազմաթիվ անձանց անուններ, դնած և վաճառելի ապրանքների գները, ապրանքների տեսակները: Ըստ տարեթվերի նշված են այն քաղաքները, որտեղ կենտրոնացված է եղել առևտրական տան գործունեությունը (Սպահան, Ռեշտ, Թեհրան, Գիլան, Խոյ, Ղազվին, Հաշտարխան, Մոսկվա, Գերբենտ, Պետերբուրգ և այլն):



Անցյալ դարի առաջին տասնամյակի վերջին Ռուսաստանում բնակություն հաստատած հայերն սկսում են նեղվել տնտեսապես: Յարական կառավարությունը մեկը մյուսի ետևից հետ է վերցնում այն արտոնությունները, որոնք Եկատերինա, և ապա Պավել թագավորների կողմից շնորհվել էին նրանց:

Այդ արտոնությունները պահպանելու հույսով, սկսած 1810 թվականից, հայաքնակ քաղաքների հասարակությունը դիմում է Լազարյանների օգնությանը: Վերջիններս արձագանքում էին այդ դիմումներին: Տասնամյակներ շարունակ այդ գործով նրանք միջնորդել են համապատասխան միջիատրների մոտ և իրենց խորհուրդներով օժանդակել հայ քաղաքների կողմից մայրաքաղաք ուղարկված դեպուտատներին: Հաճախ նույնիսկ Լազարյանները դիմումի պատրաստ ձևեր են ուղարկել կաթողիկոսին, որպեսզի վերջինս դրանք ընդօ-

րինակելով՝ ուղարկի թագավորին, կամ ում հարկն է: Հայերի արտոնությունները պահպանելու գործը շահելու համար նրանք օգտագործել են պալատական շրջաններում և սենատորների մեջ ունեցած իրենց լայն կապերը: Լավ գիտակցելով իրենց կատարածի մեծ նշանակությունը, կաղարջանների փեսա Իվան Հայրապետովը մի նամակում գրում է, թե Աստրախանցիների գործով գրադվելով իրենք ավելի աստվածահաճ գործ կատարած կլինեն, քան եկեղեցիներ կառուցելով (թղթ. 102, գործ 17, վավ. 204):

Այս հարցի շուրջը ծավալված գրագրությունները զգալի տեղ են գրավում արխիվում և առատ նյութ կարող են տալ Ռուսաստանի հայ գաղութների պատմությունն ուսումնասիրողներին:

Գրագրությունները տարվել են մի կողմից՝ Նախիջևան, Աստրախան, Ղզլար, Մոզդոկ, Գրիգորուպոլիս քաղաքների ներկայացուցիչների, մյուս կողմից՝ կաղարջանների միջև:

Այսպես, Նախիջևան քաղաքի առևտրականները խնդրում են օժանդակել՝ վերականգնելու համար օղու առևտրի իրենց նախկին իրավունքները: Ուրիշ նամակներով խնդրում են օգնել ազատվելու համար կամուրջների համար սահմանված նոր հարկից, դատարանների ծախսերի համար պահանջվող հարկերից: 1813 թ. խնդրում են օգնել պահպանելու Գոնի ջրերում ձկնորսությունը գրադվելու իրենց իրավունքը և այլն:

Ղզլարի մերձակա գյուղերի բնակիչները դիմում են ազատվելու համար դինվորագրության օրենքից: Ավելի ուշ, 40-ական թվականներին, Ղզլարի բնակիչները դիմել են և՛ կաթողիկոսի, և՛ կաղարջանների օգնությանը, որ հասարակությունը նախկինի նման հարկ վճարի ըստ ծխի, և ոչ ըստ շնչի (թղթ. 111, գործ 36, վավ. 132—135, 148, 149, 152):

Աստրախանի հասարակությունը ներքին գործոց մինիստր Բլուզովին գրած դիմումով խնդրում էր օգնել ծայրահեղ նեղության մեջ գտնվող հայ ժողովրդին (թղթ. 111, գործ 36, վավ. 92): Խաշատուր կաղարջանին ուղղած մի նամակում Հովհաննես արքեպիսկոպոսը բողոքում էր Աստրախանի քաղաքապետից, որը նեղում էր ժողովրդին: Նա միաժամանակ զանգատվում է և Ղզլարի քաղաքային կառավարիչներից, որոնք իրենց հափշտակություններով տղրուկի պես ծծում են Ղզլարի և գյուղական ժողովրդի արյունը:

1817 թվականին աստրախանցիք մի դիմում ուղարկելով կաղարջաններին՝ խնդրում են այն խմբագրել և ուղարկել կառավարող սենատին (այս դիմումով նրանք բողոքում էին տեղի «գլխավորների» պատճառած անտանելի նեղություններից (թղթ. 105, գործ 11, վավ. 85, 87):

Գրիգորուպոլիս քաղաքի հասարակությունը կաղարջանների օժանդակություն էր հայցում՝ քաղաքից վտարել տալու համար ժողովրդի գլխին պատուհաս դարձած Մալեխին, քարտուղար Ոյելսկուն, քաղաքագլուխ Օսեփովին: Միաժամանակ նրանց ուշադրությունը հրավիրում են իրենց արտոնությունները պահպանելու հարցի վրա (թղթ. 111, գործ 36, վավ. 112):

1841 թ. Մոզդոկի հայ հասարակությունը դիմում է կաղարջաններին, խնդրելով օժանդակել ղեպուտատ Ստ. Աղաբեկովին, որը դիմում է տանում կայսեր մատուցելու: Մոզդոկի վրաց հասարակությունը խնդրում է օժանդակել իրենց հավատարմատար Աբր. Սաղվարեխիձովին, որն աղերսաթուղթ է տանում կաղարջաններին:

Մուղավիայի հայերը բողոքում են արտոնությունների սահմանափակումներից (նրանց արգելվում էր կալվածքներ գնել, պաշտոնավարել, և այլն), ինչպես նաև Լազարյանը Վալախիայի և Մուղավիայի իշխանության դիվանապետ գրաֆ Ֆ. Պոլենին գրած նամակում բողոք է հայտնում հայ բնակիչների նկատմամբ թույլ տրվող ոտնձգությունների և հոգևորականության իրավունքները սահմանափակելու դեմ (մի բան, որ ինքը նկատել էր իր ճանապարհորդության ընթացքում): (Թղթ. 106, գործ 51, վավ. 162—164):

Այս բոլոր հարցերի հետ միաժամանակ հայարնակ քաղաքների վաճառականներին շափազանց մտահոգել է վաճառականներին տրված արտոնության վերացման հարցը: Այս խնդրի շուրջը տասնյակ տարիներ անընդհատ նրանք գրագրություններ են վարել Լազարյանների հետ:

Լազարյանները սիրով ընդառաջելով հանդերձ հայերի բոլոր դիմումներին, իրենց գործունեության ընթացքում շարունակ ջանացել են մեղմել նրանց բողոքների սրությունը և համապատասխան խմբագրություններից հետո միայն ընթացք են տվել նրանց դիմումներին:

Լազարյանների արխիվի բազմաթիվ վավերագրեր լուսարանում են նրանց կատարած բարեգործությունների հետ կապված հարցերը: Պահպանվել են աշխարհի տարրեր ծայրերից ստացված բազմաթիվ դիմումներ և աղերսագրեր, որոնք պատկերացում են տալիս Լազարյանների գործունեության մասշտաբների մասին: Այսպես, Մոզդոկի հասարակությունը 8000 ռ. է խնդրում՝ եկեղեցու շինությունն ավարտելու համար (Թղթ. 104, գործ 7, վավ. 79—80): Մանվել վարդապետը խնդրում է ստանձնել Ղրիմի ս. Խաչ վանքի զանգակատան կառուցման գործը (Թղթ. 105, գործ 11, վավ. 57): Ղզլարի հասարակությունը դրամական օգնություն և 1000 փութ երկաթ է խնդրում Լուսավորչի եկեղեցու շինությունն ավարտելու համար: Մուշի ս. Կարապետ վանքի միաբան Պետրոս վարդապետը, խոսելով ալլազգիների պատճառած տառապանքների և վանքի պարտքերի մասին, օժանդակություն է խնդրում: Կուբանի հայկական գյուղաքաղաքի բնակիչները նպաստ են խնդրում եկեղեցի և աղբատների համար տներ կառուցելու նպատակով (Թղթ. 107, գործ 44, վավ. 18): Երուսաղեմի պատրիարքը խնդրում է օգնել՝ տեղի հայոց ուխտատեղին հույների ոտնձգություններից պահպանելու գործում: Այլ նամակներում նա նպաստ է խնդրում աթոռի համար, որը ենթարկվում էր «բռնավոր ազգաց» անողորմ հալածանքներին և տառապում նրանց հարկահանական դաժան քաղաքականությունից: Օժանդակություն են խնդրում Լիմ և Կոուց անապատների առաջնորդները, որոնք բողոքում են ծանր զրկանքներից և պարտքերից: Նպաստ են խնդրում Ջուղայի եկեղեցու վերանորոգման, Իսմայիլի եկեղեցու վերանորոգման, ապա և նոր եկեղեցի կառուցելու նպատակներով: Լազարյանները Ղզլարի Ս. Լուսավորչի եկեղեցու շինության համար տրամադրում են 1000 ռ., Փարիզի եկեղեցու կառուցման նպատակով՝ 20.000 ֆրանկ, ներսիսյան դպրոցի շինության համար՝ 5000 ռ., և այլն, և այլն:

Լազարյանների օգնությունն են խնդրել և բազմաթիվ անհատներ՝ բազմապիսի գործերով:

Չի կարելի ասել, թե Լազարյանների ազգասիրական, կամ բարեգործական գործունեությունն անպատասխան էր մնում: Արխիվի վավերագրերի մի մասը վկայում է, որ հայ հասարակությունը փորձել է հատուցել նրանց բար-

յացակամության և ջանքերի համար: Թուսաստանի թեմի առաջնորդների նամակներում բազմաթիվ հիշատակություններ կան այն մասին, որ Լազարյանների համար այս կամ այն քաղաքի հասարակության անունից ուղարկում են մրգեղեն, խաղող, ձուկ և այլն: Հետաքրքրական է, որ այդ ընծաները հաճախ ուղարկում էին ոչ միայն Լազարյանների, այլև ուսական բարձրաստիճան անձանց համար: Ընծաներ ուղարկում էին և առանձին վաճառականներ: Ինչ վերաբերում է հայաբնակ քաղաքների գործով ծախսվող գումարներին, ապա այդ ծախսերը կատարվում էին համապատասխան քաղաքի հաշվին: Այսպես, արխիվում փաստեր կան այն մասին, որ իրենց գործով Լազարյաններին ուղարկելիք 1500 ո. գումարը աստրախանցիք «ժամանակի թշվառության պատճառով» հնարավորություն չունենալով միանվագ ուղարկել, ուղարկում են 3 նվազով (թղթ. 105, գործ 11, վավ. 94):

\* \* \*

Լազարյանների արխիվի նյութերի մի զգալի մասը նվիրված է Լազարյան ճեմարանին: Ճիշտ է, եղած նյութերը թերի են և հնարավորություն չեն տալիս ամբողջապես վերականգնելու ճեմարանի պատմությունը, բայց ինչ էլ որ լինի, դրանք օգնում են պատկերացում կազմելու ճեմարանի շինարարության և սկզբնական էտապի ուսումնական պրոցեսի մասին: Այսպես, Հովակիմ Լազարյանի նամակներում հիշատակություն կա ճեմարանի շինարարությունն սկսելու, այդ նպատակի համար պահանջվող գումարների շափի, շենքի բացման, աշակերտների քանակի, առաջին ուսուցիչների և նրանց փոխհարաբերությունների մասին:

Հետագայում ճեմարանի հետ կապված հարցերին անդրադառնում է Խաչատուր Լազարյանը, որը խոսում է ճեմարանի հրատարակությունների, ուսման դրվածքի, մանկավարժների ընտրության և այլ հարցերի մասին: Ուսման դրվածքի հարցերը լուսարանվում են գերազանցապես Հ. Այամզարյանի, մասամբ և Մ. Սալլանթյանի և Ս. Պատկանյանի նամակներում: Այդ արժեքավոր վավերագրերից բացի արխիվում կան բազմաթիվ պաշտոնական պրություններ, հրամանագրեր, մուտքի և ելքի հաշիվներ, երեկույթներում արտասանված ճառեր, և այլն: Արխիվում կարելի է գտնել ճեմարանի զանազան տարիների կանոնադրությունները, ընդունելության պայմանները, հաշվետվություններ, ճեմարանի սաների, շրջանավարտների, հեռացվածների ցուցակները, ճեմարանի պատմության ուրվագիծը, գրագրություններ՝ կապված ճեմարանում հոգևոր և նախապատրաստական բաժիններ բացելու հարցի հետ, ճեմարանի նշանավոր դեպքերի տարեգրությունը (թղթ. 117, գործ 98), Լազարյանների կողմից ճեմարանին տրված նվիրատվությունների քանակի և անձեռնմխելի ֆոնդի հաշիվները (թղթ. 119, գործ 56), և այլն, և այլն: Մի շարք թղթապանակներում պահվում են ճեմարանի աշակերտների ու շրջանի գրավոր աշխատանքները (թղթ. 131, գործ 138, թղթ. 132, գործ 116, թղթ. 133, գործ՝ առանց համարի):

Արխիվում գտնվում են և բազմաթիվ նամակներ, որոնք գրվել են ճեմարանի նախկին սաների կողմից: Նամակագիրները սիրով և երախտագիտությամբ են հիշում իրենց ուսումնարանը և նրա տնօրեններին. դրանցից Գոր-

պատի համալսարանի ուսանող Հ. Տեր-Աբրահամյան Փափազյանցը այն կարծիքն է հայտնում, որ Լազարյանների գործունեությունն ավելի օգտակար է հայ ժողովրդի համար, քան նախնի հայ թագավորների և իշխանների գործունեությունը (Թղթ. 112, գործ 42, վավ. 84): Լազարյանների նախկին շրջանավարտ Մ. Լոռիս-Մելիքովը 1868 թ. Լազարյան ձեմարանի խորհրդի անդամ ընտրվելու կապակցությամբ շնորհակալություն հայտնելով Խ. Լազարյանին, նրանց լուսավորական գործունեությունն ավելի արժեքավոր է համարում, քան ռազմի փառքը և քաղաքացիական վաստակը (Թղթ. 104, գործ՝ առանց համարի, վավ. 85):

ձեմարանի նախկին սաներից Դորպատի համալսարանի ուսանողներ Խ. Ավագյանցը և Ակիմյանը Լազարյաններին խորհուրդ են տալիս հայոց տպարանին կից մի գրավաճառանոց հաստատել («Լազարյանց դեպօ հայկական մատենից ի Ռուսաստան» անունով), որպեսզի տարբեր քաղաքներից կարելի լինի ցանկացած դիրքը պահանջել:

1842 թ. հունվարին Թիֆլիսից Հովսեփ քահանա Օրբելյանը հաղորդում է, որ Թիֆլիսում բնակվող ձեմարանի նախկին սաները նոր տարվա կապակցությամբ մեծ ճաշկերույթ են կազմակերպել ի պատիվ Լազարյանների: Սակայն, ձեմարանի սաներն իրենց երախտագիտությունը հայտնում են մի այլ, առավել մեծ, հայրենասիրական ձեռնարկությամբ. 1850 թվականին, Թիֆլիսի մի խումբ քաղաքացիների օգնությամբ նրանք հավաքում և ձեմարանի գրադարանին են նվիրաբերում հին ձեռագրերի մի հավաքածու: Ձեմարանի խորհուրդը հատուկ նիստով շնորհակալություն է հայտնում այդ գործի կազմակերպիչ Ստ. Մարտիրոսյան-Մատինյանցին: Գիրեկաորի պաշտոնակատար Զեփնոյի, տեսչի պաշտոնակատար էմինի, պրոֆեսորներ՝ Զինովյեվի, Նազարյանի, և ուսուցիչների անունից հայտնվում է, որ նրանք բարձր են գնահատում այդ մեծագին ընծայաբերությունը, և հավաստիացնում են, որ ձեմարանի պրոֆեսորներն ուսումնասիրելով այդ ձեռագրերը՝ նոր լույս կը սփռեն և՛ Հայաստանի, և՛ արևելյան ազգերի պատմության վրա (Թղթ. 121, գործ 53, վավ. 118):

Լազարյան ձեմարանի ձեռագրերի հավաքածուի մասին արխիվում պահպանվել են նաև այլ վավերագրեր: Այսպես նշվում է, որ 1852 թ. Թեհրանի հայերը ձեմարանի թանգարանին են նվիրել մի քանի պարսկերեն ձեռագրեր: Հիշատակություն կա այն մասին, որ Ղարասուից Մանվել վարդապետ Գյումուշխանեցին 5000 ո. արժեք ունեցող 60 ձեռագիր է նվիրում ձեմարանին (իբրև հատուցում՝ խնդրելով 3—4 աշակերտ ընդունել ձեմարան)<sup>1</sup>: Այդ հարցին նվիրված նամակներում նա խոսում է հավաքածուն ձեռք բերելու պատմության մասին և միաժամանակ արժեքավոր խորհուրդներ է տալիս ձեռագրերի պահպանության շուրջը: Այդ առիթով նա գրում է. «ամենախոնարհաբար խնդրեմ, զի ողորմած տերդ ինքնին թափանցեցես առ ի խոյզ ոմանց մատենիցն այնոցիկ. զի լիցին և պահպանութիւնքն ընդ այնմ սարասի ապա-

<sup>1</sup> Այս կապակցությամբ Ե. Շահազիզը գրում է. «Ս. Խաչ տեղափոխվելով Գյումուշխանեցին քարեզարդում է վանքը, 15 տարի շարունակ դատարանների շեմքերը մաշելով ետ ստանում խրված հողերը, Ղարասու քաղաքում դպրոց բաց անում և 1819 թվին այդ դպրոցի աշակերտներից 8 հոգու ուղարկում Մոսկվա՝ Լազարյան ձեմարանը, միաժամանակ 62 հատ հին ընտիր ձեռագիր մատչաններ ընծայելով ձեմարանին»: Տե՛ս Ե. Շահազիզ, «Շահինյան Մանվել ծայրագույն վարդապետ Գյումուշխանեցի», (Էջմիածին, 1946 թ., № 6—7, էջ 52):

հով և մանաւանդ կանոնեալ լիցի. ո՛չ որ իւրացուցանել, զիսկ հեղինակսն, որք կամին օրինակել՝ կարացեն, իսկ զմայրն ի համալսարանէզ հեռացուցանել բնաւ շէն իմ կամք. պարտաւորութիւն թողում առ ողորմած տէրզ հաստատուն կանոնով ամրափակել զկարգ գրքատանդ այդմիկ, զի մի՛ ցրուեսցին առ զանազան անձինս և ազգս» (Լազարյանների արխիւ, թղթ. 105, գործ 11, վավ. 131):

Այդ կարգի հրահանգներ է պարունակում և Հովհաննես Լազարյանի մի գրությունը՝ ուղղված ճեմարանի վարչությանը (թղթ. 118, գործ 88, վավ. 104): Այս փաստաթղթերը ցույց են տալիս, որ ժամանակին ինչպես Լազարյանները, այնպես էլ որոշ հոգևորականներ լիովին գիտակցել են ձեռագրերի արժեքը և արել ամեն հնարավորը՝ դրանց պահպանութեան գործն ասպահովելու համար: Հայ ձեռագրերի ողբերգական պատմութեան մասին հատուկ են տեղեկություններ են պահպանվել Եփրեմ կաթողիկոսի կոնդակներում, ներսես արքեպիսկոպոսի և այլոց նամակներում: Այսպես, Եփրեմն իր կոնդակներից մեկում նշում է, որ անցյալ պատերազմների ժամանակ էջմիածնի վանքի այլ ունեցվածքի հետ միասին թալանվել է և գրադարանը, որի հետևանքով 100 գրքից հազիւ մեկն է մնացել (թղթ. 103, գործ 5, վավ. 93):

Լազարյանների արխիւում պահպանվել են մի շարք վավերագրեր կապված ժամանակի պետական խորհրդի նախագահ Ռումյանցևի հանձնարարականի հետ: Վերջինս ցանկանում էր ձեռագրերի իր հավաքածուն հարստացնել հայ մի շարք ձեռագրերով և ահա, նրա խնդրանքով Հովակիմ Լազարյանը դիմում է Աստվածատուր արքեպիսկոպոսի օգնութեանը (թղթ. 104, գործ 104, վավ. 58): Այդ հանձնարարութեանը կատարում է Եփրեմ կաթողիկոսը, որն ի դեպ, նամակներից մեկում նշում է, որ մի քանի ձեռագիր է ճարել, բայց վանքում չկա գրագետ և գիտնական մեկը, որը կարողանա արտագրել դրանք (թղթ. 103, գործ 9, վավ. 7, 11): Այս գործով զբաղվում են նաև ներսես Աշտարակեցին և Մելքիսեդեկ քահանա Ղամաղյանը: 1815 թ. ն. Աշտարակեցին առանց կազմելու Լազարյաններին է ուղարկում Վարդան մեծի և Մատթեոս Ուսհայեցու պատմութեանների ընդօրինակութեանները և չի երաշխավորում, որ մի ձեռագրի հիման վրա կատարված այդ ընդօրինակութեանները հարազատ կլինեն քննարկին: Նա խնդրում է կազմել տալ դրանք և ապա հանձնել Ռումյանցևին (թղթ. 103, գործ 9, վավ. 45, 47):

\* \*  
\*

Լազարյանների արխիւը հարուստ նյութ է պարունակում 19-րդ դարի առաջին կեսին տեղի ունեցած պատմական անցուդարձերի մասին: 110 թղթապանակի № 15 գործում հավաքված են հայրենական պատերազմի հետ կապված նյութերը. այստեղ գտնվում են Ալեքսանդր 1-ի, Բարկլայ դե Տոլլիի, Կուտուզովի հրամանները, Մոսկվայի զինված ուժերի գերագույն հրամանատար Ռաստոպչինի, Ս. Պետերբուրգի զինված ուժերի գերագույն հրամանատար Վյազմիտինովի գրութեանները:

102 թղթապանակի № 17 գործում գետեղված Հարություն Լազարյանի նամակներում արտացոլված են պատերազմի առանձին դրվագները, Եվրոպայում ռուսական զորքի առաջխաղացման նկարագրութեանները, գիտողութեաններ՝ կապված հրամանատարութեան և Արակչևեի իշխանութեան հետ, և այլն:

111 թղթապանակի № 126 գործում զետեղված են Կոնստանտին Պավլովիչի և Նիկոլայի գրագրությունները՝ նվիրված գահակալության հարցին: 109 թղթապանակի № 28 գործի 27—33 վավերագրերը նվիրված են 121 ղեկաբրիստների դատավարությանը:

106 թղթապանակի № 51 գործը գրեթե ամբողջովին նվիրված է ռուսապարսկական պատերազմին: Այստեղ զետեղված են Լազարյանների թղթակիցներ Ն. Աշտարակեցու, Մ. Ղամաղյանի, Աղալո Մելիքոյանի, իշխան Մ. Զ. Արղութինսկի — Երկայնաբազուկի և այլոց նամակները և դրանց հիման վրա կազմված Լազարյանների զեկուցագրերը: Այդ զեկուցագրերը, որ ժամանակին Բենկենդորֆի միջոցով ներկայացվել են թագավորին, հարուստ նյութ են պարունակում՝ նվիրված ռուսական զորքի առաջխաղացմանը և էջմիածնի վանքի օգնությանը ռուսական բանակին, Արարատյան դաշտի գյուղացիության վիճակին, պարսիկների գործունեությանը Թավրիզի, Գիլանի, Լենքորանի շրջաններում, էջմիածնի շրջանի պատերազմական գործողություններին, Պասկևիչի և Աբբաս Միրզայի փոխհարաբերություններին, Թավրիզի առմանը, Երևանի բերդի գրավմանը, և այլն: Արղութինսկի-Երկայնաբազուկի նամակները նվիրված են Օդեսայում ստեղծված վիճակին, Թուրքիայի հետ ունեցած և ունենալիք փոխհարաբերությունների հարցին: Գրիգոր արքեպիսկոպոսի նամակները լուրեր են պարունակում սուլթանական զորքերի շարժման և այլ հարցերի մասին:

Մի բանի վավերագրերում խոսվում է հայ վաճառականի անվան տակ ծառայած Ասլան Հարությունովի մասին, որին հանձնարարված էր շեղոք երկրների նավով Օդեսայից մեկնել Պոլիս, մնալ այնտեղ այնքան ժամանակ, մինչև ռուսական զորքերն անցնեն Դանուբը և թագավորը միանա զորքին: Նրան առաջադրանք էր տրված այդ ժամանակամիջոցում տեղեկություններ հավաքել Պոլսի իրադարձությունների, ժողովրդի վիճակի և այլ հարցերի մասին, կապվել պատրիարքի հետ և նրան հաղորդել ռուսաց թագավորի դեպի հայ ժողովուրդն ունեցած քարյացակամության հավաստիքները (թղթ. 106, գործ 51, վավ. 145—148):

Արխիվի մի շարք փաստաթղթերում խոսվում է Կովկասի լեռնցիներին խաղաղեցնելու և նրանց նվաճելու հարցերի մասին (գեներալ Կրասովսկու կարծիքը, փոխարքա Վորոնցովի կողմ Դաղստանի բնակիչներին, և այլն): Ուշագրավ է, որ երբ 1838 թ. գեներալ Գոլովինը Կրասովսկուն գրած նամակում բողոքում է իր վիճակից (կապված լեռնցիների արշավանքների հետ), իր պատասխան նամակում Կրասովսկին նրան խորհուրդ է տալիս նախ բարեկամական հարաբերություններ հաստատել լեռնցիների հետ, (որով ավելին կարելի է ձեռք բերել, քան զենքով), և ապա՝ խորհուրդ է տալիս Ցիցիանովի օրինակով նրանց մեջ համախոհներ ձեռք բերել և այդ կերպ կանխել նրանց յուրաքանչյուր քայլը (թղթ. 108, գործ 122, վավ. 13—16): Այս նույն գործում պահպանվել են և գեներալներ Կրասովսկու, Կոտլյարովսկու, Պասկևիչի, Ռիդիգերի, Ֆոն դեր-Օստեն-Սակենի գրագրությունները՝ կապված 1831 թվականի լեհական դեպքերի հետ:

Լազարյանների արխիվում պահպանվել են ռուսերեն և ֆրանսերեն լեզուներով հրատարակվող ժամանակի բոլոր նշանավոր թերթերի այն համար-



ների հավաքածուները, որտեղ խոսվում է Ղրիմի պատերազմի մասին (թղթ. 111, գործ 79 և ուրիշներ):

Ժամանակի քաղաքական իրադարձությունները նույնպես, թեկուզ շնչին չափով, իրենց անդրադարձումն են գտել արխիվում:

Ճորտատիրական Ռուսաստանի բարքերի քնորոշ արտահայտություններից է Հովակիմ Լազարյանի նամակներից մեկում արված այն կարգադրությունը, որ Մաքսիմ ծառային վատ վարքի պատճառով զինվորության ուղարկեն (թղթ. 102, գործ 17, վավ. 115): Ըմբոստ ճորտին զինվոր ուղարկելու միջոցը, սակայն չէր կարող փրկել դրությունը, և ահա նիկոլայ 1-ի 1826 թվականի հրամանագիրը գալիս է հաստատելու ստրկության մղձավանջից ազատվելու տենչով վառված ճորտ գյուղացիության բեմելը: Այդ հրամանագրով նիկոլայ 1-ը կարգադրում էր նահանգապետներին՝ հերքել պատվող այն լուրերը, թե ճորտերը պետք է ազատագրվեն: Միաժամանակ կարգադրվում է պատժել դիմումներ գրող անձանց և վերականգնել խաղաղությունը երկրում (թղթ. 111, գործ 126, վավ. 51): Արխիվում պահպանվում է Ն. Ռեպնինի դրությունը թագավորին, որտեղ նկարագրվում է մալոռուսական գյուղացիության ծանր վիճակը, հարկերի վճարման հետ կապված դժվարությունները, գյուղացիների ըմբոստացման փաստերը:

Սակայն միայն ուս իրականության մեջ ծավալվող ազատասիրական խոհերը չէին, որ հուզում էին կառավարությանն ու նրա գաղափարախոսներին: Անցյալ դարի 20-ական թվականներին և նրանից հետո Ռուսաստանում ռեակցիոն մտքի ներկայացուցիչներին մտահոգել է Եվրոպական ազատախոհությունը, որի դեմ էլ ցանկանում էին պատվարներ ստեղծել ուս իրականության մեջ: Այս առումով խիստ հետաքրքրական է Բեսարաբիայի առաջնորդ Գրիգոր արքեպիսկոպոսի մի նամակը, որը նա ուղղել է Հովհաննես արքեպիսկոպոսին (1821 թ.): Այդ նամակում խոսելով հարեան երկրների քաղաքական անցուղարձի մասին, նա գրում է. «Երկիրս մեր՝ խնամօք ամենակալին աստուծոյ և արդարութեամբ խնամաշատ կայսերն մերոյ Աղեքսանդրու ՚ի անդորրութեան և ՚ի ապահովութեան կայ, և ևս պահեսցէ Տէր Հիսուս ազատ՝ համայն տէրութիւն նորա ՚ի տիրանենգ մոլորութենէ, որ բոլոր Եվրոպիոյ արմատըն իմաստութեան այնու կուրացեալ՝ շանան նորանոր օրինօք պատսպարիլ և զշար խորհուրդս իւրեանց ամենայն ուրեք փութան հասուցանել՝ առ ՚ի պարծանս վարկանեալ՝ թէ տիրանենգութիւն է կատարելութիւն մտաց, զի աստուած ասեն՝ զամենեսինս հաւասար մարդ կաղմեաց, ընդէ՞ր պարտի սմա առաւել լինիլ, քան զմիւսն, և այլն»<sup>1</sup>:

1848 թ. ռուլյուցիայի նկատմամբ Լազարյանների բացասական վերաբերմունքն արտահայտվում է մի շարք, թեկուզ փոքրիկ, երանգներով: Արխիվում պահպանվում է մի բանաստեղծություն՝ «Голос русского» վերնագրով, որը գրված է ֆրանսիական ռուլյուցիայի արձագանքներից Ռուսաստանը հեռու պահելու նկատառումով<sup>2</sup>: Նշավակելով Եվրոպայի փոթորիկները, բանաստեղծը ուսներին կոչ է անում.

Среди безумного волнения  
Храни раздумный свой покой

<sup>1</sup> Լազարյանների արխիվ, թղթ. 105, գործ 13, վավ. 80:

<sup>2</sup> Նույն տեղում, թղթ. 106, գործ 35, վավ. 46:

Հետագա տասնամյակներում, երբ սեռայուցիոն շարժումները լայն շրջաններ են ընդգրկում, կազարյանները ամեն ջանք թափում են իրենց ճեմարանի սաներին հեռու պահելու համար այդ շարժումներից: Արխիվային փաստաթղթերը խոսում են ըմբոստ ուսանողներին ճեմարանից արձակելու և հայրենիք արտաքսելու մասին:

Ժամանակի համար շատ տիպական է մի ուրիշ օրինակ: 60-ական թվականներին, հաշատուր կազարյանի նիցցայում գտնված ժամանակ, բարոն Կորֆը, նրան է ուղարկում «Жизнь графа Сперанского» գիրքը և ցանկություն հայտնում, որ այն տարածվի արտասահմանում ապրող ուսանողի մեջ. «Ինձ շատ հաճելի կլիներ, եթե այդ գիրքը տարածվեր մեր հայրենակիցների մեջ՝ արտասահմանում,— գրում է նա:— Ամեն ինչ չէ, որ նրանք կարող են կարդալ: Այնտեղ միայն պամֆլետներ են Ռուսաստանի մասին»:

Արխիվի փաստաթղթերում խոսվում է Ռուսաստանի գաղութային քաղաքականության մասին, որը կիրառվում էր մանր ազգությունների նկատմամբ: Այսպես, օրինակ ուսական կառավարության գերիշխանությունը Կովկասում հաստատելու հարցին է նվիրված 112 թղթապանակի 42 դործի 41 վավերագիրը: Այստեղ խոսվում է Կովկասում ցարական կառավարության տիրապետությունն ամրացնելու, տեղի բնակչությանը կառավարության հետ կապելու, արտասահմանյան «վտանգավոր» գաղափարներից նրանց հեռու պահելու հարցերի մասին: Միաժամանակ առաջարկվում է կազարյան ճեմարանում և՛ ուս ժողովրդի, և՛ կովկասյան ժողովուրդների զավակներից Կովկասի համար աստիճանավորներ պատրաստել և խուսափել լեռնցիներին ռազմական գիտելիքներ տալուց:

Կազարյանների արխիվի գրությունների, նամակների և դիմումների իշխող ոգին մնում է այն, որ հայ ժողովրդի համար անհամեմատ բարենպաստ պայմաններ են ստեղծված Ռուսաստանում և դեպի այդ երկիրն են դարձնում իրենց հայացքները՝ աշխարհի տարբեր ծայրերում ցրված հայերը: 1821 թ. մի գրության մեջ Մանվել վարդապետը խոսում է Անատոլիայի հայերի կրած ծանր տառապանքների մասին՝ «յոթնագուլիս վիշապի», «գազանացյալ սպանդանոցներում» և նրանց բուռն ցանկության մասին՝ Անատոլիայից անցնելու Ռուսաստան (թղթ. 105, գործ 11, վավ. 55):

Գեոևս վաղ ժամանակներում հայերի դեպի ուսական կառավարությունն ունեցած սերն ու համակրանքը դրսևորող փաստաթղթեր են հանդիսանում Փիլիպոս կաթողիկոսի կոնդակը Վլադիմիր 4-ին (1644 թ.) և Սիմեոն կաթողիկոսի կոնդակը Պոտյոմկինին (1780 թ.): Այդ կոնդակներում բողոքելով հայ ժողովրդի և Աթոռի ծանր վիճակից, կաթողիկոսները խնդրում են ուշադիր լինել հայերի նկատմամբ: Մի այլ, անձանոթ հեղինակ 1780 թ. Սուվորովին գրած անստորագիր նամակում խոսում է Հայաստանը թուրքական և պարսկական բռնակալական լծից ազատագրելու և նրան անկախություն տալու հեռանկարների մասին (թղթ. 109, գործ 22, վավ. 34):

Կազարյանների արխիվի բազմաթիվ գործերում զետեղված են ուսական թագավորների բազմաթիվ հրովարտակաները, որոնք տրվել են կազարյաններին և Ռուսաստանի հայաբնակ քաղաքների բնակչությանը: Այդ իմաստով ուշադրության արժանի է հատկապես 136 թղթապանակը, որտեղ զետեղված են կազարյաններին տրված բոլոր հրովարտականերն ու ֆերմանները:

Արխիվում կան նաև լազարյանների ելքի և մուտքի հաշիվները (թղթ. 124, գործ 137), զանազան ընկերությունների հայտարարություններ, գրավահառանոցների ցուցակներ, հայտարարություններ, սեկյամներ և այլն (թղթ. 121, գործ 53, 107, թղթ. 122, գործ 91):

Արխիվում զգալի տոկոս են կազմում և դավանաբանական նյութերը: Հովհաննես և Ներսես կաթողիկոսները բազմիցս դիմել են լազարյաններին՝ ուսական մամուլում հայ հավատի դեմ տպագրվող հոդվածների հարցով: Այս կապակցությամբ հայ եկեղեցու դավանության մասին գրվել են բազմաթիվ ուսումնասիրություններ, որոնք պահպանվում են արխիվում: Դավանաբանական նյութերը գերազանցապես ամփոփված են 114 թղթապանակի 32, 86, 115 թղթապանակի 26, 117 թղթապանակի 23 և այլ գործերում:

Լազարյանների արխիվի նյութերի ուսումնասիրությունը կօժանդակի մեր գիտնականների ստեղծագործական աշխատանքին և նոր փաստերով կհարստացնի հայ ժողովրդի պատմությանը նվիրված նրանց ուսումնասիրությունները:

М. МХИТАРЯН

## ЛАЗАРЕВСКИЙ АРХИВ МАТЕНАДАРАНА

### Резюме

В 1956 году Матенадаран получил из Гос. публичной библиотеки им. Мясникова часть архива князей Лазаревых, хранившегося ранее в Москве, в Лазаревском Институте восточных языков. Материалы этого архива в основном отражают события политической и общественной жизни России и Армении первой половины XIX века.

В сообщении говорится о материалах, касающихся деятельности и связей Овакима и Хачатура Лазаревых, об основании Лазаревского Института восточных языков, о вопросах, поднятых в письмах Лазаревых, с одной стороны, армянских католиков, епархиальных начальников и деятелей культуры — с другой.

Особое внимание уделено документам, освещающим жизненные условия армянских жителей города Н.-Нахичевань, Кизляр, Моздок, Астрахань и т. п.

На основании материалов архива автор попытался охарактеризовать армянских деятелей того времени: Н. Аштаракци, А. Аламдаряна, Г. Патканяна, М. Саллантаяна и др.

В статье говорится также о документах, изображающих события, связанные с Отечественной войной 1812 года, с русско-персидской войной 1826—1827 гг. и присоединением Армении к России.

ԲՆԱԳՐԵՐ

ԵՎ

ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ



С. АРЕВШАТЯН

ДВА ДРЕВНИХ ФИЛОСОФСКИХ ФРАГМЕНТА — «РИТОР,  
О ПРИРОДЕ» и «ФИЛОСОФСКИЕ ОПРЕДЕЛЕНИЯ»

В истории армянской философской мысли так называемой греко-фильской школе, как известно, принадлежит выдающаяся роль. На протяжении сравнительно короткого периода, с конца V до второго десятилетия VII века представителями этой школы были созданы ценнейшие труды по философии, грамматике, историографии, риторике и другим отраслям древней науки. Не менее важное значение в становлении армянской научной мысли сыграли их классические переводы на армянский язык трудов выдающихся представителей античности — Аристотеля, Платона, Дионисия Фракийского, Теона Александрийского, Тимсфея Элура, Порфирия, Филона Александрийского и других. Благодаря этим переводам армянская мысль приобщилась к сокровищнице древнегреческой науки и включилась в орбиту передовой культуры своего времени.

Философская литература составляла значительную часть продукции, оставленной эллинофилами. Сюда входили не только переводы трудов крупнейших представителей античной философии, но и многочисленные учебные пособия, компиляции, компендиумы и словари по философии и риторике.

К числу трудов, вышедших из-под пера представителей греко-фильской школы, относятся и два впервые публикуемых ныне философско-риторических фрагмента «Ритор, о природе» и «Философские определения»<sup>1</sup>. Эти тексты представляют собою редкий сохранившийся образец древней философской литературы учебного характера. Редкий, потому что как в свое время, так и впоследствии, отношение к подобной литературе, имевшей подсобный, учебный характер, не отличалось бережностью, как то было в отношении трудов Аристотеля, Порфирия и других, находившихся в центре внимания армянских философов на протяжении всего средневековья.

Публикуемые нами тексты, по всей вероятности, являются фрагментами древних, более объемистых философско-риторических учеб-

<sup>1</sup> О них впервые упоминает Л. Хачикян в своем предисловии к публикации сочинения Зефона «О природе», см. Сборник научных материалов Матенадарана, № 2, Ереван, 1949, стр. 70 (на арм. яз.).

ных пособий. Об этом свидетельствуют отрывочный и краткий характер затрагиваемых в тексте вопросов, неожиданные переходы от одной проблемы к другой, отсутствие в изложении вводных, обобщающих и заключительных слов, а также их несомненная компилятивность. При рассмотрении этих текстов создается впечатление, что их составитель преследовал одну цель — сообщить изучающим философскую науку самые необходимые сведения по тому или иному вопросу, не вникая в подробности, собрать высказывания классиков античной философии — Платона, Аристотеля и Зенона по каждой затрагиваемой теме, дабы тем самым облегчить их усвоение.

Оба публикуемых фрагмента, как мы полагаем, являются переводами с греческого. Об этом свидетельствуют, во-первых, своеобразный грекофильский язык данных текстов, характерный для литературной продукции эллинофильской школы, изобилие грецизмов, искусственных и новых словообразований и нашедший здесь, как и в других памятниках этой школы, принцип буквального, материального перевода. Во-вторых, об этом говорит само содержание публикуемых фрагментов, целиком связанных с греческим миром, с греческой философией. Здесь мы встречаем многократные ссылки на Аристотеля, Платона, Зенона, Гераклита, изложение их высказываний, примеры из греческой жизни, и ни одного упоминания имен, фактов и явлений из армянской действительности.

Анонимный автор этих текстов, в особенности составитель «Философских определений», является приверженцем неоплатонизма. В его сочинении нашло свое яркое выражение характерное для неоплатонической философии сочетание отдельных сторон учений Платона, Аристотеля и стоицизма с христианским гностицизмом.

Перевод на армянский язык этих текстов не случаен. В Армении V—VII веков неоплатонизм был одним из основных направлений в философии. Синкретическое сочетание отдельных сторон учений Аристотеля, Платона и стоицизма на идеалистической основе, нашедшее свое выражение в ныне публикуемых текстах, явилось причиной того, что армянские неоплатоники обратили на них свое внимание и перевели на дрезнеармянский язык.

Перевод обоих фрагментов относится к последнему, третьему периоду деятельности грекофильской школы<sup>1</sup>. Об этом говорит анализ языковых особенностей публикуемых текстов. В них содержатся термины, которые были созданы в первый и второй периоды деятельности указанной школы и часть которых удержалась в эллинофильской терминологии третьего периода. Кроме того, в публикуемых фрагментах имеются слова и понятия, созданные лишь в третий период и употреблявшиеся начиная с этого времени. Такими терминами являются *բնութիւն*, *գրութիւն*, *հասկանալիք*, *գորութիւն*, *աննիւթ*, *ընդունակ*, *թուական*

<sup>1</sup> См. Я. Манандян, Грекофильская школа и этапы ее развития, Вена, 1928 (на арм. яз.).

*նութիւն, իմաստափրութիւն, քաղաքական* и др. Этот факт с несомненностью свидетельствует о том, что указанные тексты, являющиеся продуктом грекофильской школы, могли быть переведены лишь в третий, последний период деятельности школы, то есть в конце VI—в начале VII веков. Данные фрагменты по языку родственны с переводом трактата Зенона «О природе», который был переведен с греческого также в третий период деятельности грекофильской школы<sup>1</sup>.

Публикуемые ныне фрагменты — «Ритор, о природе» и «Философские определения» содержатся в фонде армянских рукописей Научно-исследовательского института древних рукописей — «Матенадаран» при Совете Министров АрмССР в восьми рукописях. Они входят в обширную компиляцию, составленную приблизительно в XII веке и заключающую в себе отрывки из философских и богословских трудов разных веков. Этот большой компилятивный труд дошел до нас под заглавием «Գրիգորի Երուսաղէմացոյ Սահմանք գանձանք արտորոշեալք ըստ արրոց և ծաշրադոյ՝ վարդապետաց շաղազի տարբերական և ալիալի անտանց» [«Григор Ерусалимский (Иерусалимский). Различные определения многообразных терминов, высказанные святыми и учеными вардапетами»]<sup>2</sup>. Оба публикуемых ныне древних фрагмента вместе со своими заголовками вкраплены в эту большую компиляцию и составляют незначительную часть ее объема. Во всех восьми рукописях они приводятся вместе, сперва «Ритор, о природе», затем «Философские определения».

Для публикации текста фрагментов из восьми рукописей мы выбрали три наиболее хорошо сохранившихся списка — рукопись № 3082 (переписана в 1267 г., текст публикуемых фрагментов занимает страницы 437 б — 442 б), № 1980 (переписана в 1391 г., стр. 269 а — 278 а) и № 464 (переписана в 1731 г., стр. 201 б — 212 а). Путем сличения этих трех рукописей нами был составлен критический текст, который мы и перевели на русский язык. В разночтениях критического текста рукопись № 3082 обозначена буквой А, № 1980 — В, № 464 — С.

Публикуемые тексты и их русский перевод дадут историкам философии и филологам представление о переводной учебной философской литературе ранне-феодалной Армении и явятся дополнительной деталью для уточнения путей становления армянской философской мысли средних веков.

<sup>1</sup> См. Л. Хачикян, Армянский перевод труда Зенона «О природе». С. Аревшатаян, Трактат Зенона-Стоика «О природе» и его древнеармянский перевод, «Вестник Матенадарана», т. 3, Ереван, 1956.

<sup>2</sup> См. Философские труды в армянских рукописях Матенадарана (Краткий библиографический указатель), «Вестник Матенадарана», т. 3, 1956, стр. 406—407.



Հ Ա Ր Տ Ա Ս Ա Ն<sup>1</sup>

## Յաղագս բնութեան

Բան և սահման և բնութիւն զմիտքէ ասին. և ստուգարանի բնութիւնը՝ բանութիւն, որ է այս՝ որ ինչ ասին զումեքէ յիւրաքանչիւր ումեքէ յէակացս, առ ի յայտնել զանազանութեան զօրութիւն յիւրաքանչիւրոցըն զոյացութիւն, որոց յասիլն ցուցանի էութիւնն, զորմէ ասին, որ են այսօրիկ<sup>2</sup>: Կենդանի՝ անսկիզբն, անմարմին, անտես, անսահմանելի, բանական, մտաւոր, անայլելի, անփոփոխելի, անմեղ, անմահ. այսք ստուածայինք: Իսկ կենդանի սկզբնաւոր, անմարմին, սահմանելի, բանական, մտաւոր, այլայլելի, փոփոխելի, դժուարամեղ, անմահ. այսք հրեշտակաց: Իսկ կենդանի սկզբնաւոր, տեսանելի, սահմանելի, բանական, մտաւոր, այլայլելի, դիւրամեղ, մահկանացու, այսք մարդկայինք: Իսկ կենդանի սկզբնաւոր, մարմնական, սահմանելի, անբան, անիմաստ, այլայլելի, փոփոխելի, անմեղ, մահկանացու, ապականացու, այս անասունք  
 15 են: Վասն զի ասիլն զսոցանէ՝ զով որ են, սոքնպէս և այլքն, զոր ինչ ասին զումեքեացն, և նորա են բնութիւնք:

Իսկ կենդանի սկզբնաւոր, մարմնական, տեսանելի, անբան, անմիտ, այլայլելի, փոփոխելի, անմեղ, մահկանացու, ապականացու, ձեռնընդել, այսինքն՝ անասուն կենդանիք: Իսկ բշաւղն դնելով ի վերայ սոցին, զարշառոցն ասէ: Իսկ բառաշաւղն դնելով, զոչխարէն ասի: Իսկ խրխնջաւղն դնելով՝ զծիռցն ասէ, իսկ խառնշաւղն՝ զիշոցն: Իսկ սպապաշաւղն՝ զայծիցն: Եւ յետ այսորիկ դնելով յետ ապականացուին զանձեռնընդելն, ասի այսոսիկ զվայրենեացն և զզազանաց: Իսկ դարձեալ դնելով ի վերայ (ան) ձեռնընդելիդ զխառնաշաւղն, նշանակէ զարշուցն: Իսկ զմոնշաւղն և զզոշաւղն՝ զառիւծուցն միայն: Իսկ դնելով յետ ապականացուին (լուղակք) ջրային զբովանդակսն ասէ: Իսկ ջրային թևաւոր՝ զհաւուցն ասէ: Իսկ թևփոտեալ և թևաւոր՝ զձկանցն ասէ: Իսկ զուղակ<sup>3</sup> ոտնաւոր զբովանդակ ջրային զեռնոցն ասէ: Իսկ դարձեալ յետ ապականացուին ցամաքային զեռուն՝ զբովանդակ մանունցն ասէ, զոտնաւորսն և զոչ նոյնպիսիան:  
 30 Իսկ սողոտն դնելով զանտափց զեռնոցն ասէ, իսկ թունաւոր սողոտն՝ զօձսն. Իսկ ոտնաւոր թունաւոր՝ զկարիճսն: Իսկ յետ այսց թևաւոր զամենայն հաւան, իսկ ձեռնընդել զանասունսն<sup>4</sup> ասէ, իսկ անձեռնընդել՝ զվայրենեացն:

<sup>1</sup> В ևորտաստնական: <sup>2</sup> А այսք: <sup>3</sup> В դաւղակ: <sup>4</sup> А զանասունն:

## Р И Т О Р

## О ПРИРОДЕ

Понятие, определение и природа сказываются об одном и том же. И природа по этимологии (на основании этимологического анализа) означает разум (понятие), а именно: то, что говорится о чем-либо из отдельно взятых сущих, говорится для выявления различия—возможности каждого сущего, выявление чего показывает сущность (каждой вещи), о которой идет речь. Например: живое существо безначальное, бестелесное, невидимое, неопределенное, разумное, обладающее мышлением, неисказимое, неизменное, безгрешное, бессмертное—это суть существа божественные. А живое существо, имеющее начало, бестелесное, определяемое, разумное, наделенное мышлением, исказимое, изменяющееся, с трудом впадающее в грех, бессмертное—это ангелы. А живое существо, имеющее начало, видимое (телесное), определяемое, разумное, наделенное мышлением, изменяющееся, легко впадающее в грех, смертное—это люди. А живое существо, имеющее начало, телесное, определяемое, неразумное, безрассудное, исказимое, изменяемое, безгрешное, смертное, уничтожимое—это (бессловесные) животные. Таким образом, высказывание о них (выявляет)—кто чем является. Точно так же и насчет других (существ); когда что-либо говорят о них (чем они являются), то говорят об их природе.

А живое существо, имеющее начало, телесное, видимое, неразумное, безрассудное, исказимое, безгрешное, смертное, уничтожимое, прирученное—это (домашние) бессловесные животные. Но если ко (всему) этому прибавить мычащее, то (это будет) сказываться насчет крупного рогатого скота. Если же прибавить блеющее, то это будет сказываться об овце. А если ржащее, то—о лошадях. А кричащее—об ослах. Прерывисто блеющее—о козах. И если вслед за этим после уничтожимого ставится неприрученное, то тем самым говорится о диких животных и зверях. А если еще к неприрученному прибавляется буркающее, то тем самым обозначаются медведи. А ревущее и рыкающее—только о львах. Если же после уничтожимого прибавляется плавающее, то говорится обо всех водных существах. А если к водному прибавляется крылатое, то речь идет о птицах. А чешуйчатое и крылатое—о рыбах. А подводное пешее—обо всех водных пресмыкающихся. Если же после уничтожимого прибавить сухопутное пресмыкающееся, то это говорится обо всех насекомых, как пеших, так и других (т. е. безногих). Прибавляя же ползучее, говорится (только) о безногих пресмыкающихся, а ядовитое ползучее—о змеях, а пешее ядовитое—о скорпионах. Затем, крылатое говорится обо всех птицах, прирученное—о (домашних) животных, а неприрученное—о диких животных.

## ՍԱՀՄԱՆՔ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆՔ

Սահման դնելով իմաստասիրական բանի<sup>1</sup>, այսինքն բանականի, բարոյականի և դամենայն գործ տրամաբանականի, և զնիւթն եռակի ունակութեամբ հատեալ և լցեալ ի բնականաց, բարոյականաց, բանականաց սահմանից, բարիօք ենթադրեալ<sup>2</sup> նախ՝ զբանականացն<sup>3</sup> սահմանս: Եւ ահա ի սահմանէ սկսանելի է:

Սահման է ըստ Պղատոնի բան ի սեռէ և ի տարբերութենէ, և կամ տարբերութեանց, մեկնողական էութեանց, բանից իրաց:

Իսկ ըստ Արիստոտելի՝ բան, որ զինչէրն գոյ յայտնելով զինչ գոյոյն, զինչեն հաւասար կարողութեամբ:

Իսկ ըստ Զենոնի՝ բան ըստ վերլուծութեան կատարողին յառաջ բերել:

Իսկ ենթադրութիւն է սահմանումն գաղափարաւ, կամ տկար սահմանումն:

Իսկ ստուգաբանութիւն է ուղղութիւն իրի, քանզի նոյն երկոքին ենթակային ցուցումն իրի, ներմտածութեամբ անուանակոչութեան:

Արդ սահմանումն է՝ մարդ կենդանի, բնութեամբ քաղաքական: Իսկ ստուգաբանութիւն է ուղղութիւն անուան: Բան է ի մտածութիւնսն, որ ներտրամադրեալն ասի, զոյգ ընդ անուանց և ախտից յանձին: Բան յառաջբերական է հոսում ի մտածութեանց, ընդ բայից<sup>4</sup> և անուանց, որպէս Պղատոն: Իսկ ըստ Արիստոտելի՝ ձայն նշանական ըստ զուգադրութեան և կամ մասանց ինչ նշանական արտորոշեալ:

Անուն է ձայն արարողի կամ կրողի, կամ ձայն նշանական ըստ զուգադրութեան առանց ամանակի, որոյ ոչ ինչ է մասանց նշանակ արտորոշեալ, բայց ձայն նշանական ըստ զուգադրութեան հանդերձ ամանակաւ: Իսկ որպէս Պղատոն՝ ձայն գործոյ նշանակ. իսկ անուն է երկոքումբք հասարակ մասն նուաստ բանի, յոր նախ անջատի բան: Իսկ որպէս ստոյիկեանք՝ անուն է ձայն նշանական, յայտարար, որպէս Սոկրատես, իսկ յորչորչումն՝ ձայն նշանական, որպէս մարդ: Իսկ բայ առանց շարադրութեան գնայն է, քանզի շարադրութիւնք ստորոգականք ասին, որգոն՝ ի  
 30 Լիւլիա:

<sup>1</sup> С բանին: <sup>2</sup> В ենթադրեալ: <sup>3</sup> С գրանական: <sup>4</sup> В բանից:

## ФИЛОСОФСКИЕ ОПРЕДЕЛЕНИЯ

Для того, чтобы установить определение философской науки, то есть разумного познания, этики и всего, относящегося к логике, следует разделить материал на три части, снабдив (каждую из них) определениями естественными (относящимися к природе), этическими и познавательными, и для этого лучше сперва дать определения познавательные (относящиеся к познанию). И вот, начнем с самого определения.

Определение, согласно Платону, есть слово, состоящее из рода и приводящего различия или различий, разъясняющих сущность, смысл вещей.

А согласно Аристотелю, (определение есть) слово, выявляющее сущность предмета, что равносильно (тому, если сказать) — что есть сущее.

Согласно же Зенону, (определение есть) слово, высказываемое на основе анализа (предмета).

Что же касается описания, то это есть приблизительное определение или определение несовершенное.

А этимология (определение по этимологии) есть уточнение (понятия) вещи, ибо при одном и том же наименовании указывает на два подлежащих предмета.

И вот, например, определением является: человек есть живое существо, политическое (городское, живущее совместно) по природе. А этимология есть уточнение имени. Слово есть то, что (существует) в мышлении, которое произносится мыслящим согласно именам (вещей) и состояниям души. Произнесенное слово есть истечение от мышления, соответствующее понятиям и наименованиям (вещей), как говорит Платон. А согласно Аристотелю, (слово есть) голос, обозначающий (предмет) по аналогии или высказываемый для обозначения некоторых частей (предмета).

Имя есть голос (для обозначения) действующего или страдающего, или же голос, обозначающий (предмет) по аналогии без (указания) времени; что же касается указания определенных частей (речи), то это есть не что иное, как голос, обозначающий (нечто) по аналогии с (указанием) времени. Платон же говорит, что голос есть обозначение действия (деяния), а имя есть та скромная часть речи, являющаяся общей для обоих (видов обозначения), в которой первым долгом выделяется понятие. Стоики же говорят, что имя есть обозначающий голос, показатель, как, например, Сократ, а название есть обозначающий голос (вообще), как, например, человек. А глагол, взятый вне связи (вне изложения), есть (например, слово) «идет», ибо изложения (без глагола) называются высказываниями, как, например, в Ликей.

Ստորոգումն է ասումն յաղագս ուրումն<sup>1</sup> և կամ յաղագս ոմանց ստորոգեալ: Իսկ ասումն է իր՝ մտածութեամբ յանդիման կացուցեալ և կամ երազական<sup>2</sup> երևոյթ ընդ նմին ծնեալ:

Շաղկապ է ձայն դասու նշանական: Յօդ է ձայն փոխացուցման նշանական ենթակային:

Տրամարանութիւն է բառից շարականութիւն կամ ցուցումն:

Չայն է ըստ Պղատոնի վիրատրումն օդոյ, անսպտկան և անմարմին: Իսկ ըստ ստոյիկեանց՝ օդ վիրատրեալ, լսելեաց զգալի և մարմին: Իսկ ըստ Արիստոտէլի՝ ճայթիւն և շարժութիւն օդոյ, արգելուլ առ ի փխրիլ<sup>3</sup>: Իսկ ձայն անասնոյ է անսպտկան ի ձեռն ստուար շնչերակի: Իսկ մարդոյ ձայն է ձայն յօգաւոր, որ ի գրոյ յայտնի: Իսկ զիր է յօգաւոր ձայնի նուաստ, տարր է հասարակաց, յորմէ հաստատեցաւ և յորում լուծանի:

Սեռ է ըստ Պղատոնի իր ի վերայ յուլովից և աննմանից, էապէս ստորոգեալ, որդոն՝ կենդանի: Տարբերութիւն է տեսակարար ի վերայ բազմաց, յորում զսնազանութիւն յայտնելով ստորոգել, որպէս մահկանացու կամ անմահ: Իսկ տարբերութիւն տեսակարար սահմանադրութիւն է ցուցողական: Տեսակ է հանդերձ տարբերութեամբ, որպէս մարդ:

Իսկ ըստ Արիստոտէլի սեռ է, որ ի վերայ բազմաց և աննմանից իրաց, յորում զինչէն ստորոգեալ: Իսկ տարբերութիւն է սահմանադրութեան կատարողական: Եւ տեսակ է, որ ի վերայ յուլովից աննմանից իրաց, յորում որպիսիէն ստորոգեալ:

Սեռ է ըստ ստոյիկեանց յուլովից աննմանից ներմտածութեանց ի մի ներմտածութիւն<sup>4</sup> պարառումն: Իսկ յատուկ է, որ միայնումն է և հակաստորոգեալ<sup>5</sup>, որպէս մարդոյ ծիծաղականն, ըստ որում միայնոյ<sup>6</sup> գոլ հակաստորոգեալ էապէս: Պատահումն է, որ ոչ էապէս են ումեք, որպէս պիտակն մարմնոյ, որ ներընդունական է գոլ նորին, և ոչ որպէս ջերմութիւն հրոյ: Տարորոշումն է սեռի ի տեսակս հատումն, որպէս կենդանոյն՝ աստուած, մարդ, իսկ ձայն նշանակեալ, որպէս կենդանոյ արտածայնութիւն է ինչ, որ ձայն<sup>7</sup>, և է ինչ, որ ենթակայ, և է ինչ, որ նշանակեալ:

<sup>1</sup> B որումն: <sup>2</sup> AC իր ասական: <sup>3</sup> B փխրիլ:

<sup>4</sup> B ի նմին ներմտածութեան, <sup>5</sup> AC հակաստորոգեալ, <sup>6</sup> B միայն: <sup>7</sup> C չիք որ ձայն:

Высказывание есть сказывание о ком-либо или же то, что сказывается о многих (некоторых). А сказывание есть вещь, (соответственно ей) выставленная мышлением, или же фантастическое явление, порожденное по подобию с нею.

Союз есть голос, обозначающий (связь) в ряду (высказываний).

Член (местоименная частица) есть голос, обозначающий указание (принадлежности) подлежащего.

Логика (рассуждение) есть ряд (взаимосвязанных) слов или указание (определение какого-либо предмета).

Голос (звук), согласно Платону, есть ранение (колебание) воздуха, непристойное и бестелесное. Согласно же стоикам, (звук есть) колеблющийся воздух, ощущаемый слухом и являющийся телом (телесным). А по Аристотелю, (звук — это) разрыв и движение воздуха, воспрещающего (звуку) распасться. Голос же животного является непристойным из-за толстого (грубого) дыхательного горла. А голос человека есть звук членораздельный, что выявляется с помощью письма. Письмо же есть подчиненное (обозначение) членораздельного звука, общий элемент, с помощью которого (звук) фиксируется и на который разлагается.

Род, согласно Платону, есть вещь, сказывающаяся о сущности многих и неподобных (предметов), как, например, живое существо (создание). Различающий признак является обозначителем вида для многих вещей, сказываясь о которых, выявляет их различие, как например, (создание) смертное или бессмертное. Различающий признак — обозначатель вида есть указательное определение, то есть — это есть вид вместе с различающим признаком, как например, человек.

А согласно Аристотелю, род это то, что сказывается о многих и неподобных вещах, выявляя их сущность. Различающий же признак есть то, что приводит к определению (вещи). А вид — это то, что сказывается о многих и неподобных вещах, выявляя (при этом) — какова сущность (вещи).

Род, согласно стоикам, есть обобщение (охват) в одном и том же понятии многих неподобных понятий. А собственным (специальным) признаком является то, что сказывается лишь об одной (единственной) вещи, как, например, человек (есть существо) смеющееся, причем это сказывается о сущности только данного (предмета). Случайным (привходящим) признаком является то, что несущественно для чего-либо, как, например, наклейка для тела, которая для него есть нечто извне приобретенное, а не так, как теплота для огня. Различающий признак есть то, что отграничивает род от вида, как, например, живое существо и бог, человек или голос (слово), обозначающее (их понятие), как, например, высказанное (слово) — живое существо. (Ибо) имеется то, что является голосом, и есть то, что является подлежащим, а также то, что является обозначением.

Հակառորոշումն է ներհակացն սեռից, որզոն մահկանացու ի կենդանոյ հատումն, կամ հատումն սեռի ի տեսակս երկուս, մնացելոցն տեսակի տեսակք, ըստ որ տարրորոշումն է, որզոն կենդանոյն՝ է ինչ, որ մահկանացու է և է ինչ, որ անմահ. է ինչ, որ ոտնաւոր է և է ինչ, որ անոտն. և ոտնաւորին՝ բազմոտն և սակաւոտն:

5

Սեռականագոյն է, որ սեռ և ոչ տեսակ: Տեսականագոյն է, որ միայն տեսակ է, որպէս մարդ:

Յնորումն է, այսինքն մտաց երևոյթ, ըստ Պղատոնի, շարամանութիւն կարծեաց և զգայութեանց: Իսկ ըստ ստոյիկեանց ցնորումն է տիպ իմն իշխանականին:

10

Զգայութիւն է ըստ Պղատոնի ախտ անձին ի ձեռն մարմնոյ, որ ի ձեռն զգայականին կիրք, և կամ հասարակաց ախտ հոգոյ և մարմնոյ: Իսկ ըստ Արիստոտէլի տեսակ ցնորման: Իսկ ըստ ստոյիկեանցն՝ զգայականի երևոյթ, թուեցումն է տկար կարծիք:

15

Առն իմաստասիրի հաստատուն և ճշմարիտ, անփոխակարծ՝ ի բանէ, որպէս թէ ինչ անձն անմահ է ասէ: Երեսք են զգայութիւն գատողական երևելեաց: Լսելիք են զգայութիւն ընդունական ձայնից: Հոտոտելիք են զգայութիւն, ընդունիչ հոտոց: Շոշափելիք են զգայութիւն շոշափմանց:

20

Միտք են աստուած յետ յառաջնոյն ինքնաներգործութեամբ: Իմացութիւն է ներգործութիւն մտաց յիմացականն: Ներմտածութիւն է իմացումն՝ շտեմարանեալ յանձին: Իմացական է, որ ի մտաց իմացեալ լինի, այսինքն իմացական աշխարհ:

25

Մակացութիւն է ուղիղ թուեցումն, կապեալ պատճառաւ ի խորհուրդրս, կամ քառ սկզբնականաց և առաջնոյ պատճառից, կամ քառ հաստատուն յանձին, անփոփոխակարծելի բան, որպէս իմաստնումն լինին արհեստք:

Յիշումն է փրկութիւն զգայութեանց կամ իմացուածոյ, որպէս Պղատոն: Իսկ ստոյիկեանցն խոստովանել բաղադրութիւն պատուոյ անցելոյ: Իսկ Արիստոտէլի՝ ունակութիւն ցնորից, որպէս պատկերի:

30

Աստղութիւն է ստոյիկեանց բաղադրութիւն հասողական<sup>2</sup>: Յնորումն է հասողական զօրութիւն: Յնորումն է գոյ ի գոյէ, որպէս գոյ ի գոյէ տպացեալ. զամենայն ինչ զոր միտք տպացուցանեն, որպէս պատկեր ինչ:

<sup>1</sup> Շ անփոփոխակարծ: <sup>2</sup> Հ հասողական:

Противоположно-различающее определение есть разделение противоположных родов, как, например, (отграничение) мертвого от живого (существа), или же разделение рода на два вида, причем эти два остающиеся вида, которые подвергаются различающему определению, таковы, как, например, живое существо, ибо есть смертное (живое существо) и есть бессмертное; есть (живое существо), обладающее ногами, и есть безногое; а обладающее ногами бывает многоногим и малоногим.

Наивысшим родом выступает род, но не вид. Наивысшим видом является то, что является только видом, как, например, человек.

Воображение (фантазия), согласно Платону, есть мысленное видение, состоящее из мнения и ощущений. Согласно же Стоикам, воображение есть отпечаток чего-либо властного, (оказавшего сильное воздействие).

Ощущение, согласно Платону, есть состояние души, образующееся с помощью тела, которое испытывает что-либо посредством чувства, или же это состояние общее для души и тела. А согласно Аристотелю, (ощущение) есть вид (разновидность) воображения. Согласно же Стоикам (ощущение) есть чувственное видение, (а) кажимость есть слабое (необоснованное) мнение.

Любомудрый муж, стойкий и правдивый, твердый (неизменный) в своих убеждениях, говорит, что душа бессмертна. Зрение (глаза) есть ощущение, судящее о видимых вещах. Слух (уши) есть ощущение, воспринимающее звуки. Обоняние (ноздри) есть ощущение, воспринимающее запахи. Осязание есть ощущение, (воспринимающее) осязаемые (руками вещи).

Разум есть божественное (начало), данное самоличной деятельностью первичным (богом). Познание есть воздействие разума на познаваемое. Внутреннее размышление есть знание, накопленное в душе. Познаваемое есть то, что познается разумом, то есть познаваемый мир.

Наука (научное знание) есть правильное представление (о чем-либо), причинно связанное с размышлением, или это есть слово о начальных и первичных причинах, или непоколебимое слово в душе, неизменная мысль, как (знание) искусств мудреца.

Память есть спасение для ощущений или знания, как (говорит) Платон. А согласно Стоикам (память) есть исповедание, состоящее из знаков (символов) прошедшего. Аристотель же (говорит, что память есть) способность воображения, наподобие представления.

Речь, согласно Стоикам, есть вещь, относящаяся к постижению (познанию). Воображение есть познавательная способность. Воображение — это сущее, возникающее из (другого) сущего, как одно сущее, являющееся отпечатком (другого) сущего. Все, что запечатлевает (в себе) мысль наподобие какой-либо картины, истинной или ложной, философы называют воображением. (Что-либо) называется



թէ ճշմարիտ և թէ սուտ, ցնորումն կոչեն իմաստասէրք: Ճշմարիտն ի գոյէ կոչիցի. է ինչ, որ ոչ լինի ի գոյէ:

Բազատ(որ)ազրութիւն է ընդունելութիւն կամ իմացուածոյ, կամ ցնորման, զգալութեան, ածելով ունակութեան<sup>1</sup> երևութիւն:

5 Տարակուտումն է սաստկութիւն հակառակից խորհրդոց, բացակացութիւն, անյօժարութիւն իրաց կամ անկամութիւն անձին յիրս ինչ վասն տարակուսանաց:

Դատումն է հաւաքումն հասարակաց մտածութեանց, նախ ճշմարտից և ապա ստոց, դատել զէս, ըստ որում զիտէ դատել իմաստուն միտք<sup>2</sup> կամ ի լրոյ դատի զդատեալն:

10 Ճշմարիտ է ըստ Պղատոնի բազմապատկապէս ի բանի բան բացերևական գոլով, ճշմարիտ ի մասնկունս բանի, անուանողութիւն<sup>3</sup> ճշմարիտ ի բառս և ի տրամադրութեան: Ունակութիւն անձին ճշմարտական ճշմարիտ չէութենէ ենթակայիցս, առաջին էութիւն և աննիւթ:

15 Սուտ է բան ցուցական ոչ գոլով:

Հաւատ է կարծիք ուժգնակի: Ապացոյց է բաղխոհութիւն բացողական յառաջնոցն և ի միջնոց և ճշմարտից ժողովեալ, կամ բան, յորոց ի ձեռն նոցունց ծանօթք ցուցանելով:

20 Բաղխոհութիւն է բան, որով խոստովանեցելոց իրաց այլ ինչ քան ղխոստովանեալսն պատահի ի հարկէ ի ձեռն նոցունց խոստովանեցելոցն:

Թուեցումն է որ ամենեցուն կամ յոլովից և կամ մանաւանդ ծանօթից, կամ ըստ արհեստից առեղեալք, և որ ինչ<sup>4</sup> փառասիրաց նմանամասն բաղխոհութեան յառաջաձգումն:

Յառաջաձգումն է բան, զոր վարկանին յառաջ ձգել ի ձեռն հարցման:

25 Սահման է մասն յառաջաձգութեան նուաստ, յորմէ խորհուրդ հաստատի և յոր անդրէն լուծանի:

Ստորասութիւն է բան ցուցողական յումեքէ, որդոն՝ սա գնայ: Ստորասական է յառաջաձգութիւն, բան ցուցողական կամ հետևողի, կամ մատուցելոյ<sup>5</sup>, կամ շարամանեցելոյ, կամ բաղդատեցելոյ յայտնողաբար:

30 Հակասութիւն է ստորասութիւն<sup>6</sup> և բացասութիւն, որպէս մի ինչ<sup>7</sup>. սա գնայ, սա շգնայ. որպէս Պղատոն: Իսկ ըստ Արիստոտելի՝ ընդդիմադրութիւն անմիջոց ստորին, կամ բանք, որոց մինն զմիւսն առաւելու կամ նուազի: Իսկ ըստ ստոյիկեանցն՝ ներհակումն ընդդիմադրութեանց առնէ. տիւ և գիշերն ներհակք են, բազում ինչ ի միմեանց մեկուսեալք, որպէս

35 շար և բարի:

Առինչ է, որ զգոլն առ այլ ինչ ունի, որդոն աջ և ձախ:

<sup>1</sup> B ունակութիւն: <sup>2</sup> AB միտ: <sup>3</sup> C անուանողութիւն: <sup>4</sup> B ոչ ինչ: <sup>5</sup> AC մարտուցելոյ: <sup>6</sup> B շիւ ստորասութիւն: <sup>7</sup> AC մինչ:

истинным в зависимости от (правильного отображения) сущего. Но бывает и нечто, что не исходит от сущего.

Утверждение есть принятие или познание, либо представления, либо ощущения, делающего явление достоянием (души).

Сомнение происходит от сильных противоречивых размышлений, от отсутствия (и) несогласия вещей или от нежелания души (постичь) что-либо в вещах из-за сомнений (колебаний).

Рассуждение есть общий сбор (сопоставление) мыслей, сперва истинных, а затем ложных, (что означает) судить о сущем, причем так, как умеет судить мудрая мысль, или же по слышанному разбирать (судить) то, что подвержено суждению.

Истиной, согласно Платону, является то слово, которое выявляет что-либо, многократно (запечатлеваясь) в мысли, истинно устанавливающее имя (вещи) посредством слов и расположения (самой вещи). Правдопознающая способность души занимается истинной сущностью подлежащих, являющейся первой и нематериальной сущностью.

Ложное слово не является указателем чего-либо.

Вера есть очень сильное мнение. Доказательство есть выявляющее размышление, образующееся из первичных, последующих и истинных (данных), или же слово, посредством которого извещается о них.

Рассуждение есть мысль (слово), в которой о тех вещах, которых она касается, содержится больше того, что встречается по необходимости в вещах, посредством этих же самых вещей, (которых она касается).

Кажимость это то, что касается всего или многого, или же особенно знакомого, или (проявляющегося) согласно искусству; (а именно) то, что предшествует (подлинному) рассуждению.

Предшествование (предположение) есть слово, которое выдвигается посредством вопроса.

Определение составляет последнюю часть предположения, на основании которой утверждается мысль и в которой же она разрешается.

Утверждение есть указательное слово о ком-либо, например, этот идет. Утвердительным является то предположение, в котором содержится указательное слово, выражающее что-либо или о последующем, или о предлагаемом, или об изложенном, или о том, что сравнивается.

Противоречие есть утверждение и отрицание, как, например, этот идет, этот не идет, как (говорит) Платон. А согласно Аристотелю, (противоречие) это противостояние, не имеющее посредника (между) низшим (и высшим), или это положения, из которых одно (противоречит) другому в большей или меньшей степени. Согласно же стоикам, (противоречие) указывает на противоположность противостоящих (вещей), например, противоположны день и ночь, (а также) многое отделенное друг от друга, как зло и добро.

Отношение есть то, существование чего зависит от чего-либо другого, как, например, правое и левое.

Ունակութիւն է որակութիւն յարամնայ: Տրամադրութիւն<sup>1</sup> է ունակութիւն դիւրաշարժ: Մարտ է ընդդիմադրութիւն էից, որոց և ոչ ըստ միոյ ևղանակի է հնար<sup>2</sup> ճշմարտակից լինել կամ ստակից, որպէս տիւ և գիշեր: Ապականութիւն և ունակութիւն է հակադրութիւն առ էի և ոչ էի, որպէս  
5 երեսք և կուրութիւն:

Ըստ Պղատոնի մարթ է լինելն անարգելարար, որպէս մասն իմասնասիրեցէ: Իսկ ըստ Արիստոտելի մարթ է ոչ եղեցելոյ ճշմարիտ գոլ, որ ինչ անմարթ պատահի:

Կարևոր է ճշմարիտն մշտնջենատր: Ամենայն առաքինութիւն օգտակար է: Անմարթ է մշտնջենատր սուտն, որպէս երեքն շորք, կամ ըստ իրիք ժամանակի ստարար, որպէս այժմ գիշեր գոլ: Քաջայայտ է, որ ինքեամբ  
10 յայտնէ, որպէս բարին օգտակար է. անյայտ է, որոյ թարուն է հաւատքն:

Արժանատրութիւն է յառաջաձգութիւն՝ հետևման յայտնողական, մարդն կամ կենդանի ինչ, կամ շարամանեալ: Յառաջաձգութիւն է գոյութիւն նշանական, որգոն մարդ թէ և կենդանի է, դատ է: Բաղդատական է  
15 յառաջաձգութիւն ի ձեռն առաւել և նուազ շաղկապութեանց յառաջ եկեալք բաղհակադրութեամբ այսպիսեալ. մարդ ծիծաղական է, ոչ ծիծաղականն՝ ոչ մարդ:

Լծակցութիւն է շարամանութիւն երկուց թէ և յոլովից յառաջաձգութեանց, ըստ իրիք հասարակորդութեան<sup>3</sup>, կամ հասարակաց սահմանից. որպի՞սի, այսպիսի ինչ, մարդ՝ կենդանի շնչատր: Պատերազմ հասարակ սահմանի առ ծայրսն, իրք զի այսպիսի ինչ. մարդ կենդանի, մարդ ծիծաղական:

Յեղանակ է տեսակցեալ ձև, թէ այսպիսոյս այս ինչ առաջին է, այս ինչ ուրեմն երկրորդ: Մակացութիւն է յիւրաքանչիւրոյն ի հանուրն կոյս գալուստ, այսպիսի ինչ՝ մարդ կենդանի և ընդունական շնչոյ, ձի կենդանի է ներընդունական շնչոյ, ամենայն կենդանի ուրեմն ընդունական շնչոյ է:

Յարացոյց է իր նման և հաւատտի<sup>4</sup> ի վերայ հաւատեաց նմանի նմանապէս առմամբ ցուցանել:

Տրամարանութիւն է մակացութիւն ճշմարտից և ստից, կամ մակացութիւն հարցման և պատասխանոյ: Տրամարանական է հարցումն կամ յառաջձգումն փառաւոր հակասութեանց. հարցումն է պատասխանոյ, պատասխանի է երկաքանչիւր կողմանց հակասութեանց պատասխանի:

Աղօթք են հայցումն բարեաց առ ի յաստուծոյ: Երդումն է առնուլ զաստուած ի հաւատ՝ ասացելոյ ինչ կամ գործելոյ ըստ երից<sup>5</sup> ամանակաց:

<sup>1</sup> В տրամարանութիւն: <sup>2</sup> С հանճար: <sup>3</sup> В հասարակորդ: <sup>4</sup> В հաստատի: <sup>5</sup> В իրից:

Обладание есть качество постоянное. Расположение есть обладание легко изменяющееся. Вражда есть противостояние сущих, которые никоим образом не могут сойтись ни на основе истины, ни на основе лжи, как, например, день и ночь. Уничтожение (лишенность) и обладание (существование) это противоположность между сущим и несущим, как, например, между зрением и слепотой.

Согласно Платону, возможно (достойно) беспрепятственное существование, что является частью (того, о чем он) философствует. А согласно Аристотелю, возможно быть истинным тому, что не имеется в наличии, тому, что считается, что не может случиться.

Важна истина вечная. Всякая добродетель полезна. Невозможна вечная ложь, как, например, три (равно) четырем, или ложь насчет времени, как, скажем, что сейчас ночь. Достоверно то, что самоочевидно, например, что добро полезно. Неизвестно то, смысл (вера) чего скрыт (от нас).

Достоинством является предвосхищение, выявляющее следствие, касается ли это человека или животного, либо и того и другого. Предвосхищение есть сущность, обозначающая, например, человек хотя и есть живое существо (животное), но отличается (от него). Сравнительным является предвосхищение посредством выявления противоположности через большую и меньшую взаимосвязь, как, например, человек есть (существо) смеющееся, (а) несмеющееся — не есть человек.

Сочетание есть связь двух или многих предвосхищений (положений), имеющих общность по вещи (предмету) или по общему определению. (Например), каково (что-нибудь)? — таково-то: человек есть существо одушевленное. Имеется противоборство между общим определением и крайним, как, скажем, следующее: человек есть живое существо, человек — смеющееся.

Разновидность есть форма, получившая (определенный) вид, как, например, вот это из таких-то вещей является первым, а вот это, следовательно, вторым. Научное знание (о чем-либо) есть приведение (сведение) каждой вещи в сторону общего, например, человек есть существо живое и обладающее дыханием, конь есть существо живое, обладающее дыханием, следовательно, всякое живое существо обладает дыханием.

Образец есть вещь подобная и удостоверяющая сходство достоверно (подобных) вещей, употребляемая для примера.

Логика (диалектика) есть наука об истине и лжи, или наука (об умении задавать) вопрос и отвечать. Логичным (диалектическим) является вопрошение или выдвижение славных противоречий. Вопрос есть (ожидание) ответа; ответ есть разрешение обеих сторон противоречий (противоречивого положения).

Молитва есть испрашивание благодати (добра) у бога. Клятва есть заверение в верности богу, при обещании выполнить что-нибудь когда-либо.

Տրամաբանական է մակացութիւն լուծման, շարադրութեան, ապացուցի, մակացութեան և բաղխոհութեան: Լուծումն է յետնոյ բնութեամբ յառաջինսն բնութեամբ վերածումն: Շարադրութիւն է յառաջնոցն ի կատարումն դալուստ:

5 Արհեստ է ըստ Արիստոտելի տնակութիւն հանդերձ բանիւ պիտանի<sup>1</sup> կենցաղոյս, կամ շարակցութիւն հանրականից ապացուցից կրթելոց զոյգ առ վախճան, բարիոք պիտանեաց ունողաց զվերաբերութիւն:

Իմաստ(ակ)ութիւն է բան իմաստնական կամ բան դաւաճանող, կամ բաղխոհութիւն նպերտական:

10 Հոմանունութիւն է բառ անշարադիր նշանական յոլովից, որպէս սա՝ ձաքն բառի<sup>2</sup> միայն է հասարակորդ, ըստ որում է ձայն յոլովից յայտնող:

Փաղանունութիւն է բառ հասարակորդութեան՝ յայտնողական իրաց և ձայնի, որպէս կենդանի:

Բազմանունութիւն է յայտնումն նմին իրի յոլովիւք ձայնիւք:

15 Երկբայութիւն է բառ երկու շարադրութեամբք կամ ի բազմաց յայտնողական տիրապէս և բանեղարար:

Յանդիմանումն է հակասութեան խոստովանութիւն: Տրամաբանութիւն է բան ըստ հարցման և պատասխանոյ յառաջ եկեալ: Յառաջարկութիւն է տեսութիւն շարածգելով առ նպերտ և փախուստ և կամ առ

20 տեսութիւնս պիտանութեան:

Դրութիւն է հրաշափառ ումեմն ի ծանօթից իմաստասիրութեան, որդոն թէ ամենայն ինչ շարժի, որպէս Հերակլիտէս: Դրութիւն է ամենախնդիր իմաստասէր կամ երկբայութիւն բանական անսահման բանիւք, իսկ<sup>3</sup> դիմօք իբր թէ<sup>4</sup> ամուսնանալի է, կամ այցելութիւն տեսութեան իրի<sup>5</sup>:

25 Խնդիր է հասարակորդութիւն տրամաբանական բառից կամ գիտանդիտացելոց, գիտ՝ վախճան խնդրոյ:

Վհատութիւն է տրամադրութիւն բանից, ոչ նախախտհից և երկայնից: Ճարտասանական է բան հաւանութեան արարչագործ, յաւատացուցանող յաղագս իրաւանց և անիրաւութեան, հանդերձ բանիւ և հմտութեամբ փութանակի, որպէս Պղատոն, կամ անբան կրթութիւն բաղաբականի մասին, ուրուական պատկեր<sup>6</sup>:

30 Նախադուշակումն է վերաշարժութիւն արուեստաւոր զառաջիկայ իրաց ցուցանել ըստ պիտոյից: Հաւատ է ցուցումն ճարտասանական բաղխոհութեան: Հաւանականութիւն է որ ի խոստովանութիւն ամէ: Գովութիւն է վկայութիւն առ ի յառաքինութենէ: Պարսալ է որ ի շարութենէ վկայութիւն է:

<sup>1</sup> C պիտանի բանի: <sup>2</sup> C բանիս <sup>3</sup> AC շի՛ իսկ: <sup>4</sup> A զի թէ: <sup>5</sup> AC շի՛ կամ այցելութիւն տեսութեան իրի: <sup>6</sup> B պատկերի:

Диалектичной является наука анализа, соединения, доказательства и суждения. Анализ есть раскрытие первичной природы посредством последующей. Соединение есть завершение (познания) первично данных вещей.

Искусство, согласно Аристотелю, есть обладание разумное (для свершения) чего-либо полезного в жизни, или сочетание общих доказательств в упражнениях, (необходимых) для благополучного достижения полезного теми, кто способен к обладанию им.

Лжемудрость есть софистическое слово или слово предательское (изменчивое), или рассуждение чванливое (высокомерное).

Одноименность есть слово простое, обозначающее множество (вещей), когда только по звучанию слова имеется общность, причем слово (голос) выступает указателем многих (вещей).

Соименность есть слово общее (для разных вещей), выявляющее (разные) предметы и высказывания, как, например, (слово) животное (живое существо).

Многоименность есть выявление одной и той же вещи посредством многих слов (высказываний).

Двусмысленность есть слово с двумя значениями или со множеством, выявляемых просто и разумно.

Выявление есть разрешение противоречия. Диалектика (логика) есть речь, которая выступает, когда (один) спрашивает, а (другой) отвечает. Предположение есть теория, ведущая к гордости и к бегству (от научного знания) или же ведущая к полезной теории.

Положение (тезис) есть (мысль, высказанная) кем-либо знаменитым из известных в философии, как, например, все находится в движении, как (сказал) Гераклит. Положение бывает всеобъемлющим философским вопросом или разумной двусмысленностью с неограниченным количеством значений, а в отдельности это как-будто относится к чему-нибудь конкретному или является (результатом) изучения теории какой-либо вещи.

Исследование есть сопоставление логических слов (понятий) или нахождение того, что было непознано; нахождение есть конец исследования.

Заблуждение (недоразумение) есть расположение мыслей, не (связанных) с предшествующими размышлениями и не долгих. Риторическим является созидательное слово одобрения, удостоверяющее правильность или ошибочность (чего-либо) посредством рассуждения и тонкого исследования, как (говорит) Платон, или это есть бездумное учение о политике, как о чем-то неуловимом (неопределенном).

Предвидение есть искусство с пользой показать (дальнейшее) движение подлежащих вещей. Вера есть показатель раздумий ратора. Утвердительность есть то, что приводит к достоверности. Хвала есть свидетельство того, что проистекает от добродетели. Хула есть свидетельство того, что проистекает от злости.

Թուականութիւն է արհեստ որակութեան թուոց: Երկրաչափութիւն է արուեստ ըստ մեծութեան ձևոյ: Թիւ է քաղմութիւն միակաց: Գիծ է երկաջնութիւն անլաջն: Մակերևոյթ է, որոյ մեծութիւնն ունի լայնութիւն և երկայնութիւն: Աստեղարաշխութիւն է արհեստ՝ գիտութիւն աստեղաց  
5 շրջագայութեան, մեծութեան, ձևոյ, դրութեան, բացակայութեան, շարժութեան (և) կայից առ այսոսիկ և առ միմեանս:

Բժշկական արհեստ է ողջացուցիչ ախտացեալ մարմնոց մարդկան, կամ արհեստ առ ի լրումն և թափումն մարմնոյ բերողաց, կամ արհեստ գործողական:

10 Ապականութիւն է ներհակ լինելութեան: Եղծումն ի բացարարծումն առաջիկայ իրի: Ապականելի է մարդ, որ է կրկին բանիւ ներգոյ՝ մարմին և շունչ: Ապականելի է մարդ զկնի մահու, չորում ներգոյ՝ անկենդանին, անզգայականն և աններանձնաւորն:

15 Մշտնջենական է, որ յամենայն ժամանակի է և յառաջագոյն էր և այժմ ոչ ապականի: Աստուած՝ կենդանի անմահ, ինքնարաւ առ ի ներփառութիւն, էութիւն մշտնջենաւոր և բարւոյ բնութեան պատճառ, լինելութեան խաղացումն, էութեանց փոփոխումն առ չէութիւն, քայլելով եղանակաց:

Բախտ է բերումն յաներևութենէ, պատճառ փառաւոր իրի:

20 Շունչ է որ զանձն խաղացուցանէ, պատճառ շարժելութեան:

Կենդանի է կենդանեաց զօրութիւն, որ ըստ ինքեան է արարչականութիւն:

Գէմք է բնութիւն ընտրողական մարմնոյ: Ուղեղ է ի ջերմութենէ կառուցեալ: Տարր է որ ժողովէ և քակտէ զշարադիրսն:

25 Առաքինութիւն է հաստատադրութիւն կամ վեհագոյն բնութիւն մահկանացուի կենդանութեան ըստ ինքեան զովելի:

Բարբ է ըստ որում բարի կոչի հաղորդութիւն օրինաց արդարակ: Խոհեմութիւն է զօրութիւն արարողական ըստ ինքեան մարդոյն: Բարեփառութիւն է խրատ բարեաց և շարեաց՝ բարբ արարողականք: Բարեբաստութիւն է տրամադրութիւն, որով որոշեմք զինչ է գործելն<sup>1</sup> և զինչ ոչ:

30 Արդարութիւն է համախոհութիւն անձին, նմին և բարեկարգութիւն անձին մասանց առ իրեարս և զիրերարք: Բնութիւն է քաշխողական, որ ըստ շափից: Յօժարական է յերեւելեաց նմա<sup>2</sup> արդարական: Համեստութիւն<sup>3</sup> է նուաստութիւն անձին, որ ի նմա ըստ բնութեանն լինի ցանկութիւնք, քաշայարմարութիւն և բարեկարգութիւն առ ըստ բնութեան<sup>4</sup> ցանկութիւնս և

25 հեշտութիւնս:

<sup>1</sup> B գործելան: <sup>2</sup> C նման: <sup>3</sup> AC համեմատութիւն: <sup>4</sup> B լի՛ ցանկութիւնք, քաշայարմարութիւն և բարեկարգութիւն առ ըստ բնութեան:

Арифметика есть искусство о качестве чисел. Геометрия есть искусство о величине форм. Число есть собрание единиц. Линия есть длина, не имеющая ширины. Поверхность есть то, величина которого имеет ширину и длину. Астрономия есть искусство, (занимающееся) знанием об обращении звезд, их величине, форме, положении, отклонении, движении (и) покое по отношению к этому и по отношению друг к другу.

Врачевание есть искусство, оздоравливающее больное человеческое тело, или искусство для восполнения и упразднения того, что (свойственно) испытывать телу, или искусство практическое.

Уничтожение противоположно возникновению. Опровержение есть отрицание подлежащей вещи. Человек уничтожим (смертен) благодаря двум вещам — телу и дыханию. Человек уничтожим (тленен) после смерти, которой присущи безжизненность, бесчувственность и неодоушевленность.

Вечно то, что существует во все времена и существовало раньше и не уничтожается сейчас. Бог есть существо бессмертное, самодовлеющее в своей собственной славе, сущность вечная и причина природного добра, источник возникновения, превращения (одних) сущностей в другие (обращение сущностей к существованию) в соответствии с (их) формами.

Судьба (счастливая случайность) есть появление чего-либо из неизвестности, причина прекрасного (славного) явления (предмета).

Дыхание есть то, что движет душой, причина движения.

Для живых существ жизнь есть сила, которая сама по себе есть продукт творения.

Лицо есть отличительная природа тела. Мозг образуется из теплоты. Элемент есть то, благодаря чему составляются и разрушаются сложные вещи.

Добродетель есть устойчивость или благороднейшая сущность жизни смертного, сама по себе достойная похвалы.

Нравственностью является то, в чем добром называется праведное приобщение к законам. Разумность есть созидательная по своей природе сила, заключенная в человеке. Блаженное счастье — это постижение добра и зла, созидающее (подлинную) нравственность. Благоденствие есть расположение (души), которым мы определяем — что делать и чего не делать. Справедливость есть всеведение души, а также благорасположение частей души по отношению друг к другу и между собой. Природа есть распределитель, (раздающий) по мерке. Добровольность есть прямота, подобная (естественным) вещам. Скромность есть смиренность души, которая бывает в ней от природы (в отношении) желаний; гармония и порядок в отношении вождельней и наслаждений (в ней существуют) согласно природе.

Согласие (внутреннее) для души (необходимо), чтобы господствовать. Мужество есть сущность души, не колеблемая страхом. Храб-



Չայնակցութիւն է առ անձին առ իշխել ( $և^*$ ): Արիութիւն է բնութիւն անձին, անշարժ յերկիւղէ: Քաջութիւն է պատերազմական տեղեկութիւն, որ ըստ պատերազմի իրաց: Ժուժկալութիւն է անձին առ ի յահաւոր և յապառում խոհականութենէն քաջախրախ յուսութիւն առ մահուամբ:

5 Ակնկալութիւն է սարաս պահպանութեան: Երկիւղ է ակնկալութիւն շարի: Յանկութիւն է անխափան ներգործութիւն բնական ունակութեանս: Խարեութիւն է ընդդիմակ ճշմարտութեան: Ամբարհաւաճութիւն է պատճառ բարւոյ ոչ էի: Հպարտութիւն է հաճութիւն իւր միայնոյ: Բարի է, որում ամենեքեան ցանկան: Չար է, որ ամենեցուն փախչելի է:

10 Մեծանձնութիւն է նմանաբար կարել բերել զերկաքանչիւր պատահմունս: Բարեբաստութիւն է ներգործութիւն ըստ առաքինութեան ի կեանս կատարեցելում և արտաքնոցն բաւականաբար յաջողեցելոյ:

Ծրամութիւն է ներգործութիւն և կատարումն անբան ունակութեան: Արդարութիւն է ունակութիւն հասարակութեան բաշխող, և կրկին է արդարութիւն, է որ ըստ իրի, և է որ ըստ դիմաց:

15

Հաւատ է՝ մտածութիւն յաղագս աստուծոյ անախտաբար, յուսոյ արտազնացումն մտաց առ յուսացեալն համբերութեամբ զաներևոյթն, որպէս զերեւել տեսանել մտացն աշաւր անպակաս ժուժկալելով:

Անարծաթասիրութիւն է այնպէս կամել զոչ ունելն, որպէս որ կամի զունելն: Մակաժանոթութիւն է անգիտանալով զինքն արտակայութեամբն աստուծոյ: Խոնարհամտութիւն է մոռացմամբ ուղղութեանց զգուշանալ: Ոչբարկութիւն է ցանկութիւն բազում ունել սակս ոչ բարկանալոյ: Անփորձութիւն է շարի զգայումն միշտ աստուծոյ հետեման: Սէր է աճումն բարւոյ առ թշնամանողս կատարեալն այլայլութեամբ, առ փափկութեամբն աստուծոյ ուրախութիւն վարկանել զտրամականս մահու:

20

25

Գոյութիւն է միտք, բան, մակացութիւն և այլք, որք են գոյացուցիչք: Գոյացութիւն է, յորմէ այլք գոյանան, որպէս ի սեռէ տեսակքն և ի տեսակէն անհատն: Գէմ է կենդանեացն կերպ, զնդին բոլորութիւն<sup>2</sup>, հրոյ ջերմութիւն, այլ ձև և կերպ յարանունաբար ունին, առ որ ասին, բանգի տւումն են, զի կերպն է ուրում կերպ, և ձևն ուրումն է ձև: Թիւ ըստ յառաջիկայելումդ սեռ, իսկ միակդ ի դմանէ սկիզբն դորայ: Բնութիւն նշանակիչ է կերպի: Ապա ուրեմն սեռ բնութիւն է անսկիզբն, բնութեամբ առաջին, որպէս ի սկզբանց արարիչ<sup>3</sup>, բնութիւն հրեշտակաց սկսեալ և ոչ դադարեալ:

30

<sup>1</sup> AC սահման հաւատոյ փխ. հաւատ է: <sup>2</sup> A բոլորակութիւն: <sup>3</sup> B արարիչ է:

рость есть осведомленность о войне, которая бывает соответственно (знанию) обстоятельств войны. Стойкость души — это (стойкость) перед чем-либо ужасным и необузданным, радостно-храбрая надежда по отношению к смерти, идущая от разума.

Ожидание есть вид обороны. Боязнь есть ожидание зла. Желание есть непреодолимое действие естественных способностей. Обман есть противник правды. Самодовольство (надменность) есть причина безнравственности. Гордость есть довольство только самим собой. Добром является то, что желательно для всех. Злом является то, чего избегают все.

Великодушие (величие) есть способность одинаково переносить каждую из двух (противоположных) случайностей (счастливых и несчастных). Счастьем является (способность) действовать согласно добродетели при (различных) жизненных обстоятельствах и быть в достаточной мере удачливым во внешних (практических) делах.

Грусть есть действие и результат неразумной способности. Справедливость есть способность равно воздавать всем, притом справедливость бывает двоякая: одна — в отношении вещей, другая — в отношении людей.

Вера есть беспорочное размышление о боге, преисполнение мыслей терпеливой надеждой на невидимое надежное существо, (способность) очами мысли видеть его как нечто зримое, (пребывая) в непрестанном воздержании.

Бескорыстие есть такое желание не иметь (чего-либо), как кто-нибудь желает иметь это. Сверхзнание есть (постижение) бога путем забвения себя через самоотречение. Смиренность мысли есть осторожность к (соблюдению) правильного пути в забвении. Негневливость есть желание иметь многое для того, чтобы не гневаться. Святость (чистота) есть постижение зла, (находясь) в постоянном уподоблении богу. Любовь есть прибывание добра (доброжелательства) в отношении тех, кто искаженный враждует (с тобой), приношение радости, с ласковостью бога, тем, кто тоскует от (мыслей о) смерти.

Сущностью является разум, слово, знание и (все) остальное, что дает существование. Сущность есть то, от чего получают существование другие, как от рода — виды и от вида — индивиды. Лицо есть образ существ, (как) округлость шара, теплота огня. Однако форма и образ обладают соименностью в отношении того, о чем сказываются, ибо принадлежат чему-нибудь, ибо образ является образом чего-либо и форма есть форма чего-либо. Число, согласно вышесказанному, есть род, а единица в нем — начало его. Природа (сущность) есть назначатель образа. Таким образом, род есть сущность, не имеющая начала, первая по природе, как среди начал созидающей является природа ангелов, имеющих начало, но не имеющих конца.

## Ս. ԱՐԵՎՇԱՏՅԱՆ

ԵՐԿՈՒ ՀԻՆ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԲՆԱԳԻՐ՝ «ՃԱՐՏԱՍԱՆ, ՅԱՂԱԳՍ  
ԲՆՈՒԹԵԱՆ» ԵՎ «ՍԱՀՄԱՆՔ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆՔ»

## Ա մ փ ո փ ու լ մ

Առաջին անգամ հրատարակվող «Ճարտասան, Յաղագս բնութեան» և «Սահմանք փիլիսոփայականը» ճարտասանական-փիլիսոփայական բնագրերը պատկանում են ուսումնա-փիլիսոփայական հին գրականությանը: Այդ երկու գործերը, ինչպես երևում է նրանց բովանդակությունից, կազմված են նորադատողականության հետևորդների կողմից: Հրատարակվող բնագրերի լեզուն և բովանդակությունը վկայում են այն մասին, որ նրանք թարգմանված են հունարենից. թարգմանությունը կատարված է այսպես կոչված հունարան դպրոցի գործունեության երրորդ շրջանում, այսինքն 6-րդ դարի վերջում — 7-րդ դարի սկզբին:

Հայերեն բնագրերը պահպանվել են Մատենադարանի ութ ձեռագրերում: Համահավաք բնագիրը կազմված է 3 ամենալավ պահպանված ձեռագրերի բաղադատությամբ (№ № 3082, 1980 և 464):

Բնագրերին զուգահեռ տպագրում ենք նրանց ոտուերեն թարգմանությունները:

Հրատարակվող բնագրերը և նրանց ոտուերեն թարգմանությունները հնարավորություն կընձևեն լրացնելու մեր պատկերացումները միջնադարի հայ փիլիսոփայական մտքի և տերմինոլոգիայի կազմավորման մասին:

Հ. ԲԱՐԹԻԿՅԱՆ

ԵՎԱՏԱԹԻՈՍ ԲՈՅԻԼԱՍԻ ԿՏԱԿԸ (1059 թ.) ՈՐՊԵՍ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ և ՎՐԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ  
ԿԱՐԱՈՐ ՍԿՋԲՆԱՂԲՅՈՒՐ

Միջնադարյան Հայաստանի սոցիալ-տնտեսական հարաբերությունների ուսումնասիրության հարցը միշտ էլ գտնվել է սովետահայ պատմաբանների ուշադրության կենտրոնում: Մինչև այժմ գրվել են բազմաթիվ հոդվածներ ու մենագրություններ այս հարցի վերաբերյալ: Սակայն այդ աշխատություններում գրեթե չի օգտագործված բյուզանդական աղբյուրների նյութը: Հայկական սկզբնաղբյուրների տվյալները նշված հարցի մասին, որոնք գլխավորապես վերաբերում են արևելյան Հայաստանի սոցիալ-տնտեսական հարաբերություններին, չի կարելի մեխանիկորեն տարածել արևմտյան Հայաստանի վրա: Արևմտյան Հայաստանը դարերի ընթացքում գտնվել է բյուզանդական տիրապետության տակ: Բնականաբար Բյուզանդիայում տիրող սոցիալ-տնտեսական հարաբերությունները այս կամ այն չափով արմատացել էին նաև նրա կողմից նվաճված տերիտորիաներում՝ ընդհանրապես և արևմտյան Հայաստանում՝ մասնավորապես: Այդ պրոցեսն սկսվել էր դեռևս Հուստինիանոս կայսեր ժամանակաշրջանից, վեցերորդ դարի առաջին կեսից: Նշված կայսեր մեկ օրենքի վերնագիրը միայն, — «Հայերի մասին, որպեսզի նրանք ևս ամեն ինչում հետևեն հոռոմայեցիների օրենքներին»<sup>1</sup>, — բավական է համոզվելու համար այդ բանում: Հետաքրքրականն այն է, որ հետագա ժամանակներում էլ այդ օրենքը ուժի մեջ էր: Մակեդոնական հարստության «Բասիլիկ» կոչվող օրենսդրական ժողովածուում, որը գործածության մեջ է եղել բազում դարեր, այդ նույն օրենքը ուժի մեջ էր<sup>2</sup>: Այդ պրոցեսը շարունակվեց նաև հետագայում. 10—11-րդ դարերում, երբ բյուզանդական տիրապետությունը տարածվեց նաև արևելյան Հայաստանի վրա, զավթիչների հետ միասին այնտեղ մուտք գործեց նաև բյուզանդական օրենսդրությունը և կարգ ու կանոնը: Հասկանալի է, ուրեմն, որ 10—11-րդ դարերի Հայաստանի սոցիալ-տնտեսական հարաբերությունների ուսումնասիրությունը առանց բյուզանդական սկզբնաղբյուրների ընձեռած նյութի հնարավոր չէ:

Այդ տեսակետից բացառիկ արժեք է ներկայացնում բյուզանդական ֆեոդալ նվաճաթիոս Բոյիլասի կտակը, գրված 1059 թվականին:

Կտակը գտնվում է Փարիզի Ազգային Մատենադարանի Կոալենյան շարքի 263 համարի տակ գտնվող մագաղաթյա ձեռագիր մատյանում: Այդ մատյանի

<sup>1</sup> Corpus Juris Civilis, vol. III, Novellae, recognovit R. Schoell, Berolini, 1895, Novell. XXI, caput. I, p. 145.

<sup>2</sup> Basilicorum libri LX, ed. C. G. E. Heimbach, liber XLV, tit. VI, § a, Lipsiae, 1846.

մասին առաջին անգամ հիշատակում է Բերնար Մոնֆոկոնը, ցույց տալով, որ այն բովանդակում է Հովհաննես Կլիմաքոսի «Սանդուխթ աստուածային ելից»-ը. ելնելով հնագրական տվյալներից, նա ենթադրում էր, որ գրված պետք է լինի 11-րդ դարում<sup>1</sup>:

Հ. Օմոնը 1888 թվականին հայտնաբերեց ձեռագիր այդ մատյանի ընդօրինակութան որոշակի թվականը — 1059 թ., որը նշված է ձեռագրի գրչի հիշատակարանում: Հ. Օմոնը միաժամանակ ցույց տվեց, որ նույն մատյանի վերջում գտնվում է ոմն պրոտոսպաթար Եվստաթիոս Բոչիլասի կտակը, նույնպես գրված 1059 թվականին<sup>2</sup>: «Սանդուխթ»-ի, և կտակի ընդօրինակությունը կատարված է նույն գրչի կողմից, այդ ապացուցվում է ոչ միայն գրութայն նմանությամբ, այլև գրչի թողած հետևյալ հիշատակարանով.

«Ավարտվեց ամենասուքինի «Սանդուխթ», — ասված է հիշատակարանում, — հրամանավ պրոտոսպաթար և հյուպատոս Եվստաթիոս Բոչիլասի, ձեռամբ իմ՝ Թեոդուլոսի, Սալիմի ամենասուքը Աստվածածնի վանականի և երեցի (երկուսն էլ կապադովկացի), Իսահակ Կոմնինոսի<sup>3</sup> թագավորութան ժամանակ, երբ թագավորանիստ [քաղաքի] պատրիարքն էր պրոէդրոս ու պրոտովեստիարիտես Կոնստանդինը<sup>4</sup>, Անտիոքի՝ Թեոդոսիոսը, վեց հազար հինգ հարյուր վաթսունյոթ թվականին<sup>5</sup>, տասներկուերորդ ինդիկտոնում, ապրիլ ամսի չորսին, ժամը յոթին, ավագ շաբաթ օրը, երբ Եղեսիայի կատապանն էր Հովհաննես Գուկիձեսը<sup>6</sup>, Անտիոքի դուքս՝ Ադրիանոսը, արքայական Միջագետքի պրոէդրոսն ու ինքնակալ տեր՝ Ահարոն Պարադոնավիսը<sup>7</sup>, Իրերիա-

<sup>1</sup> Bernardus de Montfaucon, Bibliotheca Coisliniana olim Segueriana, Parisiis, 1715, p. 306. Հմմտ. R. Devreesse, Catalogue des manuscrits grecs. II, Les Fonds Coislin, Paris, 1945, p. 241—242.

<sup>2</sup> H. O m o n t, Inventaire sommaire des manuscrits grecs de la Bibliothèque Nationale, Troisième partie, Inventaire sommaire des manuscrits grecs de Coislin, Paris, 1888, № 263 (p. 164).

<sup>3</sup> Իսահակ Կոմնինոս, գահակալել է 1057—1059 թթ.:

<sup>4</sup> Կոնստանդին Գ. Լիխուդես, աթոռակալել է 1059—1063 թթ.:

<sup>5</sup> Աշխարհի «արարչագործութան» թվականն է, որ համապատասխանում է մեր թվականության 1059 թ.:

<sup>6</sup> Եղեսիայի կատապան Գուկիձեսի մասին հայ հեղինակներից հիշատակում է Մատթեոս Ուռհայեցին. «Եւ յայնժամ առաքեաց (Կոմնինոս կայսրը—Հ. Բ.) ի կողմն Տաճկաց ի քաղաքն յԱռհա և բերեալ զտուկն քաղաքին Ուռհայոյ, որում անուն էր Տուկիձ, վասն զի ի մեծամեծաց ազգէ էր, եւ առեալ զթաղն զնէր ի գլուխ Տուկիձն» (Մատթէոս Ուռհայեցի, ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 127):

<sup>7</sup> Արքայական Միջագետքի պրոէդրոսն ու ինքնակալ տերը Ահարոն Պարադոնավիսը ոչ այլ ոք է քան հայանի Ահարոն բուլղարը Սա 1049 թ. նշանակվեց Անիի կառավարիչ, հաջորդելով Կատակալոն Կեկավմենոսին: Ահարոնը Անիի մայր տաճարի արևմտյան պատի վրա 1055—1056 թվականներին թողել է հայերեն արձանագրություն, ուր խոսվում է քաղաքի պարիսպների բարձրացման, աշտարակների կառուցման, ջրմուղի անցկացման մասին և այլն (տե՛ս В. Н. Б е ч е ш е в и ч, Три Анийские надписи XI века из эпохи византийского владычества, Петербург, 1921, стр. 2):

Ինչպես տեսնում ենք վանական Թեոդուլոսի թողած հիշատակարանից, 1059 թ. Ահարոնը Միջագետքի դուքսն էր Սա ցույց է տալիս, որ Գրիգոր Մագիստրոսի մահվանից (1058 թ.) անմիջապես հետո, հակառակ Կոնստանդին 9-րդ Մոնոմախի խրիստովուլին, որի համաձայն Միջագետքի գրաությունը արվում էր Գրիգոր Պահլավունուն և նրա սերունդներին (Հմմտ. Արիստակես Լաստիվերացի, Պատմություն, էջ 61 «Եւ մեծարեալ (Գրիգոր) ի նմանէ՝ (ի Մոնոմախէ) առնու դատիւ մագիստրոսութեան, և զտեղիս բնակութեան ի սահմանս Միջագետաց զեօզս եւ քա-

յի՝ Վասիլիոս մագիստրոսը և Հովհաննես Մոնաստիրիոտեսը<sup>1</sup>, Վասպուրականի՝ Բագարատը<sup>2</sup>, Հովհաննես կուրապաղատի և սխուլերի դոմեստիկի Կոմնիենոս Թագավորի եղբոր (ժամանակ)»:

Բոյիլասի կտակի վերջում ևս կա հիշատակագրություն այն մասին, որ այն գրված է 1059 թվականին, նույն վանական Քեոզուլոսի ձեռքով:

Ֆրանսիայի հնագետների ազգային ընկերության (Société Nationale des Antiquaires de France) 1890 թվականի փետրվարի 5-ի նիստում Հ. Օմոնը բյուզանդագետների ուշադրությունը հրավիրեց եվստաթիոս Բոյիլասի կտակի վրա, ընդգծելով նրա նշանակությունը Բյուզանդիայի պատմության և հնագիտության ուսումնասիրության համար: Նա միաժամանակ հայտարարեց, որ ինքը մանրամասն կանդրադառնա այդ կտակին հետազայում<sup>3</sup>, մի բան, որ անկատար մնաց:

Տասնևյոթ տարի անց եվստաթիոս Բոյիլասի կտակը հրատարակեց ռուս բյուզանդագետ Վ. Բենեշևիչը<sup>4</sup>, ընդգծելով նրա նշանակությունը ոչ միայն Բյուզանդիայի, այլև հարևան երկրների պատմության ուսումնասիրության հա-

զարս, գրով և ոսկի մատանեալ յազգէ յազգ մինչև յաիտեան», բյուզանդական պետությունը խախտում է այդ և Միջագետքի կառավարիչ է նշանակում Ահարոն բուլղարին, որը, ինչպես երևում է վերևում նշված հիշատակարանից, արդեն պրոէդրոսի աստիճանին էր բարձրացվել: Այս հիշատակարանի վերջին տողերը մինչև այժմ ուսումնասիրողների կողմից հիշատակված ընթերցվել և Պարադունավիս կոչումը, որն իրականում պատկանում է Ահարոնին, սխալմամբ վերագրվել է Վասիլիոս Մագիստրոսին, պատճառ դառնալով բազմաթիվ վիճարանությունների, որոնց մասին տե՛ս ստորև:

<sup>1</sup> Իրերիայի կառավարան Հովհաննես Մոնաստիրիոտեսը մեկ հայտնի է իր մեկ հոժարեն արձանագրությամբ, որ փորագրել է ավել Անիում 1059 թվականին: Այդ արձանագրությունից հայտնաբերվել են 65 բեկորներ, Ն. Մառի 1907, 1908 և 1914 թվականներին Անիում կատարած պեղումների ժամանակ: Արձանագրության մեջ նա հիշվում է «Հայաստանի և Իրերիայի կառավարան վեստարիոս Հովհաննես Մոնաստիրիոտես» ձևով (տե՛ս В. Н. Бенешевич, Три Анийские надписи, стр. 19):

<sup>2</sup> Վասպուրականի Բագարատը նույն այն Բագարատն է, որ 1063 թվականին դարձավ Անիի դուրս: Նա թողել է արձանագրություն Անիի մայր տաճարի վրա, որ, ի միջի այլոց, փորագրված է. «Անուամբ տեառն ամենակայի և ողորմութեամբ սուրբ և ինքնակալ Թագաւորին Կոստանդեա Դովի կամ եղև իմ Բագրատ մագիստրոսին և արևելից կառավարանիս Վիկացոյս՝ առնել ողորմութիւն մայրաքաղաքիս Անու» (տե՛ս В. Н. Бенешевич, Три Анийские надписи XI века из эпохи византийского владычества, стр. 22): Նրա մասին հիշատակում են երկու բյուզանդական պատմիչներ Սկիլիցես-Վեդրինոսը և Միբայի Ատապիատեսը: Սկիլիցեսը, պատմելով Հայաստանում և Վրաստանում Ալիփ-Ասլանի հրոսակալների կատարած ավերումների մասին, գրում է. — «Իրերիայի բարերեր երկիրը լրիվ ավերվեց և ամայացավ... և բոլոր այն (երկրները), որոնք գտնվում էին նրա մոտիկ՝ Միջագետքն ու Խաղտիքը, ինչպես նաև Մելիտանեն և հողանիան և Եփրատ գետի մոտ գտնվող (քաղաքները), բացի դրանից նաև Արմենիակոն [Թեմր] և Վասպուրականը... Հենց այն ժամանակ էլ Անի է ուղարկվում սրգես դուրս ոմն հայազգի Բագարատ անունով» (տե՛ս Georgius Cedrenus, Historiarum compendium, vol II. Bonnae, 1839, p. 653): Միբայի Ատապիատեսը գրում է, որ այս Բագարատը շխարհացավ «պահովել Անի քաղաքի պաշտպանությունը, դրա համար էլ Անին ընկավ սելջուկների ձեռքը» (Հմմտ. Michaelis Attaliotae, Historia, Bonnae, 1853, p. 80—82): Հայազգի Բագարատին հիշատակում է նաև Մատթեոս Ուսույեցին, ցույց տալով, որ նրա որդին կոչվել է Սմբատ (տե՛ս ժամանակագրություն, էջ 148):

<sup>3</sup> Bulletin de la Société Nationale des Antiquaires de France, 1890, p. 100—101.

<sup>4</sup> В. Н. Бенешевич, Завещание византийского боярина XI века. Журнал Министерства народного просвещения, 1907 г., май, Отдел классической филологии, стр. 219—231:

մար: Բենեշեիչը հրատարակելով կտակի միայն հունարեն տեքստը և այն վերջացնելով «շարունակելի» բառով, ենթադրել էր տալիս, որ նպատակ է ունեցել մոտ ապագայում տալու նաև այդ կարևոր փաստաթղթի թարգմանությունն ու ուսումնասիրությունը: Սակայն, ցավոք, այդ ևս չիրականացավ, գուցե և այն պատճառով, որ Բենեշեիչի իսկ խոսքերով, «Շատ մեծ դժվարություններ է ներկայացնում տեքստը հասկանալը, որովհետև նա վխտում է ստուգարանական և շարահյուսական քուրք օրենքների աղաղակող ամենամեծ խախտումներով, նա զուրկ է որևէ ոճական մշակումից և բացի բազմաթիվ անհասկանալի բառերից ու արտահայտություններից, որոնք մեզ հայտնի են արգեն ուրիշ հուշարձաններից, նա բովանդակում է նորերն էլ, նույնպես անհասկանալի»<sup>1</sup>:

1911 թվականին Բոյիլասի կտակին անդրադարձավ բյուզանդագետ Պ. Բեզոբրազովը: Նա նույնպես կրկնելով Բենեշեիչի խոսքերը տեքստը հասկանալու դժվարությունների մասին, իր կողմից ավելացրեց. «Հեշտ չէ որոշել քերականորեն ճիշտ տեքստը և բացատրել որոշ տերմիններ»<sup>2</sup>, սակայն, «շնայած այդ բոլորին, լրիվ հնարավոր է հասկանալ Բենեշեիչի հրատարակած կտակի միտքը»<sup>3</sup>: Եվ ահա Պ. Բեզոբրազովը իր հոդվածում շարադրում է այս կտակի բովանդակությունը:

Վերջերս Բոյիլասի կտակին անդրադարձավ բյուզանդագետ Մ. Վ. Լեշենկոն: Առանց տվյալ փաստաթղթի մասին որևէ ուսումնասիրություն կամ ժանոթագրություններ տալու, նա կտակը կրճատումներով ուսերեն թարգմանությամբ լույս ընծայեց Բյուզանդիայի սոցիալ-տնտեսական պատմության վերաբերյալ փաստաթղթերի ժողովածուում<sup>4</sup>: Պետք է ասել, որ Լեշենկոյի տված թարգմանությունը մեծապես մեղանշում է կտակի հունարեն տեքստին. այստեղ, առանց որևէ բացատրության, դեն են նետվել բազմաթիվ նախադասություններ ու պարբերություններ, որոնք, առավել կամ պակաս շափով, դժվար թարգմանելի էին:

1957 թվականին լույս տեսավ Ս. Վրիտնիսի փոքր ուսումնասիրությունը Բոյիլասի կտակի մասին, ինչպես և նրա կողմից կատարված կտակի հաջող թարգմանությունը անգլերեն<sup>5</sup>: Վրիտնիսն իր ուսումնասիրության մեջ նպատակ չի դրել բարձրացնելու այդ հուշարձանը որպես աղբյուր սոցիալ-տնտեսական հարաբերությունների ուսումնասիրման, այլ իր գլխավոր ուշադրությունը սևեռել է կտակում հիշատակված անձնավորությունների ինքնությունը պարզելու և Բոյիլասի տիրույթների տեղադրման հարցը լուծելու վրա: Այդ հարցերին մենք կանդրադառնանք ստորև:

<sup>1</sup> В. Н. Бенешевич, Завещание византийского боярина XI века. Журнал Мин. народного просвещения, 1907 г. май, Отдел классической филологии, стр. 221.

<sup>2</sup> П. Безобразов, Завещание Воилы, «Византийский Временник», том XVIII, вып. 1—4 (1911), Отдел III, стр. 107.

<sup>3</sup> Նույն տեղում:

<sup>4</sup> Сборник документов по социально-экономической истории Византии, Москва, 1951, стр. 169—173.

<sup>5</sup> Spegos Vryonis, The will of a provincial magnate, Eustathius Boilas (1059), *Dumbarton Oaks Papers*, number eleven, Cambridge, Massachusetts, 1957, pp. 263—276.



Բոյիլաս բառը բազմիցս է հանդիպում վիմագիր արձանագրութիւններում, զանազան մետաղյա առարկաների վրա, և հատկապես, բյուզանդական սկզբնաղբյուրներում: Բոյիլաս հին բուլղարների մոտ նշանակում էր «բոյարին»<sup>1</sup>: Դեռևս 1799 թ. Հունգարիայի Նազի-Սենտ-Միկլոշ վայրում հայտնաբերված ոսկե գանձի մեջ կար և մի ոսկե թաս հունարեն տառերով գրված «բուիլա» և «ժուպան» մակագրութեամբ<sup>2</sup>: Այդ թասը և ընդհանրապես գանձը թվագրվում է 9-րդ դարի առաջին կիսով<sup>3</sup>:

«Բոյիլաս» տիտղոսը հանդիպում է նաև նախարարապետական վիմագիր արձանագրութիւններում, նույնպես հունարեն տառերով գրված և վերաբերում են 9-րդ դարի առաջին կեսին<sup>4</sup>: Բյուզանդական պատմական սկզբնաղբյուրներում առաջին անգամ Բոյիլաս անունը հանդիպում է Թեոֆանեսի ժամանակագրութեան մեջ: Երբ 798 թվականին թագուհի Իրենեն դուրս էր գալիս սուրբ Առաքելոց եկեղեցուց, նրան ուղեկցում էին շորս պատրիկներ, որոնց թվում էր և ոմն Կոնստանդին Բոյիլաս<sup>5</sup>: Ավելի քան մեկ դար լուսթյունից հետո 923 թվականին, հիշատակվում է ոմն Վարդաս Բոյիլաս Խաղտիքի ստրատեգ, որ ձերբակալվեց Ռոմանոս Լեկապենոս կայսրին գահընկեց անելու անհաջող փորձի կապակցութեամբ<sup>6</sup>: Երկու տարի անց այդ գերդաստանի մի այլ ներկայացուցիչ, կայսերական պալատի սպա Կոնստանդին Բոյիլասը ծրարում էր, միատիկոս Հովհաննեսի հետ միասին, տապալել Ռոմանոսին<sup>7</sup>: Կոնստանդին 7-րդի թագավորութեան ժամանակ Փոքր Ասիայի Նիկոպոլիս քաղաքի կատապան է հիշվում պրոտոսպաթար Պետրոնաս Բոյիլասը<sup>8</sup>:

Բոյիլաս գերդաստանի անվանը այնուհետև հանդիպում ենք 11-րդ դարի կեսերին, Կոնստանդին Մոնոմախ կայսեր (1042—1054 թթ.) ժամանակ, երբ ոմն Ռոմանոս Բոյիլաս, որ բարձր դիրքի էր հասել սենատում, գաղտնի գործողութիւններ էր սկսել, ուրիշ սենատորների հետ մեկտեղ, գահընկեց անելու համար Կոնստանդին Մոնոմախին, գահին տիրելու հավակնութեամբ<sup>9</sup>: Այդ գեպքը, ինչպես կարելի է եզրակացնել Սկիլիցես-Կեղրինոսի տվյալներից,

<sup>1</sup> Տե՛ս. Н. Кондаков, История и памятники византийской эмали, СПб, 1892, стр. 38.

<sup>2</sup> V. Thomsen, Une inscription de la trouvaille d'or de Nagy-Szent-Miklos, Historisk-filologiske Meddelelser Det Kgl. Danske Videnskabernes Selskab, I, 1, Kjöbenhavn, 1917.

<sup>3</sup> Տե՛ս. J. Strzygowski, Zur Datierung des Goldfundes von Nagy-Szent-Miklos, Byzantinische Zeitschrift, Bd. 6, 1897, S. 586.

<sup>4</sup> Տե՛ս. F. Dvornik, Deux inscriptions greco-bulgares de Philippes, Bulletin de Correspondance Hellénique, 52 (1928) p. 128; V. Beševliev, Der Titel *καυάρτι κείνος*, Byzantinische Zeitschrift, Bd. 32, I Halbjahrsheft, 1932, S. 13; Տե՛ս. Karel Skorpil i Petr Nikov, Надписи от първото българското царство в източната част на Балканския полуостров, часть III, Byzantinoslavica, t. III, fasc. 2, p. 366.

<sup>5</sup> Theophanis Chronographia, ed. C. de Boor, t. I, Lipsiae, 1883, p. 474.

<sup>6</sup> Georgii Monachi Vitae imperatorum recentiorum, Bonnae 1838, p. 896—897.

<sup>7</sup> Ibidem, p. 903.

<sup>8</sup> Constantine Porphyrogenitus, De administrando imperio, ed. G. Moravcsik and transl. R. H. J. Jenkins, Budapest, 1949, p. 212.

<sup>9</sup> Georgii Cedreni Historiarum compendium, t. II, Bonnae, 1839, p. 605. Տե՛ս. Michaelis Glycae, Annales, Bonnae, 1834, p. 597:



տեղի է ունեցել 1051—1052 թվականներին<sup>1</sup>: Ռոմանոսն ու իր գործակիցները ձերբակալվեցին և, շնայած որ վերջիններս խիստ պատժի ենթարկվեցին, Ռոմանոս Բոյիլասը կարճատև արքայից հետո վերահաստատվեց իր բարձր պաշտոնում:

Ահա սրանից հետո, 1059 թվականին, հանդես է գալիս Եվստաթիոս Բոյիլասը, որի կտակին է նվիրված մեր ներկա ուսումնասիրությունը: Ինչպես երևում է այս կտակի տվյալներից, Եվստաթիոս Բոյիլասը Կոնստանդնուպոլսի Ոսկե պալատում պրոտոսպաթարիոսի աստիճան ունեւր, մի քան որ ցույց է տալիս արքունիքում նրա բարձր պաշտոն ունենալը: Նա միաժամանակ հյուպատոս էր, ուստի տեղ ուներ նաև սենատում: Ս. Վրիոնիսը ենթադրում է, որ Եվստաթիոս Բոյիլասը մասնակցել է Ռոմանոս Բոյիլասի հետ Կոնստանդին Մոնոմախի դեմ 1051—1052 թվականին կազմակերպված դավադրությանը, որի անհաջող ելքից հետո արքայի է Կոնստանդնուպոլսից և Կապադովկիայում գտնվող իր տիրույթներից<sup>2</sup>: Ս. Վրիոնիսն ենթադրում է, որ այդ դեպքին են վերաբերում Եվստաթիոս Բոյիլասի կտակի հետևյալ խոսքերը. «Իսկ թե ինչքան դժվարություններ պատճառեցին ինձ խառնակ ժամանակները ևս ոչ մի կերպ չեմ կարող պատմել, որովհետև ևս անշափ տանջվել եմ դժբախտություններից, ինձ ամեն կողմից անդադար հարվածել են կոհակները, ինչպես նավարեկյալին»:

Եվստաթիոս Բոյիլասը գրում է իր կտակում, թե ինքը կապադովկացի է և իր մոր ու կնոջ Աննայի հետ որոշ ունեցվածքով գաղթել է Կապադովկիայից, կտրելով մեկ ու կես շաբաթվա ճանապարհ: Թե ինչու է Բոյիլասը գաղթել, այդ մասին նա ոչինչ չի գրում, քայց նա ընդգծում է, որ այն վայրերը, որոնք իր սեփականությունն են կազմել իր երկրորդ հայրենիքում՝ «ստացել է»: Այդ քանը նա մի քանի անգամ է կրկնում և պարզ է, որ նա այդ ստացել է բյուզանդական կառավարության կողմից:

Ինչ է ստացել Բոյիլասը: Նա թվարկում է իր անշարժ ունեցվածքը, որը կազմված է հետևյալ գյուղերից, պրոաստիոններից ու կալվածքներից. Եսայասի, Խոսպակրատ, Կոպտերիոն, Օփիդորունի (թարգմանաբար նշանակում է օձերի լեռ), Կուաներիա, Կալմուխի, Պարաբունիոն (թարգմանաբար նշանակում է լեռան ստորոտ կամ լեռան կից), Վարդա, Տանձուտ-Չալիմա և Բուզինա: Այն փաստը, որ Բոյիլասը հաստատվել է «այլ հավատք պաշտող և այլ լեզվով խոսող ժողովուրդների մեջ», որոնցից հիշատակվում են միաջն հայերը — 'Αρμένιοι և այն, որ նշված տեղանուններից մի քանիսը — Տանձուտ, Վարդա, Խոսպակրատ, Բիդանա (կարդա Վիդանա, հայերեն՝ Վժան) հնչում են հայերեն, ցույց է տալիս, որ Բյուզանդիայից դուրս պետք է փնտրել նշված բնակավայրերը: Այս հարցը հասկանալի է, շատ մեծ կարևորություն ունի, հատկապես եթե նկատի ունենանք այն հանգամանքը, որ այդ վայրերի տեղադրման կապակցությամբ արտահայտվել են մի քանի իրարից տարբեր կարծիքներ: Այսպես Հ. Օմոնը սխալմամբ Բոյիլասի կտակում հիշված վայրերը տեղադրում է Կապադովկիայում<sup>3</sup>, ելնելով, ըստ երևույթին, այն քանից, որ Բոյիլասը կապադովկացի էր, և աշքաթող անելով այն հանգամանքը, որ իր իսկ

<sup>1</sup> St' u S. Vryonis, The will of a provincial magnate, Eustathius Boilas (1059), p. 273.

<sup>2</sup> Ibidem, p. 274.

<sup>3</sup> Bulletin de la Société Nationale des Antiquaires de France, 1890, p. 101.

ասելով նա շարաթ ու կես ճանապարհ է կտրել հաստատվելու համար իր նոր բնակավայրում՝ օտար ժողովուրդների մեջ:

Պ. Բեզոբրազովը, առանց որևէ հիմքի հայտարարում է, որ, իբր, Բոյիլասը դաղթել է Անտիոքի թեմը<sup>1</sup>: Իսկ բուլղար սլաոմարան Վ. Զլատարսկին, ելնելով այն քանից, որ վանական Թեոդուլոսի հիշատակարանում կայսրից և պատրիարքից անմիջապես հետո հիշատակվում են Եդեսիայի կատապանի և ապա Անտիոքի դուքսի անունները, ենթադրում էր, որ նշված վայրերը հավանաբար գտնվում էին Եդեսիա քաղաքի շրջակայքում<sup>2</sup>: Միմիայն Ս. Վրիոնիսն եկավ այն ճիշտ եզրակացության, որ Կապադովկիայից արևելք պետք է փրնտրել Բոյիլասի երկրորդ հայրենիքը: Բոյիլասի կալվածների շարքում հիշված Կալմուխի տեղանվան հիման վրա նա գալիս է այն եզրակացության, որ Բոյիլասը հաստատվել է Տայքում<sup>3</sup>: Այդ տեսակետից Բոյիլասի կտակը մեծ արժեք է ներկայացնում ոչ միայն Հայաստանի, այլև Վրաստանի սոցիալ-տնտեսական հարաբերությունների ուսումնասիրության համար:

Նշված Կալմուխի մասին որոշ տվյալների մենք հանդիպում ենք բյուզանդական սկզբնաղբյուրներում: Այսպես, օրինակ, Անտիոքի պատրիարքության ենթակա եպիսկոպոսությունների ցուցակում մենք կարդում ենք, որ Իբերիայում Անտիոքի պատրիարքին են ենթարկվում հետևյալ սլոտաստիոնները. Ալտալտը, Սպորտանոսը, որոնք գտնվում են Պանասկերից հյուսիս և Զեբարդին, որը գտնվում է Կալմալխի հարավում<sup>4</sup>:

Վարդան Արևելցին գրում է, որ Սմբատի որդիներ Աշոտ Մսակերն ու Շապուհը «ելեալք զկողմամբն Շիրակայ՝ հարին զգօրսն Իսմայելի՝ որ անդ, և գրաւեցին յինքեանս զՇիրակ և զԱշոցք, և զգաւառն Տայոց: Եւ այսպէս ըստ բախտին ելեալ Աշոտի քաջի՝ շինէ զԿամախս, և բնակեցուցանէ ի նմա զընտանիս իւր»<sup>5</sup>: Պարզ է, որ Աշոտի կողմից կառուցված Կամախը չպետք է շփոթել Անի-Կամախի հետ. այն Տայքի Կալմախին է, որ Բոյիլասի կտակում հանդես է գալիս Կալմուխի ձևով, և միանգամայն ճիշտ են Մ. Բրոսսեն<sup>6</sup> և Մարկվարտը<sup>7</sup>, որոնք Վարդանի Կամախը տեղադրում են Տայքում: 11-րդ դարի վրաց պատմիչ Լեոնտի Մրովելին իր «Վկայարանութիւն Արշիլի» աշխատության մեջ խոսում է Տայքում Կամախ ամրոցի կառուցման մասին: Վրացերեն բնագրում այդ

<sup>1</sup> П. Безобразов, Завещание Воилы, стр. 107.

<sup>2</sup> Տե՛ս V. N. Zlatarski, Една датирана приписка на гръцки от средата на XI век. Byzantinoslavica, t. I, 1929, p. 25.

<sup>3</sup> S. Vryonis, o. c., p. 275 Ավելի ճիշտ Կղարջքում; Հմմտ. Ernst Honigmann, Die Ostgrenze des byzantinischen Reiches von 363 bis 1071 nach griechischen, arabischen, syrischen und armenischen Quellen, Bruxelles, 1935, S. 220 և հաջորդ:

<sup>4</sup> Տե՛ս V. Benešević, Die byzantinischen Ranglisten, Byzantinisch-Neugriechische Jahrbücher, Athen, 1926, Bd. 5, 1 und 2 Heft, S. 106. Վատիկանի մատենադարանի № 3 հայերեն ձեռագրի 270-րդ էջում գտնվում է եպիսկոպոսությունների ցուցակ, որը թարգմանված է հունարենից 1180 թվականին: Այստեղ մեջ են բերված վերը հիշատակված տեղանունները: Տե՛ս F. C. Conybeare, On some Armenian Notitiae, Byzantinische Zeitschrift, Bd. 5, 1896, S. 126.

<sup>5</sup> Հուսարումն սլաոմութեան Վարդանայ վարդապետի, Վենետիկ, 1862, էջ 76:

<sup>6</sup> Տե՛ս M. Brosset, Additions et éclaircissements a l'histoire de la Géorgie, depuis l'antiquité jusqu'en 1469, S. Pétersbourg, 1851, p. 159, ծանոթ. 5:

<sup>7</sup> J. Marquart, Osteuropäische und Ostasiatische Streifzüge, Leipzig, 1903, S. 404, ծանոթ. 2:

տեղանունը տառադարձված է նաև Կալմախի ձևով<sup>1</sup>: Արքայազն Վախուշտի Աշխարհազրույթյան մեջ ասվում է. «Արտանուշի գետի՝ [Ճորոխին] միախառնվելու տեղից վերև, Ճորոխին միանում է Թորթումի լեռից հստղ ջուրը, որ ուղղվում է դեպի արևելք: Այս ձորի վրա է Կալմախի բերդը, որ կառուցել են բղեշխները (պատիաշխներ) մեծաշեն, ամուր և անաճց, (և) որ Տառչի էրիսթալույթյան [կենտրոնն] էր»<sup>2</sup>: Կալմախի ռազմական տեսակետից մեծ կարևորություն ունենալը շեշտված է նաև ժամանակակից հեղինակների կողմից, որ Իշխանը, Կալմախը և Պանասկերը տիրում են Օլթիի և Բարդոսի հովիտների վրա<sup>3</sup>, և պատահական չէ, որ դուքս Միքայիլը, ուրիշ երկու գյուղերի հետ միասին Բոյիլասից խլել է նաև Կալմախին:

Կովկասի հինգ վերստանոց քարտեզի վրա մեզ հաջողվեց գտնել Բոյիլասին պատկանող գյուղերից մի քանիսը ևս, որոնց անունները բարբարոսաբար շատ շեն փոխվել: Նրանք գտնվում են Արտանուշի շրջանում: Այդպես, օրինակ, Բոյիլասի կտակում հանդիպող Տանձուտ գյուղը, որ հանդիսանում էր միաժամանակ Բոյիլասի նստավայրը, անկասկած ժամանակակից Տանձուտ գյուղն է Արտանուշից մոտ տաս կիլոմետր հարավ-արևելք: Բոյիլասի կտակում ասված է, որ Տանձուտը այլ կերպ կոչվում էր Ջալիմա (Ջալիմա): Կովկասի հինգ վերստանոց քարտեզի վրա ցույց է տրված Տանձուտին կպած Ջալիլիետ վայրը, որը Ն. Մաուր անվանում է Տանձուտի ավան<sup>4</sup>: Տանձուտում գտնվում է վրացերեն մի արձանագրություն, որը վերաբերում է սուրբ Մարինա եկեղեցու շինարարությունը, թվագրված բրոնզեկտնի 531 (1312) թվականով: Այդ արձանագրության մեջ եկեղեցու շինողը անվանված է Սաիմդավլե Կալմախելի<sup>5</sup>, այն է Սաիմդավլե Կալմախեցի, անկասկած Բոյիլասի կտակում հիշատակված Կալմախի վայրից, որը գտնվում էր Տանձուտից 15—20 կիլոմետր հեռավորության վրա: Տանձուտից հինգ կիլոմետր արևմուտք գտնվում է Կապտախոր գյուղը, հավանաբար Բոյիլասի կտակի Կոպտերիոնը<sup>6</sup>: Արտանուշից հինգ կիլոմետր արևելք հինգ վերստանոց քարտեզի վրա ցույց է տրված Ուսոտ գյուղը: Ն. Մաուր Կղարջբում և Շավշեթիայում կատարած ճանապարհորդության օրագրում ճշտում է այդ գյուղի անունը, ոչ թե Ուսոտ,

<sup>1</sup> Տե՛ս Քարթլիս Տխովրեբայի կամ վրաց պատմության հին հայերեն թարգմանությունը, վրացերեն բնագիրը և հին հայերեն թարգմանությունը ուսումնասիրությանը և բառգրքով լույս բնծայեց Իլիա Արուլանեն, Թբիլիսի, 1953, էջ 204: Հմմտ. և Մելիքսեր-Քեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հատ. Ա, Երևան, 1934, էջ 196: Կալմախի անվան ծագման մասին տե՛ս Н. Я. Марр и Я. И. Смирнов, Вишаны, Ленинград, 1931, стр. 19—21.

<sup>2</sup> Պրոֆ. և Մելիքսեր-Քեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հատոր Գ, Երևան, 1955, էջ 84:

<sup>3</sup> Տե՛ս W. E. D. Allen, The march-land of Georgia, The Geographical Journal, vol. LXXIV, № 2, August, 1929, p. 154.

<sup>4</sup> Георгий Мерчул, Житие св. Григория Хандзтийского, Грузинский текст, введение, издание, перевод Н. Марра, с дневником поездки в Шавшню и Кларджию. Тексты и разыскания по армяно-грузинской филологии, книга VII, СПб, 1911, стр. 106.

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 105:

<sup>6</sup> Ս. Վրիոնիսը նեթադրում է, որ կտակում հիշատակված Կոպտերիոնը դա Կապտախ վայրն է, ուր 1049 թվականին տեղի ունեցավ ճակատամարտ բյուզանդացիների և սելջուկների միջև (Տե՛ս Cedrenus, t. II, p. 578 և հաջորդ), միաժամանակ շեշտելով, սակայն, որ այդ նույնացումը հնարավոր չէ հաստատել: Տե՛ս հիշ. աշխ., էջ 275: Սակայն Կապտախում գտնվում էր ոչ թե Տալբում, ինչպես Վրիոնիսն է գրում, այլ Արծնի մոտ:

այլ Ռեծոս<sup>1</sup>, որի տակ հնարավոր է ենթադրել Բոյիլասի կտակում հանդիպող Ռեդիկի գյուղը: Արտանուջի շրջանում հինգ վերստանոց քարտեղի վրա ցույց են տրված իրարից ոչ շատ հեռու գտնվող երկու գյուղ, մեկը կոչվում է Վարդասխեվի, մյուսը՝ Վարդխել, որոնցից մեկի տակ պետք է փնտրել Բոյիլասի կտակում հանդիպող Վարդա վայրը (խեվի վերջավորութունը վրացերեն նշանակում է ձոր):

861 թվականին վախճանված սուրբ Գրիգոր Խանձիթեցու վարքի մեջ, որը գրված է նրա մահից 90 տարի հետո, Խանձիթի շրջակայքում հիշատակվում է Օպիզա վայրը, ուր կար հռչակավոր վանք<sup>2</sup>: Վրաց Բագրատ 4-րդ թագավորի մի հրովարտակը, որը գրված է 1027 թվականին, վերաբերում է հենց այս Օպիզայի վանքի տիրույթների սահմանների հարցին<sup>3</sup>: Կովկասի հինգ վերստանոց քարտեղի վրա Արտանուջից հյուսիս ցույց են տրված երկու վայր Օպիզա և Օպիսչալա: Սրանցից մեկը, հավանաբար, կապ ունի կտակում հանդիպող Օպիզո-բունի տեղանվան հետ (բունի հունարեն նշանակում է լեռ): Նույն քարտեղի վրա այդ շրջանում ցույց են տրված նաև Խոզարիք և Խոզարատ գյուղերը, որոնցից մեկը պետք է, հավանաբար, համապատասխանի կտակի Խոսպակրատ գյուղին:

Ինչպես տեսնում ենք Բոյիլասի տիրույթները գտնվելիս են եղել Կղարջքում, ավելի կոնկրետ Արտանուջի շրջանում: Այդ բոլոր շրջանները ենթարկվեցին բյուզանդական ազդեցության Տայքի կուրապաղատ Դավիթ 3-րդի մահից՝ 1001 թվականից հետո. Բյուզանդիայի Վասիլ 2-րդ կայսեր և վրաց թագավոր Գեորգի 1-ի միջև 1023 թվականին կնքված պայմանագրի համաձայն դրանք անցան Բյուզանդիայի ձեռքը:

Բոյիլասի կտակում հիշատակված տեղանունների ճշտումը մեզ հնարավորություն է տալիս հանգելու և ուրիշ եզրակացությունների: Տարածված է եղել այն կարծիքը, որ Կղարջքի հայկական բնակչությունը արդեն 11-րդ դարում լրիվ քաղկեդոնիկ էր դարձել, շնայած ընդհուպ մինչև 11-րդ դարի վերջը շարունակում էր վրացերեն լեզվին զուգահեռ պահպանել հարազատ հայերեն լեզուն<sup>4</sup>: Բոյիլասի կտակը ցույց է տալիս, որ 11-րդ դարի կեսերին Կղարջքի հայկական բնակչությունը դեռևս լրիվ քաղկեդոնական չէր, այլապես Բոյիլասը չէր գրի իր կտակում, որ ինքը բնակվեց այլ հավատք պաշտող ժողովուրդների մեջ: Վրացիները բյուզանդացիների համար այլադավաններ չէին, այդպիսիք չէին կարող լինել նաև քաղկեդոնիկ հայերը: Պարզ է, որ տվյալ դեպքում Բոյիլասը նկատի ունի միաբնակ հայերին: Իսկ որ քաղկեդոնականները և միաբնակները իրար այլադավաններ էին համարում, դա կասկածի ենթակա չէ: Հայոց Գրիգոր Գ. Տղա կաթողիկոսը Բյուզանդական կայսր Իսահակ Անգելոսին գրած նամակում վերջինիս մեղադրում էր այն բանի մեջ, որ նա բունի «այլադավան» է դարձնում Բյուզանդիայում ապրող հայերին<sup>5</sup>, այսինքն որ նա նրանց քաղկեդոնիկ է դարձնում:

<sup>1</sup> Георгий Мерчул, стр. 103.

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 89:

<sup>3</sup> Տե՛ս Դ. Ս. Սուրբաբադյան, Грузинские церковные гуджары (грамоты), Тифлис, 1881, стр. 120—121.

<sup>4</sup> Георгий Мерчул, стр. XVI. (Ն. Մասի առաջաբանը):

<sup>5</sup> Տե՛ս 2. Բ ա ռ թ ի կ յ ա ն, Նոր նյութեր Կիլիկիայի հայկական պետության և Բյուզանդիայի փոխհարաբերությունների մասին, «Բանբեր Մատենադարանի», № 4, 1958, էջ 287:

Բոյիլասի Կղարչքում բնակվելու հանգամանքը հաստատում է Արիստակես Լաստիվերացու հիշատակությունն այն մասին, թե Հայաստանում «ինքնակալ թագաւորն հոռոմոց Վասիլն... տիրէ բազում գաւառաց և բերդից և քաղաքաց: Եւ կացուցանէ ի վերայ նոցա գործակալս և դատաւորս և վերակացուս»<sup>1</sup>, կամ «թագաւորեաց զկնի Վասիլն Կոնստանդին... և զիշխանս որ գաւառակալք էին, զոր մեծն Վասիլ կարգեալ էր, ի նոյն հաստատեաց»<sup>2</sup>: Ահա Բոյիլասը ևս, ամենայն հավանականութեամբ, մեկն էր այդ «գաւառակալ» իշխաններից:

Սովորաբար բյուզանդագետները շեշտում են նշված ժամանակաշրջանում Հայաստանի և Վրաստանի նկատմամբ Բյուզանդիայի վարած քաղաքականութեան միայն մեկ կողմը, այն, որ նպատակ ունենալով այդ երկրները թուլացնել, քաղաքական և ռազմական տեսակետից, նա աշխատում էր տեղական ֆեոդալներին, կամավոր կամ բռնի ճանապարհով գաղթեցնել Բյուզանդիա: Այդպիսի քաղաքականութեան արտահայտությունն է հանդիսանում Վասպուրականի թագավոր Սենեբերիմի գաղթեցումը Կապադոկիա 1021 թ., Անիի թագավոր Գագիկի գաղթեցումը Կոնստանդնուպոլիս 1045 թ., Կարսի թագավոր Գագիկի գաղթեցումը Կիլիկիա և այլն: Հայտնի է նմանապես, որ Բյուզանդիան իր կողմից գրավված շրջաններում հաստատում էր բյուզանդական դուքսերի, կատապանների և մագիստրոսների իշխանությունը: Բոյիլասի կտակը սակայն ցույց է տալիս, որ միաժամանակ տարվում էր նաև բյուզանդական ֆեոդալների, ամենայն հավանականութեամբ, բռնի կերպով հայկական և վրացական հողերի վրա բնակեցվելու քաղաքականություն, նպատակ ունենալով բյուզանդական տիրապետության պատվարներ ստեղծել նվաճված ժայռամասերում, մեքան, որ հանդիպում էր տեղական բնակչության դիմադրությանը:

Եվստաթիոս Բոյիլասը շարադրում է իր կտակը նախ և առաջ գանգատվելով խառը ժամանակներից, որոնք անշափ վիշտ են պատճառել իրեն: Այնուհետև նա անդրադառնում է այն տառապանքներին, որոնք հասել են նրան իր բնակած շրջանի քաղաքական և ռազմական ղեկավարի՝ Միքայել դուքսի և նրա որդի Վասիլիոս մագիստրոսի<sup>3</sup> կողմից: Վասիլիոս մագիստրոսը հիշված է նաև կտակը պարունակող ձեռագրի գրիչ Թեոդուլոս վանականի հիշատակարանում, որտեղ մեկ առ մեկ թվարկված են Բյուզանդիայի արևելյան նահանգների քաղաքական և ռազմական իշխանավորները, իրենց ենթակա շրջանների հետ միասին: Կտակի վերջում նրա պայմանների ճշգրիտ կատարմանը հետևող հոգաբարձուների թվում հիշատակված են ինչպես այդ նույն Վասիլիոս մագիստրոսը, ապա նաև վերջինիս եղբայրը, նույնպես ռազմական գործիչ, վեստարխոս Ֆարեսմանեսը: Այս վերջին (Ֆարեսմանես-Փարսման) անունից դատելով, կարելի է եզրակացնել, որ 11-րդ դարի կեսերին Կղարչքի քաղաքական ու ռազմական ղեկավարությունը գտնվում էր այնպիսի մարդկանց ձեռքին, որոնք ծագումով հայ էին (գուցե և վրացազավան)<sup>4</sup> կամ վրացի:

<sup>1</sup> Արիստակես Լաստիվերացի, Պատմութիւն, էջ 4—5:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 11:

<sup>3</sup> «Դուքս» կամ «մագիստրոս» դրանք բյուզանդական տերմիններ են: Այդ մեծամեծները, ամենայն հավանականութեամբ, տեղում կոչվել են «տանուտերներ»: Վրաց Բագրատ 4-րդ թագավորի 1027 թվականի հրովարտակում, որը վերաբերում է Օպիզա վանքի հողերին, Տալթի և Կղարչքի վերակացուները անվանված են «տանուտերներ»: Տե՛ս Դ. Մ. Пурцеладзе, Грузинские церковные гуджары (грамоты). Тифлис, 1881, стр. 121.

<sup>4</sup> Մի քանի տասնամյակ հետո Թեոդոսուպոլիսի թեմայի դուքս դարձող Գրիգոր Բակուրյանը

Միքայել դուքսի և նրա որդիներ Վասիլիոս մագիստրոսի և վեստարիոս Ֆարեսմանեսի անձնավորութիւնների բացահայտման գործով զբաղվել է Ս. Վրիոնիսը: Բյուզանդագետների մեջ երկար վեճեր են եղել Վասիլիոս մագիստրոսի անձնավորութեան շուրջը, որոնց հիմնական պատճառն այն է, որ բոլոր տառամնասիրողները «Պարադունավիս» մականունը, որ հիշատակվում է վանական Քեոզուլոսի վերևում մեր կողմից մեջ բերված հիշատակարանում, վերագրում էին ոչ թե Ահարոն մագիստրոսին, ինչպես իրականում է, այլ այս Վասիլիոս մագիստրոսին<sup>1</sup>: «Պարադունավիս» հոնարեն նշանակում է «Մերձդանուբյան»: Բյուզանդական պատմիչներ Միքայել Ատտալիատեսը, Զոնարան և Սկիլիցես-Կեզրինոսը պատմում են որ, 1065 թվականին Ուզբը անցնելով Իստրոս (Դանուբ) գետը, գերի վերցրին մերձդանուբյան (Պարիստրիոն) քաղաքների արխոնտներ Նիկիփորոս Վոտանիատեսին և մագիստրոս Վասիլիոս Ապոկապեսին<sup>2</sup>: Ռումինացի բյուզանդագետ Ն. Բանեսկուն վանական Քեոզուլոսի հիշատակարանում նշված Վասիլիոս մագիստրոսին, որին նա վերագրում է «Պարադունավիս» մականունը, նույնացնում է վերոհիշյալ մերձդանուբյան քաղաքների արխոնտ Վասիլիոս Ապոկապեսի հետ և պնդում, որ «Պարադունավիս»-ը ոչ թե մականուն է, ինչպես ենթադրում էր հույն բյուզանդագետ Լամբրոսը<sup>3</sup>, այլ «Պարիստրիոն» (մերձդանուբյան) բառի էկվիվալենտը<sup>4</sup>:

Բուլղար բյուզանդագետ Վ. Զլատարսկին հանգեց այլ եզրակացութեան<sup>5</sup>: նրա կարծիքով, Քեոզուլոսի հիշատակարանում հանդիպող մագիստրոս Վասիլիոս «Պարադունավիսը» ոչ մի դեպքում չէր կարող լինել մերձդանուբյան քաղաքների դուքս՝ 1059 թվականի ապրիլին (հիշատակարանի գրութեան ժամանակը): Նա չէր կարող Վասիլիոս Ապոկապեսի հետ նույն անձնավորութիւնը լինել, որովհետև վերջինս մագիստրոսի կոչում ստացավ 1064 թվականին, իսկ նույն դարի 50-ական թվականներին նա պատրիկի կոչում ուներ: Բացի դրանից, շարունակում է նա, 1059 թվականի վերջում և 1060 թ. որպես մերձդանուբյան երկրների արխոնտ հիշատակվում է Ռոմանոս Դիոգենեսը: Վ. Զլատարսկին միանում է հույն բյուզանդագետ Լամբրոսի կարծիքին, որի համաձայն Քեոզուլոսի հիշատակարանում հանդիպող «Պարադունավիս»-ը պարզապես այնտեղ հիշատակվող մագիստրոս Վասիլիոսի մականունն է և որ չի

վրացողական հայ էր, ծագումով Տալիցի: Տե՛ս Н. Март, Аркаун, Монгольское название христиан, в связи с вопросом об армянах халкедонитах. Отдельный оттиск из «Византийского Временника», том XII, 1905, стр. 21, 24.

<sup>1</sup> Այդ մասին մանրամասն տես Մ. Բարտիկյան, Относится ли прозвище Παραδουναβις к магистру Василию в памятной записи монаха Феодула (1059 г.)?, ՀՍՍՐ ԳԱ «Տեղեկագիր», 1959 թ., № 8:

<sup>2</sup> Տե՛ս Michaelis Attaliothae Historia, Bonnae, 1853, p. 83; Ioannis Zonarae Epitome historiarum, t. III, Bonnae, 1897, p. 678; Georgii Cedreni Historiarum compendium, t. II, Bonnae 1839, p. 654.

<sup>3</sup> Σπ. Λάμπρος, Ἐνθυμύσεων ἤτοι χρονικῶν σημειωμάτων συλλογή πρώτη. «Νέος Ἐλληνισμὸς», VII (1910), σελ. 130-131:

<sup>4</sup> N. Bănescu, Les premiers temoignages byzantins sur les Roumains du Bas-Danube, Byzantinisch-Neugriechische Jahrbücher, Bd. III, 3 und 4 (Doppel-) Heft, 1922, S. 294-295. Նույնի, La question du Paristrion, Byzantion, t. VIII (1933), fasc. I. p. 294.

<sup>5</sup> N. V. Zlatarski, Една датирана приписка на гръцки от средата на XI век, Byzantinoslavica, t. I, 1929, p. 28, sq.

կարելի այն ընդունել որպես կոնկրետ շրջանի վրա իշխանություն ունեցող անձնավորության տիրոջ: Վ. Զլատարսկին ենթադրում է, որ Քեոզուլոս վանականի հիշատակարանում հանդիպող մագիստրոս Վասիլիոսը, դա Մատթեոս Ուոհայեցու ժամանակագրության մեջ հիշատակված բուլղար թագավոր Ալուսիանի որդի Վասիլն է, որը Ռոմանոս Դիոգենեսի թագավորության սկզբում եղեսիայի դուքսն էր<sup>1</sup>: «Պարագունավիս» մականունը, ըստ Զլատարսկու, ցույց է տալիս Վասիլի բուլղարական ծագումը: Սակայն Զլատարսկին ուշադրություն չէր դարձնում այն հանգամանքի վրա, որ այդ Վասիլի եղբայրը կոչվում էր Ֆարեսմանես-Փարսման, մի անուն, որ դժվար թե բուլղարների մոտ տարածված լիներ: Այդ անունը ցույց է տալիս, որ Ֆարեսմանեսը, ինչպես և, հասկանալի է, նրա եղբայր Վասիլիոսը և նրանց հայր Միքայելը կարող էին, ինչպես վերևում ասեցինք, կամ հայկական, կամ էլ վրացական ծագում ունենալ:

Ս. Վրիոնիսն հիմնականում ընդունում է Ն. Բանեսկուի եզրակացությունները և միաժամանակ փորձում է բացահայտել կտակում հանդիպող մյուս երկու անձնավորություններին՝ մագիստրոս Վասիլիոսի հայր՝ դուքս Միքայելին և վերջինիս մյուս որդուն՝ վեստարխոս Ֆարեսմանեսին: Նա գրում է. «Մագիստրոս Վասիլիոսը նույն մագիստրոս Վասիլիոս Ապոկապեսն է: Կտակում հիշատակված մագիստրոս Վասիլիոսի եղբայր վեստարխոս Ֆարեսմանեսը՝ նույն վեստարխոս<sup>2</sup> Ֆարեսմանես Ապոկապեսն է, որը 1069 թվականին Ռոմանոս Դիոգենես կայսրի կողմից նշանակվեց Հիերապոլիս քաղաքի ստրատեգ: Ինչ վերաբերում է կտակում հիշատակված դուքս Միքայելին, մագիստրոս Վասիլիոսի և վեստարխոս Ֆարեսմանեսի հորը, Վրիոնիսի կարծիքով նա հիշատակված է Մատթեոս Ուոհայեցու մոտ, որի ժամանակագրության մեջ նա հանդես է գալիս որպես «Ապուրապ, հայր Վասիլ»:

Ե՛վ Բանեսկուի, և՛ նրան հետևող Ս. Վրիոնիսի եզրակացությունները, որոնք առաջին հայացքից կասկած չեն հարուցում, հեռու են համոզեցուցիչ լինելուց: Մատթեոս Ուոհայեցու մոտ հիշատակված Ապուրապը, որին Վրիոնիսը նույնացնում է Բոյիլասի կտակում նշված դուքս Միքայելի հետ, 1035—1038 թվականներին Եղեսիայի քաղաքի դուքսն էր և այդ պաշտոնում հիշատակվում է դեռևս 1065 թվականին<sup>3</sup>: Սկիլիցես-Կենդրինոսը հիշատակում է որ 1038 թվականին Եղեսիա քաղաքին տիրում էր վրացական ծագում ունեցող Վարադվաշեն<sup>4</sup>: Եթե այս Վարադվաշեն և Ուոհայեցու մոտ հիշատակված

<sup>1</sup> Հմմտ. Մատթեոս Ուոհայեցու, ժամանակագրություն, Վաղարշապատ, 1898, էջ 195:

<sup>2</sup> Վրիոնիսը սխալմամբ գրում է վեստարխոս: Նա հենվում է Սկիլիցես-Կենդրինոսի ժամանակագրության վրա, ուր այդ Ֆարեսմանը ոչ թե վեստարխոս է հիշատակված, այլ վեստ. Տե՛ս Georgius Cedrenus, t. II, Bonnae 1839, p. 675; Հմմտ. Michaelis Attaliothae Historia, Bonnae, 1853, p. 116:

<sup>3</sup> Սակայն Մատթեոս Ուոհայեցու մոտ մենք կարդում ենք, որ ՇԵ (1056) թվականին Իսահակ Կոմնինոսը քրեթեալ զուով քաղաքին Ուոհայոյ, որում անուն էր Տուկիծ... և առեալ զթագն գնէր ի զուով Տուկիծին և նստոյց զնա յաթոս թագաւորութեան» (էջ 126—127): Քեոզուլոս վանականի հիշատակարանում 1056 թ. ապրիլին որպես Եղեսիայի դուքս է հիշատակվում Հովհաննես Դուկիծեսը, ըստ երևույթի, Ուոհայեցու Տուկիծը: Ամենայն հավանականությամբ, 1059 թ., երբ Դուկիսը դառնում է կայսր, Եղեսիայի իշխանությունը նորից տրվում է Վասիլի հայր Ապուրապին: Ուոհայեցու ՇԵ թվականը ճիշտ չէ, պետք է լինի ՇԸ:

<sup>4</sup> Georgii Cedreni, t. II, p. 520. Ուոհա քաղաքի պատմության մասին տես Լորանի Կետաբրթի ուսումնասիրությունը. J. Laurent, Des Grecs aux Croisés. Etude sur l'histoire d'Edesse entre 1071 et 1098, Byzantion, t. I, 1924, p. 367—449.

Ապուքապը նույն անձնավորություններն են (Ապուքապը ոչ թե անուն է, այլ ազգանուն), ապա Վրիոնիսի այն ենթադրությունը, որ դուքս Միքայելը Ուոհայեցու մոտ հիշատակված Ապուքապն է, պարզ է, որ չի կարող ճիշտ լինել: Այդ բոլորից զատ, մենք շունենք որևէ փաստ այն մասին, որ Եղեսիայի դուքս Ապուքապը, կամ էլ նրա որդի Վասիլը ունենային որևէ առնչություն Կղարչքի հետ 11-րդ դարի 50-ական թվականների վերջում<sup>1</sup>: Բայց ամենակարևորը, որը կասկածի տակ է դնում Ն. Բանեսկուի և Ս. Վրիոնիսի եզրակացությունները, դա հանդես եկող ժամանակագրական հակասությունն է: Բոյիլասի կտակի տվյալների համաձայն, դուքս Միքայելը վախճանվել է 1059 թվականի ապրիլ ամսից (կտակի գրության ժամանակը) առաջ: 1065 թվականին, ինչպես ցույց է տալիս Մատթեոս Ուոհայեցին, «զօրք Ուղացն սրով յարձակեցան զհետ մեծաւ կոտորածով և կալան զՎասիլ զօրապետն Հոռոմոց և տարան զնա ի գերութիւն յաշխարհն իւրեանց»<sup>2</sup>: Նույն դեպքը արձանագրված է նաև, ինչպես վերևում ցույց տվեցինք, բյուզանդական պատմիչներ Ատտալիատեսի, Զոնարայի և Սկիլիցես-Կեղրինոսի մոտ, նույն՝ 1065 թվականի տակ: Բայց Ուոհայեցին մեզ հաղորդում է մանրամասնություններ, որոնք շունեն բյուզանդական աղբյուրները: Պարզվում է, որ Ապուքապի որդի Վասիլին հաջողվում է փախչել գերությունից և զնալ նախ թագավոր Տուկիծի մոտ: Այնուհետև «եկեալ Վասիլն առ Ապուքապ հայրն իւր ի յՈւոհա, և հայրն և ամենայն ազգ իւր լցան ցնծութեամբ»<sup>3</sup>: Այդ բոլորը տեղի են ունենում 1065 թվականին: Այսպիսով Վասիլի հայր Ապուքապը, (որին Ս. Վրիոնիսը նույնացնում է Բոյիլասի կտակի դուքս Միքայելի հետ), 1065 թվականին դեռ ողջ էր: Ս. Վրիոնիսը չի նկատում, որ Բոյիլասի կտակում (1059 թ.) հիշատակված դուքս Միքայելը և Ուոհայեցու մոտ հիշատակված «Վասիլ հայր Ապուքապը» չեն կարող նույն անձնավորությունները լինել, որովհետև Բոյիլասի կտակի տվյալների համաձայն, 1059 թվականի ապրիլին դուքս Միքայելը արդեն մեռած էր: Հետևաբար տրամաբանական է պնդել, որ դուքս Միքայելի որդի Վասիլիոս մազիստրոսը ոչինչ ընդհանուր չունի Ուոհայեցու Ապուքապի որդի Վասիլի հետ, բյուզանդական աղբյուրների Վասիլիոս Ապոկապեսի հետ:

Այս երկար վիճաբանությունները տեղի չէին ունենա, իհարկե, եթե ինչպես վերևում ասացինք, ճիշտ ընթերցվեր վանական Թեոդուլոսի հիշատակարանը: Այնտեղ «Պարադունավիս» բառը վերաբերում է ոչ թե Վասիլին, այլ Ահարոն մազիստրոսին: Վ. Զլատարսկին միանգամայն ճիշտ էր, երբ գրում էր, որ «Պարադունավիս» մականունը կրող մարդը կարող էր բուլղարական ծագում ունենալ (այստեղ կարևորություն չունի այն հանգամանքը, որ նա այդպիսին էր համարում Վասիլին): Իսկապես որ Ահարոն մազիստրոսը բուլղար է եղել, այդ մասին վկայում են ոչ միայն բյուզանդական, այլև հայկական սկզբնաղբյուրները:

Ինչպես մենք վերևում նշեցինք, Ս. Վրիոնիսը դուքս Միքայելի մյուս որդուն վեստարիոս Գարեամանեսին նույնացնում է Սկիլիցես-Կեղրինոսի մոտ

<sup>1</sup> Ուոհայեցին հաղորդում է, որ Ապուքապ իշխանը նախկինում եղել է վրաց Դավիթ կուրապաղատի վրանապահը և ստացել է Եղեսիա քաղաքը Ռոմանոս կայսրից ՆՁԱ թվականին (էջ 57, 64):

<sup>2</sup> Մատթեոս Ուոհայեցի, էջ 152:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 153:



հիշատակված, ծագումով վրացի վեստ Ֆարեսմանես Ապոկապեսի հետ, որին 1069 թ. կայսրը նշանակեց Հիբրապոլսի ստրատեգ<sup>1</sup>: Իհարկե, ընդունելով, որ դուքս Միքայելը և նրա որդի մագիստրոս Վասիլիոսը պատկանում էին Ապոկապեսների գերդաստանին, շատ հավանական պետք է լիներ նույնացնել նաև կտակի վեստարխոս Ֆարեսմանեսին Սկիլիցես-Կեդրինոսի հիշատակած վեստ Ֆարեսմանես Ապոկապեսի հետ: Բայց երբ մերժվում է այդպիսի հնարավորությունը, պարզ է, որ Ֆարեսմանեսի Ապոկապես ազգանունը քիչ քան է տալիս: Մեզ մնում է միայն այն, որ երկուսն էլ կոչվում են Ֆարեսմանես, մեկն ունի վեստարխոսի, մյուսը վեստի աստիճան:

Եվստաթիոս Բոյիլասին, ահա, բավականին նեղություն են պատճառել վերոհիշյալ Միքայել դուքսը և նրա որդին մագիստրոս Վասիլիոսը, որոնց կառավարչության տակ էին գտնվում Բոյիլասի կալվածքները: Նա ստիպված է եղել իր տիրույթների մի մասը վաճառել իր տիրոջը, նրանց արժեքի դիմաց ստանալով միայն մի գրություն, բայց ոչ մի հատիկ դրամ: Բացի այդ, իր տերերին տվել է նա «պարտքով» դրամական մեծ գումար (քսան հինգ լիտր ոսկի, այն է հազար ութհարյուր ոսկեդրամ), որը նույնպես 1059 թվականին (կտակի գրության տարում) դեռ չէր վերադարձվել պարտատիրոջը: Կտակում տվյալ կա այն մասին, որ Միքայել դուքսն ու Վասիլիոս մագիստրոսը նույնիսկ Բոյիլասին կյանքից զրկելու ցանկություն են ունեցել: Այս տվյալները ուշագրավ են ու հետաքրքրական: Նույնիսկ Բոյիլասի նման ազդեցիկ մի պաշտոնյա, որ ուներ պրոտոսպաթարխոսի և հյուպատոսի բարձր աստիճան, չէր կարողացել խուսափել տեղական իշխանությունների ոտնձգություններից ու հափշտակություններից<sup>2</sup>: Դուքս Միքայելի և մագիստրոս Վասիլիոսի պայքարը բյուզանդական ֆեոդալ Բոյիլասի դեմ, մեր կարծիքով, սոսկ խոշոր ֆեոդալների միջև գոյություն ունեցող հակառակություն չէր, այլ ամենայն հավանականությամբ Բյուզանդիայի տիրապետության դեմ ուղղված պայքարի արտահայտություն: Ճիշտ է, դուքս Միքայելն ու մագիստրոս Վասիլիոսը ի պաշտոնն ծառայում էին Բյուզանդիային, բայց ինչ խոսք, որ բյուզանդական տիրապետությունը իրենց երկրի համար օտարի լուծ էր:

Բոյիլասն իր կտակում հայտնում է, որ երբ նա հաստատվեց իրեն տրված կալվածքներում, դրանք զարշահոտ, անտանելի վայրեր էին, լինելով օձերի, կարիճների և վայրի զազանների բույն, որից սարսափահար մոտակայքում ապրող հայերը հանգիստ չունեին:

Նշված ժամանակաշրջանում Կղարջքին մերձակա բոլոր գավառներում — Հարբում, Ասպահունիքում, Մանանաղում, Եկեղյաց գավառում, նույնիսկ Շիրակում լայն տարածված է եղել թոնդրակեցիների աղանդը, և, ըստ երևույթին, Կղարջքը բացառություն չի կազմել<sup>3</sup>: Բոյիլասի կտակում նշված օձերի, կա-

<sup>1</sup> Georgius Cedrenus, t. II, p. 675—676: Միքայել Ատտալիատեսը Նրան համարում է հայ (Michaelis Attalioae, Historia, p. 116): Ամենայն հավանականությամբ նա վրացագավան հայ էր:

<sup>2</sup> Сб'у Сборник документов по социально-экономической истории Византии, Москва, 1951, стр. 135.

<sup>3</sup> Գրիգոր Խանձիթեցու (վախճանվել է 861 թվականին) վարքարանության մեջ կա հիշատակություն Կղարջքում, կոնկրետ Օպիզայում, աղանդավորների գոյության մասին: Сб'у Георгий Мерчул, стр. 144—145. Նշված ժամանակաշրջանում աղանդավորներ են հիշվում նաև Անշայում, որ գտնվում է Արտանուշից երկու ժամ հեռավորության վրա (նույն տեղում, էջ 136):

բիճների և վայրի գազանների տակ մեր կարծիքով ենթադրվում են թոնդրակեցի աղանդավորները: Արիստակես Լաստիվերտցին թոնդրակեցի աղանդավորներին անվանում է «մարդադէմ գազանաց փարախ», Կոնստնտին Գրիգոր Վրիժապ ոճ կամակոր», Թոնդրակը՝ «գազանաց գառագիղ», իշխան Վրվեռի ազարակը՝ «օձարնակ տեղիք», իսկ աղանդավորների բնակատեղիները՝ «օձարնակ որչք»: Նման անվաններով են խոսում թոնդրակեցիների մասին նաև Գրիգոր Մազիստրոսը և միջնադարյան մյուս հեղինակները: Ինչպես երևւում է, Բոյիլասը հանգիստ չի ունեցել այդ աղանդավորներից: Սաղմոսի բաները մեջ բերելով նա ասում է, որ այդ անտանելի վայրը ինքը սրի ու հրի մատնեց: Հակված ենք կարծելու, որ խոսքն այստեղ թոնդրակեցիներին և նրանց բնակատեղիներին սրի ու հրի մատնելու մասին է: Այս ենթադրությունը հաստատվում է Գրիգոր Մազիստրոսի վկայություններով, իրենից առաջ թոնդրակեցիների դեմ գործող իշխանավորների մասին: Նա գրում է, որ «նախքան մեզ բաղումք դորավարք և պետք ի սուր սուսերի մատնեցին զնոսա»<sup>1</sup>, այսինքն թոնդրակեցիներին:

Բոյիլասի կտակի հետ ծանոթանալով կարելի է գալ այն եզրակացության, որ կտակագիրը քաջ ծանոթ է եղել բյուզանդական օրենսդրությանը: Կտակագիրը սկզբում ավյալներ է հաղորդում իր անձնավորության մասին, ապա հատուկ շեշտում է այն հանգամանքը, որ կտակը կազմել է ֆիզիկական ու մտավոր տեսակետից առողջ վիճակում, և որ այդ գործում նրան ոչ ոք չի խաբել կամ ստիպել: Բացի դրանից նշում է, որ ինքը ուղղափառ քրիստոնյա է, տիեզերական յոթ ժողովների կանոններին համաձայն, և որ ինքը պետության դեմ ոչ մի հանցանք չի գործել: Այդ բոլորը շարադրելուց հետո, նա կենսագրական ավյալներ է հաղորդում իր և իր ընտանիքի մասին, որից հետո խոսում է իրեն պատկանած 11 գյուղերի և կալվածների մասին, որոնցից 1059 թ. (կտակի գրության ժամանակ) իր տրամադրության տակ էին մնացել միայն չորսը, այն է Տանձուտ-Սալիմը, Բուզինան, Պարարունիոնը և Կոստանիոնը: Նախկինում ունեցած իր գյուղերից Օփիգորունի, Կուսներիան և Կալմուխին խլել էր թեմայի դուքս Միրայելը, իսկ Վարդա գյուղը՝ Միրայելի որդին, մազիստրոս Վասիլիոսը: Բոյիլասն իր գյուղերից Ուզիկին կտակել է մեկին, որի անունը չի հիշատակում, իսկ Կոպտերիոնը և Խոսպակրատը կտակել է ինչ որ որ եղբայրների՝ Քրիստափորին և Գևորգին ու նրանց հորեղբորորդուն: Ինքը՝ Բոյիլասն ապրում էր Տանձուտ-Սալիմ կալվածքում, ուր նա կառուցել էր նաև սուրբ Աստվածածնի անունով մի վանք: Ամենայն հավանականությամբ հենց այդ գյուղում էր գտնվում նաև սուրբ Վարվառայի վանքը, որտեղ թաղված էին Բոյիլասի մայրը, կինը, Ռոմանոս որդին և ուր Բոյիլասի խոսքերով պետք է թաղվեր իր մահից հետո նաև ինքը: Այդ Տանձուտ կալվածքից է Բոյիլասն առանձնացրել չորս հողաբաժին ազատ արձակած իր ստրուկների ընտանիքների համար: Տեղին է նշել, որ Բոյիլասը ազատ արձակած իր ստրուկներին տված այդ չորս հողաբաժինները անվանում է «ազատ, լրիվ ազատ» (ἐλευθερα, παντελευθερα): Ահա այդ Տանձուտ գյուղը, բացի վերևում հիշատակված չորս հողակտորներից, Բոյիլասը կտակում է իր անդրանիկ դստեր Իրինեին և նրա ամուսնուն՝

<sup>1</sup> Իրջիններխ մասին ն. Մառք ենթադրում է, որ պավլիկյաններ են եղել (նույն տեղում, Առասարան, էջ XVIII, ծանոթ. 3):

<sup>2</sup> Տե՛ս Գրիգոր Մազիստրոսի թղթերը, Ալեքսանդրապոլ, 1910, էջ 162:

սպաթարականդիդատ Գրիգորիոսին: Տանձուտ գյուղի եկամուտը, ինչպես նաև իր այդ դստեր նվիրված «շարժական, ինքնաշարժ և դյուրաշարժ» ողջ գույքի արժեքը (ստրուկներ, արծաթ, դիպակներ և անասունները) Բոյիլասի հաշվումներով կազմում է երեսուն լիտր ոսկի, որը և նա համարում է իր դստեր յժիտը:

Բոյիլասն իր մյուս դստեր՝ Մարիային թողնում է նույնպես երեսուն լիտր արժեքով ունեցվածք: Այդ թվում՝ տասը լիտր արժեքով ստրուկներ, արծաթ, դիպակներ և անասուններ: Մնացած քսան լիտրի դիմաց նա Մարիային տալիս է իր Բուզինա կալվածքի կեսը: Նույն կալվածքի մյուս կեսը Բոյիլասը թողնում է իր կողմից Տանձուտ գյուղում կառուցված սուրբ Աստվածածնի վանքի հոգևորականության տրամադրության տակ, պարտավորեցնելով նրան այդ կես գյուղի տարեկան եկամտից վճարել միաբաններին որպես ոռճիկ քսանվեց դահեկան, վանքի կարիքների համար տասներկու դահեկան և սուրբ Վարվառայի վանքի կարիքների համար՝ ևս տասներկու դահեկան: Ինչպես տեսնում ենք, Բուզինա գյուղի կեսի եկամուտը ըստ երևույթին հիսուն դահեկան էր, հետևապես ամբողջ գյուղի տարեկան եկամուտը մոտավորապես հարյուր դահեկան, քսան դահեկանով ավելի, քան Տանձուտ գյուղի եկամուտը:

Ըստ երևույթին, այդ հիսուն դահեկանը, որ Բոյիլասը կտակում է երկու վանքերի ու նրանց հոգևորականության կարիքները հոգալու համար, լրիվ չէին ծածկելու նրանց ծախսը, դրա համար էլ Բոյիլասը իր երկրորդ՝ Պարաբունի գյուղից նրանց կտակում է երկուհարյուր մոդ հացահատիկ, հազար լիտր գինի և այլ ընդեղեններ ու պտուղներ: Իրեն պատկանող չորրորդ գյուղը (Եսայասը) Բոյիլասը կտակում է իր փեսա Միքայելին՝ հինգ լիտր ոսկու դիմաց, այլ խոսքով՝ այդ կալվածքը նա վաճառել է:

Այս բոլորից բացի, Բոյիլասը բազմաթիվ եկեղեցական սպասներ և դանազան գրքեր իր կտակի համաձայն թողնում է իր կողմից կառուցված սուրբ Աստվածածնի վանքին, այն պայմանով, որ իր ժառանգները իրավունք ունենան օգտվելու դրանցից: Սակայն՝ Բոյիլասը այդ սպասեղենի և գրքերի կապակցությամբ ուրիշ պայման էլ է դնում իր ժառանգների առաջ. նրանք իրավունք չպետք է ունենային դրանք ուրիշին տալու կամ վաճառելու: Եթե նրա դստերից որևէ մեկը կառուցեր նոր մի վանք, այդ դեպքում միայն այդ սպասեղենը և գրքերը կարող են բաժանվել նրանց միջև:

Բոյիլասի կտակում կա ուշագրավ մի այլ կետ ևս: Եթե իր ժառանգները՝ դստերն ու փեսաները անխախտ կերպով կատարեն իր բոլոր հանձնարարությունները, ապա նրանք իրավունք պետք է ունենային տիրելու իրենց կտակված կալվածքներին, հակառակ դեպքում՝ Բուզինա գյուղն ամբողջությամբ թողնում է սուրբ Աստվածածնի վանքի հոգևորականներին, նույն այդ և սուրբ Վարվառայի վանքերի ծախսերը հոգալու համար:

Բոյիլասի կտակում ամենահետաքրքրականը նրա տրամադրության տակ եղած ստրուկների հիշատակության փաստն է: Հայագետներն ու բյուզանդագետները կասկած չեն հայտնել Հայաստանում և Բյուզանդիայում միջին դարերում ստրուկների գոյության հարցի մասին, միանգամայն ճիշտ նշելով, որ ստրկությունը տվյալ ժամանակաշրջանում տնտեսության մեջ երկրորդական դեր էր խաղում<sup>1</sup>:

<sup>1</sup> Այդ մասին տե՛ս Հ. Մանասեղյան, Ֆեոդալիզմը հին Հայաստանում, Երևան, 1934.

Բոյիլասն ունեցել է երկու տեսակի ստրուկներ՝ ընդոժին (οἰχογενεῖς) ստրուկներ, որոնք ծնվել են իր աղախիններից և արժաթագին (ὠνητοί) ստրուկներ: Կտակից կարելի է հետևեցնել, որ Կիրակոս անունով իր ստրուկին նա բերել է իր հետ Կապադովկիայից, որովհետև այդ ստրուկը, ըստ կտակի, մեծացել է Բոյիլասի հետ և նրա ճանապարհորդությունների ընթացքում՝ շատ շարշարվել: Սակայն կտակում թվարկված ստրուկների մի մասի անունները հնարավորություն են տալիս եզրակացնելու, որ նրանք ձեռք են բերվել տեղում: Աբասգոս, Սիլիզնու, Մուսես, Ղարիպ, Ապոսֆարես անունները կրող մարդիկ դժվար թե հույներ լինեին:

Բոյիլասն անուններով է հիշատակում այն ստրուկներին միայն, որոնց նա ազատություն է շնորհել: Նրանք կազմում են տասներեք ընտանիք: Սրանց նա տալիս է որոշ քանակությամբ դրամ, մի քանիսին էլ փոքր հողակտորներ և աշխատող անասուններ: Բայց այն ստրուկներին, որոնց նա չի ազատում, այլ կտակում է, ավելի ճիշտ, նախքան կտակ կազմելը նվիրում է իր ժառանգներին, նա անվանապես չի հիշատակում և չի խոսում նրանց թվի մասին:

Հետաքրքրական է պարզել, թե ինչով էին զբաղված Բոյիլասի ստրուկները: Մեծ հավանականությամբ նրանք նախ և առաջ տնային ծառայություն են կատարել: Ստրուկներից մեկը, Գրիգորիս անունով, զբաղվել է զրազրությամբ, ձեռագրերի արտագրությամբ, գրչի գործերով: Մյուս ստրուկների զբաղմունքի մասին կտակում տվյալներ չկան:

Գ. Օստրոգորսկին Պատմոս կղզու վերաբերյալ 1073 թվականին գրված մի փաստաթղթի հիման վրա, ուր ասված է, թե գյուղատնտեսության մեջ աշխատող ստրուկներ այլևս չկան Վարիս կոչվող կալվածքում, որովհետև բոլորը մահացել են, դալիս է այն եզրակացության, որ 11-րդ դարի երկրորդ կեսում արդեն ստրկական աշխատանքը գյուղատնտեսության մեջ չի կիրառվել<sup>1</sup>:

Սակայն Վարիս կալվածքի դեպքը չի կարելի ամբողջ Բյուզանդիայի վրա տարածել, մանավանդ Բյուզանդիայի արևելյան շրջանների վրա, որոնք համեմատաբար ավելի հետամնաց վիճակում էին գտնվում: Այնպես որ բացառ-

Խ. Ս ա մ ու ե լ յ ա ն, Ստրկությունը հին Հայաստանում, ՀՍԽՀ Պատմության և Գրականության ինստիտուտի «Տեղեկագիր», Գիրք Բ, 1937 թ.: Ն ու լ յ ն ի, Հին հայ իրավունքի պատմություն, Երևան, 1939 թ.: Ս. Հ ա կ ո բ յ ա ն, Ստրկությունը և ստրկատիրական հասարակական ֆորմացիան հին Հայաստանում, ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», № 8, 1948 թ.: Ն ու լ յ ն ի, Հայ գյուղացիության պատմություն, Գիրք առաջին, Երևան, 1957 թ.: Ս. Պ ո ղ ո ս յ ա ն, Գյուղացիների ճորտացումը և գյուղացիական շարժումները Հայաստանում 9—13-րդ դարերում, Երևան, 1956: Բ. Ա ա ք ե լ յ ա ն, Հայաստանի միջնադարյան քաղաքների բնակչության սոցիալական կազմը, «Պատմա-բանասիրական հանդես» № 2, 1958 թ.: Е. Э. Липшиц, Византийское крестьянство и славянская колонизация, «Византийский Сборник», Москва—Ленинград, 1945; նույնի, Восстание Фомы Славянина и византийское крестьянство на грани VIII—IX вв., «Вестник Древней Истории», № 1, 1939; Н. В. Пигулевская. К вопросу об общественных отношениях на Ближнем Востоке, Ленинград, 1948; А. П. Каждан, Рабы и мистии в Византии в IX—X вв., Ученые Записки Тульского педагогического Института, вып. 2, 1951, М. Я. С ю з ю м о в, О правовом положении рабов в Византии, Ученые Записки Свердловского гос. педагогического института, вып. 11, 1955; Р. Браунинг, Рабство в Византийской Империи (600—1200), Византийский Временник, т. XIV, 1958; А. Hadjinikolaou-Marava, Recherches sur la vie des esclaves dans le monde Byzantin, Athènes, 1950.

<sup>1</sup> Տե՛ս Գ. А. Острогорский, Византийские писцовые книги, Byzantinoslavica, t. IX, fasc. 2 (1948), p. 239.

ված չէ, որ Բոյիլասի ստրուկները աշխատել են նաև գյուղատնտեսության մեջ: Բոյիլասի կալվածքների վրա, ամենայն հավանականությամբ, աշխատել են նաև հողագործի գյուղացիներ, որոնք այդ ֆեոդալից հող էին վարձակալում: Բոյիլասն իր կտակում հիշատակում է մարդկանց, որոնց նա անվանում է τὼν ἐξῶ այսինքն «գրսի մարդիկ»: Սրանք ըստ երևույթին այն գյուղացիներն էին, որոնք թեև անձնապես կախված չէին իրենից, բայց կախված էին տնտեսապես, մարդիկ, որոնք բյուզանդական աղքատներում կոչվում են միսթիոսներ<sup>1</sup> վարձակալներ, իսկ հայկական սկզբնաղբյուրներում՝ «վարձաւոր մշակք» կամ «վարձկանք»: Որ Բոյիլասը վարձակալման է տվել իր հողերի մի մասը, այդ հաստատվում է նաև այն փաստով, որ նա Տանձուտ գյուղից ստացել է տարեկան ութսուն դահեկան պախտ (παχτος), որը ոչ այլ ինչ է, քան վարձակալման (արենդի) վճարը:

Ինչպես ցույց են տվել Բյուզանդիայի սոցիալ-տնտեսական հարաբերությունների պատմությամբ զբաղված մասնագետները, բյուզանդական ֆեոդալական տնտեսության բնորոշ գծերից մեկն էլ այն է, որ հողային ունեւորները խափորապես դրամական է եղել: Դրամական միավորներով էին հաշվվում նաև եկամուտները<sup>2</sup>: Բոյիլասի կտակի մեջ էլ մենք նույն բանն ենք տեսնում, մի հանգամանք, որ ցույց է տալիս, թե Բյուզանդիայի համար այդ բնորոշ երեւույթը գոյություն ուներ նաև Բյուզանդիայի կողմից զբաղված հայ-վրացական շրջաններում:

Բոյիլասի կտակը հաստատում է բյուզանդական կյանքի մի այլ կողմը ևս: Տվյալ ժամանակաշրջանի համար բնորոշ է այն փաստը, որ ստրկատեր ֆեոդալները ազատ են արձակում իրենց ստրուկներին: Բոյիլասի կտակում գրված է, որ նա ազատություն է շնորհում իր ստրուկներից տասներեք ընտանիք: Բյուզանդագետ Մ. Սյուզումովի կարծիքով ազատ արձակված ստրուկը դառնում էր լիիրավ, բոլորովին ազատ. իր այս ենթադրությունը նա հնարավոր է համարում հիմնավորել նաև Բոյիլասի կտակը վկայակոչելով<sup>3</sup>: Մի ուրիշ բյուզանդագետ՝ Ա. Կաթգանը գալիս է այն եզրակացության, որ ազատ արձակված ստրուկները դառնում էին կախյալ վարձակալներ<sup>4</sup>: Սույն կտակի տվյալների հիման վրա գալիս ենք այն եզրակացության, որ Բոյիլասը, չնայած խոսքով հայտարարում է իր ստրուկներին լիակատար ազատություն շնորհելու մասին, բայց այնուամենայնիվ, ստրկի և ազատություն ստացած ստրկի միջև մեծ տարբերություն չի եղել: Ազատված ստրկի հետ տերը նույնպես շարունակում էր վարվել իր ցանկության համաձայն: Բոյիլասը ասում է իր աղախին Սիլիզնուի մասին, որ նրան ազատ է արձակել, բայց միաժամանակ գրում է, որ նույն այդ աղախնուն տալիս է իր դուստր Մարիային, որպեսզի նրան ծա-

<sup>1</sup> Միսթիոսների մասին տե՛ս Ե. Յ. Լ и п ш и ц, Византийское крестьянство и славянская колонизация, «Византийский Сборник», Москва—Ленинград, 1945, стр. 126 и сл.; А. П. Каждан, Рабы и мистии в Византии в IX—X вв., Ученые Записки Тульского педагогического института, вып. 2, 1951.

<sup>2</sup> Տե՛ս Գ. А. Острогорский, Византийские писцовые книги, Byzantinoslavica, т. IX, 2, 1948, р. 295—296.

<sup>3</sup> М. Я. Сюзумов, О правовом положении рабов в Византии, Ученые Записки Свердловского гос. педагогического института, 1955, вып. 11, стр. 186.

<sup>4</sup> А. П. Каждан, Рабы и мистии в Византии в IX—X вв., Ученые Записки Тульского педагогического института, 1951, вып. 2, стр. 77.

ուայի (բառացի՝ ստրկութիւնն անի՝ ἐκδοῦλαεῖν) հինգ տարի ևս։ Ազատ արձակված ստրուկների աչդպիսի դրութեան մասին վկայում են նաև բյուզանդական օրենսգրքերը։ Աշնպես որ ազատված ստրուկների լիակատար ազատութեան ու լիիրավութեան մասին չի կարող խոսք լինել։ Ա. Կաթողանի ենթադրութիւնը այն մասին, որ ազատ արձակված ստրուկները դառնում էին միսթիոսներ, այսինքն վարձակալներ, ֆեոդալից արենդով հող վերցնողներ, շատ հավանական է։

Վերջացնելով իր կտակը, Բոյիլասը նրա ճշգրիտ կատարման համար նշանակում է հոգաբարձուներ և խնամակալներ. դրանք էին բազմիցս հիշատակված մագիստրոս Վասիլիոսը, նրա եղբայրը վեստարխոս Յարեսմանեսը, թեմի եպիսկոպոսը, Բոյիլասի երկու փեսաները՝ սպաթարականդիդատ Գրիգորիոսը և մերարխոս Միքայելը և վերջապես սուրբ Աստվածածնի վանքի ավագ քահանան։

Կտակը ավարտվում է ցուցմունքով այն մասին, որ գրված է Թեոդուլոս վանականի ձեռքով, աշխարհի արարչադործութեան 6567 թվականին, ապրիլ ամսին, որ համապատասխանում է մեր թվարկութեան 1059 թվականին, և որ նրա տակ ստորագրել են բոլոր վկաները։ Կտակի վերջում սակայն մեզ հասել է միայն Եվստաֆիոս Բոյիլասի ստորագրութիւնը։



Եվստաֆիոս Բոյիլասի կտակի հայերեն թարգմանութիւնը կատարել ենք Բենեշևիչի հրատարակած բնագրի հիման վրա, որոշ աննշան ուղղումներով, որոնց մասին առանձին առանձին խոսվում է ծանոթագրութիւնների մեջ։ Չեռքի տակ ենք ունեցել նաև ձեռագրի միկրոթագավենը, որը կենինգրադի Սալտիկով-Շչեգրինի անվան Հանրային գրադարանի հունարեն ձեռագրերի բաժնի վարիչ Ն. Է. Գրանստրեմի սիրալիք օգնութեամբ ստացանք Փարիզի Ազգային Մատենադարանից։ Ծանոթագրութիւնները կազմված են այն հաշվով, որպեսզի ոչ միայն բացատրեն կտակի մութ կետերը, այլ որոշ շափով բացահայտեն սոցիալ-տնտեսական հարաբերութիւնները Բյուզանդիայի տիրապետութեան տակ ընկած հայ-վրացական շրջաններում կտակի գրութեան ժամանակաշրջանում։

### ԵՎՍՏԱԹԻՈՍ ԲՈՅԻԼԱՍԻ ԿՏԱԿԸ

Քանի ժամանակն է, ես ցանկացա հստակ և արթուն մտքով, հանդարտ ու կատարյալ կերպով կարդի բերել իմ գործերը, որովհետև աղոտ հիշողութեամբ հնարավոր չէ ոչինչ անել։

Ես ոչ մի կերպ չեմ կարող պատմել, թե ինչքան վիշտ պատճառեցին ինձ իտանակ ժամանակները։ Ես անշափ տանջվել եմ դժբախտութիւններից, ինձ ամեն կողմից անդադար հարվածել են կոհակները, ինչպես նավարեկյալին, մինչև որ ես գաղթական դարձա իմ ծնված երկրից՝ պանդուխտ, հայրենիքի սահմաններից հեռու՝, կտրելով շաքաթ ու կեսվա ճանապարհ։ Հաստատվելով այլ հավատք պաշտող և ուրիշ լեզվով խոսող ժողովուրդների մեջ, ես արժանացա պայծառափայլ և հուշակավոր դուքս Միքայելի մեծ պաշտպանութեանը, որի հրամանների տակ ես տասնհինգ տարի ծառայեցի պետութեանը, իսկ այ-

նուհետև, երբ ես ութ տարի էր, որ հեռացել էի ծառայությունից, նա իր հոգին առաքինի կերպով ավանդեց, իսկ նրա պայծառափայլ որդին մեծափառ մագիստրոսը, ամեն կերպ գնահատելով իմ ծառայությունները և ամենից առաջ ազատությունը, ինձ օժանդակեց մեծ բարերարություններով: Բայց մեր հոգու վրա կախված ծանրությունը մենք ի վիճակի չենք իմանալու, դրա համար ես վաղուց դիմել եմ ապաշխարության, ելնակետ ունենալով ինձ մնացած կյանքը, և ամեն ինչ գցելով ամենատես դատաստանին, իմ խոսքի սկզբում և վերջում (սուրբ) երրորդությունն եմ վկայակոչում:

Հանուն հոր և որդվո և հոգվույն սրբո (ես) Եվստաթիոս խրիստորիկլինի պրոտոսպաթարիոս<sup>3</sup> և հյուպատոս<sup>4</sup> ներկա գրավոր և ստորագիր գաղտնի կտակը անում եմ, կազմում ու թողնում իմ սեփական մտադրությամբ, անբռնադատ կամքով: Այդ գործում ինձ ոչ ոք չի պարտադրել, չի ստիպել, չի հեղնել, չի խարել, չի նենգել, այդ ես կատարում եմ գործի իմացությամբ, առանց խաբեության ու կեղծիքի, ընդհակառակը լիակատար ցանկությունով ու ամբողջ հոգով, հստակ ու առողջ մտքով ու քաջառողջությամբ, ողջամտորեն, ունենալով իմ բոլոր մտավոր զգայարանները կարգին վիճակում<sup>5</sup>:

Սկզբից ես ի վերուստ բախտն ունեցա ազատ ծնվելու և բնությունով առողջ: Ես ուղղափառ եմ և լրիվ համաձայն յոթ սուրբ և տիեզերական ժողովների որոշումներին և սահմանումներին: Մինչև օրս պետության հանդեպ ոչ մի հանցանք չեմ գործել, որն ինձ պատասխանատու աներ որևէ բանում: Մինչև այսօր մարդասերի անսահման հոգատարության շնորհիվ, թագավորական՝ աստվածային բազկի շնորհիվ և վերևում հիշատակած իմ տիրոջ և տիրակալի՝ դուքսի անշափ բարիքների ու բարեգործությունների շնորհիվ ես ունեցել եմ ազատ և անկաշկանդ կյանք և (հուսով եմ), որ նրանից հետո նրա որդի պայծառափայլ մագիստրոս և ժառանգորդ տեր Վասիլիոսը նույնպես (այդպիսի) վերաբերմունք կցուցաբերի իմ հանդեպ:

Ես գաղթեցի այս երկիրը իմ հայրենիքից, իմ օրինավոր կնոջ, ողորմած Աննայի հետ ամուսնանալուց հետո: Ես ինձ հետ ունեի իմ հավաքած բոլոր փողերը, որոնց ավելացան նաև իմ արդար վաստակով ձևոք քերվածը: Ինձ շնորհվեցին երկու դուստր և մեկ որդի: Իմ որդին լրացնելով իր կյանքի երրորդ տարին վախճանվեց ինդիկտիոնի վեցերորդ տարում<sup>6</sup>, իսկ ինդիկտիոնի հիններորդ տարվա<sup>7</sup> սկզբին նրա մայրը և իմ կենակիցը, կրոնավորյալ, աստծու նախախնամությամբ հետևեց որդուն, ամբողջ կյանքս երկու դուստրերի հետ գցելով անշափ տխրության մեջ<sup>8</sup>: Նրանց մասին ես հոգում էի մինչև ընթացիկ ինդիկտիոնի տասներկուերորդ տարին<sup>9</sup>, ինչքան որ հնարավորություն էր տալիս աստծու անձառ կամքը: Բայց մահվան միտքը ինձ անընդհատ տանջում է: Աչքի առաջ ունենալով տարածամ և անակնկալ (մահը) ես կամեցա կարգի բերել իմ գործերը: Նախ և առաջ ես ավելի վեհ ու ավելի կարևոր հոգսով էի մտահոգված, այն է որպեսզի աստված հիշվի, որպեսզի հոգին աստվածային ներշնչմամբ նմանվի նախատիպի կերպարին, իսկ մարմինը շեղվի ցանկությունների ուղուց: Ես նկատի ունեմ եկեղեցին, այն է աստծու և աստվածամոր տաճարը:

Իմ այս գաղթականության սկզբում, երբ ես այստեղ ժամանեցի և բնակվեցի, այս վայրը, որ ես ստացա, գարշահոտ էր, անտանելի, դա օձերի, կարիճների և վայրի գաղանների բույն էր, ինչ որ բոլորովին հանգիստ չէր տա-

լիս դիմացն ապրող հայերին, որոնք սարսափահար էին եղել<sup>10</sup>: Այդ վայրը շատերի համար անանցանելի էր և (այդ պատճառով) շատերը շփտեին, թե ինչ է այնտեղ կատարվում<sup>11</sup>: Դրա համար ես, սաղմոսի ասածի նման<sup>12</sup>, սրով ու հրով այն մոխրի վերածեցի, իսկ այնուհետև այնտեղ կառուցեցի բնակարան և սուրբ վանք ի հիմանց, կարգի բերեցի արոտավայրերը, [տնկեցի] անտառներ, այգիներ, պարտեզներ, [անց կացրի] առուներ, [կարգի բերեցի] ագարակներ, [կառուցեցի] ջրաղացներ և ինչ որ<sup>13</sup> պիտանի էր և անհրաժեշտ: Բացի դրանից, կարգի բերեցի իմ Բուզինա<sup>14</sup> կալվածքը<sup>15</sup>, որը մինչ այդ կատարյալ ամալի էր, ես դժվարությամբ մշակեցի, ինչպես նաև Նսայաս գյուղը<sup>16</sup>, որն անապատ էր և աղքատ, բացի Չալիմա անապատից: Ուզիկի գյուղը և Խուսպակրատը<sup>17</sup>, Կոստերիոն գյուղը, Օփիդորունի գյուղը և Կուաներիան, որոնք վաղուց անապատ էին և անբնակելի<sup>18</sup>, ես մեծ ծախսերով կարողացա կարգի բերել: Ուզիկի գյուղը ես տվեցի նրանց, որոնց ժառանգ համարեցի, դրա հետ մեկտեղ տալով գործարքը հաստատող վկայականը: Իսկ Կոստերիոն գյուղը և Խոսպակրատը տվեցի հարազատ եղբայրներ որբեր Խրիստոփորոսին ու Գեորգիոսին և նրանց աղքատ ու որբ հորեղբորորդուն: Իսկ Օփիդորունի գյուղը և Կուաներիան Կալմուխիի հետ միասին ես տվեցի իմ հանգուցյալ դուքսին ու տիրոջը, վերջինիս խնդրանքով, օգտագործման համար, գրավոր պայմանագրի հիման վրա: Իսկ Վարդա պրոաստիոնը<sup>19</sup> առանց որևէ բարենորոգության, ինչպես որ այն ստացել էի, տվեցի պայծառափայլ մագիստրոս տեր Վասիլիոսին, նրա կողմից պարտադրվելով այն վաճառել [իրեն], նրա արժեքի դիմաց ոչինչ չստանալով, այլ միայն պարտքով, որի մասին, ինչպես նաև նրա այլ պարտքերի մասին, քսանհինգ լիտր<sup>20</sup> ընդհանուր գումարով [ունեմ] գրավոր ստացականներ պայծառափայլ մագիստրոսից, հանգուցյալ դուքսից և հանգուցյալ դքսուհուց՝ իմ տերերից: Այդ բոլորի դիմաց ես նրանցից ոչինչ չեմ ստացել: Այդ մասին թող միջնորդի և դատի աստծու ամենահաս նախախնամությունը: Սրտազետ աստվածը վկա, ես մինչև այժմ ոչ մի նենգութուն կամ շարամտություն չեմ ցուցաբերել ոչ նրա (իմա՛ դուքսի — Հ. Բ.) հանդեպ, ոչ էլ նրա որդիների՝ իմ տիրոջ որդիների հանդեպ: Ես ոչ մի ստորություն չեմ արել նրանց հանդեպ, ոչ մտածել եմ, ոչ էլ գրել [նրա դեմ] որևէ գրապարտություն, այլ առանց դավի և կամավոր կերպով մինչև իմ մահը ես նրանց համար տազնապների մեջ եմ ընկել, կատարելով մեծ ու անհուսալի գործեր, ամենազոր աստծու շնորհիվ, անհաղթ խաչի օգնությամբ և իմ աստվածածնի միջնորդությամբ, շնայած դրան, որ ես նրանց կողմից և նրանց միջոցով շատ ու շատ դժվարությունների և վտանգների հանդիպեցի: Նրանք նույնիսկ իմ կյանքը դավեցին: Բայց ստանալով [աստծու] ամենատես աչքի օգնությունը ես այդ բանում ինձ բույրովին չկորցրեցի:

Ինձ մնացած շորս կալվածներից և պրոաստիոններից Տանձուտը, նույն ինքը Սալիմը, լեռնային հողերով, որը բաժանում է ինձ պատկանող ջրարբի հողերը անջրդիներից, այսինքն այդ պրոաստիոնի ամբողջ պախտը<sup>21</sup> ութսուն դահեկանը<sup>22</sup> և էննոմիոնը<sup>23</sup>, ի բաց առյալ այն շորս զեզոտոպիոնները<sup>24</sup>, որոնք ես շնորհել եմ որպես կտակ և լեզատ<sup>25</sup> իմ կողմից ազատ արձակված ստրուկներին<sup>26</sup>, ես տվեցի որպես օժիտ իմ առաջին և հարազատ դստեր Իրինեին և նրա կողակցին: Ահա այդ ութսուն դահեկանին, արոտատեղիներին և ամբողջ [նշված պրոաստիոնի] հողերին թող տիրի իմ այդ նույն դուստրը, դա իր հայ-



րենական ժառանգությունն է և իր օժիտը երեսուն լիտրի արժողությամբ<sup>27</sup>։ Այդ բոլորի հետ նա նախապես ստացավ նաև շարժական, ինքնաշարժ և դյուրաշարժ<sup>28</sup> գույք, մի մասը դադտնի կերպով, մյուսը բացահայտ, այն է ստրուկներ, արծաթ, դիպակներ և անասուններ<sup>29</sup>։ Թող նա այդ բոլորն ունենա իմ օրհնությամբ և կամքով, թող նա ապրի իմ տան մեջ բարեպաշտությամբ և ուղղափառորեն քաղաքավարելով, վճարելով հկեղեցական<sup>30</sup> և թագավորական հարկերը, ինչպես որ սահմանված է։

Նրա հարազատ քրոջ և իմ իսկական դուստր Մարիային ես տվեցի որպես օժիտ տաս լիտր [արժողությամբ] շարժական, ինքնաշարժ և դյուրաշարժ գույք, այն է ստրուկներ, արծաթ, դիպակներ և անասուններ։ Յանկանալով, որ այդ [օժիտը] լրացնեմ ու հասցնեմ նրա քրոջ օժիտի՝ երեսուն լիտրի շափին, որը [միաժամանակ] նրա ժառանգությունն է, ես նրան տվեցի իմ Բուզինա կալվածքի կեսը։ Այդ երկուսի գումարը կազմում է երեսուն լիտր օժիտ և հայրենական ժառանգություն։ Այդ նույն իմ կալվածքի մյուս կեսը ես թողնում եմ իմ Աստվածածնի վանքին, որը ես ի հիմանց կառուցեցի, որպեսզի նրան ծառայող միաբանները լիակատար և անվերադարձ կերպով տիրեն նրան, որպես իմ հոգատարության արտահայտություն։ Քահանաներին և սարկավադներին որպես ոռճիկ թող վճարվի քսանվեց [դահեկան], վանքի ջահընկալություն<sup>31</sup> համար տասներկու [դահեկան]։ Սուրբ վկա Վարվառայի վանքին, որը միաժամանակ հանդիսանում է իմ հարազատ մոր, որդու Ռոմանոսի և իմ կողակցի հանգստարանը, որը դառնալու է նաև իմ թշվառիս ու անարժանիս [հանգստարանը], թողեցի վանքի պաշտոնավարության, հոգեհանդիսատների, ինչպես նաև թաղումների համար տասներկու [դահեկան]։ Բացի դրանից, իմ Պարարունի<sup>32</sup> գյուղից երկու հարյուր մող<sup>33</sup> ցորեն, հազար լիտր<sup>34</sup> գինի, ընդեղեններ և պտուղներ<sup>35</sup> աստծու տնօրինությամբ։ Իսկ Սասյաս գյուղը հինգ լիտր [ոսկու] դիմաց տվեցի իմ փեսա Միքայելին։

Եթե աստծու շնորհիվ և իմ աստվածածնի միջնորդությամբ իմ երկու դուստրերը և փեսաները միմյանց հետ համերաշխ, խաղաղությամբ և սիրով ապրեն և [բոլորը] բնակվեն իմ բնակարանում, որը [գտնվում է] աստվածածնի [վանքի] դիմաց, ապա թող նրանք ունենան նաև իմ ամբողջ կայքը՝ շարժական, ինքնաշարժ և անշարժ ունեցվածքը, ինչպես ստրուկներին, որոնք նախօրոք նվիրաբերվել են, այնպես էլ անշունչ գույքը, որ նրանք ստացել են, այնպես որ պարզ է յուրաքանչյուրի բաժինը։

Ես ոչ ոքի ոչ մի դրամ պարտական չեմ մնացել, բարերար աստվածը ծախսվածի համեմատ էլ տալիս էր։ Նույնպես ես ոչ մի ուրիշ մարդու չեմ թողել ոչ մի դահեկան, ոչ էլ զանազան առարկաներ, բացի սուրբ ու սրբազան սպասներից, որոնք վաղուց նվիրաբերել եմ իմ կողմից կառուցված ամենասուրբ վանքին, այն է պատվական ոսկեղեն խաչը, որն ունի [սրբերի] կիսովաժանկար<sup>36</sup> պատկերներ և վեց հատ աղաներ։ Մեկ ուրիշ թափոթի խաչ, արծաթապատ, որն ունի բարձրաքանդակ [պատկերներ], մի փոքր արծաթյա խաչ։ Սրբազան անոթներ՝ սկիհ, քամոց, աստերիսկոս<sup>37</sup>, հաղորդության երկու գդալ, մաղզմա, մի այլ խորը [մաղզմա], բուրվառ, բոլորն էլ արծաթյա, ոսկեզրած։ Կախվող կանթեղներ։ Այս բոլորի արժողությունն է երեք հարյուր [դահեկան]։ Մի ուրիշ սկիհ փայտյա իր սուրբով, այն է մետաքսյա կարմիր ղենչակ և սկիհների քողեր՝ վեց հատ։ Երեք անաբող<sup>38</sup>, պարսկական կանաչով սպիտակ դրոշ-

զոհամատուցման բաժակ<sup>39</sup>: Քահանայի հինգ սրեմ և փիլոններ՝ երկու սև փիլոն, շորս սպիտակ փիլոն, մեկ կարմիր, որը թաքցրել է Նիկուլան, ընդամենը յոթ փիլոն իրենց ուրարներով և փորուրարներով: Երկու հատ եմփորոն, ամբողջութեամբ մետաքսից, շորս մեծ դենշակ, սուրբ սեղանի ծածկոց թանկագին կտորից<sup>40</sup>, որի վրա ասեղնագործված են խաչեր և տառեր: Մի ուրիշը մանիշակագույն մետաքսյա, ապա կարմիրը և սպիտակը: Արծաթյա ոսկեջրած ուրիշ սպասեղեն — արծաթե կանթեղ, սուրբ մասանց տուփեր լի մասունքներով: Ութ հատ ոսկով նկարված մոմաներկ սրբապատկերներ, այն է խաչելութեան երկփեղկ պատկերը, սուրբ Գևորգի վահանաձև պատկերը, սուրբ Թեոդորոսը սուրբ Գևորգի հետ, աստվածածնի մի փոքր պատկեր, սուրբ Բարսեղի [պատկերը], աստվածածնի երկու մեծ պատկերներ, խաչելութեան վահանաձև պատկերը, ընդամենը ութ հատ: Տասներկու հատ արույրն ուրիշ սրբապատկերներ: Ոսկով նկարված հյուլոգրաֆիական<sup>41</sup> երեսուն այլ սրբապատկերներ, որոնք [պատկերում են] տերունական և զանազան սրբերի տոներ: Տարբեր սրբերի տաս հատ փոքր [պատկերներ], որոնցից ութ հատը ծածկվող տեսակից, իսկ երկուսը տարբեր: Երկու հատ պղնձե և հինգ հատ երկաթե մոմակալներ: Մեկ փոքր ջահ, երկու ութլուսյա աշտանակ, բազմաթիվ կանթեղներով վեց ջահ, իրենց շղթաներով, շորս հատ խնկաման, երկու հատ խընկանոց:

Զանազան զրքեր: Իմ թանկագին, ավելի ճիշտ սնդին գանձը՝ սուրբ և սրբազան Ավետարանը, որն ամբողջութեամբ ոսկով է գրված և ունի շորս ավետարանիչների ոսկով նկարված պատկերները և ունի կիտվածանկար զարդեր: Այն կազմված է մանիշակագույն կտորով, որի վրա ոսկե և արծաթե թելերով հյուլված են վեց<sup>42</sup> զարդանկարներ, կա ճարմանդ: Բացի դրանից տառերը նկարազարդ են, պատկերված է նաև ծննդի սուրբ տոնը: Նրա վրա կան ութսուն իմն ոսկե գամեր<sup>43</sup>: Մեկ ուրիշ մագաղաթյա ավետարան: Մեկ փոքր քառավետարան հասարակ գիրք: Մեկ ուրիշ [գիրք], որը [բովանդակում է] շորս ավետարանների մեկնությունները: Ճանապարհի մի փոքր գիրք Գործք առաքելոցը, մեկ ուրիշ մեծ շախի [Գործք առաքելոց], որը բովանդակում է նաև կիմոնարիոնը<sup>44</sup>: Մենդոց գիրքը և մարգարեությունները: Մեկ ուրիշ...<sup>45</sup> գիրք Հնգամատյանը և թագավորությունց երկու զրքերը: Պանդեկտեսը<sup>46</sup>: Մեկ տոնացույց: Երեք կոնդակարներ<sup>47</sup>: Մեկ մեծ գիրք, որը բովանդակում է [Ան]տիպայի երկու ճառերը և նրա վարքը<sup>48</sup>: Մեկ ուրիշ գիրք Դամասկացին<sup>49</sup>, որը բովանդակում է նաև Աստվածաբանի երգերը<sup>50</sup>: Մեկ ուրիշ գիրք Մելիսան<sup>51</sup>: Ապա Պանարիոնը<sup>52</sup>: Մեկ սաղմոսարան իր մեկնաբանությամբ: Մեկ տաղարան և երկու հագներգություն: Մետաֆրաստական շորս գիրք<sup>53</sup>: Երկու հայսմավուրք, որոնք բովանդակում են նաև տարբեր ընթերցանություններ: Մեկ ճառընտիր և մեկ ուրիշը, որ բովանդակում է տարբեր ճառեր: Մեկ ուրիշ գիրք, որ բովանդակում է Պարսկականները<sup>54</sup> և այլ տարբեր բաներ: Մեկ ուրիշ [գիրք]՝ Արխատրատեգի<sup>55</sup> [վարքը]: Ոսկեբերանի բարոյախոսությունները, երեք գիրք: Սուրբ Բարսեղի վեցօրյա արարչագործությունը<sup>56</sup> և Ոսկեբերանի տետրակները: Մեծ Բարսեղի հակաճառությունները, տասնևվեց տետրակ: Մեկնիչները: Քաղկեդոնի ժողովի գործերը<sup>57</sup>: Հոդեգոսը<sup>58</sup>: Մեկ կանոն շարակնոց: Մեկ ուրիշ կանոն շարակնոց, որն ունի նաև հին և նոր կապարանները համառոտ կերպով: Օրինաց [գիրքը]: Աղեքսանդրը<sup>59</sup>: Լեկիպեն<sup>60</sup>: Երա-

պահան: Տասներկու հայրապետաց գիրքը<sup>61</sup>: Եզովպոսը<sup>62</sup>: Պիսիդեսը<sup>63</sup>: Մալիկոսը<sup>64</sup>: Նիֆոնը<sup>65</sup>: Փիլոնը<sup>66</sup>: Երկու Սանդուխթ [աստուածային ելից]<sup>67</sup>: Երկու ժամանակագիրներ: Էպանիկտիոնը<sup>68</sup>, բերականության հարցեր, մեկ ուրիշ [գիրք] հարանց վարքը, երկու գիրք նախերգանաց հագներգության, Հնգամատյանը, հինգ ութ ձայնից շարակնոց, երկու տաղարան: Երեք ձայնից շարակնոց: Վեց հայամավորք, Ոսկեբերանի տարբեր գործեր: Մեկ ուրիշը, որն ունի հարցեր և սուրբ Իսիդոր Պելուսիոտեսի թղթերը<sup>69</sup>: Կոնք և դուլլ և [սուրբ] սեղանի ծածկոց:

Ահա սրանք նվիրաբերվել են սուրբ վանքին այն պայմանով, որ նրանցից օգտվեն և նրանց վրա տիրեն իմ երկու դուստրերը, սաղմոսելու, կարգալու և պարապելու համար, բայց ոչ մի դեպքում շտան ուրիշ մարդկանց, այլ միայն [իրենք] օգտվեն նրանցից, ինչպես որ պետք լինի, երբ որ պետք լինի և որտեղ որ պետք լինի, միաբանների կամքով և համաձայնությամբ: [Նրանց եմ թողնում] նաև իմ շորս կալվածների տնօրինությունը, եթե պետք եղածին պես կատարեն իմ կողմից սահմանվածը: Այդ մասին ես վերևում, տարբեր տեղերում մանրամասն ասել եմ: Ահա այսպես թող իմ երկու դուստրերը տիրեն նրանց (իմա՝ վանքին նվիրաբերվածին — Հ. Բ.), ինչպես նաև իմ Սալիմ, Բիզինա, Եսայաս և Պարաբունի [կալվածքներին], եթե նրանք ապրեն սիրո և խաղաղության մեջ: Նրանք թող միասին կատարեն տոները, հոգեհանգիստները, իրենց վրա վերցնեն վանքի և միաբանների ամբողջ հոգսը, ինչպես նաև իմ բազմաշարշար հոգու: Կատարել հետևյալ սուրբ տոները: Աստվածածնի էպիլոխիան<sup>70</sup>, ննջումը, կենարար խաչի վերացումը և [աստվածածնի] մուտքը տաճար: Հոգեհանգիստներ կատարել իմ ծնողների համար նոյեմբերի հինգին, իմ ողորմած կողակցի համար՝ սեպտեմբերի քսանվեցին, և այնուհետև ինչքան որ կարողություն տա աստված: Ծշգրտությամբ պահել երեք սուրբ պահքերը, այն է մեծ պահքը, սուրբ առաքյալներինը և ծննդյանը, ինչպես նաև շրեքշարթի և ուրբաթ օրերինը, բացի դատկի ու տասներկու օրվանը<sup>71</sup>, ըստ յոթ [տիեզերական] ժողովների ավանդության: Որպեսզի նշված հոգեհանգիստները անխափան կատարվեն, ինչպես նաև որպեսզի սուրբ վանքի ծառայողները առանց գայթակղության և անխափան կատարեն իրենց պարտականությունները, այդ բոլորի համար ես տվեցի իմ ազատ կալվածքի եկամուտը: Եթե այդ (վերևում նշված) բոլոր իմ (ցանկությունները), իմ զավակներն ու ժառանգները սիրով և ճիշտ կատարեն, ապա թող նրանք լինեն իմ ամբողջ սեփականության տերն ու տիրականը: Սակայն եթե այդ գործը իմ ժառանգները լքեն կամ զլանան, թող նրանք տիրեն իմ տան, Սալիմի, Եսայասի և Պարաբունիոնի վրա, իսկ Բուզինա կալվածքը թող մնա միաբանների և երկու վանքերի ծախսերը հոգալու համար, ինչպես վերևում ասվեց:

Իմ ընդոժիններին<sup>72</sup>, այն է իմ ստրուկների մասին ես անցյալում հոգացի և բոլորին ազատ արձակեցի և նրանց շնորհեցի լեզատներ (այդ ստրուկներից ոմանք արդեն մահացել են, ոմանք էլ դեռ կենդանի են), որպեսզի նրանք ազատ, բոլորովին ազատ և օրենքների համաձայն հոռմեական քաղաքացիներ լինեն, ըստ իրենց կողիկեւոսների<sup>73</sup>: Թող նրանք ազատ, բոլորովին ազատ առհավետ տիրեն իրենց [իմ կողմից] տրված գեպոտոպիոններին: Նախ և առաջ Կիրիակոսը, որն ինձ հետ է մեծացել և իմ բոլոր ճանապարհորդությունների ընթացքում շատ շարժարվել: Ես նրան տվեցի ազատ կին՝ վանական և երեց

Կլիմենտի հարազատ քրոջը, կատարելով ամուսնական բոլոր ծիսակատարությունները: Իմ ծանր հիվանդութեան ժամանակ ես նրան որպէս լեզատ թողել էի տասնհինգ [դահեկան] և ապրանքով ինչ որ նա ուներ հագուստեղեն և տնային իր: Ինդիկտիոնի վեցերորդ տարին<sup>74</sup> ես նրան թողեցի ևս տաս [դահեկան], իսկ այժմ, իմ կյանքի վերջում, երբ նրա Կոնստանդին որդուն Աստվածածնի [վանքի] միաբան դարձրի, թողնում եմ ևս տասը [դահեկան]: Նույնպէս իմ աղախին Սեմնիին, ես նրան երկու անգամ լեզատ շնորհեցի, իսկ նրա որդուն՝ Վասիլիոսին կին տվեցի, պատվեցի միաբանի պաշտոնով և թողնում եմ նրան մեկ ազատ զեզոտոպիոն և տաս [դահեկան]: Հարազատ բույրեր Սոֆիային և Մարիցային, նրանց ամուսիններին ու երեխաներին ես ազատ, բոլորովին ազատ արձակեցի, շնորհելով նրանց լեզատներ անցյալում երկու անգամ, իսկ այժմ թողնում եմ Աբասզոսին մեկ զեզոտոպիոն, Լասկարիսին մեկ բոյգոտոպիոն<sup>75</sup>, նույնպէս և Նիկիտասին, որին անցյալում միայն մեկ անգամ լեզատ էի շնորհել, այժմ թողնում եմ մեկ բոյգոտոպիոն և երեք [դահեկան]: Իսկ որովհետև Աբասզոսի որդուն Գեորգիոսին և Լասկարիսի որդուն Միքայելին Աստվածածնի [վանքի] միաբաններ դարձրեցի, դրա համար թողնում եմ որպէս լեզատ Գեորգիոսին հինգ, իսկ Միքայելին երեք [դահեկան]: Մարկիանոսը օրինական կարգով ամուսնանալուց հետո, թող նա էլ ազատ լինի և ստանա որպէս լեզատ ինչ որ պատահի: Սոտիրիկոսին ազատ արձակելով և լեզատ շնորհելով արձանագրեցի կողիկելլոսում<sup>76</sup>: Իսկ Գրիգորիոսին և նրա կնոջ Թեոդորային ազատում եմ իմ կողակցի՝ ողորմած Աննայի հոգու փրկութեան համար: Նրան (իմա Գրիգորիոսին — Հ. Բ.) ես Աստվածածնի [վանքի] միաբան դարձրի և նա թող ստանա սարկավազին հասնող ոտճիկը և կերակուրը և ինչ որ վաստակի իր գրչի արհեստից: Իսկ որպէս լեզատ ես նրան թողնում եմ երեք [դահեկան]: Ազատ արձակած իմ ընդոծիներին և արծաթագին<sup>77</sup> ստրուկներից ինչքան որ արու զավակներ ծնվեն, թող նրանք դաստիարակվեն Աստվածածնի վանքում, սովորեն սուրբ գիրքը, մտնեն միաբանների դասը, իրենց [ապրուստն] ստանալով վանքից, իսկ եթե լինեն կանայք կամ տղամարդիկ, որոնք կցանկանան ծառայել իմ ժառանգներին, թող նրանք ստանան իրենց ոտճիկն ու կերակուրը փոխադարձ համաձայնութեամբ<sup>78</sup>: [Իմ ժառանգները] ոչ մի իրավունք չունեն որևէ կերպ նրանց վաճառելու կամ նվիրելու: Ես ցանկանում եմ, որ նրանք (իմա ժառանգները — Հ. Բ.) լինեն բացարձակապէս ազնվական և ազատ<sup>79</sup>:

Նախկինում ազատ արձակված Սիլիոնուին ևս տվեցի իմ դուստր Մարիային, որպէսզի նա նրան ծառայի ընթացիկ ինդիկտիոնի տասներկուերորդ տարվանից մինչև [հաջորդ] ինդիկտիոնի առաջին տարին<sup>80</sup>: Նրան (իմա Սիլիոնուին — Հ. Բ.) ես ամուսնացրեցի իմ ստրուկ Ապոսֆարիոսի հետ: Ես ցանկանում եմ, որ նա էլ ազատ լինի և ստանա որպէս լեզատ [իր կնոջ հետ միասին] երեքական դահեկան: Նույնպէս իմ ստրուկ Մուսեսին<sup>81</sup> և նրա հոր Ղաբիպին [ևս ազատ արձակեցի] իմ սիրելի որդու Ռոմանոսի [հոգու] փրկութեան և նրա հիշատակի համար:

Չնայած, որ ես արդեն զաղթել եմ իմ բարեպաշտ թեմայից, իմ հայրենիք Կապպադովկիայից, բայց չեմ ուզում [անուշադրութեան] մատնած լինել իմ մոր կողմից այնտեղ կառուցված երեք հիերարխների անվան եկեղեցին, դրա համար [այդ եկեղեցուն] հոգալու համար ես վերադիտող և տեր նշանա-

կեցի Մողեստոսին: Իմ հարազատ քրոջ հավատացյալ Իրենեի երեխաներին [ևս թողեցի] երեսուն հյուպերպյուրոն<sup>82</sup>, իսկ եկեղեցուն՝ եղած ամբողջ սրբազան գույքը, այն է արծաթե խաշեր, ոսկեղոծ սրբապատկերներ, հին գրքեր, դրանց վրա ավելացրած նաև քահանայի սքեմ:

Այսքանը սուրբ և սրբազան հաստատությունների մասին: Իսկ վերևում հիշատակված լեզատները, ինչքանը որ ինձ կհաջողվի բաժանել աստծու օգնությամբ և աստվածածնի միջնորդությամբ, ես այդքանին էլ շնորհակալ եմ: Բայց եթե ինձ հասնի մարդկանց համար ընդհանուր վախճանը, ապա [այդ սուրբ հաստատություններին] իմ կալվածների տարեկան պախտից<sup>83</sup> թող բաժին հանվի, հասկանալի է դուրս հանած թագավորական հարկերը: Իսկ ավելացածը թող բաժանվի աղքատներին, որոնք իմ եղբայրներն են և տերերը: Եթե պատահի, որ գտնվեն ինձ պատկանող անասուններ և այլ շարժական և դյուրաշարժ գույք, թող այն բաժանվի իմ աղքատականների և քարեկամների միջև, որովհետև ես չեմ հիշում, որ իմ ամբողջ կյանքի ընթացքում կատարած լինեմ որե՛ք բարի գործ, այլ միայն դքաղվել եմ դատարկ բաներով, պորտաբուծությամբ և ինձ տվել եմ հաճույքների<sup>84</sup>:

Զգիտեմ ինչպես իմ ուշադրությունից վրիպեց իմ աղախին Զոեն, որին ես գնել էի շորս հարյուր դահեկանի դիմաց<sup>85</sup>: Նրան ազատելու մասին պայմանագրի համաձայն, եթե նա դրժեր աստծու հետ կնքած պայմանը<sup>86</sup>, պետք էր նորից ընկներ ստրկական լծի տակ: [Նա ոչ միայն] դրժեց այդ պայմանը, այլ հակառակ իմ կամքին ամուսնացավ, բայց շնայած այդ բոլորին, ես ուզում եմ, որ նա ևս ազատ լինի, քացարձակապես ազատ, իր երեխաների հետ միասին:

Ամենատես աստծուն...<sup>87</sup>

... և հանձնվեմ գերեզմանին, այնտեղ ուր իմ կտակի համաձայն գտնվում է [իմ] հանգստարանը: Ես աղաչում եմ ու պաղատում բոլորին, քահանաներին ու վանականներին, իմ ժառանգներին, որպեսզի նրանք իմ գերեզմանի վրա կատարեն երեքսրբյան աղոթքը և տարեկան հոգեհանգիստներ իմ մեղքերի թողության համար: Բայց ամենից շատ ու ամեն ինչի համար ես ամենակալ տեր աստծու առաջ և ամենասուրբ աստվածածնի և բոլոր երկնային ուժերի առաջ երզվեցնում եմ ոչ միայն իմ ժառանգներին, այլև բոլոր վերակացու մարմիններին՝ մետրոպոլիտներին, եպիսկոպոսներին, կատապաններին, դուքսերին, թեմական դատավորներին<sup>88</sup>, թախանձում նրանց որպեսզի իմ կարգադրությունները կատարվեն լրիվ և քացարձակապես:

Եթե իմ ազգականներից կամ ժառանգներից, կամ ազատ արձակված [ստրուկներից] կամ ընդոժիններից<sup>89</sup> որե՛է մեկը ճիշտ ուղուց շեղվի և ուղղափառ հավատքից անցնի օտար, այլադեմ հավատքի կողմը, եթե այն իմ ժառանգներից լինի՝ թող զրկվի իրեն հասնող բաժնից, եթե ազատ արձակված [ստրուկներից՝ նորից] ընկնի ստրկական լծի տակ<sup>90</sup>, իսկ եթե այն դրսի մարդկանցից է<sup>91</sup>, թող նա իմ տիրույթներից դուրս վաճառվի:

Եթե իմ դուստրերից որե՛է մեկը, կամ նրա ամուսինը, երկուսի ցանկություններ ուզենա ուրիշ տեղ բնակվել, ապա այդ դեպքում թող նրանց (իմա Իրենեի ու նրա ամուսնու և Մարիայի ու նրա ամուսնու — Հ. Բ.) միջև բաժանվի եկեղեցական բոլոր սուրբ գույքը, [այն պայմանով, որ հեռացողը] կառուցի Աստվածածնի վանքի նմանը, կամ թեկուզ ավելի փոքր վանք, և յուրաքան-

չուրք բավականանա իրեն ընկած բաժնով և արժանանա աստծու և աստվածածնի օրհնությանը և առավել ևս...<sup>92</sup> [...] այնպիսին նշովյալ լինի երեք հարյուր տասնութ հայրապետների կողմից և Հուդայի<sup>93</sup> բաժինը ստանա և բոլորի կողմից դատապարտվի որպես հայրասպան և եղբայրասպան:

Իմ այս բոլոր [ցանկությունների կատարման] համար, իմ այս թշվառ կտակի խնամակալներ եմ թողնում նախ և առաջ ամենակալ տիրոջը և նրան անսերմ ծնողին, այնուհետև պայծառափայլ մագիստրոս տեր Վասիլիոսին և նրա հարազատ եղբայր հռչակավոր վեստարխոս<sup>94</sup> Ֆարեսամանեսին, նաև թեմի ամենաաստվածասեր եպիսկոպոսին: [Իմ կտակի] հոգաբարձուներ և վերակացուներ [եմ թողնում] իմ երկու փեսաներին՝ սպաթարոկանդիդատ<sup>95</sup> տեր Գրիգորիոսին և մերարխոս<sup>96</sup> Միքայելին և իմ վանքի ավագագույն քահանային: Որպես լեգատ [թող վճարվի] պայծառափայլ հարազատ եղբայրներին<sup>97</sup> երկու, գուցե երեք լիտր [ոսկի], ամենաաստվածասեր եպիսկոպոսին վեց [դահեկան] կամ [դրա փոխարեն] մեկ զիրք<sup>98</sup>, նույնքան էլ քահանային: Իսկ եթե գտնվի իմ հագուստներից կամ տնային առարկաներից որևէ բան, թող այն բաժանվի պատահած սուրբ վանականներին:

Սույն կտակը իմ թելադրությամբ գրվեց ձևումը Թեոդուլոս վանականի Աստվածածնի [վանքի] երեցի, որը և այն կարգի բերեց և որի տակ ստորագրեցին և ներկա եղող վկաները<sup>99</sup>, ընթացիկ ինդիկտիոնի տասներկուերորդ տարին, ապրիլ ամսին, վեց հազար հինգ հարյուր վաթսուճյոթ թվին<sup>100</sup>, որին վկա են հայրն ու որդին և սուրբ հոգին:

Ես պրոտոսպաթարխոս և հյուպատոս Եվստաթիոս Բոյիլասս իմ ձեռքով ստորագրեցի:

### Մ Ա Ն Ո Թ Ա Գ Ր Ո Ի Թ Յ Ո Ի Ն Ն Ե Ր

<sup>1</sup> «Մահամաններից հետո»: Հունարենում ὑπερόριος, որ միաժամանակ նշանակում է արտորական:

<sup>2</sup> Խրիստոսրիկինոս, հունարեն χριστοστρίχλινος, այն է «Ոսկե սեղան»: Տոնախմբությունների ամենանշանավոր դահլիճներից մեկը Կոստանդնուպոլսի մեծ պալատում, որը գտնվում էր սուրբ Սոփիայի մոտ: Այդ դահլիճում մեծ հանդիսավորությամբ տեղի էին ունենում պրեսպոլիտոսի, պատրիկների և Բյուզանդական կայսրության մյուս մեծամեծների հռչակումը: Խրիստոսրիկինոսում տրվում էին պաշտոնական ճաշկերույթներ: Այս վերջին մանրամասնությունը համընկնում է խրիստոսրիկինոս բառի ստուգարանության հետ: Այդ դահլիճը հաճախ հիշատակվում է Կոնստանդին Միրանածինի աշխատություններից մեկում De Ceremoniis-ի մեջ: Հայ մատենագրության մեջ խրիստոսրիկինոսը հիշատակված է Անանիա Շիրակացու կողմից «Մարկիանու տրիկին» ձևով: (Տե՛ս Вопросы и решения вардапета Анания Ширакаца, армянского математика VII века, издад и перевел И. А. Орбели, Петроград, 1918, հարց 3-րդ, էջ 48: Տե՛ս նաև ծանոթությունը 69-րդ էջում):

<sup>3</sup> Պրոտոսպաթարխոս, հունարեն πρωτοπαθαρχος: Հայկական աղբյուրներում հիշատակվում է «պոտոսպաթարն» ձևով (տե՛ս Սմբատայ Սպարապետի Պատմութիւն, Մոսկվա, 1856, էջ 36), «պոսոսպաթար» (Մատթէոս Ուսհայեցի, ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 27, 28), նաև «պոտուսպաթար» (Գրիգոր Մագիստրոսի թղթերը, Ալեքսանդրապոլ, 1919, էջ 104): Բյուզանդական տիտղոս, որն սկզբում տրվում էր կայսեր թիկնապահին, իսկ հետագայում դարձավ հասարակ տիտղոս: Հիշատակվում է գլխավորապես Մակեդոնական հարստության ժամանակաշրջանում: Վերջին պրոտոսպաթարխոսները հիշատակվում են Ալեքսիոս Ա. Կոմնենիոսի (1081—1118 թթ.) ժամանակ: Կոնստանդին Միրանածին կայսեր պաշտոնական արարողություններին նվիրված աշխատության մեջ գտնվում է արտիկլին Յիլոթեոսի կողմից 900 թվա-

կանին կազմված պետական պաշտոնյաների դասակարգումը: Պատրիկներն ու պրոտոպաթարները մտնում էին առաջին դասի մեջ: (Տե՛ս Constantini Porphyrogeniti De Ceremoniis aulae byzantinae, vol. I, Bonnae, 1829, p. 713; Հմմտ. Փ. Վ. Успенский, Византийская табель о рангах, Известия Русского Археологического Института в Константинополе, т. III, София 1898; V. Benesevič, Die byzantinischen Ranglisten nach dem Kletorologion Philothei und nach den Jerusalem Handschriften zusammengestellt und revidiert. Byzantinisch-Neugriechische Jahrbücher, Bd. 5, 1 und 2 (Doppel-) Heft, Athen, 1926).

<sup>4</sup> Հյուպատոս, հունարեն ὑπάτος, արտասանվում էր իպատոս, ինչպես որ հանդիպում է նաև հայերեն վիճական արձանագրություններում: Հմմտ. Արևելյի մագիստրոս և կատապան Բագարասի 1060 թ. Անիի մայր տաճարի արևմտյան պատի վրա թողած արձանագրությունը: «Մխիթար իպատոսն Կրտին որդին» (տե՛ս В. Бенешевич, Три Анийские надписи, стр 22).

Հյուպատոսը տիտղոս է, որ արվում էր այն մարդկանց, ովքեր մտնում էին Բյուզանդիայի սենատի կազմում: Նրանք, ըստ Ֆիլոթեոսի դասակարգման, գտնվում էին չորրորդ դասի մեջ:

<sup>5</sup> Բոլիլյան այդ բարբը գրում է, որովհետև այդ էր պահանջում կտակի մասին բյուզանդական օրենսդրությունը: «Բասիլիկ» օրենսդրական ժողովածուում պարզ կերպով ցույց է տրված, թե ինչ է կտակը և ով կարող է կտակել: Այնտեղ գրված է.

«Ա. Կտակը, դա ցանկություն արդարացի արտահայտությունն է այն բանի, ինչ որ մեկը ուզում է որ կատարվի իր մահվանից հետո»

Բ. Կտակողը պարտավոր է ոչ միայն մարմնով, այլև մտքով առողջ լինել (հմմտ. Մխիթարայ Գօշի Դատաստանագիրքը Հայոց, Վաղարշապատ, 1880, մասն Բ, հոդված ՂԹ, «հաստատուն կտակ յառողջութեանն է»):

Գ. Կտակելը պետական օրենսդրության է պատկանում, դա մասնավոր գործ չէ:

Դ. Կտակողը պարտավոր է կտակելու իրավունք ունենալ և իր կտակը կատարել համաձայն օրենքների:

Ե. Կտակի բովանդակությունը շահար է հակասի այդ գործին վերաբերող օրենքներին:

Զ. Տղամարդը իրավունք ունի կտակել, եթե լրացրել է տասնեչորս տարին, իսկ կինը տասներկու տարին:

Է. Խուլն ու համբը իրավունք չունի կտակելու, իսկ նախորդ կատարված կտակումը չեղյալ է հայտարարվում:

Ը. Հիվանդը կարող է կտակել միայն թագավորի թույլտվությամբ: (Տե՛ս Basilicorum libri LX, ed. Heimbach, Lipsiae 1843, liber XXXV, titulus I.

<sup>6</sup> Այն է 1053 թվականին:

<sup>7</sup> Այն է 1056 թվականին:

<sup>8</sup> Բնագրում գրված է. κατ'ἀλυπον ταῖς δυοῖ θυγατράσι καὶ τὸν ἅπαντα βίον ἐμέ: Բենեշկիչը կարծում էր, որ κατ'ἀλυπον-ը καταλείπω բայի հարակատար դերբայն է տեղադրված գրված երկու ուղղագրական սխալներով: Նրա կարծիքով պետք է լինի καταλιπὼν այսինքն «թողնելով»: Սակայն այս դեպքում Բենեշկիչը հանդիպեց մի այլ դժվարություն: Չէ որ καταλιπὼν-ը արաբական սեռի դերբայ է, իսկ «թողնող» անձնավորությունը Եվստաթիոս Բոլիլյասի կինն է: Բենեշկիչը առանց որևէ դժվարության այդ էլ «ուղղում» է և դարձնում καταλιποῦσα, այսինքն «թողնելով», բայց իրական սեռի Բնչպես տեսնում ենք, այդպիսի «ուղղումներով» բովանդակին հետանում ենք բնագրից: Մեր տեղատիքը κατ'ἀλυπον բառը, որ հին հունարենի ոչ մի բառարանում չեք հանդիպի, միջին հունարենի, ինչպես նաև նոր հունարենի κατ'ἀλυπος բառի հայցական հարված է, որ նշանակում է «անշափ տխուր»: Չնայած Բոլիլյասի կտակը վիստում է ուղղագրական սխալներով, այնուհի չի կարելի գտնել շփոթումներ, սխալներ սեռերի մեջ, ահպես որ այս դեպքում էլ Բոլիլյասի կտակում սխալ թույլ չի արված: Բոլիլյասը պարզ կերպով ասում է, որ իր կնոջ մահը իրեն անշափ վիշա պատճառեց:

<sup>9</sup> Այն է 1059 թվականին:

<sup>10</sup> Հայադիություն համար մեծ հետաքրքրություն ներկայացնող այս պարբերության մեջ Բենեշկիչը բաց է թողել սխալ. ὡς μήτε τοῖς ἀντικρὺς ἐνοικίχραντα Ἄρμενίοις παρὰ μιχρὸν ἐᾶν ἡγεμεῖν. τὸ δὲ εἰ συνεχομένους ὡς ἀνεπίδατον τοῖς πολλοῖς εἶναι καὶ ἀγνοστον πελέκει καὶ πυρὶ κατατεφρώσας. Մեր կողմից ընդգծված բառերը, որոնք իրականում պատկանում են նախորդ նախադասության, Բենեշկիչը տեղափոխել է հաջորդ նախադասության, միաժամանակ թույլ տալով մի փոքր սխալ ևս, որը, սակայն, խեղաթյուրել է միտքը: Պետք է լինի ոչ թե τὸ δὲ εἰ (τὸ — լիզր սեռի հոդ, ուղղական կամ հայցական հոլով, δὲ — շողկապ, որ նշանակում է իսկ, սակայն, εἰ — նույնպես շողկապ, եթե, թե, թեպետև և այլ իմաստով), այլ τῶ

ὄξει, որ նշանակում է «վախից, սարսափից»: Հաջորդ բառն էլ «հափշտակված» արդարացնում է մեր ուղղումը «վախից հափշտակված» այսինքն սարսափահար: Այդպիսով, այս երկու բառը կապվելով նախորդ նախադասության հետ ստացվում է, «Իմ այս դազթականության սկզբում, երբ ես այստեղ ժամանեցի և բնակվեցի, այս վայրը, որ ես ստացա, գարշահոտ էր, անտանելի, դաօձերի, կարիճների և վայրի գազանների բույն էր, ինչ որ բաշորովին հանդիստ չէր տալիս դիժացն ապրող հայերին, որոնք սառսափահար էին եղել»: Իսկ այնուհետև ինչպես բնագրում:

- 11 Բնագրում ἄγωνατος, որ քառացի նշանակում է անժանոթ:
- 12 Համեմատի՛ր Սաղմոս 29 (27). 6—8:
- 13 Ձեռագրում պարզ կարդացվում է չԱՆ ԾՅԱ: Բենեշեիչը շփոթել է չԱՆ-ի նշանը Հ առաի հետ, որոնք իրար շատ նման են, և կարդացել ՀՅՅԱ, անիմաստ բառ, որը և համարելով որչի սխալ ուղղում է ՀՅՅԱ-ի «անասուններ»: Իրականում պետք է կարդալ չԱՆ ԾՅԱ «և ինչ որ կամ «և ինչքան որ»:

14 Հոմարենում Βουζινά, նույն կտակում մի այլ տեղում գրված է Βουζινά, Բիզինա:

15 Կարվածքը Հոմարենում չԵՂԱՅ, ինչպես նաև չԵՂՅԵ: Դրա ինչ լինելու մասին մենք բացատրություն ենք գտնում այսպես կոչված «Հարկային կանոնադրության» մեջ, մի հոյակապ հուշարձան, որը կազմվել է Կոնստանդին Միրանածին կայսեր ժամանակ Այնտեղ տեղի է առնելով չԵՂՅԵՆ ՍԵ ԽՈՐԻՍՈՆ-ը (գյուղը) ամեն ինչում համընկնում են, բայց վաղուց տարբերվում են գրանով, որ գյուղի բնակիչների բնակարանները մի վայրում են և կողք կողքի կառուցված, իսկ չԵՂՅԵՆ-ի բնակարանները շատ են և նրա բնակիչների բնակարանները ցրված են և մեկը մյուսից շատ հեռու են գտնվում, այսինքն յուրաքանչյուրի տունը գտնվում է այնտեղ, ուր որ գտնվում է նրա հողակտորը: (Տե՛ս W. Ashburner, A byzantine treatise of taxation. The Journal of Hellenic Studies, vol. XXXV (1915), p. 77.

16 Տերտում 'Ισαίου: Մեզ թվում է թե այստեղ մենք գործ ոճներ ոչ թե Իսիտո, այլ ավելի մեծ հավանականությամբ՝ Եսայաս մարգարեի անվան հետ: Միջին դարերում և՛ 'Ισαίου և՛ 'Ησαίου արտասանվել է նույն ձևով Իսայիտո: Այն անվանված է խորիսոն — գյուղը Հաճախ գյուղերը ամրացված էին լինում պարիսպներով և աշտարակներով: Այսպես, օրինակ, Գրիգոր Բակուրյանը իր գյուղերից (խորիսոն) մեկի՝ Ստեփանիսոսի մասին գրելիս, նշում է, որ նրա մեջ նա կառուցել է երկու բերդ՝ παρ' ἐμοῦ χτισθεῖσιν ἐν αὐτῷ ὄντι χόστροις, Հաճախ գյուղ ասելով հասկանում էին բերդ: նույն Բակուրյանը գրում է Ֆիլիպպուպուլսի իր Պետրիճոս գյուղի մասին հետևյալը. «Ֆիլիպպուպուլսի թեմում գտնվող բերդը, այն է գյուղը, որ կոչվում է Պետրիճոս...» (χόστρον, ἦτοι χωρίον τὸ ἐπονομαζόμενον Πετριτζός): Տե՛ս L. Petit, Typicon de Grégoire Pacourianos pour la monastère de Petritzos (Bačkovo) en Bulgarie, византийский временник Приюжение к XI тому, № 1, С.-Петербург, 1904, стр. 10: նույն բանն ենք հանդիպում նաև Արիստակես Լաստիվերացու մաս: Խոսելով Մորրանս կոչված գյուղի մասին, նա նշում է, «Փանդի բերդ ոճեր գեօղն» (տե՛ս Արիստակես Լաստիվերացի, Պատմություն, էջ 140):

17 Բնագրում Χουσπαχράτι, մի ուրիշ տեղում, նույն կտակում այն հանդես է գալիս Χουσπαχράτι ձևով:

18 Ըստ երևույթին դա բնագրված ձև էր, որով ուղում էին ցույց տալ, թե ինչ որ գյուղացուն ոճի, իրենց արդար «հալալ» աշխատանքի արդյունքն է: նույն բանին մենք հանդիպում ենք Միրանի Աստափառանի կտակում, որը գրված է 1077 թվականին, թե պատվիրանից իր դեմ կարվածքները ամայի ու անապատ տարածություններ էին, և որ այդ բաշորը ինքն է ծաղկեցրել: (ἐξωνηθέντα μοι ἀπὸ τοῦ ὀημορίου ἐρείπειω τόπω ἐπέχτια). (Տե՛ս Miklosich et Müller, Acta et diplomata graeca medii aevi sacra et profana, t. V., Vindobonae, 1887, p. 304.

19 Պարզելու համար թե պրոստախանը (προστατειον) իրենից ինչ էր ներկայացնում և միաժամանակ պատկերացում կազմելու համար կտակին ժամանակակից հայկական սկզբնաղբյուրներում հանդիպող պոստ, պոսստին և պոսսանոց բառերի բովանդակության մասին, մենք այստեղ գիծում ենք բյուզանդական տարբեր հուշարձանների օգնությունը: Հայագիտության մեջ վերոհիշյալ բառերի բացատրությունը արվում է դասական հունարենի հիման վրա, որը հասկանալի է, իր բովանդակությամբ շատ հեռու է միջին դարերի նույն բառի բովանդակությունից: Սա. Մալխասյանցը իր «Բացատրական բառարանում» պոստ, պոսստին և պոսսանոց բառերը, որոնք միանգամայն ճիշտ բխեցնում է հունարեն προστατειον-ից, բացատրում է «բազարի արվարձան»: Դա ճիշտ է, իհարկե, դասական շրջանի հիշատակությունների համար, իսկ միջին դարերի պրոստախանը բոլորովին այլ բան է նշանակում: «Հարկային կանոնադրության» մեջ գրված



ված է, որ պրոաստիոնը տարբերվում է այլ կալվածներից նրանով, որ նրանց տերերը աֆտոկ չեն ապրում, այլ միայն նրանց ենթակա մարդիկ, այն է ստրուկներ, վարձակալներ և ուրիշներ (Տե՛ս W. Ashburner, A byzantine treatise of taxation, Journal of Hellenic Studies vol. XXV, (1915), p. 77. Հմմտ. Fr. Dölger, Beiträge zur Geschichte der byzantinischen Finanzverwaltung besonders des 10 und 11 Jahrhunderts Byzantinisches Archiv, Heft 9, Berlin, 1927, S. 115. Մեծ արժեք ներկայացնող այս հուշարձանը թարգմանված է ուսանողներին Ե. Է. Լիպշիցի կողմից, տես Сборник документов по социально-экономической истории Византии, Москва, 1951, стр. 147—154, և դեռմաներեն Գ. Ա. Օստրոգորսկու կողմից, տես Die ländliche Steuergemeinde des byzantinischen Reiches im X Jahrhundert, Vierteljahresschrift für Social- und Wirtschaftsgeschichte, 20 (1927); Ա. ս. բացատրությունն առաջադրված է Բոյիլասի կողմից: Նրա Տանձուտ-Սալիմ կալվածքը, ուր ինքն էր ապրում, կտակում կոչվում է պրոաստիոն:

Պրոաստիոնի շափերի մասին պատկերացում են տալիս Եվստաթիոս Բոյիլասին ժամանակակից այլ կտակներ և վանքերի կանոնադրություններ: 1073 թվականին գրված մի պրակտիկի համաձայն Միլետոսի մոտ գտնվող Գալաչիդա կոչվող պրոաստիոնը ուներ երկու հարյուր իննըսունչորս սոկարիոն երկարություն և հարյուր հիսունութ սոկարիոն լայնություն, այսինքն 46.452 քառակուսի սոկարիոն տարածություն: Մեկ սոկարիոնը (պարանը) հավասար էր 20 ամբողջ 436 չափարկորդական մետրի (տե՛ս Fr. Hultsch, Griechische und römische Metrologie, zweite Bearbeitung, Berlin, 1882, S. 617): Նշված պրակտիկը ավելի կենդանի ցույց է տալիս, որ այդ պրոաստիոնը ուներ 5609 մոդ հողային տարածություն: Հուլյի հաշվումներով մեկ մոդ հողատարածությունը հավասար էր 839 ամբողջ 42 հարյուրերորդական քառակուսի մետրի (տե՛ս նույն տեղում, էջ 617), Ֆ. Ուսպենսկու հաշվումներով մեկ մոդը հավասար էր 200 քառակուսի սաժենի (տե՛ս Ф. И. Успенский, Акт отвода земли мон-стырю Богородицы Милости-вой, Известия Русского Археологического института в Константинополе, том I, Одесса, 1896, стр. 18). Պ. Բեզոբրազովի հաշվումներով մեկ մոդ հողատարածությունը  $1/12$  դեյսյատինից մի քիչ պակաս է (Տե՛ս П. В. Безобразов, Патмоская писцовая книга, Византийский Временник, том VII, 1900, стр. 106). Հասկանալի է, որ այդ 5609 մոդ հողատարածությունը միայն մշակելի տարածություն չէր, այլ դրա մեջ էին մտնում նաև արոտատեղիները, լեռնային հողերը և այլն:

Պրոաստիոնի մասին ավելի հստակ հասկացողություն են տալիս Լերոս կղզում գտնվող Լիպսո վանքի երկու պրոաստիոնները: Այդ մասին վկայում է մի փաստաթուղթ, որը գրված է 1089 թվականին (տե՛ս Miklosich et Müller, Acta et diplomata graeca medii aevi sacra et profana, vol. VI, Vindobonae, 1870, pp. 36—88):

Կանգ առնենք Տեմենիա կոչված պրոաստիոնի վրա: Նա ուներ 259 մոդ մշակելի հողատարածություն, չհաշված լեռնային հողերն ու արոտատեղիները: Տեմենիայի արոտավայրերի շափը չի նշանակված, բայց նույն վանքին պատկանող մյուս պրոաստիոնը Պարթենիոնը ուներ արոտատեղի և մշակելի տարածություն միասին վերցրած 6050 մոդ: Ամբողջ Լերոս կղզին ուներ մշակելի տարածություն չափազին, երկրորդ և երրորդ որակի՝ չորս հարյուր մոդ, մնացածը լեռնային, քարքարոտ, անտառով ծածկված հողերն էին և արոտատեղիները: Այսպիսով, եթե ամբողջ Լերոսն ուներ 400 մոդ մշակելի տարածություն, որից 259 մոդը պատկանում էր Տեմենիա պրոաստիոնին, ապա մնացած 141 մոդ մշակելի տարածությունը մտնում էր Պարթենիոնի 6050 մոդ ընդհանուր հողատարածության մեջ: Այդ բոլորը, իհարկե, չի լուծում այն հարցը, թե քանի՞ մոդ անմշակելի հողատարածություն ուներ Տեմենիա պրոաստիոնը:

Տեմենիա պրոաստիոնում կար սուրբ Անարգիրոսների անվան եկեղեցի, 9 տուն, որոնք ծառայում էին որպես պահեստներ, դամբարաններ, ապրուկների և ճորտերի բնակարաններ, ջրհոր, այգի, սր կային չորս նշենի, տաս նոնենի, 11 սերկևիլի ծառ, 156 ձիթենի, 326 կաղնի և այլն, ինչպես նաև ձիթհանք:

Ինչպես տեսնում ենք պրոաստիոնը հաճախ բավականին մեծ շափեր էր ընդունում և իրենից ներկայացնում էր ամբողջական կալվածք: Պրոաստիոնների մասին տե՛ս նաև՝ Լ. Ա. Օստրոգորսկի, Византийский податный устав. «Сборник статей, посвященных памяти Н. П. Кондакова», Прага, 1926, стр. 121.

<sup>20</sup> Մեկ լիտր ոսկին հավասար էր 72 ոսկեդրամի, 25 լիտր ոսկին հավասար էր 1800 ոսկեդրամի (νόμισμα) կամ դրահեկանի:

<sup>21</sup> Բնագրում πάχτον (կարդա՛լ πάχτον), նշանակում է հարկ, եկամուտ, ռենտա: Հայկական սկզբնաղբյուրներում պախտ բառը հանդիպում է միայն մեկ անգամ 1055—1056 թվա-

կանների միջև գրված Ահարոն մադիստրոսի արձանագրության մեջ, որը փորագրված է Անիի մայր տաճարի արևմտյան պատի վրա: Այդ արձանագրության մեջ հիշատակված հարկերի մասին մանրամասն տես մեր հոդվածը՝ «Ահարոն մադիստրոսի արձանագրության (1055—1056 թթ.) մեջ հիշատակված հարկերի մասին» (Պատմա-բանասիրական հանդես, № 4, 1959 թ.):

<sup>22</sup> Գահեկան, հունարեն նամիզմա (νόμισμα), կոչվում էր նաև հյուպերպյուրոն (կարգացվում էր «խաբրախրոն») ὑπερπυρον: Դա ոսկեգրամ էր: «Հարկային կանոնագրության» համաձայն յուրաքանչյուր տաս մոզ մշակելի հողի համար վճարվում էր մեկ նամիզմա պենտա (տե՛ս W. Ashburner, A byzantine treatise of taxation, Journal of Hellenic Studies, vol. XXXV (1915), p. 77: Նույն բանն է ասված նաև Պատմության մի փաստաթղթում, որը ժամանակակից է Բոյիլասի կտակին (տե՛ս Miklosich et Müller, Acta et diplomata graeca medii aevi sacra et profana, vol. VI, p. 7, 15): Հետևաբար, ընդհանուր հաշվումներով, որպեսզի Տանձուտը կարողանար 80 դահեկան պենտա տալ, պետք է որ մոտավորապես 800 մոզ մշակելի հողատարածություն ունենար, շնչված արտատեղիներն ու լեռնային կամ անտառային հողատարածությունները, ինչպես նաև դուրս հանած այն շորս զեղոտալիտները, որոնք հենց Տանձուտ գյուղից Բոյիլասը նվիրել էր իր ազատ արձակած ստրուկներին, որի մասին տես ստորև:

<sup>23</sup> Էնոմիոնը (հունարեն ἐνόμιον), արտավաչրերի օգտագործման համար գանձվող հարկն էր:

<sup>24</sup> Բյուզանդիայում «Զեպարաս» էին կոչվում այն գյուղացիները, որոնք ունեին մեկ դուլդեզ (Ζευγάριον) և դրան համապատասխանաբար նորմալ հողարածին, որը կոչվում էր զեզոտոպիոն (հունարեն ζευγοτόπιον), իսկ «բոյիլաս» այն գյուղացիները, որոնք ունեին մեկ եզ (ζοῖδιον) և զեզարի կես հողարածին, այն է մեկ բոյոտոպի (ζοῖδοτόπιον): Յ. Ուպենսկուի հաշվումներով 12-րդ դարում զեզարասն ունենում էր 80 մոզից մի քիչ ավել հողարածին: 80 մոզ հողը համարվում էր բավարար այն գյուղացու համար, որն ուներ գյուղատնտեսական գործիքներ և մեկ դուլդեզ եղևը (տե՛ս Փ. Վ. Успенский Акт отвода земли монастырю Богородицы Милостивой. Известия Русского Археологического института в Константинополе, том I, Одесса, 1896, стр. 11):

Բոյիլասի կտակին ժամանակակից մի փաստաթղթի համաձայն, զեզարասները վճարում էին հողային և ծխային հարկ մեկ դահեկանի շափով: Եղել են զեզարներ, երբ վճարվում էր երկու և կեսից մինչև չորս դահեկան հարկ: Բոյիլասները վճարում էին միայն ծխահարկ կես դահեկանի շափով (տե՛ս Г. А. Острогорский, Византийские писцовые книги, Byzantinoslavica, т. IX, fasc. 2 (1948), p. 244, 246):

Զեզոտոպիոն հասկացողությունը, ամենայն հավանականությամբ, համապատասխանում է հայկական վիճագիր արձանագրություններում հանդիպող «լուծ հող» դարձվածքին: Այսպես, օրինակ, 1241 թվականին Արցախի Գրգակ գավառի Գոշաց վանքում գրված մի արձանագրության մեջ ասված է, որ վանքին է նվիրարեցվել ի միջի այլոց «Ա լուծ հող ի Տայիս, Ա լուծ ի Գոզ» և այլն (տե՛ս Կ. Կոստանյանց, Վիճական տարեգիր, Ս. Պետերբուրգ, 1913, էջ 84, Համեմատիր նաև Հասան Զայալի 1240 թ. արձանագրությունը Գանձասարում (նույն տեղում, էջ 81):

<sup>25</sup> Լեզաս, հունարեն λεγάτος: «Պրոխիրոս նոմոս» կոչված դատաստանագրում կա լեզաս բառի ասեմանումը: Դա այն ընծան էր, պարզևր, նվերը, որ հանդուցյալը թողնում էր որևէ մեկին: Այդ նույն դատաստանագրքի համաձայն, որևէ մեկը կարող էր լեզաս թողնել ու միայն սեպա գոյություն ունեցող իրը և այլն, այլև այլն, ինչ դեռ սեպա գոյություն չունի, բայց հուսով է, որ կլինի, օրինակ որևէ ազարակի բերքը, կամ էլ որևէ աղախնի աշխարհ բերելիք երեխան: Պրոխիրոս նոմոսի համաձայն լեզատարիտը, այն է լեզասի սուղազա տերը, լեզասին է տիրում, երբ դեռևս այն չի ստացել: Լեզատը նա կարող է ստանալ նույնիսկ երեսուն, բայց ոչ ավել, տարի անց: Լեզատը շնորհողի կենդանության ժամանակ լեզատարիտը իրավունք չունի պահանջելու իր լեզատը (տե՛ս Zachariae a Lingenthal, Jus graeco romanum, pars VI, Prochiron auctum, Lipsiae, 1870, titulus XXXV, §§ 1, 2, 14, 15, 39):

<sup>26</sup> Ստրուկները Բոյիլասի կտակում ստրուկ բառը արտահայտված է մի քանի տերմիններով, δοῦλος, ψυχάριον, θεραπαινός, οἰκετικά πρόσωπα, οἰχογενῆ πρόσωπα: Ստրուկների երավական դրությունը մասին ավելի ժամանակաշրջանում առավել կամ պակաս պատկերացում կազմելու համար ստորև մեջ ենք բերում բյուզանդական «Բասիլիկի» օրենսգրքի մի քանի հոդվածներ «Պրոխիրոս նոմոսի» շարադրությամբ:

«Ազատության և ստրկության մասին».

Ա. Անձնավորությունների ծայրահեղ բաժանումն այն է, որ մարդկանց մի մասն ազատ է,

իսկ մյուսը ստրուկ: Իսկ ազատությունը, որից և մարդկանց մի մասը ստացել է ազատների կոչումը, հետևյալ կերպ պետք է սահմանել:

Բ. Ազատությունը բնական դյուրություն է, որ յուրաքանչյուրին թույլ է տալիս անել ցանկացածը, բացառած այն, ինչ օրենքը կամ բնությունն արգելում է: Բանություն տակ պետք է հասկանալ այն, ինչ օրենքը չի արգելում, սակայն թույլ չի տալիս [անել ցանկացածը] մի ուրիշը, ով [քնդահից] ալիքի ուժեղ է: Իսկ օրենքի տակ պետք է հասկանալ այն, ինչ պատժի սպառնալիքի տակ արգելում է ինձ անել այն, ինչ ևս կամենում եմ: Որովհետև վախը ինձ արգելում է անել ինչ մտադրել եմ կատարել ուժով:

Գ. Ստրուկությունը դա հեթանոսական օրենքից մեզ հասած ժառանգություն է, որի համաձայն որևէ մեկը ենթարկվում է մի ուրիշի իշխանությանը, հակառակ բնության օրենքներին, քանզի բոլոր մարդիկ ի բնն ազատ են առաջացել, բայց պատերազմների հնարումը առաջացրնց ստրկությունը: Պատերազմի օրենքն ուզում է, որ պարավանները դառնան հաղթողի սեփականությունը:

Դ. Ստրուկները կամ ծնվում են կամ ձեռք են բերվում: Ծնվում են մեր աղախիներինց իսկ ձեռք են բերվում համաձայն հեթանոսական օրենքների, այն է գերեվարությունից: Ստրկությունը չի ընդունում որևէ բաժանում: Որովհետև չի կարելի ասել նրանց մասին, թե [մեկը մյուսից] առավել կամ պակաս ստրուկ է: Ստրկությունը անբաժան է: Իսկ ազատների դեպքում մենք գտնում ենք բազմաթիվ տարբերակումներ: Նրանք լինում են կամ ազնվական և կամ էլ ազատ արձակված:

Ե. Ազատները երկուսի են բաժանվում, ազնվականների և ազատ արձակվածների: Ազնվականը նա է, ով սկզբից, ծնվելու օրից ազատ է, ով երբեք չի հաշակել ստրկության լուծը, ով ծնվել է երկու ազնվականներից կամ երկու ազատ արձակվածներից, կամ նրա ծնողներից մեկը ազնվական է, իսկ մյուսը ազատ արձակված:

Զ. Եթե որևէ մեկը ծնվի ազատ մորից և ստրուկ հորից, նա ազնվական է, նույնպես եթե ծնվի ազատ մորից և անորոշ հորից, այսինքն, պոռնիկական ճանապարհով: Որովհետև ոչնչով չի վնասում երկխոսի ազնվականությունը այն, որ հղիացումը կատարվել է պոռնիկական ճանապարհով: Բավական է միայն, որ ծննդաբերության ժամանակ մայրը ազատ լինի, նշանակություն չունի, որ հղիացման ժամանակ նա կարող էր ստրուկ լինել:

Է. Եվ ընդհանրապես, եթե հղիանա իր ազատ եղած ժամանակամիջոցում և այնուհետև [իր հորձած] որևէ հանցանքի համար օրենքի համաձայն ստրկանա և ապա երկխոս բերի, այդ ծնվածն ազատ է, որովհետև սաղմը չպետք է տուժի մոր դժբախտության համար» (տե՛ս Basilicorum libri LX, ed. Heimbach, Lipsiae, 1846, liber XLVI, titulus I. Հմտ. Zachariae a Lingenthal, Jus graeco-romanum, pars VI. Prochiron auctum, Lipsiae, 1870, titulus XXXIV):

Նույն դատաստանագրքի համաձայն, ստրուկը կարող էր գնել իր ազատությունը, այսինքն նա կարող էր փող, սեփականություն ունենալ, Եթե ստրուկը,— գրված է այնտեղ,— նույնիսկ փող է ալիք իր տիրոջն ու ազատվել, այնուամենայնիվ նա պարտավոր է հարգել նրան» (տե՛ս Zachariae a Lingenthal, Jus graeco-romanum, Pars V, Synopsis Basilicorum, Lipsiae, 1869, p. 543):

«Բասիլիկոս»-ի համաձայն ստրուկը կարող էր չվճարել լրիվ փրկագինը, պակասող մասի գիմաց աշխատելու պայմանով ստրկատիրոջ համար (տե՛ս Basilicorum liber XLVIII, titulus I, 4):

«Բասիլիկոս»-ից երևում է նաև, որ ազատ արձակված ստրուկները կարող էին իրենց սեփականությունը նույնիսկ կտակել: Այնտեղ ասված է, որ ազատ արձակված ստրուկը, եթե ունենա հարյուր դահեկանից պակաս սեփականություն, կարող է այն կտակել իր ցանկության համաձայն: Եթե նա վախճանվել է անժուռանդ և առանց կտակ թողնելու, նրա ունեցվածքը ժառանգում է պատրանը: Հարյուր դահեկանից ավելի ունեցողներին ժառանգում են իրենց երեխաները, թոռները, ծոռները և այլն, իսկ այն դեպքում, երբ ժառանգ չունեն և կտակ չեն թողել, ժառանգում է պատրանը: Եթե ազատված ստրուկը երկխոս չունենալով կտակ է թողնում, ապա այդ դեպքում նա պարտավոր է իր սեփականության երրորդ մասը թողնել պատրանին» (տե՛ս Basilicorum liber XLIX, titulus I, 28):

<sup>27</sup> Այն է 2160 ոսկեդրամ:

<sup>28</sup> Դյուրաշարժ գույք: Բնագրում εὐχίνυττα πράγματα:

<sup>29</sup> Հայ մատենագրական աղբյուրներում նույնպես ստրուկներն, այսինքն, ժառանգ են ազատներին, սովորաբար հիշատակվում են սեփականության նյութեղեն իրերի հետ միասին:

Կանանց օժիտի մասին հիշատակելիս սովորաբար սնասունների և անշունչ առարկաների հետ միասին իրրե սեփականության առարկա թվարկում են նաև ժողովրդիներին՝ (տե՛ս Ե. Սամուելյան, Հին հայ իրավունքի պատմություն, հատ. Ա., Երևան, 1939, էջ 208):

<sup>20</sup> Տեքստում գրված է τὸν κανονίζόμενον καὶ βασιλικὸν κτῆσιον: Բոյիլասի կտակի քանոնիչունքը ըստ երևույթին քանոնիչ կոչված հարկն էր, սահմանված Բազիլի Կոմենիոս կայսեր (1057—1059 թթ.) մի խրիստոփոլոսի Կանոնիկոսը վճարում էին յուրաքանչյուր թեմի բնակիչները իրենց եպիսկոպոսին: Այդ նույն օրենքը վերահաստատվեց նաև 1086 թվականին, Ալեքսիոս Կոմենիոս կայսեր կողմից: Այդ խրիստոփոլոսի բովանդակությունը հետևյալն է.

«Յուրաքանչյուր եպիսկոպոս իր շրջանի բնակիչներից ամեն տարի պետք է ստանա որպես կանոնիկոս. երեսուն ծուխ ունեցող շրջանից՝ մեկ ոսկեդրամ, երկու արծաթ դրամ, մեկ խոյ, վեց մոզ գարի, վեց շափ գինի, վեց մոզ ալյուր, երեսուն հափ Փսան ծուխ ունեցող (շրջանից)՝ ոսկեդրամի երկու երրորդը, երկու արծաթի փոխարեն՝ մեկ (Ալեքսիոս Կոմենիոսի խրիստոփոլոսի մեկ և կես—Ն. Բ.), չորս մոզ գարի, չորս շափ գինի, չորս մոզ ալյուր և քսան հափ: Տաս ծուխ ունեցող գյուղից՝ հինգ արծաթ դրամ, մեկ ոչխար, երկու մոզ գարի, երկու շափ գինի, երկու մոզ ալյուր և տաս հափ: (Տե՛ս Zachariae a Lingenthal, Jus graeco-romanum, Pars III, Novellae constitutiones. Imp. Isaacii Comneni aurea bulla de sportulis pro ordinatione praestandis et de canonico, Lipsiae, 1857, p. 323. Նույն տեղում, էջ 365—366, տե՛ս նաև Ալեքսիոս Կոմենիոսի խրիստոփոլոս, որն հաստատում է Բազիլի Կոմենիոսը):

<sup>21</sup> «Վանքի շահրնկալության համար» բնագրում λόγῳ φωταψίας: Հայկական աղբյուրներում կոչվում է նաև յուսարարություն, որի տակ հասկացվում է եկեղեցու բոլոր կարիքների մասին հոգալը: Գրիգոր Բաղուրյանի վանքի կանոնադրության մեջ ցույց է տրված վանքի «շահրնկալի» պարտականությունները. հոգալ խնկի, ձկնի, մոմերի մասին, հաղորդության գինու և ալյուրի մասին և այլն (տե՛ս L. Petit, հիշյալ աշխատությունը, էջ 22):

<sup>22</sup> Հոռոմեոսում Παρὰθούνη: Նույն կտակում այն անվանված է նաև Παρὰθόνι:

<sup>23</sup> Մոզ, հոռոմեոսում ρόδοις: Դա երկու նշանակություն ունի Մեկը սորուն մարմինների ծանրության շափ է և հավասար է 9 կիլոգրամ 792 գրամի (տե՛ս Ն. Մանանդյան, Կշիռները և շափերը հնագույն հայ աղբյուրներում, էջ 133), իսկ մյուսը տարածության շափ է: (Մոզի մասին որպես տարածության շափի տե՛ս 19-րդ ծանոթագրությունը):

<sup>24</sup> Մեկ լիտրը հավասար էր 408 գրամի (տե՛ս Ն. Մանանդյան, Նյութեր Հին Հայաստանի անտեսական կյանքի պատմության, ՀՄԽՀ Պետական համալսարանի գիտական Տեղեկագիր, 1928 թ., № 4, էջ 59):

<sup>25</sup> Չեռագրում կարգացվում է καὶ ὄσπρια καὶ ὄπόρας (կարգա՝ καὶ ὄσπρια καὶ ὄπόρας): Բենեշևիչը կարգադել է καὶ ὄσπερ εαζὺπόρας, որը ոչ մի իմաստ չունի:

<sup>26</sup> Կիտվածանկար, բնագրում χυμευτάς (էմալ): Միջնադարյան կիտվածանկարի (էմալի) տեխնիկայի մասին տե՛ս J. Labarte, Histoire des arts industriels au moyen âge et à l'époque de la Renaissance, t. III, Paris, 1875, p. 74 sq.:

<sup>27</sup> ἄστερισχος, ֆարգմանաբար նշանակում է փոքր աստղ: Այն պատրաստվում էր մետաղից և հաղորդության հացի ամանի՝ մաղղմայի մասն էր կազմում:

<sup>28</sup> Անարողը միարանների վերարկուն էր (տե՛ս Նոր քաղաքի Հայկազյան լեզվի, անարող բառը):

<sup>29</sup> Չեռագրում σπονδηγήτλην, որը ծագում է σπονδή բառից: Մենք ենթադրաբար ֆարգմանել ենք տրոսմատոցման բաժակը:

<sup>30</sup> Չեռագրում այն կոչված է սկարամանգին— σακαραγάκην: Այդ կտորից կարվում էր կայսեր, բարձրաստիճան պաշտոնյաների, հատկապես ղեկավարականների հանդերձանքը, որը նույնպես կոչվում էր սկարամանգին և ուներ արևելյան ծագում: Այդ մասին տե՛ս N. P. Kondakov, Les costumes orientaux à la Cour byzantine, Byzantion, t. I, 1924, p. 10 sq.:

<sup>31</sup> Հյուսիսգրաֆիական, հունարեն ὄλο ροφ: καί: Տեխնիկական տեղմին է նկարչության մեջ, երբ գույների հիմքում ընկած է մոմը—մոմանկար:

<sup>32</sup> Բնագրում գրված է ἐξ ἐπιπλεκτα ἀργυροχρούσωτα, Բենեշևիչը ἐξ-ը բնագրել է որպես նախդիր: Ընդհանրապես, որովհետև այդ նախդիրը միշտ պահանջում է սեռական հարմար, իսկ տեքստում հաջորդող բառերը ուղղական հարմարում են: Պետք է լինի ἐξ—վեց:

<sup>33</sup> Բնագրում բառը լրիվ չի գրված μικροκου... Բենեշևիչը լրացնում է μικροκου[μδία]: Գրիգոր Բաղուրյանի Բաղուրյանի վանքի կանոնադրության մեջ հիշատակված է, ի միջի այլոց, բառակետարան արծաթե փոքր դամբուկ. μετά ἀργυρῶν μικρῶν καρφίων (տե՛ս L. Petit,

Typicon, p. 53); Մեղ թվում է, որ ավելի ճիշտ կլինի Բոյլիայի կտակի տերտալ վերականգնել ոչ թե  $\mu\epsilon\chi\rho\sigma\chi\omicron\upsilon|\mu\delta\acute{\iota}\alpha|$ , այլ  $\mu\epsilon\chi\rho\sigma|\chi\acute{\alpha}\rho\phi\iota\alpha|$  ձևով, ոչ թե փոքր կոճակներ, այլ փոքր դամեր: Եւջին բաժին ենք հանդիպում Պատեոսի վանքի գրադարանում գտնվող ավետարանների կողմերի վրա, որոնք ունեն մեծ քանակությամբ ոչ թե կոճակներ, այլ դամեր (տե՛ս Ch. Diehl, Le trésor et la bibliothèque de Patmos au commencement du 13-e siècle, Byzantinische Zeitschrift, Bd. I, 1892, S. 514):

<sup>44</sup> Սա Հովհաննես Մոսխոսի գործն է: Հովհաննես Մոսխոսն ապրել է 6-րդ դարի վերջերին Պաղեստինում: Նրա գիրքը՝ Լիմոնարիոնը (Մարգագետինը) բովանդակում է Արևելքի սրբերի, վանականների և ճգնափորների վարքաբանությունները: Լիմոնարիոնը հրատարակվել է Մինյի կողմից (տե՛ս Beati Joannis Eucratae liber qui inscribitur Pratum quod floridam proferat vitarum narrationem coelestis roseti. Migne, Patrologia graeca, t. 87):

<sup>45</sup> Մեկ քառ եզոված է ձևագրում:

<sup>46</sup> Պանդեկտես, հունարեն Πανδέκτης, այն է սուրբ գրոց համարաբան: Հրատարակվել է Մինյի կողմից (տե՛ս Migne, Patrologia graeca, t. 89):

<sup>47</sup> Շարակնոց է, որը համառոտակի բովանդակում է տոների և դանազան սրբերի պատմական գովաբանությունը: Լավագույն կոնդակարները վերագրվում են Թոմանոս Մելոդոսին (Ն դար):

<sup>48</sup> Այդ անունով սուրբ մեղ հայտնի չէ:

<sup>49</sup> Հովհաննես Գամասկացու (Ք դար) աշխատություններից մեկը, դուրս նրա ամենանշանավոր աշխատությունը՝ Expositio accurata Fidei orthodoxae: (Հրատարակվել է Մինյի կողմից: Տե՛ս Patrologia graeca, t. 94, col. 789—1228):

<sup>50</sup> Գրիգոր Աստվածաբանի երգերը, տե՛ս Gregorii Theologi archiepiscopi Constantinopolitani Carmina, Migne, Patrologia graeca, t. 37, col. 397—1600, t. 38, col. 11—336:

<sup>51</sup> Մելիտա (այն է Մեղու), որը գրվել է 11-րդ դարի հեղինակ Անտոնիոս վանականի կողմից: Տե՛ս Antonii Monachi cognomento Melissaе sententiae sive loci communes ex sacris et profanis auctoribus collecti, Migne, Patr. gr., t. 136, col. 765—1244):

<sup>52</sup> Եպիփան Կիպրացու (Գ դար) աղանդների դեմ գրած հայտնի աշխատությունը: Տե՛ս Epiphani Constantiae quae in Cypro est episcopi adversus octoginta haereses opus quod inscribitur Panarium sive Arcula, Migne, Patr. gr., t. 41, col. 173—1200, t. 42, col. 9—773:

<sup>53</sup> Ենթադրվում է բյուզանդական հայամավուրքների խոշորագույն հեղինակ Միմեոն Մետաֆրաստեսի (Ժ դար) աշխատությունը: Տե՛ս Symeonis Logothetae cognomento Metaphrasetae Opera omnia, Migne, Patr. gr., t. 114—116:

<sup>54</sup> Բեզորբազովի կարծիքով «Պարսկականների» տակ ենթադրվում է Գևորգ Պիսիդեսի աշխատությունը Հերակլ կայսեր պարսիկների դեմ կատարած արշավանքի մասին: Ըստ Ս. Վրիտիլի «Պարսկականները» այնքան լայն հասկացողությունն է, որ հնարավոր է նրա տակ հասկանալ նաև այլ գործեր, օրինակ, Ադամիասի (Ջ դար) գործը: Վերջինս գրել է Հուսամիմանոս կայսեր պատմությունը 552—559 թթ., որպես Պրոկոպիոս Կեսարացու Պատմության շարունակություն:

<sup>55</sup> Բեզորբազովի կարծիքով՝ Միքայել հրեշտակապետի վարքաբանությունը:

<sup>56</sup> Տե՛ս Basilii Caesareae Cappadociae archiepiscopi libri quibus impii Eunomii apologeticus evertitur, Migne, Patrologia graeca t. 29, col. 497—773:

<sup>57</sup> Լրիվ հրատարակվել են Մանսիի կողմից: Տե՛ս Mansi, Sacrorum conciliorum nova et amplissima collectio, t. VI et VII, Paris—Leipzig, 1901:

<sup>58</sup> Ենթադրվում է Անաստասիոս Սինացու (Է դար) ամենից հայտնի գործը՝ Ὁδηγός-ը: Տե՛ս Anastasii Sinaitae episcopi Antiocheni Viae Dux adversus Acephalos, Migne, Patr. gr., t. 89:

<sup>59</sup> Բեզորբազովը ենթադրում է, որ դա Աղեբսանդր Մեծի մասին միջնագրյան վեպն է: Ս. Վրիտիլի կարծիքով հոգևոր դիրք է:

<sup>60</sup> Աքիլլես Տացիոսի (Գ դար) գրած սիրային վեպը «Լևկիպպեի և Կլիտոֆոնի մասին»:

<sup>61</sup> Պարսկանոն աշխատությունն, պահպանված նաև հին հայերեն թարգմանությամբ: Տե՛ս «Անկանոն դիրք հին կտակարանաց», Վենետիկ, 1896, էջ 27—151:

<sup>62</sup> Եզովպոսի առակները: Նորագույն հրատարակությունը լույս է տեսել երկու հատորով 1957 թվականին: Տե՛ս Corpus fabularum aesopicarum, ed. A. Hausrath, Lipsiae, 1957:

<sup>63</sup> Գևորգիս Պիսիդեսը, բյուզանդական պոետ, ծնվել է Ջ դարի վերջում: Նրանից մեղ հասել են բազմաթիվ գործեր: Հայտնի չէ, թե Բոյլիանոս նրա գործերից որ մեկն ունենր: Պիսիդեսի

գործերի լիակատար հրատարակությունը տե՛ս Մինյի մաս: Georgii Pisidae magnae ecclesiae diaconi et sceuophylacis, Migne, Patr. gr., t. 92:

<sup>64</sup> Հավանարար Ժ դարի վաճակա՛ն Միքայել Մալխե՛նոսի վարքը, որը գրի է առել նրա աշակերտ Թեոֆանեսը:

<sup>65</sup> Հոս Ս. Վրիտնիսի Դ դարում ապրած նիֆոն սրբի վարքը:

<sup>66</sup> Հավանարար Փիլոն Երրայեցու աշխատությունների ժողովածու:

<sup>67</sup> Հովհաննես Կլիմասի (է դար) աշխատությունը, որը միջնադարում թարգմանվել է նաև հայերեն: Հունարեն տեքստը տե՛ս Joannis Climaci Scala Paradisi, Migne, Patr. gr., t. 88, col. 632—1164:

<sup>68</sup> Պարզ չէ թե ինչ է դրա տակ ենթադրվում:

<sup>69</sup> Իսիդոր Պելուսիոտեսը (370—450 թթ.) գրել է ընդամենը 2013 նամակ, որոնք պատմական մեծ արժեք են ներկայացնում: Հրատարակված են Մինյի կողմից: Տե՛ս Isidori Pelusiotae epistolarum libri quinque de interpretatione divinae scriptorae, Migne, Patrologia graeca, t. 78, col. 177—1645:

<sup>70</sup> Էպիլոսիան, դա Փրիստոսի ծննդյան հաջորդ օրվան (դեկտեմբերի 26-ին) նվիրված տոնն է:

<sup>71</sup> Այսինքն՝ ծննդից (դեկտեմբերի 25-ից) մինչև հայտնությունը (հունվարի 6-ը) ընկած ժամանակամիջոցը:

<sup>72</sup> Մենք այդ բառը թարգմանում ենք բառացի՝ Տերստում գրված է οἰχογενῆ, այն է տան մեջ ծնված: Բոյիլասը նկատի ունի ոչ թե դնած ստրուկներին, այլ իր աղախի՛նների աշխարհքերած կրեխաներին, որոնք օրենքի համաձայն կրում էին ստրկական լուծը, եթե այդ աղախի՛նների ամուսինները ազատ քաղաքացիներ չէին: Այդ մասին տե՛ս նաև 89-րդ ծանոթությունը:

<sup>73</sup> «Բասիլիկի» Դատաստանագրքի համաձայն կողիկելլոս (χωδὶχελλος) է կոչվում այն ալեքսանդր կտակալին գրությունը, որը կազմվում է կտակ թողնողի կողմից կտակն ավարտելուց հետո և նստակ ունի արձանագրելու այնտեղ աֆն, ինչ կտակողը մտացել է արձանագրելու հիմնական կտակի մեջ (տե՛ս Basilicorum liber XXXV, tit. 1, 1): Հոս երևույթին Բոյիլասը կտակից բացի կազմել է նաև տասնմեկ կողիկելլոսներ, ուր արձանագրված էին ստրուկներին վերաբերող իր ցանկությունները: Նույն «Բասիլիկի» դատաստանագրքում գրված է նաև, որ կտակը (δικαιότητα) կարող է կոչվել ուրիշ բառով ևս, օրինակ կողիկելլոս (նույն տեղում, XXXV, tit. 1, 14): Այնպես որ կտակ և կողիկելլոս բառերը կարող են հոմանիշ լինել:

<sup>74</sup> Այն է՝ 1053 թվականին:

<sup>75</sup> Տե՛ս 24-րդ ծանոթությունը:

<sup>76</sup> Տե՛ս 73-րդ ծանոթությունը:

<sup>77</sup> «Արձաթագին» ենթ թարգմանում բնագրի ὄντιτων բառը:

<sup>78</sup> Բոյիլասն այստեղ դուրս նկատի ունի, որ ծառայության դեպքում ոչ միայն ազատ արձակված ստրուկները պետք է համաձայն լինեն դրան, այլև իր ծառայողները, կամ էլ, որ ալեիկ հավանական է, այստեղ խոսքը վերաբերում է վարձի քանակի հարցում երկու կողմերի համաձայնության դադարին:

<sup>79</sup> Բնագրում գրված է՝ ἀλλ' εὐχενεῖς μὲν εἶναι καὶ ἐλευθέρους κατὰ παντός τρόπου βούλομαι: Այստեղ խոսքը ազատների երկու կատեգորիաների մասին է, որի վերաբերյալ մենք 26-րդ ծանոթության մեջ (§ 5) ներկայացրել ենք բյուզանդական մի օրենսգրքի մանրամասն քաջատրությունը:

<sup>80</sup> Այն է՝ 1059 թվականից մինչև 1063 թվականը:

<sup>81</sup> Հունարեն տեքստում այս տեղում բերված է հայերեն արտասանությունը, Մուսես(իս) Μουσέσης և ոչ հունարեն՝ Մոսիս կամ Մոսիս Μωσῆς, Μωσῆς:

<sup>82</sup> Տերտում շքու բառ կազմված է: Վերջին երկու բառերից մնացել են հետևյալ տառերը τρια..... ιπε....., որոնք մենք վերահանդում ենք τρια[χοντα] (=30) ὑπέ[ρ]πυρα]: Հյուսիս-արևմուտք ոսկեգրած է (նույնն է նսմբգման), Տերտի այսպիսի վերահանդումը չի հակասում ուլյալ կոնստանդին, ուր խոսքը վերաբերում է Բոյիլասի կողմից իր օրոջ երեխաներին և կեղևնուն թողնված գույքի մասին:

<sup>83</sup> Տե՛ս ծանոթություն 21-րդ:

<sup>84</sup> Աս, ըստ երևույթին, ինքնանվաստացման ընդունված բանաձև է:

<sup>85</sup> Բոյիլասի կտակում միայն այս դեպքում արձանագրված է ստրկի արժեքը: Բոյիլասը իր աղախին Ջոսին գնել է շքու հարյուր դահեկանով: Բյուզանդագետ Բեզորրաղովը (տե՛ս նրա հոդ-

վածը Завещание Воилы, Византийский Временник, т. XVIII, вып. 1—4, отдел III, стр. 114—115), իրավացիորեն այս տվյալը համարում է անհավանական: Մեզ հասած բյուզանդական օրենսգրքերը, որոնք ուժի մեջ էին նշված ժամանակաշրջանում, սրոշակի նշում են ըստրուկների արժեքը: «Բասիլիկի» օրենսգրքում գրված է. «Ստրիկի արժեքը թող լինի հեակյալը. լինի նա տղամարդ, թե կին: Եթե ոչ մի արհեստի չի տիրապետում, ջսան դահեկան, այն գեպրում, եթե նա տաս տարեկանից բարձր է, իսկ եթե պակաս՝ տասը դահեկան: Եթե նա նոտար է կամ բժիշկ, սպա նոտարը մինչև հիսուն դահեկան, իսկ բժիշկը մինչև վաթսուներեք տարեկանները ներքինն է և տաս տարեկանից բարձր, բայց չեն տիրապետում որևէ արհեստի, հիսուն դահեկան, իսկ եթե տիրապետում են որևէ արհեստի յոթանասուն դահեկան, բայց եթե տաս տարեկանից փոքր լինեն երեսուն դահեկան»: (Sb' u Basilicorum liber XLVIII tit. XIV, § 4) Համեմատի՛ր С. Е. Zachariae a Lingenthal, Jus graeco-romanum, pars V, Synopsis Basilicorum, Lipsiae, 1869, p. 264, նույն բանը կրկնված է նաև Պեյրա օրենսգրքում, որը Բոյիլասի կտակին ժամանակակից է, տե՛ս Zachariae a Lingenthal. Jus graeco-romanum, Pars I, Peira, i. e. Practica Eustathii Romani, Lipsiae 1856, tit. XXVIII, § 21, ինչպես և այնպիսի ուշ կազմված Պրոխիրոս նսմուկոչված ժողովածուում. տե՛ս Zachariae a Lingenthal, Jus graeco-romanum, Pars VI, Prochiron auctum, Lipsiae, 1870, titulus XXIV, § 16, p. 298): Աղախին Չոնն. որն իր տիրոջ կամքին հակառակ ամուսնացել էր, պարզ է, որ տաս տարեկանից բարձր պետք է էզած լիներ (վերոհիշյալ բոլոր օրենսգրքերի համաձայն ամուսնանալու տարիք էր սահմանված աղջիկների համար. տասներկուսը, իսկ տղաների համար տասնչորսը), և եթե Չոնն տիրապետում էր որևէ արհեստի, ապա նա պետք է դասվեր ստրուկների այն կատեգորիայի մեջ, որը գնահատվում էր մինչև երեսուն դահեկան: Եթե նկատի ունենանք այն փաստը, որ Բոյիլասի նստավայր Տանձուտ գյուղի տարեկան ամբողջ եկամուտը կազմում էր ընդամենը ութսուն դահեկան, ապա պարզ կլինի, որ Չոննի արժեքի մեջ սխալ է թույլ տրվել գրչի կողմից (հավանաբար շիտթվել է τετραράχοντα — շառասուն, բառը τετρακόσια — չորս հարյուր բառի հետ), հակառակ պարագայում դուրս է գալիս, որ մեկ աղախնի արժեքը Բոյիլասի բոլոր գյուղերից ստացած տարեկան եկամտից շատ ավելի բարձր էր: Այդ չի կարելի բացատրել նաև գրաժի արժեքազրկմամբ, որովհետև բյուզանդական դրամի կուրսը 800 տարվա ընթացքում հաստատուն է մնացել (այս մասին տե՛ս H. Gelzer, Byzantinische Kulturgeschichte, Tübingen, 1909, S. 78):

<sup>86</sup> Ըստ երևույթին, Չոննի ազատ արձակելու նախապայմանը նրա վանք մտնելն է եղել:

<sup>87</sup> Չեռագրում չորս տող եղծված է:

<sup>88</sup> ΜΕΥΑΤΙΧΩΝ ΔΙΧΑΤΩΝ — բյուզանդական վարչական շրջանի՝ թեմայի դատավոր: Սրանք ըստ երևույթին, համապատասխանում են այն դատավորներին, որոնք հիշատակված են Արիստակես Լաստիվերոսցու Փատմության մեջ և նշանակվում էին բյուզանդական կառավարության կողմից նվաճված հայկական շրջաններում: Հայ պատմիչի ասելով, վասիլ Բ բյուզանդական կայսրը Հայաստանում ստիք է բազում գաւառաց եւ բերդից եւ քաղաքաց: Եւ կացուցանէ ի վերայ նոցա դորձակալս եւ դատաւոսս եւ վերակացուս (տե՛ս Արիստակեսայ Լաստիվերոսցոյ Փատմութիւն էջ 5):

<sup>89</sup> Մենք ընդոժին ենք թարգմանում նույն այդ ΟΙΧΟΓΕΥΤΙ բառը, որին հանդիպեցինք վերելում (տե՛ս ծանոթ. N° 72):

<sup>90</sup> Օրենքը լայն հնարավորություններ էր տալիս ստրկատիրոջը կամ պատրոնին, ինչպես նա կոչվում է օրենսգրքերում (πατρων), ազատ արձակված ստրուկներին նորից ստրկացնելու ամենափոքր հանցանքի դեպքում: Ազատ արձակվածը, ըստ երևույթին, շատ քիչ էր տարբերվում ստրկական լուծը կրող ստրուկից: Բերենք մի քանի հոդված «Բասիլիկի» օրենսգրքից, որոնք շատ պարզ վկայում են այդ մասին: «Ազատ արձակված ստրուկները պետք է մեծ ակնածանքով և հարգանքով վերաբերվեն պատրոնին: Եթե ազատ արձակված ստրուկը վատարանի կամ վնաս հասցնի (պատրոնին), ապա նա թող նորից ստրկացվի» (Basilicorum liber XLVIII tit. XXVI, գլ. 1):

«Ազատ արձակված ստրուկները, եթե չպատակվեն իրենց պատրոններին և կամ վերջիններին որդիներին, ապա պետք է նրանց մտրակահարել և բաց թողնել, սպառնալով ավելի ծանր պատիժ, եթե կրկնեն: Եթե հայհույն են, պետք է նրանց ժամանակավորապես արստրել: Եթե երանք ձեռք են բարձրացրել (պատրոնի) վրա, երանց դատապարտել հանքերում աշխատելու նրանք ենթակա են նույն պատժին, եթե զրպարտություն են սարքել (պատրոնի) դեմ կամ մեղադրել նրան» (Basilicorum liber XLIX, tit. I, գլ. 1):

«Եթե ազատ արձակված ստրուկը ապերախտ դառնի իր պատրոնի նկատմամբ և հայհույն

նրան և կամ էլ նրան լիտի վերաբերմունք ցույց տա և վերջապես արդարացի կերպով գրգռի նրա զայրույթը, ապա նա թող նորից ստրուկ դառնա, և նրա երեխաները, որոնք դրանից հետո են ծնվել, թող նրանք էլ ստրուկ դառնան» (Basilicorum liber XLIX, tit. II, գլ. 19):

Բոյիլասի կտակից երևում է, որ ստրկատերը կարող էր ազատ արձակված ստրկին նորից ստրկացնել նույնիսկ առանց որևէ պատճառի: Բոյիլասն իր Միլիդնու կոչված ազախնին, որին իր իսկ ասելով նախապես ազատ էր արձակել, տալիս է իր դստեր Մարիային հինգ տարի և (1059 թվականից մինչև 1063-ը) նրան ծառայելու համար: Ազատ արձակված ստրուկների մասին տե՛ս նաև վերևում, 25-րդ ծանոթություն 5-րդ կետը:

91 Դրսի մարդիկ ասելով Բոյիլասը, հավանաբար, նկատի ունի իրենից արենդով հող վերցնող վարձակալներին, որոնք անձնապես կախված չէին իրենից, սակայն ապրում էին իր հողերի վրա: Պրտաստիճաններում ապրում էին բացի ստրուկներից, ճորտերից, նաև մարդիկ, որոնք կոչվում են *μεισθιοι* *καὶ* *λοιποὶ*. Վարձակալներ և այլք: Վարձակալները, ըստ երևույթին, սոցիալական իրենց վիճակով համապատասխանում էին Միսիթար Գոշի Դատաստանագրքում հիշվող «վարձավոր մշակ»-ներին կամ «վարձկան»-ներին (տե՛ս Միսիթարայ Գոշի, Դատաստանագիրք, Վաղարշապատ, 1880, մաս Բ, հոդվածներ ԾԻԱ, ԾԻԵ):

92 Բնագրում յոթս տող եղծված է:

93 «... Այնպիսին նզովյալ լինի երեք հարյուր տասնութ հայրապետների կողմից և Հուլայի նախագասուցյունը մենք վերականգնում ենք երևելով իմաստից: Ինչպես պարզ երևում է, այստեղ գտնվում էր անեծքի բանաձև, որը մեզ քաջ ծանոթ է վիմագիր արձանագրություններից: Բազմաթիվ օրինակներից բերենք միայն մեկը, Գրիգոր Մաղիսարոսի 1051 թվականի Կեչառիսում գտնվող արձանագրության վերջին մասը. «Արդ որ ոք այսմ վճռի հաստատեն խափանել շանա թէ յառաջնորդաց որ իցէ, կամ յիշխանաց, կամ ի քահանայից, այնպիսին 3 և ԺԸ հայրապետացն նզովեալ եղիցի եւ բաժինն ընդ Յուլայի եղիցի եւ ընդ տիրասպան քահանայիցն» (տե՛ս Կ. Կոստանյանց, Վիմական տարեգիր, էջ 23): Անկասկած, եղծված հունարեն բնագրում պետք է որ թվարկված լինեին, գուցե և անուններով, անձնավորություններ, ամենայն հավանականությամբ Բոյիլասի դուստրերը և փեսաները:

94 Ռազմական աստիճան Բյուզանդիայում: Ֆիլոթետի ցուցակում վեստարխոսները գտնվում էին շրջորդ դասում:

95 Ռազմական աստիճան Բյուզանդիայում: Հանդիպում է նաև հայկական սկզբնաղբյուրներում: Արևելքի մագիստրոս և կատապան Բազարատի 1060 թ. Անիի մայր տաճարի պատին փորագրված արձանագրության մեջ, ի միջի այլոց, գրված է. «Գրիգոր Լապաստակա որդին սպաթարկանկիտատն և Սարգիս Արտաւազա որդին սպաթարկանկիտատն» տե՛ս В. Н. Бенешевич. Три Анийские надписи XI века Петербург, 1921, стр. 22): Սպաթարկանդիդատները Ֆիլոթետի ցուցակում գտնվում էին երկրորդ դասում:

96 Ռազմական աստիճան Բյուզանդիայում:

97 Ետսրը վերաբերում է վերոհիշյալ մագիստրոս Վասիլիոսին և նրա եղբայր վեստարխոս Չարեսմանեսին:

98 Այս դարձվածքը հնարավորություն է տալիս պարզելու մոտավորապես, թե ինչ արժեք գիրքը 11-րդ դարի կեսերին Բյուզանդիայում: Ծիշտ է, մենք որոշակի չգիտենք թե ինչպիսի գրքի ֆասին է խոսքը, բայց և այնպես այն ուշադրավ է, որ արժեքն է վեց դահեկան:

99 Բոյիլասի կտակում մենք շենք գտնում իր նշած վկաների ստորագրությունները, որովհետև ձեռագրի վերջին լքի ներքևի մասը պակասում է: Կա միայն Բոյիլասի ստորագրությունը: Բյուզանդական օրենսգրքի համաձայն, վկաները առնվազն հինգ հոգի պետք է լինեին: Կտակի վկաների մասին «Բասիլիկի»-ում ասված է. «1. Ժառանգը իրավունք չունի կտակի վկա լինել, իսկ լեզատարիտը (որա մասին տես վերև, ծանոթ. 25-րդ) և (կտակի) խնամակալը՝ կարող են: 2. Ենթակա մարդիկ իրավունք չունեն վկա լինելու Կինը չի կարող կտակի վկա լինել, այլ միմիայն դատարանում և այն էլ այն դեպքում, եթե չի դատապարտված շուքյան մեջ: 3. Վկան կարող է կնքել նաև կտակողի կամ մի ուրիշի կնիքով էլ: Երբ վկան կնքել է, բայց չի ստորագրող է կնքել նաև կտակողի կամ մի ուրիշի կնիքով էլ: Երբ վկան կնքել է, բայց չի ստորագրել և կամ էլ ստորագրել է, բայց չի կնքել, նա համարվում է որպես գոյություն չունեցող: Եվ գրել և կամ էլ ստորագրել է, բայց չի կնքել, նա համարվում է որպես չկնքած: 4. Կտակը գրող նույնպես, այն վկան, որ չի գրել իր անունը, համարվում է որպես չկնքած: 5. Կտակը գրող գրիչը կարող է այդ կտակի վկա լինել: 6. Յուրաքանչյուր վկա պետք է իր ձեռքով գրի, թե ով է ինքը և ում կտակի տակ է ստորագրում» (տե՛ս Basilicorum liber XXXV, titulus I, §§ 21, 23, 28, 31):

100 Այն է՝ 1059 թ.:



Р. БАРТИКЯН

ЗАВЕЩАНИЕ ЕВСТАФИЯ ВОИЛЫ (1059 Г.) КАК ВАЖНЫЙ  
ИСТОЧНИК ПО ИСТОРИИ АРМЕНИИ И ГРУЗИИ

## Резюме

Статья посвящена изучению завещания византийского феодала Евстафия Воилы, основавшегося в середине XI века в армяно-грузинской области Кларджия. В статье говорится о значении завещания для изучения политики Византии во вновь захваченных ею областях Армении и Грузии. До сих пор было известно, что Византия, стремясь ослабить вышеупомянутые страны в политическом и военном отношении, переселяла местных феодалов в Византию. Завещание Воилы показывает, что Византия не довольствовалась лишь этим. Византийские феодалы также, вероятно насильственно, переселялись на армянские и грузинские земли с целью их освоения. В статье указывается, что эта политика находила сильный отпор со стороны местного населения, главным образом со стороны «еретиков» — тондракцев, движение которых носило не только классовый, но и народно-освободительный характер и было направлено в особенности против византийских захватчиков.

В статье обстоятельно говорится о принадлежащих Воиле имениях и рабах, уточняется местонахождение некоторых селений. По мнению автора, эти селения находились недалеко от центра Кларджии — известного средневекового города Артануджа.

Кроме исследования о завещании, автор дает его полный перевод на армянский язык, снабженный комментариями.

2. ՓԱՓԱԶՅԱՆ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ԳՅՈՒՂԻ 1725 և 1728 ԹԹ ԹՈՒՐԲԱԿԱՆ  
ՀԱՐԿԱՑՈՒՑԱԿՆԵՐԸ

Մի քանի տարի առաջ Մատենադարանը ձեռնամուխ եղավ իր արխիվային ֆոնդերում պահվող պարսկերեն վավերագրերի գիտական հրատարակությանը: Այժմ արդեն հրատարակի վրա են «Մատենադարանի պարսկերեն վավերագրերը» մատենաշարի «Հրովարտակներ» շարքի Ա և Բ պրակները: Հրատարակության է պատրաստվում «Կալվածագրեր»-ի Ա պրակը (ԺԴ—ԺԶ դդ.), որտեղ կրնդ գրկվեն նաև արաբերեն կալվածագրերը: Կարելի է հուսալ, որ առաջիկա 10—15 տարիների ընթացքում այդ ուղղությամբ զգալի գործ կկատարվի և հաջորդաբար լույս կտեսնեն Մատենադարանի արխիվային ֆոնդերում առկա բոլոր կարևոր պարսկերեն ու արաբերեն վավերագրերը:

Արարատառ վավերագրերի մեջ համեմատաբար փոքր թիվ են կազմում թուրքերեն վավերագրերը, որոնց ամբողջական հրատարակության ուղղությամբ դեռևս գործնական քայլեր չեն արված: Դրանք թվով շուրջ 250 հատ են, որոնցից հնագույնը կրում է հիշրեթի 996 (1588) թվականը: Այս փաստաթղթերը մեծ մասամբ հրովարտակներ են՝ տրված ինչպես օսմանյան սուլթանների, այնպես նաև մեծ վեզիրների կամ տեղական փաշաների կողմից: Կան նաև հոգևորական կամ Շար'ի ատյաններում կազմված արձանագրություններ, հարկային-ֆինանսական փաստաթղթեր, ինչպես նաև պաշտոնական օրհանդեսային գրագրություններ:

Սուլթանական հրովարտակները հիմնականում տրված են հայոց կաթողիկոսներին, նրանց իրավունքների հաստատման, նվիրակների կամ ուխտավորների ազատ երթևեկության, եկեղեցական տուրքերի գանձման և հայոց եկեղեցուն վերաբերող այլ հարցերի կապակցությամբ: Կան նաև տեղական բնույթ կրող հրամանագրեր, որոնք վերաբերում են պետական պաշտոնյաների և հայ հոգևորականության միջև ծագած հարցերին:

Հայոց եկեղեցու և հատկապես հայ ժողովրդի արևմտյան հատվածի իրավա-քաղաքական ինչպես նաև սոցիալ-տնտեսական վիճակի ուսումնասիրության համար որոշակի հետաքրքրություն ներկայացնող այս փաստաթղթերը համապատասխան մասնագետների կողմից դեռևս պատշաճ ուշադրության չեն արժանացել: Միակ հեղինակը, որ քիչ թե շատ հանգամանալից ուսումնասիրության է ենթարկել դրանք, եղել է Սիմեոն կաթողիկոս Երևանցին, որը սակայն, կարող էր խոսել միայն միջև իր դրքի շարադրման ժամանակները (1765 թ.) էջմիածնի գիվանատանը գանվող վավերագրերի մասին:

1956 թ. լույս տեսած «Մատենադարանի պարսկերեն հրովարտակներ»-ի Ա պրակի առաջաբանում անդրօդառնալով Սիմեոն Երևանցու «Ջամբու» աշ-

խատուելիքները, նշել ենք, որ այնտեղ հիշատակված համարյա բոլոր փաստաթղթերը (հրովարտականներ, հրամանագրեր, կալվածագրեր և այլն) չնչին բացառությամբ հասել են մեզ և այժմ պահվում են Մատենադարանի Արխիվային բաժնի Կաթողիկոսական դիվանի առանձին թղթապանակներում: «Հրովարտականներ»-ի Ա. և Բ պրակների ծանոթագրություններում բազմիցս առիթ ենք ունեցել ասելու, որ հիշյալ վավերագրերի վրա պահպանվել են Սիմեոն Երևանցու կողմից կատարված համառոտ մակագրություններ վավերագրերի բովանդակության վերաբերյալ, որոնք նույնությամբ, իսկ երբեմն էլ մասնակի խմբագրությունից հետո մեջ են բերված «Ջամբո»-ի համապատասխան գլուխներում: Այսպես, սխալված չենք լինի, եթե ասենք, որ «Ջամբո»-ի ԺԳ, ԺԴ, ԺԵ, ԺԶ, ԺԷ, ԺԸ, ԺԹ և ԻԵ գլուխները իրենց մեծ մասով իսկ Ի, ԻԱ, ԻԲ, ԻԳ, ԻԴ գլուխները համարյա ամբողջությամբ կազմված են հիշյալ վավերագրերի վրա պահպանված համառոտ մակագրություններից:

«Ջամբո»-ի ուշագիր ուսումնասիրությունը և նրա համեմատությունը վավերագրերի վրա պահպանված և նրանց բովանդակությանը վերաբերող մակագրությունների հետ թույլ են տալիս հաստատապես ասելու, որ նրա հեղինակը չտիրապետելով պարսկերեն, արաբերեն և թուրքերեն լեզուներին, կամ ավելի ճիշտ դրանանաչ չլինելով այդ լեզուներում և չկարողանալով անձամբ ընթերցել վավերագրերը, դրանք ընթերցել է ավել այդ լեզուներին գիտակ մեկին և նրանց համառոտ բովանդակությունը գրել ավել (երբեմն նաև իր իսկ ձեռքով արձանագրել) վավերագրերի վրա: Գիրքը շարադրելիս նա հիմնվել է այդ մակագրությունների վրա և իր բոլոր կորակացությունները կատարել է ելնելով այդ համառոտ անտաղիսանների տվյալներից:

Ինչպես լուրաքանչյուր ուսումնասիրության հեղինակի, այնպես նաև Սիմեոն Երևանցուն այդ վավերագրերը հետաքրքրել են միայն իր ուսումնասիրության մեջ արժարժված հարցերի, այսինքն էջմիածնի և Արևելյան Հայաստանի այլ վանքերի կալվածատիրական իրավունքների և հարկային արտոնությունների կամ մուաֆուկյան պատմության լուսաբանման առնչությամբ: Ուստի, ինչպես բուն իսկ վավերագրերի վրա կատարված համառոտ մակագրություններում, այնպես նաև «Ջամբո»-ում, հիշյալ վավերագրերը այդ տեսանկյունով են բնութագրված: Սակայն ինչպես ցույց տվեց «Մատենադարանի պարսկերեն հրովարտականների» Ա. և Բ պրակների հրատարակությունը, այդ վավերագրերը հետաքրքիր են ոչ միայն վանքերին տրված մուաֆուկյան իրավունքի կամ նրանց կալվածատիրական կարողությունների էության ուսումնասիրության տեսակետից, այլ որպես պատմական հավաստի սկզբնաղբյուրներ, շատ ավելի լայն հետաքրքրություն են ներկայացնում և ԺԴ—ԺԹ դդ. քաղաքական և սոցիալ-տնտեսական պատմության վերաբերյալ հսկայական փաստական նյութ են պարունակում:

Ներկա հոդվածի նպատակներից դուրս է խոսել «Ջամբո»-ում հիշված այն բոլոր վավերագրերի մասին, որոնց բնագրերը այժմ պահվում են Մատենադարանի արխիվային ֆոնդերում: Ինչպես նշված է «Հրովարտականներ»-ի Ա. և Բ պրակների ծանոթագրություններում, նույն մատենաշարի հետագա հրատարակություններում ևս մենք հերթականորեն առիթ կունենանք մեկ առ մեկ խոսելու այդ բոլորի մասին: Հույս ունենք, որ այդ հրատարակությունները մեծ չափով կհեշտացնեն ուսումնասիրողների գործը և նրանք այլևս ստիպված չեն լինի բավարարվելու միայն «Ջամբո»-ի խիստ համառոտ, եր-

բեմն նաև աղավաղված տվյալներով: Դա հավասարապես վերաբերում է ինչպես պարսկերեն ու արաբերեն, այնպես նաև թուրքերեն վավերագրերին, որոնց ամբողջական հրատարակութան ուղղութիամբ, ինչպես ասվեց, դեռևս գործնական քայլեր չեն արված:

Այս տեսակետից առավել հատկանշական են 1724—1736 թթ. թուրքական դրքերի կողմից Անդրկովկասի ժամանակավոր օկուպացիայի ժամանակաշրջանին վերաբերող վավերագրերը (52 հատ): Ստորև կփորձենք ծանոթանալ այդ շրջանի երկու վավերագրերի հետ, որոնք պարունակում են հետաքրքիր տվյալներ ոչ միայն էջմիածնի վանքի կալվածների և նրա վալելած հարկային արտոնությունների մասին, այլ հիմնականում վերաբերելով Վաղարշապատ գյուղից դանձվող հարկերին, մեծ չափով օգնում են պարզելու 1725—1736 թթ. աշխատավորութան հարկային պարտավորությունների ինչպես նաև Օսմանյան պետության Արևելյան Հայաստանում և ընդհանրապես Անդրկովկասում վարած հարկային քաղաքականության հետ առնչվող որոշ հարցեր:

\* \* \*

Իր աշխատության փ՛ի գլխում Սիմեոն Երևանցին շարադրելով էջմիածնի վանքին տրված հարկային արտոնությունների կամ մուաֆուխյան պատմությունը, մի աս մի թվարկում է բոլոր կարևոր պաշտոնական փաստաթղթերը՝ հրովարտակներն ու այլ կարգի արտոնագրերը, որոնք ժամանակին ձեռք է բերել վանքը օտար իշխանավորներից: Այս գլխում հիշատակված առաջին թուրքերեն փաստաթուղթը հիշրեթի 1137 (1725) թ. Երևանի Ռաշար փաշայի կնիքը կրող «Գրքաձև դէֆթէրն» է:

«Դարձեալ ի ՌճԼէ թուին տաճկաց, — գրում է Երևանցին, — մինչ երկիրս մեր անկանի ընդ իշխանութեամբ Օսմանցւոց, և նստի լԵրևան Ռաճապ կոչեցեալ փաշայն՝ ծանուցանէ նմա Աստուածատուր կաթուղիկոսն զմաղաֆութենէ

<sup>1</sup> Բոլորովին էլ չթերագնահատելով Սիմեոն Երևանցու այս իրոք մեծարժեք աշխատության նշանակությունը ժԼՂ դարի սոցիալ-տնտեսական հարաբերությունների պատմության ուսումնասիրության գործում (տե՛ս այս մասին «Հրովարտակներ» պրակ Ա, Առաջաբան, էջ 12—14), միաժամանակ չենք կարող շառաղիկել ուսումնասիրողներից ոմանց այն կարծիքին, ըստ որի «Ջամբուս» բավականաչափ սպառիչ և բազմակողմանի ուսումնասիրության են ենթարկված հեղինակի օգտագործած բոլոր պարսկերեն և թուրքերեն վավերագրերը: Այս հարցին մենք տարբեր առիթներով անդրադարձել ենք «Հրովարտակներ»-ի Ա և Բ պրակների առաջաբաններում և ծանոթագրություններում: Սխալ է և գիտական տեսակետից դատապարտելի նաև «Ջամբուս»-ը դիտել որպես ԺԵ—ԺԹ դդ. սոցիալ-տնտեսական և հատկապես ազրաբային հարաբերությունների պատմության սկզբնաղբյուրը «Ջամբուս»-ը կարող է որպես սկզբնաղբյուր ծառայել միայն ժԼՂ դարի և հատկապես նրա երկրորդ կեսի սոցիալ-տնտեսական հարաբերությունների պատմության ուսումնասիրության գրադվոզներին: ԺԵ—ԺԷ դարերի համար «Ջամբուս»-ը ոչ թե սկզբնաղբյուր է, այլ մի ուսումնասիրություն, որտեղ Սիմեոն Երևանցին, ինչպես վերը նշեցինք, փորձում է պարսկերեն և թուրքերեն վավերագրերի վրա կատարված համառոտ անոտացիաների հիման վրա գրել վանքի կալվածատիրության և հարկային արտոնությունների պատմությունը: Հողատիրության և հողային հարաբերությունների մասին խոսելիս, նա վավերագրերի տվյալները բացատրում է յուրովի, ելնելով իր ժամանակի հարաբերություններից, առանց խորանալու վավերագրերի էություն մեջ: Ուստի ԺԵ—ԺԷ դդ. վավերագրերում արժարժված այս կամ այն հարցի վերաբերյալ Սիմեոն Երևանցու կողմից տրված բացատրությունները կարող են հիմք ծառայել միայն ժԼՂ դարի հողային հարաբերությունների ուսումնասիրության:

սրբոյ Աթոռոյս: Եւ նոյն փաշայն գրեցուցանէ ի դատարանի իւրում զերկար գրքածե դէֆթէր մի, որոյ զգլուխն ինքն կնքէ՝ և զվերջն Շխ-խալամն: Յորում գրեցուցանէ զմէքատու գեօղորայն սրբոյ Աթոռոյս, որք են այսոքիկ: Այս մեր գեօղս, Մաստարայ, Օշական, Ֆոանկանոց և Քիրաշլու: Այլ և մաղաֆ եղեալ մուլքն Աթոռոյս ի սմա գրեցեալ են այսոքիկ: Ի մեր գեօղս վեց շէն ջրաղաց, երկու աւեր՝ մէկ շէն դինկ, երկու ձիթահանք, քսան և ինն արտ ցանելի, երեք հոնշալուդ, երեք այգի. ի Յօշական երկու այգի, մի ևս աւեր, ի Փարաքար երկու այգի, լՅրեան երկու այգի, երկու ջրաղաց, ի Քեալարայ երկու ջրաղաց, մէկ դինկ, երեք ջրաղացի ջուր ածեալ ի Չանկի գետոյն՝ որ է Նահապետ կաթուղիկոսի հանեալ մեծ առուն, որ Դալմա ասի, որոյ ակն է մերձ Սարվանլար կոչեցեալ գեղջն, որ լՅրեան՝ ի ներքոյ բերդին. և վեց հարիւր ոչխար, և սևագլուխք և միտրանքն մաղաֆ և մի՛ տալցեն զխարած, և այսքան վանօրայք ևս ընդ ձեռամբ խալիֆային հաշուեալ մաղաֆ լիցին, սուրբ Հախիսիմէն, Շողակաթն, Գալիանէն, Երեանու սուրբ Անանիա առաքելոյ և Զորագեղոյ անապատքն: Բայց միայն խալիֆայն ի տարւոջն զվեց հազար ութն հարիւր ստակ տալցէ յարքունիս, և ոչ այլ ինչ: Գի՛տ զայս զիրս ցուցակուն և ( ) նշան համարով: Թիւն տաճկաց ՌՃԼԷ: Այսպիսի օրինակազիր Թ հատ ևս գոն ի լալոց փաշայից տրեցեալք, զորս գտցես ցուցակօքն՝:

Այս վավերագրից անմիջապես հետո հիշատակված են ևս երկու «դէֆթէր»-ներ, որոնցից առաջինը կրում է հիշրեթի 1140 (1728), իսկ երկրորդը 1143 (1731) թվականները. նույնպիսի մանրամասնութիւնք և արտաքին նըշանների նկարագրութիւնք՝ «Որք երկուքն ևս շատ հարկաւորք են և պահելիք, և են երկար գրքածեք, մին չորս թուղթք, և միւսն հինգ թուղթք, որք երկուքն ևս գոն ի սուրբ Աթոռս, ունելով զծաղկեալ պահարան լատուկ լատուկ, և են ի միում շղտանածե թղթեալ պահարանում»<sup>1</sup>:

Այս վավերագրերը հիշված են նաև «Ջամբու»-ի Օսմանյան սուլթաններից, փաշաներից և շեյխ-ուլ-խալամներից ստացված հրովարտականքի ու այլ փաստաթղթերի թվարկմանը նվիրված ԻԲ և ԻԳ գլուխներում<sup>2</sup>: Սակայն ԻԳ գլխում հիշված է ևս մի «գրքածե» վավերագիր, տրված Ահմադ փաշայի կողմից. «Ահմէտ փաշային գրքածե թուղթ, որ նման Ռաշաի փաշային գրքածե թղթոյն (որ ի վերդ յիշեցաւ ի Ա համարն), գրէ զորպէսն գեղջս մերոյ և զամենայն մուլքան սրբոյ Աթոռոյս մաղաֆ առնելով, ի ՌՃԼԹ թուին տաճկաց: Գիտ ցուցակուն և ժԱ համարով: Յիշեցաւ այս ի ժԳ գլուխն ի ճառս մաղաֆութեան»<sup>3</sup>:

Սիմեոն Երեանցին այս վերջին վավերագիրը այնքան էլ կարևոր չի համարել, շեշտելով հատկապես, որ այն «նման է Ռաշաբ փաշայի թղթոյն»<sup>4</sup>: ԺԳ գլխում այս վավերագիրը առանձին չի հիշված: Ինչպես վերը տեսանք, Ռաշաբ փաշայի գրքածե վավերագրի բովանդակութիւնը շարադրելուց հետո ասված է. «Այսպիսի օրինակաւ (իմա՝ Էջմիածնի մուլքերին և մուաֆութիւնը վերաբերող— Հ. Փ.) գիր Թ հատ ևս գոն ի լալոց փաշայից տրեցեալք, զորս գտցես ցուցակօքն»<sup>5</sup>: Այդ 9 վավերագրերը թվարկված են ԻԳ գլխի Բ, Զ, Է, ժԱ, ժԲ,

<sup>1</sup> Ջամբու, էջ 133—134:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 135:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 243 § ԼԱ, էջ 244 § ԼԵ, էջ 249 § Ա:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 250, § ժԱ:

Ի, ԻԲ և ԻԵ հողվածներում, որոնցից ԺԱ հողվածի տակ հիշվածը Ահմադ փաշայի հիշյալ գրքածև վավերագիրն է:

Այսպիսով ուրեմն «Ջամբու»-ում հիշված է 4 «գրքածև դեֆթեր», «թուղթ» կամ «ֆերման», որոնցից առաջինը վերագրվում է Ռաշաբ փաշային, երկրորդը՝ Ահմադ փաշային, երրորդը՝ Սուլթան Ահմադ Գ-ին և չորրորդը՝ Սուլթան Մահմուդ Ա-ին: Նույն հերթականությամբ այս վավերագրերը գրանցված են Մատենադարանի Արխիվային բաժնի կաթողիկոսական դիվանի 1գ թղթապահակում 293, 316, 320 և 332 համարների տակ: Վավերագրերի վրա անկա են Սիմեոն կաթողիկոսի գրած համարները: Այսպես, թղթ. 1գ № 293 Ռաշաբ փաշայի կնիքը կրող վավերագրի վրա կա «Ա» համարը, դա «Ջամբու»-ի ԻԳ գլխի Ա վավերագիրն է: Թղթ. 1գ № 316 վավերագրի վրա նույն գլխի, մեզ արդեն ծանոթ, «ԺԱ» համարն է, թղթ. 1գ, № 320 վավերագրի վրա կա «ԷԱ» համարը, որը «Ջամբու» ԻԲ գլխի համապատասխան համարն է և վերջապես թղթ. 1գ, № 332 վավերագրի վրա կա նույն գլխի «ԼԵ» համարը:

Պետք է ասել սակայն, որ ինչպես ևրևում է Սիմեոն Երևանցու նկարագրություններից, նա այնքան էլ ճիշտ պատկերացում չունի խնդրո առարկա վավերագրերի բնույթի մասին: Նրա պատկերացմամբ այդ չորս վավերագրերը բոլորն էլ գրվել են Երևանում, տեղի փաշաների ու շեյխ-ուլ-խուլամների կարգադրությամբ: Իրանցից երկուսը (№ 320 և 332) իրենց առաջին էջի վրա կրում են Սուլթանի մեծ թուղթան, որը և առիթ է տվել Երևանցուն դրանց անվանելու «գրքածև ֆարման»: Իրականում սակայն, դրանք բոլորն էլ ոչ այլ ինչ են, եթե ոչ միայն Երևանի երկրի կամ «լիվայի» հարկային մատյանից հանված քաղվածքներ:

Նման հարկային մատյաններ կային Օսմանյան կայսրության բոլոր մեծ ու փոքր վարչական կենտրոններում: Կային ինչպես վիլայեթների (دفتر مفصل ولايات), այնպես նաև լիվաների ու նահիաների դաֆթարներ: Վիլայեթի դաֆթարում գրանցված էին տվյալ վիլայեթի կազմի մեջ մտնող լիվաներին ենթակա բոլոր գյուղերն ու այլ բնակավայրերը, ըստ առանձին նահիաների: Այս ընդարձակ դաֆթարից առանձին գրքերով դուրս էին գրվում լիվաների նահիաների ցուցակները և կազմվում էին առանձին դաֆթարներ: Հարկային այսպիսի դաֆթարները անպայման առաջին էջի վրա կրում էին սուլթանի թուղթան<sup>1</sup>:

Մատենադարանի արխիվում պահվող հիշյալ չորս դաֆթարները հիմք են տալիս ասելու, որ վիլայեթների ընդարձակ մատյաններից քաղվածաբար առանձնացվում էին նաև յուրաքանչյուր գյուղի կամ առանձին լիվաների մեջ մտնող այլ հարկատու օբյեկտների հարկացուցակները, որոնք պահվում էին նույն վայրում, կամ տրվում էին տվյալ հարկատու համայնքին, որպեսզի վերջինս ըստ այնմ կատարեր իր հարկային պարտավորությունները պետության նկատմամբ: Այնպես որ ճիշտ չէ Սիմեոն Երևանցին, երբ գրում է.

<sup>1</sup> دفتر مفصل ولايت كورجستان، تور كچه مننی ترجمه تدقیق و تحشیه 86»

1947. Գյուլիստանի Գեորգի Բախտիարյանի շրջանի ցուցակներ

Վաղարշապատի քաղաքային խորհուրդի քարտեզագրության և ժողովրդագրության բաժնի կողմից, 1947, Գյուլիստանի ցուցակներ, 1 & 2: Այստեղև «Վրաստանի ընդարձակ դաֆթարը»:

«Ի ՌՃԼԷ թուին տաճկաց՝ մինչ երկիրս մեր անկանի ընդ իշխանութեամբ Օսմանցւոց, և նստի լՆրեան Ռաճապ կոչեցեալ փաշայն՝ ծանուցանէ նմա Աստուածատուր կաթուղիկոսն զմաղաֆութենէ սրբոյ Աթոռոյս: Եւ նոյն փաշայն գրեցուցանէ ի դատարանի իւրում զերկար գրքաձև դէֆթէր մի...» կամ «լաւուրս Կարապետ կաթուղիկոսին ձեռամբ փաշային Նրեանու արդ առնեն Սուլթան-Ահմէտ թագաւորին Օսմանցւոց և զրեն զդէֆթէր մի տաճկերէն...» և կամ «Սուլթան Ահմէտին Փարման գրքաձև ի լաւուրս Կարապետ կաթուղիկոսին ի ՌՃԼԷ թուոջն տաճկաց: Զի գրքաձև տէֆթէր մի շինեն՝ գիտութեամբ Նրեանու փաշային և Շխ-խալամին տաճկերէն...»<sup>1</sup>:

Թլուրիմացութլուներ ալստեղ բալական բացահայտ է, որովհետև ինչպես վերը տեսանք այլ դաֆթարները էջմիածնի կաթողիկոսների նախաձեռնութլամբ կամ նրանց պահանջով չեն կազմվել, այլ պարզապես օկուպացիայից անմիջապես հետո կատարված աշխարհագրի հիման վրա կազմվել են ընդարձագ դաֆթարներ, ապա դրանցից հանվել են այս քաղվածքները Վաղարշապատ գլուղի բնակչութլան հարկային պարտավորութլուների և այդ գլուղի սահմաններում գտնվող վանական կալվածների վերաբերլալ և հանձնվել ըստ պատկանելլույն առ ի գործադրութլուներ. Նրեանի փաշաների և մանավանդ Շեխ-ուլ-խալամների մասնակցութլուներ այս գործում նույնպես մտացածին է: Նրանք կարող են դեր խաղացած լինել միայն էջմիածնի մուաֆութլան իրավունքների հաստատման գործում, բայց ոչ երբեք գլխավոր հարկացուցակներից հանված այս քաղվածքների ձևք բերման հարցում: Պարզ է ուրեմն, որ ի դեմս խնդրո առարկա 4 դաֆթարների մենք գործ ունենք օսմանյան հարկացուցակների ամենափոքր միավորներից մեկի առանձին տարբերակների հետ: Կարճ ասած, դրանք Վաղարշապատ (Ուչքիլիսա) գլուղի պաշտոնական հարկացուցակներն են, որոնք իրենց ձևով, շարադրման կղանակով, գրչութլամբ, և արտաքին բոլոր հատկանիշներով հար և նման են թուրքագիտութլանը վաղուց արդեն ծանոթ Օսմանյան կայսրութլան տարբեր վիլայեթների, լիվանների և այլ վարչական ստորաբաժանումների հարկացուցակներին կամ «Գրանցման դաֆթարներին» (دفتر تاجر):

Խնդրո առարկա հարկացուցակների բովանդակութլան և նրանց աղբյուրագիտական արժանիքների մասին խոսելուց առաջ մի քանի խոսքով կաշխատենք պարզել նրանց ժամանակին և իրար հետ ունեցած աղերսին վերաբերող որոշ հարցեր:

Ուշագիր համեմատութլուներից պարզվում է, որ այս հարկացուցակներից ամենահինը «Ջամբո»-ում ամենավերջը և ամենից համառոտ հիշված, թղթ. 1ա, վավ. 316 դաֆթարն է, որի թուրքերեն լրիվ բնագիրն ու հայերեն թարգմանութլուներ հրատարակում ենք սույն հոդվածի վերջում: Թղթ. 1գ վավ. 293 դաֆթարը, որի մասին Սիմեոն Նրեանցին հիշում է բոլորից առաջ և բոլորից ավելի մանրամասն, այս դաֆթարի պատճենն է հաստատված Ռաշաբ փաշայի ստորագրութլամբ և կնիքով: Պատճենի հարադատութլուներ հաստատում է Նրեանի դագի Արզուլան հետևլալ մակադրութլամբ.

«Ստորագրված և կնքված իսկականի հետ ճիշտ է: Գրեց փառավորլալ աստծու առաջ տնանկ Արզուլան, — ապահով Նրեան քաղաքի դագին, և

<sup>1</sup> Ջամբո, էջ 133—134 և 243:

թող աստված զթա նրան»։ Կնիքի վրա կարդացվում է. «Աստված արդարադատ է, միակը և հավիտենականը, և նրա ստրուկն է Արդուլլան։ 1115 (°)»<sup>1</sup>։

Հարկացուցակի առաջին էջի վերին աջ անկյունում Ռաջար փաշայի կրնիքն է, հետևյալ մակագրությամբ. «Ինչ որ աստված շնորհել է ինձ ևս վերստին մատուցում ևմ իմ արարչին, նրա ստրուկը՝ Ռաջար. 1135»<sup>2</sup>։ Կնիքին կից կատարված է հետևյալ մակագրությունը. «Այս ստորագրված դաֆթարի համաձայն պետք է վարվել... 1137»<sup>3</sup>։ Այս մասին է ահա, որ ինչպես վերը անսանք, Սիմեոն Երևանցին գրում է. «Գլուխն ինքն կնքէ և զվերջն Շխ-խալամն»։ Ընդօրինակությունը կատարված է պարսկական ոչ գրագետ ձևագրով, կան բազմաթիվ աղավաղումներ։ Այն ինչ մյուս Յ իսկական դաֆթարները, ինչպես ընդունված էր, գրված են նման հարկացուցակներին հատուկ «սալաղլամա» գրությամբ։

Որ այս պատճենը հանված է հիշրեթի 1137 թվականին, դա կասկածի ենթակա չէ, որովհետև և՛ Ռաջար փաշայի և՛ դազիի կողմից կատարված մակագրությունները այդ թվականն են կրում։ Պարզ է ուրեմն, որ բնագիրը պետք է գրված լինի դրանից առաջ կամ լավագույն դեպքում նույն թվականին։ Սակայն բնագրի վրա ասկա է 1139 թվականը, որը և հիմք է տվել Երևանցուն այն համարելու ավելի ուշ ստացված վավերագիր։ Երկու հարկացուցակների բովանդակության տառացի համընկնումը, պատճենի հարադատություն մասին վկայող մակագրությունը և մանավանդ 1139 թվականը կրող դաֆթարի վրայի Ահմադ փաշայի մակագրության պատճենի անկախությունը Ռաջար փաշայի կողմից հաստատված դաֆթարի վրա, կասկած առաջացրեց մեր մեջ այդ վավերագրի թվականի նկատմամբ։ Եվ իսկապես, ուշադիր դիտելուց հետո նկատեցինք, որ կից հրատարակվող, Ահմադ փաշայի կողմից հաստատված դաֆթարի թվականը եղծված է։ Դաֆթարի վերջում թվականի մասին վկայող վերջագրության արաբերեն سبع (յոթ) բառը վերածված է تسع (ինը)-ի իսկ ۱۱۳۷-ի ۷ (7)-ը ջնջված է ու դարձրած ۹ (9)։

Այս բոլորից հետո պարզ է դառնում արդեն, որ հարկային ընդարձակ դաֆթարի այս անդրանիկ քաղվածքը հանված է հիշրեթի 1137 (1725) թվականին, թուրքական զորքերի կողմից Անդրկովկասի նվաճումից անմիջապես հետո։ Քաղվածքի վրա մեծ վեղիր և օկուպացիոն զորքերի ընդհանուր հրամանատար Ահմադ փաշան մակագրել է. «Ինչպես որ խնդրված է, մինչև բարձրագույն կառավարության կողմից սրբազան և շքեղ հրամանագրի ստացվելը այս հաստատուն դաֆթարի համաձայն թող վարվեն և թող խասսի մարդիկ ստանձգություն չանեն»։ Նույն այս հարկացուցակի վերջին մասից իմանում ենք, որ էջմիածինը Սուլթանից ստացած է եղել հատուկ մուաֆնամե, որը ներկայացված է եղել Ահմադ փաշային հաստատություն, որից հետո պետք է գրվեր առանձին հրովարտակ կամ «ամր-ի շերիֆ» ինչպես այդ մա-

<sup>1</sup> مطابق لاصلہ الممضى المختوم، نطقه الفقير الله عز شأنه عبد الله القاضي  
بمدينة روان المحروسه عفى عنه - مهر - الله حسبي وحده و بقى عبده  
عبد الله. ۱۱۱۵ (?)

<sup>2</sup> بما قسم نصيب الله لى فوضبت امرى الى خالقى، عبده رجب، سنه ۱۱۳۵

<sup>3</sup> اشبو دفتر ممضى موجبجه عمل او لنور، فى ... سنه ۱۱۳۷



սին ասված է Ահմադ փաշայի վերոհիշյալ մակագրության մեջ: Այս մակագրությամբ Ահմադ փաշան կարգադրում է, որպեսզի մինչև այդ հրովարտակի ստացվելը տեղի իշխանությունները, առաջին հերթին Երևանի նահանգապետ Ռաջաբ փաշան, հիմք ընդունեն այս հարկացուցակը, որի վերջին մասը ամբողջապես վերաբերում է էջմիածնի վանքին տրված արտոնություններին: Նման հարկացուցակներում առանձին հարկատու օբյեկտների թվարկումից հետո ամենայն մանրամասնությամբ հիշատակվում էին նաև վակֆային այն կալվածքներն ու այլ ստացվածքները, որոնք ազատվում էին հարկերից<sup>1</sup>: Պարզ է, ուրեմն, որ այս վավերացված հարկացուցակները ժամանակավոր արտոնագրի կամ մուաֆնամնի դեր են կատարել: Այնուհետև տեղում անհրաժեշտ է եղել հանել մի պատճեն, որը հաստատել է Ռաջաբ փաշան: Երկու տարի հետո նորից նման փաստաթղթի կարիք է զգացվել և այս անգամ արդեն փորձ են արել ուղղակի թվականը փոխելով լուր ազնալ:

Հաջորդ երկու հարկացուցակները (թղթ. 14 վավ. 320 և 332) վերաբերում են արդեն հիշրեթի 1140 (1728) և 1143 (1731) թվականներին և բովանդակությամբ իրար կրկնելով, ինչպես սուրբ կոնստանդ, հիմնովին տարբերվում են 1137 (1725) թվականի հարկացուցակից: Այս հարկացուցակների վրա սակայն չկան ո՛չ մեծ վեցիբների և ո՛չ էլ տեղական փաշաների կնիքներ կամ մակագրություններ, այլ դրանք սոսկ քաղվածքներ են կատարված արքունի դիվանատան պաշտոնյաների ձեռքով և կնքված վերջիններիս կնիքներով: Հարկացուցակները, սակայն, ինչպես վերը առիթ ունեցանք նշելու, բոլոր պաշտոնական հարկացուցակների նման, իրենց առաջին էջի վրա կրում են՝ առաջինը Սուլթան Ահմադ Գ-ի, իսկ երկրորդը՝ Սուլթան Մահմուդ Ա-ի թուղթաները:

\* \* \*

Կասկածից դուրս է, որ այս չորս հարկացուցակներն էլ էջմիածնին հետաքրքրել են միայն իրենց վերջին մասով, որտեղ մանրամասն նշված են վանքապատկան վակֆային կալվածները, վարելահողերը, այգիները, ջրաղացները և այլ ստացվածքներ, շեշտելով որ դրանք հարկման ենթակա չեն, և որ ընդհանրապես էջմիածինը միանվազ որոշ դումար վճարելով, որպես քերթի փեշքաշ, ամբողջապես ազատվում էր հարկերից: Միմեան կաթողիկոսին էլ, ինչպես տեսանք, այս հարկացուցակները միայն այս կողմից են հետաքրքրել: Կից հրատարակվող հարկացուցակի համապատասխան հատվածի համեմատությունը նույն հարկացուցակի մասին «Ջամբա»-ում տրված համառոտ նկարագրության հետ, ցույց է տալիս, որ այդ նկարագրությունները հիմնականում ճիշտ են: Կան միայն երկրորդական նշանակություն ունեցող օբյեկտների մանրամասնության կամ այգիների ու վարելահողերի թվի որոշ աղավաղումներ, որոնք հարկացուցակներում հաճախ իրար համապատասխան չեն: Արքունի գանձարանին միանվազ վճարվող տարեկան գումարների մասին Միմեան Երևանցին բավական մանրամասն է խոսում, այդ հարցում խիստ մեղադրելով Պոլսի պատրիարքներին<sup>2</sup>:

Անշուշտ հարկացուցակները իրենց այս տվյալներով նույնպես հետաքրքրել են և կարևոր են օսմանյան Թուրքիայի կողմից հայոց եկեղեցու և հայ

<sup>1</sup> Տե՛ս Վրաստանի ընդարձակ դաֆթարը, էջ 21, 43, 50, 53, 54 և այլն:

<sup>2</sup> Ջամբա, էջ 235—238:

հողերականության նկատմամբ վարվող քաղաքականության ուսումնասիրության համար, սակայն նրանք այս տեսակետից եզակի բնույթ չունեն։ Իջմիածնին տրված հարկային արտոնությունների և հայ հողերականության վայելած որոշ առանձնաշնորհումների մասին ավելի մանրամասն և առատ նյութ են պարունակում սուլթանական հրովարտակները, որոնք անհամեմատ ավելի շատ են և բովանդակությամբ ավելի հարուստ։

Հարկացուցակների սկզբի մասը, սակայն, միանգամայն նոր և հետաքրքիր աղբյուր է, որին, ինչպես տեսանք, բոլորովին չի անդրադարձել Սիմեոն երեկանցին։ 1725—1736 թթ. թուրքական օկուպացիայի ժամանակաշրջանից առաջիկա մեզ հայտնի են միայն այս չորս հարկացուցակները։ Այս տեսակետից էլ անա դրանք եզակի նշանակություն ունեն և որպես այդպիսիք մեզ հնարավորություն են տալիս որոշ պատկերացում կազմելու նշված ժամանակաշրջանի հարկային սիստեմի, բնակչությանից գանձվող հարկերի քանակի, հարկային նորմերի և չափի մասին։

Բնակչության և հարկերի դրանցման ձևը համարյա չի տարբերվում «Վրաստանի ընդարձակ դաֆթար»-ի դրանցման ձևից։ Այստեղ նույնպես նախ դրանցված են բոլոր ուղաթները, ըստ առանձին կրգերի, անունով և հայրանունով, ապա թվարկված են գլխահարկն ու բոլոր դրամական և բնամթերային հարկերը, վերջիններս և՛ քաշով, և՛ դրամական համարժեքով։ Այնուհետև տրված է այդ բոլորի ընդհանուր գումարը՝ աղչելով հաշված, որից հետո արդեն թվարկված են գյուղի սահմաններում կամ ալլուր գտնվող վանքապատկան կալվածները և շարադրված են վանքին տրված մուաֆուսթյան պայմանները։

Այս շրջանի «կանուննամեններից» Օ. Լ. Բարքանը իր ծավալուն աշխատության մեջ հրատարակել է միայն Դանձակի վիլայեթի «կանուննամեն», որը ունի իր առանձնահատկությունները և չի կարող հիմք ծառայել համեմատության<sup>1</sup>, իսկ ինչպես ասվեց Անդրկովկասում այս թվականներին կազմված այլ հարկացուցակներ կամ նման քաղվածքներ մեզ հայտնի չեն։ Մենք ավելորդ ենք համարում մանրամասն համեմատել կից հրատարակվող և մյուս հարկացուցակների հարկային նորմերը «Վրաստանի ընդարձակ դաֆթարի» կամ Օ. Լ. Բարքանի նշված աշխատության կանուննամենների մեջ հիշված նորմերի հետ, որովհետև դրանք հիմնականում վերաբերում են ԺԶ—ԺԷ դարերին։ Թեև պետք է ասել, որ առանձին հարկային նորմեր որոշ վիլայեթների հետ համընկնում են։ Մեր նպատակից դուրս է նաև այստեղ մանրամասն վերլուծության ենթարկել նշված հարկերն ընդհանրապես վերցրած։ Այսպիսի ընդարձակ վերլուծության համար պակասում են զուգահեռ աղբյուրներ։ Սակայն մեր ձեռքի տակ եղած այս չորս հարկացուցակներից վերոհիշյալ երկու հարկացուցակների ուշադիր համեմատությունը թույլ է տալիս որոշ գաղտնիար կազմելու օսմանցիների Անդրկովկասում վարած հարկային քաղաքականության մասին ընդհանրապես։

Ասացինք արդեն, որ այս չորս հարկացուցակների հիմքում ընկած են հիշրեթի 1137 (1725) և 1140 (1728) թթ. կատարված ցուցակագրումները։ Հետևաբար բնակչության հաշվառման և հարկերի գանձման գործում տեղի ունեցած փոփոխությունները ուսումնասիրելու համար բավական է համեմա-

<sup>1</sup> Օ. Լ. Բարքան, XV ve XVI inci asırlarda Osmanlı İmparatorluğunda ziraî ekonominin hukukî ve mâlî esasları. I cild, «Kanunlar» İstanbul, 1945, էջ 198—197:

տեղ միայն հիշրեթի 1137 (1725) թ. (թղթ. 1 գ. վավ. 316) և 1140 (1728) թ. կազմված (թղթ. 1 գ. վավ. 320) հարկացուցակների տվյալները:

Ներկա հոդվածով մենք հրատարակում ենք միայն առաջին հարկացուցակը, որի գրչութիան ճշգրիտ թվականն է հիշրեթի 1137 թ. շաբաթն ամսի կեսերը (1725 թ. ապրիլ 27—30): Սա անշուշտ ընդարձակ դաֆթարից կատարված քաղվածքի թվականն է: Ընդհանուր աշխարհագիրը Երևանյան նահանգում կարող էր կատարվել միայն Երևանի գրավումից հետո, որը, ըստ Աբրահամ Երևանցու, տեղի է ունեցել 1724 թ. հունիսի 7-ին<sup>1</sup>: Ինչ էլ որ լինի, հրատարակվող հարկացուցակում արձանագրված են թուրքերի կողմից կատարված առաջին աշխարհագրի տվյալները:

Այս հարկացուցակը հաջորդ հարկացուցակից, ինչպես նաև Վրաստանի հարկացուցակներից տարբերվում է նրանով, որ այստեղ ուսյաթները թվարկված են ըստ առանձին թաղերի: Պարզվում է, որ ԺԸ դարի սկզբներին Վաղարշապատ գյուղը բաժանված է եղել չորս թաղերի կամ մահալլաների, որոնցից յուրաքանչյուրը ուներ իր տանուտերը կամ քյադխուզան: Թեև ընդհանրապես վերցրած բնակչության և հարկերի գրանցման սկզբունքները նույնն են, սակայն 1728 թ. հարկացուցակը անհամեմատ ավելի ընդարձակ է ու մանրամասն: Այսպես, եթե հրատարակվող հարկացուցակում ուսյաթների թրվարկումից անմիջապես հետո արդեն խոսվում է գյուղից գանձվող հարկերի մասին, ապա այստեղ ուսյաթների ցուցակին, որը տրված է առանց թաղային «ստորաբաժանման», հաջորդում է գյուղի սահմաններում գտնվող այգիների, պարտեզների և շրաղացների ցուցակը: Նշված է ուսյաթներին պատկանող 87 այգի, 10 շրաղաց, վանքապատկան 1 այգի, 2 վարելահող, 1 շրաղաց, 1 դինդ, 1 ձիթհանք, 1 կարավանատուն և այլն, որից հետո միայն թվարկվում են գյուղից գանձվող հարկերը: Երեք տարվա մեջ հարկերի աճման մասին ճշգրիտ պատկերացում տալու համար հարկացուցակի այս հատվածը մեջ ենք բերում ամբողջությամբ.


Հ ա ս ու լ թ <sup>2</sup>		حاصل																
Իսփանջ	<table border="0"> <tr> <td>390 տուն, գինը՝</td> <td>9900</td> <td>۹۹۰۰</td> <td>قیمت خانه ۳۹۰</td> </tr> <tr> <td>126 ամուրի, »</td> <td>3150</td> <td>۳۱۵۰</td> <td>» مجرد ۱۲۶</td> </tr> <tr> <td>6 այլի, »</td> <td>36</td> <td>۳۶</td> <td>» ثیب<sup>2</sup> ۶</td> </tr> </table>	390 տուն, գինը՝	9900	۹۹۰۰	قیمت خانه ۳۹۰	126 ամուրի, »	3150	۳۱۵۰	» مجرد ۱۲۶	6 այլի, »	36	۳۶	» ثیب <sup>2</sup> ۶	<table border="0"> <tr> <td>۳۹۰</td> <td>۱۲۶</td> <td>۶</td> <td rowspan="3">} اسپنج</td> </tr> </table>	۳۹۰	۱۲۶	۶	} اسپنج
390 տուն, գինը՝	9900	۹۹۰۰	قیمت خانه ۳۹۰															
126 ամուրի, »	3150	۳۱۵۰	» مجرد ۱۲۶															
6 այլի, »	36	۳۶	» ثیب <sup>2</sup> ۶															
۳۹۰	۱۲۶	۶	} اسپنج															
Թասմ-ի գլխում	1200	۱۲۰۰		رسم دونیم														
Յորեն — 2000 քիլա, գինը՝	60000	۶۰۰۰۰		قیمت کبله ۲۰۰۰														
Գարի — 1800 » »	36000	۳۶۰۰۰	» جو ۸۰۰															
Կորեկ — 200 » »	4000	۴۰۰۰	» ارزن ۲۰۰															
Կտավհատ — 100 » »	10000	۱۰۰۰۰	» زکرك ۱۰۰															
Ոսպ — 100 » »	6000	۶۰۰۰	» مرجمك ۱۰۰															
Սիսևա — 59 » »	6540	۶۵۴۰	» نخود ۵۹															

<sup>1</sup> Աբրահամ Երևանցի, Պատմութիւն պատերազմացն, 1721—1726 թթ., Երևան, 1938, էջ 21:

<sup>2</sup> Թղթ. 1 գ. վավ. 332 — بیوه.

Բամբակ — 580 ման, գինը՝	43500	٤٣٥٠٠	قیمت من ٥٨٠ پنبه
Բանջարանոցների տասանորդը՝ 1000 <sup>1</sup>		1000	عشر بستان
Ալիգինների	10000	10000	عشر باغات
Մրդի	500	500	عشر میوه
Ոչխարների հարկը	3000	3000	عادات اغنام
Անասունների հարկը (աասմ-ի աղբլ)	300	300	رسم اغیل
Հիշյալ գյուղի երկու գործող ներկատները	2400	٦٤٠٠	بویه خانه در قریه مزبوره. ٢ باب. رسم
Գյուղի բնակիչների 11 գործող չրաղացները, կես տարին	660	٦٦٠	اسیاب در ید اهالی قریه. ١١ باب. رسم. نیم سال
Եկեղեցու 2 ձիթհանքները			بزر خانه کلیسا ایچمبازین. ٢ باب
Եկեղեցու մեկ չրաղացը			اسیاب کلیساء ایچمبازین. ١ باب
Եկեղեցու մեկ դինգը			دنك کلیساء ایچمبازین. ١ باب
Ասվուլտի տասանորդը	120	120	عشر یونجه
Խոտի գինը	174	174	بهاء گیاه
Կուլս աղջիկների և այրիների հարսնության հարկը	90	90	رسم عروس بکر و ثیمه
Հողի թափուի տուրքը	100	100	رسم طابوی زمین
Ջառչիների (մունետիկների) տուրքը	120	120	رسم جار جیان
Անջարուսանքի հասույթը (մահ- սուլ-ի մուծղեղանի)	211	211	محصول مزده کانه
Հանցանքի և ոճիրի, բաղհափալի աղաթի, ընդհանուրի և խասսի բեյթ-ուլ-մալի, բացակալող և կորած ապրանքների, դաշտա- պահության (դաշթիրանի), փա- խած ծառաների և աղախիճների գնի, անասունների՝ ձիան և կովի, ձիի, վկայության(*) և այլնի համար	12321	12321	و بابت جرم و جنایت و بادھوا و عادت و بیت المال عامه و خاصه و مال غایب و مال مفقود عادت دشتبانی و بهاء قاجفون قول و جاریه و بهالق اغنام و اسب و کاو و رسم دوخان و ضمانه(?) و غیره
Գումարը՝	211322	٢١١٣٢٢	یکون

<sup>2</sup> Բնագրում սխալմամբ 2000 է գրված, այդ դեպքում հարկերի ընդհանուր գումարը նիշա չի ստացվում: 1000-ով գումարը համապատասխանում է: Այդպես է 1731 թ. հարկացուցակում:



Վաղարշապատ գյուղի 1728 թ. հարկացուցանի թուրքերն բնագրի բնակչությունից զանձվող հարկերին վերաբերող հատվածը:

Ինչպես տեսնում ենք, գյուղից զանձվող հարկերի ընդհանուր գումարը 1725—1728 թթ. ընթացքում 91515 աղչեից բարձրացել է 211322 աղչեի, այսինքն երեք տարվա ընթացքում ավելացել 2,3 անգամ: Երկու հարկացուցակների ուշագիր համեմատությունից պարզվում է, որ առաջին աշխարհագրի ժամանակ գյուղից չեն պահանջել 9 անուն հարկեր, որոնց ընդհանուր գումարական համարժեքը հավասար է 15165 աղչեի: Այդ հարկերն են.

1. Ռամ-ի դոնում	1200 աղչե
2. Ոսպ — 100 քիլա	6000 »
3. Սիսեռ — 59 քիլա	6540 »
4. Մրդի տասանորդը	500 »
5. Անասունների հարկը	300 »
6. Ատվուլտի տասանորդը	120 »
7. Թոտի դինը	174 »
8. Զառչիների տուրքը	120 »
9. Աչքալուսանքի հատույթը	211 »

Գումարը՝ 15165 աղչե

Իսկ առաջին աշխարհագրի ժամանակ հաշվի առնված հարկերի աճը երկրորդ աշխարհագրի ժամանակ հետևյալ պատկերն է ներկայացնում.

Հարկի անունը	1725 թ.	1728 թ.
1. Իսփանջ	9325	13086
2. Ցորեն	48300	60000
3. Գարի	11500	36000
4. Կորեկ	5750	4000
5. Կտավհատ	750	10000
6. Բամբակ	2000	43500
7. Ալգինների տասնորդը	7455	10000
8. Բանջարանոցների տասնորդը	1650	1000
9. Ոչխարների հարկը	1036	3000
10. Ներկամաներ	600	2400
11. Ջրադացների հարկը	330	660
12. Հարսնության հարկը	60	90
13. Հողի թափու, դաշթբանի, բաղձավա, հանցանք ու սճիբ, փախած ծառաների, կորած ապրանքի ու անասունների համար դանձվող և այլ տուրքեր	2760	12421
Գումարը՝	91515	196157
Տարբերությունը՝	104642	

Այսպիսով, 1725 թ. դրանցված հարկերը 3 տարի հետո ավելացել են 104642 աղչեով, որա վրա պետք է գումարել 9 անուն նոր հարկերի ընդհանուր գումարը՝ 15165 աղչե, ստացվում է 119807 աղչե, այն տարբերությունը, որ գոյություն ունի առաջին և երկրորդ հարկացուցակների ընդհանուր գումարի միջև:

Այստեղ ակնբախ է այն փաստը, որ հավելյալ նոր հարկերի գումարը անհամեմատ ավելի քիչ է, քան հին հարկերի ուսճացման շնորհիվ գուցացած վերադիրը:

Հարկերի ավելացումը կարող էր առաջանալ նաև որոշ օբյեկտիվ պատճառներից, ինչպես օրինակ բնակչության աճ, ուսոգման ցանցի ընդարձակում, նոր հողերի յուրացում և այլն: Սակայն ինչ էլ որ լինեք կասկածից դուրս է, որ այդ երեք տարիների ընթացքում, երբ երկրում դեռ շարունակվում էին ներքին կռիվներն ու ամենուրեք պայմանները անապահով էին, անտեսական կլանքը այդպիսի զարգացում չէր կարող ապրել: Բավական է թեկուզ համատարակի քննության առնել կանխիկ դրամով դանձվող հարկերից մեկի՝ իսփանջի ընդհանուր գումարում և դանձման սկզբունքներում տեղի ունեցած փոփոխությունները, համոզվելու համար, որ հարկերի այս աճուկի աճը հետևյալն է միայն օկուպացիոն իշխանությունների կողմից կիրառվող նոր հարկային քաղաքականություն:

Իսփանջի ընդհանուր նորման սկսած դեռևս ժ.Ձ դարից ընդհանրապես եղել է յուրաքանչյուր չափահաս տղամարդից 25 աղչել: Այդպես է և՛ Վերատանի ընդարձակ դաֆթարում և՛ Օ. Լ. Բարքանի հրատարակած «Կանոննամաներում»: Իսփանջի նույն սակն է պահպանված նաև Վաղարշապատի հարկացուցակներում: Սակայն, եթե 1725 թ. հարկացուցակում բավարարվել են նրշելով միայն ամուսնացած տղամարդկանց, ապա 1728 թվականին արդեն այս վերջիններից բացի, որոնց թիվը 373-ից բարձրացել է 390-ի, հիշատակված են նաև 126 ամուրիներ և 6 ալբիներ: Ամուսնացածներից և ամուրիներից գանձվել է 25-ական, իսկ ալբիներից 6-ական աղչել: Ի դեպ նշենք նաև, որ հարկատու առյաթների այս երեք կատեգորիաների գումարը լինում է  $390 + 126 + 6 = 522$ , իսկ առյաթների անվանական ցուցակում նրանց ընդհանուր թիվը 511 է: Հարկերի ժամանակ անշուշտ հիմք էր ընդունվում առաջինը. եթե գումարը մտել էր արդեն գյուղից գանձվող հարկերի ընդհանուր գումարի մեջ, ապա գյուղական համայնքը պարտավոր էր անթերի հատուցել այն: Այսպիսով ուրեմն հարկատուների թիվը խարդախ կերպով ավելացված է ևս 11 հոգով, իսկ հարկը 275 աղչել գումարով:

Թերևս կարելի է հավատար, որ 3 տարվա ընթացքում գյուղի հարկատու առյաթների թիվը կարող էր 373-ից բարձրացած լինել 390-ի: Թուրքական արշավանքների ժամանակ կարող էին գյուղից հեռացած ու վերադարձած մարդիկ լինել: Բայց որ այդ նույն ժամանակամիջոցում հանկարծ կարող էին գյուղում հայտնվել 126 ամուրիներ, որոնք 3 տարի առաջ չկային, դա անշուշտ անհավատալի երևույթ է: Պետք է կարծել, որ նույնքան կամ մի քիչ ավելի փոքր թվով ամուրիներ, ինչպես նաև ալբի տղամարդիկ գյուղում եղել են նաև 1725 թվականին, սակայն այն ժամանակ, երբ դեռ երկրի նվաճումից անցել էր ընդամենը մի քանի ամիս, և դեռ նվաճողները իրենց այնքան էլ ամուր չէին գգում, ավելի մեղմ մոտեցում են ունեցել և մանրամասնութունների մեջ չմտնելով գրանցել են միայն ամուսնացած տղամարդկանց: Իսկ եթե ընդունելու լինենք, որ առաջին ցուցակի 373 հոգու մեջ մըտնում են նաև ամուրիներն ու ալբիները, ապա դա նշանակում է, որ 3 տարվա մեջ գյուղի բնակիչների կամ ավելի հիշտ հարկատու առյաթների թիվը ավելացել է 40 տոկոսով, որը բավական անհավանական է թվում:

Սակայն եթե իրոք մի բոլոր ընդունենք, որ ինչ-որ արտակարգ պայմանների շնորհիվ առյաթների թվի նման հավելում է տեղի ունեցել, այդ դեպքում էլ նույնիսկ չի պատճառաբանվում հարկերի ընդհանուր գումարի արդյուսի մեծացումը, որն ինչպես տեսանք հավասար է 230 տոկոսի:

Եվ իրոք, բացի իսփանջից, հարկերի ուճացման նույն տենդենցը նկատվում է նաև գյուղի բնակչութունից գանձվող մյուս հարկերի ու տուրքերի հաշվառման մեջ: Այսպես, թեև ցորենի քանակը 2300 ֆիլայից իջել է 2000 ֆիլայի, սակայն քանի որ յուրաքանչյուր ֆիլա ցորենի գինը 21 աղչելից բարձրացել է 30 աղչելի, ցորենի հարկի ընդհանուր դրամական համարժեքը 48300 աղչելից բարձրացել է 60000 աղչելի: Գարու հարկի և՛ քանակն է ավելացել, և՛, գնի կրկնակի բարձրացման շնորհիվ, ընդհանուր գումարը 11500-ից բարձրացել է 36000 աղչելի: Թեև կորեկի գինը ևս կրկնապատկվելով 10 աղչելից բարձրացել է 20 աղչելի, սակայն գյուղից գանձվող կորեկի չափը 575 ֆիլայից իջեցվել է 200 ֆիլայի, որի հետևանքով էլ կորեկի հարկի դրամական համար-

ժեքը 5750 աղչեկից իջել է 4000 աղչեկի: Նկատվում է կտավհատի գնի շատ մեծ վերելք՝ 15 աղչեկն դարձել է 100 աղչեկ: Այս ամենից շատ թանկացած ապրանքի գյուղից պահանջվող հարկի քանակը կրկնապատկված է. նախկին 50 քիլայի փոխարեն պահանջվում է 100 քիլա, որի հետևանքով հարկն էլ 750 աղչեկից բարձրացել է 10000 աղչեկի: Բամբակի գինը ևս 40-ից բարձրացել է 75 աղչեկի, իսկ հարկի քանակը 50 մանից բարձրացել է 580 մանի, հետևաբար հարկի դրամական համարժեքն էլ բազմապատկվելով շուրջ 22 անգամ 2000 աղչեկից հասել է 43500 աղչեկի: Այնուհետև 2545 աղչեկով ավելացել է ալգինների տասանորդը, փոխարենը պակասել է քանջարանոցների տասանորդը: Ոչխարի հարկը ավելացել է մոտ 3 անգամ, 1135 աղչեկից բարձրանալով 3000 աղչեկի: Ներկատներից գանձվող գումարը բազմապատկվել է 4 անգամ, 600 աղչեկից բարձրանալով մինչև 2400 աղչեկ: Ջրաղացների հարկը կրկնապատկվելով՝ 330 աղչեկից բարձրացված է 660 աղչեկի: Հարսնության հարկի վրա չնչին հավելում է եղել (60—90), ի հաշիվ հավանաբար այրի կանանց ամուսնության, որովհետև ըստ «Կանոննամեի» կույս աղջիկներից գանձվում էր 80, իսկ այրիներից՝ 30 աղչեկ, գումարը լինում է 90 աղչեկ: Խիստ մեծացել է նաև գանազան անուսներով հոգուտ պաշտոնյաների գանձվող հարկերի ընդհանուր գումարը, 2760 աղչեկից հասնելով մինչև 12421 աղչեկի: Այսպիսով, բացի կորեկից և քանջարանոցների հարկից, որոնք շատ չնչին չափով պակասել են (2400 աղչեկ), մյուս բոլոր հարկերը մեծ կամ փոքր չափով ավելացել են:

Հարկացուցակների տվյալներով պարզվում է, որ 3 տարվա ընթացքում տեղի է ունեցել մթերքների և գյուղատնտեսական այլ ապրանքների գների զգալի բարձրացում, որը հաշվի է առնվել նոր աշխարհագրի ժամանակ:

Գների աճը հետևյալ պատկերն է ներկայացնում.

Ապրանքի անունը	Կշռային միավորի գինը 1725 թ.	Կշռային միավորի գինը 1728 թ.
1. Ցորեկ	21 աղչեկ	30 աղչեկ
2. Գարի	10 »	20 »
3. Կորեկ	10 »	20 »
4. Կտավհատ	15 »	100 »
5. Բամբակ	40 »	75 »

Պետք է նկատի ունենալ, որ նման հարկային ցուցակագրումների ժամանակ միշտ էլ հաշվի են առնվել ընթացիկ շուկայական գները: Այս տեսակետից էլ նշված գները նույն թվականի համար իրական կարող են համարվել, իսկ նախորդ կամ հաջորդ տարիների համար արդեն իրական չեն:

Եթե չլինեին վերոհիշյալ 9 անուն նոր հարկերը, որոնք չեն հիշված 1725 թ. հարկացուցակում, և եթե ռաջաթների հաշվառման ու մյուս, շուկայի հետ չառնչվող, հարկերի գումարները ևս մի քանի անգամ բարձրացված չլինեին, թերևս կարելի էր ենթադրել, որ այս նոր աշխարհագրի հիմնական նըպատակը եղել է հարկերի դրամական համարժեքների մերձեցումը շուկայական գներին: Սակայն 1728 թ. հարկերի հաշվառման խիստ ծավալուն և ամեն



ինչ ընդգրկող բնույթը այնքան ակնբախ է, որ գներն այստեղ երկրորդական նշանակություն են ստանում:

Վերը շարադրվածից պետք է եզրակացնել, որ թուրքական օկուպացիոն իշխանությունները Անդրկովկասի որոշ մասին տեղ գառնալուց հետո, անմիջապես այնտեղ սկսել են կիրառել Թուրքիայում տիրող հարկային սիստեմը: Նախապես կազմել են «Լնդարձակ հարկային ցուցակներ», ապա երեք տարի անց կատարել են նոր աշխարհագիր, այս անգամ արդեն ավելի քան սաստկացնելով հարկապահանջությունը. բազմապատկելով գանձվող հարկերը և ավելացնելով նոր հարկեր: Կարելի է հաստատապես ասել, որ 1728 թ. հարկացուցակը կիրառության մեջ է եղել մինչև 1731 թ., քանի որ այդ թվականին հանված, մեզ արդեն ծանոթ, քաղվածքը նախորդ հարկացուցակից ոչնչով չի տարբերվում: Մեզ հայտնի չէ, թե այնուհետև թուրքերը հասցրե՞լ են նոր աշխարհագիր կատարել, թե ոչ: Ամենայն հավանականությամբ, նոր աշխարհագիր չի եղել: Թվում է թե այդ դեպքում էջմիրածնի արխիվում պետք է լինեք նաև այդ նոր աշխարհագրի հիման վրա կազմված հարկացուցակի Վաղարշապատ գյուղին վերաբերող քաղվածքը: Այդ մասին ինչպես տեսանք «Ջամբռ»-ում ևս ոչ մի հիշատակություն չկա:

Այս տեսակետից էլ ավելի է բարձրանում հատկապես վերջին հարկացուցակի արժեքը, որպես 1728—1736 թթ. թուրքական տիրապետության շրջանում բնակչությանից գանձվող հարկերի ընդհանուր նորմերի մասին արժեքավոր և համարյա եզակի տվյալներ պարունակող փաստաթղթի, որը մեծ չափով կարող է նպաստել այդ տարիներին Անդրկովկասի ներքին կյանքի և բնակչության սոցիալ-տնտեսական վիճակի պատմության ուսումնասիրությանը:

Ներկա հոդվածին հատկացված «Բանբեր»-ի սուղ էջերում հնարավոր չէ կանգ առնել հարկացուցակների բովանդակությանը վերաբերող այլ հարցերի վրա և վեր հանել նրանց աղբյուրագիտական բոլոր արժանիքները: Ստորև հրատարակելով 1725 թ. հարկացուցակի թուրքերեն բնագիրն ու նրա հայերեն թարգմանությունը, կարծում ենք որ այն, վերը մեջ բերված 1728 թ. հարկացուցակի հիմնական հատվածի հետ միասին, կարող է օգտակար հանդիսանալ, և որպես նոր սկզբնաղբյուր, հիմք ծառայել ավելի ընդարձակ հետազոտությունների:

### ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ԳՅՈՒՂԻ 1725 Թ. ՀԱՐԿԱՑՈՒՑԱԿԸ

«Մատենադարան», Կարողիկոսական դիվան, բղրապանակ 1գ. վավ. 316, 4 քերթ (49×18 սմ) բնագիր, գրված բուրբական «սայաղլամա» գրությամբ. 1ա, 4ա և 4բ էջերը մաքուր.

Ահմադ փաշայի կնիքը հետևյալ մակագրությամբ.

Կենտրոնում. Աստված արդարադատ է, ապավինում եմ աստծուն: Չկա ուժ և զորություն բացի աստծուց և նրա ստրուկն է Ահմադը, 1131 (1718—1719),

Շուրջը. Ո՞վ տեր, դու հասիր այս անտերունչիս աղերսին.  
Ողորմածությունն ու բարեհոգությունը բախական է  
այս անտերունչին.  
Ամեն ոք ապավինում է որևէ մեկի սրբությունը,  
Անտերունչս միայն քո սրբությանն եմ ապավինում:

Ինչպես որ խնդրված է, մինչև բարձրագույն կառավարութեան կողմից սրբազան և շքեղ հրամանագրի ստացվելը, այս հաստատուն դափթարի համաձայն թող վարվեն և թող խասսի մարդիկ ունձգութեան չանեն:

Ահմադ փաշայի ստորագրութեամբ:

ԵՐԵՎԱՆԻ ԼԻՎԱՅՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԿԱՐԲԻԻ ՆԱՀԻՍ

Ուշքի լիսա գլուղը, որ ենթակա է հիշյալ [նահարիս]

Պողոսի թագը

- |                                |                               |
|--------------------------------|-------------------------------|
| 1. Պողոս՝ որդի Խաչատուրի       | 37. Ալվաղ՝ որդի Սարգսի        |
| 2. Աղամալ՝ որդի Մինասի         | 38. Խաչում՝ որդի Մովսեսի      |
| 3. Մալխաս՝ որդի Մինասի         | 39. Ուլուբեկ՝ որդի Պետրոսի    |
| 4. Հովնատան՝ որդի Խաչանի       | 40. Ալվաղ՝ որդի Ուլուբեկի     |
| 5. Մնացական՝ որդի Գյուզալի     | 41. Հովհաննես՝ որդի Խաչատուրի |
| 6. Կարապետ՝ որդի Միրզաշանի     | 42. Խաչատուր՝ որդի Հովհաննեսի |
| 7. Ավետիք՝ որդի Թեոդիկի        | 43. Արսլան՝ որդի Թորոսի       |
| 8. Ջանի՝ որդի Մնացականի        | 44. Մելիք՝ որդի Թորոսի        |
| 9. Ալվաղ՝ որդի Հակոբի          | 45. Վարդան(°)՝ որդի Կարապետի  |
| 10. Մալխաս՝ որդի Հակոբի        | 46. Կիրակոս Դաղլու            |
| 11. Մուրադ՝ որդի Գյուլմիշի     | 47. Կիրակոս՝ որդի Գրիգորի     |
| 12. Նահապետ՝ որդի Հովհաննեսի   | 48. Ստեփան՝ որդի Գրիգորի      |
| 13. Մակնոս(°)՝ որդի Սարգսի     | 49. Քեան՝ որդի Գրիգորի        |
| 14. Վարդգես(°)՝ որդի Սարգսի    | 50. Ներսես՝ որդի Սարուխանի    |
| 15. Մկրտում՝ որդի Ատիկի        | 51. Սահակ որդի Սարուխանի      |
| 16. Հովհաննես՝ որդի Քեշիշի     | 52. Իսրայել՝ որդի Սահակի      |
| 17. Հովհաննես՝ որդի Մկրտչի     | 53. Դանիել՝ որդի Մովսեսի      |
| 18. Մկրտում՝ որդի Խաչումի      | 54. Վիրաբ՝ որդի Մարգարեի      |
| 19. Գյուզալ՝ որդի Ալվաղի       | 55. Քեան, որդի Վիրաբի         |
| 20. Եղիազար՝ որդի Ավետիսի      | 56. Սողոմոն՝ որդի Խաչանի      |
| 21. Գրիգոր՝ որդի Ավետիսի       | 57. Գյուզալ՝ որդի Հակոբի      |
| 22. Ադիրեկ՝ որդի Գրիգորի       | 58. Ենգիբար՝ որդի Ալմիրեկի    |
| 23. Հարություն՝ որդի Ստեփանի   | 59. Կարապետ՝ որդի Ալմիրեկի    |
| 24. Արամալիս(°) որդի Ստեփանի   | 60. Թագվոր՝ որդի Հարությունի  |
| 25. Ենգիբար՝ որդի Դոստիկի(°)   | 61. Խոջիկ՝ որդի Թուշիկի(°)    |
| 26. Քովիկի(°)՝ որդի Դոստիկի(°) | 62. Աղամալ՝ որդի Խոջիկի       |
| 27. Հովսեփ՝ որդի Պողոսի        | 63. Ներսես՝ որդի Ոսկանի       |
| 28. Պողոս՝ որդի Արթինի         | 64. Եղիա՝ որդի Նախշեանցու     |
| 29. Վարդեան՝ որդի Արթինի       | 65. Մարտիրոս՝ որդի Կիրակոսի   |
| 30. Ենգիբար՝ որդի Վարդանի      | 66. Հարություն՝ որդի Մկրտչի   |
| 31. Մաթեոս՝ որդի Վարդանի       | 67. Գալուստ՝ որդի Կիրակոսի    |
| 32. Ալվաղ՝ որդի Ջանաղալի       | 68. Հովհաննես՝ որդի Մկրտչի    |
| 33. Ջալալ՝ որդի Ալվաղի         | 69. Ստեփան՝ որդի Փիլիպոսի     |
| 34. Դանիել՝ որդի Ալվաղի        | 70. Մարտիրոս՝ որդի Միրզալի    |
| 35. Մաղաքիա՝ որդի Ջանաղալի     | 71. Աղամալ՝ որդի Պետրոսի      |
| 36. Սարգիս՝ որդի Գյուլմիշի     | 72. Պետրոս՝ որդի Գրիգորի      |

- |                               |                                   |
|-------------------------------|-----------------------------------|
| 73. Կոստանդ՝ որդի Ազարեկի     | 86. Սարուխան՝ որդի Բաշինդուրի     |
| 74. Թաղևոս՝ որդի Տեկիտոսի     | 87. Գրիգոր՝ որդի Սարուխանի        |
| 75. Խաչում՝ որդի Սարուխանի    | 88. Հակոբ՝ որդի Պարոնի            |
| 76. Նանում՝ որդի Վարդանի      | 89. Ավետիս՝ որդի Սարգսի           |
| 77. Գրիգոր՝ որդի Սարգսի       | 90. Հովհաննես՝ որդի Անանիայի      |
| 78. Մարտիրոս՝ որդի Սարգսի     | 91. Եղիազար՝ որդի Սարգսի          |
| 79. Գրիգոր՝ որդի Մարգարեի     | 92. Հարություն՝ որդի Աստվածատուրի |
| 80. Մկրտում՝ որդի Պողոսի      | 93. Ալեքսան Նախչևանցի             |
| 81. Թաղիկ՝ որդի Մելիք-Լավանդի | 94. Գրիգոր՝ որդի Ալեքսանի         |
| 82. Սահակ՝ որդի Նանումի       | 95. Թորոս՝ որդի Հակոբի            |
| 83. Մկրտում՝ որդի Նանումի     | 96. Արզար՝ որդի Քեանի             |
| 84. Սահիան՝ որդի Առաքելի      | 97. Հովհաննես՝ որդի Ռուստամի      |
| 85. Կարապետ՝ որդի Հարությունի |                                   |

Գ ա լ ու ս ա ի թ ա դ ր

- |                              |                               |
|------------------------------|-------------------------------|
| 1. Գալուստ՝ որդի Հակոբի      | 31. Փիլիպոս՝ որդի Պետրոսի     |
| 2. Մկրտիչ՝ որդի Թորոսի       | 32. Եղիազար՝ որդի Կիրակոսի    |
| 3. Թաղիկ՝ որդի Թորոսի        | 33. Ավագ՝ որդի Գրիգորի        |
| 4. Սարգիս՝ որդի Լավասափի     | 34. Պողոս՝ որդի Մուրադի       |
| 5. Եղիա՝ որդի Լավասափի       | 35. Մնացական՝ որդի Ավետիքի    |
| 6. Դավիթ՝ որդի Վարդանի       | 36. Խաչում՝ որդի Ավետիքի      |
| 7. Մուրադ՝ որդի Նահապետի     | 37. Ասատուր՝ որդի Սարգսի      |
| 8. Անտոն՝ որդի Թաղևոսի       | 38. Մկրտում՝ որդի Առաքելի     |
| 9. Նանում՝ որդի Կիրակոսի     | 39. Հովհաննես՝ որդի Ուլուբեկի |
| 10. Հովսեփ՝ որդի Նանումի     | 40. Մնացական՝ որդի Թաղևոսի    |
| 11. Հովհաննես՝ որդի Կիրակոսի | 41. Հակոբ՝ որդի Մնացականի     |
| 12. Մարկոս՝ որդի Գրիգորի     | 42. Թաղևոս՝ որդի Մնացականի    |
| 13. Կարապետ՝ որդի Մուրադի    | 43. Փիլիպոս՝ որդի Մուրադի     |
| 14. Իսրայել՝ որդի Մուրադի    | 44. Ներսես՝ որդի Փիլիպոսի     |
| 15. Սարգիս՝ որդի Մեսրոպի     | 45. Մանուկ՝ որդի Մովսեսի      |
| 16. Փիլիպոս՝ որդի Մեսրոպի    | 46. Հարություն՝ որդի Սարգսի   |
| 17. Մկրտիչ՝ որդի Սարգսի      | 47. Հարութ՝ որդի Վարդանի      |
| 18. Առաքել՝ որդի Սարգսի      | 48. Հովակիմ՝ որդի Դանիելի     |
| 19. Բուդադ՝ որդի Բաբայի      | 49. Հայրապետ՝ որդի Փիլիպոսի   |
| 20. Պետրոս՝ որդի Բուդադի     | 50. Բեկնազար՝ որդի Դավթի      |
| 21. Կիրակոս՝ որդի Բուդադի    | 51. Արզար՝ որդի Դավթի         |
| 22. . . . . որդի Մուրադի     | 52. Աղամալ՝ որդի Հակոբի       |
| 23. Գրիգոր՝ որդի . . . .     | 53. Ավետիք Դադլու             |
| 24. Միրզա՝ որդի Խաչատուրի    | 54. Գալուստ՝ որդի Փիլիպոսի    |
| 25. Գրիգոր՝ որդի Հակոբի      | 55. Իսաչան՝ որդի Նազարի       |
| 26. Հակոբ՝ որդի Գրիգորի      | 56. Հովհաննես՝ որդի Նազարի    |
| 27. Կոստանդ՝ որդի Մուքելի    | 57. Կարապետ՝ որդի Խաչիկի      |
| 28. Եղիազար՝ որդի Մուքելի    | 58. Վարդան՝ որդի Ավետիսի      |
| 29. Հովասափ՝ որդի Քեանի      | 59. Գյուզալ՝ որդի Ոսկանի      |
| 30. Շիրվան՝ որդի Քեանի       | 60. Սուլթան՝ որդի Գյուզալի    |

- |                             |                                |
|-----------------------------|--------------------------------|
| 61. Գրիգոր՝ որդի Զաքարեի    | 78. Պապ՝ որդի Իսքանդարի        |
| 62. Սարգիս՝ որդի Թադևոսի    | 79. Հակոբ՝ որդի Սարուսի        |
| 63. Ասատուր՝ որդի Հակոբի    | 80. Ավետուս՝ որդի Աստվածատուրի |
| 64. Խաչում՝ որդի Ոսկանի     | 81. Գալուստ՝ որդի Աստվածատուրի |
| 65. Բարխուդար՝ որդի Ոսկանի  | 82. Ամիր՝ որդի Մովսեսի         |
| 66. Քեթևան՝ որդի Սարգսի     | 83. Առաքել՝ որդի Բուդաղի       |
| 67. Սանիան՝ որդի Գալուստի   | 84. Ավետիք՝ որդի Խաչատուրի     |
| 68. Սողոմոն՝ որդի Սանիանի   | 85. Պետրոս՝ որդի Գրիգորի       |
| 69. Մարտիրոս՝ որդի Գալուստի | 86. Մկրտում՝ որդի Աղաբեկի      |
| 70. Բաղդասար Դաղլու         | 87. Սարգիս՝ որդի Գրիգորի       |
| 71. Գալուստ՝ որդի Ավետիսի   | 88. Դիլանչի Դաղլու             |
| 72. Հովսեփ՝ որդի Մկրտչի     | 89. Ամիր՝ որդի Հակոբի          |
| 73. Գրիգոր՝ որդի Օհանի      | 90. Մարգար՝ որդի Խաչիկի        |
| 74. Եղիազար՝ որդի Բաբաջանի  | 91. Սարուխան՝ որդի Ավագի       |
| 75. Մարտիրոս՝ որդի Մուրադի  | 92. Դուկաս՝ որդի Աբրահամի      |
| 76. Սողոմոն՝ որդի Դուկասի   | 93. Աբլազ՝ որդի Մնացականի      |
| 77. Եղիազար՝ որդի Մարտիրոսի | 94. Գրիգոր՝ որդի Մակարի        |

Մ ու Ք ե լ ի Թ ա Ղ Մ

- |                             |                              |
|-----------------------------|------------------------------|
| 1. Մուքել՝ որդի Առաքելի     | 27. Նանում՝ որդի Հարությունի |
| 2. Մուրադ՝ որդի Մուքելի     | 28. Սահակ՝ որդի Դանիելի      |
| 3. Սահակ՝ որդի Խաչումի      | 29. Ասատուր՝ որդի Դարուքի(*) |
| 4. Գրիգոր՝ որդի Խաչումի     | 30. Աբլազ՝ որդի Դիլանի       |
| 5. Ալեքսան՝ որդի Խաչումի    | 31. Սարգիս՝ որդի Աբսլանի     |
| 6. Ավետ՝ որդի Խաչումի       | 32. Թադևոս՝ որդի Աբսլանի     |
| 7. Մնացական՝ որդի Ավետի     | 33. Հակոբ՝ որդի Աբսլանի      |
| 8. Դուկաս՝ որդի Աղաջանի     | 34. Աղազադ՝ որդի Գալուստի    |
| 9. Գալուստ՝ որդի Աղաջանի    | 35. Նանում՝ որդի Գալուստի    |
| 10. Հովսեփ՝ որդի Աղաջանի    | 36. Ավետիս՝ որդի Մարգարի     |
| 11. Քեան՝ որդի Կարապետի     | 37. Մկրտում՝ որդի Փիլիպոսի   |
| 12. Աղամալ՝ որդի Կարապետի   | 38. Աբրահամ՝ որդի Միրզալի    |
| 13. Գալուստ՝ որդի Կարապետի  | 39. Վիրար՝ որդի Օհանի        |
| 14. Ալեքսան՝ որդի Մելքումի  | 40. Դավիթ՝ որդի Մկրտումի     |
| 15. Մկրտում՝ որդի Մելքումի  | 41. Վարդան՝ որդի Մկրտումի    |
| 16. Սարգիս՝ որդի Հովսեփի    | 42. Ավետիս՝ որդի Գրիգորի     |
| 17. Մարտիրոս՝ որդի Սարգսի   | 43. Հակոբ՝ որդի Գրիգորի      |
| 18. Հակոբ՝ որդի Խաչատուրի   | 44. Քուլիկ(*) որդի Սարգսի    |
| 19. Կարապետ՝ որդի Մովսեսի   | 45. . . . որդի Քուլիկի(*)    |
| 20. Հովհաննես՝ որդի Մովսեսի | 46. Ատիկ՝ որդի Թեոդիկի       |
| 21. Հալբապետ՝ որդի Հակոբի   | 47. Պետրոս՝ որդի Օհանի       |
| 22. Մակար՝ որդի Առաքելի     | 48. Թուլի(*) Դաղլու          |
| 23. Հարութ՝ որդի Մակարի     | 49. Հովհաննես՝ որդի Մակարի   |
| 24. Հովհաննես՝ որդի Աբլազի  | 50. Գալուստ՝ որդի Մուրադի    |
| 25. Խաչատուր՝ որդի Աբլազի   | 51. Հովհաննես՝ որդի Խեչումի  |
| 26. Սահակ՝ որդի Հարությունի | 52. Խեչում Դաղլու            |

- |                              |                             |
|------------------------------|-----------------------------|
| 53. Հարություն՝ որդի Մինասի  | 73. Հավասափ՝ որդի Ամիրի     |
| 54. Սարգիս՝ որդի Մինասի      | 74. Քեան Դաղլու             |
| 55. Կարգաշ(°)՝ որդի Մարկոսի  | 75. Հակոբ՝ որդի Չաքարեի     |
| 56. Մնացական՝ որդի Առաքելի   | 76. . . . . որդի Թովմաչի    |
| 57. Կոստանդ՝ որդի Խեչանի     | 77. Վարդերես (Ար)զրումցի    |
| 58. Խաչիկ՝ որդի Ատիկի        | 78. Հարություն՝ (Ար)զրումցի |
| 59. . . . . որդի Ալեքսանի    | 79. Ներսես՝ որդի Սարգսի     |
| 60. Ստեփան՝ որդի Խաչումի     | 80. Հարութ՝ որդի Մարտիրոսի  |
| 61. . . . . որդի Խաչատուրի   | 81. Հակոբ՝ որդի Ամիրի       |
| 62. Դյոնուս(°)՝ որդի Հովսեփի | 82. Մկրտում՝ որդի Չաքարեի   |
| 63. Դալուստ՝ որդի Հովսեփի    | 83. Դավիթ՝ որդի Դանիելի     |
| 64. Հավասափ՝ որդի Խաչատուրի  | 84. Ազիզ(°)՝ որդի Սահակի    |
| 65. Հարություն՝ որդի Խաչումի | 85. Սարգիս՝ որդի Պողոսի     |
| 66. . . . . որդի Ալվազի      | 86. Գրիգոր՝ որդի Կիրակոսի   |
| 67. Գրիգոր՝ որդի Մանվելի     | 87. Իսրայել՝ որդի Չաքարեի   |
| 68. Սահակ՝ որդի Թադեոսի      | 88. Ավագ՝ որդի Մկրտումի     |
| 69. Աֆթանդիլ՝ որդի Ալթունի   | 89. Իսրայել՝ որդի Մարգարեի  |
| 70. Թագվոր՝ որդի Կոստանդի    | 90. Աղաբեկ(°)՝ որդի Գրիգորի |
| 71. Օհան Արզրումցի           | 91. Մաղաքիա՝ որդի Գրիգորի   |
| 72. Վարդան՝ որդի Օհանի       | 92. Ավջի Նախչևանցի          |

Համազալի Թաղը

- |                              |                               |
|------------------------------|-------------------------------|
| 1. Համզա՝ որդի Բաղդասարի     | 24. Հարութ՝ որդի Բուզաղի      |
| 2. Գասպար՝ որդի Անդրի        | 25. Դյոնուս(°)՝ որդի Վարդևանի |
| 3. Պետրոս՝ որդի Գասպարի      | 26. Դալուստ՝ որդի Վարդևանի    |
| 4. Մելքոմ՝ որդի Գասպարի      | 27. Վարդևան՝ որդի Դալուստի    |
| 5. Հայրապետ՝ որդի Գասպարի    | 28. Մկրտիչ՝ որդի Դալուստի     |
| 6. Արսլան՝ որդի Մարգարեի     | 29. Դավիթ՝ որդի . . . . .     |
| 7. Սահակ՝ որդի Արսլանի       | 30. Ներսես՝ որդի Դավթի        |
| 8. Սարգիս՝ որդի Արսլանի      | 31. Բարսեղ՝ որդի Թորոսի       |
| 9. Ամիր՝ որդի Մկրտչի         | 32. Գլոզալ՝ որդի Թորոսի       |
| 10. Գրիգոր՝ որդի . . . . .   | 33. Ալեքսան՝ որդի Ստեփանի     |
| 11. Իսրայել՝ որդի Մարկոսի    | 34. Մարգարե՝ որդի Ստեփանի     |
| 12. Իսաշան՝ որդի Գաբրիելի    | 35. Մալխաս՝ որդի Զհանի        |
| 13. Հովհաննես՝ որդի Գաբրիելի | 36. Ասատուր՝ որդի Միրզալի     |
| 14. . . . . որդի Ուլուխանի   | 37. Վիրաբ՝ որդի Մարտիրոսի     |
| 15. Ծրանգուլ՝ որդի Ուլուխանի | 38. Եղիազար՝ որդի Ասատուրի    |
| 16. Պողոս՝ որդի Ուլուխանի    | 39. Հովհաննես՝ որդի Վարդանի   |
| 17. Սողոմոն՝ որդի Փիլիպոսի   | 40. Կիրակոս՝ որդի Վարդանի     |
| 18. Մկրտում՝ որդի Եղիալի     | 41. Հակոբ՝ որդի Զհանի         |
| 19. Մաթեոս՝ որդի Ներսեսի     | 42. Հայրապետ (որդի) Անդրի     |
| 20. Սարգիս՝ որդի Մաթեոսի     | 43. Մուքել՝ որդի Հայրապետի    |
| 21. Հարություն՝ որդի Սարգսի  | 44. Մկրտում՝ որդի Պետրոսի     |
| 22. Բուզաղ՝ որդի Ներսեսի     | 45. Սարգիս՝ որդի Պետրոսի      |
| 23. Աբրահամ՝ որդի Բուզաղի    | 46. Ասատուր՝ որդի Մկրտչի      |

47. Մուրադ՝ որդի Մկրտչի	70. Մուրադ՝ որդի Փիլիպոսի
48. Հակոբ՝ որդի Ասատուրի	71. Թադևոս՝ որդի Մուրադի
49. Ալեքսան՝ որդի Ներսեսի	72. Հովհաննես՝ որդի Գրիգորի
50. Հարություն՝ որդի Դավթի	73. Մնացական՝ որդի Հակոբջանի
51. Աղամ՝ որդի Առաքելի	74. Մինաս՝ որդի Փիլիպոսի
52. Այվազ՝ որդի Աղամի	75. Եղիազար՝ որդի Ավետիսի
53. Գրիգոր՝ որդի Առաքելի	76. Հակոբ՝ որդի Վարդանի
54. Պետրոս՝ որդի Հովհաննեսի	77. Ենգիրար՝ որդի Վարդանի
55. Գրիգոր՝ որդի Աղաջանի	78. Հովհաննես՝ որդի Ստեփանի
56. Ավազ՝ որդի Աղաջանի	79. Մկրտում՝ որդի Հովհաննեսի
57. Մաֆար՝ որդի Մնանիայի	80. Աղամալ՝ որդի Հովհաննեսի
58. Մովսես՝ որդի Մամվելի	81. Նահապետ՝ որդի Հարեթի
59. Դավիթ՝ որդի Անանիայի	82. Ավետիք՝ որդի Պետրոսի
60. Սահակ՝ որդի Մկրտչի	83. Հովհաննես՝ որդի Զաքարի
61. Հարություն՝ որդի Սահակի	84. Ռուստամ՝ որդի Զաքարի
62. Եղիազար՝ որդի Մուրադի	85. Աղաբեկ՝ որդի Թադևոսի
63. Մարկոս՝ որդի Հայրապետի	86. Սարգիս՝ որդի Ալեքսանի
64. Վարդան՝ որդի Գրիգորի	87. Մկրտում՝ որդի Օհանի
65. Գրիգոր՝ որդի Վարդանի	88. Հովհաննես՝ որդի Հարությունի
66. Էհթիրար՝ որդի Բարխուդարի	89. Հակոբ՝ որդի Մելքումի
67. Փիլում(՞)՝ որդի Մարտիրոսի	90. Աղամ՝ որդի Սարգսի
68. Ասատուր՝ որդի Հարությունի	91. Աղամալ՝ որդի Իսաջանի
69. Իսրայել՝ որդի Թազվորի	

Հ ա ս ու լ թ հ ն գ ո Ր Ղ Ի Կ

1. Իսփանջ—373 հոգուց <sup>1</sup> ,	9325
2. Տորեն—2300 քիլա, գինը՝	48300
3. Գարի—1150 քիլա, գինը՝	11500
4. Կորեկ—575 քիլա, գինը՝	5750
5. Կտավատ—50 քիլա, գինը՝	750
6. Բամբակ—50 ման, գինը՝	2000
7. Ալգինների կապալը (մուկաթիա)՝	7455
8. Բանջարանոցների տասանորդը (ուշր)՝	1650
9. Ոչխարների հարկը (ադաթ-ի ադնամ)՝	1035
10. Հիշյալ գյուղի ներկատուներ, տարեկան՝	600
11. Հարսնության հարկը (ասամ-ի արուս)՝	60
12. Դաշթրանի, հողի թափուի հետ միասին՝	960
13. Բաղհավա, հանցանք և ոճիր, [գտնված] ստրուկների և աղա- խինների աչքալուսանքի համար՝	1800
14. Ուշքիլիսա վանքի ձիթհանքը, տարեկան	
15. Երկու ջրաղացներ, որոնք գտնվում են հիշյալ գյուղի բնա- կիչներից հինգ հոգու ձեռքում—գործող, կես տարեկան՝	60

<sup>1</sup> Ռայսթների թիվը մեկ հողի պակաս է գրված: Չորս թաղերի ընդհանուր գու-  
մարը լինում է 374:

16. Մնացականի որդի Ջանիի մեկ ջրաղացը — գործող, կես տարեկան՝ 30
17. Երկու ջրաղացներ, որոնք գտնվում են հիշյալ գյուղի չորս բնակիչների ձեռքում — գործող, կես տարեկան՝ 60
18. Քեթևանի որդի Գասպարի և Լավասափի որդի Սարգսի՝ ընկերությամբ [օգտագործվող], երկու ջրաղացներ — գործող, կես տարեկան՝ 60
19. Երկու ջրաղացներ, որոնք գտնվում են հիշյալ գյուղի բնակիչներից հինգ հոգու ձեռքում — գործող, կես տարեկան՝ 60
20. Մեկքումի որդի Աղեքսանդրոսի երկու ջրաղացները — գործող, կես տարի՝ 60
21. Ուչքիլիսա վանքի 6 ջրաղացները — գործող
22. Ուչքիլիսա վանքի 2 ջրաղացները — ավեր
23. Ուչքիլիսա վանքի 1 դինդը — ավեր

Գումարը՝ 91515<sup>1</sup>

Որովհետև հիշյալ գյուղի առան հին ժամանակներից ի վեր շարաթվա մեջ մեկ օր և մեկ դիշեր հատկացված է եղել էջմիածնի վանքի Ուչքիլիսա անունով հայտնի եկեղեցու արտերին, այգիներին և խոտհարքներին, ուստի այսուհետև ևս նույն ձևով վարվելու մասին այստեղ նշվեց և բացատրվեց:

Էջմիածնի վանքը, որ հայտնի է Ուչքիլիսա անունով,  
Ուչքիլիսա գյուղում

1. Հիշյալ վանքի կարավանատունը, Ուչքիլիսա գյուղում,
2. Հիշյալ վանքի 2 ձիթհանքները, Ուչքիլիսա գյուղում,
3. Հիշյալ վանքի 29 արտերը, Ուչքիլիսա գյուղում,
4. Հիշյալ վանքի 2 խոտհարքները, Ուչքիլիսա գյուղում,
5. Հիշյալ վանքի 3 այգիները, Ուչքիլիսա գյուղում,
6. Հիշյալ վանքի 2 այգիները, բուն Երևանում,
7. Հիշյալ վանքի 3 այգիները, Կարբիին ենթակա Օշական գյուղում,
8. Հիշյալ վանքի 1 ավեր այգին, Կարբիին ենթակա Օշական գյուղում
9. Հիշյալ վանքի 2 այգիները, Կրբխրուլաղին ենթակա Շիրարաղ գյուղում,
10. Հիշյալ վանքի 1 արտը, Կրբխրուլաղին ենթակա Ղարաքիլիսա գյուղում,
11. Հիշյալ վանքի 6 ջրաղացները, գործող, Ուչքիլիսա գյուղում,
12. Հիշյալ վանքի 2 ավեր ջրաղացները, Ուչքիլիսա գյուղում,
13. Հիշյալ վանքի 1 ավեր դինդը, Ուչքիլիսա գյուղում,
14. Հիշյալ վանքի լիճը, Ուչքիլիսա գյուղում,
15. Հիշյալ վանքի 2 ջրաղացները, գործող, բուն Երևանում,
16. Հիշյալ վանքի 2 ջրաղացները, գործող, Կրբխրուլաղին ենթակա Քյալարա գյուղում,
17. Հիշյալ վանքի 1 դինդը, Կրբխրուլաղին ենթակա Քյալարա գյուղում:

Ջանգու գետից երեք ջրաղաց աշխատեցնող մի ջուր ևս, համաձայն իրենց ձեռքում գտնվող փաստաթղթերի, հնուց առաջ հիշյալ վանքի արտերը, խոտհարքներն ու այգիները ստացելու համար հոսել է դեպի հիշյալ վանքը, և

<sup>1</sup> Բնագրում գումարը սխալմամբ 100 աղջե պակաս է հանված:

այժմ թեև այլեր է, սակայն, որպեսզի նախկինում եղածի պես վարվեն, այստեղ նշվեց և բացատրվեց:

Վերոհիշյալ գյուղում գտնվող հիշյալ վանքի [անունով] վերը նշված և արձանագրված են.

Ուչքիլիսա գյուղում. — 1 կարավանատուն, 2 ձիթհանք, 29 արտ, 3 խտհարք, 3 այգի, 6 շեն և 2 այլեր ջրաղացներ, 1 այլեր դինգ, 1 լին և 600 ոչխար: Կարբիի նահիայի Օշական կոչվող գյուղի առվի ջուրը շարաթվա մեջ մեկ օր և մեկ գիշեր պետք է հոսի հիշյալ լճի մեջ և Ուչքիլիսա գյուղի առվի ջուրն էլ հնուց անտի շարաթվա մեջ մեկ օր և մեկ գիշեր հատկացված է վերոհիշյալ վանքի այգիներին, արտերին և խտհարքներին: Չանգու գետից երեք ջրաղաց աշխատեցնող ջրի, ներկայումս այլեր վիճակում գտնվող, առուն նույնպես, նախկինում ընդունված ձևով օգտագործվի:

Բուն Երևանում. — Երկու շեն ջրաղաց և երկու այգի:

Կըրխբուլաղի նահիայում. — Քյալարա կոչվող գյուղի սահմաններում՝ 2 շեն ջրաղաց և 2 շեն դինգ: Նույն նահիայի Ղարաքիլիսա կոչվող գյուղի սահմաններում՝ 1 արտ, նույնպես Կըրխբուլաղի նահիայում գտնվող Շիրաբաղ կոչվող գյուղի սահմաններում՝ 2 այգի:

Կարբիի նահիայում. — Օշական կոչվող գյուղի սահմաններում՝ 2 շեն և 1 այլեր այգիներ:

Ուչքիլիսա գյուղից ստացվող հացահատիկի ա՛շարի հնգորդի կեսը և այգիներից ստացվող գինու տասանորդը (ուշր), Կարբիի նահիայում գտնվող Օշական և Մաստարա կոչվող գյուղերից ստացվող հացահատիկի ա՛շարի հնգորդը և այգիների տասանորդը, Ապարանի նահիայում գտնվող Քիրաջու գյուղից ստացվող ա՛շարի հնգորդի կեսը, Կարբիի նահիայում գտնվող Ֆրանկանոց գյուղից ստացվող ա՛շարի հնգորդի հնգորդը հին ժամանակներից ի վեր, իրենց ձեռքում գտնվող արքայական հրովարտակով և ներկայումս էլ, արդեն հրապարակված բարձրագույն հրամանագրերի համաձայն, պետք է գանձվի հիշյալ վանքի կողմից, [ինչպես նաև] պետք է վերցվի ուշրն ու ուսամը:

Հիշյալ վանքում բնակվող կաթողիկոսն ու կրոնավորները, որոնք սևագլուխ անունով են հայտնի, ազատված են (մուաֆ և մուսալլամ են) շիզայից, իսլամից, բելթ-ուլ-մալից և այլ ընթացիկ (սովորութային) պարտավորություններից (թեքալիֆ-ի ուրֆիլլե): Բուն Երևանում և նրա շրջակայքում հիշյալ վանքին ենթակա վանքերում բնակվող կրոնավորները նույնպես, վերոհիշյալ կարգով, ազատված են հարկերից (մուաֆ են և մուսալլամ):

Ըստ վերոգրյալի, որովհետև նրանք իրենց ազատության թուղթը (մուաֆիաթնամե) ներկայացրել էին ներկայումս բարձրագույն հրամանատար և մեծարգո վեզիր Ահմադ փաշային, — թող ամենակարողն աստված հավիտյան դատձնի նրա փառքը, — և խնդրել էին որպեսզի հիշյալ նորին վսեմությունը [հաստատի], և որովհետև համաձայն նրանց ազատության թղթի, բացատրված և պարզաբանված ձևով, հիշյալ կաթողիկոսն ու կրոնավորները ամեն տարի Երջանկություն շեմքում (Կոնստանդնուպոլիս) 6800 աղջե բերաթի փեշքաշք արքունի գանձարանին հատուցելով, բոլոր պարտավորություններից ազատված լինելու մասին բարձրագույն հրովարտակ է հրապարակված, այստեղ նշվեց և բացատրվեց.

1. Հոփոսիմեի վանքը, Ուչքիլիսա գյուղում, ենթակա հիշյալ վանքին,
2. Շողակաթի վանքը, Ուչքիլիսա գյուղում, ենթակա հիշյալ վանքին,



3. Գալանեի վանքը, Ուչքիլիսա գյուղում, հնթական հիշյալ վանքին,  
 4. Անանիայի վանքը, Երևանի արվարձանում, հնթական հիշյալ վանքին,  
 5. Անապատի վանքը, Երևանի արվարձանում, հնթական հիշյալ վանքին:

Արքայական նոր ընդարձակ դաֆթարի գրանցման պատճենն այս է, որ հիշվեց:

Գրվեց հազար հարյուր երեսուն յոթ—1137 թվականի շա'բան-ուլ-մուա'դ-դամ ամսի կեսերին (1725 թ. ապրիլ 27—30):

Կնիք, որի վրա կա «Իբրահիմ» անունը:

### ՀԱՐԿԱՑՈՒՑԱԿԻ ԹՈՒՐԻԵՐԵՆ ԲՆԱԳԻՐԸ

— مهر —

اللّٰه حسبي توكلت على الله

لا حول و لا قوة الا بالله

عبدہ احمد. ۱۱۳۱

يارب توبفر یاد من بيكس رس      لطف و كرامت زمن بيكس بس  
 هر كس بكسى بحضورتى مينازد      جز تو حضرت ننازد اين بيكس كس

عرض اولندوغى اوزره طرف دولت عليه دن امر شريف عالیشان وارد  
 اولنجيه دك اشبو دفتر منطوقى اوزره عمل و خاص وجوده لرى تعرض ايلمبه لرديو  
 [امضاء]

ناحیه کربسی در لواء روان

قریه کلبیسا تسابع مزبور

محله بوغوص

اوادبك ولد تودبك	بوغوص ولد خاجه دور
چانی ولد میناسقان	اغمال ولد میناس
ایوز ولد اغوب	مالخاص ولد میناس
مالخاص ولد اغوب	اوغنه تان ولد ایسجان
مراد ولد کلمیش	میناسقان ولد کوزل
نهایت ولد اوانس	قره بیت ولد میرزاجان

ملك ولد توروس	ماقینوس (?) ولد سار کز
وارغان (?) ولد قره بیت	وارد کس (?) ولد سار کز
کبیر یاقوز داغلو	مکر دون ولد ادبک
کبیر یاقوز ولد کبیر کور	اوانس ولد کشیش
استفان ولد کبیر کور	اوانس ولد مکر دیچ
کون ولد کبیر کور	مکر دون ولد خاچوم
نرسس ولد صاروخان	کوزل ولد ایوض
صحاك ولد صاروخان	بقی یزار ولد اوادس
اسرایل ولد صحاك	کبیر کور ولد اوادس
دانیل ولد موسس	ادی بیک ولد کبیر کور
ویراب ولد مار کره	هاریتون ولد استفان
کون ولد ویراب	ارم یس (?) ولد استفان
سقومان ولد خاچان	بنکی بار ولد دوستبیک (?)
کوزل ولد اغوب	کوویک (?) ولد دوستبیک (?)
بنکی بار ولد المی بیک	اوسپ ولد بوغوص
قره بیت ولد المی بیک	بوغوص ولد ارتین
تیکفور ولد اریتون	ارتوان ولد ارتین
خوجک ولد بوسدک (?)	بنکی بار ولد ارتان
اغهمال ولد خوجک	مانوس ولد ارتان
نرسس ولد ووسکان	ایوض ولد جان اغا
یغیا ولد نخچوانی	جلال ولد ایوض
ماردرس ولد کبیر یاقوز	دنیل ولد ایوض
اریتون ولد مکر دیچ	ماغاکی ولد جان اغا
کالوس ولد کبیر یاقوز	سار کز ولد کورجی
اوانس ولد مکر دیچ	ایوض ولد سار کز
استفان ولد فلبوس	خاچوم ولد موسس
ماردرس ولد میرزا	اولوبیک ولد بدروس
اغهمال ولد بدروس	اواک ولد الوبیک
بدروس ولد کبیر کور	اوانس ولد خاچه دور
قوستاند ولد اغه بیک	خاچه دور ولد اوانس
نانوس ولد تیکنوس	ارسلان ولد توروس

کبر کور ولد صاروخان	خاچوم ولد صاروخان
اغوب ولد بارون	نانوم ولد وارتان
اوادیس ولد سارکنز	کیر کور ولد سارکنز
اوهانس ولد انانیا	ماردروس ولد سارکنز
یقی یزار ولد سارکنز	کیر کور ولد مارکره
اریتون ولد استوستور	مکر دوم ولد بوغوص
الکسان نخچوانی	تاتک ولد ملک لوند
کیر کور ولد الکسان	صحاک ولد نانوم
نوروس ولد اغوب	مکر دوم ولد نانوم
[ا] بکار ولد کون	استفان ولد اراکیل
اوانس ولد رستم	قره بیت ولد اریتون
	صاروخان ولد بایندر

معه ————— لئه کالوس

ارکیل ولد سارکنز	کالوس ولد یاغوب
بوداق ولد بابا	مکر دیچ ولد توروس
بدروس ولد بوداق	تادیك ولد توروس
کیر یاقوز ولد بوداق	سارکنز ولد لواصاب
نانلا ولد مراد	یغیا ولد لواصاب
کیر کور ولد نانلا	داوید ولد وارتان
میرزا ولد خاجه دور	مراد ولد نهابت
کیر کور ولد یاغوب	اندون ولد تاتوس
یاغوب ولد کیر کور	نانوم ولد کیر یاقوز
قوستاند ولد موکل	اوسپ ولد نانوم
یقی یزار ولد موکل	اوهانس ولد کیر یاقوز
اواصاب ولد کون	مارقوس ولد کیر کور
شپروان ولد کون	قره بیت ولد مراد
فلبوس ولد بدروس	اسرایل ولد مراد
یقی یزار ولد کیر [یا] قوز	سارکنز ولد مراد
اواک ولد کیر کور	فلبوس ولد مسروب
بوغوص ولد مراد	مکر دیچ ولد سارکنز

برخودار ولد ووسكان	ميناسقان ولد اواديك
کتوان ولد سار کز	خاچوم ولد اواديك
استفان ولد کالوس	اصوادور ولد سار کز
سو غومون ولد استفان	مکردوم ولد اراکيل
ماردرس ولد کالوس	اوانس ولد اولوبيك
بقده سار داغلو	ميناسقان ولد تاتوس
کالوس ولد اوادس	اغوب ولد ميناسقان
اوسپ ولد مکرديج	تاتوس ولد ميناسقان
کبر کور ولد اوهان	فلبوس ولد مراد
يقى يزار ولد باباجان	نرسس ولد فلبوس
ماردرس ولد مراد	مانوك ولد موسس
سو غومون ولد قو کز	اريتون ولد سار کز
يقى يزار ولد ماردرس	هاروت ولد وارثان
باب ولد اسکندر	اواکيم ولد دانل
اغوب ولد صاروم	هرهبيت ولد فلبوس
اوادوم ولد استوستور	بک نظر ولد داويد
کالوس ولد استوشنور	ابکار ولد داويد
امير ولد موسس	اغهمال ولد اغوب
اراکيل ولد بوداق	اواديك داغلو
اواديك ولد خاجه دور	کالوس ولد فلبوس
بدروس ولد کبر کور	ايسچان ولد نظر
مکردوم ولد اغابيك	اوانس ولد نظر
سار کز ولد کبر کور	فرهبيت ولد خاچک
ديلنچى داغلو	وارثان ولد اواديس
امير ولد ياغوب	کوزل ولد ووسكان
مارقار ولد خوجبک	سلتان ولد کوزل
صاروخان ولد اوک	کبر کور ولد زکرة
کوقز ولد ابراهام	سار کز ولد تاتوس
ايوض ولد ميناسقان	اصوادور ولد ياغوب
کبر کور ولد مفار	خاچوم ولد ووسكان

مجله موکل

سرگز ولد ارسلان	موکل ولد اراکیل
نیکفور ولد ارسلان	مراد ولد موکل
اغوب ولد ارسلان	صحاك ولد خاچوم
اغازاد ولد کالوس	کبر کور ولد خاچوم
نانوم ولد کالوس	الکسان ولد خاچوم
اوادیس ولد مارقار	اویت ولد خاچوم
مکردوم ولد فلبوس	میناسقان ولد اویت
ابراهام ولد میرزا	فوکز ولد اغاجان
ویراب ولد اوهان	کالوس ولد اغاجان
داوید ولد مکردوم	اوسپ ولد اغاجان
وارنان ولد مکردوم	کون ولد قره بیت
اوادس ولد کبر کور	اغامال ولد قره بیت
یاغوب ولد کبر کور	کالوس ولد قره بیت
کوویک ولد سارگز	الکساندری ولد ملکوم
سکوم ولد کوویک	مکردوم ولد ملکوم
ادیک ولد تودیک	سارگز ولد اوسپ
بدروس ولد اوهان	ماردرس ولد سارگز
تولی داغلو	یاغوب ولد خاچه دور
اوانس ولد مقار	قره بیت ولد موسس
کالوس ولد مراد	اوانس ولد موسس
اوانس ولد خبیچوم	هره بیت ولد یاغوب
خبیچوم داغلو	مقار ولد اراکیل
اریتون ولد میناس	هاروت ولد مقار
سارگز ولد میناس	اوانس ولد ایوض
قرتاش(?) ولد مارقوز	خاچه دور ولد ایوض
میناسقان ولد اراکیل	صحاك ولد اریتون
فوستاند ولد خبیجان	نانوم ولد اریتون
خاچک ولد ادیک	صحاك ولد دانیل
سکوم ولد الکسان	اصوادور ولد داروک(?)
استفان ولد خاچوم	ایوض ولد دیلان

արտրս [ար] արումի	հուս ւը քաղե դուր
արետոն [ար] արումի	դոնոմ (?) ւը արսոթ
նրսս ւը սարկո	կալոս ւը արսոթ
հարոտ ւը մարդրս	լուասոթ ւը քաղե դուր
յաղոթ ւը արմիր	արետոն ւը քաղոթ
մերդոմ ւը շոքրե	սեմոն ւը արոս
դաւիդ ւը ճանիլ	կիրկուր ւը մանուլ
աշիր (!) ւը սոքո	սոքո ւը ճոնոս
սարկո ւը թողոս	արենդիլ ւը ճոնոն
կիրկուր ւը կիրկոթ	ճեկփուր ւը փոստոնը
սրարիլ ւը շոքրե	արհոն արս րումի
արոկ ւը մերդոմ	արտոն ւը արհոն
սրարիլ ւը մարկո	լուասոթ ւը արմիր
արկոկ ւը կիրկուր	կոն ճոնլո
մոնոկոն ւը կիրկուր	ոնոթ ւը շոքրե
արոնոն	արկոմ ւը ճոմո

Մոնոն ————— ճոնոն

փրնկուլ ւը արլոնոն	ճոնոն ւը թեմե սար
թողոս ւը արլոնոն	կսիր ւը փոնոնը
սոնոմոն ւը փեթոս	ճիւրոս ւը կսիր
մերդոմ ւը թեմոն	մեկոմ ւը կսիր
մոնոս ւը նրսս	հրե թիտ ւը կսիր
սարկո ւը մոնոս	արսլոն ւը մարկո
արետոն ւը սարկո	սոքո ւը արսլոն
թոճոկ ւը նրսս	սարկո ւը արսլոն
արհոն ւը թոճոկ	արմիր ւը մերճի
հարոտ ւը թոճոկ	կիրկուր ւը ճիլի սոն
դոնոմ ւը արթիոն	սրարիլ ւը մարկոթ
կալոս ւը արթիոն	արսոն ւը կոթիլ
արթիոն ւը կալոս	արոնս ւը կոթիլ
մերճի ւը կալոս	մոնոմ ւը [ար] արլոն

صحاك ولد مكر ديج	داويد ولد . . . . .
اريتون ولد صحاك	نرسس ولد داويد
يقى يزار ولد مراد	بارسيخ ولد توروس
مارقوز ولد هرهبيت	كوزل ولد توروس
وارتان ولد كبير كور	الكسان ولد استفان
كبير كور ولد وارتان	ماركره ولد اوض
اعتبار ولد بر خودار	اغوب ولد جهان
پيلوم ولد ماردرس	مالخاص ولد جهان
اصوادور ولد اريتون	اصوادور ولد ميرزا
اسرايل ولد تيكفور	ويراب ولد ماردرس
مراد ولد فلبوس	يقى يزار ولد اصوادور
تاتوس ولد مراد	اوانس ولد وارتان
اوهانس ولد كبير كور	قبر [يا] كوز ولد وارتان
ميناسكان ولد اغوبجان	هرهبيت [ولد] قيواند
ميناس ولد فلبوس	موكل ولد هرهبيت
يقى يزار ولد اوادس	مكردوم ولد بدروس
باغوب ولد وارتان	ساركر ولد بدروس
ينكى بار ولد وارتان	اصوادور ولد مكر ديج
اوهانس ولد استفان	مراد ولد مكر ديج
مكردوم ولد اوهانس	اغوب ولد اصوادور
اغامال ولد اوهانس	الكسان ولد نرسس
نهابيت ولد ابيت	اريتون ولد داويد
اواديك ولد بدروس	اغام ولد اراكيل
اوانس ولد زكره	ايوض ولد اغام
رستم ولد زكره	كبير كور ولد اراكيل
اغابيك ولد تاتوس	بدروس ولد اوانس
ساركر ولد الكسان	كبير كور ولد اغاجان
مكردوم ولد اوهان	اواك ولد اغاجان
اوانس ولد هارونين	سفر ولد انانبا
اغوب ولد ملكوم	موسس ولد سانول
اغام ولد ساركر	داويد ولد انانبا
اغامال ولد ابسجان	

حاصل من الخمس

9325	.....	اسپنج - 373 نفرأ
38300	قیمت	حنطه - 2300 کبله
11500	قیمت	شعیر - 1150 کبله
5750	قیمت	ارزن - 575 کبله
750	قیمت	زکړک - 50 کبله
4000	قیمت	پنبه - 50 من
7455	.....	مقاطعة باغات
1650	.....	عشر بوستان
1035	.....	عادت اغنام
600	فی سنه	بویه خانه قریه مزبوره
60	.....	رسم عروس
960	.....	دشتبانی مع طیوی زمین
8100	.....	بادهوا و جرم جنایت و مزده کانه عبدابق و کنیزک
	فی سنه	بزیرخانه مناستر اوچ کلیسا - 2 باب
		اسیاب قریه مزبوره اهالیسندن بش نفر کمسنه متصرف - 2 باب،
60	رسم، نیمساله	
30	نیمساله	اسیاب جانی ولد میناسکان - 1 باب، رسم،
		اسیاب قریه مزبوره اهالیسندن درت نفر کمسنه متصرف - 2 باب،
60	رسم، نیمساله	
		اسیاب کسبار ولد کتوان سارکز ولد لواصاب بروجه اشترک - 2 باب،
60	رسم، نیمساله	
		اسیاب قریه مزبوره اهالیسندن بش نفر کمسنه متصرف - 2 باب،
60	رسم، نیمساله	
60	رسم، نیمساله	اسیاب اغیکساندرس ولد ملکوم - 2 باب،
	رسم،	اسیاب مناستر اوچ کلیسا - 6 باب،
	خراب،	اسیاب مناستر اوچ کلیسا - 2 باب،
	خراب،	دنک مناستر اوچ کلیسا - 1 باب،
91415	یکون	



قریه مزبورہ ارغینک هفته ده بر کون و بر کیچہ مناستر ایچ میازین  
 اوچ کلیسا دیملکہ معروف اولان کلیسانک قدیم الا [با] مدن برو ترلا و باغ و  
 یونجه لغینہ تقسیم اولنہ کلمکین ینہ قدیمیسی اوزره ایفا اولنوب بو محله قید  
 و شرح ویرلدی

مناستر ایچ میازین اوچ کلیسا دیملکہ معروفدر

در قریه اوچ کلیسا

- کربان سرای مناستر مزبور، در قریه اوچ کلیسا  
 بزیرخانه مناستر مزبور - ۲ باب، در قریه اوچ کلیسا  
 ترلا [ی] مناستر مزبور - ۲۹ قطعہ، در قریه اوچ کلیسا  
 یونجه لقی مناستر مزبور - ۳ قطعہ، در قریه اوچ کلیسا  
 باغ مناستر مزبور - ۳ قطعہ، در قریه اوچ کلیسا  
 باغ مناستر مزبور - ۲ قطعہ، در نفس روان  
 باغ مناستر مزبور - ۳ قطعہ، در قریه اوشه کان تابع کربی  
 باغ مناستر مزبور - ۱ قطعہ، خراب، در قریه اوشه کان تابع کربی  
 باغ مناستر مزبور - ۲ قطعہ، در قریه شیر اباد تابع فرق بولاغ  
 ترلا [ی] مناستر مزبور - ۱ قطعہ، در قریه فرا کنیسه تابع فرق بولاغ  
 اسباب مناستر مزبور - ۶ باب، رسم، در قریه اوچ کلیسا  
 اسباب مناستر مزبور - ۲ باب، خراب، در قریه اوچ کلیسا  
 دنک مناستر مزبور - ۱ باب، خراب، در قریه اوچ کلیسا  
 کول مناستر مزبور - در قریه اور کلیسا  
 اسباب مناستر مزبور - ۲ باب، رسم، در نفس روان  
 اسباب مناستر مزبور - ۲ باب، رسم، در قریه کله ره تابع فرق بولاغ  
 دنک مناستر مزبور - ۱ باب، در قریه کله ره تابع فرق بولاغ

زنکی چایبندن اوچ دکرمان دوندر بر صو دخی مناستر مزبورہ نک ترلا  
 و یونجه لقی و باغک صو وارمق اوزره اللرنده اولان سندا تتری موجینجه قدیمدن  
 برو مناستر مزبورہ طرفینہ جاری اولوب ایوم خراب اولدوغندن ینہ  
 قدیمیسی اوزره ایفا اولنوب بو محله قید و شرح ویرلدی



مناستر اورومسېم در قریه اوج کلیسا تابع مناستر مزبور  
 مناستر شوغهغات در قریه اوج کلیسا تابع مناستر مزبور  
 مناستر قایه یانه در قریه اوج کلیسا تابع مناستر مزبور  
 مناستر انانیه در واروش روان تابع مناستر مزبور  
 مناستر انابات در واروش روان تابع مناستر مزبور

صورت دفتر تحریر جدید مفصل سلطانی بود که نقل اولندی. تحریراً  
 فی اواسط شهر شعبان المعظم سنه سبع و ثلثین و مایه و الف ۱۱۳۷

— مهر —

کعبه استان شاه کریم باب دیار مقام ابراهیم

А. ПАПАЗЯН

ТУРЕЦКИЕ НАЛОГОВЫЕ РЕЕСТРЫ СЕЛА ВАГАРШАПАТ  
1725—1728 гг.

Резюме

От периода турецкой оккупации в 1724—1736 г. в диване католикоса Эчмиадзина сохранились четыре налоговых реестра села Вагаршапат (Учкилиса), которые ныне хранятся в архивных фондах Матенадарана. Эти налоговые реестры извлечены из пространной налоговой книги и содержат интересные данные относительно видов и размеров налогов, взимавшихся с населения.

Из налоговых реестров выясняется, что в период турецкой оккупации дважды была произведена всеобщая перепись: первая—1725 г., вторая—1728 г. Сравнения данных прилагаемого к статье налогового реестра 1725 г. с налоговым реестром 1728 г. показывает, что непосредственно после завоевания оккупационные власти вели сравнительно мягкую политику. Согласно этим реестрам, общая сумма взимавшихся с села налогов 1725 г. составляла 91515 акче. Однако во время последовавшей спустя три года новой переписи эта сумма поднялась до 211322 акче.

В статье показано, что такой колоссальный рост как видов налогов, так и их суммы явился не столько следствием повышения цен на продукты и другие сельскохозяйственные товары, сколько был результатом совершенно нового курса налоговой политики оккупационных властей.

Прилагая к статье турецкий текст и армянский перевод налогового реестра 1725 г., мы полагаем, что он, вместе с приводимой в статье основной частью налогового реестра 1728 г., может принести пользу и, в качестве нового первоисточника, послужить основанием для более широкого исследования.



Handwritten text at the top right, possibly a title or header, written in a cursive script.

Main body of handwritten text on the right page, consisting of approximately 20 lines of dense cursive script.

Main body of handwritten text on the left page, consisting of approximately 20 lines of dense cursive script.

Small handwritten notes or marginalia at the top left of the page.

Large block of handwritten text in the lower-left quadrant, possibly a separate section or a detailed note.

Small handwritten notes or signatures at the bottom left of the page.

Օ. ԵԳԱՆՅԱՆ

ՆԱՀԱՊԵՏ ՔՈՒԶԱԿԻ ՀԱՅԱՏԱՌ ԹՈՒՐՔԵՐԵՆ ՏԱՂԵՐԸ

Սկսած 1882 թվականից, երբ բանասեր Արիստակես Տեկանցը թիֆլիսում լույս ընծայած իր «Հայերդ» աշխատության մեջ, առանց սրևէ հիմքի հայրենիները վերագրեց Նահապետ Քուչակին, տասնվեցերորդ դարի այդ համեստ երգիչը մինչև այսօր էլ հանդես է գալիս որպես միջնադարյան հայրենիների հեղինակ:

Ինչպես նախատվետական, այնպես և սովետական հայ բանասիրության մեջ հայրենիները Քուչակին վերագրելու այդ միտումը միշտ էլ երկբայություն է առաջացրել և հայրենիներով զբաղվող գրեթե բոլոր բանասերները, Կարապետ Կոստանյանից մինչև Մանուկ Աբեղյան, այս ու այն կերպ ընդունել են, որ հայրենիների գողտրիկ շարքերի հեղինակը Նահապետ Քուչակը չէ, թեև, ինչպես առանձին հրատարակություններում, այնպես և դպրոցական ձեռնարկներում դրանք միշտ դրվել են Նահապետ Քուչակի անվան տակ:

Երբ 1931 թվականին միջնադարյան հայ ժողովրդական պոեզիայի խոշորագույն գիտակ Մանուկ Աբեղյանը իր ծանրակշիռ խոսքն ասաց հայրենիների մասին, թվում էր թե հարցը վերջնականորեն լուծված է: Սակայն, դրանից հետո էլ որոշ բանասերներ նորից սկսեցին շարունակել հին տրադիցիան, իսկ 1957 թվականին լույս տեսավ Ավետիք Աուկասյանի կազմած «Նահապետ Քուչակ» հայրենիների ժողովածուն, որտեղ կազմողը անվերապահորեն Նահապետ Քուչակին վերագրեց ոչ միայն անհեղինակ հայրենիները, այլ նաև այնպիսի հայրենիներ, որոնք պատկանում են 12—14-րդ դարերի որոշակի հեղինակների, կամ առնվազն մեկ են հասել այդ հեղինակների անուններով: Դա էլ իր հերթին առիթ հանդիսացավ, որպեսզի նորից բանասիրական միտքը զբաղվի հայրենիների և նրանց պատկանելության հարցով:

Հայկական ՍՍՏ Գիտությունների ակադեմիայի «Պատմա-բանասիրական հանդես»-ի 1958 թվականի № 2-ում բանասեր Ասատուր Մնացականյանը հանդես եկավ «Հայրենիների և Նահապետ Քուչակի մասին» հոդվածով, որտեղ հոդվածագիրը առավել համոզականությամբ և ձեռագրերում պահպանվող կոնկրետ նյութերի հիման վրա մի անգամ ևս ապացուցեց, որ հայրենիները Քուչակին վերագրելը զուրկ է գիտական սրևէ հիմքից:

Չնայած դրան, այնուամենայնիվ հարցը դեռևս վերջնականապես լուծված չէ: Բանասիրության առջև ծառայած է մնում հայրենիների լրիվ շարքերի գիտական հրատարակությունը, նրանց հետ կապված զանազան հարցերի մանրակրկիտ ուսումնասիրությունը, ինչպես նաև Նահապետ Քուչակի անվամբ պահպանված երկերի քննությունը:

Ինչպես հայտնի է, Քուչակին վերագրվող հայրենիների շարքերից և ոչ մե-

կը, ոչ ուղղակի և ոչ կողմնակի կերպով, Քուչակի անունը չի կրում, միևնույն ձևազրեքում պահպանվել են կրոնա-բարոյախոսական բովանդակությամբ հայերեն և հայատառ թուրքերեն ոչ մեծ թվով տաղեր, որոնք կրում են Քուչակի անունը:

Անշուշտ, բանասերներին և առաջին հերթին հենց Արիստակես Տեկանցին այդ բանը անհայտ չի եղել: Սակայն, որոշ բանասերներ, ինչպես անհիմն կերպով հայրենները վերագրել են Նահապետ Քուչակին, այնպես էլ անհիմն կերպով Քուչակի անունը կրող այդ տաղերը միշտ դուրս են թողել նրա անունով հրատարակվող ժողովածուներից:

Իհարկե, այդ բանը կատարվել է ոչ բոլորովին պատահական կերպով: Նկատելով, որ բուն քուչակյան ստեղծագործությունները, թե իրենց տաղաչափությամբ, թե լեզվով և թե բովանդակությամբ միանգամայն տարբերվում են հայրեններից և շնչ կարող միևնույն հեղինակի ստեղծագործություն համարվել, միևնույն ժամանակ բացարձակ միտում ունենալով Նահապետ Քուչակին հայտարարել հայրենների անվերապահ հեղինակ, անհրաժեշտ է եղել այդ հակասությունը մի կերպ հարթելու համար հրատարակվող ժողովածուներից դուրս թողնել դրանք, իսկ ոմանք էլ այն կարծիքն են հայտնել, թե այդ տաղերը պատկանում են Նահապետի թոռանը:

Սակայն ոչ մի լուրջ հիմք չկա «Վանեցի աշրղ Քուչակ» անվան տակ տեսնելու ոչ թե Նահապետ Քուչակին, այլ նրա թոռանը կամ մեկ ուրիշին և զրբկելու հեղինակին իր իսկ անվամբ մեզ հասած ստեղծագործություններից:

Ինչ 1940 թվականին Մ. Աբեղյանը այդ մասին գրել է. «Քուչակը, իմ իմացածով, մեր ամենահին երգիչն է, որ «աշուղ» մականուն ունի: Ժամանակ է, կարծում եմ, առանձին գրքով տպագրելու այս հին աշղի երգերն» (Գուսանական ժողովրդական տաղեր, 1940, էջ 5):

Անտարակուսելի է, որ այդ տաղերի ի մի բերումն ու ուսումնասիրումը մի կարևոր առաջընթաց քայլ կլինի քուչակյան հարցի վերջնական լուծման ճանապարհին: Այդ իսկ նպատակով, ստորև տալիս ենք ձևազրեքում պահպանվող նրա հայատառ թուրքերեն տաղերը, վերջիններիս հայերեն թարգմանության հետ միասին, հետադաշին թողնելով դրանց ուսումնասիրումն ու արժեքավորումը:

Քուչակի անունով ձևազրեքում պահպանվող մեզ հայտնի տաղերը թվով 9 հատ են, որոնցից երկուսը՝ հայերեն, իսկ յոթը՝ հայատառ թուրքերեն: Հայերեն տաղերից առաջինը՝ «Գովասանութիւն... սուրբ Կարապետին...» պահվում է Մատենադարանի № № 7707, 3422, իսկ երկրորդը՝ «Գովասանք Աստուածածնի...»՝ № № 1536, 2079, 2566, 7717 և Վիեննայի Մխիթարյան Մատենադարանի № 176 ձևազրեքում: Առաջին տաղը, որքան մեզ հայտնի է, անտիպ է, իսկ երկրորդը երկու տարբեր հրատարակություն է ունեցել:

Հայատառ թուրքերեն մեզ հայտնի ու ստորև հրատարակվող յոթ տաղերից չորսը գտնվում են Մատենադարանի № № 8741, 7715, 9686 և 7707 ձևազրեքում, մեկը՝ Վրաստանի Պետ. թանգարանի հայերեն ֆոնդի № 188 ձևազրեքում<sup>2</sup>, իսկ երկուսը՝ Մոսկվայի Գեորգիա-ճորտատիրական ժամանակա-

<sup>1</sup> Լումա, 1905, Անահիտ, 1907:

<sup>2</sup> Ս. Լալաֆարյան, «Տուցակ հայերեն ձևազրեք վրաստանի Պետական թանգարանի», 1955, անտիպ:

չրջանի Պետական արխիվում պահվող Նդիա Մուշեղյանի դործում<sup>1</sup>։ Հայտնա  
 Թուրքերեն այս 7 տաղերը անտիպ են և առաջին անգամն են հրատարակվում։

Թուրքերեն տաղերի բնագրերի հետ միասին տալիս ենք նաև մեր կողմից  
 կատարված հայերեն թարգմանությունները։ Թարգմանությունների կապակ-  
 ցությամբ անհրաժեշտ ենք համարում նշել, որ ոչ միշտ ենք կարողացել հա-  
 րազատ մնալ բնագրի շափին, իսկ այն աղավաղված կամ անհասկանալի բա-  
 րերը, որոնք չենք կարողացել վերծանել, թարգմանել ենք՝ ելնելով տաղի ընդ-  
 հանուր մտքից, տողատակում նշելով բնագրի նկատմամբ կատարած շեղում-  
 ները։

1

(ԽԷՐԽ ԱՅԱՂԻ ՎԱՐ)

Բիլբուլ քամալի սան՝ սօզն մանասի,  
 Սօզն մանասնայ խէրխ այաղի վար,  
 Քօյնգըլմ շըհարտը՝ իւզ մին թահարտը,  
 0 նէջայ շըհարտը՝ խէրխ այաղի վար։

5 0 նէջայ շըհարտը՝ խէրխ հասաս գայլար,  
 Խէրխ հասասն ջարբի բիր հասաս դուշար,  
 Բիր տըվիդ, խէրխ խալամ, բիր մոլայ խաշար,  
 0 նէջայ մոլայտը՝ խէրխ այաղի վար։

10 Վանլի Քուչաք տէյիր՝ բու քուչայտը, (քուչայ),  
 Բու քուչայ սայխասան գօրսան նէշատը, նէշայ,  
 Իստար խէրխ աշըխ գայլայ, բու սօզի աշայ,  
 Սօզն մանասնայ խէրխ այաղի վար։

<sup>1</sup> Ձեռ. № 3741, թերթ 12ա, 19-րդ դ․

<sup>2</sup> բնագրում՝ բաշարտը։

Թարգմանություն

(ՔԱՌՍՈՒՆ ՈՏՔ ՈՒՆԻ)

Բիլբուլ է կատարյալ խոսքի իմաստը,  
 Խոսքի (այս) իմաստը քառսուն ոտք ունի,  
 Իմ սիրտը քաղաք է, հաղար տեսակ է,  
 Ինչպիսի քաղաք է՝ քառսուն ոտք ունի։

5 Ինչպիսի քաղաք է, քառսուն պահակ կա,  
 Քառսունի հոգսերին մեկն է ենթակա,  
 Թանաքաման, քառսուն ծայր, մի փախշող մոլլա,  
 Ինչպիսի մոլլա է՝ քառսուն ոտք ունի։

<sup>1</sup> Տաղերը մեզ տրամադրել է Ռ. Աբրահամյանը, որին հայտնում ենք մեր շնորհակալու-  
 թյունը։

- Քուչակն ասում է՝ փողոց է սա մի,  
 10 Հաշվիր այս փողոցը, տես քանի կանի,  
 Քող քառսուն աշուղ դա այս խոսքը բացի,  
 Խոսքի այս իմաստը քառսուն ոտք ունի:

Քննարում

1. Բլրուլի պես կատարյալ ես խոսքի իմաստը 2. հարյուրհազար: 4. Այն ինչպիսի: 5. Պի-  
 շերապահ է շրջում: 6. Քառսուն գիշերապահների նեղությանը մի գիշերապահ է ենթակա: 7. Քա-  
 նարաման, գրիշ: 8. Վանեցի Քուչակն ասում է սա փողոց է, փողոց: 10. Այս՝ փողոցը հաշվն  
 կտեսնես քանի է, քանի: 11. թեկուզ փխ. թող:

2

ՄԱՆԻՆԵՐ Է

- Քէշիշ տէր՝ յեարայ նայ տուր,  
 Նամաղ յեարայ նայ տուր.  
 Քամ քալամ ճան օլտուրուր,  
 Վուրուլան յեարայ նեա տուր:
- 5 Քէշիշ տէր՝ յերբատան տուր,  
 Խալխ էտան յարատան տուր,  
 Քամ սօղտան ատամ օլտի,  
 Տէմանղքի յեարատան տուր:
- 10 Քէշիշ տէր՝ յեարասինայ,  
 Կուն կեալայ յառասինայ,  
 Տօշանմաղ մալճամ օլտուր,  
 Քամ սօղն յեարասնայ:
- 15 Աշուխ տէր՝ ալշախ յէրի,  
 Սու սավար ալշախ յէրի,  
 Հախ ճէմալն սու կօրտի՝  
 Սան սուտան ալշախ յէրի:
- 20 Քօշակ կեօրտի պիր թանթուր,  
 Տօրթ փատիշահ՝ պիր թանտուր,  
 Պիր նան իքի քէյվանի,  
 Ուշ քուլվա տուր, պիր թանտուր:
- Մանրնրն մանասն պիլ,  
 Կեալ պունրն էյասն պիլ,  
 Իքի դազան, տօրթ դափաղ,  
 Կեալ պունուն մանասն պիլ:



## Թարգմանություն

## ՄԱՆԻՆԵՐ է

Երեցն ասաց՝ վերբն ինչ է որ,  
Աղտթբբ վերբին ինչ է որ,  
Վատ խոսքը կյանք կսպանի,  
Խփված վերբբ ինչ է որ:

5 Երեցն ասաց՝ տերն է,  
Սահղծողը՝ տերն է,  
Վատ խոսքը մարդ կսպանի,  
Մի ասեք, թե տերն է:

10 Երեցն ասաց՝ այս վերբին,  
Արնն առավ երկնքին,  
Սպեղանին չի օգնի  
Ստոր խոսքի (այս) վերբին:

15 Աշուղն ասաց՝ ցած գնա,  
Ջրի նման՝ ցած գնա,  
Արդար դեմքիդ ջուր դիպավ,  
Դու ջրից էլ ցած գնա:

20 Քուչակ, տեսար մի թոնիր,  
Չորս թագավոր, մի թոնիր,  
Մի հաց, երկու տանտիկին,  
Երեք տնակ, մի թոնիր:

Խոսքի միտքը հասկացիր,  
Արա ձիրբբ հասկացիր,  
Նրկու կախա (ու) շորս խուսի,  
Արի միտքը հասկացիր:

## Բնագրում

5 Ստոր փխ. վատ: 7. Արարիչն է: 9. Արարիչն է: 7. Ստոր փխ. վատ: 8. նան՝ վերբից է փխ. տերն է: 10. Արնք գա միջօրեին: 11. Քուժիչ սպեղանին: 12. հանելուկի փխ. խոսքի: 22. Եկ սրա փխ. սրա, նմանք փխ. ձիրբբ: 24. Արի սրա փխ. արի:

## (ՀԷՐ ՍԱԲԱՀ)

Հէր սարահ, հէր սապահ պիւլպիւլին սասի,  
Պիւլպիւ գիւլ արղըլար, բօշար սարահտան,  
Չօք շուբուր քի պիւլպիւլ երիշտի կիւլայ,  
Ղօ(ն) շալարդա բօյնին ալեար սարահտան:

- 5 Չօխ շուքուր մէլամայ՝ երըշտըխ հազայ,  
Գուտիլար, դումրիլար մայիլտըր սազայ,  
Հէրքիմ սէթխի պութուն տուրայ նամազայ,  
Ջաննաթ լիպասինի կհար սապահտան:
- 10 Ճաննաթ բաղջասինտայ պէզանդի կիւ (լ) լար,  
Հախ նասիպ էյլասին դարիւր պիւլպիւլայ,  
Գիլակ դիլարսան՝ վար հախդան դիլայ,  
Հար դուլ զըսմաթինի դիլար սապահտան:
- 15 Ճաննաթ դափըսինի բիր կիւն աշըլըր,  
Հախկըն նուրի դիտարինան սէշըլըր,  
Հար դուլայ բօյինջայ դիպայ պըշըլըր,  
Ղսմաթ օլան՝ օնի կիար սապահտան:
- 20 Երի, ինսան օղլի, նա էթսըն՝ էտարսան,  
Հիւրեան կհալըպ, ախրին հիւրեան կէտարսան,  
Բու ֆանի դունհազայ մալի նէյնարսան,  
Բիրին դօնար, բիրին քօշար սապահտան:
- Հախ թալայ հարաթ(տ)ի կէտայի, բայի,  
Ինսանդըր աթասի, թօրփափտը ուլի,  
Եար(ա)թ(տ)ի պէշայի, ըլտղի, ալի,  
Օնլար քաթար՝ գիւն աշըլ(ա)ր սապահտան:
- 25 վանլի Ղօլ-Քեօշակ տ(ի)ր՝ շաղրսամ հիւրի,  
Գօյքի սօրայ կանար, թափար ինչ նուրի,  
Ման ուստամտան ալտմ հախ քեալամընի,  
Հար դուլ զսմաթինի տիլար սապահտան:

Չնազիր, № 9686, ք. 17բ—18ա, 1834 թ.:

Ինազրում՝

4 Ղոշալարդան:

## Թարգմանություն

(ԱՌԱՎՈՏ ԾԵԳԻՆ)

Ամենայն առավոտ բլբուլն է երգում,  
Տենչում է իր վարդին առավոտ ծեգին,  
Հասել է բլբուլը վարդին (իր սիրած),  
Ծաղկունքն են ողջունում առավոտ ծեգին:

- 5 Փառք (իրեն)՝ արարչին, հասանք դարունքի,  
Հավքերը տվել են անուշ ձեն-ձենի,  
Ով որ մաքուր սրտով կանգնի աղոթքի,  
Կազատվի մեղքերից առավոտ ծեգին:

10 Զուգվել են վարդերը դրախտի միջին,  
Տեր, արժան համարիր դարիր բլբուլին,  
Քե բախտ ես դու հայցում, դիմիր արարչին,  
Ամեն դուլ հայցում է առավոտ ծեղին:

15 Դրախտի դարպասը մի օր կբացվի,  
Արարչի լույս աչքով (ողջը) կջոկվի,  
Բոլորի հասակով դիպակ կձևվի,  
Ամեն ոք կհազնի առավոտ ծեղին:

20 Գնա՛, մարդու որդի՛, ինչ անի՛ կանես,  
Մերկ ես եկել, վերջում մերկ (էլ) կմեկնես,  
Այս ունայն աշխարհում գանձն ինչ կանես,  
Գալիս են ու զնում առավոտ ծեղին:

Աստրված ստեղծեց աղքատ ու իշխան,  
Մարդըն է ծնողը, հողը՝ օթևան,  
Կանցնի գիշերը, աստղեր, լուսնկան,  
Լույսը կբացվի առավոտ ծեղին:

25 վանեցի Դուլ-Քուչակ (վառ) արև կանչիր,  
Այրվես թեկուզ դու, ջինջ լույսի ձգտիր,  
Աստծու սուրբ խոսքերը վարպետից ուսիր,  
Ամեն դուլ հայցում է առավոտ ծեղին:

Բնագրում՝

2. Բլբուլը վարդ է տենչում, շվում: 3. Բազում փառք, որ բլբուլը հասել է վարդին: 4. Կո-  
կոններն էլ վզներն են ծաում: 5. Բազում փառք: 6. Թուֆակները, տատրակները հակված են սաղի:  
7. Անկեղծորեն փխ. մաքուր սրտով: 8. Արքայութեան զգեստը կհազնի: 9. Դրախտի պարտեզում:  
11. Ամենակարող արարչից հայցիր: 12. Իր բախտն է հայցում: 15. Ամեն ստրուկի փխ. բոլորի:  
16. Բաժին ունեցողը այն փխ. ամեն դուլ:

20. Մեկին բերում է, մեկին տանում: 22. Բնագրի «ույ՛» բառը թարգմանել ենք «օթևան»՝  
«էվ» տունի-ից բխեցնելով: 23. Ստեղծեց փխ. կանցնի: 24. Նրանք կմարեն, օրը փխ. լույսը:  
25. Ասում է կանչեմ արև: 26. Թող թե հետս կայրվի, կգտնի ջինջ: 27. Ես վարպետիցս առա տիրոջ  
խոսքերը: 28. Բախտ է հայցում փխ. հայցում է:

#### 4

(ՆԷ ԿԱԻԶԱԼ ԱԻԼՄԻՇ)

Քու(լ)ի պունիաթ՝ գիրիլան դասպար,  
Զամին ու զաման նէ կաւզալ աւլմիշ.  
Մաւշրուխ ու մաղրուպ, դպլ ու շմալ,  
Խարիլան աւման նէ կաւզալ աւլմիշ:

5 Իպլիս աճայիփ տարտայ տուշուրմիշ,  
Սաւրղսի սաւրմամիշ վարտայ տուշուրմիշ,

Պիրի պիրինտան փարտայ տուշուրմիշ,  
փէտի աշսիման նէ կաւզալ աւլմիշ:

10 Ենի ահտար աւղիտուր՝ իշինայ տայիմ,  
Երլար ու կաւկլար ասըլմիշ դայիմ,  
Ատլինան մաւլայ վէր տաւտ մուլայիմ,  
Հուրիայ դլման նէ կաւզալ աւլմիշ:

15 Չարիսի մազալախ՝ գումպէթ ու տաւլար,  
Հուրմինտան վարման՝ քուլլի հար նա վար,  
Քավարիբլար մին դուշուտ ու դաւար,  
Մահիլայն թասպան նէ կաւզալ աւլմիշ:

20 Հաշտիլայ պէհարտայ, ատլիայ մաւայ,  
Ունլարտու մաւմին, տարտինայ տաւայ,  
Ճանաթտայ ատամ ատամայ հաւայ,  
Քալպիսայ իլան նէ կաւզալ աւլմիշ:

Եարատան աւմատի իպլիսայ եարի,  
Աւնուն իշուն էթտի աւնի սարսարի,  
Պաւնինայ կաշուրտի թուղուն աշարի,  
Ճիհանամայ շէյթան նէ կաւզալ աւլմիշ:

25 Ախրուզ՝ պիրլի կուզ, հուճութուզ՝ ճանուզ,  
Տաֆտարայ կաշմիուզ՝ դարիսարուզ հանուզ,  
Մուսայեայ իման նէ կաւզալ աւլմիշ:

30 Պու էշխտուր՝ էտար կաւնկուլի մապուր,  
Ամալի խաւշ աւլան՝ էկլայազ դապուր,  
Այուպայ տահի պայալ ու սապուր,  
Նոյիլան թլան նէ կաւզալ աւլմիշ:

35 Ղայաթտանկ ուճիւլուր իխլաս պասամախ,  
Ճաֆալար շարմախ, սինայ թախ էթմախ,  
Եաղուպ տատայայ զարպար աղլանմախ,  
Իւուֆայ զնտան նէ կաւզալ աւլմիշ:

40 Պիր աւուր տիւլան, պիր աւուր դատի,  
Ահլի հունարտայ սաւլլանուր ատի,  
Հախ էլմ իշինտայ խալիֆամ տէտի՝  
Տաւուտայ արբայն նէ կաւզալ աւլմիշ:

Քիշմիրի Քապուլտան կաշտի պիր քաֆան,  
Մաթահի դիյմաթլու, հուրմի ըոսլան,  
Խալիլ Իբրայհիմայ խաւնիլան մէհման,  
Իսմայիլայ դուրպան նէ կաւզալ աւլմիշ:

45 Իրրահիմ խալիլայ աւղուլ ու տավուլ,  
Փատիշահ պոչուրտի սաւնտիայ Սավուլ,  
Համզայ ամիրտուր, ուռուսուլայ դավուլ,  
Ալիայ Սալման նէ կաւզալ աւլմիշ:

էյ տիլ, նէշայ պիր էտարսին նալայ,  
40 Կուհարին պիլուր անտան վէր էլայ,  
Պիզտան սաւնդրայ շախ արըֆլար կալայ,  
Տէալար պու տաստան նէ կաւզալ աւլմիշ:

էշխուն շահնուր՝ կազար սավտայայ,  
էշխուն կէտարսայ, նէ դալուր էվտայ,  
55 Փահլուլայ քուլխան, Մաճլունայ սավտայ,  
Քախտայ Սուլէյման նէ կաւզալ աւլմիշ:

Կանկուլ նէշէ պիր շաքարսին մալալ,  
Պիր լախմայ դադան՝ կիլ էտուր հալալ,  
Ղալամայ ճիպրայիլ, աղանայ պուլալ,  
60 Եագուայ շապան նէ կաւզալ աւլմիշ:

Քայիպլար տայիմ ճան վէրուր փիրինայ,  
էրիշմաղ իշուն հախուն ախնայ,  
Քաւլը իթուպ դապուր պիրի պիրինայ,  
Ինճիլ ու ֆիրդան նէ կաւզալ աւլմիշ:

65 Շէհտան ատամայ պիշտի պիր ամայ,  
Հավայիլ ատամի պրախտի դամայ,  
Չնտանի փաւզան իպնի Մայրամայ,  
Քաւիիլան շական նէ կաւզալ (աւլմիշ):

Տաւնմաղայ տուրուր պու շարխի ֆալաք,  
70 Քիմիսին շէն էտար, քիմիսին հալաք,  
.....  
Մախլուխայ սիան նէ կաւզալ (աւլմիշ):

Նայ տէտի ալան, նէ տէտի կալան,  
Ալահ տէտուկիլան թուճրութ ալկիլան.  
75 Ղու-Քաւշաք տէր տունիամ այվալիլան,  
Ախլու տիվան նէ կաւզալ աւլմիշ:

Զեռագիր №7707, ք. 310ք—313ք, 1611 ք.

Բնագրում՝

<sup>1</sup> գէրիլան զամայր: <sup>2</sup>, <sup>12</sup>, <sup>44</sup>, <sup>55</sup>, <sup>60</sup> ուլմիշ: <sup>3</sup> դպշ: <sup>4</sup> ոման: <sup>5</sup> սաւրդասուսի: <sup>10</sup> իրլար:  
<sup>14</sup> քուլն: <sup>15</sup> քաֆրաֆրար: <sup>22</sup> էթի: <sup>25</sup> հուճութուլ: <sup>26</sup> կաշմիլուլ: <sup>38</sup> հունու, սայլանուր: <sup>42</sup> քա  
ֆան: <sup>52</sup> պաւսասան, ուլմիշ: <sup>58</sup> էտուր կիլ: <sup>65</sup> ամայն: <sup>66</sup> դամայն: <sup>70</sup> էտար: <sup>74</sup> ալան:  
Բնագրում՝



- 35 Հակոբ ծերունուն ոսկերեւ ճամբել,  
Հովսեփը բանտում ինչ գեղեցիկ է:
- Մեկ դատաստան է և մեկ դատավոր,  
Գիտունների մեջ անուն փառավոր,  
Ասաց խորիմաստ վարպետս (ալևոր).  
40 Դավթի օրենքը ինչ գեղեցիկ է:
- Քարուլի քիչմիրից մնաց մի պատան,  
Գործը թանկարժեք և խիստ պետքական,  
Հայր Աբրահամին հյուր, (առատ) սեղան,  
Իսահակի զոհը ինչ գեղեցիկ է:
- 45 Որդի ու ժառանգ հայր Աբրահամին,  
Արքան վերջ տվեց Սավուղի կյանքին,  
Համզան ամիր է սուրհանդակ վերին,  
Ալու Սալմանը ինչ գեղեցիկ է:
- Բավ է, ով իմ սիրտ, տխրես դու այդքան,  
50 Շաղ տուր գանձերդ առանց վարանման,  
Մեղանից հետո շատերը կզան,  
— Հեքիաթն այս, կասեն, ինչ գեղեցիկ է:
- Սերը բազե է՝ ձգտում է որսի,  
էլ ինչ կմնա, թե սերը հանգչի,  
55 Փահլուլը մոխրում, Մեշնունը գերի,  
Սողոմոն արքան ինչ գեղեցիկ է:
- Մի եղիր, սիրտ իմ, այդպես վշտահար,  
Սիրով վայելիր վաստակդ արդար,  
Գիր գարրիելական, աղոթք կենարար,  
60 Հեսու հովիվը ինչ գեղեցիկ է:
- Արդարները հար դիմում են սրբին,  
Հասնելու համար արարչի գահին,  
Ճամփա են բացում մեկը մյուսին,  
Ավետարանը ինչ գեղեցիկ է:
- 65 Սատանան մարդուն փորձանքի բերեց,  
Դիպվածը մարդուն վշտի մեջ ձգեց,  
Մարիամի որդին բանտը լուծարեց,  
Ճոկանախաղը ինչ գեղեցիկ է:
- Բախտի անիվը պատվում է հար,  
70 Մեկին տանում վեր, մեկին բերում վար,

Աստժուն փառք տալը ինչ գեղեցիկ է:

Ոչ մեռնող կասի, ոչ էլ մնացող,  
Տիրոջ պատվերով աշխարհը դու թող,  
75 Կյանքդ, Ղուլ-Քոչար, ախով անց կացավ,  
Այս արգար դատը ինչ գեղեցիկ է:

Բնագրում՝

2. Երկիր և ժամանակ փո. երկիրը համայն: 3. Արևելք և արեժուտք փո. ծագերը բոլոր: 4. Մեկը մյուսից փո. բարին ու շարք իրարից: 9. Նոր պայման (նաև՝ ժամանակ, նաև՝ աստղ) ինքն է միջում հավերժորեն: 10. Ամուր փո. նրան: 15. Աստղերը, արևը և լուսինը: 17. Ամբողջ սողը անհասկանալի: 22. Դրա համար նրան հալածեց: 25. Խելքներդ ընկույզի շափ է. հավատքներդ անհաստատ (\*): 31. Հորին կին (\*) և համբերություն: 35. Հիշվում է անունը: 39. Գիտունների շրջանում վարպետս ասաց: 42. Գնալուն փո. խիստ պետքական: 60. Քյուրեղ գոհարներից ասուր ժողովրդին: 51. շատ գիտուններ: 54. Ինչ կմնա տանը: 55. Մեջնունին սեր: 56. Սողոմոնը գա՛հին: 62. Մեկը մյուսին գերեզման է դիջում: 64. Ավետարանն ու Ղուրանը:

5

(ՊՈՒՍՍՅ ՏԱՂԱՐԻ)

Ղամ պանի աթմիշտը էշխ դարեանայ,  
Սար(ը)մայ պուրուփտի պուսայ տաղլարի,  
Հար քիմ մանջիլէջի Աէյլա իթիրմիշ,  
Յ տայ Մաշլուն թաքի պուսայ տաղլարի:

5 Պոչ սրնդ կօնդիլմըն հայ նիշանասի,  
Մու ամպար քէքուլըն հայ նիշանասի,  
Սայաթ թաք պաքլայ հայ նիշանասի,  
Կէթմաղ յանաղնտան պուսայ տաղլարի:

10 Նաղլի յարըմ զըյա պախտի փութա(յ) ման,  
Սավտուկչակըմ քամ էյլամայ փութայ (ման),  
Օլուրիտան սէճտայ զլամ փութայ ման,  
Պօշանսն սատրնտան պուսայ տաղլարի:

15 Վանլի Քօշակ, Հապիլ էյլայ դապիլա(յ),  
Յեօլ ահլիսան՝ խզմաթ էյլայ դապիլայ,  
...  
Յ(կ)օլնայ վէրտիկըմ պուսայ տաղլարի:

Ք իջլիս, Վրացական Պետ. Բանգարան, ձև. N 168, Թ. 25ա—25բ, ԺԷ դ.:

Բնագրում՝

\* յանաղնտայ: 13. սյուր ինտան:



Թարգմանություն

(ԽԱՐԱՆ ՀԱՄԲՈՒՅՐԻ)

Վիշտն ինձ նետել է սիրո ծովի մեջ,  
 Ճակտիս դրոշմել խարան համբույրի,  
 Ով որ շքնադագեղ էկլի է կորցրել,  
 Նա էլ Մեջնունի պես լեռներն համբուրի:

5 Այս բեկված սիրտս է (դրան) ապացույց,  
 Բուրավետ հյուաներդ է (դրան) ապացույց,  
 Որսորդի հայացքդ է (դրան) ապացույց,  
 Չի անցնի այտիցդ խարան համբույրի:

10 Եկ, մի լինիր այդպես դաժան, իմ հոգյակ,  
 Գու՞թդ պակաս թող շինի, իմ հոգյակ,  
 Մեռնելիս իսկ ծունր կիջնեմ, իմ հոգյակ,  
 Որ կրճքիդ շմնա խարան համբույրի:

Վանցի Քուչակ, բարիք արա դու մարդկանց,  
 Ճամփորդ մարդ ես, (լավ) ծառայիր դու մարդկանց,  
 15 . . . . .  
 Քո ճամփին ես կտամ խարան համբույրի:

Ընադրում

5. Նշան փխ. ապացույց 9. Նազլու յարս դաժանորեն նայեց 10. Հարիլ փխ. բարիք, որը բառացի նշանակում է Արել, կապ, պարան, պայման, ուխտ:

6

Վ Ա Ր Ս Ա Ղ Ք Օ Չ Ա Կ Ի Ն

Պուլպուլ ակլաշմիշտի զզըլ գուլ ուստա,  
 Ալարդի ահինան դարի սապահտան,  
 Շուքուր քի օղրտուղ գուլ յուզլի տօստա,  
 Պօկուն գէջնմիշ վարի սապահտան:

5 Այլա գօղլար, դարա դաշլար դաթուշուր,  
 Մահրում դարմաղ մուրատնա չէթիշուր,  
 Քամանտարլար պութա թիքմիշ աթիշուր,  
 Դիլակ դիլանլար առի սապահտան:

10 Շուքուր պիզի վար էլլատի յօխտան,  
 Հախի պիր բիլուրտմ դալպումտա շօխտան,

Ղուրթուլմաղ իստարսան վարի գունահտան,  
Նիազա, նամազա յերի սապահտան:

15 Լապլարուն թանն էթար շաքարղանտա,  
Ղատտուն շիմշատտուր, դամղան պուլանտա,  
Պուլպուլ կիւանտ էթմիշ գազար գուլշանտա,  
Սէյրանա շիտփտուր փարի սապահտան:

20 Քոչակ դերր փիրում ոահմի ոահմանդուր,  
Հար քիմ քի շառ էթմաղ օ տա ոահմանդուր,  
Գունիա բարվանսարա, ադամ քարվանդուր,  
Յօլլամիշ շօխլարի (թարի) սապահտան:

Մոսկվա, ֆեոդալական-ճորտատիրական ժամանակաշրջանի Պետական արխիվ «Сношени»  
России с Арменией» ֆոնդի 1724 թ., № 3 թղթագրանակ, «Дело Егнаса Мушега»:  
Բնագրում՝

<sup>1</sup> զզւ: <sup>2</sup> կրկնված՝ ահինան: <sup>15</sup> Գուլշանտա: <sup>17</sup>, <sup>18</sup> ոահմանտար:

## Թարգմանություն

### Վ Ա Ր Ս Ա Ղ Ք Օ Չ Ա Կ Ի Ն

Նստել էր բլրուլը վրան ալ վարդի,  
Սկսել սուգ ու լաց վաղ առավոտից,  
Փառք, որ հանդիպեցի վարդերես յարի,  
Այսօր (լավ) հագնված վաղ առավոտից:

5 Քուխ աչերը, սև հոնքերը խառնվում,  
Զուրկ շեն մնում, մուրազի են հանդիպում,  
Նետածիգներ թիրախ բռնած հարվածում,  
Բախտ են փորձում (հարբած) վաղ առավոտից:

10 Աստված ինքը մեզ ստեղծեց ոչնչից,  
Իմ սրտի մեջ մեկ էր տերը սկզբից,  
Ուզում ես ազատվել թե քո մեղքերից,  
Ազդեթիր սրտաբաց վաղ առավոտից:

15 Շրթերդ նման են քաղցր շաքարի,  
Հասակդ տոսախ է, նազդ՝ անթերի,  
Ելել է բլրուլը թովիշ շուրջպարի,  
Ճեմում է դյութված վաղ առավոտից:

Քուչակն ասաց՝ փիրըս տերն է հոգևոր,  
Ով որ դավ չի նյութում, սուրբ է հարգևոր,

Աշխարհը պանդոկ է, մարդը՝ ուղևոր,  
20 Արդեն ուղևորված վաղ առավոտից:

Բնագրում՝

6. հասնում փխ. հանգիստում: 7. Աղեղնավորներ փխ. նետածիգներ: 8. իղձ են հայցում փխ. բախտ են փորձում: 10. Աստծուն մեկ գիտեի սրտիս մեջ վաղուց: 12. Աղերսի, աղոթքի գնա: 15. Բլբուլը շուրջսպար բռնած շրջում է ծաղկոցում: 17. Բարեգութ փխ. հոգևոր: 18. Բարեգութ փխ. հարգևոր: 20. Ծամփել է շատերին փխ. Արդեն ուղևորված:

## 7

## Վ Ա Ն Լ Ի Ք Ե Օ Չ Ա Կ Ի Ն

- Գէնա պահար օլտի լալալի տաղլար,  
Տաղլարն սա՞արի յեսղ(ի)լան կալուր,  
Աղամ, յեսզ(ի)լան կալուր.  
Տօստումուն պաղնա փէրիզատալար  
5 Գէյնմիշ, դուշանմիշ նազիլան կալուր,  
Աղամ, նազիլան կալուր:
- Նատր դօյնունտարի շամամա չումրի,  
Օրթգինան գօրմասն յեստիլան ջումրի.  
Աղամ, յեստիլան ջումրի.  
10 Հար սահարւան օթար տուտիլան դումրի,  
Հար պիրի պիր թուրլի սազիլան կալուր,  
Աղամ, սազիլան կալուր:
- Պէհէյ, քաֆար, պէհէյ-պէհէյ պաղրի տաշ,  
Գօղումնան ախրթտուն դանլի-դանլի յեսաշ,  
15 Աղամ, դանլի-դանլի յեսաշ.  
էլնտան այրիլմիշ պիր թաք յէշիլ պաշ,  
Ղառշմիշ պիր սուրու դազիլան կալուր,  
Աղամ, դազիլան կալուր:
- Իկիտա յեսարաշուր արբլուխ, փաքլուխ,  
20 Խուտայա յեսարաշուր յեսաղուղ յիքլուխ,  
Աղամ, յեսաղուղ, յիքլուխ.  
Սան սանի սրփա շաք, դնալու քաքլիկ,  
Պակ օղլու ս. ստուա պազի(լա)ն կալուր,  
Աղամ, պազի (լա)ն կալուր:
- 25 Ղուտսա վարսնլար, հէյ դուտստան կեսալանլար,  
Պիրի պիրինտան հէյ խապար սօրանլար,  
Աղամ, հէյ խապար սօրանլար.

Վանլի քեօշակ հէյ դէրր տօսալար, յնարանլար,  
Ատամուն պաշրնա յնաղրլան կալուր,  
30 Աղամ, յնաղրլան կալուր:

Մտնիւ, ֆեոդալական-ճորտատիրական ժամանակաշրջանի Պետական արխիվ «Сношения  
России с Арменией» ֆոնդի 1724 թ., № 3, քղթապանակ, «Дело Егиаса Мухега»:

Քննարում՝

1. պաղնտա: 16. էշնտան: 17. դաղրլան: 22. օղլի: 25. դուցա, դուցտան: 26. կրկնված՝ հէյ:  
28. էյ: 30. յնաղլան:

## Թարգմանություն

### ՎԱՆՆՏԻ ՔՈՒՉԱԿԻ

- Նորեն գարուն եղավ, ծաղկավետ լեռներ,  
լեռների գարունը ծաղկով է գալիս,  
Սեր իմ, ծաղկով է գալիս:  
Սիրածիս պարտեղը՝ հուրի-փերիներ  
5 Զուգված-դարդարված նազով են գալիս,  
Սեր իմ, նազով են գալիս:
- Շամամի ին՝ շ գունդ է քօ ծոցի միջին,  
Քողարկիր շտեսնի օտարն ու լկտին,  
Սեր իմ, օտարն ու լկտին:  
10 Հավքերն են դեղձեղում վաղորդյան ծեղփն,  
Ամեն մեկն մի նոր սազով է գալիս,  
Սեր իմ, սազով է գալիս:
- Ավաղ, անդուծ, ավաղ, ավաղ սիրտը քար,  
Աչքիցս քամեցիր դառն արցունք վարար,  
15 Սեր իմ, դառն արցունք վարար:  
Երամից բաժան մի կանաչակատար՝  
Սագերին խառնված՝ խմբով է գալիս,  
Սեր իմ, խմբով է գալիս:
- Հերոսին վայել է հարգանք, մաքրութուն,  
20 Աստծուն վայել է միայն բարութուն,  
Սեր իմ, միայն բարութուն:  
Թաքնվիր ապահով, կարեվեր թռչուն,  
Իշխանն է քեզ վրա քաղեով գալիս,  
Սեր իմ, քաղեով գալիս:
- Ով ուխտի գնացող, ուխտից եկողներ,  
Ով մեկը մյուսից խապրիկ հարցնողներ,  
25 Սեր իմ, խապրիկ հարցնողներ:

Քուչակն ասում է, ով բարեկամներ,  
Ճակտին ինչ գրված է, գլխով է գալիս,  
30 Սեր իմ, գլխով է գալիս:

Թնազրում՝

2. Ամսան հետ փխ. ծաղկով: 3. Տերս փխ. սեր իմ: 4. Բարեկամիս: 10. թուփակ և տատրակ  
փխ. հավքեր: 14. արչունտ փխ. դան: 22. կաթով փխ. թուրն: 23. Իշխանագն փխ. իշխան:  
25. Վանեցի: 29. Մարդու գլխին գրվածն է գալիս:

О. ЕГАНЯН

## ТЮРКСКИЕ ПЕСНИ НААПЕТА КУЧАКА

### Резюме

Уже более 80 лет, как из-за ошибки, допущенной филологом А. Тевканцем, средневековый армянский поэт-лирик Наапет Кучак считается автором «айренов» — средневековых народных гусанских песен. Однако известно, что ни один из «айренов», ни прямо, ни косвенно, не связан с его именем. Между тем в рукописях на армянском и тюркском языках сохранился ряд песен, носящих имя Кучака.

В настоящей статье впервые публикуются 7 тюркских песен Наапета Кучака (написанных армянскими буквами). Текст песен снабжен параллельным армянским переводом.

Собирание и изучение песен, носящих имя Кучака, будет способствовать окончательному решению вопроса о наследии Наапета Кучака.



ՌՈՒԶԱՆ ՏԻՏԱՆՅԱՆ

ՆՈՐԱՀԱՅՏ ՄԻ ՓՍՍՏԱԹՈՒՂԹ 1795 Թ. ԹԲԻԼԻՍԻԻ  
ԱՂԵՏԻ ՄԱՍԻՆ

Աղա Մահմատ խանի դեպի Անդրկովկաս 1795 թվականին կատարած արշավանքի և Թբիլիսիի ավերման մասի՝ ականատես անձանց նկարագրություններ պահպանվել են և՛ տպագիր, և՛ ձեռագիր աղբյուրներում: 1941 թվականին պրոֆեսոր Մելիքսեթ-բեկը խոսելով այդ հարցի մասին, թվարկել է իրեն հայտնի տպագիր բոլոր աղբյուրները<sup>1</sup>, դրանց կցելով և ոմն անանուն պատմիչի անտիպ համարած վկայությունը<sup>2</sup>:

Սակայն Մատենադարանի ձեռագրերում ու արխիվային ֆոնդերում կան դեռևս բանասիրությանը անհայտ անտիպ, մասամբ նաև տպագրված նյութեր, որոնք զանազան մանրամասնություններով և, երբեմն էլ, արժեքավոր փաստերով լրացնում ու ամրոզացնում են մինչ այժմ ընդհանուր գծերով հայտնի աղետավոր այդ դեպքերի տարեգրությունը:

Ներկա հաղորդման սահմանները մեզ հնարավորություն չեն տալիս հանգամանորեն խոսելու նորահայտ բոլոր նյութերի մասին, ուստի մենք համառոտակի կթվարկենք դրանցից կարևորները, ընթերցողների ուշադրությանը ներկայացնելով անտիպ փաստաթղթերից միայն մեկը:

1. Մատենադարանի № 8216 ձեռագրում գետեղված են Թբիլիսիի ավերմանը նվիրված մի քանի նամակներ ու նկարագրություններ:

2. № 3363 ձեռագիրը աղա Մահմադ խանի արշավանքների ականատես աղբյուրներից պատմագիր Միրզա Ադի Գյոզալ բեկի «Ղարաբաղ-նամե» աշխատության հայերեն թարգմանությունն է:

3. № 4331 ձեռագիրը Վարդան Օձնեցու «Հայոց պատմութիւն» աշխատությունն է, որի 2 գլուխը նվիրված է աղա Մահմադ խանի արշավանքներին: Այդ գլուխները շարադրված են ականատեսների պատմածների հիման վրա:

4. № 4501 ձեռագրում պահպանվել են Ղուկաս կաթողիկոսի գրագրությունները, որոնք արժեքավոր տեղեկություններ են պարունակում 18-րդ դարի 90-ական թվականներին Երևանի խանությունում տեղի ունեցած քաղաքական անցուղարձերի և խանության նկատմամբ Պարսկաստանի վարած քաղաքականության մասին:

5. «Ազդարար» պարբերականի 1795 թ. համարներում հետաքրքրական հաղորդագրություններ են տպագրված Աղա Մահմադ խանի արշավանքների մասին:

<sup>1</sup> Արմֆանի «Տեղեկագիր», № 3—4, 1941 թ.:

<sup>2</sup> Անանուն այդ պատմիչի «Համառոտ պատմութիւն անհնարին կոտորածովք ավերման Տիբիսի քաղաքի» խորագրով երկը հրատարակված է «Թաղմավեպ» հանդեսում (1863 թ էջ 204—247):

6. «Երգք Անուրբէ վարժապետի Պատկանեան» գրքույկում (տպ. 1857 թ.) զետեղված է «Ի հնգեկի հարվածան Տիխիսայ» բանաստեղծութիւնը, նույն հարցին նվիրված ընդարձակ ծանոթագրութիւններով (տես նաև «Կովկաս» լրագիր, 1847 թ., № 26):

7. Հովհան Ռակերչյան «Յաղագս աւերութեան աշխարհին Տիխիսայ ի յԱղա Մահմատ ներքինի շահին պարսից» (տես «Կուսակ հայոց աշխարհին», 1862 թ., № 1):

Կան նաև նույն զեպքերի մասին կաթողիկոսական կոնդակներ, արխիվային այլ փաստաթղթեր, լրագրային հոդվածներ, որոնք դուրս են մնացել պրոֆ. Լ. Մելիքսեթ-բեկի ցանկից:

Աղա Մահմադ խանի դեպի Անդրկովկաս ձեռնարկած արշավանքի, Քրիլիսիի ավերման և ժողովրդի գերեզարութեան անտիպ նկարագրութիւններից հատուկ ուշադրութեան է արժանի զեպքերին ականատես Քաղուհի Միրիմանյանի և Գայանե Խոջա-Բեյրուզյանի մի նամակը, որն ընդօրինակված է Մատենադարանի № 8216 ձեռագրի էջերում (ձեռագիրը խառը նյութերի ժողովածու է)<sup>1</sup>:

Քաղուհի Միրիմանյանը 1795 թվականի աղետի ժամանակ եղել է Քրիլիսիի Ս. Ստեփանոս կուսանոցի մայրապետը, իսկ Գայանե Խոջա-Բեյրուզյանը՝ սարկավաղուհի: Առաջինն իրեն կոչում է «Հանգուցեալ Յովսեփի դուստր», իսկ երկրորդը՝ «Տիխիսու հանգուցյալ իշխան Մելիք աղայի դուստր... Խոջա-Բեյրուզեան»:

Քաղուհու մասին որոշ տեղեկութիւններ կարելի է գտնել Խ. Խուչյանի «Քիֆլիսի ս. Ստեփանոս կուսանոց անապատի պատմութիւնը» գրքում. Գայանեի մասին, սակայն, այնտեղ տեղեկութիւն չկա (նշված է մի այլ Գայանեի անուն, որը կուսանոց է մտել 1799 թվականին, ուստի չէր կարող լինել նույն այս Գայանեն):

Աղա Մահմադ խանի 1795 թվականի արշավանքի ժամանակ Գայանե Խոջա-Բեյրուզյանն ու Քաղուհի Միրիմանյանը, այլ կույսերի հետ մեկտեղ, փախչում են Քրիլիսիից և մեծ զրկանքներ կրելով ճանապարհին, ոտքով հասնում են Մոզդոկ, ապա անցնում Աստրախան, որից հետո Ղզլար. այստեղ մահանում են երկուսն էլ՝ Գայանեն 1798 թ. օգոստոսին, իսկ Քաղուհին, 1799 թ. Գայանեի մասին հիշատակութիւն ունի Հովսեփ Արղությանը 1799 թ. օգոստոսի 29-ին գրած անտիպ մի նամակում («Առ Քիֆլիսու կուսանան ի Ղզլարե գմխիթարական սակս փոխեցման Գայանէին») <sup>2</sup>:

Քրիլիսիի ավերման մասին Քաղուհին ու Գայանեն գրում են հենց նույն՝ 1795 թվականի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին: Ուստի այս նկարագրութիւնը հնագույնն է մեզ հայտնի բոլոր ականատեսների նկարագրութիւններից <sup>3</sup>:

Նամակը հասցեագրված է Հովհաննես Լազարյանին և նրա կին՝ Կատերինային: Նամակագիրները խոստովանում են, որ իրենք անփորձ են պատմական զեպքերի նկարագրման մեջ. «Իսկ արդ զի՞նչ գրեսցուք յանարգին

<sup>1</sup> Այս նյութի վրա մեր ուշադրութիւնն է հրավիրել ընկ. Ա. Մնացականյանը, որի համար հայտնում ենք նրան մեր շնորհակալութիւնը:

<sup>2</sup> Մատենադարան, Ձեռագիր, № 2951, էջ 208:

<sup>3</sup> Փաստաթղթի տակ նշված է՝ 1795 թ. սեպտեմբերի 16. հավանաբար պետք է լինի հոկտեմբերի 16:



նամակիս յայսմիկ կամ որպէ՛ս վստահ լիցուք պատմարանօրէն պարագայիք գրել...»<sup>1</sup>։ Սակայն նրանք շարագրելու որոշ ձիրք ունեն. նամակը վկայում է այն մասին, որ հեղինակները ծանոթ են հայ պատմագրութեան հուշարձաններին, մանավանդ՝ լավ գիտեն հին կտակարանը։

Նամակի հեղինակները նախ խոսում են պարսից շահի խարդախութեան և նենգութեան մասին, որի շնորհիվ նա կարողացել էր անսպասելիորեն հարձակում գործել անպաշտպան քաղաքի վրա, ապա մեղադրում են քաղաքի զինված ուժերին, որոնք պատշաճ միասնութեամբ չէին կազմակերպել դիմադրութիւնը։

Հաջորդ էջերում նրանք նկարագրում են այն սոսկալի տեսարանը, որ ստեղծվել էր Քրիստիում աղետի օրերին և այն ահավոր տանջանքները, որոնց ենթարկվել են նրա բնակիչները։ Այստեղ նրանց շարագրութիւնը գեղարվեստական զունավորում է ստանում։ Ահա թե ինչպէս են նկարագրում նրանք պարսիկների մուտքը Քրիստի. «... Եկին զօրքն պարսից յամենուտ, իբրի ջուրս երամոց, ըստ հրամանի շահին գրո՛հ տուեալ մտին ի քաղաքն մեր Տփլիս — ի 1795 թուոյն, ի սեպտեմբերի 10-ին, յորում կուռն շանիւ, բազմատարազ հարուածս արարին և զբազումս սրոյ ճարակ հտուն, զոմանս յեկեղեցւոջ, զոմանս ի պալատս, զոմանս ի տանս, զոմանս ի պանդոկս, զոմանս ի վաճառանոցս, զոմանս ի փողոցս և զոմանս առաջի կրպակաց»։ և ապա՝ «թող զմանկտիս և զկաթնարոյժ երեխայս, զորս որմոց տալով անխնայ և զորս յօդս ի վեր՝ դէմ առնելով զսուրն երեխայից միջակտուր առնէին։ Ա՛նդ էր տեսանել զմեծադոշ ողբումն և զոռոշորումն սրտից ամենեցուն, ա՛նդ էր տեսանել զարտասուեահեղ լալումն և զուշաթափելն ծնողացն»։

Այդ վայրագութիւնների նկարագրութիւնից հետո նրանք անդրադառնում են ավարտութեան ու գերեվարութեան, ապա և քաղաքի հրդեհման տեսարանների սրտաճմլիկ նկարագրութեանը։

Քաղուհին և Գայանեն շեն մոռանում նկարագրել նաև քաղաքից փախածների գրութիւնը, որոնց թիվը, ըստ նրանց տվյալների, հավասար է եղել մոտ 300 տան։ «Ի մէջ զիշերի հապճեպ» փախչողների հետ էին նաև իրենք՝ նամակի հեղինակները։

Նամակի մեջ ուշադրով տվյալներ կան նաև այն մասին, թե ինչ տեսք է ունեցել քաղաքն ավերումից հետո, երբ այնտեղ են վերադարձել փախած թրիլիսցիները. «Գնային ի քաղաքն Տփլիս առ ի տեսանել զորպիսի կեանք բայց ի հոտոց աչքելոց և ի հոտոց մեռելոց ի բազում արուս ոչ որ կարողանար դնալ ի քաղաքն, զի գրեթէ 20 մղոնաւ հեռի ի քաղաքէն սիռեալ կայր հոտն շուրջ զքաղաքան...։ Աուրբք բազմօք անթաղ կային մեռեալքն, և ընտանի զազանքն կատաղեալ շրջէին ի քաղաքին»։

Նամակագիրներին «ի լրոյ» հայտնի է, որ Քրիստիից աղա Մահմադ խանի զորքերը գերեվարել ու Գանձակ են տարել 105 հազար թշվառների։ Նրանք գտնում են, որ այդ թիվը ոչ միայն շատ շէ, այլ և կարող է քիչ լինել, որովհետև Քրիստիի շրջակայքի բնակչութիւնն էլ այդ օրերին պատասպարված է նդել քաղաքում և գերեվարվել թրիլիսցիների հետ միասին։

Նամակի վերջում մեր հեղինակները սրտառուչ խոսքերով ողբում են ստեղծված ծանր կացութիւնը։ Նրանք հատկապես անդրադառնում են գերի-

<sup>1</sup> Մատենագարան, Զեռագիր № 8216, էջ 154բ—160ա

ների ծանր վիճակին, հավանաբար նպատակ ունենալով շարժելու Լազարյան իշխանի գույթը:

Թե ինչպիսի մասնակցություն են ունեցել Լազարյանները գերիների փրկագնման գործում մեզ հայտնի չէ, բայց շատերն են իրենց միջոցներով օգնել գերիներին: Նշենք սակայն, որ փրկագնված գերիներից շատերո մի նոր գերության մեջ են բնկել ազատվելուց հետո: Այսպես օրինակ, նույն № 8216 ժողովածուի մեջ են դորինակված 1 և Եփրեմ կաթողիկոսի մի գրությունը ոմն ներսես Աղաջանյանի վանքական ճորտությունից ազատ առձակելու մասին: Այդ ներսեսը մեկն էր վերոհիշյալ գերիներից, որը էջմիածնի կողմից գերությանից ազատվելուց հետո, 15 տարի եղել է վանքի «ճորտը»:

Թագուհի Միրիմանյանի և Գայանե Խոջա-Բեյրուղյանի նամակը փաստաբանից, գեղեցիկ շատադրված պատմական մի փաստաթուղթ է: Այն ուշագրավ է նաև այն առումով, որ գրված է կին հեղինակների կողմից: Թագուհու և Գայանեի անուններով լրագրվում է միջնադարյան հայ գրականության կին գործիչների աղքատիկ ցանկը:

Ատորև տալիս ենք նրանց նամակը, ըստ № 8216 ձեռագրի:

\* \* \*

\*

Գերյարգոյ և շնորհատր Յօհաննէս աղայիդ: Ի դժնդակ դարուս, ի վերին նախախնամութենէ բնտրեալ վասն ամենայն Հայկազնեայ սեռիս՝ կառի բնտիր և անդոյզ իշխանի, և միանգամայն ի մեծագութ և ի բարեպաշտ ինքնակալ Թագուհույ բախտաւորեալ՝ արժանավայել աստիճանաւ եւ սոյնասարաս ճահողութեան արժանի վերոյ յիշեալ վսեմազարդ սեպուհույ զուգակցի՝ իշխանագին աւագուհույ և միանգամայն մեծի ինքնակալ Թագուհույ անուամբ անուամնեցելոյ, մեծարգի և կարի ողորմագութ տիկնաց տիկին Կատարինէիդ, հանգիտապատիւ զողջոյն առաքելաւանդ վերառաքեմք առ յարգութիւն ձեր (Թէպէտ մերս ոչ ըստ նոցա աստիճանի, այլ որք ի սրբազան գնդից բնկալեալ զաստիճան աւագ սարկաւազութեան, ըստ սրբոյն Ստեփաննոսի նախավկային, նոյն որ ի մեզ դոյ, նոյն շնորհիւն վստահօրէն պատշաճ համարի ի մեզ): Ողջոյն և սէր հոգևորական բնծայեսցի իշխանաց իշխանիդ և աւագուհեաց աւագուհույդ իբր յամարեցեալ Տփխիսու մենարանէ, ի կուսանաց միաբանէ և ի տառապեալ սարկաւազութեաց օրհնութիւնք, խաղաղութիւն և առողջութիւն ընդ ձեզ եղիցի բազմաւ բարութեամբ և յողմ օրհնութեամբ:

Արդ, Թէպէտ պարտ էր մեզ ըստ կարեաց մերոց վիպասանօրէն և ճահողապէս յարմարեալ զովս զարժանավայելս յարգութեանց ձերոց, սակայն ոչ կարողացաւ միտք մեր դօրել ըստ կանոնի արժանւոյն գրել, այլ եթող զնա և սկսաւ առ ի առման Տփխիս քաղաքի և բնակչացն այնօրիկ:

Իսկ արդ զի՞նչ գրեսցուք յանարդիւն նամակիս յայսմիկ կամ ո՞րպէս վստահ լիցուք պատմաբանօրէն պարագայիւք գրել զԹիֆլիզ քաղաքէ մերմէ և զբնակչացն մերոց և կամ թէ զո՞րպիսի խորամանկութենէ հնարիւք գալն ներքինւոյ արքային Պարսից ի վերայ Թիֆլիզ քաղաքին մերոյ ( որ ի բնէ ունին պարսիկք զայսպիսի խորամանկութեան հնարս) և կամ թէ զո՞րպիսի խաբէութենէ թիւնաւորելոյն ի սատանայէ արեանարբու աղա Մահմատ շահին հեծելազօրօք բազմօք մուտն ի քաղաքն Տփխիս: Զի խաբէութեամբ մտանե՞ն այն էր խորամանկին մինչ ինքն ի Գանջայ էր բանակաւն իւրով, զհաշտութեան

թուղթ իմն յղեաց ի ձեռն սուրհանդակի միոյ՝ առ արքայ Հերակլ վրաց, թէ յորոց քոց զմին որդին առաքեա առ իս պատանդ, որով հաշտութիւն մեր երեւացի (իրր թէ միամիտ լինելոյ ազագաւ յղեաց զհնարական թուղթն առ արքայն), իսկ զկնի թղթարերին եկն ինքն խրոխտ և ահարկու հեծելագօրօք բազմօք մերձ ի քաղաքն, իրրե երկոտասան մղոնաւ հեռի և անդ ի բանակատեղ տեղի՝ բանակեցաւ բանական իւրով: (Բայց արքայն Հերակլ և բազմութիւնքն Վրաց և Հայոց և զօրքն ամենեքեան միահամուռ անհող կային, զի այն ոչ վասն յուսոյն որ առ աստուած, այլ ի միմեանս հայելով և ի միմեանց ուսանելով զչարն, ի փոքուէ մինչև ցմեծամեծն խստապարանոցք գորով յամառեալք էին կամակոր մտօք ի կամս և ի շար գործս իւրեանց, որ իրր շար սովորութեանց տօռամբք կապեալ կային ամենեքեան, որոյ վասն ոչ երկնչէին ի բազմագումար թշնամեաց և ոչ զգուշանային յապագայ եկելոց, թէպէտ և տեղեկացեալ զիտէին գայն նորա ի վերա իւրեանց): Որ և շահն ի տեղի անդ կազմեաց զգունդս աշրուծիոյ, զգունդս հետեակաց, զգունդս վահանավորաց, զգունդս նիզակակրաց, զգունդս ամենայն սպառազինաց, զգունդս մրճատորաց և զգունդս շանթահարողաց, որք ի մուտք քաղաքին մեծաւ ուղմօք և սպասիւք ճակատիլ և քաջակորով ջանիւ մարտամուխ լինիլ և ոչ դառնալ ընդ կրունկն: Իրրե լուեալ Վրաց, թէ յայն ինչ նիշ տեղի եկեալ են, ելին ի ճակատ առ ի ընդդէմ կալ նոցա, բայց սակաւ գօրօք... ոչ կարողացաւ արքայն պայքարել ընդ զօրաց պարսից, յորոց զանգիտացեալ մի գուցէ ձերբակալ լինի ի ձեռն նոցա, ապա ի յետս կոչս դարձաւ, զորմէ գրեթէ մազապուրծ լեալ, փախեաւ և գնաց ի նեղուց և ի կիրճս լեբանց՝ առ զուգակիցն իւր: Իսկ ըստ այսմ և զօրքն վրաց փախեան և գնացին յայլ և յայլ ամրոց տեղիս, ապա զկնի նոցա եկին զօրքն պարսից յամենուստ, իրրե շուրս երամոց՝ ըստ հրամանի շահին՝ դրոհ տուեալ մտին ի քաղաքն մեր Տփլիս՝ ի 1795 թուոյն, և ի սեպտեմբերի 10-ին, յորում կուռն ջանիւ բազմատարազ հարուածս արարին և զբազումս սրոյ ճարակ ետուն, զոմանս յեկեղեցուց, զոմանս ի սլաշատս, զոմանս ի տունս, զոմանս ի պանդոկս, զոմանս ի վաճառանոցս, զոմանս ի փողոցս և զոմանս առաջի կրպակաց, զբազումս կոտորեցին և զբազումս սրախողխող արարին: Զեպիսկոսպոսս և զվարդապետս ասեմք, թէ՛ զբահանայս և զսարկաւազունս և զդպիրս ասեմք, զիշխանս և զտիկնայս ասեմք, թէ՛ զարս և կանայս ասեմք, թող զմանկտիս և զկաթնարոյծ երեխայս, զորս որմոց տալով անխնայ և զորս յօզս ի վեր՝ դէմ առնելով զսուրն երեխայից միջակտուր առնէին: Ա՛նդ էր տեսանել զմեծագոշ ողբումն և զտոշորումն սրտից ամենեցուն, ա՛նդ էր տեսանել զարտասուահեղ լալումն և զուշաթափիլն ծնողաց և ընտանեաց, ա՛նդ էր տեսանել զաղեկիզութիւն և զգալարումն ծնողաց սրտից ի կսկծոյ և ի գթոյ զաւակաց և ամենայն ընտանեաց, և ա՛նդ էր տեսանել զճշումն և զկականումն զաւակաց և ընտանեաց՝ յաղագս բաժանելոյ ի միմեանց:

Արդ ո՛ր կարէ պատմել լեզուաւ և կամ ո՛ր կարող է արձանացուցանել ի գիրս զհարուածոց և զնեղութենէ Տփլիսեցւոց, յորոց գրէթէ զարեան վտակս ոռոգեցուցանէին ի տեղիս տեղիս՝ մինչ ցասմնամարտութիւնն առ Շահն և առ զօր իւր կայր: Այլ երբ հագեցաւ վիշապն պարսկային և թիւնալից զօրաց իւրոց յագեցոյց յարեան արբմանէ (զօրէն տղրկի), հանգեաւ ի զայրանալոյ և ի սրտմտութենէ, ապա ետ հրաման մտնետիկաւ զօրաց իւրոց՝ յեկեղեցեաց, ի սլաշատից, ի տանց և ի կրպակաց և ուր ուրեք գտցեն զանօթս և զամենայն

հարկաւոր պիտոյիս և զինչս ամենեցուն՝ առնուլ վասն իւր իւրաքանչիւր այր, բաց ի պալատէն արքայի, յորմէ հանեալ զթագն, զաթոռն և զայլս, որք յինքնակալ թագուհւոյն չղեալ պարգևս, և արքայի զբազում զանձս զարծաթեղէն, և զոսկեղէն կահս և զկարասիս և զամենայն զարդս և զանօթս վասն իւր յատկացոյց, իսկ յետ բազմատանջ հարուածոց և կոտորածից և զինչս ժողովելոց, զինչս և զգերիս ի քաղաքէն ի դուրս գերի վարեաց, ապա զկնի ի դուրս վարելոյ զամենայնս հրաման տուեալ զօրաց իւրոց՝ զեկեղեցիս, զպալատս, զտունս, զպանդուկս, զկրպակս և զողջոյն քաղաքն հրդեհեալ, որ և իսկ ըստ հրամանի Շահին: Իսկ յետ շուելոյ նորայ ի Տիփսիսու ի Գանջայ՝ գերեօք և ամենայն ընչիւր, ոմանք ի գերեաց անտի փախեալ էին և ոմանք, ի վաղուց հետէ ի քաղաքէ ելեալքըն, զնային ի քաղաքն Տիփսիս, առ ի տեսանել զորպիսի եղեալն, բայց ի հօտոց այրեցելոց և ի հօտոց մեռելոց ի բազում աւուրս ոչ որ կարողանայր զնալ ի քաղաքն, զի գրէթէ մինչ 20 մղոնաւ հետի ի քաղաքէն սփռեալ կայր հօտն շուրջ զքաղաքան, վասն որոյ աւուրքք բազմօք անթաղ կային մեռեալքն և ընտանի զազանքն կատաղեալ շրջէին ի քաղաքին: Իսկ յետ ատուրց բազմաց, մտեալ ոմանց ի քաղաքն, ոմանք զտունս և զկրպակս և փողոցս իւրեանց ոչ ճանաչէին՝ առ ի խանդարեալ և ի քայքայեալ եղելոց ի հրոյ, զի ի նեխեալ գարշահօտոց ոչ կարողանային ժուծել, որոյ վասն զձեռս իւրեանց ի վերա ընչոց իւրեանց դնելով՝ այնպէս մերձենային ի դիակունս՝ առ ի տեսանել թէ որո՞ց իցեն մեռեալքն: Իսկ թէպէտ մեռելոց համարքն ոչ եմք տեղեկացեալ, սակայն ոմանք փախստեայք համբաւեն ի լրոյ, թէ զհարիւր և հինգ հազար գերիս և քանի հարիւր աւելի ինչ թուեալ են ի Գանջայ, զորոց գրէթէ քան զայն աւելին հաւատալի է, զի մերձակայ գիւղօրէից ժողովուրդքն ի քաղաքն եկեալ էին առ ի ապաստան լինելոյ, իսկ դէղոփաքն, այսինքն զուզակիցն արքային, հանդերձ ընտանեօք գերդաստանեօք իւրովք երկոտասան այլովք արամքք 2 աւուրք յառաջ ելեալ ի քաղաքէն, զնացեալ էր ի նեղուցս լերանց: Իսկ ելեալքն ի քաղաքէն հազիւ թէ 300 տուն լինի զերծեալ, որք և բազումքն ի նոցանէ զընտանիս և զինչս իւրեանց թողլով, անձնապուր փախուստ ելեալ են յահէն և ի տագնապէն, յորոց ոմանք կանայք միայն ստնդեայ զաւակունս իւրեանց ի գիրկս տուեալ, հետիոտս փախչելով, թերևս զերծուցեն զինքեանս և զզաւակունս, բայց տեսեալ նոցա, թէ զօրքն պարսից հասանեն, զզաւակունս յինքեանց ընկնտոյն ի ճանապարհի, և ի ձորձս ուրուք և ինքեանք սրտաբեկ լեալ ողեսպատ փախչէին ի խտոր, ուր առ քարիւք և թփովք և առ մացառօք պահպանէին զինքեանս, մինչ ի դառնալ զօրաց: Իսկ յետ 2 կամ 3 օր միջոց անցանելոյ զային ի տեսանել զաւակունս իւրեանց ուր ձգեալ էին, բայց տեսեալ մարցն զաւակունս — ոմն մեռեալ, ոմն անդամահատ լեալ ի գազանաց և ոմն այլ տեսակ եղեալ, յորոց վերայ գալարեալ աղիք և սիրտք ծնողաց, աղեխարշիլով դառնային մրմնջական ողբով ի փապարս վիմաց և ի կողմն լերանց՝ առ ի պահպանել ի թշնամեաց, որպէս և մեք տառապեալ Թիֆլիզու կուսանքս, ի մէջ զիշերի հապճեպ փախեաք: Զմասն ի կենաց խաշափայտից և զայլ սրբոց մասունս և զտեսակ-տեսակ զանօթս եկեղեցւոյ մերոյ ի պալատս իշխանաց իշխանի քաղաքի՝ մելիքի մերոյ Խոջայ Բեհրուդեան յորջորջեալ, հանգուցեալ մելիք Աշխարհբէգի և Մինիշկար Աղայի ի պահեստի ուրուք պահպանեցաք արկեղբք. ոչ գիտեմք, որոնեալ, գտեալ են անհաւատքն, թէ նոյնպէս կայ ի պահեստի անդ, իսկ ընդ մեզ առաք զայլ մասն խաշափայտից՝ առանց պահարանի, որ մականուամբ Հոռոմու խաշափայտի մասն կոչի և քանի մի զայլ սրբոց

մասունս առաք ընդ մեզ, քայց որ ըստ հասարակութեան հարկաւորն է, այսինքն զգնելի հանդերձս մեր՝ ըստ օրինի կուսանաց՝ զփիլոսոս և զվերարկուս մեր թողաք և փախեաք ի մէջ գիշերի, որպէս ասացաք ի վեր անդր, որ չիրաւի առանց հողաթափ և մուճակի, ելեալ եմք բոկ ոտիւք ի մենաստանէ և ի քաղաքէ մերմէ և եկեալ հետիոտս ի լեռնակողմն, ի կիրճս լերանց և անդ աւարքք բազմօք, ի բացօթեայ տեղի, ի ներքոյ անձրևի կայաք, թող թէ զհասարակաց կերլիս, որ է հացն՝ ոչ գտանէաք, զի ոչ թէ մի էր և մի է վիշան և կսկիծն ամենեցունս, որք մաղապուրծ եղեալ ելեալ եմք իբր թէ իբր միայն ի հայրենական քնակութենէ հեռացեալ և օտարացեալ եմք, այլ բազմատեսակ վէրք եղին ամենեցունս: Բայց ո՞վ սղբակից լինի մեզ, ո՞ւր են վարդապետքն և քահանայքն մեր, որք ի տեղի Երեմիա մարգարէի ողբասցեն ընդ մեզ վասն բազմատարազ հարուածոց և անթիւ գերելոց մերոց, իսկ որով լինի մեզ օգնութիւն, զի ոչ գոյ բժշկութիւն վիրաց մերոց՝ յերեսաց բարկութեան տեառն ըստ մարգարէին, զի այս չիրաւի զսրբատաշ քարիւք բարձրակառոյց և գմբեթազարդ կաթողիկէիւք շինեալ, լի մասամբք սրբոց և պատկերօք զեկեղեցիս մեր լացցուք և ողբասցո՛ւ (որք այրեալ ի հուր խանգարեալ են), թէ ի միջի զբազմաշարշար նահատակաց սրբոց մասունս (որք ի ձեռս անհաւատից լաւ համարեցին զինքեանս ոտնահարեալ և անարգեալ, քան ի ձեռս մեր յեկեղեցոյց կեալն, այս թէ վասն է՞ր, եթէ ոչ՝ վասն ոչ պահելոյ զպատուիրանս տեառն, որպէս ասացաք ի վեր): Իսկ որ առաւել գերագոյնն է (որով ի սկզբնական մեղաց ազատեցաք), զմասունս խաշափայտից լացցուք և ողբասցուք, թէ զարծաթեղէն և զոսկեղէն խաշս և սկիհս և արծաթով և ոսկով պատեալ զպատկերս սրբոց լացցուք և ողբասցուք. թէ տեսակ-տեսակ գոյնզգոյն զոսկեկուռ շուրջառս, և նափորտս, թող թէ զոսկէհոռ դիպակս և զգնատս եկեղեցեաց և զեկեղեցականաց, քանզի անբուժելի է վէրք մեր զորս յարհեստաւոր բժշկաց և ի նիւթական իրաց ոչ է հնար բուժելոյ, իսկ որ զբնածին և զբնական գթոցն պատմին (յորոց լսողքն աղեխարշք լինին անպատճառ) զբնտանիս և զազգակի՞ցս մեր լացցուք, թէ՛ զսիրելի բարեկամս մեր, համացեղ զիշխանս մեր լացցուք, թէ զմշտատես զբացիս մեր, թող թէ զողջոսն քաղաքակիցս մեր լացցուք հանապազ: Ո՞հ, աղետալի կսկիծ մեր և անշիշանելի աննիւթ հուր: Բաց յաստծոյ մերմէ ո՞վ արդեօք կարող է շիջուցանել զբոց սրտից մերոց, իսկ եթէ մերս անբուժելի և անշիշանելի է վասն անթիւ գերելոց մերոց, ապայ որքան տաշորական կսկիծ գոյ ի սիրտս նոցա, որք ի ձեռս անհաւատ պարսկաց գերեցեալ կան ընտանիք ազգականք և դրացիք. արդեօք թէ որպիսի ողբումն և աղիողորմ լալիք գոն ի նոսա, զի արք յամուանոց իւրեանց բաժանելով, կանայք՝ յարանց իւրեանց, ծնողք՝ յուստերաց և ի դստերաց իւրեանց, ուստերք և դստերք ի ծնողաց իւրեանց բաժանելով խնդրեն զմահ և ոչ գտանեն, արդարեւ լան տառապեալքն անմխիթար և ոչ գոն առընթեր ազգականք, որով մխիթարեսցին: Զի՞նչ ասացուք սակաւ գերծեալքս, որք ի վտարանդի կամք տառապեալ և թշուառացեալ կամ որո՞վ օգնեսցուք նոցա տարագրեալքս ի միմեանց, քանզի ահա անհերքելի միջակութիւն իմն գոյացաւ ի նոսա և ի մեզ, իբր ընդարոյս ընդ մեզ, որ ոչ ունի ի բնական հողոյ մերմէ մասն ինչ ժամանակ առ ժամանակ, ի յետս կելոյ ըստ հասարակաց սահմանի, այլ իբր մշտայել որպէս ի հնոց հրոյ, ծուխ ելանէ ի սրտէ մերմէ մինչ ի կէտ մահու մերոյ, զի կսկծեցուցիչ միջարկութիւնս այս, որ ի մեզ հիւժելոյ հաստատեցաւ, գրեթէ այսուհետև սա առաւել ներդործէ ի նոսա և ի մեզ, քան զբանական հողիս մեր, վասն որոյ կրկին ան-

զամ կրկին ս՛հ ողորմելեացս, ս՛ւր գոն ընտանիք և սիրելի բարեկամք նոցա, որք ողորմեսցին նոցա, ըստ Յորայ՝ լամբ տառապեալքս վասն նոցա և ոչ կարեմք ինչ օգնել, իսկ Հոաբէլ մի էր ի հնումն և ի նորոյս Իսրայէլի բազում Հոաբէլ մարք և ընտանիք գոն. լան և ոչ կարեն օգնել որդւոց և ընտանեաց իւրեանց և ոչ տառապեալ անձանց իւրեանց: Արդ թէպէտ ոչ էր պարտ մեզ զայսքանս երկարել, սակայն աղէտք սրտից մերոց ոչ ետուն թոյլ՝ համառօտել զբանս, որոյ վասն զերկարութեան պարագայիս և զպարբերութիւնս էառ բանն այն, զի իբր արտասուախառն մելանաւ գրեցաւ, բայց գրեթէ ի բազում այսօրիսի թղթոջ գրիւր բանն, եթէ մի ըստ միոջէ մանրամասնարար գրէար, այլ առ ի շճանձրանալոյ բան զայս ոչ երկարացուցար զբանս (իբր պատմարանօրէն համարի), ուստի այսքանս բաւականացեալ համառօտ համերեսցի յարգութեանց ձերոց, որ և ողջ և առողջ լիբուք ի տէր ի պարծանս ամենայն հայկազնանս սեռիս:

Գրեցաւ ի Մօղղօզ, ի 1795 թուոյն և ի սեպտեմբեր 16:

Ի քաղաքէ Տփլիսու և ի կուսանաց մենաստանէ հանգուցեալ Յովսէփի դուտր, սարկաւազուհի, կուսանաց (վարդապետ) մայրապետուհի և մայր վանաց՝ անուամբ Թագուհի և մակարեբեալ ազգաւ Միրիմանեանս և Տփլիսու հանգուցեալ իշխան Մելէք Աղայի դուտր սարկաւազուհի Գայիանէ յորջորջեալ Խօջայ Բէհրուղեանս միաբան սարկաւազուհեօք և կուսանօք հանդերձ:

Р. ТИТАНЯН

## НОВЫЙ ДОКУМЕНТ О РАЗОРЕНИИ ТБИЛИСИ АГА МУХАММЕД-ХАНОМ В 1795 Г.

Резюме

У армянских авторов сохранился целый ряд описаний нашествия Ага Мухаммед-хана на Закавказье, захвата и разрушения Тбилиси.

Среди них особое место занимает письмо монахинь Тагуи Миряманян и Гаянэ Ходжа-Бейбутян, посланное князю Ивану Лазаряну в октябре 1795 г. из Моздока в Петербург.

Эти монахини, в панике покинувшие Тбилиси в дни нашествия персидских орд, сообщают интересные подробности о резне и пленении тбилисского населения, о пожаре и других событиях.

Письмо публикуется полностью по списку, сохранившемуся в рукописи Матенадарана за № 8216.

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ,  
ԼՐԱՏՈՒ





Օ. ԵԳԱՆՅԱՆ, Ս. ԱՐԵՎՇԱՏՅԱՆ

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՀԱՅԵՐԵՆ ՋԵՌԱԳՐԵՐԻ ԱՃՐ  
1956—1959 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Հին ձեռագրերի գիտա-հետազոտական ինստիտուտ «Մատենադարանի» հայերեն (այդ թվում և հայատառ այլալեզու) ձեռագրերի ֆոնդը վերջին շորս տարվա ընթացքում 1956 թվականի հունվարի 1-ից առ 1960 թվականի հունվարի 1-ը հարստացել է 290 նոր ձեռագրերով\*։ Այդ ձեռագրերի մեծ մասը գնվել կամ նվեր է ստացվել Սովետական Հայաստանի տարբեր բաղաձայնների և գյուղերի բնակիչներից, ինչպես նաև եղբայրական Վրաստանի, Ադրբեջանի և Ուկրաինայի բաղաձայններից։ Մի քանի տասնյակ հայերեն ձեռագիր Մատենադարանին է հանձնվել Լենինգրադի Պետական էրմիտաժից և Աստրախանի Պետական արխիվից։ Արժեքավոր ձեռագրեր են նվիրել հանդուցյալ ակադեմիկոս Հ. Մանանդյանի, մեծանուն գրող Գ. Գեմիրճյանի, աղագրագետ և մանկավարժ Ս. Լիսիցյանի հարազատները։

Նոր ձեռագրերի զգալի մասը ստացվել է արտասահմանից՝ Արաբական Միացյալ Ռեսպուբլիկայից, Իրանից, Թուրքիայից, Ֆրանսիայից, Ամերիկայի Միացյալ Նահանգներից և այլ երկրներից։ Պոլսահայ բանասեր Թորոս Ազատյանի կտակի համաձայն Մատենադարանը, ՀՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Գրական թանգարանի միջոցով, ստացել է ձեռագրերի շափաղանց արժեքավոր հավաքածու (54 ձեռագիր մատյան)։ Կտակի համաձայն Մատենադարան են ներմուծվել նաև Գևորգ արքեպիսկոպոս Արսլանյանին (Կ. Պոլիս) պատկանող ձեռագրերը (16 մատյան)։ Փարիզից ստացվել են հայտնի բանասեր և գրականագետ Արշակ Չոպանյանի գրադարանում հավաքված հին գրչագրերը (7 մատյան)։ Մատենադարանին ձեռագրեր են նվիրաբերել հայկապահակ հայրենասեր Հովսեփ Գեղեյանը, որն անձնվիրաբար հավաքում է հին գրչագիր մատյաններ և պարբերաբար ուղարկում Հայաստան, թեհրանաբնակ Արրուհի Անանյանը, Ալան Ենգոյանը (Սան-Ֆրանցիսկո, ԱՄՆ), Ստեփան Այվազյանը (Տուրսոն, ԱՄՆ) և ուրիշներ, որոնց, օգտվելով առիթից, հայտնում ենք Մատենադարանի ղեկավարութան և ողջ գիտական կոլեկտիվի խորին շնորհակալությունը։

Ստորև տալիս ենք վերջին շորս տարվա ընթացքում Մատենադարանի հայկական ֆոնդը ներմուծված ձեռագրերի համառոտ նկարագրությունը։

\* Մատենադարանի «Բանբերի» 3-րդ հատորում նկարագրված են 1955 թ. ընթացքում ստացված ձեռագրերը ըստ հերթական համարների՝ № 9534-ից մինչև № 9567-ը (տե՛ս Կ. Յուզբաշյան, Պետական Մատենադարանի հայերեն ձեռագրերի հավաքածուի աճը 1955 թվականին, «Բանբեր Մատենադարանի», № 3, 1956, Երևան, էջ 231—237)։

1. №. 9568\* Ժողովածու, թուղթ, 36 թերթ, նոտր, 1749 թ.: Բովանդակութուն.— ա) Մեծ քաղաքն Հոռմ, որ է յարևմուտս ի Յոանկըս... բ) Դու քրիստոնեայ ես: գ) Պատմութիւն սրբուն Ազադրոնի ասացեալն է: դ) Երանելոյն Հիպոդիտայ եպիսկոպոսի ասացեալ վասն կատարածի աշխարհս... ե) [Յիշատակագրութիւնք Յովհաննէս դի Ստեփան Յոանգուլովի 1785—1831 թթ.]:
2. №. 9569 Խորհրդատեար, թուղթ, 27 թերթ, նոտր, 1690 թ., վենետիկ:
3. №. 9570 Մաշտոց, թուղթ, 245 էջ, բոլորագիր և նոտր, գրիչ՝ Յովհան դպիր, 1837 թ., Կ. Պոլիս:
4. №. 9571 Ժամագիրք, թուղթ, 167 թերթ, նոտր, գրիչ՝ Արիստակէս Կիրակոսեան, 1770 թ., Ի Բենկալայ, ի գեօղաքաղաքն Սէիպազար:
5. №. 9572 Զամբռ սր. ամածնայ եկեղեցոյն հայոց Աստրախանայ, թուղթ, 107 թերթ, բոլորագիր, գրիչ՝ Յովսէփ Արղուբեան և այլք, 1778 թ., Աստրախան:
6. №. 9573 Ժամագիրք, թուղթ, 400 թերթ, շղագիր, գրիչ՝ Յովսէփ Միսայէլեան — Զալալեան, 1873, յԱշտարխան:
7. №. 9574 Քերականութիւն Սիմէոնի Զուղայեցոյ, թուղթ, 183 էջ, նոտր, ԺԸ դար:
8. №. 9575 Սաղմոսաբան, թուղթ, 174 թերթ, բոլորագիր, գրիչ՝ Ներսէս Երեց, ՌԿՔ (1620 թ.), Կաֆա, առ ոտն սրբոյն Գէորգայ:
9. №. 9576 Աղօթագիրք, թուղթ, 120 թերթ, բոլորագիր և նոտր, գրիչ՝ Ղազար որդի Ալավերդի, 1752, Մոսկով:
10. №. 9577 Մաշտոց, թուղթ, 153 թերթ, բոլորագիր և նոտր, գրիչ՝ Յակոբ, ԺԷ դար:
11. №. 9578 Աւետարան, մագաղաթ և թուղթ, 235 թերթ, բոլորագիր, ԺԷ դար:
12. №. 9579 Կ. Սաֆարեան, գիրք որ կոչի բանալի գիտութեան, 1788 թ. ի Սանկտ Պետերբուրգ, 285 էջ: (Սույն տպագիր բառարանի վրա Հովհաննէս քհն. Ավետիսյան-Պապովյանցը 1854 թ. կատարել է բազմաթիվ արժեքավոր լրացումներ):
13. №. 9580 Աւետարան, մագաղաթ, 258 թերթ, բոլորագիր, ԺԷ դար:
14. №. 9581 Քաղուածք ավետարանաց, թուղթ, 138 թերթ, բոլորագիր, գրիչ՝ Յովհան քհն. Գէորգեան-Խալաֆեանց, 1855 թ., էջմիածին:
15. №. 9582 Ժողովածու (հատվածներ Աստվածաշնչից), մագաղաթ և թուղթ, 328 թերթ, բոլորագիր, գրիչ՝ Պարսամ Երեց, ՌՃԺ (1661 թ.) ի գիւղն Վերին Գեա: Գնված է:
16. №. 9583 Բժշկարան (հայատառ թուրքերեն), թուղթ, 251 թերթ, նոտր, գրիչ՝ Նիկողայոս, ՌՄԻԱ (1772 թ.): Գնված է:
17. №. 9584\*\* Աւետարան, թուղթ, 287 թերթ, բոլորագիր, գրիչ՝ Պաւղոս

\* №. 9568—9581 ձեռագրերը նվեր են ստացված Աստրախանի Պետ. արխիվից:

\*\* №. 9584—9596, 9598—9600 ձեռագրերը պատկանել են Կ. Պոլսի պատրիարքական տեղապահ Գևորգ արք. Արսլանյանին, որի կտակի համաձայն ստացվել են 1956 թ. ապրիլի 4-ին:

- Լսյիսկոպոս, ծաղկող՝ գրիչը, ՌՆԵ (1586 թ.), Ի յերկիրն Մելտենոյ, ի գեաւղն ի Մաւշալիան:
18. №. 9585 Յայսմաուրֆ, թուղթ, 290 թերթ, բոլորագիր, ԺԶ դար:
19. №. 9586 Կաթին Գրիգորի աշակերտի Յոհանն Ռոտենցոյ Լուծումն համառոտ դժուարիմաց բանից ի գիրս գրչութեան Առիստակիսէ հոետորէ, թուղթ, 28 թերթ, նոտր, ԺԷ դար:
20. №. 9587 Տաղարան, թուղթ, 85 թերթ, նոտր, ԺԸ դար:
21. №. 9588 Գիրք հարցմանց Գրիգորի Տաթևացոյ, թուղթ, 154 թերթ, նոտր, ԺԷ դար:
22. №. 9589 Գանձարան, թուղթ, 65 թերթ, բոլորագիր, ԺԶ դար:
23. №. 9590 Աւետարան, թուղթ, 276 թերթ, բոլորագիր, գրիչ՝ Մանուկ, ՌՃԽԳ (1694 թ.), Մարաշ:
24. №. 9591 Մաղմուսարան, թուղթ, 218 թերթ, նոտր, ՌՃԼ (1681 թ.):
25. №. 9592 Կիսրիանոս (ախթարք), թուղթ, 90 թերթ, նոտր, 1739-ից առաջ:
26. №. 9593 Ծառֆ սրբոյն Գրիգորի Աստուածարանի, թուղթ, 226 էջ, շղագիր, գրիչ՝ Յովհաննէս Տէր-Կարապետեան-Տերոյենց, ԺԹ դար:
27. №. 9594 Աստուածարանութիւն... Յովհաննու Պրուսացոյ Տէր-Կարապետեան Տերոյենց, թուղթ, 497 էջ, շղագիր, գրիչ՝ Յովհաննէս Տերոյենց, 1869 թ.:
28. №. 9595 Աւետարան, թուղթ, 185 թերթ, բոլորագիր, ԺԵ դար:
29. №. 9596 Մասն քաղաքացոց, թուղթ, 12 թերթ, նոտր, ԺԷ—ԺԸ դդ.:
30. №. 9597 Տաղարան, թուղթ, 260 թերթ, նոտր, ԺԸ դար, Կ. Պոլիս: Գընված է:
31. №. 9598 Ժողովածու, թուղթ, 243 թերթ, նոտր, 1674-ից առաջ:  
Բովանդակութիւն.— ա) Ժամանակագրութիւն Միքայէլ Ասորոյ: բ) Գիրք հարցմանց Գրիգորի Տաթևացոյ: գ) «Ի մոլութենէ Մանիքոսի, որ եղ թ սկզբունս...»: դ) Երանելոյն Աթանասի արքեպիսկոպոսի Աղէքսանդրացոյ հարցմունք վայելուչը: ե) Մխիթար քահանայի Սկեռացոյ Պատասխանիք յաղագս հոմապատութեան երկոտասան առաքելոցն... զ) Հարցումն Աշոտա Սմբատայ որդոյ հայոց թագաւորի և պատասխանք Եղնկա վարդապետին: է) «Աշխարհացոյց սկիզբն լինն է, Սուկաւէտ Արճիշոյ վերնն է...»: ը) Անանիայ Շիրակացոյ Կայսերք Հռոմայեցոյց և գործք նոցայ: թ) Արուսայիղայ Յաղագս կազմութեան մարդոյն և գոյացութեան անդամոց մարմնոյն: ժ) Յովհաննէսի Երզնկացոյ Յաղագս երկնային շարժմանն: ձա) այլեայլը:
32. №. 9599 Գիրք գուշակութեանց, թուղթ, 404 էջ, նոտր, ԺԷ—ԺԸ դդ.:
33. №. 9600 Ժողովածու, թուղթ, 115 թերթ, նոտր, գրիչ՝ Խիկար երեզ, ՌՃԽ (1691 թ.) և ՌՃԽԳ (1695 թ.):  
Բովանդակութիւն.— ա) Քարոզք: բ) Տաղարան: գ) Խոստովանութիւն ի սուրբ սրտէ ամենայն հաւատացելոց ասացեալ Գէորգա վարդապետին: դ) Վարք պատմութիւն Նիկողայոսի նոր նահատակին Քրիստոսի Պրուսացոյ:

34. №. 9601\* Պատմություն Աղեխանդր Մակեդոնացույ, թուղթ, 152 թերթ, նոտր, ժէ դար:
35. №. 9602 Աեկնութիւն յայտնութեանն Յօհաննու արարեալ ի Պետրոսէ Աղամալեան, թուղթ, 90 թերթ, նոտր, ժԸ դար:
36. №. 9603 Բաղուածոյ մեկնութիւն սր. աեառանին Մատթէոսի Գրիգորի Տարեացոյ, թուղթ, 190 թերթ, նոտր, գրիչ՝ Յարութիւն վարդապետ Երզնկացի, ՌՃՀէ (1728 թ.):
37. №. 9604 Ժողովածու, թուղթ, 102 թերթ, նոտր, ժԸ դար:  
Բովանդակութիւն. ա) Գրիգոր եպիսկոպոսի նիւսեա Յաղագս մարդոցն բնութեան: ր) [Քարոզգիրք Սիմէոնի Երևանցոյ]:
38. №. 9605 Յաղագս կանոնաց բուարանութեան, թուղթ, 53 թերթ, շղագիր, 1830 թ., Աստրախան (\*):
39. №. 9606 Աեառան, թուղթ, 296 թերթ, բոլորագիր, գրիչ՝ Վարդան եպիսկոպոս, Ռէ (1558 թ.):
40. №. 9607 Քարոզ մեծի ուրբարին... [Արահամայ Կրեացոյ], թուղթ, 12 թերթ, շղագիր, 1821 թ.:
41. №. 9608 Տուցակ գուշակութեանց Մարգար... Խօհենց Երևանցոյ. թուղթ, 243 էջ, նոտր, 1809-ից հետո:
42. №. 9609 Կանոնգիրք համառօտ, թուղթ, 71 թերթ, շղագիր, գրիչ՝ Քաղևոս քհ. նաստուրեան, 1851-ից առաջ, Պօթիշան:
43. №. 9610 Գումարումն վկայութեանց ի սուրբ գրոց առ ի վերա իւրաքանչիւր նիւրոց քարոզից, թուղթ, 161 թերթ, նոտր, ժԸ դար:
44. №. 9611 Աեառան, թուղթ, 262 թերթ, բոլորագիր, ժԶ դար:
45. №. 9612 Աեառան, թուղթ, 321 թերթ, բոլորագիր, ժԶ դար:
46. №. 9613 Ոսկէփորիկ, թուղթ, 98 թերթ, շղագիր, գրիչ՝ Ստ. Սերեբրակովեանց, 1864 թ., Աստրախան (\*):
47. №. 9614 Ճառ տնօրէնութեան կենարարին մերոյ աստուծոյ, թուղթ, 273 էջ, շղագիր, ժԸ դար:
48. №. 9615 Համառօտութիւն Պատմութեան հայոց (Ստ. Սերեբրակեանցի), թուղթ, 93 թերթ, շղագիր, գրիչ՝ Ստ. Սերեբրակեանց, ժԹ դար:
49. №. 9616 Քերականութեան համառօտութիւնը (Ստ. Սերեբրակեանցի), թուղթ, 8 թերթ, շղագիր, գրիչ՝ Ստ. Սերեբրակեանց, 1864 թ., Աստրախան:
50. №. 9617 Եկեղեցական պատմութիւն (Ստ. Սերեբրակեանցի), թուղթ, 32 թերթ, շղագիր, գրիչ՝ Ստ. Սերեբրակեանց, 1866 կամ 1869 թ., Աստրախան:
51. №. 91618 Եկեղեցական Պատմութիւն (Ստ. Սերեբրակեանցի), թուղթ, 51 թերթ, շղագիր, գրիչ՝ Ստ. Սերեբրակեանց, 1870 թ., Աստրախան:
52. №. 9619 Երգարան, թուղթ, շղագիր, ժԹ դար:
53. №. 9620 Ռուս-հայերէն բառարան (Յարութիւն Պոպովի), թուղթ, 58 թերթ, շղագիր, գրիչ՝ Յարութիւն Պոպով, ժԹ:

\* №№ 9601—9654 և № 9657 ձեռագրերը ստացված են Երևանի Ալ. Մյասնիկյանի անվան հանրային գրադարանից:

54. №. 9621 Տեղեկութիւնք Չոռնամորայ բնակելոց յայս կոյս գետոյ...  
Յովհ. Մողղակեցոյ, թուղթ, շղագիր, 1844—1845 թթ., յեկա-  
տերինոգար (°):
55. №. 9622 Ժողովածու, թուղթ, 847 էջ, շղագիր, գրիչ՝ Յովհաննէս Տերո-  
յեանց, ԺԹ դար, Կ. Պօլիս (°):  
Բովանդակութիւն.— Պատմութիւն ներսիսի կամբրոնացոյ  
և այլ աստվածաբանական նյութեր:
56. №. 9623 Երգարան երգեալ ի Պետրոս վարդապետէ նախիջևանցոյ  
Քերդումեանց, թուղթ, 62 էջ, նոտր, ԺԹ դար:
57. №. 9624 Քարոզգիրք, թուղթ, 158 թերթ, բոլորագիր, ԺԷ դար:
58. №. 9625 Աղբիւր բացեալ (Պետրոս Աղամալեան), թուղթ, 102 թերթ,  
ԺԹ դար:
59. №. 9626 Պատմութիւն հայոց Յովն. Իրասխանակերտցոյ, թուղթ, 365  
էջ, նոտր, գրիչ՝ Տիրացու Բարսեղ, 1830 թ.:
60. №. 9627 Յաղագս բուարանութեան, թուղթ, 16 թերթ, նոտր, ԺԹ դար:
61. №. 9628 Համահաաֆումն բառից, թուղթ, 363 էջ, շղագիր, ԺԹ դար:
62. №. 9629 Աւետարան (հայատառ թուրքերեն), թուղթ, 322 էջ, նոտր,  
ԺԷ դար:
63. №. 9630 Միսարան, թուղթ, 174 թերթ (95 ա—128 բ տպագիր խորհրդ-  
դատետր), նոտր, 1750 թ. և ԺԹ դար:
64. №. 9631 Պատմութիւն Աղեֆսանդր Մակեդոնացոյ, թուղթ, 112 թերթ  
նոտր, ԺԷ դար:
65. №. 9632 Սիմէոնի Մագիսարոսի Սերեան Անտիոքացոյ Յաղագս գո-  
րութեան կրելեաց, թուղթ, 152 էջ, նոտր, գրիչ՝ Մելքոն քա-  
հանայ, 1831 թ., Կ. Պօլիս:
66. №. 9633 Գիրք կոչեցեալ Միսարան, թուղթ, 254 թերթ (85—123 տպա-  
գիր խորհրդատետր), նոտր, գրիչ՝ Երեմիա վրդ. Տէր-Տիմո-  
թեոսեան 1808 թ., ի գիւղն յԱրծաթի:
67. №. 9634 Ժողովածու, թուղթ, 217 թերթ, նոտր, 1733 թ., վենետիկ:  
Բովանդակութիւն.— ա) Համառօտ ճարտասանութիւն Մխի-  
թարայ Սերաստացոյ: բ) Տրամաբանութիւն Բարդուղիմեայ  
Եպիսկոպոսի: գ) Գրիգորի Տաթևացոյ համառօտ տեսութիւն  
ի գիրս Պորփիրի:
68. №. 9635 Ժողովածու, թուղթ, 101 թերթ, նոտր և շղագիր, գրիչ՝ Յակոբ  
Ղզլարեցի, 1848—1855 թթ., Լիմ:  
Բովանդակութիւն.— ա) Քարոզի բնաբանք: բ) Խորհրդաւոր  
պատմութեանց բովանդակութիւնք: գ) Յանկ իմն նոր յաս-  
տուածաշունչ սուրբ գրոց: դ) Երգ զանազան տերունական  
ասացեալ ումեմն ի դպրէ:
69. №. 9636 Պարզատումար, թուղթ, 23 թերթ, նոտր, գրիչ՝ Գրիգոր, ԺԷ դար:
70. №. 9637 Վարք Ֆիլոմէնայ կուսին, թուղթ, 58 թերթ, նոտր, 1835 թ.,  
Ախալցխա:
71. №. 9638 Տաղարան (Ն. Շնորհալի, Առաքել վարդապետ, Հակոբ վար-  
դապետ Կ. Պոլսեցի), թուղթ, 27 թերթ, նոտր, ԺԷ դար:
72. №. 9639 Մաշտոց, թուղթ, 131 թերթ, բոլորագիր և նոտր, գրիչ՝ Շամ-  
լու, ՌՃԺԳ (1664 թ.), ի թաղն Տաշմետի վանքն:

73. №. 9640 Շարակնոց, թուղթ, 311 թերթ, բոլորագիր, գրիչ՝ Սահակ արեղայ, 1626 թ.:
74. №. 9641 Աղօթագիրք-Պատարագամատոյց, թուղթ, 88 թերթ, բոլորագիր ժէ դար:
75. №. 9642 Շարակնոց, թուղթ, 166 թերթ, բոլորագիր, ՌՂԹ (1643 թ.) Ախալգօր:
76. №. 9643 Եւրօք Անտոն Պատուացիինն պատմութիւնի (հայատառ թուրքերեն), թուղթ, 118 էջ, նոտր, 1807 թ.:
77. №. 9644 Քարոզ և հառք Մինասայ Վաղարշակեւրացոյ, թուղթ, 857 էջ, նոտր, գրիչ՝ Գէորգ եպիսկոպոս, 1799—1800 թթ., Կոստանդնուպօլիս:
78. №. 9645 Աւետարան, թուղթ, 204 թերթ, բոլորագիր, ՉԽԹ (1300 թ.) Վարազայ վանք:
79. №. 9646 Հանրագիտարան, թուղթ, 415 թերթ, շղագիր, գրիչ՝ մասամբ Տէր Մինաս Բայազետցի, ժԸ դար:
80. №. 9647 Օրագրութիւն Յովսէփ արեւպ. Արղուբեանի, թուղթ, 37 թերթ, նոտր և շղագիր, գրիչ՝ Յովսէփ Արղուբեան և այլք, 1778—1794 թթ., Մոսկվա-Պետերբուրգ, նոր-Նախիջևան և այլուր:
81. №. 9648 Ժողովածու, թուղթ, 156 էջ, նոտր, ժԸ դար:  
Բովանդակութիւն.— ա) Ժամանակագրութիւն Պետրոս դի Սարգիս Գիլանէցոյ: բ) Յաղագս պատմութեանցն Պերսիոս երկրին սկսեալ Շահ Սուլթան Հուսէյնիցն մինչև ցայսօր: գ) Բացատրութիւն անցիցն անցելոց ի մէջ Շահ Նադիրա և աւագ որդոյ նորին... Թարգմանեցեալ... Յարութիւն Դաւիթնիւ Չուղայեցոյ: դ) Դէլօրիերի Առարկութիւն առ... Պիոս Զ.:
82. №. 9649 Աւետարան, մագաղաթ, 330 թերթ, միջին մետրոպլան, գրիչ՝ Իգնատիոս, ծաղկող՝ գրիչը, ժԳ դար:
83. №. 9650 Աւետարան Յովհաննու, մագաղաթ, 60 թերթ, միջին մետրոպլան, ժԱ դար:
84. №. 9651 Մատրեոս Զուղայեցոյ Մեկնութիւնք Աւետարանացն Ղուկասու և Յովհաննու, թուղթ, 176 թերթ, նոտր, գրիչ՝ Զաքարիա գալիր Նիկոմիդացի, ՌՃԻԶ (1677 թ.), Երուսաղեմ:
85. №. 9652 Գիրք սրբոյն Դիոնէսիոսի Արիսպագացոյ, թուղթ, 329 թերթ, նոտր, գրիչ՝ Յոզաննէս, ՌՄԻԵ (1776 թ.), Կարին:
86. №. 9653 Մեկնութիւն ընթերցուածոց, թուղթ, 56 թերթ, նոտր, ժԹ դար:
87. №. 9654 Հաւաքումն մեկնութեանց առասպելեացն, թուղթ, 102 էջ, շղագիր, գրիչ՝ Եղիազար քհ. Տիզեան, ժԹ դար:
88. №. 9655 Աւետարան, մագաղաթ, 151 թերթ, բոլորագիր, գրիչ՝ Յովհաննէս Եղոկիացի, ծաղկող՝ գրիչը: ՌԿԷ (1618 թ.), ի գիւղաքաղաքս Եաղլով: Գնված է:
89. №. 9656 Ժողովածու, թուղթ, 94 թերթ, նոտր, ՌՃԽԻ (1695 թ.) ի Զմիւռին քաղաք:  
Բովանդակութիւն.— ա) [Պատմութիւն կիրակէի]: բ) Վասն Գալստեանն Քրիստոսի շրուսաղեմ: գ) Պատմութիւն և կտակ շարշարանացն Քրիստոսի: դ) Վասն քահանայի միոյ [Եղիա-

- յի]... թ՛ որպէս դիմադարձեալ ի հետ մօլանօն և շէխէրուն:  
Գնված է:
90. №. 9657 Աղբիւր բացեալ (Պետրոս Աղամալյանի), թուղթ, 110 թերթ,  
նոտր, ժԸ դար:
91. №. 9658 Աւետարան, թուղթ, 324 թերթ, բոլորագիր, գրիչ՝ Առաքել  
Էրէց, ՌՃԻԹ (1680 թ.), վան: Գնված է:
92. №. 9659 Աւետարան, թուղթ, 248 թերթ, բոլորագիր, գրիչ՝ [Օհաննէս  
դղիր, ՋՂ (1451 թ.), Տարօն]: Գնված է:
93. №. 9660 Աւետարան, թուղթ, 7 թերթ, բոլորագիր, ծաղկող՝ Պարսամ:  
ԺԵ—ԺԶ դդ.: Գնված է:
94. №. 9661 Իանի շափաւ ներսէսի Շնորհալոյ և Աղօթագիրք, թուղթ, 309  
թերթ, նոտր, գրիչ՝ Կիրակոս Զմբնչկայծակցի, 1630—1631  
թթ., Երուսաղէմ: Գնված է:
95. №. 9662 Բժշկարան և ամսացոյց ամենւյն եղանակաց, թուղթ, 67  
թերթ, նոտր, ժԸ դար: Նվեր է ստացված հալեպարեակ Հով-  
սեփ Տետեյանից:
96. №. 9663 Նոնոսի Մեկնութիւն առասպելեացն, թուղթ, 112 էջ, ժԹ դար:  
Նվեր է ստացված ԱՄՆ-ի Տուկսոն քաղաքի բնակիչ Ստեփան  
Այվաղյանից:
97. №. 9664 Տաղարան, թուղթ, 48 թերթ, նոտր, գրիչ՝ Արսեն Բագրատու-  
նի, 1830 թ. վենետիկ: Նվեր է ստացված ԱՄՆ-ի Տուքսոն քա-  
ղաքի բնակիչ Ստեփան Այվաղյանից:
98. №. 9665 Բժշկարան, թուղթ, 95 թերթ, նոտր, և շղագիր, ժԸ—ԺԹ դդ.:  
Գնված է:
99. №. 9666 Քարոզգիրք Գէորգ եպս. Զմիտնացոյ, թուղթ, 348 թերթ,  
նոտր, գրիչ՝ Երեմիա վարդապետ, 1857 թ., Երուսաղէմ: Գն-  
ված է:
100. №. 9667 Մաշտոց, թուղթ, 123 թերթ, բոլորագիր, ժԶ դար: Գնված է:
101. №. 9668 Աւետարան, մագաղաթ, 265 թերթ, բոլորագիր, ժԷ դար:  
Գնված է:
102. №. 9669 Աստուածամանութիւն (Պետրոս Աղամալյան), թուղթ, 115  
թերթ, նոտր, 1763 թ.: Գնված է:
103. №. 9670 Մաշտոց, թուղթ, 203 թերթ, բոլորագիր, գրիչ Մարտիրոս,  
ՌՃԺԳ (1664 թ.), ի գիւղն որ Դաշտ կոչի: Գնված է:
104. №. 9671\* Մաշտոց, թուղթ, 284 թերթ, բոլորագիր, գրիչ՝ Առաքել արե-  
ղայ, ՋԼ (1481 թ.), Աւար վանք:
105. №. 9672 Գանձարան, թուղթ, 180 թերթ, բոլորագիր ժԵ—ԺԶ դդ.:
106. №. 9673 Տաղարան, թուղթ, 79 թերթ, նոտր, ժԸ դար:
107. №. 9674 Բժշկական դեղագրեր, թուղթ, 37 թերթ, շղագիր, ժԹ դար:
108. №. 9675 Աշուղ Ղարիպ (հայտատա թուրքերեն), թուղթ, 16 թերթ, շղա-  
գիր, ժԹ դար:
109. №. 9676 Տրամարանութիւն, թուղթ, 12 թերթ, շղագիր, ժԹ դար:
110. №. 9677 Տիւր արհեստից ներկել գոյնս ինչ (հայտատա թուրքերեն),

\* №№ 9671—9677 ձեռագրերը պատկանել են Արշակ Զոպանյանին:

- Թուղթ, 22 թերթ, շղագիր, գրիչ՝ Ալիքսան և Յոհաննէս Զօպանեաններ, ԺՔ դար:
111. №. 9678 Ժողովածոյ, Թուղթ, 124 թերթ, նոտր, գրիչ՝ Յովասափ քահանայ, ՌՁՔ (1640 թ.), ի գիւղաքաղաքն Հզու: Նվեր է ստացված Զ. Ն. Ումիկովի ժառանգներից:  
Բովանդակութիւն.— ա) Կարգաւորութիւն հասարակաց աղօթից Ներսիսի Շնորհալույ (Ք. Մեծօփեցու խմբագրութիւն): բ) Հոգևոր երգք Ներսիսի Շնորհալույ: գ) Պարզատուժար:
112. №. 9679 Սաղմոսաբան, մագաղաթ և թուղթ, 218 թերթ, բոլորագիր, ԺԶ—ԺԷ դդ.: Գնված է:
113. №. 9680 Շարակնոց, Թուղթ, 257 թերթ, բոլորագիր, գրիչ՝ Յովհան ԺԵ—ԺԶ դդ.: Գնված է:
114. №. 9681 Ճանապարհորդութիւն (Ս. Զալալյանի «Ճանապարհորդութիւն ի մեծն Հայաստան» աշխատութիւն մի մասի սևագրութիւնը), Թուղթ, 170 թերթ, շղագիր, 1858-ից առաջ: Գնված է:
115. №. 9682 Աւետարան, Թուղթ, 308 թերթ, բոլորագիր, գրիչ՝ Կարապետ որդի Քումայի, ՌԺԵ (1566 թ.): Գնված է:
116. №. 9683 Սաղմոսաբան, մագաղաթ, 254 թերթ, բոլորագիր, ԺԷ դար: Գնված է:
117. №. 9684 Մաշտոց, մագաղաթ, 164 թերթ, բոլորագիր, ՌՃԺ (1661 թ.) Գնված է:
118. №. 9685 Ժողովածու, Թուղթ, 275 թերթ, նոտր, գրիչ Դաւիթ սարկաւազ և Կարապետ արեղայ, 1664 և 1736 թթ.:  
Բովանդակութիւն.— ա) Քարոզք: բ) Առակք: գ) Քերականութիւն Սիմէոնի Զուղայեցոյ: դ) Տրամաբանութիւն Սիմէոնի Զուղայեցոյ: Գնված է:
119. №. 9686 Ժողովածու, Թուղթ, 20 թերթ, շղագիր, 1834 թ.: Ք վնաս... Ստաթէի:  
Բովանդակութիւն.— ա) Աղօթք: բ) Հոգևոր տաղք: գ) Դեղագիրք: դ) Վանլի ղօլ Քեօշակ «հէր սարահ. հէր սարահ պիւպիւլին սասի...»: Գնված է:
120. №. 9687 Աղօթագիրք (տպագիր գրքի մեջ), Թուղթ, 28 թերթ, նոտր, ԺԷ դար, գնված է:
121. №. 9688 Համառոտութիւն հայկական ֆերականութեան (Պ. վրդ. Ներսիսեան), Թուղթ, 48 թերթ, շղագիր, գրիչ՝ Պողոս վրդ. Ներսիսյան, 1842 թ., Շուշի: Գնված է:
122. №. 9689 Ատեփաննոսի Դաշտեցոյ համառոտ բնձեռումն վիճարանութեան, Թուղթ, 350 թերթ, շղագիր, գրիչ՝ Յոհան Ղազարեան, 1791 թ., յԱխլցիսայ, որ է Սամցխէ: Գնված է:
123. №. 9690 Յաղագս վեցօրեայ զործոց արարչութեան Բարբուղիմեոս. Բոլոնացոյ, Թուղթ, 110 թերթ, նոտր, ԺԷ դար: Գնված է:
124. №. 9691\* Աւետարան, Թուղթ, 276 թերթ, բոլորագիր, գրիչ՝ Յակոբ Զուղայեցի, 1585, Կեղի:

\* №№ 9691—9693 ձեռագրերը ստացված են Երևանի Պետական համալսարանից:



125. №. 9692 Հարցմանց գիրք Գրիգորի Տաքևացույ, թուղթ, 78 թերթ, նոտր, ժԸ դար:
126. №. 9693 Աւետարան, մազադար, 288 թերթ, բուրազի, գրիչ՝ Մեսրոպ վրդ. ՌՃԺԱ. (1662 թ.), ավարտված Բաղեշում:
127. №. 9694 Մաշտոց, թուղթ, 256 թերթ, բուրազի և նոտր, գրիչ՝ Զատիկ դպիր և Գրիգոր, 22 (1457 թ.) և Ռ22 (1637 թ.), Բալու և Կամէնից: Գնված է:
128. №. 9695\* Համառոտ Լուծմունք գրոցն Պորփիրի Սիմէօնի Երևանցույ, թուղթ, 40 թերթ, նոտր, գրիչ՝ էջմիածնեցի Յարութիւն սրդի Մաղմանենց Կիրակոսի, 1742 թ., Իզմիր:
129. №. 9696 Ծիսարան և տաղի ձեյրան օղլի Խարբերացույ, թուղթ, 68 թերթ, նոտր, գրիչ՝ Յարութիւն քհ. Խոտրչբցի, 1802 թ. Պեյօղլու (Կ. Պօլիս):
130. №. 9697 Ժողովածոյ ալփիմիական (հայերեն և հայատառ թուրքերեն), թուղթ, 312 թերթ, նոտր, գրիչ՝ Սարգիս, 1851—1878 թթ.:
131. №. 9698 Մեկնութիւն երգոց երգոյն Սողոմոնի ի Գրիգոր Բահանայէ, թուղթ, 158 թերթ, գրիչ՝ Հովակիմ, 1743 թ.:
132. №. 9699 Բառարան (Շահիաի), թուղթ, 123 թերթ, նոտր, գրիչ՝ Տիրացու Դանիէլ նոտար, 1823 թ. Կ. Պօլիս:
133. №. 9700 Պատմութիւն Ֆարիզու և Վէնայի (հայատառ թուրքերեն, թրգմ. Ե. Քյոմսուրճյանի), թուղթ, 59 թերթ, նոտր, ժԸ դար:
134. №. 9701 Գեղնարկ տրամարանութեան, թուղթ, 99 թերթ, նոտր, գրիչ՝ Մինաս Պապիկեան, ժԹ դար:
135. №. 9702 Ժողովածու, թուղթ, 74 թերթ, շղագիր, գրիչ՝ Կարապետ վրդ. Շահնազարեան, ժԹ դար:  
Բովանդակութիւնը.— ա) Մովսիսի Խորենացույն Յաղագս աշխարհագրութեան: բ) Աշխարհագրութիւն Վարդանայ: գ) Մանուէլ... Կիւմիշխանեցույ Պատմութիւն եղելութեանց ընդ մէջ կաթողիկոսացն Դանիէլի և Դաւթի:
136. №. 9703 Պատմութիւն Պալատու եկեղեցույն Գրիգորի վարդապետի, թուղթ, 17 թերթ, նոտր ՌՄԽԲ (1793 թ.), Պալատ (Կ. Պօլիս):
137. №. 9704 Պատմութիւն յաղագս առնելոյն տանկաց զսուր Եկեղաչու եկեղեցին, թուղթ, 21 թերթ, նոտր, ՌՄԸԹ (1830 թ.):
138. №. 9705 Ժողովածու, թուղթ, 46 թերթ, նոտր, 1833 թ. (°)  
Բովանդակութիւնը.— ա) Բառարան (թուրքերեն-հայերեն): բ) Գիրք պատմութեան Յովհաննէս... կաթողիկոսի: գ) Բարոյական վարք և խրատք... ասացեալ հնադոյն հեթանոս փիլիսոփայից ասենականաց: դ) Մանկութեան աւետարան:
139. №. 9706 Խորհրդատեար, թուղթ, 17 թերթ, բուրազի, գրիչ՝ Մինաս դպիր, ՌՃԿԹ (1720 թ.), Կեսարիայ:
140. №. 9707 Գիրք, որ կոչի ըրամալի, թուղթ, 71 թերթ, նոտր, գրիչ՝ Յարութիւն Միքայելեան, ՌՄԽԲ (1795 թ.), Վան:
141. №. 9708 Թամգիրք, թուղթ, 119 թերթ, նոտր, ժԹ դար:

\* №№ 9695—9716 և 9805—9836 ձեռագրերը պատկանել են պոլսահայ բանասեր հանգուցյալ Թորոս Ազատյանին: Ստացված են Հայկական ՍՍՏ Գրական թանգարանից:

142. №. 9709 Իժմկարան, թուղթ, 183 թերթ, նոտր, գրիչ՝ Թորոս, ՌՃԺ (1661 թ.), ի գիւղն Ղանդալու:
143. №. 9710 Բժշկարան, թուղթ, 283 թերթ, նոտր, գրիչ՝ Սարգիս, ԺԸ դար:
144. №. 9711 Բժշկարան, (հայատառ թուրքերեն), թուղթ, 171 թերթ, նոտր, գրիչ՝ Տիրացու Գէորգ, ՌՄԺԷ (1768 թ.) Կ. Պօլիս:
145. №. 9712 Ատուդապի (աստղաբաշխություն), թուղթ, 197 թերթ, նոտր, ԺԸ դար:
146. №. 9713 Աստղաբաշխական աղիսակի (հայատառ թուրքերեն), թուղթ, 40 թերթ, նոտր, ԺԸ դար:
147. №. 9714 Ժողովածու ախքարական աղօթից (հայերեն և հայատառ թուրքերեն), թուղթ, 124 թերթ, նոտր, ԺԹ դար:
148. №. 9715 Յայամատուրէ, թուղթ, 571 թերթ, բուրազիք, գրիչ՝ Գրիգոր քհ. Սերաստացի, ՌՂԹ (1630 թ.) ի մայրաքաղաքս Կէսարիա:
149. №. 9716 Յայամատուրէ, թուղթ, 543 թերթ, բուրազիք, գրիչ՝ Յովսէփ երէց, ՌՃԼԹ (1683 թ.) ի մայրաքաղաքն Կեսարիայ, ի գեղաքաղաքս... յնդառայ...
150. №. 9717 Աւետարան, թուղթ, 285 թերթ, բուրազիք, գրիչ՝ Ստեփանոս քհ., ծաղկող՝ Մարտիրոս, ՂԺԱ (1461 թ.): Գնված է:
151. №. 9718 Մեկնութիւն արարածոց վարդանայ վարդապետի, թուղթ, 282 թերթ, նոտր, գրիչ՝ Սահակ սարկաւազ որդի Լուսիկի, ՌԹԹ (1610 թ.): Գնված է:
152. №. 9719 Աւետարան, թուղթ, 271 թերթ, բուրազիք, գրիչ՝ Բողոս սարկաւազ, ՌՃԼ (1681 թ.): Գնված է:
153. №. 9720 Աւետարան, թուղթ, 218 թերթ, բուրազիք, գրիչ՝ Թոմա քհ., ՉԿԷ (1318 թ.), ընդ հովանեաւ սր. Գրիգորիս և սր. Սարգսիս: Գնված է:
154. №. 9721 Աւետարան, թուղթ, 236 թերթ, բուրազիք, գրիչ՝ Բարդաղ գրչապետ, ՉԿԹ (1316 թ.), ի քաղաքիս յնդեգիս: Գնված է:
155. №. 9722 Աւետարան, մագաղաթ, 267 թերթ, բուրազիք, ԺԷ դար: Գնված է:
156. №. 9723 Յովհաննէոս Ռոմանեցոյ Լուծմունք պարապմանց գրոց Կիրողի հաւաքեալ երկասիրութեամբ Գրիգորի վարդապետի, թուղթ, 132 թերթ, բուրազիք, ԺԶ, դար: Նվեր է ստացված Հ. Հ. Հովհաննիսյանից:
157. №. 9724 Խրատ խոստովանութեան սակս նորեկ Բահանայից, թուղթ, 102 թերթ, շղագիր, ԺԹ դար: Գնված է:
158. №. 9725 Ժողովածու, (ա) Մեկնութիւն պատարագամատոյց աղօթից, բ) Խորհրդատետր), թուղթ, 245 թերթ, նոտր, գրիչ՝ ա) Նաղարէթ դպիր, բ) Ղոնկիանոս քհ., 1839 և 1841 թթ. Ախալցխա և Աղզուր: Նվեր է ստացված Մարիամ Գեմիքճյանից:
159. №. 9726 Քառոզգիրք Գրիգորի Տաքեացոյ, թուղթ, 79 թերթ, նոտր, գրիչ՝ Տէր-Բաղդասար, ՌՃՂԹ (1745 թ.): Գնված է:
160. №. 9727 Բժշկարան, թուղթ, 173 թերթ, նոտր, 1724—1789 թթ. յԱրարում: Գնված է:

161. №. 9728 Յովհաննու Ոսկերեանի [Մեկնութիւն] անտարանին Մառ-  
բէնի, թուղթ, 182 թերթ, նոտր, գրիչ՝ Սիմէօն Տէր-Յովհան-  
նիսեան, ժԹ դար, Սեան: Գնված է:
162. №. 9729 Կիբե աղօթից, որ կոչի Եփրեմ Խորի, թուղթ, 110 թերթ, բո-  
լորագիր, ՌՄԺԴ (1765 թ.): Գնված է:
163. №. 9730 Ի յայտնութեան տեան ասացեալ Անանիա Շիրակացոյ,  
թուղթ, 18 թերթ, շեղագիր, գրիչ՝ Մելքօն Չիլինկրեանց, ժԹ  
դար, Ախալցխա: Գնված է:
164. №. 9731 Երզարան Առնկիանոսի, թուղթ, 12 թերթ, շղագիր, գրիչ՝  
Մելքօն Չիլինկրեանց, 1862 թ., Ախալցխա: Գնված է:
165. №. 9732 Երզարան Առնկիանոսի, թուղթ, 24 թերթ, շղագիր, գրիչ՝  
Մելքօն Չիլինկրեանց, 1862 թ., Ախալցխա: Գնված է:
166. №. 9733 Ժողովածու տաղից, թուղթ, 12 թերթ, շղագիր, գրիչ՝ Մելքօն  
Չիլինկրեանց, 1860 թ.-ից հետո, Ախալցխա: Գնված է:
167. №. 9734 Ուրբարագիրք, թուղթ, 99 թերթ, նոտր, 1807 թ., Կ. Պօլիս:  
Գնված է:
168. №. 9735 Մեկնութիւն սբոյ պատարագին Յովհաննու Արեւիշեցոյ,  
թուղթ, 105 թերթ, շղագիր, գրիչ՝ Մելքօն Չիլինկրեանց, ժԹ  
դար, Ախալցխա: Գնված է:
169. №. 9736 Այբ Եղեսիոյ Ն. Շնորհալոյ, թուղթ, 62 թերթ, շղագիր, գրիչ՝  
Մելքօն Չիլինկրեանց, 1852 թ., Ախալցխա: Գնված է:
170. №. 9737 Ժողովածու, թուղթ, 103 թերթ, նոտր, գրիչ՝ Յօհաննէս, ՌՄԼԳ  
(1784 թ.), վան-վարագ: Նվեր է ստացված հալեպարնակ  
Հովսեփ Տեմեյանից:  
Բովանդակություն.— ա ) Գիրգբ կոչեցեալ վէմ գայթակղու-  
թեան: բ) վարդապետութիւն յաղագս սրբազան աթոռոյն  
Հոռմայ:
171. №. 9738 Թուղթ տեան Փիլիպոսի... առ պապն Իննոցէնսիոս, թուղթ,  
7 թերթ, շղագիր, ժԹ դար: Նվեր է ստացված Արքուհի Լիսի-  
ցյանից:
172. №. 9739 Քերականութիւն հայկազեան լեզուի, թուղթ, 31 թերթ, նոտր,  
ժԹ դար: Գնված է:
173. №. 9740\* Ժողովածու (քահանայապետական մատեան, պատարագա-  
մատոյց, ծիսարան հոռմեական), թուղթ, 423 թերթ, նոտր,  
ՌՃԽԵ (1696 թ.), ՌՃԽԶ (1697 թ.), ՌՃԿԲ (1713 թ.):
174. №. 9741 Շարակնոց, թուղթ, 289 թերթ, նոտր, գրիչ՝ Միքաէլ Երէց  
Միքաէլէնց, ՃՌԻԹ (1680 թ.), Ի Լով:
175. №. 9742 Անտարան, թուղթ, 326 թերթ, բոլորագիր, գրիչ՝ Սիմօն  
Երէց, ՌՉ (1631 թ.), Ի մայրաքաղաքն Լով:
176. №. 9743 Պատարագատետր, թուղթ, 180 թերթ, (72ա—89բ՝ 1885 թ.  
ապագրված պատարագատետր), նոտր, ժԹ դար:
177. №. 9744 Խորհրդատետր, թուղթ, 109 թերթ, նոտր, գրիչ՝ Ստեփանոս  
միքոյայեմիչ, ՌՃՉԱ (1732 թ.), Ի Քուսիբու քղքն.:

\* №№ 9740—9749 ձեռագրերը ստացված են Լենինգրադի Պետական Էրմիտաժից:

178. №. 9745 Մաշտոց (կաթողիկական), թուղթ, 38 թերթ, նոտր, գրիչ՝ Յ. Ա. արհիեպիսկոպոս լեհաց երկրի հայոց, 1724 թ., ի կէօպօլիս:
179. №. 9746 Պատարագամատոյց, թուղթ, 36 թերթ, նոտր, ժԸ դար:
180. №. 9747 Աղօթագիրք (մի մասը լատինատառ հայերեն), թուղթ, 20 էջ, շղագիր, ժԹ դար:
181. №. 9748 Թուղթ քաջալերական առ ուղղափառս ի քաղաքն Եվրոկիայ, թուղթ, 92 թերթ, նոտր, ՌՃՄԲ (1703), ի կէօպօլիս:
182. №. 9749 Շարակնոց, թուղթ, 348 թերթ, բոլորագիր, գրիչ՝ Թորոս Սուրբասանց, ՉՂԳ (1344 թ.), Սուրբսաթ:
183. №. 9750 Ուրբաքագիրք, թուղթ, 173 թերթ, բոլորագիր, ՌՃՄԸ (1709), վան: Գնված է:
184. №. 9751 Երագանան և տումար, թուղթ, 86 թերթ, նոտրագիր, ժԸ—ժԹ դդ.: Գնված է:
185. №. 9752 Ուրբաքագիրք, թուղթ, 94 թերթ, բոլորագիր, ժԷ դար: Գրնված է:
186. №. 9753 Ախրաբ, թուղթ, 51 թերթ, նոտր, ժԸ—ժԹ դդ.: Գնված է:
187. №. 9754 Գրոցն գանձուց Կիւղի Աղէքսանդրացոյ, թուղթ, 26 թերթ, նոտր, ժԹ դար: Նվեր է ստացված հալիպարնակ Հովսեփ Տեփեյանից:
188. №. 9755 Քննական հետազօտական ի վերայ երկուց երկրայութեանց ի Սեղրոսեան Յովհաննէսէ, թուղթ, 68 թերթ, նոտր, 1803, ի թաղն Լապտեր ի Կ. Պօլիս: Նվեր է ստացված հալիպարնակ Հովսեփ Տեփեյանից:
189. №. 9756 Անետարան, թուղթ, 260 թերթ, բոլորագիր, ՉԿԲ (1313): Նվեր է ստացված Վահան վրդ. Գալամդարյանից:
190. №. 9757 Անետարան, մագաղաթ, 337 թերթ, բոլորագիր, գրիչ՝ Մովսէս, ՌՃՁ (1657 թ.): Գնված է:
191. №. 9758 Գիրք արեստականաց... որ է քիմիայ, թուղթ, 77 թերթ, նոտր, գրիչ՝ Աւետիք վրդ. Բաղիշեցի, որ է Սալանաձորցի, 1814 թ.: Գնված է:
192. №. 9759 Աղաւէտ, թուղթ, 155 թերթ, նոտր, գրիչ՝ Կարապետ դպիր, ՌՄՄԲ—ՌՄՄԳ (1803—4 թթ.): Գնված է:
193. №. 9760 Արուեստարանութիւն (Ալքիմիա), թուղթ, 92 թերթ, նոտր և շղագիր, ժԸ—ժԹ դդ.: Գնված է:
194. №. 9761 Շարակնոց, թուղթ, 391 թերթ, բոլորագիր, ժՁ դար: Գնված է:
195. №. 9762 Ախրաբ, թուղթ, 90 թերթ, նոտր, գրիչ՝ Վարդան, ՌՃԿԸ (1729 թ.): Գնված է:
196. №. 9763 Ախրաբ, թուղթ, 141 թերթ, նոտր, ժԸ—ժԹ դդ.: Գնված է:
197. №. 9764 Պատարագամատոյց, թուղթ, 200 թերթ, բոլորագիր, 1742 թ. կէօպօլիս: Գնված է:
198. №. 9765 Պատարագամատոյց, թուղթ, 96 թերթ, բոլորագիր, 1801 թ.: Գնված է:
199. №. 9766 Մաշտոց, թուղթ, 127 թերթ, նոտր, 1728 թ., կէօպօլիս: Գրնված է:

200. №. 9767 Մաշտոց, թուղթ, 94 թերթ, նոտր, ՌՂԵ (1646), Կամէնից: Գնված է:
201. №. 9768 Ժամագիրք — Պատարագամատոյց, թուղթ, 194 թերթ, ժԹ դար: Գնված է:
202. №. 9769 Կանոնագիրք, թուղթ, 211 թերթ, նոտր, ժէ դար: Նվեր է ստացված հաշիպարնակ Հովսեփ Տետեյանից:
203. №. 9770 Ժողովածու, թուղթ, 128 թերթ, շղագիր, գրիչ՝ Մկրտիչ մահատեսի Աղաճանեան-Իսահակեան, 1884 թ. Ելիզավետապոլ (Գանձակ):  
Բովանդակություն.— ա) Կտակ մեծի ուրբաթուն: բ) Քարոզք: գ) Մեկնութիւն եկեղեցւոյ: դ) Համառօտ քերականութիւն: ե) Թուրքաց Ալաջադաղննան երգք: զ) Այլ և այլք: Գրնված է:
204. №. 9771 Պարզատումար, թուղթ, 77 թերթ, շղագիր, գրիչ՝ Տէր Մարտիրոս Տէր-Նահապետեան Իլիճեցի, ՌՄՂԵ (1826 թ.), Սածիլ (Ախալցխա): Բերված է Սածիլ գյուղի Ս. Սարգիս ուխտավայրից:
205. №. 9772 Ախրաբ, թուղթ, 65 թերթ, շղագիր, ժԹ դար: Գնված է:
206. №. 9773 Աւետարան, մագաղաթ, 302 թերթ, բուրբագիր, ժԶ դար: Գնված է:
207. №. 9774 Մաշտոց, թուղթ, 216 թերթ, բուրբագիր, ժԶ դար: Նվեր է ստացված Վերին Արտաշատ գյուղի բնակիչ Վաչե Հմայակի Սաֆարյանից:
208. №. 9775 Ախրաբ, թուղթ, 83 թերթ, բուրբագիր: Գնված է:
209. №. 9776 Բաղգիրք բացատրական, թուղթ, 290 թերթ, նոտր, 1701 թ.: Գնված է:
210. №. 9777 Ժողովածու (մեծ մասը Ն. Շնորհալի), թուղթ, 360 թերթ, բուրբագիր, գրիչ՝ որդի Կիրակոս քահանայի, ՌՂԹ (1650 թ.), լերկիրս Երընջակոյ, ի գեղս Շօռթու: Գնված է:
211. №. 9778 Կրօնագիտութիւն, թուղթ, 64 թերթ, շղագիր, 1851 թ.: Գրնված է:
212. №. 9779 Հեփիմարան, թուղթ, 21 թերթ, շղագիր, գրիչ՝ Ղևոնդ քհ. Տէր-Սարգսեան, 1914-ից առաջ, Թիֆլիս: Գնված է:
213. №. 9780 Շարակնոց, թուղթ, 379 թերթ, բուրբագիր, գրիչ՝ Վարդոս, ժԶ դար: Նվեր է ստացված թե՛հրանարնակ տիկին Սրբուհի Անանյանից:
214. №. 9781 Շարակնոց, թուղթ, 321 թերթ, բուրբագիր, ժԶ դար: Նվեր է ստացված թե՛հրանարնակ տիկին Սրբուհի Անանյանից:
215. №. 9782\* Էկլէսիաստիկոս-Մեկնութիւն բառոյական փիլիսոփայութեան... (Հակոբ Նալյանի), թուղթ, շղագիր, 107 թերթ, գրիչ՝ Գրիգոր վարդապետ Կարնեցի, ՌՄՂԵ (1836 թ.), Կարին:
216. №. 9783 Քարոզ տարեկան (Պատրոս Աղամալյան), թուղթ, 22 թերթ, շղագիր, ժԹ դար, Կարին:

\* №№ 9782—9785 ձեռագրերը ստացված են Հայկ. ՍՍՌ ԳԱ Գրականութեան ինստիտուտից:

217. №. 9784 Մեկնություն յայտնութեան Յովհաննու (Պետրոս Աղամալյան) թուղթ, 48 թերթ, շղագիր, ժժ դար:
218. №. 9785 Ժողովածու, թուղթ, 62 թերթ, նոտր և շղագիր, գրիչ՝ Գրիգոր վարդապետ Կարնեցի, 1842-ից առաջ, Կարին: Բովանդակություն.— ա) Քարոզք: բ) Մահ Աղեքսանդր թագաորի: գ) Աստղարաշխութիւն: դ) Մեկնութիւն դատատրաց և թագաորաց: ե) Դեղատոմսք: զ) Աղամ-Ազրար. «Ակոսու կործանումք»: է) Տապանագիրք:
219. №. 9786 Տանար քննայեաց սր. Աժաճանի, որ ի Հայաստան վասպու-  
տական, թուղթ, բոլորագիր, ՌՅԽ (1891): Ալ. Մյասնիկյանի  
անվան գրադարանից:
220. №. 9787 Մնդրիանդրեայ նաոխ (Ոսկերեհերան), թուղթ, 217 թերթ, նոտր,  
ՌՃՁԴ (1735), Կ. Պօլիս: Նվեր է ստացված հալիպարնակ  
Հովսեփ Տեռեյանից:
221. №. 9788 Յիշատակություն Պատմական... ժողովոց, թուղթ, 260 թերթ,  
նոտր, ժԸ դար: Նվեր է ստացված հալիպարնակ Հովսեփ Տե-  
տեյանից:
222. №. 9789 Ժողովածու (հեքիմական և տոմարական), թուղթ, 47 թերթ,  
նոտր, ժԸ—ժԹ դդ.: Նվեր է ստացված Պոլսարնակ Հակոբ  
Աբրահամյանից:
223. №. 9790 Իրի բժշկական արեստին Ամիրդովլար Ամասիացոյ, թուղթ,  
44 թերթ, նոտր, ժԸ դար: Նվեր է ստացված Սանֆրանցիս-  
կոյարնակ Ալան Ենգոյանից:
224. №. 9791 Շարակնոց, թուղթ, 151 թերթ, բոլորագիր, ժՁ դար: Գնված է:
225. №. 9792 Աւետարան, թուղթ, 335 թերթ, բոլորագիր, գրիչ՝ Զաքարիա,  
ԶԻԵ (1476 թ.), ի երկիրս Վարանդոյ, ի անապատս... Ոմանս:  
Գնված է:
226. №. 9793 Մասն Յայսմատուրաց, թուղթ, 14 թերթ, բոլորագիր, ժԵ դար,  
ստացող՝ Գրիգոր և այլք:
227. №. 9794 Մասն Յայսմատուրաց, թուղթ, 24 թերթ, բոլորագիր, գրիչ՝  
Մկրտիչ գծող, ժՁ—ժԷ դդ.:
228. №. 9795 Ժողովածու, թուղթ, 35 թերթ, շղագիր, գրիչ՝ Մեսրոպ ար-  
քեպիսկոպոս, 1872 թ.: Նվեր է ստացված Ֆիլադելֆիարնակ  
Ղևոնդ Բաքալյանից:  
Բովանդակություն.— ա) Վասն առաջնորդանալոյ ումեմն  
Դէկիրմանչի Օղլու ի Տիգրանակերտ յԱմիթ: բ) Ժամանակա-  
գրութիւն (1732—1866): գ) Վարք Մկրտիչ Նաղաշի: դ) Յու-  
ղազս պատմութեան միոյ Քրթոյ անուն Թէմուր կոչեցելոյ...  
ե) Պատմութիւն վարուց Աբրահամ պատրիարքի: զ) Քա-  
ղուածք ի գրոց MICHAELIS LE GUIEN: է) Ի գրչակիր  
մատենէ Եմէթէ Զմմառեան վանուց: բ) Այլ և այլք:
229. №. 9796 Ժողովածու, թուղթ, 122 թերթ, նոտր, ժԷ—ժԸ դդ.:  
Բովանդակություն.— ա) Մամուլի Անեցոյ հաւաքմունք ի  
գրոց պատմագրաց... բ) [Մեկնութիւն նշանագրաց հայոց]:  
գ) Մեկնութիւն նշանագրաց ալֆարնից երրայեցոցն: դ) Բառք

- Գալիանոսի: Ե) Աշխարհացոյց կարդաւ: զ) Այս ԻԴ (24) գիրս  
լաթինացոյ այբուբեն է: Գնված է:
230. Մ. 9797 Գանձարան, թուղթ, 15 թերթ, բոլորագիր, ժէ դար:
231. Մ. 9798 Աւետարան, մագաղաթ, 302 թերթ, բոլորագիր, գրիչ՝ Նիկո-  
ղայոս, ՌՃԳ (1654 թ.), Կաֆայ: Գնված է:
232. Մ. 9799 Շարակնոց, մագաղաթ, 348 թերթ, բոլորագիր, գրիչ՝ Քո-  
խաթցի Միրայէլ, ՌՃԷ (1658 թ.), Կ. Պօլիս: Գնված է:
233. Մ. 9800 Խորհրդատեար, թուղթ, 37 թերթ, բոլորագիր, գրիչ՝ Ուակու-  
սարցի Սահակ երէց, ՌՃԽԶ (1697 թ.), Քիլի: Գնված է:
234. Մ. 9801\* Ժողովածու, թուղթ, 262 թերթ, նոսր, ժէ դար:  
Բնվանդակություն.— ա) Գրիգոր Տաթևացոյ Տեսութիւն ի  
բանն, որ ասե. «հոգի տեառն ի վերայ իմ օժող...»: բ) Յո-  
հաննու Որոտնեցոյ Մեկնութիւնք: գ) Բժշկարան:
235. Մ. 9802 Բժշկարան, թուղթ, 118 թերթ, շղագիր, Սիմէօն Լօռու-Մէլի-  
բեան, 1825 թ., Մոսկով:
236. Մ. 9803 Բժշկարան, թուղթ, 371 թերթ, շղագիր, ժՔ դար:
237. Մ. 9804 Ճառ աստուածաբանական, թուղթ, 44 թերթ, նոսր, գրիչ՝  
Պալատցի Յովհաննէս վրդ. Զուպուխճի Յարութիւնեան,  
1843 թ. Կ. Պօլիս: Նվեր է ստացված հայկապքնակ Հովսեփ  
Տետեյանից:
238. Մ. 9805 Տիեզերագումար երկուրդ ժողովն Նիսեսոսի, թուղթ, 161  
թերթ, նոսր, 1753 թ., Կ. Պօլիս:
239. Մ. 9806 Բառարան (արաբերեն-հայերեն), թուղթ, 48 թերթ, շղագիր,  
ժՔ դար:
240. Մ. 9807 Ճաշոց, մագաղաթ, 418 թերթ, բոլորագիր, գրիչ՝ Յակոբ դպիր,  
ՌՉԳ (1634 թ.), Կ. Պօլիս:
241. Մ. 9808 Քարոզգիրք (Յակոբ Նալեան), թուղթ, 134 թերթ, շղագիր,  
ժՔ դար:
242. Մ. 9809 Պատմութիւն հայոց Կիրակոս Գանձակեցոյ, թուղթ, 32  
թերթ, նոսր, ժԸ—ժՔ դդ.:
243. Մ. 9810 Ժամանակագրական աղիսակք (Յովհաննէս Տատեան),  
թուղթ, շղագիր, գրիչ՝ Յովհաննէս Տատեան, 1866:
244. Մ. 9811 Պատմութիւն հայոց Յովհաննէս Դրասխանակերտցոյ, թուղթ,  
100 թերթ, նոսր, ժԸ—ժՔ դդ.:
245. Մ. 9812 Տօմար ի պատուելի Սիմէօնէ, թուղթ, 96 թերթ, նոսր, 1235  
(1785 թ.):
246. Մ. 9813 Լուսաշաւիղ, թուղթ, 101 թերթ, նոսր, ժՔ դար, Կ. Պօլիս:
247. Մ. 9814 Պատմութիւն քաղաւորութեանն Քիւնայի, թուղթ, նոսր, ՌՄԻ—  
ԻՄԽԷ (1771—1798), Կ. Պօլիս:
248. Մ. 9815 Գիրք հակառամարտութեան (Նէոփիտոս), թուղթ, 47 թերթ,  
նոսր, ժԸ դար, Կ. Պօլիս:
249. Մ. 9816 Լուսաշաւիղ, թուղթ, 100 թերթ, նոսր, գրիչ՝ Գևորգ դպիր Կ.  
Պօլսեցի, 1834, Կ. Պօլիս:

\* ՄՄ 9801—9803 ձեռագրերը ստացված են ՀՍՍՌ ԳԱ բժշկությունից և բնագիտության պատ-  
մության սեկտորից:

250. №. 9817 Օրինակի հրահանգաց բարուց, թուղթ, 142 թերթ, շղագիր գրիչ՝ Յովհաննէս դպիր Տէր-Կարապետեան, 1824, Արմաշ:
251. №. 9818 Սահմանք և կանոնք առաքելականք, թուղթ, 163 նոտր, գրիչ՝ Սիմէոն դպիր, ՌՃՀԷ (1728), ի նահանգն Ակնաձորոյ, ի գիւղն Կարուշոյ:
252. №. 9819 Գիրք հակաամարտութեան (Նէոփիտոս), թուղթ, 102 թերթ, շղագիր, գրիչ՝ Գրիգոր Աւետիսեան, 1852, Կ. Պօլիս:
253. №. 9820 Գանձարան նամակաց (Գրիգոր Փեշտեմալճեան), թուղթ, 96 թերթ, նոտր, գրիչ՝ Յօհաննէս դպիր Զէնկիլերցի, 1831, Արմաշ:
254. №. 9821 Գանձարան նամակաց (Գրիգոր Փեշտեմալճեան), թուղթ, 122 թերթ, նոտր, գրիչ՝ Գևորգ դպիր Կ. Պօլսեցի, ՌՄՁԲ (1833), Կ. Պօլիս:
255. №. 9822 Անգիտաց Անպէս Ամիրդովլաթ Ամասիացոյ, թուղթ, 349 թերթ, նոտր, գրիչ՝ Յովհաննէս, Ժէ դար (1655—1680 թթ. ընթացքում), ի յտն սր. Մինասայ և սր. Աստուածածնին:
256. №. 9823 Ժողովածու, թուղթ, 167 թերթ, նոտր, գրիչ՝ Արրահամ վարդապետ Կ. Պօլսեցի, ՌՃՂԳ—ՌՃՂԴ (1744—1745 թթ.), Երուսաղէմ:
- Բովանդակութիւն.— ա) Բանք պիտանիք... ի կենդանեաց գրոց ի յԱրրահամ... վարդապետէ Կ. Պօլսեցոյ: բ) (Նորին) բանք ինչ ի վերայ սրբոյն Յովհաննու Մկրտչին: գ) Կտակ խաչելութեան Քի. այ. մերոյ...:
257. №. 9824 Քարոզգիրք, թուղթ, 505 թերթ, նոտր, ԺԹ դար:
258. №. 9825 Կերակուր քահանայից, թուղթ, 58 թերթ, նոտր, գրիչ՝ Ստեփաննոս քարտուղար Կ. Պօլսեցի, ՌՄԸ (1759), Կ. Պօլիս:
259. №. 9826 Ժողովածու, թուղթ, 272 թերթ, նոտր, և բոլորգիր, գրիչ՝ Գրիգոր վրդ., ՌՄԶ (1607)-ից առաջ, Կեսարիայ:
- Բովանդակութիւն.— ա) Վերհայեցումն խորհրդոյ աղաթից... ի խնդրոյ Ստեփանոսի և Վարդանայ աշակերտի գրոց: բ) Մովսէսի քերթողահարն Յաղագս քերականութեան: գ) Վարդան Բարձրաբերդոյ ոգնալ բան: դ) Հերմեա եռամեծի առ Ասկիլիպիայ սահմանք: ե) Վերլուծական բնախօսութիւն Վարդանայ: զ) Թէոփնեա Պղատոնականի յաղագս ճարտասանական կրթութեանց: է) Քարոզք: ը) Բանք ողբերգականք վասն մահուան [Գրիգորի] յՈւրհայեցոյ... ասացեալ յաշակերտէ նորին... Գրիգորի Կեսարացոյ:
260. №. 9827 Ժողովածու, թուղթ, 116 թերթ, նոտր, գրիչ՝ Մարտիրոս Մարկաւազ, ՌՄԼԶ (1787), Իսկիւտար:
- Բովանդակութիւն.— ա) Սիմէոնի Մաղիստրոսի Սեթեան Անտիոքացոյ Յաղագս զօրութեանց կերելեաց: բ) Նորին՝ համառօտ քաղուածու զարմանալի խորհրդոց: գ) Գրիգոր Նիսացոյ Յաղագս կազմութեան մարդոյն: զ) Այս է ի գրոցն Գրիգորի Մագիստրոսի. «Եւ արդ որպէս ունի սերմ յիւրաքանչիւր անդամոց...»: ե) Պապ զինչ է, ի յունականէն ի մեզ փոխեցաւ ի Գէորգ դպրէ... Տէր-Յօհաննիսեան:



261. №. 9828 Մաշտոց, թուղթ, 176 թերթ, բոլորգիր և նոտր, գրիչ՝ Յոհան Լրէց, ՌՃՄ (1701 թ.), Ակն:
262. №. 9829 Մաշտոց, թուղթ, 237 թերթ, բոլորգիր և նոտր, ժէ դար:
263. №. 9830 Ժողովածու, թուղթ, 104 թերթ, նոտր, ժէ—ժԸ դդ.:  
 Բովանդակություն.— ա) Յիշատակ սրբոց հայրապետացն, որք ժողովեցան ի Կ. Պօլիս ընդգեմ հոգեմարտին Մակեդոնի: բ) Մովսէսի և Դաւթի հարցմունք ընդ երկարնակսն: գ) Հաւարումն բանից սրբոց երանելիաց հարցն մերոց յաղագս մարդեղութեան բանին աստծոյ: դ) Յաղագս շարականաց, թէ ոյր է ասացեալ: ե) Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի՝ Ասա հերետիկոս:
264. №. 9831 Վարժուրիւն բարտխ խոստովանութեան, թուղթ, նոտր, 61 թերթ, ժԹ դար:
265. №. 9832 Ժողովածու, թուղթ, 38 թերթ, նոտր և բոլորգիր, ՌՃՄԳ (1705)-ից առաջ:  
 Բովանդակություն.— ա) Ուղեգրութիւն Սարգիս արեղայի (1591—1592 թթ.): բ) Պատմութիւն Թամուրյանկայ (Թովմայի Մեծոփեցոյ): գ) Քի պատմութենէ ի ժամանակին մի ասի, թէ Ղալաթան այր մի աղքատացաւ և արտ մի ունէր վաճառեաց և այլ ոմն գնեաց դարտն դայն...»: դ) Ի ժամանակադրութենէ Յակոբայ քահանայի (1021—1029 թթ.): ե) Ի հարանց վարուց հաւաք բանք. «Ասէր հայրն Արսէն, եթէ կոյս որչափ կա ի տան հար իւրոյ...»:
266. №. 9833 Բառարան, (հայերէնից լատիններէն), թուղթ, 178 թերթ, շղագիր, ժԹ դար:
267. №. 9834 Տաղարան, թուղթ, 39 թերթ, նոտր, ժԸ դար:
268. №. 9835 Աստղարաշխութիւն, թուղթ, 238 թերթ, նոտր, ժէ դար, լրացված ժԹ դարում Հայրապետ գրչի ձեռքով:
269. №. 9836 Վասն ապաշխարութեան, թուղթ, 18 թերթ, նոտր, ժԹ դար:
270. №. 9837 Բժշկարան (Ամիրդովլաթ, Գալիանոս, Ասար Սերաստացի, Քաֆայի հարիմ և այլն), թուղթ, 428 թերթ, նոտր, գրիչ՝ Ազարիա դպիր, ՌՃԻԾ (1676): Գնված է:
271. №. 9838 Ժողովածու, մագաղաթ, 249 թերթ, բոլորգիր:  
 Բովանդակություն.— ա) Շարակնոց, Ոեթ (1193 թ.) Երուսաղէմ: բ) Խաղզիրք, Ոեթ (1193 թ.), Երուսաղէմ: գ) Տանացոյց և աւետարանացոյց, գրիչ՝ Կարապետ երեց, ՋՁԵ (1526 թ.), ի յանապատս ս. Խաչիկ հարս: Գնված է:
272. №. 9839 Կարգաւորութիւն հասարակաց աղօթից, թուղթ, 90 թերթ, բոլորգիր, ժԸ դար: Գնված է:
273. №. 9840 Երգարան ի Գրիգորէ Կանպանեանէ, թուղթ, 36 թերթ, նոտր, գրիչ՝ Յարութիւն Դավթեան, 1767 թ. Աստրախան: Գնված է:
274. №. 9841 Աւետարան, թուղթ, 295 թերթ, բոլորգիր, գրիչ՝ Վարդան, ծաղկող՝ Մկրտիչ, կազմող՝ Փիլիպոս, ստացող՝ Թոմայ, ՋԱ (1452), Աղթամա՞ր:

275. №. 9842\* Ժողովածու, թուղթ, 142 թերթ, նոտր, գրիչ՝ Աղէքսանդր Մխիթարեան, 1897:  
 Բովանդակություն.— ա) Վահան հաւատոյ... Միքայէլ վրդ. Չամչեան: բ) Թուղթ... Միքայէլ վարդապետ Չամչեան... Վասն գողութեան «Վահան հաւատոյ»... մատենին: գ) Թարգմանութիւն արդար վճռոյ Պիոսի է. պապին... վասն «Վահան հաւատոյ»... մատենին: դ) Յայտարարութիւն ողջամիտ դաւանութեան... ի հայր Պօղոս վարդապետէ Թնկրեան: ե) Թուղթ հայր Չամչեան առ միաբան վարդապետն իւրեանց եօթերօրին...: զ) Օրինակ թղթոյն Յովհաննէս վարդապետին Զօհրապեան... առ ազգականս իւր ի Փարիզու...: է) Պատմութիւն անցից գեանաշարժին ի Հայաստան աշխարհ ի 1840 ամի... ի Յովհաննէս Շահխաթունեանցէ:
276. №. 9843 Ժողովածու, թուղթ, 97 թերթ, նոտր, գրիչ՝ Սիմօն դպիր, 1828, Կարին:  
 Բովանդակություն.— ա) Շարունակութիւն կամ հաստատութիւն յառաջագոյն գրեալ մերում տեսարանի, կամ յայտնի ապացոյց նոր հերձուածող լինելոյ վերապատուելի հայր Միքայէլ Չամչեանց և բոլոր միաբանութեան իւրոյ: բ) Յայտարարութիւն ողջամիտ դաւանութեան. ի հայր Պօղոս վարդապետէ Թնկրեան: գ) Մանուէլ վարդապետ Գիւմրիւշխանեցոյ Առ արդարադատ ընթերցողս նենդեալ մատենի... հայր Միքայէլ Չամչեանց:
277. №. 9844 Բժշկարան, թուղթ, 301 թերթ, նոտր, ժէ դար:  
 Բովանդակություն.— ա) [Վասն տաք և հով ցաւոց Քաֆայի հարիմի ընտիր իմաստնոյ]: բ) Ախրապատին Ամիրդովլաթ Ամասեցոյ: գ) Դեղատոմսեր: Նվեր է ստացված ակադեմիկոս Լեոն Հովհաննիսյանից:
278. №. 9845 Բժշկարան, թուղթ, 152 թերթ, նոտրգիր և բուրդգիր, գրիչ՝ Սիմէօն, ՌՃԺԱ (1662)—1240 (1791).  
 Բովանդակություն.— ա) Աբու-Սայիդ, Յաղագս կազմութեան մարդոյն...: բ) Բժշկարան... լաւ և յընտիր յօրինակէ լատինացոց և ֆրանկաց: գ) Դեղերու զօրութիւն Ամիրդովլաթ Ամասեցոյ: դ) Դեղատոմսեր: ե) Հայրեն. «Աւաղ մեղ հայիլ պիտի...»: Նվեր է ստացված ակադեմիկոս Լ. Հովհաննիսյանից:
279. №. 9846 Ժողովածու, թուղթ, 49 թերթ, բուրդգիր և շղագիր, գրիչ՝ Նիկողայոս Գրիգորեան, 1853, Արդաշահար գյուղ:  
 Բովանդակություն.— ա) Կրթութիւն աւետարանական: բ) Քրիստոնէական վարդապետութիւն: գ) Կրօնական գանազան տաղեր: դ) Տաղ վարդի. «Առաւօտեան քաղցր և անուշ հովերէն...»: ե) Տաղ վարդի. «Երդնումն արեւդ արքայական...»: զ) Տաղ ուրախութեան. «Արի իմ քաղցրիկ ազաւնի...»: է) Տաղ բուրդուլի. «Բուրդուլն ասաց գէս մի գնար ետղի կայ, դուն չես գիտեր իմ սրտումս դաղի կայ...»: Գնված է:

\* №№ 9842—9843 ձեռագրերը պատկանել են Աղէքսանդր Մխիթարյանին նվեր են ստացված նրա ազգական Կարապետ Գուրգարյանից:

280. №. 9847 Համառոտութիւն աստուածաբանութեանն տեառն Լուդովիկոսի Հաբերքի վարդապետի սրբոյ մակացութեան Փարիզու, թուղթ, 180 թերթ, նոտր, հետին ստացող՝ Տէր Գրիգոր Խաչատրեան, ժ՛Ը դար: Գնված է:
281. №. 9848 Գիրք աղօթից յար կոչի Եփրեմ խորի, թուղթ, 34 թերթ, նոտր, գրիչ՝ Առաքել քահանայ Ստեփանեան, ՌՅԺԷ (1868): Աղանատուն գեղջ: Նվեր է ստացված Ապարանի շրջանի Մուլքի գյուղի բնակիչ Կարապետ Ներսեսի Ղազարյանից:
282. №. 9849 Շարակնոց, թուղթ, 323 թերթ, նոտր, գրիչ՝ Յարութիւն դպիր, ՌՂԷԳ (1684), Ըստամպօլ: Գնված է:
283. №. 9850 Աւետարան, մագաղաթ, 244 թերթ, բուրգի, գրիչ՝ Տիրատուր, ՌՂԸ (1649), Կ. Պօլիս: Նվեր է ստացված Շավարշ քահանայ Պալըմյանից (Կ. Պոլիս):
284. №. 9851 Վանան ուղղափառութեան (հատոր Բ), թուղթ, 140 թերթ, նոտր, ժ՛Ը դար: Նվեր է ստացված հալիպարնակ Հովսեփ Դեղեյանից:
285. №. 9852 Հայելի ազդեցութեան... առ ի զգաստութիւն... Սրմախէշ Մանուէլի... թուղթ, 163 թերթ, նոտր, ՌՄԷ (1781): Գնված է:
286. №. 9853 Յաղագս խորհրդոյ ապաշխարութեան, թուղթ, 209 թերթ, շղագիր, ժ՛Թ դար: Գնված է:
287. №. 9854 Շարակնոց, թուղթ, 143 թերթ, բուրգի, ժ՛Ը դար: Գնված է:
288. №. 9855 Ամացոյց (աստղաբաշխական սարք), շրջանաձև ստվարաթուղթ, 1 թերթ (գրված երկու երեսի վրա), նոտր, ժ՛Է—ժ՛Ը դարեր: Բաժանված է 18 շրջանների, 6 շրջանում տրված են հայոց, հունաց և լատինացվոց վերագիրները, իսկ մյուսներում ամիսները՝ սկսելով մարտից:
289. №. 9856 Տեկարանութիւն կամ փղորայ Հայաստանի Ստեփաննոսի Նահրիմանեանց Տփխիսեցոյ, թուղթ, 428 թերթ, շղագիր, գրիչ՝ Ստեփաննոս Շահրիմանեանց (\*), ՌՄԿԷ (1818), Տրփխիս: Նվեր է ստացված ՀՍՍՌ ԳԱ Բժշկութեան և բիոլոգիայի պատմութեան սեկտորից:
290. №. 9857 Ժողովածու, մագաղաթ և թուղթ, 273 թերթ, բուրգի և նոտր, գրիչ՝ ա) Մարութայ, բ) Տէր Փիլիպոս, ա) ՌՃԻԳ (1674), բ) ՌՃԽԷ (1698), ա) Սր. Ստեփաննոս Նախավկայ, բ) Տփխիս:
- Բովանդակություն.— ա) Նախերգանք քարոզից: բ) Հեքիմարան: գ) Աստղաբաշխութիւն: դ) Կանոնգիրք: ե) Յառաջարանութիւն և հաւաքումն սրբոց առաքինութեանց: զ) Պատմութիւն ի պէտս քարոզութեան առ ի պատրաստ ի ձեռս ունելով: է) Թիւք արտաքին գրոց թէ ովք են ասացեալք: յ) կարգ և թիւ թագաւորաց հայոց Մարտիրոսի Ղրիմեցոյ: լ) Պատմութիւն Ղրիմայ Մարտիրոսի Ղրիմեցոյ: զ) Երգ վասն շարականի Առաքել վարդապետէ: ժա) Կարապետ վարդապետի մեծի ասացեալ խրատ պիտանի մանկանց եկեղեցոյ: Գնված:

Օ. ԵԳԱՆՅԱՆ, Ս. ԱՐԵՎՏԱՏՅԱՆ

НОВЫЕ ПОСТУПЛЕНИЯ В ФОНД АРМЯНСКИХ РУКОПИСЕЙ  
МАТЕНАДАРАНА В 1956—1959 ГГ.

Резюме

За последние четыре года, с 1-го января 1956 г. по 31-ое декабря 1959 г., фонд армянских рукописей Матенадарана (Научно-исследовательского института древних рукописей при Совете Министров Армянской ССР) пополнился 290 рукописями. В статье, после пояснительного вводного слова, дается краткое описание всех этих рукописей.

Շ. ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹՆԵՐ

Մատենադարանի տպագիր գրքերի քարտարանները վերնայելու ընթացքում նորից հայտնաբերվեցին գրքեր<sup>1</sup>, որոնք վրիպել են մատենագետներ Ա. Ղազիկյանի, Գ. Զարպճանալյանի, Թեոդիկի և Գ. Լեոնյանի ուշադրությանից և դուրս են մնացել նրանց մատենագիտական ցանկերից: Այս հազորդման մեջ նկարագրված են 13 այդպիսի գրքեր, որոնք կարելի է բաժանել երեք խմբի:

Ա. 5 գիրք, որոնք տպագրվել են տարբեր քաղաքներում և տպարաններում. 1700-ից մինչև 1838 թթ.:

Բ. 4 գիրք, տպագրված Կ. Պոլսի մահառեսի Աստվածատուրի, նրա որդիների ու թոռների անունը կրող տպարանում, 1699 մինչև 1810 թթ.:

Գ. Հնդկաստանի Կալկաթա քաղաքում 19-րդ դարի առաջին քառորդում գործող Ավետ Զննվումյանի տպարանում տպագրված 4 գիրք և հավելյալ 3 գիրք, նույնպես տպագրված այդ նույն տպարանում, որոնց մասին տեղեկություններ կան նույն տպարանում տպված և սույն հազորդման մեջ նկարագրված «Ժամագիրք համառոտ վասն մանկան» գրքում Ավետ Զննվումյանի թողած հիշատակարանից:

1.

(Հնատիպ գրքերի հավաքածու № 1072)

ՀԱՄԱՌՕՏ ՊԱՏՄՈՒԹԻԻՆ /Տնօրինականաց տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի/ որ ի սուրբ քաղաքն Երուսաղէմ/ Այլ և թուղթն սիրոյ և միաբանութեան /Կոստանդիանոսի և Տրդատայ թաղաւորաց և սրբոցն Սեղբես/տրոսի և Գրիգորի Լուսաւորչին/ մերոյ: /Տպեցեալ արդեամբք և դոյւր/ Եղիայի Արհի եպիսկոպոսի /Թեթլէհէմի: սրբոյ այրին/: Յամի տեառն ՌԶ և Հայոց ՌՃԽԹ {1700} յուլիսի Իէ (27): Ի Վէնէտիկ:

88 դարդափակ էջեր. 16×11×1 սմ. շափի, կաշեպատ տախտակե կազմ. կազմի աստառը մետաքսե գունավոր կտոր: Յուրաքանչյուր կողմից 2-ական թերթ պահպանակ: Փորագրություններ 2, 6, 25, 44 էջերին: Լուսանցազարդեր 3, 37, 41, 45, 83 էջերին: Վերջազարդեր 42, 43 էջերին: Զարդագրեր 3, 37, 41, 45, 83, 85, 86 էջերին: Գրաշարազարդեր: Շարվածքի շափը 12×7,5 սմ:

Բովանդակություն.— Այստեղիկ են տեղիք ամենայն տնօրինականաց Տեառն մերոյ յիսուսի քրիստոսի, որ ի սուրբ և աստուածարնակ մայրաքա-

<sup>1</sup> ՏՄՍ «Մատենագիտական նորույթներ» խորագրով մեր առաջին հազորդումը, տպագրված «Բանբեր Մատենադարանի», № 4, էջ 425—436:

ղաքն Երուսաղէմ, որք կան ի միջի և արտաքոյ նորին: Խրատ համառօտաբար Յաղագս այնոցիկ, որք տան երկրպագութիւն սրբոց տնօրինականաց... որ ի սուրբ Երուսաղէմ: Տաղ ասացեալ յակոր քահանայէ ի վերայ սուրբ քաղաքին Երուսաղէմի: Տաղ սրբոյն յակորայ առաքելոյն որդոյն զերեթեալ: Թուղթ սիրոյ և միաբանութեան մեծի կայսերն Կոստանդիանոսի և սրբոյն Սեղբեստրոսի վեհազունի փափին և Տրդատայ Հայոց լուսաւորչին... Տաղ ծննդեան: Տաղ ջրօրհնեացն: Տաղ յարութեան:

Գրքի մեջ չի նշված տպարանի անունը: Տառաձևերից ու տպագրողներից դատելով կարելի է ենթադրել, որ հրատարակվել է Նահապետ Գուլնազարյանի տպարանում, որտեղ ըստ թեոդիկի, 1687 թ. տպագրված է միայն Հովհաննես Կոստանդնուպոլսեցու «Պարզարանութիւն հոգեհուազ սաղմոսացն Դաւթի մարգարէին» գիրքը:

## 2.

## (Հնամիտ գրեթէ հավաքածու № 24)

ԳԻՐՔ ՏՕՄԱՐԱՅ /Հայոց և Հոռոմայեցոց/ ընդ որս և պարզատօմար և լուսնացոյց. և այլ բանք /յոյժ պիտանիք. ընդ/ որս և Կաղանդացոյց. /և հարցմունք սրբոյն/ Գրիգորի մերոյ Լուսաւորչին. և տեսիլ սուրբ/ Աստուածածնայ, զոր ետես ի լիառն ձիթենեաց. Եւ/ հարցմունք սրբոյն Բարսեղի Կեսարացոյ/ ի թուին հայոց ՌՃՁԷ [1738]:

(16), 17—162, 175—176, 181—188, 225—250, 261—272 էջ: 11×8×2 սմ չափի: Գրողմագարդ կաշեպատ տախտակե հնացած կազմ: Ռեստավրացիայի ենթարկած գիրք: Փորագրված կիսախորան 3-րդ էջին: Զարդագրեր 3, 39, 56, 140 էջերին: Վերջագարդ 239 էջին: Հիշագիր չի դրված սկզբի 16, 19, 20, 21, 23—28, 31, 185, 237 էջերին: Շարվածքի չափը 8,5×6 սմ:

Բովանդակություն.— Տօմար Հայոց: Տօմար Հոռոմայեցոց: Պարզատօմար ըստ Հոռոմայեցոց: Վասն եօթն մոլորականացն և կաղանդացոյցն: Տեսիլ սուրբ Աստուածածնին:

Օրինակի առանձնահատկությունը.— Սկզբի 16 էջերը էջակալված չեն: էջակալությունը սկսվում է 17 էջից: Վերջից պակասում են թերթեր:

Ծանոթություն.— Վերջերս Հայկ. ՍՍԽ Պետ. գրադարանի աշխատակից Ռ. Իշխանյանը մեր հնատիպ գրքերը նայելիս նկատեց, որ 1643 համարը կրող Տօմարը նույն հրատարակությունն է, ինչ որ սույն՝ 24 համար կրողը: 1643 համար կրողը շտմի տիտղոսաթերթ, սկսվում է 10-րդ էջից: Գրքի միջից պակաս են 28—195 էջերը, վերջանում է 442 էջով՝ մեջընդմեջ թերթի:

Իսկ 24 համար կրողը, ինչպես տեսանք գրքի նկարագրությունից, ունի տիտղոսաթերթ, տեքստը սկսվում է 1-ից և վերջանում է 272 էջով: Կոպիտասած, մեկի սկիզբը դրություն ունի, մյուսի՝ վերջը, որի հետևանքով բովանդակություններն էլ տարբեր են: 1643-ի բովանդակությունը հետևյալն է. Տօմար հայոց: Տօմար Հոռոմայեցոց: Պարզատօմար ըստ Հոռոմայեցոց: Վասն եօթն մոլորականացն և կաղանդացոյցն: Հարցմունք սրբոյն Բարսեղի Կեսարացոյ և պատասխանիք երբօր իւրոյ սրբոյն Գրիգորի: Յանկ գրքոյս: Յիշատակարան Տպողի: Իզնատիոսի արարեալ մարմնախաղաց փորձիւ: Լուսնացոյց և երաղացոյց:

Երազանսան զոր ասացեալ է Դանիէլ Մարգարէն: Յաղագս շարժմանց որ են ցուցակ: Յաղագս շարժմանց հողմոց և ծովու: 304 էջի վրա տպագրված է «Յիշատակարան տարդի»: Էջը վերջանում է «վերջ» բառով: Սակայն ըստ երևույթին զբքի տպագրութիւնը այստեղ դադարեցվել է, հետո նորից շարունակվել: 303 և 304 էջերը կրկնված են: Ըստ որում 303 էջի վերևի կեսը նույնն է, ինչ որ նախորդ 303 էջի վրայինը, իսկ երկրորդ կեսին «Յանկ»-ի փոխարեն տպագրել են «Իգնատիոսը»: Այդտեղից տպագրութիւնը շարունակվել է:

304 էջի վրա եղած հիշատակարանի շնորհիվ իմանում ենք, որ գիրքը տպագրված է Ղազար կաթողիկոսի օրոք և Արրահամի տպարանում. «Աւարտեցաւ գրելուս որ կոչի բուն տօմար հայոց բարեխօսութեամբ սրբոյն Սարգսի զօրավարին: Ի հայրապետութեան տեան Ղազարու սրբազան կաթողիկոսին... Արդ որք օգտիք սովաւ կարդալով յիշեցէք զնուստ Արրահամս և զզորժ առօրսն զխոյնցի Իգնատիոսն և զԱնտօնն»:

Երկու օրինակների միջև ընդհանուր են՝ 5—14, 21—22, 225—250, 261—272 էջերը: Մնացած էջերով մեկը լրացնում է մյուսին:

## 3.

## (Հնատիպ գրքերի հավաքածու № 1216)

ՃԱՇՈՅ ԳԻՐՔ ՓՈՔՐԱ/ԳՈՒՆՆՂ: |Արտահանեալ ի մեծ ճաշոցէ գեղեցկալ տիպ և վայելուչ գաղափարեցելոյ ի մատենից |հնոց թագաւորացն հայոց-յաղագս եկեղե| ցական դպրոց: |Զի յառաջագոյն ասացեալ վերահասու| լինիցին զգուշացեալ ուղիղ ընթերցման ի |յատեան եկեղեցոյ առաջի մեծամեծաց| այսինքն, եպիսկոպոսաց և վարդապետաց: Քահանայից և ժողովրդոց: |Ուստի պարունակէ սա յինքեան ի բոլոր| տարուչ զընթերցուածս համայնս դպրաց |որ ի ժամ պատարագի, այսինքն զՅրդ երգոցին. |զԱռակացն. զՄարգարէիցն, զԱռաքելոցն |զործոց, զՊօղոսի թուղթսն և Կաթու|ղիկեայցն. և զԱզուհացից զերեկոեան |զընթանսն բոլոր:| Տպեցեալ արդեամբք և գոյիւք տպագրողի | ի փառս քրիստոսի և ամենօրհնեալ մօր նորին:| Ի հայրապետութեան տեան Ղազարու սրբազան և աստուածաբան Կաթողիկոսին: |Սև ի պատրիարգութեան սրբոյ Երուսաղէմի նորապսակ| տեան Յակօբայ արհի և Աստուածաբան վարդապետի |իսկ Կոստանդնուպօլսոյ պատրիարգ Տեան Մինասայ արհի և աստուածաբան վարդապետի: |Ի թուին հայոց (1198), [1749] մայիսի Ին [25]:

812 զարդափակ, երկսյուն էջեր, փայտյա թավշապատ կաղմով. 21×15×6 սմ չափի: Փորագրութիւններ 2, 224, 328, 352, 385, 400, 407, 430, 476, 548, 598, 688, 811 էջերին: Նախազարդեր 353, 386, 477, 549 էջերին: Լուսանցազարդեր 12, 19, 353, 386, 407, 477, 549, 599 էջերին: Վերջազարդեր 11, 407 էջերին: Տպարանազարդեր 74, 105, 249, 361, 599, 773, 782 էջերին: Հիշադիր շկա բազմաթիվ էջերին: Զարդագրեր (այբբ. կարգով) Ա, Բ, Գ, Ե, Զ, Ը, Թ, Ի, Լ, Մ, Կ, Զ, Ը, Մ, Յ, Ո, Պ, Ս, Վ, Տ, ՏՐ, Յ, Փ, Ք: Շարվածքի չափը 17×11 սմ:

Օրինակի առանձնահատկութիւնները. — 3—8 էջերը գրված են ձեռագրով: Պակասում են 11—14 էջերը:

Հրատարակութեան պատմութիւնը. — Ճաշոց փոքրագունները համառո-

տուժյունն է մեծ ճաշոցից, «Արտահանեալ ի մեծ ճաշոցէ»: Տպագրվել է Կոստանդնուպոլսում, Մարտիրոս դարբի տպարանում, իրեն իսկ «արդեամբք և գոչիւք»: Տպագրիչ Մարտիրոսը դրբի հիշատակարանի մեջ գրում է. «...Յղև աւարտ ճաշոց դրբիս հին և նոր կտակարանացն աստուծոյ...: Ի թուիս մերոյ (1199), [1750] ի մայիսի երեք...: Արդ որք ընթեռնոյք զսա, չիշեցէք զհանգուցեալ ծնօղն իմ զմահտեսի Սարգիսն, և զմայրն իմ զՍիմայն և զեղբայրն իմ զԳէորքն... նաև չիշեսչիք զչնչին և զանպիտան ծառայս ձեր զՄարտիրոս զպիրս: Եւ զսիրելի որդեակն իմ զՏիրացու Սերօբէն, որ ի գործ շարաքարգութեան կապառեայ տառիցն և ցրմանց նոցին զցայգ և զցերեկ միայնակ՝ ոչ սակաւս կրեաց զաշխատանս...»:

## 4.

## (Հայերեն գրքերի հավաքածու № 28713)

Գիրք [Պատմութեան] Սրբոյ և մեծի Քաղաքիս աստուծոյ Երուսաղէմիս և) սրբոց Տնօրինականաց [Տեղեաց Տեղեաց Տեառն մերոյ] Յիսուսի Քրիստոսի: [Կոստանդնուպօլիս, ի Տպարանի մայր դպրատան. Յամի Տեառն, 1807 և ի թուին հայոց ՌՄՇԶ:

353 զարդափակ էջեր. կաշեպատ ստվարաթղթի կազմ. կազմի աստառը գունազարդ թուղթ, 1թ սպիտակ թղթի պահպանակ: Մեծութիւն 20×14×2 սմ: Փորագրութիւններ տիտղ. թերթի վրա և 8, 9 էջերին: Բաղմամբիվ զարդագրեր: Վերջազարդեր 34, 63, 162, 178, 184, 221, 258, 280, 281, 309, 323 էջերին: Լուսանցազարդ 9-րդ էջին: Հիշաբառ չի դրված 35, 67, 98, 103, 116, 199, 211, 219, 275, 337 էջերին: Շարվածքի շափք 16×10 սմ:

Հրատարակութիւն — 4-րդ:

Էնդինակ — Հովհաննէս Հաննա.

Բովանդակութիւն. — Երուսաղեմ քաղաքի և սրբավայրերի նկարագրութիւնը և պատմութիւնը: Տաղք, օրհնութիւնք — ներբողեանք նվիրված Երուսաղեմ քաղաքին:

Հրատարակութեան պատմութիւնը. — Գրքի հիշատակարանում նախապես տրված է 2-րդ և 3-րդ հրատարակութիւնների պատմութիւնը, իսկ սույն 4-րդ հրատարակութեան մասին հետևյալն է ասված... «... Ի սպառիլ և ի վերջանալ երրորդի տպագրութեան պատմագրքոյս այսորիկ՝ վերստին հրամանաւ և արդեամբ իսկ արժանաժառանգ սրբազան պատրիարքի սրբոյ Տնօրինական Տեղեաց Տեառն թէողորոսի... արքեպիսկոպոսի՝ եղև այս շորրորդ տպագրութիւն գրքոյս: ... Արդ ի վայելելն զսա, և ի հրճվիլն ձեր հոգևորական պատմութեամբ սրբոց տնօրինականաց տեղեացն Քրիստոսի. չիշեսչիք զպատրաստական ծառայ ձեր զտպագրիչ տիրացու Մարտիրոս զշարօղ և զցրուող գրոցս... Յամի տեառն 1807 և ի թուին հայոց ՌՄ ի ձեռն Տպագրիչ Մարտիրոսի»:

## 5.

## (Հայերեն գրքերի հավաքածու № 8749)

ԽՈՐՀՐԴԱՏԵՏՐ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏԱ/ՐԱԳԻ/, Ըստ արարողութեան Եկեղեցեաց և Հայաստանից: [Ի Հայրապետութեան Տեառն Յովհաննիսի Արժանընտիր կաթողիկոսի Ամենայն հայոց և ասպետի: [Հրամանաւ Տեառն Աստու-



ածարեալ Ա/ուսրելաշաւիղ վիճակաւոր Առաջնորդի և մետրապօլիտի հայոց Ղարաբա/ղայ և այլոց: Տեառն ՊԱՂՏԱՍՍ/ԲԱՅ իշխանազնի Հասան Զալա/լիան Արբազան Արք եպիսկոպոսի /և Ասպետի/: Ի թուականութեանս /1838 ՌՄՁ/:  
/Ի տպարանի նորին բարձր /Սրբազնութեան/: Ի ՇՈՒՇԻ:

26 երկայուն գծափակ էջեր. 27,5×19,5×1 շափի: 4 էջին գրաշարազար-  
դերով ձևավորված խաչ: Հիշագիր շի նշված ոչ մի էջի վրա: Շարվածքի շափը  
21×14 սմ:

Հրատարակություն.— 21-րդ:

Բովանդակություն.— Օրէնք արկանելոյ սպաս եկեղեցոյ: Աղօթք Առանձ-  
նական Պատարագիչ Քահանային: Հաւատամք ի մի Աստուած. Տէր Աստուած  
յօրութեանց... Յիշատակարան սրբոյ մատենիս:

Հրատարակության պատմություն.— Գրքի հրատարակութեան մասին հիշա-  
տակարանում գրված է. «Արդ՝ որովհետև Աստուածային մատենիս այսորիկ  
տուաջին տպագրեալքն էին մաշեալք և սպառեալք, վասն որոյ՝ ...երջանիկ  
հայրն... Գանձասարաց Պաղղասար մետրապօլիտ... իւրով արդեամբն ես  
վերստին տպել...»:

Մանրություն.— Ա. Ղազիկյանը իր «Հայկ. նոր մատենագիտ.», «Խոր-  
հրդատետր» հատվածի տակ 20-րդ հրատարակությունը համարում է վեներ-  
տիկում 1832 թ. տպագրված հայերեն-իտալերեն լեզուներով խորհրդատետրը:  
21-րդ՝ համարում է 1854 թվի տպագրությունը նույն տեղում: Իսկ Շուշիի  
1838 տպագրությունը շի նշել (էջ՝ 1166): Մենք իրավամբ Շուշիի այս հրա-  
տարակությունը համարում ենք 21-րդ: Թեոդիկը Շուշիում տպագրված գրքե-  
րին հատկացված հատվածում թվում է այդ տպարանում տպագրված գրքերի  
ցանկը ժամանակագրական կարգով: Այս խորհրդատետրը շի մտել այդ ցանկի  
մեջ (էջ 183): Լեոնյանը «Հայգիրքը և տպագր. արվեստը» (Ե. 1958) գրքի մեջ  
կանգ առնելով Շուշիի տպարանի վրա, հիշատակում է 1837 թ. տպված «Շի-  
լոնի կալանավորը» և 1839 թ. տպված Հասան Զալալյանի «Աղուանից պատ-  
մութիւն»: 1838 թ. տպագրված այս «խորհրդատետրը» բաց է թողնված  
(էջ 229):

## ՄԱՀՏԵՍԻ ԱՍՏՎԱԾԱՏՈՒԹԻ ՏՊԱՐԱՆՈՒՄ ՏՊԱԳՐՎԱԾ ԳՐՔԵՐ

### 6.

(Հնատիպ գրքերի հավաքածու, № 1682)

ՇՆՈՐԶՈՔ ԱՄԵՆԱ/ԶՕՐԻՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ /ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲ ՏԵԱՌՆ/ մերոյ  
Յիսուսի Քրիստոսի և յօժանդակութեամբ հոգւոյն /սրբոյ պարզեաաւոյ. Ըս-  
կիզքն եղաք երածշտական երգս Շարականաց. գեղեցիկ յօրինեալ ի/ սրբոց  
մերոց վարդապետաց. ի լուսատրութիւն և ի պայծառութիւն եկեղեցեաց Հա-  
յաստանեաց: յԸստ ասուրց պատշաճին ըզտերունեացն և ըզ/սրբոցն զօրհնու-  
թիւնսն. քաղուածովք եղաք զի մի /որ աշխատեսցի որոնել. նայ և զգիշերա  
պաշտօնսն/ Զտէրունեացն և զմարտիրոսացն և զաւուր /պատշաճսն իւր սարօքն  
եղաք/ կարգաւ: Ի հայրապետութեան Սրբոյ Աթոռոյն էջմիածնի/ Տեառն նա-  
հապետի Արբազան Կաթողիկոսին: Սե Սուրբ Երուսղեմայ Հայրապետին Տէր/  
Մինասին: Սե տպագրեցեալ ի տպարանի Ըստամպօլցի /սօճայ Կարապետի  
որդի Տիրացու/ Աստուածատուրին: Արդեամբք եւ գոյիւք նոյնոյ: Ըստամպօլ-  
ցի/ Տիրացու Աստուածատուրին: Եւ կեսարացի /Սարգիսին. որ մականուամբ

ծառայ կոչի: Ի թուականութեանս Հայոց. ՌՃԽԸ (1699): Սեպտեմբեր ամսոյ ժԱ [11]: Ի մայրաքաղաքն Կոստանդինուպօլիս: Սոգնեա Հոգիտ Սուրբ Աստուած Տշմարիտ. զսկսեալս լմեր դու հասոյ յաւարտի:

527,1 զարդափակ երկսյուն էջեր.  $25 \times 18 \times 6,5$  սմ — շափի, կաշեպատ տախտակե դրոշմազարդ կազմ. կազմի 2-րդ կողի դարձերեսին դաճած կտոր: Փորագրութիւններ 4, 18, 47, 89, 206, 288 էջերին: Կիսախորաններ 5, 18, 90, 207, 289, 366, 446, 486 էջերին: Նախազարդեր 172, 227, 466, 502 էջերին. վերջազարդ ձեռքով նկարած 3, 171 էջերին. լուսանցազարդեր բազմաթիւ էջերի վրա: Զարդագրեր (թռչնագրեր) (այլք. կարգով) Ա, Գ, Դ, Ե, Զ, Ք, Ի, Լ, Խ, Ս, Զ, Ը, Մ, Յ, Ն, Շ, Ո, Պ, Վ, Ց, Ք, Օ: Գրաշարազարդեր: Հիշագիր չկա 27 էջին: Շարվածքի շափը  $20 \times 14$  սմ:

Բովանդակութիւն.— Նըշանակութիւն երգողաց զշարականն: Շարակնոց: հանկ քաղուածու Շարակնոցիս: Վասն անունց յօրինողաց զշարականս, որք սկսեալք եղեն ի թուոյն Քրիստոսի և այլք ի մերում թուոյ: Անուանք խաղից շարականաց: Վասն սկսանելոյ ձայնից շարականաց: Տիշատակարան:

Օրինակի առանձնահատկութիւններ.— Գրքի 3-րդ էջի վրա երեք տարբեր անձնավորութիւնների կնիքների դրոշմանիշեր կան. հավանաբար այն անձանց, որոնց հաջորդաբար պատկանելիս է եղել գիրքը: 82—83 էջերի միջև ներդրված են 4 թերթ ձեռագիր շարականներ վերնադրված «շարական նորագիւտ սրբոյ: Գէորգայ զօրավարին» և «շարական նորագիւտ սրբոց առաքելոցն Թաթևոսի և Բարդղիմոսի»: 4-րդ թերթը՝ մաքուր:

Հրատարակութեան պատմութիւնը.— Ինչպես նշված է տիտղոսաթերթի վրա, գիրքը տպագրվել է Կ. Պոլսում տիրացու Աստուածատուրի տպարանում ՌՃԽԸ [1699] թվականին, հենց իրեն՝ տպարանատիրոջ և կիսարացի Սարգսի ծախքով:

Մինչև օրս մեր մատենագետների մոտ այն կարծիքն է տարածված, որ տիրացու Աստուածատուրի, կամ ինչպես ինքն է իրեն անվանում՝ տրուպ, մահտեսի Աստուածատուրի կամ Աստուածատուր Ապուշխցու տպարանը Կ. Պոլսում հիմնադրվել է 1700 թվականին:

Մեր ձեռքի տակ գտնվող սույն Շարակնոցի տպագրութիւնը սակայն սկսվել է 1699 թվականից և ավարտվել է 1700 թվականին: Գրքի ավարտման մասին հիշատակարանի մեջ կարդում ենք. «Շնորհօք և ողորմութեամբ տեառն մերոյ... յանդ ելիալ աւարտեցաւ տառս երաժշտական, որ և կոչի ձայնգաղ Շարակնոց: Ի թուականիս Հայոց ՌՃԽԹ [1700], օգոստոսի ժՅ [15] ի մայրաքաղաքն Կոստանդնուպօլիս...» (526 էջի դարձերես): Իսկ «Գիրք աղօթից»-ի տպագրութիւնը սկսվել է ՌՃԽՃ [1700] թվի մարտի 20-ից (ըստ տիտղոսաթերթի) և ավարտվել է 1702 թվի մայիսի 5-ին, ինչպես այդ կարդում ենք նարեկի հիշատակարանում. «Եւ եղև յաւարտ տպագրութեանս սրբոյ մատենիս ի թուոջ փրկչին ՌՉԲ և հայոց ՌՃԾ, ամսեանն մայսի 5...» (էջ ՃԾԱ-ի դարձերես):

Ուրեմն այդ տպարանի առաջին արգասիքը պետք է համարենք այս Շարակնոցը և ոչ թե նարեկը և տպարանի պատմութիւնը պետք է սկսել ոչ թե 1700, այլ 1699 թվականից:

Գրքի տպագրութեանը մեծ մասնակցութիւն է ցույց տվել Կեսարացի Սարգիսը ոչ միայն նյութական օժանդակութեամբ, այլև գրքի շարելու, սրբագրելու գործում: Հիշատակարանի մեջ նրա մասին կարդում ենք. «Արդ դարձև



ալ աղաչեմ չիշեցէք ես նուաստս յամենից զՍարգիսս զի կարի յոյժ աշխատեցա ի շարելն և ի սրբազրելն զի ամենևին Ոսկան վարդապետին շինած քաղուածուի վերա. իւր շինած շարակնոցի վերա շարեցի...»<sup>1</sup>: Գրքի տպագրութեան վրա աշխատել են տպարանի աշխատակիցներ «զտէր Ղազարն... զի կարի յոյժ աշխատեցաւ ի սրբազրութեան սորին...: Այլ և չիշեսջիք զաշխատաւորս սորին զթութերն և զՄիքայէլն և զԵղեայն... զի կարի յոյժ աշխատեցան և դուք չիշեալ չիջիք...»:

**Մանրութիւն.**— Այս Շարակնոցը ստացվել է Քիշնև քաղաքի հայոց եկեղեցուց Մատենադարանի աշխատակից Ֆ. Պողոսյանի միջոցով, ուր նա գործուղվել էր 1959 թ. նոյեմբերին: Բերած հայերեն բաղձաթիվ հին գրքերի միջից հայտնաբերվեց այս Շարակնոցը, որը նորութիւն էր մեր գրադարանի համար: Այդ գրքից չկա նաև Պետ. գրադարանի հազվագյուտ և անձեռնմխելի գրքերի հավաքածուում: Գիրքը այժմ պահպանվում է Մատենադարանի հնատիպ գրքերի հավաքածուում 1682 համարի տակ:

## 7.

(Հնատիպ գրքերի հավաքածու № 1258)

**ԵՐԱԺՇՏԱԿԱՆ |ԵՐԳԵՅՄՈՒՆԹ| ՀՈԳԵԻՈՐԱԿԱՆԹ |Ա.ստուածանոց և երշակաց սրբոց վարդապետաց Հայոց թարգմանչաց, ի լուխաւորութիւն և ի պաշտառութիւն եկեղեցեաց Հայաստանեայց: Ըստ ատուրց |պատշաճին զտէրունեացրն և զսրբոցն| զօրհնութիւնան — քաղուածովք եղաք |զի մի սք աշխատեսցի սրտնել, նայ և| զգիշերապաշտօնան, Զտէրունեացն |և զմարտիրոսացն և զաւուր պատշաճ|սրն իւր սարօքն եղաք կարգաւ: |Ի թուականիս, ՌՃԶԳ [1724], Յու նուարի ա |Ի տպարանի տրուպ Աստուածատրոյ:**

528 երկսյուն, զարդափակ էջեր, կաշեպատ, դրոշմազարդ փայտե կազմով, 24×18×6 սմ չափի: Փորագրութիւններ 4, 18, 46, 206, 288 էջերի վրա: Լուսանցազարդեր կան բաղձաթիվ էջերի վրա, նախազարդեր՝ 5, 90, 172, 207, 227, 289, 366, 446, 486, 502 էջերի, վերջազարդեր՝ 3, 89 էջերի վրա: Զարդատաներ և թռչնազրեր (այլբբ. կարգով) Ա, Բ, Գ, Ե, Զ, Է, Թ, Ժ, Ի, Լ, Ծ, Յ, Ն, Ո, Պ, Ս, Բ, Յ, Օ, Փ: Շարվածքի չափը՝ 20×14 սմ:

**Հումարակութիւն.**— 6-րդ:

**Օրինակի առանձնահատկութիւններ.**— 46 էջից հետո էջակալութիւնը ընդհատվում է և շարունակութիւն կազմող 3 էջերի վրա զետեղված է «Զրուեալ մեծացուցէքն յամէն ձայնից եղաք աստ կարգաւ» ծանոթութիւնը, որից հետո տեքստը 47 էջից շարունակվում է: Գիրքը տպագրված է երկսյուն և շարականները ձայնագրված են հայկական խաղերով:

**Բովանդակութիւն.**— Նշանակութիւն երգողաց Զշարականն: Վասն անուանց յորինողաց զշարականս, որք սկսեալք եղեն ի թրոյն Քրիստոսի և այլք ի մերում թրոյ, Անուանք խաղից շարականաց: Վասն սկսանելոյ ձայնից շա-

<sup>1</sup> Ակնարկում է Ամասերդամում 1664 թվականին Ոսկան Երևանցու տպարանում տպագրված Շարակնոցը:

բականաց: Շարականներ: Յանկ շարականիս: Տեառն ներսէսի կաթուղիկոսի Ասացեալ վասն առ ի Քրիստոս ննչեցելոց: Յանկ քաղուածու Շարականիս: Յիշատակարան:

Հրատարակութեան պատմութիւնը.— Գրքի հիշատակարանի մեջ կարդում ենք. «Արդեամբք և գոյիւք անդամչեցի Աստուածատուրի որդի մահտեսի Ղարախանն և ագուլեցի պ. Սարգիսի որդի պ. Յարութիւն, ևս ըստամայօլցի պ. Դանէլի որդի տիրացու Մովսէսն, դարձեալ ըստամբօլցի պ. Կարապետի որդի մահտեսի Գրիգորն, և շորից բարեպաշտիցն խորհուրդ արարեալ և ետուն տպագրել զմատենանս դայս: Ի տպարանի պ. Կարապետի որդի տրուպ Աստուածատուրի»:

## 8.

(Հնատիպ գրեթի հավաքածու N 959)

ԱԻԵՏԱ/ՐԱՆ /Տեառն մերոյ /Յիսուսի Քրիստոսի/: Տպեալ Հրամանա: Տեառն Ղարախայ աղգասէր /և բարեկարգ Պատրիարգի: /Ի Կոստանդնուպօլիս: /Յամի Տեառն 1796/: Ի Հայոց ՌՄԽԵ: /Ի Տպարանի Աստուածատուրի:

364 զարդափակ երկսյուն էջեր, կարմիր գույնի կաշեպատ, դրոշմազարդ փայտե կազմ. 4 թ. պահպանակ, 26×19×4 սմ չափի, կազմի տակ գուն. թուղթ: Փորագրութիւններ կան 18, 24, 45, 68, 82, 94, 110, 112, 114, 120, 186, 190, 195, 202, 284, 286, 290, նախազարդեր՝ 10, 11, 19, 121, 187, 291 էջերի վրա: Բազմաթիւ վերջազարդեր, լուսանցազարդեր: Ձարդագրեր (այբբ. կարգով) Ա, Բ, Գ, Դ, Ե, Զ, Ը, Ժ, Ի, Լ, Մ, Յ, Ն, Ո, Ս, Ք: Հիշարառ շկա 41, 47, 533 էջերին: Շարվածքի չափը՝ 18×12 սմ:

Հրատարակութիւն — 11-րդ:

Բովանդակութիւն.— Եւսեբիոս Կարպիանոս Սիրելի եղբօր ի տէր ողջոյն: Երատ վասն զանազանից թուոց սրբոյ Աւետարանիս... Աւետարան ըստ Մատթէոսի, Մարկոսի, Դուկասու, Յոհաննու: Յիշատակարան սրբոյ Աւետարանիս տպեցման:

Հրատարակութեան պատմութիւնը.— Ավետարանը տպագրվել է Ղարախայ պատրիարգի հրամանով: Գիրքը տպվել է Կ. Պոլսում, Աստվածատուրի տպարանում: Տպագրութեան աշխատանքը կատարել է Մատթեոս դպիրը: Տպագրիչի և տպագրութեանը օժանդակող անձնավորութիւններին մասին գրքի հիշատակարանում ասված է. «Արդ՝ որք հանդիպիք, յիշեցէք ի մարութեան զօթս ձեր... Այլ և զտպագրիչն սորին զՄատթէոս նուաստ դպիրս (որ տպագրաւ իմով տպեցի). ընդ բնն իմոյ Բրաբիօն նօտարի և ընդ ձեռնասուն աշակերտի մերոյ գրաշար Մանուէլի, և ընդ մելանահար վանեցի Գասպարի...»<sup>1</sup>:

<sup>1</sup> Մատթեոս դպիրը 1792 թվից մինչև 1794 թ. աշխատել է «Մայր դպրատուն» անունը կրող տպարանում, որպէս տպարանի տնօրէն նա, ըստ Թեոդիկի, այդ տպարանում տպագրում է 5 անուն գիրք, և ապա հետոնում է ու գործում է առանձին (Տիպ ու տառ, էջ 64): Մինչև իրեն սեփական տպարանի հիմնադրումը, որը գործել է 1800—1825 թթ. նա աշխատել է այլ տպարաններում: Ահա այդ ժամանակաշրջանում նա Աստվածատուրի տպարանում տպագրել է այլ Ավետարանը:

## 9.

(Հայերեն գրերի հավաքածու № 12201)

ԳԻՐՔ /ԱՂՕԹԻՑ: /Ասացեալ սրբոյն Եփրեմի/, խուրայն Ասորայ: /Տպագրեցեալ ի Հայրաստութեան Գեորգազ Աթոռոյն Սրբոյ էջմիածնի Տեառն Գանիէլի Սրբազան կաթողիկոսի Ամենայն Հայոց: /Եւ ի Պատրիարքութեան Սրբոյն Երուսաղէմի/ Տեառն Թէոդորոսի Երջանկափայլ վարդապետի: /Վեհափառ Հրամանաւ Մեծի/ Արքայանիստ մայրաքաղաքիս Կոստանդնուպօլսի Սրբազան Պատրիարքի Տեառն Յօհաննու /Աստուածարան կոչեցեալ վսեմաբան բարունապետին: /Ի թուին Հայոց ՌՄԾԹ [1810] փետրվարի Գ. /Ի Տպարանի Յոհաննիսեան Պօղոսի:

111 էջ, կաշեպատ ստվարաթղթե կազմ, 2 թ. հնագած թղթե պահպանակ. 13×5, 5×1 սմ չափի: Փորագրութիւն 2-րդ էջին: Նախազարդ 3-րդ էջին: Զարդագրեր 3, 61, 62, 74, 96, 98 էջերին: Վերջազարդ 60 էջին, հիշաբառ չի դրված 6, 11, 13, 14, 31, 32, 33, 35, 38, 40, 49, 50, 54, 62, 70 էջերին: Շարվածքի չափը 11×7 սմ:

Հրատարակութիւն — 6-րդ:

Բովանդակութիւն.— Աղօթք զօրաւոր Սրբոյ հօրն Եփրեմի խուրայն Ասորայ: Ճե [140] աղօթք: Նորին դարձեալ Աղօթք... առ Տէր Աստուած: Աղօթք յորժամ յորոգայթ անկանի որ Ասացեալ սրբոյն Գրիգորի Լուսաւորչի: Ս. Աթանասի և Եփրեմի խոստովանութիւն: Աղօթքներ Գրիգորի նարեկացոյ: Մաղթանք առ սուրբ Աստուածածինն: Զափածո քառյակներ, որոնք սկսվում են այբուբենի տառերով:

Հրատարակութեան պատմութիւն.— Գիրքը տպագրվել է Կոստանդնուպոլսի պատրիարք տ. Յօհաննու հրամանով, Հովհաննիսյան Պողոսի տպարանում, որի մասին գրքի հիշատակարանի վերջին թերթի (էջ՝ 111) վրա կարդում ենք. «Արդ՝ ով բարեմիտ ընթերցողը սորին, ի հանդիպիլն ձեր սոյնոյ գրքկանս յիշեսչիք ի Քրիստոս յոյսն մեր բնաւիցս, զՏիրացու Պօղոսս՝ հանդերձ բարեշան և բազմաշխատ որդւովք իմովք տիրացու Աստուածատուրին և տիրացու Գէորգաւ զՍիմէօնին և զԳալուստիին, որք շարեցին զգիրս կապարեայս...»:

ԱՎԵՏ ԶՆԹՂՈՒՄՅԱՆԻ ՏՊԱՐԱՆՈՒՄ ՏՊԱԳՐՎԱԾ ԳՐՔԵՐ

## 10.

(Հայերեն գրերի հավաքածու № 22264)

ԺԱՄԱԳԻՐՔ /համառօտ վասն/, ՄԱՆԿԱՆ/: Հարիւր երեսուն և եօթն երորդի հայրաստութեան/ Տեառն Եփրեմի ամենայն /կաթողիկոսի: /Արղեամբ և ծախիւք յա/տուկ օգնական իննիւյ մեր /Ազնեից: /Աշխատասիրութեամբն Զընթլում/ Աւէտ Խօջիչանեան կոչեցելոյ: /Ի Տպարանի Աւետ Զընթլումեանի: Յամի Տեառն... 1812 ի Կալկաթա:

5, 3—384 էջ, ստվարաթղթե կազմով. 14×8×2 սմ չափի: Փորագրութիւն 5-րդ էջին: Բազմաթիվ զարդագրեր: Կիսախորան 76, 143, 242, 304, 336 էջերին: Վերջազարդ 71, 129, 335, 364, 383 էջերին: Գրաշարագրեր: Շարվածքի չափը 11×6 սմ:

**Բովանդակություն.**— Կարգաւորութիւն հասարակաց ազօթից: Երգ Տեառն ներսէսի կաթողիկոսի: Քարոզներ: Սաղմոսներ: Մաղթանք սրբոյն Գրիգորի նարեկացւոյն: Աղօթք ներսէսի կաթողիկոսի: Շարական և այլն:

**Օրինակի առանձնահատկությունը.**— Գրքի տիտղոսաթերթին և 101 էջին Կալկաթայի գրադարանի կնիքը: Սկզբի և վերջի մի քանի թերթերը որդնակեր:

**Հրատարակության պատմությունը.**— Աւետ Զննելումյանը գրքի հիշատակարանի մեջ (էջ՝ 2) տպագրութեան մասին հետևյալն է ասում. «... և ի թախանձմանէ բարեսէր արանցս այսոցիկ ազնուաց՝ զորոց անունքն զորոշմեալ էմ ի ներքոյ՝ տպեցի... ժամագիրքս ոչ որպէս յառաջն կայր որ տպագրեալ էր ի քաղաքին Կոստանդնուպօլսոյ, այլ այս վասն մանկանց, նաև եղի զՌանիէլն, և թուղթք սրբոյ Պօղոսի Առաքելոյն... վասն զի ժամագիրքս այս վասն մանկանց ընթեռնելոյ տպեցի սակս որոյ խնդրեսցեն... Տէր Յովսէփ Ստեփանոսեան... Յովսէփ էմինեան (թվում է 28 անուն), որոնք են յորդորողք և պատճառք տպեցման վերն յիշեցեալ գրոց...»:

**Մանորություն.**— Կալկաթայում 19-րդ դ. սկզբներին գործող հայ տպարանի վերատեսուչ Ավետ Զննելումյանը այս գրքի հիշատակարանում իր տպարանի հիմնադրման մասին գրում է. «Օժանդակութեամբն հոգւոյն սրբոյ յանձրն առի անձամբ իմով զշարչարանս յանձին կրել՝ և հաստատել զտպարանս Հայոց՝ ի պարժանս Աղգիս իմոյ թէպէտ շարչարանս բազում լինելոյ՝ երբեմն սրտրջանայի, բայց պտուղն նորին տեսանելով ցնծայր սիրտն իմ, որոյ զջանս եռապատիկ լինիւր ոչ հայելով զշարչարանս, և զժախս սոյն գործարանիս՝ բրտնաթափ ջանիւք յետեալ լինէի՝ ոչ այլ ինչ երևէր առաջին աչաց իմոց՝ եթէ ոչ կատարումն տալ սոյն գործոյս, վասնորոյն նախ տպեցի զԱյբուբենարանն՝ յետ այնու օժանդակութեամբն և ի թախանձմանէ բարեսէր արանցս այսոցիկ ազնուաց՝ զորոց անունքն զորոշմեալ էմ ի ներքոյ՝ տպեցի Ազգարան, Տարեկան Տօնացոյցն, Պատմութիւն Սրբոյն Յոհաննու Ոսկեբրանին, յուսկ յետ ժամագիրքս» (էջ՝ 2):

## 11.

(Հայերեն գրքերի հավաքածու № 3385)

**ԳԻՐԸ ԽԱՂՄՈՍԱՅ ԴԱԹԻՒՆՆԵՐԻՆՆԵՐԻՆ ՅԵՍԱՆԱՅ** |Հոմերական ոտիւք շափեալ ի Յարութիւնէ Սահակեան աղանութեանց նոր |Զուղայեցւոյ: |Ի տեառն ի պատիւ և ի վայելս մանկանց |սիրովնի սրբոյ եկեղեցւոյ: |Ի հայրապետութեան տեառն Եփրեմի սրբազան կաթողիկոսին ամենայն հայոց, որ ի լուսանկարն սուրբ էջմիածին: |Արդեամբք և Մախիւք օժանդակք լինողաց գործարանի: |Յամի կենարարին մերոյ 1815| և ի թուականութեանս Հայոց 1264: |Ի Տպարանի Զննելումեան Աւետի: |Ի ԿԱԼԿԱԹԱՅ:

Տիտղ. թ. 367—372, 1—366, 373—375 էջերը: 18×11×3 սմ չափի: Կիսախորաններ 1, 32, 40, 82, 129, 169, 212, 251, 293, 338 էջերին: Վերջազարդեր 21, 26, 39, 48, 117, 121, 250, 292, 366 էջերին: Զարդագրեր յուրաքանչյուր սաղմոսի նախասկզբին: Շարվածքի չափը 13×7 սմ:

**Բովանդակություն.**— Յառաջարանութիւն: Առ մանկունս եկեղեցւոյս Հայաստանեայց: Բան առ ազնուական պարտն Սեթղ Սեմեան խնդրող ոտանաւոր շափմամբ շարահիւսութեան սրբոյ մատենիս, հոգնուագ սաղմոսացն

Դաւթի: Գիրք սաղմոսաց Դաւթի: Նախագուշակ տեառն մարգարէ...: Մաղթանք: Երեք մանկունքն ի մէջ հնոցին: Երգս օրհնութեան սրբոյ կուսին: Երգս օրհնութեան երգեալ նորուն...: Աղօթքներ...: Յիշատակարան:

Հրատարակութեան պատմութիւնը.— Սաղմոսարանը հոմերական տաղաչափութեան է ենթարկել Հարություն Աղանուրյանը, Սեթ Սեմյանի խնդրանքով: Այս մասին գրքի առաջաբանում ասված է (էջ՝ 368—370): «Արդ մի ոմն ի յազնուական բարեկամաց մերոց սիրելեաց աստուածայնոյն փափագողաց գորով միշտ տարփացող ընթերցանութեան հոգեարուղիս սաղմոսացն Դաւթի, խնդիր արար ի մէնջ զբոլոր սաղմոսն հոմերական տաղաչափութեամբ յօրինել... զի յարածամ առ ինքն ունելով ընթերցմամբ նորին զմայլիցի հոգեպէս... զպատճառն տաղաչափութեան սուրբ գրքոյս Ազնուամեծար բարեկամն իմ Պարոն Սեթայ Սեմայն»: Գրքի հիշատակարանի մեջ (էջ՝ 373) Ավետ Զնթլումյանը գրում է. «... աւարտեցաւ տպագրումն այս հոմերական տաղաչափութեամբ Սաղմոս Դաւթի, որ յօրինեալ էր քաջ ճոռոմարան պ. Յարութիւն Սահակեանէ (Աղանուրեան) ի Պասրա քաղաքի յամին կենարարին մերոյ 1808: Իսկ այժմ տպագրեցաւ ի Կալկաթա քաղաքիս արդեամբ և ծախիւր զուարթամիտ և առատաձեռն ազգիս մերոյ»: Գիրքը տպագրվում է նորից հայ բարերարների օժանդակութեամբ, որոնց (23 մարդու) ազգանունները տպագրիչը բերում է հիշատակարանի մեջ:

Օրինակի առանձնահատկութիւնը.— «Յառաջաբանութիւնը» տպագրված է 367—372 էջերին, բայց կազմելու ժամանակ դրվել է էջագրութիւնից առաջ: առաջաբանի տեղը:

## 12.

## (Հայերեն գրքերի հավաքածու № 3316)

ԳԻՐԲ ՆՈՐ ՍՈՐ կոչի/ ՆՈՐԱՏՈՒՆԿ ԲՈՒՐԱՍՏԱՆ/; Հաւարեալ ի Հին և նոր կտակարանէ: Նորում աւանդին պատմութիւնը. սկսեալ 1921 ամօք յառաջ/ քանզ քրիստոսի. մինչև զամ Տեառն 33: Եվ համառօտ բանք խրատական. ասացեալ ի ժողովօղէ Ննստայ. որդւոյ սիրաքայ: Ի հայրապետութեան Տեառն Եփրեմ ամենաքն հայոց կաթողիկոսի Յոզնաչան աշխատասիրութեամբ Հաւարեալ և ընծայեալ ի լոյս յարմարագրութեամբ ի Զընթլում Աւետեանէ լրածանեալ ի յերկուս հատորս/ Արդեամբք և Ծախիւր նոքն Զընթլում Աւետի/ Հատոր Ա./ Ի ԿԱԼԿԱԹԱՅ, յամի տեառն 1816 ի Տպարանի Աւետ Զընթլումեանի:

Տիտղ. Բ. 201 էջ, 22×14,5×2 սմ չափի: Մեկ զարդագիր առաջին էջի վրա: Շարվածքի չափը 14×9,5 սմ:

Բովանդակութիւն.— Քարգմանական պատմութիւն հին և նոր կտակարանին, որ կոչի նորատունկ բուրաստան:

Հրատարակութեան առանձնահատկութիւնը.— Տպագրված է երկսյուն, առաջին սյունակը հայերեն, երկրորդը, անգլերեն:

Տպագրութեան պատմութիւնը.— Ինչպես գրված է տիղոսաթերթի վրա, գիրքը լոյս է ընծայել Զընթլում Ավետյանը իր միջոցներով:

«Յոզնաչան աշխատասիրութեամբ հավաքեալ և Ընծայեալ ի լոյս... ի Զնթլում Աւետեանէ»:



## (Հայերեն գրերի հավաքածու № 12927)

Մեկնութիւն Նրդ երգոց անուանեալ բանիցն Սաղոմօնի: Հաւաքեալ և մեկնեալ ի Յակոբայ վարդապետէ Կարնեցոյ Սիմօնեան. ըստ մասին ի սուրբ էջմիածին, և ըստ մասին և յարզրում, խընդ/րանօք և յորդորմամբ Տեառն Արքայհամու լիաշնորհ վարդապետի, և մարտակրօն դերահոշակ արք եպիսկոպոսի, և վերատեսչի զմիւռ/նոյ մայրաքաղաքի, որոյ զկնի հրաւիրեալ եղև աչցելու երկրին սիւնեաց՝ դերահոշակ վանացն Ստաթէի Առաքելոյն ուրանօք հան/գուցեալ եղաւ ի շիրմի ի ներքոյ խաչակոտ սեան դաւազանի/ նորին. և իմ յաչորդեալ ի նմանէ ի կենդանութեան իւրում: Ի գերապայծառ հայրապետութեան Տեառն Ղուկասու սրբազան կաթողիկոսի, և գերերջանիկ ծայրագոյն Պատրիարքի ամենայն Հայոց: Եւ ի Պատրիարքութեան սրբոյ Երուսաղէմի Տեառն Յովակիմայ քաղց/րաբարոյ վարդապետի և արհի եպիսկոպոսի: /... Ի թուականութեան Արամեանս տոհմի ի 1231: Ի սեպտեմբերի/ ամսոյ: Եւ ի նարգենիս տպագրութեամբ ի յոյս ընծայեցաւ Մախիւք ուսումնասէր և բարեպաշտ մերազնեալ պատանեկաց: Հարիւր երեսուն և եօթներորդ ամի Հայրապետութեան Տեառն Նիքիեմի Սրբազնակատար կաթողիկոսի ամենայն հայոց: Եւ յԱռաջնորդութեան սրբոյ Ամենափրկչի Աթոռոյն մերոյ Տեառն/ Կարապետի Արք եպիսկոպոսի, որ ի նորն Ձուլա: Եւ Յամի Տեառն 1820: Ի թուին հայոց 1269: Ի Տպարանի ևրկոցոմնց եղբարց հարազատաց Աւետիս Յովհաննէսի Ջընթ/լում Ավետեանց: Ի ԿԱՂԿԱՔԱՅ:

Տիտղ. թ. 1, Ժ, 377, 10 էջ. Կաշեպատ տախտակի կազմ: 6 թ. պահպանակ: 20×14×2,5 սմ չափի: Փորագրութիւն 1-ին էջին: Վերջազարդ Ժ և 377 էջերին: Ձարդագիր 1-ին էջին: Էջախորագիր: Շարվածքի չափը 16×10 սմ:

Բովանդակութիւն.— Բան առ խոհեմամիտ և երկիրած մերազնեալ ընթերցողս (Ջնթլում Ավետյանի ստորագրութեամբ): Մեկնութիւն մակագրութեան երգ երգոց անուանեալ բանից Սաղոմօնի: Ցանկ երգ երգոց անուանեալ բանիցն Սաղոմօնի: (Այրբենական կարգով):

Օրինակի առանձնահատկութիւնը.— Առաջին և վերջին էջերին կա վանի «Հայկդ. կետր. վարժ.» կնիքը: Երկրորդ էջին խաչաձև շարվածո բանաստեղծութիւն նվիրված գրքին:

Հրատարակութեան պատմութիւնը.— Գիրքը գրել է Հակոբ վարդապետ Կարնեցին 1782 թվին: Այդ ձեռագիրը 38 տարի հետո էջմիածնի միաբան Քովմաս վարդապետը տարել է Հնդկաստան և 1820 թ. Կալկաթայում տպագրվել է Ավետ և Հովհաննես Ջնթլումյանների տպարանում: Այդ մասին Ավետ Ջնթլումյանի նախաբանի մեջ գրված է. «Առ սոյն վերադասի և հոգելից մատեանս այս մեկնութիւն երգ երգոց անուանեալ բանիցն Սաղոմօնի, աշխատասիրեալ ի բանիրուն և քաջարան Տեառն Յակոբայ վարդապետի Սիմօնեան Կարնեցոյ, ի միաբանութենէ մեծի... սրբոյ էջմիածնի, զոր և երեսուն և ութ ամօք առաջ ի յօգուտ մանկանց եկեղեցոյ արարեալ, իսկ ի նարգենիս ի գալ ի կողմանս հնդկաց նոյնոյ Սրբոյ Աթոռոյն էջմիածնայ... միաբան... Քովմաս վարդապետին ունէր ընդ իւր զայս գիրք ի դրօսանս ուսումնասիրութեան իւրում, զոր տեսեալ մերազնեալ ընթերցասէր պատանեկաց... և առեալ զճաշակ սորին քաղցրութեան, վառեալ բորբոքեցան... և ոչ արժան վարկան այսպիսի գանձ հոգեշահ... թողուլ ընդ գրուանան և ի խորշ մթութեան ծած-

կեալ... լև հանգանակաւ իմն գոգցես զծախս տպեցման սորին ժողովեալ, հտուն զպատուականս այս գործ տպեցմամբ ի լոյս բնծայել... զի պատուականութիւն սորին ամենեցուն քաջահայտ երևեսցի...» (էջ՝ Բ.):

Ձեռագիր հիշատակագրութիւն գրքի վրա. — Գրքի ժ էջի վրա կա Բարսեղ քաղաքում 1840 թ. Սուրիաս Վանանդեցու ձեռքով գրած մի համառոտ հիշատակագրութիւն գրքի նվիրարեւման վերաբերյալ:

### Ш. ШАХНАЗАРЯН

## БИБЛИОЛОГИЧЕСКИЕ ЗАМЕТКИ

### Резюме

В этом сообщении описаны 13 старопечатных уникальных книг, оставшихся вне поля зрения армянских известных библиографов.

Эти книги разделены автором на три группы. В первую входят 5 книг, изданных в 1700—1838 гг. в разных городах и типографиях (Венеция, Константинополь, Шуши). Во вторую группу — 4 книги, напечатанные в Константинополе в 1699—1810 гг. в типографии известного печатника Махтеси Аствацатура, в дальнейшем его сына Ованеса и внука Погоса. В третью группу — 4 книги, напечатанные в 1811—1820 гг. в Калькутте (Индия), в типографии Авета Джитлумяна.

Этими данными дополняются сведения о деятельности некоторых армянских типографий и печатников XVIII—начала XIX вв.

Ե. ՏԵՐ-ՄԻՆԱՍՅԱՆ

ՎԵՐՋԻՆ ԱՆԳԱՄ Ն. ԱԿԻՆՅԱՆՆ ՈՒ ԵՂԻՉԵԻ  
«ՎԱՐԴԱՆԱՆՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ»

Վերջացնելով իր երեք փոքրագիր հատորներից բաղկացած Եղիշեի պատմության ուսումնասիրությունը՝ Ն. Ակինյանը «Հանդես Ամսօրյա»-յի 1951 թվականի օգոստոս-հոկտեմբերի համարներում անդրադառնալով իր դեմ եղած քննադատություններին, ավելի մանրամասնորեն կանգ է առել իմ քննադատության վրա<sup>1</sup> (էջ 398—406): Պետք էր սպասել, որ Ն. Ակինյանը փաստեր մեջ բերեր մեր ասածները հերքելու և իր դրույթը պաշտպանելու համար: Սակայն, դժբախտաբար, այդպիսի փաստարկության հետք անգամ չկա Ն. Ակինյանի պատասխանի մեջ:

Ամենից առաջ նա աշխատել է թուլացնել իմ փաստարկումների ուժը նրանով, որ ջանք է գործ դրել վարկաբեկելու իմ գործ դրած գիտական մեթոդը, ասելով, թե «Ան (խոսքը իմ մասին է) կհավատա կույրզկուրայն այն ամեն ավանդության, որ հասած է մեզի, առանց քննության ենթարկելու անոնց հնությունը, արժանահավատությունը և անադարտությունը» և «ափ ի բերան» զարմանում է, որ ես իբր թե ընթերցողներին մատուցել եմ Եղիշեի ավանդական կենսագրությունը, համարելով այն «ըստ էության ճշմարտության համապատասխան»:

Իր պատասխանի հենց առաջին բայերից Ն. Ակինյանը բռնել է փաստերը նենգադարսելու ուղին: Նախ, մենք ոչ մի տեղ չենք ասել, թե Եղիշեի ավանդական կենսագրությունը լիովին համապատասխան է ճշմարտության, ընդհակառակը, հատկապես շեշտել ենք (էջ 7), որ «այդ ավանդական կենսագրության մեջ անհավանական գծեր կան», Եղիշեի զինվոր կամ վարդանի ազգակից լինելը համարել ենք «անարժեք զրույց» (էջ 9) և միայն Եղիշեի ճգնական կյանքի մասին ասել ենք բառացի հետևյալը. «Այս ավանդույթունները Եղիշեի նզնական կյանքի մասին կարելի է ըստ էության ճշմարտության համապատասխան համարել, բացի նրա նշխարների փոխադրության խնդրից, որ ոչնչով հաստատված չէ» (էջ 10):

Այս փոքրիկ հարցում էլ, ուրեմն, Ակինյանը չի կարողացել ճշմարտասիրություն պահպանել և հետևելով իր մեր կողմից քննադատված բանասիրական մեթոդին՝ մեզ վերագրել է մտքեր, որ մենք ոչ մի տեղ չենք արտահայտել, և Եղիշեի միայն վերջին տարիների ճգնական կյանքի մասին ասածը բնահաճորեն տարածել է Եղիշեի ամբողջ կենսագրության վրա:

<sup>1</sup> Տե՛ս Եղիշեի Վարդանանց Պատմությունը, թարգմանությամբ, ներածական ուսումնասիրությամբ և ծանոթագրություններով պրոֆ.-դր. Ե. Տեր-Մինասյանի, Երևան, 1946, էջ 323, ներածություն, էջ 40—50:

Երկրորդ, Ն. Ակինյանին շատ լավ հայտնի է, և ինքն էլ այլուր վկայել է այդ մասին, որ մենք առհասարակ ոչ մի ավանդության հավատ չենք ընծայում «կուլյրոլոգիային» և կարիք էլ չունենք հավատ ընծայելու: Մեր հասցեին այդպիսի մեղադրանք ուղղելը պետք է համարել առնվազն ոչնչով շարդարացված թյուրիմացության արդյունք:

Երրորդ, խոսելով ընդհանրապես ավանդությունների մասին ըստ էության, պետք է ասենք, որ մեր խորին համոզմունքով՝ եթե լուրջ փաստեր չկան կասկածի ենթարկելու ավանդությունը, ապա մինչև այդպիսի փաստեր երևան հանելը պետք է իրավունք տրվի ավանդությանը: Տվյալ դեպքում Ն. Ակինյանը չի կարողացել փաստերով հաստատել Եղիշեի մասին եղած ընդհանուր ավանդության սխալ լինելը և ընկել է մի խորխորատ, որից դուրս դալ չի կարողանում:

Անցնելով Ն. Ակինյանի մեզ տված պատասխանին՝ պետք է կարճ ասենք հետևյալը. Ակինյանն իր գրվածքում վեց «գլխավոր կովաններ» էր մատնանշել, որոնց վրա պետք է ուշադրություն դարձնեին Եղիշեի պատմությունն ուսումնասիրողները, բայց չեն դարձրել. այդ կովաններով պետք է ապացուցվեր, որ Եղիշեի պատմությունը վերաբերում է ո՛չ թե 451 թվականի հայկական ապստամբությանը, այլ 570-ական թվականների դեպքերին: Ավելորդ է այստեղ կրկնել նորից այդ «վեց կովանները» (տե՛ս նրանց թվարկումը մեր ներածության մեջ, էջ 42), բայց մենք մեկիկ-մեկիկ փաստերով հերքել էինք դրանց զորությունը, և պետք էր սպասել, որ Ակինյանը դրանց դեմ հակառակ փաստեր կբերեր՝ մեր սխալը ցույց տալու համար: Սակայն, ինչպես ասացինք, նա ոչ մի իրական համոզիչ փաստ չի բերում իր թեզիսներն ապացուցելու համար, այլ երկար ու բարակ և միանգամայն անհամոզիչ դատողություններով փորձում է միայն խուսափել փաստերի ջախջախիչ ուժից:

Բերենք երեք փոքրիկ օրինակ.

1) Նյուդեբեի վրա հիմնված՝ մենք ասել էինք, թե Հազկերտ II-ի օրոք իրոք պատերազմ է տեղի ունեցել պարսից և հռովմայեցոց մեջ, իսկ Ն. Ակինյանը սրա մասին ասում է հիմա. «Եթե Նյուդեբե աշքի առաջ ունենար իմ հառաջ բերած տեղիքները, վստահ եմ, թե պիտի փոխեր իր տեսությունը»: Մինչդեռ «տեսությունը» փոխելու համար ոչ մի իրական փաստ չի բերվում ո՛չ այստեղ և ո՛չ էլ այլուր:

2) «Ժամանակագրական սխալներ Տաբարիի պատմության մեջ մեկն ավելի անգամենի մատնանշած է Նյուդեբե, ուստի իր ալ հաղորդած տեղեկությունները վրամ Ե-ի մասին իմանալու է» (ընդգծումներն իմն են: Ե. Տ. Մին.): Ուրեմն, եթե Տաբարին, Ակինյանի կարծիքով մի տեղ սխալ է արել, ապա այդ իրավունք է տալիս բանասերին նրա տված այլ տեղեկություններն էլ առանց որևէ հիմքի քմահաճորեն մեկնելու և իմաստներն աղավաղելու:

3) «Աշխարհագրի մասին» Ն. Ակինյանն ասել էր, թե «Երկու պատմագիրներու (Տաբարի և Եղիշե) հաղորդած տեղեկություններն ըստ ամենայնի նույնը զաա» (ընդգծումն իմն է): Մենք դրան պատասխանել էինք՝ փաստերը մեջ բերելով՝ որ երկու պատմագիրների տեղեկությունները «ոչ միայն ըստ ամենայնի նույնը չեն, այլև էական կետերում հակասում են միմյանց»: Հիմա Ակինյանը այսպես է ձևակերպում իմ ասածը. «Համենայն դեպս կրնոունի Տեր-Մինասյան, թե այդ երկուքի հաղորդագրությունները անէական կետերու

մեջ միաբան են. իսկ էականի և ոչ-էականի զանազանությունը ենթակայական է: Ոչ մի տեղ ես չեմ ասել, թե Տաբարիի և Եղիշեի հաղորդագրությունները՝ անէական կետերի մեջ միաբան են: Ես օրինակներ եմ բերել միայն, թե որքան հակասում են միմյանց Տաբարիի և Եղիշեի ասածները և եզրակացրել եմ հետևյալը. «Այս երկու տեղեկություններն (Տաբարիի և Եղիշեի) այնպես բացարձակորեն հակասում են միմյանց, որ նրանց նույնության մասին խոսելը միմիայն կանխակալ կարծիքից բղխած քաշքշուկ է» (էջ 64): Եվ ապա «... (Ակինյանի) մեթոդով կարելի է, իհարկե, աշխարհում եղած բոլոր իրական հակասություններն ու դժվարությունները վերացնել, բայց միայն... երևակայության մեջ» (էջ 65):

Սակայն Ն. Ակինյանի պատասխանի մեջ միայն մի կետ կա, որ արժանի է ուշադրության և առանձին քննության:

Անդրադառնալով Գենշապուհի «Յորժամ եկի ես յաշխարհն Հայոց... Գուժ և սէր ունիմ ընդ աշխարհն» հատվածին՝ Ակինյանն ասում է. «Այս խոսքերը, ըստ Եղիշեի, արտասանված են 453/454-ին: Գենշապուհ, որ զՀովսեփ իր կաթողիկոսության օրերուն, ուստի նախքան 450 տեսած է, իր երթն ալ Հայաստան 449-են հառաջ պատահած պետք է ըլլա: Ան գացած է իբրև մարզպան, ինչպես «որ մարզպան աշխարհին լեալ էր յառաջ քան զիմ երթալն» ենթադրել կուտա: Ո՞վ էր այդ, իրեն նախորդ մարզպանը: Գիտենք, որ 444-ին Շահապիվանի ժողովին ներկա էր Վասակ Սյունյաց տեր և Հայոց մարզպան, որ հավանորեն 442/43-ին կոչված էր Հայոց մարզպանության: Իսկ Հովսեփ «իշխան էր ամենայն քրիստոնեից» 440-ի մարտին ի վեր: Ուստի եթե Գենշապուհ Հայաստան եկած է, պետք է 441/442 շրջանին պատահած ըլլա»:

Թյուրիմացություններից խուսափելու համար մենք ամբողջ հատվածը մեջ բերինք Ակինյանի բառերով:

Ի՞նչ կարելի է ասել այս դատողությունների մասին:

Մեզ թվում է, որ նրանք խարսխված են ոչ մի հիմք շունեցող բունագրուսիկ ենթադրությունների վրա: Ո՞րտեղից է հայտնի Ակինյանին, որ Գենշապուհը որպես մարզպան է գնացել Հայաստան: «Որ մարզպան աշխարհին լեալ էր յառաջ քան զիմ երթալն» բառերը, որոնց վրա ուզում է հենվել Ակինյանը, բնավ չեն ապացուցում, որ Գենշապուհը մարզպան է դարձել: Եթե այդպես լիներ, պետք է ասվեր «յառաջ քան զիս», իսկ «յառաջ քան զիմ երթալն» արտահայտությունը ցույց է տալիս միայն, որ Գենշապուհը պետք է հատուկ նպատակով գնացած լինի Հայաստան: 441/442 թվականի մասին խոսելն էլ դարձյալ Ակինյանի բանասիրական մեթոդին հատուկ քաշքշուկ է: Ստեփաննոս Սյունյաց եպիսկոպոսը իր «Պատմութիւն տանն Սիսական» աշխատության մեջ<sup>1</sup> պարզ ի պարզո ասում է. «Յետ բառնալոյ թագաւորութեանն Հայոց, որոյ էր վերջինն Արտաշէս եկաց մարզպան ի տեղի Արտաշիսի Վեհմիհր-շապուհ ամս ԺԳ... Իսկ յետ Վեհմիհրշապուհոյ մարզպանութեան կացուցանեն ի տեղի նորա զՎասակ Սիւնեաց տէր մարզպան Հայոց»: Ի՞նչ հարկ կա, որեմն, մի նոր, շեղած մարզպան ստեղծելու և խցկելու Վեհմիհրշապուհի և Վասակի արանքը:

Այն ինչ Եղիշեան այս բոլորի մասին շատ ճիշտ և իրադարձություններին համապատասխան բնական բացատրություն է տալիս: Նա, պատմելով 449

<sup>1</sup> Հրատ. Մ. էմին, Մոսկվա, 1861, էջ 40:

բովականի շուրջը կատարված անցքերը և նույնիսկ ակնաբերական թվականը («Արդ ի սկզբան երկոտասաներորդ ամի թագաւորութեան իւրոյ...»)՝ ասում է հետևյալը. «Զմի ոմն ի հաւատարիմ ծառայիցն իւրոց ի գործ առաքէր յերկիրն Հայոց» (ընդգծումն իմն է, Տ.-Մին.): Մի՞թե «ի գործ առաքէր» կարող է նշանակել մարզպան կարգել: Մարզպան նշանակելու կամ կարգելու մասին այդպես չեն խոսում մեր պատմագիրները: Վերն արդեն տեսանք որ Ստեփաննոս Օրբելյանը այդ մասին ասում է «եկաց մարզպան» կամ «կացուցանեն» մարզպան: Ղազար Փարպեցին էլ (էջ 73) Ատրորմիզդի մասին այսպես է ասում՝ «Եւ զԱտրորմիզդ ոմն անուն, յաշխարհէն Հայոց, մարզպան հրամայէր թողուլ». հմմտ. նույն էջում Փարպեցու ասածը Մուշկան Նիսալավուրտի մասին. «Եւ տեսեալ Մուշկանայ զհրովարտակն թագաւորին Յազկերտի, և լուեալ զբանսն ի հրովարտակէն՝ կացուցանէր ի Հայս մարզպան զԱտրորմիզդ Արշական, և զիրս ամենայն... նմա յանձն առնէր»: Կամ Եղիշեն՝ «Յայնժամ զմի ոմն յաւագ նախարարացն՝ Ատրորմիզդ անուն... զրէր և յանձն առնէր նմա զաշխարհն Հայոց մարզպանութեամբ» (Եղիշե, Երևան 1957, էջ 128): Եւրեմն մարզպան նշանակելու հատուկ տերմին է գոյութիւն ունեցել — «յանձն առնել աշխարհն մարզպանութեամբ», «մարզպան հրամայէր թողուլ», «կացուցանէր մարզպան» և այլն, իսկ «զմի ոմն ի հաւատարիմ ծառայիցն իւրոց ի գործ առաքէր յերկիրն Հայոց» երբեք չի կարող նշանակել, թե այդ անձը մարզպան է կարգվել:

Ընդհակառակը, Դենշապուհի մասին Եղիշեի ասածից երևում է միայն, որ Դենշապուհը Հայաստան է ուղարկվել շուրջ 449 թվականին, երբ հայոց մարզպանն անկասկած վասակն էր, որպես հատուկ լիազոր և ան էլ որոշ հանձնարարութեամբ (ի գործ — որոշ գործով) — ամբողջ Հայոց երկրում աշխարհագիր առնել «ի թողութիւն հարկաց և ի թեթևութիւն ծանրութեան այրեծիոյն»: Ահա այս աշխարհագրի համար էլ նա տարի ու կես շրջել է ամբողջ Հայաստանում, ինչպես վկայում են Դենշապուհի սեփական խոսքերը:

Չափազանց տարօրինակ կլիներ նաև երկրի ընդհանուր կառավարչի (մարզպանի = փոխարքայի) մասին ասել, թե նա աշխարհագիր անելու նպատակով տարի ու կես շրջել է երկրում: Մարզպանութիւն անելու համար չեն շրջում երկրում, այլ որևէ հատուկ հանձնարարութիւն կատարելու համար:

Այսպիսով, Ակինյանը մի նոր մարզպան ստեղծելով Հայաստանում, հակասութեան մեջ է ընկել պատմական հաստատուն ու աներկրայելի տվյալների և իր իսկ նախկին գրածների հետ: Տվյալ շրջանի հայոց մարզպաններն եղել են՝ 1. Վեհմիհրշապուհ (428—441), 2. Վասակ Սյունի (441/42—451) և 3. Ատրորմիզդ Արշական 452-ից սկսած, որոնք առանց որևէ ընդմիջման հաջորդել են միմյանց:

\* \* \*

\*

Ներկայացած առիթից օգտվում ենք մի քանի խոսք ասելու նաև Ն. Ակինյանի մեր Եղիշեի վարդանանց պատմութեան բաղադատական հրատարակութեան առթիվ գրած ընդարձակ մատենախոսութեան մասին (տե՛ս Հանդես Ամսօրյա 1957 թ. № 11—12, նոյեմբեր—դեկտեմբեր, էջ 589—608 և 1958 թ.

<sup>1</sup> Եղիշեի Վասակ Վարդանայ և Հայոց պատերազմին, հրատ. Ե. Տեր-Մինասյանի, Երևան, 1957, էջ 18:

№ 1—4, հունվար—ապրիլ, էջ 152—156), մի քանի անճշտություններ և թյուրիմացություններ ուղղելու համար:

Առաջին անճշտությունը, որ պետք է ուղղել, հետևյալն է. Ն. Ակինյանը մի քանի անգամ կրկնում է, որ մենք «ձեռագիրները և համապատասխան բնագիրները համեմատել ենք 1861-ի բնագրին հետ»: Երկրորդ անգամ նա ասում է՝ «...Այժմ Ե. Տեր-Մինասյան կուտա մեզի Եղիշեի պատմությունը համեմատած Թեոդոսիայի 1861-ի հրատարակության հետ»: Երրորդ անգամ՝ «Հովսեփյան կատարած էր այդ համեմատությունները Եղիշեի 1879 տպագրության հետ, որ եղած էր ըստ Անձևացյացն օրինակի»: «Երվանդ Տեր-Մինասյան ունեցած է այդ օրինակին առաջին տպագրությունը, Թեոդոսիա 1861. հրատարակություն մը, ուր Եղիշեի բնագիրն ամենեն ավելի խաթարված էր. ուստի անատակ ձեռագրական համեմատությանց համար բնագիր ըլլալու»: Այնպիսի տպավորություն է ստացվում, որ Հովսեփյանը համեմատության համար ավելի ճիշտ բնագիր է վերցրել, քան ես:

Ն. Ակինյանի այս պնդումները չեն համապատասխանում իրականությանը. նախ, մենք համեմատության համար չենք վերցրել Թեոդոսիայի 1861 թ. ըստ Անձևացյացն օրինակի առաջին տպագրությունը, այլ հենց այն բնագիրը, որ ձեռքի տակ է ունեցել Հովսեփյանը, այսինքն ըստ Անձևացյացն օրինակի» կատարված 1879 թ. հրատարակությունը, որից արտատպված է Տիխիսի 1913 թ. տպագրված և մեր որպես համեմատությունների համար օրինակ վերցրած բնագիրը: Չենք հասկանում, թե ինչպես են այսպիսի թյուրիմացություններ ստացվում Ն. Ակինյանի մոտ, երբ մեր հրատարակության առաջաբանում էջ LVIII ասված է. «Համեմատությունների համար հիմք ենք ընդունել Եղիշեի Վարդանանց պատմության այսպես կոչված Անձևացյաց օրինակը, որպես մեզանում ամենից ավելի տարածված տեքստը (Տիխիս, 1913)»: Իսկ սա արտատպված է նույն տեղում 1904 թ. հրատարակված օրինակից, որը իր հերթին արտատպություն է Տիխիսում 1879 թ. Գարրիել արքեպիսկոպոս Այվազյանի երկէջ առաջաբանով տպագրված օրինակից (այսինքն՝ Գարեգին Հովսեփյանի իբր համեմատության օրինակ վերցրածից): Այդ հրատարակության տարբերությունը Թեոդոսիայի 1861 թ. տպագրությունից այն է միայն, որ, ինչպես գրում է հրատարակիչ Գարրիել արքեպիսկոպոս Այվազյանը, նա խույս է տվել «ի յայտնի կամ կասկածելի վրիպակաց տպագրութեան այնորիկ»: Ուրեմն, Գ. Հովսեփյանի և իմ համեմատության համար հիմք վերցրած օրինակը բոլորովին նույնն է: Իսկ թե Թեոդոսիայի 1861 թ. հրատարակության բնագիրն ամենեն ավելի խաթարված էր. ուստի անատակ ձեռագրական համեմատութեանց համար բնագիր ըլլալու», այդ էլ անհատական վճիռ է, որ սլարտադիր չէ ոչ որի համար և շատ բանասերներ Անձևացյաց կոչված օրինակը համարել են Եղիշեի լավագույն օրինակներից մեկը:

Երկրորդ, Մխիթարյանների հրատարակած 1838 թ. Եղիշեի մատենագրությունը, որ Ն. Ակինյանը համարում է «Մխիթարյանց... ամենեն խնամյալ հրատարակությունը», մենք հնարավորություն չունեինք օգտագործելու, որովհետև, ինչպես վկայում է Ն. Ակինյանը, «Ձեռագիրներու տարբերակները գետեղված են ստորև բնագրին, - դժբախտաբար առանց նշելու ձեռագիրներու անունները» (ընդգծումը մերն է: Ե. Տ.-Մին.), իսկ մենք սկզբունք ենք ընդունել բոլոր այլընթերցվածների համար տալ համապատասխան ձեռագրի անունը: Մանավանդ որ մեր ձեռքում եղել է Վենետիկի Մխիթարյանց ընտիր

ձեռագրի լուսատիպ նմանահանութիւնը, որից մենք օգտվել ենք անհրաժեշտ շափով:

Երրորդ, մենք տեղին շինք համարում նաև Ն. Ակինյանի առաջարկը՝ Գ ձեռագիրը համարելու լավագույնը և նրա «ուղղագրված բնագրին հետ համեմատել ձեռագիրները ու հատակոտորները, ի վերջո տպագիրները»: Այդպիսի ընտրութիւնը միշտ անհատական բնույթ է կրում. դուցե և Դ մեր լավագույն ձեռագիրներից է, բայց կան Եղիշեի ձեռագիրներին ծանոթ բաճասերներ, օրինակ Վ. Առաքելյան<sup>1</sup>, որոնք լավագույն ձեռագիրը համարում են, իմ կարծիքով իրավացիորեն, Բ ձեռագիրը և այդ դեպքում անշուշտ հարց կդնեն, թե ինչու որպես բնագիր չէ վերցված Բ ձեռագիրը: Ինքը Ն. Ակինյանն էլ գտնում է, որ ԳԼԾՏ<sup>1</sup> խմբին շատ մոտ է Բ.-ն, «իսկ իրմէ ոչ շատ հեռու է Ա. և Գ»: Մեր կարծիքով՝ ո՛չ թե պետք է ձեռագիրներից որևէ խմբի կամ օրինակի առաջնութիւն տալ, այլ բնագիրը կազմելիս պետք է բոլոր ձեռագիրներից ընտրել լավագույն ընթերցվածները և դնել բնագրի մեջ, իսկ մյուս բոլոր այլընթերցվածները դնել բնագրի ստորոտը, ինչպես մենք իրոք վարվել ենք:

Չորրորդ, մեզ մնում է մի քանի խոսք էլ ասել Եղիշեի բնագրի «վերակազմութեան» մասին: Եթե վերակազմութիւն ասելով պետք է հասկանանք բնագրի այնպիսի փոփոխութիւն, որ ձեռագիրներից ոչ մեկը չի տալիս, այլ պետք է այդ ենթադրել՝ ելնելով զանազան հավանական և անհավանական վարկածներից, ապա մենք, իհարկե, բոլորովին դեմ ենք այդպիսի «վերակազմութեան»: Օրինակ, Ն. Ակինյանը ենթադրում է, որ «ի սկզբան տէրութեանն Շապուհոյ» հատվածում (տե՛ս մեր հրատ., էջ 6) Եղիշեի սկզբնագիր բնագրում եղել է Շապուհի փոխարեն «Խոսրով» և ապա շարունակվել է «զոր եգիտ սատանայ...» և այլն: Մենք կարծում ենք, որ այսպիսի փոփոխութիւն նույնիսկ Ն. Ակինյանը լրջորեն չի առաջարկի:

Իսկ եթե վերակազմութիւն կամ, ավելի ճիշտ, բնագրի կազմութիւն ասելով պետք է հասկանալ բնագրի վերականգնումը միայն առկա եղած նյութի (այս դեպքում ձեռագրերի և այլն) հիման վրա, ապա մենք այդ գործը աշխատել ենք մեր կարողութեան շափով կատարել: Այն, ինչ որ գտել ենք ճիշտ որևէ ձեռագրում, դրել ենք բնագրի մեջ, այլընթերցվածները ղետեղելով էջի ստորոտը «սարվածքի» մեջ: Ընդ որում մենք բնավ հավակնութիւն չունենք պրնցելու, որ մեր կազմած բնագիրն անսխալ է և վերջնական: Այս հարցում մենք միանգամայն ճիշտ ենք համարում մեր բազմերախտ ուսուցիչ, մեծ հայագետ և տեքստաբան Մ. Արեղյանի կարծիքը և հետևում ենք նրան: Իսկ նա Մովսես Խորենացու (Տփլիսի, 1913 թ.) գիտական բաղդատական հրատարակութեան առաջարկում (էջ ԽԹ—Մ) ասում է հետևյալը. «Մեր աշխատանքի մեջ կարևորը, կարծում ենք, ոչ այնքան բնագիրն է, որքան ընթերցվածները: Բնագրի վերակազմելը չի կարող մի մարդու գործ լինել. դրա վրա դեռ շատերը պիտի աշխատեն. և կարծում ենք, այսուհետև ուրիշները հեշտութեամբ կարող են վերակազմել բնագիրը՝ ի նկատի ունենալով ո՛չ միայն մեր տված ընթերցվածները, այլև ուրիշ աղբյուրներ, և ամեն մի հատվածի համար առանձնապես ուսումնասիրութիւն անելով...»:

<sup>1</sup> Տե՛ս «Բաները Մատենադարանի» № 3, Երևան, 1956, էջ 206, որտեղ նա «մեր Մատենադարանի երկու լավագույն ձեռագրեր» է անվանում №№ 1850 և 1888, այսինքն՝ մեր Ա. և Բ ձեռագիրները:



Վերջապես, դուր չանք է գործ դրել Ն. Ակինյանը այնպիսի տպավորութիւն ստեղծելու, թե իբր մենք տվել ենք Անձևացյաց օրինակի բնագիրը մյուս ձեռագրերի ընթերցվածներով: Այդ ևս շատ հեռու է իրականությանը համապատասխանելուց: Ըշմարտութիւնն այն է, որ մենք Անձևացյաց օրինակը (մեր հրատ. մեջ նշանակված *A* տառով) դիտել ենք լոկ որպէս առկա «ձեռագիրներից» մեկը, և բնավ միշտ չէ, որ նրա ընթերցվածները նիշտ են և համաբերել և զետեղել բնագրի մեջ: Ընդհակառակը, բազմաթիվ դեպքերում մենք հետեւել ենք այլ ձեռագրերի տվյալներին և Անձևացյաց օրինակի ընթերցումը զետեղել ենք տողատակին՝ սարվածքի մեջ: Միտք չունի այստեղ մանրամասնորեն ցույց տալ, թե ո՞րքան հաճախ ենք մենք այդպէս վարվել, բայց ընթերցողին մի մոտավոր գաղափար տալու համար կասենք միայն հետևյալը. Եղիշի Ընծայականի ընդամենը 3 էջում (50 տող) մենք 21 անգամ Անձևացյաց օրինակի ընթերցումը դրել ենք սարվածքի մեջ, նրանց փոխարեն բնագրում զետեղելով այլ ձեռագրերի մեր կարծիքով ավելի հաշոյ ընթերցվածները: Կարծում ենք՝ այսքանը բավական է:

#### Е. ТЕР-МИНАСЯН

#### В ПОСЛЕДНИЙ РАЗ О Н. АКИНЯНЕ И ОБ «ИСТОРИИ ВАРДАНА» ЕГИШЕ

#### Резюме

Венский мхитарист Н. Акинян, заканчивая свое обширное исследование об армянском писателе V века Егише, которого он считает писателем по меньшей мере VII века, в последних графах своей работы отвечает на рецензии и критические заметки многочисленных ученых. Особенно ополчается он против автора настоящей статьи за критику его положений.

Автор статьи на наглядных примерах показывает, что Акинян, несмотря на свои усилия, не смог привести ни одного доказательства в пользу своих ошибочных положений.

Лишь один вопрос, поднятый здесь Акиняном, заслуживает внимания. Он старается доказать, что Деншапук приехал в Армению как марзпан в 441 году. Однако Акинян, вопреки историческим данным, всовывает нового, им самим испеченного марзпана между Вехмиршапухом и Васаком Сюни. Автор статьи и тут показывает, что доводы Акиняна несостоятельны.

Автор заканчивает статью некоторыми замечаниями по поводу рецензии Акиняна на академическое издание труда Егише.



Ս. ՔՈՒԱՆՋՅԱՆ

ՀԻՆ ՁԵՌԱԳՐԱԿԱՆ ԲԵԿՈՐՆԵՐ  
ՍԱՆԱՀՆԻ և ՀԱՂԲԱՏԻ ՔԱՐԱՅՐՆԵՐՈՒՄ

Սանահնի և Հաղբատի 10-րդ դարում կառուցված վանքերն ունեցել են նաև իրենց քարաշին գեղեցիկ մատենադարանները, որտեղ և պահվել են մեծ թվով ձեռագրեր: Սակայն օտարերկրյա հորդանների արշավանքները հաճախ խանգարել են հիշյալ մատենադարանների անդորրը: 1105 թ. Ղզիլ ամիրայի զորքերն արդեն գրավել էին Լոռին ու այրել Հաղբատը և Սանահինը: Այսպիսով 12-րդ դարից սկսվել է ձեռագիր գանձերի տեղափոխումը դեպի Սանահնի ու Հաղբատի մոտակայքի անդնդախոր ձորերում գտնվող բնական քարայրները, որոնք ամրացվել, ընդարձակվել են ու հարմարեցվել այդ նպատակին:

Նշանավոր պատմագիր Կիրակոս Գանձակեցին նկարագրում է, թե ինչպես դեռևս 12-րդ դարի սկզբում Հաղբատի ձորում գտնվող մի քարայրում ժամանակի խոշոր գիտնական Հովհաննես Սարկավազը ղրաղվել է ձեռագրերի ուսումնասիրությանը: Եվ այսպես, երկար-երկար դարեր այդ քարայրներում պահվել են մեծ թվով հնագույն և թանկարժեք ձեռագրեր:

18-րդ դարի 70-ական թվականներին Հաղբատի վանքի վանահայր Աբրահամ վարդապետ Թեքիրդաղցին, աշակից ունենալով ազահ ու տգետ ոմն Պետրոս տիրացուի, այդ քարայրներում գանձ է որոնել և իջեցրել է այնտեղ պահվող հազարավոր ձեռագրերը: Դրանց մեծագույն մասը հետզհետե հափրչտակվել ու գողացվել են, իսկ վնասված ձեռագրերից ու պատառիկներից տգետ վանականները վանքի բակում մի մեծ խարույկ են վառել:

Հիշյալ քարայրներում ավելի ուշ որոնումներ են կատարվել և ձեռագրեր ու պատառիկներ են հայտնաբերվել Հովսեփ ԱրղուՅյանի, Սարգիս Զալալյանի, Ալեքսանդր Նրիցյանի և Գյուտ Աղանյանցի նախաձեռնությամբ:

Վերջին որոնումներից արդեն իսկ անցել էր 60 տարի: Եվ ահա, 1959 թվականի սեպտեմբերի 26-ին Մատենադարանի դիրեկցիան մի արշավախումբ ուղարկեց Սանահնի և Հաղբատի ձորերի քարայրները զննելու նպատակով: Արշավախմբին, բացի Մատենադարանի մի քանի աշխատակիցներից (ավագ գիտ. աշխատող Ս. Քոչանջյանի ղեկավարությամբ), մասնակցում էին նաև Երևանի ֆիզիկուլտուրայի ինստիտուտի ուսանող ալպինիստներ, իրենց դասախոս՝ սպորտի վարպետ Ս. Հարությունյանի հսկողությամբ:

Արշավախումբը առաջին հերթին նախնական որոնումներ կատարեց Սանահնի մոտ գտնվող անմատչելի Աշառանց այրում, որը գտնվում է ձորից մինչև քարազուխը 100 մետր բարձրություն ունեցող մի ժայռի վրա: Քա-

րայրում հայտնաբերվեց մի կարաս մեջը մոխրով լեցուն, նրա մեջ և քարայրի հատակին կային նաև վառված թղթի հետքեր: Անցյալում այստեղ գտնվել են բազմաթիվ ձեռագրեր, դանդեր ու գործվածքների կտորներ: Հաջորդաբար որոնումներ կատարվեցին նաև Հաղբատի մոտակա ձորում գտնվող պարսպապատ հնադարյան քարայրներից՝ Չառնի այրում (որտեղից ևս անցյալում ձեռագրեր են հայտնաբերվել), նրանից ավելի վեր՝ դեպի աջ գտնվող Պառնի այրում. և վերջինից դեպի ձախ ու ավելի վերը գտնվող՝ խիստ դժվարամատչելի Ծակ այրում:



Հաղբատի Ծակ այրից հայտնաբերված ձեռագրական մի քանի բեկորներ

Սեպտեմբերի 29-ին և 30-ին Ծակ այրից հայտնաբերվեցին ուշագրավ նյութեր: Քարայրի հատակը ծածկող 45 սանտիմետր հաստությամբ ունեցող հողի և ավազի խառն շերտի միջից գտնվեցին շուրջ 40 տարբեր ձեռագրերի փոքր բեկորներ, որոնցից մի քանիսը իրար կպած և քարացած թերթերի փրշրանքներ են: Ձեռագրերի բեկորները գրված են մեր հնագույն բոլոր տիպի տառատեսակներով: Կան գրվածքներ մեսրոպյան բոլորագիծ, ուղղագիծ և մանր երկաթագրերով, ինչպես նաև երկաթագրախառն խոշոր ու մանր բոլորագրերով: Նրանք գրված են թե մազաղաթի և թե թղթի վրա: Բեկորները, ըստ հնագրական տվյալների, պատկանում են 9—15-րդ դդ. գրչության: Այնքան փոքր են այդ բեկորները, որ դժվար է որոշել նրանց՝ մեծ մասի բովանդակությունը: Պարզ է սակայն, որ նրանց մեջ կան ավետարանների, քարոզագրերի և այլ աշխատությունների, ինչպես նաև հայկական երաժշտական խաղերով գրված մի ձեռագրի բեկորիկներ: Գտնվեցին նաև մանրանկարների հետքեր ունեցող հատվածներ: Ուշագրավ է հողի ու քարի հետ խառնված մի փոքրիկ

փաթեթ, որի վրա երևում են ոսկեզօծ մանրանկարի հետքեր: Հայտնաբերվել է նաև Ավետարանի համարարրառի մի բեկոր, որի աղյուսակները ներկված են կապույտ ու կարմիր գույներով և մանրանկարի մի այլ բեկոր, որի ոսկեզօծ մասը խոնավությունից գրեթե լրիվ թափվել է: Գտնվել են նաև ձեռագրերի կազմերի մասեր, որոնց մեջ ուշագրավ են 8—10 սմ երկարություն ունեցող դրոշմազարդ կաշիներն ու կազմի մեջ օգտագործված հղկված տախտակների բեկորները: Գտնվել են նույնիսկ կազմի թելեր. նրանցից մեկը հասել է ամբողջությամբ, սակայն ձեռագիրը, որը հավանաբար թղթից է եղել, վաղուց արդեն հող է դարձել: Կան նաև ձեռագրերի կազմերի կողերին երբեմն փակցրված դիպակների և ասեղնագործ կտորեղենների բեկորներ:

Սանահնի և Հաղրատի քարայրներում կատարված հետախուզումների արդյունքի մասին 1959 թ. հոկտեմբերի 10-ին Մատենադարանի գիտական խորհրդի ընդլայնված նիստում լավից արշավախմբի ղեկավարի զեկուցումը՝

Գտնված ձեռագրական բեկորների մի մասը ցուցադրվում է Մատենադարանի մշտական ցուցասրահում:

Արշավախմբի հայտնաբերած նյութերը հույս են ներշնչում, որ Սանահնի ու Հաղրատի շրջակայքում գտնվող բազմաթիվ քարայրներից կարող են գրտնրվել ավելի արժեքավոր պատառիկներ, գույն և ամբողջական ձեռագրեր: Նախատեսված է հետագայում շարունակել քարայրների հետախուզումը, մասնակից դարձնելով այդ գործին ավելի մեծ թվով մասնագետների:

С. КОЛАНДЖЯН

## ДРЕВНЕАРМЯНСКИЕ РУКОПИСНЫЕ ФРАГМЕНТЫ В ПЕЩЕРАХ САНАИНА И АХПАТА

### Резюме

Уже в XII в. для того, чтобы спасти рукописи от иноземных нашествий, книгохранилища Санаина и Ахпата начали перемещать в пещеры, которые находились в глубоких ущельях.

В 70-х гг. XVIII в. местное духовенство в поисках клада обнаружило в пещерах много рукописей, большая часть которых была разграблена, а частично и сожжена.

В конце XVIII в. и в XIX в. по инициативе ряда деятелей армянской культуры, из упомянутых пещер были вынесены окаменелые рукописи и лоскуты рукописей.

И вот спустя 60 лет после последних поисков, 26 сентября — 2 октября 1959 г. дирекция Матенадарана отправила экспедицию для обследования пещер Санаина и Ахпата. Кроме нескольких сотрудников Матенадарана, которых возглавлял старший научный сотрудник С. Коланджян, в экспедиции приняли участие студенты-альпинисты Армянского института физкультуры во главе с их преподавателем, мастером спорта С. Арутюняном.

Первоначальные поиски были произведены в Санаинской пещере

Ачаранц и Ахпатских пещерах Зарни, Парни и Цак. 29 и 30 сентября в пещере Цак были обнаружены заслуживающие внимания материалы. Под 45-сантиметровым слоем песка и пепла были обнаружены лоскуты примерно 40 рукописей, написанных на бумаге и пергаменте. Были обнаружены и другие материалы, связанные с рукописной культурой (тисненая кожа переплета, отшлифованные дощечки от переплетов, кусок вышитой ткани, нитки и т. д.).

10 октября 1959 г. на расширенном заседании ученого Совета Матенадарана был заслушан доклад руководителя экспедиции.

Часть найденных фрагментов рукописей выставлена на постоянной выставке Матенадарана.



## ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹՅՈՒՆ

### Հ ո ղ վ ա ծ ն ե ռ

Մ. Գրիգորյան — Մատենադարանի շենքի կառուցման մասին . . . . .	9
Լ. Խաչիկյան — Տնտեսական գործարքների մասին գրառումները հայերեն ձեռագրերի մեջ և նրանց աղբյուրագիտական նշանակությունը . . . . .	21
Ն. Թահմիզյան — Մի էջ հայկական վաղ միջնադարյան երաժշտական տեսությունից	43
Ա. Մարտիրոսյան — «Երատը և իմաստութիւն Խիկարայ» գրույցի հայերեն թարգմանության հարցի շուրջը . . . . .	77
Գ. Գրիգորյան — Փիլոն Ալեքսանդրացու աշխատությունների հայ մեկնությունները	95
էմ. Պիվազյան — Մխիթար Գոշի և Ամբաստ Սպարապետի դատաստանագրքերի առնչակցությունը . . . . .	117
Լ. Խաչերյան — «Գրչության արվեստի» քերականական տեսությունը Գևորգ Սկևաչու աշխատություններում . . . . .	135
Ռ. Աթայան — Գրիգոր Գապասակալյանը և խազարանությունը . . . . .	165
Շ. Նազարյան — Հարություն Ալամդարյանի գործունեության մոսկովյան տարիները	177

### Հ ա ղ ու ղ ու մ ն ե ռ

Ս. Քոչանջյան — Նորահայտ պատառիկներ Կյուրեղ Երուսաղեմացու Թ դարի մի գրչագրից . . . . .	201
Տ. Իզմայլով — 1053 թվականին ընդօրինակված հայկական ձեռագրի գեղարվեստական զարգարանքը . . . . .	239
Ե. Տեր-Մինասյան — Տիմոթեոս Կուզի «Հակաճառութիւն առ սահմանեալան ի ժողովոյն Քաղկեդոնի» երկի թարգմանության ժամանակը . . . . .	279
Ս. Բարխուդարյան — Հերմոնի դպրոցի տեղագրությունն ու գործունեությունը	293
Կ. Յուզբաշյան — Դեմիկները Արիստակես Լաստիվերտցու «Պատմության» մեջ . . . . .	307
Ա. Գևորգյան — Գրենական գործիք՝ գնդիկավոր գրչի մասին . . . . .	313
Բ. Գորյանով — Մատենադարանի այլալեզու գրչագրերի հավաքածուի № 25 հունարեն ձեռագիրը . . . . .	317
Պ. Մուրադյան — Մի էջ հայ-վրացերեն բառարանագրությունից . . . . .	325
Վ. Գրիգորյան — Նոր տեղեկություններ «Բանալի ճշմարտութեան» երկի հեղինակ Հովհաննես Երեցի մասին . . . . .	333
Մ. Մխիթարյան — Մատենադարանի Լազարյանների արխիվը . . . . .	345

### Բնագրեր, քաղվանություններ

Ս. Արևշատյան — Երկու հին փիլիսոփայական բնագիր՝ «Ճարտասան, յաղագս բնութեան» և «Սահմանք փիլիսոփայականք» . . . . .	371
Հ. Բարթիկյան — Եվստաթիոս Բոյլիասի կտակը (1059 թ.) որպես Հայաստանի և Վրաստանի պատմության կարևոր սկզբնաղբյուր . . . . .	393

Լ. Փ ա զ ա ղ յ ա ն — Վաղարշապատ գյուղի 1725 և 1728 թթ. բուրբական հարկացուցակները . . . . .	431
Օ. Ծ գ ա ն յ ա ն — Նահապետ Քուչակի հայտատա բուրբակեն տաղերը . . . . .	465
Ռ. Տ ի տ ա ն յ ա ն — Նորահայտ մի փաստաթուղթ 1795 թ. Քրիլիսիի աղետի մասին . . . . .	483

Մատենագիտություն, քննադատություն, լրատու

Օ. Ծ գ ա ն յ ա ն, Ս. Ա Ր և շ ա տ յ ա ն — Մատենադարանի հայերեն ձեռագրերի աճը 1956—1959 թվականներին . . . . .	493
Ծ. Ծ ա հ ն ա ղ ա Ր յ ա ն — Մատենագիտական նորություններ . . . . .	513
Ծ. Տ ե Ր-Մ ի ն ա ս յ ա ն — Վերջին անգամ Ն. Ակինյանն ու Եղիշեի «Վարդանանց Պատմությունը» . . . . .	527
Ս. Ք ո չ ա ն ջ յ ա ն — Հին ձեռագրական քննություններ Սանահնի և Հաղրատի քարայրներում . . . . .	535



## ОГЛАВЛЕНИЕ

### Статьи

М. Григорян—О постройке здания Матенадарана . . . . .	9
Л. Хачикян—Записи о хозяйственных сделках в армянских рукописях и их источниковедческое значение . . . . .	21
Н. Такмизян—Страница из древнеармянской музыкальной теории . . . . .	43
А. Мартиросян—К вопросу о переводе на армянский язык повести «Наставления и премудрости Хикара» . . . . .	77
Г. Григорян—Армянские толкования трудов Филона Александрийского	95
Эм. Пивазян—О соотношении судебников Мхитара Гоша и Смбата Спарапета . . . . .	117
Л. Хачерян—Грамматическая теория «искусства письма» в трудах Георга Скевраци . . . . .	135
Р. Атаян—Григор Гапасакалян и проблема изучения хазов . . . . .	165
Ш. Назарян—Московские годы деятельности Арутюна Аламдаряна . . . . .	177

### Сообщения

С. Коланджян—Новооткрытые древние фрагменты (IX в.) «Поучений» Кирилла Иерусалимского . . . . .	201
Т. Измайлова—Художественное убранство армянской рукописи 1053 г. . . . .	239
Е. Тер-Минасян—О времени перевода на армянский язык труда Тимофея Элура «Опровержение учения Халкедонского собора» . . . . .	279
С. Бархударян—О местонахождении и деятельности Гермонской школы . . . . .	293
К. Юзбашян—Дейлемиты в «Повествовании» Аристакеца Ластивертци . . . . .	307
А. Геворгян—О средневековой ручке-самописке . . . . .	313
Б. Горянов—Греческая рукопись № 25 фонда иноязычных памятников Матенадарана . . . . .	317
П. Мурадян—Страница из армяно-грузинской лексикографии . . . . .	325
В. Григорян—Новые данные об авторе книги «Ключ истины» священнике Иоаннесе . . . . .	333
М. Мхитарян—Лазаревский архив Матенадарана . . . . .	345

### Тексты, переводы

С. Аревшатян—Два древних философских фрагмента—«Ритор, о природе» и «Философские определения» . . . . .	371
Р. Бартикян—Завещание Евстафия Воилы (1059 г.) как важный источник по истории Армении и Грузии . . . . .	393

А. Папазян—Турецкие налоговые реестры села Вагаршапат 1725—1728 гг.	431
О. Еганян—Тюркские песни Наапета Кучака . . . . .	465
Р. Титанян—Новый документ о разорении Тбилиси Ага-Мухаммед ханом в 1795 г. . . . .	483

#### Библиология, критика и научная хроника

О. Еганян, С. Аревшатян—Новые поступления в фонд армянских рукописей Матенадарана в 1956—1959 гг. . . . .	493
Ш. Шахназарян—Библиологические заметки . . . . .	513
Е. Тер-Минасян—В последний раз о Н. Акиняне и об «Истории Вардана» Егише . . . . .	527
С. Коланджян—Древнеармянские рукописные фрагменты в пещерах Санаина и Ахпата . . . . .	535

## CONTENTS

### Articles

M. Grigorian—On the Construction of the Matenadaran Building . . . . .	9
L. Khatchikian—The Records of Economical Contracts in Armenian Manuscripts and their Historical Significance . . . . .	21
N. Tahmizian—A Page from Armenian Prior Medieval Musical Theory . . .	43
A. Martirossian—About the Armenian Translation of the Discourse of «Khikar's Maxims and Wisdom» . . . . .	77
G. Grigorian—The Armenian Commentaries of the Works of Philo of Alexandria . . . . .	95
E. Pivazian—On the Relations Between the Codes of Mekhitar Gosh and Sembat Sparapet . . . . .	117
L. Khatcherian—Grammatical Theory of the «Art of Writing» in Gevorg Skavratsi's Works . . . . .	135
R. Atayan—Grigor Gapassakalian and the Study of Armenian Notes . . . . .	165
Sh. Nazarian—Harootiun Alamdarian's Activities During his Years in Moscow	177

### Reports

S. [Kolandjian—New Fragments from a Manuscript of the Ninth Century by Cyril of Jerusalem . . . . .	201
T. Izmailova—Illustration of an Armenian Manuscript Copied in 1053 . . .	239
E. Ter-Minassian—The Time of the Armenian Translation of Timotheus Aeluro's Work: «Contradiction on the Resolutions of the Chalcedon Council»	279
S. Barkhoodarian—The Place and Activities of Hermon School . . . . .	293
K. Yoozbashian—The Delmiks in the History of Aristakes Lastivertsi . . .	307
A. Gevorgian—On the Medieval Fountain Pen . . . . .	313
B. Goryanov—The Greek Manuscript № 25 from the Foreign Languages Manuscript Collection of the Matenadaran . . . . .	317
P. Mooradian—A Page from the Armeno-Georgian Lexicography . . . . .	325
V. Grigorian—New Facts about Hovhannes the Priest, the Author of «The Key of Truth» . . . . .	333
M. Mekhitarian—The Lazarian Archive in the Matenadaran . . . . .	345

### Texts, Translations

S. Arevshatian—Two Ancient Philosophical Texts: «Rhetor; About Nature» and «Philosophical Definitions» . . . . .	371
Hr. Bartikian—The Will of Eustathius Boilas (1059) as an Important Source of the History of Armenia and Georgia . . . . .	393

H. Papazian—The Turkish Taxation Registers of the Vagharshapat Village in 1725 and 1728 . . . . .	431
O. Yeghanyan—Nahapet Kootchak's Turkish Verses in Armenian Letters . . .	465
R. Titanian—A new Document about the Disaster of Tbilisi in 1795 . . . .	483

#### Bibliography, Critics, News

O. Yeghanyan, S. Arevshatyan—The Increase of Armenian Manuscripts of the Matenadaran During the Years 1956—1959 . . . . .	493
Sh. Shahnazarian—Bibliographical News . . . . .	513
E. Ter-Minassian—About N. Akinian and Yeghisheh's «The History of Vardanank» for the Last Time . . . . .	527
S. Kolandjian—Fragments of Old Manuscripts Found in the Caves of Sanahin and Haghpat . . . . .	535

Կազմը՝ Լ. Ա. Սաղոյանի  
 Տեխ. խմբագիր՝ Մ. Ա. Կափլանյան  
 Վերստուգող սրբագրիչներ՝ Ա. Հ. Ալանյան  
 Մ. Տ. Գալվադյանց  
 Ս. Ա. Գևորգյան

ՉԶ 00904      Պատվեր 994      Հրատ. 1808      Տիրաժ 1000

Հանձնված է արտադրության 11/VI 1960 թ.

Ստորագրված է տպագրության 21/I 1961 թ.

Թուղթ 70×108<sup>1</sup>/<sub>16</sub>, տպագր. 34 մամ., հրատ. 38,1 մամ.:

Գինը կազմով 1 ու. 72 կ.:

ՀՍՍՌ Կուլտուրայի մինիստրության Հրատարակչությունների  
 և պոլիգրաֆ արդյունաբերության Գլխավոր վարչության  
 Պոլիգրաֆկոմբինատ, Երևան, Տեղյան, 91:

ՆԿԱՏՎԱՄ ՎՐԻՊԱԿՆԵՐ

Էջ	Տող	Տպագրած է	Պետք է լինի
22	7	Նամակներից	Նմանակներից
35	5	Հաշտագրերը	Հաշտագիրը
46	ն. 19	և հիմնական	, որը հիմնական
69	7	լայն	լայն
71	25	—B	ի—B
98	ն. 6	ձև. 4450	ձև. 4150
141	ն. 7	տակալ	տակալ
224	ն. 2	ՑԱՒՂՄԴ ՐՆ- ԹԵՌՆՈՒՔ	ՑԱՒՂՄԴ ԵՒ ՉԼՍԱՒ- ՂՄԴ ՑՈՐԺԱՄ ՐՆԹԵՌՆՈՒՔ